

ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

**ԴՈՒԿԱՍ ՊԱՏՄԻՉԸ.
ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ**

ԲՈՔ ԱԹԼԻ
ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԴԱՍԱԽՈՍ
(ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

ՍԵՐՏՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՔ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, ՀԱՏՈՐ ՅԲ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԵՐ, ՄԱՐՇԱԼ, ՏԵԽԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հեղինակի խոսք. Ինչպե՞ս կարող է ձեզ օգնել այս մեկնաբանությունը	4
Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց. վատահեղի ճշմարտության անձնական ուսումնասիրություն.....	6
Այս մեկնաբանության գրքում օգտագործվող հապավումները.....	13
Գործք առաքելոցի ներածություն	15
Գործք 1.....	22
Գործք 2.....	49
Գործք 3.....	88
Գործք 4.....	106
Գործք 5.....	125
Գործք 6.....	145
Գործք 7.....	157
Գործք 8.....	175
Գործք 9.....	188
Գործք 10.....	204
Գործք 11.....	217
Գործք 12.....	227
Գործք 13.....	237
Գործք 14.....	257
Գործք 15.....	268
Գործք 16.....	281
Գործք 17.....	294
Գործք 18.....	310
Գործք 19.....	321
Գործք 20.....	334
Գործք 21.....	348
Գործք 22.....	358
Գործք 23.....	367
Գործք 24.....	375
Գործք 25.....	381
Գործք 26.....	388
Գործք 27.....	400
Գործք 28.....	410
Հավելված Մեկ. Հունարեն լեզվի քերականական կառուցվածքի համառոտ սահմանումները.....	418
Հավելված Երկու. Տեքստային քննադատություն.....	427
Հավելված Երեք. Հին Կտակարանի Պատմությունը.....	431
Հավելված Չորս. Բացատրական բառարան.....	434
Հավելված Հինգ. Վարդապետական սկզբունքներ.....	444

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Վաղ եկեղեցու <i>Kerygma</i> , Գործքի Ներածությունը և 2:14.....	19
Համբարձումը, 1:2.....	23
Սուրբ Հոգու անձ լինելը, 1:2.....	24
Հարությունից հետո Հիսուսի հայտնության դեպքերը, 1:3.....	26
Սուրբ Գրքում առկա սիմվոլիկ թվերը, 1:3.....	26
Աստծո Թագավորությունը, 1:3.....	28
Աստվածության անունները, 1:6.....	31
Բորի ավետարանական հիմքերը, 1:8.....	35
Ամպերով վերադառնալը, 1:9.....	36
Առաքյալների անունները, 1:13.....	37
Իսկարիովտացի, 1:13.....	39
Հիսուսին հետևող կանայք, 1:14.....	40
Ներշնչանք, 1:16.....	41
Տիպարանություն, 1:16.....	42
Տասներկու թիվը, 1:21.....	45
Սիրտը, 1:24.....	47
Պենտեկոստե, 2:1.....	52
Հոգին (<i>pneuma</i>) ՆԿում, 2:2.....	52
Կրակ, 2:3.....	53
Աստվածաշնչի վերաբերմունքը ավրոհոլին և հարբեցողությանը, 2:13.....	57
Վաղ եկեղեցու <i>Kerygma</i> , 2:14.....	59
Այս և գալիք դարաշրջանները, 2:17.....	61
Աստվածաշնչի կանայք, 2:17.....	61
Ապոկալիպտիկ գրականություն, 2:19.....	64
Երկրորդ գալուստը, 2:20.....	65
Տիրոջ անունը, 2:21.....	66
Հիսուս Նագովրեցին, 2:22.....	67
Հույս, 2:26.....	70
Որտե՞ղ են մեռելները, 2:27.....	71
Մեսիա, 2:31.....	74
Մարմին (<i>sarx</i>), 2:31.....	74
Երրորդությունը, 2:32.....	75
Աստված նկարագրված որպես մարդ, 2:33.....	76
Ապաշխարություն, 2:38.....	78
Մկրտություն, 2:38.....	79
Միաստվածություն, 2:39.....	81
Փրկության համար հունարեն բայի ժամանակները, 2:40.....	82
<i>Koinōnia</i> , 2:42.....	84
Ընտրություն/նախասահմանություն և աստվածաբանական բալանսի կարիքը, 2:47.....	86
Ուխտ, 2:47.....	87
Ողորմություն տալ, 3:2.....	91
Փառք, 3:13.....	94
Պոնտացի Պիղատոս, 3:13.....	95
Սուրբը, 3:14.....	97
Արդարություն, 3:14.....	97
Հեղինակ/Առաջնորդ (<i>archēgos</i>), 3:15.....	100
Հավատք, հավատալ, վստահելի, 3:16.....	101
Սաղուկեցիներ, 4:1.....	109
Սանեդրին, 4:5.....	111
Անկունաբար, 4:11.....	115
Օծությունը Աստվածաշնչում, 4:27.....	119
Հերովդես Մեծի ընտանիքը, 4:27.....	120
Համարձակություն (<i>Parrhēsia</i>), 4:29.....	122

Բառնարաս, 4:36.....	124
Սատանա, 5:3.....	127
Թաղման արարողություններ, 5:6.....	130
«Փորձել» բառի հունարեն տերմինները և դրանց նշանակությունները, 5:9.....	131
Եկեղեցի (<i>ekklesia</i>), 5:11.....	132
Դիվականը (պիղծ ոգիներ), 5:16.....	134
Դևեր քշելը, 5:16.....	136
Փարիսեցիներ, 5:34.....	142
Գամաղիել, 5:34.....	142
Հավատարմ, հավատքը, վստահությունը և հավատարմությունը ՀԿ-ում, 6:5.....	150
Ձեռնադրությունը Աստվածաշնչում, 6:6.....	153
Ելիցի տարեթիվը, 7:18.....	165
Սինա լեռան տեղանքը, 7:30.....	168
Ձևաչափ (<i>tupos</i>), 7:43.....	171
Կախարդություն, 8:9.....	180
Հարատևություն, 8:13.....	181
Սուրբեր, 9:13.....	194
Աստծո Որդի, 9:20.....	196
Սրբացում, 9:32.....	200
Ապաշխարությունը ՀԿ-ում, 9:35.....	202
Դատավորը, դատաստանը և արդարությունը Եսայի գրքում, 10:42.....	215
Ձեռք, 11:21.....	223
Նոր Կտակարանյան մարգարեություն, 11:27.....	225
Բարեխոսական աղոթք, 12:5.....	230
Հակոբոսը՝ Հիսուսի կես-եղբայրը, 12:17.....	235
Ներշնչանք, 13:1.....	240
Լուսավորում, 13:1.....	240
Ծոմապահություն, 13:2.....	241
Երբայական Կանոնը, 13:15.....	246
Պաղեստինի նախախրայելական բնակիչները, 13:19.....	247
Պողոսի տեսակետները մովսիսական օրենքի մասին, 13:39.....	253
Ուղարկել (<i>apostellō</i>), 14:4.....	261
Հարատևելու անհրաժեշտությունը, 14:22.....	265
Շիդա՝ Սիդվանոս, 15:22.....	277
Քրիստոնեական ազատությունը ընդդեմ Քրիստոնեական պատասխանատվության, 15:29.....	278
Հիսուսը և Հոգին, 16:6.....	285
Թեսաղոնիկե քաղաքը, տե՛ս Գործքի նախաբան 17.....	296
Կորնթոս քաղաքը, տե՛ս 18:1 մեկնաբանությունները.....	312
Եփեսոս քաղաքը, տե՛ս 18:19 մեկնաբանությունները.....	318
Արևելյան գրականություն, 19:10.....	326
Հրեշտակները Պողոսի թղթերում, 19:12.....	328
Խոստովանություն, 19:18.....	329
Անառակություններն ու առաքիլությունները ՆԿ-ում, 20:19.....	341
Ուխտադրություն, 20:30.....	344
Շինություն տալ, 20:32.....	347
Աստծո կամքը, 21:14.....	352
Պողոսի օրինական դատապաշտպանությունները, տե՛ս Գործքի 21:17 սխեման, Նախաբան.....	353
Փարիսեցիները և Սադուկեցիները համեմատության մեջ, տե՛ս Գործք 21:17, Նախաբան.....	354
Նազովրեցու երդում, 21:24.....	356
Սզալու ծեսերը, 22:23.....	365
Դպիրներ, 23:9.....	371
Անեծք (<i>anathema</i>), 23:14.....	373
Հերովդես Ագրիպաս II, տե՛ս 25:13 նախաբանը.....	384
Բերնիկե, տե՛ս 25:13 նախաբանը.....	385
Իշխանություն, 26:18.....	394
Ճշմարտությունը Պողոսի գրքերում, 26:25.....	398
Մնացորդը՝ Երեք նշանակություն, 28:25-27.....	416

ՀԵՂԻՆԱԿԻ ԽՈՍՔ. ԻՆՉՊԵՄ ԿԱՐՈՂ Է ՁԵՉ ՕԳՆԵԼ ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշնչյան մեկնաբանությունը ռացիոնալ և հոգևոր գործընթաց է, որը փորձում է հասկանալ հնադարում ներշնչված գրողին այնպես, որ Աստծուց ուղարկված պատգամը հասկացվի և կիրառվի մեր օրերում:

Հոգևոր գործընթացը կարևոր է, սակայն դժվար սահմանելի: Այն իր մեջ ընդգրկում է նվիրում և Աստծո առջև բաց վիճակ: Պետք է լինի քաղց (1) Նրա հանդեպ, (2) Նրան ճանաչելու, (3) Նրան ծառայելու: Այս գործընթացը պահանջում է աղոթք, խոստովանություն և ապրելակերպի փոփոխության հոժարակամություն: Սուրբ Հոգին շատ կարևոր է մեկնության այս գործընթացում, սակայն թե ինչու են անկեղծ և աստվածավախ Քրիստոնյաները Աստվածաշունչը այլ կերպ հասկանում՝ հանելուկ է:

Ռացիոնալ գործընթացը ավելի հեշտ է նկարագրել: Մենք պետք է լինենք հետևողական և ազնիվ տեքստի նկատմամբ և մեր անձնական և հարանվանական հակումների ազդեցության տակ չընկնենք: Մենք բոլորս էլ պատմականորեն պայմանական ենք: Մեզանից ոչ ոք օբյեկտիվ կամ չեզոք մեկնաբան չէ: Այս մեկնաբանության գիրքը առաջարկում է մանրամասն ռացիոնալ գործընթաց, որը պարունակում է մեկնության երեք սկզբունքներ, որոնք նախատեսված են օգնելու մեզ հաղթահարելու մեր հակումները:

Առաջին սկզբունքը

Առաջին սկզբունքն է նշել այն պատմական միջավայրը, որում գրվել է աստվածաշնչյան գիրքը և հատուկ պատմական իրավիճակը՝ տվյալ գրքի հեղինակին ճանաչելու համար: Բնագրի հեղինակը ուներ նպատակ՝ պատգամը փոխանցելը: Տեքստն ինքնին ոչինչ չի կարող նշանակել մեզ համար, եթե այն իրականում ոչինչ չի նշանակել բնագրի հնում ներշնչված հեղինակի համար: Կարևորը նրա մտադրությունն է և ոչ թե մեր պատմական, զգացական, մշակութային, անձնական կամ հարանվանական կարիքը: Կիրառությունը մեկնաբանության անբաժանելի մասն է, սակայն կիրառությանը միշտ պետք է նախորդի ճիշտ մեկնությունը: Այն պետք է ևս մեկ անգամ հիշեցնի, որ յուրաքանչյուր սուրբգրային տեքստ ունի միայն մեկ նշանակություն: Այս նշանակությունը հենց այն է, ինչ բնագրի հեղինակը մտադիր է եղել Սուրբ Հոգու առաջնորդությամբ փոխանցել իր օրերի մարդկանց: Այս միակ նշանակությունը կարող է ունենալ տարբեր հնարավորին կիրառություններ, տարբեր մշակույթների և իրավիճակների համար: Այս կիրառությունները պետք է կապ հաստատեն բնագրի հեղինակի փոխանցած կենտրոնական ճշմարտության հետ: Այդ իսկ պատճառով, այս սերտողության ուղեցույց մեկնաբանության գիրքը կազմված է աստվածաշնչյան յուրաքանչյուր գրքի համար տրված ներածական մասով:

Երկրորդ սկզբունքը

Երկրորդ սկզբունքը գրական բաժինները տարբերելն է: Աստվածաշնչյան յուրաքանչյուր գիրք միավորված փաստաթուղթ է: Մեկնաբանները իրավունք չունեն առանձնացնելու ճշմարտության մի մասը և անտեսել մյուսները: Ուստի, նախքան առանձին գրական որևէ բաժին մեկնաբանելը մենք պետք է աշխատենք հասկանալ աստվածաշնչյան ամբողջ գրքի իմաստը: Առանձին բաժինները՝ գլուխները, պարագրաֆները կամ համարները, չեն կարող փոխանցել մի այնպիսի իմաստ, որը չի փոխանցում ամբողջ բաժինը: Մեկնությունը պետք է սկսի ամբողջականի դեղուկտիվ մոտեցումից դեպի առանձին մասերի ինդուկտիվ մոտեցում: Ուստի այս մեկնաբանության գիրքը նախատեսված է օգնելու ուսանողին վերլուծելու յուրաքանչյուր գրական բաժնի կառուցվածքը պարագրաֆներով: Բաժանումներն ըստ պարագրաֆների և գլուխների ներշնչված չեն, սակայն դրանք օգնում են մեզ տարբերակելու բաժիններն ըստ մտքի:

Ըստ պարագրաֆի մեկնաբանությունը՝ և ոչ թե ըստ նախադասության, հատվածի, արտահայտության կամ բառային մեկնաբանության, հանդիսանում է աստվածաշնչյան հեղինակի նկատի ունեցած նշանակությանը հետևելու բանալին: Պարագրաֆները հիմնված են ընդհանուր թեմայի վրա, որոնք հաճախ կոչվում են թեմա կամ թեմատիկ նախադասություն: Պարագրաֆի մեջ յուրաքանչյուր բառ, արտահայտություն, հատված և նախադասություն ինչ-որ ձևով կապված է այս ընդհանուր թեմայի հետ: Դրանք կա՛մ սահմանափակում են, ընդլայնում, բացատրում, կա՛մ էլ այն հարցադրում: Ճիշտ մեկնության համար իրական բանալի է հանդիսանում ըստ պարբերության բնագրի հեղինակի մտքին հետևելը՝ առանձին գրական բաժինների միջով, որոնք էլ հենց կազմում են աստվածաշնչյան գիրքը: Այս ուղեցույց հանդիսացող մեկնաբանության գիրքը նախատեսված է օգնելու ուսանողներին այդ անել համեմատելով ժամանակակից անգլերեն թարգմանությունները: Ընտրված են այս թարգմանությունները, քանի որ դրանք կիրառում են տարբեր թարգմանությունների տեսություններ:

(ա) Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության հունարեն տեքստը վերանայված չորրորդ խմբագրությունն է (The United Bible Society – UBS⁴): Այս տեքստը բաժանվել է պարագրաֆների տեքստային ժամանակակից գիտնականների կողմից:

- (բ) Նոր Քինգ Չեյմս Տարբերակը (The New King James Version - NKJV) բառ առ բառ գրական թարգմանություն է՝ հիմնված հունարեն ձեռագիր ավանդույթի վրա, որը հայտնի է Textus Receptus անվամբ: Այս տարբերակի պարագրաֆների բաժանումները ավելի երկար են, քան մյուս թարգմանություններին: Այսպիսի ավելի երկար ենթաբաժինները օգնում են ուսանողներին տեսնելու ընդհանուր թեմաները:
- (գ) Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (The New Revised Standard Version - NRSV) փոփոխված բառ առ բառ թարգմանություն է: Այն միջնապատ է ձևավորում տվյալ երկու ժամանակակից տարբերակների միջև: Այս գրքի պարագրաֆների բաժանումը բավականին օգտակար է թեմաները տարբերակելու համար:
- (դ) Այսօրվա Անգլերեն Տարբերակը (The Today's English Version - TEV) դինամիկ համարժեք տարբերակ է, որը հրատարակվել է Միացյալ Աստվածաշնչյան Ընկերության կողմից: Այն փորձում է Աստվածաշունչը թարգմանել այնպես, որ ժամանակակից անգլիախոս մարդիկ կամ ընթերցասերները կարողանան հասկանալ հունարեն տեքստի իմաստը: Հաճախ, հատկապես Ավետարաններում, պարագրաֆների բաժանումը կատարված է ըստ խոսողի, քան ըստ թեմայի, այնպես ինչպես NIV (New International Version - Նոր Միջազգային Տարբերակ) թարգմանության մեջ: Մեկնաբանողի նպատակների համար այն օգտակար չէ: Հետաքրքիր է նշել, որ թե՛ UBS⁴ և թե՛ TEV տարբերակները հրատարակվել են նույն անձի կողմից, սակայն դրանց պարագրաֆների բաժանումը տարբերվում են:
- (ե) Երուսաղեմի Աստվածաշունչը (The Jerusalem Bible - JB) դինամիկ համարժեք թարգմանություն է, որը հիմնված է Ֆրանսերեն Կաթոլիկ թարգմանության վրա: Այն շատ օգտակար է համեմատելու պարագրաֆների բաժանումը Եվրոպական տեսանկյունից:
- (զ) Տպագրված տեքստը 1995 թ. թարմացված Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչն է (New American Standard Bible /NASB/), որը բառ առ բառ թարգմանություն է: Ըստ համարների մեկնաբանությունների ժամանակ օգտագործվում է պարագրաֆային այս բաժանումը:

Երրորդ Սկզբունք

Երրորդ սկզբունքն է Աստվածաշունչը կարդալ տարբեր թարգմանություններով, իմաստը հնարավորինս ամենաընդլայնված շրջանակներում (իմաստաբանական դաշտը), որ կարող են ունենալ աստվածաշնչյան բառերը կամ արտահայտությունները, հասկանալու համար: Հաճախ հունարեն բառը կամ արտահայտությունը կարելի է մի քանի կերպով հասկանալ: Այսպիսի տարբեր թարգմանություններից բխում են այլ տարբերակներ, որոնք օգնում են հասկանալու և բացատրելու հունարեն ձեռագրի տարբերակները: Սրանք չեն ազդում վարդապետության վրա, սակայն օգնում են մեզ վերադառնալու հնադարում ներշնչված հեղինակի կողմից գրված բնագիր տեքստին:

Չորրորդ Սկզբունք

Չորրորդ սկզբունքը գրական ժանրը նշելն է: Բնագրի ներշնչված հեղինակները ընտրում են արձանագրել իրենց պատգամները տարբեր ժանրերում (օր.՝ պատմական իրադարձություն, պատմական դրամա, պոեմ, մարգարեություն, ավետարան [առակ], նամակ, հայտնություն): Այս տարբեր ժանրերը ունեն մեկնաբանության համար հատուկ բանալիներ (տե՛ս՝ Գորդոն Ֆի և Դազ Ստյուարտ, *Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով* կամ Ռոբերտ Սթեյն, *Խաղալ Կանոններով*, /Gordon Fee and Doug Stuart, *How to read the Bible for All Its Worth* or Robert Stein, *Playing by the Rules*):

Այս մեկնաբանության գիրքը ուսանողին առաջարկում է իր մեկնությունը ստուգելու արագ միջոց: Այն վերջնական չէ, այլ տեղեկատվական և խորհելու առիթ ընձեռնող: Հաճախ մյուս հնարավորին մեկնաբանությունները օգնում են մեզ չիներելու սահմանափակ, դոգմատիկ և հարանվանական: Մեկնաբանները կարիք ունեն ավելի լայն թարգմանչական շրջանակների, որպեսզի հասկանան, թե որքան անորոշ կարող է լինել հնագույն տեքստը: Ապշեցուցիչ է, թե որքան քիչ համաձայնություն կա Քրիստոնյաների միջև, որոնք պնդում են, որ ճշմարտության իրենց աղբյուրը Աստվածաշունչն է:

Այս սկզբունքներն օգնել են ինձ հաղթահարել շատ պատմական համոզմունքներ, բառացիորեն պարտադրելով ինձ չափազանց ուշադիր վերաբերվել հնագույն տեքստերին և ձեռագրերին: Հույս ունեմ, որ այն օրինություն կլինի նաև ձեր համար:

Բոր Աթի
Արևելյան Տեխասի Սկրտական Համալսարան
Հունիս 27, 1996

Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց. Վատահեղի ճշմարտության անձնական ուսումնասիրություն

Կարո՞ղ ենք իմանալ ճշմարտությունը: Որտե՞ղ գտնել այն: Կարո՞ղ ենք այն տրամաբանորեն հիմնավորել: Արդյո՞ք գոյություն ունի վերջնական ապացույց: Արդյո՞ք կան բացարձակ ճշմարտություններ, որոնք կարող են առաջնորդել մեր կյանքը, մեր աշխարհը: Արդյո՞ք կյանքն իմաստ ունի: Ինչո՞ւ ենք մենք այստեղ: Ո՞ւր ենք գնում: Այս հարցերը՝ որոնց շուրջ բոլոր բանական մարդիկ խորհում են, հետապնդել են մարդկային բանականությանը ժամանակի գոյությունից ի վեր (Ժող.1:13-18; 3:9-11): Ես կարող եմ հիշել իմ անձնական փնտրտուքները կյանքիս ինտեգրման կենտրոնի համար: Ես դարձել եմ Քրիստոնյա հավատացյալ երիտասարդ տարիքում, հիմնականում հիմնվելով իմ ընտանիքում նշանակալի մարդկանց վկայությունների վրա: Երբ հասունացա, հասունացան նաև իմ և ինձ շրջապատող աշխարհի մասին հարցերս: Պարզ մշակույթային կամ կրոնական կյիշեները չէին իմաստավորում իմ կարդացած կամ վերապրած փորձառությունները: Դա շփոթության, փնտրտուքի, երազանքների և հաճախ հուսահատության զգացողության ժամանակ էր՝ ի դեմս այս անգամ, բարդ աշխարհի, որտեղ ապրում էի:

Շատերը պնդում էին, որ ունեն այս կարևոր հարցերի պատասխանները, թեև հետազոտելուց և խորհելուց հետո հասկացա, որ նրանց պատասխանները հիմնված էին (1) իրենց անձնական փիլիսոփայության, (2) հին առասպելների, (3) անձնական փորձառության կամ (4) հոգեբանական կանխատեսումների վրա: Ես կարիք ունեի ստույգության որոշակի աստիճանի, վկայությունների, ինչ-որ բանականության, որի վրա կարող էի հիմնել իմ աշխարհայացքը, ինտեգրման կենտրոնը, ապրելու իմ նպատակը:

Այս բոլորը ես գտա Աստվածաշնչի իմ ուսումնասիրության մեջ: Սկսեցի փնտրել արժանահավատության փաստեր, որոնք գտա (1) Աստվածաշնչի պատմական հուսալիության մեջ, որը հաստատված է երկրաբանների կողմից, (2) Հին Կտակարանի մարգարեությունների ճշգրտության մեջ, (3) իր ամբողջացվելու համար ավելի քան հազար վեց հարյուր տարի տևած Աստվածաշնչի պատգամի միաբանության մեջ և (4) մարդկանց վկայությունների հիման վրա, որոնց կյանքերը Աստվածաշնչի հետ շփվելու արդյունքում ընդմիշտ փոխվել էին: Քրիստոնեությունը, որպես հավատքի և հավատամքի միավորված համակարգ, կարողանում է աշխատել մարդկային կյանքի բարդ հարցերի հետ: Այն ոչ միայն ապահովեց բանական հիմք, այլ նաև աստվածաշնչյան հավատքի փորձառական առանձնահատկությունը ինձ տվեց ուրախություն և կայունություն:

Ես հասկացա, որ գտել եմ իմ կյանքի ինտեգրման կենտրոնը՝ Քրիստոսին, երբ դա հասկացա Սուրբ Գրքի միջոցով: Դա արբեցնող փորձառություն էր, զգայական ազատագրում: Համենայն դեպս, ես դեռ կարող եմ հիշել այն ցնցումը և ցավը, որ վերապրեցի, երբ հասկացա, թե այս գրքի քանի տարբեր մեկնություններ էին պաշտպանվում, երբեմն նույնիսկ միևնույն եկեղեցիների և միևնույն մտածելակերպի դպրոցների ներսում: Աստվածաշնչի ներշնչված լինելու ու արժանահավատության հաստատումը դեռևս վերջը չէր, այլ միայն սկիզբը: Ինչպե՞ս եմ հիմնավորելու կամ հերքելու Աստվածաշնչում շատ խրթին հաստատումների տարբերվող և իրարամերժ մեկնություններ, որոնք կատարվել են այնպիսի մարդկանց կողմից, որոնք պնդում են դրա հեղինակությունը և արժանահավատությունը:

Այս աշխատանքը դարձավ իմ կյանքի նպատակն ու հավատքի ուխտը: Ես գիտեի, որ Քրիստոսի հանդեպ իմ հավատքը բերել է անսահման խաղաղություն և ուրախություն: Իմ մշակույթի հարաբերականության, իրարամերժ կրոնական համակարգերի դոգմատիզմի և հարանվանական գոռոզամտության մեջ միտքս փափագում էր բացարձակ ճշմարտությունների: Անտիկ գրականության մեկնությանը ճիշտ մոտեցումներ ցուցաբերելու իմ փնտրտուքների մեջ զարմացա, որ հայտաբերեցի իմ իսկ պատմական, մշակույթային, հարանվանական և փորձառական շեղումները: Հաճախ ես կարդացել էի Աստվածաշունչը միայն իմ սեփական հայացքները հաստատելու նպատակով: Ես օգտագործել էի այն որպես դոգմայի աղբյուր հարձակվելու ուրիշների վրա, մինչ վերահաստատում էի իմ իսկ անհաստատ կողմերն ու թուլությունները: Որքա՞ն ցավալի էր այս գիտակցումն ինձ համար:

Չնայած որ երբեք չեմ կարող լինել օբյեկտիվ, այնուամենայնիվ կարող եմ դառնալ Աստվածաշնչի ավելի լավ ընթերցող: Ես կարող եմ սահմանափակել իմ շեղումները՝ ընդունելով դրանք և դրանց առկայությունը: Ես տակավին չեմ ազատվել դրանցից, սակայն առճակատվել եմ իմ սեփական թերությունների հետ: Հաճախ մեկնաբանը լավ Աստվածաշունչ ընթերցելու ամենավատ թշնամին է:

Թույլ տվեք թվարկել մի քանի նախադրյալներ, որոնք ես ներառում եմ իմ Աստվածաշնչյան սերտորության մեջ, որպեսզի դուք՝ ընթերցողներդ, կարողանաք ինձ հետ միասին դրանք ուսումնասիրել:

I. Նախադրյալներ


1. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը բացառապես ներշնչված՝ միակ ճշմարիտ Աստծո ինքնահայտնությունն է: Ուստի, այն պետք է մեկնաբանվի բնագրի աստվածային հեղինակի (<ոգու) մտադրության լույսի ներքո, որը գրվել է մարդու կողմից՝ հատուկ պատմական միջավայրում:
2. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը գրվել է հասարակ մարդկանց՝ բոլորի համար: Աստված հարմար է գտել պատմական և մշակութային համատեքստում հստակ խոսել մեր հետ: Աստված չի թաքցնում ճշմարտությունը, այլ ուզում է, որ այն հասկանանք: <Ետևարար, այն պետք է մեկնաբանվի այդ օրերի և ոչ թե մեր օրերի լույսի ներքո: Աստվածաշունչը չպետք է նկատի ունենա մեր համար մի բան, որը նկատի չի ունեցել առաջին անգամ կարդացողների կամ լսողների համար: Այն հասկանալի է միջին հասկացողության տեր մարդկանց համար և կիրառում է նորմալ հաղորդակցության միջոցներն ու տեխնիկաները:
3. Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը ունի մի պատգամ և մի նպատակ: Այն ինքն իրեն չի հակասում, թեև պարունակում է խրթին և պարադոքսալ հատվածներ: Այսպիսով, Աստվածաշնչի լավագույն մեկնաբանը հենց ինքը Աստվածաշունչն է:
4. Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հատված (ներառյալ մարգարեությունները) ունի միայն մեկ նշանակություն՝ հիմնված բնագրի ներշնչված հեղինակի մտադրության վրա: Թեև երբեք չենք կարող կատարյալ վստահությամբ ասել, որ գիտենք բնագրի հեղինակի մտադրությունը, սակայն շատ ցուցանիշներ մատնանշում են դա.
 - ա. ժանրը (գրական ձևաչափը), որը ընտրվել է արտահայտելու ուղղերձը
 - բ. պատմական միջավայրը կամ հատուկ իրավիճակը, որը երևան է բերել այդ գրությունը
 - գ. ամբողջական գրքի, ինչպես նաև յուրաքանչյուր գրական բաժնի գրական համատեքստը
 - դ. գրական բաժինների տեքստային կառուցվածքը (ուրվագիծը), երբ դրանք կապ ունեն ընդհանուր ուղղերձի հետ
 - ե. պատգամը փոխանցելու համար կիրառված քերականական առանձնահատկությունները
 - զ. բառերը, որոնք ընտրվել են պատգամը ներկայացնելու համար
 - է. զուգահեռ հատվածները

Այս կետերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը դառնում է տվյալ հատվածի մեր ուսումնասիրության առարկան: Նախքան Աստվածաշնչի լավ ընթերցանության իմ մեթոդը բացատրելը թույլ տվեք պատկերել մի քանի աննպատակահարմար մեթոդներ, որոնք օգտագործվում են այսօր, պատճառ հանդիսանալով մեկնաբանությունների տարբերության, և հետևարար պետք է դրանցից խուսափել:


II. Աննպատակահարմար մեթոդներ

- Ա. Անտեսելով Աստվածաշնչյան գրքերի գրական համատեքստը և կիրառելով յուրաքանչյուր նախադասություն, ենթանախադասություն կամ նույնիսկ առանձին բառեր որպես ճշմարտության սահմանումներ, որոնք կապ չունեն հեղինակի մտադրության կամ ընդլայնված համատեքստի հետ: Սա հաճախ կոչվում է «տեքստային ապացույց»:
- Բ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը փոխարինելով այն ենթադրյալ պատմական միջավայրով, որը քիչ է պաշտպանվում կամ ընդհանրապես չի պաշտպանվում հենց տվյալ տեքստի կողմից:
- Գ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և կարդալով այն որպես առավոտյան լրագիր՝ գրված հատուկ միայն արդի Քրիստոնյաների համար:
- Դ. Անտեսելով գրքերի պատմական միջավայրը և տեքստը ներկայացնելով խորհրդապատկերներով որպես փիլիսոփայական, աստվածաբանական ուղղերձ, որն ընդհանրապես կապ չունի այն առաջին անգամ լսողների և բնագրի հեղինակի մտադրության հետ:
- Ե. Անտեսելով բնագրի ուղղերձը, այն փոխարինելով սեփական աստվածաբանությամբ, սիրված վարդապետությամբ կամ ժամանակակից թողարկմամբ, որոնք կապ չունեն բնագրի հեղինակի նպատակի և արձանագրված ուղղերձի հետ: Այս երևույթը հաճախ հաջորդում է Աստվածաշնչի առաջին ընթերցմանը, որպես միջոց հաստատելու խոսողի հեղինակությունը: Սա հաճախ կոչվում է «ընթերցողի արձագանք» («ինչ է նշանակում տեքստն ինձ համար» մեկնաբանություն):

Առնվազն երեք կապակցված բաղադրիչներ կարելի է գտնել մարդկային բոլոր գրավոր հաղորդակցությունների մեջ.



Անցյալում ընթերցելու տարբեր մեխանիզմներ կենտրոնացել են տրված երեք բաղադրիչներից մեկի վրա: Մակայն Աստվածաշնչի ներշնչված լինելը իրականում հաստատելու համար հետևյալ փոփոխված սխեման ավելի հարմար է:



Իրականում բոլոր երեք բաղադրիչները պետք է ընդգրկված լինեն մեկնաբանության գործընթացին: Ստուգելու նպատակով, իմ մեկնաբանությունը կենտրոնանում է առաջին երկուսի վրա՝ բնագրի հեղինակի և տեքստի: Հավանաբար ես արձագանքում եմ այն շահարկումներին, որոնք նկատել եմ (1) տեքստի խորհրդապատկերորեն ներկայացնելու կամ հոգևորացնելու մեջ և (2) «ընթերցողի արձագանքը» մեկնաբանության մեջ (ինչ իմաստ ունի ինձ համար): Շահարկում հնարավոր է յուրաքանչյուր փուլում:

Մենք պետք է միշտ ստուգենք մեր շարժառիթները, հակումները, մեխանիզմները և կիրարկումները: Բայց ինչպե՞ս ենք մենք դրանք ստուգում, եթե մեկնաբանությունների համար սահմաններ և չափանիշներ գոյություն չունեն: Ահա այստեղ է, որ հեղինակի նպատակը և տեքստային կառուցվածքը ապահովում են մի քանի չափանիշներ՝ հնարավորինս սահմանափակելու ճիշտ մեկնաբանության շրջանակը:

Սուրբ Գրքի ընթերցանության այս աննպատակահարմար մեխանիզմների լույսի ներքո, որո՞նք են Աստվածաշունչը լավ կարդալու և մեկնաբանելու համար այն մի քանի հնարավոր կերպերը, որոնք առաջարկում են հիմնավորման և հաստատման աստիճան:

III. Աստվածաշնչյան լավ ընթերցանության հնարավոր կերպեր

Այս պահին ես չեմ քննարկում հատուկ ժանրի պատկանող մեկնաբանության մեխանիզմներ, այլ ընդհանուր հերմենևտիկ սկզբունքներ, որոնք հարմար են աստվածաշնչյան բոլոր տեքստերին: Հատուկ ժանրի վերաբերող լավ գիրք է Գորդոն Ֆիի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջ իմաստով» Չոնդերվան հրատարակչության (*How To Read The Bible In All Its Worth* Gordon Fee and Douglas Stuart, published by Zondervan):

Իմ մեթոդը կենտրոնանում է առաջնահերթ ընթերցողի վրա, որը թույլ է տալիս Սուրբ Հոգուն լուսավորել Աստվածաշունչը անձնական ընթերցանության չորս ցիկլերի միջոցով: Այս մեթոդը Սուրբ Հոգուն, տեքստը և ընթերցողին դիտարկում է ոչ թե երկրորդական դերում, այլ առաջնային: Այն նաև ընթերցողին պաշտպանում է մեկնաբանների անհարկի ազդեցությունից: Ես լսել եմ, թե ինչպես են ասում. «Աստվածաշունչը շատ լույս է գցում մեկնաբանությունների վրա»: Այս ասելով նպատակ չունեմ թերագնահատել սերտողությանը օգնող մեկնությունները, այլ խնդրել, որ դրանք անպատեհ չկիրառեք:

Մենք պետք է կարողանանք մեր մեկնությունները հիմնավորել հենց տեքստից: Վեց ոլորտներ ապահովում են առնվազն սահմանափակ հիմնավորումներ.

1. Պատմական միջավայրը
2. Գրական համատեքստը

3. Քերականական կառուցվածքը (շարահյուսություն)
4. Արդի բառապաշարի կիրառությունը
5. Համապատասխան գուգահեռ հատվածները
6. Ժանրը

Մենք պետք է կարողանանք ապահովել մեր մեկնաբանությունների հիմքում ընկած պատճառներն ու տրամաբանությունը: Աստվածաշունչը մեր հավատքի և դրա կիրառման համար միակ աղբյուրն է: Ցավոք Քրիստոնյաները հաճախ համաձայնության չեն գալիս Աստվածաշնչի ուսմունքների և հիմնավորումների շուրջ: Ընթերցանության այս չորս ցիկլերը նախատեսված են ապահովելու հետևյալ մեկնաբանական հասկացությունները`

1. Ընթերցանության առաջին ցիկլը

ա. Կարդացեք գիրքը մեկ անգամ նստելով. ևս մեկ անգամ կարդացեք այն այլ թարգմանությամբ, լավագույն դեպքում մեկ այլ թարգմանչական տեսությամբ:

- (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)
- (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
- (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)

բ. Փնտրեք ամբողջ գրքի գլխավոր նպատակը: Գտեք գրքի թեման:

գ. Առանձնացրեք (եթե հնարավոր է) գրական մի բաժին, պարագրաֆ կամ նախադասություն, որը հստակ արտահայտում է այս գլխավոր նպատակը կամ թեման

դ. Գտեք գերակշռող գրական ժանրը

- (1) Հին Կտակարան
 - ա) Եբրայերեն պատմվածք
 - բ) Եբրայերեն պոեզիա (իմաստասիրական գրականություն, սաղմոսներ)
 - գ) Եբրայերեն մարգարեություն (արձակ, պոեզիա)
 - դ) Օրենսգիրք
- (2) Նոր Կտակարան
 - ա) Պատմվածքներ (Ավետարաններ, Գործքը)
 - բ) Առակներ (Ավետարաններ)
 - գ) Նամակներ/թղթեր
 - դ) Հայտնության գրականություն

2. Ընթերցանության երկրորդ ցիկլը

ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել հիմնական թեմաները կամ նյութերը

բ. Ընդգծեք հիմնական թեմաները և համառոտ սահմանեք դրանց բովանդակությունը

գ. Ստուգեք ձեր նպատակի սահմանումը և ընդլայնեք ընդհանուր նկարագրությունը սերտողությանը օժանդակող միջոցներով

3. Ընթերցանության երրորդ ցիկլը

ա. Վերընթերցեք ամբողջ գիրքը, փորձելով գտնել պատմական միջավայրը և հենց Աստվածաշնչի միջից հատուկ իրավիճակներ այդ գիրքը գրելու համար

բ. Թվարկեք պատմական իրողություններ, որոնք նշված են Աստվածաշնչյան տվյալ գրքում

- (1) հեղինակը
- (2) տարեթիվը
- (3) ստացողները
- (4) գրի առնվելու հատուկ նպատակը
- (5) մշակութային միջավայրի առանձնահատկությունները, որոնք կապված են գրքի գրի առնվելու նպատակի հետ
- (6) պատմական դեպքերի և դեմքերի հետ կապված խոսքերը

գ. Ընդլայնեք ձեր ուրվագիծը` սխեման, ըստ պարբերությունների մակարդակի` աստվածաշնչյան գրքի տվյալ բաժնի համար, որը մեկնաբանում եք: Միշտ գտեք և ընդգծեք գրական ժանրը: Սա կարող է լինել մի քանի գույն կամ պարբերություն: Այն հնարավորություն է տալիս ձեզ հետևելու բնագրի հեղինակի տրամաբանությանն ու տեքստային կառուցվածքին:

դ. Ստուգեք պատմական միջավայրը` սերտողությանը օժանդակող միջոցներով

4. Ընթերցանության չորրորդ ցիկլը

ա. Վերընթերցեք տվյալ գրական բաժինը մի քանի թարգմանություններով

- (1) բառ առ բառ (NKJV, NASB, NRSV)

- (2) դինամիկ համարժեքը (TEV, JB)
- (3) վերապատմված (Living Bible, Amplified Bible)
- բ. Գտեք գրականական կամ քերականական կառուցվածքը
 - (1) կրկնվող արտահայտությունները, Եփես.1:6,12,13
 - (2) կրկնվող քերականական կառուցվածքները, Հռոմ.8:31
 - (3) հակադրվող հասկացությունները
- գ. Թվարկեք հետևյալ կետերը
 - (1) կարևոր տերմինները
 - (2) անսովոր տերմինները
 - (3) կարևոր քերականական կառուցվածքները
 - (4) հատկապես դժվար բառերը, հատվածները և նախադասությունները
- դ. Գտեք համապատասխան գուգահեռ հատվածները
 - (1) թեմայի շուրջ փնտրեք տվյալ ուսմունքի հետ կապ ունեցող ամենահստակ հատվածը, կիրառելով՝ ա) «սխտեմատիկ աստվածաբանության» գրքեր, բ) համագոր հատվածները նշող Աստվածաշնչեր, գ) համաբարբառներ
 - (2) ձեր թեմայի շրջանակներում գտեք հնարավոր պարաֆրազային գույգ: Բազմաթիվ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են բարբառային գույգերով. շատ հարանվանական հակասություններ ծնվում են աստվածաշնչյան լարվածության միայն կեսի համար «տեքստային ապացույց» ներկայացնելու պատճառով: Ամբողջ Աստվածաշունչն է ներշնչված և մենք պետք է փնտրենք դրա ամբողջական պատգամը, որպեսզի մեր մեկնաբանության համար ապահովենք սուրբգրային բալանսը:
 - (3) Գտեք գուգահեռներ նույն գրքի, հեղինակի կամ ժանրի ներսում. Աստվածաշունչը հանդիսանում է իր իսկ լավագույն մեկնաբանը, քանի որ հեղինակը մեկն է՝ Սուրբ Հոգին:
- ե. Օգտագործեք սերտողությանը օժանդակող միջոցներ ստուգելու պատմական միջավայրի և դեպքերի ձեր ուսումնասիրությունները:
 - (1) սերտողության Աստվածաշնչեր
 - (2) աստվածաշնչյան հանրագիտարաններ, ձեռնարկներ և բառարաններ
 - (3) աստվածաշնչյան ներածություններ
 - (4) աստվածաշնչյան մեկնաբանությունների գրքեր (այս դեպքում ձեր սերտողության ընթացքում թույլ տվեք անցյալի ու ներկայի հավատացյալ համայնքին օգնեն և ուղղեն ձեր անձնական սերտողությունը):

IV. Աստվածաշնչի մեկնաբանության կիրառությունը

Այժմ անցում ենք կատարում կիրառությանը: Դուք ժամանակ տրամադրեցիք հասկանալու տեքստը իր բնագրի միջավայրում: Այժմ պետք է այն կիրառեք ձեր կյանքի, մշակույթի մեջ: Աստվածաշնչի հեղինակությունը ես սահմանում եմ հետևյալ կերպ. «Հասկանալ, թե ինչ էր ասում բնագրի հեղինակը իր օրերի համար և կիրառել այդ ճշմարտությունը մեր օրերում»:

Կիրառությունը պետք է հետևի բնագրի հեղինակի մեկնաբանության նպատակին՝ թե՛ ժամանակի և թե՛ տրամաբանության մեջ: Մենք չենք կարող կիրառել Աստվածաշնչի որևէ պատգամ մեր օրերի համար մինչև չիմանանք, թե ինչ էր դա նշանակում իր օրերի համար: Աստվածաշնչի պատգամը չպետք է երբևէ փոխի իր իմաստը:

Ձեր կազմած մանրակրկիտ ուրվագիծը՝ ըստ պարբերությունների (ընթերցանության երրորդ ցիկլը) կլինի ձեր ուղեցույցը: Կիրառությունը պետք է կազմվի ըստ պարբերությունների և ոչ թե մի խոսքի հիման վրա: Բառերն իմաստ ունեն միայն համատեքստի ներսում. նախադասության ենթամասերը նույնպես իմաստ են արտահայտում միայն համատեքստի ներսում. նախադասությունները նույնպես իմաստավորվում են համատեքստի ներսում: Միակ ներշնչված անձնավորությունը, որը ներգրավված է մեկնաբանության գործընթացում՝ բնագրի հեղինակն է: Մենք միայն հետևում ենք նրա առաջնորդությանը Սուրբ Հոգու լույսի ներքո: Սակայն լուսավորված լինելը դեռևս ներշնչանք չէ: Որպեսզի ասենք, որ «այսպես է ասում Տերը», մենք պետք է մնանք բնագրի հեղինակի նպատակի մեջ: Կիրառությունը պետք է կապված լինի հատկապես ամբողջ գրքի, գրական բաժնի և պարբերության մտքի զարգացման ընդհանուր նպատակի հետ:

Թույլ մի տվեք, որ մեր օրերի խնդիրները մեկնաբանեն Աստվածաշունչը. թողեք, որ Աստվածաշունչը խոսի: Հնարավոր է այդ անելու համար մեզնից պահանջվի տեքստից հանել սկզբունքներ: Սա հավաստի

կլինի, եթե տեքստը պաշտպանի տվյալ սկզբունքը: Դժբախտաբար, շատ դեպքերում մեր սկզբունքները պարզապես «մերն» են և ոչ թե տեքստինը:

Աստվածաշունչը կիրառելու հարցում կարևոր է հիշել, որ Աստվածաշնչյան տվյալ տեքստի (բացառությամբ մարգարեությունների) համար միայն մեկ նշանակությունն է ճիշտ: Այդ նշանակությունը կապված է բնագրի հեղինակի մտադրության հետ, երբ նա դիտարկում էր իր օրերի որևէ ճգնաժամ կամ կարիք: Հնարավորին շատ կիրառություններ կարող են սերվել այս մեկ նշանակությունից: Կիրառությունը հիմնված է լինում նամակը ստացողների կարիքների վրա, սակայն պետք է առնչություն ուենա բնագրի հեղինակի նպատակի հետ:

V. Մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունները

Մինչ այժմ քննարկեցինք մեկնաբանության և կիրառության մեջ առկա տրամաբանական և տեքստային գործընթացները: Այժմ թույլ տվեք համառոտ քննարկել մեկնաբանության հոգևոր առանձնահատկությունը: Հետևյալ ստուգացանկը ինձ օգտակար է եղել.

1. Աղոթեք, որ Սուրբ Հոգին օգնի ձեզ (տես՝ 1 Կորնթ.1:26-2:16)
2. Աղոթեք անձնական ներման և ձեզ հայտնի մեղքերից մաքրվելու համար (տես՝ 1 Հովհ.1:9)
3. Աղոթեք Աստծուն ավելի շատ ճանաչելու ցանկության համար (տես՝ Սաղմ.19:7-14; 42:1ա; 119:1ա)
4. Կիրառեք ցանկացած նոր գաղափար անմիջապես ձեր կյանքի համար
5. Մնացեք խոնարհ և պատրաստ սովորելու

Դժվար է պահել տրամաբանական գործընթացի և Սուրբ Հոգու հոգևոր առաջնորդության միջև հավասարակշռությունը: Հետևյալ մեջբերումները օգնել են ինձ բալանսավորելու այս երկուսը.

1. Ջեյմս Վ. Սայր, *Սուրբ Գրքի Աղավաղում*, էջ 17-18, (James W. Sire, *Scripture Twisting*)

«Լուսավորություն գալիս է Աստծո ժողովրդի մտածելակերպի վրա և ոչ թե միայն հոգևոր էլիտայի: Աստվածաշնչյան Քրիստոնեության մեջ գուրու դասակարգում գոյություն չունի, ո՛չ լուսավորյալներ, և ո՛չ էլ մարդիկ, որոնց միջոցով պետք է հատուկ մեկնաբանություններ կատարվեն: Այսպիսով, մինչ Սուրբ Հոգին տալիս է իմաստության, գիտության և հոգևոր զանազանության հատուկ պարզեցումները, Նա չի նշանակում այս պարզեցումներով օժտված Քրիստոնյաներին լինելու Իր Խոսքի միակ հեղինակավոր մեկնաբանները: Իր ժողովրդից յուրաքանչյուրը կարող է սովորել, քննել և զանազանել Աստծո Խոսքը, որը նաև հեղինակություն է հանդիսանում նույնիսկ այն մարդկանց համար, որոնց Աստված հատուկ կարողություններ է տվել: Ամփոփելով, ուզում եմ կիսվել իմ ենթադրությամբ ամբողջ գրքի վերաբերյալ. Աստվածաշունչը Աստծո ճշմարիտ հայտնությունն է ամբողջ մարդկությանը, այն մեր մեծագույն հեղինակությունն է բոլոր հարցերում, որոնց մասին խոսվում է այնտեղ. Աստվածաշունչը ընդհանրապես առեղծվածային չէ և կարող է ցանկացած մշակույթի մեջ ապրող հասարակ մարդու համար լինել լիովին հասկանալի»:

2. Ըստ Կրկգարդի, տեղ գտած Բերնարդ Ռեմի, *Բողոքական Աստվածաշնչյան Մեկնաբանություն*, գրքում, էջ՝ 75 (Bernard Ramm, *Protestant Biblical Interpretation*):

Համաձայն Կիրկգարդի, Աստվածաշնչի քերականական, բառային և պատմական ուսումնասիրությունը անհրաժեշտ, սակայն առաջնային է Աստվածաշնչի ճիշտ ընթերցանությունը: «Մարդը պետք է կարդա Աստվածաշունչը *որպես Աստծո Խոսք*՝ սիրտն իր բերանի մեջ առած, իր ոտքի ծայրերի վրա կանգնած, ակնկալությամբ և Աստծո հետ հաղորդակցվելով: Աստվածաշունչը անմտությամբ, անուշադրությամբ, ակադեմիկորեն կամ մասնագիտորեն կարդալը դեռ չի նշանակում ընթերցել այն որպես Աստծո Խոսք: Երբ մեկն ընթերցում է այս Գիրքը որպես սիրո նամակ, այն ժամանակ է, որ կարդում է Աստվածաշունչը որպես Աստծո Խոսք»:

3. Հ. Հ. Ռոուլի *Աստվածաշնչի Արդիականությունը*, էջ 19 (H.H. Rowley in *The Relevance of the Bible*):

«Ոչ մի Աստվածաշնչյան լիարժեք գիտելիք չի կարող տիրել նրա բոլոր գանձերին: Այն չի հերքում նմանօրինակ գիտելիքները, քանի որ կարևոր են այն լիարժեք հասկանալու համար: Սակայն դա պետք է առաջնորդի այս գրքի հոգևոր գանձերի հոգևոր գիտությանը, եթե ուզում եք այն լիարժեք լինի: Իսկ այդ հոգևոր գիտության համար անհրաժեշտ է ավելին, քան ողջամտությունն է: Հոգևոր բաները հոգևորապես են քննվում և Աստվածաշունչն ուսումնասիրողը պետք է ունենա հոգևոր ընկալունակության մոտեցում, Աստծուն գտնելու մեծ փափագ, որպեսզի կարողանա նվիրվել Նրան, եթե ուզում է հասնել գիտական ուսումնասիրություններից վեր՝ բոլոր գրքերից ամենահրաշալի Գրքի ավելի հարուստ ժառանգությանը»:

VI. Այս մեկնաբանության գրքի մեթոդը

Այս *Մերտոդոլոգիան Ուղղեցույց Մեկնաբանության Գիրքը* նախատեսված է ձեր մեկնաբանական գործընթացին հետևյալ կերպ աջակցելու համար՝

1. Ամեն գիրք համառոտ ծանոթացնում է պատմական միջավայրի հետ: «Ընթերցանության երրորդ ցիկլը» վերջացնելուց հետո ստուգեք այս տեղեկությունը:
2. Ամեն գլխի սկզբում կան համատեքստային հասկացություններ: Սրանք կօգնեն ձեզ տեսնելու, թե ինչպես է կառուցված գրականական բաժինը:
3. Ամեն գլխի կամ հիմնական գրական բաժնի սկզբում տրված են մի քանի պարբերության բաժանումներ արդի թարգմանություններից և դրանց պատկերավոր լուսաբանումները.

ա. Աստվածաշնչի Միացյալ Ընկերության Հունարեն տեքստը, չորրորդ խմբագրություն (UBS⁴)

բ. Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչը, խմբագրված 1995 (NASB)

գ. Նոր Քինգ Չեյմս Տարբերակը (NKJV)

դ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV)

ե. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV)

զ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB)

Պարբերությունների բաժանումները ներշնչված չեն և պետք է հիմնավորվեն ըստ համատեքստի: Իրարից տարբերվող թարգմանչական տեսություններ և աստվածաբանական տեսանկյուններ մի քանի թարգմանությունների հետ համեմատելով հնարավորություն ենք ունենում վերլուծելու բնագրի հեղինակի մտքերի ենթադրյալ կառուցվածքը: Ամեն պարբերություն ունի մեկ հիմնական ճշմարտություն: Չի կարելի մեկնաբանել, քարոզել կամ սովորեցնել մի պարբերությունից պակաս հատված: Նաև հիշեք, որ ամեն պարբերություն կապված է նախորդող և հաջորդող պարբերությունների հետ: Այդ իսկ պատճառով այդքան կարևոր է ամբողջ գրքի պարբերությունների բաժանումը: Մենք պետք է կարողանանք հետևել բնագրի ներշնչված հեղինակի կողմից փոխանցած թեմայի տրամաբանական հաջորդականությանը:

4. Բոքի գրառումները հետևում են ըստ համարների մեկնաբանության մոտեցմանը: Սա մեզ ստիպում է հետևել բնագրի հեղինակի մտադրությանը: Այդ գրառումները տեղեկություններ են ապահովում մի քանի ոլորտներից.

ա. գրական համատեքստից

բ. պատմական, մշակութային հասկացություններից

գ. քերականական տեղեկություններից

դ. բառային սերտոդություններից

ե. համապատասխան գուգահեռ հատվածներից

5. Մեկնաբանության ընթացքում որոշ տեղերում ՆԱՍՍ (NASV, թարմեցված 1995-ին) թարգմանությանը կիրացնեն մի քանի այլ ժամանակակից թարգմանության տարբերակներ.

ա. Նոր Քինգ Չեյմս Տարբերակը (NKJV), որը հետևում է «Textus Receptus» -ի տեքստային ձեռագրերին:

բ. Նոր Վերանայված Ստանդարտ Տարբերակը (NRSV), որը բառ-առ-բառ վերանայում է Վերանայված Ստանդարտ Տարբերակի Եկեղեցիների Ազգային Խորհրդից:

գ. Այսօրվա Անգլերեն Տարբերակը (TEV), որը Ամերիկյան Աստվածաշնչյան Ընկերության համարժեք դինամիկ թարգմանությունն է:

դ. Երուսաղեմի Աստվածաշունչը (JB), որը Փրանսիական Կաթոլիկ դինամիկ համարժեք թարգմանության վրա հիմնված Անգլերեն թարգմանությունն է:

6. Նրանց, ովքեր չեն կարողում հունարեն, անգլերեն թարգմանությունների համեմատությունները կօգնեն ճանաչելու տեքստում առկա խնդիրները.

ա. ձեռագրային փոփոխությունները

բ. բառի այլընտրանքային նշանակությունները

գ. քերականորեն բարդ տեքստերը և կառուցվածքը

դ. խրթին տեքստերը, թեև անգլերեն թարգմանությունները չեն կարող լուծել այս խնդիրները, այլ միայն թիրախավորում են տվյալ հատվածները ավելի խորը և մանրակրկիտ ուսումնասիրության համար

ե. Յուրաքանչյուր գլխի վերջում տրված են թեմատիկ քննարկումներ, որոնք փորձում են թիրախավորել այդ գլխի հիմնական մեկնաբանության թեմաները:

ԱՅՍ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

AB	Խարիսխի Աստվածաշունչ (Anchor Bible) մեկնաբանության գիրքը, խմբ. Ուիլյամ Ֆոքսուելի և Դեյվիդ Նոել Ֆրիդմենի կողմից
ABD	Խարիսխի Աստվածաշնչի Բառարան (Anchor Bible Dictionary, 6 vols.), 6 հատոր՝ խմբ. Դեյվիդ Նոել Ֆրիդմենի կողմից
AKOT	Հին Կտակարանի Վերլուծական Բանալի (Analytical Key to the Old Testament) Չոն Չոգեֆ Օուենսի կողմից
ANE	Անտիկ Մերձավոր Արևելք (Ancient Near East)
ANET	Մերձ-արևելյան Հնագույն Տեքստեր (Ancient Near Eastern Texts) Չեյնս Բ. Պրիտչարդ
ASV	Ամերիկյան Ստանդարտ Տարբերակ (American Standard Version)
AV	Լիազորված Տարբերակ (Authorized Version)
BAGD	Նոր Կտակարանի հունարեն-անգլերեն բառարան և վաղ Քրիստոնեական գրականություն, Վոլտեր Բյոներ, երկրորդ խմբագրությունը՝ Ֆ. Վ. Գինգրիջի և Ֆրեդերիկ Դանկերի
BDB	Նոր Կտակարանի եբրայերեն և անգլերեն բառարան Ֆ. Բրաունի, Ս. Ռ. Դրայվերի և Ս. Ա. Բրիգգի կողմից
BHS	Biblia Hebraica Stuttgartensia, GBS, 1997
DSS	Մեռյալ Ծովի Գալարները (Dead Sea Scrolls)
EJ	Հուդայական Հանրագիտարան (Encyclopedia Judaica)
IDB	Մեկնաբանի Աստվածաշնչյան Բառարան, (4 հատոր), (The Interpreter's Dictionary of the Bible), խմբ. Չորջ Ա. Բաթիքի կողմից
ISBE	Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարան, 5 հատոր, խմբ. Չեյնս Օրրի կողմից (International Standard Bible Encyclopedia)
JB	Երուսաղեմի Աստվածաշունչ (Jerusalem Bible)
JPSOA	Սուրբ Գիրքը ըստ Մասորետիկ Տեքստի՝ Նոր Թարգմանություն, (The Jewish Publication Society of America)
KB	Հին Կտակարանի եբրայերեն և արամերեն բառարան, Լյուդվիգ Կոհլերի և Վոլտեր Բաումգարտների կողմից
KJV	Քինգ Չեյնս Տարբերակը (King James Version)
LAM	Սուրբ Գիրքը հնագույն արևելյան ձեռագրերից (the Peshitta), Չորջ Մ. Լամսայի կողմից
LUCIAN	Սիրիայի Անտիոքից LXX-ի Երկրորդ Դարի Սրբագրություն
LXX	Մեպտուլագինտա (հունարեն-անգլերեն) Չոնդերվանի կողմից, 1970
MOF	Աստվածաշնչի Նոր Թարգմանություն, Չեյնս Մոֆֆատի կողմից
MT	Մասորետիկ եբրայերեն տեքստը (Masoretic Hebrew Text)

NAB	Նոր Ամերիկյան Աստվածաշնչյան Տեքստ (New American Bible Text)
NASB	Նոր Ամերիկյան Ստանդարտ Աստվածաշունչ (New American Standard Bible)
NCV	Թոմաս Նելսոնի կողմից Նոր Դարաշրջանի Տարբերակը, հրատարակված Harper Collins Christian Publishing կողմից (New Century Version by Thomas Nelson)
NEB	Նոր Անգլերեն Աստվածաշունչ (New English Bible)
NET	Նոր Անգլերեն Թարգմանություն՝ երկրորդ Բետա հրատարակչություն (New English Translation)
NIDNTT	Նոր Կտակարանի աստվածաբանության նոր միջազգային բառարան, 4 հատոր, խմբ. Քոլին Բրաունի կողմից (New International Dictionary of New Testament Theology)
NIDOTTE	Հին Կտակարանի աստվածաբանության և էզզեգետիկայի նոր միջազգային բառարան, 5 հատոր, խմբ. Ուիլեմ Ա. Վան Գեմերենի կողմից (New International Dictionary of Old Testament Theology and Exegesis)
NIV	Նոր Միջազգային Տարբերակ (New International Version)
NJB	Նոր Երուսաղեմի Աստվածաշունչ (New Jerusalem Bible)
NKJV	Նոր Քինգ Ջեյմս Տարբերակը (New King James Version)
NRSV	Վերանայված Ստանդարտ Նոր Աստվածաշունչ (New Revised Standard Bible)
OTPG	Հին Կտակարանի քերականական վերլուծության ուղեցույց, Թոդ Ս. Բիլի, Ուիլյամ Ա. Բենկսի և Քոլին Սմիթի կողմից (Old Testament Parsing Guide)
REB	Վերանայված Անգլերեն Աստվածաշունչ (Revised English Bible)
RSV	Վերանայված Ստանդարտ Տարբերակ (Revised Standard Version)
SEPT	Մեպտուազինտան, հունարեն-անգլերեն, Չոնդերվանի կողմից, 1970 (The Septuagint)
TCNT	Քսաներորդ Դարի Նոր Կտակարան (The Twentieth Century New Testament)
TEV	Այսօրվա Անգլերեն Տարբերակ, Աստվածաշնչյան Ընկերությունների Միությունից (Today's English Version)
UBS ⁴	Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունների Հունարեն Նոր Կտակարանի չորրորդ վերանայված խմբագրությունը (United Bible Societies' The Greek New Testament)
YLT	Յանգի Սուրբ Գրքի Բառացի Թարգմանությունը, Ռոբերտ Յանգի կողմից (Young's Literal Translation)
ZPEB	Չոնդերվանի Պատկերագրող Աստվածաշնչի Հանրագիտարան, խմբ. Մերրիլ Ս. Տեննիսի կողմից (Zondervan Pictorial Encyclopedia of the Bible)

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԿՁԲՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- Ա. Գործք Առաքելոցը մի անփոխարինելի կապ է ստեղծում Հիսուսի կյանքի դեպքերի (Ավետարանների) և Նոր Կտակարանի Թ-դթերում Նրա աշակերտների կողմից Հիսուսի գործերի և խոսքերի մեկնաբանության, քարոզների և դրանց կիրառության միջև:
- Բ. Առաջին եկեղեցին կազմել և օգտագործում էր Նոր կտակարանյան գրքերի երկու հավաքածու. (1) Ավետարանները (չորս ավետարանները) և (2) Առաքյալը (Պողոսի նամակները): Սակայն, երկրորդ դարի վաղ քրիստոլոգիական հերետիկոսությունների հետ մեկտեղ բացահայտվեց Գործք Առաքելոց գրքի արժեքը: Գործք Առաքելոցը հայտնում է առաքելական քարոզության (*kerygma*) բովանդակությունն ու նպատակը և ավետարանի հրաշալի արդյունքները:
- Գ. Գործք Առաքելոցի պատմական ճշգրտությունը շեշտադրվել և հաստատվել է ժամանակակից հնագիտական հայտնագործությունների միջոցով, հատկապես կապված հռոմեական կառավարման պաշտոնների հետ.
1. *stratēgoi*, Գործք 16:20,22,35,36 (նաև կիրառվում է տաճարի պահակախմբի ղեկավարների համար, Ղուկ.22:4,52; Գործք 4:1; 5:24-26)
 2. *politarchas*, Գործք 17:6,8; և *prōtō*, Գործք 28:7, տե՛ս Ա. Ն. Շերվին Ուայթ, *Նոր Կտակարանում Հռոմեական Հասարակությունը և Հռոմեական Օրենքը* (A. N. Sherwin-White, *Roman Society and Roman Law in the New Testament*)
- Ղուկասն արձանագրում է վաղ եկեղեցու ներսում տիրող լարվածությունները, նույնիսկ Պողոսի և Բառնաբասի միջև եղած վեճը (տե՛ս Գործք 15:39): Այն ազնիվ, հավասարակշիռ, պատմականորեն և աստվածաբանորեն ուսումնասիրված գիրք է:
- Դ. Հնագույն հունարեն տեքստերում գրքի վերնագիրը գտնվել է փոքր ինչ տարբերություններով.
1. Ձեռագիր Ռ (Sinaiticus), Տերտուղիանոսը, Դիդիմեոսը և Եվսեբիոսը նշում են «Գործք» (ASV, NIV),
 2. Ձեռագիր B (Vaticanus), D (Bezae), Իրենեոսը, Տերտուղիանոսը, Կյուրենոսը և Աթանասիոսը ստորագրությամբ նշում են «Առաքյալների Գործերը» /Գործք Առաքելոց/ (KJV, RSV, NEB)
 3. Ձեռագիր A² (Ալեքսանդրիոսի առաջին սրբագրումը), E, G և Ոսկերեանը նշում են «Սուրբ Առաքյալների Գործերը»
- Հնարավոր է, որ հունարեն *praxeis*, *praxis* (գործեր, կերպեր, վարք, աշխատանքներ, կիրառություններ) բառերը հանդիսանում են հնագույն Միջերկրական գրականության ժանր, որոնք արտահայտում են հայտնի կամ ազդեցիկ մարդկանց (օր.՝ Հովհաննեսի, Պետրոսի, Ստեփանոսի, Փիլիպոսի, Պողոսի) կյանքն ու գործերը: Հնարավոր է բնագրում գիրքը վերնագիր չի ունեցել (ինչպես Ղուկասի Ավետարանը):
- Ե. Գոյություն ունեն Գործք Առաքելոցի երկու տարբեր տեքստային ավանդույթներ: Ավելի համառոտը Ալեքսանդրիականն է (MSS P⁴⁵, P⁷⁴, Ռ, A, B, C): Ձեռագրերի արևմտյան ընտանիքը (P²⁹, P³⁸, P⁴⁸ և D) կարծես թե իր մեջ ընդգրկում է շատ ավելի մանրամասներ: Հայտնի չէ, համաձայն վաղ եկեղեցու ավանդության, արդյո՞ք դրանք հեղինակի կողմից, թե հետագայում դպիրների կողմից են ներառվել գրքի մեջ: Տեքստային զիտնականներից շատերը հավատում են, որ Արևմտյան ձեռագրերը պարունակում են ապագայում կատարված հավելումներ, քանի որ դրանք՝
1. հարթեցնում կամ փորձում են լուծել անսովոր կամ խրթին տեքստերը
 2. ավելացնում են հավելյալ մանրամասներ
 3. ավելացնում են հատուկ արտահայտություններ՝ շեշտադրելու Հիսուսին որպես Քրիստոս
 4. երբեք չեն մեջբերվում առաջին երեք դարերի եկեղեցու որևէ Քրիստոնյա գրողի կողմից (տե՛ս F. F. Bruce, *Acts: Greek Text*, pp.69-80: /Փ. Ֆ. Բրյուս, *Գործք. Հունարեն Տեքստը*/)
- Ավելի մանրակրկիտ քննարկման համար դիմեք Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունների հրատարակչության *A Textual Commentary on the Greek New Testament* by Bruce M. Metzger /Հունարեն Նոր Կտակարանի Տեքստային Մեկնաբանություն, Բրյուս Մ. Մեցգեր/, էջ 259-272:
- Հետագայում բազմաթիվ ավելացումների պատճառով, մեր մեկնաբանության մեջ չենք աշխատի բոլոր տեքստային տարբերակների հետ: Միայն տեքստային տարբերակի մեծ անհրաժեշտության դեպքում այս մեկնաբանության մեջ կաշխատենք վերջինիս հետ:

ՀԵՂԻՆԱԿԸ

Ա. Գիրքն անանուն է, սակայն ակնհայտ ենթադրություններ կան, որ հեղինակը Ղուկասն է:

1. Առանձնահատուկ և անսպասելի «մենք» բաժիններից (16:10-17 /երկրորդ միսիոներական ճամփորդությունը դեպի Փիլիպպե/, 20:5-15; 21:1-18 /երրորդ միսիոներական ճամփորդության ավարտը/ և 27:1-28:16 /Պողոսը որպես բանտարկյալ ուղարկվում է Հռոմ/) խիստ ենթադրվում է, որ հեղինակը Ղուկասն է:
2. Երրորդ Ավետարանի և Գործք Առաքելոցի միջև կապը ակնհայտ է, երբ համեմատում ենք Ղուկաս 1:1-4-ը Գործք 1:1-2-ի հետ:
3. Ղուկասը, որպես հեթանոս բժիշկ նշվում է իբրև Պողոսի գործընկեր՝ Կող.4:10-14, Փիլիմոն 24 և 2 Տիմ.4:11: Ղուկասը ՆԿ-ում միակ հեթանոս գրողն է:
4. Վաղ եկեղեցու միաձայն վկայությունն այն էր, որ հեղինակը Ղուկասն է:
 - ա. Մուրատորիան Պատառիկը (մ.թ.180-200 Հռոմից, ասում է «հավաքված բժիշկ Ղուկասի կողմից»)
 - բ. Իրենեոսի մատենագրությունները (մ.թ.130-200)
 - գ. Ալեքսանդրիացի Կլեմենտի մատենագրությունները (մ.թ.156-215)
 - դ. Տերտուլիանոսի մատենագրությունները (մ.թ.160-200)
 - ե. Օրիգենի մատենագրությունները (մ.թ.185-254)
5. Գրելաճնի և բառապաշարի ներքին վկայությունը (հատկապես բժշկական տերմինները) հաստատում են, որ հեղինակը Ղուկասն է (Սըր Ուիլյամ Ռամսեյ և Ադոլֆ Վոն Հարնեք /Sir William Ramsay and Adolph Von Harnack/):

Բ. Մենք ունենք Ղուկասի մասին տեղեկությունների երեք աղբյուր.

1. ՆԿ-ում երեք հատված (Կող.4:10-14; Փիլ.24; 2 Տիմ.4:11) և հենց Գործք Առաքելոց գիրքը
2. Ղուկասին ուղղված երկրորդ դարի հակա-Մարկիոն նախաբանը (մ.թ.160-180)
3. Չորրորդ դարի վաղ եկեղեցու պատմաբան Եվսեբիոսը, իր *Էկլեսիաստիկ Պատմության* մեջ (Eusebius, *Ecclesiastical History*), 3:4 ասում է. «Ղուկասը, լինելով ծնունդով բնիկ Անտիոքցի, իսկ մասնագիտությամբ՝ բժիշկ, գործակցելով հիմնականում Պողոսի հետ և մնացած առաքյալների հետ լինելով ավելի քիչ մտերիմ, թողել է մեզ հոգիների բժշկության օրինակներ, որոնք նրան են հասել առաքյալներից և տեղ գտել Ղուկասի երկու ներշնչված գրքերում՝ Ավետարանում և Գործք Առաքելոցում»:
4. Սա Ղուկասի ամփոփ կենսագրությունն է՝
 - ա. Հեթանոս (Կող.4:12-14՝ Եպափրասի և Դեմասի հետ և ոչ թե հրեա օգնականների)
 - բ. Կա՛մ Սիրիայի Անտիոքից (Ղուկասի անտի-Մարկիոն նախաբանում) կա՛մ էլ Մակեդոնիայի Փիլիպպեից (Սըր Ուիլյամ Ռամսեյը /Sir William Ramsay/ Գործք 16:9 մասին)
 - գ. Բժիշկ (տես՝ Կող.4:14) կամ առնվազն բավականին կիրթ մարդ
 - դ. Դարձի է եկել իր չափահաս տարիքում, երբ Անտիոքում ծնվեց եկեղեցին (անտի-Մարկիոն նախաբան)
 - ե. Պողոսի ճամփորդական գործընկերը (Գործք Առաքելոցի «մենք» բաժնում)
 - զ. Չամուսնացած
 - է. Գրել է երրորդ Ավետարանը և Գործք Առաքելոցը (միանման ներածություններով, գրելաճով և բառապաշարով)
 - ը. Մահացել է 84 տարեկան հասակում, Բոյոտիայում:

Գ. Դիտարկումներ այն հարցի շուրջ, թե արդյո՞ք Ղուկասն է հեղինակը

1. Աթենքում Մարս Բլրի վրա Պողոսի քարոզի մեջ օգտագործվում է հույն փիլիսոփայության դասեր և տերմիններ՝ ընդհանուր հարթակ դնելու համար (տես՝ Գործք 17), սակայն Պողոսը Հռոմ.1-2 գլուխներում կարծես թե բոլոր «ընդհանուր հարթակները» (բնություն, ներքին բարոյական վկայություն) համարում է դատարկ բան:
2. Գործք Առաքելոցում Պողոսի քարոզներն ու մեկնաբանությունները նկարագրում են նրան որպես Մովսեսին լուրջ վերաբերվող մեկի, սակայն Պողոսի նամակները թերագնահատում են Օրենքը, որպես խնդրահարույց և անցողիկ:
3. Գործք Առաքելոցում Պողոսի քարոզները չունեն այն նույն էսկատոլոգիական շեշտադրությունը, որն ունեն իր վաղուց գրած գրքերը (այսինքն՝ 1 և 2 Թեսաղոնիկեցիները):
4. Տերմինների, գրելաճի և շեշտադրությունների այս հակադրությունը հետաքրքիր է, բայց ոչ ամփոփիչ: Երբ նույն մոտեցումը կիրառվում է Ավետարանների հետ, Մինոպտիկ Ավետարանների Հիսուսը Հովհաննես Ավետարանի Հիսուսի հետ համեմատած խոսում է

շատ տարբեր: Մինչդեռ շատ քիչ աստվածաբաններ կհերքեն այն փաստը, որ երկուսն էլ ներկայացնում են Հիսուսի կյանքը:

Դ. Երբ քննարկում ենք, թե ով է հանդիսանում Գործք Առաքելոցի հեղինակը, շատ կարևոր է քննարկել այն աղբյուրները, որից օգտվում էր Ղուկասը, քանի որ շատ գիտնականներ (օր.՝ Ս. Ս. Թորի /C. C. Torrey/) հավատում են, որ Ղուկասը օգտագործել է արամեերեն աղբյուրի փաստաթղթեր (կամ բանավոր ավանդույթներ) իր առաջին տասնհինգ գլուխներից շատերի համար: Եթե սա ճիշտ է, ապա Ղուկասը հանդիսանում է ոչ թե այս նյութի հեղինակը, այլ խմբագիրը: Նույնիսկ Պողոսի վերջին քարոզների մեջ Ղուկասը ներկայացնում է միայն նրա ամփոփ խոսքը և ոչ թե տալիս բառացի արձանագրություն: Աղբյուրները, որոնցից օգտվել է Ղուկասը, այնքան կարևոր են, որքան նրա այս գրքի հեղինակ լինելը:

ՏԱՐԵԹԻՎԸ

- Ա. Գոյություն ունեն շատ քննարկումներ և տարածայնություններ Գործք Առաքելոցի գրառման տարեթվի շուրջ, սակայն գրքում արձանագրված դեպքերը տեղի են ունեցել մոտ մ.թ. 30-63 (Պողոսը Հռոմի բանտից ազատ արձակվեց 60-ականների կեսերին և կրկին ձերբակալվեց ու մահապատժի ենթարկվեց Ներոնի իշխանության օրոք, հավանաբար մ.թ.65-ի հալածանքների ժամանակ):
- Բ. Եթե ենթադրություններ կատարենք ըստ գրքի ապոկրեֆիկ բնույթի՝ Հռոմեական կառավարության հետ կապված, ապա տարեթիվը (1) մ.թ. 64-ից առաջ է (Հռոմում Զրիստոնյաների հանդեպ Ներոնի սկսած հալածանքների սկիզբը) և/կամ (2) կապված է մ.թ. 66-73-ի հրեական հեղափոխության հետ:
- Գ. Եթե փորձենք կապել Գործք Առաքելոցի և Ղուկաս Ավետարանի գրվելու տարեթվերը ըստ հերթականության, ապա Ավետարանի գրառման տարեթիվը ազդում է Գործք Առաքելոցի գրառման տարեթվի վրա: Քանի որ Տիտոսի օրոք մ.թ.70-ի Երուսաղեմի անկումը մարգարեացված էր (Ղուկաս 21), սակայն չի նկարագրվում, թվում է, որ տարեթիվը պետք է լինի մ.թ.70: Եթե այդպես է, ապա Գործք Առաքելոցի տարեթիվը՝ որպես Ավետարանի շարունակություն, պետք է լինի այն գրվելուց հետո:
- Դ. Եթե մեզ անհանգստացնում է Պողոսի մասին պատմության կտրուկ ավարտը (Պողոսը դեռևս Հռոմի բանտում գտնվելիս, Փ. Ֆ. Բրյուս /F. F. Bruce/), ապա գրքի գրվելու տարեթիվը կապված է Պողոսի առաջին հռոմեական բանտարկության հետ, հակված՝ մ.թ.58-63:
- Ե. Գործքում արձանագրված մի քանի պատմական դեպքեր իրենց պատմական տարեթվերով:
1. Կլավդիոս կայսեր օրոք համաշխարհային սովը (Գործք 11:28, մ.թ.44-48)
 2. Հերովդես Ագրիպաս I-ի մահը (Գործք 12:20-23, մ.թ.44 [զարուն])
 3. Սերգիոս Պողոսի փոխհյուպատոսությունը (Գործք 13:7, պաշտոնադրված մ.թ.53)
 4. Կլավդիոսի օրոք հրեաների արտաքսումը Հռոմից (Գործք 18:2, մ.թ.49 [?])
 5. Գաղիոնի փոխհյուպատոսությունը /բղեշի փոխանորդ/ Գործք 18:12 (մ.թ.51 կամ 52 [?])
 6. Ֆելիքսի փոխհյուպատոսությունը (Գործք 23:26; 24:27, մ.թ.52-56 [?])
 7. Ֆեստոսը փոխարինում է Ֆելիքսին (Գործք 24:27, մ.թ.57-60 [?])
 8. Հուդայի հռոմեացի պաշտոնյաները
 - ա. Կուսակալները
 - (1) Պոնտացի Պիղատոսը, մ.թ.26-36
 - (2) Մարսելիոսը, մ.թ.36-37
 - (3) Մարուլոսը, մ.թ.37-41
 - բ. Մ.թ.41-ին հռոմեական կառավարման կուսակալական մոդելը փոխարինվեց կայսերական մոդելով: Հռոմի կայսր Կլավդիոսը մ.թ.41-ին նշանակեց Հերովդես Ագրիպաս I-ին:
 - գ. Հերովդես Ագրիպաս I-ի մահից հետո՝ մ.թ.44, կուսակալության մոդելը վերահաստատվեց մինչև մ.թ.66:
 - (1) Անտոնիոս Ֆելիքս
 - (2) Պորկիոս Ֆեստոս

ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ա. Գործք Առաքելոց գրքի նպատակներից մեկը Հիսուսի հրեական ծագման հետևորդների անհարձանագրելն էր՝ վերնատնից մինչև կայսրի պալատ և ամբողջ աշխարհով մեկ:

1. Այս աշխարհագրական սխեման Գործք 1:8-ի հետևանքն է, որը հանդիսանում է Գործքի Մեծ Հանձնարարականը (Մատթ.28:19-20):
2. Աշխարհագրական առումով այսպիսի տարածումը արտահայտվում է մի քանի կերպ.
 - ա. Կիրառելով մեծ քաղաքներ և պետական սահմաններ: Գործքում նշված է 32 երկիր, 54 քաղաք և 9 Միջերկրական կղզի: Երեք ամենամեծ քաղաքներն են Երուսաղեմը, Անտիոքը և Հռոմը (տես՝ Գործք 9:15):
 - բ. Կիրառելով կարևոր մարդկանց: Գործք Առաքելոցը կարելի է բաժանել երկու մասի՝ Պետրոսի և Պողոսի ծառայությունները: Գործքում նշված են 95-ից ավելի մարդիկ, սակայն մեծամասամբ հանդիպում ենք Պետրոսին, Ստեփանոսին, Փիլիպոսին, Բառնաբասին, Հակոբոսին և Պողոսին:
 - գ. Գոյություն ունեն Գործքում հաճախակի հանդիպող երկու կամ երեք գրական ժանրեր, որոնք արտահայտում են հեղինակի կողմից գրքի կառուցվածքի վրա կատարած գործերը:

(1) ամփոփիչ խոսքեր	(2) անմասն խոսքեր	(3) թվերի կիրառում
1:1-6:7 (Երուսաղեմում)	2:47	2:41
6:8-9:31 (Պաղեստինում)	5:14	4:4
9:32-12:24 (դեպի Անտիոք)	6:7	5:14
12:25-15:5(դեպի Փոքր Ասիա)	9:31	6:7
16:6-19:20 (Հունաստան)	12:24	9:31
19:21-28:31 (դեպի Հռոմ)	16:5	11:21,24
	19:20	12:24
		14:1
		19:20

Բ. Գործք Առաքելոցը ըստ էության կապված է դավանանության համար Հիսուսի մահվան շուրջ մարդկանց թուրքիմացության հետ: Հայտնի է, որ Ղուկասը գրում է հեթանոսներին (Թեոփիլոսին, հավանաբար մի հռոմեացի պաշտոնյայի): Նա օգտագործում է (1) Պետրոսի, Ստեփանոսի և Պողոսի քարոզները, ցույց տալու հրեաների ծրագրերը և (2) Հռոմի կառավարական պաշտոնյաների դրական վերաբերմունքը Քրիստոնեության հանդեպ: Հռոմեացիները Հիսուսի հետևորդներից վախենալու ոչինչ չունեին:

1. Քրիստոնյա առաջնորդների քարոզները
 - ա. Պետրոս, 2:14-40; 3:12-26; 4:8-12; 10:34-43
 - բ. Ստեփանոս, 7:1-53
 - գ. Պողոս, 13:10-42; 17:22-31; 20:17-25; 21:40-22:21; 24:10-21; 26:1-29
2. Կառավարության պաշտոնյաների հետ կապերը
 - ա. Պոնտացի Պիղատոսը, Ղուկաս 23:13-25
 - բ. Սերգիոս Պողոսը, Գործք 13:7,12
 - գ. Փիլիպպեի գորապետները, Գործք 16:35-40
 - դ. Գաղիոնը, Գործք 18:12-17
 - ե. Եփեսոսի ասիացի մեծամեծները, Գործք 19:23-41 (տես՝ հ.31)
 - զ. Կլավդիոս Լյուսիաս, Գործք 23:29
 - է. Ֆելիքսը, Գործք 24
 - ը. Պորկիոս Փեստոսը, Գործք 24
 - թ. Ագրիպաս II, Գործք 26 (տես՝ հ.32)
 - ժ. Պոպիլիոսը, Գործք 28:7-10
3. Երբ համեմատում ենք Պետրոսի քարոզները Պողոսի քարոզների հետ, ակնհայտ է, որ Պողոսը նորարար չէր, այլ առաքելական ավետարանի ճշմարտությունների հավատարիմ քարոզիչ: Եթե ինչ-որ մեկը կրկնօրինակում է, ապա դա Պետրոսն է (տես՝ 1 Պետրոս), որն օգտագործում է Պողոսի խոսքերն ու բառապաշարը: *Kerygma*-ն միավորված է:

Գ. Ղուկասը ոչ միայն Քրիստոնեությունն էր պաշտպանում հռոմեական կառավարության առջև, այլ նաև Պողոսին՝ հեթանոս եկեղեցու առջև: Պողոսը պարբերաբար հարձակումների էր ենթարկվում հրեական խմբերի կողմից (հուդայականությունը հետևող գաղատացիների, 2 Կորնթ.10-13-ի

«սուպեր առաքյալների» կողմից): Ղուկասը իր ճամփորդությունների ժամանակ և քարոզների մեջ հստակ հայտնելով Պողոսի սիրտն ու աստվածաբանությունը ցույց էր տալիս, որ նա նորմալ մարդ էր:

Դ. Չնայած որ Գործք Առաքելոցը նախատեսված չէր վարդապետական գիրք լինելու, այն մեզ համար արձանագրում է առաջին Առաքյալների քարոզներից տարրեր, որոնք Ս. Հ. Դոդդը (C. H. Dodd) անվանել է «the Kerygma» (Հիսուսի մասին հիմնական ճշմարտությունը): Այն օգնում է մեզ տեսնելու այն, ինչ նրանք էին գգում, որ կարևոր էր ավետարանի մեջ, հասկապես երբ խոսվում էր Հիսուսի մահվան և հարության մասին:

ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. ՎԱՂ ԵԿԵՂԵՑՈՒ KERYGMA

Ա. Աստծո խոստումները, որոնք տրված են Հին Կտակարանում, այժմ իրականացել են Հիսուս Բրիստոսի գալստյամբ (Գործք 2:30-31; 3:19,24; 10:43;26:6-7,22; Հռոմ.1:2-4; 1 Տիմ.3:16; Եբր.1:1-2; 1 Պետ.1:10-12; 2 Պետ.1:18-19):

Բ. Հիսուսն Աստծո կողմից օծվեց որպես Քրիստոս՝ Իր մկրտության ժամանակ (Գործք 10:38):

Գ. Հիսուսը մկրտությունից հետո սկսել է Իր ծառայությունը Գալիլիայում (Գործք 10:37):

Դ. Նրա ծառայությունը բնութագրվում էր Աստծո գործությամբ իրականացվող գորավոր և բարի գործերով (Մարկ.10:45; Գործք 2:22; 10:38):

Ե. Մեսիան խաչվել է Աստծո հավիտենական նպատակի համաձայն (Մարկ.10:45; 3:16; Գործք 2:23; 3:13-15,18; 4:11; 10:39; 26:23; Հռոմ.8:34; 1 Կորնթ.1:17-18; 15:3; Գաղ.1:4; Եբր.1:3; 1 Պետ.1:2,19; 3:18; 1 Հովհ.4:10):

Զ. Նա հարություն է առել և հայտնվել Իր աշակերտներին (Գործք 2:24,31-32; 3:15,26; 10:40-41; 17:31; 26:23; Հռոմ.8:34; 10:9; 1 Կորն.15:4-7,12; 1 Թեսաղ.1:10; 1 Տիմ.3:16; 1 Պետ.1:2; 3:18,21):

Է. Հիսուսը մեծարվեց Աստծո կողմից և Նրան տրվեց «Տեր» անունը (Գործք 2:25-29, 33-36; 10:36; Հռոմ.8:34; 10:9; 1 Տիմ.3:16; Եբր.1:3; 1 Պետ.3:22):

Ը. Նա տվեց Սուրբ Հոգուն, որ ձևավորի Աստծո նոր համայնքը (Գործք 1:8; 2:14-18,38-39; 10:44-47; 1 Պետ.1:12):

Թ. Նա նորից է գալու՝ դատաստանի և ամեն բան վերականգնելու համար (Գործք 3:20-21; 10:42; 17:31; 1 Կորնթ.15:20-28; 1 Թեսաղ.1:10):

Ժ. Բոլոր նրանք, որ լսում են Նրա պատգամը, պետք է ապաշխարեն և մկրտվեն (Գործք 2:21,38; 3:19; 10:43,47-48; 17:30; 26:20; Հռոմ.1:17; 10:9; 1 Պետ.3:21):

Այս սխեման վաղ եկեղեցու համար հանդիսացել է որպես հիմնական հավատամքի հռչակում, թեև Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ հնարավոր է որևէ մաս բաց թողնեն կամ իրենց քարոզների մեջ շեշտադրեն այլ մանրամասներ: Մարկոսի ամբողջ Ավետարանը մանրամասնորեն հետևում է kerygma-ի Պետրոսյան տեսակետին: Մարկոսը ըստ ավանդության տեսնում էր Պետրոսի քարոզները՝ Հռոմում քարոզված, որպես գրի առնված Ավետարան: Թե՛ Մատթեոսը և թե՛ Ղուկասը հետևում են Մարկոս ավետարանի հիմնական կառուցվածքին:

Ե. Ֆրենկ Սթեգը իր *Գործք Առաքելոց Գիրքը՝ առաջին պայքարն անարգել Ավետարանի համար* (Frank Stagg, *The Book of Acts, the Early Struggle for an Unhindered Gospel*) իր մեկնաբանության մեջ, հայտարարում է, որ նպատակը առաջին հերթին Հիսուսի մասին պատգամի (ավետարանի) զարգացումն էր՝ խիստ ազգայնական հուդայականությունից մինչև բոլոր մարդկանց հասանելի տիեզերական պատգամի: Ստեգի մեկնաբանությունը կենտրոնանում է Ղուկասի Գործք Առաքելոց գիրքը գրելու նպատակ(ներ)ի վրա: 1-18 էջերում տարբեր տեսությունների շուրջ կարելի է գտնել լավ ամփոփիչ և վերլուծական խոսքեր: Ստեգը նախընտրում է կենտրոնանալ «առանց արգելքի» /անարգել/ տերմինի վրա՝ 28:31-ում, որը գիրքն ավարտելու անսովոր կերպ է, քանի որ Քրիստոնությունը տարածելու մեջ Ղուկասի շեշտադրությունը հասկանալու բանալին բոլոր արգելքները հաղթահարելն է:

Զ. Չնայած որ Սուրբ Հոգին նշվում է ավելի քան հիսուն անգամ, այն չի կոչվել «Սուրբ Հոգու Գործք»: Տասնմեկ գլուխներում Սուրբ Հոգին ընդհանրապես չի նշվում: Այն նշվում է հիմնականում Գործք Առաքելոց գրքի առաջին կեսում, որտեղ Ղուկասը մեջբերում է այլ աղբյուրներից (հնարավոր է Արամեերեն բնագրով գրված): Գործքը Սուրբ Հոգու մասին չէ, ինչպես Ավետարանները, որոնք Հիսուսի մասին են: Սա նպատակ չունի թերագնահատելու Հոգու դերը, այլ մեզ գգն պահելու, որպեսզի Սուրբ Հոգու մասին աստվածաբանություն չստեղծենք հիմնականում կամ բացառապես Գործք Առաքելոց գրքից:

Է. Գործք Առաքելոցը նախատեսված չէ սովորեցնելու վարդապետություն (տես՝ Ֆիի և Ստյուարտ, *Ինչպես կարդալ Աստվածաշունչն Իր Ամբողջ Իմաստով*, էջ 94-112 /*Fee and Stuart, How to Read the Bible For All Its Worth, pp.94-112*/): Այսպիսի օրինակ կարող է հանդիսանալ, եթե Գործք Առաքելոց գրքից փորձենք դարձի գալու մասին աստվածաբանություն կառուցել, ինչում անշուշտ կձախողենք: Դարձի գալու հեթանոսականությունը և առանձնահատկությունները Գործքում տարբեր են, ուստի դրանցից ո՞րն է չափանիշ հանդիսանում: Վարդապետական աշակցություն մենք պետք է ստանանք Հովվական Թղթերից:

Սակայն, հետաքրքիր է, որ որոշ գիտնականներ (Հենզ Կոնզելմեն, /Hans Conzelmann/) դիտարկում են, որ Ղուկասը դիտավորյալ վերակողմնորոշում է առաջին դարի մոտավորապես էսկատոլոգիական գաղափարներին՝ ուշացած *Parousia*-ին, համբերատար ծառայելու մոտեցումով: Արքայությունը իր իշխանությամբ հիմա այստեղ է կյանքեր փոխելու համար: Այժմ նպատակը եկեղեցու գործունեությունն է և ոչ թե հանդերձյալի հույսը:

Ը. Գործքի հավանական նպատակներից մեկը նման է Հռոմ. 9-11. Ինչո՞ւ հրեաները մերժեցին Հրեա Մեսիային և եկեղեցին ձևավորվեց հիմնականում հեթանոսներից: Ավետարանի աշխարհասփյուռ էությունը Գործք Առաքելոցում մի քանի անգամ հստակ ազդարարվում է: Հիսուսը նրանց ուղարկում է ամբողջ աշխարհով մեկ (տես՝ 1:8): Հրեաները մերժում են Նրան, սակայն հեթանոսները պատասխանում են: Նրա պատգամը հասնում է Հռոմ:

Հնարավոր է, որ Ղուկասի նպատակն էր ցույց տալ, որ հրեական Քրիստոնեությունը (Պետրոսը) և հեթանոս Քրիստոնեությունը (Պողոսը) կարող են միասին ապրել և աճել: Նրանք մրցակցության մեջ չեն, այլ միաբան են համաշխարհային ավետարանչության համար:

Թ. Քանի դեռ նպատակը կարևոր է, ես համամիտ եմ Ֆ. Ֆ. Բրյուսի հետ (F. F. Bruce, *New International Commentary, Նոր Միջազգային Մեկնաբանություն* / էջ 18), որ Ղուկասի Ավետարանը և Գործք Առաքելոցը բնագրում մեկ հատոր հանդիսանալով, Ղուկասի նախաբանը (1:1-4) նաև Գործքի համար կարող է հանդիսանալ որպես նախաբան: Թեև Ղուկասը բոլոր դեպքերի ականատեսը չէր, դրանք մանրակրկիտ ուսումնասիրել էր և ճշգրտորեն արձանագրել, օգտագործելով իր սեփական պատմական, գրական, աստվածաբանական հիմքերը:

Այս Ղուկասն իր երկու գրքերում՝ Ավետարանում և պատմություններում, ուզում է ցույց տալ Հիսուսի և եկեղեցու պատմական իրողությունն ու աստվածաբանական արժանահավատությունը (տես՝ Ղուկ.1:4): Հնարավոր է, որ Գործքի նպատակը իրականացման թեման է («առանց արգելքի» տես՝ 28:31, գրքի վերջին խոսքը): Այս թեման արժարժվում է մի քանի տարբեր խոսքերով և արտահայտություններով (տես՝ Վոլթեր Լ. Լիֆելդ, *Գործք Առաքելոց Գրքի Մեկնությունը* /Walter L. Liefeld, *Interpreting The Book of Acts, pp.23-24*/): Ավետարանը ուշացած միտք չէ, երկրորդական ծրագիր կամ մի նոր բան: Այն Աստծո կանխատեսված ծրագիրն է (տես՝ Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29):

ԺԱՆՐԸ

Ա. Գործք Առաքելոցը ՆԿ-ի համար նույնն է ինչ ՀԿ-ի համար Հեսուից մինչև 4 Թագավորաց գրքերը (տես՝ Հավելված Երեք): Սուրբգրային պատմական դեպքերը փաստացի են, սակայն դրանք չեն կենտրոնանում ժամանակագրության վրա կամ տվյալ դեպքի սպառնիչ արձանագրության վրա: Դրանք իրենցից ներկայացնում են որոշակի պատմություններ, որոնք բացատրում են, թե ով է Աստված, ով ենք մենք, ինչպես կարող ենք Աստծո հետ հաշտվել, Աստված ինչպես է ուզում, որ մենք ապրենք:

Բ. Սուրբգրային պատմության մեկնաբանության հիմնախնդիրն այն է, որ հեղինակները տեքստի մեջ երբեք չեն նշում (1) թե որն է նրանց նպատակը, (2) որն է հիմնական ճշմարտությունը, կամ (3) ինչ պետք է ընդօրինակենք արձանագրված դեպքերից: Ընթերցողը պետք է խորհի հետևյալ հարցերի՝ շուրջ.

1. Ինչո՞ւ է այս դեպքը արձանագրվել:
2. Ի՞նչ կապ ունի այն աստվածաշնչյան նախորդ նյութի հետ:
3. Ո՞րն է աստվածաբանական գլխավոր ճշմարտությունը:
4. Արդյո՞ք կա գրական համատեքստի կարևորություն: (Ի՞նչ դեպք է նախորդում կամ հաջորդում: Այս թեման արժարժվել է՞ արդյոք մեկ այլ տեղ, թե ոչ):
5. Որքանո՞վ է մեծ դրա գրական համատեքստը: (Երբեմն պատմության մեծ չափսերը ձևավորում են աստվածաբանական որևէ թեմա կամ նպատակ):

Գ. Պատմական դեպքը չպետք է լինի վարդապետության համար միակ աղբյուրը: Հաճախ արձանագրվում են բաներ, որոնք էական չեն հեղինակի նպատակի համար: Պատմական դեպքը կարող է լուսաբանել Աստվածաշնչում մեկ այլ տեղ գրված ճշմարտություններ: Պարզապես, քանի որ տեղի է ունեցել ինչ-որ դեպք, պարտադիր չէ, որ այն լինի Աստծո կամքը բոլոր դարերի և բոլոր հավատացյալների համար (օր.՝ ինքնասպանությունը, բազմակնությունը, սուրբ պատերազմը, ձեռքով օձեր բռնելը, և այլն):

Դ. Պատմական դեպքերը մեկնաբանելու լավագույն համապարփակ քննարկում է տրված Գորդոն Ֆիլի և Դուգլաս Ստյուարտի *Ինչպես կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով* գրքում (էջ 78-93 և 94-112):

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋՎԱՅՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Դասականների կողմից ստեղծվել են Գործք Առաքելոցը առաջին դարի իր պատմական միջավայրի մեջ տեղավորելու նոր գրքեր: Այս միջկարգապահական մոտեցումը իսկապես օգնել է հասկանալու ՆԿ Այդ շարքը խմբագրել է Բրյուս Մ. Մինթերը (Bruce M. Minter):

- Ա. *Գործք Առաքելոց գիրքը իր անտիկ գրական միջավայրում*
- Բ. *Գործք Առաքելոց գիրքը իր հունա-հռոմեական միջավայրում*
- Գ. *Գործք Առաքելոց գիրքը և Պողոսը հռոմեական բանաստեղծության մեջ*
- Դ. *Գործք Առաքելոց գիրքը իր Պաղեստինյան միջավայրում*
- Ե. *Գործք Առաքելոց գիրքը իր սիյուսքի միջավայրում*
- Զ. *Գործք Առաքելոց գիրքը իր աստվածաբանական միջավայրում*

Նաև շատ օգտակար են՝

1. Ա. Ն. Շերվին-Ուայթ, *Հռոմեական հասարակությունն ու օրենքը Նոր Կտակարանում* (A. N. Sherwin-White, *Roman Society and Roman Law in the New Testament*)
2. Փոլ Բարնեթ, *Հիսուսը և վաղ Բրիտանությունը վերելքը* (Paul Barnett, *Jesus and the Rise of Early Christianity*)
3. Ջեյմս Ս. Ջեֆերս, *Հունա-հռոմեական աշխարհը* (James S. Jeffers, *The Greco-Roman World*)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք Աստվածաշնչյան տվյալ գիրքը ամբողջությամբ: Սահմանեք ամբողջ գրքի կենտրոնական թեման ձեր իսկ բառերով:

1. Ամբողջ գրքի թեման
2. Գրական տեսակը (ժանրը)

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին գրական բաժնի թեման
2. Երկրորդ գրական բաժնի թեման
3. Երրորդ գրական բաժնի թեման
4. Չորրորդ գրական բաժնի թեման

ԳՈՐԾՔ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ¹

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Սուրբ Հոգու Խոստումը	Նախաբան	Ներածություն. Հարուցյալ Քրիստոսը	Ներածություն	Նախաբան
1:1-5	1:1-3 Խոստացվում է Սուրբ Հոգին	1:1-5	1:1-5	1:1-5
Հիսուսի համբարձումը	1:4-8	Համբարձումը	Հիսուսը վերցվում է Երկինք	Համբարձումը
1:6-11	Հիսուսը համբարձվում է Երկինք	1:6-11	1:6 1:7-9	1:6-8
	1:9-11		1:10-11	1:9-11
Հուդային հաջորդողի ընտրությունը	Վերնատանը աղոթքի ժողովը	Տասներկուսի հավաքույթը	Հուդային հաջորդողը	Առաքյալների խումբը
1:12-14	1:12-14 Ընտրվեց Մատթիան	1:12-14	1:12-14	1:12-14
1:15-26	1:15-26	1:15-26	1:15-17 1:18-19 1:20	1:15-20
(20)	(20)	(20)	(20) 1:21-22 1:23-26	(20) 1:21-22 1:23-26

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեգույժ») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեգույժ մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

¹Չնայած դրանք ներշնչված չեն, սակայն պարբերությունների բաժանումները բանալի են հասկանալու և հետևելու բնագրի հեղինակի նպատակին: Յուրաքանչյուր ժամանակակից թարգմանություն բաժանել և դրել է պարբերություններ: Ամեն մի պարբերություն ունի հիմնական թեմա, ճշմարտություն կամ միտք: Ամեն մի տարբերակ տվյալ թեման մարմնավորում է առանձնահատուկ ձևով: Երբ տեքստը կարդում եք, հարցրեք, թե որ թարգմանությունն է հարմար տվյալ թեմայի ձեր ընկալմանն ու համարների բաժանումներին:

Ամեն գլխում առաջին հերթին պետք է կարդանք Աստվածաշունչը և փորձենք գտնել թեմաները, ապա համեմատենք մեր հասկացածը ժամանակակից տարբերակների հետ: Մենք կարող ենք իրոք հասկանալ Աստվածաշունչը միայն այն դեպքում, երբ հասկանանք հեղինակի նպատակը՝ հետևելով նրա տրամաբանությանն ու մատուցմանը: Միայն բնագրի հեղինակն է եղել ներշնչված. ընթերցողները իրավունք չունեն խոսքը փոխելու կամ ձևափոխելու: Աստվածաշնչի ընթերցողները պատասխանատվություն ունեն կիրառելու ներշնչված ճշմարտությունը իրենց առօրյայի և կյանքի համար:

Նկատեք, որ բոլոր տեխնիկական տերմիններն ու հապավումները մանրամասն բացատրվում են Հավելված Մեկ, Երկու և Երեքում:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏԸ. ԳՈՐԾՔ 1:1-5
¹Առաջին պատմությունն արեցի, ո՛վ Թեոփիլոս, այն ամենի մասին, ինչ Հիսուսն սկսեց անել և սովորեցնել, ²մինչև այն օրը, երբ Սուրբ Հոգու միջոցով Իր ընտրած առաքյալներին պատվեր տվեց և համբարձավ երկինք: ³Որոնց նույնպես շատ անառարկելի ապացույցներով Ինքն Իրեն կենդանի ցույց տվեց՝ Իր չարչարանքներից հետո՝ քառասուն օր նրանց երևալով ու Աստծո թագավորության մասին խոսելով: ⁴Եվ միասին հավաքված ժամանակ նրանց պատվիրեց Երուսաղեմից չհեռանալ, այլ սպասել Հոր խոստմանը, որի մասին ասաց Նա՝ «Ինձնից լսեցիք, ⁵թե հիրավի, Հովհաննեսը ջրով մկրտեց, բայց դուք, սրանից շատ օրեր չանցած, Սուրբ Հոգով պիտի մկրտվեք»:

1:1 «Առաջին պատմությունը արեցի /անգլ.՝ շարադրեցի/» Սա ԱՌԲԻՍ ՉԵՁՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, բառացիորեն՝ «Ես արեցի»: Ակնհայտ է, որ Ղուկաս Ավետարանի և Գործք Առաքելոց գրքերի հեղինակը հանդիսանում է Ղուկասը (համեմատեք Ղուկ.1:1-4 և Գործք 1:1-2): «Հատոր» տերմինը հունարենում օգտագործվում էր պատմական դեպքի համար: Տեխնիկապես (այսինքն՝ դասական հունարենում) այն իրենից ներկայացնում էր առնվազն երեք աշխատություններից մեկը: Անշուշտ հնարավոր է, որ Գործքի առանձնահատուկ ավարտը կարելի է բացատրել Ղուկասի երրորդ աշխատությունը գրելու ծրագրով: Ոմանք նույնիսկ ենթադրում են, որ այն ինչ մենք կոչում ենք Հովվական Թղթեր (1 Տիմոթեոս, 2 Տիմոթեոս և Տիտոս) հնարավոր է Ղուկասի կողմից են գրվել:

■ **«Թեոփիլոս»** Այս անունը բաղկացած է (1) Աստված (*Theos*) և (2) եղբայրական սեր (*philos*) բառերից: Այն կարելի է թարգմանել «Աստծուն սիրող», «Աստծո ընկեր» կամ «Աստծո սիրելի»:

Ղուկաս 1:3-ում «գերազանց» տիտղոսը հռոմեական կառավարության պաշտոնյայի համար հնարավոր է հարգալից դիմելաձև էր (տես՝ Գործք 23:26; 24:3; 26:25), հավանաբար կիրառելի հռոմեական հասարակության մեջ հեծյալի կարգաստիճան ունեցողի դիմելիս: Հնարավոր է, որ նա եղել է Ղուկասի երկու գրքերի գրական հովանավորը՝ դրանք գրելու, բազմացնելու և բաժանելու հարցում: Եկեղեցական ավանդույթը նրան անվանում է Տ. Ֆլավիոս Զլիմենս (T.Flavius Clemens)՝ Դոմիթիանի զարմիկը (մ.թ.24-96):

■ **«այն ամենի մասին, ինչ Հիսուսն սկսեց անել»** Սա վերաբերում է Ղուկասի ավետարանին: Չարմանալի է, որ Ղուկասն ասում է «ամենն» ինչ որ Հիսուսն արեց, քանի որ Ղուկասի ավետարանը (ինչպես և բոլոր սինոպտիկ ավետարանները) Հիսուսի կյանքի և ուսմունքների վերաբերյալ իր արձանագրություններում շատ տեսակավորված է:

1:2 «մինչև այն օրը, երբ... համբարձավ երկինք» Ղուկաս 24:51-ում սա նշվում է: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Գոյություն ունեն մի շարք հունարեն բառեր, որոնք օգտագործվում են նկարագրելու Հիսուսի Երկինք համբարձվելը.

1. Գործք 1:2,11,22; *analambanō*, վեր առնել (տես՝ 1 Տիմ.3:16), որը նաև օգտագործվում է Մեպտուազինտայի մեջ՝ 4 Թագ.2:9,11-ում, Եղիայի երկինք տեղափոխվելու համար, ինչպես նաև 1 Մակարայեցիների 2:58:
2. Գործք 1:9; *epairō*, բարձրացնել, վեր հանել:

3. Ղուկ.9:15, *analēpsis* (#1 պես)
4. Ղուկ.24:51, *diistēmi*, հեռանալ
5. Հովհ.6:62, *anabainō*, համբարձվել

Այս դեպքը Մատթեոսի և Մարկոսի մեջ գրված չէ: Մարկոսը ավարտվում է 16:8-ով, սակայն ավելի ուշ երեք դպրական հավելումներից մեկը նկարագրում է այս դեպքը 16:19-ում (այսինքն՝ *analambanō*):

■ **«Սուրբ Հոգու միջոցով»** Տե՛ս հաջորդ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՆՁ ԼԻՆԵԼԸ

ՀԿ-ում «Աստծո Հոգին» (այսինքն՝ *ruach*) մի ուժ էր, որը իրականացնում էր ՅԱՀՎԵԻ /YHWH/ նպատակը, այնուհանդերձ ակնարկ չկա, որ Նա անձ է (այսինքն՝ ՀԿ-ի միաստվածությունը): Սակայն ՆԿ-ում արձանագրվում է Հոգու կատարյալ անձնավորությունն ու անձ լինելը.

1. Նրա դեմ հնարավոր է հայհոյություն անեն (տես՝ Մատթ.12:31, Մարկ.3:29)
2. Նա սովորեցնում է (տես՝ Ղուկ.12:12; Հովհ.14:26)
3. Նա վկայություն է տալիս (տես՝ Հովհ.15:26)
4. Նա համոզում է, առաջնորդում (տես՝ Հովհ.16:7-15)
5. Նա անվանվում է «ով» (այսինքն՝ *hos*) (տես՝ Եփես.1:14)
6. Նա կարող է տրտմել (տես՝ Եփես.4:30)
7. Նա կարող է մարել (տես՝ 1 Թեսաղ.5:19)

Տրինիտարիան /Trinitarian/ տեքստերը (ահա դրանցից երեքը) նույնպես խոսում են երեք անձի մասին:

1. Մատթ.28:19
2. 2 Կորնթ.13:14
3. 1 Պետր.1:2

Հոգին կապված է մարդու գործունեության հետ՝

1. Գործք.15:28
2. Հռոմ.8:26
3. 1 Կորնթ.12:11
4. Եփես.4:30

Գործք Առաքելոցի հենց սկզբում շեշտադրվում է Հոգու դերը: Պենտեկոստեն Սուրբ Հոգու գործի սկիզբը չէր, այլ մի նոր էջ: Հիսուսը միշտ ուներ Հոգին: Նրա մկրտությունը Սուրբ Հոգու գործի սկիզբը չէր, այլ մի նոր էջ: Ղուկասը պատրաստում էր եկեղեցուն պտղաբեր ծառայության նոր էջի համար: Մեր կիզակետը՝ կենտրոնացումը, մնում է Հիսուսը, պտղաբերության միջոցը՝ Սուրբ Հոգին և որպես նպատակ՝ Հոր սերը, ներումը և Իր պատկերով ստեղծված ամբողջ մարդկության վերականգնումը:

■ **«պատվեր տվեց»** Սա վերաբերում է ավետարաններում արձանագրված տեղեկություններին՝ Ղուկ.24:44-49, Մատթ.28:18-20 և Գործք 1:8:

■ **«պատվերներ»** Սա ԱՌՐԻՍ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ԴԵՐԲԱՅ է: Որոշ գիտնականներ դիտարկում են այս խոսքը որպես 1:8-ի հետ առնչություն ունեցող (տես՝ Մատթ.28:19-20; 24:45-47 կամ Ղուկ.24:49): Եկեղեցին ունի երկակի ֆունկցիա.

1. ավետարանչություն և Քրիստոսանման հասունություն. սրանց հասնելու համար յուրաքանչյուր հավատացյալ պետք է սպասի Աստծո գործությանն ու սպառազինությանը:
2. մյուսները այն դիտարկում են «մնացեք Երուսաղեմ քաղաքում՝ մինչև վերից գործությամբ օժտվեք» խոսքին վերաբերող (տես՝ հ.4, Ղուկ.24:49):

■ **«առաքյալները»** Տե՛ս առաքյալների անվանացանկը 1:13-ում:

■ **«Իր ընտրած»** «Ընտրած» (*eklegō*) կիրառվում է երկու իմաստով: Սովորաբար ՀԿ-ում այն վերաբերում է ծառայությանը և ոչ թե փրկությանը, իսկ ՆԿ-ում՝ հոգևոր փրկությանը: Այստեղ կարծես այն վերաբերում է երկու գաղափարներին էլ (տես՝ Ղուկ.6:13):

1:3 «Ինքն Իրեն կենդանի ցույց տվեց» Հավանաբար սա վերաբերում է վերնատանը երեք հաջորդող կիրակի օրեր, գիշերով աշակերտների ամբողջ խմբին Հիսուսի երեք անգամ հայտնվելուն, բայց հնարավոր է նաև վերաբերի մյուս հայտնություններին ևս (տես՝ 1 Կորնթ.15:5-8): Հիսուսի հարությունը Ավետարանի հավաստիության համար խիստ կարևոր է (տես՝ 2:24,32; 3:15,26; 4:10; 5:35; 10:40; 13:30,

33,34,37; 17:31 և հատկապես 1 Կորնթ.15:12-19,20): Հաջորդ սանդղակը Փոլ Բարնեթի Հիսուսը և Վաղ Քրիստոնեության Վերելքը, էջ 185, (Paul Barnett, *Jesus and the Rise of Early Christianity*, p.185) գրքից ներկայացված Հիսուսի հայտնություններն են Իր հարությունից հետո:

Հովհաննես	Մատթեոս	Ղուկաս	1 Կորնթացիներին
Երուսաղեմում հայտնվելը			
Մարիամ (Հովհ.20:15)	Կանայք (Մատթ.28:9)	Սիմոն (Ղուկ.24:34)	Կեփաս (1 Կորնթ.15:5)
		Էմմաուսի ճանապարհին 2 հոգու (Ղուկ.24:15)	

տաս աշակերտներ (Հովհ.20:19)		աշակերտներ (Ղուկ.24:36)	Տասներկուսը (1 Կորն.15:5)
տասնմեկ աշակերտներ (Հովհ.20:26)			

Փալիլիայում հայտնվելը		
		500+ հավատացյալներ (1 Կորնթ.15:6; կապված Մատթ.28:16-20-ի հետ)
յոթ աշակերտներ (Հովհ.21:1)	աշակերտները (Մատթ.28:16-20)	Հակոբոս (1 Կորն.15:7)

Երուսաղեմում հայտնվելը		
	Համբարձումը (Ղուկ.24:50-51)	բոլոր առաքյալները (1 Կորն. 15:7)

NASB, NRSV, NIV	«շատ համոզիչ ապացույցներով»
NKJV	«շատ անառարկելի ապացույցներով»
TEV	«շատ անգամներ այնպես, որ կասկածից վեր ապացուցված են»
NJB	«շատ ցուցադրվող վկայություններով»

ՆԿ-ում միայն այստեղ է կիրառվում *tekmērion* բառը: Մուլտոն և Միլիգան, Հունարեն Կտակարանի Բառարանը, էջ՝ 628 (Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek Testament*) տալիս է հունական գրականության մեջ օգտագործվող տերմինների հրաշալի քննարկում, որտեղ այն նշանակում է «ցուցադրական վկայություն»: Այս տերմինը նաև օգտագործվում է Սողոմոնի Իմաստություն 5:11; 19:3 և 3 Մակարայեցիների 3:24-ում:

■ «Իր չարչարանքներից հետո» Հրեա հավատացյալները շատ դժվարությամբ կարողացան ընդունել ավետարանի այս տեսակետը (տես՝ 1 Կորնթ.1:23): Մեսիայի չարչարանքները նշվում են ՀԿ-ում (տես՝ Ծննդ.3:15; Սաղմ.22; Ես.53; Չաք.10:12 և նկատեք Ղուկ.24:45-47): Սա հանդիսացավ Առաքելական քարոզչության համար մեծագույն աստվածաբանական հաստատում (*kerygma*; տես՝ Հատուկ Թեմա 2:14):

Ղուկասը հաճախ օգտագործում է *paschō* (չարչարվել) բառի ԱՈՐԻՍՏ /անցյալ ժամանակում բայի տևողությունը կամ ավարտը չնշող/ ԱՆՈՐՈՇ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ձևը, նկատի ունենալով Հիսուսի խաչելությունը (տես՝ Ղուկ.9:22; 17:25; 22:15; 24:26,46; Գործք 1:3; 3:18; 9:16; 17:3): Հնարավոր է Ղուկասը սա որդեգրել է Մարկոսի Ավետարանից (տես՝ 8:31):

■ **«նրանց երևալով»** ՆԿ-ում մենք ունենք տաս կամ տասնմեկ արձանագրված դեպք, երբ Հիսուսը իր հարությունից հետո հայտնվում է մարդկանց: Այնուամենայնիվ, սրանք միայն ներկայացվող օրինակներն են և ոչ թե վերջնական ցանկը: Ակնհայտ է, որ Հիսուսը գալիս և գնում էր այդ ընթացքում, սակայն որևէ խմբի հետ չէր մնում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՀԻՍՈՒՄԻ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Հիսուսը ցույց տվեց Իրեն մի քանի մարդկանց, հաստատելու Իր հարությունը.

1. գերեզման եկած կանանց, Մատթ.28:9
2. տասնմեկ աշակերտներին, Մատթ.28:16
3. Սիմոնին, Ղուկ.24:34
4. երկու տղամարդկանց, Ղուկ.24:15
5. աշակերտներին, Ղուկ.24:36
6. Մարիամ Մագդաղենացուն, Հովհ.20:15
7. տաս աշակերտների, Հովհ.20:19
8. տասնմեկ աշակերտների, Հովհ.20:26
9. յոթ աշակերտների, Հովհ.21:1
10. Կեփասին (Պետրոս), 1 Կորնթ.15:5
11. Տասնմեկին (Առաքյալներին), 1 Կորնթ.15:5
12. 500 եղբայրների, 1 Կորնթ.15:6 (Մատթ.28:16-17)
13. Հակոբոսին (Իր երկրավոր ընտանիքին), 1 Կորնթ.15:7
14. Բոլոր առաքյալներին, 1 Կորնթ.15:7
15. Պողոսին, 1 Կորնթ.15:8 (Գործք 9)

Ակնհայտ է, որ սրանցից մի քանիսը միևնույն դեպքին են վերաբերում: Հիսուսը կամենում էր, որ նրանք հաստատ համոզված լինեին, որ Նա ողջ է:

■ **«քառասուն օր»** Սա Հին Կտակարանյան մի դարձվածք է, որը վերաբերում է անորոշ երկար ժամանակի՝ լուսնային մի պտույտից ավելի երկար: Այստեղ այն առնչվում է ամենամյա հրեական Չատկի տոնակատարությունների և Պենտեկոստեի միջև ընկած ժամանակի հետ (որը հիսուն օր է): Ղուկասը հանդիսանում է այս տեղեկատվության միակ աղբյուրը: Քանի որ համբարձման ժամանակը ամենակարևոր հարցը չէ (անգամ նախքան մ.թ. չորրորդ դարը չի նշվում Քրիստոնյա որևէ գրողի կողմից), պետք է որ լինի մեկ այլ պատճառ այս թվի հետ կապված: Հնարավոր է այն կապ ունի Մինա լեռան վրա Մովսեսի օրերի, անապատում Իսրայելի տարիների, անապատում Հիսուսի փորձության օրերի հետ կամ էլ պարզապես մենք չգիտենք, սակայն ակնհայտ է, որը ամսաթիվն ինքնին կարևոր հարց չէր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ ԱՌԿԱ ՍԻՄՎՈՒԻԿ ԹՎԵՐԸ

Ա. Որոշ թվեր կիրառվում էին թե՛ որպես թիվ և թե՛ որպես խորհրդապատկեր.

1. Մեկ – Աստված (օր.՝ 2 Օր.6:4; Եփես.4:4-6)
2. Չորս – ամբողջ երկիրը (այսինքն՝ չորս անկյունները, չորս կողմերը)
3. Վեց – մարդկային անկատարությունը (7-ից մեկով պակաս, օր.՝ Հայտն.13:18)
4. Յոթ – աստվածային կատարելությունը (արարչագործության յոթ օրերը): Ուշադրություն դարձրեք Հայտնության գրքում սիմվոլիկ կիրառությունը.
 - ա. յոթ աշտանակները, 1:12,20; 2:1
 - բ. յոթ աստղերը, 1:16,20; 2:1
 - գ. յոթ եկեղեցիները, 1:20
 - դ. Աստծո յոթ հոգիները, 3:1; 4:5; 5:6
 - ե. յոթ ջահերը, 4:5
 - զ. յոթ կնիքները, 5:1,5
 - է. յոթ եղջյուրները և յոթ աչքերը, 5:6

ը. յոթ հրեշտակները, 8:2,6; 15:1,6,7,8; 16:1; 17:1

թ. յոթ փողերը, 8:2,6

ժ. յոթ որոտները, 10:3,4

ի. յոթ հազարը, 11:13

լ. յոթ գլուխները, 13:1; 17:3,7,9

խ. յոթ պատուհասները, 15:1,6,8; 2:9

ծ. յոթ թասերը, 15:7; 21:9

կ. յոթ թագավորները, 17:10

5. Տաս – լիարժեքություն

ա. կիրառված Ավետարաններում՝

(1) Մատթ.20:24; 25:1,28

(2) Մարկ.10:41

(3) Ղուկ.14:31; 15:8; 17:12,17; 19:13,16,17,24,25

բ. կիրառված Հայտնության մեջ՝

(1) 2:10, նեղության տաս օրերը

(2) 12:3; 17:3,7,12,16, տաս եղջյուրները

(3) 13:1, տաս թագերը

գ. 10-ի բազմապատիկները Հայտնության մեջ

(1) $144,000=12 \times 12 \times 1000$, տես՝ 7:4; 14:1,3

(2) $1,000=10 \times 10 \times 10$, տես՝ 20:2,3,6

6. Տասներկու – մարդկանց խումբ

ա. Հակոբի տասներկու որդիները (Իսրայելի տասներկու ցեղերը, Ծննդ.35:22; 49:28)

բ. տասներկու սյուները, Ելից 24:4

գ. Քահանայապետի լանջապանակի վրա տասներկու քարերը, Ելից 28:21; 39:14

դ. Սրբարանի սեղանի վրա տասներկու առաջավորության հացերը (տասներկու ցեղերի համար Աստծո մատակարարման խորհրդապատկերը), Ղևտ.25:5; Ելից 25:30

ե. տասներկու լրտեսները, 2 Օր.1:23; Հեսու 3:22; 4:2,3,4,8,9,20

զ. տասներկու առաքյալները, Մատթ.10:1

է. կիրառված Հայտնության մեջ՝

(1) տասներկու հազար կնքվածները, 7:5-8

(2) տասներկու աստղերը, 12:1

(3) տասներկու դարպասները, տասներկու հրեշտակները, տասներկու ցեղերը 21:12

(4) հիմքի տասներկու քարերը, տասներկու առաքյալների անունները, 21:14

(5) Նոր Երուսաղեմը տասներկու հազար ասպարեզ էր, 21:16

(6) տասներկու մարգարիտներից շինված տասներկու դարպասները, 21:12

(7) կենաց ծառը՝ տասներկու տեսակի պտուղներով, 22:2

7. Քառասուն – ժամանակի համար կիրառվող թիվ՝

ա. երբեմն բառացիորեն (ելիցը և անապատում թափառելը, օր.՝ Ելից 16:35); 2 Օր.2:7; 8:2

բ. կարող է բառացի կամ սիմվոլիկ իմաստ ունենալ՝

(1) ջրհեղեղը, Ծննդ.7:4,17; 8:6

(2) Մովսեսը Սինա լեռան վրա, Ելից 24:18; 34:28; 2 Օր.9:9,11,18,25

(3) Մովսեսի կյանքի էտապները.

(ա) քառասուն տարի Եգիպտոսում

(բ) քառասուն տարի անապատում

(գ) քառասուն տարի Իսրայելին առաջնորդելիս

(4) Հիսուսը քառասուն օր ծոմ պահեց, Մատթ.4:2; Մարկ.1:13; Ղուկ.4:2

գ. Նկատեք (համաբարբառի միջոցով) շատ անգամ այս թիվը Աստվածաշնչում հայտնվում է ժամանակի նշանակությամբ:

8. Յոթանասուն – մարդկանց համար ամբողջական թիվ

ա. Իսրայել, Ելից 24:1,9

բ. յոթանասուն երեցները, Ելից 24:1,9

գ. էսկատոլոգիական, Դան.9:2,24

դ. միսիոներական թիվ, Ղուկ.10:1,17

ե. ներում (70x7), Մատթ.18:22

Բ. Լավ մեջբերումներ՝

1. Ջոն Ջ.Դեյվիս, *Աստվածաշնչյան Թվաբանություն* (John J. Davis, *Biblical Numerology*)

2. Դ. Բրենթ Սենդի, *Մաներ և Մանգաղներ* (D. Brent Sandy, *Plowshares and Pruning Hooks*)

■ «Աստծո թագավորության մասին խոսելով» Գնոստիկները պնդում են, որ Չատկի և Պենտեկոստեի միջև ընկած ժամանակահատվածում Հիսուսը իր խմբին հայտնել է գաղտնի տեղեկություն: Իհարկե սա սուտ է: Ամեն դեպքում, Էմմաուսի ճանապարհին երկու մարդկանց դեպքը լավ օրինակ է այն բանի, որ Հիսուսը հարությունից հետո էլ սովորեցնում էր: Կարծում եմ Հիսուսն Ինքը եկեղեցու առաջնորդներին Հին Կտակարանից ցույց տվեց այն կանխատեսումները և հատվածները, որոնք կապ ունեին Իր կյանքի, մահվան, հարության և Երկրորդ Գալստյան հետ: Տե՛ս հաջորդ Հատուկ Թեման՝ Աստծո Թագավորությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
SPECIAL TOPIC: THE KINGDOM OF GOD

ՀԿ-ում ՅԱՀՎԵՆ (YHWH) համարվում էր Իսրայելի Թագավոր (տես՝ 1 Թագ.8:7; Սաղ.10:16; 24:7-9; 29:10; 44:4; 89:18; 95:3; Ես. 43:15; 44:4,6), իսկ Մեսիան՝ իդեալական թագավոր (տես՝ Սաղ.2:6; Ես.9:6-7; 11:1-5): Բեթլեհեմում Հիսուսի ծննդյամբ (մ.թ.ա. 6-4) Աստծո Թագավորությունը նոր իշխանությամբ և փրկությամբ (նոր ուխտ, տես՝ Երեմ.31:31-34; Եզեկ.36:27-36) մուտք գործեց մարդկության պատմություն: Հովհաննես Մկրտիչը հռչակում էր այդ թագավորության մոտալուտ լինելը (տես՝ Մատթ.3:2; Մարկ.1:15): Հիսուսը պարզ սովորեցնում էր, որ Թագավորությունը Իր և Իր ուսմունքի մեջ է (տես՝ Մատթ.4:17,23; 9:35; 10:7; 11:11-12; 12:28; 16:19; Մարկ.12:34; Դուկ.10:9,11; 11:20; 12:31-32; 16:16; 17:21): Մինչդեռ այդ Թագավորությունը նաև ապագա Թագավորություն է (տես՝ Մատթ.16:28; 24:14; 26:29; Մարկ.9:1; Դուկ.21:31; 22:16,18):

Մարկոսի և Դուկասի Սինոպտիկ գուգահեռների մեջ հանդիպում ենք «Աստծո Թագավորություն» արտահայտությունը: Հիսուսի ուսմունքների մեջ մեծ տարածում գտած այս թեման պարունակում է Աստծո մարդկանց սրտերում տիրելու իմաստը, որը մի օր կտարածվի ամբողջ աշխարհով մեկ: Սա արտացոլվում է Մատթ.6:10-ում Հիսուսի աղոթքի մեջ: Մատթեոսը, գրելով հրեաներին, նախընտրել է մի արտահայտություն, որտեղ չի գործածվում Աստծո անունը (Երկնքի Արքայություն), մինչդեռ Մարկոսն ու Դուկասը՝ գրելով հեթանոսներին, կիրառել են տարածված անվանումը՝ օգտագործելով աստվածության անունը:

Սա կարևոր արտահայտություն է Սինոպտիկ՝ համանման Ավետարաններում: Հիսուսի առաջին և վերջին քարոզները և Նրա առակների մեծամասնությունը, գործ ունեին այս թեմայի հետ: Այժմ այն վերաբերում է Աստծո մարդկանց սրտերում թագավորելուն: Չարմանալի է, որ Հովհաննեսը այս արտահայտությունը գործածում է միայն երկու անգամ (և երբեք չի գործածում Հիսուսի առակների մեջ): Հովհաննեսի Ավետարանում «հավիտենական կյանք» խոսքն է բանալի փոխաբերությունը:

Այս արտահայտության հետ կապված լարվածություն է ստեղծվում Հիսուսի երկու գալստյան պատճառով: ՀԿ-ը կենտրոնանում է միայն Աստծո Մեսիայի մի գալստյան վրա՝ ռազմական, դատաստանի, փառավոր գալստյան, սակայն ՆԿ-ը ցույց է տալիս, որ Նա առաջին անգամ եկավ որպես Եսայի 53-ի Չարչարված Ծառան և Չաք.9:9-ի խոնարհ Թագավորը: Երկու հրեական դարաշրջանները՝ ամբարշտության դարաշրջանը և արդարության նոր դարաշրջանը, մասամբ համընկնում են: Հիսուսը ներկայումս տիրում է հավատացյալների սրտերում, սակայն մի օր տիրելու է ամբողջ ստեղծագործության վրա: Նա վերադառնալու է ՀԿ-ի կանխատեսության համաձայն: Հավատացյալները ապրում են Աստծո Թագավորության «ներկայում» ի հակադրություն դրա «ապագայի» (տես՝ Գորդն Դ. Ֆիլի և Դուգլաս Սոյուլարտի *Ինչպես կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Բնաստով*, էջ՝ 131-134):

- 1:4**
NASB «նրանց միասին հավաքելով»
NKJV «նրանց հետ միասին հավաքված լինելով»
NRSV «մինչ նրանց հետ էր մնում»
TEV «երբ նրանք հավաքվեցին»
TEV^b «մինչ Նա նրանց հետ էր մնում»
NIV «մինչ Նա ուտում էր նրանց հետ»
NJB «մինչ նրանց հետ սեղանի շուրջ էր»

4-5 համարները որպես օրինակ օգտագործում են Հիսուսի մի հայտնությունը Նրա մի քանի հայտնություններից և ապացույցներից: *Sunalizomenos* տերմինը կարելի է հեզել տարբեր կերպերով: Հեզելու կերպը փոխում է նշանակությունը:

1. երկար a –ի դեպքում՝ հավաքվել՝ ժողովվել

2. կարճ a – ի դեպքում՝ ուտել ինչ-որ բանով (տառացի՝ «աղով»)
3. au (տառամիացությամբ)՝ մնալ ինչ-որ մեկի հետ

Հայտնի չէ, թե որ մեկն է Ղուկասը նկատի ունեցել, սակայն Ղուկ.24:41-43 (տես՝ Հովհ.21) նկարագրում է Հիսուսին Իր առաքելական խմբի հետ ուտելիս, որը Իր հարյալ՝ ֆիզիկական մարմնի ապացույց էր (տես՝ հ.3):

■ **«Երուսաղեմից չհեռանալ»** Սա արձանագրված է Ղուկ.24:49-ում: Գործքի առաջին մասը Ղուկաս Ավետարանի վերջնամասի վերանայում է՝ հավանաբար երկու գրքերի միջև կապ ստեղծելու գրական ոճ:

■ **«սպասել Հոր խոստմանը»** 2:16-21-ում Պետրոսը կապում է սա Հովել 2:28-32 ապագային վերաբերող մարգարեական խոսքերին: Նրանք տասն օր սպասել էին նախքան Պենտեկոստեն: Ղուկասը հատուկ նշում է «Հոր խոստումը» որպես Սուրբ Հոգին (տես՝ Ղուկ.24:49; Գործք 2:33): Հիսուսը նախկինում Հովհ.14-16-ում խոսել էր նրանց Սուրբ Հոգու գալստյան մասին: Սակայն հնարավոր է, որ Ղուկասը Հոր Խոստումը չի հասկանում միայն որպես մի բան (այսինքն՝ Սուրբ Հոգին), այլ նաև այն, որ ՀԿ-ում խոստացված փրկությունը կհասնի Իսրայելին Մեսիայի միջոցով (տես՝ Գործք 2:39; 13:23,32; 26:6):

- **«Հայր»** ՀԿ-ը ներկայացնում է Աստծուն որպես Հայր՝ մտերմիկ ընտանեկան փոխաբերությամբ.
1. Իսրայել ազգը հաճախ նկարագրվում է որպես ՅԱՀՎԵ-ի «զավակ» (տես՝ Ովս.11:1; Մաթ.3:17)
 2. Երկրորդ Օրինացում կիրառվում է Աստված որպես Հայր նմանությունը՝ անալոգիան (1:31)
 3. 2 Օր.32:6-ում Իսրայելը կոչվում է «Նրա որդիները» և Աստված կոչվում է «քո Հայրը»
 4. Այս նմանությունը սահմանվում է Մաղմ.103:13-ում և զարգանում Մաղմ.68:5-ում (որբերի Հայրը)
 5. Այն տարածված էր մարգարեներում (տես՝ Ես.1:2; 63:8; Իսրայելը որպես որդի, Աստված՝ որպես Հայր, 63:16; 64:8; Երեմ.3:4,19; 31:9)

Հիսուսը խոսում էր արամերեն, որը նշանակում է, որ շատ տեղերում, երբ տեսնում ենք «Հայր» բառը որպես հունարեն *Pater* կարող է պատկերել արամերենի *Abba*-ն (տես՝ 14:36): Այս ընտանեկան բառը «Հայրիկ» կամ «պապա», արտացոլում է Հիսուսի մտերմությունը Հոր հետ: Այն, որ Նա հայտնում է այս մասին Իր հետևորդներին, քաջալերում է մեզ նույնպես Հոր հետ մտերմություն անելու: «Հայր» տերմինը ՀԿ-ում հազվադեպ էր կիրառվում (և ոչ հաճախ ռաբբիական գրականության մեջ) ՅԱՀՎԵ-ի համար, սակայն Հիսուսը այն հաճախ և ամենուրեք է կիրառում: Սա շատ կարևոր հայտնություն է Աստծո հետ Քրիստոսի միջոցով հավատացյալների նոր փոխհարաբերության համար (տես՝ Մատթ.6:9):

1:5 «Հովհաննես» Բոլոր չորս Ավետարանները (տես՝ Մատթ.3:1-12; Մարկ.1:2-8; Ղուկ.3:15-17; Հովհ.1:6-8,19-28) պատմում են Հովհաննես Մկրտչի ծառայության մասին: «Հովհաննեսը», երբայերեն՝ Հովհանան (Johanan) (BDB 220) անվան հակիճ տարբերակն էր, որը նշանակում էր «ՅԱՀՎԵ գթառատ է» կամ «ՅԱՀՎԵի պարգև»: Նրա անունը նշանակալի էր, քանի որ ինչպես բոլոր աստվածաշնչյան անունները այն մատնանշում էր իր կյանքի համար Աստծո նպատակը: Հովհաննեսը ՀԿ-ի վերջին մարգարեն էր: Մաղաքիայից հետո՝ մոտ մ.թ.ա. 430թ, Իսրայելում այլևս մարգարե չէր եղել: Հենց միայն նրա ներկայությունը Իսրայելի ժողովրդի մեջ հոգևոր մեծ աշխուժության առիթ էր հանդիսացել:

- **«ջրով մկրտեց»** Սկրտությունը առաջին և երկրորդ դարերի հրեաների մոտ ընդունված նախաձեռնելի ծես էր համարվում, սակայն միայն նորահավատների դեպքում: Եթե հեթանոսներից ինչ-որ մեկը կամենում էր դառնալ Իսրայելի զավակ, նա պետք է երեք գործ կատարեր.
1. թփատվեր, եթե արական սեռի ներկայացուցիչ էր
 2. երեք վկաների ներկայությամբ ինքն իրեն ջրի մեջ ընկղմելով մկրտվեր
 3. եթե հնարավոր էր Տանարում զոհաբերություն կատարեր

Առաջին դարի Պաղեստինի աղանդավորական խմբերում, ինչպիսիք էին Էսսենները, ըստ երևույթին մկրտությունը ընդունված, կրկնվող փորձառություն էր:

Սակայն, հիմնական հուդայականության մեջ այս ծիսական լվացման հետ կապված կարելի է վկայակոչել ծիսակարգի նախադեպեր.

1. որպես հոգևոր մաքրման խորհրդապատկեր (տես՝ Ես.1:16)
2. որպես քահանաների կողմից պարբերաբար կատարվող ծես (տես՝ Ելից 19:10; Ղևտ.15)
3. որպես ընդունված ծիսակարգ, որը կատարում էին երկրպագության համար տանար մտնելուց առաջ

■ **«Սուրբ Հոգով պիտի մկրտվեք»** Սա ԱՊԱՌՆԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌՆԸ կարող է վերաբերել Հիսուսին՝ Մատթ.3:11; Ղուկ.3:16 պատճառով: Նախդիր *ev* կարող է նշանակել «մեջ», «-ով» «հետ» (այսինքն՝ գործիք, տես՝ Մատթ.3:11): Այս արտահայտությունը կարող է վերաբերել երկու դեպքերի՝ (1) Քրիստոնյա դառնալուն, (տես՝ 1 Կորնթ.12:13) կամ (2) այս կոնտեքստի մեջ արդյունավետ ծառայության համար հոգևոր գործություն ընդունելուն: Հովհաննես Մկրտիչը հաճախ Հիսուսի ծառայության մասին խոսում էր այս արտահայտությամբ (տես՝ Մատթ.3:11; Մարկ.1:8; Ղուկ.3:16-17; Հովհ.1:33):

Սա հակադրվում է Հիսուսի մկրտության հետ: Մեսիան հանդիսավոր կերպով կրացի Սուրբ Հոգու նոր դարաշրջանը: Նրա մկրտությունը կլինի Հոգով (կամ «մեջ» կամ «հետ»): Եղել են բազմաթիվ քննարկումներ տարբեր հարանվանությունների միջև, թե Քրիստոնեական կյանքում ինչպիսի իրադարձության է սա վերաբերում: Ոմանք ասում են, որ սա վերաբերում է փրկությունից հետո հոգևոր գործացման փորձառությանը՝ երկրորդ օրհնության մի տեսակի: Անձնապես ես կարծում եմ, որ այն վերաբերում է Քրիստոնյա դառնալուն (տես՝ 1 Կորնթ.12:13): Ես չեմ հերքում հետագա լեցունությունները և սպառազինությունը, սակայն հավատում եմ, որ գոյություն ունի միայն մեկանգամյա ներքին մկրտություն Քրիստոսի մեջ, որով հավատացյալները նույնանում են Հիսուսի մահվան և հարության հետ (տես՝ Հռոմ.6:3-4; Եփես.4:5; Կող.2:12): Հոգու այս սկզբնական գործը պատկերվում է Հովհ.16:8-11-ում: Իմ հասկացողությամբ Սուրբ Հոգու գործերը հետևյալն են.

1. մեղքի համար համոզելը
2. Քրիստոսի մասին ճշմարտությունը հայտնելը
3. Ավետարանն ընդունելուն առաջնորդելը
4. Քրիստոսի մեջ մկրտելը
5. Հավատացյալին համոզելը շարունակական մեղքի դեմ
6. Հավատացյալի մեջ քրիստոսակերպություն ձևավորելը

■ **«սրանից շատ օրեր չանցած»** Այս խոսքը վերաբերում է հրեական Պենտեկոստե տոնին, որը նշվում էր Չատկից յոթ շաբաթ հետո: Այս տոնը նշելով նրանք ընդունում էին, որ Աստված է նրանց ցորենի հունձքի տերը: Այն ընկնում էր Չատկից հիսուն օր հետո (տես՝ Ղևտ.23:15-31; Ելից 34:22; 2 Օր.16:10):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ԳՈՐԾՔ 1:6-11

⁶ «Եվ երբ նրանք միասին հավաքվել էին, հարցրին Նրան, ասելով «Տեր, Դու ա՛յս անգամ պիտի վերականգնես Իսրայելի թագավորությունը»: ⁷Եվ ասաց նրանց. «Չեր գործը չէ իմանալ այն ժամերն ու ժամանակները, որ Հայրն Իր գործությամբ հաստատեց: ⁸Բայց դուք գործություն պիտի ստանաք, երբ Սուրբ Հոգին ձեր վրա գա, և Իմ վկաները պիտի լինեք և՛ Երուսաղեմում, և՛ ամբողջ Հրեաստանում, և՛ Սամարիայում, և՛ երկրի ամենահեռավոր ծայրերում»: ⁹Եվ երբ այս բաներն ասաց, մինչ նրանք դիտում էին, համբարձվեց, և մի ամպ Նրան ծածկեց նրանց աչքից: ¹⁰Եվ քանի դեռ ակնապիշ դեպի երկինք էին նայում և մինչ Նա վեր էր գնում, ահա սպիտակ զգեստներով երկու մարդ կանգնեցին նրանց կողքին, ¹¹որ նաև ասացին. «Ո՛վ գալիլիացի մարդիկ, ինչո՞ւ եք կանգնած դեպի երկինք նայում, այս նույն Հիսուսը, որ ձեզանից երկինք վերցվեց, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսնում եք Նրան երկինք գնալիս»:

1:6 «հարցրին Նրան» Այս ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԸ նշանակում է կա՛մ անցյալ ժամանակում կրկնվող գործողություն, կա՛մ էլ որևէ գործողության նախաձեռնություն: Ըստ երևույթին աշակերտները այս մասին շատ անգամ էին հարցրել:

■ **«Տեր»** Հունարեն «Տեր» (*kurios*) տերմինը կարելի է կիրառել թե՛ ընդհանուր իմաստով և թե՛ կատարելագործված աստվածաբանական իմաստով: Այն կարող է նշանակել «պարոն», «տեր», «վարպետ», «սեփականատեր», «ամուսին» կամ «կատարյալ Աստվածամարդ» (տես՝ Հովհ.9:36,38): Այս տերմինի Հին Կտակարանյան (Եբրայերեն, *adon*) կիրառությունը ծնվել է հրեաների Աստծո ուխտի անվան՝ ՅԱՀՎԵի, անունը արտասանել չկամենալու հետևանքով, որը հանդիսանում է Եբրայերենի «լինել» ԲԱՅԻ ձևը (տես՝ Ելից 3:14): Նրանք վախենում էին խախտել այն Պատվիրանը, որն ասում է. «Բո Տեր Աստծո անունը դատարկ տեղը չհիշատակես» (տես՝ Ելից 20:7; 2 Օր.5:11): Հետևաբար մտածում էին, որ եթե այդ անունը չարտասանեն, ապա դատարկ տեղը այն չեն հիշատակի: Ուստի եբրայերեն *adon* բառը նրանք փոխարինեցին հունարեն *kurios* (Տեր) բառով, որն ունի միևնույն իմաստը: ՆԿ-ի հեղինակները այս տերմինը կիրառում են նկարագրելու Քրիստոսի կատարյալ աստվածությունը: «Հիսուսը Տեր է»

արտահայտությունը վաղ եկեղեցու համար հանդիսանում էր հավատքի հանրային դավանություն և մկրտության համար բանաձև (տես՝ Հռոմ.10:9-13; 1 Կորնթ.12:3; Փիլիպ.2:11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ SPECIAL TOPIC: THE NAMES FOR DEITY

Ա. *El* (BDB 42, KB 48)

1. Աստվածության համար սեռային հնագույն տերմինի բնագիր նշանակությունը անհայտ է, թեև շատ գիտնականներ համարում են, որ այն ծագել է արքադական «ուժեղ լինել» կամ «գորավոր լինել» արմատից (տես՝ Ծննդ.17:1; Թվոց 23:19; 2 Օր.7:21; Սաղմ.50:1):
2. Քանանացիների պանթեոնում ամենաբարձր աստվածը *El* է (Ռաս Ծամրայի տեքստերը):
3. Աստվածաշնչում *El* հաճախ համադրվում է այլ տերմինների հետ: Այս համադրությունները դարձան Աստծուն բնութագրելու միջոց:
 - ա. *El-Elyon* («Բարձրյալ Աստված» BDB 42 & 751 II), Ծննդ.14:18-22; 2 Օր.32:8; Եսայի 14:41
 - բ. *El-Roi* («Աստված, որ տեսնում է» կամ «Աստված, որ հայտնում է Իրեն» BDB 42 & 909), Ծննդ.16:13
 - գ. *El-Shaddai* («Ամենակարող Աստված» կամ «բոլոր գթությունների Աստված» կամ «Լեռան Աստված» BDB 42 & 994), Ծննդ.17:1; 35:11; 43:14; 49:25; Ելից 6:3
 - դ. *El-Olam* («Հավիտենական Աստված» BDB 42 & 761), Ծննդ.21:33: Այս տերմինը աստվածաբանորեն կապված է Դավթին տրված Աստծո խոստման հետ, 2 Թագ.7:13,16
 - ե. *El-Berit* («Ուխտի Աստված» BDB 42 & 136), Դատ.9:46
4. *El* հավասարեցվում է հետևյալ անունների հետ՝
 - ա. YHWH (ՅԱՀՎԵ) Սաղմ.85:8; Եսայի 42:5
 - բ. *Elohim* Ծննդ.46:3; Հոբ 5:8, «Ես եմ *El-ը*, քո հոր *Elohim-ը*»
 - գ. *Shaddai* Ծննդ.49:25
 - դ. «նախանձոտ» Ելից 34:14; 2 Օր.4:24; 5:9; 6:15
 - ե. «ողորմած» 2 Օր.4:31; Նեեմ.9:31
 - զ. «հզոր ու ահարկու» (մեծ ու ահեղ) 2 Օր.7:21; 10:17; Նեեմ.1:5; 9:32; Դան.9:4
 - է. «գիտություն» 1 Թագ.2:3
 - ը. «իմ ամուր ապաստարան» 2 Թագ.22:33
 - թ. «իմ վրեժխնդիր» 2 Թագ.22:48
 - ժ. «սուրբ» Եսայի 5:16
 - ի. «գորություն» Եսայի 10:21
 - լ. «իմ փրկություն» Եսայի 12:2
 - խ. «մեծ ու հզոր» Երեմ.32:18
 - ծ. «հատուցում» Երեմ.51:56
5. ՀԿ-ում Աստծո համար գրված բոլոր անունների համադրությունը գտնվում է Հեսու 22:22-ում (*El, Elohim, YHWH*, կրկնվող)

Բ. *Elyon* (BDB 751, KB 832)

1. Այս բառի հիմնական նշանակությունն է՝ «բարձր», «մեծարված» կամ «բարձրացված» (տես՝ Ծննդ.40:17; 3 Թագ.9:8; 4 Թագ.18:17; Նեեմ.3:25; Երեմ.20:2; 36:10; Սաղմ.18:13)
2. Այն կիրառվել է Աստծո մի քանի այլ անունների՝ տիտղոսների հետ զուգահեռ իմաստով՝
 - ա. *Elohim* (Էլոհիմ) – Սաղմ.47:1-2; 73:11; 107:11
 - բ. *YHWH* (ՅԱՀՎԵ) – Ծննդ.14:22; 2 Թագ.22:14
 - գ. *El-Shaddai* (Էլ-Շադայ) – Սաղմ.91:1,9
 - դ. *El* (Էլ) – Թվոց 24:16
 - ե. *Elah* (Էլահ) – հաճախ օգտագործվում է Դանիել 2-6 և Եզրաս 4-7, կապված *illair* բառի հետ (արամերեն «Բարձրյալ Աստված») Դան.3:26; 4:2; 5:18,21
3. Այն հաճախ կիրառվել է ոչ իսրայելցիների կողմից.
 - ա. Մեքսոստեկ, Ծննդ.14:18-22
 - բ. Բաղասամ, Թվոց 24:16
 - գ. Սովեստը, ազգերի մասին 2 Օր.32:8-ում խոսելիս
 - դ. Ղուկասի Ավետարանը ՆԿ-ում, գրված հեթանոսներին, այն նույնպես կիրառում է հունարեն *Hupsistos* բառի համարժեքը (տես՝ 1:32,35,76; 6:35; 8:28; Գործք 7:48; 16:17)

Գ. *Elohim* (ՀՈԳՆԱԿԻ), *Eloah* (ԵՉԱԿԻ), հիմնականում կիրառված է պոեզիայի մեջ (BDB 43, KB 52)

1. Այս տերմինը ՀԿ-ից դուրս չէր գտնվում

2. Այս բառը կարող է բնութագրել Իսրայելի Աստծուն կամ ազգերի աստվածներին (տես՝ Ելից 3:6; 20:3): Աբրահամի ընտանիքը բազմաստված էր (տես՝ Հեու 24:2)
3. Այն կարող է վերաբերել իսրայելացի դատավորներին (տես՝ Ելից 21:6; Սաղմ.82:6)
4. *Elohim* տերմինը նաև կիրառվում էր այլ հոգևոր էակների համար (հրեշտակներ, դևեր) ինչպես 2 Օր.32:8-ում (LXX), Սաղմ.8:5; Հոբ 1:6, 38:7
5. Աստվածաշնչում աստվածության համար սա առաջին անունը կամ տիտղոսն է (տես՝ Ծննդ.1:1): Այն կիրառված է առանձին մինչև Ծննդ.2:4, որտեղ համադրվում է YHWH –ի հետ: Այն հիմնականում (աստվածաբանորեն) վերաբերում է Աստծուն որպես արարչի, պահապանի և այս երկրագնդի վրա կյանք պարզևողի (տես՝ Սաղմ.104):
 Այն *El* բառի հոմանիշն է (տես՝ 2 Օր.32:15-19): Նաև համարժեք իմաստն ունի YHWH-ի, ինչպես Սաղմ.14-ում (*Elohim*, հհ.1,2,5, YHWH, հհ. 2,6, նույնիսկ *Adon*, հ.4):
6. Չնայած այն ՀՈԳՆԱԿԻ թվով է և կիրառվում է այլ աստվածների համար, այս տերմինը հաճախ բնութագրում է Իսրայելի Աստծուն, սակայն միաստվածությանը մատնանշելիս սովորաբար կիրառվում է ԵԶԱԿԻ թվով ԲԱՅԸ:
7. Տարօրինակ է, որ Իսրայելի միակ Աստծո ընդհանուր անունը ՀՈԳՆԱԿԻ է: Չնայած անհատականությանը, ահա այդ տեսությունները.
 - ա. Եբրայերենն ունի շատ ՀՈԳՆԱԿԻՆԵՐ, որոնք հաճախ կիրառվում են շեշտադրության համար: Հետագայում եբրայերեն քերականական առանձնահատկությամբ այս թեմայի հետ սերտորեն կապ կունենա «մեծության հոգնակին», որտեղ ՀՈԳՆԱԿԻ կիրառվում է մեծացնելու տվյալ հասկացությունը:
 - բ. Սա կարող է վերաբերել հրեշտակային խորհրդին, որի հետ Աստված հանդիպում է երկնքում և որը կատարում է Նրա հրամանները (տես՝ Հովհ.1:3,10; Հռոմ.11:36; 1 Կորնթ.8:6; Կող.1:15; Եբր.1:2; 2:10):
 - գ. Նույնիսկ հնարավոր է, որ սա արտացոլում է ՆԿ-ի այն հայտնությունը, որ Աստված երեք անձ է մեկում: Ծննդ.1:1-ում Աստված արարում է, Ծննդ.1:2-ում Հոգին շարժվում է, իսկ ՆԿ-ում Հիսուսը Հայր Աստծո գործակալն է ստեղծագործության մեջ (տես՝ Հովհ.1:3,10; Հռոմ.11:36; 1 Կորնթ.8:6; Կող.1:15; Եբր.1:2; 2:10):

Դ. YHWH (BDB 217, KB 394)

1. Սա այն անունն է, որն Աստծուն նկարագրում է որպես ուխտ կապողի, փրկչի, ազատագրողի: Մարդիկ ուխտադրույժ են, սակայն Աստված հավատարիմ է Իր խոսքին, խոստմանը, ուխտին (տես՝ Սաղմ.103):
 Այս անունը առաջին անգամ նշվել է *Elohim* բառի հետ համադրված Ծննդ.2:4-ում: Ծննդոց 1-2-ում գոյություն չունեն արարչագործության երկու արձանագրություններ, այլ երկու շեշտադրումներ՝ (1) Աստված որպես տիեզերքի արարիչ (ֆիզիկական) և (2) Աստված որպես մարդկության հատուկ արարիչը: Ծննդոց 2:4-3:24-ը սկսում է մարդկությանը առանձնաշնորհված դիրքի և նպատակի հատուկ հայտնությամբ, ինչպես նաև մեղքի հիմնախնդրով և ապստամբությամբ, որոնք միացան այս բացառիկ դիրքին:
2. Ծննդ.4:26-ում ասվում է «մարդիկ սկսեցին կանչել ՏԻՐՈՋ (YHWH) անունը»: Համենայն դեպս, Ելից 6:3 ակնարկում է, որ առաջին ուխտի մարդիկ (Նահապետները և նրանց ընտանիքները) ճանաչում էին Աստծուն միայն որպես Էլ-Շադայ (*El-Shaddai*): YHWH անունը բացատրվում է միայն մեկ անգամ՝ Ելից 3:13-16-ում, հատկապես հ.14: Այնուամենայնիվ Մովսեսի գրքերը հաճախ մեկնաբանում են բառերը հայտնի բառախաղերով և ոչ թե ըստ ստուգաբանության (տես՝ Ծննդ.17:5; 27:36; 29:13-35): Գոյություն են ունեցել մի քանի տեսություններ այս անվան նշանակության հետ կապված (վերցված IDB, հատոր 2, էջ.՝ 409-11):
 - ա. Արաբերեն արմատից՝ «կրակոտ սեր ցուցաբերել»
 - բ. Արաբերեն արմատից՝ «փչել» (YHWH որպես փոթորկող Աստված)
 - գ. Ուգարտիկ (Քանանացիների) արմատից՝ «խոսել»
 - դ. Համաձայն Փյունիկյան մակագրության, ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որը նշանակում է «Մեկը, որ պահպանում է» կամ «Մեկը, որ հաստատում է»:
 - ե. Եբրայերեն *Qal* ձևից՝ «Նա, որ է» կամ «Նա, որ ներկա է» (ապամնի իմաստով՝ «Նա որ կլինի»)
 - զ. Եբրայերեն *Hiphil* ձևից՝ «Նա, որ գոյի պատճառ է հանդիսանում»
 - է. Եբրայերեն «ապրել» արմատից (օր.՝ Ծննդ.3:21), որը նշանակում է «հավերժ ապրողը, միակ ապրողը»
 - ը. Ելից 3:13-16 կոնտեքստից ԱՆԿԱՏԱՐ ժամանակով՝ մի մասը կիրառված ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակում, «Ես կշարունակեմ լինելու այն ինչ եղել եմ» կամ «Ես կշարունակեմ լինել

այն ինչ միշտ են եղել» (տես՝ J. Wash Watts, *A Survey of Syntax in the Old Testament*, p.67 /Ջ.

Ուոշ Ուաթս, *Ճարտահյուսության Ուսումնասիրություն Հին Կտակարանում*, էջ 67):

- (1) *Yah* (օր.՝ Ալելու – յահ, BDB 219, տես՝ Ելից 15:2; 17:16; Սաղմ.89:8; 104:35)
 - (2) *Yahu* ('iah' հայերեն՝ -իա, անունների վերջավորությունը, օր.՝ Եսայիա)
 - (3) *Yo* ('Jo' հայերեն՝ Հո-, անունների սկզբնամասը, օր.՝ Հովել)
3. Ավելի ուշ հուդայականության մեջ ուխտի այս անունը դարձավ այնքան սուրբ (քառագիրը), որ հրեաները վախենում էին արտասանել այն, այլապես կխախտեին Ելից 20:7; 2 Օր.5:11; 6:13-ի պատվիրանը: Ուստի նրանք այս բառը փոխարինեցին եբրայերեն «սեփականատեր», «տեր» «ամուսին» տերմիններով – *adon* կամ *adonai* (իմ տեր): Երբ ՀԿ-ի տեքստերը ընթերցելիս հասնում էին YHWH բառին նրանք արտասանում էին «տեր»: Այդ իսկ պատճառով YHWH բառը անգլերեն (հայերեն) թարգմանություններում գրված է ՏԵՐ:
4. Ինչպես *El*, YHWH բառերի հետ հաճախ համադրվում են այլ տերմիններ, որպեսզի շեշտադրվեն Իսրայելի Ուխտի Աստծո որոշակի հատկություններ: Չնայած որ կան շատ հնարավոր համադրված տերմիններ, ահա դրանցից մի քանիսը.
- ա. YHWH – *Yireh* (YHWH Եհովա-Իրե՝ Եհովան կհոգա, BDB 217 & 906), Ծննդ.22:14
 - բ. YHWH – *Rophekha* (YHWH Եհովա-Ռոֆեխա, Եհովան քո բժիշկն է, BDB 217 & 950, *Qal* ԴԵՐԲԱՅ), Ելից 15:26
 - գ. YHWH – *Nissi* (YHWH Եհովա-Նիսի՝ Եհովան իմ դրոշն է, BDB 217 & 651), Ելից 17:15
 - դ. YHWH – *Meqaddishkem* (YHWH Եհովա-Մեքադիշկեմ՝ Նա ով հազեցնում է քեզ, BDB 217 & 872, *Piel* ԴԵՐԲԱՅ), Ելից 31:13
 - ե. YHWH – *Shalom* (YHWH Եհովա-Շալոմ՝ Եհովան իմ խաղաղությունը, BDB 217 & 1022), Դատ.6:24
 - զ. YHWH – *Sabaoth* (YHWH Եհովա-Սաբաոթ՝ զորքերի Եհովան, BDB 217 & 878), 1 Թագ.1:3, 11; 4:4; 15:2; հաճախ Մարգարեներում
 - է. YHWH – *Ro'I* (YHWH Եհովա-Ռոյ՝ Եհովան իմ հովիվը, BDB 217 & 944, *Qal* ԴԵՐԲԱՅ), Սաղմ.23:1
 - ը. YHWH – *Sidqenu* (YHWH Եհովա-Սիդքենյու՝ Եհովան իմ արդարությունը, BDB 217 & 841), Երեմ.23:6
 - թ. YHWH – *Shammah* (YHWH Եհովա-Շամմա՝ Եհովան այնտեղ է, BDB 217 & 1027), Եզեկ.48:35

■ «Գու ա՛յս անգամ պիտի վերականգնես Իսրայելի թագավորությունը» Նրանք դեռևս ունեին լիովին հրեական ազգայնական սպասումներ (տես՝ Սաղմ.14:7; Երեմ.33:7; Ովկ.6:11; Դուկ.19:11; 24:21): Հնարավոր է նրանք անգամ հարցնում էին իրենց գործնական պաշտոնների մասին:

Աստվածաբանական այս հարցը դեռևս պատճառ է շատ բանավեճերի: Այստեղ ուզում են ներառել Հայտնության գրքի իմ մեկնաբանությունից մի մաս (տես՝ www.freebiblecommentary.org), որը քննարկում է հենց այս հարցը:

ՀԿ-ի մարգարեները կանխատեսում են հրեական թագավորության վերականգնումը՝ Պաղեստինում՝ կենտրոնացած Երուսաղեմում, որտեղ երկրի բոլոր ազգերը կհավաքվեն փառաբանելու և ծառայելու Դավթի սերնդից մի իշխանի, սակայն ՆԿ-ի Առաքյալները երբեք չեն կենտրոնանում այս օրակարգի վրա: Արդյո՞ք ՀԿ-ը ներշնչված չէ (տես՝ Մատթ.5:17-19): Արդյո՞ք ՆԿ-ի հեղինակները բաց են թողել վերջին ժամանակների այս կարևոր իրադարձությունները:

Գոյություն ունեն աշխարհի վերջին ժամանակների մասին տեղեկությունների մի քանի աղբյուր.

1. ՀԿ-ի մարգարեները
2. ՀԿ-ի ապագայի մասին գրողները (տես՝ Եզեկ.37-39; Դան.7-12)
3. Միջկտակարանային, անկանոն հրեական ապոկալիպտիկ հեղինակները (ինչպես 1 Ենովք)
4. Հիսուսն Ինքը (տես՝ Մատթ.24; Մարկ.13; Դուկ.21)
5. Պողոսի թղթերը (տես՝ 1 Կորնթ.15; 2 Կորնթ.5; 1 Թեսաղ.4; 2 Թեսաղ.2)
6. Հովհաննեսի թղթերը (Հայտնության գիրքը)

Արդյո՞ք այս բոլորը հստակ սովորեցնում են վերջին ժամանակի օրակարգը (դեպքերը, ժամանակագրությունը, անձանց): Եթե ո՛չ, ապա ինչո՞ւ: Արդյո՞ք այս բոլոր գրքերը (բացի միջկտակարանային հրեական գրքերից) ներշնչված չեն:

ՀԿ-ի գրողներին Հոգու կողմից հայտնած ճշմարտությունները՝ տերմիններով և կատեգորիաներով, նրանք կարող էին հասկանալ: Մակայն, պրոգրեսիվ հայտնությունների միջոցով Սուրբ Հոգին ընդլայնում է այս ՀԿ-յան վերջին ժամանակների հասկացությունները մինչև տիեզերական հորիզոններ (տես՝ Եփես.2:11-3:13): Ահա մի քանի հարմար օրինակներ.

1. Երուսաղեմ քաղաքը կիրառվում է որպես Աստծո ժողովրդի (Միոնի) փոխաբերությունը և պրոյեկտվում է ՆԿ-ում որպես բոլոր ապաշխարող, հավատացող մարդկանց Աստծո ընդունելությունը արտահայտող տերմին (Հայտնության 20-22-ի նոր Երուսաղեմը): Բառացի, ֆիզիկական քաղաքի աստվածաբանական տարածումը Աստծո ժողովրդի մեջ թաքնված է Ծննդ.3:15-ում անկում ապրած մարդկությանը տրված Աստծո խոստման մեջ, նախքան նույնիսկ հրեա կամ հրեաների մայրաքաղաք գոյություն ունենալը: Նույնիսկ Աբրահամի կանչը (տես՝ Ծննդ.12:3) իր մեջ հեթանոսներին է ընդգրկում:
2. ՀԿ-ում թշնամիները համարվում էին Հնագույն Մերձավոր Արևելքը շրջապատող ազգերը, սակայն ՆԿ-ում նրանց մեջ ընդգրկվեցին բոլոր անհավատ, Աստծուն հակառակ, սատանայությանը ներշնչված մարդիկ: Պատերազմը տեղափոխվեց աշխարհագրական, տարածքային բախումներից դեպի տիեզերականը:
3. Երկիր ունենալու խոստումը, որը իրականում այնքան անքակտելի էր ՀԿ-ում (Նահապետական խոստումները), այժմ դարձել էր ամբողջ երկիրը: Նոր Երուսաղեմը դառնում է վերստեղծված երկիրը, և ոչ թե միայն կամ բացառապես Մերձավոր Արևելքը (տես՝ Հայտն.20-22):
4. ՀԿ-ի ընդլայնված մի քանի այլ մարգարեական հասկացություններից են՝ (1) Աբրահամի սերմը՝ այժմ հոգևորապես թլփատվածներն են (տես՝ Հռոմ.2:28-29); (2) ուխտի ժողովուրդը՝ այժմ ներառում է հեթանոսներին (տես՝ Ովս.1:9; 2:23; Հռոմ.9:24-26; նաև Դևտ.26:12; Ելից 29:45; 2 Կորնթ.6:16-18 և Ելից 19:5; 2 Օր.14:2; Տիտ.2:14); (3) տաճարը՝ այժմ տեղական եկեղեցին է (տես՝ 1 Կորնթ.3:16) կամ անհատ հավատացյալը (տես՝ 1 Կորնթ.6:19); և (4) անգամ Իսրայելը և նրան առանձնահատուկ բնութագրական արտահայտությունները այժմ վերաբերում են Աստծո ամբողջ ժողովրդին (տես՝ Գաղ.6:16; 1 Պետ.2:5,9-10; Հայտ.1:6)

Մարգարեական օրինակը իրականացել, ընդլայնվել է և այժմ այն ավելի ընդգրկուն է: Հիսուսը և Առաքելական գրողները չեն ներկայացնում վերջին ժամանակները այնպես ինչպես ՀԿ-ի մարգարեները (տես՝ Մարթին Ուինգարդեն, *Թագավորության սպասան Մարգարեության և դրա Իրականացման մեջ*, /Martin Wyngarden, *The Future of The Kingdom in Prophecy and Fulfillment*): Ժամանակակից մեկնաբանները, որոնք փորձում են ՀԿ-ի օրինակը դարձնել բառացի կամ նորմատիվ, մտցնում են երկիմաստ և անորոշ նշանակություններ: ՆԿ-ի հեղինակները չեն անտեսում ՀԿ-ի մարգարեներին, սակայն ցույց են տալիս դրանց առավելագույն տիեզերական առնչությունը:

1:7

NASB

«Ձեր գործը չէ իմանալ այն ժամերն ու ժամանակները, որ Հայրը Իր գործությամբ հաստատեց»

NKJV

«Ձեր գործը չէ իմանալ այն ժամերն ու եղանակները»

NRSV

«Ձեր գործը չէ իմանալ այն ժամերը կամ ժամանակաշրջանները»

TEV

«Ժամերն ու հանգամանքները»

NJB

«Ձեր գործը չէ իմանալ ժամերը կամ ժամանակները»

«Ժամեր» տերմինը (*chronos*) նշանակում է «ժամանակաշրջաններ» կամ «դարեր» (այսինքն՝ ժամանակի անցները), մինչ «դարաշրջանները» (*kairos*) նշանակում է «հատուկ դեպքերի կամ եղանակների ժամանակ» (տես՝ Տիտոս 1:2-3): Լուս և Նիդա, *Հունարեն-անգլերեն Բառարան*, գրքում ասում է, որ դրանք հոմանիշներ են, պարզապես ժամանակի տևողության տարբերությամբ (տես՝ 1 Թեսաղ.5:1): Այնուհայտ է, որ հավատացյալները չպետք է փորձեն հատուկ ժամանակներ որոշել. նույնիսկ Հիսուսը չգիտեր Իր վերադարձի ժամանակը (տես՝ Մատթ.24:36; Մարկ.13:32): Երկրորդ Գալստյանը վերաբերող ՆԿ-ի երկու շեշտադրումներն են մնալ **ակտիվ** և **պատրաստ լինել**: Մնացածը Աստծո գործն է:

1:8 «բայց դուք գործություն պիտի ստանաք» Նկատեք, որ Սուրբ Հոգու գալուստը կապված է գործության և վկայելու հետ: Գործքը «վկայելու» մասին է (այսինքն՝ *martus*): Գրքում գերակշռում է այս թեման (տես՝ 1:8,22; 2:32; 3:15; 5:32; 10:39,41; 13:31; 22:15,20; 26:16): Եկեղեցուն տրվեց իր հանձնարարությունը՝ վկայել Քրիստոսի ավետարանը (տես՝ Դուկ.24:44-49): Առաքյալները Հիսուսի կյանքի և ուսմունքի վկաներն էին, այժմ նրանք պետք է վկայեն Նրա կյանքի և ուսմունքի մասին: Պողոպեր վկայությունը տեղի է ունենում միայն Հոգու գործությամբ:

Հետաքրքիր է, որ *Ձերոմ Աստվածաշնչյան Մեկնաբանության Գիրքը* (Էջ 169) նկատում է Դուկասի մոտ հակվածություն արտահայտելու «ուշացած պարուսիա» /երկրորդ գալուստ/ : Ահա մեջբերումը.

«Հոգին *Parousia*-ի (երկրորդ գալուստյան) համար փոխանորդ է: Սա է *alla*՝ «բայց» շաղկապի հնարավորությունը, որը միացնում է Հիսուսի պատասխանի երկու մասերը: Հոգին է այն սկզբունքը,

որով շարունակվում է Քրիստոնեությունը գոյություն ունենալ սուրբ պատմության այս նոր դարաշրջանում՝ եկեղեցու և միսիայի դարաշրջանում: Այս իրողությունները պետք է փոխարինեն վաղ շրջանի *Parousia-ին*, որպես Քրիստոնեական ճանաչողության թիրախ: Եկեղեցում Հոգին Ղուկասի պատասխանն է *Parousia-ի* ուշացման հիմնահարցին և պատմության շարունակությանը»:

■ **«Երուսաղեմ...Հրեաստան... Սամարիա...Երկրի ամենահեռավոր ծայրերը»** Սա է Գործքի աշխարհագրական ուրվագիծը.

1. Երուսաղեմ, 1-7 գլուխները
2. Հրեաստան և Սամարիա, 8-12 գլուխները
3. Երկրի ծայրերը (այսինքն՝ Հռոմ), 13-28 գլուխները

Այս ուրվագիծը կարող է արտահայտել հեղինակի կիրառած գրական ժանրը և նպատակը: Քրիստոնեությունը հուդայականության ինչ-որ մի աղանդ չէ, այլ միակ ճշմարիտ Աստծո կողմից համաշխարհային շարժում, որպեսզի իրականացնի ՀՎ-ի խոստումները՝ ապստամբ մարդկության հետ Իր կապը վերականգնելու համար (տես՝ Ծննդ.12:3; Ելից 15:9; Եսայի 2:2-4; 56:7; Ղուկ.19:46):

«Երկրի ամենահեռավոր ծայրերը» արտահայտությունը նորից օգտագործվում է 13:47-ում, որտեղ այն մեջբերվում է Եսայի 49:6-ից՝ Մեսիային վերաբերող մի հատված, որը նաև նշում է «ազգերի լույս» արտահայտությունը: Փրկիչը (տես՝ Ծննդ.3:15) ազգերի համար (տես՝ Ծննդ.12:3; Ելից 19:5-6; Եսայի 2:2-4) միշտ էլ եղել է Աստծո ծրագիրը:

Առաջին հրեա առաջնորդները, իմանալով Սեպտուագիան և շատ մարգարեական խոստումներ, որոնք տվել է Եհովան Երուսաղեմը վերականգնելու, Երուսաղեմը բարձրացնելու, աշխարհը դեպի Երուսաղեմ բերելու՝ ակնկալում էին, որ այս ամենը բառացիորեն պետք է կատարվեր: Նրանք մնացին Երուսաղեմում (տես՝ 1:8): Սակայն ավետարանը հեղափոխեց և ընդլայնեց ՀՎ-ի հասկացությունները: Համաշխարհային հանձնարարությունը /մանդատը/ (տես՝ Մատթ.28:18-20; Ղուկ.24:47; Գործք 1:8) հավատացյալներին ասում է գնալ աշխարհով մեկ, և չսպասեն, որ աշխարհը կգա իրենց մոտ: ՆԿ-ի Երուսաղեմը երկնքի համար փոխարեքական խոսք է (տես՝ Հայտ.21:2), և ոչ թե Պաղեստինում գտնվող քաղաք:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲՈՒԹ ԲՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ես պետք է ձեզ՝ ընթերցողներիդ խոստովանեմ, որ հակված եմ այս տեսակետին: Իմ համակարգված աստվածաբանությունը Կավիինգսը կամ Դիսպենսացիոնալիզմը չէ, այլ Մեծ Հանձնարարության ավետարանչությունն է (տես՝ Մատթ.28:18-20; Ղուկ.24:46-47; Գործք 1:8): Ես հավատում եմ, որ Աստված ամբողջ մարդկության փրկության համար ունի հավիտենական ծրագիր (օր.՝ Ծննդ.3:15, 12:3; Ել.19:5-6; Երեմ.31:31-34; Եզեկ.18; 36:22-39; Գործք 2:23; 3:18; 4:28; 13:29; Հռոմ.3:9-18, 19-20, 21-31), Իր պատկերով և նմանությամբ ստեղծված բոլոր մարդկանց համար (տես՝ Ծննդ.1:26-27): Ուխտերը միաձուլված են Քրիստոսի մեջ (տես՝ Գաղ.3:28-29; Կող.3:11): Հիսուսը Աստծո գաղտնի խորհուրդն է, թաքնված, սակայն այժմ մեզ հայտնված (տես՝ Եփես.2:11-3:13): ՆԿ-ի ավետարանն է հանդիսանում Սուրբ Գրքի բանալին և ոչ թե Իսրայելը:

Այս նախնական հասկացությունները գունավորում են Սուրբ Գրքի իմ բոլոր մեկնաբանությունները: Ես կարդում եմ ամբողջ տեքստը դրա միջով: Սա անշուշտ հիմք է (բոլոր մեկնաբանները ունեն հիմքեր), սակայն այն աստվածաշնչով հաստատված նախադրյալ է:

1:9 «Նա համբարձվեց /անգլ.՝ վեր առնվեց/» Այս իրադարձությունը հայտնի է որպես Համբարձում: Հարուցյալ Հիսուսը վերադառնում է Իր նախկին փառքի վայրը (տես՝ Ղուկ.24:50-51; Հովհ.6:22; 20:17; Եփես.4:10; 1 Տիմ.3:16; Եբր.4:14 և 1 Պետ.3:22): Չնշված ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՌԻ գործող անձը հանդիսանում է Հայրը: Տե՛ս Հատուկ Թեմա. Համբարձումը 1:2-ում:

Նկատեք ԲԱՅԻ տարբեր ձևերը, որոնք կիրառվել են համբարձումը նկարագրելու համար:

1. «վեր վերցվեց» հ.2 – ԱՆԴԵՄ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱԿԱՆ
2. «բարձրացվեց» հ.9 - ԱՆԴԵՄ ինչպես հ.2) ՉԵՉՈՔ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ
3. «երկինք բարձրացվեց» Ղուկ.24:51 (տեսքային տարբերակը) – ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԱԿԱՆ

Տե՛ս /Special Topic: Accention/ Հատուկ Թեմա. Համբարձումը, 1:2

■ **«մի ամպ»** Ամպերը կարևոր էսկատոլոգիական նշան են: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՄՊԵՐՈՎ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ

Ակնհայտ է, որ այս արտահայտությունը վերաբերում է Քրիստոսի Երկրորդ Գալստյանը: Ամպերով այս վերադարձը շատ նշանակալի էսկատոլոգիական նշան է: ՀԿ-ում այն կիրառվել է երեք տարբեր կերպերով:

1. Ցույց տալու Աստծո ֆիզիկական ներկայությունը, *Shekinah* փառքի ամպը (տես՝ Ել.13:21; 16:10; Թվոց 11:25)
2. Իր Սրբությունը ծածկելու համար, որպեսզի մարդիկ չտեսնեն Իրեն և չմեռնեն (տես՝ Ել.33:20; Ես.6:5)
3. Աստվածության փոխադրամիջոց (տես՝ Սաղմ.104:3; Ես.19:1)
Դան.7:13-ում ամպերը օգտագործվեցին աստվածային մարդ Մեսիայի համար որպես փոխադրամիջոց: Դանիելի գրքում գրված այս մարգարեությունը ՆԿ-ում ակնարկվում է ավելի քան 30 անգամ: Երկնքի ամպերի և Մեսիայի միջև այս նույն կապը կարելի է տեսնել Մատթ.24:30; Մարկ.13:26; Դուկ.21:27; 14:62; Գործք 1:9,11 և 1 Թեսաղ.4:17:

1:10 «ակնապիշ նայում էին» Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՏԱՐ է: Նրանք շարունակում էին լարված նայել, որպեսզի որքան հնարավոր է Հիսուսին երկար ժամանակ տեսնեին: Նույնիսկ, երբ Նա արդեն անհետացել էր տեսադաշտից, նրանք դեռ նայում էին:

Այս տերմինը հատկանշական է Դուկասի գրվածքներին (տես՝ Դուկ.4:20; 22:56; Գործք 1:10; 3:4,12; 6:15; 7:55; 10:4; 11:6; 13:9; 14:9; 23:1, ՆԿ-ում Դուկասի և Գործքի գրքերից դուրս կարելի է գտնել միայն «աչքերը հառել ինչ-որ բանի վրա»:

■ **«դեպի երկինք»** Հնում հավատում էին, որ երկինքը վերն է, սակայն մեր օրերում տիեզերքի վերաբերյալ ավելի խորը գիտության «դեպի վեր՝ երկինք» ասվածը հարաբերական է: Դուկ.24:31-ում, Հիսուսը աներևութացավ: Սա հնարավոր է լինի ավելի լավ օրինակ մեր մշակույթի մեջ: Երկինքը ինչ-որ տեղ կամ վերը մի տեղ չէ, այլ մեկ այլ տարածաչափություն և ժամանակ: Երկինքը ինչ-որ ուղղություն չէ, այլ անձնավորություն:

■ **«սպիտակ զգեստներով երկու մարդ»** ՆԿ-ը հաճախ նկարագրում է հրեշտակներին իրենց պայծառ սպիտակ զգեստներով (տես՝ Դուկ.24:4; Հովհ.20:12): Հրեշտակները հայտնվեցին Նրա ծննդյան, Նրա փորձության ժամանակ, Գեթսեմանի պարտեզում, գերեզմանի մոտ և ահա հիմա համբարձման ժամանակ:

1:11 «Գալիլիացի մարդիկ» Գործք Առաքելոցում մի քանի անգամ Դուկասը արձանագրում է աշակերտների բնիկ Գալիլիացի լինելը (տես՝ 2:7; 13:31): Բոլոր Տասներկու աշակերտները, բացի Հուդա Իսկարիոտացուց, Գալիլիայից էին: Այս տարածքը Հուդայի բնակիչների կողմից անտեսված էր, քանի որ ուներ մեծաքանակ հեթանոս բնակաչություն և այնքան էլ «kosher» (այսինքն՝ խիստ) չէր Բանավոր Ավանդությունը (Talmud) պահելու մեջ:

Հնարավոր է հարց առաջանա, թե արդյո՞ք Դուկասը այսպես է ներկայացրել, որպեսզի պատասխանի ապագայում Հիսուսի Երկրորդ գալստյան ուշացման հետ կապված հարցերին: Քրիստոնյաները չպետք է կենտրոնանան *Porousia*-ի վրա, այլ ծառայության, ավետարանչության և միսիոներության:

■ **«Հիսուսը... պիտի գա»** Որոշ աստվածաբաններ փորձում են տարբերություններ դնել «Հիսուսի» և «Քրիստոսի» միջև: Այս հրեշտակները հաստատում են, որ հենց այն Հիսուսն է վերադառնալու, որին նրանք ճանաչում էին: Փառավորված, համբարձված Քրիստոսը տակավին նույն փառավորված Նագովրեցի Հիսուսն է: Նա մնում է Աստվածամարդ:

Հիսուսը վերադառնալու է այնպես, ինչպես հեռացավ՝ երկնքի ամպերի վրա (տես՝ Հատուկ Թեմա 1:9, տես՝ Մատթ.10:23; 16:27; 24:3,27,37,39; 26:64; Մարկ.8:38-39; 13:26; Դուկ.21:27; Հովհ.21:22; 1 Կորն.15:23; 1 Թեսաղ.1:10, 4:16; 2 Թեսաղ.1:7,10; Հակ.5:7-8; 2 Պետ.1:16; 3:4,12; 1 Հովհ.2:28; Հայտ.1:7): Հիսուսի Երկրորդ Գալուստը ՆԿ-ի կրկնվող և կարևոր թեմաներից է: Պատճառներից մեկը, որ Ավետարանը գրի առնվելու համար երկար ժամանակ պահանջվեց, այն էր, որ վաղ եկեղեցու հավատացյալները սպասում էին, որ Հիսուսի երկրորդ գալուստը շատ շուտով էր լինելու: Նրա երկրորդ գալստյան անակնկալ ուշացումը, Առաքյալների նահատակվելը և աղանդավորության անը՝ բոլորը միասին առիթ հանդիսացան, որ Հիսուսի կյանքը և ուսմունքները գրի առնվեն:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 1:12-14

¹²Ապա Երուսաղեմ վերադարձան Ձիթենյաց կոչվող լեռից, որը Երուսաղեմից մոտ է՝ մի շաբաթ օրվա ճանապարհի չափ: ¹³Եվ երբ քաղաք մտան, ելան վերնատունը, որտեղ բնակվում էին Պետրոսը և Հակոբոսը, Փիլիպպոսը և Թովմասը՝ Հովհաննեսը և Անդրեասը, Բարթողիմեոսը և Մատթեոսը, Ալփեոսի որդի Հակոբոսն ու Միմեոն Նախանձահույզը, և Հուդան՝ Հակոբոսի որդին: ¹⁴Սրանք բոլորը միաբանությամբ շարունակ աղոթում էին և աղաչանք անում կանանց՝ Հիսուսի մորը՝ Մարիամի ու Նրա եղբայրների հետ միասին:

1:12 «վերադարձան» Ղուկ.24:52 ավելացնում է «մեծ ուրախությամբ»:

■ **«Ձիթենյաց կոչվող լեռից»** Թվում է, թե սա հակասում է Ղուկ.24:50 (այսինքն՝ Բեթանիա), սակայն համեմատեք Ղուկ.19:29 և 21:37 խոսքերը Մարկ.11:11-12 և 14:3 խոսքերի հետ: Հայտնի Ձիթենյաց լեռ կոչվող լեռնաշղթան 2.5 մղոն երկարությամբ լեռնաշղթա էր Երուսաղեմից 300-400 ոտնաչափ բարձրության վրա, որը սկսվում էր Բեթանիայից՝ Կեդրոն հարթավայրի հակառակ կողմը, Տանարի դիմացը: Այս մասին նշվում է ՀԿ-ի Էսկատոլոգիական մարգարեության մեջ (տես՝ Չաք.14:4): Հիսուսը Իր աշակերտների հետ շատ անգամ այստեղ էր աղոթում և հավանաբար նաև մնում:

■ **«մի շաբաթ օրվա ճանապարհի չափ»** Շաբաթ օրով հրեայի համար թույլատրելի տարածությունը, որ կարող էր գնալ, որոշված էր ռաբբիների կողմից (տես՝ Ելից 16:29; Թվոց 35:5): Այն մոտավորապես 2,000 կանգուն (կամ քայլ) հեռավորություն էր, որը ռաբբիները նշանակել էին որպես առավելագույն տարածություն, որ կարող էին Շաբաթ օրը քայլել և չխախտել Մովսեսի օրենքը:

1:13 «վերնատունը» Հավանաբար սա հենց Վերջին Ընթրիքի նույն վայրն էր (տես՝ Ղուկ.22:12; Մարկ.14:14-15): Ավանդույթն ասում է, որ այն Հովհաննես Մարկոսի տան վերնահարկն էր (2րդ կամ 3րդ հարկը), որը գրել է Պետրոսի հիշողությունները Մարկոսի Ավետարանում: Այն պետք է որ մեծ սենյակ լիներ, որպեսզի տեղավորեր 120 հոգու:

■ **«նրանք /անգլերենում նշված է «որտեղ նրանք բնակվում էին»/ Սա Առաքյալների չորս անվանացանկերից մեկն է (տես՝ Մատթ.10:2-4; Մարկ.3:16-19 և Ղուկ.6:14-16): Ցանկերը ճիշտ նույնը չեն: Անունները և հերթականությունը տարբերվում են: Այնուամենայնիվ, նրանք միշտ նույն անձիք են՝ չորս հոգանոց երեք խմբերում: Պետրոսը միշտ առաջինն է, իսկ Հուդան՝ վերջինը: Այս չորս հոգուց կազմված երեք խմբերը հավանաբար նրա համար էին, որպեսզի հնարավոր լիներ այս մարդկանց պարբերաբար վերադառնալ տուն՝ ստուգելու և հոգալու իրենց ընտանիքների համար: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման:**

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

	Մատթեոս 10:2-4	Մարկոս 3:16-19	Ղուկաս 6:14-16	Գործք 1:12-18
Առաջին Խումբ	Միմոն (Պետրոս) Անդրեաս (Պետրոսի եղբայր) Հակոբոս (Չերեղեոսի որդի) Հովհաննես (Հակոբոսի եղբայր)	Միմոն (Պետրոս) Հակոբոս (Չերեղեոսի որդի) Հովհաննես (Հակոբոսի եղբայր) Անդրեաս	Միմոն (Պետրոս) Անդրեաս (Պետրոսի եղբայր) Հակոբոս Հովհաննես	Պետրոս Հովհաննես Հակոբոս Անդրեաս
Երկրորդ Խումբ	Փիլիպպոս Բարթողիմեոս Թովմաս Մատթեոս (հարկահավաք)	Փիլիպպոս Բարթողիմեոս Մատթեոս Թովմաս	Փիլիպպոս Բարթողիմեոս Մատթեոս Թովմաս	Փիլիպպոս Թովմաս Բարթողիմեոս Մատթեոս
Երրորդ Խումբ	Հակոբոս (Ալփեոսի որդի) Թադեոս Միմեոն (Կանանացի)	Հակոբոս (Ալփեոսի որդի) Թադեոս Միմոն (Կանանացի)	Հակոբոս (Ալփեոսի որդի) Միմեոն (Նախանձահույզ)	Հակոբոս (Ալփեոսի որդի) Միմեոն (Նախանձահույզ)

	Հուդա (Իսկարիովտացի)	Հուդա (Իսկարիովտացի)	Հուդա (Հակոբոսի որդի) Հուդա (Իսկարիովտացի)	Հուդա (Հակոբոսի որդի)
--	-------------------------	-------------------------	---	--------------------------

■ **«Պետրոս»** Գալիլիայի շատ հրեաներ ունեին թե՛ հրեական անուն (օր.՝ Սիմոն կամ Սիմեոն [BDB 1035, տես՝ Ծննդ.29:33], նշանակում է «սել») և թե՛ հունարեն անուն (որը երբեք չի տրվում): Հիսուսը նրան մականվանեց «ժայռ»: Հունարեն այն կոչվում է *petros*, իսկ արամեերեն՝ *Cephas* (տես՝ Հովհ.1:42; Մատթ.16:16):

■ **«Անդրեաս»** Հունարեն տերմինը նշանակում է «տղամարդկային»: Հովհ.1:29-42-ից հասկանում ենք, որ Անդրեասը Հովհաննես Մկրտչի աշակերտներից մեկն էր և որ նա ծանոթացրեց իր եղբայր Պետրոսին Հիսուսի հետ:

■ **«Փիլիպպոս»** Հունարեն տերմինը նշանակում է «ձիեր սիրող»: Նրա կանչը ներկայացված է Հովհ.1:43-51-ում:

■ **«Թովմաս»** Եբրայերեն տերմինը նշանակում է «երկվորյակ» կամ Դիդիմուս (տես՝ Հովհ.11:16; 20:24; 21:2):

■ **«Բարթոլոմեոս»** Այս տերմինը նշանակում է «Թողմենուի որդի»: Հնարավոր է նա հենց Հովհաննես Ավետարանի միջի (տես՝ Հովհ.1:45-49; 21:20) Նաթանայելն է («Աստծո պարզև» BDB 681 և 41):

■ **«Մատթեոս»** Հավանաբար կապված է Եբրայերեն *Mattanai* անվան հետ, որը նշանակում է «ԵՀՈՎԱՅԻ պարզև» (BDB 683): Սա Ղևի անվան մեկ այլ նշանակությունն է (տես՝ Մատթ.2:14; 5:27):

■ **«Հակոբոս»** Սա եբրայերեն «Հակոբ» անունն է (BDB 784, տես՝ Ծննդ.25:26): Տասներկուսի անվանացանկում կան երկու Հակոբոս անունով մարդիկ: Մեկը Հովհաննեսի եղբայրն է (տես՝ Մարկ.3:17) և ներքին օղակից մեկը (այսինքն՝ Պետրոս, Հակոբոս և Հովհաննես): Այս մեկը հայտնի է որպես ավելի փոքր Հակոբոսը:

■ **«Սիմեոն Նախանձահույզ»** Մարկոսի հունարեն տեքստը նշում է «Կանանացի» (նաև Մատթ.10:4): Մարկոսը, որի Ավետարանը գրվել է հռոմեացիներին, հնարավոր է չի ցանկացել օգտագործել քաղաքական առումով «կարմիր կոճակ» հանդիսացող «Նախանձահույզ» անունը, որը կրում էր հրեական հակահռոմեական պարտիզանական մի շարժում: Ղուկասը այս տերմինով չի անվանում (տես՝ Ղուկ.6:15 և Գործք 1:13): «Կանանացի» բառը կարող է ունենալ մի քանի ածանցյալներ.

1. Գալիլիայի Կանա կոչվող մի շրջանից
2. ՀԿ-ից Կանանացի անվան կիրառումը որպես առևտրական
3. Սովորական իմաստով՝ որպես Քանանի բնակիչ

Եթե Ղուկասի տված նշանակությունը ճիշտ է, ապա «նախանձահույզ» բառը արամեերեն «խանդավառ» տերմինից է (տես՝ Ղուկ.6:15; Գործք 1:17): Հիսուսի ընտրած տասներկու աշակերտները մի քանի տարբեր և մրցակից խմբերից էին: Սիմեոնը մի ազգայնական խմբի անդամ էր, որը կողմնակից էր հռոմեական բռնարար իշխանության տապալմանը: Սովորաբար այս Սիմեոնը և Ղևին (այսինքն՝ Մատթեոս մաքսավորը) չէին կարող լինել միասին միևնույն սենյակում:

■ **«Թադեոս»** Նա նաև կոչվում էր «Ղերես» («սրտամոտ մարդ» տես՝ Մատթ.10:3) կամ «Հուդա» (տես՝ Ղուկ.6:16; Հովհ.14:22; Գործք 1:13): Թադեոս նշանակում է «սիրելի գավակ» (բառացի՝ «կրծքից»):

■ **«Հուդա Իսկարիովտացի»** Գոյություն ունեն երկու Սիմեոն, երկու Հակոբոս և երկու Հուդա: «Իսկարիովտացի» բառն ունի երկու հնարավոր ծագում. (1) Կարիովտցի մարդ՝ Հուդայում (տես՝ Հեսու 15:23) կամ (2) «ղաշույնով մարդ» կամ մարդասպան, որից կարելի է եզրակացնել, որ նա նույնպես «նախանձահույզ» էր ինչպես Սիմեոնը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍԿԱՐԻՈՎՏԱՅԻ

Հուդան մտերիմ շրջանակում լսեց, տեսավ և հաղորդակցվեց Տեր Հիսուսի հետ մի քանի տարի շարունակ, սակայն ինչպես երևում է նա այդպես էլ չունեցավ հավատքի անձնական փախհարարերություն Նրա հետ (տես՝ Մատթ.7:21-23): Պետրոսը ենթարկվում է փորձության միևնույն լարվածությանը ինչպես որ Հուդան, սակայն բացառապես տարբեր հետևանքներով: Բազմաթիվ քննարկումներ են տեղի ունեցել Հուդայի դավանանության դրդապատճառների շուրջ.

1. հիմնականում դրամական բնույթի էր (տես՝ Հովհ.12:6)
2. հիմնականում քաղաքական բնույթի էր (տես՝ Ուիլյամ Կլասսեն, *Հուդա դավանանք, թե՛ Հիսուսի ընկերը* /William Klassen, *Judas Betrayer or Friend of Jesus?*)
3. հոգևոր բնույթի էր (տես՝ Հովհ.13:27)

Սատանայական ազդեցության կամ դիվահարության թեմայի վերաբերյալ կան մի քանի լավ աղբյուրներ (թվարկված է իմ կողմից ավելի վստահելի գրքերի հերթականությամբ).

1. Մերիլ Ֆ. Անգեր, *Աստվածաշնչյան դիվաքանություն, դևերը այսօր մեր աշխարհում* (Merrill F. Unger, *Biblical Demonology, Demons in the World Today*)
2. Բլինթոն Ի. Արնոլդ, *Երեք կարևոր հարց հոգևոր պատերազմի վերաբերյալ* (Clinton E. Arnold, *Three Crucial Questions About Spiritual Warfare*)
3. Բրոք Բոչ, *Քրիստոնեական խորհրդատվություն և օկուլտիզմ, ներկայի և անցյալի դիվաքանություն* (Kurt Koch, *Christian Counseling and Occultism, Demonology Past and Present*)
4. Ս. Ֆրեդ Դիքսոն, *Դիվահարությունը և Քրիստոնյան* (C. Fred Dickason, *Demon Possession and the Christian*)
5. Ջոն Փ. Նյուփորթ, *Դևեր, դևեր, դևեր* (John P. Newport, *Demons, Demons, Demons*)
6. Ջոն Ուորվիք Մոնթգոմերի, *Իշխանություններ և զորություններ* (John Warwick Montgomery, *Principalities and Powers*)

Չգուշացեք մշակութային առասպելներից և նախապաշարումներից: Սատանան ազդում է Պետրոսի վրա Մատթ.16:23-ում, որպեսզի նա փորձի Հիսուսին հենց նույն կերպով՝ Նրա փոխանորդական մահվամբ: Սատանան հետևողական է: Նա փորձում է ամեն հնարավոր կերպով կանգնեցնել Հիսուսի փրկարար գործը մեր համար:

1. Հիսուսի փորձությունը, Ղուկաս 3
2. Օգտագործում է Պետրոսին
3. Օգտագործում է Հուդային և Սինեդրոնը

Հիսուսը Հուդային նույնիսկ նկարագրում է որպես չարք /սատանա՝ Հովհ.6:70 խոսքում: Աստվածաշունչը չի քննարկում դիվահարության և դևերի ազդեցության թեման որպես հավատացյալների հետ կապ ունեցող: Սակայն հավատացյալները ըստ երևույթին ազդվում են անձնական ընտրությամբ և անձնական չարությամբ:

Այս բառի ստուգաբանությունը անհայտ է, սակայն կան մի քանի հնարավոր տարբերակներ.

1. *Կարիոթ* /Kerith/, քաղաք Հուդայում (տես՝ Հեսու 15:25)
2. *Կարտան* /Kartan/, քաղաք Գալիլիայում (տես՝ Հեսու 21:32)
3. *Կարոյդես* /Karoides/, արմավենիների պուրակ Երուսաղեմում կամ Երիքովում
4. *scortea*, գոգնոց կամ կաշվե պայուսակ (տես՝ Հովհ.13:29)
5. *ascara*, խեղդվող (երբայերեն) Մատթ.27:5-ից
6. մարդասպանի դաշույն (հունարեն), որը նշանակում է, որ նա էլ Սիմեոնի պես Նախանձահույզ էր (տես՝ Ղուկ.6:15):

1:14 «սրանք բոլորը միաբանությամբ» Այս տերմինը «այս նույն» (*homa*) և «մտքի զգացմունք» (*thumos*) տերմինների խառնուրդն է: Այն անհրաժեշտ պայման չէր, որքան որ ակնկալության մթնոլորտ: Այս վերաբերմունքը Գործք Առաքելոցում պարբերաբար նշվում է (այսինքն՝ հավատացյալների վերաբերմունքը, տես՝ 1:14; 2:46; 4:24; 5:12; 15:25; և ուրիշներին՝ 7:57; 8:6; 12:20; 18:12; 19:29):

NASB	«շարունակ աղոթում էին»
NKJV	«շարունակում էին»
NRSV	«անդադար աղոթում էին»
TEV	«հաճախակի հավաքվում էին»
NJB	«անդադար միաբանվում էին»

Այս տերմինը (*pros* և *kaptereo*) նշանակում է մտադրված լինել, հարատևել կամ նպատակով ներգրավված լինել: Ղուկասն այն հաճախ է կիրառում (տես՝ 1:14; 2:42,46; 6:4; 8:13; 10:7): Այն հանդիսանում է ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ:

■ **«կանանց հետ»** Գոյություն ունեն կանանց մի խումբ, որոնք ճամփորդում էին Հիսուսի և Նրա Առաքյալների հետ՝ մատակարարելով և հոգալով նրանց համար (տես՝ Մատթ.27:55-56; Մարկ.15:40-41; Ղուկ.8:2-3; 23:49 և Հովհ.19:25): Նայեք հետևյալ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՍՈՒՄԻՆ ՀԵՏԵՎՈՂ ԿԱՆԱՅՔ			
Մատթ.27:55-56	Մարկ.15:40-41	Ղուկ.8:2-3; 23:49	Հովհ.19:25
Մարիամ Մագդաղենացի Մարիամ Հակոբոսի և Հովսեփի մայրը Չեբեղիոսի որդիների (Հակոբոսի և Հովհաննեսի) մայրը	Մարիամ Մագդաղենացի Մարիամ կրտսեր Հակոբոսի և Հովսեփի մայրը	Մարիամ Մագդաղենացի Քուզայի (Հերովդեսի տան տեսուչ) կինը՝ Հովհաննան Շուշանը և ուրիշներ	Մարիամը՝ Հիսուսի մայրը Նրա մորաքույրը Կղեովպասի կինը՝ Մարիամ Մագդաղենացի

Հաջորդիվ տրված են իմ մեկնաբանության գրքից, ըստ Մարկ.15:40-41, նշումներ այս կանանց մասին:

«Այնտեղ կանայք էլ կային, որ հեռվից էին նայում» Առաքյալների խմբին ծառայում էին մի քանի կանայք՝ թե՛ ֆինանսապես և թե՛ ֆիզիկապես (այսինքն՝ եփում էին, լվացք անում և այլն: Տես՝ հ.41, Մատթ.27:55; Ղուկ.8:3):

«Մարիամ Մագդաղենացի» Մագդաղենը Գալիլիայի ծովափին գտնվող մի փոքրիկ քաղաք էր՝ Տիբերիայից երեք մղոն հեռու: Մարիամը հետևեց Հիսուսին Գալիլիեայից, երբ Նա ազատեց նրան մի քանի դևերից (տես՝ Ղուկ.8:2): Նա անարդարացիորեն պիտակվել էր որպես անառակ, սակայն ՆԿՂ չի տալիս այս դեպքի ապացույցը:

«Մարիամը՝ կրտսեր Հակոբոսի և Հովսեփի մայրը» Մատթ.27:56-ում նա կոչվում է «Հակոբոսի և Հովսեփի մայրը»: Մատթ.28:1-ում նա կոչվում է «մյուս Մարիամը»: Հարցը իրականում այն է, թե ում հետ էր նա ամուսնացած: Հովհ.19:25-ում նա հավանաբար ամուսնացած էր Կղեովպասի հետ, չնայած նրա որդին՝ Հակոբոսը, ասվում է, որ «Ալիեոսի որդին» էր (տես՝ Մատթ.10:3; Ղուկ.6:15):

«Սողոմնե» Այս կինը Հակոբոսի և Հովհաննեսի մայրն էր, որոնք Հիսուսի աշակերտների նեղ շրջանակի մի մասն էին կազմում, և Չեբեղիոսի կինը (տես՝ Մատթ.27:56; Մարկ.15:40; 16:1-2):

Հաջորդիվ տրված են իմ մեկնաբանության գրքից, ըստ Հովհ.19:25, նշումներ այս կանանց մասին:

«և Հիսուսի խաչի մոտ կանգնած էին Նրա մայրը և Նրա մոր քույրը՝ Մարիամը, Կղեովպասի կինը, և Մարիամ Մագդաղենացին» Շատ քննարկումներ են եղել այն թեմայի շուրջ, թե արդյո՞ք չորս անուններ են այստեղ նշվում, թե երեք: Հավանական է, որ նշվում են չորս անուններ, քանի որ չէր կարող երկու քույրերի անուններն էլ լինել Մարիամ: Մարիամի քույրը՝ Սողոմնե, նշվում է Մարկ.15:40-ում և Մատթ.27:56-ում: Եթե սա ճիշտ է, ապա կարելի է ենթադրել, որ Հակոբոսը, Հովհաննեսը և Հիսուսը զարմիկներ էին: Երկրորդ դարի ավանդույթն (*Hegesippus*) ասում է, որ Կղեովպասը Հովսեփի եղբայրն էր: Մարիամ Մագդաղենացին էր այն կինը, որից Հիսուսը յոթ դև էր քշել և առաջինն էր ում Հիսուսը ընտրեց հայտնվել Իր հարությունից հետո (տես՝ 20:1-2; 11-18; Մարկ.16:1; Ղուկ.24:1-10):

■ **«Նրա եղբայրները»** Մենք գիտենք Հիսուսի կես եղբայր հանդիսացող մի քանիսի անունները՝ Հուդա, Հակոբոս (տես՝ Հատուկ Թեմա, 12:17) և Սիմոն (տես՝ Մատթ.13:55; Մարկ.6:3 և Ղուկ.2:7): Ժամանակին նրանք անհավատ էին (տես՝ Հովհ.7:5), սակայն հիմա աշակերտների նեղ շրջանակի մի մասն էին կազմում: Մարիամի «ցմահ կուսության» վերաբերյալ վարդապետության շուրջ հետաքրքիր հակիրճ քննարկման համար նայեք Ֆ. Ֆ. Բրյուսի, *Նոր Միջազգային Մեկնաբանություն, Գործք Առաքելոց*, էջ 44, ծանոթագրություն 47 (F.F. Bruce, *New International Commentary, Acts*):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 1:15-26

¹⁵ Եվ այն օրերին Պետրոսը ոտքի կանգնեց աշակերտների մեջ (բոլորը միասին հարյուր քսան հոգի էին), ու ասաց.¹⁶ «Մարդի՛կ, եղբայրներ, պետք էր, որ կատարվեր այս գրվածը, որ նախապես Սուրբ Հոգին Դավթի բերանով ասաց Հուդայի մասին, որ Հիսուսին բռնողների առաջնորդը եղավ, ¹⁷քանի որ նա մեր թվում էր, և այս ծառայության մեջ ինքն էլ մաս ուներ: ¹⁸Սա անիրավության վարձով մի ագարակ գնեց ու գլխիվայր ընկնելով՝ միջից պատռվեց, և նրա ամբողջ փորոտիքը դուրս թափվեց: ¹⁹Ու այս բանը Երուսաղեմում ապրողներից բոլորին հայտնի դարձավ, մինչև իսկ իրենց լեզվով այդ ագարակի անունը Ակեղդամա, այսինքն՝ Արյան ագարակ դրվեց: ²⁰Որովհետև Սաղմոսաց գրքում գրված է, թե՛ «Նրա տունը թող ավերակ դառնա, ու դրա մեջ բնակվող չլինի՛, և նրա պաշտոնը ուրիշը ստանա»: ²¹Ուրեմն հարկ է, որ այս մարդկանցից, որ Տեր Հիսուսի՝ մեր մեջ մտնելու և ելնելու ողջ ընթացքում մեզ հետ եղան, ²²սկսած Հովհաննեսի մկրտությունից, մինչև այն օրը, երբ համբարձավ մեզնից, մեկը պետք է ընտրվի՝ մեզ հետ վկա լինելու Նրա հարությանը»: ²³Եվ երկու հոգու ներկայացրին՝ Հովսեփին, որ Բարսաբա էր կոչվում, որ նաև Հուստոս մականվանվեց, ու Մատաթիային: ²⁴Եվ աղոթելով՝ ասացին. «Դ՛ո՛ւ, ո՛վ Տեր, որ գիտես բոլորի սրտերը, այս երկուսից ում որ ընտրում ես, հայտնի՛ր, ²⁵որ ստանա այս պաշտոնը և առաքելության վիճակը, որից Հուդան մեղանչելով ընկավ՝ իր տեղը գնալու համար: ²⁶Եվ նրանց համար վիճակ գցեցին, ու վիճակը Մատաթիային ընկավ, և նա տասնմեկ առաքյալների թվում դասվեց:

1:15 «այն օրերին» /անգլ.՝ այդ ժամանակ/ Սա բառացիորեն նշանակում է «այն օրերին» (*en tais hemerai*): Այս արտահայտությունը հաճախ օգտագործվում է Գործ Առաքելոցի գլուխների սկզբում (տես՝ 1:15; 2:18; 5:37; 6:1; 7:41; 9:37; 11:27; 13:41): Ղուկասը օգտագործում է ականատեսների այլ աղբյուրներ: Նա նաև գործածում է «օրեցօր» (*kath hemeran*) բառը, որպես ընդհանուր, անորոշ ժամանակացույց Գործքի առաջին գլուխներում (տես՝ 2:46,47; 3:2; 16:5; 17:11,31; 19:9): Գլուխ 15-ից հետո Ղուկասն իր արձանագրած դեպքերից շատերին անձամբ ծանոթ է: Բայց և այնպես նա հաճախ կիրառում է «օր» բառը, սակայն ոչ այնքան հաճախ, որքան այս անորոշ, փոխաբերական արտահայտություններում:

■ **«Պետրոսը ոտքի կանգնեց»** Ակնհայտ է, որ Առաքյալների խոսնակը Պետրոսն է (տես՝ Մատթեոս 16): Սուրբ Հոգու գալուստից հետո նա քարոզեց եկեղեցու առաջին քարոզը (տես՝ Գործք 2) և երկրորդ քարոզը Գործք 3-ում: Հիսուսը հայտնվում է առաջինը նրան իր հարությունից հետո (տես՝ Հովհ.21 1 Կորնթ.15:5): Նրա երբայերեն անունը «Սիմեոն» է (տես՝ Գործք 15:14; 2 Պետ.1:1): Այս անունը հունարենում հեզվում է «Սիմոն»: «Պետրոս» տերմինը հունարեն է (*petros*) «կտրված ժայռ» նշանակությամբ: Արամերենով «Կեփաս» կամ «հիմնաքար» է նշանակում (տես՝ Մատթ.16:18):

■ **«բոլորը միասին հարյուր քսան հոգի էին»** Այս արտահայտությունը UBS⁴ հունարեն տեքստում միջանկյալ նախադասություն է (բայց ոչ հհ.18-19): Այս խումբը պետք է որ բաղկացած լիներ տասնմեկ Առաքյալներից, կանանցից, որոնք ընկերակցում էին Հիսուսին, և մյուս աշակերտներից՝ Հիսուսի քարոզների և բժշկությունների ծառայություններից:

1:16 «գրվածը» /անգլ.՝ Գրվածքներ/ ՆԿ-ում բոլոր «Գրվածքներ» խոսքերը (բացի 2 Պետր.3:15-16) վերաբերում են ՀԿ (օր.՝ Մատթ.5:17-20; 2 Տիմ.3:15-17): Դավթի կողմից գրված այս հատվածը նաև հաստատում է Սուրբ Հոգուց ներշնչված լինելը (տես՝ 2 Պետր.1:21): Այն նաև ենթադրում է երբայերեն Աստվածաշնչի «Գրեր» բաժնի կանոնականացումը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՇՆՉԱՆՔ

«Մեկընդմիջտ» հավատքը վերաբերում է Քրիստոնեության ճշմարտություններին, վարդապետություններին, հասկացություններին, աշխարհայացքային ուսմունքներին (տես՝ 2 Պետ.2:21): Այս մեկ անգամ տրված շեշտադրումը աստվածաշնչյան հիմք է հանդիսանում ՆԿ-ի գրքերի աստվածաբանորեն սահմանափակված ներշնչանքի համար և թույլ չի տալիս, որ ապագայի կամ այլ գրքեր համարվեն հայտնությամբ տրված գրքեր: Գոյություն ունեն շատ երկիմաստ, անորոշ և խրթին տեղեր ՆԿ-ում, սակայն հավատացյալները հավատքով հաստատում են, որ ՆԿ-ում բավարար հստակությամբ տրված են հավատքի և կյանքի համար բոլոր «անհրաժեշտ» բաները:

Այս գաղափարը ուրվագծել է այսպես կոչվող «հայտնությամբ տրված եռանկյունի»:

1. Աստված հայտնել է Իրեն ժամանակի-տարածության պատմության մեջ (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ)

2. Նա ընտրել է որոշակի մարդ գրողների՝ արձանագրելու և բացատրելու Իր գործերը (ՆԵՐՇՆՉԱՆԶ)
3. Նա տվել է Իր Հոգին, որ բացի մարդկանց մտքերը և սրտերը այս գրքերը հասկանալու համար, պարտադիր չէ կատարելապես, սակայն փրկության և արդյունավետ Քրիստոնեական կյանք վարելու համար բավարար չափով (ԼՈՒՄԱՎՈՐՈՒՄ)

Բանն այն է, որ ներշնչանքը սահմանափակված է Սուրբ Գրքի գրողներով: Գոյություն չունեն այլևս հեղինակավոր գրվածքներ, տեսիլքներ կամ հայտնություններ: Կանոնը փակված է: Մենք ունենք մեզ անհրաժեշտ ամբողջ ճշմարտությունը պատշաճ և Աստծուն հանելի կերպով արձագանքելու համար:

Այս ճշմարտությունը լավագույնս կարելի է տեսնել աստվածաշնչյան գրողների միջև համաձայնության մեջ ի հակադրություն անկեղծ, աստվածավախ հավատացյալների անհամաձայնության: Ոչ մի ժամանակակից գրող կամ ճարտարախոս չունի աստվածային առաջնորդության այն մակարդակը, որն ունեին Սուրբ Գրքի գրողները:

■ **«պետք էր»** Սա *dei* է, որ նշանակում է անհրաժեշտություն: Այն ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է և վերաբերում է հ.20-ի առաջին մեջբերմանը:

Այս տերմինը բնորոշ է Ղուկասի Հիսուսի կյանքի և վաղ եկեղեցու ընկալմանը՝ որպես Հին Կտակարանյան Գրքերի շարունակություն (տես՝ Ղուկ.18:31-34; 22:37; 24:44): Ղուկասը հաճախ է կիրառում այս տերմինը (տես՝ Ղուկ.2:49; 4:43; 9:22; 11:42; 12:12; 13:14,16,33; 15:32; 17:25; 18:1; 19:5; 21:9; 22:7,37; 24:7,26,44; Գործք 1:16,21; 3:21; 4:12; 5:29; 9:6,16; 14:27; 15:5; 16:30; 17:3; 19:21,36; 20:35; 23:11; 24:19; 25:10,24; 26:9; 27:21,24,26): Այս տերմինը նշանակում է «պարտավորեցնող», «անհրաժեշտ», «անխուսափելի»: Ավետարանը և դրա աճը պատահականություն չեն, այլ Աստծո կողմից կանխատեսված ծրագիր և ՀԿ-ի Գրքերի իրականացում (LXX կիրառումը):

■ **«կատարվեր»** ՀԿ այս մեջբերումները կարդալիս (հ. 20) հասկանում եմ, որ Հուդայի դավաճանությունը Սաղմոսերգուի մտադրությունը չէր (այսինքն՝ Սաղմ. 69:25; 109:8): Առաքյալները մեկնաբանեցին ՀԿ-ը Հիսուսի հետ ունեցած իրենց փորձառության լույսի ներքո: Սա կոչվում է տիպաբանական մեկնություն (տես՝ հ. 20): Հնարավոր է Հիսուսն Ինքն է այսպիսի մոտեցման օրինակ թողել, երբ Նա քայլում և խոսում էր Էմմաուսի ճանապարհին երկու աշակերտների հետ (տես՝ Ղուկ.24:13-35, հատկապես՝ հհ. 25-27): Վաղ եկեղեցու քարոզիչները զուգահեռներ տեսան ՀԿ-ի դեպքերի և Հիսուսի կյանքի և ուսմունքների միջև: Նրանք տեսան Հիսուսին որպես ամբողջ ՀԿ-ի մարգարտությունների իրականացում: Մեր օրերի հավատացյալները պետք է զգույշ լինեն այսպիսի մոտեցումից: ՆԿ-ի այդ ներշնչված հեղինակները ներշնչանքի որոշակի մակարդակի ներքո էին և անձնապես ծանոթ էին Հիսուսի կյանքի և ուսմունքների հետ: Մենք հաստատում ենք նրանց վկայության ճշմարտությունն ու հեղինակությունը, սակայն չենք կարող վերաբարտադրել նրանց մեթոդը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆիլոն, վաղ եկեղեցու այլաբանության կիրառությունը և միևնույն տեխնիկայի կիրառությունը Պողոսի կողմից նշանակալիորեն տարբերվում էին: Առաջինը ընդհանրապես անտեսում էր պատմական միջավայրը, զարգացնելով մի այնպիսի ուսմունք, որը խորթ էր բնագրի հեղինակի նպատակից: Պողոսի մոտեցումը լավագույնս բնորոշվում է որպես տիպաբանություն: Պողոսը ընդունում էր Ծննդոցի պատմական միջավայրը և Հին ու Նոր Կտակարանների միասնությունը, և կարողանում էր կառուցել այս երկուսի միջև եղած նմանությունների հիման վրա, քանի որ դրանք ունեին միևնույն հեղինակը՝ Աստված: Տվյալ համատեքստում Պողոսը համեմատություն է անցկացնում Աբրահամի Ուխտի և Մովսիսական Ուխտի միջև և օրինակներ բերում Երեմ.31:31-34-ի Նոր Ուխտի և ՆԿ-ի համար:

Կարելի է պատկերել 4:21-31-ում չորս կապ.

1. Երկու մայրերը երկու ընտանիքների խորհուրդն են՝ առաջինը ստեղծված բնական ճանապարհով, երկրորդը՝ գերբնական խոստմամբ:
2. Լարվածություն կար այս երկու մայրերի և նրանց երեխաների միջև, ինչպես որ լարվածություն կար հուդայականության պատգամի և Պողոսի Ավետարանի միջև:
3. Երկու խմբերն էլ պնդում էին, որ իրենք Աբրահամի սերունդն են, սակայն մեկը Մովսեսի օրենքի գերին էր, իսկ մյուսը՝ ազատ էր Քրիստոսի կատարած գործի միջոցով:
4. Երկու սարեր կային կապված այս երկու տարբեր ուխտերի հետ՝ Սինա սարը Մովսեսի հետ և Սիոն սարը՝ Աբրահամի հետ: Սիոն սարը կամ Մորիայի սարը այն վայրն էր որտեղ

Աբրահամը Իսահակին որպես զոհ մատուցեց (տես՝ Ծննդ.22), որը հետագայում դարձավ Երուսաղեմը:

Աբրահամը փնտրում էր մի երկնային քաղաք (Եբր.11:10; 12:22; 13:14, Նոր Երուսաղեմ, Եսայի 40-66) և ոչ թե երկրային Երուսաղեմը:

Հնարավոր է Պողոսը կիրառել է այս տիպաբանությունը, քանի որ.

1. սուտ վարդապետները կիրառել էին այս նույն մոտեցումը իրենց առավելության համար պնդելով որ իրենք են Աբրահամի ճշմարիտ սերմը:
2. սուտ վարդապետները հնարավոր է կիրառել էին Մովսեսի գրքերից որևէ այլաբանություն, որ առաջ տանեին իրենց հրեական ուխտի աստվածաբանությունը, ուստի Պողոսը կիրառում է իրենց հրեական հավատքի հորը՝ Աբրահամին:
3. հնարավոր է Պողոսը սա կիրառել է Ծննդ.21:9-10 պատճառով, որը մեջբերել է համար 30-ում և ասում է «վտարիր» իրական որդուն: Պողոսի այլաբանության մեջ սա վերաբերում է հուդայականներին:
4. հնարավոր է Պողոսը կիրառել է սա հրեա սուտ վարդապետների յուրահատկության պատճառով, հատկապես հեթանոսների հանդեպ նրանց արհամարհանքի համար. Պողոսի այլաբանության մեջ հեթանոսները ընդունված են և ռասայապես ինքնավստահ մարդիկ մերժված են Աստծո կողմից (տես՝ Մատթ.8:11-12):
5. հնարավոր է Պողոսը կիրառել է այս տիպաբանությունը, քանի որ նա շեշտադրում էր «որդեգրություն» և «ժառանգություն» բառերը 3 և 4 գլուխներում: Սա էր հանդիսանում նրա փաստարկի սիրտը. Մեր որդեգրությունը Աստծո ընտանիքի մեջ Քրիստոսի վրա ունեցած հավատքով է միայն, ոչ թե բնական սերնդաբանությամբ:

■ **«Հուդա»** Հուդայի ուխտադրությունը և ոչ թե նրա մահն էր, որ իրեն փոխարինող Առաքյալ ընտրելու պատճառ էր հանդիսացել: Հուդայի գործողությունները հ.20-ում դիտարկվում են որպես մարգարեության իրականացում: ՆԿ-ը չի արձանագրում մեկ ուրիշ Առաքելական ընտրություն Հակոբոսի մահից հետո (տես՝ Գործք 12:2): Շատ խորհրդավոր և ողբերգական բան կան Հուդայի կյանքի մեջ: Հավանաբար նա միակ Առաքյալն էր, որ Գալիլիացի չէր: Նա նշանակվել էր որպես առաքելական խմբի գանձապահ (տես՝ Հովհ.12:6): Նա մեղադրվում էր նրանց փողերը գողանալու մեջ ամբողջ այն ժամանակահատվածում, երբ դեռ Հիսուսը նրանց հետ էր: Ասում են, որ նա պետք է լիներ մարգարեության իրականացումը և աստանայական հարձակման առարկան: Նրա նպատակները երբեք չեն գրանցվել, սակայն նրա զոջման արդյունքը եղավ ինքնասպանությունը՝ կաշառքը վերադարձնելուց հետո:

Կան շատ ենթադրություններ Հուդայի և նրա նպատակների վերաբերյալ: Հանախ նրա մասին նշվում է և վատաբանվում Հովհաննեսի Ավետարանում (6:71; 12:4; 13:2,26,39; 18:2,3,5): «Հիսուս Քրիստոս Գերաստղը» ժամանակակից ներկայացումը նրան պատկերում է որպես հավատարիմ, սակայն հիպոթեզաված հետևորդի, որը փորձում էր ստիպել Հիսուսին կատարելու Հրեա Մեսիայի դերը, այսինքն՝ հռոմեացիներին դուրս քշելու, ամբարիշտներին պատժելու և Երուսաղեմը աշխարհի մայրաքաղաքը դարձնելու համար: Համենայն դեպս Հովհաննեսը պատկերում է նրա ազահ և չարասիրտ շարժառիթները:

Հիմնական խնդիրը Աստծո գերիշխանության և մարդու ազատ կամքի աստվածաբանական հարցն է: Արդյո՞ք Աստված կամ Հիսուսը օգտագործում էին Հուդային: Արդյո՞ք Հուդան պատասխանատու էր իր գործողությունների համար, եթե Սատանան էր նրան վերահսկում կամ արդյո՞ք Աստված կանխատեսել էր և թույլ տվեց, որ նա դավաճանի Հիսուսին: Աստվածաշունչը այս հարցերը ուղղակիորեն չի ուղղում մեզ: Աստված վերահսկում է պատմության ընթացքը, Նա գիտի ապագայի դեպքերը, սակայն մարդկությունն է պատասխանատու իր կատարած ընտրությունների և գործողությունների համար: Աստված արդար է և մանիպուլյացիայի չի ենթարկում մարդկանց:

Մի նոր գիրք կա, որը փորձում է պաշտպանել Հուդային՝ *Հուդա դավաճանը, թե՛ Հիսուսի ընկերը*, գրված Ուիլյամ Քլասսենի կողմից (*«Judas Betrayer or Friend of Jesus»* by William Klassen, Fortress Press, 1996): Ես համաձայն չեմ այս գրքի հետ, սակայն շատ հետաքրքիր է և մտածելու տեղիք է տալիս:

■ **«Հիսուսին բռնողների առաջնորդը եղավ»** Ահա մի մեջբերում Մատթ.26:47-50 հատվածի շուրջ իմ մեկնաբանություններից (տես՝ www.freebiblecommentary.org).

«Շատ քննարկումներ են տեղի ունեցել Հուդայի նպատակի շուրջ: Կարելի է ասել, որ այդպես էլ անհայտ է մնացել: Հ.49-ում նրա համբույրը Հիսուսին կամ (1) նշան էր զինվորների համար, որ սա է այն մարդը, որին պետք է ձերբակալել (տես՝ հ.48), կամ էլ (2) ժամանակակից տեսությունը տալիս է այսպիսի միտք, որ նա փորձում էր Հիսուսին հարկադրել գործի անցնելու (տես՝ 27:4): Մյուս

Ավետարանի հատվածները արձանագրում են, որ նա հենց սկզբից գող էր և անհավատ (տես՝ Հովհ.12:6):

Դուկաս 22:52-ից իմանում ենք այս ամբոխի կազմը: Ներգրավված էին հռոմեացի զինվորներ, որովհետև նրանք միակն էին, որ օրինապես կարող էին սրեր կրել: Նաև ներգրավված էր Տանարի ոստիկանությունը, քանի որ նրանք էին սովորաբար մահակներ կրում: Ձերբակալության ժամանակ նաև ներկա էին Սինեդրոնի ներկայացուցիչներ (տես՝ հհ. 47, 51):

1:17 Հուդան ընտրվել էր Հիսուսի կողմից, լսել էր Հիսուսին խոսելիս, տեսել էր Հիսուսի կատարած հրաշքները, ուղարկվել էր առաքելության Հիսուսի կողմից և Նրա համար, ներկա էր վերնատանը և մասնակցել էր այնտեղի իրադարձություններին, մինչդեռ ուրացավ Հիսուսին:

1:18

**NASB, NKJV,
NRSV, NJB, NIV
TEV**

**«գլխիվայր ընկնելով՝ միջից պատռվեց»
«որտեղ նա ընկավ մահացած և պատռվեց»**

Հնարավոր է, որ «գլխիվայր ընկնելը» բժշկական տերմին էր «ուռչելու» դեպքում (տես՝ Մուլթոն և Միլիգան, *Հունարեն Կոտակարանի Բառարան*, էջ 535-536 /Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek Testament*), որը կարելի է գտնել որոշ անգլերեն թարգմանություններում (օր.՝ Ֆիլիպս, Մոֆատ և Գուդսփիդ /Philips, Moffat and Goodspeed/): Հուդայի մահվան (Մատթ.27:5 հակադրված Գործք 1:18-ի հետ) վերաբերյալ զանազան տարբերակների լավ քննարկումների համար նայեք *Աստվածաշնչի խրթին խոսքերը*, (Hard Sayings of the Bible) էջ. 511-512:

■ **«այս մարդը ազարակ գնեց»** 18-19 համարները գրված են փակագծերում (տես՝ NASB, NKJV, NRSV, NJB, NIV): Հեղինակը տալիս է այս տեղեկությունը ընթերցողին տեղեկացնելու համար: Մատթ.27:6-8-ից իմանում ենք, որ քահանաներն էին գնել այս հողակտորը որպես Հ-ի մարգարեության իրականացում (տես՝ Մատթ.27:9): Քահանաները Հուդայի փողերը անմաքուր համարեցին և օգտագործեցին այն գնելով մի ազարակ /դաշտ/ անհայտ մարդկանց մարմինները՝ դիակները թաղելու համար: 18-19 խոսքերը պատմում են, որ դա հենց այն ազարակն էր, որտեղ մահացել էր Հուդան: Հուդայի մահվան վերաբերյալ այս տեղեկությունը ուրիշ տեղ չի կրկնվում:

1:19 «իրենց լեզվով» Հիսուսի օրերի շատ հրեաներ չէին կարողում կամ խոսում եբրայերեն, այլ նմանատիպ սեմական լեզվով՝ արամերեն, որը սովորել էին պարսից տիրապետության տակ գտնվելու տարիների ընթացքում: Կիրթ մարդիկ կարողանում էին խոսել և կարդալ եբրայերեն: Հիսուսը օգտագործում է այդ լեզուն, երբ կարդում է Մինագոգներում /Ժողովարաններում/:

Պաղեստինում շատ մարդիկ երկու լեզվի էին տիրապետում (հունարեն և արամերեն) կամ երեք լեզվի՝ (հունարեն, արամերեն և եբրայերեն):

Հիսուսը հիմնականում խոսում էր արամերեն լեզվով: Ավետարաններում թարգմանված բոլոր բառերն ու արտահայտությունները արամերեն են:

■

**NASB, NRSV
NKJV
TEV
NJB**

**«Հակեղդամա, այսինքն՝ Արյան Ազարակ»
«Ակեղ դամա, այսինքն՝ Արյան Ազարակ»
«Ակեղդամա, որ նշանակում է Արյան Ազարակ»
«Արյունոտ ակր... Հակեղ-դամա»**

Սա արամերեն բառի հունարեն թարգմանությունն է: Միշտ դժվար է եղել մի լեզվից մյուսին միանման թարգմանելը: Անկախ հունարեն լեզվում հեզման տարբերություններից, արամերեն այն նշանակում է «արյան ազարակ»: Սա կարող է նշանակել.

1. Ազարակ գնված արյան փողով (տես՝ Մատթ.27:7ա)
2. Ազարակ, որտեղ արյուն հեղվեց (տես՝ Գործք 1:18)
3. Ազարակ, որտեղ մարդասպանները կամ օտարականները թաղվեցին (տես՝ Մատթ.27:7բ)

1:20 Սրանք Սաղմոսներից երկու մեջբերումներ են, առաջինը՝ Սաղմ.69:25 է: Բնագրում այն ՀՈԳՆԱԿԻ է: Այն գործում է որպես անեծքի խոսք կապված Հուդայի հետ: Երկրորդ մեջբերումը՝ Սաղմ.109:8 է (LXX): Այն կանխատու է հհ. 21-26 քննարկվող Հուդային փոխարինելու համար մարգարեական նախադեպը:

Ժամանակակից հավատացյալները չեն կարող վերարտադրել տիպաբանության հերմենևտիկայի այս մեթոդը, քանի որ պատմության այս ժամանակահատվածում մեզնից ոչ ոք ներշնչված չէ: Աստվածաշնչյան այս հեղինակներին՝ դպիրներին Հոգին էր առաջնորդում այն մակարդակի, որ ապագայի հավատացյալներին այդպես չի անում: Մենք լուսավորված ենք Նրանով, սակայն երբեմն անհամաձայնություններ ենք ունենում (տես՝ Հատուկ Թեմա. Ներշնչանք, 16)

■
NASB, NKJV, NJB «պաշտոն»
NRSV «վերակացուի պաշտոնները»
TEV «ծառայության տեղը»

Սեպտուագիևնայում *episkope* տերմինը կրում է պատասխանատվության կամ պաշտոնյայի ծառայության լրացուցիչ իմաստը (տես՝ Թվոց 4:16; Սաղմ.109:8): Հետագայում այն մատնանշելու էր Հռոմի Կաթոլիկ կղերական համակարգում մի պաշտոն, սակայն հունարենում այն պարզապես քաղաքային տերմին էր առաջնորդի համար (տես՝ NIV), ինչպես որ «երեց» (*presbuteros*) տերմինը հրեական տարբերակն էր առաջնորդ բառի համար (տես՝ Ծննդ.50:7; Ելից 3:16,18; Թվոց 11:16,24,25,39; 2 Օր.21:2,3,4,6,19,20 և այլն): Հետևաբար, հնարավոր է, որ բացառությամբ Հակոբոսի «վերակացու» և «երեց» բառերի, Առաքյալների մահից հետո այն վերաբերում է հովվին (տես՝ Գործք 20:17, 28; Տիտ.1:5,7; Փիլիպ.1:1):

1:21 «հարկ է» /անհրաժեշտ է/ Սա *dei* բառն է (տես ամբողջական նշումները հ.16-ում): Ակնհայտ է, որ Պետրոսի մոտ զգացողություն կար, որ Տասներկու Առաքյալները ինչ-որ կերպ ներկայացնում էին տասներկու ցեղերին կամ ուրիշ ինչ-որ խորհրդապատկեր, որը չէր կարելի բաց թողնել:

1:22 Այստեղ նշված են Առաքյալի առանձնահատկությունները (տես Հատուկ Թեմա. Ուղարկված [*apostello*] 14:4-ում): Ուշադրություն դարձրեք, որ այն խոսում է բացի Տասներկուսից ուրիշ հավատացյալների ներկայության մասին, որոնք հետևել էին Հիսուսին Նրա ամբողջ երկրավոր ծառայության ընթացքում: Այս չափանիշները հետագայում օգտագործվեցին մերժելու Պողոսին որպես Առաքյալ:

Ըստ երևույթին Ղուկասը ներառել է այս երկու համարները ցույց տալու առաքելական վկայության առաջնությունը, ոչ թե Մատթիայի ընտրվելը, որի մասին հետագայում այլևս չենք լսում: Եկեղեցին և ՆԿ-ի Գրքերը կառուցվելու են Հիսուսի կյանքի և ուսմունքների հիման վրա, սակայն դրանք քննարկման էին դրվում ականատեսների, հեղինակավոր վկաների, ընտրյալ աստվածաբան վկաների, ՆԿ-ի կողմից: Սա է աստվածաբանական հարցը և ոչ թե «տասներկուսի» սիմվոլը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԱՍՆԵՐԿՈՒ ԹԻՎԸ

Տասներկուսը միշտ էլ եղել է կառուցվածքի սիմվոլիկ թիվ.

Ա. Աստվածաշնչից դուրս՝

1. Չողիակի տասներկու նշանները
2. Տարվա տասներկու ամիսները

Բ. ՀԿ-ում (BDB 1040 plus 797)

1. Հակոբի որդիները (Հրեական ցեղերը)
2. Արտացոլվում է
 - ա. Ելից 24:4-ում՝ զոհասեղանի տասներկու սյուների մեջ
 - բ. Ելից 28:21-ում՝ քահանայապետի լանջապանակի վրա տասներկու քարերի մեջ (որոնք ներկայացնում են տասներկու ցեղերը)
 - գ. Ղևտ.24:5-ում՝ խորանի սրբավայրում գտնվող տասներկու կտոր հացի մեջ
 - դ. Թվոց 13-ում՝ Քանանի երկիր ուղարկված տասներկու լրտեսների մեջ (ամեն մեկը մի ցեղից)
 - ե. Թվոց 17:2-ում՝ տասներկու գավազանները (ցեղական չափանիշներով)
 - զ. Հեսու 4:3,9,20-ում՝ Հեսուի տասներկու քարերը
 - է. 3 Թագ.4:7-ում՝ Մողոմոնի կառավարական շրջանների տասներկու կառավարիչները
 - ը. 3 Թագ.18:31-ում՝ Եհովայի համար Եղիայի կողմից կառուցված զոհասեղանի տասներկու քարերը

Գ. ՆԿ-ում՝

1. Ընտրված տասներկու առաքյալները

2. Հացի տասներկու կողովները (յուրաքանչյուր առաքյալին մի կողով) Մատթ.14:20-ում
3. Տասներկու գահերը, որոնց վրա կնստեն ՆԿ-ի աշակերտները (վերաբերում է Իսրայելի տասներկու ցեղերին) Մատթ.19:28
4. Տասներկու լեզեոն հրեշտակները՝ Հիսուսին օգնության հասնելու համար, Մատթ.26:53-ում
5. Հայտնության խորհրդապատկերները՝
 - ա. 24 երեցները նստած 24 գահերի վրա, 4:4
 - բ. 144,000 (12x12,000) 7:4; 14:1,3-ում
 - գ. Տասներկու աստղերը՝ կնոջ թագի վրա, 12:1
 - դ. Տասներկու դարպասները, տասներկու հրեշտակները, որ արտացոլում են տասներկու ցեղերը, 21:12
 - ե. Նոր Երուսաղեմի տասներկու հիմնաքարերը և դրանց վրա գրված տասներկու Առաքյալների անունները, 21:14
 - զ. Տասներկու հազար ասպարեզ (Նոր Երուսաղեմի՝ նոր քաղաքի չափը), 21:16
 - է. Պարիսպը՝ 144 կանգուն, 21:17
 - ը. Մարգարտյա տասներկու դարպասները, 21:21
 - թ. Նոր Երուսաղեմի ծառերը, որոնք տասներկու տեսակի պտուղներ են տալիս (ամեն ամիս մի տեսակ), 22:2

1:23 «Երկու հոգու ներկայացրին» Կա հունարեն ձեռագրի մի տարբերակ, որը ցույց է տալիս այս արտահայտության մեջ աստվածաբանական հարցը.

1. *estēsan* («ներանք ներկայացրին») MSS Խ, A, B, C, D1, E
2. *estesēn* («նա ներկայացրեց») MS D* (հինգերորդ դար), Ընթերցարան 156 (տասներորդ դար), երկու հնագույն լատիներեն ձեռագրեր (հինգերորդ և տասներեքերորդ դարեր) և Օգոստինոս (մ.թ. 354-430):

Եթե առաջին կետն է, ուրեմն աշակերտների ամբողջ խումբն է քվեարկում Հուդային հավանական փոխարինողի համար (համայնքային քաղաքականության մի ձև (տես՝ 15:22), բայց եթե 2-րդ կետն է, ապա սա ապացույց է Պետրոսի ղեկավար լինելու փաստի (տես՝ 15:7-11, 14): Ինչ վերաբերում է հունարեն ձեռագրի վկայությանը, առաջին կետի խոսքը հաստատ է (UBS⁴ դրան տալիս է «A» գնահատական):

■ **«Հովսեփին...Մատթային»** ՆԿ-ից այս մարդկանց մասին մենք ոչինչ չգիտենք: Մենք պետք է հիշենք, որ Ավետարանները և Գործք Առաքելոցը արևմտյան պատմություններ չեն, այլ հատընտիր աստվածաբանական գրքեր, որոնք ծանոթացնում են մեզ Հիսուսի հետ և ցույց տալիս Նրա պատգամի ազդեցությունը աշխարհի վրա:

1:24

NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«որ գիտես բոլոր մարդկանց սրտերը»
«որ գիտես բոլորի սրտերը»
«դու գիտես ամեն մեկի սիրտը»
«դու գիտես ամեն մեկի միտքը»
«դու կարող ես կարդալ ամեն մեկի սիրտը»

Սա բաղադրյալ բառ է՝ «սրտեր» և «գիտենա», (տես՝ 15:8): Այն արտացոլում է ՀԿ-յան ճշմարտություն (տես՝ 1 Թագ.2:7; 16:7; 3 Թագ.8:39; 1 Մնաց.28:9; 2 Մնաց.6:30; Սաղմ.7:9; 44:21; Առակ.15:11; 21:2; Երեմ.11:20; 17:9-10; 20:12; Ղուկ.16:15; Գործք 1:24; 15:8; Հռ.8:27): Աստված կատարելապես ճանաչում է մեզ և դեռ սիրում է (տես՝ Հռ.8:27):

Աշակերտները հաստատում են, որ Եհովան գիտի նրանց շարժառիթները, ինչպես նաև այդ երկու թեկնածուների շարժառիթներն ու կյանքերը: Նրանք Աստծո կամքն են ուզում այս ընտրության մեջ (ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ): Տասներկուսին ընտրեց Հիսուսը, սակայն հիմա Նա Հոր մոտ էր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏԸ

Հունարեն *kardia* տերմինը կիրառվում է Մեպտուազինալոյում և ՆԿ-ում նկարագրելու երբայերեն *leb* (BDB 523) տերմինը: Այն օգտագործվում է մի քանի կերպ (տես՝ Bauer, Arndt, Gingrich, *A Greek-English Lexicon*,/Հունարեն-անգլերեն բառարան/ pp.403-404):

1. Ֆիզիկական կյանքի կենտրոնը՝ անձի փոխաբերական իմաստը (տես՝ Գործք.14:17; 2 Կորնթ. 3:2-3; Հակ.5:5):
2. Հոգևոր կյանքի կենտրոնը (այսինքն՝ բարքերը)
 - ա. Աստված գիտի սիրտը (տես՝ Ղուկ.16:15; Հռոմ.8:27; 1 Կորն.14:25; 1 Թեսաղ.2:4; Հայտ. 2:23):
 - բ. Մարդկանց հոգևոր կյանքի համար կիրառված (տես՝ Մատթ.15:18-19; 18:35; Հռոմ.6:17; 1 Տիմ.1:5; 2 Տիմ.2:22; 1 Պետ.1:22):
3. Մտավոր կյանքի կենտրոնը (այսինքն՝ բանականությունը. տես՝ Մատթ.13:15; 24:48; Գործք. 7:23; 16:14; 28:27; Հռոմ.1:21; 10:6; 16:18; 2 Կորն.4:6; Եփես. 1:18; 4:18; Հակ.1:26; 2 Պետ. 1:19; Հայտն.18:7; սիրտը և միտքը ներկայացված որպես հոմանիշներ՝ 2 Կորնթ.3:14-15 և Փիլ. 4:7):
4. Կամային հատկությունների կենտրոնը (այսինքն՝ կամքը, տես՝ Գործք. 5:4; 11:23; 1 Կորնթ.4:5; 7:37; 2 Կորնթ.9:7)
5. Զգացմունքների կենտրոնը (տես՝ Մատթ.5:28; Գործք. 2:26,37; 7:54; 21:13; Հռոմ.1:24; 2 Կորնթ.2:4; 7:3; Եփես.6:22; Փիլ.1:7)
6. Հոգու գործունեության համար եզակի վայրը (տես՝ Հռոմ. 5:5; 2 Կորնթ. 1:22; Գաղ. 4:6 [այսինքն՝ Զրիստոսը մեր սրտերում, Եփես. 3:17])
7. Սիրտը հանդիսանում է ամբողջական անձի փոխաբերությունը (տես՝ Մատթ. 22:37, մեջբերված՝ 2 Օր. 6:5): Մտքերը, նպատակները և գործողությունները, որոնք վերագրվում են սրտին, լիովին հայտնում են անձի անհատականությունը: ՀԿ-ում կան այս տերմինի կիրառության մի քանի զարմանալի օրինակներ՝
 - ա. Ծննդ. 6:6; 8:21, «Աստված տրտմեց Իր սրտում» նաև ստուգեք Ովսես 11:8-9
 - բ. 2 Օր. 4:29; 6:5, «քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով»
 - գ. 2 Օր. 10:16, «անթափաստ սիրտ» և Հռոմ. 2:29
 - դ. Եզեկ. 18:31-32, «մի նոր սիրտ»
 - ե. Եզեկ. 36:26, «մի նոր սիրտ» հակադրված՝ «քարե սրտի» հետ

1:25 «իր տեղը» Սա «նզովք» բառի մեղմ տարբերակն է: Սատանան օգտագործեց նրան իր նպատակի համար (տես՝ Ղուկ.22:3; Հովհ.13:2, 27), սակայն Հուդան էր պատասխանատու իր ընտրությունների և գործողությունների համար (տես՝ Գաղ.6:7):

■ **1:26 «նրանց համար վիճակ զցեցին»** Վիճակ զցեցն ունի ՀԿ-յան հիմք՝ կապված Զահանայապետի Ուրիմ և Թուֆիմ կիրառելու հետ՝ Ղևտ.16:8, կամ անհատների, որոնք կիրառել են նմանատիպ մեթոդ (տես՝ Առակ.16:33; 18:18): Հռոմեացի զինվորները Հիսուսի հազուստների համար նույնպես վիճակ զցեցին (տես՝ Ղուկ.23:34): Այնուամենայնիվ, սա այս մեթոդի կիրառման վերջին դեպքն է նշված ՆԿ-ում, որի միջոցով իմացել են Աստծո կամքը: Եթե մեկը հակված է ապացույց տեքստ փնտրելու, որպեսզի այս մեթոդը դարձնի նորմատիվ հոգևոր որոշումներ կայացնելու համար, սպա շատ ցավալի է (օր.՝ Աստվածաշունչը բացելով և մատը դնելով որևէ համարի վրա, այդպես որոշելով Աստծո կամքը): Հավատացյալները պետք է ապրեն հավատքով և ոչ թե մեխանիկորեն Աստծո կամքը որոշելով (օր.՝ ոչխարի բրդի միջոցով, տես՝ Դատ.6:17, 36-40):

■ **«Մատաթիա»** Եվսեբիոսը ասում է, որ նա ներգրավված է եղել յոթանասունի առաքելության մեջ (տես՝ Ղուկ.10): Ավելի ուշ ավանդույթն ասում է, որ նա նահատակվում է Եթովպիայում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության ուղեգրվց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Քննարկման համար այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Հիսուսը մնաց աշակերտների հետ 40 օր:
2. Ի՞նչ է Հոգու մկրտությունը:
3. Ինչո՞ւ է համար 7-ը այդքան կարևոր:
4. Ինչո՞ւ է համբարձումը կարևոր:
5. Ինչո՞ւ Պետրոսը Հուդային փոխարինող նշանակելու կարիք գգաց:
6. Ինչպե՞ս կարող էր Պողոսը լինել առաքյալ, երբ չէր համապատասխանում առաքյալի որակավորմանը (1:21-22):

ԳՈՐԾՔ 2

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Սուրբ Հոգու գալուստը	Սուրբ Հոգու գալուստը	Պենտեկոստի օրը	Սուրբ Հոգու գալուստը	Պենտեկոստե
2:1-4	2:1-4	2:1-4	2:1-4	2:1-4
	Ամբոխի արձագանքը			
2:5-13	2:5-13	2:5-13	2:5-13	2:5-13
Պետրոսի Խոսքը	Պետրոսը Քարոզը	Պետրոսի Քարոզը	Պետրոսի Քարոզը	Պետրոսը դիմում է ամբոխին
Պենտեկոստեին				
2:14-21		2:14-21	2:14-21	2:14-21
2:22-28	2:14-39	2:22-28	2:22-28	2:22-28
2:29-36		2:29-36	2:29-35	2:29-35
		Ապաշխարության կոչը	2:36	2:36
2:37-42		2:37-42	2:37	Առաջին նորադարձները
	Եկեղեցու էական անը		2:38-39	2:37-41
Հավատացյալների կյանքը	2:40-47		2:40-42	Վաղ Զրիստոնեական ապաշխարություններ
2:43-47			Հավատացյալների կյանքը	2:42
		2:43-47	2:43-47	2:43
				2:44-45
				2:46-47

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզին յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Սա համարվում է Նոր Դարաշրջանի առաջին քարոզը: Ուշադրություն դարձրեք 2-րդ գլխում ՀԿ-ից մեջբերումներին և ակնարկներին: Պետրոսը քարոզում է ամբողջ Միջերկրական աշխարհից հավաքված հրեաներին: Սուրբգրային համարները, որոնք նա ընտրել էր, արտացոլում են Հիսուսի ուսմունքները Էմմաուսի ճանապարհի երկու մարդկանց (տես՝ Ղուկ.24:45):

1. 16-21 հհ. – Հովել 2:28-32
2. 25-28 հհ. – Մաղմ.16:8-11
3. 30 հ. – ակնարկ 3 Թագ.7:11-16 և Մաղմ.89:34 կամ 132:11
4. 34-35 հհ. – Մաղմ.110:1

Բ. Հովելի էսկատոլոգիական մարգարեության իրականացումը ֆիզիկական դրսևորումն է այն բանի, որ Աստծո դատաստանը, որը Մաղաքիայից հետո (կամ Մնացորդացների հեղինակից հետո) Իսրայելին Իր Հոգուց զրկել էր, այլևս ավարտվեց: Սուրբ Հոգին վերադարձել է Մեծ Հանձնարարության զորությամբ և նպատակով:

Գ. Լեզուների խառնվելը Բաբելոնի Աշտարակից (տես՝ Ծննդոց 11) այժմ հակադարձվում է (զոնե սիմվոլիկ կերպով): Սկսվել է մի Նոր Դարաշրջան:

Դ. Հիմա Գործքի «լեզուները» տարբեր են Կորնթոսի «լեզուներից»: Կարիք չկա թարգմանչի: Պատգամը բացառապես ավետարանչական է:

Գործքում լեզուները հավատացյալ հրեաների համար են հասկանալու, որ Աստված ընդունել է մի նոր ռասայական՝ աշխարհագրական խմբի մարդկանց Իր Արքայության մեջ (այսինքն՝ Սամարացիներին, հռոմեացիներին, և այլն):

Կորնթոսյան լեզուները համընկնում են Դելփի Պատգամախոսի մշակութային օրինակի հետ: Նրանք դիմում են Աստծուն, ոչ թե մարդկանց (տես՝ 1 Կորնթ.14:2): Նրանք շինություն են խոսողի համար (տես՝ 1 Կորնթ.14:4): Խնդրում են այս դիտարկումները Կորնթոսի համար ոչ մի առումով որպես բացասական օրինակ մի համարեք (տես՝ 1 Կորնթ.14:5,18): Ես հավատում եմ, որ այն դեռևս շարունակվող հոգևոր պարզև է: Մակայն, 1 Կորնթ.12:28-29-ի շուրջ առաջացած հարցերի պատճառով, որոնք ակնկալում են «ոչ» պատասխանը, դրանք բոլոր հավատացյալների համար չեն: 1 Կորնթացիների 12 և 14 գլուխներում այս թեմայի շուրջ ամբողջական պարզաբանումների համար նայեք՝ www.freebiblecommentary.org

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 2:1-4

¹Եվ երբ Պենտեկոստի օրը եկել էր, բոլորը միաբան մեկտեղ էին: ²Ու հանկարծ երկնքից մի ձայն եկավ՝ սաստիկ փչող քամու պես, և ամբողջ տունը, որտեղ նստած էին, լցրեց: ³Եվ կրակի նմանվող, բաժանված լեզուներ երևացին նրանց և նրանցից յուրաքանչյուրի վրա նստեցին: ⁴Եվ նրանք բոլորը Սուրբ Հոգով լցվեցին ու սկսեցին այլ լեզուներով խոսել, ինչպես Հոգին նրանց խոսել էր տալիս:

2:1 «Պենտեկոստե» Այս ամենամյա հրեական տոնակատարությունը նաև կոչվում է «Շաբաթների Տոն» (տես՝ Ելից 34:22; 2 Օր.16:10): «Պենտեկոստե» տերմինը նշանակում է «հիսուներորդ»: Այս տոնակատարությունը տևում էր Չատկից հետո (այսինքն՝ հաշվելով Բաղարջակերած Տոնի երկրորդ օրից) հիսուն օր (յոթ շաբաթ): Հիսուսի օրոք այն ուներ երեք նպատակ.

1. Մովսեսին Օրենքի հանձնման հիշատակի տոն (տես՝ Հոբեյաններ 1:1)
2. Բերքի համար Աստծուն գոհունակության օր
3. Յորենի հունձքի առաջին պտուղների ընծայումը (այսինքն՝ ի նշան այն բանի, որ Եհովան է ամբողջ հունձքի Տերը): ՀԿ-յան հիմքը գտնվում է Ելից 23:16-17; 34:22; Ղևտ.23:15-21; Թվոց 28:26-31 և 2 Օր.16:9-12:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԵՆՏԵԿՈՍՏԵ

Այս ամենամյա հրեական տոնակատարությունը նաև կոչվում է «Շաբաթների Տոն» (տես՝ Ելից 34:22; 2 Օր.16:10): «Պենտեկոստե» տերմինը նշանակում է «հիսուներորդ»: Այս տոնակատարությունը տևում էր Չասկից հետո (այսինքն՝ հաշվելով Բաղարջակերած Տոնի երկրորդ օրից) հիսուն օր (յոթ շաբաթ): Հիսուսի օրոք այն ուներ երեք նպատակ.

1. Մովսեսին Օրենքի հանձնման հիշատակի տոն (տես՝ Հոբեյաններ 1:1)
2. Բերքի համար Աստծուն գոհունակության օր
3. Յորենի հունձքի առաջին պտուղների ընծայումը (այսինքն՝ ի նշան այն բանի, որ Եհովան է ամբողջ հունձքի Տերը): ՀԿ-յան հիմքը գտնվում է Ելից 23:16-17; 34:22; Ղև.23:15-21; Թվոց 28:26-31 և 2 Օր.16:9-12:



NASB, NRSV
NKJV
TEV
NJB

«եկել էր»
«հասել էր»
«եկավ»
«մտնեցավ»

Բառացի սա նշանակում է «յրվել էին»: Սա քերականորեն ՆԵՐԿԱ ԱՆՈՐՈՇ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ Է: Իրենից ներկայացնում է աստվածային ժամադրություն և աստվածային նպատակի իրականացում: Այն կիրառվում է միայն Ղուկասի գրքերի մեջ (տես՝ Ղուկ.8:23; 9:51; այստեղ և նմանատիպ փոխարկություն Ղուկ.2:6-ում): Մարդկային պատմությանը սկիզբ է դրել Եհովան:

Մ. Ռ. Վինսենտ, *Բառային Սերտողություններ*, /M. R. Vincent, *Word Studies*/ հատոր 1, էջ 224, հիշեցնում է մեզ, որ հրեաները այդ օրվան նայում էին որպես մի անոթի, որը պետք է լցվեր: Պենտեկոստեի ժամանակը լիովին հասել էր: Այն նաև Աստծո համար Հոգու Դարաշրջանի՝ եկեղեցին սկսելու, հանդիսավոր բացման ժամանակն էր:

■ «բոլորը միաբան մեկտեղ էին» Այս արտահայտությունը ենթադրում է միաբանություն թե՛ տեղի հարցում և թե՛ մտածելակերպի (տես՝ 1:14): Դեպքի վայրը հայտնի չէ: Հավանաբար «վերնատանն» է եղել (տես՝ Գործք 1:13), սակայն ինչ-որ տեղ նաև Տաճարն է ներգրավված այս իրադարձության մեջ (տես՝ Ղուկ.24:53; խմբի մեծությունը՝ հ. 47-ում):

2:2 «երկնքից մի ձայն եկավ՝ սաստիկ փշող քամու պես» Այս ամբողջ բաժնում շեշտադրությունը դրված է ձայնի վրա և ոչ թե քամու կամ կրակի: Սա նման է Ծննդ.3:8-ին: ՀԿ-ում *ruah* (BDB 924) բառը կիրառվում է շնչի, քամու և Հոգու համար (տես՝ Եզեկ.37:9-14), իսկ ՆԿ-ում *pneuma* բառը կիրառվում է քամու և Մուրբ Հոգու համար (տես՝ Հովհ.3:5-8): Այս համարում քամի բառը *pnoē* է: Այն կիրառված է միայն այստեղ և 17:25-ում: *Pneuma* տերմինը կիրառված է Հոգու համար հ.4-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈԳԻՆ (PNEUMA) ՆԿ-ՈՒՄ

«Հոգի» բառի հունարեն տերմինը ՆԿ-ում կիրառվում է մի քանի կերպ: Ահա ներկայացված որոշ դասակարգումներ և օրինակներ:

Ա. Տրիունն (երեքը մեկում) Աստծո մասին

1. Հոր համար (տես՝ Հովհ.4:24)
2. Որդու համար (տես՝ Հռոմ.8:9-10; 2 Կորնթ.3:17; Գաղ.4:6; 1 Պետ.1:11)
3. Մուրբ Հոգու համար (Մարկ.1:11; Մատթ.3:16; 10:20; Հովհ.3:5,6,8; 7:39; 14:17; Գործք 2:4; 5:9; 8:29,35; Հռոմ.1:4; 8:11,16; 1 Կորնթ.2:4,10,11,13,14;12:7)

Բ. մարդկային կյանքի ուժի մասին

1. Հիսուսի համար (տես՝ Մարկ.8:12; Հովհ.11:33,38; 13:21)
2. մարդկության համար (տես՝ Մատ.22:43; Գործք7:59; 17:16; 20:22; Հռոմ.1:9; 8:16; 1 Կորն. 2:11; 5:3-5; 7:34; 15:45; 16:18; 2 Կորնթ.2:13; 7:13; Փիլ.4:23; Կող.2:5)

Գ. հոգևոր իշխանության համար

1. հոգևոր էակները՝
 - ա. բարի (այսինքն՝ հրեշտակները. տես՝ Գործք 23:8-9; Եբր.1:14)
 - բ. չար (այսինքն՝ դիվականը. տես՝ Մատթ.8:16; 10:1; 12:43,45; Գործք 5:16; 8:7; 16:16; 19:12-21; Եփես.6:12)
 - գ. ոգիները (տես՝ Ղուկ.24:37)

2. հոգևոր զանազանությունը (տես՝ Մատթ.5:3; 26:41; Հովհ.3:6; 4:23; Գործք 18:25; 19:21; Հռոմ.2:29; 7:6; 8:4,10; 12:11; 2 Կորնթ. 14:37)
3. հոգևոր բաները (տես՝ Հովհ.6:63; Հռոմ.2:29; 8:2,5,9,15; 15:27; 1 Կորնթ.9:11;14:12)
4. հոգևոր պարզկները (տես՝ 1 Կորնթ.12:1; 14:1)
5. Հոգու ներշնչանքը (տես՝ Մատթ.22:43; Դուկ.2:27; Եփես.1:17)
6. Հոգևոր մարմինը (տես՝ 1 Կորնթ.15:44-45)

Դ. Բնութագրում է՝

1. աշխարհի վերաբերմունքը (տես՝ Հռոմ. 8:15; 11:8; 1 Կորնթ. 2:12)
2. մարդկանց մտածելակերպը (տես՝ Գործք 6:10; Հռոմ.8:6; 1 Կորնթ. 4:2)

Ե. Ֆիզիկական իշխանության համար

1. քամի (տես՝ Մատթ.7:25,27; Հովհ.3:8; Գործք 2:2)
2. շունչ (տես՝ Գործք 17:25; 2 Թեսաղ.2:8)

Ակնհայտ է, որ այս տերմինը պետք է թարգմանվի հենց համատեքստի լույսի ներքո: Գոյություն ունեն նշանակության տարբեր սովորներ, որոնք կարող են վերաբերել (1) ֆիզիկական աշխարհին, (2) աներևույթ աշխարհին, (3) ինչպես նաև այս ֆիզիկական աշխարհում ապրող կամ հոգևոր տերություններում գտնվող մարդկանց:

Սուրբ Հոգին Երրորդության այն անձն է, որը առավելագույնս գործուն է պատմության այս ժամանակահատվածում: Հոգու նոր դարաշրջանը հասել է: Ամեն ինչ որ բարի է, սուրբ, ուղիղ և ճշմարիտ, կապված է Նրա հետ: Աստծո Արքայության հաջողության և ավետարանի տարածման համար կենսապես կարևոր է Նրա ներկայությունը, պարզկները և ծառայությունը (տես՝ Հովհ.14 և 16): Նա ուշադրությունը չի հրավիրում Իր վրա, այլ Քրիստոսի (տես՝ Հովհ.16:13-14): Նա հաստատում է, համոզում, հետամուտ լինում, մկրտում և հասունացնում բոլոր հավատացյալներին (տես՝ Հովհ.16:8-11):

2:3 «կրակի նման բաժանված լեզուներ» Տեքստը հայտնապես բնութագրում է ձայնի և լույսի հետ կապված դեպք: Լույսի պես պայծառ կրակը սկզբում մեկն էր, ապա բաժանվում է բազմաթիվ կրակների և հանգչում յուրաքանչյուր հավատացյալի վրա: Վերնատանը գտնվող յուրաքանչյուր մարդ՝ Առաքյալները, Հիսուսի ընտանիքի անդամները և աշակերտները, այժմ ֆիզիկական հաստատություն ունեին, որ իրենք էլ են դրա մեջ: Եկեղեցին մեկ էր:

Պենտեկոստի Տոնը հուդայականության մեջ ձևավորվել էր որպես Սինա լեռան վրա Մովսեսին Օրենքը հանձնվելու տոնակատարություն (երբ է այս ավանդույթը ձևավորվել, հայտնի չէ, սակայն հավանաբար այս դեպքերից շատ ավելի շուտ): Ուստի, բարձրաձայն՝ սաստիկ, քամին և կրակը կարող էին լինել Եհովայի փառահեղության հիշեցում, որը իջել էր Քորեբ լեռան վրա (տես՝ Ելից 19:16):

ՀԿ-ի կրակը խորհրդանշում է (1) աստվածության ներկայությունը, (2) դատաստանը (տես՝ Ես.66:15-18); (3) մաքրագերծումը՝ սրբացումը (տես՝ Ելից 3:2; 2 Օր.5:4 և Մատթ.3:11): Դուկասը կիրառում է նմանության համեմատություն փորձելով արտահայտել Հոգու ֆիզիկական դրսևորման բացառիկ իրադարձությունը: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՐԱԿ

Սուրբ Գրքում կրակը ունի թե՛ դրական և թե՛ բացասական նշանակություն:

Ա. Դրականը

1. տաքացնում է (տես՝ Ես.44:15; Հովհ.18:18)
2. լուսավորում է (տես՝ Ես.50:11; Մատթ.25:1-13)
3. եփում է (տես՝ Ելից 12:8; Ես.44:15-16; Հովհ.21:9)
4. գտում է (տես՝ Թվոց.31:22-23; Առակ.17:3; Ես.1:25; 6:6-8; Երեմ.6:29; Մաղ.3:2-3)
5. սրբություն (տես՝ Ծննդ.15:17; Ելից 3:2; 19:18; Եզեկ.1:27; Եբր.12:29)
6. Աստծո առաջնորդություն (տես՝ Ելից 13:21; Թվոց 14:14; 3 Թագ.18:24)
7. Աստծուց զորացում (տես՝ Գործք 2:3)
8. Պաշտպանություն (տես՝ Չաք.2:5)

Բ. Բացասական՝

1. այրում է (տես՝ Հեսու 6:24; 8:8; 11:11; Մատթ.22:7)
2. բնաջնջում է (տես՝ Ծննդ.19:24; Դևտ.10:1-2)
3. բարկություն (տես՝ Թվոց 21:28; Ես.10:16; Չաք.12:6)

4. պատիժ (տես՝ Ծննդ.38:24; Ղևտ.20:14; 21:9; Հեսու 7:15)

5. կեղծ էսկատոլոգիական նշան (տես՝ Հայտն.13:13)

Գ. Աստծո բարկությունը մեղքի հանդեպ արտահայտվում է կրակի փոխաբերությամբ՝

1. Նրա բարկությունը վառվում է (տես՝ Ովս.8:5; Սոփ.3:8)

2. Նա կրակ է թափում (տես՝ Նավ.1:6)

3. Հավիտենական կրակ (տես՝ Երեմ.15:14; 17:4)

4. Էսկատոլոգիական դատաստան (տես՝ Մատթ.3:10; 13:40; Հովհ.15:6; 2 Թեսաղ.1:7; 2 Պետ.3:7-10; Հայտն.8:7; 16:8)

Դ. Աստվածաշնչում զետեղված շատ փոխաբերությունների պես (այսինքն՝ թթխմոր, առյուծ, և այլն) ըստ համատեքստի կրակը կարող է լինել օրհնություն կամ անեծք:

■ **«նրանցից յուրաքանչյուրի»** Ոչ մի խտրականություն դրված չէր Առաքյալների և աշակերտների, տղամարդկանց և կանանց միջև (տես՝ Հովել 2:28-32; Գործք 2:16-21):

2:4 «նրանք բոլորը Սուրբ Հոգով լցվեցին» Այս դեպքը նշված է Ղուկ.24:49-ում և կոչվում է «Իմ Հոր խոստումը»: «Լեցունությունը» կրկնվող է (տես՝ 2:4; 4:8,31; 6:3,5; 7:55; 9:17; 11:24; 13:9): Այն նկատի ունի ամեն օր Քրիստոսին նմանվելը (տես՝ Եփես.5:18 համեմատած Կող.3:16): Սա տարբերվում է Հոգու մկրտությունից, որը մատնանշում է Քրիստոնեական ներքին վերապրում կամ Քրիստոսի մեջ միավորվելը (տես՝ 1 Կորնթ.12:13; Եփես.4:4-5): Լեցունությունը հոգևոր հզորացում է արդյունավետ ծառայության համար (տես՝ Եփես.5:18-20), այս դեպքում՝ ավետարանչության համար:

Շատ կերպերով Ավետարանականների որոշ ճյուղավորումներ արձագանքել են այն ինչ տեսել են, որպես մուտք հոգևոր փորձառության և թերագնահատել ՆԿ-ի շեշտադրությունը Սուրբ Հոգու վրա: Երկու գրքեր կան, որոնք օգնել են ինձ այս հարցի շուրջ՝ Գորդոն Ֆիլի կողմից գրված.

1. *Ավետարանը և Հոգին*

2. *Պողոսը, Հոգին և Աստծո Ժողովուրդը*

Տե՛ս ամբողջական գրառումները 5:17-ում:

■

NASB, NKJV

«սկսեցին այլ լեզուներով խոսել»

NRSV

«սկսեցին այլ լեզուներով խոսել»

TEV

«գրուցել այլ լեզուներով»

NJB

«սկսեցին խոսել տարբեր լեզուներով»

Բառացի նշանակում է «այլ լեզուներ» (*heterais glōssais*): «Տարբեր լեզուներ» թարգմանությունը օգնում է հասկանալ այս տերմինը, համաձայն 6 և 11 համարների համատեքստի: Մյուս հնարավոր թարգմանությունը «հիացական արտասանություն» է՝ 1 Կորնթացիների 12-14 և Գործք Առաքելոց 2:13 հիման վրա: Հայտնի չէ, թե քանի տարբեր լեզուներ խոսվեցին, սակայն շատ էին: Եթե դուք փորձեք ավելացնել բոլոր այն երկրները և շրջանները, որոնք գտնվում էին 9-11 համարներում, ապա դրանք կլինեն ավելի քան քսան լեզու: 120 աշակերտներից ոմանք հնարավոր է խոսում էին այդ լեզուներով:

Աստված արեց բացառիկ և հզոր բան, որպեսզի քաջալերի այս վախեցած տղամարդկանց և կանանց փոքր խմբին, որոնք փակված սպասում էին վերնատանը՝ համարձակություն տալու նրանց ավետարանը հռչակելու համար (թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք): Ինչ էլ որ լինեի խոստացյալ Սուրբ Հոգու գալստյան սկզբնական նշանը, Աստված այն նաև օգտագործեց հաստատելու, որ Նա ընդունում է այլ խմբերին նույնպես (օր.՝ սամարացիներին, հռոմեական բանակի սպաներին և հեթանոսներին): «Լեզուները» Գործքում միշտ նշան է եղել հավատացյալների համար, որ ավետարանը հաղթահարել է մեկ այլ էթնիկ, աշխարհագրական խոչընդոտ: Գոյություն ունի հստակ տարբերություն Գործքի և հետագայում Պողոսի Կորնթոսում եղած ծառայության ժամանակ լեզուների միջև (տես՝ 1 Կորնթ.12-14):

Աստվածաբանորեն հնարավոր է, որ Պենտեկոստեն Բաբելոնի աշտարակաշինության ճիշտ հակադարձումն է (տես՝ Ծննդ.10-11): Մինչ հպարտ, ապստամբ մարդիկ պաշտպանում էին իրենց անկախությունը (այսինքն՝ հրաժարվում էին սիռվել և լցնել երկիրը), Աստված իրականացրեց Իր կամքը՝ ստեղծելով բազմաթիվ լեզուներ: Այժմ, Հոգու նոր դարաշրջանում, ազգայնականությունը, որը խանգարում է մարդկությանը միավորվելու մեջ, (այսինքն՝ վերջին ժամանակների աշխարհում մեկի կողմից կառավարվելու) հավատացյալների համար հետադարձվել է: Քրիստոնեական փոխհարաբերությունը մարդկային ցանկացած սահմանների շրջանակներում (այսինքն՝ սեռ, տեղանք, լեզու) Ծննդոց 3-ի հետևանքների հակադարձումն է:

■ **«ինչպես Հոգին նրանց խոսել էր տալիս»** Այստեղ ԲԱՅԸ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԱՆԿԱՏԱՐ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը նշանակում է, որ Հոգին սկսեց տալ նրանց: «Խոսել» (անգլ.՝ արտասանել) բառը (*apophtheggomai*) ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ (դեպոնենտ) ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ է: Այս տերմինը միայն Ղուկասն է կիրառել Գործքում (տես՝ 2:4,14; 26:25): Այն կիրառվում է Սեպտուագինտայում մարգարեների խոսելու համար (այսինքն՝ Հոգուց ներշնչված խոսք. տես՝ 2 Օր.32:2; 1 Մնաց.25:1; Եզեկ.13:9,19; Միք.5:11; Չաք.10:2):

Ես նախընտրում եմ այս մեկնաբանության Հունարեն Դասական Ստուգաբանական նշանակությունը՝ «ձայնը բարձրացնել», «կրքոտ/կրակոտ/ խոսել» կամ «բարձրաձայն հռետորի պես խոսել»: Ղուկասը գիտեր Սեպտուագինտան և դրա տերմինաբանության ազդեցության տակ էր: Սեպտուագինտան Միջերկրական աշխարհի Աստվածաշունչն էր և դարձավ եկեղեցու Աստվածաշունչը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ: 2:5-13

⁵Եվ Երուսաղեմում երկնքի տակ եղող ամեն մի ազգից եկած հրեաներ կային, աստվածավախ մարդիկ: ⁶Արդ, երբ սա բոլորին լսելի եղավ, բազմությունը մեկտեղ հավաքվեց, խիստ շփոթված, որովհետև ամեն մարդ լսում էր նրանց՝ իր իսկ լեզվով խոսելիս: ⁷Բոլորը հիանում ու զարմանում էին՝ միմյանց ասելով. «Մի՞թե սրանք բոլորը, որ խոսում են, գալիլիացիներ չե՞ն. ⁸իսկ ինչպե՞ս ենք մենք՝ ամեն մեկս, մեր լեզուն լսում, որով ծննդից խոսել ենք: ⁹Պարթևներ և մարեր ու իլամացիներ և նրանք, որ բնակվում են Միջագետքում և Հրեաստանում ու Կապադովկիայում, Պոնտոսում և Ասիայում, ¹⁰Փռուզիայում և Պամփյուլիայում, Եգիպտոսում և Կյուրենեի մոտ՝ Լիբիայի կողմերում, նաև Հռոմից եկածներ, թե՛ հրեաներ, և թե՛ հրեության դարձածներ, ¹¹կրետացիներ և արաբներ.-լսում ենք նրանց, որ մեր լեզուներով Աստծո մեծամեծ գործերի մասին են խոսում»: ¹²Բոլորը զարմանում ու տարակուսած միմյանց հարցնում էին. «Ի՞նչ է սա նշանակում»: ¹³Ոմանք էլ ծաղրելով՝ ասում էին. «Այս մարդիկ նոր /անգլ.՝ քաղցր/ գինով են լցված»:

2:5 «աստվածավախ» /նվիրված/ Այս տերմինը նշանակում է «ինչ-որ բանից ամուր կառչած» (տես՝ LXX Ղևտ.15:31; Միք.7:2): Առաջին դարի հուդայականության դեպքում, այն նկատի ունի Աստծո հանդեպ հարգանքը և Ծերերի ավանդույթները (այսինքն՝ Բանավոր ավանդույթները, որոնք դարձան Թալմուդը): Այս մարդիկ կրոնասեր, աստվածավախ մարդիկ էին (տես՝ 8:2; 22:12; Ղուկ.2:25): Այս բառը իմաստային առումով նույն «անարատ» խոսքն է՝ կիրառված Նոյի և Հորի համար:

■ **«երկնքի տակ եղող ամեն մի ազգից»** Բոլոր արական սեռի հրեաներից խստիվ պահանջվում էր, որ ամեն տարի հաճախեին Տաճար (տես՝ 2Օր.16:16) մասնակցելու երեք ամենագլխավոր տոներին (տես՝ Ղևտ. 23): Կային՝

1. Հավանաբար ուխտագնացներ ամբողջ Միջերկրականի տարածքից, որոնք եկել էին Երուսաղեմ Չատկի տոնին և մնացել մինչև Պենտեկոստե
2. Ժամանակավոր բնակիչներ, որոնք տեղափոխվել էին Երուսաղեմից դուրս ինչ-որ տարածքներից (տես՝ այս բառի կիրառությունը 4:16; 7:24; 9:22,32-ում):

Սա ունի աստվածաբանական մեծ կիրառություն (տես՝ Մատթ.28:19-20; Ղուկ.24:47; Գործք.1:8):

2:6 «երբ սա /այս ձայնը/ լսելի եղավ» Սա կարող է վերաբերել (1) սաստիկ քամու ձայնին (տես՝ հ. 2) կամ (2) հավատացյալներին, որոնք խոսում էին այլ լեզուներով (տես՝ հ. 4):

■	
NASB, NRSV,	
NJB	«տարակուսած»
NKJV	«շփոթված»
TEV	«զարմացած»

Այս նույն տերմինը կիրառված է Սեպտուագինտայում՝ Ծննդոց 11:7-9, կապված Բաբելոնի Աշտարակի լեզուների խառնաշփոթի հետ: Ես կարծում եմ, որ Պենտեկոստեն Բաբելոնի աշտարակաշինության ժամանակ սկսած ազգայնականության հակադարձ երևույթն է, առաջինը՝ աշխարհով մեկ սփռվելու Աստծո կամքը մարդկության կողմից մերժելու արդյունքում պատժվելու համար, իսկ երկրորդը՝ մարդկությանը համաշխարհային միասնությունից պաշտպանելու համար: *Ջերոմ Աստվածաշնչյան Մեկնաբանություն*, հատոր 2, էջ 172 (*Jerome Biblical Commentary*) գիրքը այնուհետև ուժեղացնում է այս տեսարանը Գործք 2:3-ում կիրառելով *diamezizo* բառը, որը հազվադեպ տերմին է, սակայն կիրառվել է նաև Սեպտուագինտայում 2 Օր. 32:8-ում Բաբելոնի Աշտարակից

մարդկանց սփռվելու համար: Հավատացյալները այլևս բաժանված չեն ազգությունների: Նայեք 9:22 գրառումը:

■ **«բազմությունը մեկտեղ հավաքվեց»** Այստեղից կարելի է ենթադրել, որ այն տեղի է ունեցել Տանարի տարածքում, քանի որ մեծ բազմությունը չէր կարող տեղավորվել մի փոքրիկ վերնատան մեջ կամ Երուսաղեմի որևէ փոքր փողոցում:

■ **«Իսկ ինչպես ենք մենք՝ ամեն մեկս, մեր լեզուն լսում, որով ծննդից խոսել ենք»** Հնարավոր է սա եղել է լսելու հրաշք, և պարտադիր չէ խոսելու (տես՝ հհ.8 և 11): Եթե այսքան մեծ բազմություն բոլորը միասին խոսեին տարբեր լեզուներով, ապա այնտեղ խառնաշփոթ կտիրեր: Սա Բաբելոնի Աշտարակաշինության աստվածաբանական հակադարձումն է (տես՝ Ծննդ.1:1):

Սա հունարեն *dialektos* (տես՝ հ. 8) տերմինն է, որից մենք ստացել ենք անգլերեն »dialect« տերմինը: Դուկասը հաճախ է այն կիրառում Գործքում (տես՝ 1:19; 2:6,8; 21:40; 22:2; 26:14): Այն կիրառվում է «լեզվի» իմաստով: Սակայն, այս համատեքստում դիպլեկտը կարող է լինել նպատակային իմաստով: Այս հրեաները լսում էին Հիսուսի մասին իրենց մայրենի բարբառով (դիպլեկտով): Սա նախատեսված էր նրանց համար լինել Աստծո մասին նոր պատգամի հավաստիության և դրա տիեզերական նշանակության հաստատման նշան:

2:7,12 Ուշադրություն դարձրեք բոլոր այն տերմիններին, որոնք այս կոնտեքստի մեջ արտահայտում են սուր զգացողություններ.

1. *sunechō*, «տարակուսած» (հ. 6)
2. *existēmi*, «հիացած» (հ. 7)
3. *thaumazō*, «զարմացած» (հ. 7)
4. *diaporeō*, «ապշած» (հ. 12)

■ **«Ինչո՞ւ, միթե սրանք բոլորը, որ խոսում են, գալիլիացիներ չե՞ն»** Այս հռետորական հարցը (ակնկալելով «այո» պատասխանը) տրվեց նրանց հյուսիսային ակցենտի պատճառով (այսինքն՝ բարբառի. տես՝ Մատթ.26:73): «Ինչու» բառը նկարագրում է հունարենի *idou* (ահա) տերմինը, որը Գործքում և Դուկասում կիրառվել է քսաներեք անգամ:

2:9 «Պարթևներ և մարեր ու իլամացիներ և նրանք, որ բնակվում են Միջագետքում» Բոլոր այս խմբերը Բերրի Մահիկի շրջանից էին (Միջագետք), որտեղից կանչվեց Աբրահամը (Քաղղեացիների Ուր քաղաքը. տես՝ Ծննդ. 11:28) և որտեղից որ Իսրայելը և Հուդան արքայություններ (Ասորական և Բաբելոնյան):

■ **«Հրեաստան»** Ինչո՞ւ է Հրեաստանը նշվում դրա հետ կապ չունեցող երկու այլ երկրների միջև: Ինչո՞ւ է այն նշվում առանց ՈՐՈՇԻՉ ՀՈՂԻ, որը քերականորեն ճիշտ կլիներ: Ինչո՞ւ պետք է Հրեաստանի մարդկանց զարմացներ այն փաստը, որ գալիլիացիները արամերեն էին խոսում: Քանի որ շատերի մոտ են առաջանում այս հարցերը, սա ենթադրում է, որ վաղ շրջանի դպրական վրիպում է տեղի ունեցել և այս տերմինը վերաբերում է մեկ այլ ազգի:

1. Տերտուղիանոս, Օգոստիանոս – Հայաստան
2. Ջերոմ – Սիրիա
3. Ոսկերեբան, Երասմուս – Հնդկաստան
4. Մի քանի այլ ժամանակակից տարբերակների համար նայեք Բրյուս Մ. Մեցգեր, *Հունարեն Նոր Կտակարանի Տեքստային Մեկնաբանություն*, էջ 293 (Bruce M. Metzger, *A Textual Commentary on the Greek New Testament*):

2:9-10 «Կապադովկիա, Պոնտոս և Ասիա, Փռուզիա և Պամփյուլիա» Սրանք խմբեր էին ժամանակակից Թուրքիայից:

2:10 «Եգիպտոս և Կյուրենեի մոտ՝ Լիբիայի կողմեր» Սրանք խմբեր էին Հյուսիսային Աֆրիկայից:

■ **«Հռոմից»** Հրեա ուխտավորները, որոնք դարձի եկան այս իրադարձության ժամանակ, հնարավոր է դարձան Հռոմի եկեղեցու առաջին մարդիկ:

■ **«հրեության դարձածներ»** Սա վերաբերում է հուդայականությանը դարձի եկած հեթանոսներին, որոնցից պահանջվում էր.

1. Պահել Մովսեսի օրենքը

2. Արական սեռի մարդկանց թլփատվել
3. Վկաների առջև մկրտվել
4. Հնարավորության դեպքում զոհ մատուցել Տանարում

Նրանք ներկա էին Երուսաղեմում, քանի որ բոլոր հրեա տղամարդկանցից պահանջվում էր հաճախել ամեն տարի երեք անգամ ամենակարևոր տոներին (տես՝ Ելից 23 և Ղևտ.23):

2:11 «Կրեռացիներ» Սա մի մեծ կղզի էր Թուրքիայի մոտ՝ Միջերկրականում: Հնարավոր է այս հավաքական տերմինը ներառում է իր մեջ Էգեյան ծովի բոլոր կղզիները:

■ **«Արքներ»** Հնարավոր է սա վերաբերում է Եսավի սերնդին: Հյուսիսային Մերձավոր Արևելքով սփռված բազմաթիվ արարական ցեղեր կային: Այս ցանկը ներկայացնում է առաջին դարի հրեա ժողովրդին ժամանակի ամբողջ հայտնի աշխարհը: Այն կարող է լինել նմանօրինակ փոխաբերություն, ինչպես աշխարհի յոթանասուն լեզուները, որպես հրեական սիմվոլիզմ ամբողջ մարդկության համար (տես՝ Ղուկ.10): Այս նույն միտքը արտահայտված է 2 Օր.32:8-ում LXX.

2:12 Այս ուխտագնացները ընդունեցին այս հատուկ իրադարձությունը որպես կարևորության նշան: Պետրոսը պահը բաց չթողեց պատասխանելու նրանց հարցերին:

2:13 «լցված են» Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը հայտարարում է, որ այս աշակերտները խմել էին հարբելով այն աստիճան, որ մնացել էին արբած:

■ **«քաղցր գինի»** /նոր գինի/ Իրադրության բացատրություններից մեկն այն էր, որ Հիսուսի այս հետևորդները արբած էին (տես՝ Եփես.5:18ա): Ինչպե՞ս կարող է հարբեցողությունը բացատրել լեզվական կարողությունները: Վատահ եմ, որ այնտեղ կար նաև խանդավառության և ուրախության մթնոլորտ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՐԸ ԱԼԿՈՀՈՒՆ ԵՎ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅԱՆԸ

I. Աստվածաշնչյան տերմինները

Ա. Հին Կտակարան

1. *Yayin* – Սա հունարեն գինի բառի ընդհանուր տերմինն է (BDB 406), որը կիրառվել է 141 անգամ: Ստուգաբանությունը անհայտ է, քանի որ ունի Եբրայերեն արմատ: Այն միշտ նշանակում է թթվեցրած պտղաջուր՝ հիմնականում խաղողի: Տիպիկ սուրբգրային հատվածներն են՝ Ծննդ.9:21; Ելից 29:40; Թվոց 15:5,10:
2. *Tirosh* – Սա «նոր գինին» է (BDB 440). Մերձավոր Արևելքի կլիմայական պայմանների պատճառով թթվեցումը /խմորվելը/ սկսում էր հյուսիս քամեղուց վեց ժամ անց: Այս տերմինը վերաբերում է թթվեցման ընթացքի մեջ գտնվող գինուն: Մի քանի տիպիկ սուրբգրային հատվածների համար նայեք 2 Օր.12:17; 18:4; Ես.62:8-9; Ովս.4:11.
3. *Asis* – Ակնհայտ է, որ սա ալկոհոլային ընպելիք է («քաղցր գինի» BDB 779, օր.՝ Հովել 1:5; Ես.49:26).
4. *Sekar* – Սա «ուժեղ խմիչք» տերմինն է (BDB 1016). Եբրայերեն արմատը կիրառվում է «հարբած» կամ «հարբեցող» տերմինում: Այն իր մեջ պարունակում է ավելացված մի քան, որը ավելի է ալկոհոլացնում: Այն *yayin* բառի հոմանիշն է (տես՝ Առակ.20:1; 31:6; Ես.28:7).

Բ. Նոր Կտակարան

1. *Oinos* – *yayin* բառի հունարեն համարժեքը
2. *Neos oinos* (նոր գինի) – *tirosh* բառի հունարեն համարժեքը (տես՝ Մարկ. 2:22).
3. *Gleuchos vinos* (քաղցր գինի, *asis*) – Թթվեցման սկզբնական փուլում գտնվող գինի (տես՝ Գործք 2:13):

II. Աստվածաշնչյան կիրառությունը

Ա. Հին Կտակարան

1. Գինին Աստծո պարգևն է (Ծննդ.27:28; Սաղմ.104:14-15; Ժող.9:7; Ովս.2:8-9; Հովել 2:19,24; Ամոկ 9:13; Չաք.10:7):
2. Գինին զոհաբերության մի մասն է կազմում (Ելից 29:40; Ղևտ.23:13; Թվոց 15:7,10; 28:14; 2 Օր.14:26; Դատ.9:13):

3. Գինին օգտագործվում էր որպես դեղամիջոց (2 Թագ.16:2; Առակ.31:6-7):
4. Գինին կարող է իսկական պրոբլեմ լինել (Նոյ՝ Ծննդ.9:21; Ղովա՝ Ծննդ.19:33,35; Նարադ՝ 1 Թագ.25:36; Ուրիա՝ 2 Թագ.11:13; Ամնոն՝ 2 Թագ.13:28; Հեղի՝ 3 Թագ.16:9; Benhadad – Բենադադ՝ 3 Թագ.20:12; Իշխանները՝ Ամովա 6:6 և Կանայք՝ Ամովա 4):
5. Գինին կարող է չարաշահվել (Առակ.20:1; 23:29-35; 31:4-5; Ես.5:11,22; 19:14; 28:7-8; Ովա.4:11):
6. Գինին արգելված է որոշ խմբի մարդկանց (ծառայության մեջ գտնվող քահանաները՝ Ղևտ.10:9; Եզեկ.44:21; Ուխտավորները՝ Թվոց 6; և իշխանները՝ Առակ.31:4-5; Ես.56:11-12; Ովա.7:5):
7. Գինին օգտագործվում է էսկատոլոգիական միջավայրում (Ամովա 9:13; Հովել 3:18; Չաբ.9:17):

Բ. Միջաստվածաշնչյան

1. Չափավոր գինին շատ օգտակար է (Ժող.31:27-30):
2. Ռաբբիներն ասում են. «Գինին դեղամիջոցներից ամենալավն է, որտեղ չկա գինի, այնտեղ կարիք կա դեղերի» (BDB 58բ):

Գ. Նոր Կտակարան

1. Հիսուսը մեծ քանակությամբ ջուրը վերածեց գինու (Հովհ.2:1-11):
2. Հիսուսը գինի խմեց (Մատթ.11:18-19; Ղուկ.7:33-34; 22:17):
3. Պետրոսը մեղադրվեց «նոր գինով» գինովցած լինելու մեջ՝ Պենտեկոստեի օրը (Գործք 2:13):
4. Գինին կարելի է օգտագործել որպես դեղամիջոց (Մարկ.15:23; Ղուկ.10:34; 1 Տիմ.5:23):
5. Առաջնորդները չպետք է չարաշահեն գինին: Սա չի նշանակում, որ ամբողջովին զրկվեն դրանից (1 Տիմ.3:3,8; Տիտ.1:7; 2:3; 1 Պետ.4:3):
6. Գինին կիրառվում է էսկատոլոգիական միջավայրում (Մատթ.22:1գ; Հայտն.19:9):
7. Հարբեցողությունը դատապարտված է (Մատթ.24:49; Ղուկ.12:45; 21:34; 1 Կորնթ.5:11-13; 6:10; Գաղ.5:21; 1 Պետ.4:3; Հռոմ.13:13-14):

III. Աստվածաբանական հասկացությունը

Ա. Բարբառային լարվածությունը

1. Գինին Աստծո պարզևն է:
2. Հարբեցողությունը մեծ պրոբլեմ է:
3. Որոշ մշակույթներում հավատացյալները պետք է սահմանափակվեն իրենց ազատությունը հանուն ավետարանի (Մատթ.15:1-20; Մարկ.7:1-23; 1 Կորնթ.8-10; Հռոմ.14):

Բ. Տրված սահմաններն անցնելու հակվածությունը

1. Աստված է բոլոր բարիքների աղբյուրը:
2. Անկում ապրած մարդկությունը չարաշահել է Աստծուց տրված բոլոր պարզևները՝ դրանք տանելով Աստծո կողմից դրված սահմաններից դուրս:

Գ. Չարաշահումը մեր մեջ է և ոչ թե իրերի: Ֆիզիկական արարչագործության մեջ ոչ մի չարան չկա (տես՝ Մարկ.7:18-23; Հռոմ.14:14, 20; 1 Կորնթ.10:25-26; 1 Տիմ.4:4; Տիտ.1:15):

IV. Առաջին դարի հրեական մշակույթը և խմորումը

Ա. Խմորումը սկսում է շատ շուտով՝ խաղողը տրորվելուց մոտ վեց ժամ հետո:

Բ. Հրեական ավանդույթն ասում է, որ մակերևույթին թեթև փրփուր է երևում (խմորման նշան), ապա այն ենթակա է գինու տասանորդի (*Ma aseroth* 1:7): Այն կոչվում էր «նոր գինի» կամ «քաղցր գինի»:

Գ. Սկզբնական ուժեղ խմորումը ավարտվում էր մեկ շաբաթ անց:

Դ. Երկրորդ խմորումը տևում էր մոտ քառասուն օր: Այս վիճակում այն համարվում էր «հին գինի» և կարող էր մատուցվել գոհասեղանի վրա (*Edhuyyoth* 6:1):

Ե. Գինին, որը հանգստանում էր իր մրուրի մեջ (հին գինին) համարվում էր լավ գինի, սակայն օգտագործումից առաջ պետք է լավ քամվեր:

Զ. Գինին համարվում էր պատշաճ կերպով հնեցված, սովորաբար մեկ տարի խմորումից հետո: Երեք տարին ամենաերկար ժամանակն էր, որ կարող էր ապահով պահվել: Այն կոչվում էր «հին գինի» և պետք է նոսրացվեր ջուր խառնելու միջոցով:

Է. Միայն վերջին 100 տարիներին է, որ ստերիլ միջավայրի և քիմիական հավելումների շնորհիվ հնարավոր է դարձել խմորման ժամկետը երկարացնել: Հնագույն ժամանակներում մարդիկ չեն կարողացել կանգնեցնել բնական խմորման ընթացքը:

V. Եզրահանգում

Ա. Համոզվեք, որ ձեր փորձառությունը, աստվածաբանությունը և սուրբգրային մեկնաբանությունը չի թերագնահատում Հիսուսին և առաջին դարի հրեական/Քրիստոնեական մշակույթը: Նրանք հաստատ լիակատար ժուժկայինը չէին:

Բ. Ես չեմ պաշտպանում ավոտի հասարակական օգտագործումը: Ամեն դեպքում, շատերը չափազանցեցրել են այս թեմայի շուրջ Աստվածաշնչի դիրքորոշումը և այժմ պահանջում են գերազանց արդարություն մշակութային՝ հարանվանական հակվածության հիման վրա:

Գ. Ինձ համար Հռոմեացիների 14 և 1 Կորնթացիների 8-10 հատվածները ապահովում են իմ հավատակիցների և մեր մշակույթի մեջ ավետարանի տարածման համար սիրո և հարգանքի հիման վրա խորաթափանցություն և ուղեցույց, ոչ թե անձնական ազատություն կամ դատելու քննադատություն: Եթե Աստվածաշունչը հավատքի և ապրելու համար միակ աղբյուրն է, ապա հնարավոր է մենք բոլորս պետք է ևս մեկ անգամ մտածենք այս հարցի շուրջ:

Դ. Եթե մենք համոզենք, որ կատարելապես ժուժկալ լինելը Աստծո կամքն է, ապա դրանով ի՞նչ կակնարկենք Հիսուսի մասին, ինչպես նաև այն արդի մշակույթների, որոնք պարբերաբար օգտագործում են գինի (օր.՝ Եվրոպան, Իսրայելը, Արգենտինան):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏԸ. 2:14-21

¹⁴Բայց Պետրոսը տասնմեկի հետ մեկտեղ, ելավ, ձայնը բարձրացրեց և նրանց ասավ. «Ո՛վ Հրեաստանի մարդիկ, և դուք՝ բոլորդ, որ Երուսաղեմում եք ապրում, թող ձեզ հայտնի՝ լինի սա, ու ակա՛նջ դրեք իմ խոսքերին. ¹⁵սրանք հարբած չեն, ինչպես դուք եք ենթադրում, քանի որ դեռ միայն օրվա երրորդ ժամն է, ¹⁶այլ սա այն է, ինչ Հովել մարգարեի կողմից ասվեց. ¹⁷ԵՎ ՊԻՏԻ ԼԻՆԻ, ՈՐ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐՈՒՄ,- ասում է Աստված,- ԻՄ ՀՈԳՈՒՅ ԱՄԵՆ ՄԱՐՄՆԻ ՎՐԱ ՊԻՏԻ ԹԱՓԵՄ. ՁԵՐ ՈՐԴԻՆԵՐԸ ԵՎ ՁԵՐ ԳՈՒՄՏՐԵՐԸ ՊԻՏԻ ՄԱՐԳԱՐԵԱՆԱՆ, ՈՒ ՁԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԸ ՏԵՍԻԼՆԵՐ ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆ, ԵՎ ՁԵՐ ԾԵՐԵՐԸ ԵՐԱՉՆԵՐ ՊԻՏԻ ԵՐԱՉՆԵՆ: ¹⁸ԻՄ ԾԱՌԱՆԵՐԻ ՈՒ ԱՂԱԽԻՆՆԵՐԻ ՎՐԱ ԷԼ ԱՅՆ ՕՐԵՐԻՆ ԻՄ ՀՈԳՈՒՅ ՊԻՏԻ ԹԱՓԵՄ, ՆՐԱՆՔ ՊԻՏԻ ՄԱՐԳԱՐԵԱՆԱՆ: ¹⁹ԵՎ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐ ՊԻՏԻ ՑՈՒՅՑ ՏԱՄ ՎԵՐԸ ԵՐԿՆՔՈՒՄ ԵՎ ՆԾԱՆՆԵՐ՝ ՎԱՐԸ՝ ԵՐԿՐԻ ՎՐԱ. ԱՐՅՈՒՆ, ԿՐԱԿ ԵՎ ԾՔԻ ՄԱՌԱԽՈՒՂ: ²⁰ԱՐԵՎԸ ԽԱՎԱՐԻ ՊԻՏԻ ՎԵՐԱԾՎԻ, ԵՎ ԼՈՒՍԻՆՆ՝ ԱՐՅԱՆ, ՏԻՐՈՉ ԱՅԳ ՄԵԾ ԵՎ ԵՐԵՎԵԼԻ ՕՐԸ ՉԵԿԱԾ: ²¹ԵՎ ԱՅՆՊԵՍ ՊԻՏԻ ԼԻՆԻ, ՈՐ ՈՎ ՏԻՐՈՉ ԱՆՈՒՆԸ ԿԱՆԶԻ՝ ՊԻՏԻ ՓՐԿՎԻ»:

2:14 «Պետրոս» Միայն պատկերացրեք, բոլոր աշակերտների միջից Պետրոսն էր այն անձը, որ պետք է քարոզեր Քրիստոնեության առաջին քարոզը: Մեկը, որ Հիսուսին ճանաչելով երեք անգամ ուրացավ Նրան (տես՝ Դուկաս 23): Պետրոսի փոփոխությունը վախկոտ և ուրացող անձնավորությունից համարձակ և հոգևոր խորաթափանց մարդու, ևս մեկ ապացույց է, որ հասել էր Հոգու դարաշրջանը՝ իր կյանք փոխող գործությամբ: Սա Գործքում նրա առաջին արձանագրված քարոզն է: Այն ներկայացնում է մեզ Առաքյալների քարոզի բովանդակությունն ու շեշտադրությունը: Առաքելական այս քարոզները ձևավորում են Գործքի կարևոր բաժիններից մեկը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՎԱՂ ԵԿԵՂԵՑՈՒ KERYGMA

- Ա. ՀԿ-ում Աստծո կողմից տրված խոստումները այժմ իրականացվել էին Հիսուս Մեսիայի գալստյամբ (Գործք 2:30-31; 3:19,24; 10:43; 26:6-7,22; Հռոմ.1:2-4; 1 Տիմ.3:16; Եբր.1:1-2; 1 Պետ.1:10-12; 2 Պետ.1:18-19):
- Բ. Հիսուսը Աստծո կողմից օծվեց որպես Մեսիա Իր մկրտության ժամանակ (Գործք 10:38):
- Գ. Հիսուսը սկսեց Իր ծառայությունը Գալիլիայում Իր մկրտությունից հետո (Գործք 10:37):
- Դ. Նրա ծառայությանը հատկանշական էր բարեգործությունը և Աստծո գործությամբ հզոր գործեր կատարելը (Մարկ.10:45; Գործք 2:22; 10:38):

- Ե. Մեսիան խաչվեց Աստծո հավիտենական ծրագրի համաձայն (Մարկ.10:45; Հովհ.3:16; Գործք 2:23; 3:13-15,18; 4:11; 10:39; 26:23; Հռոմ.8:34; 1 Կորնթ.1:17-18; 15:3; Գաղ.1:4; Եբր.1:3; 1Պետ.1:2,19; 3:18; 1 Հովհ.4:10):
- Զ. Նա հարություն առավ մեռելներից և հայտնվեց Իր աշակերտներին (Գործք 2:24,31-32; 3:15,26; 10:40-41; 17:31; 26:23; Հռոմ.8:34; 10:9; 1 Կորնթ.15:4-7,12; 1 Թեսաղ.1:10; 1 Տիմ.3:16; 1Պետ.1:2; 3:18,21):
- Է. Հիսուսը մեծարվեց Աստծո կողմից և Նրան տրվեց «Տեր» անունը (Գործք 2:25-29,33-36; 3:13; 10:36; Հռոմ.8:34; 10:9; 1 Տիմ.3:16; Եբր.1:3; 1 Պետ.3:22):
- Ը. Նա տվեց Սուրբ Հոգուն, որ ձևավորի Աստծո նոր համայնքը (Գործք 1:8; 2:14-18,38-39; 10:44-47; 1 Պետ.1:12):
- Թ. Նա վերադառնալու է դատաստանի և ամեն ինչ վերականգնելու համար (Գործք 3:20-21; 10:42; 17:31; 1 Կորնթ.15:20-28; 1 Թեսաղ.1:10):
- Ժ. Բոլոր նրանք, որ լսում են ավետարանի պատգամը, պետք է ապաշխարեն և մկրտվեն (Գործք 2:21,38; 3:19; 10:43,47-48; 17:30; 26:20; Հռոմ.1:17; 10:9; 1 Պետ.3:21):

■ **«տասնմեկի հետ»** Սա երկու բան է մատնանշում. (1) Պետրոսը խոսնակն է, սակայն հանդիսանում է առաքյալների խմբի մի անդամ: Նա չի խոսում ինքնուրույն կամ իր սեփական իշխանությամբ: Հոգին է յուրահատուկ կերպով խոսում այս ամբողջ խմբի միջոցով, որոնք կոչվում են ականատեսներ և (2) Մատթայիան, չնայած որ նրա ծառայության մասին ոչինչ չգիտենք, պաշտոնապես դարձել էր Առաքյալների խմբի անդամ:

■ **«Հրեաստանի մարդիկ, և դուք՝ բոլորդ, որ Երուսաղեմում եք ապրում»** Մարդիկ, որոնց այստեղ դիմում է Պետրոսը, կարծես թե հհ. 7-11-ում ըստ ազգությունների նկարագրված ուխտագնացներից գատ մարդիկ են:

■ **«Թող ձեզ հայտնի՝ լինի սա, ու ականջ դրեք»** Այս երկուսն էլ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ են: Առաջինը ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ է և երկրորդը՝ ԱՈՐԻՍՏ ՉԵՉՈՔ (դեպոնենտ): Պետրոսը ուզում է նրանց աներկրա ուշադրություն:

Ըստ երևույթին այս արտահայտությունը Մեմական դարձվածք է: Այն երկու անգամ օգտագործվում է Պետրոսի քարոզները ներկայացնելիս (տես՝ 2:14; 4:10) և երկու անգամ էլ Պողոսինը (տես՝ 13:38; 28:28): Ղուկասը հեթանոս հասուն տարիքի նորադարձ էր: Մեմական դարձվածքի այս նշանը ցույց է տալիս, որ Ղուկասը չի հորինում Գործքում զետեղված քարոզները իր սեփական աստվածաբանական նպատակների համար, այլ հավատարմորեն ամփոփում է իր ունեցած աղբյուրները:

2:15 «սրանք /այս մարդիկ/ հարբած չեն» Պետրոսը, պատասխանելով հ.13-ում տրված հարցին, ասում է, որ Ուղղափառ Հրեայի համար շատ վաղ էր գինի խմելու համար: Սրան հետևում է Ելից 16:8-ում գրված ռաբբիական մեկնաբանությունը (տես՝ Ե.Մ. Բլայքլոք, Թինդեյլ ՆԿ-ի մեկնաբանության շարք, *Գործք*, էջ 58 /E. M. Blaiklock, Tyndale NT Commentary Series, Acts/):

■ **«Երրորդ ժամ»** Սա կլիներ առավոտյան ժամը 9:00: Դա Տանարում ամենօրյա առավոտյան գոհաբերության ժամն էր: Հրեաների համար այն դարձել էր հատուկ աղոթքի ժամ: «Երրորդ ժամ» արտահայտությունը հրեական ժամանակի ցուցանիշ էր: Նոր Կտակարանի հեղինակները (հատկապես Հովհաննեսը) կիրառում են թե՛ հրեական և թե՛ հռոմեական ժամանակային ցուցանիշներ:

2:16 «սա այն է, ինչ Հովել մարգարեի կողմից ասվեց» Այստեղ մեջբերված են Մեպտուզինտայից Հովել 2:28-32 խոսքը: Հնարավոր է Հիսուսն Ինքն էր այս մարգարեական խոսքերի իրականացման մեկնարկը տվողը՝ որպես արդեն իսկ կատարված խոսքերի (տես՝ Ղուկ.24:27,45):

2:17 «ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒՄ» Այս արտահայտությունը Ղուկասի Մեպտուզինտայի տեքստի հաջորդականություն է և չպետք է լիներ մեծատառերով: ՀԿ-ում այն վերաբերում էր վերջին ժամանակներին և Մեսիական Դարաշրջանի գալստյանը: Նոր Կտակարանում «վերջին օրեր» արտահայտությունը վերաբերում է հրեական երկու դարաշրջանների մասնակի համընկմանը: Նոր Դարաշրջանը սկսվեց Բեթլեհեմում Հիսուսի մարմնացումով և կտևի մինչև Նրա Երկրորդ Գալուստը: Մենք ապրում ենք Աստծո Արքայության «արդեն իսկի» և «դեռ ոչի» լարվածության միջև: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՅՍ ԵՎ ԳԱԼԻԹ ԴԱՐԱՇՐՉԱՆՆԵՐԸ

ՀԿ-ի մարգարեները նայում էին ապագային որպես ներկայի երկարացված տևողության: Նրանց համար ապագան կլինի այն ժամանակ, երբ աշխարհագրական Բարայելը կվերականգնվի: Սակայն նույնիսկ դա նրանք տեսնում էին որպես նոր օր (տես՝ Ես.65:17; 66:22): Աբրահամի սերունդների կողմից (անգամ գերությունից հետո էլ) Եհովայի շարունակ կամովի մերժված լինելը մի նոր հարացույց ձևավորեց հրեական միջկտակարանյան ապոկալիպտիկ գրականության մեջ (այսինքն՝ 1 Ենովք; 4 Եգրաս; 2 Բարուք): Այս գրքերը սկսեցին գատորոշել երկու դարաշրջանները՝ ներկայիս չար դարաշրջանը, որտեղ տիրում է Սատանան և գալիք արդարության դարաշրջանը, որտեղ տիրում է Հոգին, իսկ բացումը կատարել է Մեսիան (հաճախ որպես հզոր պատերազմող):

Աստվածաբանության այս դարում (Էսկատոլոգիայի) ակնհայտ զարգացումներ կան: Աստվածաբանները սա անվանում են «զարգացող հայտնություն»: ՆԿ-ը հաստատում է այս երկու դարաշրջանների նոր տիեզերական իրականությունը (այսինքն՝ ժամանակավոր դուալիզմը):

<u>Հիսուս</u>	<u>Պողոս</u>	<u>Եբրայեցիներ</u>
Մատթեոս 12:32	Հռոմեացիս 12:2	1:2
Մարկոս 10:30	1 Կորնթացիս 1:20; 2:6,8; 3:18	6:5
Ղուկաս 16:8	2 Կորնթացիս 4:4	11:3
Ղուկաս 18:30	Գաղատացիս 1:4	
Ղուկաս 20:34-35	Եփեսացիս 1:21; 2:2,7; 6:12	
	1 Տիմոթեոս 6:17	
	2 Տիմոթեոս 4:10	
	Տիտոս 2:12	

ՆԿ-ի աստվածաբանության մեջ այս երկու հրեական դարաշրջանները մասնակիորեն համընկնում են Մեսիայի երկու գալուստների անսպասելի և անտեսված կանխատեսումների պատճառով: Հիսուսի մարմնացումը իրականացրեց նոր դարաշրջանի հանդիսավոր բացման մասին ՀԿ-ի մարգարեությունների մեծ մասը (Դան.2:44-45): Սակայն, ՀԿ-ը նաև Նրա գալուստը տեսնում էր որպես Դատավոր և Հաղթող, մինչդեռ Նա առաջին անգամ եկավ որպես Չարչարվող Ծառա՝ (տես՝ Եսայի 53; Չաք.12:10), խոնարհ ու հեզ (տես՝ Չաք.9:9): Նա վերադառնալու է իշխանությամբ, այնպես ինչպես կանխատեսված է ՆԿ-ում (տես՝ Հայտնություն 19): Երկու փուլով այսպիսի իրականացումը պատճառ հանդիսացավ, որ Թագավորությունը լինի ներկայում (հանդիսավոր կերպով բացված), սակայն ապագայի մեջ (դեռևս ոչ լիակատար): Սա ՆԿ-ի լարվածությունն է՝ արդեն իսկ, բայց դեռ չստացված:

■ «**ասում է Աստված**» Բիզայի Կողեքսը, MS D, ունի *kurios* (Տեր) բառը: Արդյո՞ք *Kurios* բառը վերաբերում է ՀԿ-ի ԵՀՈՎԱՅԻՆ, թե Հիսուսին՝ Մեսիային: Անշուշտ հավանական է, որ *Theos* (Աստված) բառն օգտագործելով դպիրները փորձում են հստակեցնել խոսողին:

■ «**ԻՄ ՀՈԳՈՒՑ ԱՄԵՆ ՄԱՐՄՆԻ ՎՐԱ ՊԻՏԻ ԹԱՓԵՍ**» Ուշադրություն դարձրեք տիեզերական տարրը (տես՝ հ. 39): Բոլոր ավանդույթների հետ կապված խոչընդոտները Քրիստոսով հաղթահարված են (տես՝ 1 Կորնթ.12:13; Գաղ.3:28; Եփես.3:6; Կող.3:11): Չնայած որ Հովել 2-ում չի հիշատակվում հրեա և հեթանոս տարբերությունը, ուշադրություն դարձրեք 38 համարին, որը խտրականություն չի դնում: ԵՀՈՎԱՅԻ Իր հոգին տալիս է Իր պատկերով ստեղծված ամբողջ մարդկությանը (բառացի՝ «ամեն մարմնի»), որը արձանագրված է Ծննդ.1:26-27-ում:

■ «**ՈՐԳԻՆԵՐԸ ԵՎ ԶԵՐ ԴՈՒՍՏԵՐԸ ՊԻՏԻ ՄԱՐԳԱՐԵԱՆՆ... ԻՄ ԾԱՌԱՎՆԵՐԻ ՈՒ ԱՂԱԽԻՆԵՐԻ ՎՐԱ ԷԼ ԻՄ ՀՈԳՈՒՑ ՊԻՏԻ ԹԱՓԵՍ**» Սա կարող է լինել Թվոց 11:29-ի հատուկ իրականացումը: Ուշադրություն դարձրեք, որ աչառություն չկա սեռերի միջև:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԿԱՆԱՅՔ

- I. Հին Կտակարանը
- Ա. Մշակութային կանայք համարվում էին ունեցվածք՝
 - 1. Ներառված էին ունեցվածքի ցանկում (Ելից 20:17)
 - 2. Ստրուկ կանանց հանդեպ վերաբերմունքը (Ելից 21:7-11)

3. Կանանց ուխտերը անվավեր էին դարձվում սոցիալապես պատասխանատու տղամարդու կողմից (Ելից 30)
 4. Կանայք որպես պատերազմի ավար (2 Օր.20:10-14; 21:10-14)
- Բ. Իրականում գոյություն ունեւ հավասարություն`
1. Արու և էգ ստեղծված էին Աստծո պատկերով (Ծննդ.1:26-27)
 2. Պատվիր քո հորն ու մորը (Ելից 20:12; [2 Օր.5:16])
 3. Հարգանք մոր և հոր հանդեպ (Ղևտ.19:3; 20:9)
 4. Տղամարդիկ և կանայք կարող են լինել Ուխտավորներ (Թվոց 6:1-2)
 5. Դուստրերը ունեն ժառանգության իրավունք (Թվոց 27:1-11)
 6. Ուխտի ժողովրդի մի մասն են (2 Օր.29:10-12)
 7. Հոր և մոր խրատին լսելը (Առակ.1:8; 6:20)
 8. Եմանի (Ղևտացի ընտանիք) որդիները և դուստրերը Տաճարում փառաբանություն էին առաջնորդում (1 Մնաց.25:5-6)
 9. Նոր դարում որդիներն ու դուստրերը կմարգարեանան (Հովել 2:28-29)
- Գ. Առաջնորդ կանայք
1. Մովսեսի քույրը` Մարիամը, կոչվում էր մարգարեուհի (Ելից 15:20-21 նաև Միք.6:4)
 2. Աստծո կողմից շնորհալի կանայք գործում էին Խորանի համար (Ելից 35:25-26)
 3. Մի ամուսնացած կին Դեբորա անունով, նույնպես մարգարեուհի (տես` Դատ.4:4), առաջնորդեց բոլոր ցեղերին (Դատ.4:4-5; 5:7)
 4. Ողբան մարգարեուհի էր, որին Հովսիա Թագավորը խնդրեց կարդալ և բացատրել նոր գտնված «Օրենքի Գիրք», (4 Թագ.22:14; 2 Մնաց.34:22-27)
 5. Եսթեր թագուհին աստվածավախ կին էր, որը փրկեց Պարսկաստանի հրեաներին
- II. Նոր Կտակարանը
- Ա. Մշակութային առումով կանայք թե՛ հուդայականության մեջ և թե՛ հունա-հռոմեական աշխարհում (բացառությամբ Մակեդոնիայի) համարվում էին երկրորդ կարգի մարդիկ` ավելի քիչ իրավունքներով կամ արտոնություններով:
- Բ. Առաջնորդ կանայք
1. Եղիսաբեթն ու Մարիամը` Աստծո մոտ հավատքով կանայք էին (Ղուկ.1-2)
 2. Աննան` Տաճարում ծառայող մարգարեուհի (Ղուկ.2:36)
 3. Լիդիան` տնային եկեղեցու հավատացյալ և ծառայող (Գործք 16:14,40)
 4. Փիլիպպոսի չորս կույս աղջիկները մարգարեուհիներ էին (Գործք 21:8-9)
 5. Փիբեն` Կենքրայի եկեղեցու սարկավագուհին էր (Հռոմ.16:1)
 6. Պրիսկիլան` Պողոսի համագործակիցը և Ապողոսի ուսուցիչն էր (Գործք 18:26; Հռոմ.16:3)
 7. Մարիամը, Տրիֆինան, Տրիֆոզան, Պերսիդեն, Հուլիան` Ներեոսի քույրը, Պողոսի մի քանի գործակից կանայք էին(Հռոմ.16:6-16)
 8. Հունիա (KJV), հավանաբար մի կին-առաքյալ (Հռոմ.16:7)
 9. Եվոդիան և Սյունտիքը` Պողոսի գործակիցները (Փիլիպ.4:2-3)
- III. Ինչպե՛ս է մեր օրերի հավատացյալը հավասարակշռության բերում աստվածաշնչյան տարաբնույթ օրինակները
- Ա. Ինչպե՛ս կարող է մարդ տարբերել պատմական կամ մշակութային ճշմարտությունները, որոնք կիրառվում են միայն բնագրի համատեքստում, հավիտենական ճշմարտություններից, որոնք գործում են բոլոր եկեղեցիների, ցանկացած տարիքի հավատացյալների համար:
1. Մենք պետք է շատ լրջորեն մոտենանք բնագրի հեղինակի մտադրությանը: Աստվածաշունչը Աստծո Խոսքն է և հավատքի ու կյանքի համար միակ աղբյուրը:
 2. Մենք պետք է զբաղվենք հստակ երևացող պատմականորեն պայմանավորված ներշնչված տեքստերով:
 - ա. Իսրայելի (տես` Գործք 15; Գաղ.3) պաշտամունքները (այսինքն` ծեսերն ու պատարագները)
 - բ. Առաջին դարի Հուդայականությունը
 - գ. Պողոսի 1 Կորնթացիներում հստակ նշած պատմականորեն պայմանավորված հայտարարությունները
 - (1) Բազմաստված Հռոմի օրենսդրական համակարգը (1 Կորնթ.6)
 - (2) Ստրուկ մնալը (1 Կորնթ.7:20-24)
 - (3) Ամուրիները (1 Կորնթ.7:1-35)
 - (4) Կույսերը (1 Կորնթ.7:36-38)

(5) Կուռքերին կատարած զոհաբերությունները (1 Կորնթ.8; 10:23-33)

(6) Տերունական Ընթրիքին անպարկեշտ պահվածքը (1 Կորնթ.11)

3. Աստված լիարժեք և հստակ կերպով հայտնեց Իրեն հատուկ մշակույթի մեջ, հատուկ օր: Մենք պետք է լուրջ վերաբերվենք հայտնությանը, բայց ոչ դրա պատմական միջավայրի յուրաքանչյուր ոլորտին: Աստծո Խոսքը գրվել է մարդկային լեզվով, ուղղվել հատուկ մշակույթի մեջ ապրող մարդկանց, հատուկ ժամանակի մեջ:

Բ. Աստվածաշնչյան մեկնաբանությունը պետք է հետևի բնագրի հեղինակի մտադրությանը: Ի՞նչ էր նա ասում իր օրերի մարդկանց համար: Սա շատ կարևոր է ճիշտ մեկնաբանության համար: Բայց այնուհետև մենք պետք է այն կիրառենք մեր օրերի համար: Այսպիսով, մենք խնդիր ունենք կապված առաջնորդության մեջ գտնվող կանանց հետ (իրական մեկնաբանական խնդիրը հնարավոր է և սահմանում է այդ տերմինը: Հովվական ծառայությունից բացի արդյո՞ք գոյություն ունեին այլ ծառայություններ, որոնք համարվում էին առաջնորդական: Արդյո՞ք սարկավագուհիները կամ մարգարեուհիները համարվում էին առաջնորդներ): Միանգամայն պարզ է, որ Պողոսը 1 Կորնթ.14:34-35 և 1 Տիմ.2:9-15-ում հաստատում է, որ կանայք չպետք է ընդհանուր պաշտամունքը առաջնորդեն: Բայց ինչպե՞ս կիրառեն սա մեր օրերում: Ես չեմ ցանկանում, որ Պողոսի կամ իմ մշակույթը լռեցնեն Աստծո Խոսքը և կամքը: Հնարավոր է Պողոսի օրերում շատ սահմանափակ էին, սակայն մեր օրերում էլ չափազանց ազատ են: Ես ինձ այնքան անհարմար եմ զգում ասելու, որ Պողոսի խոսքերը և ուսմունքները պայմանական են, առաջին դարի՝ տեղական իրավիճակների հետ կապված ճշմարտություններ: Ո՞վ եմ ես, որ թույլ տամ իմ միտքը կամ իմ մշակույթը ժխտեն ներշնչված հեղինակին: Սակայն ինչպե՞ս վարվել, երբ կան կին առաջնորդների աստվածաշնչյան օրինակներ (նույնիսկ Պողոսի թղթերում. տես՝ Հռոմ.16): 1 Կորնթացիների 11-14-ում Պողոսի քննարկումը ընդհանուր պաշտամունքի վերաբերյալ այս բանի գեղեցիկ օրինակն է: 11:5-ում կարծես թե նա թույլ է տալիս կանանց գլուխները քողարկված քարոզել և աղոթել ընդհանուր պաշտամունքի ժամանակ, մինչդեռ 14:34-35-ում նա պահանջում է, որ լուռ մնան: Կային սարկավագուհիներ /սպասավորուհիներ/ (տես՝ Հռոմ.16:1) և մարգարեուհիներ (տես՝ Գործք 21:9): Այս տարբերությունն է, որ ազատություն է տալիս ինձ ճանաչելու Պողոսի մեկնաբանությունները (երբ կապված է կանանց սահմանափակումների հետ) սահմանափակված միայն առաջին դարի Կորնթոսի և Եփեսոսի համար: Երկու եկեղեցիներում էլ կային կանանց հետ կապված խնդիրներ, որոնք գործադրում էին իրենց նոր ձեռք բերած ազատությունը (տես՝ Բրյուս Ուիլսոն, *Պողոսի Կորնթոսից Հեռանալուց Հետո*, /Bruce Winter, *After Paul Left Corinth*), որը հավանաբար դժվարություններ էր առաջացրել եկեղեցու համար իրենց հասարակությանը Զրիստոսի համար ձեռք մեկնելու /ավետարանելու/: Նրանց ազատությունը պետք է սահմանափակվեր, որպեսզի ավետարանը ավելի արդյունավետ լիներ: Իմ օրերը Պողոսի օրերի ճիշտ հակառակն են: Իմ օրերում ավետարանը հնարավոր է սահմանափակվել, եթե արտահայտիչ, վարժ կանանց թույլ չտային ավետարանը վկայելու, առաջնորդելու: Ո՞րն է ընդհանուր պաշտամունքի գլխավոր նպատակը: Արդյո՞ք ավետարանչությունը և աշակերտությունը չէ: Կարո՞ղ են արդյոք կին առաջնորդները պատվել և հաճեցնել Աստծուն: Աստվածաշունչը որպես մի ամբողջություն կարծես թե ասում է «այո»: Ես ուզում եմ զիջել Պողոսին. իմ աստվածաբանությունը հիմնականում պողոսյան է: Ես չեմ ցանկանում չափից դուրս ժամանակակից ֆեմինիզմի ազդեցության կամ մանիպուլյացիայի ներքո գտնվել: Սակայն զգում եմ, որ եկեղեցին դանդաղել է արձագանքել աստվածաշնչյան ականհայտ ճշմարտություններին, ինչպես օրինակ ստրկության, ռասսիզմի, մոլեռանդության և սեռական խտրականության աննպատակահարմարությանը: Այն նաև դանդաղել է արձագանքել այս ժամանակակից աշխարհում կանանց չարաշահման խնդրին: Աստված Զրիստոսով ազատեց ստրուկներին և կանանց: Ես չեմ համարձակվում թույլ տալ, որ մշակութային երազավորմամբ տեքստը նրանց դարձյալ շղթայի: Մի բան ևս. ես որպես մեկնաբան գիտեմ, որ Կորնթոսի եկեղեցին շատ քայքայված վիճակում էր: Խարիզմատիկ պարզևները գնահատված և ի ցույց էին դրված: Հնարավոր է կանայք այս բանի մեջ էին մեղադրվում: Ես նաև հավատում եմ, որ Եփեսոսը սուտ վարդապետների ազդեցության տակ էր, որոնք առիթից օգտվելով կանանց օգտագործում էին որպես Եփեսոսի տնային եկեղեցիներում փոխարինող խոսնակների:

Գ. Հետագա ընթերցանության համար՝

Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով, Գորդոն Ֆիի և Դազ Ստյուարտ (*How to Read the Bible For All Its Worth*, by Gordon Fee and Doug Stuart (pp. 61-77)

Ավետարան և Հոգի. Նոր Կտակարանի Հերմենևտիկայի Խնդիրները, Գորդոն Ֆիի (*Gospel and Spirit: Issues in New Testament Hermeneutics* by Gordon Fee)
Աստվածաշնչի Խորթին Խոսքերը, Ուոլթեր Ս. Կայզեր, Փիթեր Հ. Դեյվիդզ, Ֆ.Ֆ. Բրյուս և Մանֆրեդ Թ. Բրենչ (*Hard Sayings of the Bible* by Walter C. Kaiser, Peter H. Davids, F. F. Bruce, and Manfred T. Branch (pp. 613-616; 665-667):

■ **«մարգարեություն»** Առնվազն երկու կերպով կարելի է հասկանալ այս տերմինը. (1) Կորնթացիներին ուղղված նամակում այս տերմինը նշանակում է հոշակել կամ վկայել ավետարանը (տես՝ 14:1; Գործք 2:17) (2) Գործք Առաքելոցը նշում է մարգարեների (տես՝ 12:27; 13:1; 15:32; 22:10; նույնիսկ մարգարեուհիների՝ 21:9), որոնք կանխատեսում էին ապագան (տես՝ Հատուկ Թեմա, 11:27):

Խնդիրն այն է, թե ինչպես է ՆԿ-ի մարգարեության պարզևը կապված ՀԿ-ի մարգարեների հետ: ՀԿ-ում մարգարեները Սուրբ Գրքի հեղինակներն են: ՆԿ-ում այս գործը տրվեց առաջին Տասներկու Առաքյալներին և նրանց օգնականներին: Ինչպես «առաքյալ» տերմինը պահպանվում է որպես շարունակվող պարզև (տես՝ Եփես.4:11), սակայն Տասներկուսի մահից հետո փոխված պարտականություններով, այնպես էլ մարգարեի պաշտոնը: Ներշնչանքը դադարել է, այլևս չկա ներշնչանքով գրվող Սուրբ Գիրք (տես՝ Հուդա 3, 20): Նոր Կտակարանի մարգարեների առաջնային գործն էր ավետարանը քարոզելը, մինչդեռ մեկ այլ գործ էլ, հնարավորինս ինչպես կիրառել ՆԿ-ի ճշմարտությունները ներկայիս իրավիճակների և կարիքների համար:

■ **«ԵՐԻՏԱՍԱՐԳՆԵՐԸ... ԾԵՐԵՐԸ»** Նկատեք, որ տարիքային տարբերություն չկա:

2:18 «ՆՈՒՅՆԻՍԿ ԻՄ ԾԱՌԱՎՆԵՐԻ ՎՐԱ» Նկատեք, որ չկա սոցիալ-տնտեսական խտրականություն: Պետրոսը ավելացրել է «մարգարեանալ» տերմինը Հովելի մարգարեությանը: Այն չկա Մագորեթական երբայերեն տեքստում կամ հունարեն Սեպտուագինտայում, այլ միայն ենթադրվում է Գործք 2:17-ից:

Ինչպես Ղուկաս 24-ը (հհ. 3,6,12,17,32,36,40,51) ունի մի քանի տեքստային տարբերակներ, այնպես էլ Գործքը (այսինքն՝ 2:11,18,37,44): Այս տարբերակները հաճախ կապ ունեն ավելի համառոտ տեքստի հետ՝ զետեղված MS D-ում (Բիզայր՝ 5րդ դարից) և մի քանի հնագույն լատիներեն տարբերակներում: Սովորաբար հունարեն ձեռագրերի այս արևմտյան ընտանիքը ավելացնում է արտահայտություններ, սակայն Ղուկասում, Գործքում այն ունի ավելի հակիրճ գրառումներ: Անգլերեն թարգմանություններից շատերը պարունակում են բոլոր Ալեքսանդրիական ընտանիքի ձեռագրերի ավելի երկար տարբերակը:

Տե՛ս, Գործքի Ներածությունը՝ «Բացման Խոսք» Ե:

2:19-20 Սա ակնհայտ ապոկալիպտիկ լեզու է, քանի որ Պետրոսը հայտարարում է, որ այն կատարվեց, մինչդեռ այս առանձնահատուկ տարերային երևույթները տեղի չէին ունեցել, բացառությամբ խավարումից, որը տեղի ունեցավ երբ Հիսուսը խաչի վրա էր: Այն խոսում է այլաբանական լեզվով՝ Արարչի և Դատավորի գալստյան մասին: ՀԿ-ում Նրա գալուստը կարող էր լինել օրհնության կամ դատաստանի համար: Ամբողջ ստեղծագործությունը ցնցվում է Նրա մոտենալուց (տես՝ Ես.13:6 և Ամոս 5:18-20): ՀԿ-ի մարգարեության մեջ ակնհայտ տարբերություն չկա Մարմնավորման (առաջին գալստյան) և *Parousia* (երկրորդ գալստյան) միջև: Հրեաները ակնկալում էին միայն մեկ գալուստ և այն էլ հզոր Դատավորի՝ Ազատագրողի: Ապոկալիպտիկ լեզվին վերաբերող շատ օգտակար գիրք է Դ. Բրենթ Սենդի, *Մաներ և Մանգաղներ. Մարգարեական և Ապոկալիպտիկ Լեզվի վերանայում* (D. Brent Sandy, *Plowshares and Pruning Hooks: Rethinking Prophetic and Apocalyptic Language*):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊՈԿԱԼԻՊՏԻԿ /կամ հայտնության/ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
 (այս հատուկ թեման վերցված է Հայտնության գրքի իմ մեկնաբանությունից)

Հայտնությունը բացառապես հրեական գրական՝ ապոկալիպտիկ ժանր է: Այն հաճախ օգտագործվել է լարված ժամանակներում, արտահայտելու այն համոզմունքը, որ Աստված է տիրում պատմության վրա և Իր ժողովրդին կազատագրի: Այսպիսի գրականությանը բնորոշ է.

1. Աստծո տիեզերական Ամենակալության ուժգին զգացողությունը
2. Բարու և չարի, այս դարի և գալիք դարի միջև պայքարը (դուալիզմ)
3. Գաղտնի կողավորված բառերի կիրառությունը (սովորաբար ՀԿ-ի գրքերից կամ միջկտակարանային հրեական ապոկալիպտիկ գրականությունից)
4. Գույների, թվերի, կենդանիների, երբեմն կենդանակերպ մարդկանց կիրառությունը

5. Հրեշտակային միջամտության կիրառությունը՝ տեսիլքների և երագների միջոցով, սակայն հրեշտակների միջոցով
6. Հիմնականում կենտրոնանում է վերջին ժամանակների վրա (նոր դարաշրջանի)
7. Մի շարք ֆիքսված խորհրդապատկերների կիրառությունը, ոչ թե իրականությունը, որպեսզի փոխանցի վերջին ժամանակին վերաբերող պատգամը
8. Այս տեսակժանրին վերաբերող մի քանի օրինակներ.
 - ա. Հին Կտակարան
 - (1) Եսայի 24-27, 56-66
 - (2) Եզեկիել 37-48
 - (3) Դանիել 7-12
 - (4) Հովել 2:28-3:21
 - (5) Չաքարիա 1-6, 12-14
 - բ. Նոր Կտակարան
 - (1) Մատթեոս 24, Մարկոս 13, Դուկաս 21 և 1 Կորնթացիս 15 (որոշ առումներով)
 - (2) 2 Թեսաղոնիկեցիներին 2 (հիմնականում)
 - (3) Հայտնություն (4-22 գլուխները)
 - գ. Անկանոն գրքերը (վերցված Գ. Ս. Ռասելից, *Հրեական Ապոկալիպտիկի Մեթոդը և Պատգամը*, էջ.37-38, D. S. Russell, *The Method and Message of Jewish Apocalyptic*)
 - (1) 1 Ենովք, 2 Ենովք (Ենովքի գաղտնիքները)
 - (2) Տոների Գիրքը
 - (3) The Sibylline Oracles III, IV, V
 - (4) Տասներկու Նահապետների Կտակարանը
 - (5) Սողոմոնի Սաղմոսները
 - (6) Մովսեսի Ենթադրությունները
 - (7) Եսայու Նահատակությունը
 - (8) Մովսեսի Ապոկալիպսիսը (Ադամի և Եվայի կյանքը)
 - (9) Աբրահամի Ապոկալիպսիսը
 - (10) Աբրահամի Կտակարանը
 - (11) II Եզրաս (IV Եզրաս)
 - (12) Բարուք II, III
9. Այս ժանրում գոյություն ունի երկակիության զգացում: Այն նայում է իրականությանը որպես դուալիզմների, հակադրությունների կամ լարվածությունների շարքի (շատ տարածված է Հովհաննեսի թղթերում) հետևյալ երևույթների միջև.
 - ա. Երկինք – երկիր
 - բ. Չար դարաշրջան (չար մարդիկ և չար հրեշտակներ) – արդարության նոր դարաշրջան (աստվածավախ մարդիկ և աստվածավախ հրեշտակներ)
 - գ. Ներկայիս իրողությունը – ապագայի իրողությունը

Այս ամենը տանում է Աստծո կողմից ծրագրած վախճանին: Սա այն աշխարհը չի, որն Աստված մտադրված ստեղծել էր, սակայն Նա շարունակում է իրականացնել, գործադրել և նախագծել Իր կամքը՝ Եդեմի Պարտեզում ունեցած մտերիմ հարաբերության վերականգնման համար: Քրիստոսի պատմությունը Աստծո ծրագրի ջրբաժանն է, սակայն երկու գալուստները առաջացրել են ներկայիս դուալիզմ (երկակիություն):

2:20 «Տիրոջ Մեծ և Փառավոր /երևելի/ Օրը» «Փառավոր» տերմինը *epiphaneia* բառի միևնույն արմատից է, որը հաճախ օգտագործվում է Հիսուսի Երկրորդ Գալստյան համար (տես՝ 1 Տիմ.6:14; 2 Տիմ.4:1; Տիտ.2:13): Տե՛ս հետևյալ Հասուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐՈՐԴ ԳԱՆՈՒՄՆԸ

Բառացի սա նշանակում է «մինչև *Parousia*» և օգտագործվում էր արքունական այցելության համար: Երկրորդ Գալստյան համար կիրառվող ՆԿ-յան մյուս տերմիններն են՝ (1) *epiphanea*, «դեմ առ դեմ հանդիպում» (2) *apokalupis*, «հանդիսավոր կերպով բացել» (3) «Տիրոջ Օրը» և այս արտահայտության տարբեր ձևերը:

ՆԿ որպես ամբողջություն գրված է ՀԿ աշխարհայացքի սահմաններում, որը հայտարարում էր.

1. ներկայի չարիքը՝ ապստամբող դարաշրջանը
2. արդարության գալիք նոր դարաշրջանը
3. սա իրականանալու էր Հոգու միջնորդությամբ՝ Մեսիայի (Օծյալի) գործի շնորհիվ

Չարգացող հայտնության աստվածաբանական ենթադրությունը պահանջվում է, քանի որ ՆԿ-ի հեղինակները չնչին փոփոխության են ենթարկում Իսրայելի ակնկալիքը: Մեսիայի ռազմական, ազգայնական նպատակով (Իսրայել) գալստյան փոխարեն կան երկու գալուստներ: Առաջին գալուստը աստվածության մարմնացումն էր Հիսուս Նագովրեցու ծննդյան տեսքով: Նա եկավ որպես ոչ ռազմական, ոչ դատական՝ Եսայի 53-ի «չարչարվող ծառան», ինչպես նաև Չաբ.9:9-ի ավանակի հեզ հեծյալը (ոչ թե պատերազմ գնացող նժույգի կամ արքայական ջորու): Առաջին գալուստը Նոր Մեսիական Դարաշրջանի՝ երկրի վրա Աստծո Արքայության հանդիսավոր բացումն էր: Ինչ-որ իմաստով Արքայությունն այստեղ է, սակայն իհարկե մյուս իմաստով՝ դեռ հեռու: Մեսիայի այս երկու գալուստների միջև լարվածությունն այն է, որ ինչ-որ տեղ հրեական երկու դարաշրջանների համընկում է տեղի ունեցել, որը ըստ ՀԿ-ի անտեսանելի է կամ առնվազն անհստակ: Իրականում այս երկու գալուստները շեշտադրում են ամբողջ մարդկությանը փրկելու ՅԱՀՎԵԻ նվիրումը (տես՝ Ծննդ.3:15; 12:3; Եից 19:5 և մարգարեների քարոզները՝ հատկապես Եսայու և Հովնանի):

Եկեղեցին չի սպասում ՀԿ-ի մարգարեությունների իրականացմանը, քանի որ հիմնական մարգարեությունները վերաբերում են առաջին գալստյանը (տես՝ *Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր Ամբողջ Իմաստով*, էջ.165-166): Իսկ հավատացյալները սպասում են հարուցյալ Արքաների Արքայի և Տերերի Տիրոջ փառավոր գալստյանը, երկրի վրա, ինչպես որ երկնքում է, արդարության նոր դարաշրջանի սպասվող պատմական իրադարձությանը (տես՝ Մատթ.6:10): ՀԿ-ում ներկայացված դեպքերը ոչ թե հավաստի չեն, այլ անավարտ են: Նա վերադառնալու է ճիշտ այնպես, ինչպես մարգարեներն են կանխատեսել՝ ՅԱՀՎԵԻ գործությամբ և իշխանությամբ:

Երկրորդ Գալուստը աստվածաշնչյան տերմին չէ, սակայն հենց այս հասկացությունը ձևավորում է ամբողջ ՆԿ-ի աշխարհայացքը և կմախքը: Աստված ամեն ինչ իր ճիշտ տեղում կդնի: Աստծո և Իր պատկերով ստեղծված մարդկության միջև փոխհարաբերությունը կվերականգնվի: Չարը կդատվի և կհեռացվի: Աստծո նպատակները չեն կարող և չեն ձախողվի:

2:21 «ԲՈՒՈՐԸ» /հայերենում՝ «ով որ»/ (տես՝ հհ.17 և 39): Հիսուսը մահացավ ամբողջ աշխարհի մեղքի՝ մեղքերի համար (տես՝ Հովհ.1:12; 3:16; 4:42; 1 Տիմ.2:4; Տիտ.2:11; 2 Պետ.3:9; 1 Հովհ.2:1; 4:14): Նկատել, որ Սուրբ Հոգին թափվեց ամբողջ մարդկության վրա (տես՝ հ.17):

■ **«ՈՎ ԿԱՆՉԻ»** Սա ԱՈՐԻՍՏ ՉԵԶՈՔ ՍՏՈՐԱԳՎՍԱԿԱՆ է: Մարդու արձագանքը Աստծո փրկության ծրագրի մի մասն է (տես՝ Հովել 2:32; Հովհ.1:12; 3:16 և Հռոմ.10:9-13): Կանչված են անհատ մարդիկ (տես՝ 2:39) ապաշխարելու (տես՝ 2:38) և հավատալու Ավետարանին, և Քրիստոսի միջոցով Աստծո հետ անձնական փոխհարաբերության մեջ մտնելու (տես՝ 3:16,19; 20:21; Մարկ.1:15): Հիսուսը մահացավ ամբողջ աշխարհի համար. առեղծվածն այն է, թե ինչու ոմանք արձագանքում են Հոգու հետամուտ լինելուն (տես՝ Հովհ.6:44,65), իսկ ոմանք՝ ոչ (տես՝ 2 Կորնթ.4:4):

■ **«ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆԸ»** Սա վերաբերում է Հիսուսի բնավորությանը կամ Նրա մասին ուսմունքներին: Այն պարունակում է թե՛ անձնական և թե՛ վարդապետական տարրեր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՏԻՐՈՋ ԱՆՈՒՆԸ

Եկեղեցում սա հանդիսանում էր Երրորդության Աստծո ակտիվ գործության և անձնական ներկայության համար ՆԿ-յան տարածված արտահայտություն: Այն կախարդական բանաձև չէր, այլ Աստծո բնավորության խնդրանք:

Հանախ այս արտահայտությունը վերաբերում է Հիսուսին որպես Տիրոջ (տես՝ Փիլ.2:11)

1. Մկրտության ժամանակ Հիսուսի հանդեպ մարդու հավատքի դավանություն կատարելիս (տես՝ Հռոմ.10:9-13; Գործք 2:38; 8:12,16; 10:48; 19:5; 22:16; 1 Կորնթ.1:13,15; Հակ.2:7)
2. Դևեր քշելիս (տես՝ Մատթ.7:22; Մարկ.9:38; Ղուկ.9:49; 10:17; Գործք 19:13)
3. Բժշկության ժամանակ (տես՝ Գործք 3:6,16; 4:10; 9:34; Հակ.5:14)
4. Ծառայություն կատարելիս (տես՝ Մատթ.10:42; 18:5; Ղուկ.9:48)
5. Եկեղեցական կարգուկանոնի ժամանակ (տես՝ Մատթ.18:15-20)
6. Հեթանոսներին քարոզելիս (տես՝ Ղուկ.24:47; Գործք 9:15; 15:17; Հռոմ.1:5)
7. Աղոթքի ժամանակ (տես՝ Հովհ.14:13-14; 15:2,16; 16:23; 1 Կորնթ.1:2)

8. Քրիստոնեության դիմելաձև (Գործք 26:9; 1 Կորնթ.1:10; 2 Տիմ.2:19; Հակ.2:7; 1 Պետ.4:14)

Որպես քարոզիչներ, ծառայողներ, օգնականներ, բժշկողներ, դևեր քշողներ և այլ ծառայությունների կատարելիս մենք ամեն ինչ անում ենք Նրա բնավորության, գործության, մատակարարման օգնությամբ՝ Նրա անունով:

■ **«ԿՓՐԿՎԻ»** Այս կոնտեքստում սա վերաբերում է հոգևոր փրկությանը, մինչև Հովելում այն հավանաբար նշանակում էր ֆիզիկական ազատագրում Աստծո բարկությունից (տես՝ հ.40): «Փրկվել» տերմինը ՀԿ-ում կիրառվում է ֆիզիկական ազատագրման համար (տես՝ Մատթ.9:22; Մարկ.6:56; Հակ.5:14,20), սակայն ՆԿ-ում օգտագործվում է փոխաբերաբար՝ Աստծո բարկությունից հոգևոր փրկության կամ ազատագրման համար (օր.՝ Հակ.1:21; 2:14; 4:12): Աստծո սիրտը բարախում է Իր պատկերով ստեղծված բոլոր տղամարդկանց և կանանց փրկության համար (տես՝ Ծննդ.1:26-27), որոնք ստեղծվել են Իր հետ հաղորդակցվելու նպատակով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ: 2:22-28

²²Ով Իսրայելի մարդիկ, լսեցե՛ք այս խոսքերը. Հիսուս Նազովրեցուն՝ այն մարդուն, Ում Աստված ձեզ ներկայացրեց գործությամբ, հրաշքներով ու նշաններով, որ Աստված Նրա ձեռքով կատարեց ձեր մեջ, ինչպես դուք էլ գիտեք, ²³Ում մատնված լինելով Աստծո սահմանած խորհրդով և կանխագիտությամբ, դուք վերցրիք և անօրենների ձեռքով խաչեցիք ու սպանեցիք. ²⁴«Աստված Նրան հարուցանեց՝ քանդելով մահվան կապանքները, քանի որ անկարելի էր, որ մահը պահեր Նրան»: ²⁵Որովհետև Դավիթը Նրա մասին ասում է. «ԵՍ ՇԱՐՈՒՆԱԿ ՏԻՐՈՉԸ ԻՄ ԱՌՁԵՎ ՏԵՄԱ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՆԱ ԻՄ ԱՁ ԿՈՂՍՈՒՄ Է, ՈՐՊԵՍՉԻ ՉՍԱՍԱՆՎԵՄ: ²⁶ԱՅԳՊԱՏՃԱՌՈՎ ԷԼ ԻՄ ՍԻՐՏԸ ՈՒՐԱԽԱՍՏՎ, ՈՒ ԻՄ ԼԵՉՈՒՆ ՑՆԾԱՑ, ԻՄ ՄԱՐՄԻՆԸ ՆՈՒՅՆՊԵՍ, ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՄԲ ՊԻՏԻ ԱՊՐԻ, ²⁷ՔԱՆԻ ՈՐ ԴՈՒ ԻՄ ԱՆՁԸ ԳԵՐԵՉՄԱՆԻ ՄԵՉ ՉԵՍ ԹՈՂՆԻ, ՈՉ ԷԼ ՔՈ ՍՐԲԻՆ ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԵՄՆԵԼ ԿՏԱՍ: ²⁸ԻՆՉ ՃԱՆԱԶԵԼ ՏՎԻՐ ԿԵՆԱՑ ՃԱՄՓԱՆԵՐԸ, ՔՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՄԲ ՊԻՏԻ ԼՅՆԵՍ ԻՆՉ»:

2:22 «Իսրայելի մարդիկ» Այստեղ հավաքված լսողները Հիսուսի երկրային կյանքի վերջին շաբաթվա ակնատեսներ էին: Նրանք Պետրոսի խոսքերի անմիջական գիտությունն ունեցողներն էին: Եվ նրանք, ովքեր ունեին հոգևոր հասկացողություն, արձագանքեցին ավետարանին՝ առաջին քարոզից մոտ երեք հազար հոգի (տես՝ հ.41):

■ **«լսեցե՛ք»** Սա ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է: Սուրբ Հոգու ֆիզիկական դրսևորումը գրավեց նրանց ուշադրությունը. այժմ Ավետարանի պատգամի հերթն էր:

■ **«Հիսուս Նազովրեցին»** Հանախ ենթադրվում է, որ այս խոսքը «Հիսուսը Նազարեթից» արտահայտության գուցա հեռավորն է: Սակայն սա ավելի շուտ մի անսովոր կերպ է այդպես արտահայտելու համար: Պարզապես հնարավոր է, որ այս արտահայտությունը արտացոլում է Մեսիական տիտղոսը՝ «Ընձյուղը» (BDB 666, տես՝ Եսայի 4:2; 6:13; 11:1,10 14:19; 53:2; Երեմ.23:5; 33:15-16; Չաք.3:8; 6:12-13): «Ընձյուղ» բառի եբրայերեն տերմինը *nezer* է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՍՈՒՄ ՆԱՉՈՎՐԵՑԻ

Գոյություն ունեն մի քանի հունարեն տերմիններ, որոնք ՆԿ կիրառում է Հիսուսի մասին խոսելիս:

Ա. ՆԿ տերմինները

1. Նազարեթ՝ քաղաք Գալիլիայում (տես՝ Դուկ.1:26; 2:4,39,51; 4:16; Գործք 10:38): Այս քաղաքը ժամանակակից աղբյուրներում չի նշվում, սակայն գտնվել է ավելի ուշ արձանագրություններում:
Այն, որ Հիսուսը Նազարեթից էր, հանդիսատեսություն չէր (տես՝ Հովհ.1:46). Հիսուսի խաչի վրա փակցված ցուցանակը, որի վրա գրված էր այս տեղանքի անունը՝ հրեական արհամարհանքի նշան էր :
2. *Nazarēnos* – թվում է, որ նույնպես վերաբերում է աշխարհագրական տեղանքի (տես՝ Դուկ.4:34; 24:19):
3. *Nazōraios* – հնարավոր է վերաբերում է քաղաքի, սակայն կարող է նաև լինել «Ընձյուղ» տերմինի եբրայերեն Մեսիական բառախաղ (*netzer*, BDB 666 [և դրա հետ կապված

տերմինները], տես՝ Եսայի 4:2; 11:1; 53:2; Երեմ.23:5 [BDB 855]; 33:15; Չաք.3:8; 6:12; ՆԿ-ում՝ Հայտն.22:16): Ղուկասը այս բառը օգտագործում է Հիսուսի համար 18:37 2:22, 3:6; 4:10; 6:14; 22:8; 24:5; 26:9:

4. Կապված #3-ի հետ՝ *nāzir* (BDB 634), որը նշանակում է «ուխտի միջոցով նվիրաբերված մեկը»:

Բ. ՆԿ-ից դուրս պատմական կիրառությունները:

1. Այն մատնանշում էր հրեական (նախաքրիստոնեական) հերետիկոսների խմբի (արամերեն՝ *nāsōrayyā*):
2. Այն կիրառվում էր Քրիստոնեական շրջանակներում՝ նկարագրելու Քրիստոսին հավատացողներին (տես՝ Գործք.24:5,14; 28:22, *nosri*):
3. Այն դարձավ սովորական տերմին, որը մատնանշում էր սիրիական (արամերեն լեզվով խոսող) եկեղեցիների հավատացյալներին: «Քրիստոնյա» բառը կիրառվում էր հունական եկեղեցիներում, որը մատնանշում էր հավատացյալներին:
4. Երուսաղեմի անկումից որոշ ժամանակ անց Չամնիայում Փարիսեցիները վերակազմավորվեցին և եկեղեցու ու ժողովարանների միջև հրահրեցին պաշտոնական բաժանում: Քրիստոնյաների դեմ մի տեսակ նզովքի բանաձևի օրինակ է գտնվել «Տասնութերորդ Օրհներգ»-ի խոսքերում՝ *Berakoth 28b-29a*, որը հավատացյալներին կոչում է «Նազովրեցիներ»:
«Թող որ Նազովրեցիները և հերետիկոսները անհետանան մի ակնթարթում. նրանք կջնջվեն կյանքի գրքից և չեն գրվի հավատարիմների հետ»:
5. Այն կիրառվել է Justin Martyr-ի կողմից, *Dial.* 126:1, որը օգտագործում է Եսայի մարգարեի Հիսուսի համար կիրառած *netzer* բառը:

Գ. Հեղինակի կարծիքը

Ինձ զարմացնում է այս տերմինի այսքան տարբեր հեզումները, չնայած գիտեմ, որ աս նորություն չէ՝ ՀԿ-ում, ինչպես օրինակ «Հետու» անունը եբրայերենում ունի մի քանի տարբեր հեզումներ: Հետևյալ կետերը պատճառ են հանդիսանում, որպեսզի կասկածեմ այս բառի ստույգ նշանակության հարցում.

1. Մեսիական «Ընձյուղ» (*netzer*) բառի սերտ կապի կամ նմանատիպ *nāzir* (ուխտի միջոցով նվիրաբերված) տերմինի
2. Գալիլիա բառի բացասական լրացուցիչ իմաստը
3. Գալիլիայում Նազարեթ քաղաքի մասին քիչ կամ ընդհանրապես բացակայող ժամանակակից փաստարկներ
4. Այն, որ արտաբերվում է մի դեպքերում՝ էսկատոլոգիական նշանակությամբ (վերջին ժամանակների վերաբերյալ. այսինքն՝ «Դու եկել ես կործանելու՞ մեզ»)

Այս բառի վերաբերյալ լիարժեք մատենագրական ուսումնասիրության համար նայեք Colin Brown (խմբ.) *New International Dictionary of New Testament Theology* կամ E. Brown *Birth* (Քոլին Բրաուն՝ Նոր Կտակարանի Աստիճաքային Նոր Միջազգային Բառարան կամ E. Բրաուն՝ *Ծնունդ*):

■ «մի մարդ, որն Աստծո կողմից ներկայացվեց ձեզ» /հայ.՝ «Ում Աստված ձեզ ներկայացրեց»/ Հիսուսը անկասկած մարդ է (այսինքն՝ հ. 23; Հռոմ.1:3), ինչպես նաև Աստված (տես՝ 1 Հովհ.4:1-3): Սա ՎԱԳԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐՔԱՅ է: Այս տերմինը նշանակում է «ապացույցով ցուցադրված»: Աստված հստակ և պարբերաբար հայտնում էր Իրեն Հիսուսի խոսքերի, գործերի և ապրելակերպի մեջ: Երուսաղեմում գտնվող այս ունկնդիրները տեսել և լսել էին դրանք:

■ «գորությամբ, հրաշքներով ու նշաններով» Այս ունկնդիրները ականատեսներն էին բոլոր այն բաների, որ Հիսուսը կատարել էր Իր կյանքի վերջին շաբաթվա ընթացքում Երուսաղեմ քաղաքում:

«Հրաշքներ» (*teras*) տերմինը նշանակում էր անսովոր նշան, որը սովորաբար տեղի է ունենում երկնքում, ինչպես օրինակ հհ.19-20:

«Նշաններ» (*sēmeion*) տերմինը մատնանշում է հատուկ իրադարձություն, որը փոխանցում է իմաստ կամ կարևորություն: Սա Հովհաննեսի Ավետարանում բանալի տերմին է (յոթ հատուկ նշանները, տես՝ 2:1-11; 4:46-54; 5:1-18; 6:1-15, 16-21; 9:1-41; 11:1-57): Նշանները միշտ չէ, որ երևում էին դրական լույսի ներքո (տես՝ Հովհ.2:18; 4:48; 6:2): Այստեղ այն կիրառվում է որպես գործության դրսևորման մի շարք, որը հայտնում է, որ Հոգու նոր դարաշրջանը սկսվել է:

Հետաքրքիր է, որ Պետրոսը ընդհանրապես ժամանակ չի տրամադրում իր առաջին քարոզի մեջ (գոնե Գործք 2-ի ամփոփման մեջ) խոսելու Հիսուսի կյանքի վաղ շրջանի և ուսմունքների մասին:

Հիմնական շեշտադրումներն էին ՀԿ-ի մարգարեության իրականացումը, Նրա համար կանխասված զոհաբերվող մահը և Նրա փառավոր հարությունը:

2:23 «Այս մարդը» /հայերենում՝ «Ում»/ Սա հնարավոր է արհամարհանք արտահայտող դարձվածք է (տես՝ 5:28; 6:13; Ղուկ.23:14; 18:29), սակայն Գործք 23:9-ում և 20:31-32-ում այն բացասական դարձվածք չէ: Կրկին շեշտադրվում է Հիսուսի մարդեղությունը (տես՝ հ.22):

■ **«մատնված լինելով»** Այս տերմինը (*ekdotos*) ՆԿ-ում կարելի է գտնել միայն այստեղ:

■	
NASB	«նախասահմանված ծրագրով»
NKJV	«սահմանված խորհրդով»
NRSV	«որոշված ծրագրով»
TEV	«Աստծո սեփական ծրագրով»
NJB	«մտադրված նպատակով»

Սա *horizō* տերմինն է իր ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ տեսքով: Դրա հիմնական նշանակությունն է որոշել, նշանակել կամ սահմանել: ՀԿ-ում այն կիրառվում է հողատարածքի շուրջ կամ ցանկությունների համար սահմաններ դնելու իմաստով: Ղուկասը այն հաճախ է օգտագործում (տես՝ Ղուկ.22:22; Գործք 2:23; 10:42; 11:29; 17:26,31): Իսաչը Աստծո համար անակնկալ չէր, այլ միշտ եղել է Իր ընտրած մեխանիզմը (այսինքն՝ Ղևտ.1-7-ում նշված զոհաբերության համակարգը), որպեսզի ապստամբ մարդկությանը հասցնի փրկությունը (տես՝ Ծննդ.3:15; Ես.53:10; Մարկ.10:45; 2 Կորնթ.5:21):

Հիսուսի մահը պատահական չէր: Այն Աստծո հավիտենական, փրկարար ծրագիրն էր (տես՝ Ղուկ.22:22; Գործք 3:18; 4:28; 13:29; 26:22-23): Հիսուսը եկավ մեռնելու համար (տես՝ Մարկ.10:45): Իսաչը պատահականություն չէր:

■ **«Աստծո կանխագիտությամբ/նախասահմանությամբ/»** Սա *prognosis* (նախորոք իմանալ) տերմինն է, որը կիրառվել է միայն այստեղ և 1 Պետ.1:2-ում: Այն գաղափարը, որ Աստված գիտի մարդկության ամբողջ պատմությունը ինքնին դժվար է մեզ համար համակերպել մարդու ազատ կամքի հետ: Աստված հավիտենական, հոգևոր էակ է, որը սահմանափակված չէ ժամանակի հաջորդականությամբ: Չնայած որ Նա՝ է վերահսկում և ծրագրում մարդկության պատմությունը, մարդիկ են պատասխանատու իրենց շարժառիթների և գործողությունների համար: Նախասահմանությունը չի ազդում Աստծո սիրո և ընտրության վրա: Եթե այդպես լիներ, ապա ապագայում մարդու ջանքերն ու արժանիքները կլինեին պայմանական: Աստված ամենակալ է և Նա ընտրել է, որ Իր Ուխտի հետևորդները ունենան Իրեն արձագանքելու մեջ ընտրության ազատություն (տես՝ Հռոմ.8:29; 1 Պետ.1:20):

Աստվածաբանության այս բնագավառում գոյություն ունի երկու ծայրահեղություն. (1) ազատությունը, որը շատ է շեշտադրվում. ոմանք ասում են, որ Աստված չգիտի մարդկանց ապագայում կատարած ընտրությունները կամ գործողությունները (Բաց Թեիզմ, որը Ընթացիկ Մտքի փիլիսոփայական տևողությունն է) և (2) Աստծո ամենակալությունը, որը շատ է շեշտադրվում, որից հետևություն են անում, որ Աստված է ընտրում ոմանց երկինք և ոմանց էլ դժողք ուղարկելը (երկկողմանի Կալվինիզմ՝ *supralapsarianism*): Ես նախընտրում եմ Մադոնո 139:

■ **«դուք»** Պետրոսը մեղադրում է Հիսուսի մահվան և երկերեսանիության համար Երուսաղեմում գտնվող այս ունկնդիրներին (տես՝ 3:13-15; 4:10; 5:30; 10:39; 13:27, 28): Այս մարդիկ չէին կազմում այն բազմության մի մասը, որ պահանջում էր Հիսուսի խաչելությունը, նրանք Սանեդրիսի անդամներ չէին, որոնք բերեցին Նրան Պիղատոսի մոտ, նրանք հռոմեացի պաշտոնյաներ կամ զինվորներ չէին, որոնք խաչեցին Նրան, սակայն նրանք պատասխանատու են՝ ինչպես և մենք: Մարդկության մեղքը և ապստամբությունը Նրա մահվան պատճառը հանդիսացավ:

■ **«խաչին գամեցիք»** /հայերեն՝ **խաչեցիք**/ Բառացիորեն սա նշանակում է «ամրացնել» (*prospēgnumi*): Այս բառը ՆԿ-ում միայն այստեղ է օգտագործվում: Այն վերաբերում է թե՛ խաչին գամելուն և թե՛ կապելուն (ամրացնելուն): 5:30-ում այս նույն գործընթացը նկարագրվում է որպես «փայտից կախել»: Հրեա առաջնորդները չէին կամենում, որ Հիսուսին քարկոծեին հայհոյության համար, ինչպես հետագայում Ստեփանոսի հետ վարվեցին (տես՝ Գործք 7), այլ կամենում էին, որ Նա խաչվեր (Louw & Nida ասում են, որ այս *hapax legomenon* հնարավոր է *stauroō* – խաչել բառի համարժեքն է [Էջ 237, ծանոթագրություն 9]): Հավանաբար սա կապված էր 2 Օր.21:23-ի անեծքի հետ: Սկզբնապես այս անեծքը կապված էր հանրորեն մարդուն ցիցը հանելու և անպատշաճ թաղում կատարելու հետ, սակայն

Հիսուսի օրոք ռաբբիները կապեցին դա խաչելության հետ: Հիսուսը կրեց ՀԿ-ի անեծքը բոլոր հավատացյալների համար (տես՝ Գաղ.3:13; Կող.2:14):

■ **«անաստված մարդիկ»** (հայերեն՝ «անօրեններ») Բառացի սա «անօրեն մարդիկ» է նշանակում և վերաբերում է հռոմեացիներին:

2:24 «Աստված Նրան հարուցանեց» ՆԿ-ը հաստատում է, որ Երրորդության բոլոր երեք անձերը գործել են Հիսուսի հարության ժամանակ.

1. Հոգին (տես՝ Հռոմ.8:11)
2. Որդին (տես՝ Հովհ.2:19-22; 10:17-18)
3. և ամենահաճախ հանդիպողը՝ Հայրը (տես՝ Գործք 2:24,32; 3:15,26;4:10;5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռոմ.6:4,9)

Հոր գործողությունները հաստատում էին, որ Նա ընդունում է Հիսուսի կյանքը, մահը և ուսմունքները: Սա էր հանդիսանում Առաքյալների վաղ շրջանի քարոզների հիմնական թեման: Տես՝ Հատուկ Թեմա. *Kerygma*, 2:14:

■ **«քանդելով մահվան կապանքները»** Այս տերմինի իմաստը կարող է լինել (1) բառացի՝ ծննդյան ցավեր (դասական հունարեն, տես՝ Հռոմ.8:22), (2) փոխաբերաբար՝ նախքան Երկրորդ Գալուստը առկա բոլոր պրոբլեմները (տես՝ Մատթ.24:8; Մարկ.13:8; 1 Թեսաղ.5:3): Հավանաբար այն արտացոլում է երբայերենի «թակարդ» կամ «ծուղակ» տերմինները, ինչպես Սաղմ.18:4-5 և 116:3-ում, որոնք ՀԿ-ի դատաստանի համար այլաբանություն էին հանդիսանում (տես՝ Ես.13:6-8; Երեմ.4:31):

■ **«քանի որ անկարելի էր, որ մահը պահեր Նրան»** Հովհաննես 20:9 նույնպես կապում է Հիսուսի հարությունը ՀԿ-ի մարգարեության հետ (տես՝ հհ. 25-28): Հիսուսը դժողք իջավ նպատակով (տես՝ 1 Պետ.3:19; 4:6): Երբ Նա հեռացավ, Իր հետ վերցրեց արդար հավատացյալներին (տես՝ 2 Կորնթ.5:6,8):

2:25 «Որովհետև Գավիթը Նրա մասին ասում է» Սա մեջբերում է Սաղմոս 16:8-11-ից: Պետրոսը հաստատում է, որ Սաղմոս 16-ը Մեսիական է (ինչպես Պողոսն է հաստատում 13:36-ում. սրանք ՆԿ-ում Սաղմոս 16-ից միակ մեջբերումներն են) և առնչվում է անմիջապես Հիսուսի հետ: Սաղմոսերգուի հույսը Հիսուսի հարությունն է, ինչպես նաև ՆԿ-ի հավատացյալների:

2:26 «հույս» Այս տերմինը չի կիրառվում Ավետարաններում, սակայն օգտագործվում է Գործք Առաքելոցում, նկարագրելու հավատացյալների հույսը ապագայում ավետարանի խոստումների իրականացման համար (տես՝ 23:6; 24:15; 26:6,7; 28:20): Այն հաճախ օգտագործվում է Պողոսի թղթերում, սակայն որոշ իմաստով կապ ունի Աստծո փրկագործության հավիտենական ծրագրի հետ: Տես՝ հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՈՒՅՍ

Պողոսը հաճախ այս տերմինը օգտագործում էր մի քանի տարբեր, սակայն կապակցված իմաստներով: Հաճախ այն առնչվում էր հավատացյալի հավատքի հետ (օր.՝ 1 Տիմ.1:1): Սա կարող է արտահայտվել որպես փառք, հավիտենական կյանք, վերջնական փրկություն, Երկրորդ Գալուստ և այլն: Վախճանը հայտնի է, սակայն ժամանակի տարրը ապագայում է և անհայտ: Այն հաճախ կապվում էր «հավատքի» և «սիրո» հետ (տես՝ 1 Կորնթ.13:13; 1 Թեսաղ.1:3; 2 Թեսաղ.2:16): Ահա Պողոսի կողմից կիրառված ցանկի մի մասը.

1. Երկրորդ Գալուստ, Գաղ. 5:5; Եփես.1:18; 4:4; Տիմ.2:13
2. Հիսուսը մեր Հույսը, 1 Տիմ.1:1
3. Հավատացյալները ներկայանալու են Աստծուն, Կող.1:22-23; 1 Թեսաղ.2:19
4. Մեր հույսը երկնքում է, Կող.1:5
5. Վստահություն ավետարանին, Կող.1:23; 1 Թեսաղ.2:19
6. Վերջնական փրկություն, Կող.1:5; 1 Թեսաղ.4:13; 5:8
7. Աստծո փառքը, Հռոմ.5:2, 2 Կորնթ.3:12; Կող.1:27
8. Քրիստոսով հեթանոսների փրկությունը, Կող.1:27
9. Փրկության վստահությունը, 1 Թեսաղ.5:8
10. Հավիտենական կյանքը, Տիմ.1:2; 3:7
11. Քրիստոնեական հասունության արդյունքները, Հռոմ.5:2-5

12. Ամբողջ արարչագործության փրկագործումը, Հռոմ.8:20-22
13. Որդեգրության վախճանը, Հռոմ.8:23-25
14. Աստծո համար տիտղոս, Հռոմ.15:13
15. Պողոսի փափագը հավատացյալների համար, 2 Կորնթ.1:7
16. ՀԿ-ը որպես ուղեցույց ՆԿ-ի հավատացյալների համար, Հռոմ.15:4

2:27 «ԳԵՐԵՉՄԱՆ» Սա մահացածներին պահելու վայրի համար հունարեն տերմինն է: Այն ՀԿ-ի երբայերեն *Sheol* տերմինի համագորն է: ՀԿ-ում կյանքը մահից հետո նկարագրվում էր տվյալ անձի իր ընտանիքի հետ գիտակցված գոյությունը, սակայն առանց ուրախության կամ փոխհարաբերության: Միայն ՆԿ-ի առաջադիմական հայտնությունն է ավելի հստակ սահմանում մահից հետո կյանքը (այսինքն՝ երկինքն ու դժողորմ):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ

I. Հին Կտակարան

Ա. Բոլոր մարդիկ գնում են *Sheol* (ստուգաբանությունը անհայտ է, BDB 1066), որը մահվան կամ գերեզմանի վերաբերյալ խոսելիս արտահայտվելու մի ձև է, հիմնականում Իմաստասիրական Գրքերում և Եսայի մարգարեության մեջ: ՀԿ-ում այն սովորաբար, գիտակից, սակայն ուրախությունից զուրկ կյանքն է (տես՝ Հոբ 10:21-22; 38:17):

Բ. *Sheol* բնութագրվում է՝

1. կապված Աստծո դատաստանի հետ (կրակ), 2 Օր.32:22
2. կապված պատժի հետ նույնիսկ նախքան Դատաստանի Օրը, Սաղմ.18:4-5
3. կապված *abaddon*-ի (կործանում) հետ, որտեղ Աստված նույնպես ներկա է, Հոբ 26:6; Սաղմ.139:8; Ամով. 9:2
4. կապված «Գուբի» (գերեզման) հետ, Սաղմ.16:10; Ես.14:15; Եզեկ.31:15-17
5. ամբարիշտները ողջ-ողջ իջնում են *Sheol*, Թվոց 16:30,33; Սաղմ.55:15
6. հաճախ մարմնավորվում է որպես մեծ երախ ոււնեցող կենդանի, Թվոց 16:30; Եսայի 5:14; Ամբ.2:5
7. այդ վայրի մարդիկ կոչվում են *Repha'im* (այսինքն՝ «մեռելների հոգիներ»), Եսայի 14:9-11

II. Նոր Կտակարան

Ա. Եբրայերենի *Sheol* թարգմանվում է հունարեն որպես *Hades* (աներևույթ աշխարհը)

Բ. *Hades* հատկանիշները՝

1. վերաբերում է մահվանը, Մատթ.16:18
2. կապ ունի մահվան հետ, Հայտն.1:18; 6:8; 20:13-14
3. հաճախ համագոր է մշտական պատժատեղին (*Gehenna*), Մատթ.11:23 (ՀԿ մեջբերում); Դուկ.10:15; 16:23-24
4. հաճախ համագոր է գերեզմանին, Դուկ.16:23

Գ. Հավանաբար բաժանված (ռաբբիներ)

1. արդար մասը կոչվում է դրախտ (իրականում երկնքի համար մեկ այլ բառ, տես՝ 2 Կորնթ.12:4; Հայտն.2:7), Դուկ.23:43
2. ամբարիշտ մասը կոչվում է *Tartarus*, 2 Պետ.2:4, որը հանդիսանում է չար հրեշտակների պահման վայրը (տես՝ Ծննդոց 6; 1 Ենովք)

Դ. *Gehenna*

1. Արտացոլում է ՀԿ-ի հետևյալ արտահայտությունը. «Հիննոմի որդիների հարթավայրը» (Երուսաղեմի հարավում): Դա այն տեղն էր, որտեղ Փյունիկեցիների կրակի աստծուն՝ *Molech* (Մոդոքը, BDB 574) երկրպագում էին մանկան գոհաբերությամբ (տես՝ 4 Թագ.16:3; 21:6; 2 Մնաց.28:3; 33:6), որը արգելված էր ըստ Դևտ.18:21; 20:2-5:
2. Երեմիան փոխեց այն հեթանոսական պաշտամունքի վայրից ՅԱՀՎԵի դատաստանատեղի (տես՝ Երեմ.7:32; 19:6-7): Այն դարձավ կրակե, հավիտենական դատաստանի վայրը 1 Ենովք 90:26-27 և Սիբ.1:103
3. Հիսուսի օրոք հրեաները իրենց նախահայրերի հեթանոսական երկրպագության մեջ մանկան գոհաբերության մեջ մասնակցություն ունենալու փաստից այնքան ահաբեկված էին, որ այս վայրը նրանք դարձրեցին Երուսաղեմի համար որպես աղբանոց: Հավիտենական դատաստանին վերաբերող Հիսուսի տված փոխաբերություններից շատերը ծագում են այս աղբավայրից (կրակ, ծուխ, որդեր, գարշահոտություն, տես՝ Մարկ.9:44,46): *Gehenna* (Գեհեն) տերմինը օգտագործվել է միայն Հիսուսի կողմից (բացառությամբ Հակ.3:6):

4. *Gehenna* բառի Հիսուսի կիրառությունը.
 - ա. կրակ, Մատթ.5:22; Մարկ.9:43
 - բ. մշտնջենական, Մարկ.9:48 (Մատթ.25:46)
 - գ. կորստյան վայր (թե՛ հոգու և թե՛ մարմնի), Մատթ.10:28
 - դ. *Sheol*-ին համարժեք, Մատթ.5:29-30; 18:9
 - ե. ամբարշտին բնութագրում է որպես «դժողքի որդի» Մատթ.23:15
 - զ. դատավճռի վախճանը, Մատթ.23:33; Ղուկ.12:5
 - է. *Գեհեննի* գաղափարը համարժեք է երկրորդ մահվանը (տես՝ Հայտն.2:11; 20:6,14) կամ կրակե լճին (տես՝ Մատթ.13:42,50; Հայտն.19:20; 20:10,14-15; 21:8): Հնարավոր է, որ կրակե լիճը դառնա մարդկանց (*Sheol*-ից) և չար հեշտակների (*Tartarus /Տարտարոս/*, 2 Պետ.2:4; Հուդա հ. 6 կամ անդունդը, տես՝ Ղուկ.8:31; Հայտն.9:1-11; 20:1,3) համար հավերժական բնակավայր:
 - ը. այն նախատեսված չէր մարդկանց համար, այլ Սատանայի և իր հրեշտակների, Մատթ.25:41

Ե. Հնարավոր է, քանի որ *Շեոլը*, *Դժողքը* և *Գեհենը* իրենց նշանակությամբ որոշ չափով համընկնում են, որ.

1. սկզբում բոլոր մարդիկ գնում էին *Շեոլ/Դժողք*
2. այնտեղ ունեցած իրենց փորձառությունը (յավ/վատ) սաստկանում է Դատաստանի Օրվանից հետո, սակայն ամբարիշտների վայրը նույնն է մնում (այդ իսկ պատճառով KJV տարբերակը *hades* (գերեզման) բառը թարգմանում է որպես *gehenna* (դժողք):
3. միակ ՆԿ-յան տեքստը, որը նշում է Դատաստանից առաջ տանջանքը Ղուկաս 16:19-31-ի առակն է (Ղազարոսը և հարուստը): *Sheol-ը* նկարագրվում է նաև ներկայիս համար մի պատժատեղի (տես՝ 2 Օր.32:22; Սաղմ.18:1-5): Ամեն դեպքում հնարավոր չէ առակի հիման վրա կառուցել վարդապետություն:

III. Մահվան և հարության միջև ընկած միջանկյալ վիճակը

Ա. ՆԿ-ը չի սովորեցնում «հոգու անմահության» մասին, որը համարվում է հանդերձյալ կյանքի վերաբերյալ հնուց եկած մի քանի տեսակետներից մեկը:

1. մարդկանց հոգիները գոյություն ունեն իրենց ֆիզիկական կյանքից առաջ
2. մարդկանց հոգիները հավիտենական են ֆիզիկական մահվանից առաջ և հետո
3. հաճախ ֆիզիկական մարմինը դիտարկվում է որպես բանտ և մահը որպես ազատում՝ վերադառնալու նախաձեռնության վիճակին

Բ. ՆԿ-ը ակնարկում է մահվան և հարության միջև ընկած մարմնից հեռու՝ առանձին վիճակ

1. Հիսուսը խոսում է մարմնի և հոգու միջև եղած բաժանման մասին, Մատթ.10:28
2. Հնարավոր է Աբրահամը հիմա մարմին ունի, Մարկ.12:26-27; Ղուկ.16:23
3. Մովսեսը և Եղիան ունեին ֆիզիկական մարմիններ Հիսուսի այլակերպության ժամանակ, Մատթեոս 17
4. Պողոսը հայտարարում է, որ Երկրորդ Գալստյան ժամանակ Քրիստոսի հետ եղող հոգիները առաջինը կհագնեն իրենց նոր մարմինները, 1 Թեսաղ.4:13-18
5. Պողոսը հայտարարում է, որ հավատացյալները ստանում են իրենց նոր հոգևոր մարմինները Հարության Օրը, 1 Կորնթ.15:23,52
6. Պողոսը հայտարարում է, որ հավատացյալները չեն գնում *Hades /Դժողք*, այլ մահվան ժամանակ միանում են Հիսուսին, 2 Կորնթ.5:6,8; Փիլ.1:23: Հիսուսը հաղթեց մահին և արդարին Իր հետ տարավ երկինք, 1 Պետ.3:18-22:

IV. Երկինք

Ա. Այս տերմինը Աստվածաշնչում կիրառվում է երեք իմաստով.

1. երկրից վեր գտնվող մթնոլորտը, Ծննդ.1:1,8; Ես.42:5; 45:18
2. աստղազարդ երկնականարը, Ծննդ.1:14; 2 Օր.10:14; Սաղմ.148:4; Եբր.4:14; 7:26
3. Աստծո գահատեղին, 2 Օր.10:14; 3 Թագ.8:27; Սաղմ.148:4; Եփես.4:10; Եբր.9:24 (երրորդ երկինքը, 2 Կորնթ. 12:2)

Բ. Աստվածաշունչը հանդերձյալ կյանքի մասին շատ բան չի հայտնում, հավանաբար այն պատճառով, որ անկում ապրած մարդկությունը ի գորու չէ, կամ հնարավոր չէ, որ հասկանա (տես՝ 1 Կորնթ.2:9)

Գ. Երկինքը թե՛ վայր է (տես՝ Հովհ.14:2-3) և թե՛ անձնավորություն (տես՝ 2 Կորնթ.5:6,8): Երկինքը կարող է լինել վերականգնված Եդեմի պարտեզը (Ծննդոց 1-2; Հայտնություն 21-22): Երկիրը մաքրվելու է և վերականգնվելու (տես՝ Գործք 3:21; Հռոմ.8:21; 2 Պետ.3:10): Աստծո պատկերը (Ծննդ.1:26-27) վերականգնված է Քրիստոսի մեջ: Այժմ դարձյալ հնարավոր է Եդեմի Պարտեզում տիրող մտերմիկ փոխհարաբերություն ունենալ:

Մակայն սա կարող է լինել փոխաբերական իմաստով (երկինքը որպես Հայտն.21:9-27-ի հսկայական, քառակուսի քաղաքը) և ոչ թե բառացի նշանակությամբ: 1 Կորնթացիների 15 գլուխը նկարագրում է ֆիզիկական և հոգևոր մարմինների տարբերությունը որպես հասուն բույսի սերմ: Կրկին, 1 Կորնթ.2:9 (մեջբերում Ես.64:4 և 65:17-ից) հրաշալի խոստում և հույս է: Ես գիտեմ, որ երբ տեսնենք Նրան, Նրա պես կլինենք (տես՝ 1 Հովհ.3:2):

V. Օգտակար աղբյուրներ.

Ա. William Hendriksen, *The Bible On the Life Hereafter* (Ուիլյամ Հենրիկսն, *Աստվածաշունչը Հանդերձյալ Կյանքի Վերաբերյալ*)

Բ. Maurice Rawlings, *Beyond Death's Door* (Մորիս Ռոլինգս, *Մահվան Դռնից Այն Կողմ*)

■ **«Ո՞Չ Է՛Լ ՔՈՒ ՍՐԲԻՆ ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԵՄՆԵԼ ԿՏԱՍ»** Սա ակնհայտ Մեսիական մեջբերում էր կապված Խոստացյալի, Օծյալի և Սրբի մահվան, բայց ոչ ապականության հետ (տես՝ Մաղմ.49:15 և 86:13):

2:28 «ՔՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՐԱԿՆՈՒԹՅԱՄԲ ՊԻՏԻ ԼՅՆԵՍ ԻՆՁ» Այս արտահայտությունը ակնարկում է Հոր հետ անձնական, ուրախ փոխհարաբերություն (հհ. 22-18) երկնքում՝ Մեսիայի մահվան շնորհիվ (տես՝ Ես.53:10-12): Կյանքից հետո Աստծո հետ անձնական հաղորդակցության այս նույն դրական տեսարանը արձանագրված է Հոր 14:14-15; 19:25-27:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 2:29-36

²⁹ «Մարդիկ և եղբայրներ, պետք է համարձակորեն ձեզ ասեմ Դավիթ նահապետի մասին, թե նա և՛ մեռավ, և՛ թաղվեց, և նրա գերեզմանը մինչև այսօր մեզ հետ է: ³⁰Արդ, քանի որ նա մարգարե էր և գիտեր, թե ԱՍՏՎԱԾ ԵՐԿՄԱՄԲ ԽՈՍՏՈՒՄ Է ՏՎԵԼ ԻՐԵՆ, ԹԵ ԻՐ ՈՐՈՎԱՅՆԻ ՊՏՈՒՂԻՑ՝ ԸՍՏ ՄԱՐՄՆԻ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՊԻՏԻ ՀԱՐՈՒՑԱՆԻ ԻՐ ԱԹՈՌԻՆ ՆՍՏԵԼՈՒ. ³¹կանխատեսությամբ խոսեց Քրիստոսի հարության մասին, թե՛ «ՆՐԱ ԱՆՁԸ ԳԵՐԵԶՄԱՆՈՒՄ ԶԹՈՂՆՎԵՑ, ԵՎ ՆՐԱ ՄԱՐՄՆԻՆ ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉՏԵՍԱՎ»: ³²Այս Հիսուսին Աստված հարուցանեց, որին մենք բոլորս վկա ենք: ³³Ուստի Աստծո աջով բարձրանալով, և Հորից Սուրբ Հոգու խոստումը ստանալով՝ սփռեց այս, որ դուք հիմա տեսնում և լսում եք: ³⁴Որովհետև Դավիթը երկինք չբարձրացավ, բայց ինքն է ասում. «ՏԵՐՆ ԻՄ ՏԻՐՈՉՆ ԱՍԱՑ. «ՆՍՏԻՐ ԻՄ ԱՉ ԿՈՂՄՈՒՄ, ³⁵ՄԻՆՉԵՎ ՔՈՒ ԹՇՆԱՄԻՆՆԵՐԻՆ ՈՏՔԵՐԻՎ ՊԱՏՎԱՆՎԱՆ ԴԱՐՁՆԵՄ»: ³⁶Ուստի Իսրայելի ամբողջ տունը ճշմարտապես թող իմանա՛, որ Աստված այն նույն Հիսուսին, Ում դուք խաչեցիք, թե՛ Տեր դարձրեց, թե՛ Օծյալ»:

2:29-31 Հեշտ չէ արևմտյան ժամանակակից ընթերցողների համար հետևելու Պետրոսի ներկայացրած սաղմոսների այս վերլուծությանը, քանի որ նա օգտագործում է ռաբբիական հերմենևտիկ ընթացակարգ (սա նաև գործում է Եբրայեցիների գրքի համար): Հնարավոր է Պետրոսը ժողովարանում լսել էր Մեսիայի գալստյան վերաբերյալ այս վիճարանությունը և հիմա գիտի, որ դա վերաբերում է Հիսուս Նազովրեցուն:

2:29 Պետրոսը ցույց է տալիս, որ Մաղմ.16-ը, չնայած որ ինչ-որ առումով վերաբերում է Դավթին (հատկապես 16:10բ), չի կարող ամբողջովին նրա մասին լինել:

2:30 «նա մարգարե էր» Հրեաները հավատում էին, որ Աստված խոսում էր մարգարեների միջոցով: Մովսեսը մարգարե էր կոչվում (տես՝ 2 Օր.18:18): ՀԿ-ի Հեսուի, Դատավորացի, 3 և 4 Թագավորացների գրքերը հրեական կանոնի մեջ հայտնի են որպես «հին մարգարեներ»: Վերջին մարգարեի՝ Մաղաքիայի մահից հետո, ռաբբիները համարում էին, որ հայտնությունը դադարել է: Հետևյալ տերմինի հրեական այսպիսի հասկացությամբ էր (այսինքն՝ Սուրբ Գրքի գրող հանդիսացող), որ Դավիթը համարվում էր որպես մարգարե: Ավելի շուտ ՀԿ-ում Աստված Մովսեսին հայտնել էր (տես՝ Ծննդոց 49), որ Մեսիան լինելու է Հուդայի ցեղից: 2 Թագավորաց 7-ում Աստված հայտնել էր, որ Նա լինելու է Դավթի արքայական սերնդից: Այնուհետև Մաղմոս 110-ում Աստված հայտնել էր, որ Նա լինելու է նաև Մելքիսեդեկի քահանայական կարգից (տես՝ հհ. 34-35):

■ **«ԱՍՏՎԱԾ ԵՐԿՄԱՄԲ ԽՈՍՏՈՒՄ Է ՏՎԵԼ ԻՐԵՆ, ԹԵ ԻՐ ՈՐՈՎԱՅՆԻ ՊՏՈՒՂԻՑ ԸՍՏ ՄԱՐՄՆԻ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՊԻՏԻ ՀԱՐՈՒՑԱՆԻ ԻՐ ԱԹՈՌԻՆ ՆՍՏԵԼՈՒ»** Սա 2 Թագ.7:11-16; Մաղմ.89:3-4 կամ 132:11 խոսքերի ամփոփիչ կամ լրացուցիչ խոսքն է: Այն ցույց է տալիս, որ Աստծո վաղեմի մտադրությունը՝ նպատակը պետք է կատարվեր Հիսուս Նազովրեցու մեջ: Նրա մահն ու հարությունը

երկրորդ ծրագիր չէր, այլ Աստծո կողմից արարչագործությունից առաջ կանխորոշված փրկության միակ ծրագիրը (տես՝ Եփես.2:11-3:13):

2:31 «Քրիստոսը» Սա «Մեսիա» բառի հունարեն թարգմանությունն է կամ բառացի «Օծյալ»: Հիսուսը ոչ միայն Դավթի որդին էր, Իսրայելի Թագավորը, այլ նաև Աստծո Որդին և նստած է երկնային գահին (տես՝ Մաղմոս 110):

ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. ՄԵՍԻԱ

Այս հատուկ թեման վերցված է Դանիել 9:6-ի իմ մեկնաբանության գրառումներից: Այս համարը մեկնաբանելու դժվարությունը կայանում է նրանում, որ գոյություն ունեն Մեսիա կամ Օծյալ (BDB 603) տերմինի հետ կապված հնարավոր այլ նշանակություններ նույնպես:

1. Կիրառված է Հրեա թագավորների համար (օր.՝ 1 Թագ.2:10; 12:3)
2. Կիրառված է Հրեա քահանաների համար (օր.՝ Ղևտ.4:3,5)
3. Կիրառված է Կյուրոսի համար (տես՝ Եսայի 45:1)
4. #1 և #2 համադրված Մաղմոս 110-ում և Չաքարիա 4-ում
5. Կիրառված է Աստծո հատուկ զալստյան համար, որպես Դավթի սերնդից Թագավոր, որը բերելու է արդարության նոր դարաշրջանը:
 - ա. Հուդայի ցեղից (տես՝ Ծննդ.49:10)
 - բ. Հեսուեի տնից (տես՝ 2 Թագավորաց 7)
 - գ. Տիեզերական իշխանությունը (տես՝ Մաղմոս 2; Եսայի 9:6; 11:1-5; Միք.5:1-4 հհ.)Ես ինքս ավելի հակված եմ «Օծյալ» բնութագրությանը Հիսուս Նագովրեցու համար, ըստ.
 1. Դանիել 2-ի՝ չորրորդ կայսրության ընթացքում հավիտենական թագավորության ներկայացման
 2. Դանիել 7:13-ի «մարդու որդու» ներկայացման համար, որին տրվեց հավիտենական թագավորությունը
 3. Դանիել 9:24-ի փրկագործության մասերի, որոնք մասնացույց են անում անկում ապրած աշխարհի վախճանը
 4. ՆԿ-ում Հիսուսի կողմից Դանիել գրքի կիրառության (տես՝ Մատթ.24:15; Մարկ. 13:14)

■ **«ՆՐԱ ԱՆՁԸ ԳԵՐԵՉՄԱՆՈՒՄ ՉԹՈՂՆՎԵՑ, ԵՎ ՆՐԱ ՄԱՐՄԻՆՆ ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉՏԵՍԱՎ»** Սա 1995 NASB (թարմեցված) տեքստում չի նշվում որպես ՀԿ-ի մեջբերում: Ըստ էության այն վերաբերում է Մաղմոս 16-ին:

«Մարմին» բառի համար տես հետևյալ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒՄ ԹԵՄԱ. ՄԱՐՄԻՆ (sarx)

Այս տերմինը հաճախ կիրառվում է Պողոսի կողմից Գաղատացիներում և դրա աստվածաբանական զարգացումները՝ Հռոմեացիներում: Գիտնականները չեն համաձայնվում այս տերմինի տարբեր լրացուցիչ նշանակությունների բնորոշման հարցում: Հաստատ այդ նշանակությունների մեջ գոյություն ունեն որոշակի ընդհանուր եզրեր: Այստեղ միայն փորձում եմ նշել այս տերմինի ընդարձակ իմաստաբանական տիրույթը:

Ա. Մարդու մարմինը, Հովհ.1:14; Հռոմ.2:28; 1 Կորն.5:5; 7:28; 2 Կորն.4:11; 7:5; 12:7; Գաղ.1:16; 2:16,20; 4:13; Փիլիպ.1:22; Կող.1:22,24; 2:5; 1 Տիմ.3:16

Բ. Մարդու սերունդը, Հովհ.3:6; Հռոմ.1:3; 4:1; 9:3,5,8; 11:14; 1 Կորթ.10:18; Գաղ.4:23,29

Գ. Մարդու անձը, Հռոմ.3:20; 7:5; 8:7-8; 1 Կորն.1:29; 2 Կորն.10:3; Գաղ.2:16; 5:24

Դ. Մարդու պես խոսելը, Հովհ.8:15; 1 Կորն.1:26; 2 Կորն.1:12; 5:16; 10:2; Գաղ.6:12

Ե. Մարդկային թուլությունը, Հռոմ.6:19; 7:18; 8:5-6,9; 2 Կորն.10:4; Գաղ.3:3; 5:13,16,19-21; Կող.2:18

Չ. Աստծո հանդեպ մարդկանց թշնամությունը՝ կապված անկման հետևանքների հետ, Հռոմ.7:14; 13:14; 1 Կորն.3:1,3; Եփես.2:3; Կող.2:18; 1 Պետ.2:11; 1 Հովհ.2:16

2:32-33 «Հիսուս...Աստված...Հոգի» Չնայած, որ «երրորդություն» բառը Աստվածաշնչում երբեք չի օգտագործվում, երեքը մեկում Աստծո գաղափարը պահանջվում է (1) Հիսուսի աստվածությամբ և (2) Հոգու անձնավորությամբ: Աստվածաշունչը հաղորդում է այս հասկացությունը՝ նշելով Երրորդության երեք անձերին մեկ համատեքստի մեջ (տես՝ Գործք 2:32-33; Մատթ.28:19; 1 Կորնթ.12:4-6; 1 Կորնթ.1:21-22; 13:14; Եփես.4:4-6 և 1 Պետ.1:2):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Ուշադրություն դարձրեք Երրորդության բոլոր երեք Անձերի գործունեությանը միավորված համատեքստերում: «Երրորդություն» տերմինը առաջին անգամ հնարել է Տերտուղիանոսը. այն աստվածաշնչյան բառ է, սակայն հասկացությունն ինքնին տարածված է:

Ա. Ավետարանները

1. Մատթ.3:16-17; 28:19 (և զուգահեռները)

2. Հովհ.14:26

Բ. Գործք Առաքելոց – Գործք 2:32-33, 38-39

Գ. Պողոսը

1. Հռոմ.1:4-5; 5:1,5; 8:1-4,8-10

2. 1 Կորն.2:8-10; 12:4-6

3. 2 Կորն.1:21-22; 13:14

4. Գաղ.4:4-6

5. Եփես.1:3-14,17; 2:18; 3:14-17; 4:4-6

6. 1 Թեսաղ.1:2-5

7. 2 Թեսաղ.2:13

8. Տիտ.3:4-6

Դ. Պետրոս – 1 Պետ.1:2

Ե. Հուդա – հհ. 20-21

Նաև ՀԿ-ում Աստված բառը նշվում է հոգնակի թվով:

Ա. Աստված բառի ՀՈԳՆԱԿԻ թվով կիրառությունը

1. *Elohim* անունը ՀՈԳՆԱԿԻ է, սակայն երբ կիրառվում է Աստծո համար, ապա օգտագործվում է ԲԱՅԻ ԵԶԱԿԻ թիվը:

2. Ծննդոց 1:26-27; 3:22; 11:7-ում «Մեզ»/մեր/

Բ. Տիրոջ Հրեշտակը Աստվածության տեսանկյան ներկայացուցիչն էր

1. Ծննդոց 16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16

2. Ելից 3:2,4; 13:21; 14:19

3. Դատավորաց 2:1; 6:22-23; 13:3-22

4. Չաբարիա 3:1-2

Գ. Աստված և Իր Հոգին առանձին են, Ծննդ.1:1-2; Սաղմ.104:30; Ես.63:9-11; Եզեկ.37:13-14

Դ. Աստված (YHWH) և Մեսիան (*Adon*) առանձին են, Սաղմ.45:6-7; 110:1; Չաբ.2:8-11; 10:9-12

Ե. Մեսիան և Հոգին առանձին են, Չաբ.12:10

Զ. Բոլոր երեքն էլ նշվում են Եսայի 48:16; 61:1-ում

Հիսուսի Աստվածությունը և Հոգու անձ լինելը վաղ շրջանի խիստ, միաստվածության հետևող հավատացյալներին խնդիրների առջև էր կանգնեցրել:

1. Տերտուղիանոսը ստորադասում էր Որդուն Հորից

2. Օրիգենոսը ստորադասում էր Որդու և Հոգու աստվածային էությունը

3. Արիուսը ուրանում էր Որդու և Հոգու Աստվածությունը

4. Վանականությունը՝ միապետները հավատում էին մեկ Աստծո՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու հաջորդական ժամանակագրական դրսևորումներին

Երրորդությունը պատմականորեն զարգացող մի ձևակերպում է, որը ինֆորմացված է աստվածաշնչյան նյութերով:

1. Հիսուսի կատարյալ աստվածությունը՝ հավասարազոր Հորը, հաստատվեց Նիկիական Խորհրդի կողմից, Ք.Հ. 325 թ-ին (տես՝ Հովհ.1:1; Փիլ.2:6; Տիտ.2:13)

2. Հոգու կատարյալ աստվածությունն ու անձնավորությունը՝ հավասարազոր Հորը, հաստատվեց Կոստանդնուպոլսի Խորհրդի կողմից, Ք.Հ.381 թ-ին

3. Երրորդության վարդապետությունը միանգամայն արտահայտվում է Օգոստինոսի *De Trinitate* աշխատության մեջ:

Իրականում այստեղ մի առեղծված կա: Սակայն ՆԿ-ը կարծես թե հաստատում է աստվածության էությունը երեք հավիտենական անձնավորությունների դրսևորմամբ:

2:32 «Այս Հիսուսին Աստված հարուցանեց» Տե՛ս ամբողջական գրառումներ 2:24-ում:

■ «որին մենք բոլորս վկա ենք» Սա վերաբերում է այն մարդկանց, ովքեր տեսան հարուցյալ Քրիստոսին: Տե՛ս հարությունից հետո Հիսուսի մարդկանց երևալու սանդղակը Փոլ Բարնեթի կողմից, *Հիսուսը և Վաղ Եկեղեցու Քրիստոնեության Ճագումը*, (Paul Barnett, *Jesus and the Rise of Early Christianity*):

2:33 «Աստծո աջ կողմը» Սա անտրոպոմորֆիկ՝ մարդաբանական այլաբանություն է իշխանության, գործության և բարեխոսության վայրի համար (տես՝ 1 Հովհ.2:1), որը վերցված է Սաղմ.110:1-ից (ՆԿ-ում բոլոր մյուս Սաղմոսներից ամենաշատը մեջբերված) և Սաղմ.118:16-ից: Աստված հավիտենական Հոգի է, ներկա ամբողջ հոգևոր և ֆիզիկական արարչագործության մեջ: Մարդիկ պետք է կիրառեն երկրավոր սահմանափակումներ ունեցող լեզու և հասկացություններ Նրա մասին խոսելիս, բայց դրանք բոլորն էլ (1) իրարամերժ են, (2) նմանություններ են կամ (3) փոխաբերություններ: Նույնիսկ Աստծուն նկարագրող «Հայր» բառը կամ Հիսուսին նկարագրող «Որդի» բառը փոխաբերական են: Բոլոր փոխաբերություններն էլ ինչ-որ առումով թերանում են: Դրանց նպատակը աստվածության մասին գլխավոր ճշմարտությունը կամ գաղափարը հաղորդելն է: Չգույշ եղե՛ք տառացի մեկնաբանությունից: Իհարկե, երբ դուք հասնեք երկինք, պետք չէ ակնկալեք, որ կոտեսնեք մի ծեր մարդու և մի երիտասարդի գահի վրա և մի ճերմակ թռչուն՝ նրանց գլխավերևում պտտվող: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՍՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԳ (ԱՆՏՐՈՊՄՈՐՖԻԿ ԼԵԶՈՒԲ)

- I. Այսպիսի լեզուն շատ ընդունված է ՀԿ-ում (մի քանի օրինակներ)
 - Ա. Ֆիզիկական մարմնի մասերը
 - 1. աչքեր՝ Ծննդ.1:4,31; 6:8; Ելից 33:17; Թվոց 14:14; 2 Օր.11:12; Չաք.4:10
 - 2. ձեռքեր՝ Ելից 15:17; Թվոց 11:23; 2 Օր.2:15
 - 3. բազուկ՝ Ելից 6:6; 15:16; Թվոց 11:23; 2 Օր.4:34; 5:15
 - 4. ականջներ՝ Թվոց 11:18; 1 Թագ.8:21; 4 Թագ.19:16; Սաղմ.5:1; 10:17; 18:6
 - 5. դեմք՝ Ելից 32:30; 33:11; Թվոց 6:25; 2 Օր.34:10; Սաղմ.114:7
 - 6. մատներ՝ Ելից 8:19; 31:18; 2 Օր.9:10; Սաղմ.8:3
 - 7. ձայն՝ Ծննդ.3:8,10; Ելից 15:26; 19:19; 2 Օր.26:17; 27:10
 - 8. ոտքեր՝ Ելից 24:10; Եզեկ.43:7
 - 9. մարդկային կերպարանք՝ Ելից 24:9-11; Սաղմ.47; Ելից 6:1; Եզեկ.1:26
 - 10. Տիրոջ հրեշտակը՝ Ծննդ.16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16; Ելից 3:4,13-21; 14:19; Դատ.2:1; 6:22-23; 13:3-22
 - Բ. Ֆիզիկական գործողություններ
 - 1. խոսում է որպես արարչագործության մեխանիզմ՝ Ծննդ.1:3,6,9,11,14,20,24,26
 - 2. քայլում է (այսինքն՝ դրա ձայնը) Եղեմում՝ Ծննդ.3:8; 18:33; Ամբ.3:15
 - 3. փակում է Նոյան Տապանի դուռը՝ Ծննդ.7:16
 - 4. հոտոտում է զոհերը՝ Ծննդ.8:21; Դևտ.26:31; Ամովս 5:21
 - 5. իջնում է՝ Ծննդ.11:5; 18:21; Ելից 3:8; 19:11,18,20
 - 6. թաղում է Մովսեսին՝ 2 Օր.34:6
 - Գ. Մարդկային զգացմունքներ (մի քանի օրինակներ)
 - 1. զղջում / ապաշխարում՝ Ծննդ.6:6,7; Ելից 32:14; Դատ.2:18; 1 Թագ.15:29,35; Ամովս 7:3,6
 - 2. բարկություն՝ Ելից 4:14;15:7; Թվ.11:10;12:9; 22:22; 25:3,4; 32:10,13,14; 2 Օր.6:5; 7:4; 29:20
 - 3. նախանձոտ՝ Ելից 20:5; 34:14; 2 Օր.4:24; 5:9; 6:15; 32:16,21; Հեսու 24:19
 - 4. զգվանք/նողկանք՝ Դևտ.20:23; 26:30; 2 Օր.32:19
 - Դ. Ընտանեկան տերմիններ (մի քանի օրինակներ)
 - 1. Հայր
 - ա. Իսրայելի՝ Ելից 4:22; 2 Օր.14:1; Եսայի 1:2; 63:16; 64:8; Երեմ.31:9; Ովս.11:1
 - բ. թագավորի՝ 2 Թագ.7:11-16; Սաղմ.2:7
 - գ. հայրական արարքների փոխաբերությունները՝ 2 Օր.1:31; 8:5; 32:6-14; Սաղմ.27:10; Առակ.3:12; Երեմ.3:4,22; 31:20; Ովս.11:14; Սաղ.3:17
 - 2. Ծնող՝ Ովս.11:1-4
 - 3. Մայր՝ Սաղմ.27:10; Եսայի 49:15; 66:9-13 (կերակրող մոր նմանություն)
 - 4. Երիտասարդ հավատարիմ սիրեցյալ՝ Ովսես 1-3
- II. Այսպիսի լեզվի կիրառության պատճառները
 - Ա. Անհրաժեշտությունը, որ Աստված Իրեն հայտնի մարդկությանը: Աստծո ամենատարածված հասկացությունը որպես տղամարդ անտրոպոմորֆիզմ է, քանի որ Աստված Հոգի է:

- Բ. Աստված վերցնում է մարդու կյանքի ամենակարևոր ոլորտները և դրանք կիրառում, որպեսզի կարողանա Իրեն հայտնել անկում ապրած մարդկությանը (հայր, մայր, ծնող, սիրեցյալ)
- Գ. Չնայած երբեմն անհրաժեշտ է (օր.՝ Ծննդ.3:8), սակայն Աստված չի ուզում սահմանափակվել որևէ մարդկային ֆիզիկական կերպարանքով (տես՝ Ելից 20; 2 Օրինաց 5)
- Դ. Մեծագույն անտրոպոմորֆիզմը եղավ Հիսուսի մարմնացումը: Աստված ֆիզիկական մարմին հագավ, դարձավ շոշափելի (տես՝ 1 Հովհ.1:1-3): Աստծո պատգամը դարձավ Աստծո Խոսքը (տես՝ Հովհ.1:1-18):

■ **«Մուրբ Հոգու խոստումը»** ՀԿ-ը խոստացել էր Հոգու առաջնորդությամբ արդարության նոր օր, որը գործադրվեց Մեսիայի կատարածի շնորհիվ:

1. Հովհ.7:39, նոր օրը հասել է
2. Գաղ.3:14, Աբրահամի օրհնությունները (տես՝ Ծննդ.12:3) այժմ հասանելի են ամբողջ աշխարհի համար
3. Եփես.1:13, այս նոր դարաշրջանի հավատացյալները կնքված են Մուրբ Հոգով:

■ **«որ դուք հիմա տեսնում և լսում եք»** Մա այս քարոզի անընդմեջ կրկնվող շեշտադրումն է տվյալ պահի յարանի ականատես լինելու բնույթի վրա (տես՝ 14, 22, 32, 33, 36): Նրանք գիտեին, որ Պետրոսի ասածները ճշմարիտ էին, քանի որ նրանք այնտեղ էին եղել: Իրավարանները այսպիսի առաջնային՝ սկզբնական, աղբյուրը կոչում են ապացույց:

2:34 «ՏԵՐՆ ԻՄ ՏԻՐՈՋՆ ԱՍԱՑ» Մա մեջբերում է Սաղմոս 110:1-ից (YHWH ... Adon): Հիսուսը այն օգտագործում է Մատթ.22:41-46-ում: ՆԿ-ում այն ցույց է տալիս արքայության երկակի առանձնահատկությունները՝ Հիսուսն արդեն Աստծո աջ կողմում է, սակայն Նրա թշնամիները դեռևս Նրա ոտքերի տակ պատվանդան չեն: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստծո Արքայությունը, 1:3:

2:36 «Իսրայելի ամբողջ տունը» Մա վերաբերում է հրեա առաջնորդներին և ժողովրդին, հենց այն մարդկանց, որոնց դիմում էր Պետրոսը: Նա հաստատում էր, որ ՀԿ-ի մարգարեությունը իրականացել և իր գագաթնակետին է հասել Հիսուս Նազովրեցու մեջ: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստծո Արքայությունը, 1:3:

■	
NASB	«հաստատ իմացեք»
NKJV	«վստահ իմացեք»
NRSV	«հաստատապես իմացեք»
TEV	«վստահ իմացեք»
NJB	«կարող են վստահ լինել»

Մա արտահայտվում է հունարեն երկու բառով, *aphalōs* ՄԱԿԲԱՅով, որը նշանակում է «զգույշ ամրացնել» (փոխաբերական իմաստով՝ վստահությամբ, տես՝ 16:23) և *ginōskō*, «իմանալ» ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ բայով: Հիսուսի կյանքի վերջին շաբաթվա, մահվան և հարության այս ականատեսները չէին կարող կասկած ունենալ Պետրոսի խոսքերի արժանահավատության շուրջ:

■ **«Տեր և Քրիստոս»** «Տեր» տերմինը (*kurios*) կարող է կիրառվել ընդհանուր իմաստով կամ հատուկ աստվածաբանական իմաստով (տես՝ հ.21): Այն կարող է նշանակել՝ «պարոն», «վարպետ», «սեփականատեր», «ամուսին» կամ «կատարյալ մարդ-Աստված»: Այս տերմինի ՀԿ-յան կիրառությունը (*adon*) բխում է հրեաների կողմից Աստծո ուխտի անունը՝ ՅԱՀՎԵ, /Եբրայերենի «լինել» բայից/ արտասանել չկամենալուց (տես՝ Ելից 3:14): Նրանք վախենում էին խախտել այն պատվիրանը, որն ասում է, «Զո Տեր Աստծո անունը դատարկ տեղը չհիշատակես» (տես՝ Ելից 20:7, 2 Օր. 5:11): Նրանք կարծում էին, որ եթե չարտասանեն այդ անունը, ապա դատարկ տեղը չեն հիշատակի: Ուստի նրանք այն փոխարինեցին եբրայերեն *Adonai* բառով, որն ունի հունարեն *Kurios* (Տեր) բառի միևնույն իմաստը: ՆԿ-ի հեղինակները կիրառում էին այս տերմինը նկարագրելու Քրիստոսի կատարյալ Աստվածությունը: «Հիսուսն Աստված է» արտահայտությունը վաղ եկեղեցու համար հավատքի հանրային դավանության և ջրի մկրտության բանաձև էր հանդիսանում (տես՝ Հռոմ.10:9-13; 1 Կորն.12:3; Փիլ.2:11): Տե՛ս Հատուկ Թեմա. Աստվածության Անունները, 1:6:

«Քրիստոսը» եբրայերեն *mesīhu* բառի հունարեն համարժեք տարբերակն է, որը նշանակում է «օծյալ» (տես՝ 2:31,36; 3:18,20; 4:26; 5:42; 8:5; 9:22; 17:3; 18:5,28; 26:23): Այն ակնարկում է «մեկին, որը կանչված է և պատրաստված Աստծո կողմից հատուկ առաջադրանքի համար»: ՀԿ-ի երեք խմբերի առաջնորդներն էլ՝ քահանաները, թագավորները և մարգարեները, օծյալներ էին: Հիսուսը

իրականացրեց այս երեք օձյալ խմբերի պաշտոնները (տես՝ Եբր.1:2-3): Տե՛ս Հատուկ Թեմա. Մեսիա, 2:31:

Հիսուս Նագովրեցու համար ՀԿ-ի այս երկու տիտղոսները կիրառելով, Ղուկասը հաստատում է թե՛ Նրա աստվածությունը (տես՝ Փիլ.2:6-11, տես՝ Հատուկ Թեմա, 2:32) և թե՛ Նրա Մեսիա լինելը (տես՝ Ղուկ.2:11): Սա իհարկե ամուր հիմք է դնում Գործք Առաքելոցում ուրիշ քարոզների համար (*kerygma*): Տե՛ս Հատուկ Թեմա. Վաղ Եկեղեցու Kerygma, 2:14:

■ **«այն նու՛յն Հիսուսին, ում դուք խաչեցիք»** Պետրոսը մեղադրում էր Երուսաղեմի այս բնակիչներին Հիսուսի մահվան հարցում նրանց երկերեսանկիության մեջ: Ամբողջ անկում ապրած մարդկությունը հավասարապես ընդգրկված է այս հանցանքի մեջ: Տե՛ս 2:23 գրառումը:

■ **«այս Հիսուսը»** «Այս Հիսուսը» խոսքի նշանակությունը (տես՝ 2:23,32,36) կապում է Պետրոսի քարոզի պատմական Հիսուսին հարուցյալ, մեծարված Քրիստոսի հետ: Երկու հասկացություններն էլ ճիշտ են: Աստվածաշնչյան ոչ մի տարբերություն չկա սկզբնական Հիսուսի և հավատքի Հիսուսի միջև:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 2:37-42
³⁷Երբ այս լսեցին, իրենց սրտերում գոջացին և Պետրոսին ու մյուս առաքյալներին ասացին. «Մարդի՛կ, եղբայրնե՛ր, ի՞նչ անենք»: **³⁸Եվ Պետրոսն Ասաց նրանց. «Ապաշխարեցե՛ք, ու ձեզանից ամեն մեկը թող մկրտվի՝ Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և դուք պիտի ստանաք Սուրբ Հոգու պարգևը:** **³⁹Որովհետև խոստումը ձեզ է ուղղված և ձեր որդիներին, և բոլորին, որ հեռուներից են, որոնց մեր Տեր Աստվածը պիտի կանչի»:** **⁴⁰Եվ ուրիշ շատ խոսքերով վկայություններ էր տալիս, հորդորում էր նրանց և ասում. «Ձեր անձերն այս խոտորյալ սերնդից ազատեցե՛ք»:** **⁴¹Եվ նրանք, որ ուրախությամբ ընդունեցին նրա խոսքերը, մկրտվեցին, և այն օրը նրանց երեք հազար հոգի ավելացավ:** **⁴²Եվ նրանք հաստատորեն շարունակում էին առաքյալների ուսմունքի, հաղորդակցության և հաց կտրելու ու աղոթքի մեջ:**

2:37 «իրենց սրտերում գոջացին» /անգլ.՝ նրանք մինչև իրենց սրտերը խոցվեցին/ Սա հունարեն *kata* ավելացված *nussō* տերմինն է: Հիմք հանդիսացող բառը կիրառվում է Հովհ.19:34-ում՝ Հիսուսին խաչին գամելիս: Պետրոսի քարոզը այս յարանիս ավետարանի ճշմարտությանը գամեց: Ակնհայտ է, որ սա վերաբերում է Սուրբ Հոգու կողմից մարդկանց համոզելուն, որի արդյունքում մարդիկ փրկվեցին (տես՝ Հովհ.16:8-11; Հռոմ.3:21-31):

2:38 «Ապաշխարեցե՛ք» Սա ԱՌԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը նշանակում է կատարել վերջնական որոշում: Ապաշխարություն բառի եբրայերեն տերմինը նշանակում էր գործողության փոփոխություն: Հունարեն տերմինը նշանակում է մտքի փոփոխություն: Ապաշխարությունը փոխվելու հոժարակամությունն է: Դա չի նշանակում մեղքի լիարժեք դադար, այլ նշանակում է Աստծուն հանձնելու ցանկություն, և ոչ թե ինքնաբավ ապրելակերպ: Որպես անկում ապրած մարդկություն, մենք ապրում ենք մեր համար, սակայն որպես հավատացյալներ մենք ապրում ենք Աստծո համար: Ապաշխարությունը և հավատքը փրկության համար Աստծո պահանջներն են (տես՝ Մարկ.1:15; Գործք 3:16, 19; 20:21): Հիսուսն ասաց. «Եթե չապաշխարեք, բոլորդ էլ կկորչեք» (տես՝ Ղուկ.13:3,5): Ապաշխարությունը ընկած մարդկության համար Աստծո կամքն է (տես՝ 2 Պետ.3:9; Եզեկ.18:23,30,32): Աստծո ամենակալության խորհուրդը և մարդու ազատ կամքը կարող են հստակ արտահայտվել ապաշխարությամբ, որպես փրկության համար պայման: Սակայն, պարադոքսը կամ բարբառային զուգակցումը կայանում է նրանում, որ այն նաև Աստծո պարգև է (տես՝ 5:31; 11:18 և 2 Տիմ.2:25): Աստծո կողմից նախաձեռնված շնորհքի և մարդկությանը անհրաժեշտ ուխտի արձագանքի աստվածաշնչյան ներկայացման մեջ միշտ էլ լարվածություն կա: Նոր ուխտը հին ուխտի պես ունի «եթե... ապա» կառուցվածքը: Գոյություն ունեն մի քանի տերմիններ, որոնք օգտագործվել են ՆԿ-ում և կապ ունեն ապաշխարության գաղափարի հետ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապաշխարությունը (հավատքի հետ միասին) թե՛ Հին Կտակարանի (*Nacham*, BDB 636, օր.՝ 13:12; 32:12,14; *Shuv*, BDB 996, օր.՝ 3 Թագ.8:47; Եզեկ.14:6; 18:30) և թե՛ Նոր Կտակարանի ուխտի պահանջներից է:

1. Հովհաննես Մկրտիչը (Մատթ.3:2; Մարկ.1:4; Ղուկ.3:3,8)
2. Հիսուսը (Մատթ.4:17; Մարկ.1:15; Ղուկ.5:32; 13:3,5; 15:7; 17:3)

3. Պետրոսը (Գործք 2:38; 3:19; 8:22; 11:18; 2 Պետ.3:9)
4. Պողոսը (Գործք 13:24; 17:30; 20:21; 26:20; Հռոմ.2:4; 2 Կորն.2:9-10)

Բայց ի՞նչ է ապաշխարությունը: Արդյո՞ք այն վիշտ է: Արդյո՞ք այն նշանակում է մեղքի բացակայություն: ՆԿ-ում այս հասկացության տարբեր լրացուցիչ իմաստները հասկանալու համար տրված լավագույն գլուխը 2 Կորնթացիներին 7:8-11, որտեղ կիրառվում են երեք փոխկապակցված, սակայն հունարեն տարբեր տերմիններ:

1. «վիշտ» (*lupeō*, տես՝ հհ. 8 [երկու անգամ], 9 [երեք անգամ], 10 [երկու անգամ], 11): Դա նշանակում է տխրություն կամ թախիծ և ունի աստվածաբանորեն չեզոք իմաստ:
2. «ապաշխարություն» (*metanoō*, տես՝ հհ. 9,10): Այն բաղադրյալ բառ է կազմված «հետո» և «միտք» բառերից, որոնք ակնարկում են նոր մտքին, նոր մտածելակերպին, կյանքի և Աստծո հանդեպ նոր վերաբերմունքին: Սա է ճշմարիտ ապաշխարությունը:
3. «գոջում» (*metamelomai*, տես՝ հհ. 8[երկու անգամ], 10): Սա բաղադրյալ բառ է կազմված «հետո» և «հոգալ» բառերից: Այն կիրառվում է Հուդայի համար՝ Մատթ.27:3-ում և Եսայի համար՝ Եբր.12:16-17-ում: Այն մատնանշում է հետևանքների և ոչ թե գործերի պատճառով վիշտ վերապրելուն:

Ապաշխարությունն ու հավատքը ուխտի համար պահանջվող գործողություններն են (տես՝ Մարկ.1:15; Գործք 2:38,41; 3:16,19; 21:21): Կան որոշ տեքստեր, որոնք ենթադրում են, որ Աստված է ապաշխարություն տալիս (տես՝ Գործք 5:31; 11:18; 2 Տիմ.2:25): Սակայն տեքստերից մեծամասնությունը դիտարկում է սա որպես մարդկությանը անհրաժեշտ ուխտի /կտակի մեջ մտնելու/ պատասխան Աստծո կողմից ձրի փրկության առաջարկին:

Թե՛ երբայերեն և թե՛ հունարեն տերմինների սահմանումները պարտադիր են, որպեսզի հասկանանք ապաշխարության լիարժեք իմաստը: Եբրայերենը պահանջում է «գործողության փոփոխություն» մինչև հունարենը՝ «մտքի փոփոխություն»: Փրկված անձը ստանում է նոր միտք և նոր սիրտ: Նա այլ կերպ է մտածում և ապրում: «Ինձ դրանից ի՞նչ» հարցի փոխարեն այժմ «Ի՞նչ է Աստծո կամքը» հարցն է տալիս: Ապաշխարությունը զգացմունք չէ, որը անցողիկ է կամ էլ կատարյալ անմեղություն չէ, այլ նոր փոխհարաբերություն Սուրբ Աստծո հետ, որը հետզհետե հավատացյալին փոխում է դարձնելով նրան սուրբ:

■ **«մկրտվեք»** Սա ևս մեկ ԱՌՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Քրիստոս Վոդանը, *Գործք* (Curtis Vaughan, *Acts*) ունի մի հետաքրքիր գրառում կապված Գործք 2:38-ի հետ իր գրքի էջ 28-ում՝

«Հունարեն բառը «մկրտվեք»-ի համար երրորդ դեմքի հրամայական է, իսկ «ապաշխարեք»-ի համար բառը՝ երկրորդ դեմքի հրամայական: Ավելի ուղղակի երկրորդ դեմքի հրամայականից դեպի ավելի քիչ ուղղակի երրորդ դեմքի «մկրտվեք»-ին անցումը ակնարկում է, որ Պետրոսի հիմնական առաջնային պահանջը ապաշխարությունն է»:

Սա հետևում է Հովհաննես Մկրտչի քարոզչության շեշտադրմանը (տես՝ Մատթ.4:17): Ապաշխարությունը կարծես լինի հոգևոր բանալին, իսկ մկրտությունը՝ այս հոգևոր փոփոխության արտաքին դրսևորումը: Նոր Կտակարանը ոչինչ չգիտեր չմկրտված հավատացյալների մասին: Վաղ շրջանի եկեղեցու մկրտությունը հավատքի հանրային դավանություն էր: Դա Քրիստոսի մեջ մարդու ունեցած իր հավատքի հանրային դավանության իրադարձությունն է և ոչ թե փրկության մեխանիզմը: Պետք է հիշել, որ Պետրոսի երկրորդ քարոզի մեջ մկրտությունը չի հիշատակվում, սակայն հիշատակվում է ապաշխարությունը (տես՝ 3:19; Դուկ.24:17): Մկրտությունը Հիսուսի կողմից դրված օրինակ է (տես՝ Մատթ.3:13-18): Մկրտությունը պատվիրված է Հիսուսի կողմից (տես՝ Մատթ.28:19): Նոր Կտակարանում չի տրվում փրկության համար մկրտության անհրաժեշտության ժամանակակից հարցը. բոլոր հավատացյալներից ակնկալվում է մկրտվել: Այնուամենայնիվ, պետք է նաև զգուշանալ սրբազան ավտոմատացումից: Փրկությունը կապված է հավատքի հետ և ոչ թե ճիշտ տեղի, ճիշտ բառերի, ճիշտ ձեռների գործադրության:

■ **«Հիսուս Քրիստոսի անունով»** Սա եբրայերեն դարձվածք է (բնութագրվող Հովել 2:32-ում), որը վերաբերում է Հիսուսի անձին կամ բնավորությանը: Հնարավոր է, որ վաղ եկեղեցու մկրտության ձևը, որը հավանաբար կրկնվում էր մկրտվողի կողմից, սա էր. «Հավատում եմ Հիսուսն է Տերը» (տես՝

Հռոմ.10:9-13; 1 Կորն.1:13,15): Սա հանդիսանում էր թե՛ աստվածաբանական հաստատություն և թե՛ անձնական վստահության հաստատություն: Մատթ.28:19-20-ի Մեծ Հանձնարարության մեջ Երրորդության անունը մկրտության սահմանումն է: Կրկին անգամ ուզում եմ նշել, որ մենք պետք է զգուշանանք մեխանիկաբար սրբացումից: Սահմանման վերնագիրը չէ կարևորը, այլ մկրտվողի սիրտը: «Քրիստոս»-ի համար տես Հատուկ Թեմա, 2:31-ում:

- **NASB, NJB, NIV** «ձեր մեղքերի ներման համար»
- NKJV** «մեղքերի թողության համար»
- NRSV** «որպեսզի ձեր մեղքերը ներվեն»
- TEV** «որպեսզի ձեր մեղքերը ներված լինեն»

Աստվածաբանական հարցը հետևյալն է, թե ինչպե՞ս է «համար» (*eis*) բառը գործում: Արդյո՞ք ներումը կապված է «ապաշխարել» կամ «մկրտվել» բառերի հետ: Արդյո՞ք ներումը կապված է ապաշխարությունից և/կամ մկրտությունից:

Eis բառի հնարավոր կիրառությունները բազմաթիվ են: Ամենատարածված կիրառությունը «այս տեսանկյունից» կամ «այդ իսկ պատճառով» է: Մկրտական աստվածաբաններից շատերը նախընտրում են «քանի որ» խոսքը աստվածաբանական նկատառումներով, սակայն դա քիչ դեպքերում: Հանախ նույնիսկ մեր ենթադրությունները կատարվում են ըստ այս քերականական վերլուծության մակարդակի: Մենք պետք է թույլ տանք, որ Աստվածաշունչը խոսի իր համատեքստի մեջ, ապա ստուգենք զուգահեռ հաստատությունից, և ապա մեր համակարգված աստվածաբանությունից: Բոլոր մեկնաբանները հարաբերական են ըստ պատմության, հարանվանության և փորձառության:

Քրիստոսի վրա ունեցած հավատքի միջոցով ներումը Գործք Առաքելոցի քարոզներում պարբերաբար կրկնվող թեմա է (այսինքն՝ Պետրոսը՝ 2:38; 3:19; 5:31; 10:43; և Պողոսը՝ 13:38):

■ «պիտի ստանաք Սուրբ Հոգու պարգևը» Սա ԱՊԱՌՆԻ ՉԵԶՈՔ (դեպոնենտ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սուրբ Հոգու պարգևն էր.

1. հաստատ փրկությունը /փրկության վստահությունը/
2. ներբնակեցված Աստծո ներկայությունը
3. ծառայության համար սպառազինությունը
4. Քրիստոսին նմանվելու մեջ անելը

Մենք չպետք է փրկության հետ կապված հարցերը կամ իրադարձությունների հերթականությունը ինքներս թելադրենք, քանի որ դրանք հանախ Գործքում տարբեր են: Գործք Առաքելոցի նպատակը ստանդարտ բանաձև կամ աստվածաբանական հերթականություն սովորեցնելը չէ (տես՝ *Ինչպես Կարդալ Աստվածաշունչը Իր ամբողջ Իմաստով*, էջ՝ 94-112), այլ արձանագրել այն ինչ տեղի է ունեցել:

Պետք է արդյո՞ք, որ մեկնաբանը/քարոզիչը օգտագործի այս տեքստը հաստատելու փրկության գործողությունների հերթականությունը՝ ապաշխարել, մկրտվել, ներվել և ապա Հոգու պարգևը: Իմ աստվածաբանությունը կարիք ունի Հոգուն հենց սկզբից էլ գործընթացի մեջ (տես՝ Հովհ.6:44, 65) և կենսականորեն կարևոր է համոզելու (տես՝ Հովհ.16:8-12), ապաշխարության (տես՝ 5:31; 11:18; 2 Տիմ.2:25) և հավատքի ամբողջ ընթացքում: Հոգին է առաջնայինը և կարևորը (տես՝ Հռոմ.8:9) սկզբից մինչև վերջ: Նա հաստատ չի կարող լինել հերթականության վերջում:

Գրքերից մեկը, որն ինձ օգնեց դուրս հանելու իմ հարանվանական նստվածք տված վարդապետությունը և թույլ տալ, որ Աստվածաշունչը խոսի իր իշխանությամբ, դա Փ. Փ. Բրյուսի *Հարցերի Պատասխաններ* գիրքն է (F. F. Bruce, *Answers To Questions*): Այնտեղ նա մի քանի լավ մեկնաբանություններ է կատարում Գործք 2:38-ի վերաբերյալ: Դրանցից մեկը, որ ուշադրությունս գրավեց, հետևյալն է.

«Հոգու այսպիսի ընդունելությունը հնարավոր էր վերապրել մկրտությունից առաջ (Գործք 10:44), մկրտությունից հետո (Գործք 2:38) կամ մկրտությունից հետո *գումարած* առաքյալների ձեռնադրությամբ (Գործք 8:16; 19:54)» (էջ 167):

Ժամանակակիցները կամենում են վարդապետության հստակ սահմանումներ, որոնք հնարավոր կլինեն հաստատել, բայց սովորաբար նրանք ընդունում են «տեքստային ապացույցներ» մեկնաբանության մեթոդը և առանձնացնում միայն այն տեքստերը, որոնք համապատասխանում են իրենց նախնական հասկացողությանը, հակումների (տես՝ Աստվածաշնչյան Մեկնաբանություն սեմինարը, www.freebiblecommentary.org)

2:39 «խոստումը ձեզ է ուղղված և ձեր որդիներին» Սա ՀԿ-յան հավաքական, բազմասերունդ, ընտանեկան հասկացություն է (տես՝ Ելից 20:5-6 և 2 Օր.5:9-10; 7:9): Երեխաների հավատքը ազդեցության էր ենթարկվում ծնողների կողմից և ծնողների պատասխանատվությունն էր (տես՝ 2

Օր.4:9; 6:6-7; 20-25; 11:19; 32:46): Այսպիսի միասնական ազդեցությունը նաև ուներ իր վախեցնող կողմը Մատթ.27:25-ի լույսի ներքո («Նրա արյունը լինի մեր և մեր որդիների վրա»):

Բազմաթիվ սերունդների վրա ազդող հավատքի խոստումը օգնում է ինձ վստահելու, որ Աստված իմ հավատքը կօգտագործի ազդելու, օրհնելու և պաշտպանելու իմ սերունդներին (տես՝ 2 Օր.7:9): Սա չի հերքում անձնական պատասխանատվությունը, այլ ավելացնում է հավաքական ազդեցության ևս մի տարր: Իմ հավատքը և իմ հավատարիմ ծառայությունը Քրիստոսի մեջ խորը ազդեցություն է թողնում իմ ընտանիքի և նրանց ընտանիքների վրա և այդպես շարունակ (տես՝ 2 Օր.7:9): Ինչպիսի՜ հուսադրող և նպատակադրող խոստում: Հավատքը հոսում է ընտանիքների միջով:

Գործքում Աստծո խոստումը (2:39) պարունակում է ՀԿ-ի հետ կապված մի քանի կետեր.

1. մեղքերի ներում՝ 2:38; 3:19; 5:31; 10:43; 13:38-39; 26:18
2. փրկություն՝ 2:21; 4:12; 11:14; 13:26; 16:31
3. Հոգին՝ 2:38-39; 3:19; 5:32; 8:15-18; 10:44-48; 19:6
4. սփռված ժամանակներ՝ 3:19

■ **«բոլորին, որ հեռուներից են»** Պետրոսը դիմում է հրեա ժողովրդին: Բնագրում այս արտահայտությունը վերաբերվում էր գերության մեջ գտնվող հրեաներին, որոնք վերադառնալու էին Խոստացյալ Երկիր (տես՝ Ես.57:19): Սակայն որոշ հատվածներում կարծես թե նաև վերաբերում է հեթանոսներին, որոնք շատ հեռու էին ՅԱՀՎԵ-ի ճանաչողությունից (տես՝ Ես.49:1; Չաք.6:15): Ավետարանի բարի լուրն այն է, որ միակ ճշմարիտ Աստվածը (այսինքն՝ միաստածությունը), որը ստեղծել է մարդուն Իր պատկերով (տես՝ Ծննդ.1:26-27), փափագում է փոխհարաբերվել բոլորի հետ (տես՝ 1 Տիմ.2:4; 2 Պետ.3:9): Սա Քրիստոսի մեջ ամբողջ մարդկության միաբանության հույսն է: Նրա մեջ այլևս չկան հրեաներ-հույներ, գերիներ-ազատներ, տղամարդիկ-կանայք, այլ բոլորն էլ մեկ են (տես՝ Եփեսե.2:11-3:13): Պողոսը օգտագործում է հենց այս մեջբերումը դիմելով հեթանոսներին Եփեսե.2:13 և 17-ում: Հոգու նոր դարաշրջանը բերեց անսպասելի միաբանություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՆՈԹԵԻԶՄ /միաստվածություն/

«Միաստվածության» հասկացությունը (միայն մեկ Աստված), ոչ թե պարզապես բազմաստվածության «ամենաբարձր աստվածը» կամ պարսկական դուալիզմի բարի աստվածը (Չրադաշտություն), բնորոշ է Իսրայելին (Աբրահամ, Ք.Ա.2000): Միայն մեկ բացառություն կա շատ կարճ ժամանակով Եգիպտոսում (Ամենհոտեպ IV, նաև հայտնի որպես Ախենաթեն, Ք.Ա.1367-1350 կամ 1386-1361):

Այս գաղափարը ՀԿ-ում արտահայտվում է մի քանի հատվածներում:

1. «չկա ոչ ոք ՅԱՀՎԵ-ի կամ *Elohim*-ի պես» Ելից 8:10; 9:14; 2 Օր.33:26; 3 Թագ.8:23
2. «ոչ ոք բացի Նրանից» 2 Օր.4:35,39; 32:39; 1 Թագ.2:2; 2 Թագ.22:32; Ես.45:21; 44:6,8; 45:6,21
3. «ՅԱՀՎԵն մեկն է» 2 Օր.6:4; Հռոմ.3:30; 1 Կորն.8:4,6; 1 Տիմ.2:5; Հակ.2:19
4. «չկա Քեզ պես մեկը», 2 Թագ.7:22; Երեմ.10:6
5. «միայն Դու ես Աստված» Սաղմ.86:10; Ես.37:16
6. «Ինձանից առաջ Աստված չեղավ, և ինձանից հետո չի լինելու» Ես.43:10
7. «Ինձանից բացի ուրիշ Աստված չկա... ուրիշը չկա» Ես.45:5,6,22
8. «Նրանից բացի ուրիշ Աստված չկա» Ես.45:14,18
9. «Ինձանից բացի ուրիշ Աստված չկա» Ես.45:21
10. «Ես եմ Աստված ու Ինձ նմանը չկա» Ես.46:9

Պետք է ընդունել, որ այս կենսականորեն կարևոր վարդապետությունը հայտնությանը աստիճանաբար է տրվել: Սկզբնական սահմանումը հավանաբար հասկացվել է որպես «հենդթեիզմ» կամ գործնական մոնոթեիզմ (այսինքն՝ գոյություն ունեն այլ աստվածներ, սակայն մեր համար կա միայն մեկը. տես՝ Ելից 15:11; 20:2-5; 2 Օր.3:28; 5:7; 6:4,14; 10:17; 32:12; 3 Թագ.8:23; Սաղմ.83:18; 86:8; 136:1-2):

Առաջին տեքստերը, որոնք սկսել են մատնանշել եզակիություն՝ (փիլիսոփայական մոնոթեիզմ) վաղ շրջանի են (Ելից 8:10; 9:14; 2 Օր.4:35, 39; 33:26): Լիարժեք և կատարյալ սահմանումները գտնվում են Եսայի 43-46 (տես՝ 43:11; 44:6,8; 45:7,14,18,22; 46:5,9):

ՆԿ-ը վկայակոչում է 2 Օր.6:4-ը Հռոմ.3:30; 1 Կորն.8:4,6; Եփես.4:6; 1 Տիմ.2:5 և Հակ.2:19-ում: Հիսուսը մեջբերում է այն որպես առաջին պատվիրան Մատթ.22:36-37; Մարկ.12:29-30; Դուկ.10:27: Թե՛ ՀԿ-ը և թե՛ ՆԿ-ը հաստատում են այլ հոգևոր էակների գոյությունը (դևեր, հրեշտակներ), սակայն միայն մեկ արարիչ՝ փրկիչ Աստված կա (ՅԱՀՎԵ, Ծննդ.1:1):

Աստվածաշնչյան միաստվածությունը բնութագրվում է.

1. Աստված մեկ է և բացառիկ (գոյաբանությունը ընդունված է, ոչ թե գատորոշված)
2. Աստված անձ է (տես՝ Ծննդ.1:26-27; 3:8)
3. Աստված բարոյական է (տես՝ Ելից 34:6; Նեեմ.9:17; Սաղմ.103:8-10)
4. Աստված մարդուն Իր պատկերով է ստեղծել (Ծննդ.1:26-27) հաղորդակցվելու համար (այսինքն՝ #2): Նա նախանձոտ Աստված է (տես՝ Ելից 20:2-3):

Նոր Կտակարանից.

1. Աստված ունի երեք հավիտենական, անձնական դրսևորումներ (տես՝ Հատուկ Թեմա. Երրորդություն, 8:11)
2. Աստված կատարելապես և ամբողջովին հայտնեց Իրեն Հիսուսի մեջ (տես՝ Հովհ.1:1-14; Կող.1:15-19; Եբր.1:2-3)
3. Ընկած մարդկության փրկության համար Աստծո հավիտենական ծրագիրը Իր միակ Որդու քավության գոհն է (Եսայի 53; Մարկ.10:45; 2 Կորն.5:21; Փիլ.2:6-11; Եբրայեցիներին)

■ **«որոնց մեր Տեր Աստվածը պիտի կանչի»** Սա ԱՌԲՍ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է: Այն ըստ բնագրի վերաբերում էր սփռված հուդայականությանը: Աստված միշտ նախաձեռնողն է (ՉԵՉՈՔ ՍԵՌ, տես՝ Հովհ.6:44,65): Եզեկ.18:32; Հովհ.3:16; 1 Տիմ.2:4; 2 Պետ.3:9-ից մենք գիտենք, որ Նա կանչում է բոլոր մարդկանց դեպի Իրեն: Սակայն նրանք պետք է արձագանքեն (այսինքն՝ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ):

«Ճատ» և «բոլոր» տերմինները համաձայն Աստվածաշնչի հոմանիշներ են (համեմատեք Ես.53:6՝ «բոլոր» Ես.53:11,12՝ «շատ» -ի հետ կամ Հռոմ.5:18՝ «բոլոր»-ը Հռոմ.5:19՝ «շատ»-ի հետ): Աստծո սիրտը ցավում է Իր պատկերով ստեղծված մեղավոր մարդկության համար (տես՝ Ծննդ.1:26-27), ստեղծված Իր հետ հաղորդակցվելու համար (տես՝ Ծննդ.3:8):

2:40 «ուրիշ շատ խոսքերով» Սա տեքստային մեկ այլ ապացույց է այն բանի, որ Գործքում արձանագրված քարոզները ամփոփ են: Սա նաև վերաբերվում է Ավետարաններում Հիսուսի ուսմունքներին և քարոզներին: Մենք ենթադրաբար հաստատում ենք այս ամփոփումների ներշնչանքն ու հավաստիությունը: Առաջին դարի աշխարհը սովոր էր բանավոր ներկայացումներին և դրանց պահպանմանը:

■ **«վկայություններ էր տալիս»** Այս հունարեն տերմինը (*dia* գումարած *marturomai*) տարածված է Ղուկասի ավետարանում (տես՝ 2:40; 8:25; 10:42; 18:5; 20:21,23,24; 23:11; 28:23; Ղուկ.16:28): Ավետարանն ունի հրատապություն և կատարելություն, որը հնարավոր չէ անտեսել ո՛չ քարոզելիս և ո՛չ էլ լսելիս:

■ **«հորդորում էր նրանց»** Մարդիկ պետք է արձագանքեն Քրիստոսի մեջ Աստծո գոհին (տես՝ Հովհ.1:12; 3:16; Հռոմ.10:9-13): Սա Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի պարադոքսն է (տես՝ Փիլ.2:12-13):

■

NASB, NKJV «փրկե՛ք»
NRSV, TEV, NJB «փրկեցե՛ք ձեզ»

Այս տերմինի լեզվաբանական տեսակն է ԱՌԲՍ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ եղանակը, սակայն ինչպես տեսնում եք NRSV, TEV և NJB թարգմանում է այն ՉԵՉՈՔ ՍԵՌՈՎ: Սա է փրկության վերաբերյալ աստվածաբանական լարվածությունը (տես՝ Փիլ.2:12-12): Արդյո՞ք ամեն բան Աստծուց է կախված, թե լսողը պետք է թույլ տա, որ Աստված գործի իր կյանքում:

Հունարեն «փրկվեք» տերմինը (*sōsō*) նկարագրում է ֆիզիկական ազատության (տես՝ Հակ.5:15,20) եբրայերեն հասկացությունը (*yasha*, BDB 446, տես՝ Ելից 14:30), մինչ ՆԿ-ում այն ունի հոգևոր ազատագրման կամ փրկության հավելյալ իմաստը (տես՝ Հակ.1:21; 2:14; 4:12):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՒՆԱՐԵՆ ԲԱՅԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Փրկությունը իր չէ, այլ փոխհարաբերություն: Այն չի վերջանում Քրիստոսին վստահելով, այլ միայն սկսվում է (դարպասը, ապա ճանապարհը): Այն հրշեջ ապահովագրության փաստաթուղթ չէ, ոչ էլ երկինք տանող տոմս, այլ Քրիստոսի նմանությանը հասնելու անմահ կյանք: Մենք Ամերիկայում

ունենք մի այսպիսի ասացվածք, որն ասում է. որքան շատ են զույգերը միասին ապրում, այնքան նմանվում են: Սա՛ է փրկության նպատակը:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ (ԱՈՐԻՍՏ)

- Գործք 15:11
- Հռոմեացիս 8:24
- 2 Տիմոթեոս 1:9
- Տիտոս 3:5
- Հռոմեացիս 13:11 (ԱՈՐԻՍՏԸ ԱՊԱՌՆԻԻ հետ միասին)

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՎԻՃԱԿ (ՎԱՂԱԿԱՏԱՐ)

- Եփեսացիներին 2:5,8

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ (ՆԵՐԿԱ)

- 1 Կորնթացիներին 1:18; 15:2
- 2 Կորնթացիներին 2:15
- 1 Պետրոս 3:21

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱԳԱՅԻ ՎԱԽՃԱՆ (ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ կամ համատեքստ)

- Հռոմեացիներին 5:9,10; 10:9,13
- 1 Կորնթացիներին 3:15; 5:5
- Փիլիպեցիներին 1:28
- 1 Թեսաղոնիկեցիներին 5:8-9
- Եբրայեցիներին 1:14; 9:28
- 1 Պետրոս 1:5

Հետևաբար, փրկությունը սկսվում է ներքին հավատքի որոշմամբ (տես՝ Հովհ.1:12; 3:16; Հռոմ.10:9-13), սակայն սրա արդյունքում պետք է լինի հավատքի ապրելակերպ (տես՝ Հռոմ.8:29; Գաղ.2:19-20; Եփես.1:4; 2:10), որը մի օր տեսանելի կդառնա (տես՝ 1 Հովհ.3:2): Այս վերջնական վիճակը կոչվում է փառավորում: Սա կարող է լուսաբանվել որպես.

1. ներքին փրկություն՝ արդարացում (փրկված մեղքի պատժից)
2. ընթացիկ փրկություն՝ սրբացում (փրկված մեղքի գորությունից)
3. վերջնական փրկություն՝ փառավորում (փրկված մեղքի ներկայությունից)

■ «այս խոտորյալ սերնդից» Սա կարող է ակնարկ լինել 2 Օր.32:5 և Սաղմ.78:8-ից: «Արդար» «արդարություն» տերմինների ՀԿ-յան արմատը հանդիսանում է «գետի եղեգ»-ը (տես՝ Հատուկ Թեմա 3:14-ում): Այն դարձավ շինարարության հետ կապված փոխաբերություն՝ չափման եղեգ կամ ուղիղ չափանիշ: Աստված ընտրել է այս փոխաբերությունը նկարագրելու Իր էությունը: Նա է չափանիշը: Մեղքի համար օգտագործվող բառերի մեծամասնությունը Եբրայերենում և Հունարենում մատնանշում են այս չափանիշից խոտորելը՝ շեղվելը (այսինքն՝ շեղված, խոտորյալ): Բոլոր մարդիկ կարիք ունեն փրկվելու և նորոգվելու:

2:41

NASB «ընդունեցին»

NKJV «ուրախությամբ ընդունեցին»

NRSV «ողջունեցին»

TEV «հավատացին»

NJB «ընդունեցին»

Սա *apodechomai*-ի ԱՈՐԻՍՏ ՉԵՉՈՔ ԴԵՐԲԱՅՆ է: Լու և Նիդա, *Հունարեն-Անգլերեն Բարբառ գրքում* (Louw and Nida, *Greek-English Lexicon*) նշում են այս տերմինի երեք գործածությունները (տես՝ հատոր 2, էջ 28):

1. Մարդուն ողջունելը
2. ինչ-որ մեկի կամ ինչ-որ բան ընդունելը որպես ճշմարտություն և պատշաճ կերպով պատասխանելը
3. ճանաչել ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի արժանահավատությունը կամ արժեքը

Ղուկասը հաճախ է գործածում այս բառը (տես՝ Ղուկ.8:40; 9:11; Գործք 2:41; 18:27; 24:3; 28:30): Ավետարանը անձ է, որին պետք է ողջունել՝ ընդունել, ճշմարտություն այդ անձի մասին, որին պետք է հավատալ, և այդ անձի կյանքի պես կյանք, որը պետք է ապրել: Բոլոր երեքն էլ չափազանց կարևոր են:

■ **«մկրտվեցին»** Մկրտությունը կրոնական ակնկալիք էր հրեաների համար, երբ նրանք մտնում էին Տանարը: Նորահավատները ինքնամկրտություն էին կատարում: Լսողների համար սա ակնկալվող կրոնական գործողություն էր, սակայն արդեն նոր իմաստով: Հիսուսն Ինքը մկրտվեց (Մատթ.3:13-17). Հիսուսը պատվիրեց մեզ մկրտվել (Մատթ.28:19)՝ դա մեզ օգնում է որոշման մեջ: ՆԿ-ը չմկրտված հավատացյալների մասին ոչինչ չգիտի: Կարծում եմ, որ սա եղավ հուդայականությունից վերջնականապես անջատման և Աստծո նոր ժողովրդի ձևավորման սկիզբը (այսինքն՝ Եկեղեցին, տես՝ Գաղ.6:16):

■ **«երեք հազար հոգի»** Սա մի կյոր, սակայն մեծ թիվ է: Պետրոսի պատգամը այս ականատեսներին տեղում գամեց: Նրանք պատրաստ էին վստահելու համար հավատքի քայլ անել:

1. Հիսուսը Մեսիան էր
2. Մեսիան պետք է չարչաչվեր
3. Նրան հավատալը ներում ստանալու միակ ճանապարհն էր
4. մկրտությունը նպատակահարմար էր

Սրա համար պահանջվում էր վճռական, անմիջական, կյանք փոխող որոշում կայացնել (ինչպես և այսօր): Տե՛ս Հատուկ Թեմա. *Kerygma*, 2:14

2:42 «և նրանք շարունակում էին նվիրել իրենց անձերը» Ղուկասը հաճախ է գործածում այս հասկացությունը (տես՝ 1:14; 2:42,46; 6:4; 8:13; 10:7): Երբ նրանք միասին էին, նկատեք, թե ինչ էին անում.

1. ուսմունքի մեջ էին (տես՝ 2:42; 4:2,18; 5:21,25,28,42)
2. հաղորդակցության
3. հաց կտրելու (այսինքն՝ հնարավոր է սա վերաբերում է Տիրոջ Ընթրիքին, տե՛ս հ. 46 գրառումը)
4. աղոթքի (տես՝ հհ. 43-47)

Սրանք են այն բաները, որ պետք է սովորեցնենք նորահավատներին: Այս նորադարձները ճշմարտության և հաղորդակցության ծարավ ունենին: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. *KOINŌNIA*

«Հաղորդակցություն» տերմինը (*koinōnia*) նշանակում է՝

1. անձի հետ մտերմիկ շփում՝
 - ա. Որդու հետ (տես՝ 1 Հովհ.1:6; 1 Կորն.1:9)
 - բ. Հոգու հետ (տես՝ 2 Կորն.13:13; Փիլ.2:1)
 - գ. Հոր և Որդու հետ (տես՝ 1 Հովհ.1:3)
 - դ. Ուխտի մեջ գտնվող այլ եղբայրների և քույրերի հետ (տես՝ 1 Հովհ.1:7; Գործք 2:42; Գաղ.2:9; Փիլիմ.17)
2. մտերմիկ շփում ինչ-որ բաների կամ խմբերի հետ՝
 - ա. ավետարանի հետ (տես՝ Փիլ.1:5; Փիլիմոն 6)
 - բ. Քրիստոսի արյան հետ (տես՝ 1 Կորնթ.10:16)
 - գ. ոչ խավարի հետ (տես՝ 2 Կորնթ.6:14)
 - դ. չարչարանքի հետ (տես՝ Փիլ.3:10; 4:14; 1 Պետ.4:13)
3. ընծա կամ նվիրատվություն՝ առատաձեռնությամբ (տես՝ Հռոմ.12:13; 15:26; 2 Կորնթ.8:4; 9:13; Փիլ.4:15; Եբր.13:16)
4. Քրիստոսի միջոցով Աստծո շնորհքի պարգևը, որը վերականգնում է մարդկության փոխհարաբերությունը Նրա և Իր քույրերի, եղբայրների հետ:

Սա հաստատում է հորիզոնական փոխհարաբերությունը (մարդ մարդու հետ), որը բխում է ուղղահայաց փոխհարաբերությունից (մարդն Արարչի հետ): Այն նաև շեշտադրում է Քրիստոնեական փոխհարաբերության կարիքը և ուրախությունը: Բայի ժամանակը ընդգծում է այս համայնքի փորձառության սկիզբը և ընթացքը (տես՝ 1:3 [երկու անգամ], 6, 7): Քրիստոնեությունը համագործակցությամբ է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 2:43-47

43Եվ ամեն մարդու վրա վախ ընկավ, և առաքյալների ձեռքով շատ հրաշքներ ու նշաններ էին գործվում: **44**Ու ամենքը, որ հավատացին, միասին էին, և ինչ որ ունեին ընդհանուր էր: **45**Եվ իրենց ունեցվածքն ու ապրանքը վաճառում էին ու շահույթը բաշխում բոլորին, ում ինչ պետք էր: **46**Եվ ամեն օր միաբանությամբ տաճարում էին լինում, հաց էին կտրում տներում և իրենց կերակուրն ուրախությամբ ու սրտի պարզությամբ էին ուտում: **47**Աստծուն էին օրհնում ու ամբողջ ժողովրդի առաջ շնորհ գտնում: Եվ Տերը օրեցօր փրկվածներին ավելացնում էր եկեղեցուն:

2:43-47 Կարծես թե սա լինի Ղուկասի կողմից բազմաթիվ խմբագրված մեկնաբանություններից առաջինը (այսինքն՝ 6:7; 9:31; 12:24; 16:5; 19:20): Տե՛ս Ներածություն՝ «Նպատակը և Կառուցվածքը» Ա:

2:43 «ամեն մարդու վրա վախ ընկավ» Սա ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ (դեպոնենտ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակ է: Մենք անգլերենի «Ֆորիա» բառը ստանում ենք այս «աի» կամ «վախ» տերմինից: Աստծո ներկայությունը և գորությունը ստեղծել էր սուրբ մթնոլորտ, և նույնիսկ չփրկված մեղավորները գիտակցում էին ժամանակի և տեղի սրբությունը:

2:44 «ամենքը, որ հավատացին» Տե՛ս 3:16 գրառումը:

■ **«ինչ որ ունեին ընդհանուր էր»** «Համայնքում» այս սկզբնական շրջանի փորձառությունը հաջողված չէր (տես՝ 4:32-5:11): Այն նպատակ չէր հետապնդում դառնալու տիեզերական սկզբունք, այլ փորձ էր ստեղծելու սիրով լի, փոխադարձ աջակցություն ցուցաբերող համայնք կամ հավատք: Սա մի գեղեցիկ օրինակ է, որ ամեն ինչ որ գրվեց Աստվածաշնչում, նպատակ չի հետապնդել տիեզերական մասշտաբներ ստանալու: Այս նորահավատները մեկը մյուսի հանդեպ մեծ սիրով էին լցված: Օ՛, եթե մենք միայն կարողանայինք վերագտնել այս սերը և մեր մեջ Աստծո ներկայության և գորության զգացումը (տես՝ Հովհ.17:11,21,22,23):

2:46 «մեկ մտքով» /հայ.՝ միաբանությամբ/ Վաղ եկեղեցին բնութագրվում է նպատակի մեջ միաբանությամբ (տես՝ 1:14; 2:46; 4:24; 5:12): Մրանով չի ասվում, թե նրանք ամեն հարցում համաձայն էին, այլ որ նրանց սրտերն ու մտքերը միախուսված էին արքայության համար առաջնային հարցերի շուրջ և ոչ թե անձնական նախասիրությունների կամ կենցաղային հարցերի:

■ **«տաճարում»** Հավանաբար նրանք հավաքվել էին «Սողոմոնի սրահում» (տես՝ 3:11; 5:12): Հիսուսը այնտեղ սովորեցրեց (տես՝ Հովհ.10:23): Սողոմոնի Սրահը ծածկ ունեցող սյունաշարք էր, որ ձգվում էր Հերովդեսի Տաճարի հեթանոսների սրահի արևելյան կողմի երկայնքով (տես՝ Ջոզեֆուսի *Անտիկ*, 15.11.3 /Josephus' *Antiq*/): Ռաբբիները այդտեղ էին սովորեցնում: Մարդիկ պարբերաբար հավաքվում էին այնտեղ ուսմունք լսելու համար:

Ուշադրություն դարձրեք, որ վաղ եկեղեցին հաճախում էր տաճար և հավանաբար տեղի ժողովարանները, մինչև որ ռաբբիները անեծքի բանաձև սահմանեցին նրանց դեմ (մոտ մ.թ. 70), որը ստիպեց սինագոգի /ժողովարանի/ անդամներին անիծել Հիսուսին: Սա պատճառ հանդիսացավ, որ եկեղեցին և հուդայականությունը բաժանվեն: Վաղ շրջանի հավատացյալները պահում էին իրենց շաբաթական երկրպագությունը, սակայն նաև հավաքվում էին Կիրակի օրերին նշելու Հիսուսի հարության օրը: Հիշե՛ք, Հիսուսն Ինքը հանդիպեց Իր աշակերտներին երեք իրար հաջորդող Կիրակի երեկոներ:

■ **«հաց էին կտրում տներում»** Եթե «հաց կտրելը» Տիրոջ Ընթրիքի գործնական նշանակությունն է (տես՝ Ղուկ.22:19 և հատկապես agape խնջույքների կոնտեքստներում [1 Կորն.11:17-22; 2 Պետ.2:13-14; Հուդա հ.12] վաղ եկեղեցում, օրինակ՝ Գործք 20:7), ապա սա վերաբերում է տեղի տներում ամենօրյա հաղորդություն ընդունելուն (սակայն կարելի է ընդունել, որ այն գործածվում էր նաև սովորական ճաշելու համար, ինչպես Ղուկ.24:30,35): Զգուշացե՛ք ձեր հարանվանական դոգմատիկ սովորություններից Տիրոջ Ընթրիքի վերաբերյալ՝ երբ, որտեղ, ինչ հաճախականությամբ, ինչպես հարցերի հետ կապված: Կարևորը սիրտն է:

-
- NASB «ուրախությամբ և սրտի անկեղծությամբ»
- NKJV «ուրախությամբ և սրտի պարզությամբ»
- NRSV «ուրախ և մեծահոգի սրտերով»
- TEV «ուրախ և խոնարհ սրտերով»
- NJB «ուրախ և մեծահոգաբար»

Երկրորդ տերմինի թարգմանության բազմազանությունը ցույց է տալիս *aphelotēs* բառը թարգմանելու դժվարությունը: Տառացիորեն այն նշանակում է հարթ կամ հստակ, սակայն փոխաբերաբար գործածվում է որպես «պարզ» «անկեղծ» կամ «խոնարհ» (Louw and Nida): Տե՛ս Հատուկ Թեմա. Սիրտը, 1:24:

2:47

NASB, NKJV
NRSV
TEV
NJB

«ամբողջ ժողովրդի առաջ շնորհ էին գտնում»
«ամբողջ ժողովրդի առաջ բարեհաճություն էին գտնում»
«վայելում էին ամբողջ ժողովրդի բարեհաճությունը»
«բոլորի կողմից բարձր էին դասվում»

Այս արտահայտությունը վերաբերում է Երուսաղեմի ժողովրդի կողմից առաջին Քրիստոնյաների ընդունված լինելուն: Հասարակության տարբեր խավի ու աստիճանի մարդիկ լավ կարծիք ունեին այս առաջին հավատացյալների մասին: Քրիստոնյաները վտանգ չէին ներկայացնում Հռոմեական իշխանությունների կամ Հռոմեական խաղաղության համար (Գործքի նպատակներից մեկը): Եկեղեցու կազմավորման սկզբում ռաբբիական հուդայականության հետ դեռևս ճեղքում՝ բաժանում չկար:

■ «Տերը ավելացնում էր» Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: Աստվածաշունչը շեշտադրում է Աստծո ամենակալությունը: Ոչինչ առանց Աստծո կամքի տեղի չի ունենում: Ոչինչ անակնկալի չի բերում Աստծուն: Այնուամենայնիվ, միաստվածության հաստատման այս ՀԿ-յան կերպը (այսինքն՝ ինչ-որ մեկի պատճառ հանդիսանալը. տես՝ Հատուկ Թեմա, 2:39) սխալ էր հասկացվում: Ուզում եմ երկու Հատուկ Թեմա ներկայացնել՝ մեկը հավասարակշռության անհրաժեշտության վերաբերյալ, մյուսը՝ ուխտի: Հուսով եմ դրանք ձեզ կուսավորեն և ոչ թե կտաքացնեն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ – ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻ ԿԱՐԻՔԸ

Ընտրությունը հրաշալի վարդապետություն է: Սակայն, դա նախընտրելի լինելու կանչ չէ, այլ ուրիշների փրկության համար կապ, խողովակ, միջոց հանդիսանալու կանչ: Հին Կտակարանում այս տերմինը հիմնականում գործածվում էր ծառայության համար. Նոր Կտակարանում այն գործածվում է հիմնականում փրկության համար, որն էլ իր հերթին մղում է ծառայության: Աստվածաշունչը երբեք չի համաձայնեցնում Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի միջև եղած թվացյալ հակադրությունը, այլ դրանք հաստատում է: Աստվածաշնչյան այս խրթին հարցի /լարվածության/ լավ օրինակներից է Հռոմեացիների 9 գլուխը՝ Աստծո ամենակալ ընտրության շուրջ, իսկ Հռոմեացիների 10 գլուխը՝ մարդկության կողմից տրվող անհրաժեշտ պատասխանի շուրջ (տես՝ 10:11,13):

Աստվածաբանական այս խրթին հարցի կորիզը հնարավոր է գտնել Եփեսացիների 1:4-ում: Հիսուսը Աստծո ընտրյալ մարդն է և բոլորն էլ պոտենցիալ ընտրյալներ են Նրա մեջ (Karl Barth): Հիսուսը Աստծո «այո»-ն է մեղավոր մարդկության կարիքի համար (Karl Barth): Եփեսացիների 1:4-ը նաև օգնում է հստակեցնելու այս հարցը, հաստատելով, որ նախասահմանության նպատակը երկինքը չէ, այլ սրբությունը (Քրիստոսակերպությունը): Հաճախ մեզ գրավում են ավետարանի օգուտները և անտեսում ենք մեր պատասխանատվությունները: Աստծո կանչը (ընտրությունը) թե՛ ժամանակի և թե՛ հավիտենության համար է:

Վարդապետությունները կապված են այլ ճշմարտությունների հետ, ոչ թե եզակի՝ կապ չունեցող ճշմարտության: Լավ նմանության օրինակ կլինեն համաստեղությունը ընդդեմ մի աստղի: Աստված ներկայացնում է ճշմարտությունը արևելյան և ոչ թե արևմտյան ժանրերում: Մենք չպետք է անտեսենք վարդապետական ճշմարտությունների լեզվական՝ բարբառային (պարադոքսալ) գույգերի հարուցած լարվածությունը.

1. Նախասահմանությունն ընդեմ մարդու ազատ կամքի
2. Հավատացյալների ապահովությունը՝ պաշտպանությունը ընդդեմ համառության անհրաժեշտության
3. Սկզբնական մեղքը ընդդեմ կամավոր գործած մեղքի
4. Անմեղությունը (կատարելությունը) ընդդեմ ավելի քիչ մեղք գործելուն
5. Ներքին ակնթարթային՝ անմիջական, արդարացումն ու սրբացումը ընդդեմ աստիճանաբար անող սրբացման
6. Քրիստոնեական ազատությունը ընդդեմ Քրիստոնեական պատասխանատվության
7. Աստծո գերազանցությունը ընդդեմ Աստծո ինացության

8. Աստված, որին հնարավոր չէ ճանաչել, ընդդեմ Աստծո, որին Սուրբ Գրքի միջոցով կարելի է ճանաչել
9. Ներկայիս Աստծո Թագավորությունը ընդդեմ ապագայի վախճանի Աստծո Թագավորության
10. Ապաշխարությունը, որպես Աստծո պարգև ընդդեմ ապաշխարության, որպես մարդու կողմից տրված պատասխանը Աստծո հետ ուխտի մեջ մտնելու համար
11. Հիսուսը որպես Աստված ընդդեմ Հիսուսը որպես մարդ
12. Հիսուսը որպես Հորը հավասար ընդդեմ Հիսուսը Հորը ենթակայի

«Ուխտի» աստվածաբանական հասկացությունը համակցում է Աստծո ամենակալությունը (որը միշտ նախաձեռնողն է և ծրագիր կազմողը) մարդկանց կողմից սկզբում պարտադիր և ապա շարունակական ապաշխարող, հավատքի պատասխանի հետ: Չգուշացե՛ք գործածել տեքստային ապացույցներ պարադոքսի միայն մի կողմը պաշտպանելու, իսկ մյուս կողմը՝ թերազնահատելու համար: Չգուշացե՛ք միայն ձեր սիրելի վարդապետությունը կամ աստվածաբանության համակարգը հաստատելուց:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒԽՏ

ՀԿ-ի *berith* (BDB 136) տերմինը՝ ուխտը, այնքան էլ հեշտ չէ սահմանել: Եբրայերենում չկա դրան համապատասխան ԲԱՅԸ: Բոլոր փորձերը ստանալու ստուգաբանական կամ համանման սահմանում համոզիչ չեն: Սակայն, այս հասկացության ակներև կարևորությունը ստիպել է աստվածաբաններին հետազոտելու բառի գործածությունը, փորձելու սահմանել դրա գործնական՝ ֆունկցիոնալ իմաստը:

Ուխտը մի միջոց է, որով միակ ճշմարիտ Աստվածը գործ է ունենում մարդկանց հետ: Ուխտի, պայմանագրի կամ համաձայնագրի գաղափարը կարևոր դեր է խաղում աստվածաշնչյան հայտնությունը հասկանալու մեջ: Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի միջև ընկած լարվածությունը հստակ երևում է ուխտի հասկացության մեջ: Կան ուխտեր, որոնք հիմնված են բացառապես Աստծո բնավորության և գործողությունների վրա:

1. հենց արաչագործությունը (տես՝ Ծննդոց 1-2)
2. Աբրահամի կանչը (տես՝ Ծննդոց 12)
3. Աբրահամի հետ ուխտը (տես՝ Ծննդոց 15)
4. Նոյին պահպանելը և նրան տրված խոստումը (տես՝ Ծննդոց 6-9)

Սակայն ուխտի բնույթը ինքնին պահանջում է պատասխան՝ արձագանք:

1. հավատքով Ադամը պետք է հնազանդվի և չուտի Եդեմի պարտեզի կենտրոնի ծառից
2. հավատքով Աբրահամը պետք է հեռանա իր ընտանիքից, հետևի Աստծուն և հավատա ապագա սերունդներին
3. հավատքով Նոյը պետք է կառուցի մի հսկայական նավ, որը հեռու է ջրից և հավաքի կենդանիներին
4. հավատքով Մովսեսը Իսրայելացիներին հանեց Եգիպտոսից դեպի Սինա լեռը և ստացավ հատուկ կարգադրումներ կրոնական և սոցիալական կյանքի համար՝ օրհնության և անեծքի խոստումներով (տես՝ 2 Օր.27-28):

Մարդկանց հետ Աստծո փոխհարաբերության մեջ ըղգրկված այս նույն լարվածությունը հաղորդվում է «նոր ուխտի» մեջ: Այդ լարվածությունը կարելի է հստակ տեսնել համեմատելով Եզեկիել 18-ը Եզեկիել 36:27-38-ի հետ (ՅԱՀՎԵԻ գործը): Արդյո՞ք Աստծո գթառատ գործերի վրա հիմնված ուխտը պարտադրում է մարդու արձագանքը: Սա Հին և Նոր Ուխտերի միջև գտնվող կարմիր լույսն է: Երկուսի նպատակն էլ նույնն են՝ (1) YHWH-ի հետ փոխհարաբերության վերականգնումը, որը մարդը կորցրել էր Ծննդոց 3-ում և (2) արդար ժողովուրդ բարձրացնելը, որը կարտացոլի Աստծո բնավորությունը:

Երեմ.31:31-34-ի նոր ուխտը լուծում է այս լարվածությունը՝ հեռացնելով մարդկային գործոնը որպես ընդունելության արժանանալու միջոց: Աստծո օրենքը արտաքին օրինապահության փոխարեն դառնում է ներքին ցանկություն: Աստվածավախ, արդար մարդկանց նպատակը մնում է նույնը, սակայն փոխվում է մեթոդը: Անկում ապրած մարդկությունը ապացուցել էր, որ արժանի չէր լինելու Աստծո պատկերի արտացոլանքը: Խնդիրը Աստծո ուխտը չէր, այլ մարդու մեղսալիությունը և տկարությունը (տես՝ Հռոմեացիների 7; Գաղատացիների 3):

ՀԿ-ի պայմանական և ոչ պայմանական ուխտերի միջև եղած նույն լարվածությունը մնում է ՆԿ-ում: Փրկությունը բացարձակ ձրի է Հիսուս Քրիստոսի ավարտած գործի շնորհիվ, սակայն այն պահանջում է ապաշխարություն և հավատք (թե՛ սկզբում և թե՛ շարունակաբար): Այն թե՛ օրենքի

հայտարարություն է և թե՛ Քրիստոսի պես լինելու կոչ, որը մատնանշում է, որ Աստծո կողմից ընդունված ես և պատվիրում է սրբություն: Հավատացյալները չեն փրկվում իրենց վարքով, գործերով, այլ հնազանդությամբ (տես՝ Եփես.2:8-10): Աստվածավախ ապրելակերպը դառնում է փրկության վկայությունը, ոչ թե փրկության միջոց: Սակայն հավիտենական կյանքն ունի տեսանելի հատկանիշներ: Այն հատակ երևում է Եբրայեցիներին ուղղված նամակի մեջ:

- NASB, NRSV «նրանց թվին»
- NKJV «եկեղեցուն»
- TEV «նրանց խմբին»
- NJB «նրանց համայնքին»

Epi to auto արտահայտությունը գործածվում է Դասական Հունարենում և Կոյնե Հունարենում (Սեպտուագինտա և Գործք 1:15; 2:1,47; 1 Կորն.11:20; 14:23), որը նշանակում է «միասին հավաքվել» (Metzger, *Textual Commentary*, p.305): Այստեղ ՆԿ-ում այն վերաբերում է եկեղեցու հավաքույթին: Ուստի, Տերը ավելացնում էր եկեղեցուն (այսինքն՝ հավաքվածների վրա) ամեն օր: Սա ցույց է տալիս հավատացյալների այս առաջին սերնդի ավետարանչական ապրելակերպը:

■ «**փրկվածներին**» «Տերը (Աստված կամ Քրիստոսը) ավելացնում էր» արտահայտությունը, որը գործածվել էր նախորդ հ.46-ում, ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, սակայն այս արտահայտությունը (անգլերենում were being saved) ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ արտահայտած գործակալը Տերն է: «Փրկվածները» ընթացքի մեջ են: Փրկությունը սկսում է հավատալով/վստահությամբ/հավատքով (այսինքն՝ Հովհ.1:12; 3:16; Հռոմ.10:9-13): Փրկությունը մի փոխհարաբերություն է, որի նախաձեռնողը Աստված/Հոգին է (տես՝ Հովհ.6:44,65), սակայն այն պետք է լինի շարունակական փորձառություն: Այն երկինք տանող տոմս չէ կամ կյանքի ապահովագրության փաստաթուղթ. այն ամենօրյա, զարգացող հավատքի փոխհարաբերություն է: Տե՛ս Հատուկ Թեմա. Փրկության համար գործածված հունարեն Բայի Ժամանակներ, 2:40:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա սերտողության ուղեցույց մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ առաջնայինը դուք եք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը տրված են օգնելու ձեզ մտածելու գրքի այս բաժնում գետեղված կարևոր հարցերի շուրջ: Դրանց նպատակն է ձեզ առիթ ընձեռնելու մտածել այս հարցերի շուրջ, և ամեննին էլ վերջնական չեն:

1. Կազմե՛ք Պետրոսի քարոզի կմախքը:
2. Ո՞րն էր Պենտեկոստեի նպատակը:
3. Ինչպիսի՞ կապ կա Հովելի մարգարեության և այս համատեքստի միջև:
4. Բնութագրե՛ք Պետրոսի կողմից Հին Կտակարանի հատվածների կիրառությունը:

ԳՈՐԾՔ 3

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Տանարի Դռան մոտ կաղ մարդու բժշկվելը	Կաղը մարդու բժշկությունը	Բժշկություն Գեղեցիկ կոչվող Դռան մոտ	Կաղ մուրացկանը բժշկվում է	Կաղ մարդու բժշկությունը
3:1-10	3:1-10	3:1-10	3:1-10	3:1-10
Պետրոսի Խոսքը Սողոմոնի Սրահում	Քարոզ Սողոմոնի Սրահում	Պետրոսի քարոզը	Պետրոսի պատգամը Տանարում	Պետրոսի ուղղերձը ժողովրդին
3:11-26	3:11-26	3:11-26 3:17-26	3:11-26 3:17-26	3:11-26 3:17-24 3:25-26

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ ՀԵՏԵՎԵԼ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻՆ*

Սա սերտողության ուղեցույց մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզ հիշեցրեց յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք թեմաների ձեր բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների բաժինների հետ: Պարբերությունների բաժանելը ներշնչված չի եղել, սակայն դա բանալի է հետևելու բնագրի հեղինակի նպատակին, որը մեկնաբանության սիրտն է հանդիսանում: Յուրաքանչյուր պարբերություն ունի ընդամենը մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3-5 գլուխներում Հիսուսի ուսմունքների և Առաքյալների հրաշքների հանդեպ Երուսաղեմում տիրում է լարվածություն: Առաջին հինգ գլուխների ժամանակահատվածը մոտ մեկ տարի է:

Ա. Պետրոսը և Հովհաննեսը բժշկում են կաղ մարդուն, 3:1-4:31 (Գործք 2:43-ի մի օրինակ)

1. բժշկությունն ինքնին
2. բժշկությունը բացատրող Պետրոսի երկրորդ քարոզը
3. արձագանքն ու դատը (Պետրոսի երրորդ քարոզը տրված Մինեդրոնում)
4. հալածանքը սկսում է

Բ. Համայնքային կյանքի փորձը, Գործք 4:32-5:11

1. հավատացյալների սկզբնական միաբանությունը (Գործք 2:43-47-ի օրինակը)
2. Անանիայի և Սափիրայի հետ կապված խնդիրները

Գ. Կաղ եկեղեցու կապերը ռաբբիական հուդայականության հետ, 5:12-42

1. Եկեղեցու կյանքը
2. Մինեդրոնի նախանձը
3. Հրեշտակի միջամտությունը

4. Պետրոսի չորրորդ քարոզը
5. արձագանքը և պատիժը

ՀԻՍՈՒՄԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ 3-4 ՉԼՈՒԽՆԵՐՈՒՄ

- Ա. Նազովրեցի Հիսուս Քրիստոսը, 3:6; 4:10
 Բ. Նրա Շառա Հիսուսը, 3:13,26; 4:27
 Գ. Սուրբ և Արդարը, 3:14 (տես՝ 2:27)
 Դ. Կյանքի Առաջնորդը /Հեղինակը/, 3:15
 Ե. Քրիստոսը, 3:18,20; 4:10 (տես՝ «Տեր և Քրիստոս» - 2:36)
 Չ. Մարգարե, 3:22
 Է. Հնարավոր է «Աբրահամի Սերմը» տիտղոսի ակնարկը, 3:25-26
 Ը. Անկյունաքար, 4:11

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. 3:1-10

¹Արդ, իններորդ ժամի աղոթքի համար Պետրոսն ու Հովհաննեսը միասին տաճար գնացին: ²Եվ իր մոր որովայնից կաղ ծնված մարդ կար, որին ամեն օր բերում դնում էին տաճարի Գեղեցիկ կոչվող դռան մոտ, որպեսզի տաճար մտնողներից ողորմություն խնդրի: ³Նա տեսնելով Պետրոսին ու Հովհաննեսին տաճար մտնելիս, խնդրում էր, որ իրեն ողորմություն տան: ⁴Իսկ Պետրոսը Հովհաննեսի հետ միասին, նրան նայեց ու ասաց. «Մե՛զ նայիր»: ⁵Նա էլ դարձավ նրանց կողմը՝ ակնկալելով, որ նրանցից մի բան պիտի ստանա: ⁶Ապա Պետրոսն ասաց. «Արձաթ ու ոսկի ես չունեմ, բայց ինչ որ ունեմ, քեզ կտամ. Նազովրեցի Հիսուս Քրիստոսի անունով վեր կաց ու քայլի՛ր»: ⁷Եվ նրա աջ ձեռքից բռնեց, կանգնեցրեց նրան, ու իսկույն նրա ոտքի թաթերն ու կոճերը գորացան: ⁸Եվ տեղից ցատկելով՝ կանգնեց ու քայլում էր և նրանց հետ տաճար մտավ՝ քայլելով ու ցատկոտելով և Աստծուն օրհնելով: ⁹Ու ամբողջ ժողովուրդը տեսավ նրան, որ քայլում է ու օրհնում է Աստծուն, ¹⁰և ճանաչեցին, թե նա է, որ ողորմության համար տաճարի Գեղեցիկ կոչվող դռան մոտ էր նստում, և զարմանքով ու ապշությամբ լցվեցին նրա հետ պատահածից:

3:11 «Պետրոսն ու Հովհաննեսը միասին տաճար գնացին» Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Բոլոր առաջին աշակերտների սովորությունն էր ամեն օր Տաճար գնալը (տես՝ Ղուկ.24:53; Գործք 2:46): Հիսուսի առաջին հետևորդները Պաղեստինում երկրպագում էին՝

1. Տաճարում (եթե ոչ ամեն օր, ապա հասուկ օրերին)
2. տեղական ժողովարաններում /սինագոգներում/ (ամեն Շաբաթ օր)
3. հավատացյալների հետ Կիրակի օրը

Երկար ժամանակ այսպես էր ձևը: Այս հավատացյալները տարբերություն չէին դնում հուդայականության և Հիսուսի հանդեպ՝ որպես Խոստացված Մեսիայի, իրենց ունեցած հավատքի միջև: Նրանք համարում էին իրենց որպես «Իսրայելի ժողովուրդ կամ համայնք»: Այդ իսկ պատճառով իրենց խմբի համար նրանք ընտրեցին *ekklesia* անունը: Մեպտուազիստայում երբայերենից հենց այսպես է թարգմանված ուխտին վերաբերող այս արտահայտությունը՝ «Իսրայելի համայնք (*qahal*)»:

Երուսաղեմի անկումից հետո հրեաները պաշտոնապես գործի անցան և հաստատեցին երդման (Հիսուսին որպես Մեսիա մերժող) մի բանաձև, որպեսզի խստացնեն տեղական ժողովարաններում անդամությունը: Այս ժամանակներում էր, երբ եկեղեցին հաստատեց Կիրակի օրը որպես իր երկրպագության՝ պաշտամունքի օր (Հիսուսի հարության օրը նշելու. նաև Հիսուսը երեք տարբեր կիրակի օրեր Վերնատանը հայտնվեց Իր աշակերտներին):

Հովհաննեսին հաճախ Գործք Առաքելոցում նմանեցնում են Պետրոսին (տես՝ 1:13; 3:1, 3, 4, 11; 4:13,19; 8:14): Անկասկած հնարավոր է, որ Երուսաղեմի առաջին եկեղեցին ունենար առաջնորդների խմբեր, որոնք ներկայացնում էին ավետարանի տարբեր կարծիքներն ու կարևոր կետերը: Հավանաբար Պետրոսն ու Հովհաննեսը ավելի բաց էին հեթանոսներին ավետարանելու հարցում (տես՝ հհ. 8,10), մինչ Հակոբոսը (Հիսուսի կես եղբայրը) ավելի հայտնի էր իր հրեա պահպանողական կեցվածքով: Այս իրավիճակը ինչ-որ չափով փոխվեց Գործք Առաքելոց 15-ի Երուսաղեմի Խորհրդից հետո:

■ **«իններորդ ժամի աղոթքի համար»** Սա արևածագից ինը ժամ անց է: Հրեաները (այսինքն՝ Փարիսեցիները) ավանդաբար աղոթում էին ամեն օր առավոտյան ժամը իննին, կեսօրին՝ տասներկուսին, և ցերեկը՝ ժամը երեքին (հավանաբար հիմնվելով Սաղմոս 55:17-ի վրա): Այս հատվածը վերաբերում էր

երեկոյան գահաբերությանը, որը տեղի էր ունենում ժամը երեքին (առավոտյան գահաբերությունը՝ ժամը իննին): Տաճարում այս ժամերին շատ մարդիկ էին լինում (տես՝ 10:30):

3:2 «իր մոր որովայնից կաղ ծնված մի մարդ» Տաճարի բոլոր մշտական այցելուները տեղյակ էին այս մարդու վիճակից («բերում, դնում էին» ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ /անգլերենում/), ուստի նրա բժշկության հարցում խաբեության մեջ ներքաշվելու ոչ մի հնարավորություն չկար (տես՝ 3:10; 4:22): Սա ՀԿ-ի Մեսիական մարգարեության իրականացում էր (տես՝ Ես.35:6): Հրեաները նշան էին ուզում. Հիսուսը նրանց շատ նշաններ ցույց տվեց, իսկ հիմա ունեին ևս մի նշան, եթե միայն կամենային տեսնել այն:

Ահա Աստծո տան մոտ նստած այս հիվանդ մարդու հետ կապված ապշեցնող պարադոքսը: Իրականում, նույնիսկ արգելված էր այսպիսի մարդկանց ակտիվ մասնակցություն ցուցաբերել երկրպագության ժամանակ (այսինքն՝ որպես քահանաներ ծառայելը, տես՝ Ղևտ.21:16-24): Ավետարանը առաջարկում է նոր օր: Անգամ Եթովպացի (ոչ մի ռասայական խոչընդոտ) ներքինին (ոչ մի մարմնական խոչընդոտ) ընդունված անձ է նոր թագավորության մեջ (տես՝ 8:26-40):

■ **«տաճարի Գեղեցիկ կոչվող դռան մոտ»** Այս դռան ճշգրիտ տեղակայման վայրը հայտնի չէ: Հավանաբար դա եղել է Նիկանոր Դարպասը, որը պատրաստված է եղել կորնթոսյան պղնձից (Ֆլավիոս Ջոզեֆոս, *Անտիկ*, 15.11.3; *Պատերազմներ* 15.11.3 /Flavius Josephus, *Antiq.* 15.11.3; *Wars* 5.5.3/): Այն Հեթանոսների Սրահից տանում էր մինչև Կանանց Սրահը: Այն գտնվում էր տաճարի արևելյան մասում՝ Ջիթենյաց Լեռան առջև, Սողոմոնի Սրահի մոտ:

■ **«որպեսզի տաճար մտնողներից ողորմություն խնդրի»** Աղքատներին ողորմություն տալը հրեական հավատքի մեջ պարտադիր մաս էր կազմում (տես՝ Մատթ.6:1-4; Ղուկ.11:41; 12:33; Գործք 10:2,4,31; 24:17): Սովորաբար դրամահավաքը տեղի էր ունենում շաբաթական կտրվածքով՝ տեղի ժողովարաններում և ապա բաժանվում էր սնունդ, սակայն ակնհայտ էր, որ ոմանք ամեն օր հենց Տաճարի տարածքում էին ողորմություն խնդրում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ

I. Տերմինն ինքնին՝
Ա. ձևավորվել է հուդայականության մեջ (այսինքն՝ Մեպտուազինտայի ժամանակաընթացքում)
Բ. վերաբերում է աղքատին կամ կարիքավորին տալուն
Գ. անգլերեն բառը՝ ողորմություն տալ (almsgiving), ծագել է Հունարեն *eleēmosunē* տերմինի կրճատումից:

II. Հին Կտակարանյան հասկացությունը՝
Ա. Աղքատին օգնելու գաղափարը ավելի շուտ ակնարկվում էր Թորայում (Հնգամատյանում)
1. իրեն հատուկ համատեքստը՝ 2 Օր.15:7-11
2. «հասկ հավաքելը»՝ աղքատի համար հունձքից մի որոշ բաժին թողնելը՝ Ղևտ.19:9; 23:22; 2 Օր.24:20
3. «շաբաթ տարի» որը թույլ էր տալիս աղքատին ուտելու յոթներորդ տարվա անմշակ հողի բերքից՝ Ելից 23:10-11; Ղևտ.25:2-7
Բ. Այս գաղափարը ձևավորվել է Իմաստասիրական Գրականության մեջ (ընտրված օրինակներ)
1. Հոր 5:8-16; 29:12-17 (24:1-12-ում նկարագրված է ամբարիշտը)
2. Մաղմոսաց 11:7
3. Առակաց 11:4; 14:21,31; 16:6; 21:3,13

I. Ձևավորումը հուդայականության մեջ
Ա. Միջնայի առաջին բաժինը գործ ունի աղքատների, կարիքավորների և տեղացի Ղևտացիների հանդեպ վարվելակերպի հետ:
Բ. Ընտրված մեջբերումներ.
1. Միրաք 3:33՝ «Չուրը հանգցնում է բորբոքված կրակը, և ողորմածությունը քավում է մեղքերը» (Անկանոն Աստվածաշունչ/Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն/)
2. Միրաք 29:15՝ «Ողորմություն հավաքիր քո շտեմարաններում, և այն կփրկի քեզ զանազան չարչարանքներից (անգլ.՝ աղետներից)» (Անկանոն Աստվածաշունչ)
3. Տորիի 4:6-12՝ «Քանի որ, երբ արդար գործ անես, քո բոլոր գործերը կհաջողվեն, ինչպես հաջողվում է բոլորին, ովքեր արդարություն են գործում: ⁷Զո ունեցվածքից ողորմություններ կանես. ողորմություն անելիս թող քո աչքը ազահ չլինի. երեսդ չդարձնես բոլոր աղքատներից, և Տեր Աստվածն էլ Ի՛ր երեսը չի դարձնի քեզանից: ⁸Ինչքան շատ

ունենաս, ըստ այդ շատության կանես քո ողորմությունները, եթե քիչ ունենաս՝ ըստ քչի: ⁹Չհասպաղես ողորմություններ անել, ¹⁰քանի որ դրանով բարիքներ կգանձես քո կյանքի օրերին: ¹¹Արդարև ողորմությունները փրկում են մահվանից և թույլ չեն տալիս մտնել խավարի մեջ. ¹²ողորմությունները բարի պարգև են բոլորին, ովքեր այն անում են Աստծո առջև» (Անկանոն Աստվածաշունչ)

4. Տոբիթ 12:8-9 «⁸Բարի են աղոթքները՝ պահեցողություններով, ողորմություններով և արդարություններով. բարի է քիչ ունեցվածքը արդարությամբ, քան շատը՝ անիրավությամբ. լավ է ողորմություններ անել, քան ոսկու գանձ կուտակել. ⁹ողորմությունը փրկում է մահից, նա ինքն էլ մարդուն մաքրում է բոլոր մեղքերից. ովքեր ողորմություններ և արդարություններ են անում, լցվում են կյանքով» (Անկանոն Աստվածաշունչ)

Գ. Վերջին մեջբերումը Տոբիթ 12:8-9-ից ցույց է տալիս, որ խնդիրը կատարելագործվում է: Մարդկային գործերը, արժանիքները դիտարկվում էին թե՛ որպես ներման և թե՛ բարգավաճման մեխանիզմ:

Այս հասկացությունը հետագայում կատարելագործվեց Սեպտուագինտայում, որտեղ «ողորմության» համար հունարեն տերմինը (*eleēmosunē*) դարձավ «արդարության» (*dikaïosunē*) համար հոմանիշ բառ: Այս բառերը կարող էին մեկը մյուսին փոխարինել եբրայերենի «արդարություն» բառը թարգմանելիս (BDB 842, Աստծո ուխտի սերն ու հավատարմությունը, տես՝ 2 Օր.6:25; 24:13; Ես.1:27; 28:17; 59:16; Դան.4:27):

Դ. Բարեգործությունները մարդու համար դարձան ինքնին անձնական նպատակ այստեղ՝ երկրի վրա բարգավաճելու և մահից հետո փրկության հասնելու համար: Այս արարքն իր մեջ բովանդակող շարժառիթի փոխարեն, դարձավ աստվածաբանորեն առաջնահերթ: Աստված նայում է սրտին, ապա դատում է ձեռքի գործերը: Սա էին սովորեցնում ռաբբիները, սակայն այն ինչ-որ ձևով կորցրեց իր նշանակությունը անհատական ինքնա-արդարության մեջ (տես՝ Միքիա 6:8):

I. Նոր Կտակարանի արձագանքը

Ա. Այս տերմինը կարելի է հանդիպել՝

1. Մատթ.6:1-4
2. Դուկ.11:41; 12:33
3. Գործք 3:2-3,10; 10:2,4,31; 24:17

Բ. Հիսուսը արդարության ավանդական հասկացությանը կոչում է՝ (տես՝ II Կլեմենտ 16:4)

1. ողորմություն տալ
2. ծոմապահություն
3. աղոթք

Գ. Հիսուսի Լեռան Քարոզում (տես՝ Մատթեոս 5-7): Որոշ հրեաներ ապավինում էին իրենց գործերին: Այս գործերը պետք է բխեին Աստծո, Նրա Խոսքի հանդեպ և Նրա ուխտի մեջ եղող եղբայրների և քույրերի հանդեպ ունեցած սիրուց և ոչ թե իրենց շահի կամ ինքնաարդարացման համար: Խոնարհությունն ու գաղտնիությունը ճիշտ վարվելակերպի կարևոր մասն են կազմում: Ամենակարևորը սիրտն է: Միտքը չափազանց չար է: Աստված պետք է փոխի սիրտը: Նոր սիրտն է փնտրում և հետևում Աստծուն:

3:3 Մարդու սրտի շարժառիթը սկզբից էլ միայն դրամական է եղել (տես՝ հ. 5)

3:4 «նրան նայեց» Տե՛ս 1:10 գրառումը:

■ **«Մե՛զ նայիր»** Նրանք ուզում էին նրա համակ ուշադրությունը (*blepō* ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ):

3:5 «Հիսուս Քրիստոսի անունով» «Անուն» բառը եբրայերենում դարձվածք է, որը խոսում է տվյալ մարդու բնավորության մասին (տես՝ Դուկ.9:48,49; 10:17; 21:12,17; 24:47, տես՝ Հատուկ Թեմա, 2:21): Հաստատ, այն ինչ տեղի ունեցավ, ապշեցրել էր այս մարդուն: Հիսուսը վերջերս էր դատապարտվել և խաչվել որպես հանցագործ, որին այս անձանոթ մարդը (այսինքն՝ Պետրոսը) կոչում էր «Մեսիա» (այսինքն՝ «Քրիստոսը», որը հունարեն թարգմանությունն է, տես՝ Հատուկ Թեմա, 2:31):

■ **«Նագովրեցին»** Տե՛ս Հատուկ Թեմա, 2:22

■ **«քայլի՛ր»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Պետրոսն ու Հովհաննեսը՝ Հիսուսի պես, օգտվեցին առիթից ցույց տալու Աստծո սերն ու գորությունը, ինչպես նաև հոչակելու ավետարանի պատգամը (տես՝ հ.9): Այս բժշկությունը գրավեց հրեա երկրպագուների ուշադրությունը (տես՝ հ.12):

3:7 Սա իրենից ներկայացնում է իրար հետ կապված մի քանի դեպքերի ականատեսության արձանագրություն: Ինչ-որ մեկը, որն այնտեղ ներկա էր եղել, Ղուկասին մանրակրկիտ, արտահայտիչ տերմիններով պատմել էր:

■ **«խսկոյն»** Սա հունարեն *parachrēma* տերմինն է: Ղուկասը այս տերմինը տասն անգամ գործածում է իր Ավետարանի մեջ և վեց անգամ՝ Գործքում (տես՝ 3:7; 5:10; 12:23; 13:11; 16:26,33): Այն գործածվել է Մատթեոսում միայն երկու անգամ և այլևս ոչ մի տեղ ՆԿ-ում: Այն կիրառվել է Մեպտուազինտայում մի քանի անգամ: Ղուկասը հաճախ է գործածում Եբրայերեն ՀԿ-ի այս հունարեն թարգմանությունից տարբեր դարձվածքներ և տերմիններ: Պետք է, որ նա լավ իմանար ՀԿ-ը՝ հավանաբար Պողոս առաքյալի հետ իր կապի շնորհիվ կամ նոր հավատացյալների հետ Զրիստոնեական վարդապետական հարցերի մեջ ներգրավվածության շնորհիվ:

3:8 «Տեղից ցատկելով կանգնեց» Սա (ցատկելով) ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ ԴԵՐԲԱՅ է (տես՝ հ. 9): Այս մարդը սկսեց քայլել Տանարի ամբողջ այս տարածքով: Ինչպիսի՜ հնարավորություն էր մարդկանց հետ Բարի Լուրը կիսվելու համար:

3:10 «և ճանաչեցին» (ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ, նրանք սկսեցին ճանաչել նրան): Նա օտարական կամ այցելու չէր: Նրանք տեսնում էին այս մարդուն ամեն օր և անցնում նրա կողքով: Սակայն Հիսուսի հետևորդները հենց այնպես չանցան նրա կողքով, այլ գործի անցան Պենտեկոստի գործությամբ:

■ **«լցվեցին»** Ղուկասը հաճախ է գործածում այս տերմինը (տես՝ 5:17-ի նշումները): Մարդիկ կարող են «լցվել» շատ տարբեր բաներով, այսինքն՝

1. Սուրբ Հոգով՝ Ղուկաս Luke 1:15,41,67; Գործք 2:4; 4:8,31; 9:17; 13:9
2. բարկությամբ՝ Ղուկ.4:28; 6:11
3. վախով՝ Ղուկ.5:26
4. զարմանքով և ապշությամբ՝ Գործք 3:10
5. նախանձով՝ Գործք 5:17; 13:45
6. շփոթությամբ՝ Գործք 19:29

Պետրոսն ու Հովհաննեսը կամենում էին, որ այս մարդիկ, որոնք զարմացած էին (նա գրավել էր նրանց ուշադրությունը) լցվեին Ավետարանով:

■ **«զարմանքով ու ապշությամբ»** Ղուկասի գրելաոճին նաև հատուկ են այս բաները՝

1. զարմանք, *thambos*, Ղուկ.3:6; 5:9; Գործք 3:10 և *ekthambos* 3:11-ում:
2. ապշություն
ա. *ekstasis*, Ղուկ.5:26; Գործք 3:10; 10:10; 11:5; 22:17
բ. *existēmi*, Ղուկ.2:47; 8:56; 24:22; Գործք 2:7,12; 8:9,11; 9:21; 10:45; 12:16

Աստծո սերն ու գործերը մշտապես ապշեցնում են մարդկանց (այս բառերը Մեպտուազինտայում գործածվում են Աստծո վախի և փառափառության համար, տես՝ Ծննդ.15:12; Ելից 23:27; 2 Օր.28:28):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 3:11-16
¹¹Եվ քանի որ կաղ մարդը, որ բուժված էր, Պետրոսին ու Հովհաննեսին բաց չէր թողնում, ամբողջ ժողովուրդը խիստ զարմացած միասին վազեց նրանց մոտ՝ դեպի այն սրահը, որ Սողոմոնի սրահ էր կոչվում: ¹²Երբ Պետրոսը *իստեսավ*, պատասխանեց ժողովրդին. «Ո՛վ իսրայելացի մարդիկ, ինչո՞ւ եք զարմացել այս բանի վրա, կամ ինչո՞ւ եք ակնապիշ մեզ նայում, կարծես մենք մեր գործությամբ կամ բարեպաշտությամբ ենք այս մարդուն քայլեցրել: ¹³Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը՝ մեր հայրերի Աստվածը, փառավորեց Իր Որդուն /ձառային/ Հիսուսին, *և ուր մատնեցիք և Պիղատոսի առաջ ուրացաք*, երբ նա մտադրվել էր ազատ արձակել Նրան: ¹⁴Բայց դուք այն Սրբին և Արդարին ուրացաք և խնդրեցիք, որ մարդասպանին ձեզ շնորհի. ¹⁵և կենաց Առաջնորդին սպանեցիք, *և ուր Աստված մեռելներից հարություն տվեց, որին մենք վկա ենք:* ¹⁶Նրա անվան նկատմամբ ունեցած հավատի շնորհիվ, Նրա անձնն այս մարդուն, ում դուք տեսնում եք ու գիտեք, զորացրեց. այո՛, Նրանով եղած հավատը սրան կատարյալ առողջություն տվեց ձեր բոլորիդ ներկայությամբ:

3:11 «Պետրոսին բաց չէր թողնում» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Ես կարող եմ պատկերացնել, թե այս մարդը ինչպես բաց չէր թողնում Պետրոսին, ճիշտ այնպես, ինչպես Մարիամը բաց չէր թողնում Հիսուսին պարտեզում (տես՝ Հովհաննես 20:16-17):

■ **«Սողոմոնի Սրահը»** Սա Հեթանոսների բակի արևելյան երկայնքով մի երկար ծածկված տարածք էր (տես՝ Ջոզեֆուսի, *Անտիկ*, 20.9.7): Տանիքը ամրացված էր բազմաթիվ սյուների վրա: Այն իր անունը ստացել էր այն փաստի հիման վրա, որ Սողոմոնի տաճարի հին հիմքերը տեղակայված էին հենց նույն վայրում: Հիսուսը հաճախ էր այդտեղ սովորեցնում (տես՝ Հովհ.10:23):

3:12 «Երբ Պետրոսը դա տեսավ» Նրանք տեսան ամբոխի զարմանքն ու հետաքրքրությունը և օգտվեցին ընձեռնված (տես՝ Կող.4:3; 2 Տիմ.4:2) հնարավորությունից, որպեսզի վկայեն ավետարանը (այսինքն՝ նոր կազմավորված եկեղեցու երկրորդ քարոզչությունը):

■ **«Իսրայելացի մարդիկ»** Պետրոսն այսպես կոչեց նրանց 2:2-ում: Պետրոսը մինչև հիմա էլ դիմում է հրեաներին:

■ **«ինչու...ինչու»** Պետրոսը հարցնում էր, թե ինչու էին նրանք զարմացած այս բժկության հրաշքի վրա: Չէ՞ որ Հիսուսն էլ Իր կյանքի վերջին շաբաթների ընթացքում այդպիսի հրաշքներ էր գործել:

Եվ ինչո՞ւ էին նրանք այդպես ապշահար նայում Պետրոսին և Հովհաննեսին, կարծես թե նրանք էին այդ հրաշքը գործել: Սա հարուցյալ Մեսիայի անվան գործության և ավետարանի հանդեպ վստահության նշան էր:

Սուրբ Հոգին այս հրաշքը կատարեց մի քանի նպատակով՝

1. Պետրոսի և Հովհաննեսի առաջնորդ լինելը հաստատելու համար
2. կարիքավոր մարդուն օգնելու համար
3. Տաճարում գտնվող հրեաներին վկայություն տալու համար

3:13 «Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստվածը» Սա մատնացույց է անում, որ Հիսուսի ծառայությունը և ավետարանը էապես կապված էին Հին Կտակարանի Ուխտի Աստծո և Ուխտի Ժողովրդի հետ (տես՝ Ելից 3:6,15; Ղուկ.20:37):

Քրիստոնեությունը պետք է բնորոշվի որպես հուդայականության ճշմարիտ իրականացում (տես՝ Մատթ.5:17-19): Ծատ հրեաներ դիտարկում են սա որպես խոտորում՝ շեղում, սակայն ՆԿ-ի հեղինակները տեսնում էին սա որպես իրականացում: Հիսուսի հետևորդներն են Երեմ.31:31-34-ի «նոր ուխտի» խոստացյալ պտուղը (տես՝ Գաղ.6:16): Իսրայելը չիրականացրեց աշխարհի համար քահանաների թագավորություն լինելու իր միսիոներական գործը (տես՝ Ելից 19:5-6; 1 Պետ.2:5,9; Հայտ.1:6): Լիազորությունը տրվեց եկեղեցուն (տես՝ Մատթ.28:18-20; Ղուկ.24:46-47; Գործք 1:8): Աստծո նպատակը մարդկության մեջ Իր պատկերը վերականգնելն է, որպեսզի հնարավոր լինի հասնել նրա հետ ունեցած Իր սկզբնական փոխհարաբերությանը: Եթե գոյություն ունի միայն մեկ Աստված (այսինքն՝ միաստվածություն, տես՝ Հատուկ Թեմա, 2:39), ապա չի կարող լինել մի հատուկ ազգ, այլ միայն ծառաներ, որոնք կծառայեն Աստծուն ամբողջ մարդկության հետ ունեցած տիեզերական նպատակների համար (տես՝ Հատուկ Թեմա, 1:8):

■ **«փառավորեց»** Այս տերմինը կարելի է հասկանալ մի քանի իմաստով.

1. անմիջական համատեքստում Իր անունով կաղ մարդու բժշկությամբ
2. Պետրոսի քարոզի հետ կապված ավելի լայն համատեքստում, որ Հիսուսը հարություն է առել և հետևաբար փառավորվել
3. ՀԿ-ի համատեքստում՝ Հիսուսը որպես սպասված Մեսիան
4. Հովհաննեսի Ավետարանում այս տերմինը միշտ գործածվում է հենց Հիսուսի կողմից Իր խաչելության մասին խոսելիս (տես՝ 7:39; 12:10,23; 13:31-32; 16:14; 17:1):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՌՔ (DOXA)

«Փառք» բառի աստվածաշնչյան հասկացությունը դժվար է սահմանել: Հավատացյալների փառքը կայանում է նրանում, որ նրանք հասկանում են ավետարանը և փառքը Աստծո մեջ են տեսնում և ոչ թե իրենց (տես՝ 1:29-31; Երեմ.9:23-24):

ՀԿ-ում «փառք»-ի համար ամենատարածված Եբրայերեն բառը (*kbd*, BDB 217) սկզբում առևտային տերմին էր՝ կապված գույք կշեռքների հետ («ժանրության»), այն ինչ ծանր էր, արժեքավոր կամ ուներ հատուկ գին: Հաճախ բառին ավելացվում էր պայծառության իմաստը՝ Աստծո փառահեղությունն արտահայտելու համար (տես՝ Ելից 19:16-18; 24:17; Ես.60:1-2): Միայն Նա է փառքի ու պատվի արժանի: Նա չափազանց պայծառ և փառահեղ է, որպեսզի ընկած մարդկությունը տեսնի ու նայի Նրան (տես՝ Ելից 33:17-23; Ես.6:5): ՅԱՀՎԵին կարելի է միայն ճշմարտապես ճանաչել Քրիստոսի միջոցով (տես՝ Հովհ.12:45; 14:8-11; Կող.1:15; Եբր.1:3): «Փառք» տերմինը ինչ-որ առումով միանշանակ չէ:

1. Այն կարող է համագոր լինել «Աստծո արդարությանը»
2. Այն կարող է վերաբերել Աստծո «սրբությանը» կամ «կատարելությանը»
3. Այն կարող է վերաբերել Աստծո պատկերին, որի նմանությամբ ստեղծվել է մարդկությունը (տես՝ Ծննդ.1:26-27; 5:1; 9:6), սակայն որը հետագայում ապստամբության պատճառով ապականվեց (տես՝ Ծննդ.3:1-21): Առաջին անգամ այն գործածվել է ՅԱՀՎԵի ներկայության համար՝ Ելից 16:7,10; Ղևտ.9:23 և Թվոց 14:10-ում, Իր ժողովրդի հետ անապատում թափառելիս:

■ **«Իր ծառային»** «Ծառա» տերմինը (*pais* պարբերաբար գործածվում է LXX-ում)

1. պատվավոր տիտղոս ՀԿ-ում, որն օգտագործվում էր Հակոբի, Մովսեսի, Հեսուի և Դավթի համար (տես՝ Սաղմ.105; Ղուկ.1:69)
2. Եսայու Ծառայի Երգերում (այսինքն՝ 42:1-5; 49:1-7; 50:4-11; 52:13-53:12)
3. Իսրայել ժողովրդի համար (տես՝ 41:8-9; 42:19; 43:10; 44:1,21; նաև LXX առկա է Ղուկ.1:54)
4. Աստծո Մեսիայի համար (տես՝ 42:1; 52:13; 53:11)
5. *Pais* գործածվում է Հիսուսի համար որպես Ծառա՝ Մեսիա Գործք 3:13,26; 4:27,30

Գոյություն չունի հստակ տարբերություն անհատական կամ հավաքական ասպեկտներում, հատկապես վերջին Երգում (այսինքն՝ Ես.52:1353:12): Համատեքստում այն չի կարող վերաբերել Իսրայելին:

1. Ժողովուրդը չի կարող լինել այն անմեղը, որը փրկություն է բերում, քանի որ ժողովուրդը պատժի էր արժանի (տես՝ Ես.41:1822; 53:8)
2. Սեպտուագիանում Ես.52:14-ում «քեզ» բառը փոխել է դարձնելով «Նրան» (նաև հ. 15): Հիսուսի ծնունդից առաջ հրեա թարգմանիչները (հավանաբար 250-150 Ք.Ա.) տեսան այս տեքստի անհատական և Մեսիական բնույթը:

■ **«Հիսուս»** Միայն Հիսուս անունը գործածելիս սովորաբար մատնանշվում է Նրա մարդկությունը (տես՝ հ.6):

■ **«Ում դուք մատնեցիք և ուրացաք»** «Դուք» բառը ընդգծված է: Միայն հրեա առաջնորդները չէին պատասխանատու Հիսուսի մահվան համար (տես՝ հ. 17; 2:23): Պետրոսը կատարում է հատուկ մեջբերումներ Պիղատոսի առջև ամբոխի արձագանքներից (տես՝ Ղուկ.23:18-25): Հնարավոր է, որ այդ մարդկանցից ոմանք այնտեղ էին, սակայն Պետրոսը այս ամբոխին դիմում է որպես պատասխանատու խմբի (տես՝ հ.15): Աստծո ընտրյալ ժողովուրդը (հրեաները) «մատնեց» և «ուրացավ» Աստծո Մեսիային (տես՝ Հովհ.1:11):

■ **«Պիղատոս»** Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՈՆՏԱՅԻ ՊԵՂԱՏՈՍ

- I. Մարդը
 - Ա. Ծննդավայրը և ծննդյան տարեթիվը անհայտ են
 - Բ. Ասպետական ցեղից էր (միջին վերնախավ հռոմեական հասարակության մեջ)
 - Գ. Ամուսնացած էր, սակայն հայտնի չէ երեխաներ ուներ, թե ոչ
 - Դ. Նախկինում իր ունեցած պաշտոնները անհայտ են (որոնք հնարավոր է մի քանիսն են եղել)
- II. Նրա անհատականությունը
 - Ա. Երկու տարբեր տեսակետներ
 1. Ֆիլո (*Philo, Legatio and Gaium, 299-305*) և Ջոզեֆոս (*Josephus, Antiq./Անտիկ/ 18.3.1* և *Jewish Wars /Հրեական պատերազմներ/*) նկարագրում է նրան որպես դաժան և անգութ դիկտատոր:
 2. ՆԿ-ը (Ավետարանները, Գործքը) ներկայացնում է մի թույլ, հեշտությամբ շահարկվող հռոմեացի կուսակալի:
 - Բ. Փոլ Բարնեթ, *Հիսուսը և Վաղ Քրիստոնեության վերելքը*, էջ 143-148, (*Paul Barnett, Jesus and the Rise of Early Christianity*) տալիս է հավանական բացատրություն այս երկու տեսակետների վերաբերյալ:

1. Պիղատոսը չէր նշանակվել կուսակալ մ.թ. 26-ին Տիբերիոսի օրոք, որը նախկին հրեա էր (տես՝ Philo, *Legatio and Gaium*, 160-161) Տիբերիոսի հակահրեա գլխավոր խորհրդականի՝ Սիջանոսի խորհրդով:
2. Տիբերիոսը կորցրեց իր քաղաքական իշխանությունը զիջելով Լ. Աելիուս Սիջանոսին՝ իր նահանգապետին, որը դարձավ իսկական հզոր ու թագավորական գահի մեջքին և որը ատում էր հրեաներին (Philo, *Legatio land Gaium*, 159-160):
3. Պիղատոսը Սիջանոսի խնամակալության ներքո էր և փորձում էր տպավորություն թողնել նրա վրա.
 - ա. Երուսաղեմ բերելով հռոմեական չափանիշներ (մ.թ.26), որը մյուս կուսակալները չէին արել: Հռոմեական աստվածների այս խորհրդապատկերները բորբոքում էին հրեաներին (տես՝ Ջոզեֆուսի, *Անտիկր, Հրեական Պատերազմները*):
 - բ. դաժված մետաղադրամների շնորհիվ (մ.թ. 29-31), որոնց վրա հռոմեական աստվածների պաշտամունքի պատկերներ էին: Ջոզեֆուսն ասում է, որ նա դիտավորյալ կամենում էր փոխել հրեաների օրենքներն ու ավանդույթները (տես՝ Ջոզեֆուսի, *Անտիկր*, 18.4.1-2):
 - գ. Տաճարի գանձարանից դրամ վերցնելով, որպեսզի Երուսաղեմում ջրատար կառուցի (տես՝ Ջոզեֆուսի, *Անտիկր*, 18.3.2; *Հրեական Պատերազմներ* 2.9.3):
 - դ. պատվիրելով, որ սպանեն մի քանի գալիլեացիների, մինչ Երուսաղեմում Չատկի գոհաբերություններ էին կատարում (տես՝ Ղուկ.13:2):
 - ե. Մ. թ. 31-ին հռոմեական վահանները Երուսաղեմ ներմուծելով: Հերովդես Մեծի որդին բողոքում է նրան, որպեսզի դուրս բերի դրանք, սակայն նա չի անում, ուստի նրանք գրում են Տիբերիոս կայսրին, որը պահանջում է, որպեսզի դրանք ծովով հետ վերադարձվեն Կեսարիա (տես՝ Philo, *Legatio and Gaium*, 299-305):
 - զ. Զորագին լեռան վրա սպանելով բազմաթիվ սամարացիների (մ.թ.36/37), երբ նրանք փնտրում էին իրենց կրոնին պատկանող կորած սուրբ մասունքներ: Սա դրդեց Պիղատոսի տեղական վերադասին հեռացնել նրան իր պաշտոնից և հետ ուղարկել Հռոմ (տես՝ Ջոզեֆուսի, *Անտիկր*, 18.4.1-2):
4. Սիջանոսը մահապատժի ենթարկվեց մ.թ.31-ին և Տիբերիոսը կրկին վերադարձավ իր լիարժեք իշխանությանը, ուստի #ա, բ, գ և դ կետերը հավանաբար Պիղատոսն արել էր շահելու Սիջանոսի վստահությունը. #ե և գ կետերը հնարավոր է փորձեր են շահելու Տիբերիոսի վստահությունը, որոնցից մեծամասնությունը հակառակության են ենթարկվել:
5. Ակնհայտ է, որ նախկին հրեա տիրակալի վերադարձը՝ դրան ավելացրած Տիբերիոսից բոլոր կուսակալներին պաշտոնական մի նամակ, որպեսզի բարեացակամ գտնվեն հրեաների հանդեպ (տես՝ Philo, *Legatio and Gaium*, 160-161), առիթ հանդիսացավ, որ Երուսաղեմում հրեա առաջնորդները օգտվելով Պիղատոսի Տիբերիոսի հետ կապված քաղաքական խոցելիությունից, նրան մոնիպուլյացիայի ենթարկեն պահանջելով, որ Հիսուսին խաչը հանի: Բարնեթի այս տեսությունը Պիղատոսի վերաբերյալ երկու տեսակետներն էլ խելամտորեն համադրում է:

III. Նրա վախճանը

Ա. Նա հետ կանչվեց և ժամանեց Հռոմ հենց Տիբերիոսի մահից հետո (մ.թ.37)

Բ. Նա նորից չպաշտոնավարեց

Գ. Այս դեպքերից հետո նրա կյանքն անհայտ է: Գոյություն ունեն շատ տարբեր տեսություններ, թե հետո ինչեր տեղի ունեցան նրա կյանքում, սակայն դրանցից ոչ մեկն էլ հավաստի փաստեր չեն:

■ **«Երբ նա մտադրվել էր ազատ արձակել Նրան»** Սա վերաբերում է Ղուկ.23:4,14,22-ին, որտեղ Պիղատոսը երեք անգամ ասում է, «Ես ոչ մի հանցանք չեմ գտնում այս մարդու վրա» ինչպես նաև երեք անգամ նա փորձում է ազատել Նրան (տես՝ Ղուկ.23:16,20,22): Ծատ գիտնականներ այն կարծիքին են, որ Գործք Առաքելոցը զրկվել է ցույց տալու, որ հռոմեացի իշխանավորները Հիսուսին դավաճան չէին համարում: Պիղատոսին հրեա առաջնորդները ստիպեցին անել այն, ինչ նա չէր կամենում անել:

3:14 «այն Սրբին և Արդարին» Այս խոսքերը հստակ սահմանում են Հիսուսի անարատությունն ու անմեղությունը: Մահապատիժը ֆարս էր: Սա ՀԿ-յան ևս մեկ Մեսիական տիտղոս է (տես՝ Ես.53:11; Գործք 7:52; Հովհ.6:69): Մարկոս 1:24; Ղուկաս 4:34-ում դևերը Հիսուսին կոչեցին Աստծո Սուրբը: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐՔԸ

»Սուրբը« կարող է վերաբերել՝

1. Հայր Աստծուն (տես՝ ՀԿ-յան բազմաթիվ հատվածներ՝ «Իսրայելի Սուրբը»)
2. Որդի Աստծուն (տես՝ Մարկ.1:24; Ղուկ.4:34; Հովհ.6:69; Գործք 3:14)
3. Հոգի Աստծուն (Նրա անունը՝ «Սուրբ Հոգի» է. տես՝ Հովհ.1:33; 14:26; 20:22):

Գործք 10:38-ը մի համար է, որտեղ աստվածության բոլոր երեք անձերը ներկա են օծության մեջ: Հիսուսը օծված էր (տես՝ Ղուկ.4:18; Գործք 4:17; 10:38): Այստեղ այս հասկացությունը իր ընդլայնված տեսքով ընդգրկում է բոլոր հավատացյալներին (տես՝1 Հովհ.2:27): Օծյալը դարձել է օծյալներ: Նմանատիպ օրինակ է՝ Հակաքրիստոս և հակաքրիստոսները (տես՝ 1 Հովհ.2:18): ՀԿ-ում յուրով ֆիզիկական օծության սիմվոլիկ գործողությունը (տես՝ Ելից 29:7; 30:25; 37:29) վերաբերում էր այն մարդկանց, որոնք Աստծո կողմից կանչված և սպառազինված էին հատուկ առաջադրանքի՝ գործի համար (այսինքն՝ մարգարեները, քահանաները և թագավորները): «Քրիստոս» բառը Եբրայերեն «օծյալ» կամ Մեսիա տերմինի թարգմանությունն է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արդարությունը» կենսականորեն այնքան կարևոր թեմա է, որ Աստվածաշունչն ուսումնասիրող յուրաքանչյուր մարդ այս թեմայի շուրջ պետք է կատարի անձնական մանրակրկիտ սերտողություն:

ՀԿ-ում Աստծո բնավորությունը նկարագրվում է որպես «ուղիղ» կամ «արդար» (BDB 841): Այս Միջագետքի /մեսոպոտամիան/ տերմինը ծագել է գետի եղեգից, որը գործածվում էր որպես շինարարական գործիք՝ ստուգելու պատերի և ցանկապատերի հորիզոնական հարթության ճշգրտությունը: Աստված ընտրեց այս տերմինը փոխաբերական իմաստով՝ Իր սեփական էությունը բնութագրելու համար: Նա ուղիղ է, Ում միջոցով կարելի է բոլոր բաները չափել: Այս հասկացությունը հաստատում է Աստծո արդարությունը, ինչպես նաև դատաստանի մեջ Նրա արդարադատությունը՝ շիտակությունը:

Մարդը Աստծո պատկերով ստեղծվեց (տես՝ Ծննդ.1:26-27; 5:1,3; 9:6): Մարդկությունը ստեղծվեց Աստծո հետ փոխհարաբերվելու համար: Ամբողջ արարչագործությունը Աստծո և մարդկության շփման համար հանդիսանում է բեմ կամ հետին տեսարան՝ ֆոն: Աստված կամենում էր, որ Իր գլուխգործոցը՝ մարդը, ճանաչի Իրեն, սիրի Իրեն, ծառայի Իրեն և լինի Իր նման: Մարդու ազնվությունը փորձվեց՝ ստուգվեց (տես՝ Ծննդ.3:15) և առաջին զույգը ճախողեց այս ստուգաբար: Արդյունքում Աստծո և մարդու միջև փոխհարաբերությունը խզվեց (տես՝ Ծննդոց 3; Հռոմ. 5:12-21):

Աստված խոստացավ վերականգնել և վերսկսել այդ փոխհարաբերությունը (տես՝ Ծննդ.3:15): Նա իրականացրեց այն Իր կամքով, Իր իսկ Որդու միջոցով: Մարդիկ անկարող էին վերականգնել այդ ճեղքումը (տես՝ Հռոմ.1:18-3:20):

Մարդու անկումից հետո, Աստծո առաջին քայլը վերականգնման համար եղավ ուխտի գաղափարը՝ հիմնված Իր հրավերի և մարդու զղջացող, հավատարիմ, հնազանդ արձագանքի վրա: Անկման պատճառով, մարդիկ անկարող էին նույնիսկ ճիշտ գործողություններ կատարել (տես՝ Հռոմ.3:21-31; Գաղատացիների 3): Աստված Ինքը պետք է նախաձեռնությունը վերցնեց Իր ձեռքը, որպեսզի վերականգնե ուխտադրույթ մարդկանց դիրքը: Նա դա արեց՝

1. մարդկությանը հռչակելով արդար՝ Քրիստոսի գործի շնորհիվ (այսինքն՝ դատական արդարություն)
2. մարդկությանը ձիրաբար տալով արդարություն՝ Քրիստոսի գործի շնորհիվ (այսինքն՝ վերագրված արդարություն)
3. ապահովելով Սուրբ Հոգու բնակությունը մեր մեջ, որը մարդու մեջ արդարության պտուղն է տալիս (այսինքն՝ Քրիստոսակերպությունը՝ Աստծո պատկերի վերականգնումը)
4. վերականգնելով Եղեմի Պարտեզում ունեցած փոխհարաբերությունը

Այնուամենայնիվ, Աստված պահանջում է ուխտին համապատասխան արձագանք: Աստված դնում է օրենքները (այսինքն՝ ձրիաբար տալիս է) և ապահովում, իսկ մարդիկ պետք է պատասխանեն և շարունակեն պատասխանել՝

1. սպաշխարությանը
2. հավատքով
3. հնազանդության ապրելակերպով
4. հարատևությամբ

Հետևաբար, արդարությունը Աստծո և Իր արարչագործության գլուխգործոցի միջև եղած ուխտի, փոխադարձ գործողություն է: Աստծո բնավորության, Քրիստոսի կատարած գործի և Սուրբ Հոգուց տված կարողության հիման վրա, որին յուրաքանչյուր անհատ պետք է անձնապես և շարունակաբար ճիշտ արձագանքի: Այս հասկացությունը կոչվում է «հավատքով արդարացում»: Այն արժարժվում է Ավետարաններում, սակայն ոչ այս տերմինաբանությամբ: Հիմնականում սահմանվում է Պողոսի կողմից, որը ավելի քան հարյուր անգամ գործածում է հունարեն «արդարություն» տերմինը իր բազմաթիվ տարբերակներով:

Պողոսը, որպես ուսյալ ռաբբի, գործածում է *dikaiosunē* տերմինը Մեպտուազինտայում կիրառվող եբրայերենի *SDQ* տերմինի միևնույն իմաստով, և ոչ թե հունական գրականությունից: Հունական գրականության մեջ այս տերմինը կապված է այն անձնավորության հետ, որը հարմարվում է Աստվածության և հասարակության ակնկալիքների հետ: Եբրայերենում այս տերմինը մշտապես հանդիպում ենք ուխտի հետ առնչվող տերմինների գործածությամբ: ՅԱՀՎԵՆ արդար, բարեհամբույր, բարոյական Աստված է: Նա ուզում է, որ Իր ժողովուրդը արտացոլի Իր բնավորությունը: Փրկված մարդը դառնում է նոր արարած: Նոր արարած լինելը պատճառ է հանդիսանում աստվածահանո նոր ապրելակերպի (արդարացման վերաբերյալ Հռոմի Կաթոլիկության տված կարևորությունը): Քանի որ Իսրայելը աստվածապետություն էր, գոյություն չունեի հատակ սահմանազատում աշխարհիկի (հասարակական նորմերի) և հոգևորի (Աստծո կամքի) միջև: Այս տարբերությունը արտահայտվում է եբրայերեն և հունարեն տերմինների միջոցով, որոնք հայերենում թարգմանվում են որպես «արդարացիություն» (հասարակության հետ առնչվող) և «արդարություն» (կրոնի հետ առնչվող):

Հիսուսի Ավետարանը (բարի լուրը) այն է, որ անկում ապրած մարդկությունը Աստծո հետ փոխհարաբերության մեջ վերականգնված է: Սա ի կատար ածվեց Հոր սիրո, ողորմության և շնորհքի միջոցով. Որդու կյանքի, մահվան և հարության միջոցով. և Սուրբ Հոգու մեզ հետամուտ լինելու և ավետարանին մոտեցնելու միջոցով: Արդարացումը Աստծո կողմից մեզ տրված ձրի պարգև է, սակայն դրա արդյունքը պետք է լինի աստվածապաշտությունը (սա Օգոստինուսի տեսակետն է, որը ներկայացնում է Ռեֆորմացիայի կողմից ավետարանի ձրի լինելու կարևորումը և Հռոմի Կաթոլիկների կողմից՝ սիրո և հավատարմության փոխված կյանքի կարևորումը): Ռեֆորմատորների համար «Աստծո արդարություն» տերմինը ԽՆԴՐԱԿԱՆ ՄԵՌԱԿԱՆ հոյով է (այսինքն՝ մեղավոր մարդկության Աստծուն ընդունելի դարձնելու գործողությունը /վերջնական արդարացում/), մինչ Կաթոլիկների համար այն ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՄԵՌԱԿԱՆ հոյով է, որը ավելի Աստծո նման դառնալու գործընթաց է /փորձառական պրոգրեսիվ արդարացում/: Իրականում իհարկե դրանք երկուսը միասին են:

Իմ կարծիքով ամբողջ Սուրբ Գիրքը, սկսած Ծննդ.4-ից մինչև Հայտն.20 Աստծո Եղեմի պարտեզում ունեցած փոխհարաբերության վերականգնման արձանագրություն է: Աստվածաշունչը սկսվում է Աստված և մարդ փոխհարաբերությամբ՝ սկզբնական միջավայրում (տես՝ Ծննդոց 1-2) և վերջանում է միևնույն միջավայրով (տես՝ Հայտնություն 21-22): Աստծո պատկերն ու նպատակը վերականգնվելու է:

Վերը նշված քննարկումները փաստագրելու համար նկատի ունեցեք հետևյալ ՆԿ-յան հատվածները, որոնք յուսաբանում են այս տերմինի հունարեն բառախումբը.

1. Աստված արդար է (հանախ առնչվող Աստծո դատավոր լինելու հետ)
 - ա. Հռոմեացիս 3:26
 - բ. 2 Թեսաղոնիկեցիս 1:5-6
 - գ. 2 Տիմոթեոս 4:8
 - դ. Հայտնություն 16:5
2. Հիսուսն արդար է.
 - ա. Գործք 3:14; 7:52; 22:14 (Մեսիայի անունը)
 - բ. Մատթեոս 27:19
 - գ. 1 Հովհաննես 2:1,29; 3:7
3. Աստծո կամքը Իր արարչագործության համար արդարություն է.
 - ա. Ղևտացիների 19:2
 - բ. Մատթեոս 5:48 (տես՝ 5:17-20)
4. Աստծո միջոցները արդարությունն իրականացնելու և ապահովելու համար.
 - ա. Հռոմեացիներին 3:21-31
 - բ. Հռոմեացիներին 4
 - գ. Հռոմեացիներին 5:6-11
 - դ. Գաղատացիներին 3:6-14
 - ե. Աստծուց տրված՝

- 1) Հռոմեացիներին 3:24; 6:23
- 2) 1 Կորնթացիներին 1:30
- 3) Եփեսացիներին 2:8-9
- զ. Հավատքով ընդունված՝
 - 1) Հռոմեացիներին 1:17; 3:22,26; 4:3,5,13; 9:30; 10:4,6,10
 - 2) 2 Կորնթացիներին 5:21
- է. Որդու գործերի միջոցով՝
 - 1) Հռոմեացիներին 5:21
 - 2) 2 Կորնթացիներին 5:21
 - 3) Փիլիպեցիներին 2:6-11

5. Աստծո կամքն է, որ Իր հետևորդները արդար լինեն՝

- ա. Մատթեոս 5:3-48; 7:24-27
- բ. Հռոմեացիներին 2:13; 5:1-5; 6:1-23
- գ. Եփեսացիներին 1:4; 2:10
- դ. 1 Տիմոթեոս 6:11
- ե. 2 Տիմոթեոս 2:22; 3:16
- զ. Հովհաննես 3:7
- է. 1 Պետրոս 2:24

6. Աստծո կամքն է, որ արդարությամբ դատի աշխարհը՝

- ա. Գործք 17:31
- բ. 2 Տիմոթեոս 4:8

Արդարությունը բնորոշ է Աստծուն, որը ճրիարար տրվել է մեղավոր մարդկությանը Քրիստոսի միջոցով: Այն՝

1. Աստծո պատվեր է
2. Աստծո պարզև է
3. Քրիստոսի գործն է
4. ապրելակերպ է

Սակայն այն նաև իրենից ներկայացնում է արդար դառնալու գործընթաց, որին պետք է համբերատարությամբ և վճռականությամբ հետամուտ լինել, և որը իրականում կավարտվի Երկրորդ Գալստյան ժամանակ: Աստծո հետ փոխհարաբերությունը վերականգնված է փրկությամբ, սակայն զարգանում է մեր ամբողջ կյանքի ընթացքում, որպեսզի դառնա մահվան կամ *Parousia-ի* հետ դեմ-առ-դեմ իրադարձություն:

Այս քննարկումն ամփոփելու համար ահա մի լավ մեջբերում: Այն վերցված է *Պողոսի Բառարանը և Նրա Նամակները* IVP գրքից:

«Կավվինը, ավելի շատ քան Լյութերը, շեշտադրում է Աստծո արդարության ռացիոնալ ասպեկտը: Լյութերի տեսակետը Աստծո արդարության վերաբերյալ կարծես թե պարունակում է արդարացման ասպեկտը: Կավվինը շեշտադրում է Աստծո արդարության մեզ փոխանցելու կամ հաղորդելու սքանչելի երևույթը» (էջ 834):

Ինձ համար Աստծո հետ հավատացյալի փոխհարաբերությունը ունի երեք կետ.

1. Ավետարանը անձ է (Արևելյան Եկեղեցու և Կավվինի շեշտադրումը)
2. Ավետարանը ճշմարտությունն է (Օգոստինոսի և Լյութերի շեշտադրումը)
3. Ավետարանը փոխված կյանքն է (Կաթոլիկների շեշտադրումը)

Նրանք բոլորն էլ ճիշտ են և պետք է միավորվեն առողջ, ողջամիտ, աստվածաշնչյան Քրիստոնեության համար: Եթե դրանցից որևէ մեկը գերազնահատվի կամ թերազնահատվի, ապա խնդիրներ կառաջանան:

- Մենք պետք է Հիսուսի՛ն ողջունենք:
- Մենք պետք է հավատանք Ավետարանին:
- Մենք պետք է հետամուտ լինենք Քրիստոսակերպությանը:

■ **«ու խնդրեցիք, որ մարդասպանին ձեզ շնորհիք»** Հեզնական է այն փաստը, որ Բառնաբասը հանցավոր էր հենց այն բանում, ինչի համար, որ գրապարտեցին Հիսուսին՝ խառվության համար (տես՝ Դուկ.23:18-19,23-25):

3:15 «բայց/և սպանեցիք» Չարմանալի է, որ Հիսուսի մահը մատնանշող շատ տեքստեր Գործք Առաքելոցում (տես՝ 2:23,36; 3:15; 4:10; 5:30; 7:52; 10:39; 13:28) շատ քիչ զուգահեռներ ունեն Ծննդ.3:15 կամ Եսայի 53 տողերի հետ:

Նրա մահը ներկայացվում է տարբեր արտահայտություններով՝

1. գամեցին խաչին՝ 2:23
2. խաչեցին՝ 2:36; 4:10
3. սպանեցին /անգլ.՝ մահվան մատնեցին/ 3:15; 13:28
4. փայտից կախելով՝ սպանեցիք՝ 5:30; 10:39
5. սպանեցին՝ 7:52

Հարությունը շեշտադրված է, բայց փոխանորդական քավությունը՝ ոչ:

NASB, NKJV	«կյանքի Իշխանը»
NRSV, NIV	«կյանքի Հեղինակը»
TEV	«կյանքի Առաջնորդը»
NJB	«կյանքի իշխանը»
Moffat	«կյանքի պիոները / առաջնեկը»

Այս տիտղոսը՝ անունը, արտացոլում է *archēgos* տերմինի երեք հնարավոր նշանակություններից մեկը.

1. հեղինակը կամ սկիզբը դնողը (տես՝ NRSV, Եբր. 2:10; 12:2)
2. ստեղծագործության հեղինակը (տես՝ Հովհ.1:3; 1 Կորնթ.8:6; Կող.1:16; Եբր.1:2)
3. նա, ով առջևից է գնում՝ ճանապարհ բացողը (տես՝ TEV, NEB, Moffat, Գործք 5:31)

Այս տերմինը «մարդասպան» բառի լիարժեք հակադրությունն է (հ.14): Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՌԱՋՆՈՐԴ (ARCHĒGOS)

«Հեղինակ» կամ «առաջնորդ» տերմինը հունարենի *archēgos* տերմինն է: Այն ծագել է հունարենի «սկիզբ» (*archē*) արմատից և «գնալ» կամ «առաջնորդել» (*agō*) բառից: Այս բաղադրյալ բառը սկսվեց կիրառվել իշխանի, կառավարչի կամ առաջնորդի համար (թե՛ մարդ, թե՛ հրեշտակ): ՆԿ-ում այս տերմինը գործածվում է ևս երեք տեղերում.

1. Իշխան կամ հեղինակ՝ Գործք 3:15
2. Իշխան կամ առաջնորդ՝ (տես՝ Գործք 5:21)
3. Հեղինակը (կամ պիոները) և հավատքի կատարողը՝ Եբր.12:2

Հիսուսն է փրկության սկիզբը դնողը, տվողը և ավարտին հասցնողը:

■ **«Աստված մեռելներից հարություն տվեց»** Ընդհանրապես ՆԿ-ում Հայրն է, որ հարություն է տալիս Որդուն, որպես Հիսուսի կյանքի, ուսմունքների և փոխանորդական մահվան հավանության նշան: ՆԿ նաև հաստատում է, որ Երրորդության բոլոր երեք անձերն էլ գործել են Հիսուսի հարության ժամանակ.

1. Հոգին (տես՝ Հռոմ.8:11)
2. Որդին (տես՝ Հովհ.2:19-22; 10:17-18)
3. Հայրը (տես՝ Գործք 2:24,32; 3:15,26; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռոմ.6:4,9)

Սա *Kerygma*-ի աստվածաբանական կարևորագույն կետերից է (տես՝ Հատուկ Թեմա, 2:14): Եթե սա ճիշտ չէ, ապա մնացած ամեն ինչ ճիշտ չէ (տես՝ 1 Կորն.15:12-19):

■ **«մի փաստ, որին մենք վկա ենք»** Սա կամ

1. սկզբնական բնագիր աղբյուրն է շեշտադրում. այս ունկնդիրները ականատեսներ էին (տես՝ 2:22)
2. նկատի ունի Վերնատանը գտնվող Առաքյալներին և աշակերտներին (տես՝ 1:22; 2:32)

Այս համատեքստում #2 լավագույնն է:

3:16 «հավատքի շնորհիվ/ հիման վրա» Այս նույն արտահայտությանը հանդիպում ենք Փիլիպ.3:9-ում: «Հավատք» բառի հունարեն տերմինը (*pistis*) կարելի է անգլերեն թարգմանել որպես «հավատք» «վստահություն» կամ «հավատալ»: Դա մարդկության պայմանական պատասխանն է Աստծո ոչ պայմանական շնորհքին (տես՝ Եփես.2:8-9): Հիմնականում հանդիսանում է հավատացյալի վստահությունը Աստծո հուսալիությանը (այսինքն՝ Նրա բնավորությանը, Նրա խոստումներին, Նրա Մեսիային) կամ Աստծո հավատարմությանը հավատալը: Ավետարանների և Գործք Առաքելոցի մեջ գետեղված բժշկության դեպքերի համար դժվար է արձանագրել տվյալ դեպքի հոգևոր (այսինքն՝ ուխտի հետ առնչվող) կողմը: Այդ բժշկված մարդիկ միշտ չէ, որ փրկվում են (տես՝ Հովհաննես 5): Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման:

Հունարեն ՆԱԽԴԻՐԸ, որն օգտագործվում է այս արտահայտության մեջ՝ *eis* (տես՝ Փիլիպ.3:9), հազվադեպ է կիրառվում Զրիստոսի հանդեպ ունեցած հավատքի համար (նմանատիպ արտահայտություն առկա է Գործք 2:38-ում): Սովորաբար գործածվում է այս մի քանի ՆԱԽԴԻՐԸներից որևէ մեկը՝

1. *dia* – Հռոմ.3:22,25,30; Գաղ.2:16; 3:14,26; Եփես.2:8; 3:12,17; Կող.2:12; 2 Տիմ.3:15; 1 Պետ.1:5
2. *ek* - Հռոմ.9:30; 14:23; Գաղ.3:8,9,22; 5:5; Հակ.2:24
3. *en* - (1 Կորն.16:13; 2 Կորն.13:5; Գաղ.2:20; 1 Տիմ.3:13)
4. Հռոմ.1:17-ում գործածվում են երկուսն էլ՝ թե՛ *eis* և թե՛ *ek*:

Գոյություն չունի մի այնպիսի ստանդարտ արտահայտություն, որն արտահայտում է «փրկարար հավատքը»:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏՔ, ՀԱՎԱՏԱԿ, ՎՍՏԱՀԵԼԻ (*Pistis* [ԳՈՅԱԿԱՆ], *Pisteuō* [ԲԱՅ], *Pistos* [ԱԾԱԿԱՆ])

Ա. Սա մի շատ կարևոր տերմին է Աստվածաշնչում (տես՝ Եբր.11:1,6): Դա Հիսուսի առաջին քարոզչության թեման է (տես՝ Մարկ.1:15): Գոյություն ունեն նոր ուխտի առնվազն երկու պահանջներ՝ ապաշխարությունը և հավատքը (տես՝ Մարկ.1:15; Գործք 3:16,19; 20:21):

Բ. Ստուգաբանությունը

1. ՀԿ-ում «հավատք» տերմինը նշանակում է հավատարմություն, նվիրվածություն կամ հուսալիություն և Աստծո բնավորության նկարագիրն է և ոչ թե մեր:
2. Այն ծագել է Եբրայերեն տերմինից (*emun, emunah*, BDB 53), որը նշանակում է «վստահ կամ հաստատ լինել»: Փրկարար հավատքը մտավոր՝ հոգեբանական հաստատություն է (ճշմարտությունների շարք), բարոյական կյանք (սպրեյակերպ) և առաջնայինը հաղորդակցական (մարդուն ընդունելու մեջ) և կամավոր նվիրում (որոշում) տվյալ մարդու հանդեպ:

Գ. ՀԿ-յան գործածությունը՝

Պետք է նշել, որ Աբրահամի հավատքը ապագա Մեսիայի սպասման մեջ չէր, այլ Աստծո խոստման մեջ, որ կունենա զավակ և սերունդներ (տես՝ Ծննդ.12:2; 15:2-5; 17:4-8; 18:14): Աբրահամը արձագանքեց այս խոստմանը Աստծուն վստահելով: Չնայած նա դեռ ուներ կասկածներ և խնդիրներ այս խոստման հետ կապված, որի իրականացման համար պահանջվեց տասներեք տարի: Սակայն նրա անկատար հավատքը Աստծո կողմից ընդունվեց: Աստված կամենում է աշխատել սխալական մարդկանց հետ, որոնք հավատքով են պատասխանում Իրեն և Իր խոստումներին, անգամ եթե այն մի փոքրիկ մանանեխի հատիկի չափ է (տես՝ Մատթ.17:20):

Դ. ՆԿ-յան գործածությունը՝

»Հավատալ« տերմինը ծագել է հունարենի (*pisteuō*) տերմինից, որը կարող է նաև թարգմանվել «հավատալ» «հավատք» կամ «վստահություն»: Օրինակ, ԳՈՅԱԿԱՆԸ Հովհաննեսի Ավետարանում չենք հանդիպում, սակայն հաճախ գործածվում է ԲԱՅԸ: Հովհաննես 2:23-25-ում հստակ չէ, թե արդյոք ամբոխը իսկապես վստահում էր Հիսուս Նազովրեցուն որպես Մեսիայի: Մակերեստրեն «հավատալու» այս տերմինի կիրառման ևս մի քանի օրինակներ էլ առկա են Հովհաննես 8:31-59 և Գործք 8:13, 18-24: Ճշմարիտ աստվածաշնչյան հավատքը նախնական արձագանքից ավելին է: Դրան պետք է հաջորդի աշակերտության գործընթացը (տես՝ Մատթ.13:20-23,31-32):

Ե. Այս տերմինի գործածությունը ՆԱԽԴԻՐԸՆԵՐԻ հետ՝

1. *eis* նշանակում է «դեպի ներս»: Այս յուրահատուկ կառուցվածքը ընդգծում է Հիսուսի մեջ ունեցած հավատացյալի հավատքը՝ վստահությունը:
 - ա. Նրա անվան մեջ (Հովհ.1:12; 2:23; 3:18; 1 Հովհ.5:13)
 - բ. Նրա մեջ (Հովհ.2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45,48; 12:37,42; Մատթ.18:6; Գործք 10:43; Փիլ.1:29; 1 Պետ.1:8)
 - գ. Իմ մեջ (Հովհ.6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)
 - դ. Որդու մեջ (Հովհ.3:36; 9:35; 1 Հովհ.5:10)
 - ե. Հիսուսի մեջ (Հովհ.12:11; Գործք 19:4; Գաղ.2:16)
 - զ. Լույսի մեջ (Հովհ.12:36)
 - է. Աստծո մեջ (Հովհ.14:1)
2. *en* նշանակում է «մեջ» ինչպես Հովհ.3:15; Մարկ.1:15; Գործք 5:14
3. *epi* նշանակում է «մեջ» կամ «վրա» ինչպես Մատթ.27:42; Գործք 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռոմ. 4:5,24; 9:33; 10:11; 1 Տիմ.1:16; 1 Պետ.2:6
4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՎ՝ առանց ՆԱԽԴԻՐԸ, ինչպես Հովհ.4:50; Գաղ.3:6; Գործք 18:8; 27:25; 1 Հովհ.3:23; 5:10

5. *hoti*, որը նշանակում է «հավատալ, որ», որը տալիս է ինչին հավատալու բովանդակությունը՝
- ա. Հիսուսը Աստծո Սուրբն է (Հովհ.6:69)
 - բ. Հիսուսն է ԵՍ ԵՄը (Հովհ.8:24)
 - գ. Հիսուսը Հոր մեջ է և Հայրը՝ Նրա մեջ (Հովհ.10:38)
 - դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ.11:27; 20:31)
 - ե. Հիսուսն Աստծո Որդին է (Հովհ.11:27; 20:31)
 - զ. Հիսուսը ուղարկված էր Հոր կողմից (Հովհ.11:42; 17:8,21)
 - է. Հիսուսը Հոր հետ մեկ է (Հովհ.14:10-11)
 - ը. Հիսուսն եկավ Հորից (Հովհ.16:27,30)
 - թ. Հիսուսը Իրեն հավասարեցրեց Հոր ուխտի անվան հետ՝ ԵՍ ԵՄ (Հովհ.8:24; 13:19)
 - ժ. Մենք ապրելու ենք Նրա հետ (Հռոմ.6:8)
 - ի. Հիսուսը մահացավ և հարություն առավ (1 Թեսաղ.4:14)

■ 16-րդ համարի երկրորդ մասը սահմանված է հոմանիշային գուգորդությամբ, որը շատ բնորոշ է Երբայական իմաստասիրական գրականությանը:

1. ա. «Հիսուսի անունը»
բ. «գորացրեց այս մարդուն»
գ. «ում դուք տեսնում եք ու գիտեք»
2. ա. «Նրա նկատմամբ ունեցած հավատքի շնորհիվ»
բ. «սրան կատարյալ առողջություն տվեց»
գ. «ձեր բոլորի ներկայությամբ»

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 3:17-26

¹⁷Եվ հիմա, եղբայրներ, գիտեմ, որ դուք, ինչպես և ձեր իշխանավորները, անգիտությամբ արեցիք սա: ¹⁸Սակայն այն բաները, որ Աստված նախապես հայտնել էր Իր բոլոր մարգարեների բերանով, որ Քրիստոսը պետք է չարչարվի, այդպես էլ կատարեց: ¹⁹Ուստի ապաշխարեցե՛ք և դարձի՛ եկեք, որ ձեր մեղքերը ջնջվեն, երբ սփոփանքի ժամանակները գան Տիրոջ ներկայությունից, ²⁰և Նա պիտի ուղարկի Հիսուս Քրիստոսին, որ ի սկզբանե ձեզ քարոզվել էր: ²¹Ում երկինքը պետք է ընդունի, մինչև ամեն բաների հատուցման ժամանակները, որոնց մասին Աստված խոսեց Իր սուրբ մարգարեների բերանով աշխարհի սկզբից ի վեր: ²²Քանի որ Մովսեսը ճշմարտապես մեր հայրերին ասաց. «ՁԵՐ ՏԵՐ ԱՍՏՎԱԾԸ ՁԵՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՑ ԻՆՁ ՆՄԱՆ ՄԻ ՄԱՐԳԱՐԵ ՊԻՏԻ ԳՈՒՐՍ ԲԵՐԻ, ՆՐԱՆ ԼՍԵՔ, ինչ որ ձեզ ասի: ²³Եվ լինելու է այնպես, որ ով այն մարգարեին չսի, ժողովրդի միջից պիտի բնաջինջ լինի»: ²⁴Այո՛, բոլոր մարգարեները Սամուելից սկսած, և նրանք, որ հետո եկան, ով խոսեց՝ մարգարեացավ այս օրերի մասին: ²⁵Դուք եք մարգարեների որդիները և՛ այն ուխտի, որ Աստված մեր հայրերի հետ հաստատեց, Աբրահամին ասելով. «ԵՎ ԶՈ ՍԵՐՄՈՎ ԵՐԿՐԻ ԲՈՒՈՐ ԱՉԳԵՐԸ ՊԻՏԻ ՕՐՀՆՎԵՆ»: ²⁶Աստված Իր Որդի Հիսուսին հարուցանելով՝ Նրան նախ ուղարկեց, որ ձեզ օրհնի՝ ձեզանից ամեն մեկին իր անօրենությունից ետ դարձնելով:

3:17 «գիտեմ, որ դուք անգիտությամբ արեցիք սա» Այս արտահայտությունը արտացոլում է խաչի վրա Հիսուսի խոսքերը (տես՝ Դուկ.23:34): Համենայն դեպս, նույնիսկ իրենց անգիտության մեջ, մարդիկ միևնույն է հոգևորապես պատասխանատու էին: Ինչ-որ առումով այս արդարացումը իրենց սեփական պատասխանատվությունը ընդունելու համար մարդկանց օգնելու մի կերպ էր (տես՝ 13:27; 17:30; 26:9; 1 Կորնթ.2:8): Այս հասկացության շուրջ հետաքրքիր քննարկման համար նայեք Միլլարդ Էրիկսոն՝ *Քրիստոնեական Աստվածաբանություն*, 2-րդ խմբագրություն, էջ 583-585 (Millard Erickson, *Christian Theology*):

■ «**ինչպես և ձեր իշխանավորները**» Դուկասը հաճախ տարբերություն է դնում մարդկանց և նրանց իշխանավորների միջև (տես՝ Դուկ.7:29-30; 23:35; Գործք 13:27; 14:5): Այս բանն անելու իրական պատճառը հնարավոր է երկու խմբերի փոխադարձ պատասխանատվությունն էր: Հաճախ պաշտպանվում է այն միտքը, որ Հիսուսը չի դատում հրեաներին որպես ազգ, այլ նրանց ապօրինի առաջնորդներին (այսինքն՝ նրանց, որոնք Ահարոնի սերնդից չէին): Իհարկե դժվար է հասկանալ, թե արդյոք թզենուն անիծելը (տես՝ Մարկ.11:12-14,20-24) և խաղողի այգու անիրավ տնտեսների առակը (տես՝ Դուկ.20:9-18) դատապարտում է առաջին դարի հուդայականությունը, թե՛ միայն վերջինիս առաջնորդներին: Դուկասը երկուսն էլ պաշտպանում է:

3:18 «նախապես հայտնել էր» Ավետարանը Աստծո ուշացած գաղափարը չէ, այլ Նրա հավիտենական, կանխամտածված ծրագիրը (տես՝ Ծննդ.3:15; Մարկ.10:45; Ղուկ.22:22; Գործք 2:23; 3:18; 4:28; Հռոմ.1:2; տես՝ Հատուկ Թեմա, 1:8): Գործքում առաջին քարոզները (*the kerygma*, տես՝ Հատուկ Թեմա, 2:14) ներկայացնում են Հիսուսին որպես ՀԿ-ի խոստումների և մարգարեությունների իրականացում:

Գոյություն ունեն *Kerygma*-ի մի քանի կետեր (այսինքն՝ Գործքում գետնդրված քարոզների հիմնական աստվածաբանական ասպեկտները), որոնք արտահայտված են այս համարներում:

1. Էականը Հիսուսին հավատալն է
2. Հիսուսի անձը և գործը մարգարեացվել էր ՀԿ-ի մարգարեների կողմից
3. Մեսիան չարչարվելու էր
4. Նրանք պետք է ապաշխարեն
5. Հիսուսը վերադառնալու է

■ **«Աստված նախապես հայտնել էր Իր բոլոր մարգարեների բերանով»** Հիսուսը կատարեց ՀԿ-ի մարգարեությունը (տես՝ հ. 34, Մատթ.5:17-48): Կարծում են Էմմաուսի ճանապարհին (տես՝ Ղուկ.24:13-35) Հիսուսն Ինքը ցույց տվեց այդ երկու աշակերտներին ՀԿ-ի մարգարեությունները, որոնք կապված էին Իր չարչարանների, մահվան և հարության հետ: Նրանք այդ բոլորը պատմեցին Առաքյալներին, որոնք էլ իրենց հերթին դրանք դարձրեցին իրենց քարոզների մի մասը (տես՝ Ղուկ.24:45):

■ **«Քրիստոսը»** Սա Եբրայերեն «Մեսիա» բառի հունարեն թարգմանությունն է (տես՝ Հատուկ Թեմա, 2:31), որը նշանակում է Օծյալ: Սա վերաբերում է Աստծուց ուղարկված այն հատուկ ծառային, որի կյանքն ու մահը կրացի արդարության և Սուրբ Հոգու նոր դարաշրջանը:

Այն Փաստը, որ Հիսուսն էր ՅԱՀՎԵԻ կողմից խոստացված Քրիստոսը՝ Մեսիան, դառնում է Գործք Առաքելոցի քարոզչության ընթացիկ թեման:

1. Պետրոս՝ 2:31; 3:18; 5:42; 8:5
2. Պողոս՝ 9:22; 17:3; 18:5,28

■ **«չարչարվի»** Սա մի քանի անգամ ակնարկվում է ՀԿ-ի տեքստերում (տես՝ Ծննդ.3:15; Մաղմոս 22; Եսայի 53; Չաք.12:10): Չարչարվող Մեսիայի այս կերպարը ամենաշատը զարմացրեց հրեաներին (տես՝ 1 Կորնթ.1:23): Նրանք ակնկալում էին հաղթական գեներալի (տես՝ Հայտն.20:11-16): Այս թեման Գործքում հանդիսանում է Առաքյալների քարոզների ընթացիկ թեման՝

1. Պողոս (տես՝ Գործք 17:3; 26:23)
2. Պետրոս (տես՝ Գործք 3:18; 1 Պետ.1:10-12; 2:21; 3:18)

3:19 «ապաշխարեցե՛ք և դարձի եկե՛ք» «Ապաշխարել» բառի հունարեն տերմինը նշանակում է մտածելակերպի փոփոխություն: Սա *metanoō*-ի ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆ Է: «Ապաշխարել» բառի եբրայերեն տերմինը Մեսսիայի անուշաբույր նշանակում է «գործերի փոփոխություն» («դարձի գալ» [*emistrepō*] նկարագրում է եբրայերենի «վերադառնալ» *shub*. տես՝ Թվոց 30:36; 2Օր.30:2,10): Ապաշխարությունը հավատքի հետ միասին, փրկության հարցում ուխտի անհրաժեշտ մասն է կազմում (տես՝ Մարկ.1:15 և Գործք 3:16,19; 20:21): Գործքը հաճախ է այն մատնանշում (տես՝ Պետրոսը՝ 2:38; 3:19,26 և Պողոսը՝ 14:15; 17:30; 20:21; 26:20): Ապաշխարությունը պարտադիր է (տես՝ Ղուկ.13:3 և 2Պետ.3:9): Իրականում այն փոխվելու հոժարակամություն է: Այն հանդիսանում է թե՛ մարդու կողմից հոժարակամ քայլ և թե՛ Աստծո պարզև (տես՝ Գործք 5:31; 11:18; 2 Տիմ.2:25): Տե՛ս Հատուկ Թեմա, 2:38:

■ **«ձեր մեղքերը ջնջվեն»** Այս տերմինը նշանակում է «մաքրվել», «ջնջվել» կամ «արքվել» (տես՝ Կող.2:14; Հայտն.3:5; 7:17; 21:4): Ի՛նչ հրաշալի խոստում: Հնում թանաքը ծծմբից էր և հետևաբար անհնար էր ջնջելը: Սա Աստծո շնորհի իրական հաշքն է (տես՝ Մաղմ.51:1; 103:11-13; Ես.1:18; 38:17; 44:22; Երեմ.31:34; Միք.7:19): Երբ Աստված ներում է, նաև մոռանում է (ջնջում է):

■ **«սփոփանքի /անգլ.՝ թարմանալու/ ժամանակներ»** Հունարեն (*anapsuchō, anapsuxis*) տերմինը հիմնականում նշանակում է «շնչելու տեղ, հանգստություն, ազատում» (Baker, Arndt, Gingrich and Danker, *A Greek-English Lexicon*, էջ.63), «օղով թարմանալ» կամ «վերքը քամով ամոքել» (Kittle, *Theological Dictionary of the New Testament*, հատոր. 9, էջ 663): Փոխաբերական իմաստը ընդգրկում է թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր թարմացում կամ վերականգնում:

Մեսսիայի անուշաբույր այն գործածվում է պատերազմից հետո ֆիզիկական ուժը վերականգնելու՝ վերալիցքավորվելու համար (տես՝ Ելից 23:12; Դատ.15:19; 2 Թագ.16:14) կամ էմոցիոնալ՝ զգացմունքային նոր ուժով լիցքավորվելու համար, ինչպես 1 Թագ.16:23-ում:

Պետրոսի մեջբերումը կարծես թե լինի ՀԿ մի խոստում, սակայն այս արտահայտությունը չի գործածվում ՀԿ-ում: Անապատի մարդկանց համար լայն տարածությունը ազատության և ցնծության՝ ուրախության սիմվոլն էր, մինչդեռ փակ տարածքները՝ ընկճվածության և անհանգստության: Աստված բերելու էր հոգևոր գործունեության ընդարձակման և թարմացման ժամանակաշրջան: Մեսիայի գործունեությունը հասել էր ավետարանի միջոցով: «Սփոփանքի /թարմացման ժամանակները» եկել էին Հիսուս Նազովրեցու միջոցով: Սակայն սպասվող՝ գալիք վախճանը բերելու էր Հոգու դարաշրջանը: Տվյալ համատեքստում Պետրոսը ակնարկում է Երկրորդ Գալուստը: Այս արտահայտությունը կարծես թե հավասարագոր է «հատուցման /անգլ.՝ վերականգնման/ ժամանակներին» (տե՛ս՝ հ.21): Տե՛ս Հատուկ Թեմա. Kerygma, 2:14:

3:20 «Նա պիտի ուղարկի Հիսուսին» Սա ԱՌԻԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ է, որը արտահայտում է պայմանականության տարր: Պետրոսին լսողների գործողություններն էին որոշ իմաստով որոշում հոգևոր իրադարձությունների վախճանի ժամանակները (տե՛ս՝ F. F. Bruce, *Answers to Questions*, որտեղ նա Գործք 3:19-21-ը կապում է Հռոմ.11:25-27-ի հետ, էջ 201):

«Հիսուսի» համադրումը՝ զուգադրումը, հաջորդող «Քրիստոսին/Մեսիային» թվում է, թե Պետրոսը հատուկ կերպով հայտարարում է Հիսուս Նազովրեցու Մեսիա լինելը: Ավելի ուշ ՆԿ-ում «Տեր», «Հիսուս» և «Քրիստոս» բառերը հաճախ են հանդիպում, ավելին որպես Հիսուսին վերաբերող հավաքական դիմելաձև (այսինքն՝ Տեր Հիսուս Քրիստոս), քան թե Մեսիա տիտղոսի վրա շեշտադրում: Սա ճիշտ էր հասկապես այն եկեղեցիներում, որտեղ գերակշռում էին հեթանոսները:

■ **«Քրիստոսին, որ ի սկզբանե ձեզ քարոզվել /նշանակվել/ էր»** Այս ԲԱՅԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Այս նույն տերմինը գործածվում է Աստծո նախախնամության համար 10:41; 22:14; 26:16-ում. Հիսուսի գալուստը և մահը միշտ էլ եղել է Աստծո հավիտենական փրկության ծրագիրը (տե՛ս՝ 2:23; 3:18; 4:28; 13:29):

Մեկտուլազիստայում այս տերմինը արտահայտում է ընտրություն, սակայն առանց նախախնամության (այսինքն՝ Դուկասի համար «pro» - «նախա» նշանակում է նախքան՝ մինչև. տե՛ս, Ելից 4:13 և Հեսու 3:12), որը ակնհայտ է Գործքում այս տերմինի գործածությամբ: Այն փոխանցում է հետևյալ իմաստը, որ Հիսուսին ուղարկելը Աստծո ընտրությունն էր օրհնելու և փրկելու համար:

- 3:21**
NASB, NKJV **«Ում երկինքը պետք է ընդունի»**
NRSV **«Որը պետք է մնա երկնքում»**
TEV, NIV **«Նա պետք է մնա երկնքում»**
NJB **«Որին երկինքը պետք է պահի»**

Այս արտահայտության ԵՆԹԱԿԱՆ «երկինքն» է, ԼՐԱՅՈՒՄԸ՝ «Ում» (այսինքն՝ Հիսուսը): Այս արտահայտության մեջ առկա են երկու ԲԱՅԵՐ: Առաջինը *dei, deo* բառից, որը նշանակում է «անհրաժեշտ է՝ պետք է» կամ «տեղին է»: Տե՛ս ամբողջական գրառումներ՝ 1:16:

Երկրորդը, *dechomai* բառի ԱՌԻԻՍ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ԱՆՈՐՈՇՆ է: Հարող Կ. Մուլթոն *Վերանայված Վերլուծական Հունարեն Բառարան* գրքում (Harold K. Moulton, *The Analytical Greek Lexicon Revised*) ասվում է, որ այս համատեքստում այն նշանակում է «ընդունել և պահել» (էջ 88): Դուք կարող եք տեսնել, թե ինչպես են անգլերեն թարգմանությունները ընտրված ըստ համատեքստի: Դուկասն այս տերմինը գործածում է ավելի հաճախ, քան որևէ այլ ՆԿ-յան հեղինակ (13 անգամ Դուկաս ավետարանում և 8 անգամ՝ Գործքում): Բառերը պետք է սահմանվեն համատեքստային գործածության և առնչության լույսի ներքո, ոչ թե ստուգաբանության: Բառարանները նշում են միայն գործածությունը: Դրանք սահմանումներ չեն տալիս:

- **NASB** **«մինչև»**
NKJV, NRSV, TEV **«մինչև»**
NJB **«մինչ»**

Այս բառը հունարենի UBS⁴ տեքստում է: Չգիտեմ, թե ինչու է NASB 1995 խմբագրությունը, այս բառը գրում շեղատառերով, որը նման կերպով ուզում է նշել հունարենի բնագիր տեքստում դրա բացակայության մասին, և որ տրված է անգլերեն /հայերեն/ ընթերցողների համար, որպեսզի հասկանալի լինի:

NASB-ի 1970 թ-ի խմբագրության մեջ «մինչև» բառը շեղատառերով չի, որն ավելի ճիշտ է:

■ «ամեն բաների հատուցման /վերականգնման/ ժամանակները» Սա վերաբերում է վերստեղծմանը (տես՝ Մատթ.17:11, և հատկապես Հռոմ.8:13-23): Ծննդոց 3-ի մարդկության ապստամբության չարիքը վերացվելու է և արարչագործությունը վերականգնվելու է. Աստծո հետ փոխհարաբերությունը վերահաստատվելու է: Ստեղծագործության սկզբնական նպատակը վերջապես կատարվելու է:

■ «որոնց մասին Աստված խոսեց Իր սուրբ մարգարեների բերանով աշխարհի սկզբից ի վեր» Մարկոսի ավետարանը սկսվում է Մատթ.3:1 մեջբերմամբ: Մատթեոս 1:22-23 ակնարկում է Ես.7:14: Դուկասը գործածեց այս նույն արտահայտությունը Դուկ.1:70-ում: *Kerygma*-ի տեսակետներից մեկը (այսինքն՝ Գործքի քարոզներում աստվածաբանական ընթացիկ ճշմարտությունները, տես՝ Հատուկ Թեմա, 2:14) այն է, որ Հիսուսի ծնունդը, կյանքը, մահը և հարությունը իրականացրեցին ՀԿ-ի մարգարեությունները (տես՝ Մատթ.5:17-19): Հիսուսի ծառայությունը ուշացած միտք կամ երկրորդ ծրագիր չէր: Այն Աստծո կանխատեսված ծրագիրն էր (տես՝ 2:23; 3:18; 4:28; 13:29, տես՝ Հատուկ Թեմա 1:8): Ամեն ինչ ի գործ է դրված, որպեսզի կատարելապես վերականգնվի արարչագործության համար Աստծո կամքը:

3:22 «Մովսեսն ասաց» Սպասվող Մեսիայի վերաբերյալ «Մարգարե» տիտղոսն էր գործածվում (տես՝ 2 Օր.18:14-22; հատկապես՝ 15,18; Հովհ.1:21,25): Մովսեսի Օրենքից Հիսուսի մասին այս փաստացի մեջբերումը (այսինքն՝ հրեաների՝ թե՛ Մադուկեցիների և թե՛ Փարիսեցիների համար, ՀԿ-ի կանոնի ամենահեղինակավոր բաժինը) կարող էր լինել շատ կարևոր այս հրեա լսարանի համար: Հիսուսը միշտ է եղել է փրկության համար Աստծո ծրագիրը (այսինքն՝ Ծննդ.3:15): Նա եկավ մեռնելու (տես՝ Մարկ.10:45; 2 Կորնթ.5:21):

3:23 Սա գուշացման շատ լուրջ խոսք էր: Այն վկայակոչում է 2 Օր.18:19-ը: Հիսուսին մերժելը լուրջ, հավիտենական հարց էր և մինչև հիմա էլ այդպես է:

- 2 Օր.18:14-22-ից այս մեջբերումը ունի նաև մի քանի լուրջ աստվածաբանական գաղափարներ՝
1. Ուշադրություն դարձրեք անհատական և միասնական ասպեկտները: Յուրաքանչյուր անհատ պետք է անձնապես պատասխան տա Մեսիային: Բավարար չէ միայն լինել Իսրայելի միասնական մարմնի մասնիկը:
 2. «Բնաջինջ լինի» արտահայտությունը «սուրբ պատերազմի» ակնարկ է: Աստված պիտի մաքրի Իր սեփական որթատունկը (այսինքն՝ Իսրայելին, տես՝ Հովհ.15; Հռոմ.9-11): Նրանք, ովքեր մերժում են «Մարգարեին» կներժվեն Աստծո կողմից: Փրկության կերպը Աստծո Մեսիային հավատքի պատասխան տալու մեջ է: Ընտանիքը, ռասան, քաղաքակրթությունը, բժախնդրորեն բոլոր կանոնների և օրենքների պահպանումը, փրկության համար նոր ուխտի չափանիշները չեն, այլ միայն Քրիստոսի վրա ունեցած հավատքը (տես՝ 1 Հովհ.5:12):

3:24 «Սամուել» Հրեական կանոնում նա (այսինքն՝ 1 Թագավորացը /անգլ.՝ 1 Սամուելի/) համարվում է «Հին Մարգարեներից» մեկը՝ Հրեական կանոնի երկրորդ բաժնի մի մասը: Սամուելը մարգարե կոչվեց 1 Թագ.3:20-ում, ինչպես նաև տեսանող (այսինքն՝ մարգարե բառի մեկ այլ տերմին) 1 Թագ.9:9; 1 Մնաց.29:29-ում:

■ «այս օրեր» «Միտիանքի ժամանակները» (հ. 19) և «ամեն բաների հատուցման ժամանակները» (հ. 21) վերաբերում է Քրիստոսի վերադարձի ժամանակ Աստծո Արքայության իրագործմանը՝ ցանկալի վախճանին, սակայն այս արտահայտությունը վերաբերում է Մեսիանիկ Թագավորության բացմանը, որը տեղի ունեցավ Բեթլեհեմում Հիսուսի մարմնացումով կամ առնվազն դրան հաջորդող ամբողջ ժամանակահատվածին, որը երկիր մոլորակի վրա Քրիստոսի երկու հայտնությունների միջև ընկած ժամանակահատվածն է: ՀԿ-ը հիմնականում հասկանում էր Մեսիայի միայն առաջին գալուստը: Նրա առաջին գալուստը որպես «Չարչարվող Ծառա» (հ. 18) անակնկալ եղավ. Նրա փառավոր վերադարձը որպես ռազմական առաջնորդ և դատավոր արդեն սպասելի է:

3:25 Պետրոսը դիմում է այս Հրեաներին որպես Աբրահամի որդիների՝ ուխտի ժողովրդի: Սակայն այս ուխտի ժողովուրդը պետք է Հիսուսին և ավետարանին արձագանքեն հավատքով և ապաշխարությամբ այլապես նրանք կներժվեն (հ. 23):

ՆԿ-ը (նոր ուխտը) կենտրոնանում է անձի վրա, ոչ թե ռասայական խմբի: Հենց Աբրամի կանչի մեջ առկա էր տիեզերական տարրը (տես՝ Ծննդ.12:3): Տիեզերական առաջարկը մատուցվեց Քրիստոսի միջոցով և հասանելի է բոլորին (այսինքն՝ Դուկասը գրում էր հիմնականում հեթանոսներին: Նրա Ավետարանը և Գործքը այս հրավերը դարձրեցին պարբերաբար կրկնվող և մասնավոր՝ անձնական):

■ «ուխտ» Տե՛ս Հատուկ Թեմա. Ուխտ, 2:47

■ **«ԵՐԿՐԻ ԲՈՒՈՐ ԱԶԳԵՐԸ ՊԻՏԻ ՕՐՀՆՎԵՆ»** Սա վկայակոչում է Ծննդ.12:1-3-ում Աբրահամին տրված Աստծո խոստումը: Նկատեք նաև Ծննդ.22:18-ում առկա տիեզերական տարրը: Աստված ընտրեց Աբրահամին ժողովուրդ ընտրելու և ապա աշխարհը ընտրելու համար (տես՝ Ելից 19:5-6; Եփես.2:11-3:13): Տե՛ս Հատուկ Թեմա 1:8:

3:26 «նախ ձեզ» Հրեաները, որպես Աստծո հետ ուխտի մեջ եղող ժառանգորդներ, առաջինը հնարավորություն ունեցան լսելու և հասկանալու ավետարանի ուղղերձը (տես՝ Հռոմ.1:16; 9:5): Սակայն նրանք էլ բոլորի պես պետք է միևնույն կերպով արձագանքեն՝ ապաշխարություն, հավատք, մկրտություն, հնազանդություն և հարատևություն:

■ **«Իր Որդի /Ծառա/ Հիսուսին հարուցանելով... ուղարկեց»** Տե՛ս 2:24-ի և 3:13-ի գրառումները:

■ **«որ ձեզ օրհնի»** Ահա թե ինչ է ուզում Աստված ամբողջ մարդկության համար (տես՝ Ծննդ.12:3): Սակայն, առաջինը Աստված ուղարկեց Հիսուսին Իսրայելի կորած ոչխարների մոտ:

■ **«ձեզանից ամեն մեկին իր անօրենությունից ետ դարձնելով»** Փրկությունը իր մեջ ընդգրկում է մեղքի հանդեպ մտածելակերպի փոփոխություն, որի հետևանքը լինում է գործերի և առաջնահերթությունների՝ նպատակների փոփոխությունը: Այս փոփոխությունն է ճշմարիտ ապաշխարության՝ դարձի ապացույցը: Հավիտենական կյանքը ունի դիտարկելի՝ տեսանելի հատկանիշներ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է նշանակում «շարունակական»:
2. Ինչո՞ւ էր բժշկությունը այդքան զորավոր:
3. Ինչո՞ւ էր Չարչարվող Մեսիան այդքան զարմանալի հրեաների համար:
4. Ինչո՞ւ է Դուկասը մեջբերում Ծննդոց 12:3-ը:
5. Արդյո՞ք հրեաների փրկության կերպը տարբերվում է հեթանոսներից:

ԳՈՐԾՔ 4

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պետրոսը և Հովհաննեսը Ատյանի առջև 4:1-4	Պետրոսն ու Հովհաննեսը ձերբակալվեցին 4:1-4	Պետրոսի և Հովհաննեսի ձերբակալությունն ու ազատումը 4:1-4	Պետրոսն ու Հովհաննեսը Ատյանի առջև 4:1-4	Պետրոսն ու Հովհաննեսը Սինեդրոնի առջև 4:1-4
4:5-22	Ուղղերձ Սինեդրոնին 4:5-12 Արգելվում է Հիսուսի Անունը 4:13-22	4:5-12 4:13-22	4:5-7 4:8-12 4:13-17 4:18-22	4:5-12 4:13-17 4:18-22
Հավատացյալները աղոթում են համարձակության համար 4:23-31	Աղոթք համարձակության համար 4:23-31	4:23-31	Հավատացյալները աղոթում են համարձակության համար 4:23-30 4:31	Առաքյալների աղոթքը հալածանքների ներքո 4:23-26 4:27-31
Ամեն բան ընդհանուր էր 4:32-37	Ամեն բանի բաժնեկցում 4:32-37	Ունեցվածքի բաժնեկցում (4:32-5:6) 4:32-5:11	Հավատացյալները բաժնեկցում են իրենց ունեցվածքը 4:32-35 4:36-37	Վաղ Քրիստոնեական համայնքը 4:32 4:33 4:34-35 Բառնաբասի առատաձեռնությունը 4:36-37

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն

2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Հստակ երևում է, որ Գործ Առաքելոցում գլուխների բաժանումը անհարմար է կատարված: Հիշեք, որ գլուխների, համարների բաժանումները, մեծատառերը, պարբերությունները և կետադրությունը հունարեն բնագիր տեքստում չկան, ուստի հանդիսանում են ժամանակակից թարգմանչական ընկերությունների աշխատանքը:

Բ. Գլուխ 3-ում 1-31 համարները առնչվում են կաղ մարդու բժշկության և դրա հետևանքների հետ:

Գ. 32-37 համարները համապատասխանում են 5:1-11-ին:

Դ. Վաղ եկեղեցու խնդիրները շարունակվում են և շատանում, սակայն նույնը կատարվում է շնորհիքի և Սուրբ Հոգու գործության հետ:

Ե. Երուսաղեմում վաղ եկեղեցու սիրառատ և առատաձեռն բնույթի վրա Ղուկասի շեշտադրության հետ առնչվելով, ժամանակակից արևմտյան մեկնաբանները պետք է զգուշանան իրենց «կապիտալիստական» հակումներից: Ղուկասը կարծես թե հաստատում է կամավոր փոխադարձ վերաբերմունքը: Գործքը չի կարող արդարացնել համայնավարությունը՝ կոմունիզմը, ոչ էլ կապիտալիզմը, քանի որ այդ ժամանակ սրանցից ոչ մեկն էլ դեռ գոյություն չունեին՝ հայտնի չէին: Տեքստը պետք է մեկնաբանվի իր օրերի լույսի ներքո, ըստ իր հեղինակի նպատակի և իր լսարանի աշխարհի՝ միջավայրի:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 4:1-4

¹Մինչ նրանք ժողովրդի հետ խոսում էին, քահանաները, տաճարի իշխանավորներն ու սաղուկեցիները վրա հասան ²և զայրացած, որ ժողովրդին ուսուցանում էին և քարոզում Հիսուսի միջոցով մեռելներից հարություն առնելը, ³ձերբակալեցին նրանց և բանտ նստեցրին մինչև հաջորդ օրը, որովհետև արդեն իրիկուն էր: ⁴Բայց այն խոսքը լսողներից շատերը հավատացին, ու այդ մարդկանց թիվը հինգ հազարի հասավ:

4:1 «քահանաները» Այս բառը կիրառված է հնագույն հունարենի ունցիալ ձեռագրերում՝ Զ, A, D և E, սակայն MS C տառերն ունեն «քահանայապետ» (*archiereis*) իմաստը: UBS⁴ տալիս է «քահանա» բառին "B" գնահատական (որը նշ. է՝ գրեթե հստակ): Այս գլխի համատեքստը ցույց է տալիս, որը հակառակությունը քահանայապետների կողմից չէր (տես՝ հ.6):

ՀԿ-ում Ղևիի ցեղը (այսինքն՝ Մովսեսի և Ահարոնի ցեղը) ընտրվեց ՅԱՀՎԵին ծառայելու համար՝ «անդրանիկ զավակների» փոխարեն (տես՝ Ելից 13): Այս ցեղի մեջ կային ընտանիքներ, որոնք ծառայում էին որպես.

1. Օրենքի ուսուցիչներ
2. տաճարի ծառայողներ
3. քահանաներ, որոնք պաշտոնավարում էին Տաճարում, հատկապես ներգրավված լինելով զոհեր մատուցելու մեջ (տես՝ Ղևտացիներին 1-7)

Մովսեսի և Ահարոնի ընտանիքն էր այն հատուկ ընտանիքը, որից պետք է նշանակվեին քահանայապետները: Այս ամբողջ ցեղը Հակոբի՝ Իսրայելի մյուս ցեղերի պես չստացավ հողատարածք: Նրանց տրված էին որոշակի քաղաքների ինչ-որ մասեր (այսինքն՝ 48 Ղևտական քաղաքներ, տես՝ Հեսու 20): Այս ղևտական ընտանիքները կախված էին մյուս ցեղերի աջակցությունից՝ Տաճար բերված տասանորդի և երրորդ տարվա տեղական տասանորդի միջոցով:

Այս ամեն ինչը փոխվեց, երբ Պաղեստինը անցավ Հռոմի տիրակալության տակ: Հռոմը գնեց Քահանայապետների գրասենյակը: Այլևս այն ՀԿ-ի հոգևոր պաշտոնը չէր, այլ կոմերցիոն, քաղաքական իշխանության գրասենյակ:

Այդ ժամանակ Քահանայապետ էր Կայիափան (տես՝ Մատթ.26:3; Ղուկ.3:2; Հովհաննես 18), սակայն իրական իշխանությունը այս պաշտոնի ետևում կանգնած նախկին Քահանայապետն էր՝

Աննան (տես՝ Ղուկ.3:2; Հովհ.18:13, 24; Գործք 4:6): Այս ընտանիքը պատկանում էր Սաղուկեցիների հուդայականության աղանդին:

■ «**տաճարի իշխանավորները**» /անգլ.՝ հսկիչների պետը/ «Սա հատուկ Ղևտական մի պաշտոն էր, որը հանդիսանում էր Քահանայապետի պաշտոնից հետո հաջորդը իր իշխանությամբ (տես՝ Չոզեֆուս, *Պատերազմներ*, 6.5.3): Նրա պարտականությունը տաճարի ոստիկանությանը հսկելն էր (տես՝ 1 Մնաց. 9:11; Նեեմ.11:11; Ղուկ.22:4,52; Գործք 5:24,26): Երբայերենում նա կոչվում է «տան լեռան մարդը»:

■ «**Սաղուկեցիներ**» Սրանք Սինեդրոնի հարուստ, քաղաքական առաջնորդներն էին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱԳՈՒԿԵՑԻՆԵՐ

I. Այս խմբի ծագումը

Ա. Շատ գիտնականներ հավատում են, որ անունը ծագել է Դավթի քահանայապետներից մեկի՝ Սաղովկի անունից (տես՝ 2 Թագ.8:17; 15:24): Հետագայում, Սողոմոնը արքայացեց Աբիաթարին, քանի որ օգնել էր Ադոնիային ապստամբության մեջ (տես՝ 3 Թագ.2:26-27) և ճանաչեց Սաղովկին որպես միակ Քահանայապետ (տես՝ 3 Թագ.2:35): Բաբելոնյան գերությունից հետո այս քահանայական ճյուղը վերահաստատվեց Հեսուի մեջ (տես՝ Անգ.1:1): Ղևտական ընտանիքը ընտրվել էր տաճարի կառավարման համար: Հետագայում, ովքեր այս քահանայական ավանդույթից էին և դրանց աջակիցները, կոչվեցին Սաղուկեցիներ կամ Սաղուկեցիներ:

Բ. Մ.թ. իններորդ դարի ռաբբիական ավանդույթը (*Aboth of Rabbi Nathan*; Ռաբբի Նաթանի *Աբոթ*) ասում է, որ Սաղովկը եղել է Սոկո Անտիգոնեսի աշակերտներից մեկը (մ.թ.ա. 2-րդ դարում), և Սաղովկը սխալ է հասկացել իր ուսուցչի հայտնի ասացվածքներից մեկը, որն իր մեջ պարունակում էր «մեռնելուց հետո պարզևատրվելու» մասին խոսքը և զարգացրեց մի այնպիսի աստվածաբանություն, որը հերքում էր մահից հետո կյանքը և հետևաբար նաև մարմնի հարությունը:

Գ. Հետագայում հուդայականության մեջ Սաղուկեցիները նմանեցվում էին Բոյեթուզանցիների: Բոյեթուզը նույնպես Սոկո Անտիգոնեսի աշակերտներից է եղել: Նա ձևավորել է Սաղովկի աստվածաբանության պես մի աստվածաբանություն, որը նույնպես հերքում էր հանդերձյալ կյանքը:

Դ. Սաղուկեցիներ անունը հայտնի չէր մինչև Չոն Հիրկանուսի /John Hyrcanus/ (թ. Ա. 135-104) օրերը, որը մեջբերված է Չոզեֆուսի կողմից (տես՝ *Antiquities* 13:10:5-6): *Հնություններ* 13:5:9-ում Չոզեֆուսն ասում է, որ գոյություն ունեին «երեք մտածելակերպի երեք դպրոցներ»՝ Փարիսեցիներ, Սաղուկեցիներ և Էսսեններ:

Ե. Գոյություն ունի մրցակցող մի տեսություն, որ նրանք ծագել են Սելևկյան իշխանների ժամանակներից, որոնք փորձել են քահանայությունը Հելլենիզմի բերել Անտիոքոս IV Էպիֆանեսի օրոք (թ.Ա. 175-163): Սակաբայեցիների ապստամբության ընթացքում մի նոր քահանայություն սկսվեց Սիմոն Սակաբայեցու (թ.Ա. 142-135) և նրա սերունդների (տես՝ 1 Մակ.14:41) միջոցով: Այս նոր Հասմոնյան քահանայապետները հավանաբար հենց արիստոկրատ Սաղուկեցիների սկիզբը հանդիսացան: Փարիսեցիությունը ձևավորվեց միևնույն ժամանակաընթացքում Հասիդիմից (այսինքն՝ «անջատողականներից» տես՝ 1 Մակ. 2:42; 7:5-23):

2. Գոյություն ունի ժամանակակից տեսություն (այսինքն՝ Թ. Վ. Մենսոն /T. W. Manson/), որ Սաղուկեցի բառը հունարենի *sundikoi* տերմինի գրադարձությունն է՝ թարգմանությունը: Այս տերմինը վերաբերում էր տեղական իշխանություններին, որոնք համագործակցում էին հռոմեական իշխանության հետ: Սա բացատրում է, թե ինչու որոշ Սաղուկեցիներ արիստոկրատ քահանաներ չէին, այլ Սինեդրոնի անդամներ:

II. Նրանց հատկանշական հավատամքը

Ա. Նրանք հանդիսանում էին Հասմոնյան և Հռոմեական ժամանակաշրջանների հրեության աղանդների քահանայական պահպանողական խմբակցություն:

Բ. Նրանք հատկապես զբաղված էին տաճարի ընթացակարգերով, արձանագրություններով, ծեսերով և պատարագներով:

Գ. Նրանք պահում էին գրված Թորան (այսինքն՝ Ծննդոցից մինչև 2 Օրինաց) որպես հեղինակություն, սակայն մերժում էին Բանավոր Ավանդույթները (այսինքն՝ Թավմուդը):

Դ. Հետևաբար, նրանք չէին ընդունում Փարիսեցիների զարգացրած բազմաթիվ սիրված վարդապետություններ՝

1. մարմնի հարությունը (տես՝ Մատթ.22:23; Մարկ.12:18; Ղուկ.20:27; Գործք 4:1-; 23:8)
 2. հոգու անմահությունը (տես՝ *Antiquities* /Հին Շամանակներ/ 18.1.3-4; *Wars* /Պատերազմներ/ 2.8.14)
 3. հրեշտակների հիերարխիայի գոյությունը (տես՝ Գործք 23:8)
 4. նրանք «աչք-աչքի-դիմաց» (այսինքն՝ *laxalionis*) խոսքը տառացիորեն էին գործադրում և ֆիզիկական պատժի, մահապատժի ենթարկում (դրամական փոխհատուցման փոխարեն)
- Ե. Աստվածաբանական տարածայնության մեկ այլ ոլորտ էր հանդիսանում նախասահմանության և մարդու ազատ կամքի հակադրությունը: Ջոզեֆուսի կողմից նշված երեք խմբերից՝
1. Էսսենները պաշտպանում էին մի տեսակ կանխատեսումը
 2. Սադուկեցիները շեշտադրում էին մարդու ազատ կամքը (տես՝ *Հին Շամանակներ* 13.5.9; *Պատերազմներ* 2.8.14)
 3. Փարիսեցիները այս երկուսի միջև ընդունել էին հավասարակշիռ դիրք
2. Ինչ-որ առումով այս երկու խմբերի միջև բախումները (այսինքն՝ Սադուկեցիների և Փարիսեցիների) արտացոլում էին ՀԿ-ի քահանաների և մարգարեների միջև լարվածությունը:
- Մեկ այլ լարվածություն գլուխ բարձրացրեց այն իրողությունից, որ Սադուկեցիները ներկայացնում էին սոցիալական և կալվածատիրական ազնվականությունը: Նրանք արիստոկրատներն էին (տես՝ Ջոզեֆուսի *Հին Շամանակներ* 13.10.6; 18.1.4-5; 20.9.1), մինչ Փարիսեցիները և դպիրները երկրի ժողովրդի ուսուցիչներն ու կրոնապաշտները:
- Հնարավոր է մեկ այլ լարվածություն էր ներկայացնում Սադուկեցիների կողմից փարիսեցիական աստվածաբանության մեջ Չրադաշտականության ազդեցությունը մերժումը: Օրինակ՝ մեծապես զարգացում ապրած հրեշտակաբանությունը, ՅԱՀՎԵԻ և Սատանայի երկակիությունը և հանդերձյալ կյանքի մասին գոյություն ունեցող աշխարհայացքը՝ աչքի ընկնող ֆիզիկական տերմիններով: Էսսենների և Փարիսեցիների այս չափազանցությունները Սադուկեցիների վրա ազդեցություն թողեցին: Նրանք վերադարձան Մովսեսի միակ աստվածաբանության պահպանողական դիրքին, փորձելով խանգարել մյուս հրեական խմբավորումների շահարկումները:
- III. Տեղեկության աղբյուրները
- Ա. Սադուկեցիների մասին տեղեկատվության հիմնական աղբյուրը Ջոզեֆուսն է: Նա հակված էր թե՛ Փարիսեցիների հանդեպ իր նվիրմամբ և թե՛ հռոմեացիներին հրեական կյանքի դրական պատկերը ներկայացնելու իր շահագրգռվածությամբ:
- Բ. Տեղեկության մյուս աղբյուրը ռաբբիական գրականությունն է: Սակայն այստեղ նույնպես առկա է մեծ հակվածություն: Սադուկեցիները հերքում էին Ծերերի Բանավոր Ավանդությունների հեղինակությունը (այսինքն՝ Թավմուդը): Այս Փարիսեցիական գրերը ակնհայտ նկարագրում էին իրենց ընդհանրադիրներին բացասական, հավանաբար չափազանցեցրած (այսինքն՝ մակերեսային՝ ծղոտե մարդիկ, նրանց վարքագծերը) կերպերով:
- Գ. Հենց Սադուկեցիների կողմից մեզ հասած գրություններ չկան: Մ.թ.70-ին Երուսաղեմի և Տաճարի կործանման հետ միասին քահանայական էլիտի բոլոր փաստաթղթերն ու գրությունները բնաջնջվեցին:
- Նրանք ուզում էին ձեռք բերել տարածաշրջանում խաղաղություն և առաջին դարում դրան հասնելու միակ կերպը՝ Հռոմի հետ համագործակցելն էր (տես՝ Հովհ.11:48-50):

4:2

NASB, NKJV	«սաստիկ անհանգստացած»
NRSV	«շատ զայրացած»
TEV	«զայրացած էին»
NJB	«չափազանց զայրացած»

Հունարեն այս հազվադեպ տերմինը (այստեղ ՆԵԿԱ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ԴԵՐԲԱՅ) նշանակում է «որևէ բանի վրա քրտնաջան աշխատել»: Գործքում ևս մի տեղ կարելի է գտնել այս տերմինը (Գործք 16:18): Այն չէք կարող գտնել Մեպտուազինտայում, ոչ էլ Եգիպտոսի Կոյնե պապիրուսներում:

Սադուկեցիները առաջնորդները զայրացած էին, քանի որ Քրիստոնյա առաջնորդները Տաճարում ամբոխին սովորեցնում էին Հիսուսի անունով և հռչակում Նրա հարությունը (որը, Սադուկեցիները

հերքում էին, ինչպես նաև ընդհանրապես հարության աստվածաբանական հասկացությունը): Համար 2-ի բառերից նաև հավանական է, որ Առաքյալները պնդում էին ոչ միայն Հիսուսի հարությունը, այլ նաև, որ այն վերաբերում է բոլոր հավատացյալներին (տես՝ 1 Կորնթացիների 15):

4:3 «նրանք» 2-րդ համարում ենթադրյալները Պետրոսն ու Հովհաննեսն էին և նույնիսկ հավանական է բժշկված կաղ մարդը: Իսկ 3-րդ համարում ենթադրյալները քահանաներն ու տաճարի ոստիկանությունն էր՝ պահակախումբը:

■ **«ձերբակալեցին նրանց»** Հունարեն այս ԲԱՅԸ ունի կիրառության լայն շրջանակ /անգլ.՝ ձեռք դրեցին նրանց վրա/, սակայն Ղուկասը հաճախ գործածում է այն ձերբակալության իմաստով (տես՝ Ղուկ.20:19; 21:12; Գործք 5:18; 12:1; 21:27):

■ **«մինչև հաջորդ օրը»** Հրեական օրենքն արգելում է դատ վարել մայրամուտից հետո: Այս առաջնորդներն ուզում էին, որ նրանց քարոզչությունն ու ուսմունքը դադարեցվեր և այն էլ անմիջապես: Ուստի նրանց մի զիջերով բանտարկեցին, ինչ-որ տեղ Տաճարի տարածքում, հակառակ հասարակաց՝ հանրային բանտարկության (տես՝ 5:18):

4:4 «այն խոսքը լսողներից ... հավատացին» Այս երկու ԲԱՅԵՐԸ ԱՈՐԻՍՏ ԺԱՄԱՆԱԿՈՎ են: Հավատքը սկսվում է լսելուց (տես՝ Հռոմ.10:17): Ավետարանի խոսքը լսելու արդյունքը (Հոգու օգնությամբ, տես՝ Հովհ.6:44,65; 16:8-11) լինում է Ավետարանին հավատալը: Տե՛ս Հատուկ Թեմա. Փրկության համար հունարեն բայի ժամանակները, 2:40:

■ **«այդ մարդկանց թիվը հինգ հազարի հասավ»** Ուշադրություն դարձրեք, որ այս թիվը չի ներառում կանանց և երեխաներին: Հաճախ ՆԿ-ում ակնարկվում է, որ հոր հավատքը տարածվում և ընդգրկում էր ամբողջ ընտանիքը (տես՝ 11:14; 16:15,31,33): Վերնատանը գտնվող խումբը կազմում էր մոտ 120 հոգի: Պենտեկոստեին 3000 հոգի ավելացավ (տես՝ 2:41), այժմ հավատացյալների թիվը 5000-ից ավելի էր: Երուսաղեմի եկեղեցին արագ աճում էր:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 4:5-12

⁵Այնպես եղավ, որ հետևյալ օրը Երուսաղեմի մեջ հավաքվեցին նրանց իշխանավորները և ձերերն ու դպիրները, ինչպես նաև Աննա քահանայապետն ու Կայիափան և Հովհաննեսն ու Աղեքսանդրոսը, և բոլորը, որ քահանայապետի ցեղից էին: ⁷Եվ նրանց կենտրոնում կանգնեցնելով՝ հարցնում էին. «Դուք ի՞նչ գորությամբ կամ ի՞նչ անունով արեցիք այս բանը»: ⁸Այն ժամանակ Պետրոսը, Սուրբ Հոգով լցված, ասաց նրանց. «Ո՛վ ժողովրդի իշխանավորներ և Իսրայելի երեցներ, ⁹եթե մենք այսօր քննվում ենք մի տկար մարդու արված բարիքի պատճառով, թե նա ի՞նչ միջոցով բուժվեց, ¹⁰թող հայտնի լինի ձեզ բոլորիդ ու ամբողջ Իսրայելի ժողովրդին, որ՝ Նազովրեցի Հիսուս Քրիստոսի անունով, Ում դուք խաչեցիք և Ում Աստված մեռելներից հարուցանեց, Նրան՝վ է ահա սա ձեր առջև բժշկված կանգնել: ¹¹Նա է այն քարը, որ, ձեզանից՝ շինողներից անարգված, անկյան գլուխը դարձավ: ¹²Ուրիշ ո՛չ մեկով փրկություն չկա, որովհետև մարդկանց տրված ուրիշ մի անուն չկա երկնքի տակ, որով մենք կարողանայինք փրկվել»:

4:5 «իշխանավորները և ձերերն ու դպիրները» Մինեդրոնը (այսինքն՝ Խորհուրդը՝ Ատյանը, 5:21, Երուսաղեմի տարածքից, ձերերի Խորհուրդը՝ 22:5) բաղկացած էր յոթանասուն հրեա առաջնորդներից: Հիսուսի օրոք հուդայականության մեջ այն հանդիսանում էր բարձրագույն կրոնա-քաղաքական մարմին (որը Հռոմը թույլատրել էր): Այս գաղափարը սկիզբ էր առել (այսինքն՝ Հրեական ավանդույթը) Եզրասի և «Մեծ Ժողովարանի մարդկանց» միջոցով: ՆԿ-ում այն սովորաբար ճանաչվում է հետևյալ արտահայտությամբ՝ «դպիրներ, ձերեր ու քահանայապետներ» (տես՝ Ղուկ.23:13; Գործք 3:17; 4:5,8; 13:27):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՆԵԴՐԻՆ

I. Ինֆորմացիայի աղբյուրները
Ա. Նոր Կտակարանը
Բ. Փյավիոս Չոզեֆուս *Հրեաների Հնույթունները*
Գ. Թալմուդի Միջնայի բաժինը (այսինքն՝ «Սանեդրին» տրակտատը)
Ցավոք ՆԿ-ը և Չոզեֆուսը չեն համաձայնվում ռաբբիական գրքերի հետ, որոնք կարծես թե պաշտպանում են Երուսաղեմում գտնվող երկու Մինեդրոններին. առաջինը՝

քահանայական (այսինքն՝ Սաղուկեցիների), որը Քահանայապետի հսկողության տակ էր և գործ ուներ քաղաքացիական և քրեական արդարության հետ և երկրորդը՝ Փարիսեցիների և դպիրների հսկողության ներքո էր, որոնք հոգ էին տանում կրոնական և ծիսական հարցերի համար: Սակայն, ռաբբիական գրքերը՝ մ.թ. 200 թ., արտացոլում են մշակութային իրավիճակը մ.թ. 70 թ-ին հռոմեացի գեներալ Տիտոսի կողմից Երուսաղեմը կործանելուց հետո: Հրեաները վերահաստատեցին իրենց կրոնական կյանքը Չամնիա կոչվող մի քաղաքում և հետագայում (այսինքն՝ մ.թ.118) տեղափոխվեցին Գալիլիա:

II. Տերմինաբանությունը

Այս իրաբանական մարմինը սահմանելու խնդիրը կայանում է նրանում, որ այն ուներ մեզ հայտնի տարբեր անուններ: Երուսաղեմի ներսում գտնվող հրեական համայնքների իրավաբանական մարմինները նկարագրող մի քանի բառեր կան.

Ա. *Gerousia* – «ստյան» կամ «խորհուրդ»: Սա ամենահին տերմինն է, որը սկսվել է կիրառվել Պարսից թագավորության ժամանակաշրջանի վերջում (տես՝ Չոզեֆուսի *Հնություններ* 12.3.3 և 2 Մակ.11:27): Ղուկասն այն գործածում է Գործք 5:21-ում «Մինեղրոն» բառի հետ միասին: Հնարավոր է դա եղել է հունախոս ընթերցողների համար այդ տերմինի բացատրության մի ձև (տես՝ 1 Մակ.12:35):

Բ. *Synedrion*–«Մինեղրիոն»: Սա բաղադրյալ բառ է *syn* (միասին) և *hedra* (նստել): Չարմանալի է, որ այս տերմինը գործածվում է արամեերենում, սակայն նկարագրում է հունարեն բառ: Մակկաբայեցիների դարաշրջանի վերջում սա դարձել էր ընդունված տերմին, որը նկարագրում էր Երուսաղեմում հրեաների բարձրագույն ատյանը (տես՝ Մատթ.26:59; Մարկ.15:1; Ղուկ.22:66; Հովհ.11:47; Գործք 5:27): Խնդիր է առաջանում այն ժամանակ, երբ այս նույն տերմինաբանությունը կիրառվում է Երուսաղեմից դուրս գտնվող տեղական իրավաբանական ատյանների համար (տես՝ Մատթ.5:22; 10:17):

Գ. *Presbyterion*–«երեցների՝ ծերերի խորհուրդ» (տես՝ Ղուկ.22:66): Սա ՀԿ մի նկարագրություն է ցեղերի առաջնորդների համար: Սակայն, այն սկսեց առնչվել Երուսաղեմում վերին ատյանին (տես՝ Գործք 22:5):

Դ. *Boulē*–Այս տերմինը՝ «խորհուրդ», գործածվում է Չոզեֆուսի կողմից (այսինքն՝ *Պատերազմներ* 2.16.2; 5.4.2, բայց ոչ ՆԿ-ի) նկարագրելու մի քանի իրավաբանական մարմիններ՝ (1) Հռոմի Սենատը, (2) տեղական Հռոմեական ատյանները, (3) Երուսաղեմում հրեական վերին ատյանը և (4) տեղական հրեական ատյանները: Որպես Մինեղրոնի անդամ Հովսեփ Արիամաթացին նկարագրվում է այս տերմինի ձևերից մեկով (այսինքն՝ *bouleutēs*, որը նշանակում է «խորհրդի անդամ»: Տես՝ Մարկ.15:43; Ղուկ.23:50):

III. Պատմական զարգացումները

Ավում է, որ սկզբում Եզրասն է հիմնադրել Մեծ Ժողովարանը՝ Մինագոզը գերությունից հետո ընկած շրջանում, որը կարծես թե դարձել է Հիսուսի օրերի Մինեղրոնը:

Ա. Միշնան (այսինքն՝ Թավմուդը) արձանագրում է, որ Երուսաղեմում գոյություն ունեին երկու գլխավոր ատյաններ (տես՝ Մանդ.7:1):

1. Առաջինը կազմված էր 70 (կամ 71) անդամներից (*Մանդ.1:6* նույնիսկ սահմանում է, որ Մովսեսը հիմնեց առաջին Սանեղրինը Թ-վոց 11, տես՝ Թ-վոց 11:16-25):

2. Մյուսը բաղկացած էր 23 անդամներից (սակայն սա կարող է վերաբերել տեղական ժողովարանների ատյաններին):

3. Որոշ հրեա գիտնականներ հավատում են, որ Երուսաղեմում գոյություն ունեին երեք 23 անդամանոց Սանեղրիներ: Երբ այս երեքը միասին հավաքվում էին, նրանք իրենց երկու առաջնորդների հետ միասին, կազմում էին «Մեծ Ժողովարանը» 71 անդամներից (այսինքն՝ *Nasi* և *Av Bet Din*):

ա. մեկը՝ քահանայական (այսինքն՝ Սաղուկեցիները)

բ. մյուսը՝ օրինական (այսինքն՝ Փարիսեցիները)

գ. երրորդը՝ արիստոկրատ (բարձրաստիճան. այսինքն՝ ծերերը)

Բ. Գերությունից հետո ժամանակաշրջանում վերադարձած Դավթի սերմը Չորաբաբելն էր և վերադարձած Ահարոնի սերմը՝ Հեսուն էր: Չորաբաբելի մահից հետո Դավթի սերմը չչարունակվեց, ուստի իրավաբանական թիկնոցը փոխանցվեց բացառապես քահանաներին (տես՝ 1 Մակ.12:6) և տեղի ծերերին (տես՝ Նեեմ.2:16; 5:7):

Գ. Իրավաբանական որոշումների մեջ այս քահանայական դերը փաստագրված է Դիոդորիուսի 40:3:4-5-ում՝ Հելլենական ժամանակաշրջանում:

Դ. Այս քահանայական դերը կառավարության մեջ շարունակվեց Սելևկյան ժամանակաշրջանում: Չոզեֆուսը մեջբերում է «Մեծն» Անտիոքցի III (Ք.Ա. 223-187) *Հնություններ* 12.138-142:

- Ե. Համաձայն Չոզեֆուսի *Հնությունների* այս քահանայական դերը շարունակվեց Մակկարայեցիների օրոք է:
2. Հռոմեական կայսրության օրոք Սիրիայի կառավարիչը (այսինքն՝ Ք.Ա. 57-55 Գաբինուսը) հիմնեց հինգ տարածքային «Սինեդրոններ» (տես՝ Չոզեֆուսի *Հնություններ* 14.5.4 և *Պատերազմներ* 1.8.5.), սակայն սրանք հետագայում անվավեր համարվեցին Հռոմի կողմից (այսինքն՝ Ք.Ա. 47):
- Է. Սինեդրոնը Հերովդեսի հետ ուներ քաղաքական ընդհարումներ (այսինքն՝ *Հնություններ* 14.9.3-5), որը Ք.Ա. 37-ին փոխհատուցեց դրա համար սպանելով վերին ատյանի մեծամասնությանը (տես՝ Չոզեֆուսի *Հնություններ* 14.9.4; 15.1.2):
- Ը. Հռոմեացի կուսակալների իշխանության ներքո (այսինքն՝ մ.թ.6-66) Չոզեֆուսն ասում է մեզ (տես՝ *Հնություններ* 20.200,251), որ Սինեդրոնը վերականգնեց իրեն պատշաճ իշխանությունը և ազդեցությունը (տես՝ Մարկ.14:55): ՆԿ-ում արձանագրված են երեք դատավճիռներ, որտեղ Սինեդրոնը Քահանայապետի ընտանիքի առաջնորդությամբ արդարադատություն է գործադրել:
1. Հիսուսի դատավճիռը (տես՝ Մարկ.14:53-15:1; Հովհ.18:12-23,28-32)
 2. Պետրոսի և Հովհաննեսի (տես՝ Գործք 4:3-6)
 3. Պողոսի (տես՝ Գործք 22:25-30)
- Թ. Երբ մ.թ.66-ին հրեաները ապստամբեցին, հռոմեացիները ավելի ուշ կործանեցին հրեական հասարակությունը և Երուսաղեմը՝ մ.թ.70-ին: Սինեդրոնը ժամանակավորապես լուծարվեց, չնայած որ Փարիսեցիները Չամնիայում փորձում էին վերադարձնել իրավաբանական վերին ատյանը (այսինքն՝ *Beth Din*) հրեական կրոնական (ոչ թե քաղաքացիական կամ քաղաքական) կյանքը:

IV. Անդամությունը

- Ա. Առաջին անգամ Աստվածաշնչում նշվում է Երուսաղեմում վերին ատյանի մասին 2 Մնաց.19:8-11: Այն կազմված էր՝ (1) Ղևտացիներից, (2) քահանաներից և (3) ընտանիքների գլուխներից (այսինքն՝ ծերերից, տես՝ 1 Մակ.14:20; 2 Մակ.4:44):
- Բ. Մակարայեցիների օրոք այստեղ գերակշռում էին (1) Սադուկեցիների քահանայական ընտանիքները, (2) տեղի արիստոկրատները (տես՝ 1 Մակ.7:33; 11:23; 14:28): Ավելի ուշ այս շրջանում ավելացան «դպիրները» (Մովսիսական օրենսգետները, սովորաբար Փարիսեցիներ) ըստ երևույթին Ալեքսանդր Չանեուսի կնոջ՝ Մալոմեի միջոցով (Ք.Ա. 76-67): Ասվում է, որ նույնիսկ նա է Փարիսեցիների խումբը դարձրել գերակշռող (տես՝ Չոզեֆուսի *Հրեաների Պատերազմները* 1.5.2):
- Գ. Հիսուսի օրոք ատյանը բաղկացած էր՝
1. Քահանայապետների ընտանիքներից
 2. տեղի հարուստ ընտանիքների տղամարդկանցից
 3. դպիրներից (տես՝ Ղուկ.19:47)

V. Տեղեկության աղբյուրները

- Ա. *Հիսուսի և Ավետարանների մասին Բառարան*, (*Dictionary of Jesus and the Gospels*, IVP, pp. 728-732)
- Բ. *Չոնդերվանի Աստվածաշնչի Պատկերագրող Հանրագիտարան* (*The Zondervan Pictorial Encyclopedia of the Bible*, vol. 5, pp. 268 -273)
- Գ. *Կրոնական Գիտության Նոր Շաֆ-Հերցոգի Հանրագիտարանը* (*The New Schaff-Herzog Encyclopedia of Religious Knowledge*, vol. 10, pp.203-204)
- Դ. *Թարգմանչի Աստվածաշնչյան Բառարան* (*The Interpreter's Dictionary of the Bible*, vol. 4, pp. 214-218)
- Ե. *Հուդայական Հանրագիտարան* (*Encyclopedia Judaica*, vol. 14, pp. 836-839)

4:6 «Աննա» Նրա անունը հունարենում Հաննա է. Չոզեֆուսը նրան անվանում է Հաննանուս (Jonathan Հովնաթան): Կարծես թե այս անունը ծագել է Եբրայերենի «ողորմած» կամ «գթառատ» բառից (*hānān*, BDB 336):

ՀԿ-ում քահանայապետությունը ցմահ էր և մնում էր Ահարոնի ընտանեկան շառավիղում: Սակայն, հռոմեացիները այս պաշտոնը վերածել էին քաղաքական հանգույցի՝ գնված մի Ղևտացի ընտանիքի կողմից: Քահանայապետը հսկում էր և իրականացնում Կանանց Սրահի առևտուրը: Հիսուսը մաքրելով Տանաքը բարկացել էր այս ընտանիքի վրա:

Համաձայն Ֆլավիոս Չոզեֆուսի, Աննան Քահանայապետ էր մ.թ. 6-14 թթ-ին: Նա նշանակվել էր Կյուրենոսի՝ Սիրիայի կառավարչի կողմից և հեռացվել Վալերիոս Գրատուսի կողմից: Նրա բարեկամները (5 որդիները և 1 թոռը) հաջորդեցին նրան: Կայիափան (մ.թ. 18-36)՝ նրա փեսան (տես՝

Հովհ.18:13), եղավ նրա անմիջական հաջորդողը: Աննան էր հանդիսանում այս պաշտոնի ետևում կանգնած իրական իշխանությունը: Հովհաննեսը նկարագրում է նրան որպես առաջին անձը, որի մոտ տարան Հիսուսին (տես՝ 18:13, 19-22):

■ **«Կայիափա»** Նա քահանայապետ նշանակվեց մ.թ. 18-36՝ Վալերիուս Գրատուսի՝ Հուդայի կուսակալի կողմից (տես՝ MS D, *Tōnathas*, cf. NEB, NJB):

■ **«Հովհաննես»** Սա հավանաբար վերաբերում է «Հովնաթանին», որը ինչպես Ջոզեֆուսն է մեզ պատմում, նույնպես հանդիսանում էր Աննայի որդիներից մեկը, որը քահանայապետ դարձավ Կայիափայից հետո մ.թ. 36-ին: Սակայն UBS⁴ ունի *Tōannēs* (այսինքն՝ Հովհաննես) որպես առաջին տեղում (հաստատ է), նույնիսկ REB (Revised English Bible) վերադառնում է «Հովհաննես» անվանը:

■ **«Ալեքսանդր»** Այս մարդու մասին ոչինչ մեզ հայտնի չէ, սակայն նա էլ Հովհաննեսի պես հնարավոր է եղել է Աննայի ընտանիքի մի անդամը կամ Սաղուկեցիների խմբավորման առաջնորդ անդամներից:

4:7 «Եվ նրանց կենտրոնում կանգնեցնելով» Մինեղորոնի անդամները նստած էին կիսաշրջանաձև բարձր բեմահարթակի վրա:

■ **«հարցնում էին»** Սա ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ է, որը նշանակում է կամ (1) անցյալ ժամանակում շարունակվող գործողություն կամ (2) գործողության սկիզբը:

■ **«ի՞նչ գորությամբ կամ ի՞նչ անունով»** Նրանք զրպարտում էին, թե այդ բժշկությունը կատարվել էր մոգական գորությամբ (տես՝ 19:13): Նրանք այս նույն խորամանկությանը դիմել էին Հիսուսի դեպքում (տես՝ Ղուկ.11:14-26; Մարկ.3:20-30): Չկարողանալով հերքել հրաշքները նրանք փորձում էին կեղծել գործության մեթոդն ու աղբյուրը:

4:8 «Սուրբ Հոգով լցված» Հոգին էր Առաքյալների իմաստության և համարձակության աղբյուրը (տես՝ Ղուկ.12:11-12; 21:12-15): Հիշեք, որ սա հենց այն նույն մարդն է, որ մի քանի օր առաջ վախենալով ուրացել էր Տիրոջը (տես՝ 4:13): Նկատեք, որ Պետրոսը «լցված» էր (տես՝ 2:4; 4:8, 31): Սա ցույց է տալիս, որ այն կրկնվող՝ շարունակվող փորձառություն էր (տես՝ Եփես.5:18): Լիարժեք գրառումների համար նայեք 5:17:

4:9 «եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը հեղինակի նպատակի համար ճշմարտություն է ենթադրում:

■ **«եթե մենք այսօր քննվում ենք»** Այս հունարեն տերմինը բառացի նշանակում է «դատարանի կողմից քննվել» (տես՝ 12:19; 24:8; 28:18; Ղուկ.23:14): Այս տերմինը գործածվեց Բերիացի հրեաների կողմից, երբ քննում էին Սուրբ Գրքերը, որպեսզի տեսնեին, թե արդյոք Պողոսը ճիշտ էր մեկնաբանում դրանք (տես՝ 17:11):

■ **«տկար մարդու արված բարիքի պատճառով»** Պետրոսը պնդում է այս պաշտոնական դատավարության այսքան թշնամաբար միջավայրի անհարկիությունը, երբ խոսքը գնում էր բժշկության և ողորմության մի սքանչելի հրաշքի մասին: Նրանք իրականում պետք է որ փառաբանեին Աստծուն դրա համար:

■ **«բուժվեց»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐՎՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը նշանակում է ոտքերի լիարժեք առողջություն և ապաքինում:

4:10 «Թող հայտնի լինի ձեզ բոլորիդ ու ամբողջ Իսրայելի ժողովրդին» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Հոգին համարձակություն էր տվել Պետրոսին: Նա չէր վախենում այդ օրինապահների միջավայրում: Այս առաջնորդները չկարողացան պահել Քրիստոսին գերեզմանում և չէին կարող ուրանալ այս բժշկված մարդուն, որ կանգնած էր նրանց առջև:

■ **«Նազովրեցի Հիսուս Քրիստոսի անունով»** Պետրոսը ծաղկաբաղ է անում նրանց հարցերից և պատասխանում հասկապես, թե ինչպես էր այդ հրաշքը տեղի ունեցել: Տե՛ս Հատուկ Թեմա՝ Հիսուս Նազովրեցին, 2:22:

■ **«Ում դուք խաչեցիք»** Սա բացահայտ ճշմարտություն էր: Նրանք էին հրահրել Նրա մահը: Նկատեք «ձեզանից» խոսքը h.11-ում, որը նույնպես հաստատում է նրանց հանցանքը:

■ «Ուն Աստված հարուցանեց» ՆԿ-ը հաստատում է, որ Երրորդության բոլոր երեք անձերն էլ Հիսուսի հարության ժամանակ գործել են:

1. Հոգին, Հռոմ.8:11
2. Հիսուսը, Հովհ.2:19-22; 10:17-18
3. Հայրը, Գործք 2:24, 32; 3:15,26; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռոմ.6:4,9

Աստծո մասին Հիսուսի կյանքի և ուսմունքների հաստատությունն էր սա, ինչպես նաև Հոր կողմից Հիսուսի փոխանորդական մահվան կատարյալ ընդունելությունը: Սա *Kerygma*-ի կարևոր կետերից մեկն է (այսինքն՝ Գործքի քարոզները, տես՝ Հատուկ Թեմա, 2:14):

■ «այս մարդը այստեղ կանգնած /անգլ./» Սա «կանգնած» խոսքի բառախաղ է: Այդ կաղ մարդը նրանց աչքի առաջ կանգնեց ոտքի և հիմա էլ կանգնած է նրանց առջև:

4:11 Սա մեջբերում է Սաղմոս 118:22-ից, և ոչ թե Մագորեթիկ տեքստից կամ Մեպտուազինուայից (տես՝ Եփես.2:20; 1 Պետ.2:4վ.): Հիսուսը այս խոսքը գործածում է Իր մասին խոսելիս Մարկ.12:10 և Ղուկ.20:17-ում՝ Մեպտուազինուայից: Այն նշում է մի ՀԿ-յան մարգարեություն անարգված Մեսիայի մասին, որը դարձել է Իսրայելի և ամբողջ աշխարհի փրկության համար Աստծո հավիտենական ծրագրի կենտրոնը՝ սիրտը (տես՝ Հատուկ Թեմա, 1:8): Հրեա առաջնորդների համար սա ցնցող հայտարարություն էր (տես՝ 1 Տիմ.2:5):

■	
NASB	«գլխավոր անկյունի քարը»
NKJV	«գլխավոր անկյունաքարը»
NRSV, NJB	«անկյունաքարը»
TEV	«քար... ամեն ինչից կարևորը»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԿՅՈՒՆԱՔԱՐ

I. ՀԿ կիրառությունը

- Ա. Քարի գաղափարը, որպես ամուր, դիմացկուն առարկա, որը լավ հիմք էր հանդիսանում, գործածվում էր նկարագրելու համար ՅԱՀՎԵին (տես՝ Սաղմ.18:2):
- Բ. Ապա այն վերածվեց Մեսիական տիտղոսի՝ անվան (տես՝ Ծննդ.49:24; Սաղմ.118:22; Ես.28:16):
- Գ. Այն եկավ ներկայացնելու Մեսիայի միջոցով ՅԱՀՎԵի դատաստանը (տես՝ Ես.8:14 Դան.2:34-35,44-45):
- Դ. Սա վերածվեց շինության փոխաբերության՝
 1. մի հիմնաքարի, որը առաջինն են դնում, որը ապահով է և ամբողջ շինության անկյունները դրա միջոցով են ուղղվում, և կոչվեց «անկյունաքար»
 2. այն կարող է նաև վերաբերել վերջին քարին, որը դրվում է շինության մեջ իր տեղը, որը իրար է միացնում պատերը (տես՝ Չաք.4:7; Եփես.2:20,21), որը կոչվում է «գլխավոր քար»՝ Եբրայերեն *rush* (այսինքն՝ գլուխ) բառից:
 3. այն կարող է վերաբերել «բանալի՝ հիմնական քարին» որը դռան կամարի մեջտեղում էր դրվում և պահում էր ամբողջ պատի ծանրությունը:

II. ՆԿ կիրառությունը

- Ա. Իր մասին խոսելիս մի քանի անգամ Հիսուսը մեջբերեց Սաղմոս 118-ից (տես՝ Մատթ.21:41-46; Մարկ.12:10-11; Ղուկ.20:17):
- Բ. Պողոսը գործածում է Սաղմոս 118-ը՝ անհավատ, ապստամբ Իսրայելին ՅԱՀՎԵի մերժման հետ կապված (տես՝ Հռոմ.9:33):
- Գ. Պողոսը կիրառում է «անկյունաքարի» գաղափարը Եփես.2:20-22, վկայակոչելով Քրիստոսին:
- Դ. Պետրոսը կիրառում է Հիսուսի մասին այս հասկացությունը 1 Պետ.2:1-10: Հիսուսը անկյունաքարն է և հավատացյալները կենդանի քարերն են (այսինքն՝ հավատացյալները որպես տանարներ, տես՝ 1 Կորնթ.6:19) կառուցված Նրա վրա (այսինքն՝ Հիսուսը նոր Տանարն է, տես՝ Մարկ.14:58; Մատթ.12:6; Հովհ.2:19-20): Հրեաները մերժելով Հիսուս Մեսիային մերժեցին իրենց հավատքի հենց հիմքը:

III. Աստվածաբանական սահմանումներ

- Ա. ՅԱՀՎԵՆ թույլատրեց Դավթին, Սողոմոնին կառուցելու տաճար: Նա ասաց նրանց, որ եթե պահեն ուխտը, Նա կօրհնի նրանց և կլինի նրանց հետ (տես՝ 2 Թագ.7), սակայն եթե նրանք չպահեն, ապա տաճարը կավերվի (տես՝ 3 Թագ.9:1-9):
- Բ. Ռաբբիական հուդայականությունը կենտրոնացել էր ձևի և ծեսերի վրա, անտեսելով անձնական հավատքի ասպեկտը (տես՝ Երեմ.31:31-34; Եզեկ.36:22-38): Աստված փնտրում է ամենօրյա, անձնական, աստվածահաճո փոխհարաբերություն Իր պատկերով ստեղծված մարդկանց հետ (տես՝ Ծննդ.1:26-27): Ղուկ.20:17-18 պարունակում է դատաստանի սարսափելի խոսքեր, ինչպես և Մատթ.5:20, որն ուղղված է հուդայականությանը:
- Գ. Հիսուսը կիրառեց տաճարի գաղափարը ներկայացնելու Իր ֆիզիկական մարմինը (տես՝ Հովհ.2:19-22): Այն շարունակվում է և ընդլայնում Հիսուսի վրա եղած անձնական հավատքի գաղափարը, քանի որ Մեսիան է հանդիսանում ՅԱՀՎԵՆի հետ փոխհարաբերության ճանապարհը (այսինքն՝ Հովհ.14:6; 1 Հովհ.5:10-12):
- Դ. Փրկության նպատակն է մարդկանց մեջ վերականգնել Աստծո ապականված պատկերը (Ծննդ.1:26-27 և գլուխ 3), որպեսզի Աստծո հետ փոխհարաբերությունը դառնա հնարավոր: Քրիստոնեության նպատակը Քրիստոսակերպությունն է: Հավատացյալները պետք է դառնան կենդանի քարեր (այսինքն՝ փոքր տաճարներ կառուցված Քրիստոսի վրա՝ Նրա թողած օրինակով):
- Ե. Հիսուսն է մեր հավատքի հիմքը և մեր հավատքի անկյունաքարը (այսինքն՝ Ավֆան և Օմեգան): Մինչդեռ Նա նաև գայթակղության քարը և անարգված քարն է: Կորցնել Նրան նշանակում է կորցնել ամեն բան: Այստեղ չկա ձեռնպահ՝ չեզոք դիրք:

4:12 «ուրիշ ո՛չ մեկով փրկություն չկա» Սա ցայտուն ԿՐԿՆԱԿԻ ԺԽՏԱԿԱՆ է: Աբրահամի կամ Մովսեսի միջոցով փրկություն չկա (տես՝ Հովհ.14:6; 1 Տիմ.2:5; 1 Հովհ.5:10-12): Ինչպիսի՞ ցնցող հայտարարություն: Ծատ սահմանափակող է, սակայն նաև շատ ակնհայտ, որ Հիսուսը հավատում էր, որ միայն Իր հետ ունեցած անձնական փոխհարաբերության միջոցով մարդը կարող է ճանաչել Աստծուն: Պետրոսը այս խոսքը համարձակությամբ հայտարարում է հրեա առաջնորդների այդ էլիտային: Սա հաճախ կոչվել է Քրիստոնեության բացառիկության սկանդալ: Այստեղ չեզոք դիրք գոյություն չունի: Կա՞մ այս հայտարարությունն է ճիշտ, կա՞մ է՞ Քրիստոնեությունը սուտ է:

■ **«մարդկանց տրված ուրիշ մի անուն չկա երկնքի տակ»** «Տրված» ԴԵՐԲԱՅԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐՎՎՈՐԱԿԱՆ է: Աստված է կարգադրել սա: Հիսուսը Նրա տված պատասխանն է մարդկության հոգևոր կարիքին: Երկրորդ ծրագիր գոյություն չունի: Քրիստոնեության բացառիկության վերաբերյալ լավ գիրք ընթերցելու համար նայեք *H. A. Netland, Dissonant Voices: Religious Pluralism and the Question of Truth.*

■ **«մարդկանց»** Նկատեք տիեզերական տարրը (տես՝ Հովհ.3:16; 1 Տիմ.2:4; 2 Պետ.3:9):

■ **«որով մենք կարողանայինք փրկվել»** Այս արտահայտությունը երկու ԲԱՅ ունի:

1. *dei*, ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ, «մենք պետք է» /հայ.՝ մենք կարողանայինք/ (տես՝ *dei* համար լիարժեք գրառումները 1:16-ում)
2. *sōthēnai*, ԱՌԻՒՍ ԱՆՈՐՈՇ ԿՐՎՎՈՐԱԿԱՆ *sōzō* -«փրկվել» բայի

ՆԿ-ում փրկել բառը երկու իմաստով է կիրառվում՝

1. ֆիզիկական ազատագրում (ՀԿ իմաստը, տես՝ Մատթ.9:22; Մարկ.6:56; Ղուկ.1:71; 6:9; 7:50; Գործք 27:20,31; Հակ.1:21; 2:14; 4:12; 5:20)
2. հոգևոր փրկություն (ՆԿ կիրառությունը, տես՝ Ղուկ.19:10; Գործք 2:21,40,47; 11:14;15:11;16:30-31)

Կադ մարդը երկուսն էլ վերապրեց: Կրոնական առաջնորդները կարիք ունեին վստահելու Հիսուսին որպես իրենց միակ հույսը ընդունվելու և ներվելու համար: Մարդիկ կարիք ունեն փրկվելու (տես՝ Հռոմ.1:18-3:20) և Հիսուսն է փրկության միակ ճանապարհը (տես՝ Հռոմ.3:21-31): Համար 12-ում ՀԿ-ից մեջբերումը ցույց է տալիս, որ Նա է միշտ եղել Աստծո ծրագիրը (տես՝ Ես.8:14-15; 28:14-19; 52:13-53:12):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 4:13-22

¹³Իսկ նրանք, Պետրոսի և Հովհաննեսի համարձակությունը տեսնելով և իմանալով, որ տգետ և անուս մարդիկ են, զարմանում էին. և հասկացան, թե նրանք Հիսուսի հետ են եղել: ¹⁴Սակայն տեսնելով այն բժշկված մարդուն, որ նրանց հետ կանգնած էր, դրա դեմ ոչինչ չկարողացան ասել: ¹⁵Եվ հրամայելով, որ նրանք ատյանից դուրս գան, միմյանց հետ

խորհրդակցեցին,¹⁶ ասելով. «Ի՞նչ անենք այս մարդկանց, չէ՞ որ Երուսաղեմի բոլոր մարդկանց հայտնի է, որ սրանց ձեռքով մի երևելի հրաշք կատարվեց, ու մենք դա չենք կարող ուրանալ: ¹⁷Միայն թե, որպեսզի ժողովրդի մեջ ավելի շատ չտարածվի, խիստ սպառնալիք տանք նրանց, որ այլևս այդ անունով ոչ մի մարդու հետ չխոսեն»: ¹⁸Եվ նրանց կանչելով՝ պատվիրեցին նրանց, որ Հիսուսի անունով ամենևին չխոսեն ու չուսուցանեն: ¹⁹Բայց Պետրոսն ու Հովհաննեսը նրանց պատասխանեցին՝ ասելով. «Եթե Աստծո առաջ արդար է, որ ձեզ ավելի լսենք, քան Աստծուն, դո՛ւք դատեցեք, ²⁰քանի որ մենք չենք կարող չխոսել այն, ինչ տեսել ենք և լսել»: ²¹Իսկ նրանք, նորից սպառնալուց հետո, արձակեցին նրանց՝ պատժելու արժանի ոչինչ չգտնելով, նաև՝ ժողովրդի պատճառով, քանի որ բոլորը կատարվածի համար փառավորում էին Աստծուն, ²²քանի որ այն մարդը, ում վրա այս բժշկության հրաշքը եղավ, քառասուն տարեկանն անց էր:

4:13 «համարձակություն» Տե՛ս Հատուկ Թեմա. Համարձակություն, 4:29:

■ **«անգրագետ»** Այս տերմինը *agrammatos* է, որը «գրել» տերմինն է ԱԼՖԱ մասնիկով: Սա կարող է նշանակել, որ նրանք՝

1. տգետ կամ անգրագետ էին (տես՝ Մուլթոն, Միլիգան, *Բառարան*, էջ 6)
2. ռաբբիական դպրոցներում չէին սովորել (տես՝ A. T. Robertson, *Word Pictures in the Greek New Testament*, /Ա. Տ.Ռոբերթսոն, *Բառապատկերներ Հունարեն Նոր Կտակարանում*, հատ. 3, էջ 52/ և Louw and Nida, *Lexicon*, /Լու և Նիդա, *Բարբառ*, հատ. 1, էջ 328/)

■ **«անուս»** Սա *idiōtēs* տերմինն է, որը սովորաբար թարգմանվում էր «ոչ մասնագետ» կամ «ինչ-որ հատուկ ոլորտում անկիրթ» մարդ: Բնագրում այն վերաբերում էր նորմալ անձնավորությանը, որը հակառակվում էր առաջնորդին կամ խոսնակին: Այն հետագայում սկսվեց օգտագործվել այն անձի համար, որը դրսից էր և հակառակվում էր խմբի ներսում գտնվող որևէ անդամի (տես՝ 1 Կորնթ.14:16,23-24; 2 Կորնթ.11:6):

Ուշադրություն դարձրեք այս արտահայտության անգլերեն տարբեր թարգմանությունների ձևակերպումներին.

NASB, NKJV	«անգրագետ և անուս մարդիկ»
NRSV	«անգրագետ և սովորական մարդիկ»
TEV	«առանց կրթության սովորական մարդիկ»
NJB	«անգրագետ ոչ մասնագետ մարդիկ»

■ **«գարմանում էին»** Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է (ինչպես և հաջորդ երկու բայերը): Դրանք ակնարկում են կամ գործողության սկիզբը, կամ էլ անցյալ ժամանակում կրկնվող գործողություն (ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ): Դուկասը հաճախ է գործածում այս բառը (18 անգամ Դուկաս Ավետարանում և Գործքում). այն սովորաբար, բայց ոչ միշտ, ունենում է դրական նշանակություն (տես՝ Դուկ.11:38; 20:26; Գործք 4:13; 13:41):

■ **«սկսեցին ճանաչել /հայ.՝ հասկացան/, թե նրանք Հիսուսի հետ են եղել»** Սա իրականում հաճոյախոսություն էր: Հիսուսը նույնպես ռաբբիական դպրոցներում չէր սովորել, սակայն Հին Կտակարանը լավ գիտեր: Նա գնացել էր ժողովարանի դպրոցը ինչպես բոլոր հրեա երեխաները (ինչպես և Պետրոսն ու Հովհաննեսը) պարտավոր էին գնալ:

Այս առաջնորդները ճանաչեցին Պետրոսի և Հովհաննեսի համարձակությունն ու գործությունը: Նրանք այդ նույնը տեսել էին Հիսուսի մեջ:

4:14 Բոլորը ճանաչում էին այս կաղ մարդուն, քանի որ նա ամեն օր նստում էր Տաճարի դռան մոտ: Սակայն հիմա նա այլևս չէր նստում: Տաճարի մոտ հավաքված ամբոխը չէր կարող սա ուրանալ (տես՝ հհ. 16,22):

4:15 Նրանք խնդրեցին, որ երեքն էլ հեռանան, մինչ իրենք կքննարկեն իրենց վարկածները և կծրագրեն ուրացումի և խաբեության իրենց ռազմավարությունը (տես՝ հհ. 17-18):

4:17-18 Սա էր նրանց ծրագիրը: Դադարեք խոսել Հիսուսի մասին և դադարեք օգնել մարդկանց Նրա անունով: Իսկ ի՞նչ կասեք այն բոլոր մարդկանց մասին, որոնք փառավորում էին Աստծուն բժշկության համար (տես՝ 3:8-9; 4:16):

4:19 «արդյոք /հայ.՝ եթե/» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կիրառվում է ոչ թե համաձայն իրականության, այլ հանուն բանավեճի: Պետրոսն ու Հովհաննեսը չէին կարծում, որ նրանց հրամանները տեղին էին (տես՝ 5:28):

■ **«ճիշտ /հայ.՝ արդար/»** Տես Հատուկ Թեմա. Արդարություն, 3:14

■ **«դո՛ւք դատեցեք»** Սա ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Այս առաջնորդները իրենց դատապարտեցին հենց իրենց խոսքերով, շարժառիթներով և գործողություններով:

4:20 Պետրոսն ու Հովհաննեսը պնդում են, որ չեն կարող ուրանալ այն ինչ վերապրել են և չեն դադարի վկայել այդ մասին:

4:21 «նորից սպառնալուց հետո» Հետաքրքիր է, թե ինչ սպառնալիքներ հնչեցին: Հիսուսը հարություն էր առել մեռելներից: Այս մարդը իր անկողնուց էր ոտքի ելել. ի՞նչ էին անելու այս առաջնորդները Պետրոսի և Հովհաննեսի հետ:

■ **«պատժելու արժանի ոչ մի հիմք /հայ.՝ ոչինչ/ չգտնելով»** Սա կարող է մատնանշել Ղուկասի այս գիրքը գրելու նպատակներից մեկը: Քրիստոնեությունը սպառնալիք չէր Հռոմի կամ Երուսաղեմի խաղաղության համար: Նույնիսկ Սինեդրոնը չկարողացավ հիմնավորումներ գտնել այս առաջնորդներին դատապարտելու համար:

■ **«ժողովրդի պատճառով»** Երուսաղեմում կատարված դեպքերի ակնառեսները բարձր էին գնահատում առաջին եկեղեցուն (տես՝ 2:47): Հրեա առաջնորդները վախեցած էին եկեղեցու այս հոչակով (տես՝ 5:13, 26):

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. 4:23-31

²³Եվ ազատ արձակելով՝ իրենց խմբի մոտ եկան ու պատմեցին, ինչ որ գլխավոր քահանաները և երեցները իրենց ասել էին: ²⁴Նրանք էլ, երբ լսեցին, միաբանությամբ ձայն բարձրացրին առ Աստված, ասելով՝ «Ո՛վ Տեր Աստված, Դու ես, որ ստեղծեցիր երկինքն ու երկիրը և ծովն ու այն բոլորը, ինչ նրանց մեջ կա, ²⁵որ Քո ծառայի՝ Դավթի բերանով ասացիր. Ինչո՞ւ հեթանոսները մոլեգնեցին, ու ժողովուրդներն ունայն բաներ խորհեցին, ²⁶երկրի թագավորները ոտքի ելան, և իշխանները միասին հավաքվեցին Տիրոջ դեմ և Նրա Օծյալի դեմ: ²⁷Արդարև, Քո սուրբ զավակի՝ Հիսուսի դեմ, Ում Դու օժեցիր, հավաքվեցին և՛ Հերովդեսը, և՛ Պոնտացի Պիղատոսը՝ հեթանոսների ու Իսրայելի ժողովրդի հետ միասին, ²⁸որպեսզի անեն այն, ինչ Քո ձեռքը և խորհուրդը նախապես սահմանել էին, որ լինի: ²⁹Եվ հիմա, ո՛վ Տեր, նայի՛ր նրանց սպառնալիքներին ու շնորհի՛ր Քո ծառաներին, որ նրանք Քո Խոսքը ամենայն համարձակությամբ խոսեն՝ ³⁰Քո ձեռքը բժշկելու համար մեկնելով, և թո՛ղ նշաններ ու հրաշքներ կատարվեն Քո սուրբ Որդու՝ Հիսուսի անունով: ³¹Ու երբ նրանք աղոթում էին, շարժվեց այն տեղը, որտեղ միասին հավաքված էին, և բոլորը Սուրբ Հոգով լցվեցին ու Աստծո Խոսքը համարձակորեն էին քարոզում:

4:23 Նրանք վերնատուն վերադարձան հանդիպելու աշակերտների հետ:

4:24 «միաբանությամբ» Սրտի և մտքի այս միաբանությունը բնորոշ էր վաղ եկեղեցուն (տես՝ 1:14; 2:46; 4:24; 5:12; 15:25): Միաբանության այսպիսի մթնոլորտում նպատակին հասնելու մեջ առկա է հոգևոր գործությունն ու գործողությունների վրա կենտրոնացումը:

■ **«Տեր»** Սա հունարեն *despota* տերմինն է, որից էլ ծագել է անգլերենի *despot* (բռնակալ՝ տեր) բառը: Այն մատնանշում էր մեկին, որը լիակատար իշխանություն ուներ: Այստեղ այն վերաբերում է Հայր Աստծուն (տես՝ Ղուկ.2:29 և Հայտն.6:10): Այս բառը նաև գործածվում է Հիսուսի համար (տես՝ 2 Պետ.2:1 և Հուդա հ.4):

■ **«որ ստեղծեցիր երկինքն ու երկիրը և ծովն ու այն բոլորը, ինչ նրանց մեջ կա»** Սա կարող է լինել ակնարկ Ելից 20:11-ից: Այս խոսքը նաև մեջբերվում է 14:15-ում և ճշմարտությունը սահմանվում է 17:24-ում: ՅԱՀՎԵՆ է Արարիչը:

4:25 Այս համարի առաջին մասի ընթերցանության շատ տարբերակներ կան: Հնագույն ձեռագրերը՝ P⁷⁴, 8, A և B արդեն իսկ կրում են կասկածելի՝ երկիմաստ տարբերակներ: Թեև ճշգրիտ բառաշարը հայտնի

չէ, սակայն տեքստի շեշտադրումը ակնհայտ է: Իսնդրի ամբողջական արձանագրության համար և այն տեսությունների, թե ինչ է կատարվել, նայեք Բրյուս Մ. Մեցգերի, *Հունարեն Նոր Կտակարանի Տեքստային Մեկնաբանություն*, էջ 321-323 (Bruce M. Metzger, *A Textual Commentary on the Greek New Testament*):

■ **«ով Սուրբ Հոգով մեր հայր Գավթի բերանով»** Սա հաստատում է Հին Կտակարանի ներշնչված լինելը (տես՝ Մատթ.5:17-19): Սա մեջբերված է Մեպտուազինտայից՝ Սաղմ.2:1-2, արքայական Մեսիական Սաղմոս: Քրիստոնեությունը նոր բան չէ, այլ Հին Կտակարանի իրականացումը (տես՝ Մատթ.5:17-48): Աշխարհի կողմից հակառակությունը սպասելի է, սակայն նույնիսկ այդպես, հաղթությունը ՅԱՀՎԵինն է:

4:25-26 «Հեթանոսները... Ժողովուրդները... Թագավորները... Իշխանները» Կարծես թե աշակերտները բանեցնում են ռաբբիական բառապաշար «իշխաններ» խոսքով: Ինչ որ իմաստով նրանք անվանում էին Սինեդրոնին *Goyim* (այսինքն՝ Հեթանոսներ) կամ գրեթե կապում էին այս ՀԿ-յան անունները ժամանակակից խմբերի հետ (այսինքն՝ Պիղատոս, Հերովդես, Սինեդրոն և Հրեա ամբոխ) որոնք մասնակցություն էին ունեցել Հիսուսի դատավարությանն ու խաչելությանը:

■ **«մոլեգնել»** Տառացի սա նշանակում է «ռնգունքներով փնչացնել»: Սա ակնարկում է նրանց մեծամիտ գոռոզությունը:

4:26 «Տիրոջ... Նրա Օծյալի» Ուշադրություն դարձրեք, որ ՅԱՀՎԵ և Մեսիա բառերը միասին են արտասանվում: Ես զարմանում եմ, որ նրանք մեջբերում չարեցին Սաղմոս 110:1:

Շատ դժվար է միաստված լինելը (տես՝ Հատուկ Թեմա, 2:39) և պնդել Քրիստոսի լիակատար աստվածությունը և Հոգու անձ լինելը (տես՝ հ.25, տես՝ Հատուկ Թեմա, 2:32): Այո՛, այս երեք աստվածային, հավիտենական անձնավորությունները ՆԿ-ում մի քանի անգամ ներկայանում են միավորված համատեքստերում: Հիշեք, որ բոլոր հեղինակները, բացի Ղուկասից, միաստված հրեա Քրիստոնյաներ էին: Ինչ-որ հիմնավոր բան պատճառ է հանդիսացել նրանց համար, որ պնդեն երրորդությունը (այսինքն՝ ավետարանը): Տես՝ Հատուկ Թեմա. Երրորդություն, 2:32:

4:27 «Քո սուրբ ծառայի՛ (հայ.՝ զավակի) Հիսուսի դեմ, Ում Դու օծեցիր» Նկատեք այս Մեսիական տիտղոսները՝

1. սուրբ (տես՝ 3:14; 4:30)
2. ծառա (*pais*, 3:13,26; 4:25,27,30: Տես՝ 3:13 գրառումները)
3. օծյալ (*chriō*, որից ծագել է Քրիստոս անունը. տես՝ Ղուկ.4:18; Գործք 4:27; 10:38)

Այս համարը մի քանի տարբեր կերպերով հաստատում է, որ Հիսուսը ուղարկվել էր և Նրան իշխանություն էր տրվել ՅԱՀՎԵի կողմից: Հիսուսը փրկության և վերականգնման համար Աստծո հավիտենական ծրագիրն ու մեթոդն է (տես՝ հ.28, տես՝ Հատուկ Թեմա, 1:8):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՕԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ (BDB 603)

Ա. Կիրառվում էր զեղեցկանալու համար (տես՝ 2 Օր.28:40; Հռութ 3:3; 2 Թագ.12:20; 14:2; 2 Մնաց.28:15; Դան.10:3; Ամովս 6:6; Միք.6:15)

Բ. Կիրառվում էր հյուրերի համար (տես՝ Սաղմ.23:5; Ղուկ.7:38,46; Հովհ.11:2)

Գ. Կիրառվում էր բժշկության համար (տես՝ Ես.61:1; Երեմ.51:8; Մարկ.6:13; Ղուկ.10:34; Հակ. 5:14) [կիրառվեց հիզենիկ նպատակով՝ Եզեկ.16:9]

Դ. Կիրառվում էր թաղման պատրաստության համար (տես՝ Ծննդ.50:2; 2 Մնաց.16:14; Մարկ. 16:1; Հովհ.12:3,7; 19:39-40)

Ե. Կիրառվում էր կրոնական նպատակով (առարկաներ օծելու համար, տես՝ Ծննդ.28:18; 31:13 – մի այլուն, Ելից 29:26 – զոհասեղանը, Ելից 30:26; 40:9-16; Ղևտ.8:10-13; Թվոց 7:1 - խորանը)

Չ. Կիրառվում էր առաջնորդներ կարգելիս՝

1. Քահանաներ՝
 - ա. Ահարոնը (Ելից 28:41; 29:7; 30:30)
 - բ. Ահարոնի որդիները (Ելից 40:15; Ղևտ.7:36)
 - գ. ստանդարտ արտահայտություն կամ տիտղոս (Թվոց 3:3; Ղևտ.16:32)
2. Թագավորներ՝
 - ա. Աստծո կողմից (տես՝ 1 Թագ.2:10; 2 Թագ.12:7; 4 Թագ.9:3,6,12; Սաղ.45:7; 89:20)
 - բ. մարգարեի կողմից (տես՝ 1 Թագ.9:16; 10:1; 15:1,17; 16:3,12-13; 3 Թագ.1:45; 19:15-16)
 - գ. քահանայի կողմից (տես՝ 3 Թագ.1:34,39; 4 Թագ.11:12)
 - դ. երեցների կողմից (տես՝ Դատ.9:8,15; 2 Թագ.2:7; 5:3; 4 Թագ.23:30)

- ե. Հիսուսի համար, որպես Մեսիա Թագավորի (տես՝ Սաղ.2:2; Ղուկ.4:18 [Ես.61:1]; Գործք 4:27; 10:38; Եբր.1:9 [Մաղմ.45:7])
- զ. Հիսուսի հետևորդները (տես՝ 2 Կորն.1:21; 1 Հովհ.2:20,27 [*chrisma*])
- 3. Հավանաբար մարգարեներ՝ (տես՝ Ես.61:1)
- 4. Անհավատ գործիքներ աստվածային ազատագրմամբ՝
 - ա. Կյուրոսը (տես՝ Ես.45:1)
 - բ. Տիվրոսի թագավորը (տես՝ Եզեկ.28:14, որտեղ նա կիրառում է Եդեմի պարտեզի փոխաբերությունը)
- 5. «Մեսիա» տերմինը կամ տիտղոսը նշանակում է «Օծյալ» (BDB 603)

■ «միասին հավաքվեցին... Քո սուրբ ծառայի /զավակի/ դեմ» Այստեղ տրված են Երուսաղեմում Հիսուսի հակառակորդների ցանկը՝

- 1. Հերովդեսը՝ հռոմեացիների կողմից նշանակված Եդովմի կուսակալ Պաղեստինում (տես՝ ստորև տրված Հատուկ Թեման)
- 2. Պոնտացի Պիղատոսը՝ Պաղեստինի գործադիր կառավարիչը (տես՝ Հատուկ Թեմա, 3:13)
- 3. Հեթանոսները՝ հավանաբար վերաբերում է հռոմեական բանակին կամ նորադարձ հրեաներին
- 4. «Իսրայելի ժողովուրդը»՝ վերաբերում էր հրեա իշխանություններին և հրեա ամբոխին, որը պահանջեց ազատ արձակել Բարրաբային և խաչել Հիսուսին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԵՐՈՎԴԵՍ ՄԵԾԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Ա. Հերովդես Մեծը

- 1. Հուդայի թագավորը (Ք.Ա.37-4), մի Իդումեացի էր (Եդովմից), որը քաղաքական խորամանկության և Մարկ Անտոնիոյի շնորհիվ հասավ այն բանին, որ Ք.Ա. 40 թ-ին Հռոմի Մենատի կողմից նշանակվեց Պաղեստինի ամենամեծ տարածքի (Քանանի) կառավարիչը:
- 2. Նրա մասին նշվում է Մատթ.2:1-19-ում և Ղուկ.1:5-ում:
- 3. Նրա որդիները՝
 - ա. Հերովդես Ֆիլիպ (Միմոն Մարիամների որդին)
 - (1) Հերովդիայի ամուսինը (Ք.Ա.4 – մ.թ.34)
 - (2) Նշված է Մատթ.14:3; Մարկ.6:17
 - բ. Հերովդես Ֆիլիպ I (Կլեոպատրիայի որդին)
 - (1) Գալիլիայի Ծովի հյուսիսային և արևմտյան շրջանների չորրորդապետ (Ք.Ա.4-մ.թ. 34 թթ.)
 - (2) Նշված է Ղուկ.3:1-ում
- զ. Հերովդես Անտիպատր
 - (1) Գալիլիայի և Բերյայի չորրորդապետը (Ք.Ա. 4 – մ.թ. 39)
 - (2) Նշված է Մատթ. 14:1-12; Մարկ.6:14,29; Ղուկ.3:1,19; 9:7-9; 13:31; 23:6-12,15; Գործք 4:27; 13:1
- դ. Արքեղայոս Հերովդես Էթնարք (Ethnarch)
 - (1) Հուդայի, Սամարիայի և Իդումեայի կառավարիչ (Ք.Ա.4 – մ.թ. 6)
 - (2) Նշված է Մատթ.2:22-ում
- ե. Արիստորուկոսը (Մարիամների որդին)
 - (1) Նշված է որպես Հերովդես Ագրիպաս I-ի հայրը, որը՝
 - (ա) Հուդայի թագավոր էր (մ.թ. 37-44)
 - (բ) նշված է Գործք 12:1-24; 23:35
 - i. նրա որդին Հերովդես Ագրիպաս II
 - Հյուսիսային տարածաշրջանի չորրորդապետ (մ.թ. 50-70)
 - ii. Նրա դուստրը Բերնիկեն
 - իր եղբոր կենակիցը
 - նշված է Գործք 25:13-26:32
 - iii. նրա դուստրն էր Դրուսիլան
 - Ֆելիքսի կինը
 - նշված է Գործք 24:24

Բ. Հերովդեսի մասին աստվածաշնչյան մեջբերումները՝

- 1. Հերովդես Չորրորդապետը, նշված է Մատթ.14:1; Ղուկ.3:1; 9:7; 13:31 և 23:7, Հերովդես Մեծի որդին էր: Հերովդես Մեծի մահից հետո, նրա թագավորությունը բաժանվեց մի քանի որդիների միջև: «Չորրորդապետ» տերմինը նշանակում էր «չորրորդ մասի առաջնորդ»: Այս Հերովդեսը

հայտնի էր որպես Հերովդես Անտիպաս, որը Antipater /Հակակրող/ բառի հակիրճ տեսքն է: Նա կառավարում էր Գալիլիան և Բերյան: Սա նշանակում էր, որ Հիսուսի ծառայության մեծ մասը տեղի էր ունեցել այս Եդովմացի կառավարչի երկրորդ սերնդի տարածքում:

2. Հերովդիան եղել է Հերովդես Անտիպասի եղբոր՝ Արիստոբուլոսի դուստրը: Նա նաև նախկինում ամուսնացած է եղել Ֆիլիպի հետ՝ Հերովդես Անտիպասի կիսով չափ եղբոր հետ: Սա այն Ֆիլիպ Չորրորդապետը չէր, որը կառավարում էր Գալիլիայի հյուսիսային շրջանը, այլ մյուս եղբայր Ֆիլիպը, որը ապրում էր Հռոմում: Հերովդիան Ֆիլիպից մի դուստր ուներ: Հերովդես Անտիպասի Հռոմ այցելության ժամանակ նա հանդիպում է և հրապարակում Հերովդես Անտիպասը բաժանվում է իր կնոջից, որը Նաբաթիայի արքայադուստրն էր, իսկ Հերովդիան բաժանվեց Ֆիլիպից, որպեսզի կարողանա ամուսնանալ Հերովդես Անտիպասի հետ: Նա նաև Հերովդես Ագրիպաս I-ի քույրն էր (տես՝ Գործք 12):
3. Մենք ծանոթանում ենք Հերովդիայի աղջկա անվան՝ Սողոմոնի հետ, Ֆլավիոս Չոզեֆուսի *Հրեաների Հնությունները* 8:5:4 գրքում: Այդ ժամանակ նա պետք է որ լիներ տասներկուսից տասնյոթ տարեկան: Ակնհայտ էր, որ նա ղեկավարվում և շահարկվում էր իր մոր կողմից: Հետագայում նա ամուսնանում է Ֆիլիպ Չորրորդապետի հետ, սակայն շուտով դառնում որբևայրի:
4. Հովհաննես Մկրտչի գլխատումից մոտ տաս տարի անց, Հերովդես Անտիպասը մեկնում է Հռոմ իր կնոջ՝ Հերովդիայի սադրանքով, թագավորական տիտղոսի ետևից, քանի որ նրա եղբայրը՝ Ագրիպաս I-ը դարձել էր թագավոր: Սակայն Ագրիպաս I գրում է Հռոմին և մեղադրում Անտիպասին Պարթևների հետ ամուր կապեր ստեղծելու համար, որը հանդիսանում էր Հռոմի ատելի պիտանքը ամբողջ Արգասաբեր Մահիկի տարածաշրջանում (Միջագետքում): Կայսրը իհարկե հավատում է Ագրիպաս I-ին և Անտիպասը իր կնոջ՝ Հերովդիայի հետ միասին արտաքսվում է Բսպանիա:
5. Նոր Կտակարանից այս տարբեր Հերովդեսների կյանքի դեպքերը հիշելով ձեզ ավելի հեշտ կլինի տարբերել նրանց. օր.՝ Հերովդես Մեծն էր, որ սպանեց Բեթլեհեմի մանուկներին. Հերովդես Անտիպասը սպանեց Հովհաննես Մկրտչին. Հերովդես Ագրիպաս I-ը սպանեց Հակոբոս Առաքյալին. և Հերովդես Ագրիպաս II-ը լսեց Պողոսի դատավարությունը, որն արձանագրված է Գործքում:

Գ. Հերովդես Մեծի ընտանիքի վերաբերյալ հիմնավոր տեղեկատվության համար նայեք Ֆլավիոս Չոզեֆուսի *Հրեաների Հնությունները*:

4:28 «Քո ձեռքը և խորհուրդը նախապես սահմանել էին, որ լինի» Անգամ նախքան արարչագործությունը Աստված արդեն ուներ իր փրկության ծրագիրը (տես՝ Մատթ.25:34; Հովհ.17:24; Եփես.1:4; 1 Պետ.1:20; Հայտ.13:8; Գործք 2:13; 3:18; 13:29): Քրիստոսի այս թշնամիները միայն իրականացրեցին այն, ինչ Աստված ուզում էր, որ անեին: Հիսուսն եկավ մեռնելու համար (տես՝ Մարկ.10:45): Այստեղ թարգմանված «նախապես սահմանել» /նախասահմանել/ տերմինը բաղադրյալ բառ է, որը կազմված է «նախապես» ՆԱԽԴԻԲԻՑ և «սահմաններ դնել՝ սահմանել» բառից (տես՝ Հռոմ.8:29,30; 1 Կորն.2:7; Եփես.1:5,11):

ՆԿ-ում նախասահմանության վերաբերյալ հստակ հատվածներ են Հռոմ.8:28-30; Հռոմ.9 և Եփես.1:3-14: Այս տեքստերը ակնհայտ շեշտադրում են Աստծո ամենակալությունը: Նա կատարելապես հսկում է ամեն ինչի վրա՝ ինչպես և մարդկության պատմության: Գոյություն ունի նախադրված՝ կանխորոշված փրկության աստվածային ծրագիր, որն իր ժամանակին իրագործվում է: Սակայն, այս ծրագիրը բռնատիրական կամ աչառ չէ: Այն հիմնված է ոչ միայն Աստծո ամենակալության և նախասահմանության վրա, այլ նաև Նրա սիրո, ողորմության և շնորհքի անփոփոխ բնավորության վրա:

Մենք պետք է զգույշ լինենք մեր արևմտյան (Ամերիկյան) անհատականությամբ կամ մեր ավետարանական նախանձավորությամբ այս հրաշալի ճշմարտությունը գունավորելու հարցում: Մենք նաև պետք է զգուշանանք Օգոստինոսի և Պելեգիոսի կամ Կալվինիզմի կամ հայկականության միջև պատմական, աստվածաբանական կոնֆլիկտների բևեռացումից:

Նախասահմանությունը Աստծո սերը, շնորհքը և ողորմությունը սահմանափակելու վարդապետություն չէ, ոչ էլ դրանք ավետարանից բացառելու համար է: Դրա նպատակն է հավատացյալներին զորացնելը՝ նրանց աշխարհայացքը կերտելու համար: Աստծո սերը ամբողջ մարդկության համար է (տես՝ 1 Տիմ.2:4; 2 Պետ. 3:9): Աստված վերահսկում է ամեն ինչ: Ո՛վ կամ ի՞նչ կարող է մեզ բաժանել Նրանից (տես՝ Հռոմ.8:31-39): Նախասահմանությունը ձևավորում է կյանքի հանդեպ երկու տեսակետներից մեկը: Աստված ամբողջ պատմությանը նայում է որպես ներկա: Մարդիկ ժամանակով սահմանափակված են: Մեր հեռանկարները՝ նպատակները և մտավոր կարողությունները սահմանափակ են: Սա Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի միջև հակադրությունն է: Այն

ուխտի կառուցվածք է՝ ստրուկտուրա: Աստվածաշնչյան ճշմարտության ևս մեկ պարադոքսալ, բառախաղային լարվածությամբ հագեցած օրինակ է սա: Աստվածաշնչյան վարդապետությունները ներկայացվում են տարբեր տեսանկյուններից: Հաճախ դրանք թվում են պարադոքսալ: Թվացյալ հակադիր գույգերի միջև ճշմարտությունը հանդիսանում է որպես բալանա: Այդ լարվածությունը հեռացնելու համար պետք չէ ընտրել այդ ճշմարտություններից որևէ մեկը: Որևէ աստվածաշնչյան ճշմարտություն պետք չէ մեկուսացնել ինչ-որ անկյունում:

Նաև կարևոր է ավելացնել, որ ընտրության նպատակը միայն երկինքը չէ մեր մահանալուց հետո, այլ Քրիստոսակերպությունը հիմա՝ այստեղ (տես՝ Եփես.1:4; 2:10): Մենք ընտրվել ենք «սուրբ և անարատ» լինելու: Աստված ընտրում է մեզ փոխելու համար, որպեսզի ուրիշները տեսնելով այդ փոփոխությունը, Քրիստոսի միջոցով հավատքով արձագանքեն Աստծուն: Նախասահմանությունը անձնական առանձնաշնորհում չէ, այլ ուխտի պատասխանատվություն: Մենք փրկվել ենք ծառայելու համար: Տե՛ս Հատուկ Թեմա 2:47:

4:29 «Քո Խոսքը խոսեն» Սա ՆԵԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սա աղոթք է հարատևող համարձակության համար (տես՝ Եփես.6:19 և Կող.4:3) և ներշնչանքի ապացույց (տես՝ 2 Տիմ.3:15-17):

- **NASB** «ամենայն համարձակությամբ»
 - NKJV, NRSV, TEV** «ամենայն քաջությամբ»
 - NJB** «ամենայն անվախությամբ»
- Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՄԱՐՉԱԿՈՒԹՅՈՒՆ (PARRHĒSIA)

Այս տերմինի հունարեն տարբերակը բաղադրյալ բառ է կազմված՝ «բոլոր» (*pan*) և «խոսք» (*rhēsis*) բառերից: Խոսքի այս ազատությունը կամ համարձակությունը հաճախ ուներ երկրորդ նշանակություն՝ համարձակություն հակառակության կամ մերժվածության միջավայրում (տես՝ Հովհ.10:24; 1 Թեսաղ.2:2):

Հովհաննեսի գրքերում (գործածված է 13 անգամ) այն հաճախ արտահայտում է հանրային հայտարարություն (տես՝ Հովհ.7:4, նաև Պողոսի թղթերում՝ Կող. 2:15): Սակայն երբեմն այն պարզապես կարող է նշանակել «պարզ» (տես՝ Հովհ.10:24; 11:14; 16:25,29):

Գործքում Առաքյալները Հիսուսի մասին խոսում էին այնպես (համարձակությամբ), ինչպես որ Հիսուսն էր խոսում Հոր մասին, Իր ծրագրերի և խոստումների մասին (տես՝ Գործք 2:29; 4:13,29,31; 9:27-28; 13:46; 14:3; 18:26; 19:8; 26:26; 28:31): Պողոսը նաև խնդրում էր, որ աղոթեն ավետարանը համարձակությամբ քարոզելու (տես՝ Եփես.6:19; 1 Թեսաղ.2:2) և ավետարանը ապրելու համար (տես՝ Փիլ.1:20):

Հանդերձյալ կյանքի համար հույսը, որ Պողոսն ուներ Քրիստոսի մեջ, նրան համարձակություն և վստահություն էր տվել այս չար ժամանակներում ավետարանը քարոզելու (տես՝ 2 Կորն.3:11-12): Նա նաև վստահություն ուներ, որ Հիսուսի հետևորդները արժանավայել կերպով կապրեն (տես՝ 2 Կորնթ.7:4):

Այս տերմինը ևս մեկ առանձնահատկություն ունի: Եբրայեցիները այն կիրառում էին Քրիստոսի մեջ ունեցած համարձակության բացառիկ իմաստով՝ Աստծուն մոտենալու և Նրա հետ խոսելու համար (տես՝ Եբր.3:6; 4:16; 10:19,35): Հավատացյալները կատարելապես ընդունված և հրավիրված են Որդու միջոցով Հոր հետ մտերմիկ հարաբերության:

ՆԿ-ում այն կիրառվում է մի քանի կերպ՝

1. վստահության, համարձակության կամ քաջության իմաստով, կապված՝
 - ա. մարդկանց հետ (տես՝ Գործք 2:29; 4:13,31; 2 Կորնթ.3:12; Եփես.6:19)
 - բ. Աստծո հետ (տես՝ 1 Հովհ.2:28; 3:21; 4:12; 5:14; Եբր.3:6; 4:16; 10:19)
2. հստակ, պարզ կամ միանշանակ խոսելու իմաստով (տես՝ Մարկ.8:32; Հովհ.7:4,13; 10:24; 11:14; 16:25; Գործք 28:31)
3. հանրորեն՝ բացահայտ խոսելու իմաստով (տես՝ Հովհ.7:26; 11:54; 18:20)
4. նմանատիպ բառ (*parrhēsiāzomai*) կիրառվում է դժվար իրավիճակներում համարձակությամբ քարոզելու դեպքում (տես՝ Գործք 18:26; 19:8; Եփես.6:20; 1 Թեսաղ.2:2)

Այս համատեքստում այն վերաբերում է հանդերձյալի հանդեպ՝ էսկատոլոգիական համարձակությանը: Հավատացյալները չեն վախենում Քրիստոսի Երկրորդ Գալուստից. նրանք ընդունում են դա համարձակ ոգևորությամբ, քանի որ բնակվում են Քրիստոսի մեջ և ապրում Քրիստոսի պես:

4:30 «Քո ձեռքը բռնկելու համար մեկնելով» Սա անտրոպոմորֆիկ՝ մարդաբանական արտահայտություն էր (տե՛ս Հատուկ Թեմա 2:33), որը կիրառվում էր նկարագրելու Աստծուն, ով հայտնում էր Իր գթառաստությունն ու գորությունը: Նշանները ավետարանի խոսքը հաստատող կերպ էր: Դա ժողովարաններում իրենց ամբողջ կյանքի ընթացքում լսած պատգամներից արմատապես տարբերվող պատգամ էր:

4:31 «Հարժվեց այն տեղը, որտեղ միասին հավաքված էին» Աստված քաջալերեց այս ականատեսներին Իր գորության և ներկայության ևս մի ֆիզիկական դրսևորմամբ, ինչպես որ Նա արել էր Պենտեկոստեին: Խոսքը, որը կիրառվում է այստեղ, գործածվում է ջրի վրա լողացող անոթի՝ առարկայի վրա փչող քամու համար:

■ **«բոլորը Մուրը Հոգով լցվեցին»** Նկատեք, որ այստեղ կրկին բոլորը լցվեցին (տես՝ 2:4; 4:8,31; 9:17; 13:9,52, տե՛ս ամբողջական գրառումները 5:17-ում): Այս լեցունությունը ավետարանը համարձակությամբ հռչակելու՝ քարոզելու համար էր: Նաև նկատեք, որ լեզուները այստեղ չեն նշվում: Գործքում, երբ նշվում են լեզուները, դրանք սովորաբար ավետարանի վկայության համատեքստում են, որը հաղթահարում է մշակութային, էթնիկ և՛ կամ աշխարհագրական խոչընդոտներ:

■ **«Աստծո Խոսքը»** Ջերոմի Աստվածաշնչյան Մեկնաբանության գիրքը (էջ 180) այս արտահայտության վերաբերյալ մի լավ գրառում ունի. «սա լավագույն Ղուկասյան միջոցն էր Զրիստոնեության պատգամը արտահայտելու համար (տես՝ 6:2,7; 8:14; 11:1; 13:5,7,44,46,48; 16:32; 17:13; 18:11): Դրա տարբերակներն են «Տիրոջ խոսքը» (8:25; 13:49; 15:35,36; 19:10,20; 20:35) կամ պարզապես «Խոսքը» (4:29; 6:4; 8:4; 10:44; 11:19; 14:25; 16:6):

Սա հավատքին վերաբերող գլխավոր հարցն է. «Արդյո՞ք ՆԿ-ում ներկայացված ավետարանը Աստծո Խոսքն է»: Մուրը Հոգուց սնվող հավատքն ասում է «այո՛»:

■ **«համարձակորեն»** Տե՛ս Հատուկ Թեմա 4:29:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 4:32-35

³²Եվ հավատացյալների բազմությունը մեկ սիրտ և մեկ հոգի էր. և նրանցից ոչ մեկը չէր ասում, թե իր ստացվածքից որևէ բան իրենն է, այլ իրենց ամբողջ ունեցածն ընդհանուր էին համարում: **³³Եվ մեծ գորությամբ առաքյալները վկայում էին Տեր Հիսուսի հարության մասին, և նրանց բոլորի վրա մեծ շնորհք կար:** **³⁴Նաև նրանց մեջ կարիքավորներ չկային, քանի որ նրանք, որ ազարակների կամ տների տեր էին, վաճառում էին դրանք** **³⁵և վաճառքի գինը բերում ու դնում էին առաքյալների ոտների առաջ, և յուրաքանչյուրին բաժանվում էր ըստ կարիքի:**

4:32 «հավատացյալների բազմությունը մեկ սիրտ և մեկ հոգի էր» Հավատացյալների մեջ միաբանության հոգին (տես՝ 1:14) արտացոլում էր Երրորդության Աստծուն (տես՝ Հովհ.17:11, 21, 23; Եփես.4:4-6): Այս նույն խոսքերը կիրառված են Մարկոս 12:30-ում, որոնք արտացոլում են 2 Օր.6:4-5-ի առաջին պատվիրանը:

■ **«ամբողջ ունեցածն ընդհանուր էին համարում»** Նրանք ապրում էին և իրենց զգում որպես մի ընտանիք: Սա եկեղեցու ֆինանսական ծառայության առաջին փորձն էր: Այն հոժար սրտով էր և փոխադարձ և ոչ թե ստիպողաբար: Մերն ու հոգաձությունն էր շարժառիթը և ոչ թե ղեկավար լինելը կամ սոցիալական աստիճանը:

4:33 «վկայում էին հարության մասին» Նրանց պատգամի կենտրոնական՝ գլխավոր նշմարտությունը սա էր (տես՝ 1 Կորնթացիների 15): Հիսուսը ո՛ղջ է:

■ **«և նրանց բոլորի վրա մեծ շնորհք կար»** Պողոսի թղթերից տեղեկանում ենք, որ հետագայում այս եկեղեցին շատ աղքատ է լինում (տես՝ Հռոմ.15:3; Գաղ.2:10): Մեծ՝ առատ շնորհքը, ինչպես և առատ՝ լիովի կյանքը (տես՝ Հովհ.10:10) նյութական ունեցվածքի հետ շատ քիչ առնչություն ունեն: Ուշադրություն դարձրեք, որ այս առատությունը բոլոր մարդկանց վրա էր և ոչ միայն առաջնորդների, հատուկ պարզևներ ունեցողների կամ նրանց, ովքեր որոշակի սոցիալ-տնտեսական աստիճան ունեին:

4:34 Եկեղեցում մարդիկ մեկը մյուսի հանդեպ պատասխանատվություն էին զգում: Ունեցողները ձրիաբար տալիս էին կարիքավորներին (տես՝ հ. 35): Սա կոմունիզմ չէ, այլ սերը գործողության մեջ:

4:35 «դնում էին առաքյալների ոտների առաջ» Սա մեկ ուրիշի ինչ-որ բան տալու համար կիրառվող մշակութային դարձվածք է: Նրանք իրենց ունեցվածքն ու դրամական միջոցները դրեցին Առաքյալների ոտքերի առաջ, քանի որ իրենց կյանքերն էին դրել Հիսուսի ոտքերի առաջ:

■ **«բաժանվում էր»** ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ցույց է տալիս անցյալ ժամանակում շարունակվող գործողություն: Սա հետևում է աղքատին և կարիքավորին օգնելու ժողովարանի օրինակին:

■ **«յուրաքանչյուրին ըստ կարիքի»** Հետաքրքիր մի մեկնաբանություն կա Զլեյն, Բլումբերգ և Հուբբարդի *Աստվածաշնչյան Մեկնաբանության Ներածություն* գրքում, էջ 451-453, որ Մարքսի մանիֆեստը պարունակում է Գործքից երկու մեջբերում՝

1. «յուրաքանչյուրը ըստ իր կարողության չափով» - 11:29
2. «յուրաքանչյուրին ըստ իր կարիքի»

Հերմենևտիկ խնդիրը կայանում է նրանում, որ ժամանակակից մարդիկ փորձում են օգտագործել Աստվածաշունչը պաշտպանելու այն, ինչը երբեք Աստվածաշունչը չի հաղորդել կամ նկատի ունեցել: Աստվածաշունչը երբեք չի կարող մեզ համար նկատի ունենալ այն, ինչը չի արել բնագրի հեղինակի կամ առաջին լսարանի համար: Մենք կարող ենք տվյալ տեքստը տարբեր կերպերով կիրառել մեր մշակութային կյանքում և առօրյա իրավիճակներում, սակայն այդ կիրառությունը պետք է անբակտերիոտեն կապված լինի բնագրի հեղինակի փոխանցած սկզբնական նշանակության հետ: Յուրաքանչյուր սուրբգրային տեքստ ունի միայն մեկ նշանակություն, սակայն բազմաթիվ կիրառություններ կամ կարևորություններ: (Տե՛ս իմ Աստվածաշնչյան Մեկնաբանության Մեմինարը www.freebiblecommentary.org)

NASB (ԹՎՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. 4:36-37

³⁶Եվ Հովսեփը, ղևտացի, ծննդամբ Կիպրոս երկրից, ում առաքյալները Բառնաբաս էին մականվանել (որ թարգմանվում է՝ Մխիթարության որդի), ³⁷իր ունեցած հողերը վաճառեց և գումարը բերելով՝ առաքյալների ոտների առաջ դրեց:

4:36 «Հովսեփը, ղևտացի» Հին Կտակարանը արգելում էր քահանաներին հողատարածք ունենալու, սակայն հռոմեական իշխանությունները շատ բաներ էին փոխել Պաղեստինում:

■ **«ում առաքյալները Բառնաբաս էին մականվանել (որ թարգմանվում է՝ Մխիթարության որդի)»** Սա Բառնաբաս անվան հայտնի նշանակությունն է: Հնարավոր է արամերենում այն նշանակում էր «մարգարեության որդի» կամ եբրայերենում «Ներոի որդի» (AB, հատ.1): Նա Երուսաղեմի եկեղեցու առաջին առաջնորդներից էր և Պողոսի ընկերն ու միսիոներական գործակիցը: Եվսեբիոսը, վաղ եկեղեցու մի պատմիչ, ասում է, որ Բառնաբասը Ղուկաս 10-ում արձանագրված յոթանասուն աշակերտներից մեկն էր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՌՆԱԲԱՍ

- I. Մարդը.
 - Ա. ծնվել էր Կիպրոսում (տես՝ Գործք 4:36)
 - Բ. Ղևիի ցեղից էր (տես՝ Գործք 4:36)
 - Գ. մականվանվել էր «Մխիթարության որդի» (տես՝ Գործք 4:36; 11:23)
 - Դ. Երուսաղեմի եկեղեցու անդամ էր (տես՝ Գործք 11:22)
 - Ե. նա ուներ մարգարեի և ուսուցչի հոգևոր պարզկները (տես՝ Գործք 13:1)
 - Զ. առաքյալ էր կոչվում (տես՝ Գործք 14:14)
- II. Նրա ծառայությունը
 - Ա. Երուսաղեմում
 1. վաճառեց իր հողերը և ամբողջ գումարը տվեց Առաքյալներին՝ աղքատներին օգնելու համար (տես՝ Գործք 4:37)
 2. Երուսաղեմի եկեղեցու առաջնորդ էր (տես՝ Գործք 11:22)
 - Բ. Պողոսի հետ
 1. Նա առաջիններից էր, որ հավատաց Պողոսի դարձին (տես՝ Գործք 9:27)
 2. Նա գնաց Տարսն, որպեսզի գտնի Պողոսին և բերի Անտիոք՝ նոր եկեղեցում օգնելու համար (տես՝ Գործք 11:24-26)

3. Անտիոքի եկեղեցին ուղարկեց Բառնաբասին և Սողոսին Երուսաղեմի եկեղեցիները՝ աղքատների համար օգնություն տանելու (տես՝ Գործք 11:29-30)
4. Բառնաբասն ու Պողոսը գնում են իրենց առաջին միսիոներական ճամփորդությանը (տես՝ Գործք 13:1-3)
5. Բառնաբասը Կիպրոսում (իր հայրենիքում) թիմի առաջնորդն էր, սակայն շուտով Պողոսի առաջնորդությունը ճանաչվեց (տես՝ Գործք 13:13)
6. Նրանք զեկուցեցին Երուսաղեմում գտնվող եկեղեցուն բացատրելու և փաստագրելու հեթանոսների մեջ իրենց միսիոներական գործը (տես՝ Գործք 15, կոչվում է Երուսաղեմի Խորհուրդ)
7. Գաղ.2:11-14-ում արձանագրված հրեական կերակուրի և հեթանոսների հետ հաղորդակցվելու օրենքների շուրջ Բառնաբասն ու Պողոսը ունեցան իրենց առաջին անհամաձայնությունը
8. Բառնաբասն ու Պողոսը ծրագրեցին իրենց երկրորդ միսիոներական ճամփորդությունը, սակայն վիճաբանություն սկսվեց Բառնաբասի քրոջ որդի՝ Հովհաննես Մարկոսի հարցով (տես՝ Կող.4:10), որը առաջին առաքելության ժամանակ թողել էր գործը (տես՝ Գործք 13:13): Պողոսը մերժեց նրան վերցնել երկրորդ միսիոներական ճամփորդության համար, ուստի թիմը բաժանվեց երկու մասին (տես՝ Գործք 15:36-41): Արդյունքում եղավ երկու թիմ (այսինքն՝ Բառնաբասն ու Հովհաննես Մարկոսը, և Պողոսն ու Ծիդան):

III. Եկեղեցական Ավանդությունը (Եվսեբիոս)

- Ա. Բառնաբասը Հիսուսի կողմից ուղարկված այն յոթանասուն աշակերտներից մեկն էր (տես՝ Ղուկ.10:1-20):
- Բ. Նա մահացավ իր հայրենիքում՝ Կիպրոսում, որպես Քրիստոնյա նահատակ:
- Գ. Տերտուղիանոսն ասում է, որ Եբրայեցիներին ուղղված նամակը Բառնաբասն է գրել:
- Դ. Ալեքսանդրիացի Կլեմենտը ասում է, որ նա է գրել անկանոն Աստվածաշնչի Բառնաբասի Թուղթը:

4:37 «իր ունեցած հողերը» Նա ունևոր մարդ էր (Նիկողեմեոսի և Հովսեփի Արիմաթացու պես): 5-րդ գլուխը ցույց է տալիս այսպիսի ֆինանսական ծառայության մեթոդում պոտենցիալ չարաշահումը (այսինքն՝ նախանձը, ստելը և մահը):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի մեր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն թողնեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ովքե՞ր են Սաղուկեցիները: Ինչո՞ւ էին այդքան բարկացած:
2. Ի՞նչ է Սինեդրոնը:
3. Ո՞րն է Սաղմոս 118-ի նշանակալիությունը:
4. Ինչո՞ւ է այդքան կարևոր հ.12-ը:
5. Հ.28-ում նշված նախասահմանությունը վերաբերում է անհատների, թե՞ Աստծո փրկության ծրագրին: Ինչո՞ւ:
6. Արդյո՞ք Ղուկասը փորձում է տալ 4:32-5:11-ում եկեղեցու համար իր նախադեպը:

ԳՈՐԾՔ 5

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Անանիա և Սափիրա	Սուրբ Հոգուն ստելը	Ունեցվածքի բաժանումը (4:32-5:11) 4:32-5:6	Անանիա և Սափիրա	Անանիայի և Սափիրայի խարդախությունը
5:1-11	5:1-11	5:7-11	5:1-6 5:7-8 5:9-11	5:1-6 5:7-11
Շատ նշաններ և հրաշքներ կատարվեցին	Եկեղեցում շարունակվող գործությունը	Առաքյալների երկրորդ ձերբակալությունը	Հրաշքներ և նշաններ	Ընդհանուր իրավիճակը
5:12-16	5:12-16	5:12-21ա	5:12-16	5:12-16
Առաքյալների հալածանքը	Բանտարկված առաքյալները ազատված		Առաքյալները հալածվում են	Առաքյալների ձերբակալությունն ու ազատումը
5:17-26	5:17-21		5:17-21ա	5:17-18 5:19-21ա
	Առաքյալները կրկին դատվում են	5:21բ-26	5:21բ-26	Մինեղրոնի առջև կանգնելու կանչ
5:27-32	5:22-32	5:27-32	5:27-28 5:29-32	5:21բ-26 5:27-33
	Գամաղիելի առաջարկը	Գամաղիել		
5:33-42	5:33-42	5:33-39ա 5:39բ-42	5:33-39ա 5:39բ-42	Գամաղիելի միջամտությունը 5:34-39ա 5:39բ-41 5:42

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
 ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն

կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵԶՍՏ. 5:1-6

¹Բայց Անանիա անունով մի մարդ, իր կնոջ՝ Սափիրայի հետ միասին, իր ունեցվածքը վաճառեց, ²դրա գնից կնոջ գիտությամբ մի մասը պահեց, իսկ մյուս մասը բերեց դրեց առաքյալների ոտների առաջ: ³Եվ Պետրոսն ասաց նրան. «Անանիա՛, ինչո՞ւ Սատանան քո սիրտը լցրեց, որ դու Սուրբ Հոգուն խաբես ու ագարակի գնի մի մասը թաքցնես: ⁴Չէ՞ որ քանի դեռ կար, այն քոն էր և ծախվելուց հետո մի՞թե էլի քո տնօրինության տակ չէր. ինչո՞ւ քո սրտի մեջ այս բանը հղացար: Դու ոչ թե մարդկանց առաջ սուտ խոսեցիր, այլ՝ Աստծո՞ւ»: ⁵Եվ Անանիան այս խոսքերը լսելով, ընկավ և հոգին ավանդեց, և մեծ վախ ընկավ նրանց վրա, ովքեր այս բաները լսեցին: ⁶Ու երիտասարդները ելան ու պատանքեցին նրան, և դուրս տանելով թաղեցին:

5:1 «Անանիա» Երբայերեն ամբողջական անունը կլիներ Հանանիայ, որը նշանակում է «ՅԱՀՎԵՆ գթառատորեն տվել է» կամ «ՅԱՀՎԵՆ գթառատ է» (BDB 337):

■ **«Սափիրա»** Նա Անանիայի կինն էր: Անունը արամերեն նշանակում է «գեղեցիկ»: Նրանք երկուսն էլ հավատացյալներ էին:

5:2 «պահեց» Այս նույն հազվադեպ ԲԱՅԸ (*nosphizomai*) կիրառվում է Սեպտուագինտայում (LXX) Հեսու 7:1-ում՝ նկարագրելու Աբարի մեղքը: Ֆ. Ֆ. Բոյուսը Գործքի (NIC) իր մեկնաբանության գրքում բացատրում է, որ վաղ եկեղեցու համար Անանիան նույնն էր, ինչ Նվաճման համար Աբարը: Այս մեղքը ամբողջ եկեղեցուն վնաս պատճառելու պոտենցիալն ուներ: Այս տերմինը նաև գործածվում է Տիտոս 2:10-ում ծառաների համար, որոնք զոդանում են իրենց տերերից:

■ **«մյուս մասը բերեց դրեց առաքյալների ոտների առաջ»** Սա 4:37-ում նույն Բառնաբասի կատարածի շինծու տարբերակն է: Այս գույքը ազատ էր վաճառելու կամ չվաճառելու իրենց սեփական հողակտորը (տես՝ հ.4): Նրանք ազատ էին ամբողջովին կամ մասամբ այդ գումարը տալու Տիրոջ գործի համար: Անանիան և Սափիրան իրավունք չունեին տալու մի որոշ մասը, բայց ասելու, որ ամբողջն են տվել: Նրանց շարժառիթները և նմանակող գործողությունները հայտնում էին իրենց սիրտը (տես՝ հ. 4գ; Դուկ.2:14): Աստված նայում է սրտին (տես՝ 1 Թագ.16:7; 3 Թագ.8:39; 1 Մնաց.28:9; Առակ.21:2; Երեմ. 17:10; Դուկ.16:15; Գործք 1:24; Հռոմ.8:27):

5:3 «Սատանան... Սուրբ Հոգուն» Սա ցույց է տալիս երկու հոգևոր ուժերի ներկայությունը, որոնք գործում են այս աշխարհում և մեր կյանքում: Եփես.2:2-3-ում (տես՝ Հակոբոս 4) թվարկվում են Ծննդոցից հետո մարդկության երեք թշնամիները.

1. անկում ապրած աշխարհի համակարգը
2. անձի բնավորությունը
3. մեր մեղավոր էությունը

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՏԱՆԱ

Այս թեման բարդ համարելու համար կան մի քանի պատճառներ.

1. ՀԿ-ը հայտնում է ոչ թե բարու ռիսերիմ թշնամուն, այլ ՅԱՀՎԵՆի մի ծառայի, որը մարդկությանը առաջարկում է երկրնսրանք, ինչպես նաև մեղադրում է մարդկությանը անարդարության մեջ: Կա միայն մեկ Աստված (մոնոթեիզմ՝ միաստվածություն), մեկ իշխանություն, ՀԿ-ում միայն մեկ պատճառ՝ ՅԱՀՎԵՆ:

2. Աստծո ռիսերիմ թշնամու հասկացությունը ձևավորվել է միջաստվածաշնչյան (անկանոն) գրականության մեջ՝ պարսկական դուալիստիկ կրոնի (*Չրադաշտություն*) ազդեցության ներքո: Մա էլ իր հերթին մեծապես ազդեցություն է թողել ռաբբիական Հուդայականության և Էսսենների համայնքի վրա (այսինքն՝ Մեռյալ Ծովի Գալարները):

3. ՆԿ-ը զարգացնում է ՀԿ-ի թեմաները ամբողջական, սակայն ընտրված կատեգորիաներում: Եթե մեկը հասնում է չարի մասին ուսումնասիրությանը ըստ աստվածաշնչյան պատկերացումների՝ տեսանկյան, (յուրաքանչյուր գիրքը կամ հեղինակը կամ ժանրը առանձին ուսումնասիրելով և ուրվագծելով), ապա ի հայտ են գալիս չարի վերաբերյալ տարբեր տեսանկյուններ:

Սակայն եթե մեկը հասնում է չարի մասին ուսումնասիրությանը ոչ սուրբգրային մոտեցմամբ կամ աշխարհի ու արևելյան կրոնների հավելյալ աստվածաշնչյան մոտեցմամբ, ապա ՆԿ-ի հիմնական զարգացումները այս թեմայի շուրջ ստվերվում են պարսկական դուալիզմով և հունա-հռոմեական սպիրիտիզմով:

Եթե ինչ-որ մեկը գիտակցաբար վստահում է Սուրբ Գրքի աստվածային հեղինակությանը, ապա ՆԿ-ի զարգացումները պետք է դիտարկվեն որպես պրոգրեսիվ՝ զարգացող հայտնություն: Քրիստոնյաները պետք է զգուշանան հրեական ժողովրդական բանահյուսությունից՝ ֆոլկլորից կամ արևմտյան գրականությունից (Դանթե, Միլթոն), որպեսզի դրանք չխառնվեն այս հասկացության զարգացմանը: Իհարկե որոշակի առեղծված և անորոշություն կա այս բնագավառում հայտնության մեջ: Աստված ընտրել է չհայտնել չարի հետ կապված ամեն ինչ՝ դրա ծագումը, զարգացումը, նպատակը, սակայն հայտնել է դրա պարտությունը:

ՀԿ-ում «սատանա» կամ «գրպարտող» (BDB 966) տերմինը կարող է առնչվել երեք տարբեր խմբերի հետ:

1. մարդ գրպարտողներ՝ մեղադրողներ (տես՝ 1 Թագ.29:4; 2 Թագ.19:22; 3 Թագ.11:14,20,29; Սաղմ.109:6)
2. հրեշտակ գրպարտողներ (տես՝ Թվոց 22:22-23; Հոբ 1-2; Չաբ.3:1)
3. դիվական գրպարտողներ (տես՝ 1 Մնաց.21:1; 3 Թագ.22:21; Չաբ.13:2)

Միայն հետագայում միջաստվածաշնչյան ժամանակաշրջանում է, որ Ծննդոց 3-ի օձը նույնացվում է Սատանայի հետ (տես՝ *Իմաստասիրության Գիրք* 2:23-24; 2 *Ենովք* 31:3), և նույնիսկ հետագայում սա դառնում է ռաբբիների կողմից նախընտրելի տարբերակ (տես՝ *Սոթ*.9բ և *Սին*.29): Ծննդոց 6-ի «Աստծո որդիները» դառնում են հրեշտակներ 1 *Ենովք* 54:6-ում: Ես սա նշում եմ ոչ թե հաստատելու դրա աստվածաբանական ճշգրտությունը, այլ ցույց տալու դրա զարգացումը: ՆԿ-ում այս ՀԿ-յան գործերը բնորոշ էին հրեշտակներին, որոնք մարմնավորում էին չարին (տես՝ 2 Կորնթ.11:3; Հայտն.12:9):

Մարմնավորված չարի ծագումը՝ սկիզբը ՀԿ-ից դժվար է կամ անհնար է (կախված ձեր տեսակետից) սահմանել: Սրա պատճառներից մեկը Իսրայելի խիստ միաստվածությունն է (տես՝ 3 Թագ.22:20-22; Ժող.7:14; Ես.45:7; Ամովս 3:6): Ամեն ինչի պատճառահետևանքային դրսևորումները վերագրված են ՅԱՀՎԵին՝ ցույց տալու Նրա յուրահատկությունը և առաջնահերթությունը (տես՝ Ես.43:11; 44:6,8,24; 45:5-6,14,18,21,22):

Տեղեկությունների համար հասանելի աղբյուրներն են՝ (1) Հոբ 1-2, որտեղ Սատանան «Աստծո որդիներից» մեկն է (այսինքն՝ հրեշտակներից) կամ (2) Ես.14 և Եզեկ.28, որտեղ մերձարևելյան հպարտ թագավորները (Բաբելոնի և Տիվրոսի) կիրառվում են յուսաբանելու Սատանայի հպարտությունը (տես՝ 1 Տիմ.3:6): Այս մոտեցման մեջ ինպես երևում է ներգրավված են զգացմունքներ: Եզեկիելը կիրառում է Եդեմի Պարտեզի խորհրդապատկերները ոչ միայն Տիվրոսի թագավորի համար որպես Սատանա (տես՝ Եզեկ.28:12-16), այլ նաև Եգիպտոսի թագավորի համար՝ որպես Բարու և Չարի Գիտության ծառ (Եզեկիել 31): Սակայն Եսայի 14-ը՝ մասնավորապես 12-14 համարները, կարծես թե նկարագրում է հպարտության պատճառով հրեշտակների ապստամբությունը: Եթե Աստված ուզեր մեզ հայտնել Սատանայի ծագումն ու նրա բնավորությունը, սա շատ անսովոր կերպ և տեղ կլիներ դրա համար: Մենք պետք է զգուշանանք սխտեմատիկ աստվածաբանության միտումից, որը վերցնում է փոքր, երկիմաստ՝ կասկածելի հատվածներ տարբեր կտակարաններից, հեղինակներից, գրքերից և ժանրերից և դրանք համադրում որպես մեկ աստվածային գլուխկոտրուկի մասնիկներ:

Ես համամիտ եմ Ալբերտ Էդերշեյմի հետ (Albert Edersheim, *The Life and Times of Jesus the Messiah*, Հիսուս Մեսիայի կյանքը և ժամանակները, հատ.2, հավելվածներ XIII [էջ 748-763] և XVI [էջ 770-776]), որ ռաբբիական հուդայականությունը մեծապես ազդվել է պարսկական դուալիզմի և դիվական խորհրդածությունների կողմից: Այս բնագավառում ռաբբիները չեն կարող հանդիսանալ ճշմարտության յավագույն աղբյուրը: Հիսուսը արմատապես առանձնանում է՝ տարբերվում է, այս

բնագավառում Սինագոգների մատուցած ուսմունքներից: Ես կարծում եմ, որ ՅԱՀՎԵԻ հրեշտակապետ թշնամու այս հասկացությունը զարգացել է Իրանական դուալիզմի երկու բարձրագույն աստվածներից՝ *Ահկիմանից* և *Օրմազայից* (Ahkiman, Ormazd), և ապա ռաբբիների կողմից կատարելագործվել որպես աստվածաշնչյան ՅԱՀՎԵԻ և Սատանայի դուալիզմի:

Անկասկած ՆԿ-ում առկա է աճող՝ առաջադիմական հայտնություն չարի մարմնավորման վերաբերյալ, բայց ոչ այնքան մանրակրկիտ ինչպես ռաբբիների մոտ: Այս տարբերության լավ օրինակներից է «երկնքում պատերազմը»: Սատանայի անկումը տրամաբանական անհրաժեշտություն է, սակայն դրանց մանրամասները տրված չեն: Անգամ այն ինչ տրված է, քողարկված է ապոկալիպտիկ ժանրով (տես՝ Հայտն.12:4,7, 12-13): Չնայած որ Սատանան պարտության մատնվեց Հիսուսի կողմից և զգվեց երկիր, նա դեռևս գործում է որպես ՅԱՀՎԵԻ ծառա (տես՝ Մատթ.4:1; Դուկ.22:31-32; 1 Կորն.5:5; 1 Տիմ.1:20):

Մենք պետք է սանձենք մեր հետաքրքրությունը այս հարցում: Փորձության ու չարիքի անձնական գործությունը առկա է, բայց ամեն դեպքում կա միայն մեկ Աստված և միևնույն է մենք ենք պատասխանատու մեր որոշումների՝ ընտրությունների համար: Գոյություն ունի հոգևոր պայքար, թե՛ փրկությունից առաջ և թե՛ հետո: Հաղթություն կարելի է միայն ունենալ և մնալ դրա մեջ Երրորդության Աստծո օգնությամբ: Չարը արդեն պարտված է և բնաջնջվելու է:

■ **«Երեց»** Սա միևնույն բանն է, որ կիրառվում է Հոգու համար (տես՝ Եփես.5:18): Լեցունությունը պահանջում է համագործակցություն: Մենք ինչ-որ բանով լցված ենք (տես՝ լիարժեք գրառումները 5:17-ում): Սատանան իր գործն անում է, սակայն պատասխանատուն մենք ենք (տես՝ Դուկ.22:3-6): Խորհուրդ եմ տալիս կարդալ *Երեք Կարևոր Հարցեր Հոգևոր Պատերազմի Վերաբերյալ* գիրքը, գրված Քլինթոն Է. Արնոլդի կողմից (*Three Crucial Questions About Spiritual Warfare*, by Clinton E. Arnold): Չարմանալի է, բայց հավատացյալների կյանքում շարունակվում է սատանայական ազդեցությունը (տես՝ Եփես.6:10-19; 1 Հովհ.5:18-19): Լիարժեք գրառումների համար նայե՛ք 2:4 և 3:10:

Այս արտահայտությունը (այսինքն՝ «քո սիրտը յրեց») կարող է լինել երբայերևն դարձվածք կամ բարբառ (տես՝ Եսթ.7:5; Ժող.8:11; 9:3): Շատ գիտնականներ ենթադրում են, որ Գործք Առաքելոցի բնագրում առաջին գլուխները գրվել են արամեերենով:

■ **«Սուրբ Հոգուն խաբես»** Նրանք խաբեցին Պետրոսին և եկեղեցուն, սակայն իրականում խաբեցին Սուրբ Հոգուն: Աստվածաբանորեն սա շատ նման է Դամասկոսի ճանապարհին Պողոսին ուղղված Հիսուսի հարցին. «Ինչո՞ւ ես Ինձ հալածում» (տես՝ Գործք 9:4): Պողոսը հալածում էր անհատ հավատացյալների, սակայն Հիսուսը դա անձնապես Իրեն էր վերագրում, ինչպես որ նույնը կատարվում է այստեղ Հոգու հետ: Ներկայիս հավատացյալների համար սա պետք է զգուշացման խոսք լինի:

5:4 Այս համարը իր մեջ պարունակում է երկու հարց, որոնց պատասխանները ակնկալվում էր լինել «այո՛»: Սա քերականական կառուցվածք է և ոչ թե թարգմանչական խնդիր:

■ **«Դու ոչ թե մարդկանց առաջ սուտ խոսեցիր, այլ՝ Աստծո»** Հարցը նրանում չէր, որ նրանք գումարի մի մասը պահել էին, այլ այն, որ ստեցին, հոգևոր երևալու համար: Ուշադրություն դարձրեք, որ նույնիսկ բարի, առատաձեռն արարքը, որը կատարվում է վատ մտադրությամբ՝ շարժառիթով, մեղք է (տես՝ Հռոմ.14:23գ): Ուշադրություն դարձրեք, որ հ.3-ում նշված Սուրբ Հոգին այստեղ կոչվում է Աստված:

5:5 «ընկավ և հոգին ավանդեց /անգլ.՝ շունչը փչեց/» Հին աշխարհում մեկի շունչը փչել արտահայտությունը ապացույց էր, որ այդ մարդու հոգին դուրս եկավ՝ հեռացավ (տես՝ Դատ.4:2; Եզեկ.21:7; LXX-ում): Այս հազվադեպ տերմինը ՆԿ-ում կարելի է հանդիպել միայն Գործքում (տես՝ 5:4,10; 12:23): Սա ժամանակավոր դատաստանի օրինակ է: Սա նման է Դևտագիների 10-ում Ահարոնի որդիների հանդեպ կիրառված Աստծո դատաստանին: Այն կյանք արժեցավ (տես՝ 4 Թագ.14:6; Եզեկ.18:4,20):

■ **«մեծ վախ ընկավ նրանց /անգլ.՝ բոլորի/ վրա»** Հավանաբար հենց սա էր այս ժամանակավոր դատաստանի նպատակը: Այս դեպքի նման են ՀԿ-ի Դևտագիների 10 գլխում՝ Նադաբի և Աբիուդի մահը և 2 Թագավորաց 6-ում՝ Ոգիայի մահը: 1 Կորնթ.11:30; Հակ.5:20 և 1 Հովհ.5:16-17 հիման վրա կարելի է ենթադրել, որ հավատացյալների որոշ մեղքեր պատճառ են հանդիսանում վաղաժամ մահվան: Դժվար է պահել այն բալանսը, որ կա Աստծո Սրբության (տրանսցենդենտալ) և Աստծո Հայրության (հատկանշական) միջև:

5:6 «թաղեցին նրան» Առաջին դարի հրեաները չէին գմռում (մինչև այժմ էլ), հավանաբար Ծննդ.3:19-ի հիման վրա (տես՝ Սաղմ.103:14; 104:29): Մահացածին անմիջապես՝ սովորաբար մեկ օրվա ընթացքում, թաղում էին:

Հանցանքի պատճառով չեղավ նաև հիշատակի արարողություն կամ թաղման այլ Ջրիստոնեական ծիսակարգեր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԹԱՂՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԵՐ

I. Միջագետք
Ա. Պատշաճ կերպով կատարված թաղումը շատ կարևոր էր հանդերձյալ կյանքի համար:
Բ. Միջագետքյան անեծքի օրինակներից մեկը. «Թող երկիրը /հողը/ չընդունի քո դիակները»:

II. Հին Կտակարան
Ա. Պատշաճ թաղումը շատ կարևոր էր (տես՝ Ժող.6:3):
Բ. Այն շատ հապճեպ էր կատարվում (տես՝ Սառային Ծննդոց 23-ում և Ռաբելին Ծննդ.35:19-ում. ուշադրություն դարձրեք 2 Օր.21:23):
Գ. Ոչ պատշաճ թաղումը անարգանքի և մեղքի նշան էր.
1. 2 Օրինաց 28:26
2. Եսայի 14:20
3. Երեմիա 8:2; 22:19
Դ. Թաղումը կատարվում էր հնարավորինս տան շրջակայքում գտնվող ընտանեկան դամբարանում:
Ե. Եզրիտուսի պես գմռում չէր կատարվում: Մարդը հողից է ստեղծվել և պետք է վերադառնա հողին (տես՝ Ծննդ.3:19; Սաղմ.103:14; 104:29):
2. Ռաբբիական հուղայականության մեջ դժվար էր հավասարակշռել մարմնի (դիակի) հետ պատշաճ հարգանքի և դիպչելու հետ կապված ծիսական պղծության հասկացությունները՝ մեռած մարմնի հետ առնչվող օրենքների համաձայն:

III. Նոր Կտակարան
Ա. Մահվանը անմիջապես հետևում էր թաղումը՝ սովորաբար քսանչորս ժամվա ընթացքում:
Հրեաները հաճախ երեք օր հսկում էին գերեզմանը, հավատալով որ հնարավոր է այս ժամանակարանթացքում հոգին վերադառնա մարմնի մեջ (տես՝ Հովհ.11:39):
Բ. Թաղումից առաջ մարմինը լվանում էին և փաթաթում համեմունքներով (տես՝ Հովհ.11:44; 19:39-40):
Գ. Առաջին դարի Պաղեստինում չկային որևէ հատուկ կերպով տարբերվող Ջրիստոնեական թաղման ընթացակարգեր կամ գերեզմանում դրվող առարկաներ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԶՍՏ. 5:7-11

7Եվ մոտ երեք ժամ անց, նրա կինը, չիմանալով, թե ինչ է պատահել, ներս մտավ: ⁸Եվ Պետրոսը նրան ասաց. «Ասա՛ ինձ, ազարակն այդքանո՞վ վաճառեցիք»: Նա էլ ասաց. «Այո՛, այդքանով»: ⁹Պետրոսն ասաց նրան. «Այդ ինչպե՛ս եղավ, որ դուք միաբանեցիք Տիրոջ Հոգին փորձելու համար. ահա, քո ամուսնուն թաղողների ոտները դեռ դռան մոտ են, քեզ էլ պիտի դուրս տանեն»: ¹⁰Եվ իսկույն նրա ոտների մոտ ընկավ ու հոգին տվեց, և երիտասարդները, ներս մտնելով, նրան մեռած գտան ու տարան, իր ամուսնու մոտ թաղեցին: ¹¹Եվ մի մեծ վախ ընկավ ամբողջ եկեղեցու վրա և բոլորի վրա, որ այս բաները լսեցին:

5:7 «մոտ երեք ժամ» Սա ցույց է տալիս, որ այս դեպքը հաղորդվել է ականատեսի կողմից: Դուկասի գրքերին հատկանշական է մանրամասների հանդեպ այսպիսի ուշադրությունը: Այն արտացոլում է թե՛ նրա գրելատճր և թե՛ ուսումնասիրության մեթոդները (այսինքն՝ ականատեսների հետ հարցազրույցները):

5:8 Սուտը, կեղծիքը շարունակվում է:

5:9 «փորձել» Չգայական առումով սա փորձ էր ստուգելու երկրի վրա Սուրբ Հոգու ներկայությունն ու գորությունը, Հայր Աստծո անձնական ներկայությունը (տես՝ Հատուկ Թեմա 1:2): Սուրբ Հոգու դեմ մարտահրավերի պատճառով գոյություն ունեն թե՛ ժամանակավոր և թե՛ հավիտենական հետևանքներ: Այս երկուսը չէին գիտակցում, որ խաբում էին ոչ թե մարդկանց, այլ Սուրբ Հոգուն, բայց Պետրոսը հասկանում էր:

Հունարեն երկու տերմիններ կան, որոնք արտահայտում են փորձել բառը: Այս մեկը նշանակում է «փորձել՝ աչքի առաջ ունենալով վախճանը»: Գուցե սա արտացոլում է Ելից 17:2 և 2 Օր.6:16. այս հատվածները զգուշացումներ են ՅԱՀՎԵԻՆ փորձելու դեմ (տես՝ Մաղմ.78:18,41,56):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՈՐՁԵԼ ԲԱՌԻ ՀՈՒՆԱՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գոյություն ունեն երկու հունարեն տերմիններ, որոնք ունեն դիտավորյալ ինչ-որ մեկին փորձելու իմաստը.

1. *Dokimazō, Dokimion, Dokimasia*

Այս տերմինը մետաղագործական տերմին է՝ ինչ-որ բանի իսկությունը (այսինքն՝ փոխաբերաբար ինչ-որ մեկին) կրակով փորձելու համար: Կրակը ի հայտ է բերում իրական մետաղը և վառում է (այսինքն՝ մաքրում) մետաղախարամը: Այս ֆիզիկական գործընթացը Աստծո համար /և, կամ Սատանայի ու մարդկանց համար/ դարձավ միմյանց փորձելիս օգտագործվող գեղեցիկ դարձվածք: Այս տերմինը գործածվում է փորձելու միայն դրական իմաստով, երբ այն ընդունելի է:

ՆԿ-ում այն կիրառվում է, երբ փորձվում են՝

ա. եզները՝ Ղուկ.14:19

բ. մենք՝ 1 Կորն.11:28

գ. մեր հավատքը՝ Հակ.1:3

դ. նույնիսկ Աստված՝ Եբր.3:9

Այս փորձերի արդյունքները համարվում էին դրական (տես՝ Հռոմ.1:28; 14:22; 16:10; 2 Կորն.10:18; 13:3,7; Փիլ.2:27; 1 Պետ.1:7), ուստի այս տերմինը փոխանցում է այն գաղափարը, որ մարդը փորձվել է և ճանաչվել՝

ա. արժանի

բ. բարի

գ. անկեղծ

դ. թանկագին

ե. պատվարժան

2. *Peirazō, Peirasmus*

Այս տերմինը հաճախ ունի հանցանքը կամ մերժվածությունը գտնելու նպատակով քննության նշանակությունը: Այն հաճախ է գործածվում անապատում Հիսուսի փորձության հետ կապված:

ա. Փոխանցում է Հիսուսին թակարդը զցելու փորձի իմաստը (տես՝ Մատթ.4:1; 16:1; 19:3; 22:18, 35; Մարկ.1:13; Ղուկ.4:38; Եբր.2:18):

բ. Այս (*peirazōn*) տերմինը Մատթ.4:3; 1 Թեսաղ.3:5-ում կիրառվում է որպես Սատանայի անունը:

գ. Գործածում է Հիսուսը մեզ զգուշացնելով չփորձել Աստծուն (տես՝ Մատթ.14:7; Ղուկ.4:12) [կամ Զրիստոսը, տես՝ 1 Կորն.10:9]: Այն նաև արտահայտում է ինչ-որ մի բան անելու փորձ, որը ձախողվել է (տես՝ Գործք 9:20; 20:21; Եբր.11:29):

դ. Կիրառվում է հավատացյալների փորձությունների և գայթակղությունների առնչությամբ (տես՝ 1 Կորն.7:5; 10:9, 13; Գաղ.6:1; 1 Թեսաղ.3:5; Եբր.2:18; Հակ.1:2, 13, 14; 1 Պետ.4:12; 2 Պետ.2:9): Աստված թույլ է տալիս, որ մարդու երեք թշնամիները (այսինքն՝ աշխարհը, մարմինը և չարը) իրենց դրսևորեն որոշակի ժամանակի և տեղանքի մեջ:

5:10 Տերմինը, որը գործածվել է նկարագրելու հ. 6-ի «երիտասարդներին» (*neōteroi*) տարբերվում է հ. 10-ում գործածված *neanikoi* տերմինից: Հայտնի չէ, սա պարզապես հեղինակի կողմից օգտագործված տարբեր բառեր են, թե՞ եկեղեցում երիտասարդների տարբեր խմբեր: Երկու հունարեն բառերն էլ ծագել են միևնույն արմատից (*neos*):

5:11 «մեծ վախ ընկավ...բոլորի վրա, որ այս բաները լսեցին» Ղուկասը մի քանի անգամ օգտագործում է տարածված *phobos* բառն այս նույն ընդհանուր իմաստով (տես՝ Ղուկ.1:69; 3:37; Գործք 19:17): Հավատացյալների համար սա ակնածանքի, հարգանքի և վախի զգացողություն էր, սակայն անհավատների համար՝ արգելող, ահ ու սարսափ առաջացնող զգացողություն (տես՝ Ղուկ.12:4-5; Եբր.10:31):

■ «եկեղեցի» Գործքում առաջին անգամ եկեղեցի տերմինը օգտագործվում է այստեղ, չնայած որ այն Textus Receptus 2:47-ում է: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԿԵՂԵՑԻ (EKKLESIA)

Այս հունարեն տերմինը՝ *ekklesia*, բաղկացած է երկու բառից՝ «դուրս» և «կանչված» հետևաբար տերմինը ակնարկում է Աստծո կողմից դուրս կանչված մարդկանց: Վաղ եկեղեցին այս տերմինը վերցրեց աշխարհիկ կիրառությունից (տես՝ Գործք 19:32, 39, 41) և Մեպտուագինտայում Իսրայելի «համայնքի» համար այս տերմինի գործածության հիման վրա (*Qahal*, BDB 874, տես՝ Թվոց 16:3; 20:4): Նրանք կիրառում էին այս բառը իրենց համար որպես ՀԿ-ի Աստծո Ժողովրդի շարունակություն: Նրանք նոր Իսրայելն էին (տես՝ Հռոմ.2:28-29; Գաղ.6:16; 1 Պետ.2:5,9; Հայտ.1:6), աշխարհի մասշտաբով Աստծո առաքելության կատարողները (տես՝ Ծննդ.3:15; 12:3; Ել.19:5-6; Մատթ.28:18-20; Ղուկ.24:47; Գործք 1:8):

Ավետարաններում և Գործքում այս տերմինը գործածված է մի քանի իմաստով.

1. քաղաքի աշխարհիկ ժողովը՝ Գործք 19:32, 39, 41
2. Քրիստոսով Աստծո տիեզերական ժողովուրդը՝ Մատթ.16:18 և Եփեսացիներին
3. Քրիստոսով հավատացյալների տեղական համայնքը՝ Մատթ.18:17; Գործք 5:11 (այս համարներում Երուսաղեմի եկեղեցին)
4. Իսրայելի հավաքական ժողովուրդը՝ Գործք 7:38, Ստեփանոսի քարոզի մեջ
5. Աստծո ժողովուրդը ինչ-որ տարածաշրջանում՝ Գործք 8:3 (Հուդան կամ Պաղեստինը)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:12-16

¹²Եվ առաքյալների ձեռքով շատ նշաններ ու հրաշքներ էին լինում ժողովրդի մեջ. և բոլորը միաբանությամբ Սողոմոնի սրահում էին: ¹³Իսկ մյուսներից ոչ ոք չէր համարձակվում նրանց հարել, թեև ժողովուրդը հարգում էր նրանց: ¹⁴Եվ Տիրոջը հավատացողներն ավելի ու ավելի էին շատանում՝ տղամարդկանց և կանանց մի մեծ բազմություն: ¹⁵Նույնիսկ հիվանդներին դուրս էին բերում հրապարակները և պատգարակներով ու մահիճներով դնում, որպեսզի Պետրոսի անցնելու պահին, գոնե նրա սավերը նրանցից ոմանց վրա ընկնի: ¹⁶Նույնպես շրջակա քաղաքներից բազմությունը հավաքվում էր Երուսաղեմում՝ հիվանդներին և պիղծ հոգիներից տանջվողներին բերելով, որոնք բոլորն էլ բուժվում էին:

5:12-16 Սա համառոտ ամփոփում է, որը շատ բնորոշ է Գործք Առաքելոց գրքին (տես՝2:43-47 և 4:32-35):

5:12 «շատ նշաններ և հրաշքներ» Սա ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ (դեպոնենտ) ՄԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս երկու տերմինները հայտնվում են Պետրոսի Հովել 2-ից Գործք 2:19-ում կատարած մեջբերման մեջ: Հրաշքներ կատարվում էին պարբերաբար (տես՝ 2:43; 4:30; 5:12; 6:8; 7:36; 14:3; 15:2): Հիշեք, որ հրաշքը ինքնաբերաբար չի համարվում որպես աստվածության նշան (տես՝ Մատթ.24:24 և 2 Թեսաղ.2:9), այլ այն Քրիստոնեական պատգամի՝ խոսքի հաստատման համար էր և է, որը արմատապես տարբերվում էր հուդայականության նպատակից և շեշտադրումներից:

■ **«բոլորը միաբանությամբ էին»** Տե՛ս գրառում 1:14: Ղուկասի համար սա կարևոր էր պարբերաբար շեշտադրելը: Դա մի իդեալական վիճակ էր, որը երկար չտևեց:

■ **«Սողոմոնի սրահում»** Սա բացօթյա պլուսաբար էր Տանարի արևելյան կողմում գտնվող Հեթանոսների Սրահի պատի երկայնքով: Հիսուսը նույնպես հաճախ սովորեցնում էր այստեղ (տես՝ Հովհ.10:23): Սա Պետրոսի և Հովհաննեսի առաջին ձեռքակալության վայրն էր:

5:13

NASB	«մյուսներից ոչ ոք չէր համարձակվում նրանց հարել»
NKJV, NRSV	«մյուսներից ոչ ոք չէր համարձակվում նրանց միանալ»
TEV	«խմբից դուրս ոչ ոք չէր համարձակվում նրանց միանալ»
NJB	«ոչ մի ուրիշ մարդ չէր համարձակվում նրանց միանալ»

Սա անսովոր արտահայտություն է: Կարծես թե այն բնութագրում է «վախի» բացասական կողմը: Այս համատեքստում մատնանշվում են մի քանի խմբեր (տես՝ հհ. 12-16): Շատերի համար այս դեպքերը մոտեցնում էին Քրիստոսին հավատալու (տես՝ #5 և հավանական է #6 և #7) կամ էլ Քրիստոսի վրա ունեցած իրենց հավատքը հաստատելու (այսինքն՝ #3):

1. Առաքյալները՝ հ. 12
2. Ժողովուրդը՝ հհ.12, 13

3. Հավատացյալները (այսինքն՝ միաբանությամբ Սողոմոնի Սրահում)՝ հ. 12
4. Մյուսները (այսինքն՝ հրեա առաջնորդները), հ. 13
5. Նորահավատները՝ հ. 14
6. Երուսաղեմի հիվանդները՝ հ. 15
7. Շրջակա գյուղերից եկած հիվանդներն ու դիվահարները՝ հ. 16

«Հարեյ» բառը՝ ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ ԱՆՈՐՈՇ, բառացի նշանակում է «սոսնձել»։ Ղուկասը այս տերմինը հաճախ է գործածում, սակայն տարբեր նշանակությամբ։ Այստեղ այն վերաբերում է նրանց այս նոր խմբի մի մասը դառնալուն (այսինքն՝ Հիսուսին որպես խոստացյալ Մեսիայի հավատացողներ)։

5:14 «հավատացյալներ» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, որն արտահայտում է շարունակվող գործողություն։ Տե՛ս Հատուկ Թեմա 2:40 և 3:16:

■
NASB, TEV, NJB, NIV «Տիրոջ մեջ»
NKJV, NRSV «Տիրոջը»

Այս քերականական ձևը (այսինքն՝ ութ հոլովի համակարգը) կարելի է հասկանալ որպես ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎ (Տիրոջը) կամ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈՒՆՎ (Տիրոջ մեջ)։ Կարծում են սա մի կերպ է ցույց տալու, որ հավատացյալները Տիրոջն են պատկանում։ Մենք Նրա սեփականությունն ենք, իսկ Նա էլ՝ մերը։

■ **«կանանց»** Ղուկասը թե՛ Ավետարանում և թե՛ Գործքում ընդգծում է հատկապես կանանց (այսինքն՝ 1:14; 8:12; 16:1,13; 17:4,12,34; 18:2; 21:5)։ Հիսուսը արժանապատվության նոր զգացողություն է բերում և արժևորում կանանց ու երեխաներին։

■ **«ավելի ու ավելի էին շատանում» /անգլ.՝ «շարունակ նրանց թվին ավելանում էին»/** Ղուկասը հաճախ կիրառում է եկեղեցու անը գրանցող ամփոփիչ այսպիսի խոսքեր (տես՝ 2:47; 5:14; 6:7; 9:31; 12:24; 16:5; 19:20)։

5:15 «Պետրոսի անցնելու պահին գոնե նրա ստվերը...» Հրաշքները այս փուլում տարածված էին որպես ավետարանը հաստատելու միջոց։ Ակնհայտ էր, որ Պետրոսն էր հանդիսանում Առաքյալների խոսնակը։ Այսպիսի բժշկություններ, որոնք հաստատության համար էին, կատարվում էին նաև Պողոսի միջոցով (տես՝ 19:12)։

Որպես Խոսքի մեկնաբաններ, մենք պետք է հիշենք, որ այս հրաշքները տրված են՝

1. ցույց տալու Աստծո ողորմությունը
2. ցույց տալու ավետարանի ճշմարտությունը
3. ցույց տալու, թե ովքեր են Աստծուց կանչված առաջնորդները

Այս նշանները կատարվեցին որոշակի մշակույթի մեջ և որոշակի նպատակով։ Քանի որ Աստված դա արեց այնտեղ, դա ինքնըստինքյան չի նշանակում, որ նույնը կանի պատմության տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր մշակույթներում։ Սա ասել չէ, թե Աստված չի գործում բոլոր դարերում, կամ էլ ավելի քիչ գթառատ է, այլ որ Աստծո ժողովուրդը պետք է հավատքով քայլեն և ոչ թե երևույթով։ Հրաշքները շարունակվում են, բայց մեղավորների փրկությունը պետք է լինի ամենամեծ նպատակը և ոչ թե մարդկանց ֆիզիկական բժշկությունը, որոնք միևնույն է մեռնելու են։

Կարծես թե Աստված չի փոխվել։ Նրա բնավորությունը, գորությունը, ողորմությունը և փափագը, որ բոլորը փրկվեն, մնում է նույնը, սակայն եթե աստվածաբանորեն նայենք պատմությանը, կտեսնենք լարված ժամանակներ, գերբնական նշաններ, թե՛ Աստծո կողմից և թե՛ Մատանայի։

1. վաղ եկեղեցու ձևավորման և աճման ժամանակահատվածում
2. նախքան վերջին ժամանակների իրադարձությունները, երբ հավատացյալները կհայտնվեն սարսափելի հալածանքների մեջ

Կցանկանայի մեջբերում կատարել Ա. Թ. Ռոբերթսոնի, *Բառապատկերները Նոր Կտակարանում*, գրքից (հատ. 3, էջ 62, A. T. Robertson, *Word Pictures in the New Testament*):

«Իհարկե Պետրոսի ստվերի մեջ ոչ մի արժանիք կամ գորություն չկար։ Դա անշուշտ հավատքն էր նախապաշարմունքի հետ միասին, ճիշտ ինչպես նմանատիպ դեպքեր պատահեցին Ավետարաններում (Մատթ.9:20; Մարկ.6:56; Հովհ.9:5) և Պողոսի թաշկինակի գործածումը (Գործք 19:12)։ Աստված պատվում է նույնիսկ նախապաշարմունքով հավատքը, եթե դա Իր հանդեպ ունենցած անկեղծ հավատք է։ Քիչ մարդիկ կան, որ գերծ են նախապաշարմունքներից»։

5:16 «նրանք բոլորն էլ բուժվում էին» Սա ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ է, որը հաստատում է, որ բոլորն էլ բժշկվում էին (գործող անձի մասին արտահայտված չէ, սակայն ակնհայտ է, որ Հոգին է) միաժամանակ, նորից ու նորից, մինչև որ ոչ մի հիվանդ չէր մնում:

Սա ամփոփիչ խոսք է: Պե՛տք է արդյոք դա տառացիորեն ընդունել (այսինքն՝ յուրաքանչյուրը՝ բոլորը): Հիսուսը հավատք էր պահանջում կամ բժշկում էր՝ (1) աշակերտներին սովորեցնելու համար կամ (2) ամբոխին դրդելու, որ լսեն Իրեն:

Ինձ ապշեցնում է այն փաստը, որ ՆԿ-ում բուժվածներից ոչ բոլորն էին, որ միաժամանակ նաև «փրկվեցին» (այսինքն՝ վատահեցին Քրիստոսին և ունեցան հավիտենական կյանք): Ֆիզիկական բժշկությունը շատ թույլ փոխարինող է հոգևոր փրկության համար: Հրաշքները կարող են իրոք օգնել, եթե դրանք մեզ մոտեցնեն Աստծուն: Բոլոր մարդիկ ապրում են մեղավոր աշխարհում: Կատարվում են վատ երևույթներ: Հաճախ Աստված նախընտրում է չմիջամտել, սակայն սա ոչինչ չի ասում Նրա սիրո և հոգատարության մասին: Չգույշ եղե՛ք, որ Աստծուց ամեն անգամ հրաշքներ կատարել չխնդրեք ներկայիս այս չար դարում: Նա ամենակալ է և մենք չգիտենք բոլոր իրավիճակների լիարժեք մտադրությունը՝ նպատակը:

Այս մասում կուզենայի ավելացնել 2 Տիմ.4:20-ի շուրջ իմ կատարած մեկնաբանության գրառումներից՝ Պողոսի և ֆիզիկական բժշկության վերաբերյալ (տես՝ www.freebiblecommentary.org):

«Այնքան շատ հարցեր կան, որ կուզենայինք հարցնել ՆԿ-ի հեղինակներին: Թեմաներից մեկը, որ բոլոր հավատացյալները կարող են մտածել, դա բժշկությունն է: Գործքում (տես՝ 19:12; 28:7-9) Պողոսը կարողանում է բժշկել, սակայն այստեղ և 2 Կորն.12:7-10 և Փիլ.2:25-30-ում, թվում է թե անկարող է: Ինչո՞ւ են ոմանք բուժվում և ոչ թե բոլորը, և արդյո՞ք գոյություն ունի բժշկությանը առնչվող ժամանակի ինչ-որ պատուհան, որը արդեն փակվել է:

Անշուշտ ես հավատում եմ գերբնականին, գթառատ մեր Հորը, որը բժշկել և դեռ բժշկում է ֆիզիկապես և հոգեպես, բայց ինչո՞ւ է բժշկության այս կետը մե՛կ ներկա և մե՛կ էլ բացակայում է: Չեմ կարծում, որ դա կապված է մարդու հավատքից, քանի որ Պողոսը հաստատ հավատք ուներ (տես՝ 2 Կորնթացիների 12): Ես զգում եմ, որ բժշկության և հավատքի հրաշքները հաստատում էին ավետարանի ճշմարտացիությունն ու հավաստիությունը, որոնք դեռևս գործում են աշխարհի տարբեր տարածաշրջաններում, որտեղ ավետարանը առաջին անգամ է քարոզվում: Սակայն, ես հավատում եմ, որ Աստված ուզում է, որ մենք ոչ թե երևույթով այլ հավատքով քայլենք: Նաև ֆիզիկական հիվանդությունը հաճախ հավատացյալների կյանքերում թույլ է տրվում (1) որպես մեղքի համար ժամանակավոր պատիժ, (2) որպես մեղավոր աշխարհում ապրած կյանքի հետևանքներ և (3) հավատացյալներին հոգևոր հասունության մեջ աճելու համար: Իմ խնդիրը նրանում է, որ ես երբեք չեմ իմացել, թե հիմա դրանցից որն է ներգրավված: Աղոթքս է առ Աստված, որ յուրաքանչյուր այդ դեպքերում էլ Աստծո կամքը կատարվի, հավատքի պակասից չէ, այլ անկեղծ փորձ թույլ տալու, որ մեր գթառատ Աստվածը իրականացնի Իր կամքը յուրաքանչյուր մարդու կյանքում»:

■ **«պիղծ ոգիներ»** Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻՎԱԿԱՆԸ (ՊԻՂԾ ՈԳԻՆԵՐ)

Ա. Հնագույն ժողովուրդները եղել են հեթանոսներ: Նրանք վերագրում էին մարդու բնավորության գծերը բնության, կենդանիների և բնական երևույթների ուժերին: Կյանքը բացատրվում էր այս հոգևոր երևույթների և մարդու միջև եղած փոխազդեցության միջոցով:

Բ. Ամեն ինչն այսպես մարմնավորելը ի վերջո դարձավ բազմաստվածություն (polytheism): Սովորաբար դիվականը (*genil*) ավելի փոքր աստվածներն էին կամ դիվաստվածները (բարի կամ չար), որոնք ազդում էին անհատապես մարդկանց կյանքերի վրա:

1. Միջագետքում՝ քաոս և ընդհարում
2. Եգիպտոսում՝ կարգուկանոն և գործողություն
3. Քանանում՝ տես՝ Վ. Ֆ. Օլբրայթի *Երկրաբանությունը և Իսրայելի Կրոնը*, հինգերորդ խմբագրություն, էջ 67-92 (W. F. Albright *Archaeology and the Religion of Israel*)

Գ. ՀԿ-ում չկան և չի զարգացնում ավելի փոքր աստվածների, հրեշտակների կամ դևերի թեման, հավանաբար իր իստ միաստվածության համար (տես՝ Ելից 8:10; 9:14; 15:11; 2 Օր.4:35,39; 6:4; 33:26; Սաղմ.35:10; 71:19; 86:8; Ես.46:9; Երեմ.10:6-7; Միք.7:18): Այն նշում է հեթանոս ազգերի սուտ աստվածներին (*Shedim*, BDB 993, 2 Օր.32:17; Սաղմ.106:37) և անվանում կամ անձնավորում դրանցից ոմանց:

1. *Se'im* (այծամարդիկ կամ մագոս դևեր, BDB 972 III, տես՝ Դև.17:7; 2 Մնաց.11:15; Ես.13:21; 34:14)

2. *Lilith* (Լիլիթ՝ իգական սեռի, գայթակղիչ դև, BDB 539, տես՝ Ես.34:14)
3. *Mavet* (Քանանացիների սանդարանտի՝ մեռածների աշխարհի աստծո համար կիրառվող Եբրայերեն մահվան տերմինը, *Mot*, BDB 560, տես՝ Ես.28:15,18; Երեմ.9:21 և հավանաբար 2 Օր. 28:22)
4. *Resheph* (աղետ, կրակ կամ կարկուտ, BDB 958, տես՝ 2 Օր.32:24; Սաղմ.78:48; Ամբ.3:5)
5. *Dever* (համաճարակ՝ ժանտամահ, BDB 184, տես՝ Սաղմ.91:5-6; Ամբ.3:5)
6. *Az'azel* (անհայտ անուն է, միգուցե անապատի դև կամ տեղանուն, BDB 736, տես՝ Ղևտ.16:8,10,26)

(Այս օրինակները վերցված են Հուդայական Հանրագիտարանից /Encyclopaedia Judaica, vol. 5, p. 1523/)

Այնուամենայնիվ ՀԿ-ում չկա ՅԱՀՎԵից հրեշտակների անկախություն կամ դուալիզմ: Սատանան ՅԱՀՎԵի ծառան է (տես՝ Հոր 1-2; Չաքարիա 3) և ոչ թե անկախ, անձամբ առաջնորդվող թշնամի (տես՝ Ա. Բ. Դեյվիդսոն, *Հին Կտակարանի Աստվածաբանություն* /A. B. Davidson, *A Theology of the Old Testament*, pp. 300-306/)

Դ. Հուդայականությունը զարգացավ Բաբելոնյան գերության ընթացքում (Ք.Ա. 586-538): Այն աստվածաբանորեն ազդեցության է ենթարկվել պարսկական Չրադաշտության մարմնավորած դուալիզմից՝ բարձրագույն բարու աստծուց՝ *Mazda* կամ *Ormazd* և դրա չար մրցակցից՝ *Ahriman*: Սա առիթ հանդիսացավ հետգերության շրջանում հուդայականությանը անձնավորելու դուալիզմ ՅԱՀՎԵի և Նրա հրեշտակների ու Սատանայի և նրա հրեշտակների կամ դևերի միջև:

Հուդայականության մեջ չարի անձնավորման շուրջ աստվածաբանությունը բացատրվում և լավագույնս արձանագրվում է Ալֆրեդ Էդերշեյմի *Հիսուս Մեսիայի Կյանքը և Ժամանակները* գրքում, հատոր 2, հավելված XIII, էջ՝ 749-863 և հավելված XVI, էջ՝ 770-776 (Alfred Edersheim, *The Life and Times of Jesus the Messiah*):

1. Սատանա կամ Սամմայել
2. մարդկանց մեջ չար դիտավորությունը (*yetzer hara*)
3. Մահվան Հրեշտակը

Էդերշեյմը բնութագրում է սրանց որպես (1) Չրպարտող, (2) Փորձիչ և (3) Պատժող (հատ.2, էջ՝ 756): Նկատելի տարբերություն կա հետգերության հուդայականության և ՆԿ-ի ներկայացրած և բացատրած չարի միջև:

Ե. ՆԿ-ը՝ հատկապես Ավետարանները, պաշտպանում է հոգևոր չար էակների գոյությունը և դրանց հակառակությունը ՅԱՀՎԵին և մարդկությանը (հուդայականության մեջ Սատանան մարդկության թշնամին է, ոչ թե Աստծո): Նրանք հակառակվում են Աստծո կամքին, իշխանությանը և թագավորությանը:

Հիսուսը դիմադրեց և հեռացրեց՝ վտարեց իրենից այս բոլոր դիվական էակներին, որոնք մարդկանց կողմից նաև կոչվում էին (1) պիղծ ոգիներ (տես՝ Ղուկ.4:36; 6:18) կամ (2) չար ոգիներ (տես՝ Ղուկ.7:21; 8:2): Հիսուսը հստակ տարբերակում է դնում հիվանդության (ֆիզիկական և մտավոր) և դիվահարության միջև: Նա ցույց տվեց Իր գորությունը և հոգևոր իշխանությունը այս չար ոգիներին ճանաչելով և դրանց դուրս քշելով: Նրանք հաճախ ճանաչում էին և փորձում դիմել Նրան, սակայն Հիսուսը մերժում էր նրանց վկայությունը, հրամայում էր, որ լռեն և վտարում նրանց: Դևեր վտարելը՝ դուրս քշելը (Էզգորսիզմը) Սատանայի թագավորության պարտության նշան է:

Այս թեմայով ՆԿ-ի Առաքելական Թղթերում առկա է տեղեկության զարմանալի պակասը: Դևեր քշելը երբեք չի թվարկվում որպես հոգևոր պարգև, ոչ էլ հետագա սերունդների ծառայողների կամ հավատացյալների կողմից գործադրելու համար տրված է դրա մեթոդոլոգիան կամ կիրառության կերպը՝ ընթացակարգը:

Չ. Չարը իրական է, այն անձնավորություն է, չարը ներկա է: Ո՛չ դրա ծագումը և ո՛չ էլ դրա նպատակը հայտնի չեն: Աստվածաշունչը պնդում է դրա իրողությունը և ազդեցությունը հակառակվում է դրա ներգործությանը: Իրականում գոյություն չունի առավելագույն՝ լիարժեք դուալիզմ: Աստված է կատարելապես վերահսկում՝ կառավարում ամեն ինչ, չարը պարտված և դատապարտված է ու մի օր վտարվելու է արարչագործության միջից:

Է. Աստծո ժողովուրդը պետք է հակառակվի չարին (տես՝ Հակ.4:7): Նրանք չեն կարող լինել նրա վերահսկողության տակ (տես՝ 1 Հովհ.5:18), սակայն կարող են փորձվել և փչացնել իրենց վկայությունը և ազդեցությունը (տես՝ Եփես.6:10-18): Չարը Քրիստոնեական աշխարհայացքի հայտնված մի մասն է: Ժամանակակից Քրիստոնյաները իրավունք չունեն վերասահմանելու՝ վերաիմաստավորելու չարին (Ռուդոլֆ Բոյտմենի դեմիտոլոգիացումը

/Rudolf Baltmann/), դրան դարձնելու անձեռնմխելի (Փոլ Տիլիչի սոցիալական կառուցվածքները /Paul Tillich/), ո՛չ էլ փորձելու բացատրել նրան բացարձակապես հոգեբանական տերմիններով (Չիգմունդ Ֆռոդ /Sigmund Freud/): Դրա ազդեցությունը համատարած է՝ ամենուր, սակայն պարտության մատնված: Հավատացյալները պետք է քայլեն Բրիստոսի հաղթության մեջ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԵՎԵՐ ՔՇԵԼԸ ԷԳՉՈՐՍԻՉՍԸ

Էզոտրսիզմը Հիսուսի օրոք տարածված էր, սակայն Հիսուսի մեթոդները արմատապես տարբերվում էին: Նրա էզոտրսիզմը Նոր Դարաշրջանի նշաններից մեկն էր: Ռաբբիները գործադրում էին մոգական բանաձևեր (տես՝ Ալֆրեդ Էդերշեյմի *Հիսուս Մեսիայի կյանքը և ժամանակները* գիրքը, հատոր՝ 2, Հավելված XIII, էջ՝ 748-763; XVI, էջ՝ 770-776 /Alfred Edersheim, *The Life and Times of Jesus, The Messiah*), սակայն Հիսուսը օգտագործում էր հենց Իր իշխանությունը: Էզոտրսիզմի և դիվահարության հարցերի շուրջ շրջանառվող շատ շփոթություններ և սխալ տեղեկություններ կան: Այս խնդրի մի մասը կայանում է նրանում, որ ՆԿ-ը չի քննարկում այս հարցերը: Որպես հովիվ ես կցանկանայի ավելի շատ տեղեկություն ունենալ այս թեմայի շուրջ: Ահա մի քանի գրքեր, որոնց ես վստահում եմ.

1. *Քրիստոնեական խորհրդատվություն և ակուլտիզմ*, Քրթ Է. Քոչ (*Christian Counseling and the Occult*, Kurt E. Koch)
2. *Դևերն այսօր աշխարհում*, Մերիլ Ֆ. Անգեր (*Demons in the World Today*, Merrill F. Unger)
3. *Աստվածաշնչյան Դեմոնոլոգիա /Դիվաքանություն/* Մերիլ Ֆ. Անգեր (*Biblical Demonology*, Merrill F. Unger)
4. *Իշխանություններ և գորություններ*, Ջոն Վորվիք Մոնթգոմերի (*Principalities and Powers*, John Warwick Montgomery)
5. *Քրիստոսը և Իշխանությունները*, Հենրիկ Բերխոֆ (*Christ and the Powers*, Hendrik Berkhof)
6. *Երեք Կարևոր Հարցեր Հոգևոր Պատերազմի Կերպերյալ*, Զլինթոն Էնթոն (*Three Crucial Questions About Spiritual Warfare* by Clinton Anton)

Ինձ զարմացնում է, որ էզոտրսիզմը չի նշվում որպես հոգևոր պարզև և այն, որ այս թեման չի արժարժվում Առաքելական Թղթերում: Ես հավատում եմ աստվածաշնչյան աշխարհայացքին, որի մեջ ներգրավված են հոգևոր թագավորությունները (այսինքն՝ բարի և չար), որոնք ներկա են և գործում են ֆիզիկական թագավորություններում (այսինքն՝ Հոր 1-2; Դանիել 10; Եփես.6:10-18): Սակայն Աստված նախընտրել է չհայտնել մեզ մանրամասները: Որպես հավատացյալներ մենք ունենք այն բոլոր տեղեկությունները, որոնց կարիքն ունենք Նրա համար աստվածահաճո, պտղաբեր կյանք ապրելու: Սակայն որոշակի թեմաներ մեզ հայտնված չեն կամ կատարելագործված չեն:

Հավատացյալները պետք է հիշեն, որ էզոտրսիզմը չարի հանդեպ Հիսուսի տարած հաղթության տեսանելի ապացույց է (տես՝ Դուկ.10:17-20): ՆԿ-ը հստակ տարբերություն է դնում էզոտրսիզմի և բժշկության միջև (տես՝ Մատթ.8:16; Մարկ.1:32; Դուկ.4:40-41):

Տե՛ս հետևյալ Հատուկ Թեմաները՝

1. Հատուկ Թեմա. Մատանա
2. Հատուկ Թեմա. Անձնական չարք
3. Հատուկ Թեմա. Դիվականը ՀԿ-ում
4. Հատուկ Թեմա. Դիվականը ՆԿ-ում

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:17-26

¹⁷Այա քահանայապետը և բոլոր նրա կողմնակիցները (որը Սաղուկեցիների աղանդն է) վեր կացան և նախանձով լցված ¹⁸առաքյալներին ձեռքակալեցին և նրանց հասարակաց բանտը դրեցին: ¹⁹Բայց Տիրոջ հրեշտակը գիշերով բանտի դռները բացեց ու նրանց դուրս բերելով՝ ասաց. ²⁰«Գնացե՛ք, կանգնեցե՛ք տաճարի մեջ և ժողովրդին այս կենաց պատգամը տվե՛ք»: ²¹Ու երբ սա լսեցին, վաղ առավոտից տաճարը մտան և սովորեցնում էին: Իսկ քահանայապետը և նրա կողմնակիցները եկան և առյանն ու Իսրայելի որդիների ամբողջ ձերակույտը ժողովի հրավիրելով, մարդ ուղարկեցին բանտ, որ նրանց բերեն: ²²Ու երբ սպասավորները գնացին, նրանց բանտում չգտնելով, ետ դարձան և պատմեցին, ²³ասելով թե՛ «Բանտը ամենայն զգուշությամբ փակված գտանք, ու պահապաններն էլ դրսում՝ դռների առջև կանգնած, բայց երբ բացեցինք, ներսում մարդ չգտանք»: ²⁴Արդ, երբ քահանայապետը և

տաճարի պահակապետն ու գլխավոր քահանաներն այս խոսքերը լսեցին, զարմանում էին, թե ինչ կարող է պատահած լինել: ²⁵Եվ մեկը եկավ, նրանց ասաց. «Ահա այն մարդիկ, որոնց դուք բանտ էիք նստեցրել, տաճարում կանգնած են և ուսուցանում են ժողովրդին»: ²⁶Այդ ժամանակ պահակապետն իր սպասավորների հետ միասին գնաց նրանց բերեց՝ առանց բռնության, քանի որ վախենում էին ժողովրդից, որ հանկարծ չքարկոծվեն:

5:17 «նախանձով լցված» Հունարեն բառը պարզապես նշանակում է «եռալ»: Հետևաբար, համատեքստից կարելի է հասկանալ արդյոք դա նախանձավորությունն էր, թե՛ նախանձը: Սա ցույց է տալիս կրոնական առաջնորդների իրական շարժառիթը՝ նախանձը: Ղուկասի Ավետարանում Հիսուսի հիմնական թշնամիները Փարիսեցիներն էին, սակայն Գործքում Նրա հետևորդների հիմնական թշնամիները Սադուկեցիներն են:

Ղուկասի կողմից այս «լցված» ԲԱՅԸ կիրառվում է տարբեր ձևերով, ցույց տալու, թե ինչն է հատկանշական տվյալ անձին կամ անձնավորված երևույթին:

1. Հովհաննես Մկրտիչը՝ նույնիսկ իր ծնունդից առաջ լցվել էր Սուրբ Հոգով – Ղուկ.1:15
2. Եղիսաբեթը լցվել էր Սուրբ Հոգով – Ղուկ.1:41
3. Չաքարիան լցվել էր Սուրբ Հոգով – Ղուկ.1:61
4. Ժողովարանում գտնվող մարդիկ, որ լսեցին Հիսուսին խոսելիս՝ լցվեցին զայրույթով – Ղուկ.4:28
5. Տանը գտնվող մարդիկ, որի կտուրից վար իջեցրին անդամալուծին, լցվեցին վախով – Ղուկ.5:26
6. Հիսուսի հետ շաբաթ օրը քայլող փարիսեցիներն ու դպիրները լցվեցին զայրույթով- Ղուկ.6:11
7. Պենտեկոստեի օրը վերնատանը գտնվող բոլոր մարդիկ Սուրբ Հոգով լցվեցին – Գործք 2:4
8. Տաճարում գտնվող մարդիկ լսելով Պետրոսի քարոզը, ապշահարությամբ լցվեցին – Գործք 3:10
9. Մինեդրոնի առջև Պետրոսը խոսելիս լցվեց Սուրբ Հոգով – Գործք 4:8
10. Վերնատանը գտնվող բոլոր մարդիկ լցվեցին Սուրբ Հոգով – Գործք 4:31
11. Սատանան լցրեց Անանիայի և Սափիրայի սրտերը – Գործք 5:3
12. Պետրոսն ու Հովհաննեսը Մինեդրոնի առջև խոսելիս այնտեղի մարդիկ լցվեցին նախանձով - Գործք 5:17
13. Երուսաղեմը լցվեց ավետարանով – Գործք 5:28
14. Յոթ հոգին լցված Հոգով և իմաստությամբ – Գործք 6:3
15. Ստեփանոսը լցված հավատքով և Սուրբ Հոգով – Գործք 6:5,8; 7:55
16. Անանիան ձեռնադրում է Սողոմի՝ Պողոսին, և նա լցվում է Սուրբ Հոգով – Գործք 9:17
17. Պողոսը քարոզում է Սուրբ Հոգով լցված – Գործք 13:9
18. Ամբոխի մեջ գտնվող հրեաները, որոնց Պողոսը քարոզում էր, լցվեցին նախանձով – Գործք 13:45
19. Աշակերտները շարունակ լցվում էին ուրախությամբ և Սուրբ Հոգով – Գործք 13:52
20. Եփեսոսը խռովությամբ լցվեց – Գործք 19:29

Ավետարանի ներկայության մեջ դուք ինչ՞ով եք «լցվում»:

5:18 Գործքի առաջին գլուխները ցույց են տալիս այն խնդիրները, որոնց հետ բախվել են վաղ եկեղեցու հավատացյալները: Խնդիրները տարբեր դարերում, տարբեր մշակույթներում տարբեր են եղել, սակայն Աստված մեր կողմից է, մեր հետ, և զորացնում է մեզ հաղթելու համար: Ոչ մի բան՝ ոչ բանտերը, ոչ նվաստացումները, ոչ սպառնալիքները և ոչ այլ ինչ, չեն կարող զրկել մեզ Զրիստոսի ներկայությունից և խաղաղությունից (տես՝ Հռոմ.8:31-39):

5:19 «Տիրոջ մի հրեշտակ /հայ.՝ հրեշտակը/» Այս արտահայտությունը ՀԿ-ում երկու կերպ է գործածվում՝

1. մի հրեշտակ (տես՝ Ծննդ.24:7,40; Ելից 23:20-23; 32:34; Թվոց 22:22; Դատ.5:23; 1 Թագ.24:16; 1 Մնաց.21:15; Չաք.1:28)
2. ՅԱՀՎԵին մատնանշելու մի կերպ (տես՝ Ծննդ.16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16; Ելից 3:2,4; 13:21; 14:19; Դատ.2:1; 6:22-24; 13:3-23; Չաք. 3:1-2)

Ղուկասը հաճախ է կիրառում այս արտահայտությունը (տես՝ Ղուկ.1:11,13; 2:9; Գործք 5:19; 7:30; 8:26; 12:7,11,23; 10:3; 27:23), սակայն վերը նշված #1-ի իմաստով: Նոր Կտակարանը չի օգտագործում այն #2-ի իմաստով, բացառությամբ Գործք 8:26 և 29, որտեղ «Տիրոջ մի հրեշտակ» արտահայտությունը մատնանշում է Սուրբ Հոգուն:

■ **«բանտի դռները բացեց»** Սա նման է Փիլիպեոսի Պողոսի և Շիղայի ունեցած փորձառությունը (տես՝ Գործք 16:26): Պետրոսի կյանքը շատ կերպերով զուգահեռվում են Պողոսի կյանքի հետ: Հնարավոր է սա եղել է Ղուկասի գրական դիտավորությունը:

5:20 «Գնացե՛ք, կանգնեցե՛ք և ...խոսե՛ք /հայ.՝ պատգամը տվե՛ք/» Այս գործողությունները որպես երեք ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ՝

1. Գնացե՛ք՝ ՆԵՐԿԱ ժամանակի, ՉԵՉՈՔ սեռի, ՀՐԱՄԱՅԱԿԱՆ եղանակ
2. Կանգնեցե՛ք՝ ԱՈՐԻՍԾ ժամանակի, ԿՐԱՎՈՐԱԿԱՆ սեռի ԴԵՐԲԱՅ (Friberg's *Analytical Greek New Testament*, Փրիբերգի, *Վերլուծական Հունարեն Նոր Կտակարան*, էջ՝ 379)
3. Խոսե՛ք՝ ՆԵՐԿԱ ժամանակի, ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ հոլովի, ՀՐԱՄԱՅԱԿԱՆ եղանակ

Հրեշտակը վաղ եկեղեցու համար ուներ ավետարանական առաքելություն (ինչպես նաև այսօրվա եկեղեցու համար):

■ **«ժողովրդին պատգամը տվե՛ք /խոսե՛ք ժողովրդին/** Առաքյալների ծառայության հիմնական ուղղվածությունը սա էր: Նրանց հոգով լցված նոր կյանքերին բնորոշ էր համարձակությունը (տես՝ Հատուկ Թեմա 4:29) և ոչ թե վախը:

■

NASB	«Կենաց լիարժեք պատգամը»
NKJV	«կյանքի /կենաց/ բոլոր խոսքերը»
NRSV	«այս կյանքին վերաբերող ամբողջ պատգամը»
TEV	«ամեն ինչ այս նոր կյանքի վերաբերյալ»
NJB	«ամեն ինչ այս նոր կյանքի վերաբերյալ»

Այս արտահայտությունը խոսում է նոր կյանքի մասին (*zōe*, հավիտենական կյանք), որը կարելի է գտնել միայն Հիսուս Քրիստոսի ավետարանի մեջ: Նրանք ազատվել էին՝ փրկվել, թե՛ հոգևոր առումով (փրկությունը) և թե՛ ֆիզիկապես (բանտից): Հիմա նրանք պետք է այդ ամենը պատմեին բոլորին (տես՝ Մատթ.28:18-20; Ղուկ.24:47; Գործք 1:8):

5:21 Ուշադրություն դարձրեք, որ գերբնական միջոցով ազատվելը դեռևս չէր նշանակում, որ նորից չէին բանտարկվելու: Նույնիսկ Աստծո հոգածությունը չի նշանակում, որ ծառայության մեջ մեր բոլոր դժվարությունները կլուծվեն կամ կանհետանան (տես՝ Մատթ.5:10-12; Հռոմ.8:17; 1 Պետ.4:12-16):

■ **«Ատյանն ու Իսրայելի որդիների ամբողջ ծերակույտը, /Սենատը/»** Տե՛ս Հատուկ Թեմա, Սինեդրոնը, 4:5-ում: Ո՛րմ է վերաբերում այս Սենատը՝ ծերակույտը: Քրիստոս Վոզանը, *Գործք* գրքում (Curtis Vaughan, *Acts*, էջ՝ 39-40), ասում է, որ այն Երուսաղեմի ծերերն էին, ովքեր տվյալ պահին Սինեդրոնի անդամներ չէին (տես՝ Ս. Ռ. Վինսենթի, *Բառային Ուսումնասիրություններ* M. R. Vincent, *Word Studies*, Հատոր 1, էջ՝ 234), սակայն NASB և NIV թարգմանությունները ենթադրում են, որ Ատյանն ու Սենատը հոմանիշներ են:

5:23 «փակված» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ժամանակի, ԿՐԱՎՈՐԱԿԱՆ սեռի ԴԵՐԲԱՅ է: Միտքն այն է, որ բանտի դռները և պահակախումբը ապահով էին (ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ), սակայն բանտարկյալները հեռացել էին:

5:24 «մեծապես շփոթահար էին /հայ.՝ զարմանում էին/» Ղուկասը գործածում է այս տերմինը մի քանի անգամ: Սա *aporeō* (տես՝ Ղուկ.24:4; Գործք 25:20) տերմինի ավելի ընդգծված ձևն է *dia* բառի հետ (տես՝ Ղուկ.9:7; Գործք 2:12; 5:24; 10:17): Դրա հիմնական իմաստը կասկածն է, անորոշությունը կամ շփոթությունը:

■ **«թե ինչ կարող է պատահած լինել»** Այս արտահայտության քերականական ձևը՝ ապակատար ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԵՆԹԱԴՐԱԿԱՆ /Պայմանական/ եղանակի նախադասություն (*an* գումարած Աորիստ Ներգործական /դեպոնենտ/ Ըղծական եղանակ): ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ արտահայտում է շփոթությունը՝ զարմանքը (տես՝ Ղուկ. 1:61-62; 3:15; 8:9; 15:26; 22:23; Գործք 5:24; 8:31; 10:17; 21:33, տես՝ Ջեյմս Ալեն Հյուվիթ, *Հունարեն Նոր Կտակարան*, էջ՝ 195 /James Allen Hewett, *New Testament Greek*):

5:26 «վախենում էին ժողովրդից, որ հանկարծ չքարկոծվեն» Սա ցույց է տալիս վաղ եկեղեցու հայտնի լինելը (տես՝ հ. 13; 2:47; 4:21) և հրեա առաջնորդների շարունակվող նախանձի աղբյուրը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍՏ. 5:27-32

²⁷Եվ երբ նրանց բերեցին և առյուծի առաջ կանգնեցրին, քահանայապետը նրանց հարցրեց՝ ²⁸ասելով. «Չէ՞ որ ձեզ խստիվ պատվիրել էինք, որ այս անունով չուսուցանեք. և ահա Երուսաղեմը լցրել եք ձեր ուսմունքով և այդ մարդու արյունն ուզում եք մեր վրա գցել»: ²⁹Ապա Պետրոսը և մյուս առաքյալները պատասխանեցին ու ասացին. «Պետք է Աստծուն հնազանդվել, քան մարդու»: ³⁰Մեր հայրերի Աստվածը Հիսուսին հարուցանեց, Նրան, Ում դուք փայտից կախելով՝ սպանեցիք: ³¹Աստված Նրան Իր աջ ձեռքով բարձրացրեց՝ Առաջնորդ ու Փրկիչ լինելու, որ Իսրայելին ապաշխարություն և մեղքերի թողություն տա: ³²Մենք այս բաների համար Նրա վկաներն ենք, նույնպե՛ս և Սուրբ Հոգին, Ում Աստված տալիս է նրանց, որ հնազանդվում են Իրեն»:

5:28

NASB, NRSV, TEV «խստիվ պատվիրել»
NKJV «խստիվ հրամայել»
NJB «խիստ զգուշացնել»

NKJV ասում է. «Արդյո՞ք ձեզ խստիվ չպատվիրեցինք, որ այս անունով չսովորեցնեք», որը հունարեն տեքստերում (K², D և E, սակայն MSS P⁷⁴, K*, A կամ B) գտնվող հունարեն ձեռագրի տարբերակն է: UBS⁴ դնում է NKJV տարբերակը տեքստի մեջ, սակայն «չ-» մասնիկը փակագծերում: Այս հարցը ակնկալում է «այդ» պատասխան: Առաքյալները զգուշացվել էին:

Կառուցվածքային առումով այն Սեմիտիկ՝ սեմական լեզվախմբի, դարձվածք է (տես՝ Ղուկ.22:15) նման Կոյնե հունարենում ՀԱՄԱՆՈՒՄ ՀԱՅՅԱԿԱՆԻ, որտեղ ԲԱՅՆ (*parangellō*) և ՈՒՂՂԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆԸ (*parangelia*) միևնույն արմատից են: Այսպիսի կառուցվածքը ավելի շեշտադրում է տերմինների հիմնական նշանակությունը: Հետաքրքիր է, որ այս տերմինը Եգիպտոսում գտնված Կոյնե հունարեն պապիրուսի մեջ նշանակում էր պաշտոնական հրավեր՝ կանչ դատարան, կամ էլ կարգադրություն՝ հրաման դատարանից (տես՝ Մուլթոն և Միլիգան, *Հունարեն Նոր Կտակարանի Բառարան*, /Moulton and Milligan, *Vocabulary of the Greek New Testament*/ էջ՝ 481):

■ «այս /այդ/ մարդու» Այս արտահայտությունը ցույց է տալիս հրեա առաջնորդների արհամարհանքը: Նրանք երբեք չեն նշում Հիսուսի անունը: Թալմուդը նույնիսկ Նրան անվանում է «այսպես կոչվածը» (տես՝ Մ. Ռ. Վինսենթի՝ *Բառային սերտություն*, /M. R. Vincent, *Word Studies*/, հատոր՝ 1, էջ՝ 234):

■ «արյունը մեր վրա» Պետրոսն ու Հովհաննեսը շարունակում էին պնդել, որ այս հրեա առաջնորդներն էին ծրագրել Հիսուսի մահը (տես՝ հ. 30; 2:33; 3:14-15; 4:10): Սա նաև Ստեփանոսի մեղադրանքն էր 7:52-ում:

5:29 «պետք է» Այս *dei* բառը նշանակում է բարոյական անհրաժեշտություն՝ պահանջ: Սա ցույց է տալիս անկախ հանգամանքներից ճշմարտությունը քարոզելու Առաքյալների պարտավորությունը (տես՝ 4:19): Տե՛ս ամբողջական գրառումները՝ 1:16-ում:

5:30 «մեր հայրերի Աստվածը» Վաղ եկեղեցու այս Քրիստոնյաները հավատում էին, որ Հ-ի Աստծո ժողովրդի իրական հոգևոր ժառանգներն ու սերունդները իրենք էին (տես՝ 3:13; Հռոմ.2:28-29; Գաղ.6:16; 1 Պետ.3:5,9; Հայտ.1:6):

■ «Հիսուսին հարուցանեց» Ն-ը հիմնավորում է, որ Հիսուսին Հայրը հարություն տվեց (տես՝ Գործք 2:24,32; 3:15,26; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռոմ.6:4,9) հաստատելու Նրա կյանքի և ուսմունքների ճշմարտությունը: Սա *Kerygma*-ի գլխավոր կետերից մեկն է (տես՝ 1 Կորնթացիների 15): Նաև պետք է նշել, որ Ն-ը հաստատում է, որ Որդին և Սուրբ Հոգին նույնպես ներգրավված էին ապացույց հանդիսացող այս մեծ իրադարձության մեջ:

- 1. Որդին՝ Հովհ.2:19-22; 10:17-18
- 2. Հոգին՝ Հռոմ.8:11

■ «Ում դուք խաչից /հայ.՝ փայտից/ կախելով՝ սպանեցիք» Սա 2 Օր.21:23-ում արձանագրված անեծքի հետադարձ ակնարկն է: Այս կրոնավոր առաջնորդները ուզում էին, որ Հիսուսը՝ իրեն Մեսիա «ձևացնողը», կրեր ՅԱՀՎԵԻ անեծքը: Հիսուսը կրեց Հ-ի օրենքի անեծքը (այսինքն՝ անձը, որ մեղք է գործում, պետք է անկասկած մեռնի [տես՝ Եզեկ.18:4,20] և բոլոր մարդիկ մեղք են գործել, տես՝ Հռոմ.3:9-18, 23) մեզ համար (տես՝ Գաղ.3:13; Կող.1:14): Հիսուսը Աստծո անմեղ Գառն էր, որն Իր կյանքը տվեց օտարացած՝ մոլորված աշխարհի համար (տես՝ Հովհ.1:29; 2 Կորնթ.5:21):

5:31 «Աստված Նրան Իր աջ ձեռքով բարձրացրեց» Բարձրացրեց /անգլ.՝ մեծարեց/ տերմինը Հովհաննես 3:14-ում թարգմանվում է «բարձրացրեց», իսկ Փիլ:2:9-ում որպես «խիստ բարձրացրեց»: Խաչը եղավ Քրիստոսի մեծարման և հաղթանակի միջոցը՝ գործիքը (տես՝ Կող:1:15; 2 Կորն:2:14): Մարդաբանական այս «աջ ձեռք» արտահայտությունը իշխանության և գործության տեղի փոխաբերություն էր (տես՝ Մատթ:26:64): Աստված հավիտենական Հոգի է: Նա չունի ֆիզիկական մարմին: Տե՛ս Հատուկ Թեմա 2:33:

■ **«Իշխան»** /հայ.՝ **Առաջնորդ**/ Այս համարը հստակ և հատկապես պաշտպանում է Հիսուսի Մեսիա լինելը: Այս նույն տերմինը օգտագործվել է Հիսուսի վերաբերյալ 3:15-ում, որտեղ այն կարելի է թարգմանել «Հեղինակ» (NRSV): Այն կարող է նաև նշանակել «առաջնորդ», «պիոներ» կամ «իշխան»: Այն գործածվում է նաև դպրոցի կամ ընտանիքի հիմնադրի համար (տես՝ Եբր:2:10; 12:2): Տե՛ս Հատուկ Թեմա 3:15:

■ **«Փրկիչ»** Այս տերմինը կիրառվում էր առաջին դարում Կեսարի հունա-հռոմեական աշխարհում: Նա իրեն հռչակել էր մշակույթի և խաղաղության փրկիչ: Մեկ այլ տերմին, որ Կեսարները ինքնահռչակում էին իրենց համար, բայց Քրիստոնյաները այն բացառապես գործածում էին Հիսուսի համար, դա Տերն էր (*kurios*):

Այս «Փրկիչ» տերմինը ՀԿ-ում գործածվում էր ՅԱՀՎԵԻ համար (տես՝ 2 Թագ:22:3; Սաղմ:106:21; Ես: 43:4,11; 45:15,21; 49:26; 60:16; 63:8): ՆԿ-ի հեղինակները հաճախ Հիսուսի աստվածությունը հաստատում են վերագրելով Նրան ՀԿ-ի ՅԱՀՎԵԻ անունները: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է դա անում Պողոսը Տիտոսին ուղղված իր նամակում՝

1. 1:3 – «Աստված՝ մեր Փրկիչը»
2. 1:4 – «Հիսուս Քրիստոս մեր Փրկիչը»
3. 2:10 – «Աստված մեր Փրկիչը»
4. 2:13 – «մեր մեծ Աստվածը և Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը»
5. 3:4 – «Աստված մեր Փրկիչը»
6. 3:6 – «Հիսուս Քրիստոս մեր Փրկիչը»

■ **«Իսրայելին ապաշխարություն և մեղքերի թողություն տա»** Սա ցույց է տալիս Հիսուսի մահվան նպատակը (տես՝ Դուկ:24:47 և Գործք 2:38): ՆԿ-ի հեղինակների համար անսովոր էր ապաշխարությանը վերաբերվել որպես Աստծո պարգևի (տես՝ Գործք 11:18 [Հեթանոսներին]; 2 Տիմ:2:25; հավանաբար նաև Հռոմ:2:4): Սովորաբար դա ավետարանն ընդունողների համար Նոր Ուխտի պահանջներից մեկն է (տես՝ Մարկ:1:15 և Գործք 3:16,19; 20:21): Կարծում են դա գրական մի ձև է, որը ցույց է տալիս, որ Աստված ուզում է Իր պատկերով ստեղծված բոլոր մարդիկ փրկվեն: Դա կապված չէ Աստծո ամենակալության հետ:

Հաճախ այն մարդիկ, ովքեր կենտրոնանում են Նոր Ուխտի մեջ միայն Աստծո կողմից կատարվող գործողության վրա, գործածում են այս համարը ապացուցելու, որ փրկությունը միայն Աստծո գործն է և մարդու կողմից որևէ մասնակցություն չի պահանջվում: Սակայն սա տեքստային ապացույցի լավ օրինակ է, որպեսզի այդպես մտածողները փոփոխության ենթարկեն աստվածաբանության իրենց կարծրատիպը: Աստվածաշունչը հստակ հայտարարում է Աստծո հրավերի՝ կանչի առաջնահերթությունն ու անհրաժեշտությունը, սակայն նաև հայտնում է, որ «ուխտի» հասկացությունը լավագույն կերպով նկարագրում է կարիքի մեջ գտնվող մարդկության հետ փոխհարաբերվելու Իր կողմից ընտրված օրինակը: Ազատությունը արարչագործության մեջ Աստծո տված պարգևն է: Աստված չի բռնանում այս պարգևի՝ պատասխանատվության հանդեպ (տես՝ Հռոմ:2:4; 2 Կորն:7:10): Նա մեզ քաշում է դեպի Իրեն, հետամուտ լինում, մեր հետ աշխատում և պատրաստում փրկության ճանապարհը (տես՝ Հովհ:6:44,65): Բայց մեղավոր մարդկությունը պետք է արձագանքի Նրան և շարունակի արձագանքել ապաշխարությամբ, հավատքով, հնազանդությամբ և հարատևությամբ:

Ահա մի հետաքրքիր մեջբերում Ֆրենք Սթեգի *Նոր Կտակարանի Աստվածաբանություն* գրքից (Frank Stagg, *New Testament Theology*, p. 119)՝

«Մարդիկ չեն կարող հասնել ապաշխարության, այլ կարող են միայն ընդունել այն, մինչդեռ նրանք պետք է դա անեն: Հավատքով մարդն ընդունում է Քրիստոսին իր մեջ, իսկ Քրիստոսը որպես փոփոխություն բերող ներկայություն հակադարձում է այդ կյանքի ընթացքը ինքնավստահությունից Աստծուն վստահելու, ինքնապաշտպանությունից անձնուրացության: Այս դարձը Անկման հետադարձ ընթացքն է, որտեղ մարդը փնտրում է գտնելու իր ներսում իր իսկ գոյության լիարժեք իմաստը»:

5:32 Գործքում Պետրոսը մի քանի անգամ դիմում է այն փաստին, որ Առաքյալները և աշակերտները Հիսուսի կյանքի, մահվան և հարության վկաներն են: Այս համատեքստում նա ավելացնում է «Սուրբ

«նոգուն» որպես վկա: Հնարավոր է սա ՀԿ-ում գործը հաստատելու համար երկու վկաների անհրաժեշտության կերպն է (տես՝ Թվոց 35:30; 2 Օր.17:6):

Ղուկասը, Գործքը խոսում են Սուրբ Հոգու պարզևի մասին՝

1. մկրտության ժամանակ՝ 2:38
2. ավետարանին հնազանդվելիս՝ 5:32
3. չի կարող գնվել՝ 8:19-20
4. հեթանոսների համար՝ 10:45; 11:17
5. Հորից է՝ Ղուկաս 11:13 (տես՝ Հակ.1:17)

■ **«նրանց, որ հնազանդվում են Իրեն»** Հնազանդությունը ապրելակերպի որոշում է: Մենք պետք է հնազանդվենք ավետարանին հավատալու միջոցով: Մենք պետք է հարատևենք հնազանդության մեջ, որպեսզի վայելենք դրա պտուղները (տես՝ Մատթ.7:24-27; Ղուկ.6:46-48): Հազվադեպ հանդիպող «հնազանդվել» տերմինը (*peithomai* գումարած *archē*, տես՝ 27:21; Տիտոս 3:1)՝ հ. 29 և 32 գործածվող, «կառավարիչ» (*archē*) և հնազանդվել բառերից կազմված բաղադրյալ բառ է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:33-39

³³Եվ նրանք, այս լսելով, խիստ զայրացան ու մտածում էին նրանց սպանել: ³⁴Եվ առյուծանում մի փարիսեցի, որի անունը Գամաղիել էր՝ Օրենքի վարդապետ, ամբողջ ժողովրդից հարգված մի անձ, ուրիշ կանգնեց ու հրամայեց, որ առաքյալներին որոշ ժամանակով դուրս տանեն: ³⁵և նրանց ասաց. «Ո՛վ Իսրայելի մարդիկ, այս մարդկանց հետ վարվելիս՝ շատ զգույշ եղեք: ³⁶Քանի որ օրեր առաջ Թեոդասը ելավ, ասելով, թե ինքը մի երևելի անձ է, ու թվով մոտ չորս հարյուր մարդ նրան հարեցին. նա ինքը սպանվեց, իսկ իրեն հետևողները բոլորը ցրվեցին ու ոչինչ եղան: ³⁷Այս մարդուց հետո, մարդահամարի օրերին, Հուդա Գալիլիացին հայտնվեց և շատերին իր կողմը գրավեց. նա էլ կորավ, և բոլորը, որ հնազանդվել էին նրան, ցիրուցան եղան: ³⁸Եվ հիմա ես ձեզ ասում եմ. «Այդ մարդկանցից հեռո՛ւ մնացեք և բա՛ց թողեք նրանց, քանի որ, եթե այս խորհուրդը կամ գործը մարդկանցից է, ոչնչի չի հանգեցնի, ³⁹իսկ եթե Աստծուց է, չեք կարող այն քանդել, չլինի թե հանկարծ Աստծո ղեմ մարտնչողների դիրքում գտնվեք»:

5:33

NASB	«խիստ զայրացան»
NKJV	«կատաղեցին»
NRSV	«բարկացան»
TEV	«այնքան կատաղեցին»
NJB	«սա նրանց այնքան կատաղեցրեց»

Այս տերմինը տառացի նշանակում է «սողոցով կտրել» կամ «ատամները կրճատացնել».: Այս նույն տերմինը միևնույն տեսքով նաև կիրառվում է 7:54-ում, որտեղ ավելացված «սրտերում զայրանալ» արտահայտությունը ցույց է տալիս լիարժեք փոխաբերական նշանակությունը (տես նաև Ղուկ.2:35): Այս հզոր տերմինը (այսինքն՝ *diapros*) 2:37-ի նմանատիպ իմաստն ունի:

■ **«մտածում էին նրանց սպանել»** Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ (դեպոնենտ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակ է, որն ակնարկում է, որ՝ (1) նրանք այդ պահից սկսած փորձում էին նրանց սպանել կամ (2) սա վաղուց ունեցած ծրագիր կամ ցանկություն էր: Գործքից վաղ եկեղեցու անման մասին մեր ունեցած գիտելիքներից լավագույն տարբերակը #1 է: Ուշադրություն դարձրեք, որ այս մարդիկ Սաղուկեցիներ էին, որ արտահայտեցին իրենց բարկությունն ու սպանելու մտադրությունը: Պարզապես հնարավոր է, որ Փարիսեցիների (նաև Գամաղիելի) համար վաղ եկեղեցին հանդիսանում էր որպես լավ հարմար առիթ, որով կարելի էր թուլացնել Սաղուկեցիների կողմից ընդհանուր առմամբ հարությունը մերժելու դիրքորոշումը: Փարիսեցիները չէին կամենում հաստատել Հիսուսի հարությունը, բայց ուզում էին հաստատել հարության հասկացությունը, որին հաջորդում էր ապագայի կյանքն Աստծո հետ:

Աստվածաշնչի ժամանակակից ընթերցողների համար զարմանալի է, որ կրոնավոր առաջնորդները կարող էին սպանություն ծրագրել: Հիշեք, որ սրանք Սաղուկեցիներ էին, որոնք նվիրված էին Մովսեսի գրածներին, որը պատվիրում էր, որ հայիոյողները պետք է քարկոծվեն մինչև մահ: Այս առաջնորդները հավատում էին, որ Աստծո գործն էին անում և վարվում էին Նրա խոսքի համաձայն (Ղևտ.24:10-16):

5:34 «Փարիսեցիներ» Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման՝

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐ

- I. Այս տերմինն ունի հետևյալ հնարավոր ծագումներից որևէ մեկը՝
 - Ա. «Առանձին լինել» - Այս խումբը ձևավորվել է Մակարայեցիների ժամանակաշրջանում: (Սա ամենալայն տարածում ունեցող տեսակետն է):
 - Բ. «Բաժանել» - Սա երբայերեն միևնույն արմատի մեկ այլ նշանակությունն է: Ոմանք ասում են, որ դա նշանակում էր մեկնաբան՝ բացատրող (տես՝ 2 Տիմ.2:15):
 - Գ. «Պարսիկ» - Սա արամերեն միևնույն արմատի մեկ այլ նշանակությունն է: Փարիսեցիների որոշ վարդապետություններ շատ ընդհանրություններ ունեն պարսկական Չրադաշտության դուալիզմի հետ:
- II. Նրանք ձևավորվեցին Մակարայեցիների Դարաշրջանում՝ *Hasidim* (կրոնավորներ) կոչվող մարդկանցից: Մի քանի տարբեր խմբեր, ինչպես Էսսենները, դուրս եկան հակահելլենական շարժումից՝ Անտիոքոս IV Եպիֆանեսի ժամանակ: Փարիսեցիների մասին առաջին անգամ նշվում է Ջոզեֆուսի *Հրեաների Հնությունները* 8.5.1-3 գրքում:
- III. Նրանց հիմնական վարդապետությունները.
 - Ա. Հավատում են զալիք Մեսիային, որը միջաստվածաշնչյան հայտնության գրականության ազդեցությամբ է՝ ինչպես I Ենովքի գիրքը:
 - Բ. Աստված գործում է մեր ամենօրյա կյանքում: Սա Սադուկեցիների վարդապետության ուղղակի հակառակն էր: Ծատ փարիսեցիական վարդապետություններ հանդիսանում են Սադուկեցիների վարդապետությունների հակադրությունը:
 - Գ. Երկրավոր կյանքի հիման վրա ֆիզիկապես կողմնորոշված հանդերձյալ կյանք, որն ընդգրկում է վարձք և պատիժ (տես՝ Դան. 12:2):
 - Դ. ՀԿ-ի իշխանությունը և Բանավոր Ավանդույթները (Talmud): Նրանք գիտակցաբար հնազանդվում էին ՀԿ-ի Աստծո պատվիրաններին, քանի որ դրանք մեկնաբանվում և կիրառվում էին դպրոցների և ռաբբիական ուսուցիչների կողմից (Shammai – պահպանողական, և Hillel -ազատական): Ռաբբիական մեկնաբանությունները հիմնված են երկու տարբեր փիլիսոփայությունների պատկանող ռաբբիների միջև երկխոսությունների վրա, մեկը՝ պահպանողական, մյուսը՝ ազատական (լիբերալ): Այս բանավոր քննարկումները Մուրբ Գրքի խոսքերի նշանակությունների շուրջ վերջին հաշվով գրի են առնում երկու տեսքով՝ Բաբելոնյան Թալմուդի և անավարտ Պաղեստինյան Թալմուդի: Նրանք հավատում էին, որ Մովսեսը ստացել էր այս բանավոր մեկնաբանությունները Սինա լեռան վրա: Այս քննարկումների պատմական սկիզբը դրվել է Եզրասի և «Մեծ Ժողովարանի» մարդկանց կողմից (հետագայում Սինեդրոն կոչվող):
 - Ե. Խիստ ձևավորված հրեշտակաբանությունը: Սա ներառում էր բարի և չար հոգևոր էակներին: Սա ձևավորվեց պարսկական դուալիզմից և միջաստվածաշնչյան գրականությունից:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳԱՄԱԴԻԵԼ

- I. Անունը
 - Ա. Անունը նշանակում է «Աստված է իմ վարձատրողը»
 - Բ. Նա հայտնի է որպես «երեց» կամ Գամադիել I, որպեսզի տարբերվի իր հետագա հարազատներից. նաև շատ ակտիվ էր հրեա առաջնորդական կազմում:
- II. Անձը՝
 - Ա. Ավանդույթն ասում է, որ նա Հիլելի թոռն էր:
 - Բ. Այլ ավանդույթներ ասում են, որ նա կապեր ուներ Հերովդեսի արքայական ընտանիքի հետ (այսինքն՝ Ագրիպաս I):
 - Գ. Ավանդույթն ասում է, որ նա Սինեդրոնի նախագահն էր, սակայն հնարավոր է դա վերաբերում է Գամադիել II-ին:
 - Դ. Նա յոթ ամենահարգված ռաբբիների շարքում էր, որոնց տրվել էր Ռաբբան տիտղոսը:
 - Ե. Նա մահացել է մ.թ.70-ից առաջ:
- III. Նրա աստվածաբանությունը՝
 - Ա. Նա շատ հարգված ռաբբի էր:
 - Բ. Նա հայտնի էր Սփյուռքում ցրված Հրեաների հանդեպ իր հոգատարությամբ և վերահսկելու կարողությամբ:

- Գ. Նա նաև հայտնի էր սոցիալապես մեկուսացված մարդկանց համար իր հոգատարությամբ (նրա «Takkonot»-ը սկսվում էր «մարդկության բարօրության համար» խոսքերով), այսինքն՝
1. որբերի
 2. որբևայրիների
 3. կանանց
- Դ. Նա հանդիսանում էր Երուսաղեմում Պողոս Առաքյալի ռաբբի ուսուցիչը (Գործք 22:3):
- Ե. Գործք 5:33-39-ում նա խոսում է կշռադատող իմաստությանը, թե ինչպես վարվել Պաղեստինում գտնվող առաջին եկեղեցու հետ:
2. Այս ռաբբիի մասին այնքան մեծ կարծիք ունեին, որ նրա մահվան առիթով ասել են. «Երբ Ռաբբան Գամադիել երեցը մահացավ, Թորայի փառքը դադարեց և մաքրությունն ու սրբությունը (բառացիորեն՝ «առանձնացումը») անհետացավ (Մոյթ.9:15). վերցված է Հուդայիկա Հանրագիտարանից, հատ.7, էջ՝ 296 / *Encyclopedia Judaica*/:
- Է. Պետք է նշել, որ Գամադիելի դրդապատճառը այս դեպքում անհայտ է: Հնարավոր է նա պաշտպանում էր Փարիսեցիների իմաստությունը Սադուկեցիների ոգևորության դեմ: Այս երկու հզոր հրեական աղանդները ամեն հնարավոր առիթի դեպքում փորձում էին իրար շահագործել:

5:36-37 «Թեոդասը... Հուդա Գալիլիացին» Չոզեֆուսը նշում է այս նույն երկու անունները (տես՝ Հնություններ 20.5.1): Սակայն նա թվարկում է այս անունները հակառակ հերթականությամբ: Հետագայում պատմական տեղեկությունների հիման վրա տեսնում ենք, որ այս նույն անունով երկու մարդիկ կային, որոնք հրեա Նախանձահույզներ էին ի դեմս Հռոմի: Հետևաբար, թե՛ ՆԿ-ը և թե՛ Չոզեֆուսը կարող են ճիշտ լինել: Գամադիելի կողմից նշված անձը ապստամբել է մ.թ.6 թ.-ին, մինչդեռ Չոզեֆուսի կողմից նշվածը՝ մ.թ. 44թ-ին:

5:37 «մարդահամարի օրերին» Չոզեֆուսը (տես՝ Հնություններ, 18.1.1; Պատերազմներ 2.8.1) պատմում է, որ Ավգուստինոսը հրամայում է, որ հրեաներից հարկ պետք է գանձվի, Արքեդայոսի գահընկեց լինելուց անմիջապես հետո և Կյուրենետոսի Սիրիայում պաշտոնադրվելուց հետո (այսինքն՝ մոտ մ.թ. 6-7 թթ.): Այսպիսի մարդահամարներ հատուկ հարկերի բարձրացման համար տեղի էին ունենում ամեն տասնչորս տարին մեկ, սակայն տարիներ էին տևում մինչև ավարտվում էին:

■ «Հուդա Գալիլիացին» Չոզեֆուսի կողմից այս մարդը մի քանի անգամ նշվում է (տես՝ Հնություններ 18.1.1-6; 20.5.2 նաև Պատերազմներ 2.8.1; 2.17.8-9): Նրա ապստամբությունը տեղի ունեցավ մ.թ. 6 թ-ին կամ 7թ-ին: Նա էր հանդիսանում Նախանձահույզների /ղավաճանների/ շարժման հիմնադիրը: Նախանձահույզները (Չոզեֆուսը նրանց կոչում է «չորրորդ փիլիսոփայություն») և Միսարիները (այսինքն՝ Ասասիները) հնարավոր է, որ միևնույն քաղաքական շարժումն էին:

5:38 «Այդ մարդկանցից հեռո՛ւ մնացեք և բա՛ց թողեք նրանց» Ինչպիսի՛ անակնկալ առաջարկ: Այս արտահայտությունը ունի երկու ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ՝

1. *aphistēmi*, առանձնացնել, մի կողմ դնել
2. *aphiēmi*, հեռացնել, բաց թողնել

■ «եթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն:

5:39 «եթե» Սա ԱՈԱԶԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը սովորաբար արտահայտում է ճշմարտության հաստատում, սակայն այստեղ այն չի կարող ճշմարտություն լինել: Սա ցույց է տալիս այս քերականական ձևի գրական կիրառությունը:

■ «չլինի թե հանկարծ Աստծո դեմ մարտնչողների դիրքում գանվեք» Պետք է հիշել, որ կրոնական այս առաջնորդները մտածում էին, որ հանուն Աստծո են անում ամեն ինչ: Հենց այն փաստը, որ Գամադիելը խոսում է, որ հնարավոր է իրենք իրականում սխալվում են, ապշեցնող հայտարարություն է (տես՝ 11:7):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 5:40-42

⁴⁰Եվ նրանք հավանություն տվին նրան, ու առաքյալներին կանչելով ծեծեցին և պատվիրելով, որ այլևս Հիսուսի անունով չխոսեն, ազատ արձակեցին նրանց: ⁴¹Նրանք էլ

ատյանից հեռացան, ուրախանալով, որ արժանի համարվեցին Նրա անվան համար անարգանք կրելու: ⁴²Եվ ամեն օր տաճարում և տներում չէին դադարում ուսուցանել և Հիսուս Քրիստոսին քարոզել:

5:40 «նրանք ընդունեցին նրա խորհուրդը»/հայ.՝ «նրանք հավանություն տվին նրան»/ Այս արտահայտությունը որոշ թարգմանություններում (տես՝ NRSV) ներառված է հ. 39-ում և ուրիշ թարգմանություններում (տես՝ NASB, NKJV) հ. 40-ում: TEV և NJB թարգմանությունները այս խոսքերը արձանագրում են հ. 39-ում, սակայն սկսում են նոր պարբերությունից:

■ **«ծեծեցին» /մտրակեցին/** Սա նույն հռոմեական մտրակումը՝ խարազանումն էր (*mastix*, տես՝ Գործք22:24-25), որը Հիսուսը կրեց: Սա վերաբերում է հրեական մտրակներով հարվածներին (տես՝ 2 Օր.25:3; այսինքն՝ *derō*, Ղուկ.12:47-48; 20:10-11; 22:63): Դա շատ ցավոտ, սակայն կյանքին վտանգ չսպառնող պատիժ էր:

Մեկնաբանության խնդիրն այստեղ այն է, որ այս երկու հունարեն տերմինները հաճախ մեկը մյուսին փոխարինելով են կիրառվում: 2 Օրինաց 25:3-ի Սեպտուագինտան նշում է *mastix*, սակայն այն վերաբերում է հրեական պատժին: Ղուկասը պարբերաբար կիրառում է *derō* տերմինը՝ հրեական ժողովարանի կողմից պատժելու՝ ծեծելու համար (տառացի՝ «կենդանուն մաշկազերծել»):

■ **«պատվիրելով, որ Հիսուսի անունով չխոսեն»** Այս նույն Ատյանը՝ Խորհուրդը, նույն բանը նախկինում պատվիրել էր (տես՝ 4:17, 21): Այս անգամ նրանք ծեծեցին առաքյալներին և նորից զգուշացրեցին:

5:41 Հիսուսը կանխասել էր այսպիսի վերաբերմունքի մասին (տես՝ Մատթ.10:16-23; Մարկ.13:9-13; Ղուկ. 12:1-12; 21:10-19; Հովհ.15:18-27; 16:24):

■ **«ուրախանալով, որ արժանի համարվեցին Նրա անվան համար անարգանք կրելու»** Այսօր սա զարմանալի է թվում մեզ, քանի որ ապրում ենք մի այնպիսի հասարակության մեջ, որտեղ ֆիզիկական հալածանքը շատ հազվադեպ է, սակայն դարեր շարունակ դա այդպես չի եղել հավատացյալների մեծամասնության համար:

Հիսուսը պարզ ասաց, որ Իր հետևորդները չարչարվելու են: Իսնդրում եմ կարդացեք՝ Մատթ.5:10-12; Հովհ.15:18-21; 16:1-2; 17:14; Գործք 14:22; Հռոմ.5:3-4; 8:17; 2 Կորնթ.4:16-18; Փիլ.1:29; 1 Թեսաղ.3:3; 2 Տիմ.3:12; Հակ.1:2-4: Նաև ուշադրություն դարձրեք, թե 1 Պետրոսի թղթում ինչպես պետք է Հիսուսի չարչարանքները (տես՝ 1:11; 2:21,23; 3:18; 4:1,13; 5:1) ուղեկցեն Իր հետևորդներին (տես՝ 1:6-7; 2:19; 3:13-17; 4:1,12-19; 5:9-10):

5:42 «ամեն օր տաճարում» Հիսուսի այս առաջին վկաները հրաժարվում էին լուռ մնալ, նույնիսկ հենց հուդայականության կենտրոնում՝ Երուսաղեմի Տաճարում:

■ **«տներում» /անգլ.՝ տնից տուն/** Վաղ եկեղեցու ժողովները գումարվում էին քաղաքով մեկ սփռված տարբեր տներում (տես՝ 2:46): Դեռևս գոյություն չունեին եկեղեցաշենքեր դրանից մինչև իսկ հարյուր տարի անց:

■
NASB, NKJV «Քրիստոսը»
NRSV, TEV, REB «Մեսիան»

Հրեական միջավայրում «Մեսիա» տիտղոսը (տես՝ Հատուկ Թեմա 2:31) ավելի հարմար է (տես՝ 2:31; 3:18; 5:42; 8:5; 9:22), ինչպես Մատթ.16:16-ում Պետրոսն էր կիրառում: Երբ Պողոսը քարոզում էր հրեաներին, նա կիրառում էր այս բառը մատնանշելով խոստացյալ Օծյալին (տես՝ 17:3; 18:5, 28):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Առաքյալները այդքան երկար մնացին հուդայականության միջավայրում:
2. Թվարկե՛ք երրորդ գլխում կիրառվող Հիսուսի անունները և դրանց նշանակությունները:
3. Որո՞նք են այն ամենաքիչ երկու պահանջները, որոնք անհրաժեշտ են փրկության համար:
4. Ինչո՞ւ է ՆԿ-ում այսքան շատ մեջբերվում Մովսեսից:
5. Ո՞րն է Աբրահամի հետ կապած ուխտի կարևորությունը ՆԿ-ի եկեղեցու համար:
6. Ինչո՞ւ էին Պետրոսն ու Հովհաննեսը ձերբակալվել:
7. Համառոտագրե՛ք Պետրոսի երրորդ քարոզը:
8. Ի՞նչ կարևոր բան կա 4:24-31 խոսքերի աղոթքի մեջ:
9. Արդյո՞ք ճշմարտապես ՆԿ-ին պատկանել նշանակում է լինել կոմունիստ (տես՝ 4:32):
10. Թվարկե՛ք այն պատճառները, թե ինչու է Ղուկասը ընդգրկել Անանիայի և Սափիրայի դեպքը:
11. Արդյո՞ք Անանիան գիտակցում էր, որ լցվել էր Սատանայով: Նա գիտակցո՞ւմ էր, որ ստում էր Աստծուն:
12. Ինչո՞ւ է թվում, թե Աստված այդքան դաժան է:
13. Ի՞նչ կասեք մեր օրերում հրաշքների (հատկապես բժշկության) վերաբերյալ:
14. Ինչո՞ւ էին Սաղուկեցիները այդքան կատաղած:
15. Ինչո՞ւ հրեշտակը ազատեց Առաքյալներին բանտից:
16. Համառոտագրե՛ք Պետրոսի չորրորդ քարոզը: Թվարկե՛ք այն ընդհանուր կետերը, որոնք արձանագրված են Գործքում նրա մյուս քարոզների մեջ:
17. Ո՞վ էր Գամաղիելը:
18. Ինչո՞ւ Զրիստոնյաները պետք է ուրախանան չարչարանքների ժամանակ:

ԳՈՐԾՔ 6

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Յոթի նշանակումը	Ընտրված յոթ ծառայողները	Յոթի ընտրությունը	Յոթ օգնականները	Յոթի պաշտոնը
6:1-6	6:1-7	6:1-7	6:1-4	6:1-6
6:7	6:7	6:7	6:5-6 6:7	6:7
Ստեփանոսի ձերբակալությունը	Ստեփանոսը մեղադրվում է հայհոյության մեջ	Ստեփանոսի քարոզը և նահատակությունը (6:8-7:2ա)	Ստեփանոսի ձերբակալությունը	Ստեփանոսի ձերբակալությունը
6:8-15	6:8-15	6:8-7ա	6:8-15	6:8-15

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Գլուխ 6 և 7 հանդիսանում են հեթանոսների մեջ առաքելության սկիզբը քննարկելու Ղուկասի գրական և պատմական կերպը՝ գրելաոճը:
- Բ. Այս ընթացքում Երուսաղեմում գտնվող եկեղեցին արագ աճում էր (տես՝ 6:1):
- Գ. Եկեղեցին կազմված էր Պաղեստինի արամերեն խոսող հրեաներից և Սփյուռքի հունախոս հրեաներից:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 6:1-6

¹Այն օրերին, երբ աշակերտները շատացան, հելլենացիների կողմից դժգոհություն եղավ երբայեցիների դեմ, որովհետև, ամենօրյա մատակարարությունների ժամանակ, իրենց որբայրիներն անտեսվում էին: ²Այս տասներկուսը կանչեցին աշակերտների բազմությանն ու ասացին. «Մեզ վայել չէ Աստծո Խոսքը թողած՝ սեղաններն սպասարկել: ³Ուստի, եղբայրներ, ձեզանից ընտրեցե՛ք բարի անուն ունեցող՝ Սուրբ Հոգով և իմաստությամբ լեցուն յոթ հոգու, որոնց կարող ենք այս գործին նշանակել, ⁴իսկ մենք շարունակենք մեզ աղոթքի ու Խոսքի քարոզչությանը նվիրել»: ⁵Եվ այս խոսքն ամբողջ բազմությանը հաճելի թվաց, ու ընտրեցին Ստեփանոսին՝ հավատով ու Սուրբ Հոգով լեցուն մի մարդու, Փիլիպպոսին, Պրոքորոսին, Նիկանովրային, Տիմոթեոսին, Պարմենային և Նիկողայոսին, որ անտիոքի մի նորադարձ էր: ⁶Սրանց կանգնեցրին առաքյալների առաջ. նրանք էլ աղոթելով ձեռք դրին նրանց վրա:

6:1 «աշակերտներ» Տառացի սա նշանակում է «ուսանողներ» *manthanō* ԲԱՅԻՑ: Կարևոր է հասկանալ, որ ՆԿ-ը շեշտադրում է «աշակերտ դառնալը» (տես՝ Մատթ.28:19; Գործք 14:21), և ոչ թե միայն որոշում կայացնելը: Հավատացյալների այսպիսի նկարագրությունը բնորոշ է Ավետարաններին և Գործքին: Թղթերում Հիսուսի հետևորդներին նկարագրելու համար կիրառվում են «եղբայրներ» կամ «սուրբեր» տերմինները:

■ **«շատացան» /թվով ավելանում էին/** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է: Աճը միշտ լարվածության պատճառ է հանդիսանում:

■ **«դժգոհություն»** Այս տերմինը նշանակում է «ցածր ձայնով առանձին խոսել» (այսինքն՝ անհատների միջև առանձին խոսակցություններ, Սուլթն, *Վերլուծական Լեքսիկոն /բառասպաշար/* էջ՝ 81. Moulton, *Analytical Lexicon*): Այն հանդիպում ենք մի քանի անգամ Ելից գրքի LXX-ում, որտեղ նկարագրվում է Անապատում Թափառելու Ժամանակաշրջանը (տես՝ Ելից 16:7,8; 17:3; նաև Թվոց 11:1; 14:27): Այս նույն բառը կարելի է գտնել Ղուկաս 5:30-ում և մի քանի անգամ Հովհաննեսի ավետարանում (տես՝ 6:41,43,61; 7:12,32):

■ **«հելլենացիների /հրեա/ կողմից... /տեղացի/ երբայեցիների դեմ»** Սա վերաբերում է հավատացյալ հրեաներին, որոնք Պաղեստինից էին և հիմնականում խոսում էին արամերեն և որոնք մեծացել էին Սփյուռքում և հիմնականում խոսում էին Կոյնե հունարեն լեզվով: Այս իրավիճակում անշուշտ կային մշակութային և ռասայական նրբություններ:

■ **«ամենօրյա /աննդի/ մատակարարություններ»** Վաղ եկեղեցին հետևում էր Ժողովարանի՝ Սինագոգի օրինակին: Ամեն շաբաթ գումարներ (այսինքն՝ ողորմություններ) էին հավաքվում աղքատներին կերակրելու համար: Այս գումարները օգտագործվում էին սնունդ գնելու համար, որը բաժանվում էր ամեն շաբաթ Սինագոգի կողմից և ամեն օր՝ առաջին եկեղեցու կողմից: Տե՛ս Հատուկ Թեմա. Ողորմություն տալ, 3:2:

Պատմությունը կարծես թե ցույց է տալիս, որ շատ հրեա ընտանիքներ, որոնք ապրում և աշխատում էին սփյուռքում, վերադառնում էին Պաղեստին խոր ծերության տարիներին, որպեսզի իրենց մահն ու թաղումը տեղի ունենար Խոստացյալ՝ Ավետյաց Երկրում: Հետևաբար Պաղեստինում շատ որբայրիներ կային, հատկապես Երուսաղեմի շրջակայքում:

Հուդայականությունը աղքատների, օտարականների և որբայրիների համար ուներ պաշտոնական (այսինքն՝ Մովսիսական Ուխտի համաձայն) հոգածություն (տես՝ Ելից 22:21-24; 2 Օր.10:18; 24:17): Ղուկասի գրքերը ցույց են տալիս, որ Հիսուսը նույնպես հոգ էր տանում որբայրիների համար (տես՝ Ղուկ.7:11-15; 18:7-8; 21:1-4): Ուստի բնական է, որ վաղ եկեղեցին օրինակ վերցնելով Սինագոգի սոցիալական ծառայություններից և Հիսուսի ուսմունքներից, մեծ հոգածություն պետք է ցուցաբերեր եկեղեցում գտնվող որբայրիների հանդեպ:

6:2 «Տասներկուսը» Գործքում սա հանդիսանում է Առաքյալների հավաքական անունը: Այս մարդիկ հատկապես Հիսուսի կողմից Իր երկրավոր կյանքի ընթացքում՝ դեռևս Գալիլիայից սկսած, ընտրյալ ուղեկիցներ՝ գործընկերներ էին:

■ **«կանչեցին աշակերտների բազմությանը»** Ստույգ թե ինչ է նշանակում այս տեղը, հայտնի չէ այն իմաստով, որ եկեղեցին բաղկացած էր մի քանի հազար հավատացյալներից այդ պահին, այնպես որ ոչ

մի տուն կամ աշխատավայր այնքան մեծ չէր կարող լինել այսքան շատ մարդկանց մի վայրում տեղավորելու համար: Հնարավոր է սա տեղի է ունեցել հենց Տաճարում՝ հավանաբար Սողոմոնի Սրահում (տես՝ 3:11; 5:12):

Սա հետագայում համայնքային քաղաքականություն կոչվող առաջին օրինակներից մեկն է (տես՝ հհ. 3,5; 15:22): Սա աստվածաշնչյան երեք կերպերից մեկն է, որ ժամանակակից եկեղեցին ինքը կազմակերպում է.

1. եպիսկոպոսական (այսինքն՝ մի գլխավոր առաջնորդ)
2. երիցական (այսինքն՝ մի խումբ առաջնորդներ)
3. համայնքային (այսինքն՝ հավատացյալների ամբողջ մարմինը)

Գործք 15-ում այս բոլորն էլ առկա են:

■ **«Մեզ վայել չէ Աստծո Խոսքը թողած՝ սեղաններն սպասարկել»** Սա ծառայության վերաբերյալ նսեմացուցիչ խոսք չէ, այլ Աստծո ժողովրդի մեջ հովվական պարտականությունների բաժանման գիտակցված անհրաժեշտության սկիզբն է: Սրանք պաշտոններ չէին այլ լիազորված ֆունկցիաներ՝ գործեր: Ավետարանի քարոզչությունը պետք է լինի առաջնահերթ մյուս անհրաժեշտ համարվող ծառայությունների համեմատ: Առաքյալները միանշանակ կանչված և որակավորված էին իրենց գործի համար: Ոչինչ չպետք է հետ պահեր իրենց այդ գործից: Սա «կամ/կամ» իրավիճակ չէր, այլ «երկուսն էլ»:

«Ծառայել» բառը հունարենում տարածված *diaconia* տերմինն է ծառայության համար: Դժբախտաբար շատ ժամանակակից մեկնաբաններ, որոնք փնտրում են հետագայում սարկավագի պաշտոնի համար ապացույց հանդիսացող խոսքեր (տես՝ Փիլ.1:1; 1 Տիմ.3:8-10, 12-13), օգտագործել են այս տեքստը, որպեսզի սահմանեն այդ ծառայության գործը: Սակայն այս մարդիկ սարկավագներ չեն. նրանք ոչ պրոֆեսիոնալ ծառայողներ կամ քարոզիչներ են: Միայն էկզեգետիկայի միջոցով կարելի է Գործք 6-ում գտնել սարկավագների:

Ինձ հետաքրքիր է, թե ինչպես է այս առաջին եկեղեցին ծառայություն անց կացրել առանց շինության.

1. Երբ նրանք բոլորը միասին հավաքվում էին, պետք է որ դա անեին Տաճարում:
2. Շաբաթ օրերին անշուշտ նրանք հանդիպում էին իրենց տեղի ժողովարաններում և Կիրակի օրերին հավանաբար տնային եկեղեցիներում:
3. Շաբաթվա ընթացքում (ամեն օր) Առաքյալները մի հավատացյալի տնից տեղավորվում էին մյուսի տունը (տես՝ 2:46):

6:3

NASB, NRSV	«ընտրեցեք»
NKJV	«գտեք»
TEV	«ընտրեք»
NJB	«պետք է ընտրեք»

Սա ԱՈՐԻՍՏ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Ինչ-որ բան պետք է արվեր միաբանությունն ու հոգու մեջ մեկ լինելը վերականգնելու համար: Այս հովվական հարցը պոտենցիալ կերպով կարող էր ազդել Ավետարանի տարածմանը: Եկեղեցին պետք է կազմակերպեր ծառայությունները: Յուրաքանչյուր հավատացյալ կանչված, պարզև ունեցող՝ շնորհալի, երկարաժամկետ ծառայող է (տես՝ Եփես.4:11-16):

■ **«յոթ հոգի/տղամարդ»** Ինչ-որ պատճառ չկար հենց այս թիվն ընտրելու համար, բացառությամբ այն բանի, որ այս թիվը ՀԿ-ում կապված արարչագործության յոթ օրերի հետ, կատարելության խորհուրդն ուներ (տես՝ Ծննդոց 1; Մաղմոս 104): ՀԿ-ում կա այս նույն երկրորդ աստիճանի առաջնորդական կազմ ձևավորելու նախադեպը հանդիսացող ընթացակարգ (տես՝ ԹՎոց 18): Տե՛ս Հատուկ Թեմա. Սուրբ Գրքում առկա սիմվոլիկ թվերը, 1:3:

■	
NASB, NJB	«բարի համբավ ունեցող»
NKJV	«բարի համբավ ունեցող»
NRSV	«բարի վարք ունեցող»
TEV	«որոնք հայտնի են իրենց...»

Այս անգլերեն թարգմանությունների տարբերությունները արտացոլում են այս տերմինի երկու տարբեր կիրառությունները:

1. «վկա լինել ինչ-որ բանի» կամ տեղեկություն ապահովել ինչ-որ բանի մասին (տես՝ TEV, NIV)

2. »ինչ-որ մեկի մասին լավ խոսել» (տես՝ Ղուկ.4:22):

■ **«Սուրբ Հոգով լեցուն»** Գործքում Սուրբ Հոգու լեցունության մասին մի քանի անգամ նշվում է, սովորաբար Տասներկուսի և նրանց քարոզչության, ուսմունքի, ավետարանչության ծառայությունների հետ կապված: Այն մատնանշում է ծառայության գործությունը: Հոգու ներկայությունը մարդու կյանքում ակնհայտ է: Նրանց վարքը, գործողությունները և ազդեցիկ լինելը վկայում են Սուրբ Հոգու լեցունության մասին: Որքևայրիները կարևոր են, սակայն ավետարանի վկայությունը առաջնահերթ է (տես՝ հ.4): Տե՛ս «Լեցունություն» բառի համար ամբողջական գրառումները 5:17-ում:

■ **«և իմաստության»** ՀԿ-ում կա երկու տեսակ իմաստություն.

1. գիտության հասկացողություն (ակադեմիական)
2. իմաստուն ապրելակերպ (գործնական)

Այս յոթ մարդիկ երկուսն էլ ունեին:

■ **«որոնց կարող ենք այս գործին նշանակել»** Նրանք ունեին գործնական հանձնարարություն: Այս սուրբգրային հատվածը չի կարող կիրառվել հիմնավորելու, որ սարկավագները զբաղվում են եկեղեցու գործարարությամբ՝ բիզնես հարցերով (KJV, «այս բիզնեսը՝ գործը»): «Գործ» բառը (*chraomai*) նշանակում է «կարիք» և ոչ թե «պաշտոն» (Alfred Marshall, *RSV Interlinear*, p. 468):

■ **6:4 «մեզ նվիրել»** Հունարեն այս տերմինը կիրառվում է մի քանի նշանակությամբ.

1. ինչ-որ մեկի հետ մտերմորեն ընկերակցել, Գործք 8:13
2. անձնապես ծառայել ինչ-որ մեկին, Գործք 10:7
3. ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի հաստատ՝ հարատևորեն նվիրվել
 - ա. առաջին աշակերտները նվիրված էին իրար և աղոթքի, Գործք 1:14
 - բ. առաջին աշակերտները նվիրված էին Առաքյալների ուսմունքին, Գործք 2:42
 - գ. առաջին աշակերտները նվիրված էին մեկը մյուսին, Գործք 2:46
 - դ. Առաքյալները նվիրված էին աղոթքի և Խոսքի ծառայությանը, Գործք 6:4 (Պողոսը կիրառում է այս նույն տերմինը, կոչ անելով հավատացյալներին աղոթքի մեջ հարատևելու՝ Հռոմ.12:12; Կող.4:2):

■ **«աղոթքի ու Խոսքի քարոզչությանը /ծառայությանը/»** Այս արտահայտությունը Հունարեն նախադասության մեջ առջևից է դրված (այսինքն՝ սկզբնամասում) հատուկ շեշտադրության համար: Արդո՞ք պարադոքսալ չէ այն փաստը, որ հենց այս «յոթ հոգիները» եղան առաջինները, որոնք ընկալեցին ավետարանի առաքելության համաշխարհային տեսիլքը, և ոչ թե Առաքյալները: Այս «յոթի» քարոզչությունը պատճառ հանդիսացավ հուդայականությունից անջատվելու, և ոչ թե Առաքյալների:

Ապշեցնող է այն փաստը, որ Առաքյալները չէին Մեծ Հանձնարարության նախաձեռնողները, այլ այս հունախոս հրեաները: Գործքը երբեք չի արձանագրում այս մարդկանց Առաքյալների կողմից հանձնարարված գործն անելիս, այլ փոխարենը նկարագրում է նրանց որպես ավետարանի քարոզիչներ: Նրանց որակավորումները կարծես թե ավելի էին համապատասխանում այս գործին, քան թե Երուսաղեմի եկեղեցուն անհրաժեշտ ադմինիստրատիվ և հովվական աշխատանքներին:

Խաղաղություն բերելու փոխարեն նրանց ծառայությունները հակառակություն և հավաճանքներ բերեցին:

6:5 «Ստեփանոս» Նրա անունը նշանակում է «հաղթողի պսակ»: Բոլոր «յոթ» հոգիները ունեին հունական անուններ, սակայն Սփյուռքի հրեաներից շատերը ունեին թե՛ հունարեն և թե՛ եբրայերեն անուններ: Պարզապես միայն նրանց անունները չէին նշանակում, որ բոլորն էլ հունախոս հրեաներ էին: Հնարավոր է երկու խմբերն էլ ներկա են եղել:

■ **«հավատքով լեցուն»** Հավատք տերմինը ծագել է ՀԿ-յան մի բառից (այսինքն՝ *emeth*), որը բնագրում նշանակում էր մի անձ, որի ոտքերը ամուր կյուլթի մեջ են: Այն սկսվեց փոխաբերաբար կիրառվել այն մարդկանց համար, ովքեր վստահելի են, հավատարիմ, հուսալի և ազնիվ: ՆԿ-ում այս տերմինը կիրառվում է Քրիստոսի միջոցով Աստծո խոստմանը հավատացողի արձագանքի համար: Մենք վստահում ենք Նրա վստահելիությանը. մենք հավատում ենք Նրա հավատարմությանը: Ստեփանոսը վստահեց Աստծո վստահելիությանը, հետևաբար նա բնութագրվում է Աստծո բնավորության այս գծով (այսինքն՝ հավատքով, հավատարմությամբ ի):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ում (728)

I. Բացման հայտարարություն

Հարկ եմ համարում ասել, որ այս աստվածաբանական տերմինի կիրառությունը, որը չափազանց կարևոր է ՆԿ-ի համար, այնքան էլ հստակ չի սահմանվում ՀԿ-ում: Անշուշտ այս բառը այնտեղ առկա է, սակայն դիտարկվում է բանալի հանդիսացող ընտրված հատվածներում և անձանց մոտ:

ՀԿ միաձուլում է՝

Ա. անհատն ու համայնքն իրար հետ

Բ. անձնական փորձառությունը և ուխտի հնազանդությունը իրար հետ

Հավատքը թե՛ անձնական փորձառություն է, և թե՛ ամենօրյա ապրելակերպ: Ավելի հեշտ է այն նկարագրել անձի մեջ, քան բառապաշարով (այսինքն՝ բառային սերտողությամբ): Այս անձնական ասպեկտը լավագույնս լուսաբանվում է՝

Ա. Աբրահամի և նրա սերնդի օրինակով

Բ. Դավթի և Իսրայելի օրինակով

Այս մարդիկ հանդիպեցին՝ վերապրեցին Աստծուն և նրանց կյանքերը մշտապես փոխվեցին (անկատար, սակայն հարատևող հավատքի կյանքեր): Փորձությունները ի հայտ բերեցին Աստծո հետ իրենց հավատքի վերապրումների տկարություններն ու առավելությունները, սակայն մտերմիկ, վստահելի փոխհարաբերությունը շարունակվեց ժամանակի ընթացքում: Այդ հավատքը փորձվեց և գտվեց, սակայն շարունակեց մնալ որպես նրանց նվիրումի և ապրելակերպի ապացույց:

II. Կիրառվող հիմնական արմատը

Ա. 728 (BDB 52)

1. ԲԱՅ

ա. *Qal* բխում է՝ աջակցել, սնուցել (այսինքն՝ 4 Թագ.10:1,5; Եսթ.2:7, աստվածաբանական կիրառությունից դուրս)

բ. *Niphal* բխում է՝ համոզվել կամ հաստատ իմանալ, հաստատել, հիմնավորել, հավատարիմ կամ վստահելի լինել՝

(1) մարդկանց՝ Եսայի 8:2; 53:1; Երեմ.40:14

(2) իրերին՝ Եսայի 22:23

(3) Աստծուն՝ 2 Օր.7:9; Եսայի 49:7; Երեմ.42:5

գ. *Hiphil* բխում է՝ հաստատ կանգնել, հավատալ, վստահել.

(1) Աբրահամը հավատաց Աստծուն՝ Ծննդ.15:6

(2) Եգիպտոսում Իսրայելացիները հավատացին՝ Ելից 4:31; 14:31 (բացասումը՝ 2 Օր.1:32)

(3) Իսրայելացիները հավատացին, որ ՅԱՀՎԵՆ Մովսեսի միջոցով խոսեց իրենց՝ Ել.19:9; Սաղմ.106:12,24

(4) Աքազը չվստահեց Աստծուն՝ Ես.7:9

(5) Ով որ հավատա նրան/դրան՝ Եսայի 28:16

(6) Հավատալ Աստծո վերաբերյալ ճշմարտություններին՝ Ես.43:10-12

2. ԳՈՅԱԿԱՆ (ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ) – հավատարմություն (այսինքն՝ 2 Օր.32:20; Ես.25:1; 26:2)

3. ՄԱԿԲԱՅ – ճշմարտապես, ճշմարիտ, համամիտ եմ, թող այդպես լինի (տես՝ 2 Օր.27:15-26; 3 Թագ.1:36; 1 Մնաց.16:36; Ես.65:16; Երեմ.11:5; 28:6): Սա եկեղեցական «ամեն» բառի կիրառությունն է ՀԿ-ում և ՆԿ-ում:

Բ. 728 (BDB 54, KB 68) ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆ՝ հաստատություն, հավատարմություն, ճշմարտություն

1. մարդկանց՝ Ես.10:20; 42:3; 48:1

2. Աստծուն՝ Ելից 34:6; Սաղմ.117:2; Ես.38:18,19; 61:8

3. Ճշմարտությանը՝ 2 Օր.32:4; 3 Թագ.22:16; Սաղմ.33:4; 98:3; 100:5; 119:30; Երեմ.9:5; Չար.8:16

Գ. 728 (BDB 53), հաստատություն, հարատևություն, նվիրվածություն

1. ձեռքերին՝ Ելից 17:12

2. ժամանակներին՝ Ես.33:6

3. մարդկանց՝ Երեմ.5:3; 7:28; 9:2

4. Աստծուն՝ Սաղմ.40:11; 88:12; 89:1,2,5,8; 119:138

III. Այս ՀԿ-յան հասկացության կիրառությունը Պողոսի կողմից՝

Ա. Պողոսը հիմնավորում է ՅԱՀՎԵԻ և ՀԿ-ի վերաբերյալ իր նոր հասկացությունը Դամասկոսի ճանապարհին Հիսուսի հետ ունեցած իր անձնական փորձառությանը (տես՝ Գործք 9; 22; 26):

Բ. Նա ՀԿ-ի երկու կարևոր հատվածներից, որոնք օգտագործում են յճ արմատը, գտավ հիմք իր այս նոր հասկացության համար.

1. Ծննդ.15:6 – Աստծո կողմից նախաձեռնված Աբրահամի անձնական փորձառությունը (Ծննդոց 12) պատճառ հանդիսացավ հավատքի հնազանդության կյանքի (Ծննդոց 12-22): Պողոսն այս մասին ակնարկում է Հռոմեացիների 4 և Գաղատացիների 3 գլուխներում:

2. Եսայի 28:16 – նրանք, ովքեր հավատացին դրան (այսինքն՝ Աստծո կողմից փորձված և հաստատված անկյունաքարը) երբեք չեն՝

ա. Հռոմ.9:33, «մնա ամոթով» կամ «հիասթափվի»

բ. Հռոմ.10:11, վերը նշվածի պես

3. Ամբ. 2:4 – ովքեր ճանաչում են հավատարիմ Աստծուն պետք է ապրեն հավատարմության կյանքով (տես՝ Երեմ.7:28): Պողոսն օգտագործում է այս տեքստը Հռոմ.1:17 և Գաղ.3:11-ում (նաև՝ Եբր.10:38):

IV. Այս ՀԿ-յան հասկացության կիրառումը Պետրոսի կողմից.

Ա. Պետրոսը համադրում է՝

1. Ես.8:14 – 1 Պետ.2:8 (գլորման վեճ քար)

2. Ես.28:16 – 1 Պետ.2:6 (անկյունաքար)

3. Սաղմ.118:22 – 1 Պետ.2:7 (անարգված քար)

Բ. Նա դիմում է յուրօրինակ լեզվի, որը նկարագրում է Իսրայելին՝ «ընտրյալ ժողովուրդ, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, Աստծո սեփական ժողովուրդ»

1. 1 Օր.10:15; Ես.43:21

2. Ես.61:6; 66:21

3. Ելից 19:6; 2 Օր.7:6

և հիմա այն կիրառում է եկեղեցու Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքի համար

V. Այս հասկացության կիրառությունը Հովհաննեսի կողմից.

Ա. ՆԿ-յան կիրառությունը

«Հավատացին» տերմինը հունարենի (*pisteuō*) տերմինից է, որը կարող է նաև թարգմանվել «հավատալ», «հավատք» կամ «վստահություն»: Օրինակ, ԳՈՅԱԿԱՆԸ Հովհաննեսի Ավետարանում չի հանդիպում, սակայն ԲԱՅԸ հաճախ է օգտագործվում: Հովհաննես 2:23-25-ում Հիսուս Նազովրեցու հանդեպ, որպես Մեսիայի, ամբոխի ցուցաբերած նվիրումի մեջ անկեղծության անորոշություն կա: «Հավատալ» տերմինը մակերեսորեն կիրառելու այլ օրինակներից են՝ Հովհ.8:31-59 և Գործք 8:13, 18-24: Իրական աստվածաշնչյան հավատքը ավելին է, քան ներքին արձագանքը: Դրան պետք է հետևի աշակերտության գործընթացը (տես՝ Մատթ.13:20-22,31-32):

Բ. ՆԱԽԴԻՐՆԵՐՈՎ կիրառությունը

1. *eis* նշանակում է /դեպի/ «մեջ»: Այս յուրօրինակ քերականական կառուցվածքը շեշտադրում է հավատացյալների հավատքը՝ վստահությունը, որ դնում են Հիսուսի մեջ: ա. Նրա անվան մեջ (Հովհ.1:12; 2:23; 3:18; 1 Հովհ.5:13)

բ. Նրա մեջ (Հովհ.2:11; 3:15,18; 4:39; 6:40; 7:5,31,39,48; 8:30; 9:36; 10:42; 11:45, 48; 12:37,42; Մատթ.18:6; Գործք 10:43; Փիլ.1:29; 1 Պետ.1:8)

գ. Իմ մեջ (Հովհ.6:35; 7:38; 11:25,26; 12:44,46; 14:1,12; 16:9; 17:20)

դ. Որդու մեջ (Հովհ.3:36; 9:35; 1 Հովհ.5:10)

ե. Հիսուսի մեջ (Հովհ.12:11; Գործք 19:4; Գաղ.2:16)

զ. Լույսի մեջ (Հովհ.12:36)

է. Աստծո մեջ (Հովհ.14:1)

2. *en* նշանակում է «մեջ», ինչպես Հովհ.3:15; Մարկ.1:15; Գործք 5:14

3. *epi* նշանակում է «մեջ» կամ «վրա» ինչպես Մատթ.27:42; Գործք 9:42; 11:17; 16:31; 22:19; Հռոմ.4:5, 24; 9:33; 10:11; 1 Տիմ.1:16; 1 Պետ.2:6

4. ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎՆ առանց ՆԱԽԴԻՐԻ, ինչպես Գաղ.3:6; Գործք 18:8; 27:25; 1 Հովհ.3:23; 5:10

5. *hoi*, որը նշանակում է «հավատալ որ» տալիս է այն բովանդակությունը, թե ինչին հավատալ՝

ա. Հիսուսը Աստծո Սուրբն է (Հովհ.6:69)

բ. Հիսուսը ԵՍ ԵՄն է (Հովհ.8:24)

գ. Հիսուսը Հոր մեջ է և Հայրը՝ Նրա մեջ (Հովհ.10:38)

- դ. Հիսուսը Մեսիան է (Հովհ.11:27; 20:31)
- ե. Հիսուսը Աստծո Որդին է (Հովհ.11:27; 20:31)
- զ. Հիսուսը ուղարկվել է Հոր կողմից (Հովհ.11:42; 17:8,21)
- է. Հիսուսը Հոր հետ մեկ է (Հովհ.14:10-11)
- ը. Հիսուսը Հորից եկավ (Հովհ.16:27,30)
- թ. Հիսուսը իրեն հավասարեցրեց Հոր ունեցած Ուխտի անվան հետ՝ «ԵՄ ԵՄ» (Հովհ.8:24; 13:19)
- ժ. Մենք նրա հետ ենք ապրելու (Հռոմ.6:8)
- ի. Հիսուսը մահացավ և հարություն առավ (1 Թեսաղ. 4:14)

VI. Եզրակացություն.

Ա. Աստվածաշնչյան հավատքը պատասխանն է աստվածային խոսքին՝ խոստմանը: Աստված է միշտ նախաձեռնողը (այսինքն՝ Հովհ.6:44,65), սակայն այս աստվածային կապի մի մասը մարդկանց կողմից պատասխանելու անհրաժեշտությունն է (այսինքն տե՛ս Հատուկ Թեմա. Ուխտ)՝

1. Ապաշխարությանը (տես Հատուկ Թեմա. Ապաշխարություն)
2. Հավատքով, վստահությանը (տես Հատուկ Թեմաները)
3. Հնազանդությանը
4. Հարատևությանը (տես Հատուկ Թեմա. Հարատևություն)

Բ. Աստվածաշնչյան հավատքը՝

1. անձնական փոխհարաբերություն է (ներքին հավատք)
2. աստվածաշնչյան ճշմարտության հաստատումն է (Աստծո հայտնության վրա ունեցած հավատք)
3. պատշաճ պատասխան՝ Խոսքի հնազանդությանը (ամենօրյա հավատք)

Աստվածաշնչյան հավատքը երկնքի տոմս չէ կամ էլ ապահովագրության միջոց: Այն անձնական փոխհարաբերություն է: Սա է արարչագործության և մարդկության Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված լինելու նպատակը (տես՝ Ծննդ.1:26-27): Իսնդիրը «մտերմությունն» է: Աստված ցանկանում է հաղորդակցություն, և ոչ թե ինչ-որ տեսակի աստվածաբանական մոտեցումներ: Բայց սուրբ Աստծո հետ հաղորդակցությունը պահանջում է, որ Աստծո զավակները ցուցաբերեն «ընտանեկան» վարք (այսինքն՝ սրբություն, տես՝ Դևտ.19:2; Մատթ.5:48; 1 Պետ.1:15-16): Անկումը (տես՝ Ծննդոց 3) ազդեց մեր պատշաճ արձագանքելու կարողության վրա: Հետևաբար, Աստված մեր կողմից գործեց (տես՝ Եզեկ.36:27-38), մեզ «նոր սիրտ» և «նոր հոգի» տալով, որը մեզ հնարավորություն է տալիս Նրա հետ հավատքի և ապաշխարության միջոցով հաղորդակցվել և հնազանդվել:

Բոլոր երեքն էլ կարևոր են: Բոլոր երեքն էլ պետք է պահպանվեն: Նպատակը Աստծուն ճանաչելն է (թե՛ հունարեն և թե՛ եբրայերեն իմաստով) և Նրա բնավորությունը մեր կյանքում արտացոլելը: Հավատքի նպատակը ինչ-որ մի օր երկինք հասնելը չէ, այլ ամեն օր Քրիստոսի նման լինելը:

Գ. Մարդու հավատարմությունը Աստծո հետ փոխհարաբերվելու հետևանք է (ՆԿ) և ոչ թե հիմք (ՀԿ). մարդկության հավատքը Նրա հավատարմությանը, մարդկության վստահությունը Նրա վստահելիությանը: Փրկության վերաբերյալ ՆԿ-ի կենտրոնական կարծիքն այն է, որ մարդիկ պետք է նախաձեռնող Աստծո՝ Քրիստոսի միջոցով ցուցաբերված շնորհքին և ողորմությանը սկզբից պատասխանեն և հարատևեն դրա մեջ: Նա է սիրել, Նա է ուղարկել, Նա է ապահովել, իսկ մենք պետք է պատասխանենք հավատքով և հավատարմությամբ (տես՝ Եփես.2:8-9 և 10):

Հավատարիմ Աստվածն ուզում է հավատարիմ ժողովուրդ, որպեսզի Իրեն հայտնի անհավատ աշխարհին և բերի նրանց Իր հանդեպ անձնական հավատքի:

■ **«Սուրբ Հոգով լեցուն»** Գոյություն ունեն շատ տարբեր արտահայտություններ, որոնք նկարագրում են Հոգու ծառայությունը հավատացյալներին.

1. Հոգու հետամուտ լինելը (տես՝ Հովհ.6:44, 65)
2. Հոգու մկրտությունը (տես՝ 1 Կորնթ.12:13)
3. Հոգու պտուղը (տես՝ Գաղ.5:22-23)
4. Հոգու պարզևները (տես՝ 1 Կորնթացիների 12)
5. Հոգու լեցունությունը (տես՝ Եփես.5:18)

Հոգով լցված լինել նշանակում է երկու բան՝ (1) որ այդ անձը փրկված է (տես՝ Հռոմ.8:9) և (2) որ այդ անձը առաջնորդվում է Հոգով (տես՝ Հռոմ.8:14): Կարծես թե անձի «լեցունությունը» կապված է տվյալ

անձի պարբերաբար Հոգով լցվելու հետ (ՆԵՐԿԱ ԿՐՎՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Եփես.5:18): «Լցված» բառի համար տես 5:17-ում ամբողջական գրառումները:

■ **«Փիլիպպոս»** ՆԿ-ում կան մի քանի Փիլիպպոսներ: Այս Փիլիպպոսը Յոթից մեկն էր: Նրա անունը նշանակում է «ձիեր սիրող»: Նրա ծառայության մասին արձանագրված է Գործք 8-ում: Նա կարևոր գործիք հանդիսացավ Սամարիայում արթնության համար և անձնապես վկայություն տվեց Եթովպիայի կառավարիչ պաշտոնյային: Գործք 21:8-ում նա անվանվում է «ավետարանիչ» և նրա դուստրերն էլ ակտիվ էին ծառայության մեջ (այսինքն՝ մարգարեուհիներ էին, տես՝ Գործք 21:9, տես՝ Հատուկ Թեմա. Աստվածաշնչի Կանայք, 2:17):

■ **«Պրոքորոն»** Այս անձի մասին շատ քիչ բան է հայտնի: *Միջազգային Ստանդարտ Աստվածաշնչի Հանրագիտարանում*, հատոր 4, Ջեյմս Օրր (*The International Standard Bible Encyclopedia*, James Orr) ասվում է, որ նա դարձավ Եփեսոսի հովիվը և նահատակվեց Անտիոքում (էջ՝ 2457):

■ **«Նիկանովրա»** Եկեղեցու պատմության մեջ այս անձնավորության մասին ոչինչ հայտնի չէ: Նրա անունը հունարեն է և նշանակում է «հաղթող»:

■ **«Տիմոկոս»** Եկեղեցու պատմության մեջ այս անձնավորության մասին ոչինչ հայտնի չէ: Նրա անունը հունարեն է և նշանակում է «պատվարժան»:

■ **«Պարմենա»** Սա *Parmenides* անվան հակիրճ տարբերակն է: Եկեղեցու ավանդույթն ասում է, որ նա նահատակվել է Փիլիպպոսի Տրայանի իշխանության օրոք (տես՝ *The International Standard Bible Encyclopedia*, հատոր՝ 4, էջ՝ 2248):

■ **«Նիկողայոսին, որ Անտիոքի մի նորադարձ էր»** Ավելի շատ տեղեկություն հնարավոր էր տալ այս մարդու մասին, քանի որ հնարավոր է հենց նրա քաղաքում էր գտնվում Դուկասի տունը: Հրեա նորադարձ լինելը պարունակում է երեք ծիսակարգ՝

1. անձը մկրտվում էր վկաների ներկայությամբ
2. եթե արական սեռի էր, ապա թվիստվում էր
3. եթե հնարավորություն ուներ, ապա տվյալ անձը Տաճարում գոհ էր մատուցում

Եկեղեցու պատմության մեջ որոշակի շփոթություն կար այս մարդու հետ կապված, քանի որ նույն անունով մի խումբ կար նշված Հայտն.2:14-15 համարներում: Որոշ վաղ եկեղեցու հայրեր (այսինքն՝ Իրենեոսը և Հիպոլիտոսը) կարծում էին, որ այս մարդն էր տվյալ լադանդավոր խմբի հիմնադիրը: Եկեղեցու հայրերից շատերը, ովքեր այդ խմբի հետ որևէ կապ էին նշում, կարծում էին, որ հնարավոր է նրանք փորձել են օգտագործել այս մարդու անունը հաստատելու համար, որ իրենց հիմնադիրը Երուսաղեմի եկեղեցու առաջնորդներից էր:

6:6 «ձեռք դրին նրանց վրա» Քերականորեն սա նշանակում է, որ ամբողջ եկեղեցին նրանց ձեռնադրեց (տես՝ 13:1-3), չնայած որ ԴԵՐԱՆՈՒՆԸ այստեղ կասկածելի է:

Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին օգտագործել է այս տեքստի պես հատվածներ հաստատելու Առաքելական Հաջորդականությունը: Մկրտականների կյանքում, մենք կիրառում ենք այսպիսի տեքստերը հաստատելու ձեռնադրությունը (այսինքն՝ մարդկանց հանձնելու՝ նվիրելու հատուկ ծառայությունների): Եթե դա ճիշտ է, ապա բոլոր հավատացյալներն էլ կանչված և պարզև ունեցող ծառայողներ են (տես՝ Եփես.4:11-12), և ապա ՆԿ-ում ոչ մի տարբերություն չկա «աշխատակազմի» և «ծառայողների» /ոչ պրոֆեսիոնալ/ միջև: Էլիտար կազմը ստեղծվեց և տարածվեց Աստվածաշնչի կողմից չհիմնավորված եկեղեցական սովորույթների միջոցով, որոնք անհրաժեշտ է վերանայվեն ՆԿ-ի Խոսքերի լույսի ներքո: Ձեռնադրությունը կարող է գործողություն ցույց տալ, բայց ոչ հատուկ դիրք կամ իշխանություն: Մեր հարանվանական սովորույթներից շատերը հանդիսանում են պատմական կամ հարանվանությամբ հիմնավորված և ոչ թե մաքուր աստվածաշնչյան ուսմունք կամ լիազորություն: Ավանդույթը ինքնին խնդիր չէ, քանի դեռ այն չի բարձրացել մինչև Աստվածաշնչի հեղինակությանը հավասար դասվելուն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՏՎԱԾԱԾՆՉՈՒՄ

Աստվածաշնչում անձնական ներգրավվածության այս ժեստը մի քանի տարբեր կերպերով է կիրառվում.

1. Երդում տալիս (այսինքն՝ ձեռքք ազդի տակ դնելով [Ծննդ.24:2,9; 47:29])

2. Ընտանեկան առաջնորդությունը փոխանցելիս (տես՝ Ծննդ.48:14,17,18)
3. Չոհարերվող կենդանու մահվան հետ որպես տվյալ անձի փոխանորդ նույնականացվելիս ա. քահանաները (տես՝ Ելից 29:10,15,19; Ղևտ.16:21; Թվոց 8:12)
բ. ծառայող մարդիկ (տես՝ Ղևտ.1:4; 3:2,8; 4:4,15,24; 2 Մնաց.29:23)
4. Հատուկ ծառայությամբ կամ հանձնարարությամբ Աստծուն ծառայելու համար մարդկանց առանձնացնելիս՝ գատելիս (տես՝ Թվոց 8:10; 27:18,23; 2Օր.34:9; Գործք 6:6; 13:3; 1 Տիմ.4:14; 5:22; 2 Տիմ.1:6)
5. Որևէ մեղավորի իրավաբանական քարկոծմանը մասնակցելիս (տես՝ Ղևտ.24:14)
6. մեկի բերանին դրված ձեռքը մատնանշում է լռություն կամ լուռ համաձայնություն (տես՝ Դաստ.18:19; Հոր 21:5; 29:9; 40:4; Միք.7:16)
7. Իր սեփական գլխի վրա ձեռքը դնելը նշանակում է վիշտ, սուգ (2 Թագ.13:19)
8. Առողջության, երջանկության և աստվածավախության համար օրհնություն ընդունել է (տես՝ Մատթ.19:13,15; Մարկ.10:16)
9. Կապված է ֆիզիկական բժշկության հետ (տես՝ Մատթ.9:18; Մարկ.5:23; 6:5; 7:32; 8:23; 16:18; Ղուկ.4:40; 13:13; Գործք 9:17; 28:8)
10. Սուրբ Հոգին ընդունելիս (տես՝ Գործք 8:17-19; 9:17; 19:6)

Գոյություն ունի եկեղեցական առաջնորդների նշանակումը (այսինքն՝ ձեռնադրությանը) հիմնավորող պատմականորեն կիրառված սուրբգրային հաստատումների միատեսակության զարմանալի բացթողում՝ պակաս:

1. Գործք 6:6-ում Առաքյալներն էին, որ ձեռնադրեցին Յոթին տեղական ծառայության համար
2. Գործք 13:3-ում մարգարեներն ու վարդապետներն էին, որ ձեռնադրեցին Բառնաբասին և Պողոսին միսիոներական ծառայության համար:
3. 1 Տիմ.4:14-ում տեղի երեցներն էին, որ ներգրավված էին Տիմոթեոսի սկզբնական կոչման և պաշտոնադրման մեջ
4. 2 Տիմ.1:6-ում Պողոսն է ձեռնադրում Տիմոթեոսին:

Այս տարբերությունը և անորոշությունը պատկերում է առաջին դարի եկեղեցում կազմակերպվածության պակասը: Վաղ եկեղեցին շատ ավելի արագ աճ էր գրանցում և կանոնավոր կերպով կիրառվում էին հավատացյալների հոգևոր պարզևները (տես՝ 1 Կորնթ.14): ՆԿ-ը պարզապես գրված չէ պաշտպանելու կամ սահմանելու կառավարման օրինակ կամ ձեռնադրման ընթացակարգ:

NASB (Թ-ԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 6:7

7Եվ աճում էր Աստծո Խոսքը, աշակերտների թիվը խիստ շատանում էր Երուսաղեմում. և քահանաներից էլ մի մեծ բազմություն հավատին էր հնազանդվում:

6:7 «Աստծո Խոսքը» Սա վերաբերում է Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Նրա կյանքը, հարությունը և Աստծո վերաբերյալ ուսմունքները ձևավորում են Հին Ուխտը դիտարկելու մի նոր տարբերակ (տես՝ Մատթ.5:17-48): Հիսուսն է Խոսքը (տես՝ Հովհ.1:1; 14:6): Քրիստոնեությունը Անձնավորություն է: Տե՛ս ամբողջական գրառումները, 4:31-ում:

■ **«աճում էր /անգլ.՝ շարունակվում էր տարածվել/»** Համար 7-ում բոլոր երեք ԲԱՅԵՐԸ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ են: Սա Գործքում կենտրոնական թեմա է: Աստծո Խոսքը տարածվում է այն մարդկանց միջոցով, որոնք վստահում են Քրիստոսին և դառնում Աստծո նոր ուխտի ժողովրդի մի մասը (տես՝ 6:7; 12:24; 19:20):

Հնարավոր է սա Աստծուց Աբրահամին տված խոստումների ակնարկն է նրա ընտանիքի թվով աճելու՝ շատանալու շուրջ, որը և դարձավ Աստծո հին ուխտի ժողովուրդը (տես՝ 7:17; Ծննդ.17:4-8; 18:18; 28:3; 35:11):

■ **«քահանաներից էլ մի մեծ բազմություն հավատին էր հնազանդվում»** Սա հրեա առաջնորդների պատճառներից մեկն էր (այսինքն՝ Մադուկեցիների), որ Քրիստոնեության հարցի շուրջ խռովություն էին բարձրացրել: Ովքեր ՀԿ-ը լավ գիտեին, այժմ համոզվում էին, որ Հիսուս Նազովրեցին իրականում խոստացյալ Մեսիան էր: Հուդայականության ներքին օղակը ճեղքվում էր:

Եկեղեցու աճման վերաբերյալ ամփոփիչ հայտարարությունները կարող են գրքի կառուցվածքի համար բանալի խոսքեր հանդիսանալ (տես՝ 9:31; 12:24; 16:5; 19:20; 28:31):

- **«հավատին»** Այս տերմինը կարող է ունենալ մի քանի տարբեր լրացուցիչ իմաստներ.
 1. դրա ՀԿ-յան հիմքը նշանակում է «հավատարմություն» կամ «վստահելիություն», հետևաբար կիրառվում է Աստծո հավատարմության հանդեպ մեր հավատքի համար կամ Աստծո վստահելիության հանդեպ մեր վստահության համար (տես՝ Հատուկ Թեմա 6:5)
 2. Քրիստոսի մեջ մեր ունեցած ներման Աստծո ձրի առաջարկն ընդունելը՝ ստանալը
 3. հավատարիմ, աստվածահանո կյանքը
 4. Քրիստոնեական հավատքի կամ Հիսուսի վերաբերյալ վարդապետական ճշմարտության հավաքական իմաստը (տես՝ Հռոմ.1:5; Գաղ.1:23 և Հուդա 3 և 20):

Մի քանի հատվածներում, ինչպես օրինակ 2 Թեսաղ.3:2-ը, դժվար է հասկանալ, թե Պողոսը վերը նշվածներից որը նկատի ուներ:

Տե՛ս Հատուկ Թեմա. Հավատք, հավատալ, վստահություն /վստահելի՝ որպես ածական/ (ԳՈՅԱԿԱՆ, ԲԱՅ, ԱԾԱԿԱՆ), 3:16-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ.6:8-15

⁸Եվ Ստեփանոսը, հավատով ու զորությամբ լցված, մեծ հրաշքներ ու նշաններ էր անում ժողովրդի մեջ: ⁹Ապա ոմանք՝ Ազատագրյալների և Կյուրենացիների ու Աղեքսանդրացիների կոչվող ժողովարանից, և ոմանք էլ՝ Կիլիկիայի ու Ասիայի, սկսեցին Ստեփանոսի հետ վիճաբանել, ¹⁰բայց չէին կարողանում ընդդիմանալ այն իմաստությանն ու հոգուն, որով նա խոսում էր: ¹¹Այն ժամանակ հրապուրեցին մի քանի մարդկանց, որ ասեն, թե՛ «Մենք լսեցինք, որ սա հայեցողից խոսքեր էր ասում Մովսեսի ու Աստծո դեմ»: ¹²Եվ գրգռեցին ժողովրդին ու երեցներին և դպիրներին ու վրան հարձակվելով՝ նրան բռնեցին ու տարան ատյան: ¹³Եվ սուտ վկաներ բերեցին, որ ասում էին. «Այս մարդը չի դադարում սուրբ տեղի և Օրենքի դեմ հայեցողից խոսքեր ասելուց. ¹⁴քանի որ սրանից լսեցինք, թե. «Այս Նազովրեցի Հիսուսը քանդելու է այս տեղն ու փոխելու է Մովսեսի՝ մեզ ավանդած սովորությունները»: ¹⁵Եվ բոլոր նրանք, որ նստած էին ատյանում, երբ նրան նայեցին, տեսան, որ նրա երեսը հրեշտակի պես է:

6:8 «հավատով /անգլ.՝ շնորհքով/ ու զորությամբ լցված» «Շնորհքով լեցուն» խոսքը վերաբերում է իր կյանքի և ծառայության մեջ Աստծո օրհնություններին: Տե՛ս Հատուկ Թեմա 5:17:

Այս «զորություն» տերմինը կապ ունի հաջորդ արտահայտության հետ՝ «մեծ հրաշքներ և նշաններ էր անում»:

■ **«մեծ հրաշքներ և նշաններ էր անում»** Սա ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ է (հ.7-ի պես): Այն հավանաբար տեղի էր ունեցել Յոթի շարքում իր ընտրվելուց առաջ: Ստեփանոսի ավետարանի ուղղերձը շարունակ հավաստվում էր իր անձի միջոցով (այսինքն՝ շնորհքով լեցուն) և զորությամբ (այսինքն՝ հրաշքներն ու նշանները):

6:9 «ոմանք ... և ոմանք էլ» Հարց է առաջանում, թե ինչպես կարելի է մեկնաբանել, թե քանի խումբ էր դուրս եկել Ստեփանոսի դեմ:

1. մի ժողովարան (թվարկված է բոլոր երկրների տղամարդկանց)
2. երկու ժողովարան
 - ա. Կյուրենիայի և Աղեքսանդրիայի հրեաներից բաղկացած
 - բ. Կիլիկիայի և Ասիայի հրեաներից բաղկացած (Պողոսը Կիլիկիայից էր)
3. մի ժողովարան, սակայն երկու խմբեր
4. հինգ տարբեր ժողովարաններ

Հունարենի ՍԵՌԱԿԱՆ հոլովի ԱՐԱԿԱՆ սեռի ՀՈԳՆԱԿԻ թվի ՀՈԴԸ (*tōn*) երկու անգամ կրկնվում է:

■ **«կոչվող»** Այս արտահայտության պատճառն այն է, որ «ազատագրյալներ» տերմինը լատիներեն բառ է, հետևաբար այն պետք էր պարզ լինելու համար թարգմանվեր: Անկասկած այս մարդիկ հրեաներ էին, որոնք օտար երկրներ էին տարվել որպես գերիներ (ռազմական կամ տնտեսական), բայց հիմա վերադարձել էին Պաղեստին որպես ազատագրյալներ, սակայն դեռևս Կոյնե Հունարեն լեզուն էր նրանց առաջին լեզուն:

6:10 Ստեփանոսի քարոզած ավետարանի պատգամը ոչ միայն զորության նշաններով էր հաստատվում, այլ անկասկած տրամաբանորեն էլ համոզիչ էր: Գլուխ 7-ը նրա քարոզչության օրինակն է:

■ **«Հոգին»** Հունարեն տեքստերում հնարավոր չէ տարբերակել մեծատառերը, հետևաբար սա թարգմանիչների թարգմանության արդյունքն է: «Հ» մեծատառը վերաբերում է Սուրբ Հոգուն, իսկ

վորքատառ «հ»-ի դեպքում մարդու հոգուն (KJV, NRSV գրառումներում, REB, տես՝ 7:59; 17:16; 18:25; Հռոմ.1:9; 8:16; 1 Կորնթ.2:11; 5:4; 16:18; 2 Կորնթ.2:13; 7:13; 12:18; Գաղ.6:18; Փիլ.4:23): Հնարավոր է սա ակնարկում է Առակ.20:27:

Տե՛ս Հատուկ Թեմա. Հոգի (*pneuma*) ՆԿ-ում, 2:2:

6:11 «հրապուրեցին /թաքուն/ մի քանի մարդկանց, որ ասեն» «Հրապուրել» տերմինը կարող է նշանակել (1) կաշառել (տես՝ Լու և Նիդա, *Բառապաշար*, /Louw and Nida, *Lexicon*/, հատոր՝ 1, էջ՝ 577-578) կամ (2) թաքուն ծրագրել (տես՝ Բոյր, Արնդ և Դանքեր, *Հունարեն- Անգլերեն Բառարան*, /Bauer, Arndt, Gingrich, and Danker, *A Greek-English Lexicon*/, էջ՝ 843): Սա նույն տեխնիկան էր, որ կիրառվեց Հիսուսի դեմ (տես՝ Մատթ.26:61) և Պողոսի դեմ (տես՝ Գործք 21:28): Նրանց մեղադրում էին Ելից 20:7-ի չարաշահման մեջ, որն անողները կրում էին մահապատիժ:

■ **«Մենք լսեցինք, որ սա հայհոյալից խոսքեր էր ասում Մովսեսի դեմ»** Գործք 7-ում Ստեփանոսի քարոզը պատասխանում է այս մեղադրանքին: Արդյո՞ք Գործք 7-ը բնորոշ էր Ստեփանոսի ավետարան քարոզելուն, թե հատուկ քարոզ էր, որպեսզի պատասխանի այս մեղադրանքին՝ հայտնի չէ, սակայն ակնհայտ է, որ Ստեփանոսը հաճախ էր կիրառում ՀԿ-ը, որպեսզի հաստատեր Հիսուսի Մեսիա լինելը:

■ **«և Աստծո դեմ»** Այս հրեաները Աստծուն դրեցին Մովսեսից հետո: Հենց նրանց նախադասության կառուցվածքը ցույց է տալիս նրանց հասկացողության խնդիրը. Մովսեսի Օրենքը դարձել էր առավել բարձր:

6:12 «երեցներին և դպիրներին ... Ասյան» «Երեցներ և դպիրներ» արտահայտությունը հաճախ հանդիսանում է Սինեդրոնի անդամների հակիրճ նկարագրությունը, որը այս համատեքստում վերաբերում էր «Ասյանին»: Դա հրեա ազգի կրոնական իշխանությունն էր մ.թ.70-ից առաջ, հռոմեական կայսրության օրոք: Այն բաղկացած էր՝

1. Քահանայապետից (-երից) և նրա ընտանիքից
2. տեղացի հարուստ կալվածատերերից և քաղաքացիական առաջնորդներից
3. տեղացի դպիրներից

Բոլորը միասին Երուսաղեմի շրջանից յոթանասուն առաջնորդ էին: Տե՛ս Հատուկ Թեմա. Սինեդրոնը 4:5:

6:13 «այս մարդը» Սա արհամարհանք ցույց տալու մի Մեմիստիկ կերպ է: Այս արտահայտությունը հաճախ կիրառվում էր Հիսուսի համար:

■ **«խոսում է սուրբ տեղի և Օրենքի դեմ /հայ.՝ չի դադարում սուրբ տեղի և Օրենքի դեմ հայհոյալից խոսքեր ասելուց/»** Այս արտահայտությունը հ.11-ի մեղադրանքի ընդլայնված տարբերակն է: Սա կարող է վերաբերել Ստեփանոսի կողմից Հիսուսի խոսքերի հաստատմանը՝ Դուկ.19:44-48-ում (նաև Մարկ.13:2) Տաճարի կործանման մասին կամ Մատթ. 26:61; 27:40; Մարկ.14:58; 15:29; Հովհ.2:19 (տես՝ հ. 14) Հիսուսի սպառնալիքին: Հիսուսը տեսնում էր Իրեն որպես «նոր Տաճարը», երկրպագության նոր կենտրոնը, Աստծո և մարդկության հանդիպման նոր վայրը (տես՝ Մարկ.8:31; 9:31; 10:34): Աստծո դատաստանը գալիս էր Հերովդեսի շինության վրա:

Հիսուսի մեջ ունեցած լիարժեք և ճրի ներման մասին Ստեփանոսի քարոզը հավանաբար հենց «Օրենքի դեմ խոսելու» աղբյուրն էր: Ավետարանի պատգամը նվազեցնում է «Մովսիսական ուխտը» մինչև պատմական արձանագրության՝ փրկության միջոց լինելու փոխարեն (տես՝ Գաղատացիների 3 և ՆԿ-ի Եբրայեցիների գիրքը):

Առաջին դարի հրեաների համար սա շատ ռադիկալ ուսմունք էր՝ հայհոյություն: Սա իրականում հեռանում էր ՀԿ-ին բնորոշ մոնոթեիզմի, փրկության և Իսրայելի հատուկ ընտրված լինելու մասին գաղափարներից: ՆԿ-ը ունի ռադիկալ վերանայված կենտրոնացում (այսինքն՝ Հիսուսը, ոչ թե Իսրայելը, շնորհիքը՝ ոչ թե մարդկային արժանիքները):

6:14 Ինչ-որ իմաստով նրանց մեղադրանքը ճիշտ էր: Այս երկու մեղադրանքները հրահրվել էին, որպեսզի իրարանցում բարձրացնեին թե՛ Մադուկեցիների (այսինքն՝ «քանդելու է այս տեղը») և թե՛ Փարիսեցիների մեջ (այսինքն՝ «փոխելու է Մովսեսի՝ մեզ ավանդած սովորությունները»):

■ **«այս Նագովրեցի Հիսուսը»** Տե՛ս Հատուկ Թեմա 2:22:

6:15 «նրան նայեցին /անգլ.՝ ակնապիշ նրան էին նայում/» Սա գրական միջոց է, որը Դուկասը հաճախ է կիրառում: Այն արտահայտում է անխափան ուշադրության իմաստը (տես՝ Դուկ.4:20; 22:56; Գործք 1:10; 3:4,12; 6:15; 7:55; 10:4; 11:6; 13:9; 14:9; 23:1):

■ «**նրա երեսը հրեշտակի երեսի պես է**» Սա միզուցե նման էր՝

1. Մովսեսի երեսին, որ փայլում էր ՅԱՎԵԻ հետ հանդիպումից հետո (Ելից 34:29-35, 2 Կորնթ.3:7)
2. Հիսուսի երեսին և մարմնին, որ փայլում էր Իր այլակերպության ժամանակ (Մատթ.17:2; Դուկ.9:29)
3. Դան.10:5-6-ում պատգամաբեր հրեշտակին

Սա փոխաբերական կերպ է նկարագրելու մի մարդու, որը եղել է Աստծո ներկայության մեջ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ վաղ եկեղեցին ընտրեց իրենց լավագույն հոգևոր տղամարդկանց, որպեսզի մատակարարեն սեղանները:
2. Ինչո՞ւ է եկեղեցու արագ աճման մեջ առկա լարվածությունը:
3. Ո՞րն է ձեռնադրության նպատակը:
4. Ինչո՞ւ Ստեփանոսը հարձակման ենթարկվեց:

ԳՈՐԾՔ 7

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Ստեփանոսի քարոզները	Ստեփանոսի ուղղերձը՝ Աբրահամի կանչը	Ստեփանոսի քարոզը և նահատակությունը (6:8-8:1ա)	Ստեփանոսի քարոզը	Ստեփանոսի քարոզը
7:1-8	7:1-8		7:1 7:2-8	7:1-8
	Նախահայրերը Եգիպտոսում	7:2բ-8		
7:9-16	7:9-16	7:9-16	7:9-16	7:9-16
7:17-22	7:16-36	7:17-22	7:17-22	7:17-22
7:23-29		7:23-29	7:23-29	7:23-29
7:30-43		7:30-34 7:35-43	7:30-34 7:35-38	7:30-34 7:35-43
	Իսրայելը ապստամբում է Աստծո դեմ 7:37-43		7:39-43	
	Աստծո իրական Խորանը			
7:44-50	7:44-50	7:44-50	7:44-47	7:44-50
	Իսրայելը դիմադրում է Սուրբ Հոգուն			
7:51-53	7:51-53	7:51-53	7:51-53	7:51-53
Ստեփանոսի քարկոծումը	Ստեփանոս նահատակը		Ստեփանոսի քարկոծումը	Ստեփանոսի քարկոծումը, Սողոսը որպես հալածիչ
7:54-8:1ա	7:54-60	7:54-8:1ա	7:54-8:1ա	7:54-8:1ա

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
 ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՎՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Գործք 7-ում Ստեփանոսի քարոզը Գործքի ամենաերկար արձանագրված քարոզն է: Այն խախտում է Պողոսի (և եկեղեցու) Ավետարանի և ՀԿ-ի միջև փոխկապակցվածության հիմքի աստվածաբանական պատկերացումները: Ստեփանոսի քարոզը պատասխանում է իր դեմ արված մեղադրանքներին, ցույց տալով, որ՝
- ա. Աստված գործել է Տաճարից դուրս
 - բ. Աստված աշխատում է հեթանոսների հետ
 - գ. Հրեաները միշտ մերժել են Աստծո պատգամը, Աստծո մարդկանց, և հիմա էլ մերժում են Մեսիային
- Բ. Ստեփանոսի պաշտպանությունը ացղեցություն է թողնում Տարսնցի Սողոսի սրտի և Պողոսի աստվածաբանության վրա:
- Գ. Ստեփանոսը հայտնում է հրեա ժողովրդի մշտական անհավատարմությունը ուխտին և Աստծո հայտնությունները Խոստացյալ Երկրից դուրս և առանց Երուսաղեմի Տաճարի, որը դարձել էր առաջին դարի հրեաների երկրպագության կենտրոնը:
- Դ. Հրեա ժողովուրդը պարբերաբար անարգել է Աստծո կողմից ուղարկված պատգամաբերներին և հիմա նրանք կրկնում էին: Նրանք դաժանաբար անարգեցին Նազովրեցի Հիսուսին և պատրաստվում էին դաժանաբար անարգել Ստեփանոսին՝ Նրա վկային:
- Ե. Ստեփանոսը մեղադրվում էր միևնույն խմբի կողմից նմանատիպ հայհոյության համար ինչի համար Հիսուսին մեղադրեցին: Երբ քարկոծվում էր, Ստեփանոսը ասաց մի քանի բան, որոնք նման էին խաչի վրա Հիսուսի խոսքերին և գործողություններին: Արդյո՞ք սա Ղուկասի կողմից կիրառված դիտավորյալ քայլ էր: Կարծե՞ս թե:
- Զ. Հրեաների և Քրիստոնյաների միջև փոխհարաբերության շուրջ Ստեփանոսի տեսակետը հալածանքների համար հարթակ էր պատրաստելու (տես՝ 8:1-3) այս երկու խմբերի միջև վերջնական պառակտման (այսինքն՝ մ.թ. 70 նգովքի բանաձևերը): Անկասկած հնարավոր է, որ Աստված օգտագործեց Ստեփանոսին, ինչպես դա արեց Սամսոնի հետ ՀԿ-ում, որպեսզի այս հակամարտության պատճառով սկսի ավետարանը տարածվել Պաղեստինից դուրս:
- Է. Ստեփանոսի քարոզը, խոսքը, պաշտպանությունը ունի մի քանի մանրամասներ, որոնք տարբերվում էին երբայերեն ՀԿ-ից (նա մեջբերումներ էր կատարում Մեպտուազինտայից): Արդյո՞ք գիտնականները պետք է փորձեն պաշտպանել Ստեփանոսի խոսքերը, թե թույլ տան, որ դրանք լինեն հրեական ավանդույթներ կամ նույնիսկ պատմական սխալներ: Այս հարցը հայտնում է մեկնաբանների՝ թարգմանիչների զգայական և մտավոր հակումները: Ես հավատում եմ, որ Աստվածաշունչը իրական պատմություն է, որ Քրիստոնեությունը կանգուն է կամ անկում է ապրում Աստվածաշնչի դեպքերի հիման վրա: Սակայն, Աստվածաշնչի հենց սկիզբը (այսինքն՝ Ծննդոց 1-11) և Աստվածաշնչի վերջը (այսինքն՝ Հայտնության գիրքը) «տիպիկ պատմություն» չեն: Ինչ վերաբերում է դրանց միջև տեղի ունեցող դեպքերին, ես հավատում եմ, որ դրանք հավաստի և ճշգրիտ են: Սա հաշվի առնելով երբեմն լինում են՝
1. Թվերի միջև տարբերություններ
 2. Ժանրերի տարբերություններ
 3. Մանրամասների տարբերություններ
 4. Ռաբբիների կողմից կատարված թարգմանական տեխնիկայի տարբերություններ (օր.՝ համակցելով երկու կամ ավելի տեքստեր):

Մրանք չեն ազդում իմ այն համոզման վրա, որ աստվածաշնչյան պատմությունները պատմականորեն վստահելի և ճշգրիտ դեպքեր են: Հնարավոր է Ստեփանոսը հիշում էր Ժողովարանի դպրոցում իր սովորածները կամ հարմարեցնում էր տեքստերը իր նպատակին հարմարեցնելու համար: Եթե միայն կենտրոնանալով նրա քարոզի մեկ կամ երկու մանրամասների վրա բաց թողնենք ամբողջ պատգամը, դա ցույց կտա ժամանակակից պատմագրության և ոչ թե առաջին դարի պատմության հանդեպ մեր զգայունությունը:

Ը. Գործք 7-ում Իսրայելի հետ Աստծո գործակցության Ստեփանոսի պատմական վերանայումը:

1. Նահապետները՝ Նախահայրերը, հհ. 2-16
2. Ելիցը և անապատում թափառելը, հհ. 17-43
3. Խորանը և Տաճարը, հհ. 44-50
4. Իր ամփոփման հետ կապված ՀԿ-ի պատմության գործնական քայլերը, հհ. 51-53

Թ. Ստեփանոսը կիրառում է մի քանի ՀԿ-յան խոսքեր (մեջբերումներ և ակնարկներ)՝

1. 7:3 – Ծննդ.12:1
2. 7:5 – Ծննդ.12:7 կամ 17:8
3. 7:6-7ա – Ծննդ.15:13-14
4. 7:7բ – Ելից 3:12
5. 7:8ա – Ծննդ.17:9-14
6. 7:8բ – Ծննդ.21:2-4
7. 7:8գ – Ծննդ.25:26
8. 7:8դ – Ծննդ.35:22-26
9. 7:9 – Ծննդ.37:10,28; 45:4
10. 7:10 – Ծննդ.39:21; 41:40-46
11. 7:11 – Ծննդ.41:54-55; 42:5
12. 7:12 – Ծննդ.42:2
13. 7:13 – Ծննդ.45:1-4
14. 7:14 – Ծննդ.45:9-10
15. 7:15 – Ծննդ.46:5; 49:33; Ելից 1:6
16. 7:16 – Ծննդ.23:16; 50:13
17. 7:17 – Ելից 1:7-8
18. 7:18 – Ելից 1:8
19. 7:19 – Ելից 1:10-11
20. 7:20 – Ելից 2:2
21. 7:21 – Ելից 2:5,6,10
22. 7:22 – Ելից 2:10
23. 7:23 – Ելից 2:11-12
24. 7:26 – Ելից 2:13
25. 7:27-28 – Ելից 2:14
26. 7:30 – Ելից 3:1-2
27. 7:29a – Ելից 2:15
28. 7:29b – Ելից 2:22; 4:20; 18:3-4
29. 7:32 – Ելից 3:6
30. 7:33-34 – Ելից 3:5,7-10
31. 7:36 – Ելից 12:41; 33:1
32. 7:37 – 2 Օր.18:15
33. 7:38 – Ելից 19:17
34. 7:39 – Թվոց 14:3-4
35. 7:40 – Ելից 32:1,23
36. 7:41 – Ելից 32:4,6
37. 7:42-43 – Ամովս 5:25-27
38. 7:44 – Ելից 25:31,36-40
39. 7:45 – Հեսու 3:14վ; 18:1; 23:9
40. 7:46 – 2 Թագ.7:8վ
41. 7:47 – 3 Թագ.6-8; 2 Մնացորդաց 1-6
42. 7:49-50 – Եսայի 66:1-2

Իսրայելի պատմության մեկ այլ սուրբգրային լավ ամփոփում է Նեեմիա 9՝

1. 9:6 – Ծննդոց 1-11

- 2. 9:7-8 – Ծննդոց 12-50
- 3. 9:9-14 – Ելից (ելք)
- 4. 9:15-21 – Թվոց (անապատում թափառելու շրջանը)
- 5. 9:22-25 – Հետու (նվաճումը)
- 6. 9:26-31 – Դատավորաց
- 7. 9:32-38 – Թագավորացները, Մնացորդացները (Միապետությունը)

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ.7:1-8

¹Ապա քահանայապետն ասաց. «Ճիշտ են այս բաները»: ²Նա էլ պատասխանեց. «Մարդիկ, եղբայներ ու հայրեր, լսեցե՛ք, փառաց Աստվածը երևաց մեր հորը՝ Աբրահամին, երբ նա Միջագետքում էր, նախքան Խառանում բնակվելը՝ ³և նրանց ասաց. «Դուրս ե՛կ քո երկրից և քո տոհմից ու արի՛ այն երկիրը, որ քեզ ցույց կտամ»: ⁴Այս ժամանակ նա, քաղդեացիների երկրից ելնելով, Խառանում բնակվեց. նրա հոր մահից հետո այն տեղից Նա այս երկիրը բերեց նրան, որտեղ հիմա դուք բնակվում եք: ⁵Եվ այստեղ նրան նույնիսկ մի ոտնաչափ ժառանգություն չտվեց, բայց խոստացավ, որ այս նրան է տալու՝ որպես ժառանգություն և իրենից հետո՝ իր սերնդին, երբ դեռ նա որդի չուներ: ⁶Եվ Աստված այսպես խոսեց, թե՛ «Նրա սերունդը օտար երկրում պանդուխտ է լինելու, և նրան ծառայեցնելու ու չարչարելու են չորս հարյուր տարի: ⁷Եվ այն ազգին, որին ծառայելու են, Ես պիտի դատեմ,- ասաց Աստված,- և դրանից հետո նրանք դուրս պիտի գան ու Ինձ ծառայեն այս տեղում»: ⁸Եվ նրան թլփատության ուխտը տվեց, ու հետո Աբրահամը ծնեց Իսահակին, և ութերորդ օրը նրան թլփատեց. և Իսահակը՝ Հակոբին, Հակոբն էլ՝ տասներկու նահապետներին:

7:1 «Քահանայապետ» Սա Կայիափան էր: Տե՛ս գրառում 4:6:

7:2 «Նա էլ պատասխանեց» Ստեփանոսի պաշտպանությունը շատ նման է Եբրայեցիների գրքին: Նա պատասխանեց մեղադրանքներին երկու կերպ. (1) Հրեա ժողովուրդը անցյալում շարունակ մերժել էր Մովսեսին և (2) Տաճարը Իսրայելի հետ Աստծո հաղորդակցման դրսևորումներից միայն մեկն էր: Սա 6:13-ում նրա դեմ ներկայացված մեղադրանքներին տված ուղղակի պատասխան է:

■ **«լսեցեք»** Սա հունարենի *akouō* բառի ԱՌՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ձևն է: Այն կիրառվում է Սեպտուագինտայում թարգմանելու հուդայականության հայտնի աղոթքը՝ *Shema* (տես՝ 2 Օր.6:4-5): Այս բառը նաև կիրառվում է մարգարեններում, որտեղ արտահայտում է «լսեք, որպեսզի պատասխան տաք» իմաստը (տես՝ Միք.1:2; 6:1): Հստակ դժվար է ասել, արդյոք պահպանվում է այս բառի նույն իմաստը, երբ հրեա տղամարդիկ արտահայտում են իրենց հրեական մտքերը Կոյնե Հունարեն լեզվով, սակայն այսպիսի համատեքստերում հնարավոր է այն պահպանվում է:

■ **«Փառաց Աստվածը»** Այս փառքի Աստվածը (տես՝ Սաղմ.29:3) հայտնվեց Աբրահամ նահապետին (տես՝ Ծննդ.12:1; 15:1,4; 17:1; 18:1, 22:1), որտեղից և եղավ հրեա ժողովրդի սկիզբը՝ ծագումը: Տե՛ս Հատուկ Թեմա 3:13:

■ **«Աբրահամ»** Աբրահամը համարվում է հրեա ժողովրդի հայրը: Նա առաջին Նահապետն էր: Նրա կանչը և հետագայում Աստծո հետ քայլերը նկարագրվում է Ծննդոց 12:1-25:11: Գաղատացիների 3-ում և ավելի ուշ Հռոմեացիների 4-ում Պողոսը կիրառում է հավատքով՝ շնորհքի միջոցով արդարացման Աբրահամի օրինակ:

■ **«երբ նա Միջագետքում էր, նախքան Խառանում բնակվելը»** Ծննդոց 11:31-ը ակնարկում է, որ Աբրահամը Խառան քաղաքում էր, երբ ՅԱՀՎԵՆ խոսեց նրա հետ: Սակայն, Աբրահամի հետ Աստծո խոսելու ժամանակը ստույգ չի նշվում: Աբրահամը Քաղդեացիների Ուր քաղաքից էր (տես՝ Ծննդ.11:28,31), սակայն հետագայում հետևելով Աստծո հրամանին տեղափոխվում է Խառան (տես՝ Ծննդ.11:31,32; 29:4): Հարցը նրանում է, որ Աստված Աբրահամի հետ Քանանից դուրս խոսեց: Սուրբ Երկրից ոչ մի հողակտոր Աբրահամին չէր պատկանում (տես՝ հ.5) իր ամբողջ կյանքի ընթացքում (բացի իր ընտանիքի անդամների թաղման համար քարանձավից, տես՝ Ծննդ.23:9):

«Միջագետք» տերմինը կարող է վերաբերել տարբեր էթնիկ խմբերի՝

1. Տիգրիս և Եփրատ գետերի հյուսիսային շրջանում ապրող մարդկանց խմբի (այսինքն՝ «Գետերի միջև գտնվող Միքիային»)

2. Տիգրիսի և Եփրատի ակունքների մոտ ապրող մարդկանց խմբի

7:3 «ՂՈՒՐՄ ԵՎ ՔՈՒ ԵՐԿՐԻՑ ԵՎ ՔՈՒ ՏՈՒՄԻՑ ՈՒ ԱՐԻ՝ ԱՅՆ ԵՐԿԻՐԸ, ՈՐ ՔԵՉ ՑՈՒՅՑ ԿՏԱՄ»

Սա մեջբերում է Ծննդ.12:1-ից: Այս մեջբերման աստվածաբանական հարցը կայանում է նրանում, թե երբ Աստված այս բանը խոսեց Աբրահամին՝

1. մինչ գտնվում էր Ուր քաղաքում՝ նախքան իր հորը՝ Թարային և իր եղբորորդուն՝ Ղովտին Խառան կտաներ
2. մինչ գտնվում էր Խառանում և սպասեց մինչև իր հայրը մահացավ և ապա հետևեց Աստծուն դեպի Քանանի հարավային կողմը

7:4 «Քաղղեացիների երկրից ելնելով» Քաղղեան (BDB 505) հնարավոր է Տիգրիս և Եփրատ գետերի

ակունքների մոտ տեղակայված շրջանի անունն է (տես՝ գրառում 7:2): Հետագայում այդ անունով կոչվեց այն ազգը, որը ձևավորվեց և զարգացավ այդ տարածքում, որը նաև հայտնի է որպես Բաբելոն (BDB 93): Այս ազգը տվեց նաև շատ գիտնականներ, որոնք ստեղծեցին մաթեմատիկական բանաձևեր կապված գիշերվա յույսերի շարժման հետ (այսինքն՝ մոլորակների, աստղերի, գիսաստղերի, և այլն): Իմաստուն մարդկանց այս խումբը (այսինքն՝ աստղագետները) նաև հայտնի էին Քաղղեացիներ անունով (տես՝ Դան.2:2; 4:7; 5:7-11):

■ **«Խառան»** Խառանը (BDB 357) մի քաղաք է, որտեղ տեղափոխվեցին Թարան, Աբրահամը և Ղովտը (տես՝ Ծննդ.11:31-32): Աբրամի մյուս եղբայրներից մեկը բնակվում էր այնտեղ և այդ վայրը կոչվում էր նրա անունով (այսինքն՝ Նաբովրի քաղաք, տես՝ Ծննդ.24:10; 27:43): Եփրատ գետի վերին հատվածում (այսինքն՝ Բալիք վտակը) գտնվող այս քաղաքը ծագել է Ք.Ա. երրորդ հազարամյակում և մինչ օրս պահել է իր անվանումը: Եվ պարզապես որպես հետաքրքիր փաստ, Աբրահամի եղբայրը՝ Առանը (անգլ.՝ Haran) (BDB 248) Եբրայերենում (ինչպես նաև հայերենում) չի գրվում այնպես ինչպես Խառան քաղաքը (անգլերենում երկու բառերն էլ ունեն միևնույն գրելաձևը):

■ **«նրա հոր մահից հետո»** Շատերը այստեղ հակասություն են տեսնում՝ Ծննդ.11:26,32 և 12:4-ի միջև: Առնվազն երկու հնարավոր լուծում կա՝

1. Հնարավոր է, որ Աբրահամը ավագ որդին չէր, սակայն ամենահայտնին էր (այսինքն՝ թվարկվում է առաջին տեղում)
2. Սամարացիների Հնգամատյանը Թարայի մահը արձանագրում է 145 տարեկանում և ոչ թե 205, ինչպես նշում է եբրայերեն տեքստը:

Տես Գլխն L. Արչը, *Աստվածաշնչյան Դժվարությունների Հանրագիտարան*, էջ՝ 378 /Gleason L. Archer, *Encyclopedia of Bible Difficulties*/:

7:5 «Նա/ խոստացավ, որ այս նրան է տալու՝ որպես ժառանգություն և իրենից հետո՝ իր սերնդին»

Սա մեջբերում է Ծննդ.12:7 կամ 17:8-ի: Աստվածաբանական բանալին Աստծո խոստումը չէ այստեղ, այլ Աբրահամի հավատքն առ Աստված, որ իրեն թե՛ ժառանգ և թե՛ երկիր կտա: Այս հավատքը ցայտուն կերպով ընդգծված է Ծննդ.15:6 (տես՝ Գաղ.3:6; Հռոմ.4:3):

7:6 Այս կանխատեսված մարգարեությունը արձանագրված է Ծննդ.15:13,14-ում և վերահաստատվում է Ելից 3:12-ում: Սակայն «400 տարվա» փոխարեն Ելից 12:40-ը տալիս է «430 տարի»: Սեպտուագինտան (LXX) Ելից 12:40-ը թարգմանում է որպես «արդ, Իսրայելի որդիների Եգիպտոսում և Քանանի երկրում պանդուխտ եղած ժամանակը չորս հարյուր երեսուն տարի էր»:

Ռաբբիներն ասել են, որ «400 տարիների» հաշվարկը սկսվում է Ծննդոց 22-ում Իսահակի զոհաբերությամբ: Չոն Կալվինը անվանում է այս 400 տարին ամբողջացված թիվ: Այն կարող է վերաբերել չորս սերունդների, ամեն մի սերունդը 100 տարի պանդխտության մեջ (տես՝ Ծննդ.15:16):

7:7 «ԵՎ ԱՅՆ /ՈՐ/ ԱՉԳԻՆ» Սա մեջբերված է Ծննդ.15:14-ը Սեպտուագինտայից: Սա նպատակ չի հետապնդել անհասկանալի արտահայտություն լինելու, այլ ընդհանուր հայտարարություն է: Ակնհայտ է, որ այդ ազգը Եգիպտոսն էր: Մյուս ազգերը, ինչևէ (այսինքն՝ Պաղեստին, Սիրիա, Ասորեստան, Բաբելոն), դառնալու էին Իսրայելի հարստահարիչները և Աստված նրանց նույնպես դատելու էր:

■ **«ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ»** Ամբողջ արտահայտությունը մեջբերված է Ելից 3:12-ից: Ստեփանոսը թերթևակի, համառոտ պատմում է Իսրայելի պատմությունը:

Այս տեքստը հաստատում է, որ Քանանը և Երուսաղեմը բացառիկ կերպով դառնալու են ՅԱՀՎԵի հատուկ տարածքը: Սա համապատասխանում է Երկրորդ Օրինացի շեշտադրությանը:

■ «ԱՅՍ ՏԵՂՈՒՄ» Ելից 3:12-ից մեջբերված համատեքստում սա վերաբերում է Սինա լեռանը (տես՝ Հատուկ Թեմա 7:30), որը նաև Խոստացյալ Երկրից դուրս է և հանդիսանում է Իսրայելի կյանքում ամենակարևոր իրադարձություններից (Մովսեսի Օրենքը տրվելու) մեկի տեղանքը:

7:8 «ուխտ» Տե՛ս Հատուկ Թեմա 2:47:

■ «**թվատություն**» Սա գործադրում էին Իսրայելի բոլոր հարևան երկրները, բացի Փղտացիներից (Հունա-Էգեյան ժողովուրդ): Շատ մշակույթների համար սա համարվում էր տղամարդ դառնալու ծիսակարգ, բայց ոչ Իսրայելի համար, որտեղ այն համարվում էր ուխտի ժողովուրդ դառնալու ծես: Դա ՅԱՀՎԵի հետ հավատքի հատուկ փոխհարաբերության նշան էր (տես՝ Ծննդ.17:9-14): Յուրաքանչյուր Նահապետ թվատել է իր սեփական որդիներին (այսինքն՝ գործել է որպես իր ընտանիքի քահանան): Ռոբերտ Գրդլսթոունը, *Հին Կտակարանի հոմանիշները*, էջ՝ 214, գրքում /Robert Girdlestone, *Synonyms of The Old Testament*/, ասում է, որ թվատության ծեսը կապվեց այդուհի թափելու ծեսի հետ թվատության գործադրությամբ: Արյունը առկա է ուխտը կապելիս (տես՝ Ծննդ.15:17), ուխտը դրժելիս (տես՝ Ծննդ.2:17) և ուխտի միջոցով փրկագործության մեջ (տես՝ Եսայի 53):

■ «**տասներկու նահապետներին**» Սովորաբար սա առնչվում է Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ, սակայն այստեղ այն վերաբերում է Հակոբի տասներկու որդիներին, որոնք դառնալու էին Իսրայելի տասներկու ցեղերը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 7:9-10

⁹Եվ նահապետները, նախանձից դրդված, Հովսեփին Եգիպտոս տարվելու ծախեցին, բայց Աստված նրա հետ էր ¹⁰ու ազատեց նրան իր բոլոր նեղություններից և նրան շնորհք ու իմաստություն տվեց Եգիպտոսի Փարավոն թագավորի առջև, նա էլ նրան իշխան նշանակեց Եգիպտոսի ու իր ամբողջ տան վրա:

7:9 «Հովսեփ» Այս դեպքը գտնվում է Ծննդ.37:11,28; 45:4-ում: Ստեփանոսը փորձում է ցույց տալ, որ հրեաները և նրանց առաջնորդները հանախ մերժել են Աստծո ընտրյալ առաջնորդին (տես՝ Մովսեսին հ.35-ում):

7:10 Այս դեպքը արձանագրված է Ծննդ.39:21; 41:40-46-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 7:11-16

¹¹Եվ Եգիպտոսի ամբողջ երկրի վրա սով և մեծ նեղություն եկավ, ինչպես նաև Քանանի, և մեր հայրերն ուտելիք չէին գտնում: ¹²Եվ երբ Հակոբը լսեց, թե Եգիպտոսում ցորեն կա, նա նախ մեր հայրերին ուղարկեց: ¹³Երկրորդ անգամին Հովսեփին իր եղբայրներին հայտնեց իր ով լինելը և Հովսեփի ազգատոհմը հայտնի դարձավ Փարավոնին: ¹⁴Ապա Հովսեփն ուղարկեց և իր մոտ կանչեց իր հորը՝ Հակոբին ու իր ամբողջ ազգատոհմին՝ յոթանասունհինգ հոգի: ¹⁵Այսպես Հակոբը Եգիպտոս իջավ և մեռան ինքն ու մեր հայրերը: ¹⁶Եվ Սյուբեմ տարվելով՝ դրվեցին այն գերեզմանի մեջ, որ Աբրահամը Սյուբեմի հոր՝ Եմովրի որդիներից դրամով ծախու էր առել:

7:11 Այս պատմությունը գտնվում է Ծննդ.41:54-55; 42:5

7:12 Այս պատմությունը գտնվում է Ծննդ.42:4:

7:13 Այս պատմությունը գտնվում է Ծննդ.45:1-4:

7:14 «յոթանասունհինգ» Սա հետևում է Մեպտուազինտային և Մեռյալ Ծովի Գալարների ձեռագրերին, մինչ Մագորեթիկ Տեքստը արձանագրում է «յոթանասուն» (տես՝ Ծննդ.46:27, 2 Օր.10:22): Առաջին հայացքից թվում է, թե սա ձեռագրային խնդիր է LXX-ի՝ Ստեփանոսի մեջբերումների, և Եբրայերեն տեքստի՝ Ելից 1:5-ի միջև: Ավելի մանրամասն ուսումնասիրության դեպքում հասկանում ենք, որ գոյություն ունի Հակոբի սերունդները հաշվելու երկու եղանակ: Խնդիրը առաջանում է Ծննդոց 46:26-ի և 27-ի միջև:

1. ՄՏ (Մագորեթիկ Տեքստը) այս 27-րդ համարում ասում է, որ Եգիպտոսում Հովսեփը ունեցավ երկու որդի, մինչ LXX ասում է ինը որդիների մասին, որը նշանակում է, որ Եփրայիմը և Մանասեն նույնպես հետագայում երեխաներ են ունենում:

2. Երբայերեն տեքստում Հակոբը և նրա կինը նույնպես հաշվառվում են, սակայն Եփրայիմի և Մանասեի հետագայում ունեցած երեխաները այդ հաշվի մեջ չեն մտնում:

Հունարեն տեքստում (LXX) Հակոբը և նրա կինը հաշվառված չեն, իսկ հետագայում Եփրայիմի և Մանասեի ունեցած որդիները նույնպես մտնում են այդ հաշվի մեջ: Երկուսն էլ ճշգրիտ են, միայն թե նրանք սերունդներին հաշվում են Հակոբի կյանքի տարբեր ժամանակներում և տարբեր կերպերով: Երբայերեն տեքստերը, որոնք հայտնի են որպես Մեռյալ Ծովի Գալարներ, Ծննդ.46:27 և Ելից 1:5-ում նույնպես նշում են «յոթանասունհինգ անձ»: Ֆիլո Ալեքսանդրացին ծանոթ էր այս երկու տարբերակների՝ թվերի հետ էլ:

Մենք բոլորս էլ ժամանակակից գիտական թոշակների բարերարներ ենք դառնում, երբ հանդիպում ենք այսպիսի դժվար տեքստերի կամ թվերի հետ կապված խնդիրների: Այսօր գոյություն ունի մի նոր տեսակի աստվածաշնչյան աղբյուր, որը հասանելի է և որը թիրախավորում է հենց այսպիսի խրթին տեքստեր: Խորհուրդ եմ տալիս կարդաք՝

1. *Աստվածաշնչի Բարդ Ասացվածքները*, (Hard Sayings of the Bible, IVP)
2. *Աստվածաշնչի Ավելի Բարդ Ասացվածքները* (More Hard Sayings of the Bible, IVP)
3. *Աստվածաշնչի Բարդությունների Հանրագիտարան*, Գլխիս Արչեր (Encyclopedia of Bible Difficulties by Gleason Archer):

Գործք 7:14-15 քննարկման համար տես #1 էջ՝ 521-522:

7:15 Այս դեպքը արձանագրված է Ծննդ.46:5; 49:33; Ելից 1:6:

7:16 «Սյուքեն» Ծննդոցում գրանցված (1) Հովսեփի թաղման դեպքից՝ Հեսու 24:32 և (2) Հակոբի թաղման դեպքից՝ արձանագրված Ծննդ.50:13-ում, թվում է թե տարբերություն կա Ստեփանոսի քարոզի մեջ: Խնդիրը (1) քաղաքն է. այն պետք է լիներ Քերրոնը և ոչ թե Սյուքենը, կամ (2) նահապետը, պետք է լիներ Հակոբը և ոչ թե Աբրահամը: Սակայն Աբրահամն էլ, Հակոբն էլ հողատարածք գնեցին (տես՝ Ծննդ.23:16; 33:19): Քերրոնում թաղվեցին Սառան և Աբրահամը (տես՝ Ծննդ.23:19; 25:9), ինչպես նաև Իսահակը և Ռեբեկան (տես՝ Ծննդ.49:29-31) և Հակոբը (տես՝ Ծննդ.50:13): Թեև հայտնի չէ Սյուքենում թաղման հողակտորի վերաբերյալ, հնարավոր է, որ Ծննդ.12:6-7 արձանագրության համաձայն Աբրահամը ավելի շուտ այնտեղ իջևանելիս ազարակ՝ դաշտ էր գնել: Հետագայում Հակոբը ազատագրում է այդ հողակտորը (տես՝ Ծննդ.33:19; Հեսու 24:32): Պարզ է, որ սա ենթադրություն է, սակայն ըստ էության Ստեփանոսը Հ-ի պատմության լավ գիտակ էր և սա հենց միակ կերպն էր տարբեր իրադարձությունները միևնույն հայտարարի բերելու համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 7:17-29

¹⁷Ու երբ մոտեցավ խոստման ժամանակը, որ Աստված երդվել էր Աբրահամին, ժողովուրդն աճեց ու բազմացավ Եգիպտոսում՝ ¹⁸մինչև մի ուրիշ թագավոր ելավ, որ Հովսեփին չէր ճանաչում: ¹⁹Նա նենգորեն վարվեց մեր ազգի հետ ու հալածանքի ենթարկեց մեր հայրերին՝ մինչև անգամ իրենց մանուկներին դուրս նետել տալով, որպեսզի չապրեն: ²⁰Այդ ժամանակ էր, որ Մովսեսը ծնվեց և խիստ վայելույ էր: Երեք ամիս իր հոր տանը մեծացավ: ²¹և երբ դուրս նետեցին նրան, Փարավոնի դուստրը վերցրեց և որպես իր որդի մեծացրեց: ²²Եվ Մովսեսը եգիպտացիների ամբողջ իմաստությամբ կրթվեց. և զորավոր էր իր խոսքերով ու գործերով: ²³Երբ նրա քառասուն տարին լրացավ, սիրտն ուզեց իր եղբայրներին՝ Իսրայելի որդիներին այցելել: ²⁴Ու նրանցից մեկին հարստահարված տեսնելով՝ պաշտպանեց նրան և զրկվածի վրեժը լուծեց՝ այն եգիպտացուն սպանելով: ²⁵Քանի որ կարծում էր, թե իր եղբայրները հասկացած կլինեն, թե Աստված իր ձեռքով պիտի ազատագրի նրանց, բայց նրանք չհասկացան: ²⁶Եվ հաջորդ օրը նրանց դիմաց ելավ, երբ նրանք կռվում էին և նրանց փորձեց խաղաղեցնել՝ ասելով. «Մարդի՛կ, դուք եղբայրներ եք, ինչո՞ւ եք միմյանց անիրավում»: ²⁷Բայց նա, որ ճնշում էր իր ընկերոջը, վռնդեց նրան, ասելով. «Քեզ ո՞վ է մեզ վրա իշխան ու դատավոր կարգել: ²⁸Ուզում ես ի՞նձ էլ սպանել, ինչպես երեկ եգիպտացուն սպանեցիր»: ²⁹Եվ Մովսեսն այս խոսքի վրա փախավ ու պանդուխտ եղավ Մադիամի երկրում, որտեղ նա երկու որդի ունեցավ:

7:17 Սա վերաբերում է Ծննդ.15:12-16 (Խոստումը) և Ելից 1:7 (նրանց մեծաթիվ քանակը):

7:18 «մինչև մի ուրիշ թագավոր ելավ» Սա մեջբերված է Ելից 1:8-ից: Ելքի՝ Ելիցի տարեթվի հետ կապված գիտնականների մեջ բանավեճեր են տեղի ունեցել և դեռ շարունակվում են: Եգիպտացի թագավորի ինքնությունը հակասությունների տեղիք է տալիս: Մի մասն ընդունում է, որ նա եգիպտական թագավոր էր XVIII դինաստիայից (Ք.Ա. 1445) կամ XIX դինաստիայից (Ք.Ա. 1290): Տեսություններից մեկն այն է, որ այս եգիպտացի թագավորը կապված է եղել առաջին բնիկ եգիպտական

դիմաստիայի հետ, որը դուրս է բշել Եգիպտոսի Հիքսոս (Մեմական) իշխանների: Սա հենց բացատրում է հ.18-ում *heteros* բառի կիրառությունը: Բնիկ եգիպտացիները չէին սիրում, որ Մեմիտները՝ ինչպես օրինակ երբայեցիները, մեծաքանակ բնակչությամբ բնակություն հաստատեին իրենց տարածքում, վախենալով Հիքսոսների պես մեկ այլ զավթողական հարձակման ենթարկվելուց:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵԼԻՑԻ ՏԱՐԵԹՎԸ

Ա. Գոյություն են ունեցել երկու գիտական կարծիքներ Ելիցի տարեթվի հետ կապված.

1. 3 Թագավորաց 6:1-ից, որն ասում է. «Եգիպտոսի երկրից դուրս գալուց 480-րդ տարում... մինչև Սողոմոնի Տիրոջ Տան /Տաճարի/ կառուցումը»:
 ա. Սողոմոնը սկսեց թագավորել Ք.Ա. 970-ին: Սա հասկացվում է, երբ նայում ենք Քարքարի (*Qarqar*) ճակատամարտը (Ք.Ա. 853), որպես դրա սկզբի ճշգրտված տարեթիվը:
 բ. Տաճարը կառուցվել է իր թագավորության չորրորդ տարում (Ք.Ա. 965), իսկ ելիցը տեղի է ունեցել մոտ Ք.Ա. 1445 թ-ին:
2. Սա թույլ է տալիս ասել, որ այն տեղի է ունեցել Եգիպտական 18-րդ դիմաստիայի օրոք:
 ա. Չարչարանքների ենթարկող Փարավոնը պետք է որ լիներ Թուրամոս III (Ք.Ա. 1490-1436):
 բ. Ելիցի ժամանակ թագավորող Փարավոնը կլիներ՝ Ամենհոտեպ II-ը (Ք.Ա. 1436-1407):
 (1) Ոմանք հավատում են Երիքովում տեղի ունեցած վկայության հիման վրա, որ ոչ մի դիպլոմատիկ կապեր չեն եղել Երիքովի և Եգիպտոսի միջև Ամենհոտեպ II-ի գահակալության ընթացքում (Ք.Ա. 1413-1377):
 (2) Ամառնայի տեքստերը արձանագրում են դիպլոմատիկ կապեր՝ նամակագրություններ, որոնք գրված են եղել հավաքածու գալարների վրա *Habiru-ի* մասին, որ նվաճել է Քանանի երկիրը *Ամենհոտեպ II-ի* օրոք: Հետևաբար, Ելիցը տեղի է ունեցել *Ամենհոտեպ II-ի* թագավորության ընթացքում:
 (3) Եթե Ելիցը ընկնում է 13-րդ դարում, ապա Դատավորների ժամանակաշրջանը այնքան էլ երկար չի եղել:
3. Այս տարեթվերի հետ կապված հավանական խնդիրներն են՝
 ա. Սեպտուագինտան (LXX) նշում է 440 և ոչ թե 480 տարի:
 բ. Հնարավոր է, որ այս 480 տարիները ներկայացնում են 12 սերունդներ՝ յուրաքանչյուրը 40 տարվա տևողությամբ, հետևաբար հանդիսանում է խորհրդանշական թիվ:
 գ. Ահարոնից մինչև Սողոմոն (տես՝ 1 Մնացորդաց 6) ընկած է քահանաների 12 սերունդ, ապա Սողոմոնից մինչև Երկրորդ Տաճարը ևս 12: Հրեաները հույների պես մի սերունդը հաշվում են որպես 40 տարի: Ուստի գոյություն ունի 480 տարվա ժամանակահատված դրանից թե՛ առաջ և թե՛ հետո (թվերի սիմվոլների կիրառման վերաբերյալ տես Բիմսոնի, *Ելիցի և Նվաճման Տարեթվերի Վերատարեգրություն* / *Bimson's Redating the Exodus and Conquest*)
4. Գոյություն ունեն ևս երեք տեքստեր, որոնք նշում են տարեթվեր.
 ա. Ծննդոց 15:13,16 (տես՝ Գործք 7:6), 400 տարվա կապանքներ՝ ստրկություն
 բ. Ելից 12:40-41 (տես՝ Գաղ.3:17)
 (1) MT – 430 պանդխտության տարիներ Եգիպտոսում
 (2) LXX – 215 պանդխտության տարիներ Եգիպտոսում
 գ. Դատավորաց 11:26 – 300 տարի Հովթայեի օրերի և նվաճման միջև (պաշտպանում է 1445 տարեթիվը)
 դ. Գործք 13:19, ելքը, թափառելը և նվաճումը – 450 տարի
5. Թագավորացների հեղինակը գործածել է հատուկ պատմական ակնարկներ և չի ամբողջացրել թվերը (Էդվին Թիել, *Երբայեցի Թագավորների Ճամանակագրությունը*, էջ՝ 83-85 /Edwin Thiele, *A Chronology of the Hebrew Kings*)

Բ. Երկրաբանության փորձառարական ապացույցը կարծես թե մատնացույց է անում Ք.Ա. 1290 կամ Եգիպտական 19-րդ Դիմաստիան:

1. Հովսեփը կարողացել էր այցելել իր հորը և Փարավոնին միևնույն օրը: Դա նշանակում է, որ առաջին բնիկ Փարավոնը Սեթի I Փարավոնն էր (*Seti I*, 1309-1290), որը սկսեց տեղափոխել Եգիպտոսի մայրաքաղաք Թեբեսից կրկին Նեղոս Դելտա, մի վայր, որը կոչվում էր *Avaris/Zoan/Tanis*, որը հանդիսանում էր Հիքսոսների հին մայրաքաղաքը: Նա էլ լինելու էր այն Փարավոնը, որը սկսեց ճնշել հրեաներին:

ա. Կարծես թե սա համապատասխանում է Հիքսոսների Եգիպտոսում թագավորելու վերաբերյալ երկու կտոր տեղեկությունների հետ.

(1) Ռամսես II-ի ժամանակներից սեպագիր մի արձանագրություն է գտնվել, որը հիշատակում է Ավարիսի հիմնադրման մասին, դրանից չորս հարյուր տարի առաջ (Ք.Ա. 1700-ականներին՝ Հիքսոսների կողմից):

(2) Ծննդոց 15:13-ի մարգարեությունը խոսում է չարչարանքների 400 տարվա մասին: Բ. Սա ակնարկում է, որ Հովսեփի իշխանության բարձրանալը եղել է Հիքսոս (Սեմական) Փարավոնի թագավորության օրոք: Իսկ նոր Եգիպտական դինաստիայի մասին նշված է Ելից 1:8-ում:

2. *Hyksos* (Հիքսոս) եգիպտական բառը նշանակում է «օտար երկրների իշխաններ» որոնք մի խումբ ոչ եգիպտական Սեմական կառավարիչներ էին, որ ղեկավարեցին Եգիպտոսը 15-րդ և 16-րդ դինաստիաների ընթացքում (Ք.Ա. 1720-1570): Ոմանք կապում են այս շրջանը Հովսեփի իշխանության գալու հետ: Եթե Ելից 12:40-ի հիման վրա Ք. Ա. 1720-ից հանենք 430 տարի, մենք կստանանք Ք.Ա. 1290 տարեթիվը:
3. Սեթի I (*Seti I*) Փարավոնի որդին Ռամզես II (*Rameses II*, 1290-1224) Փարավոնն էր: Այս անունը նշվում է որպես Եբրայեցի ստրուկների կողմից կառուցված շտեմարանի քաղաքներից մեկը, Ելից 1:11: Նաև Եգիպտոսի այս նույն տարածքը, որը գտնվում է Գոշենի մոտակայքում, կոչվում է Ռամզես, Ծննդ.47:11: *Avaris/Joan/Tanis* քաղաքը հայտնի էր որպես «Ռամզեսի տուն» անվամբ, Ք. Ա. 1300-1100:
4. Թուլթոգ III Փարավոնը հայտնի էր որպես մեծ շինարար, ինչպես Ռամզես II էր:
5. Ռամզես II-ը ուներ 47 դուստր, որոնք ապրում էին առանձին պալատներում:
6. Հնագիտությունը ցույց է տվել, որ Քանանի ամուր պարսպապատ քաղաքներից մեծ մասը (Հազոր, Դեբիր, Լաշիշ) քանդվել են և արագ վերակառուցվել մոտ Ք.Ա. 1250-ին: Հաշվի առնելով անապատում Իսրայելացիների դեգերելու 38 տարվա ժամանակահատվածը, ապա այս տարեթիվը համընկնում է Ելիցի համար Ք.Ա. 1290-ին:
7. Հնագիտությունը Ռամզեսին հաջորդող *Մերնեփտա* (*Merneptah*, Ք.Ա. 1224-1214 [տես՝ Մերնեփտայի Սեպագիր Արձանագրությունը, Ք.Ա. 1220]) Փարավոնի սեպագիր արձանագրություններից գտել է մի հիշատակագրություն այն մասին, որ հարավային Քանանում Իսրայելացիներ են եղել:
8. Եղովմը և Մովաբը կարծես թե ձեռք էին բերել ամուր ազգային ինքնություն Ք.Ա. 1300-ականների վերջերում: Այս երկրները 15-րդ դարում դեռևս կազմավորված չէին (Glueck):
9. Ջոն Բիմսոնի *Ելիցի և Նվաճման Տարեթվի Վերաստորեգրություն* գիրքը (*Redating the Exodus and Conquest by John J. Bimson*, հրատարակչությունը՝ University of Sheffield, 1978) չի համաձայնվում ավելի վաղ տարեթիվ վկայակոչող բոլոր հնագիտական վկայությունների հետ:

Գ. Գոյություն ունի հնարավոր ևս մի տարբերակ, որը վկայակոչում է ավելի վաղ տարեթիվ, քան Ք.Ա. 1445-ը: Տե՛ս Պատմության Հեռուստասիք՝ «Ելիցի վերձանումը», որը պաշտպանում է հյուսիսային ուղին՝ ընթացքը:

7:19 Այս դեպքը արձանագրված է Ելից 1:10-ում:

7:20 «Մովսեսը ծնվեց» Այս դեպքը արձանագրված է Ելից 2-ում:

■ **«խիստ վայելուչ էր /Աստծո առջև/»** Սա եբրայերեն դարձվածք է գեղեցկության համար (տես՝ Ելից 2:2): Նույնիսկ Ջոզեֆուսը խոսում է Մովսեսի գեղեցկության մասին (տես՝ *Հնություններ* 2.9.6):

7:21 Այս դեպքը արձանագրված է Ելից 2:5-6,10-ում:

■ **«և երբ դուրս նետեցին նրան»** Սա հունարեն *ektithēmi* տերմինն է, որը նշանակում է «բացահայտել» (տես՝ հ. 19) կամ «հանել դուրս»: Եգիպտացիները ստիպում էին եբրայեցիներին դուրս հանել և թողնել իրենց արու գավակներին բնության տարերքների և վայրի գազանների քմահաճույքին, որպեսզի կարողանան վերահսկել նրանց բնակչության արագ աճը:

■

NASB, NKJV
NRSV, NJB

«Փարավոնի դուստրը վերցրեց նրան»
«Փարավոնի դուստրը որդեգրեց նրան»

Anaireō տերմինը տառացի նշանակում է «վեր հանել»: Մովսեսը տառացիորեն «վեր հանվեց» գետի միջից և այս գործողությամբ դարձավ Փարավոնի աղջկա որդեգիր զավակը:

7:22 Մովսեսն ուներ Փարավոնի պալատում այդ օրերին հասանելի լավագույն ակադեմիական և ռազմական կրթությունը:

■ «**և գորավոր էր իր խոսքերով և գործերով**» Սա պետք է, որ Մովսեսի հետագա կյանքի ամփոփում լինի, քանի որ ՅԱՀՎԵՆ հետ իր հանդիպման ժամանակ նա պնդում էր, որ չի կարող լավ խոսել (տես՝ Ելից 4:10-17):

7:23-24 Այս դեպքը արձանագրված է Ելից 2:11-12-ում:

7:23 «**երբ նրա քառասուն տարին լրացավ**» Որքանով հիշում են Գ. Լ. Մուդին է ասել, որ Մովսեսի կյանքը կարելի է բաժանել երեք քառասուն տարիների խմբի՝

1. առաջին քառասուն տարիների ընթացքում նա կարծում էր, որ իրենից ինչ-որ մեկն է ներկայացնում (այսինքն՝ կրթված լինելով Փարավոնի պալատում)
2. երկրորդ քառասուն տարիների ընթացքում կարծում էր, որ ոչնչություն էր դարձել (այսինքն՝ փախուստի դիմեց Մադիանի երկիր և սովորեց Մինայի անապատի ապրելակերպն ու տեղանքը)
3. երրորդ քառասուն տարվա ընթացքում նա հայտնաբերեց, թե ինչ կարող է անել Աստված ոչնչության հետ (այսինքն՝ առաջնորդի Աստծո ժողովրդին Խոստացյալ՝ Ավետյաց Երկիրը)

7:25 Այս համարը Ստեփանոսի ենթադրություններն էին (հավանաբար հրեական ավանդույթներից); դրանք Ելիցում արձանագրված չեն:

7:26-29 Այս դեպքը գտնվում է Ելից 2:13-14-ում:

7:29 «**Եվ Մովսեսն այս խոսքի վրա փախավ**» Այս դեպքը արձանագրված է Ելից 2:15,22-ում: Եգիպտացուն սպանելուց հետո Մովսեսի վախենալը ցույց է տալիս, որ Փարավոնը այնքան էլ նրան չէր պաշտպանում, նույնիսկ եթե նա հանդիսանում էր Փարավոնի աղջիկներից մեկի որդեգրված զավակը: Եբր.11:27 այս հարցում նույնպես հստակ է:

■ «**ու պանդուխտ եղավ Մադիանի երկրում**» Աստված հայտնվեց Մովսեսին Մադիանի երկրում վառվող կրակի միջից (տես՝ Ելից 3-4) և հայտնեց նրան Իր Օրենքը Մինա լեռան վրա՝ Մադիանի երկրում (տես՝ Ելից 19-20), որը ցույց է տալիս, որ Աստված չի սահմանափակվում, թե Իրեն որտեղ հայտնի: Այս նույն շեշտադրումը բացի Երուսաղեմի Տաճարում մարդկանց Աստծո հայտնվելուց երևում է Գործք 7:36, 44, 48 և 53-ում:

■ «**որտեղ երկու որդի ունեցավ**» Այս դեպքը արձանագրված է Ելից 2:22; 4:20; 18:3-4-ում:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 7:30-34

³⁰Եվ քառասուն տարի հետո, Մինա լեռան անապատում Տիրոջ հրեշտակը երևաց նրան մորենու կրակի բոցով: ³¹Երբ Մովսեսը դա տեսավ, զարմացավ այս երևույթի վրա ու երբ մոտենում էր նայելու, Տիրոջը ձայնը լսվեց նրան, որ ասում էր. ³²»Ես եմ քո հայրերի Աստվածը, Աբրահամի Աստվածն ու Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը»: Եվ Մովսեսը, զարհուրած, չէր համարձակվում նայել: ³³Ապա Տերը նրան ասաց. «Ոտքերիդ կոշիկները հանի՛ր, որովհետև այդ տեղը, որի վրա կանգնած ես, սուրբ հող է: ³⁴Հիրավի ես տեսա Իմ ժողովրդի չարչարանքը Եգիպտոսում ու լսեցի նրանց հեծեճանքը և իջա, որ նրանց ազատեմ: Եկ հիմա, ես քեզ ետ Եգիպտոս պիտի ուղարկեմ»:

7:30 Այս դեպքը գտնվում է Ելից 3-4 գլուխներում:

■ «**հրեշտակը**» ՀԿ-ի տեքստում այս հրեշտակը իրականում ՅԱՀՎԵՆ է: Տե՛ս ամբողջական գրառումներ 5:19: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է բնութագրվում այս հրեշտակը.

1. Ելից 3:2, «Տիրոջ հրեշտակը կրակի բոցով նրան երևաց»
2. Ելից 3:4, «երբ Տերը (այսինքն՝ ՅԱՀՎԵՆ) տեսավ, որ նա դարձավ տեսնելու»
3. Ելից 3:4, «Աստված (այսինքն՝ Elohim) թփի միջից կանչեց նրան»

■ «Սինա լեռ» Տե՛ս ստորև տրված Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՆԱ ԼԵՌԱՆ ՏԵՂԱՆՔԸ

Ա. Եթե Մովսեսը խոսեր բառացի և ոչ թե փոխաբերաբար «երեք օրվա ճանապարհ»-ի մասին, որը նա խնդրում էր Փարավոնից (3:18; 5:3; 8:27), ապա դա այնքան էլ երկար ճանապարհ չէր լինի նրանց համար հասնելու Սինայի թերակղզու հարավային կողմի ավանդական տարածքը: Հետևաբար որոշ գիտնականներ այս լեռը տեղակայում են Կադես-Բառնես օազիսի մոտակայքում:

Բ. Այս ավանդական տարածքը, որը կոչվում էր «Հերել Մուսա»՝ Սին կոչվող անապատում, ունի մի քանի առավելություններ.

1. Լեռան առջև տարածվող ընդարձակ դաշտավայրը
2. 2 Օրինաց 1:2 ասում է, որ դա տասնմեկ օրվա ճամփորդություն էր Սինա լեռից մինչև Կադես-Բառնես:
3. »Սինա« տերմինը Եբրայերեն տերմին չէ: Հնարավոր է դրա անունը կապված է Սին անապատի հետ, որը ակնարկում է անապատի փոքրիկ թուփ: Այս լեռան Եբրայերեն անունը Զորեր է (այսինքն՝ անապատ):
4. Սինա լեռը մ. թ. չորրորդ դարից ի վեր եղել է ավանդական տարածք: Այն գտնվում է «Մադիանի երկրում», որն ընդգրկում էր Սինայի թերակղզու և Արաբիայի մեծ մասը:
5. Թվում է թե հնաբանները հաստատել են Ելիցի իրադարձություններում նշված մի քանի քաղաքների գտնվելու վայրերը (*Elim, Dophkah, Rephidim*), նշելով որ դրանք տեղակայված են եղել Սինա թերակղզու արևմտյան կողմում:

Գ. Հրեաները երբեք էլ հետաքրքրված չեն եղել Սինա լեռան տեղանքով: Նրանք հավատում էին, որ Աստված Օրենքը տվել է իրենց և իրականացրել Ծննդոց 15:12-21-ի խոստումը: «Որտեղը» խնդիր չէր նրանց համար և նրանք մտադիր չէին կրկին վերադառնալու այդ վայրը (այսինքն՝ ամենամյա ուխտագնացության):

Դ. Սինա լեռան ավանդական տարածքը մինչև *Սիլվիայի Ուխտագնացությունը (Pilgrimage of Silvia)* չէր հաստատվել (տես՝ Ֆ. Ֆ. Բրյուս, *Գործք Առաքելոցի Գրքի Մեկնաբանություն*, էջ՝ 151 /F. F. Bruce, *Commentary on the Book of the Acts*):

Ե. Մեր օրերում շատ ենթադրություններ կան Արաբիայում Աքաբա Ծոցի նոր հնարավոր տեղանքի շուրջ: Ասում են՝

1. որ Մադիանի երկիրը միշտ էլ գտնվել է բացառապես Արաբիայում
2. որ Գաղ.4:25 Պողոսը խոսում է հենց Արաբիայի մասին
3. որ արբանյակային քարտեզագրմամբ հայտնվել է մի հնամենի ճանապարհ, որը Եգիպտոսից հատում է Սինայի թերակղզին մի վեր խոյացած, ժայռոտ խուլթով, որը հատում է Աքաբայի ծովածոցը:
4. որ այս տարածքի ամենաբարձր գագաթը մոխրացած է՝ սևացած (տես՝ Ելից 19:16,18): Պետք է վերասահմանել, որ մենք պարզապես չգիտենք այդ տեղանքը:

7:32 Այս դեպքը արձանագրված է Ելից 3:6-ում:

■ «հայրերի» Թե՛ եբրայերեն տեքստում և թե՛ հունարեն թարգմանության մեջ (այսինքն՝ Սեպտուագինտան) այս բառը ԵԶԱԿԻ թվով է նշված: Արտահայտության մյուս բոլոր հանդիպող դեպքերում այն ՀՈԳՆԱԿԻ թվով է: Աստված գիտեր Մովսեսի ստրուկ հորը:

7:33 Այս դեպքը արձանագրված է Ելից 3:5-ում: Մովսեսը մոտեցավ այրվող մորենուն հետաքրքրությունից դրդված և ոչ թե իր կրոնական նվիրումից:

- Իր կոշիկները հանելու ճշգրիտ՝ հստակ պատճառը հայտնի չէ:
1. հնարավոր է կոշիկները կեղտոտ էին (այսինքն՝ կենդանու գոմաղբից)
 2. կոշիկները հանելը հնարավոր է նշան է մտերմության կամ ընտանեկան միջավայրի (այսինքն՝ տանն է)
 3. հնարավոր է դա եղել է Նահապետների մշակութային վարվելաձև կամ եգիպտական ավանդույթ՝ ծես:

7:34 Այս դեպքը գտնվում է Ելից 3:7-ում: Ինձ համար այս խոսքը աստվածաբանորեն շատ կարևոր է, քանի որ ՅԱՀՎԵՆ լսեց նրանց աղոթքը, տեսավ նրանց չարչարանքը և պատասխանեց: Նա ցած իջավ նրանց ազատելու, սակայն ուշադրություն դարձրեք, որ նրա ազատագրումը մարդկային գործոնի միջոցով եղավ ազդեցիկ՝ հասանելի: Աստված ուղարկեց դժկամ Մովսեսին: Աստված նախընտրել է գործ ունենալ մարդկանց հետ մարդկանց միջոցով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԶՍՏ. 7:35-43

³⁵Այս Մովսեսին, որին նրանք մերժեցին, ասելով. «Ո՞վ է քեզ իշխան ու դատավոր կարգել» Աստված հենց նրան իշխան ու ազատագրիչ ուղարկեց այն հրեշտակի ձեռքով, որ մորենու մեջ նրան երևաց: ³⁶Եվ նա դուրս բերեց նրանց, քառասուն տարի հրաշքներ ու նշաններ անելով Եգիպտոսի երկրում, Կարմիր Ծովում և անապատում: ³⁷Այս Մովսեսն է, որ Իսրայելի որդիներին ասաց. «Ձեր Տեր Աստվածը ձեր եղբայրների միջից ինձ նման մի մարգարե է հանելու. նրան լսեցեք»: ³⁸Մա Նա է, որ անապատում հավաքված եկեղեցու և այն հրեշտակի միջև էր, որ Սինա լեռան վրա խոսեց իր հետ, և մեր հայրերի հետ, որ կենսատու պատգամներ ստացավ՝ մեզ տալու համար, ³⁹ ու մեր հայրերը չուզեցին հնազանդվել, այլ մերժեցին նրան և իրենց սրտերով Եգիպտոս վերադարձան, ⁴⁰ և Ահարոնին ասացին. «Մեզ համար աստվածներ չինիր, որ մեր առջևից գնան, որովհետև այն Մովսեսին, որ մեզ Եգիպտոսի երկրից հանեց, չգիտենք, թե ինչ պատահեց»: ⁴¹Եվ այդ օրերին մի հորթ ձուլեցին ու կուռքին զոհեր մատուցեցին և ուրախացան իրենց ձեռքի գործերով: ⁴²Աստված էլ երես դարձրեց նրանցից և թողեց, որ երկնքի զորությունները պաշտեն, ինչպես մարգարեների գրքում է գրված. «Մի՞թե անապատում քառասուն տարի զոհեր ու պատարագներ մատուցեցիք ինձ, ո՞վ Իսրայելի տուն: ⁴³Այո՛, դուք Մոզոթի վրանն առաք ու ձեր Հռեմփա աստծո աստղը, կուռքեր, որ շինեցիք՝ դրանց երկրպագություն անելու համար. Ես էլ ձեզ Բաբելոնից այն կողմ պիտի փոխադրեմ»:

7:35 «Այս Մովսեսին, որին նրանք մերժեցին» Աստծո ժողովուրդը պարբերաբար մերժում էր Աստծո պատգամաբերներին (տես՝ հհ. 51-52): Հնարավոր է սա հենց հ. 27-ի պատճառն է:

■ «հրեշտակի ձեռքով, որ մորենու մեջ նրան երևաց» Նորից Աստված Խոստացյալ Երկրից դուրս մոտեցավ մի իսրայելացու: Աստծո գործը չի սահմանափակվում որևէ տեղանքով: Իսրայելի պատմության մեծ մասը տեղի է ունեցել Քանանից դուրս և նախքան Երուսաղեմի Տանարի կառուցումը: Իսրայելացիների պատմության ամբողջ ընթացքում առաջնորդները մերժվում էին իրենց ժամանակակիցների կողմից (տես՝ հհ. 9,27-28,35,39): Մա պարբերաբար կրկնվող խնդիր էր:

Այս հրեշտակը նկարագրվում է որպես աստվածություն (տես՝ Ելից 3:2,4): Աստծո այսպիսի ֆիզիկական դրսևորման օրինակ կարելի է տեսնել նաև Ծննդ.16:7-13; 22:11-15; 31:11,13; 48:15-16; Ելից 13:21; 14:19; Դատ.2:1; 6:22-23; 13:3-22; Չաք.3:1-2: Սակայն պետք է ասել, որ «Տիրոջ հրեշտակը» ոչ միշտ է Աստծո ֆիզիկական դրսևորումը. երբեմն նա պարզապես հրեշտակ է՝ պատգամաբեր (տես՝ Ծննդ.24:7,40; Ելից 23:20-23; 32:34; Թվոց 22:22; Դատ.5:23; 2 Թագ.24:16; 1 Մնաց.21:15; Չաք.1:11; 12-13):

7:36 Մովսեսի և Ահարոնի միջոցով Աստծո հրաշագործ գործության (այսինքն՝ Մովսեսի գավազանը) համառոտ պատմությունն է՝ ամփոփումը:

7:37-38 Մա 2 Օրինաց 18:15-ից Մեսիային վերաբերող մեջբերում է: Ստեփանոսը նմանեցնում է Ելիցի և Անապատում Դեզերելու Շրջանում Աստծո ներկայությունը թե՛ Աստծո հրեշտակին և թե՛ Աստծո կողմից հատուկ ուղարկված Մովսեսին հաջորդողին (այսինքն՝ Մեսիան, Մարգարեն): Ստեփանոսը չի թերագնահատում Մովսեսին, այլ իրականում լսում է նրան:

7:38 «հավաքված եկեղեցի» /անգլ.՝ համայնք/ Մա հունարեն *ekklesia* տերմինն է, սակայն կիրառվում է հավաքույթի՝ ժողովրդի իմաստով, և ոչ թե եկեղեցու: Տե՛ս Հատուկ Թեմա. Եկեղեցի 5:11-ում:

■ «այն հրեշտակի միջև էր, որ Սինա լեռան վրա խոսեց իր հետ» Ռաբբիական աստվածաբանությունը պնդում էր, որ հրեշտակները ՅԱՀՎԵՆ և Օրենքը տրվելու միջև միջնորդներ էին (տես գրառում 7:53): Նաև հնարավոր է, որ հրեշտակը վերաբերում է հենց ՅԱՀՎԵՆ (տես՝ Ելից 3:21 համեմատած 14:19; ինչպես նաև Ելից 32:34; Թվոց 20:16; Դատ.2:1):

7:39 «մեր հայրերը չուզեցին հնազանդվել» Ստեփանոսը միացնում է ՀԿ-ի ապստամբության կետերը: Նա ակնարկում է, որ հրեաները միշտ էլ մերժել են Աստծո առաջնորդներին, իսկ հիմա էլ մերժել են Մեսիային:

■ «մերժեցին նրան» Այս դեպքը գտնվում է Թվոց 14:3-4:

7:40-41 Այս դեպքը գտնվում է Ելից 32-ում: Սա կռապաշտություն չէր, այլ Աստծո ֆիզիկական պատկերի պատրաստում: Այն հետագայում վերածվեց պտղաբերության պաշտամունքի:

7:41 Ստեփանոսը մեկնաբանում է ոսկե հորթը որպես կուռք և օգտագործում է այս պատմական իրադարձությունը ներկայացնելու Ամովս 5-ից մի մեջբերում, որը ակնարկում է, որ Իսրայելը, նույնիսկ դեռ շատ վաղ ժամանակներում, ինչպես Ելիցն ու Անապատում Թափառելու շրջանն էր, կռապաշտ և ապստամբ էր:

7:42 «Աստված էլ երես դարձրեց նրանցից և թողեց, որ ... ծառայեն /պաշտեն/» Հ՛հ. 42 և 43 մեջբերումներ են Ամովս 5:25-27-ից, որտեղ Ամովսը հայտարարում է, որ Իսրայելը միշտ օտար աստվածների գոհեր էր մատուցում: Դա նրանց վաղ պատմության մեջ պարբերաբար կրկնվող օրինակն էր (տես՝ Հեսու 24:20): Սա հիշեցնում է Հռոմ.1:24,26,28 համարներում մերժման խիստ սահմանումներից մեկը:

■ «երկնքի գորությունները» Սա վերաբերում է ասորական և բաբելոնյան աստղային՝ համաստեղությունների երկրպագությանը (տես՝ 2 Օր.17:3; 2 Թագ.17:16; 27:3; 2 Մնաց.33:3,5; Երեմ.8:2; 19:13): Գոյություն ունեն մի քանի տեքստային խնդիրներ Ամովս 5:25-27-ի եբրայերեն տեքստի (MT), հունարեն տեքստի (LXX) և Ստեփանոսի մեջբերման միջև՝

1. Աստղ աստծո անունը: MT-ին ասորական Սատուռն մոլորակի համար նշում է *kywn* կամ *kaiwann* անունները: LXX-ը եգիպտական մոլորակային՝ աստղային Սատուռն աստծո համար տալիս է *rypn* կամ *raiphan*, որը հնարավոր է *repa* տերմինն է:
2. Եբրայերեն տեքստը (MT) և հունարեն տեքստը (LXX) նշում են «Դամասկոսից այն կողմ» մինչ Ստեփանոսը մեջբերում է «Բաբելոնից այն կողմ»:

Ամովսի այսպիսի ընթերցանությամբ մեզ հայտնի ձեռագիր չկա: Հնարավոր է Ստեփանոսը միացրել է ասորական գերությունը, որի մասին խոսում է Ամովսը, հետագայում Հուդայի բաբելոնյան գերության հետ, միայն փոխարինելով գերության վայրը:

Աստղային աստվածների երկրպագությունը սկիզբ է առել Միջագետքում, սակայն տարածվել է դեպի Միդիա և Քանան (տես՝ Հոր 31:26,27): Թեղ Էլ-Ամառնա (Tell El-Amarna) հնագիտական հայտնագործությունը, որը պարունակում էր Ք.Ա. 14-րդ դարի Քանանից Եգիպտոս ուղղված հարյուրավոր նամակներ, նույնպես օգտագործում է այս աստղային աստվածների անունները որպես տեղանուններ:

■ «մարգարեների գրքում» Սա վերաբերում է այն գալարին, որը պարունակում էր տասներկու փոքր մարգարեներին (տես՝ 13:40): Մեջբերումը, որ տրված է 42-43 համարներում Մեպտուազինտայի Ամովս 5:25-27-ից է:

Հ.42-ում հաջորդ արտահայտությունը հարց է, որն ակնկալում է «ոչ» պատասխանը:

7:43 «Մողոք» Թագավոր բառի եբրայերեն բաղաձայնները *mlk* են (BDB 574): Գոյություն ունեն Քանանի մի քանի աստվածներ, որոնց անունները այս երեք բաղաձայների հետ կապված տարբեր միացություններ են՝ *Milcom*, *Molech* (Մողոքը) կամ *Moloch*: *Moloch* աստվածը Ամորիացիների պտղաբերության գլխավոր աստվածն էր, որին երեխաներ էին զոհաբերում, որպեսզի ապահովվին համայնքի կամ ազգի առողջությունն ու բարգավաճումը՝ հաջողությունը (տես՝ Ղևտ.20:2-5, 2 Օր.12:31; 3 Թագ.11:5,7,33; 4 Թագ.23:10,13,14; Երեմ.7:31; 32:35): Ա. Թ. Ռոբերթսոնը իր *Բառապատկերները Նոր Կտակարանում* (A. T. Robertson, *Word Pictures In the New Testament*, հատոր 3, էջ՝ 93) ասում է, որ *Moloch-ը* «եզան գլխով մի պատկեր էր, որն ուներ լայն բացված ձեռքեր, որոնց մեջ դրվում էին երեխաները և ներքևում մի խոռոչ, որտեղից կրակ էր վառվում»: Ղևտ.18:21-ում *Molech* (Մողոք) տերմինի կիրառությունը անպատշաճ սեռական միությունների համատեքստում, որոշ գիտնականներ հանգեցրել է այն ենթադրության, որ երեխաները չէին զոհաբերվում Մողոքին, այլ թե՛ արական և թե՛ իգական սեռի երեխաներին նվիրաբերվում էին նրան որպես տաճարի պոռնիկներ: Գաղափարը համընկնում է պտղաբերության պաշտամունքի մեջ տարածված արարողությունների հետ:

■ «պատկերներ /հայ.՝ կուռքեր/» Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՎԱԳՎՓ (TUPOS)

Խնդիրը *tupos* բառն է, որ ունի կիրառման մի քանի տարբերակ.

1. Մուլթոն և Միլիգան, *Հունարեն Նոր Կտակարանի Բառարան*, էջ՝ 645 (Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*)
 - ա. նմուշ
 - բ. ծրագիր
 - գ. գրելաոճ կամ գրելաձև
 - դ. որոշում կամ հրաման
 - ե. դատավճիռ կամ վճիռ
 - զ. մարդկային մարմնի նմուշը՝ մոդելը, որպես ընտիր գոհ նվիրված բժշկող աստծուն
 - է. ԲԱՅ, որը գործածվում է օրենքի հրամանները հարկադրելու իմաստով
2. Լու և Նիդա, *Հունարեն-անգլերեն բառարան* (Louw and Nida, *Greek-English Lexicon*, հատոր 2, էջ՝ 249)
 - ա. սպի (տես՝ Հովհ.20:25)
 - բ. պատկեր (տես՝ Գործք 7:43)
 - գ. մոդել՝ նմուշ (տես՝ Եբր.8:5)
 - դ. օրինակ (տես՝ 1 Կորնթ.10:6; Փիլ.3:17)
 - ե. նախատիպ (տես՝ Հռոմ.5:14)
 - զ. տեսակ (տես՝ Գործք 23:25)
 - է. բովանդակություն՝ նամակ (տես՝ Գործք 23:25)
3. Հարոլդ Զ. Մուլթոն, *Վերանայված Վերլուծական Հունարեն Բառարան* (Harold K. Moulton, *The Analytical Greek Lexicon Revised*, էջ՝ 411)
 - ա. ինքնագովում, տպավորություն, նշան (տես՝ Հովհ.20:25)
 - բ. սահմանափակում
 - գ. պատկեր (տես՝ Գործք 7:43)
 - դ. բանաձև, սխեմա (տես՝ Հռոմ.6:17)
 - ե. տեսք, բովանդակություն (տես՝ Գործք 23:25)
 - զ. ձև, նմուշ (տես՝ 1 Կորնթ.10:6)
 - է. կանխատեսելի ձև, տեսակ (տես՝ Հռոմ.5:14; 1 Կորնթ.10:11)
 - ը. օրինաչափություն (տես՝ Գործք 7:44; Եբր.8:5)
 - թ. բարոյական չափանիշ (տես՝ Փիլ.3:17; 1 Թեսաղ.1:7; 2 Թեսաղ.3:9; 1 Տիմ.4:12; 1 Պետ.5:3)

Այս համատեքստում #1-ը կարծես թե լավագույն տարբերակն է: Ավետարանը առնչվում է թե՛ վարդապետության և թե՛ ապրելակերպի հետ: Քրիստոսի մեջ փրկության ճրի պարզևը նույնպես պահանջում է Քրիստոսանման կյանք:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 7:44-50

⁴⁴Վկայության խորանն անապատում մեր հայրերի հետ էր, ինչպես Նա սահմանել էր՝ Մովսեսին ասելով, թե այն պետք է իր տեսած օրինակի համաձայն շինի: ⁴⁵Մեր հայրերն էլ, որ նրանց հաջորդեցին, Հեսուի հետ այն բերեցին հեթանոսների տիրույթները, որոնց Աստված վտարեց մեր հայրերի առջևից, ⁴⁶մինչև Գավթի օրերը, որ Աստծո առաջ շնորհ գտավ և ուզեց, որ Հակոբի Աստծո համար մի բնակարան գտնի. ⁴⁷իսկ Սողոմոնը Նրա համար տուն շինեց: ⁴⁸Սակայն Բարձրյալը ձեռնաշեն տաճարներում չի բնակվում. ինչպես մարգարեն է ասում. ⁴⁹»Երկինքն Իմ աթոռն է, ու երկիրն իմ ոտների պատվանդանն է: Ի՞նչ տուն պիտի կառուցեք, ասում է Տերը, կամ ո՞րն է Իմ հանգստի վայրը: ⁵⁰Մի՞թե Իմ ձեռքը չի շինել այս բոլոր բաները:»

7:44 Այս դեպքը արձանագրված է Ելից 25-31; 36-40: Խորանին վերաբերող այլ մանրամասնություններ Մովսեսին հայտնվեցին Սինա լեռան վրա: ՆԿ-ի Եբրայեցիների գիրքը խոսում է երկնային խորանի կամ սրբարանի մասին (տես՝ 8:5-6; 9:11,23), որի կրկնօրինակը այս երկրայինն էր: Ինչպես որ Ստեփանոսը սրանից առաջ գլուխ 6-ում առերեսվեց իրեն հարուցված առաջին մեղադրանքի հետ, թե ինքը հակառակվում էր Մովսեսին (տես՝ 6:11), այժմ էլ առերեսվում էր երկրորդ մեղադրանքի հետ, թե ինքը դեմ էր Տաճարին (տես՝ 6:13):

■ «օրինակ» Տես Հատուկ Թեմա 7:43:

7:45 Սա ընդգրկում է նվաճման ժամանակաշրջանից (կամ Ք.Ա. 1400 կամ Ք.Ա. 1250) մինչև Դավթի ժամանակները (մոտ Ք.Ա. 10011 մինչև Ք.Ա. 971/70, Harrison, Ք.Ա. 973, Young; Ք.Ա. 961, Bright):

7:46 Սա անդրադարձ է 2 Թագավորաց 7 գլխի, որը շատ կարևոր հատված է: Այն Դավթի թագավորության աստվածային հաստատությունն է:

7:47 «Սողոմոնը Նրա համար տուն շինեց» Այս արձանագրությունը գտնվում է 3 Թագավորաց 6-8 և 2 Մնացորդաց 1-6-ում:

7:48 Այս հայտարարությունը նման է 3 Թագ.8:27 և 2 Մնաց.6:18-ում Սողոմոնի կատարած հայտարարությանը:

7:49-50 Այս մեջբերումը կատարված է Սեպտուագիստայի Ես.66:1-2-ից: Սա ուզում է մատնանշել այն, որ Սողոմոնն էլ գիտակցում էր, որ որևէ շինություն չէր կարող իր մեջ տեղավորել արարիչ Աստծուն:

Արդյո՞ք այս համարները ենթադրում են Հեթանոսների ներգրավվածության փաստը: Եթե այդպես է, կարծես թե ինչ-որ բան քողարկված է: Սակայն Սողոմոնը տեսավ տաճարը որպես աշխարհի համար ՅԱՀՎԵին մոտենալու մի վայր (տես՝ 3 Թագ.8:41-43): Հունախոս հրեաներն էին (այսինքն՝ Գործք 6-ի յոթ հոգին), որոնք տեսան և հռչակեցին համաշխարհային առաքելությունը՝ նույնիսկ նախքան Առաքյալները կգիտակցեին Հիսուսի ուսմունքների այս առանձնահատկությունը (տես՝ Մատթ.28:18-20; Գործք 1:8): Հնարավոր է Ստեփանոսը սա հաստատում է հ. 50-ի ակնարկով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 7:51-53
⁵¹«Ո՛վ խստապարանոցներ ու սրտով և ականջով չթլփատվածներ, դուք միշտ հակառակվում եք Սուրբ Հոգուն. ինչպես ձեր հայրերն արեցին, այնպես էլ դուք եք անում:
⁵²Մարգարեներից ո՞ր մեկին չհավանեցին ձեր հայրերը, ու սպանեցին նրանց, որ նախապես ցույց տվեցին այն Արդարի գալու մասին, Ում մատնիչները և սպանողները դարձաք հիմա,
⁵³դուք, որ հրեշտակների կարգադրությամբ Օրենքն ստացաք, բայց չպահեցիք»:

7:51 «Ո՛վ մարդիկ» /անգլերենում/ Ստեփանոսը վերադառնում է անցյալի հրեա առաջնորդների և ժողովրդի ապստամբությունից դեպի տաճարում իր պատգամը լսող այդ օրերի առաջնորդներին և ժողովրդին: Նրանք ՅԱՀՎԵի դեմ ապստամբներ էին և դեռ շարունակում էին մնալ:

■ «խստապարանոց» Ստեփանոսը ակնարկում է Մովսեսի կողմից Հակոբի՝ Իսրայելի որդիներին բնութագրող մի խոսք (տես՝ Ելից 32:9; 33:3,5; 34:9; 2 Օր.9:6):

■ «սրտով չթլփատվածներ» Այս եբրայերեն դարձվածքը նշանակում է անհավատարիմ, անազնիվ և անվստահելի (տես՝ Ղևտ.26:41; Երեմ.9:25-26; Եզեկ.44:7): 2 Օր.10:16; Երեմ.4:4-ի հակադրությունն է:

■ «և ականջով» Այս դարձվածքը վերաբերում է Աստծո պատգամաբերներին նրանց լսելու և արձագանքելու դժկամությանը (տես՝ Երեմ.6:10):

■ «միշտ հակառակվում եք Սուրբ Հոգուն» Սա շատ նման է Ես.63:10-ին: Աստծո սերն ու հավատարմությունը գովաբանվում են Ես.63:9,11-14-ում, սակայն մարդկանց արձագանքը եղավ անհավատությունը:

7:51բ-52 Սա մի խիստ դատապարտություն է այդ օրերի, ինչպես նաև անցյալի հրեա առաջնորդների համար: Անցյալում Աստծո ժողովուրդը սպանել էր Աստծո պատգամաբերներին և հիմա էլ սպանել են Մեսիային (տես՝ 3:14; 5:28):

7:52 «Արդարը» Սա կիրառվում է Հիսուսի համար որպես տիտղոս՝ անուն, 3:14 և 22:14-ում: Տես ավելի լիարժեք գրառումները 3:14-ում և Հատուկ Թեմա. Արդարություն, 3:14:

7:53 «հրեշտակների կարգադրությամբ» Սա վերաբերում է Սեպտուագիստայից 2 Օր.33:2-ի ռաբբիական մեկնաբանությանը, որտեղ Աստված Օրենքը տվեց Մովսեսին հրեշտակի միջնորդությամբ, որը կարծես թե հաստատվում է Գաղ.3:19 և Եբր.2:2-ի միջոցով:

■ «բայց /մինչդեռ/ չպահեցիք» Ստեփանոսը իր պաշտպանության խոսքը սկսեց «լսեցե՛ք» (BDB 1033) բառով, որը հնարավոր է արտահայտում է Եբրայերենի *Shema* «լսեցե՛ք այնպես, որ հասկանաք»

իմաստը (տես՝ 2 Օր.6:4): Ստեփանոսը, և հետագայում Հակոբոսը (Հիսուսի կիսով չափ եղբայրը) հայտարարում են «եղե՛ք խոսքը կատարողներ, և ոչ թե միայն լսողներ» (տես՝ Հակ.1:22-23, Հիսուսին հետևելու հարցում, Մատթ.7:24-27; Ղուկ.11:48; Հովհ.13:17; ինչպես արեց Պողոսը՝ Հռոմ.2:13):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 7:54-60

⁵⁴Եվ նրանք, այս ամենը լսելով, սրտներում գայրանում էին ու նրա վրա առամ կրճտացնում: ⁵⁵Իսկ նա, Սուրբ Հոգով լցված, նայեց դեպի երկինք և տեսավ Աստծո փառքն ու Հիսուսին, որ Աստծո աջ կողմում կանգնած էր ⁵⁶և ասաց. «Ահա՛ տեսնում եմ երկինքը բացված, ու Մարդու Որդուն՝ Աստծո աջ կողմում կանգնած»: ⁵⁷Իսկ նրանք, բարձրաձայն աղաղակելով, իրենց ականջները փակեցին, և բոլորը միասին վազեցին նրա վրա ⁵⁸ու քաղաքից դուրս հանելով՝ քարկոծեցին նրան, և վկաներն իրենց հանդերձները պահ էին տալիս մի երիտասարդի ոտների մոտ, ում անունը Սոդոս էր: ⁵⁹Եվ քարկոծում էին Ստեփանոսին, որն Աստծուն էր կանչում և ասում. «Տե՛ր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին»: ⁶⁰Եվ նա, ծնկի գալով, բարձրաձայն աղաղակեց. «Տե՛ր, սա մեղք մի՛ համարիր նրանց»: Եվ այս ասելով՝ ննջեց:

7:54 «նրանք» Սա նկատի ունի Սինեդրոնի անդամներին (տես՝ 6:15):

■	
NASB	«սրտներում գայրանում էին»
NKJV	«խիստ գայրանում էին»
NRSV	«նրանք դարձել էին կատաղի»
TEV	«նրանք մոլեգնում էին»
NJB	«նրանք գայրանում էին»

Սա ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակ է: Բառացի նշանակում է «խիստ գայրանալ» (տես՝ 5:33): Ստեփանոսի պատգամը իրոք հասավ այս առաջնորդներին, սակայն զոջալու փոխարեն նրանք վերադարձան՝ ինչպես միշտ մերժողականությանն և սպանությանը (տես՝ 5:33):

■ **«առամ կրճտացնում»** Սա գայրույթի նշան է (տես՝ Հոբ 16:9; Մաղմ.35:16; Ողբ 2:16):

7:55 «Սուրբ Հոգի... Աստված... Հիսուս» Ուշադրություն դարձրեք, որ նշվում է Աստծո Երրորդությունը: Տե՛ս Հատուկ Թեմա 2:32-33:

■ **«Սուրբ Հոգով լցված»** Ավետարանը հռչակելով՝ քարոզելու համար Սուրբ Հոգով լցված լինելը հատուկ է Գործքին (այսինքն՝ *plēroō*, տես՝ 2:4; 4:8,31; *plērēs*, տես՝ 6:3,5,8; 7:55; 11:24): Տե՛ս ամբողջական գրառումները 5:17-ում:

Հոգու հետ կապված աստվածաշնչյան ճշմարտությունները բնութագրվում են որպես՝

1. Հոգու անձնավորությունը (տես՝ Հովհ.14-16)
2. Հոգու մկրտությունը (տես՝ 1 Կորնթ.12:13)
3. Հոգու պտուղը (տես՝ Գաղ.5:22-23)
4. Հոգու պարզևները (տես՝ 1 Կորնթ.12)
5. Հոգու լեցունությունը (տես՝ Եփես.5:18)

Այս բոլորի մեջ Գործքը ավելի շատ կենտրոնանում է #5-ի վրա: Վաղ եկեղեցու առաջնորդները պարբերաբար գործությամբ էին լցվում, որպեսզի համարձակությամբ և գործությամբ հռչակեին Հիսուս Թրիստոսի Ավետարանը: Ստեփանոսի դեպքում իր քարոզի ազդեցիկությունը վնարվեց կյանքի գնով:

■ **«նայեց /անգլ.՝ ակնապիշ նայեց/»** Ղուկասը շատ է սիրում այս տերմինը (տես՝ Ղուկ.4:20; 22:56; Գործք 1:10; 3:4,12; 6:15; 7:55; 10:4; 11:6; 13:9; 14:9; 23:1): Ստեփանոսը վեր նայեց, ինչպես հրեաներին էր բնորոշ աղոթելիս, սակայն աղոթելու փոխարեն Աստված թույլ տվեց նրան, որ նայի հենց Երկնքից ներս:

■ **«տեսավ Աստծո փառքը»** Նկատեք, որ չի ասվում, որ Ստեփանոսը Աստծուն տեսավ, այլ Նրա փառքը: Ոչ որ չի կարող տեսնել Աստծուն և ապրել (տես՝ Ելից 33:20-23): Հորը հավատում էր, որ կտեսնի Աստծուն (տես՝ Հոբ 19:25-27; Գործք 7:55): Հիսուսը խոստանում է, որ մի օր սրտով մաքուրները կտեսնեն Աստծուն (տես՝ Մատթ.5:8): Տե՛ս Հատուկ Թեմա. Փառք, 3:13:

■ «Հիսուսին, որ Աստծո աջ կողմում կանգնած էր» Հիսուսը Աստծո աջ կողմում լինելը անտրոպոմորֆիկ դարձվածք է (տե՛ս Հատուկ Թեմա 2:33) աստվածային իշխանության և գորության վայրի համար: Այն փաստը, որ Հիսուսը կանգնած էր, ցույց է տալիս Իր անհանգստությունն ու հոգատարությունը առաջին Քրիստոնյա նահատակի համար:

Աստված Իրեն հայտնեց Ստեփանոսին այնպես, որ նա կարողանա ընդունել այդ հայտնությունը: Սա չի նշանակում, որ անպայման՝

1. երկինքը «վերևում» է
2. Աստված նստած է գահին

Դա ուզում է փոխանցել Հիսուսի հոգատարությունն ու անհանգստությունը մեր համար: Մենք պետք է զգուշանանք մշակութային տարբեր անտրոպոմորֆիկ լեզվական դարձվածքներում վարդապետության աղբյուրներ տեսնելուց: Անհաջող մշակութային միտում կա ժամանակակից արևմտյան ընթերցողների մոտ, որոնք փորձում են Աստվածաշնչի յուրաքանչյուր խոսքը ընդունել տառացի՝ որպես Աստվածաշնչի հանդեպ վստահություն և նվիրում ցուցաբերելու կերպ: Աստված Իր ստեղծագործությանը իրոք հայտնում է Իրեն, սակայն Նա դա անում է երկրավոր կերպերով և ձևերով, որոնք նրանք կարող են հասկանալ: Իհարկե կա հարմարվելու գործոնը: Ընկած, սահմանափակ, մարդկային էակները ի վիճակի չեն լիովին ըմբռնել հոգևոր աշխարհը: Աստված ընտրում է մեր մշակութային և առօրյա կյանքից որոշակի բաներ, որպեսզի դրանց նմանության և փոխաբերության կիրառությամբ կարողանա հաղորդակցվել մեզ հետ: Սրանք անշուշտ ճիշտ են, բայց ոչ սպառիչ՝ վերջնական:

7:56 «Մարդու Որդի» Ստեփանոսը Հիսուսին ակնհայտ նույնացնում է 5:52-ի «Արդարի» հետ: Նրան լսողները պետք է որ բաց չանտեսեին այս Մեսիական ապացույցը՝ վկայությունը: «Մարդու որդի» տերմինը ունի ՀԿ-յան երկու կիրառություն՝

1. այն տարածված արտահայտություն էր մարդու համար (տես՝ Եզեկ.2:1; Սաղմ.8:4)
2. այն կիրառվում էր աստվածային անձնավորության համար (այսինքն՝ Մեսիայի) Դանիել 7:13-14 և Սաղմ.110:1-ում:

Հետևաբար այն երկիմաստ էր՝ վերաբերում էր թե՛ մարդուն և թե՛ Աստծուն: Այդ իսկ պատճառով Հիսուսը կիրառում էր այն Իր մասին խոսելիս, նաև, քանի որ դա չէր օգտագործվում ռաբբինների կողմից, որոնք սովորություն ունեին գործածելու ՀԿ-յան անունները բացարձակապես ազգայնական և ռազմական նկատառումներով: Ստեփանոսի կողմից այս արտահայտության կիրառությունը մեկն է ՆԿ-ում կիրառված երկու տեղերից, բացառությամբ Հիսուսի խոսքերից (տես՝ Հովհ.14:6-9):

7:57-58 Ստեփանոսին լսողները վստահ էին, որ նա հայիոյություն էր անում, երբ հայտարարում էր, որ Հիսուսը եկած Մարդու Որդին էր (տես՝ Դան.7:13): Այս մոտեցեիստ (տես՝ Հատուկ Թեմա 2:39) հրեաների համար սա պարզապես նշանակում էր չափն անցնել: Նրանք Ստեփանոսի հետ արեցին այն, ինչ Մովսեսը լիազորել էր անել հայիոյություն անողների հետ (տես՝ Դևտ.24:14-16; 2 Օր.13:9; 17:7): Ստեփանոսի տված վկայության հաստատությունը կա՛մ ճիշտ էր, կա՛մ էլ մահվան արժանի հայիոյություն էր: Հիսուսի մասին հայտարարությունների շուրջ ձեռնպահ՝ միջին կարծիք չէր կարող լինել (տես՝ Հովհ.14:6-9):

7:57 «բոլորը միասին վազեցին նրա վրա» Սա հենց նույն տերմինն է, որ Ղուկասը հաճախ օգտագործում է, երբ խոսում է առաջին աշակերտների միաբանությունը նկարագրելիս (տես՝ 1:14; 2:46; 5:12; 15:25): Միևեդրոնը միասնական էր Ստեփանոսի հանդեպ ունեցած իր զայրության և մերժողականության մեջ (նաև տես 18:12, որտեղ Աքայիայի հրեաները մերժում են Պողոսին և 19:29-ում Եփեսոսի հեթանոսների զայրույթը Քրիստոնյաների դեմ):

7:58 «քաղաքից դուրս հանելով» Երուսաղեմի ներսում արգելված էր որևէ մեկի սպանել, քանի որ այն «սուրբ» հող էր:

■ «քարկոծեցին նրան» Հանախ արձանագրվում է, որ հրեաները հռոմեական իշխանության ներքո իրավունք չունեին ինքնուրույն որևէ քրեական պատժամիջոց գործադրել: Սա մի ապացույց է, որ միշտ չէ, որ այդպես է եղել: Ամբոխի բռնությունը հնարավոր չէր արագ կանխել:

■ «մի երիտասարդի... ում անունը Սողոս էր» Հրեական միջավայրում երիտասարդ համարվում է մինչև 40 տարեկան անձը: Սա մեր առաջին հանդիպումն է Տարսոնցի Սողոսի հետ իր անվամբ, որը հետագայում դառնալու էր Պողոս Առաքյալը: Պողոսը լսեց Ստեփանոսի ՀԿ-ի ամփոփ պատմությունը և հավանաբար նախկինում լսել էր նրան Երուսաղեմի Կիլիկիացիների Ժողովարանում (6:9):

Հետաքրքիր է, թե արդյո՞ք այս դեպքը առիթ հանդիսացավ Պողոսի կասկածների համար, որը նա փորձում էր փարատել Քրիստոնյաներին հավածելով:

7:59 «Տէր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին» Սա ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Նկատել՞ք, որ Ստեփանոսը հավատում էր, որ գնում էր երկինք՝ Հիսուսի հետ լինելու (տես՝ 2 Կորնթ.5:6,8) և ոչ թե դժողք (այսինքն՝ մեռած հոգիների պահպանման վայրը, որը եբրայերենում կոչվում է *sheol*, տես՝ Հատուկ Թեմա 2:27): Հնարավոր է Ստեփանոսը Հիսուսի խաչելության ականատեսներից է եղել կամ գոնե մանրամասն պատմել էին նրան այդ մասին, քանի որ նա օգտագործում է երկու նմանօրինակ արտահայտություններ, ինչպես Հիսուսը խաչի վրա (համեմատել՞ք հհ. 59 և 60, տես՝ Ղուկ.23:34,46):

Հետաքրքիր է նշել, որ Ստեփանոսը աղոթում է Հիսուսին, ինչպես աշակերտները 1:24-ում: Սակայն ՆԿ-ի մնացած մյուս աղոթքները ուղղված էին Հորը՝ Որդու անունով:

7:60 «Ծնկի գալով» Քարկոծությունը միշտ չէ, որ արագ կատարվող գործողություն էր: Տեքստը ակնարկում է, որ այն մի քանի ընթացքով տևեց:

■ **«բարձրաձայն աղաղակեց»** Սա նույնպես Հիսուսի փորձառության պես էր: Այս խոսքերը որքան որ ուղղված էին ՅԱՀՎԵԻՆ, այնքան էլ՝ ամբողջին: Դրանք պետք է որ երկար ժամանակ արձագանքեին Սողոսի ականջներում:

■ **«ննջեց»** Սա մահվան համար օգտագործվող աստվածաշնչյան փոխարկություն է (օր.՝ Հոր 3:13; 14:12; Սաղմ.76:5; 2 Թագ.7:12; 3 Թագ.2:10; Երեմ.51:39,57; Դան.12:2; Մատթ.27:52; Հովհ.11:11; Գործք 7:60; 13:36; 1 Կորնթ.15:6,18,20; 1 Թեսաղ.4:13; 2 Պետ.3:4): Սա չի հաստատում «հոգու-ննջելու՝ քնելու» վարդապետությունը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և վերջնական չեն:

1. Ո՞րն էր Ստեփանոսի քարոզի նպատակը:
2. Ի՞նչ էր դա ասում հրեաների մասին:
3. Ինչո՞ւ էին նրանք այդքան զայրացած:
4. Համար 37-ում ինչպե՞ս էր Հիսուսը նման Մովսեսին:
5. Հհ. 49-50-ում Եսայի 66:1-2 մեջբերումը ինչո՞ւ էր այդքան կարևոր:
6. Ինչո՞վ էր այդքան նշանակալի Ստեփանոսի ունեցած Հիսուսի տեսիլքը:

ԳՈՐԾՔ 8

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Սողոսը հալածում է Եկեղեցին	Սողոսը հալածում է Եկեղեցին	Սամարիայում և Ծովեզերքում Ավետարանի տարածումը	Սողոսը հալածում է եկեղեցին	Ստեփանոսի քարկոծումը, Սողոսը հալածիչ (7:55-8:3)
8:1բ-3	8:1-3	8:1բ-3	8:1բ-2	8:2
			8:3	8:3
Ավետարանը քարոզվում է Սամարիայում	Քրիստոսը քարոզվում է Սամարիայում		Ավետարանը քարոզվում է Սամարիայում	Փիլիպոսը Սամարիայում
8:4-8	8:4-8	8:4-8	8:4-8	8:4-8
	Կախարդի հավատքի գալը			Միմոն մոզը
8:9-13	8:9-13	8:9-13	8:9-13	8:9-13
	Կախարդի մեղքը			
8:14-24	8:14-24	8:14-24	8:14-17 8:18-19 8:20-24	8:14-17
8:25	8:25	8:25	8:25	8:25
Փիլիպոսը և Եթովպացի Ներքինին	Քրիստոսը քարոզվում է մի Եթովպացու		Փիլիպոսը և Եթովպացի պաշտոնյան	Փիլիպոսը մկրտում է մի Ներքինու
8:26-33	8:26-40	8:26-40	8:26-30 8:31-33	8:26-33
8:34-40			8:34-37 8:38-40	8:34-40

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո:

Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 8:1ա /7:60բ/

¹ Սողոսն էլ /սրտանց/ համաձայն էր նրա սպանությանը:

8:1 «Սողոսն էլ /սրտանց/ համաձայն էր նրա սպանությանը» Այս արտահայտությունը ամփոփում է 7-րդ գլուխը: Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ է: Պողոսը հիշում էր այս դեպքը խորը ամոթի զգացումով (տես՝ Գործք 22:20; 1 Կորնթ.15:9; Գաղ.1:13,23; Փիլ.3:6; 1 Տիմ.1:13): Ոմանք այս հատվածը կապում են 26:10-ի հետ, որտեղ ենթադրվում է, որ Պողոսը Սինեդրոնում քվեարկել էր Քրիստոնյաներին սպանելուն կողմ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 8:1-3

¹Եվ այն ժամանակ մեծ հալածանք եղավ Երուսաղեմում գտնվող եկեղեցու դեմ, և բոլորը, բացի առաքյալներից, ցիրուցան եղան Հրեաստանի և Սամարիայի շրջաններում: ²Եվ աստվածավախ մարդիկ թաղեցին Ստեփանոսին և նրա վրա շատ ողբացին: ³Իսկ Սողոսը եկեղեցուն մեծապես վնասում էր, մտնում էր տները, կանանց ու տղամարդկանց դուրս քաշում և բանտարկել էր տալիս:

■ **«այն ժամանակ մեծ հալածանք եղավ /սկսվեց/ Երուսաղեմում գտնվող եկեղեցու դեմ»** Հավանաբար սա ներկայացնում է հրեա առաջնորդների գործողությունները (հիմնականում Սադուկեցիները), Երուսաղեմում վաղ եկեղեցու արագ աճման և ձեռք բերած հոշակի պատճառով: Այնուամենայնիվ, սա հենց եկեղեցուն դրդելու Գործքն իրականացնելու համար Աստծո օգտագործած կերպն էր: Եթե չանեք 1:8-ը, ապա կլինի 8:1-ը:

Պատահական չէ, որ Ղուկասը կիրառում է *ekklesia* (տես՝ Հատուկ Թեմա 5:11) տերմինը հավատացյալներից կազմված նոր մարմնի համար: Այս տղամարդիկ և կանայք իրենց չէին առանձնացնում ՀԿ-ի Աստծո խոստումներից, այլ իրենց տեսնում էին որպես դրանց իրականացումը: Այս տերմինը կիրառված է Սեպտուագիևայում թարգմանելու Իսրայելի «համայնք» (MT - *qahal*) արտահայտությունը (տես՝ Գործք 7:38), իսկ այժմ այն կիրառվում է Երուսաղեմի հավատացյալների հավաքի համար:

Ղուկասը շատ է սիրում «մեծ» բառը (*megas*): Նա այս տերմինը ավետարանում կիրառում է քսանհինգ անգամ, իսկ Գործքում՝ քսանինը: Գլուխ 8-ում նա այն գործածում է հետևյալ կերպ՝

1. մեծ հալածանք, հ. 1
2. մեծապես /շատ/ ողբալ, հ. 2
3. մեծաձայն, հ. 7
4. ինչ-որ մեծ /երևելի/ մեկը, հ. 9
5. փոքրից մինչև մեծ, հ. 10
6. մեծ գորություններ, հ. 13

■ **«և բոլորը, բացի առաքյալներից, ցիրուցան եղան... շրջաններում»** Չափազանց հետաքրքիր է, որ հալածանքը Առաքյալների կողքով անցավ և բաժին հասավ հենց հելլենիստ հրեա Քրիստոնյաներին: Ակնհայտ է, որ այս փուլում Առաքյալները բավարարվում էին հուդայականության ներսում մնալով: Այս իրադարձությունը տեղի է ունեցել Գալիլիայում Հիսուսի հետ հանդիպումից (տես՝ Մատթ.28:18-20),

Պենտեկոստեից որոշ ժամանակ անց և դեռևս առաքելական առաջնորդները բավարարվում էին մնալ և քարոզել միայն հրեաներին և նորահավատներին, որոնք գտնվում էին Երուսաղեմի տարածքում:

■ **«ցիրուցան եղան Հրեաստանի և Սամարիայի շրջաններում»** Այս խոսքերը կարելի է գտնել Գործք 1:8-ում Ղուկասի Մեծ Հանձնարարականի մեջ: Արդեն որոշակի ժամանակ էր անցել այն օրվանից, երբ Հիսուսը այս պատվերը տվեց նրանց և հավանաբար հավածանքը միակ կերպն էր եկեղեցուն ամբողջ աշխարհով ուղարկելու համար: Եկեղեցին դեռևս դիմադրում է:

8:2 «Որոշ աստվածավախ մարդիկ թաղեցին Ստեփանոսին» «Աստվածավախ /նվիրյալ/ մարդիկ» տերմինը սովորաբար կիրառվում է հոգևոր զգայուն հրեաների համար (տես՝ Ղուկ.2:25): Հնարավոր է, որ սա վերաբերում է հրեական ծագում ունեցող Քրիստոնյաներին կամ հրեաներին, որոնք համաձայն չէին այս ապօրինի վարվելակերպի (այսինքն՝ ամբոխի բռնության) և Ստեփանոսի մահապատժի հետ: *Mishnah* թույլ է տալիս հայեցողների թաղումը, բայց ոչ բարձրաձայն ողբի ուղեկցությամբ, որ անում էին տվյալ մարդուն թաղողները: Այս աստվածավախ մարդիկ բացեիքաց ողբում էին՝

1. որպես կատարվածի հանդեպ անհնազանդության նշան
2. ի պատասխան այն փաստի, որ այն ինչ տեղի ունեցավ պաշտոնապես հաստատված չէր՝ հավանության արժանացած չէր

8:3 «Սողոսը եկեղեցուն մեծապես վնասում էր /հալածում էր/» Այս ԲԱՅԸ ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ժամանակի ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ հոլովի ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակ է: Սա կարող է նշանակել անցյալ ժամանակում ինչ-որ գործողության սկիզբ (տես՝ NASB, NJB) կամ ընթացիկ գործողություն (տես՝ NKJV, NRSV, TEV):

«Վնասել» տերմինը նշանակում էր «կենդանու կողմից մարմինը պատռել»: Այն կիրառվում է Սեպտուագինտայում կենդանիների համար Ելից 22:13; Սաղմ.74:13, և ռազմական պարտության համար՝ Երեմ.28:2 և 31:18-ում: Ակնհայտ էր, որ Պողոսին տանջում էին Ստեփանոսի խոսքերի ճշմարտությունը և հնարավոր է փորձել էր իր ներքին լարվածությունը քողարկել եկեղեցուն ագրեսիվ կերպով հալածելու միջոցով (տես՝ Գործք 9:1,13,21; 22:4,19; 26:10-11; 1 Կորնթ.15:9; Գաղ.1:13; Փիլ.3:6; 1 Տիմ.1:13):

Տե՛ս Հատուկ Թեմա. Եկեղեցի, 5:11:

- **«մտնում էր տները /տնից տուն/»** Այս արտահայտությունը կարելի է երկու կերպ հասկանալ.
1. Պողոսը իմացել էր, թե որտեղ էին հավաքվում Առաքյալները (տես՝ 5:42)
 2. նույնիսկ եկեղեցու այս վաղ շրջանում Երուսաղեմում կային մի քանի տնային եկեղեցիներ, որտեղ հավատացյալները պարբերաբար հավաքվում էին Առաջին Քրիստոնյաները հանդիպում էին՝
1. ամեն Շաբաթ տեղի Ժողովարաններում
 2. Կիրակի օրերին հատուկ տեղերում կամ բազմաթիվ տներում

■ **«կանանց ու տղամարդկանց դուրս քաշում»** Սա մի ԲԱՅ է, որը կիրառվում է Հայտն.12:4-ում Սատանայի համար, որը երկնքից քաշում է աստղերի մեկ երրորդ մասը: Այն մի քանի անգամ կիրառվում է Գործքում (տես՝ 8:3; 14:19; 17:6): Սողոսը հալածելու մեջ դաժան էր՝ լի չարությամբ (տես՝ 26:10): Այս մասին վկայում է «կանանց ու տղամարդկանց» արտահայտությունը: Նա քանդում էր անկեղծ հավատացյալների ընտանիքները և նրանց բանտարկել տալիս և ոմանց էլ սպանել (տես՝ 9:1, 13,21; 22:4,19; 26:10,11; Գաղ.1:13,23; 1 Տիմ.1:13): Ահա թե ինչու է հետագայում նա իրեն անվանում «սրբերից ամենավերջինը /հետինը/» (տես՝ 1 Կորնթ.15:9; Եփես.3:8):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 8:4-8
⁴Իսկ նրանք, որ ամեն կողմ ցրվեցին, ամեն տեղ գնում ու ամենուրեք Խոսքն էին քարոզում:
⁵Ապա Փիլիպպոսը, իջնելով Սամարիա քաղաքը, Քրիստոսին էր քարոզում նրանց: ⁶Եվ ժողովուրդը ուշադիր ունկնդրում էր Փիլիպպոսի ասածներին՝ լսելով ու տեսնելով այն նշանները, որ նա անում էր: ⁷Քանի որ շատ դիվահարներից պիղծ ոգիները մեծաձայն աղաղակներով դուրս էին գալիս: Եվ շատ անդամալույծներ ու կաղեր բժշկվում էին: ⁸Եվ այդ քաղաքում շատ մեծ ուրախություն եղավ:

8:4 «նրանք, որ ամեն կողմ ցրվեցին, ամեն տեղ գնում ու ամենուրեք Խոսքն էին քարոզում» Ուշադրություն դարձրեք, որ այս մարդիկ Առաքյալները չեն, քանի որ նրանք մնում էին Երուսաղեմում, սակայն հելլենիստ հրեա Քրիստոնյաները ցիրուցան եղան ամբողջ տարածաշրջանում, որոնք դարձան

առաջին ավետարանիչները: Հրաշալի է, որ եկեղեցու համաշխարհային առաքելությունը հրահրվեց, ոչ թե Առաքյալների, այլ Ստեփանոսի և Փիլիպպոսի միջոցով:

Այստեղ «Խոսքը» անշուշտ նշանակում է ավետարանը, սակայն նաև աշխարհով մեկ և ոչ թե միայն հրեաներին Խոսքը հասցնելու Ստեփանոսի կարևորած նպատակը (Մեծ Պատվերը՝ Հանձնարարությունը, 1:8; Մատթ.28:18-20; Դուկ.24:47):

8:5 «Փիլիպպոս» Նա 6:5-ում նշված «Յոթից» մեկն էր (տես՝ 21:8-9): Նա նկարագրվում է ավետարանչական երեք միջավայրում. (1) Սամարիա, (2) Եթովպացի Ներքինին, և (3) Պաղեստինյան ծովեզերքում կատարած ծառայությունը: Այս «յոթ» հոգիները ավետարանչի սիրտ ունեին:

■ **«Իջնելով Սամարիա քաղաքը»** Այստեղ կա ձեռագրային հարց, թե արդյոք այս արտահայտությունը նկատի ունի «Սամարիա քաղաքը» թե՛ «Սամարիայի մի քաղաք»: Ձեռագրային փորձագիտությունը պաշտպանում է ՈՐՈՇԻՉ ՀՈՂՈՎ գոյականը (տես՝ MSS, P⁷⁴, Խ, A, B): Սակայն, այդ ժամանակ այս քաղաքը հայտնի չէր Սամարիա անվամբ, այլ որպես Մերաստիա; Հռոմեական այդ ժամանակաշրջանում Սամարիա տերմինը կիրառվում էր մի տարածաշրջանի՝ մարզի համար: Սամարիայի ամենամեծ քաղաքը Սյուքեմն էր, որը հետագայում անվանվեց Նեսապոլիս և այսօր Նաբլուս: Տեսություն կա, որ հնարավոր է այս քաղաքը Գիտտան է, քանի որ դա է հանդիսանում Սիմոն Մագուսի ավանդական՝ հայրենի տունը: Տեսությունը Ջապթին Մարտիրոսի կողմից է, որը նույնպես այս շրջանից էր:

■ **«Քրիստոսին էր քարոզում նրանց»** Հրեաները ատում էին սամարացիներին, քանի որ հրեաները նրանց համարում էին խառնածին (տես՝ Եզրաս 4:1-3): Սա կապված էր Ք.Ա. 722 թ-ին ասորական գերության հետ, որը վերաբնակեցրեց հյուսիսային Տաս Ցեղերի տարածաշրջանը հեթանոսներով, որոնք միջամուսնական կապեր հաստատեցին հրեական փոքրամասնություն կազմող բնակչության հետ (տես՝ 4 Թագ.17:24-41):

Մարդկանց այս խմբին՝ սամարացիներին, նաև Հիսուսը ծառայեց: Հիսուսը Իր Մեսիա լինելը հայտնեց սամարացի մի կնոջ և նրա գյուղին (տես՝ Հովհաննես 4): Այժմ Փիլիպպոսը քարոզում էր «Քրիստոսին» (անգլերենում նույնպես ՈՐՈՇԻՉ ՀՈՂՈՎ է - «the Christ»), որի հունարեն թարգմանությունն է «Մեսիային» (տես՝ Հատուկ Թեմա 2:31): ՀԿ-յան այս անունը կապված է ՅԱՀՎԵԻ խոստման հետ, որ ուղարկելու է Մեկին, որը նոր թագավորություն է հիմնելու՝ բացելով Հոգու նոր դարաշրջանը: Այս իրադարձությունը նախադեպն ուներ Հիսուսի ծառայության մեջ և հատկապես լիազորություն ստացավ Հիսուսի վերջին խոսքերում (1:8):

8:6 «ժողովուրդը միաբան /հայ.՝ ուշադիր/ ունկնդրում էր» Այս «միաբան» արտահայտությունը շատ ընդունված է Դուկասի մոտ: Տես՝ Գրառում 1:14:

■ **«լսելով և տեսնելով այն նշանները, որ նա անում էր»** Սա վերաբերում է այն հրաշքներին, որոնք հաստատում էին Փիլիպպոսի պատգամը (տես՝ հ. 7): Հոգու այս նույն դրսևորումները ուղեկցում էին Հիսուսին, Տասներկուսին, Յոթանասունին, Պետրոսին և Հովհաննեսին քարոզելիս:

8:7 Դիվահարությունը մեր աշխարհում իրականություն է (տես՝ Մերրիլ Ֆ. Ունգերի գրքերը. [1] *Աստվածաշնչյան Դիվաբանություն* և [2] *Դևերն այսօր մեր աշխարհում*: /Merrill F. Unger [1] *Biblical Demonology and* [2] *Demons in the World Today*): Տես՝ երկու Հատուկ Թեմաները 5:16-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 8:9-13
⁹Բայց Սիմոն անունով մի մարդ կար, որ դրանից առաջ այդ քաղաքում մոգություն էր անում ու ապշեցնում Սամարիայի ժողովրդին՝ իր մասին ասելով, թե ինքը երևելի մեկն է: ¹⁰Ամենքն էլ՝ փոքրից մինչև մեծը լսում էին նրան, ասելով՝ «Սա Աստծո գործությունն է, որ մեծ է կոչվում»: ¹¹Նրանից ակնաձուլ էին, որովհետև երկար ժամանակ կախարդություններ անելով՝ նրանց ապշեցրել էր: ¹²Բայց երբ հավատացին Փիլիպպոսին, որ Աստծո թագավորության ու Հիսուս Քրիստոսի անվան մասին /անգլ.՝ բարի լուրն/ էր քարոզում, մկրտվում էին թե՛ տղամարդիկ, և թե՛ կանայք: ¹³Եվ Սիմոնն ինքն էլ հավատաց ու մկրտվելով՝ միշտ Փիլիպպոսի հետ էր. և տեսնելով այն նշաններն ու մեծ գործությունները, որ կատարվում էին, զարմանում էր:

8:9 «Սիմոն անունով մի մարդ» Արդյո՞ք այս մարդը իրականում հավատում էր (տես՝ հհ. 13,18), թե պարզապես իշխանություն փնտրող խաբեբա էր, հայտնի չէ: Կցանկանայի նրան տալ այն կասկածների օգուտը, որ հիմնավորվում է հ. 24-ում: Չարմանալի է, թե ինչքան ավանդույթներ են ձևավորվել վաղ եկեղեցու կողմից այս մարդու շուրջ, սակայն դրանք բոլորն էլ մտահայեցողական /սպեկուլյատիվ/ են

-
- NASB, NRSV «մոզուություն»
- NKJV, TEV «կախարդություն»
- NJB «մոզական արվեստներ»

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱԽԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Կարծես թե հին՝ անտիկ ժամանակներում եղել են մի քանի տեսակ անհատներ և խմբեր, որոնք ներգրավված էին տարբեր կախարդությունների մեջ:

1. Կա Մադիանից աստղագիտության մեջ ներգրավված քահանայական մի կաստա, որոնք կոչվում են Քաղդեացիներ (տես՝ Դան. 1:20; 2:2,10,27; 4:7,9; 5:11; Մատթ.2:1,7,16): Հերոդոտոսը նրանց կոչում էր «Մադիանացի քահանաներ»: Նրանք գուշակում և վերահսկում էին ապագայի իրադարձությունները աստղային աստվածների (այսինքն՝ մոլորակների, աստղերի, համաստեղությունների, գիսաստղերի) տեղաշարժման և ձևափոխման միջոցով:
2. Գոյություն ունի փիլիսոփայական, մաթեմատիկական հակառակորդ խումբ հունական ապրելաոճում, հայտնի Պյութագորացիներ անունով:
3. Հմայողների շատ խմբեր բաղկացած են այնպիսի մարդկանցից, որոնք պնդում են, որ կարող են վերահսկել բնության մեջ գոյություն ունեցող գերբնական կամ բնական ուժերը (տես՝ Ծննդ.41:8,24; Ել.7:11,22; 8:7, 19; 9:11): Հաճախ այս ուժերը (կամ աստվածները) դիտարկվում էին մարդկության հետ ընդհարման մեջ և եթե մարդը անցնում էր այս կամ այն ուժի կողմը, ապա գիտություն ունեցողը կարողանում էր վերահսկել այդ ուժերին իր անձնական շահի համար (տես՝ մ. թ. երրորդ և չորրորդ դարերի կախարդության պապիրուսները): Այս անձիք՝
 - ա. գուշակում էին ապագայի դեպքերը
 - բ. վերահսկում էին ապագայի դեպքերը
 - գ. մեկնաբանում էին ապագայի դեպքերն ու երազները
 - դ. անիծում կամ պաշտպանում էին մարդկանց, քաղաքներ, ազգեր, բանակներ և այլն:
4. Գործք 8:9,11-ում գտնվող մոզերի պես կախարդները պնդում են, որ կարողանում են շահարկել՝ հմտորեն բանեցնել, բնության մեջ գտնվող անդամ կամ անձ հանդիսացող ուժերը (դիվական), որպեսզի իրականացնեն իրենց կամքը: Սա հաճախ կատարվում էր կախարդության՝ մագիայի ծիսակարգերով և հմայախոսությամբ:
5. «Ճշմարիտ» կախարդները հաճախ հարձակվում էին այն կախարդների վրա, որոնք ճիշտ չէին իրականացնում ծեսերն ու մոզական արարողությունները: Սրանք կոչվում էին շաղակրատներ կամ խաբեբաներ (տես՝ Գործք 13:6,8; 19:13):
6. Ավետարանի գորությունը երևում է Եփեսոսում Պողոսի ծառայության մեջ, որտեղ նախկինում կախարդությամբ զբաղվողները դարձի էին գալիս Քրիստոսի հավատքին և այրում իրենց կախարդության արժեքավոր գրքերը (այսինքն՝ գրքեր, որտեղ գրված են, թե ինչպես ճիշտ կերպով իրականացնեն մոզության հմայախոսությունները, ծեսերը և արարողությունները. տես՝ Գործք 19:19):
7. Ընթերցանության համար՝
 - ա. Սյուզն Գերթ, *Սասանյաի Ժառանգության Փոխանցումը* /Susan Garrett, *The Demise of the Devil*, Fortress Press, 1989/
 - բ. Մերիլ Ունգեր, *Աստվածաշնչյան Դիվաբանություն* /Merrill Unger, *Biblical Demonology*, Scripture Press, 1967/
 - գ. Հենրիկ Բերխով, *Քրիստոսը և Չորությունները* /Hendrik Berkhof, *Christ and the Powers*, Herald Press, 1977/
 - դ. Ուոլեր Ուինկ, *Չորությունների անվանակոչումը* /Waller Wink, *Naming the Powers*, Fortress Press, 1984/
 - ե. Քլինթոն Արնոլդ, *Հոգևոր Պատերազմի շուրջ երեք կարևորագույն հարցեր*, /Clinton Arnold, *Three Crucial Questions About Spiritual Warfare*, Baker, 1997/

8:10 «Սա Աստծո գորությունն է, որ մե՛ծ է կոչվում» Սա հունա-հռոմեական Պանթեոնի մեծ աստծո տիտղոսն էր՝ անունը (այսինքն՝ Չևսը): Արամեյենով այն հնչում է «Սա է մե՛ծ կոչվող աստծո գորությունը» (տես՝ հհ. 9, 13):

8:12 «հավատացին» Տե՛ս Հատուկ Թեմա. Հավատալ, Հավատք, Վստահություն, 3:16 և ՀԿ-ի հավատք, 6:5-ում:

- **NASB** «բարի լուրն էր քարոզում»
- **NKJV** «բաներն էր քարոզում»
- **NRSV** «քարոզում էր բարի լուրը»
- **TEV** «բարի լուրի մասին պատգամն էր քարոզում»

Սա հունարենի *euangelizō* ԲԱՅՆ է, որը բարի (*eu*) և պատգամ (*angelizō*) բառերից կազմված բարդ բառ է: Մենք ստանում ենք անգլերենի *evangel, evangelize* և *evangelism* (ավետարան, ավետարանել և ավետարանչություն) բառերը այս հունարեն տերմինից: Այս սամարացիներին Փիլիպպոսը ներկայացրեց Հիսուսի պատմությունը և նրանք պատասխանեցին այդ բարի լուրին փրկարար հավատքով:

■ **«Աստծո Թագավորության մասին»** Տե՛ս Հատուկ Թեմա 1:3:

■ **«Հիսուս Քրիստոսի անվան մասին»** Տե՛ս Հատուկ Թեմա 2:21:

■ **«մկրավում էին»** Տե՛ս Հատուկ Թեմա 2:38:

■ **«թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք»** Համատեքստորեն այս արտահայտությունը հնարավոր է երկու նշանակություն ունենա՝

1. Պողոսը հավածում էր «տղամարդկանց և կանանց» (տես՝ 8:3), սակայն ավետարանը նույնպես փրկում էր «տղամարդկանց և կանանց»
2. Հուդայականության մեջ միայն տղամարդիկ էին մասնակցում հրեության առաջին ծեսին՝ թվատությանը, իսկ այժմ ավետարանի մեջ երկու սեռի ներկայացուցիչներն էլ մասնակցում են Քրիստոնեության առաջին ծեսին՝ մկրտությանը:

8:13 «Միմոնն ինքն էլ հավատաց» Ավետարանականներից շատերը «հավատալ» (տես՝ Հատուկ Թեմա 3:16) բառը կիրառում են որոշակի հստակ իմաստով, սակայն ՆԿ-ում կան հատվածներ (օր.՝ Հովհ.8:31), որտեղ այն դարձի գալու իմաստը չի արտահայտում (տես՝ Հովհ.8:59):

Սկզբնական հավատքը միակ չափանիշը չէ (տես՝ Մատթ.13:1-9,10-23; 24:13): Հարատևությունն ու հնազանդությունը նույնպես Քրիստոսի հետ ճշմարիտ փոխհարաբերության ապացույցներ են:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅՈՒՆ

Դժվար է բացատրել աստվածաշնչյան այն վարդապետությունները, որոնք կապված են Քրիստոնեական ապրելակերպի հետ, քանի որ դրանք ներկայացված են տիպիկ արևելյան, բարբառային զուգակցությամբ: Այս զուգակցումները կարծես թե հակասական են, սակայն դրանց երկու բևեռներն էլ աստվածաշնչյան են: Արևմտյան Քրիստոնյաները հակված են ընտրելու մի ճշմարտությունը և անտեսելու կամ թերազնահատելու հակառակ ճշմարտությունը: Ահա մի քանի օրինակներ՝

1. Արդյո՞ք փրկությունը Քրիստոսին վստահելու առաջին՝ սկզբնական որոշումն է, թե աշակերտ լինելու ցմահ՝ ամբողջ կյանքի ընթացքում նվիրումը:
2. Արդյո՞ք փրկությունը ամենակալ Աստծո շնորհքի միջոցով ընտրված լինելն է, թե աստվածային այդ հրավերին՝ առաջարկին հավատքով և զղջումով մարդու կողմից տրված պատասխան:
3. Արդյո՞ք փրկությունը, երբ ընդունվում է մարդու կողմից, այլևս անհնար է կորցնել, թե կարիք կա ջանք անել հարատևելու մեջ:

Հարատևության խնդիրը եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում մշտապես առկա է եղել: Խնդիրը սկսվում է ՆԿ-ի թվացյալ կոնֆլիկտային հատվածներով՝

1. փրկության վստահության վերաբերյալ տեքստերը՝
 - ա. Հովհաննեսի ավետարանում Հիսուսի խոսքերը (Հովհ.6:37; 10:28-29)
 - բ. Պողոսի խոսքերը (Հռ.8:35-39; Եփես.1:13; 2:5,8-9; Փիլ.1:6;2:13; 2 Թեսաղ.3:3; 2 Տիմ. 1:12; 4:18)

- գ. Պետրոսի խոսքերը (1 Պետ.1:4-5)
- 2. Հարատևության անհրաժեշտության շուրջ տեքստեր՝
 - ա. Հիսուսի խոսքերը Համանման Ավետարաններում (Մատթ.10:22; 13:1-9,24-30; 24:13; Մարկ. 13:13)
 - բ. Հիսուսի խոսքերը Հովհաննեսի Ավետարանում (Հովհ.8:31; 15:4-10)
 - գ. Պողոսի խոսքերը (Հռոմ.11:22; 1 Կորնթ.15:2; 2 Կորնթ.13:5; Գաղ.1:6; 3:4; 5:4; 6:9; Փիլ.2:12; 3:18-20; Կող.1:23; 2 Տիմ.3:2)
 - դ. Եբրայեցիների հեղինակի խոսքերը (2:1; 3:6,14; 4:14; 6:11)
 - ե. Հովհաննեսի խոսքերը (1 Հովհ.2:6; 2 Հովհ.9; Հայտն.2:7,17,26; 3:5,12,21; 21:7)

Աստվածաշնչյան փրկությունը բխում է ամենակալ Երրորդության Աստծո սիրուց, ողորմությունից և շնորհքից: Ոչ մի մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (տես՝ Հովհ.6:44,65): Աստված առաջինն է գալիս և սահմանում կարգը, սակայն պահանջում է, որ մարդիկ պատասխանեն հավատքով և ապաշխարությամբ, թե՛ սկզբում և թե՛ մշտապես: Աստված աշխատում է մարդկանց հետ ուխտի փոխհարաբերության մեջ: Կան առանձնաշնորհումներ և պատասխանատվություններ:

Փրկությունը առաջարկվում է ամբողջ մարդկությանը: Հիսուսի մահը լուծեց մեղավոր մարդկության մեղքի հարցը: Աստված մի ճանապարհ է պատրաստել և կամենում է, որ բոլոր նրանք, որ ստեղծված են Իր պատկերով արձագանքեն Իր սիրուն և Հիսուսի մեջ մեզ տրված փրկությանը:

Եթե կամենում եք այս թեմայի շուրջ ավելի շատ իմանալ, կարդացե՛ք՝

1. Դեյլ Մուդի, *Ճշմարտության Խոսքը* (Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (էջ՝ 348-365))
2. Հովարդ Մարշալ, *Աստծո Չորությունը Պահված*, (Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969)
3. Ռոբերտ Շանք, *Կյանք Որդու մեջ* (Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961)

Այս ոլորտում Աստվածաշունչը երկու տարբեր խնդիրներ է մատուցում. (1) փրկության վստահությունը անպտուղ, եսասիրական կյանք ապրելու համար որպես անցաթուղթ օգտագործելը, կամ (2) նրանք, որ ծառայության կամ անձնական մեղքի հետ կապված խնդիրների մեջ են, քաջակերելը: Խնդիրն այն է, որ սխալ խմբեր ընդունում են սխալ պատգամներ և աստվածաշնչյան մի քանի՝ սահմանափակ հատվածների հիման վրա կառուցում են աստվածաբանական համակարգեր: Որոշ Քրիստոնյաներ կարիք ունեն փրկության վստահության, մինչդեռ ոմանց անհրաժեշտ է հարատևության համար խիստ զգուշացում: Ո՞ր խմբին եք դուք պատկանում:

Գոյություն ունի պատմական աստվածաբանական մի հակամարտություն, որի մեջ ներգրավված են Օգոստինոսն ընդդեմ Պելագիոսի և Կալվինն ընդդեմ Արմինիոսի՝ Հայերը (հակա-պելագիան): Խնդրի մեջ առկա է փրկության հարցը. եթե մեկը իրոք փրկված է, պե՞տք է արդյոք հարատևի հավատքի և պտղաբերության մեջ:

Կալվինիստները պաշտպանում են աստվածաշնչյան այն տեքստերը, որոնք ընդունում են Աստծո ամենակալությունն ու պահող գործությունը (Հովհ.10:27-30; Հռոմ.8:31-39; 1 Հովհ.5:13,18; 1 Պետ.1:3-5) և Եփես.2:5,8-ի պես ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԲԱՅԻ Ժամանակները:

Հայերը պաշտպանում են աստվածաշնչյան այն տեքստերը, որոնք զգուշացնում են հավատացյալներին «պահել», «ունուր բռնել» կամ «շարունակել» (Մատթ.10:22; 24:9-13; Մարկ.13:13; Հովհ.15:4-6; 1 Կորնթ.15:2; Գաղ.6:9; Հայտն.2:7,11,17,26; 3:5,12,21; 21:7): Ես անձնապես չեմ հավատում, որ Եբրայեցիների 6 և 10 գլուխները կիրառելի են, սակայն շատ Հայեր կիրառում են դրանք որպես զգուշացումներ հավատորացության դեմ: Մատթեոս 13 և Մարկոս 4-ում Մերմնացանի Առակը դիտարկում է տեսանելի՝ ակնհայտ հավատքի հարցը, ինչպես Հովհ.8:31-59-ը: Ինչպես Կալվինիստները ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԵՐԵՆ են մեջբերում, որոնք կիրառվել են բնութագրելու փրկությունը, այնպես էլ Հայերը մեջբերում են ՆԵՐԿԱԺԱՄԱՆԱԿԻ Բայերով հատվածները, ինչպիսիք են 1 Կորնթ.1:18; 15:2; 2 Կորնթ.2:15:

Սա հստակ՝ կատարյալ օրինակ է, թե ինչպես են աստվածաբանական համակարգերը չարաշահում մեկնաբանության տեքստային ապացույց մեթոդը: Մովորաբար հիմք հանդիսացող որևէ սկզբունք կամ հիմնական տեքստ է կիրառվում աստվածաբանական որևէ ցանց կառուցելու համար, որի միջոցով դիտարկվում են բոլոր մյուս տեքստերը: Չգույշ եղե՛ք ցանկացած տեսակի ցանցերից: Դրանք ծագում են արևմտյան տրամաբանությունից և ոչ թե հայտնությունից: Սակայն Աստվածաշունչը արևելյան գիրք է: Այն ներկայացնում է ճշմարտությունը ի լարվածությամբ, թվացյալ պարադոքսալ զուգակցությամբ: Քրիստոնյաները կանչված են հաստատելու դրանք երկուսն էլ և ապրելու այդ լարվածության մեջ: ՆԿ-ը ներկայացնում է թե՛ հավատացյալի ապահովությունը և թե՛ հավատքի և աստվածապաշտության մեջ շարունակելու պահանջը:

Քրիստոնեությունը նախ ապաշխարության և հավատքի պատասխան է, որին հաջորդում է ապաշխարության և հավատքի մշտական շարունակ տրվող պատասխանը: Փրկությունը ապրանք չէ (երկինք տանող տոմս կամ հակահրդեհային ապահովագրության փաստաթուղթ), այլ փոխհարաբերություն: Այն որոշում է և աշակերտություն: ՆԿ-ում այն նկարագրվում է ԲԱՅԻ բոլոր ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՎ.

ԱՈՐԻՍ (ավարտված գործողություն), Գործք 15:11; Հռոմ.8:24; 2 Տիմ.1:9; Տիտ.3:5
 ՎԱՂԱԿԱՏԱՐ (ավարտված գործողություն շարունակվող արդյունքներով), Եփես.2:5,8
 ՆԵՐԿԱ (շարունակվող գործողություն), 1 Կորնթ.1:18; 15:2; 2 Կորնթ.2:15
 ԱՊԱՌՆԻ (ապագայի դեպքեր կամ որոշակի՝ հատուկ դեպքեր), Հռոմ.5:8,10; 10:9; 1 Կորնթ.3:15; Փիլ.1:28; 1 Թեսաղ.5:8-9; Եբր.1:14; 9:28

■ «միշտ /շարունակում էր/ Փիլիպպոսի հետ էր» Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՏԱՐ է: Նկատե՞ք հաջորդականությունը՝
 ա. նա լսեց, հհ. 6-7,12
 բ. նա տեսավ, հհ. 6-7,13
 գ. նա հավատաց, հ. 13
 դ. նա մկրտվեց, հ. 13
 ե. նա գնաց Փիլիպպոսի հետ, հ. 13

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 8:14-24

¹⁴Իսկ երբ Երուսաղեմում գտնվող առաքյալները լսեցին, թե սամարացիներն ընդունել են Աստծո Խոսքը, Պետրոսին և Հովհաննեսին ուղարկեցին նրանց մոտ, ¹⁵որոնք գալով աղոթեցին նրանց համար, որ Սուրբ Հոգին ստանան, ¹⁶(քանի որ նա դեռևս նրանցից ոչ մեկի վրա չէր իջել, այլ միայն Տեր Հիսուսի անունով էին մկրտված): ¹⁷Այն ժամանակ ձեռքները դրեցին նրանց վրա, ու նրանք Սուրբ Հոգին ստացան: ¹⁸Երբ Սիմոնը տեսավ, որ առաքյալների ձեռք դնելով Սուրբ Հոգի է տրվում, նրանց դրամ առաջարկեց՝ ասելով. ¹⁹«Ինձ էլ տվե՛ք այս իշխանությունը, որ ում վրա ձեռքս դնեմ, Սուրբ Հոգին ստանան»: ²⁰Բայց Պետրոսը նրան ասաց. «Թող քո արծաթը քեզ հետ միասին կորչի՛, որովհետև կարծում ես, թե Աստծո պարգևը կարելի է փողով գնել: ²¹Պու այդ բանում ոչ մի մաս կամ բաժին չունես, քանի որ քո սիրտն Աստծո առաջ ուղիղ չէ: ²²Ուստի քո այդ չարությունից ապաշխարի՛ր ու աղաչի՛ր Աստծուն, թերևս քո սրտի չար խորհուրդը քեզ ներվի: ²³Քանի որ տեսնում եմ, թե դու դառնության մաղձի և անիրավության կապանքի մեջ ես»: ²⁴Սիմոնը պատասխանեց և ասաց. «Ինձ համար աղոթեցե՛ք Տիրոջը, որ ձեր այդ ասածներից որևէ բան ինձ չպատահի»:

8:14 «երբ Երուսաղեմում գտնվող Առաքյալները լսեցին, թե սամարացիներն /անգլ.՝ Սամարիան/ ընդունել են Աստծո Խոսքը, Պետրոսին և Հովհաննեսին ուղարկեցին նրանց մոտ» Հիսուսի կյանքի ընթացքում աշակերտներին արգելված էր սամարացիներին ծառայելը (տես՝ Մատթ.10:5): Ըստ երևույթին Առաքյալները ցանկանում էին պաշտոնապես հաստատություն՝ հավանություն տալ այս ավանդապես աստեղության արժանացած ռասայական խմբում Սուրբ Հոգու ռադիկալ և անսովոր շարժման համար: Այս տարածքը հատուկ կերպով նշվում է Գործք 1:8-ում: Ինչպես հատուկ էր Փիլիպպոսին, նա Տասներկուսից ավելի արագ հասկացավ Հիսուսի կողմից համաշխարհային ավետարանչության համար տրված պատվերը:

Նկատե՞ք, որ Հիսուսին հավատալը հավասարազոր է «Աստծո խոսքը ընդունելուն»: Աստծո խոսքը կարող է մի քանի բան նշանակել՝

1. Աստծո ընդհանուր կապը՝ հաղորդակցությունը մարդկանց հետ
2. Աստծո արձանագրված կապը՝ հաղորդակցությունը մարդկանց հետ (այսինքն՝ Սուրբ Գիրքը)
3. Աստծո Որդին (այսինքն՝ Խոսքը՝ Բանը, տես՝ Հովհ.1:1), որն Աստծո ամենամեծ հայտնությունն է (տես՝ Եբր.1:3):

Ուշադրություն դարձրե՛ք, որ Պետրոսն ու Հովհաննեսը ուղարկվեցին: Պետրոսը առաքելական խմբի ճանաչված առաջնորդն էր և Հովհաննեսը այն առաքյալն էր, որը ավելի շուտ ուզում էր Սամարացիների վրա երկնքից կրակ իջեցնել (տես՝ Դուկ.9:54):

8:15 «որոնք գալով՝ աղոթեցին նրանց համար, որ Սուրբ Հոգին ստանան» Գործք Առաքելոց գրքի հիման վրա փրկության վերաբերյալ վարդապետություն կառուցելու փորձերը մեծ պրոբլեմներ են ստեղծում հետևյալ պատճառներով՝ դեպքերի հերթականությունը և փրկությանը նախորդող կամ հաջորդող դեպքերն ինքնին տարբերվում են տարբեր հատվածներում: Այս հատվածում Սուրբ Հոգին

առնչվում է հաստատության հետ, ինչպես Պենտեկոստեի ժամանակ, ցույց տալով, որ Աստված ընդունել և փրկել է այս սամարացիներին: Առաջին հերթին նրանք ճշմարտապես չէին կարող փրկվել (այսինքն՝ «ստանան» բայը ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է) առանց Սուրբ Հոգու գործի՝ միջամտության (տես՝ Հռոմ.8:9):

Կարծում եմ Պենտեկոստեի փորձառության օրինակը, որը Աստված վերարտադրեց մարդկանց տարբեր ռասայական և աշխարհագրական խմբերում, կրկնվում էր ցույց տալու և հաստատելու հրեա հավատացյալ եկեղեցուն, որ Աստված կատարելապես և լիովին ընդունել է ևս մի նոր խմբի: Հետևաբար Գործքում Հոգու դրսևորումը (այսինքն՝ Պենտեկոստեն) աստվածաբանորեն տարբերվում է Կորնթացիների մեջ նշվող լեզուներից:

Այս տեքստը չի կարող կիրառվել պահանջելու Կորնթացիների պես փորձառություն, որպեսզի հաստատվի փրկությունը (տես՝ 1 Կորնթ.12:29-30, որը մի հարցաշար է «ոչ» պատասխանն ակնկալող): Ղուկասը արձանագրում է այն ինչ տեղի է ունեցել, ոչ թե այն ինչ պետք է ամեն անգամ տեղի ունենա:

8:16-17 Սա տարբերվում է Գործք 2:38-ում արձանագրված դեպքերի հերթականությունից: Այս հակասությունը Սուրբ Հոգու հատուկ գործողության շնորհիվ է. (1) 2:38-ում փրկության հետ կապված, իսկ (2) 8:16-ում՝ Պենտեկոստեի փորձառության պես: Գործք 2-ի նույն «Սուրբ Հոգու իրադարձությունը» այժմ տեղի է ունենում սամարացիների հետ: Սա միայն նրանց օգտին չէր, այլ հիմնականում հրեա Քրիստոնյա համայնքի: Այս դեպքը հրեաներին ցույց տվեց, որ Աստված լիովին ընդունել է սամարացիներին: Սա նրա համար չէ, որ հաստատվի երկու քայլից բաղկացած փրկության փորձառություն:

Խնդրում եմ ուշադրություն դարձրեք, որ Պետրոսն ու Հովհաննեսն էին, որ նկատեցին Սուրբ Հոգու հատուկ դրսևորման բացակայությունը, որը նրանք վերապրել էին Պենտեկոստեի ժամանակ: Սա չի նշանակում, որ Փիլիպպոսին ուղեկցող հրաշքների նշանները, մինչև նա քարոզում էր, Սուրբ Հոգու իրական՝ ճշմարիտ դրսևորումները չէին (տես՝ հ. 13): Պետրոսն ու Հովհաննեսը կամենում էին սամարացիների Պենտեկոստե: Սա շատ կարևոր է, քանի որ, երբ Կոռնելիոսը ունեցավ այս նույն փորձառությունը (այսինքն՝ Գործք 10), Պետրոսն իմացավ, որ Աստված լիովին ընդունել է հռոմեացի այս հրամանատարին և նրա ընտանիքը: Ավետարանը բոլոր մարդկանց համար է: Սա այն հրաշալի ճշմարտությունն է, որը բացահայտված է Գործք Առաքելոց գրքում:

8:16 Սա կարելի է կոչել սամարացիների Պենտեկոստե:

8:17 Ձեռնադրման համար սա չի կարող տեքստային ապացույց հանդիսանալ: Այսպիսի ընթացակարգ, այս նպատակով, այլևս չի կրկնվում Գործքում: Այն արտահայտում է Առաքյալների իշխանությունն ու գորությունը: Տես՝ Հատուկ Թեմա. Ձեռնադրություն, 6:6:

8:20 Այստեղ աստվածաբանական հարցը Միմոնի սարկերոլոգիական հարցն էր: Փրկված էր նա, թե՛ ոչ: Պետրոսի խոսքերը կարելի է անեծք կամ զգուշացում համարել: Բոլոր նորահավատները ունեն թույլ և անատույզ ինֆորմացիա ավետարանի մասին, բայց արդյո՞ք Միմոնի մոտ առկա էր նաև էգոիզմի գործոնը: Կարո՞ղ են մարդիկ փրկվել իրենց կյանքում կոնֆլիկտային առաջնայնություններով հանդերձ:

■ **«Աստծո պարզևր»** Այստեղ Սուրբ Հոգին ներկայացնում է մեղավոր և ապատամբ մարդկության համար Աստծո կատարած ամբողջ գործը (տես՝ Ես.55:1-2; Երեմ.31:31-34; Եզեկ.36:22-38; Ղուկ.11:13; Գործք 2:38):

8:21 «դու այդ բանում ոչ մի մաս կամ բաժին չունես» Առաջին տերմինը՝ «մաս» (այսինքն՝ *meris*) նշանակում է ընդհանրապես բաժին: Այն բացասական նշանակություն ունի այստեղ և 2 Կորնթ.6:15-ում:

Երկրորդ տերմինը՝ «բաժին» (այսինքն՝ *klēros*) ՀԿ-յան «վիճակ»-ի համար կիրառվող բառն է, որը նրանց համար Աստծո կամքը որոշելու կերպն էր (այսինքն՝ *Ուրիսը և Թումիսը*): Նրանք կիրառեցին այս միջոցը, որպեսզի բաժանեն Խոստացյալ Երկիրը տասներկու ցեղերի միջև (տես՝ Հեսու 12-19): Հետևաբար այն գործածվում է ժառանգության իմաստով: Այս տերմինը անգլերենում սկսվեց կիրառվել «հոգևորականության» համար, սակայն ՆԿ-ում այն վերաբերում է բոլոր հավատացյալներին:

■ **«բո սիրտն Աստծո առաջ ուղիղ չե»** Սա կարող է լինել Սաղմ.78:37-ի ակնարկը: «Ուղիղ» և «արդար» տերմինները (տես՝ Հատուկ Թեմա 3:14) և դրանց շատ տարբերակներ, ծագել են Միջագետքում հանդիպող գետի եղեգի համար գործածվող տերմինից: Այն տասներկուցից մինչև քսան ոտնաչափ երկարություն ուներ և ուղիղ էր: Աստված վերցրեց այս բառը, որը կիրառվում էր շինարարության մեջ (պատերի հորիզոնական ճշգրտությունը ստուգելիս), նկարագրելու Իր սեփական

բարոյական բնավորությունը: Աստված է այն չափանիշը, քանոնը, ուղիղ անկյունը, որի միջոցով մարդիկ դատվում են: Այս լույսի ներքո, բոլորը ձախողում են այս ստուգարքը (տես՝ Հռոմ.3:9-18, 23):

8:22 «ապաշխարի՛ր» Սա ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը արտահայտում է հրատապություն: Տե՛ս գրառում և Հատուկ Թեմա 2:38:

■ **«աղաչի՛ր /անգլ.՝ աղոթի՛ր/»** Սա ԱՈՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ (դեպոնենա) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Աստծո հետ խոսելը անձնական փոխհարաբերության վկայություն է, որպես համոզմունք, որն առաջնորդում է ապաշխարության, այն հանդիսանում է Սուրբ Հոգու մարդու ներսում բնակություն հաստատելու ապացույց:

■ **«եթե»** Սա ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ նախադասություն է, որը ենթադրում է, որ ճիշտ է հեղինակի գրական նպատակների համար կամ էլ՝ իր տեսանկյունից ճիշտ է: Այս նախադասության մեջ այն արտահայտում է պատահականություն՝ Միմոնի ապաշխարելու և ներման համար աղոթելու հոժարության հիման վրա: Նրա մտածելակերպը և գործերը՝ վարքը, նորմատիվ Քրիստոնեությունից լուրջ շեղումներ ունեին:

■ **«քո սրտի չար խորհուրդը»** Մեղքը ծնվում է մարդու մտքում: Ռաբբիներն ասում էին, որ մարդու միտքը նման է հերկված պարտեզի՝ պատրաստ սերմի համար: Այն ինչ մեր աչքերի և ականջների միջոցով թույլ ենք տալիս ներս մտնել, հենց դրանք էլ արմատներ են տալիս: Եթե մենք դրանցով ապրենք, այդ մտքերը հետագայում կդառնան գործողություններ: Ահա թե ինչու է ՆԿ-ը պնդում, որ մենք պետք է «գոտեպնդենք մեր մտքերը» (տես՝ 1Պետ.1:13) կամ «նորոգենք մեր մտքերը» (տես՝ Հռոմ.12:2; Եփես.4:23):

8:23

**NASB, NRSV
NKJV
TEV
NJB**

**«դառնության մաղձ»
«դառնությամբ թունավորված»
«դառը նախանձով լցված»
«մաղձի դառնությամբ»**

«Մաղձ» (*cholē*) և «դառնություն» (*pikros*) տերմինները, երկուսն էլ վերաբերում են դառնահոգի լինելուն, սովորաբար ուղեկցվող բարկությամբ և հավատուրացությամբ (տես՝ 2 Օր.29:18; 32:28-33; Եբր.12:15): Պողոսը կիրառում է «դառնություն» տերմինը մի քանի անգամ, մի շարք բաներից խուսափելու համար թվարկված ցանկում (տես՝ Հռոմ.3:14; Եփես.4:31):

■
**NASB
NKJV
NRSV
TEV
NJB**

**«անիրավության կապանքի մեջ»
«անիրավությամբ կապված»
«ամբարշտության շղթաները»
«մեղքի գերի»
«մեղքի շղթաներ»**

Սա կարող է լինել Մեսիայի գործի ակնարկ (տես՝ Ես.58:6): Հիսուսը կարող էր ազատել Միմոնին չարի այս կապանքից մինչև անձնական գործության, ինչպես որ նրան ազատեց մեղքի պատժից: Մեղքն ունի երկու առանձնահատկություն. (1) թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր մահ և (2) նա է վերահսկում մեղավորի կյանքը (այն կարող է ազդել թե՛ փրկված և թե՛ մեղավոր մարդու վրա. տես՝ 1 Կորնթ.3:1-3): Մեղքի հարցը պետք է լուծվի թե ժամանակի մեջ և թե հավիտենության համար. դրա պատիժը և գործությունը պետք է վերացվի, սակայն դա կարող են անել միայն Քրիստոսը և Հոգին, իսկ մենք՝ որպես հավատացյալներ պետք է թույլ տանք Նրանց դա անել:

8:24 «Ինձ համար աղոթեցե՛ք Տիրոջը» Սա ԱՈՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (ՀՈԳՆԱԿԻ, որը կարող է վերաբերել միսիոներական ամբողջ թիմին): Միմոնը կրկնում է Պետրոսի խոսքերը հ. 22-ից: Պետրոսի խոսքերը վախեցրել էին նրան: Ես հավատում եմ, որ Միմոնը հավատացյալ էր, սակայն նոր, մանուկ հավատացյալ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍՏ. 8:25

25Նրանք էլ, Տիրոջ Խոսքը վկայելուց ու քարոզելուց հետո, վերադարձան Երուսաղեմ. և սամարացիների շատ գյուղերում ավետարանը քարոզեցին:

8:25 «վկայելուց» Տե՛ս գրառում 2:40:

■ «սամարացիների շատ գյուղերում ավետարանը քարոզեցին» Սա ցույց է տալիս Առաքյալների կողմից Սամարացիների հանդեպ վերաբերմունքի տեսանկյունի փոփոխություն: Կարծես թե «Տիրոջ խոսքը» և «Ավետարանը» հոմանիշներ են:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍՏ. 8:26-40

26Եվ Տիրոջ հրեշտակը խոսեց Փիլիպպոսի հետ՝ ասելով. «Ելի՛ր ու գնա՛ հարավային կողմը, այն ճամփան, որ Երուսաղեմից դեպի Գազա է իջնում, որ անապատ է: **27**Նա էլ վեր կացավ ու գնաց. և ահա Եթովպիայից մի մարդ, ներքինի, եթովպացիների Կանդակա թագուհու բարձր պաշտոնյաներից մեկը, որ նրա բոլոր գանձերի վերակացուն էր, պաշտամունքի համար Երուսաղեմ էր եկել: **28**Վերադառնալիս, իր կառքի մեջ նստած, կարդում էր Եսայի մարգարեի գիրքը: **29**Ապա Հոգին Փիլիպպոսին ասաց. «Հասի՛ր ու մոտեցի՛ր այդ կառքին»: **30**Փիլիպպոսն էլ վազելով մոտ գնաց ու լսեց, որ Եսայի մարգարեի գիրքն է կարդում ասաց. «Կարդացածդ արդյոք հասկանո՞ւմ ես»: **31**Նա էլ ասաց. «Ինչպե՛ս հասկանամ, եթե մեկն ինձ չառաջնորդի»: Ու աղաչեց Փիլիպպոսին, որ բարձրանա, իր կողքը նստի: **32**Եվ գրքից ընթերցած հատվածն այս էր. «Նա ոչխարի պես մորթողների մոտ տարվեց. և ինչպես գառնուկն անմռունչ է իր խուզողների առաջ, այնպես Նա Իր բերանը չբացեց: **33**Իր նվաստացման մեջ Նրա դատաստանը վերցվեց. և ո՞վ պիտի պատմի Նրա սերնդի մասին, քանի որ իր կյանքը երկրից վերցվեց»: **34**Ներքինին պատասխանեց Փիլիպպոսին՝ ասելով. «Աղաչում եմ քեզ, ասա՛, մարգարեն ու՞մ մասին է ասում այս՝ ի՞ր, թե՛ մեկ ուրիշի»: **35**Ապա Փիլիպպոսն իր բերանը բացեց և գրքի այս խոսքից սկսելով՝ Հիսուսին քարոզեց նրան: **36**Եվ երբ գնում էին իրենց ճամփով, հասան մի ջրի մոտ, ու ներքինին ասաց. «Ահա՛ ջուրը, էլ ի՞նչն է ինձ խանգարում մկրտվել»: **37**Եվ Փիլիպպոսն ասաց. «Եթե քո ամբողջ սրտով հավատում ես, կարող ես»: Եվ նա պատասխանեց ու ասաց. «Հավատում եմ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է»: **38**Ու հրամայեց, որ կառքը կանգնեցնեն, և երկուսով էլ ջուրը մտան՝ Փիլիպպոսն ու ներքինին, և մկրտեց նրան: **39**Ու երբ ջրից դուրս եկան, Տիրոջ Հոգին հափշտակեց տարավ Փիլիպպոսին, և ներքինին այլևս չտեսավ նրան. ու իր ճամփան էր գնում ուրախությամբ: **40**Իսկ Փիլիպպոսն Ազովոսում հայտնվեց ու շրջելով՝ քարոզում էր բոլոր քաղաքներում, մինչև որ Կեսարիա եկավ:

8:26 «Տիրոջ հրեշտակը խոսեց Փիլիպպոսի հետ» Այստեղ «Տիրոջ հրեշտակը» և «Սուրբ Հոգին» կարծես թե հոմանիշներ լինեն (տես՝ հ. 29): Այս խոսքը կարելի է շատ հանդիպել Գործքում: Տե՛ս գրառում 5:19:

■ «Ելի՛ր ու գնա՛ հարավային կողմը» Այստեղ երկու բայերն էլ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ են: Սա կարող է վերաբերել Եգիպտոս տանող երկու ճանապարհներից մեկին: Այս պատգամը հնարավոր է լսելի է եղել՝ իր յուրահատկության համար: Ակնհայտ է, որ սա եղել է Աստծո կողմից նախապատրաստած ավետարանական հանդիպում՝ իրադարձություն (ինչպես Պողոսի մոտ):

-
- NASB «(սա անապատի ճանապարհ է)»
- NKJV «Սա անապատ է»
- NRSV «(սա ամայի ճանապարհ է)»
- TEV «(այս ճանապարհը մեր օրերում չի գործում)»
- NJB «անապատի ճանապարհը»

Եթե սա Ղուկասի կողմից կատարած մեկնաբանություն է, ապա արդյո՞ք նա հստակեցնում է իր ունեցած տվյալը՝ աղբյուրը, թե այն մեկնաբանություն է Ղուկասի աղբյուրից (հավանաբար Փիլիպպոսը, տես՝ Գործք 21:8): Այս հարցերին հնարավոր չէ ստույգ պատասխանել: Ներշնչանքը ծածկում է Աստվածաշնչի կերտումը, անկախ այն հանազամանքից, թե քանի տարբեր անձիք են ներգրավված եղել այն գրելու մեջ:

8:27 «բարձր պաշտոնյա» Այս «պաշտոնյա» տերմինը տառացի նշանակում է «ներքինի»: Սակայն հատնի չէ, թե նա ֆիզիկապես ներքինի էր, թե պարզապես պալատում աշխատող պաշտոնյա (ծագման

նշանակությունը): ՀԿ-ում Պետափրեսը կոչվում է ներքինի, սակայն ամուսնացած էր (տես՝ Ծննդ.39:1): ՀԿ-ում՝ 2 Օր.23:1-ը արգելում է ներքինուն դառնալ հրեա համայնքի մի մաս, սակայն Եսայի 56:3-5-ում այս արգելքը վերցվում է: Մա հստակ ցույց է տալիս, որ Հոգու նոր դարաշրջանը հասել է: Արդյոք այս մարդը աստվածավախ կամ նորահավատ էր՝ հայտնի չէ, սակայն հավանական է: Նրան բնութագրող արտահայտությունից միայն պարզ է, որ նա կառավարության մեջ բարձր պաշտոնյա էր:

■ **«Եթովպացիների Կանդակա թագուհու»** Կանդակա բառը «Փարավոնի» կամ «Կայսրի» պես մի տիտղոս է: Պատճառը, թե ինչու է թագուհին նշվում, այն է, որ Եթովպիայում թագավորը համարվում էր աստված և, հետևաբար նրանից ցածր մեկն էր, որ զբաղվում էր հասարակ կազմակերպչական կամ քաղաքական գործերով:

8:28 «կարդում էր Եսայի մարգարեի գիրքը» Ըստ երևույթին այս մարդը գնել էր Եսայի մարգարեության մի թանկարժեք կաշվե մագաղաթ, որը պետք է որ լիներ 29 ոտնաչափ երկարության (այսինքն՝ այն, որ գտնվել է Մեռյալ Ծովի Գալարների մեջ): Մուրբ Հոգու առաջնորդությամբ նա բացել էր Եսայի 53:7-8 Մեսիային վերաբերող հատվածը և կարդում էր:

8:29 «Հոգին Փիլիպպոսին ասաց. «Հասի՛ր ու մոտեցի՛ր այդ կառքին» Սա ԱՌԲԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆ է: Տառացի նշանակում է «սոսնձվիր»: Հոգին Փիլիպպոսին ամեն ինչում հատուկ առաջնորդում էր:

8:30 «Փիլիպպոսն էլ վազելով մոտ գնաց ու լսեց, որ Եսայի մարգարեի գիրքն է կարդում» Հնում մարդիկ բոլորը բարձրաձայն էին կարդում, անգամ եթե մենակ էին:

■ **«Կարդացածդ արդյոք հասկանո՞ւմ ես»** Ի՛նչ հրաշալի հարց: Հնարավոր է կարդալ Մուրբ Գիրքը, սակայն հստակ չտեսնել կարդացածի նշանակությունը: Հոգին առաջնորդում է Փիլիպպոսին «աստվածային հանդիպման» որը պետք է՝

1. ցույց տար, որ հասել է նոր դարաշրջանը
2. տար հզոր վկայություն մարդկային մեկ այլ խմբի համար

8:31 Ա. Թ. Ռոբերթսոնի *Բառասպատկերները Նոր Կտակարանում* մեկնաբանում է այս համարը. «Մա մի խառը պայմանական նախադասություն է, որի եզրակացությունը՝ հետևանքը դրված է սկզբնամասում և պատկանում է չորրորդ աստիճանի՝ *'an'-ի* հետ միասին և ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿով, իսկ պայմանը՝ առաջին աստիճանի է՝ մի տարածված ֆենոմեն Կոյնե հունարենում: Այս առաջին աստիճանի պայմանական արտահայտությունը, Ղուկաս 19:40-ի պես կիրառում է *ean* բառը *ei* փոխարեն: ՊԱՅՄԱՆԸ որոշվում է եղանակով, ոչ թե իր կառուցվածքով (տես՝ Ղուկ.19:40):

8:32-33 Այս մեջբերումը Մեպտուագինտայի Ես.53:7-9-ի Մեսիական տեքստից է: Ինձ զարմացնում է այն փաստը, որ հենց այս համարներն են շեշտադրվում և ոչ թե ՀԿ-ի այս համատեքստի որևէ այլ համար: Համենայն դեպս Փիլիպպոսը սկսում է հենց այն տեղից, որտեղից կարդաց ներքինին և բացատրում ամբողջ հատվածը Հիսուս Նազովրեցու կյանքի, ծառայության, մահվան և հարության լույսի ներքո: ՀԿ-յան մարգարեությունը կատարվել էր և Քրիստոսի միջոցով ներումը առաջարկվում է բոլորին:

8:35 «Փիլիպպոսն իր բերանը բացեց» Սա ցույց է տալիս ՀԿ-յան «Չարչարվող Ծառայի» վերաբերյալ պատգամի կենտրոնական՝ կարևոր լինելը ավետարանի քարոզչության համար: Ես հավատում եմ, որ Հիսուսն Ինքը ցույց տվեց վաղ եկեղեցուն, թե ինչպես էին այս վաղեմի մարգարեությունները կապված Իր հետ (տես՝ Ղուկ.24:27):

8:36 «Ահա՛ ջուրը, էլ ի՛նչն է ինձ խանգարում մկրտվել» Փիլիպպոսի ավետարանի պատգամի մեջ մաս էր կազմում նաև մկրտությունը (տես՝ Մատթեոս 3; 28:19; Գործք 2:38; Հռոմ.6:1-11; Կող.2:12): Տե՛ս Հատուկ Թեմա 2:38: Նկատե՛ք, որ նա Երուսաղեմից Առաքյալների կողմից հավանության կամ հաստատության կարիք չուներ, որպեսզի մկրտեր այս նորադարձին: Մկրտությունը հարանվանական խնդիր չէ, այլ թագավորության պահանջներից է: Մենք պետք է զգուշանանք հարանվանական սովորություններից, որ այնքան շատ է պղտորել աստվածաշնչյան ջրերը, ինչպես նաև մեր օրերում իրականացվող ծիսակարգերը:

- Արդյո՞ք ներքինին մտահոգված էր այն հարցով, թե ինքը ընդունված մեկն է.
1. ռասսայական առումով
 2. ֆիզիկապես
 3. սոցիալ-տնտեսական առումով

4. վարդապետական առումով

Բոլոր խոչընդոտները վերցված են Հիսուս Քրիստոսի մեջ (տես՝ Եփես.2:11-3:13): Ով ուզում է, կարող է մոտենալ Նրան (տես՝ Հովհ.1:12; 3:16; Հռոմ.10:9-13):

8:37 Այս համարը, որն արձանագրում է ներքինու դավանության խոստովանությունը, ընդգրկված չէ հին հունարեն պապիրուսների ձեռագրերում՝ P⁴⁵ (Chaster Beatty Papyri /Չեսթեր Բեթի Պապիրուս/), P⁷⁴ (Bodmer Papyri /Բոդմերի Պապիրուսը/) կամ հնագույն ունցիալ հունարեն ձեռագրերում Ռ, A, B կամ C: Ոչ էլ այն կարելի է գտնել հնագույն Վուլգատա, Սիրիակ, Կոպտիկ կամ Եթովպիական թարգմանություններում: 37 համարը Գործքի համար բնագրային չի համարվում: UBS⁴ տալիս է այս համարի բացթողմանը »A» գնահատական, որը նշանակում է, դա հաստատ այդպես է: Այն նույնիսկ ընդգրկված չէ NASB (1970) խմբագրության տեքստում, սակայն ընդգրկված է 1995 թ-ի խմբագրության մեջ՝ փակագծերում:

8:38-39 «Զուրը մտան... ջրից դուրս եկան» Սա տեքստային ապացույց չէ մկրտության ընկնման համար: Համատեքստը ակնարկում է, որ նրանք մտան ջուրը և ոչ թե տալիս է մկրտության մեթոդը: Զգուշացե՛ք ձեր նախապատվության արժանացած հակումներից՝ միտումներից:

8:39 «Տիրոջ Հոգին հափշտակեց տարավ Փիլիպպոսին» Արդյո՞ք սա հրաշք է հաղիսանում Եղիայի դեպքի պես (տես՝ 3 Թագ.18:12; 4 Թագ.2:16) կամ Եզեկիելի՝ (տես՝ Եզեկ.3:14; 8:3) կամ պարզապես նրա անմիջապես մեկնելու՝ հեռանալու մասին է խոսում, հայտնի չէ: Սուրբ Հոգին իր անմիջական միջամտությունն ուներ այս իրադարձության՝ ապաշխարության մեջ: Նկատե՛ք նաև, որ ներքինուն այլևս չի նամակալեցին և հաստատ վարդապետություն սովորեցնել տեղի չունեցավ հետագայում, սակայն այս նորադարձը իր ձեռքերում ուներ Եսայի մարգարեությունը և իր ներսում՝ Սուրբ Հոգուն:

■ **«Իր ճամփան էր գնում ուրախությամբ»** Բարի Լուրը միշտ ուղեկցվում է ուրախությամբ՝ ցնծությամբ (տես՝ 8:8): Իրենեոսը արձանագրում է, որ այս ներքինին դառնում է իր սեփական ժողովրդի մեջ ավետարանի միսիոներ: Ակնհայտ է, որ Սուրբ Հոգին Ինքն էր աշակերտել այս մարդուն:

8:40 Փիլիպպոսը շարունակեց (ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) ավետարանչության իր ծառայությունը Պաղեստինի Աշդոդ (այսինքն՝ Ազովոնո) քաղաքում, Կեսարիա՝ իր տուն, ծովով վերադարձի ճանապարհին: Ակնհայտ էրևում է, որ Փիլիպպոսը հասկանում էր Սամարացիների և Եթովպիացիների համաշխարհային ավետարանչության ազդեցությունը: Ավետարանը նույնիսկ Փղշտացիներին էր իր մեջ ընդգրկում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Աստված թույլ տվեց, որ հալածանքներ լինեն վաղ Եկեղեցու դեմ:
2. Ինչո՞ւ էր ավետարանի քարոզչությունը սամարացիների մեջ այդքան նշանակալի:
3. Արդյո՞ք Սիմոնը հավատացյալ էր:
4. Ինչո՞ւ սամարացիները չստացան Սուրբ Հոգին, երբ հավատացին:
5. Ինչպիսի՞ մարդկանց է ներկայացնում ներքինին:
6. Ինչո՞ւ բոլոր Աստվածաշնչերում առկա չէ համար 37-ը:

ԳՈՐԾՔ 9

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Սողոմի դարձը	Դամասկոսի ճանապարհը. Սողոմի դարձը	Տարսուցի Սողոմի դարձը	Սողոմի դարձը	Սողոմի դարձը
9:1-9	9:1-9	9:1-9	9:1-2 9:3-4 9:5ա 9:5բ-6 9:7-9	9:1-2 9:3-9
9:10-19ա	Անանիան մկրտում է Սողոմին 9:10-19	9:10-19ա	9:10ա 9:10բ 9:11-12 9:13-14 9:15-16 9:17-19ա	9:10-12 9:13-19ա
Սողոմը քարոզում է Դամասկոսում 9:19բ-22	Սողոմը քարոզում է Քրիստոսին 9:20-22	9:19բ-22	Սողոմը քարոզում է Դամասկոսում 9:19բ-20 9:21 9:22	Սողոմը քարոզում է Դամասկոսում 9:19բ-22
Սողոմը ազատվում է հրեաներից 9:23-25	Սողոմը ազատվում է մահից 9:23-25	Սողոմի առաջին այցը Երուսաղեմ 9:23-25	9:23-25	9:23-25
Սողոմը Երուսաղեմում 9:26-30	Սողոմը Երուսաղեմում 9:26-30	9:26-30	Սողոմը Երուսաղեմում 9:26-30	Սողոմի այցը Երուսաղեմ 9:26-30
9:31	Եկեղեցին բարգավաճում է 9:31	9:31	9:31	Հանգիստ 9:31
Ենեայի բժշկությունը 9:32-35	Ենեան բժշկվում է 9:32-35	Պետրոսի ճամփորդությունը Լյուդդա և Հոպպե 9:32-35	Պետրոսը տեսնում է Լյուդդան Հոպպեում 9:32-35	Պետրոսը բժշկում է Հոպպեում մի անդամալույծի 9:32-35
Դորքասը կյանքի է կոչվում 9:36-43	Դորքասը կյանքի է կոչվում 9:36-43	9:36-43	9:36-43	Պետրոսը Հոպպեում մի կնոջ հարություն է տալիս 9:36-38 9:39-42 9:43

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱԿՅԻՆ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Գործքի ուղղվածությունը սկսում է անցում կատարել՝
 1. Պետրոս Առաքյալից Պողոս Առաքյալին
 2. Պաղեստինից դեպի Միջերկրական աշխարհ
 3. հրեաներից դեպի հեթանոսները
- Բ. Պողոսի դարձը եկեղեցու պատմության մեջ այնքան շրջադարձային դեպք էր, որ Գործքում այն արձանագրված է երեք անգամ՝
 1. Ղուկասի պատմությունը, 9:1-30
 2. Պողոսի պատմությունը՝ Երուսաղեմում ամբոխի առջև, 22:3-16
 3. Պողոսի պատմությունը Ագրիպասա II-ի առջև՝ Կեսարիայում, 26:4-18
 4. Պողոսը նաև հակիրճ նշում է այս նույն շրջանը Գաղ.1:13-17 և 2 Կորնթ.11:32-33-ում
- Գ. Ստեփանոսի պատգամի և Պողոսի պատգամների միջև եղած նմանությունները ակնհայտ են: Պողոսը սկսեց ծառայել հենց այն նույն հեղինակական հրեաներին, որոնց քարոզեց Ստեփանոսը: Պողոսը լսեց Ստեփանոսի պատգամը Գործք 7-ում (տես՝ 7:58; 8:1; 22:20): Նույնիսկ հնարավոր է, որ Պողոսը եղել է Երուսաղեմի հեղինակական Ժողովարանների առաջնորդներից, որոնք բանավիճեցին Ստեփանոսի հետ և պարտվեցին:
- Դ. Պողոսի դարձի մեջ տեղի ունեցած մի քանի ազդեցիկ գործոններ.
 1. Հուդայականության ճախողումը մարդուն ներքին խաղաղություն և ուրախություն ապահովելու հարցում
 2. Հիսուսի կյանքը և ուսմունքները բավականին հայտնի էին և քննարկվում էին ռաբբիական միջավայրում (հատկապես Երուսաղեմում)
 3. նա լսեց Ստեփանոսի քարոզը և նրա մահվան ականատեսը դարձավ (հավանաբար նույնիսկ բանավեճի մեջ մտավ Ստեփանոսի հետ)
 4. նա տեսավ Քրիստոնյաների վարքագիծն ու հավատքը հալածանքների ներքո
 5. Հարուցյալ Տիրոջ հետ իր անձնական հանդիպումը փոխեց ամեն ինչ

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 9:1-9

¹Սողոսը, դեռևս Տիրոջ աշակերտների դեմ սպառնալիք ու մահ շնչելով, գնաց քահանայապետի մոտ ²և նրանից նամակներ ուզեց, որպեսզի տանի Դամասկոսի ժողովարանները, որ եթե այդ Ուղուն հետևողներ գտնի՝ կին թե տղամարդ, կապած բերի Երուսաղեմ: ³Ու երբ գնում էր ու մտտեցավ Դամասկոսին, հանկարծ նրա շուրջը երկնքից մի լույս փայլատակեց: ⁴Եվ նա գետին ընկավ. ու մի ձայն լսեց, որ իրեն ասում էր. «Մավո՛ւղ, Մավո՛ւղ, ինչո՛ւ ես Ինձ հալածում»: ⁵Եվ նա ասաց. «Ո՞վ ես Դու, Տե՛ր»: Եվ Տերն ասաց. «Ես Հիսուսն եմ, Ում դու հալածում ես: Դժվար է քեզ համար խթանի դեմ արացի տալը»: ⁶Նա էլ դողալով ու զարմանքով ասաց. «Տե՛ր, ի՞նչ ես ուզում, որ անեմ»: Եվ Տերն ասաց նրան. «Ելի՛ր և քաղաքը մտիր, և քեզ կավի, թե դու ինչ պետք է անես»: ⁷Իսկ այն մարդիկ, որ նրա հետ էին գնում, ապշած կանգնել էին. միայն ձայնն էին լսում, բայց ոչ ոքի չէին տեսնում: ⁸Եվ Սողոսը գետնից վեր կացավ, բայց երբ աչքերը բացվեցին, ոչ մեկին չէր տեսնում. ուստի նրա ձեռքից բռնեցին ու Դամասկոս բերեցին: ⁹Եվ երեք օր ոչինչ չէր տեսնում. ո՛չ կերավ, ո՛չ էլ խմեց:

9:1 «Սողոսը դեռևս ...սպառնալիք ու մահ շնչելով» Տառացի սա նշանակում է «փնչացնել»: Գործք 26:11-ում Պողոսն իր մասին ասում է, որ նա կատաղի գայրույթով էր լցված նրանց հանդեպ: Ըստ երևույթին Պողոսը նաև որոշ Քրիստոնյաների էր սպանել (տես՝ 8:1):

■ **«Տիրոջ աշակերտների դեմ»** Այս տերմինը նշանակում է ուսանողներ՝ սովորողներ: Այն միայն հանդիպում է Ավետարաններում և Գործքում: Այս տերմինը շուտով փոխարինվում է «սուրբեր» տերմինով: Նկատեք այն տերմինների թիվը, որ կիրառվում է այս գլխում Աստծո մարդկանց նկարագրելիս՝

1. աշակերտներ, հհ. 1,10,19,25,26,36,38
2. Ճանապարհը, հ. 2
3. սուրբեր, հհ. 13,32,41
4. եղբայրներ, հ. 17

■ **«գնաց քահանայապետի մոտ»** Ըստ երևույթին սա վերաբերում է Սինեդրոնին (տես՝ Գործք 26:10): Տե՛ս գրառում՝ Սինեդրոն, 4:5:

9:2 «նամակներ ուզեց, որպեսզի տանի Գամասկոսի ժողովարանները» Հռոմեական կառավարությունը Սինեդրոնին տվել էր սահմանափակ իշխանություն, որպեսզի վերահսկի և ղեկավարի ժողովարաններում կամ Կայսրության տարածքում հրեական կյանքի հետ կապված իրադարձությունները (տես՝ 1 Մակ.15:16-21 կամ Ջոզեֆուս, *Հնությունները* 14.10.2): Հուդայականությունը հունա-հռոմեական աշխարհում ճանաչված՝ ընդունված, օրինական կրոն էր:

Պարզ է, որ սրանք հանդիսանում էին ձեռքակալման նամակներ՝ փաստաթղթեր, այն հրեա Քրիստոնյաների համար, որոնք փախել էին Երուսաղեմից՝ հրեաների կողմից կրած հալածանքներից (տես՝ 9:14,21; 22:5; 26:10):

■ **«եթե»** Սա ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ նախադասություն է՝ պոտենցիալ գործողության իմաստով:

■ **«Ուղին»** Սա հավատացյալների համար նրանց առաջին նշաններից մեկն էր հանդիսանում (տես՝ 19:9, 23; 22:4; 24:14,22 և հավանաբար 18:25,26): Այն ունի ՀԿ-յան հիմք, որը խոսում է հավատքի ապրելակերպի մասին (տես՝ Սաղմ.1:1; 16:11; 119:105; 139:24; Առ.4:10-19): Հիսուսը այս գաղափարը կիրառում է Մատթ.7:14-ում, իսկ Հովհ.14:6-ում Իր համար օգտագործում է որպես տիտղոս: Քրիստոնեությունը անձնական փորձառություն է, որին հաջորդում է ամենօրյա փոխհարաբերություն Աստծո հետ:

■ **«կանայք»** Պողոսի հալածած խմբերի մեջ կանանց մասին երեք անգամ նշելը ցույց է տալիս Պողոսի գործողությունների ինտենսիվությունը (տես՝ 8:3; 22:4): Ղուկասը հատկապես մտահոգված էր կանանց մասին:

9:3 «Դամասկոս» Սա հնագույն քաղաք էր և Սիրիայի հռոմեական նահանգի մայրաքաղաքը՝ Գալիլիայի հյուսիսային և հյուսիս-արևելյան կողմում՝ Երուսաղեմից 150 մղոն հեռավորության վրա:

■ **«հանկարծ»** Այս տերմինը նաև ունի երկրորդ իմաստը՝ «անսպասելի»:

■ **«երկնքից մի լույս»** Պողոսը այս լույսի հետ կապված իր փորձառությունը տարբեր կերպերով է պատմում Գործքում տված իր երեք արձանագրություններում՝

1. «նրա շուրջը երկնքից մի լույս փայլատակեց» (9:3)
2. «հանկարծ երկնքից մի ուժեղ լույս փայլատակեց իմ շուրջը» (22:6)
3. «երկնքից մի լույս տեսա՝ արևի լույսից ավելի ուժգին, որ ծագել էր շուրջս» (26:13)

Պողոսը վառ կերպով հիշում է այս դեպքը: Շատ հնարավոր է, որ այս լույսը աստվածաբանորեն՝ ֆիզիկապես կապված է Անապատի Դեգերման Շրջանի Իսրայելի հետ ՅԱՀՎԵԻ ներկայության՝ *Shekinah* փառքի հետ: Եբրայերենի «փառք»-ի հասկացությունը իրենից ներկայացնում է պայծառ լույսի ասպեկտ հենց այս պատմական իրադարձությունից (տես՝ Հատուկ Թեմա. Փառք, 3:13): Այս լույսը ռաբբի Սողոսին պետք է որ հիշեցներ Աստծո ներկայության մասին:

9:4 «մի ձայն լսեց» Այս երկնային ձայնը հուդայականության մեջ ծանոթ երևույթ էր: Այն հայտնի է որպես *bath kol*: Հրեաների համար սա Աստծուց ինֆորմացիա կամ հաստատություն ստանալու միջոց էր (Մադաքիայի կամ Մնացորդացների փակումից մինչև Հովհաննես Մկրտչի ծառայության սկիզբը

ընկած ժամանակահատվածում, որ կոչվում է միջաստվածաշնչյան շրջան): Այս տեսակի հայտնությունը արհրաժեշտություն էր, քանի որ այս շրջանում չկային ներշնչված մարգարեներ:

■ **«Սավո՛ւղ, Սավո՛ւղ»** Եբրայերենում անվան այսպիսի կրկնությունը ինտենսիվություն ցույց տալու կերպ էր:

■ **«Ինչո՛ւ ես Ինձ հալածում»** Աստվածաբանորեն սա շատ նշանակալի տեղ է, քանի որ այն ցույց է տալիս Հիսուսի և Իր եկեղեցու միջև եղած մտերմությունն ու իրար լրացումը (տես՝ Մատթ.10:40; 25:40,45): Պողոսը հալածում էր եկեղեցուն, սակայն Հիսուսը դա Իրեն էր վերագրում: Գործք 26:14-ից հասկանում ենք, որ Հիսուսը Պողոսի հետ խոսում էր արամերենով:

Աստվածաբանորեն նաև նշանակալի է այն, որ Քրիստոնեությունը թե՛ անձ է (Հիսուսը) և թե՛ խումբ (եկեղեցին): ՆԿ-ում եկեղեցու համար կիրառված նմանատիպ փոխաբերություններ են՝

1. մարմին
2. ընտանիք
3. շինություն
4. սուրբեր

Մրանք բոլորն էլ ընդգծում են հավատքի հավաքական բնույթը (տես՝ 1 Կորնթ.12:7): Այն սկսվում է անհատապես, սակայն տեղափոխվում է խմբի մեջ (գլխասրությունն ու հոգատարությունը): Այս անհատական հավաքականությունը կարելի է տեսնել Հռոմ.5:12-21-ում Ադամի և Քրիստոսի մասին Պողոսի քննարկման մեջ: Մեկը բոլորի մի մասն է. մեկը կարող է ազդել բոլորի վրա (տես՝ Հեսու 7):

9:5ա «Ո՛վ ես Դու, Տե՛ր» Ի՞նչ էր ակնարկում Պողոսը «Տե՛ր» խոսքը կիրառելով:

1. պարոն՝ հարգալից դիմելաձև (օր.՝ Հովի.4:11)
2. ՅԱՀՎԵ՛ ՀԿ-ում թարգմանված Տերը (օր.՝ Ծննդ.2:4)

Եթե այստեղ կարևորվում է զարմանքը, ապա #1 է ճիշտ, իսկ եթե երկնքից լույսը արտահայտում է Աստծո գործողությունը, ապա #2-ն է ճիշտ: Եթե #2, ապա Սողոսի ռաբբիական աստվածաբանությունը հմիանգամից վիճարկվեց: Ինչպիսի՞ շփոթեցնող և ահազդու ժամանակ է դա եղել Սողոսի համար: Տե՛ս Հատուկ Թեմա. Աստվածության անունները, 1:6:

9:5բ-6բ Ավելի հին հունարեն ձեռագրերում այս համարները չկան: Դրանք գտնվել են միայն մեկ լատինական ընտանիքի ձեռագրերում: Երասմուսը թարգմանելով Վուլգատայից, 1516 թ-ին դրանք դնում է Հունարեն Նոր Կտակարանի իր առաջին խմբագրության մեջ: Այս խոսքերը կարելի է գտնել Գործք 26:14-ում: Այստեղ դրանց ներառումը ցույց է տալիս դպիրների հակվածությունը զուգահեռները համանման և բոլոր մանրամասներով լի դարձնելու:

9:5 «Ես Հիսուսն եմ, Ում դու հալածում ես» Պողոսը հայտարարում է, որ տեսել է Փառավորված Քրիստոսին (տես՝ Գործք 22:14; 1 Կորնթ.9:1; 15:8-9): Հետագայում Պողոսը հասկանալու է այս փորձառությունը որպես հեթանոսների համար Առաքյալ լինելու իր կոչման անբաժանելի մի մաս:

Նագարեթից խաչված հյուսնը փառավորված Մեսիան է:

9:7 «այն մարդիկ, որ նրա հետ էին գնում» Հավանաբար սա վերաբերում է՝

1. Տաճարի ոստիկաններին, որ ընկերակցում էին Պողոսին
2. այլ Նախանձահույզ հրեաների, զուցե Հելլենիստական ժողովարաններից
3. այլ աստվածաբանական ուսանողների, որ Երուսաղեմից էին

■ **«ձայնն էին լսում, բայց ոչ ոքի չէին տեսնում»** Թվացյալ հակասություն կա այս 9:7 և 22:9-ում արձանագրված այս դեպքի մանրամասների միջև: Եղել են մի քանի տեսություններ, թե ինչպես դրանք դիտարկվեն.

1. Սա սինթեզման արդյունք է: «Լսել» ԲԱՅԸ կարող է ընդունել ՍԵՌԱԿԱՆ հոլով (9:2) կամ ՍԵՂԱԴԲԱԿԱՆ (22:9): Այս տարբեր քերականական ձևերը ունեն տարբեր ենթադրություններ կամ նշանակություններ: NRSV թարգմանությունը, ստորին գրառմամբ տալիս է. «Հունարենը ասում է, որ նրան ուղեկցողները լսեցին այդ ձայնը, սակայն չստացան ասված խոսքերը»:
2. Մյուսներն ասում են, որ սա նման է Հովի.12:29-30-ում Հիսուսի Երուսաղեմ մտնելու և երկնքից ձայն լսվելու դեպքին:
3. Ուրիշներն ասում են, որ սա վերաբերում է Պողոսի ձայնին և ոչ թե Հիսուսի: Նրանք լսում էին Պողոսին խոսելիս, սակայն չէին լսում Հիսուսին խոսելիս:

4. Կան մարդիկ, որ ասում են սա նման է Մինուպտիկ խնդրին: Տարբեր Ավետարանի հեղինակներ Հիսուսի հետ կապված միևնույն իրադարձությունները, քարոզները և գործողությունները արձանագրում են տարբեր կերպերով, որը տարբերվում է ականատեսների պատմածներից:

9:8 «երբ /չնայած/ աչքերը բացվեցին, ոչ մեկին չէր տեսնում» Ըստ երևույթին Պողոսը այս դեպքից հետո սկսեց տեսողության հետ խնդիրներ ունենալ (տես՝ Գաղ.4:13-15; 6:11): Անձնապես հավատում եմ, որ Պողոսի «մարմնի խայթոցը» (2 Կորնթ.12:7-10; Գաղ.4:13-15; 6:11) Արևելյան օֆտալմիա (աչքերի բորբոքում) էր, հավանաբար այս փորձառությունից մնացած հետևանք: Այս դեպքի կապակցությամբ ասում են. «Պողոսը վերապրեց վերակողմնորոշում»: Նա կարծում էր, որ կարող էր տեսնել (Ֆիզիկապես և հոգևոր. տես՝ Հովհաննեսի 9), սակայն նա հասկացավ, որ կույր էր: Զրիստոսի հետ այս հանդիպումից ինչ-որ ժամանակ անց նա ֆիզիկապես կուրացել էր, բայց նրա հոգևոր աչքերն էին լայն բացվել:

9:9 «Եվ երեք օր ոչինչ չէր տեսնում» Սա ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՏԱՐ է: Որոշ մեկնաբաններ դիտարկում են սա որպես 2 Կորնթ.12:1-4-ում արձանագրված Պողոսի երկնքի տեսիլքը:

■ **«ո՛չ կերավ, ո՛չ էլ խմեց»** Պողոսը ծոմ էր պահում և աղոթում (տես՝ հ. 11): Ինչպիսի՛ վերակողմնորոշում էր տեղի ունենում Պողոսի մտքում (աստվածաբանությունը) և սրտում (ցանկությունը): Նրա մոտ սկսվել էր Ավետարանի հավածողից դեպի Ավետարանի քարոզչի վերափոխումը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍՏ. 9:10-19ա
¹⁰Դամասկոսում Անանիա անունով մի աշակերտ կար. և Տերը տեսիլքի մեջ նրան ասաց. «Անանիա»: Նա էլ ասաց. «Ահա՛, այստեղ եմ, Տե՛ր»: ¹¹Եվ Տերը նրան ասաց. «Ելի՛ր գնա այն փողոցը, որ Ուղիղ է կոչվում և այնտեղ՝ Հուդայի տանը փնտրի՛ր Սողոս անունով մի տարսոնացու, քանի որ, ահա, նա աղոթում է ¹²և տեսիլքի մեջ Անանիա անունով մեկին տեսավ, որն իր մոտ մտավ և իր վրա ձեռք դրեց, որպեսզի տեսնի»: ¹³Անանիան էլ պատասխանեց. «Տե՛ր, շատերից եմ լսել այդ մարդու մասին, թե Քո սրբերին որքան չարիք է պատճառել Երուսաղեմում, ¹⁴և այստեղ՝ գլխավոր քահանաներից իշխանություն ունի կալանքի տակ առնելու բոլոր նրանց, որ Քո անունն են կանչում»: ¹⁵Եվ Տերն ասաց նրան. «Դու գնա՛, քանի որ նա Ինձ համար ընտրված անոթ է, Իմ անունը հեթանոսների, թագավորի և Իսրայելի որդիների առջև կրելու համար, ¹⁶որովհետև Ես նրան ցույց եմ տալու, թե ինքն ինչքան նեղություն պիտի կրի Իմ անվան համար»: ¹⁷Եվ Անանիան գնաց, այդ տունը մտավ և ձեռքերը նրա վրա դնելով, ասաց. «Սավո՛ւղ եղբայր, ինձ Տերն ուղարկեց, այն Հիսուսը, որ ճանապարհին, երբ գալիս էիր, քեզ երևաց, որպեսզի տեսողությունդ ետ ստանաս ու Սուրբ Հոգով լցվես» ¹⁸Եվ անմիջապես նրա աչքերից թեփանման բաներ ընկան, ու իսկույն տեսավ և ոտքի ելավ ու մկրտվեց: ¹⁹Եվ սնունդ ընդունելով՝ ուժերը վերականգնվեցին:

9:10 «Անանիա» Այս անունը նշանակում է «ՅԱՀՎԵՆ գթառաստ է»: Ըստ երևույթին նա բարի համբավ ունեցող հավատացյալ հրեա էր և ոչ թե գաղթական (տես՝ 22:12):

■ **«Ահա՛, այստեղ եմ, Տե՛ր»** Սա հասանելի լինելու համար հրեական դարձվածք է (տես՝ Ես.6:8): Համար 11-ը հաստատ տրված է բառացի, քանի որ դա իրենից հստակ հրահանգ է ներկայացնում:

9:12 «տեսիլքի մեջ Անանիա անունով մեկին տեսավ» Հնագույն հունարեն P⁷⁴, Ռ և A ձեռագրերում «տեսիլքի մեջ» խոսքը չկա, սակայն MSS B և C ձեռագրերում առկա է: UBS⁴ տեքստը ներկայացնում է ավելի հակիրճ, սակայն դրան տրված է »C» գնահատականը (նշ.՝ դժվար որոշելի): Այս համարը ցույց է տալիս, որ Անանիայի գալը, գործողությունները և խոսքը հաստատում էին ավելի շուտ Հիսուսի կողմից Պողոսին ասված խոսքերը (տես՝ հ. 6):

■ **«իր վրա ձեռք դրեց»** Տե՛ս Հատուկ Թեմա 6:6:

9:13 «շատերից եմ լսել» Ըստ երևույթին Անանիան վատ լուրեր էր լսել Երուսաղեմից եկած հրեա փախստականներից Պողոսի դաժան հալածանքների մասին:

■ **«Քո սրբերին»** Այս *hagoi* տերմինը կապված է հունարեն «սուրբ» (*hagios*) բառի հետ: ՀԿ-յան հիմքը (*kadosh*) առնչվում է ինչ-որ բանի, ինչ-որ մեկի կամ ինչ-որ տեղի հետ, որն առանձնացված է Աստծո կողմից հատուկ գործի՝ առաջադրանքի համար: «Սուրբեր» տերմինը միշտ հոգնակի թվով է, բացառությամբ մի տեղի՝ Փիլ.4:21, սակայն նույնիսկ այդտեղ այն հոգնակի նշանակության

համատեքստում է: Քրիստոնյա լինել նշանակում է լինել ընտանիքի, համայնքի մի մասնիկը: Հավատքի մեջ մենավորներ չկան:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲԵՐ

Սա եբրայերենի *kadosh* (BDB 871) բառի հունարեն նույնիմաստ բառն է, որն ունի ինչ-որ մեկի, ինչ-որ բանի կամ ինչ-որ տեղի ՅԱՀՎԵԻ բացառիկ նպատակի համար առանձնացված լինելու նշանակությունը (BDB 871): Այն արտահայտում է «սրբվածներ» /the sacred/ անգլերեն բառի գաղափարը: ՅԱՀՎԵՆ Իր բնությամբ (հավիտենական՝ չարարված Հոգի) և Իր բնավորությամբ (բարոյական կատարելությամբ) առանձնացված է մարդկությունից: Նա է չափանիշը, որի միջոցով բոլորը չափվում են և դատվում: Նա հավիտենական և Սուրբ է:

Աստված ստեղծել է մարդուն հաղորդակցվելու համար, սակայն մարդու անկումը (Ծննդոց 3) Սուրբ Աստծո և մեղավոր մարդկության միջև փոխհարաբերության և բարոյական սկզբունքների անդունդ ստեղծեց: Աստված որոշեց վերականգնել Իր գիտակից արարչագործությանը, ուստի Նա կոչ է անում Իր ժողովրդին «սուրբ» լինելու (տես՝ Դևտ.11:44; 19:2; 20:7,26; 21:8): ՅԱՀՎԵԻ հետ հավատքի փոխհարաբերությամբ Իր ժողովուրդը սուրբ է դառնում Նրա հետ ունեցած ուխտի մեջ մնալու դիրքով, սակայն նրանք նաև կանչված են սուրբ կյանք ապրելու (տես՝ Մատթ.5:48):

Այս սրբության կյանք ապրելը հնարավոր է, քանի որ հավատացյալները լիովին ընդունված և ներված են Հիսուսի կյանքի, գործի միջոցով և իրենց մտքերում ու սրտերում Սուրբ Հոգու ներկայությամբ: Սա ստեղծում է պարադոքսալ իրավիճակ՝

1. սուրբ լինելու՝ հանուն Քրիստոսի միջոցով մեր վրա հագած արդարության
2. կանչված սուրբ կյանք ապրելու՝ հանուն Սուրբ Հոգու ներկայության

Հավատացյալները «սուրբեր» են (*hagioi*)՝

1. Սուրբի կամքի համաձայն (Հայր Աստծո. տես՝ Հովի.6:29,40)
2. Սուրբ Որդու կատարած գործի շնորհիվ (Հիսուսի. տես՝ 2 Կորնթ.5:21)
3. մեր մեջ Սուրբ Հոգու ներկայության շնորհիվ (տես՝ Հռոմ.8:9-11)

ՆԿ-ը միշտ դիմում է սուրբերին որպես ՀՈԳՆԱԿԻ (բացառությամբ մեկ տեղի՝ Փիլ.4:21, սակայն նույնիսկ այդտեղ համատեքստը ՀՈԳՆԱԿԻ իմաստով է): Փրկված լինել նշանակում է լինել ընտանիքի, համայնքի, մարմնի, շինության մի մաս: Աստվածաշնչյան հավատքը սկսում է անձնական ընդունելությամբ, սակայն հետևանքը լինում է հավաքական փոխհարաբերությունը: Մենք բոլորս էլ պարզևներ ունենք (տես՝ 1 Կորնթ.12:11) Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու, առողջության, աճման և բարեկեցության համար (տես՝ 1 Կորնթ.2:7): Մենք փրկվել ենք ծառայելու համար: Սրբությունը մեր ընտանիքի բնութագրականն է:

9:14 «գլխավոր քահանաները» ՀԿ-ում քահանայապետությունը ցմահ էր և փոխանցվում էր Դևիի հատուկ ընտանիքի որդիներից մեկին (տես՝ Դևտ.8-10): Սակայն Հռոմեական տիրակալության ընթացքում այս պաշտոնը հռոմեացի պաշտոնյաների կողմից գնվել էր: Հետևաբար Սաղուկեցիների Աննայի ընտանիքում կային մի քանի Քահանայապետեր:

■ **«որ Քո անունն են կանչում»** Այս արտահայտությունը ունի կարևոր աստվածաբանական նշանակություն: Դուկասը Գործքում այն մի քանի անգամ կիրառում է՝

1. ինչ-որ մեկը Հիսուսին դիմելիս (տես՝ 7:59)
2. ինչ-որ մեկի համար, որ ընդունել է Հիսուսին որպես Փրկիչ (տես՝ 9:14, 21)
3. Ամովս 9:12-ից ՀԿ-յան մի մեջբերում, որը վերաբերում է մեկին, որի վրա կանչվում է ՅԱՀՎԵԻ անունը (այսինքն՝ հավատացյալները, տես՝ 15:17)
4. Հրապարակայնորեն Հիսուսի հանդեպ հավատքի դավանության հաստատության ձև (տես՝ 22:16)

Այս արտահայտությունը նաև Պողոսի Իսրայելին ուղղված աղաչանքի մի մասն է կազմում, որը մեջբերված է Հովել 2:32-ից Հռոմ.10:9-13-ում (տես՝ 2 Տիմ.2:22): Պետրոսը կիրառում է այս նույն հաստվածը (Հովել 2:28-32) Պենտեկոստեի ժամանակ իր քարոզի մեջ և կոչ է անում ներկաներին «կանչել Տիրոջ անունը» Հովել 2:32-ից:

Անունը ներկայացնում է անձին: Կանչելով Հիսուսի անունը մեղավորները խնդրում են Նրանից, որ գործի իրենց անունից և ընդունի Իր ընտանիքի մեջ: Տես՝ Հատուկ Թեմա 2:22:

9:15 «Գնա՛» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ (դեպոնենտ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Հիսուսը դժկամ Անանիային իշխանությամբ՝ հրամայելով ուղարկում է Սողոսի մոտ:

■ **«քանի որ նա Ինձ համար ընտրված անոթ է»** Օ՛, ինչպիսի շնորհքի մեծություն և Աստծո ընտրություն: Պողոսը չի համապատասխանում հոժարական ապաշխարության ավետարանական օրինակին: Նա կարուկ կերպով փոխվեց:

■
NASB, NKJV **«հեթանոսների առջև»**
NRSV, NJB **«իմ անունը հեթանոսների առջև կրելու»**
TEV **«իմ անունը հեթանոսներին ճանաչեցնելու»**

Ինչպիսի՛ ապշեցուցիչ հայտարարություն մի հրեայի համար (տես՝ Եփես.3:7): Մինչդեռ սա միշտ էլ եղել է Աստծո ծրագիրը (տես՝ Ծննդ.12:3; Ել.19:5-6; Եփես.2:11-3:13; տես՝ Հատուկ Թեմա 1:8): Իսրայելը պարզապես մի գործիք էր աշխարհին հասնելու համար, որ ստեղծված է Աստծո պատկերով (տես՝ Ծննդ.1:26-27), սակայն ընկած վիճակում է (տես՝ Ծննդ.3:15):

■ **«և թագավորիների»** Պողոսը խոսեց կառավարության մեծ ու փոքր առաջնորդների՝ ղեկավարների հետ, և վերջում էլ՝ Կեսարի:

■ **«և Իսրայելի որդիների»** Պողոսի մշտական միսիոներական գրաֆիկի մեջ առաջին հերթին մտնում էր բոլոր քաղաքներում տեղական ժողովարաններում քարոզելը (տես՝ Հռոմ.1:16): Մա թույլ էր տալիս ՀԿ-ին տեղյակ հրեաներին և աստվածավախ մարդկանց առաջինը արձագանքելու Ավետարանին: Դրանից հետո նա գնում էր հեթանոսներին քարոզելու:

9:16 «որովհետև ես նրան ցույց եմ տալու, թե ինքն ինչքան նեղություն պիտի կրի Իմ անվան համար» Նեղությունը բացառություն չէ, այլ Քրիստոնյաների համար այս մեղավոր աշխարհում սովորական մի բան (տես՝ Մատթ. 5:10-12; Հովհ.15:18-21; 16:1-2; 17:14; Գործք 14:22; Հռոմ.5:3-4; 8:17-18; 2 Կորնթ.4:7-12; 6:3-10; 11:24-33; Փիլ.1:29; 1 Թեսաղ.3:3; 2 Տիմ.3:12; Հակ.1:2-4; 1 Պետ.4:12-16):

Քրիստոսի չարչարանքների և Նրա հետևորդների չարչարանքների միջև գոյություն ունի աստվածաբանական կապ այս անկում ապրած՝ մեղավոր աշխարհում: 1 Պետրոսի գիրքը ցույց է տալիս այս զուգահեռը՝

- 1. Հիսուսի չարչարանքը՝ 1:11; 2:21,23; 3:18; 4:1,13; 5:1
- 2. Նրա հետևորդներինը՝ 1:6-7; 2:19; 3:13-17; 4:1,12-19; 5:9-10

Եթե աշխարհը Նրան մերժեց, ապա կմերժի նաև Նրա հետևորդներին (տես՝ Հովհ.7:7; 15:18-19; 17:14):

9:17 «և ձեռքերը նրա վրա դնելով» Հոգևոր պարզեներ շնորհելու «առաքելական իշխանության» հասկացության համար սուրբգրային հիմք գոյություն չունի: Անանիան անհայտ ծառայող հավատացյալ էր Դամասկոս քաղաքում, որը դառնում է՝

- 1. Աստծո մարգարեն և ծառան, որի միջոցով
- 2. Պողոսը լցվեց Սուրբ Հոգով (տես՝ հ. 17)
- 3. Պողոսը ֆիզիկապես բուժվեց (տես՝ հ. 18)
- 4. Պողոսը մկրտվեց (տես՝ հ. 18)

■ **«Մավո՛ղ, եղբայր»** Հնազանդության և սիրո ինչպիսի՛ հրաշալի օրինակ:

9:18 «նրա աչքերից թեփանման բաներ ընկան» Սա բժշկական տեխնիկական տերմին է վերքից մաշկի թեփուկներ թափվելու համար, որը Ղուկասը գործածում է բացատրելու, թե Պողոսի աչքերի հետ ինչ տեղի ունեցավ բժշկության այդ պահին: Սեպտուագինտայում թեփ/ թեփուկ բառը օգտագործվում է ձկան համար (տես՝ Ղևտ.11:9,10,12; 2 Օր.14:9): Թվոց 16:38-ում կարելի է տեսնել այս տերմինի այլաբանական կիրառությունը, որտեղ այն կիրառվում է հարթ մետաղյա ամանեղենի համար: Այս համատեքստում հավանաբար դրանք մաշկի կամ վերնամաշկի թեփուկներ էին, որոնք Պողոսի աչքերից թափվեցին:

■ **«մկրտվեց»** Ըստ երևույթին հենց Անանիան ինքը մկրտեց Պողոսին (տես՝ 8:36, 38): ՆԿ-ի մկրտությունը հնազանդության քայլ է Հիսուսի տված օրինակին (տես՝ Մատթ.3:3-17; Մարկ.1:9-11; Ղուկ.3:21-22) և պատվերին (տես՝ Մատթ.28:19): Այն ցույց է տալիս սեփականության և նվիրվածության փոփոխություն:

9:19a «սնունդ ընդունելով ուժերը վերականգնվեցին» Այն օրվանից, երբ լույսը Պողոսին գետնին տապալեց, նա ծոմ էր պահում և աղոթում (տես՝ հ. 9): Երեք ամբողջական ծոմապահության օրերից հետո (առանց ջուր, առանց սնունդ) պետք է որ նա շատ թույլ լիներ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 9:19բ-22

¹⁹Ապա Սափուրը մի քանի օր Դամասկոսում գտնվող աշակերտների հետ մնաց: ²⁰Եվ անմիջապես ժողովարաններում սկսեց Քրիստոսին քարոզել, թե՛ Նա՛ է Աստծո Որդին: ²¹Եվ բոլոր լսողները մեծապես զարմանում էին ու ասում. «Չէ՛ որ սա էր, որ Երուսաղեմում հալածում էր այս անունը կանչողներին և այստեղ էլ դրա համար էր եկել, որ նրանց կապված գլխավոր քահանաների մոտ տանի: ²²Բայց Սողոսն ավելի էր զորանում և Դամասկոսում բնակվող հրեաներին պապանձեցնում էր՝ ապացուցելով, թե /այս Հիսուսը Քրիստոսն է/ սա՛ է Քրիստոսը:

9:20 «ժողովարաններում սկսեց Քրիստոսին քարոզել» Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: Դա կարող է նշանակել (1) գործողության սկիզբը կամ (2) կրկնվող գործողություն: Ինչպիսի՛ իրոնիա: Նա ավելի շուտ եկել էր Երուսաղեմի Քահանայապետներից Դամասկոսում գտնվող Սինագոգների համար մի նամակով, որպեսզի հալածի Հիսուսի հետևորդներին, իսկ հիմա մտել է այդ նույն Սինագոգները Հիսուս Մեսիային քարոզելու համար (տես՝ հ. 21):

■ **«Նա՛ է Աստծո Որդին»** Գործք Առաքելոց գրքում սա միակ տեղն է, որտեղ կիրառվում է «Աստծո Որդի» տիտղոսը (բացառությամբ Սաղմ.2:7-ից մեջբերում կատարած Գործք 13:33): Դրա ՀԿ-յան հիմքը արտահայտում է այս խոսքերի կարևորությունը՝ (1) Իսրայել ազգը (տես՝ Ովս.11:1); (2) Իսրայելի Թագավորը (տես՝ 2 Թագ.7:14) և (3) Մեսիան (տես՝ Մատթ.2:15): Պողոսի խիստ միաստվածությունը (տես՝ Հատուկ Թեմա 2:39) վերասահմանվում է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍԾՈՒ ՈՐԴԻՆ

Սա ՆԿ-ում Հիսուսին տրված ամենակարևոր անուններից է: Անշուշտ այն ունի աստվածաբանական նշանակություն: Այն Հիսուսին ներկայացնում է որպես «Որդին» կամ «Իմ Որդին», իսկ Աստծուն դիմում է որպես «Հայր»: ՆԿ-ում այն հանդիպում է ավելի քան 124 անգամ: Նույնիսկ, երբ Հիսուսն է Ինքն իրեն անվանում «Մարդու Որդի» Դանիել 7:13-14 հատվածից, սա ևս ունի աստվածաբանական նշանակություն:

ՀԿ-յան հասկացությամբ «որդի» բառը կարող է վերաբերել չորս հատուկ խմբերի՝

1. հրեշտակներին (սովորաբար ՀՈԳՆԱԿԻ թվով, տես՝ Ծննդ.6:2; Հոբ 1:6; 2:1)
2. Իսրայելի Թագավորին (տես՝ 2 Թագ.7:14; Սաղմ.2:7; 89:26-27)
3. Իսրայելի հավաքական ազգին (տես՝ Ելից 4:22-23; 2 Օր.14:1; Ովս.11:1; Մատթ.2:10)
4. Իսրայելի դատավորներին (տես՝ Սաղմ.82:6)

Երկրորդ կիրառությունն է, որ կապ ունի Հիսուսի հետ: Այս կերպով «Դավթի որդի» և «Աստծո որդի» երկու արտահայտություններն էլ կապված են 2 Թագավորաց 7; Սաղմոս 2 և 89-ի հետ:

ՀԿ-ում «Աստծո որդին» երբեք չի օգտագործվել հատուկ Մեսիայի համար, բացառությամբ որպես Էսկատոլոգիական՝ գալիք թագավորի համար, որպես Իսրայելի «օծված պաշտոններից» մեկը: Այնուամենայնիվ Մեռյալ Ծովի Գալարներում այս տիտղոսը Մեսիական նշանակությամբ շատ տարածված է (տես՝ հատուկ մեջբերումներ *Հիսուսի և Ավետարանների վերաբերյալ Բառարանում /Dictionary of Jesus and the Gospels/, էջ՝ 770): Նաև «Աստծո Որդի» տիտղոսը հանդիսանում է Մեսիական տիտղոս երկու հրեական միջաստվածաշնչյան հայտնության աշխատություններում (տես՝ 2 Եզրաս 7:28; 13:32,37,52; 14:9 և 1 Ենովք 105:2):*

Այս խոսքի ՆԿ-յան հիմքը, որը վերաբերում է Հիսուսին, լավագույնս ամփոփվում է մի քանի կատեգորիաներով՝

1. Նրա մշտագոյության՝ նախքան արարումը գոյություն ունենալը (տես՝ Հովհ.1:1-18)
2. Նրա բացառիկ (կուսական) ծննդյամբ (տես՝ Մատթ.1:23; Դուկ.1:31-35)
3. Նրա մկրտությամբ (տես՝ Մատթ.3:17; Մարկ.1:11; Դուկ.3:22: Աստծո ձայնը երկնքից միանում է Սաղմոս 2-ի թագավորին Եսայի 53-ի չարչարվող ծառայի հետ միասին):
4. Սատանայի կողմից Նրա փորձվելով (տես՝ Մատթ.4:1-11; Մարկ.1:12,13; Դուկ.4:1-13: Նա փորձվում է, որպեսզի կասկածի տակ առնի Իր որդի լինելու փաստը, որ գուցե այդպիսով իր նպատակը կիրականացնեք մեկ այլ ճանապարհով՝ առանց խաչի):
5. Անընդունելի խոստովանողների կողմից Նրա մասին հաստատություններ՝ ա. դևերը (տես՝ Մարկ.1:23-25; Դուկ.4:31-37,41; Մարկ.3:11-12; 5:7)

բ. անհավատները (տես՝ Մատթ.27:43; Մարկ.14:61; Հովհ.19:7)

6. Իր աշակերտների կողմից հաստատություն Իր մասին.

ա. Մատթ.14:33; 16:16

բ. Հովհ.1:34,49; 6:69; 11:27

7. Իր կողմից հաստատություն.

ա. Մատթ.11:25-27

բ. Հովհ.10:36

8. Աստծո մասին Իր կողմից որպես Հոր՝ ընտանեկան փոխաբերության կիրառություն.

ա. Աստծո համար «Աբբա» բառի կիրառությունը Իր կողմից

1) Մարկ.14:36

2) Հռոմ.8:15

3) Գաղ.4:6

բ. Պարբերաբար Իր կողմից օգտագործվող Հայր (*patēr*) բառը՝ նկարագրելու աստվածության հետ Իր փոխհարաբերությունը:

Որպես ամփոփում, «Աստծո Որդի» տիտղոսը իրենից աստվածաբանական մեծ նշանակություն էր ներկայացնում այն մարդկանց համար, ովքեր ՀԿ-ը և դրա խոստումներն ու կատեգորիաները լավ գիտեին, սակայն ՆԿ-ի գրողները անհանգստանում էին տեսնելով այս տիտղոսի կիրառությունը հեթանոսների մեջ, քանի որ համաձայն նրանց հեթանոսական հավատամքի հիմքի «աստվածները» ամուսնանում էին կանանց հետ, որոնցից սերվում էին ժառանգներ՝ «հսկաներ» կամ «տիտաններ»:

9:21 Այս համարը հարցական նախադասության ձև է, որն ակնկալում է «այո» պատասխան:

■ **«ոչնչացնում էր /հայերենում՝ հայածում էր/»** Սա մի հազվադեպ և խիստ խոսք է, որը նշանակում է բնաջնջել, կործանել, կամ ամբողջովին վերացնել: ՆԿ-ում այն գտնվում է միայն այստեղ և Գաղ.1:13,23-ում և 4 Մակկաբայեցիների 4:23-ում: Պողոսը դաժան հայածող էր:

9:22

NASB

«Սողոսը շարունակում էր զորանալ»

NKJV

«Սողոսն ավելի էր զորանում»

NRSV

«Սողոսը զորությամբ ավելի ուժեղ էր դառնում»

TEV

«Սողոսի քարոզչությունը շատ ավելի հզոր էր դառնում»

NJB

«Սողոսի զորությունը արագ ավելանում էր»

Սա ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Որոշ ժամանակ պահանջվեց, որպեսզի Սողոսի պարզևներն ու կարողությունները զարգանան: Ըստ համատեքստի սա վերաբերում է Պողոսի քարոզելու և բանավիճելու կարողություններին (տես TEV):

■ **«պապանձեցնում /անգլ.՝ շվարեցնում/»** Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը արտահայտում է անցյալ ժամանակում կրկնվող գործողություն: Սա մի բաղադրյալ բառ է՝ կազմված «միասին» (*sun*) և «թափել» (*cheō*) բառերից: Այս բառը միայն կարելի է գտնել Գործքում:

1. 2:6, շփոթված

2. 9:22, շվարած

3. 19:32, շփոթված

4. 21:27, գրգռել

5. 21:31, խռովություն

Հրեաները չէին կարողանում բացատրություն գտնել Պողոսի դարձի գալու կամ Հիսուսին որպես ՀԿ-ի խոստացյալ Մեսիա քարոզելու համար:

■ **«ապացուցելով»** Այս բառը նշանակում է եզրահանգել՝ հետևություն անել (տես՝ Գործք 16:10; 19:33) իսկ ավելի լայն իմաստով՝ ապացուցել: Պողոսի մեթոդը շատ նման էր Ստեփանոսի մեթոդին: Նրանք երկուսն էլ կիրառում էին ՀԿ-յան հատվածներ և դրանց իրականացումը Հիսուս Նազովրեցու կյանքում՝ ապացուցելու, որ Նա էր ՀԿ-ի խոստացյալ Մեսիան:

■ **«Քրիստոսը»** Սա Մեսիային դիմելու մի ձև է (Օծյալը, Խոստացվածը, որ Գալու է, տես՝ Հատուկ Թեմա 2:31): Շատ անգամ Գործքում ՈՐՈՇԻԶ ՀՈԳԷ է նախորդում ԳՈՅԱԿԱՆԻՆ /հայերենում –ը որոշիչ հոդը բառի վերջում/ (օր.՝ 2:31, 36; 3:18,20): Սողոսը իշխանությամբ և վստահությամբ հաստատում էր, որ այն Հիսուս Նազովրեցին, որին Երուսաղեմում սպանեցին, հաստատ Աստծո Որդին

էր՝ Մեսիան: Եթե դա ճիշտ էր, ապա դա ամեն բան փոխում էր հրեաների համար (և հեթանոսների): Նրանք սխալ էին հասկացել և անարգել Նրան: Նրանք բաց էին թողել Աստծո պարզ և մնացել հոգևոր խավարի և կարիքի մեջ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 9:23-25

²³Ու շատ օրեր անցնելուց հետո հրեաները խորհուրդ արեցին, որ սպանեն նրան: ²⁴Բայց Սողոսին հայտնի դարձավ նրանց դավը, թե նրանք և՛ ցերեկը, և՛ գիշերը քաղաքի դռներն են հսկում, որ իրենց սպանեն: ²⁵Աշակերտներն էլ գիշերով վերցրին նրան ու զամբյուղի մեջ պարսպից ցած կախելով իջեցրին:

9:23 «Ու շատ օրեր անցնելուց հետո» Մենք պետք է հաշվի առնենք Պողոսի անձնական պատմությունը, որ գրված է Գաղ.1:15-24-ում, որտեղ նա երկար ժամանակ Արաբիայում անցկացրեց: Այս համատեքստում Արաբիան վերաբերում է Նաբատայի /Նաբաթիա/ թագավորությանը (որին տիրում էր Արթես IV-ը՝ Ք.Ա.9 – մ.թ.40) հենց Դամասկոսից հարավ-արևելյան մասում: Երեք տարվա ժամանակահատվածը հավանաբար արտացոլում է ինչ-որ առումով մոտավորապես տասնույթ ամիս: Հրեաները հաշվում էին օրվա միայն մի մասը որպես ամբողջ օր (տես՝ Մատթ.26:61; 27:40,63), այսպիսի հաշվարկ նաև կիրառվում էր տարիների համար:

■ **«հրեաները խորհուրդ արեցին, որ սպանեն նրան»** Հրեաները ըստ երևույթին խառնել էին քաղաքացիական իշխանություններին (տես՝ 2 Կորնթ.11:32-33): Պողոսի համար այս ամենը պետք է որ նվաստացուցիչ լիներ, քանի որ նա այս մասին նշում է 2 Կորնթացիների 11 գլխում՝ տկարության մասին իր քննարկման մեջ:

9:25 «պատի մեջ մի քսգվածքի միջով /հայերենում՝ պարսպից ցած/» Սա հնարավոր է վերաբերում է մասնավոր մի տան պատուհանի, որի հետին պատը քաղաքը շրջապատող պարսպի պատ էր հանդիսանում (տես՝ 2 Կորնթ.11:33; Հեսու 2:15; 1 Թագ.19:12):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 9:26-30

²⁶Երբ Սողոսը Երուսաղեմ եկավ, փորձեց աշակերտներին միանալ, բայց բոլորը վախենում էին նրանից՝ չհավատալով, թե նա աշակերտ է: ²⁷Բայց Բառնաբասը, նրան վերցնելով, առաքյալների մոտ տարավ ու նրանց պատմեց, թե ինչպես է նա ճանապարհին Տիրոջը տեսել, և Նա խոսել է նրա հետ, և թե ինչպես Դամասկոսում համարձակ քարոզել է Հիսուսի անունով: ²⁸Եվ նա Երուսաղեմում նրանց հետ էր ելումուտ անում: ²⁹Եվ համարձակորեն քարոզում էր Տեր Հիսուսի անունով, նույնպես վիճաբանում հեղինակալ հրեաների հետ. նրանք էլ հետամուտ էին նրան սպանելու: ³⁰Իսկ եղբայրները, երբ դա իմացան, նրան Կեսարիա իջեցրին և այնտեղից Տարսոն ուղարկեցին:

9:26 «Սողոսը Երուսաղեմ եկավ» Հավանաբար սա եղել է տասնույթից երեսունվեց ամիս հետո (տես՝ Գաղ.1:15-24): Այս համարը ցույց է տալիս Երուսաղեմի հավատացյալների թերահավատության աստիճանը, որ ունեին իրենց նախկին հալածողի հանդեպ: Ըստ երևույթին Գործքը արձանագրում է Պողոսի Երուսաղեմ կատարած մի քանի այցերը իր դրամատիկ դարձի գալուց հետո:

1. 9:26, առաջին այցը
2. 11:30, օգնության այցը
3. 12:25, միսիոներական ճամփորդությունից հետո
4. 15:2, Երուսաղեմի Ատյանում
5. 18:22, կարճ այց եկեղեցուն
6. 21:17, Հակոբոսի և երեցների հետ այցը և Նագովրեցու երդումը, ձերբակալությունը

9:27 «Բառնաբաս» Տարածված նշանակությունն է «քաջալերության՝ մխիթարության որդի»: Այս մարդը մի հրաշալի սուրբ էր, որի մասին նշվում էր 4:36-ում, որը հետագայում դարձավ Պողոս առաքյալի միսիոներական ճամփորդության առաջին գործընկերը: Տե՛ս ամբողջական գրառումների մեջ Հատուկ Թեմա 4:36-ում:

■ **«նրան տարավ առաքյալների մոտ»** Մյուս միակ արձանագրությունն այս մասին գտնվում է Գաղ.1:18-ում:

■ **«ու նրանց պատմեց»** Բառնաբարսը գիտեր և պատմեց Պողոսի վկայությունը: Սա դուռ բացեց նրա համար, որ լինի ընդունված (տես՝ հ. 28):

9:28

NASB	«ազատ ելումուտ էր անում»
NKJV	«ելումուտ էր անում»
NRSV	«մտնում և դուրս էր գալիս»
TEV	«ամեն տեղ գնում էր»
NJB	«շրջում էր»

Սա ՀԿ-յան մի դարձվածք է, որն ունի առօրյա կյանքի կամ գործունեության իմաստը (տես՝ ԹՎոց 27:17; 3 Թագ.3:7):

9:29 «քարոզում էր /խոսում էր/ ... և վիճաբանում էր հեղինակյան հրեաների հետ» Սա վերաբերում է նույն այն խմբերին (Երուսաղեմի հունախոս հրեաների ժողովանների), որոնք սպանեցին Ստեփանոսին, այժմ նրանք ծրագրում էին Սողոսին սպանել, որը նույնպես սփյուռքի հրեա էր: Հնարավոր է նրանք մտածում էին, որ Ստեփանոսը վերադարձել է:

9:30 «եղբայրները, երբ դա իմացան» 22:17-21-ից հասկանում ենք, որ Հիսուսը այս ժամանակ Պողոսին երևալով ասել է նրան, որ փախնի Երուսաղեմ: Հիսուսը մի քանի անգամ է հայտնվել Պողոսին իր ծառայության ընթացքում, որպեսզի քաջալերի և առաջնորդի նրան (տես՝ 18:9-11; 22:17-21 և Տիրոջ մի հրեշտակ՝ 27:23-ում):

■ **«Կեսարիա»** Սա վերաբերում է Պաղեստինի Միջերկրական ծովեզերքի վրա գտնվող հռոմեական նավահանգստին: Այն հանդիսանում էր Պաղեստինում հռոմեական պաշտոնական կառավարության գլխավոր գրասենյակը:

■ **«Տարսոն»** Պողոսը այժմ պատրաստվելու է տեսադաշտից դուրս մի քանի տարի մնալ իր հայրենի տանը: Տարսոնը ազատ քաղաք էր: Այն նաև հանդիսանում էր հին աշխարհի ամենամեծ գիտական կենտրոններից երրորդը՝ Ալեքսանդրիայից և Աթենքից հետո: Տարսոնի համալսարանները հայտնի էին իրենց փիլիսոփայության, հռետորաբանության և օրենքի մասնաճյուղերով: Ակնհայտ է, որ Պողոսը սովորել էր թե՛ հունական հռետորաբանությունն ու փիլիսոփայությունն, և թե՛ ռաբբիական հուդայականությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 9:31
³¹Այն ժամանակ եկեղեցիները Հրեաստանում, Գալիլիայում ու Սամարիայում խաղաղության մեջ էին, կառուցվում էին ու Տիրոջ երկյուղով և Սուրբ Հոգու մխիթարությամբ քայլելով՝ աճում էին:

9:31 Սա ամփոփիչ համար է, որը ամփոփում է Պողոսի դարձը և սկսում է ներկայացնել Պետրոսի ճամփորդությունները: Ղուկասը Գործքում հանախ է կիրառում այսպիսի ամփոփիչ համարներ: Տե՛ս Ներածություն IV – Նպատակը և Կառուցվածքը, Ա.

■ **«եկեղեցին»** Տե՛ս գրառումները և Հատուկ Թեմա 5:11 և ուշադրություն դարձրեք, թե «եկեղեցի» բառի եզակի թիվը ինչպես է արտացոլում շատ անհատներից կազմված համայնքը: «Եկեղեցի» տերմինը կարող է նշանակել տեղական եկեղեցի (օր.՝ Կող.1:18,24; 4:15,16), մի տարածաշրջանի բոլոր եկեղեցիները (օր.՝ Եփես.1:22; 3:10,21; 5:23,24,25,27,29,32) և ամբողջ աշխարհի բոլոր եկեղեցիները (օր.՝ Մատթ.16:18):

Նկատեք այն երևույթները, որոնք ընտրել է Ղուկասը մատնանշելու համար՝

1. խաղաղություն բոլոր եկեղեցիներում
2. աճ և ավելացում
3. Սուրբ Հոգուց մխիթարություն

Ինչպիսի՛ փոփոխություն 8:1 հալածանքներից հետո: Դեռևս խնդիրներ կային, սակայն Աստված լուծում էր յուրաքանչյուր կարիքը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ էր Պողոսը այդքան վճռական եկեղեցուն հալածելու մեջ:
2. Ինչո՞ւ է Պողոս առաքյալի դարձի գալու պատմությունը Գործքում նշվում երեք անգամ:
3. Ի՞նչն է այդքան նշանակալի՝ կարևոր Անանիայի Պողոսի մոտ ուղարկվելու, նրան ձեռնադրելու և մկրտելու մեջ:
4. Ո՞րն է Պողոսի կողմից Հիսուսին «Աստծո Որդի» տիտղոսով ներկայացնելու կարևորությունը:
5. Ինչո՞ւ Դուկասը չի արձանագրում Արաբիայում ապրած Պողոսի երեք տարիները:

ՀԱՄԱՏԵՔՍԱԿՅԻՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, 9:32-10:48

Ա. Չնայած որ Գործք Առաքելոց գիրքը սկսում է Պետրոսից անցում կատարել Պողոսին, 9:32-12:25 գլուխները ներկայացնում են Պետրոսի շրջիկ ծառայությունը:

Բ. Այս բաժինը ներկայացնում է Պետրոսին Լյուդդայում՝ 9:32-35, Հոպպեում՝ 9:36-43, 10:9-23, Կեսարիայում՝ 10:1-8, 23-48, և Երուսաղեմում՝ 11:1-18; 12:1-17:

Գ. Այս բաժինը չափազանց կարևոր է, քանի որ ներկայացնում է հեթանոսների մեջ առաքելության շարունակական պայքարները և Պետրոսի ունեցած բաժինը (որպես առաքելական խմբի գլխավոր) այս պայքարում: Դուկասը Կոռնելիոսի դեպքը այնքան է կարևորում, որ այս բաժնում այն կրկնում է երեք անգամ:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 9:32-35

³²Եվ եղավ, որ երբ Պետրոսը բոլորի մեջ շրջում էր, իջավ նաև Լյուդդայում բնակվող սրբերի մոտ: ³³Եվ այնտեղ գտավ մի մարդու, Ենեա անունով, որ անդամալույծ էր և իր անկողնուց ութ տարի դուրս չէր եկել: ³⁴Եվ Պետրոսը նրան ասաց. «Ենեա՛, Հիսուս Քրիստոսը քեզ բժշկում է: Ելի՛ր և կարգի բեր անկողինդ»: Նա էլ անմիջապես ելավ: ³⁵Եվ Լյուդդայի ու Սարոնի բոլոր բնակիչները տեսան նրան ու Տիրոջը դարձան:

9:32 «Պետրոսը շրջում /ճամփորդում/ էր» Ըստ երևույթին Առաքյալները քարոզում էին ամբողջ Պաղեստինով մեկ և նրան շրջապատող երկրներում:

■ «սուրբերը» Գործքում այս տերմինը կիրառվում է նկարագրելու եկեղեցուն: Տե՛ս Հատուկ Թեմա. Սուրբեր, 9:13: «Աշակերտներ» տերմինը հետզհետե փոխարինվում է «սուրբեր» տերմինով: Այս տերմինը առնչվում է ՀԿ-յան «սուրբ» բառի հետ և նշանակում է «առանձնացված» Աստծո ծառայության համար: Այն երբեք չի կիրառվում ԵԶԱԿԻ թվով՝ բացառությամբ այս միակ տեղի՝ Փիլ.4:21, որը հավաքական համատեքստ է: Սա ցույց է տալիս, որ սուրբ լինելը նշանակում է «համայնքի մեջ» լինել: Տե՛ս Հատուկ Թեմա 9:13: Բոլոր հավատացյալները ՆԿ-ում «սուրբեր» են կոչվում: Դա մեր դիրքն է Քրիստոսի մեջ, որը այդքան շեշտադրվում է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՐԲԱՑՈՒՄ

ՆԿ արձանագրում է, որ երբ մեղավորները ապաշխարությամբ և հավատքով դարձի են գալիս դեպի Հիսուսը, նրանք անմիջապես արդարացվում և սրբացվում՝ սրբվում են: Սա Քրիստոսի մեջ

նրանց ունեցած նոր դիրքն է: Նրա արդարությունը վերագրվում է հավատացյալներին (տես՝ Հռոմեացիներին 4): Նրանք հռչակվում են արդար և սուրբ (Աստծո դատական ակտը):

Սակայն ՆԿ-ը նաև հորդորում է հավատացյալներին ապրել սրբության կամ սրբացման կյանք: Սա հանդիսանում է թե՛ աստվածաբանական դիրք Հիսուս Քրիստոսի ավարտած գործի մեջ և թե՛ կոչ մեր ամենօրյա կյանքում Քրիստոսի պես վերաբերմունք և ապրելակերպ ունենալու: Քանի որ փրկությունը ձրի պարգև է և ամեն բան արժեցող ապրելակերպ, այդպես էլ սրբացումը՝

Սկզբնական պատասխան

Գործք 20:32; 26:18
Հռոմեացիներ 15:16
1 Կորնթացիների 1:2-3; 6:11
2 Թեասալ. 2:13
Եբրայեցիների 2:11; 10:10,14; 13:12
1 Պետրոս 1:2

Պրոգրեսիվ Քրիստոսակերպություն

Հռոմեացիների 6:19
2 Կորնթացիների 7:1
Եփեսացիների 1:4; 2:10
1 Թեասալ. 3:13; 4:3-4,7; 5:23
1 Տիմոթեոս 2:15
2 Տիմոթեոս 2:21
Եբրայեցիների 12:14
1 Պետրոս 1:15-16

■ **«Լյուդդա»** Լյուդդա քաղաքը տեղակայված էր Բաբելոնից դեպի Եգիպտոս տանող առևտրային խաչմերուկի վրա: ՀԿ-ում այն հայտնի էր որպես «Լոդ» (1 Մնաց.8:12): Այն մոտ տասնմեկ մղոն Միջերկրական Ծովից դեպի ներս ընկած ցամաք էր: Սա այն նույն շրջանն է, որտեղ այցելեց Փիլիպպոսը 8:40-ում:

9:33 «մի մարդ ենեա անունով» Հունարեն լեզվով նրա անունը նշանակում է «փառաբանություն»: Արդյո՞ք նա հավատացյալ էր, թե ոչ, հայտնի չէ, սակայն ըստ երևույթին Պետրոսը այցելում էր այն հաստատված եկեղեցիները, որ Փիլիպպոսն էր սկսել:

■ **«որն անդամալույծ էր և իր անկողնուց ութ տարի դուրս չէր եկել»** Այս թարգմանությունը տալիս է այս հունարեն արտահայտության ամենատարածված մեկնաբանությունը (NASB, NKJV, NRSV, TEV, NJB): Սակայն այն կարող է նաև նշանակել «ութ տարեկանից ի վեր» (տես՝ Նյումեն և Նիդա, *Գործք Առաքելոցի Թարգմանչի Ձեռնարկ*, էջ՝ 199 / Newman and Nida, *A Translator's Handbook on The Acts of the Apostles*):

9:34 «Հիսուս Քրիստոսը քեզ բժշկում է» Այստեղ ՀՈՌ չկա, որն ակնարկում է, որ այս երկու տերմինները դարձել են ընդհանուր նշանակության: Սա գրական մի ձև է հայտնի որպես ԱՈՐԻՍՏ ՆԵՐԿԱ, որը նշանակում է «այս դեպքում Մեսիան բժշկում է քեզ»:

■ **«եկիր և կարգի բեր անկողինդ»** Սրանք երկուսն էլ ԱՈՐԻՍՏ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ են, որն արտահայտում է ինտենսիվություն և հրատապություն:

■ **«նա էլ անմիջապես ելավ»** Սա արտահայտում է այս մարդու հավատքը Հիսուսի մասին Պետրոսի տված ուղղերձի հանդեպ:

9:35 «Լյուդդայի բոլոր բնակիչները» Սա Աստվածաշնչում «բոլոր» տերմինի հիպերբոլիկ կիրառության (չափազանցեցված) գեղեցիկ օրինակ է (տես՝ Ծննդ.41:37; 2 Օր.2:25; Դուկ.2:1; Հռոմ.11:26):

■ **«Սարոն»** Սա վերաբերում է Պաղեստինի հյուսիսային ծովեզրում գտնվող դաշտավայրին: Այն մոտավորապես երեսուն մղոն լայնությամբ Հոպպեից մինչև Կեսարիա ձգվող տարածք է:

■ **«Տիրոջը դարձան»** «Դարձան» բառը կարող է արտահայտել ՀԿ-յան ապաշխարություն (*shub*) բառը: Այն ակնարկում է մեղքից և անձնասիրությունից հետ դառնալ (ապաշխարություն) դեպի (հավատք) Տիրոջը (տես՝ 11:21):

Այս փոքրիկ ամփոփիչ հայտարարությունն այս բաժնում մի քանի անգամ կրկնվում է, ցույց տալու Աստծո Հոգու մեծ շարժը Պետրոսի և հետագայում Պողոսի միջոցով: Այս հրաշքի դեպքը դուռ բացեց ավետարանի քարոզչության համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Այս հասկացությունը չափազանց կարևոր է, սակայն դժվար է սահմանելը: Մեզանից շատերը ունեն տարբեր սահմանումներ, որոնք գալիս են մեր հարանվանական ազդեցություններից: Սակայն ընդհանրապես մի «շարք» աստվածաբանական սահմանումներ հարկադրում են որոշ Եբրայերեն (և հունարեն) բառերի, որոնք մասնավորապես չեն ենթադրում այս մի «շարք» սահմանումները: Պետք է հիշել, որ ՆԿ-ի հեղինակները (բացի Դուկասից) եղել են հրեա մտածողության մարդիկ, որոնք գործածում էին Կոյնե Հունարեն լեզվի տերմիններ, ուստի մենք կսկսենք հենց Եբրայերեն տերմիններից, որոնցից հիմնականում երկուսն են կիրառվել՝

1. *nacham* (BDB 636, KB 688)
2. *shub* (BDB 996, KB 1427)

Առաջին տերմինը՝ *nacham*, որը բնագրում կարծես նշանակում էր «խորը շունչ քաշել», կիրառվում է մի քանի իմաստով՝

- ա. «հանգիստ» կամ «հարմարավետություն» (օր.՝ Ծննդ. 5:29; 24:67; 27:42; 37:35; 38:12; 50:2; հաճախ գործածվում է անունների մեջ, տես՝ 4 Թագ.15:14; 1 Մնաց.4:19; Նեեմ.1:1; 7:7; Նավումի 1:1)
- բ. «զղջում» (օր.՝ Ծննդ.6:6,7)
- գ. «մտափոխություն» (օր.՝ Ելից 13:17; 32:12,14; Թվոց 23:19)
- դ. «զթասրտություն» (օր.՝ 2 Օր. 32:36)

Նկատելք, որ բոլոր այս բառերի մեջ կան խորը զգացմունքներ: Ահա բանալին՝ խորը զգացմունքներն են, որ դրդում են գործողությունների: Գործողության այս փոփոխությունը հաճախ ուղղված է լինում ուրիշների հանդեպ, բայց նաև Աստծո: Աստծո հանդեպ վերաբերմունքի և արարքների այս փոփոխությունն է, որ այս տերմինին հաղորդում է աստվածաբանական այսպիսի կարևորություն: Սակայն այստեղ պետք է ցուցաբերել զգուշավորություն: Ասվում է, որ Աստված «զղջաց» (տես՝ Ծննդ.6:6,7; Ելից 32:14; Դատ.2:18; 1 Թագ.15:11,35; Սաղմ.106:45), սակայն սա մեղք գործելու կամ սխալ անելու հետևանք չէ, այլ գրականական ձև, որն արտահայտում է Աստծո զթասրտությունն ու հոգատարությունը (տես՝ Թվոց 23:29; 1 Թագ.15:29; Սաղմ.110:4; Երեմ.4:27-28; Եզեկ.24:14): Մեղքի և ապստամբության արժանի պատիժը ներվում է, եթե մեղավորը ճշմարտապես դարձի է գալիս իր՝ իրենց մեղքից և դառնում դեպի Աստծուն: Դա կյանքի արժեքների վերակողմնորոշում է:

Երկրորդ տերմինը՝ *shub*, նշանակում է «ետ դառնալ» (շրջվել ինչ-որ բանից, ետ շրջվել, շրջվել դեպի): *Shub* ԲԱՅԸ (BDB 996, KB 1427) հիմնականում նշանակում է «ետ դառնալ» կամ «վերադառնալ»: Այն կարելի է կիրառել՝

1. Աստծուց ետ դառնալու իմաստով՝ Թվոց 14:43; Ովս.22:16,18,23,29; Դատ.2:19; 8:33; 1 Թագ. 15:11; 3 Թագ.9:6; Երեմ.3:19; 8:4
2. Դեպի Աստծուն դառնալու իմաստով՝ 3 Թագ.8:33,48; 2 Մնաց.7:14; 15:4; 30:9; Սաղմ.51:13; 116:7; Ես.6:10; 10:21,22; 31:6; Երեմ.3:7,12,14,22; 4:1; 5:3; Ովս.3:5; 5:4; 6:1; 7:10,16; 11:5; 14:1,2; Ամովս 4:6,8-11 (հատկապես ուշադրություն դարձրեք Երեմիա 7 և Ամովս 4)
3. ՅԱՀՎԵՆ սկզբից ասել էր Եսայուն, որ Հուդան չի ապաշխարելու՝ չի կարող ապաշխարել (տես՝ Ես.6:10), սակայն գրքում առաջին անգամ այդպես չի ասվում, այլ Նա կոչ է անում նրանց, որ դարձի գան դեպի Իրեն:

Ապաշխարությունը այնքան էլ զգացմունք չէ, որքան Աստծո հանդեպ վերաբերմունք: Այն կյանքի վերակողմնորոշում է սեփական եսից դեպի Աստծուն: Այն արտահայտում է փոխելու և փոխվելու հոժարակամություն: Ապաշխարությունը ոչ թե մեղքի լիակատար դադարեցում է, այլ ամենօրյա զիտակցված ապստամբության դադարեցում: Այն Ծննդոց 3-ի Անկման եսակենտրոն հետևանքների հակադարձումն է: Այն մատնացույց է անում, որ Աստծո պատկերը և նմանությունը (Ծննդ. 1:26-27) թեև ապականվել էր, սակայն այժմ վերականգնված է: Մեղավոր մարդկության հաղորդակցությունը Աստծո հետ դարձյալ հնարավոր է:

ՀԿ-ում ապաշխարություն հիմնականում նշանակում է «գործողությունների փոփոխություն», մինչ ՆԿ-ում «ապաշխարություն» նշանակում է «մտածելակերպի փոփոխություն» (տես՝ Հատուկ Թեմա. Ապաշխարություն [ՆԿ]): Այս երկուսն էլ անհրաժեշտ են ճշմարիտ աստվածաշնչյան

ապաշխարության համար: Նաև անհրաժեշտ է գիտակցել, որ ապաշխարությունը թե՛ սկզբնական գործողություն է և թե՛ շարունակական ընթացք: Սկզբնական գործողությունը կարելի է տեսնել Մարկ.1:15; Գործք 3:16 և 19; 20:21, մինչ շարունակական ընթացքը՝ 1 Հովհ.1:9; Հայտնություն 2 և 3: Ապաշխարությունը այլընտրանք չէ (տես՝ Դուկ.13:3,5):

Եթե ճիշտ է, որ ուխտի երկու պահանջներն են «ապաշխարությունը» և «հավատքը» (օր.՝ Մատթ.3:2; 4:17; Մարկ.1:4,15; 2:17; Դուկ.3:3,8; 5:32; 13:3,5; 15:7; 17:3), ապա *nacham* տերմինը վերաբերում է մարդու իր մեղքը գիտակցելու խորը զգացմունքներին և ետ դառնալուն, մինչ *shub* տերմինը առնչվում է մեղքից շրջվելով դեպի Աստծուն դառնալը (այս երկու հոգևոր գործողությունների օրինակ է Ամովս 4:6-11, «դուք Ինձ չդարձաք» [հինգ անգամ] և Ամովս 5:4,6,14՝ «Ի՛նձ փնտրեք... Տիրոջը փնտրե՛ք... փնտրեք բարին և ոչ թե չարը»):

Ապաշխարության գործողության առաջին հրաշալի օրինակը Դավթի մեղքն է Բերսաբեի հետ (տես՝ 2 Թագավորաց 12; Սաղմոս 32:51): Դավթի կյանքում, նրա ընտանիքի և Իսրայելի կյանքում այդ մեղքի հետևանքները շարունակվեցին, սակայն Դավթի փոխհարաբերությունը Աստծո հետ վերականգնվեց: Նույնիսկ ամբարիշտ Մանասեն կարող է ապաշխարել և ներվել (2 Մնաց.33:12-13):

Այս երկու տերմինները զուգահեռաբար կիրառվում են Սաղմ.90:13-ում: Պետք է լինի մեղքի ճանաչում՝ ընդունում և դրանից գիտակցաբար, անձնապես ետ դարձ, ինչպես նաև Աստծուն և Նրա արդարությունը փնտրելու փափագ (տես՝ Ես.1:16-20): Ապաշխարությունը ունի գիտակցական, անձնական և բարոյական ասպեկտներ: Բոլոր երեքն էլ պահանջվում են, որպեսզի թե՛ նոր փոխհարաբերություն սկսվի Աստծո հետ և թե՛ այս նոր փոխհարաբերությունը պահպանվի: Չղջման խորը զգացումը վերածվում է Աստծո հանդեպ և Նրա համար հարատևող նվիրումի:

NASB (Թ-ԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 9:36-43

³⁶Եվ Հոպպեում մի աշակերտ կար, անունը՝ Տաբիթա, որ թարգմանվում է Դորքաս՝ Այծեմնիկ: Այս կինը լեցուն էր բարի գործերով ու ողորմություններով, որ ինքն էր կատարում: ³⁷Ու այնպես եղավ, որ այն օրերին նա հիվանդացավ ու մեռավ: Նրան լվացին և վերին սենյակում դրեցին: ³⁸Ու Լյուդդան Հոպպեին մոտ էր, ուստի աշակերտները, լսելով, թե Պետրոսն այնտեղ է, նրա մոտ երկու մարդ ուղարկեցին, աղաչելով, որ առանց ուշանալու իրենց մոտ գան: ³⁹Պետրոսն էլ ելավ եկավ նրանց հետ, ու երբ եկավ, վերին սենյակը տարան նրան, և բոլոր որբևայրիները նրա շուրջը հավաքվելով, լաց էին լինում և ցույց էին տալիս այն բաճկոնները և հագուստները, որ Այծեմնիկը կարել էր, երբ իրենց հետ էր: ⁴⁰Պետրոսն էլ բոլորին դուրս հանելով, ծնկի եկավ ու աղոթեց. «Տաբիթա՛, վեր կաց»: Նա էլ, իր աչքերը բացեց ու երբ Պետրոսին տեսավ, ուղիղ նստեց: ⁴¹Իսկ ինքը ձեռքը տվեց նրան, վեր բարձրացրեց և սրբերին ու որբևայրիներին կանչելով՝ նրանց առջև կենդանի կանգնեցրեց նրան: ⁴²Եվ սա ամբողջ Հոպպեում հայտնի դարձավ, ու շատերը Տիրոջը հավատացին: ⁴³Եվ եղավ այնպես, որ ինքը շատ օրեր մնաց Հոպպեում՝ Միմոն անունով մի կաշեգործի մոտ:

9:36 «Հոպպե» Այսօր այս քաղաքը հայտնի է որպես Չաֆֆա (*Yafa*): Այն Երուսաղեմի հնագույն նավահանգիստն էր: Այսօր այն հանդիսանում է Ժամանակակից Թել-Ավիվ-*Yafa* քաղաքի մի մասը:

■ **«աշակերտ»** «Աշակերտ» տերմինը կիրառվում է Գործք Առաքելոցի այս բաժնում բավականին հաճախ: Բառացի այն նշանակում է «ուսանող» սակայն կիրառվում է հավատացյալի իմաստով:

■ **«Տաբիթա... Դորքաս»** Այս օրհորդի արամերեն անունը *Tabitha* էր, հունարենը՝ *Դորքաս*: Հրեաներից շատերը, ովքեր ունեին սոցիալական կամ կոմերցիոն կապ ոչ հրեա հասարակության հետ, ունեին երկու անուն՝ արամերեն և հունարեն լեզուներով: Այս երկու անուններն էլ նշանակում են «այծյամ»՝ գեղեցկության և շնորհքի խորհրդապատկերը (տես՝ Երգ.2:9, 17; 4:5; 7:3):

■ **«բարի գործերով ու ողորմություններով»** Սա վերաբերում է հրեական ողորմություն տալուն: Այն ամեն շաբաթ հրեական ժողովարաններում հավաքված նվիրատվությունների գաղափարն է, որը համայնքում ապրող հրեա կարիքավոր մարդկանց էր տրամադրվում: Հիսուսի օրոք ապրող հրեաների համար այն կարևոր նշանակություն ուներ: Եկեղեցին հետևում էր այս օրինակին (տես՝ Գործք 6): Տե՛ս Հատուկ Թեմա 3:2:

■ «որ ինքն էր կատարում /անգլ.՝ շարունակաբար/» Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սա խոսում է անցյալ ժամանակում սովորություն դարձած գործողության մասին:

9:37 «նրան լվացին ու վերին սենյակում դրեցին» Մարմնի լվացումը հրեական թաղման պատրաստությանը հատուկ սովորույթ էր: Երուսաղեմում մարմինը թաղում էին հենց մահվան օրը, սակայն Երուսաղեմից դուրս թաղումը կարող էին երեք օր հետաձգել: Տե՛ս Հատուկ Թեմա 5:6:

9:38 «երկու մարդ ուղարկեցին» Այս հավատացյալները լսել էին, որ Աստված մեծ հրաշքներ էր կատարում Պետրոսի միջոցով և հավատում էին, որ նա կարող էր ինչ-որ բան անել այս հրաշալի հրեա օրհորդի համար:

9:39 «բոլոր որբեայրիները նրա շուրջը հավաքվելով» Ըստ երևույթին նրանք հագել էին երկու տարբեր տեսակի հագուստներ, որ Դորքասը կարել էր նրանց համար՝ (1) ներքնագգեստներ և (2) վերնագգեստներ:

9:40 «Պետրոսն էլ բոլորին դուրս հանելով» Սա բառացի նշանակում է «դուրս քշել»: Հենց այսպես վարվեց Հիսուսը Մարկ.5:40-ում: Իրականում մեծ նմանություններ կան այս բաժնում և Հիսուսի կյանքի ընթացքում կատարված հրաշքների միջև: Հիսուսի ծառայությունը Առաքյալների ունեցած միակ օրինակն էր՝ նմուշը:

Հարցը նրանում է, թե «Ինչո՞ւ Պետրոսը կամեցավ, որ բոլորը հեռանան»: Հիսուսը այդպես վարվեց, քանի որ չէր ուզում, որ հայտնի դառնար միայն որպես բժշկող և ավետարանը դեռևս ավարտված չէր: Բայց ինչո՞ւ Պետրոսը այսպես վարվեց: Թվում է, թե հրաշքները հավատքի դուռ էին բացում, ուստի կարծես թե նա պետք է ուզեր, որ հնարավորինս շատ մարդ տեսներ այդ հրաշքը:

■ «**ծնկի եկավ**» Հրեական աղոթքի սովորական դիրքը կանգնած, ձեռքերն ու աչքերը դեպի երկինք պարզած վիճակն է: Սակայն Գործք Առաքելոց գրքում մի քանի անգամ արձանագրվում է, որ աշակերտները ծնկի եկան աղոթելու: Ըստ երևույթին սա շեշտադրման համար էր (տես՝ 7:60; 20:36; 21:5), ինչպես որ Հիսուսն էր աղոթում Գեթսեմանի պարտեզում (տես՝ Ղուկ.22:41):

■ «**Տաբիթա՛, վեր կաց**» Ակնհայտ է, որ նա խոսում էր արամերեն: Հիսուսը և առաջին դարի բոլոր հրեաները Պաղեստինում խոսում էին արամերեն և ոչ թե եբրայերեն: Դա այդպես էր նույնիսկ դրանից շատ ավելի առաջ Եգրաս- Նեեմիա ժամանակաշրջանում (տես՝ Նեեմ.8:4-8):

9:41 «սուրբեր» Տե՛ս Հատուկ Թեմա. Սուրբեր 9:13:

9:42 «շատերը Տիրոջը հավատացին» Սա ևս մեկ ամփոփիչ խոսք է, որը արտահայտում է Պետրոսի հրաշքների և քարոզչության հրաշալի արդյունքները: Տե՛ս Հատուկ Թեմա 2:40 և 3:16:

9:43 «Պետրոսը /նա/ շատ օրեր մնաց Հոպպեում՝ Սիմոն անունով կաշեգործի մոտ» Պետրոսի հրեական օրինապահությունը պետք է որ արդեն կոտրված լիներ, որպեսզի կարողանար մնալ ծիսականորեն անմաքուր համարվող մի կաշեգործի տանը (որը աշխատում էր մեռած կենդանիների կաշվով), ինչպիսին որ Սիմոնն էր:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Պողոսի դարձը Գործքում երեք անգամ արձանագրվում:
2. Ինչո՞ւ են Պողոսի դարձի երեք դեպքերը իրարից որոշակիորեն տարբերվում:
3. Արդյո՞ք Պողոսը իր դարձի հարցում այլընտրանք ուներ: Արդյո՞ք նրա փորձառությունը կարելի է համարել նորմատիվ:
4. Ինչո՞ւ էին հելլենական հրեաները փորձում Պողոսին սպանել:
5. Եթե Պետրոսն ու Պողոսը հրաշքներ էին կիրառում ավետարանի դուռը բացելու համար, ապա ինչո՞ւ Աստված այսօր ավելի շատ չի օգտագործում այդ մեթոդը:

ԳՈՐԾՔ 10

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պետրոսն ու Կոռնելիոսը	Կոռնելիոսը պատվիրակություն է ուղարկում	Կոռնելիոսի դարձը	Պետրոսն ու Կոռնելիոսը	Պետրոսը այցելում է հռոմեացի հարյուրապետին
10:1-8	10:1-8	10:1-8	10:1-3 10:4ա 10:4բ-8	10:1-2 10:3-8
10:9-16	Պետրոսի տեսիլքը 10:9-16	10:9-16	10:9-13 10:14	10:9-16
10:17-23ա	Կանչ Կեսարիա 10:17-23	10:17-23ա	10:15-16 10:17-18 10:19-21 10:22-23ա	10:17-23ա
10:23բ-33	Պետրոսը հանդիպում է Կոռնելիոսին 10:24-33	10:23բ-29 10:30-33	10:23բ-29 10:30-33	10:23բ-33
Պետրոսը խոսում է Կոռնելիոսի տանը	Կոռնելիոսի ընտանիքում քարոզելը		Պետրոսի քարոզը	Պետրոսի ուղղերձը Կոռնելիոսի տանը
10:34-43	10:34-43	10:34-43	10:34-43	10:34-35 10:36-43
Հեթանոսները ստանում են Սուրբ Հոգին	Սուրբ Հոգին իջնում է հեթանոսների վրա		Հեթանոսները ողջունում են Սուրբ Հոգուն	Առաջին հեթանոսների մկրտությունը
10:44-48	10:44-48	10:44-48	10:44-48	10:44-48

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱԿՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Ավետարանը պոկվում է իր հրեական արմատներից
1. Կոռնելիոս՝ հռոմեացի աստվածավախ զինվորական
 2. Եթովպացի Ներքինին՝ աստվածավախ հեթանոս

Բ. Հունախոս հրեաների գործը (Գործք 6-ի յոթ հոգիները) ազդեցություն է ունենում:

- Գ. Պենտեկոստեի փորձառության կրկնությունը ցույց է տալիս, որ Աստված բոլոր մարդկանց էլ ընդունում է:
1. Սամարացիները (գլուխ 8)
 2. Հռոմեացիները (գլուխ 10)
 3. Եթովպացիները (գլուխ 8)

Դ. Աստվածաբանական մի նոր փուլ է սկսվում գլուխ 15-ում Երուսաղեմի Խորհրդի՝ Ասյանի համար: Ավետարանի տիեզերական հասանելիությունը ի կատար է ածվում:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 10:1-8

¹Կեսարիայում Կոռնելիոս անունով մի մարդ կար, որ հարյուրապետ էր՝ Իտալական կոչվող գնդից, ²իր ամբողջ տնով բարեպաշտ ու աստվածավախ, ժողովրդին շատ ողորմություններ էր տալիս և միշտ Աստծուն աղոթում: ³Նա օրվա մոտ իններորդ ժամին տեսիլքի մեջ պարզորոշ տեսավ Աստծո հրեշտակին, որ մտավ իր մոտ և իրեն ասաց. «Կոռնելիոս»: ⁴Եվ նա, երբ նրան նայեց, խիստ վախեցավ ու ասաց նրան. «Ի՞նչ է, Տե՛ր»: Նա էլ ասաց նրան. «Քո աղոթքներն ու ողորմությունները որպես հիշատակ Աստծո առջև բարձրացան: ⁵Եվ հիմա մարդի՛կ ուղարկիր Հոպպե ու կանչի՛ր ո՞նց Սիմոնի, որ Պետրոս է կոչվում: ⁶Նա որպես հյուր մնում է Սիմոն անունով մի կաշեգործի մոտ, որի տունը ծովի մոտ է. նա քեզ կասի, թե ինչ պետք է անես»: ⁷Եվ երբ հրեշտակը, որ Կոռնելիոսի հետ խոսում էր, գնաց, նա կանչեց իր սպասավորներից երկուսին ու իր մոտ ծառայող մի բարեպաշտ զինվորի՝ ⁸և ամեն ինչ նրանց պատմելով՝ Հոպպե ուղարկեց նրանց:

10:1 «Կեսարիայում մի մարդ կար...» Կոռնելիոսի դարձը մի մեծ իրադարձություն էր: Սակայն պետք է հիշել, որ նա սոցիալական առաջին խոչընդոտը չէր, որ ավետարանը հաղթահարեց:

1. Առաջինը սամարացիներն էին
2. Այա Եթովպացի ներքինին, որը հավանաբար նույնպես աստվածավախ էր
3. Այա Կոռնելիոսը, որը ոչ միայն հեթանոս էր, այլ նաև հռոմեական բանակի հրամանատար, որը բաժին ուներ Խոստացյալ Երկրի մի մասի ռազմական նվաճման մեջ

Այս իրադարձության մեջ շեշտադրությունը այնքան էլ դրված չէ Կոռնելիոսի դարձի վրա, ինչպես որ Եթովպացի Ներքինու դեպքում, քանի որ նա արդեն իսկ աստվածավախ մարդ էր, այլ նրա մեծաթիվ բարեկամների և ընկերների վրա, որոնք նույնպես փրկվեցին: Գործք 15:7-9-ում Պետրոսը ակնարկում է այս դեպքը Երուսաղեմի Ասյանում և հիմք դնում Եկեղեցու Հեթանոսների մեջ առաքելության համար:

■ «Կոռնելիոս» Ծանոթագրություն 1-ում Ֆ. Ֆ. Բրյուսի *Գործք Առաքելոց Գրքի Մեկնաբանություն*, էջ՝ 214 (F. F. Bruce *Commentary on the Book of the Acts*) ասվում է. «Հոռոմում հատկապես Կոռնելիոս անունը տարածված էր *Publius Cornelius Sulla* -յի Բ.Ա.82 թ-ից ի վեր, երբ նա 10,000 զերիների ազատագրեց, որոնք *Cornelia* սերնդի (*gens*) անդամներ էին, որին էլ հենց նա պատկանում էր»: *Gens* -ը ընտանիքներից

կազմված մի տոհմ կամ խումբ էր, որն ուներ միևնույն անունը և հավատում էր, որ ունեն միևնույն նախահայրը կամ հերոսը (ինչպես այս դեպքում):

■ **«մի հարյուրապետ»** ՆԿ-ում հարյուրապետներ մի քանի անգամ են նշվում և միշտ էլ լավ իմաստով (տես՝ Մատթ.8:5; Գուկ.7:2; 23:47; Գործք 10:1; 22:5; 27:3; և այլն): Տեխնիկապես նրանք հարյուր հոգու վրա առաջնորդ էին, սակայն նրանք ենթասպայական կազմին պատկանող զինվորականներ էին, մեր սերժանտ մայորների պես:

■ **«Իտալական կոչվող զնդից»** Սովորաբար հռոմեական գունդը բաղկացած էր 600 տղամարդուց: Այս հատուկ գունդը բաղկացած էր հազար հռոմեացի կամավորներից, որոնք տեղակայվել էին Սիրիայում: Պատմական վկայություններից մենք գիտենք, որ նրանք եղել են պահեստային զնդեր: Հավանաբար նրանք աղեղնաձիգներ էին: Հռոմեական զորքերը պետք է տեղակայված լինեին Պաղեստինում հրեաների ապստամբ լինելու պատճառով:

10:2 «բարեպաշտ մարդ» Այս մարդու բարեպաշտության վերաբերյալ երեք նկարագրություն կա՝

1. նա պատվում էր Աստծուն (տես՝ գրառում հ.22) իր ամբողջ ընտանիքով
2. նա միշտ առատաձեռն էր մարդկանց համար իր շատ բարեգործությունների մեջ
3. նա սովորություն ուներ Աստծուն աղոթելու (տես՝ հ. 22; 13:16,26):

Այս մարդը կապված էր ժողովարանի հետ կրոնական, զգացմունքային և սոցիալական առումով, չնայած որ լիարժեք նորադարձ չէր: Լիարժեք նորադարձ լինելու համար մարդը պետք է՝

1. թյփաստվեր, եթե տղամարդ է
2. մկրտվեր վկաների ներկայությամբ
3. հնարավորության դեպքում Տաճարում զոհ մատուցեր

Այս պահանջները հաճախ խանգարում էին շատ հեթանոսների դառնալու լիարժեք նորադարձ:

■ **«իր ամբողջ տնով»** Սա Գործք Առաքելոց գրքում հաճախ հանդիպող ընտանիքներից առաջինն է, որ նշվում է որպես հոգևոր ընտանիք (տես՝ Գործք 10:2; 11:14; 16:15,31; 18:8): Այն արտահայտում է մշակութային համատեքստի մեջ, որ հոր հավատքը միշտ հանդիսանում էր ընտանիքի և նույնիսկ ավելի ընդլայնված ընտանիքի (ընդգրկում էր նաև իրենց ծառաներին) հավատքը:

■ **«շատ ողորմություններ»** Սա վերաբերում է ողորմություն տալուն: Հրեա ժողովրդի համար սա մի ապացույց էր, որ Կոռնելիոսը տեղական ժողովարանի ակտիվ մարդկանցից է և իհարկե աստվածավախ մեկը: Տես՝ Հատուկ Թեմա. Ողորմություն տալ, 3:2:

■ **«միշտ Աստծուն աղոթում»** Այստեղ կան երեք ՆԵՐԿԱ ժամանակի ԴԵՐԲԱՅՆԵՐ, որոնք արտահայտում են այն շարունակական գործողությունը, որը ցույց է տալիս Կոռնելիոսի բարեպաշտությունը:

1. վախենում, ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ (դեպոնենտ)
2. ողորմություն անում, ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ
3. աղոթում, ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ (դեպոնենտ)

Այս մարդու բարեպաշտությունը ամեն օր էր և անձնական: Նա անում էր երկու շատ կարևոր բան, որոնք ռարբիական հուղայականության մեջ ամենահարգին էին՝ ողորմություն տալը և աղոթելը:

10:3 «մոտ իններորդ ժամին» Սա վերաբերում է երեկոյան զոհաբերության ժամին (այսինքն՝ ժամը 3-ին, տես՝ Ելից 29:39, 41; Թվոց 28:3-31; 3 Թագ.18:29-36; Մաղմ.55:17; 141:2; Դան.6:10; Ջոզեֆուս *Հնություններ*, 11.4.1; *Պատերազմներ* 1.1.1): Սա աղոթքի ավանդական ժամն էր:

■
NASB, NRSV, TEV «պարզորոշ տեսավ»
NKJV «պարզ տեսավ»
NJB, NIV «հստակ տեսավ»

Ավետարաններում *phanerōs* ՄԱԿԲԱՅՐ նշանակում է բացեիբաց կամ հրապարակայնորեն ցուցադրել՝ հրապարակել (տես՝ Մարկ.1:45; Հովհ.7:10): Այս տեսիլը եղավ ցերեկվա ժամերին և շատ հստակ և պարզորոշ էր:

■ **«տեսիլքի մեջ...Աստծո հրեշտակին»** Ինչ-որ առումով այս ապաշխարությունը նման է Սողոսի դարձին: Այս մարդը բարեպաշտ կրոնավոր մարդ էր: Աստված ուղարկում է մի գերբնական գործակալի՝ ծառայի, որպեսզի նրան առաջնորդի հավատքի: Ո՞վ կարող էր ասել «ո՛չ»: Այսպիսի ապաշխարությունները Աստծո ընտրության՝ նախախնամության նշաններ են, ոչ թե մարդու ազատ կամքի: Այս մարդիկ արձագանքում էին ավետարանի ճշմարտության՝ իրողության անհամար ապացույցներին ու փորձառություններին:

10:4 Հրեշտակի ուղղերձը պարունակում էր գոհաբերության հետ առնչվող երկու տերմին՝ «բարձրացավ» և «հիշատակ Աստծո առջև»: Ակնհայտ է, որ Աստված ընդունել էր այս մարդու երկրպագությունը (այսինքն՝ աղոթքներն ու ողորմությունները) նույնիսկ նախքան նա կլսեր Ավետարանի խոսքը:

■ **«Երբ նրան նայեց»** Տե՛ս գրառում 1:10:

■ **«Ի՞նչ է, Տե՛ր»** Շատ դժվար է իմանալ, թե ինչպես պետք է թարգմանվի «Տեր» տերմինը: Այն կարող է նշանակել (1) «պարոն» կամ (2) «Տեր» աստվածաբանական իմաստով որպես վարպետ, սեփականատեր, ամենիշխան: ՆԿ-յան մեկ այլ լավ հատված, որը երկիմաստություն է արտահայտում Հովհ.4:1,11,15,19,49 է:

Գործքում տրվում է այս տերմինի կիրառության հավելյալ հնարավորությունը: Կոռնելիոսը հրեշտակին դիմում է որպես Տեր (հմմտ.՝ Հայտն.7:14), իսկ Պետրոսը «ձայնին» է դիմում (տես՝ 10:14) որպես Տեր (տես՝ 10:14): Հետևաբար, այս տերմինը կարող է առնչվել ցանկացած գերբնական, անձնավորված դրսևորման հետ, հատկապես եթե այն ուղղված է Հիսուսին: 8:26 և 29-ում Տիրոջ մի հրեշտակ նույնացվում է Հոգու հետ: Այս նույն սահունությանն ու թափանցիկությանը հանդիպում ենք «ձայնի» և Հոգու միջև 10:13,14,15 և 19,20 համարներում:

10:5 «հիմա մարդիկ ուղարկիր Հոպպե» Սա ԱՌՐԻՍՏ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Նկատելով, որ հրեշտակը ավետարանը չի վկայում, այլ ուղարկում է Պետրոսին: Աստված օգտագործում է մարդկանց որպես ավետարանի համար գործիքներ (տես՝ Ելից 3:7-10): Այս մարդը, թեև բարեպաշտ, անկեղծ կրոնատեր էր (Սողոսի պես), կարիք ուներ լսելու և արձագանքելու Հիսուս Քրիստոսի Ավետարանին:

10:7 «նա կանչեց իր սպասավորներից երկուսին ու մի բարեպաշտ զինվորի» Սա երեք հոգանոց մի թիմ էր. սակայն տեսնում ենք համար 19-ում նրանցից միայն երկուսն են նշվում: Հավանաբար զինվորը որպես թիկնապահ էր, իսկ տնային երկու սպասավորները խոսեցին:

10:8 Կոռնելիոսը իր հավատքի կյանքի մեջ ընգրկեց իր ընտանիքին և ընկերներին: Այս մարդը ապրում էր այն, ինչին հավատում էր: Մի ամբողջ համայնք էր այս մարդու միջոցով գալու Քրիստոսին:

Այս երեք մարդիկ հաստատ քայլում էին գիշերով և զարմանում ու քննարկում հրեշտակի ասածներն ու իրենց տիրոջ ու ընկերոջ հավատքը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 10:9-16

⁹Հաջորդ օրը, երբ նրանք ճամփա գնալով մոտեցան քաղաքին, Պետրոսը մոտ վեցերորդ ժամին տանիքը բարձրացավ՝ աղոթելու: ¹⁰Եվ խիստ քաղցած լինելով՝ ուզում էր ճաշել: Ու քանի դեռ կերակուրի պատրաստություն էին տեսնում, նրա վրա մտքի մի հափշտակություն իջավ. ¹¹և տեսավ՝ երկինքը բացված ու չորս ծայրերից կապված մեծ կտավի նման մի աման, որ իջավ երկրի վրա, ¹²որի մեջ կային երկրի բոլոր չորքոտանիներն ու զագանները և սողուններն ու երկնքի թռչունները: ¹³Եվ մի ձայն հասավ նրան. «Ելի՛ր, Պետրո՛ս, մորթի՛ր ու կե՛ր»: ¹⁴Բայց Պետրոսն ասաց. «Քա՛վ լիցի, Տե՛ր, քանի որ ես երբեք պիղծ կամ անմաքուր բան կերած չկամ»: ¹⁵Դարձյալ, երկրորդ անգամ ձայն եկավ նրան. «Այն, որ Աստված մաքրեց, դու պիղծ մի՛ համարիր»: ¹⁶Սա երեք անգամ եղավ և ամանը երկինք վերացավ:

10:9 «մոտ վեցերորդ ժամին ... աղոթելու» Չնայած, որ ռաբբիական Հուդայականությունը նշանակել էր երկու ժամ աղոթելու համար՝ 9:00 առավոտյան և 3:00 երեկոյան (Տաճարում ամենօրյա գոհաբերությունների ժամերը), Փարիսեցիները ավելացրել էին կեսօրվա ժամը որպես ևս մեկ հարմար աղոթքի պահ: Ըստ երևույթին Պետրոսը վարվում էր ծերերի ավանդույթների համաձայն՝ աղոթելով կեսօրվա ժամին կամ պարզապես նախքան ճաշելը մի փոքր ննջում էր:

10:10 «խիստ քաղցած լինելով» Պետրոսի տեսիլքը իր քաղցած լինելու և Միմոնի տանիքից Միջերկրական Ծովի տեսարանի համատեքստում էր:

«Քաղցած» բառի համար գործածված տերմինը կիրառվում է միայն այստեղ բոլոր մեզ հայտնի հունական գրականության մեջ: Դրա ճշգրիտ իմաստը անհնար է հասկանալ, սակայն *pros* ՆԱԽԴԻԲի հետ միասին, այն կարող է նշանակել «չափազանց՝ խիստ քաղցած», սակայն սա շատ զարմանալի է այս համատեքստում: Այս *hapax legomenon* (բառեր, որոնք միայն մեկ անգամ են գործածվել ՆԿ-ում) պետք է որ անհայտ մնան մինչև որ ավելի շատ բարբառային տեղեկություններ կհայտնաբերվեն: Անհայտ կմնա նաև այն, թե ինչու Ղուկասը կիրառեց հենց այս շատ հազվադեպ օգտագործվող տերմինները, չնայած որ համատեքստի ընդհանուր իմաստը հասկանալի է:

■ **«նրա վրա մտքի մի հափշտակություն իջավ»** Սա տառացիորեն նշանակում է «իրենից դուրս» կամ «իր կողքին», որը հաճախ կիրառվում է զարմանքի համար (տես՝ Մարկ.5:42; 16:8; Ղուկ.5:26; և մի քանի տեքստեր LXX-ում): Մենք ունենք անգլերենում «ecstasy» /մտահափշտակություն/ բառը հունարեն այս նույն տերմինից: Այս համարում և 11:5, 22:17-ում այն նշանակում է կիսագիտակից մտավոր վիճակ, որը թույլ է տալիս, որ Աստված խոսի ենթագիտակցության հետ: Այս բառը տարբերվում է համար 3-ում գործածված բառից, որը նկարագրում է Կոռնելիոսի տեսիլքը:

10:11

NASB	«երկինքը /ամպերը/ բացված»
NKJV, TEV	«բացված երկինք»
NRSV	«երկինքը բացված»
NJB	«երկինքը գալարված բացված»

Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԳԵՐԲԱՅ է, բառացի նշանակում է «երկինքները բացված էին և շարունակում էին բացված մնալ»: ՀԿ-ում այս «երկինք» բառը ՀՈԳՆԱԿԻ թվով է «երկինքներ»: Մթնոլորտի այսպիսի բացվելը դարձվածք է հոգևոր, անտեսանելի տարածաչափության ֆիզիկական իրողության մեջ մուտք գործելու համար (տես՝ Եզեկ.1:1; Մատթ.3:16; Մարկ.1:10; Ղուկ.3:21; Հովհ.1:51; Գործք 7:56; 10:11; Հայտն.4:1; 19:11):

■ **«մեծ կտավի նման»** Սա այն նույն բառն է, որ օգտագործվում է նավի առագաստի համար:

10:12 «երկրի բոլոր չորքոտանիներն ու գագանները և սողուններն ու երկնքի թռչունները» Սա կենդանական աշխարհի միևնույն երեք բաժանումներն են, որ տրված է Ծննդոց 1 և 6:20-ում: Ըստ երևույթին դրանք համաձայն Ղևտ.11-ի թե՛ մաքուր և թե՛ անմաքուր կենդանիներն էին:

10:13 «մի ձայն հասավ նրան» Մաղաքիա մարգարեից հետո մինչև ՆԿ-ի բացման օրերը հրեաների մեջ Աստծուց եկող այդպիսի հեղինակավոր մարգարեական ձայն դեռ չէր եղել: Այս ժամանակաընթացքում, եթե հրեաները կամենում էին ինչ-որ բան հաստատել, որ Աստծուց է հայտնված, նրանք ապավինում էին այսպես կոչված *bath kol* երևույթին: Այսպիսի բան տեսնում ենք ՆԿ-ում Մատթ.3:17; 17:5-ում, ինչպես նաև Գործք 9:7-ում և այստեղ:

10:14 «Քա՛վ լիցի, Տե՛ր, քանի որ ես երբեք պիղծ կամ անմաքուր բան կերած չկամ» «Քավ լիցի» կամ «ոչ մի դեպքում» խոսքը Հունարենում խիստ արտահայտություն է, որը Մեպտուազինտայում օգտագործվում է մի քանի անգամ՝ թարգմանելու մի քանի եբրայերեն դարձվածքներ: Պետրոսը տակավին խնդիրներ ուներ կապված իր հրեական ուղղափառության հետ: Նա հիմնում է իր գործողությունները Ղևտացիների 11 գլխի խոսքերի վրա: Սակայն Հիսուսը կարծես թե հատուկ կերպով անդրադարձավ այս հարցին Մարկոս 7:14-ում, հատկապես համար 19-ում: Հետաքրքիր է նշել, որ Մարկոսի ավետարանը համարվում է հետագայում Հռոմից Պետրոս Առաքյալի կողմից վերահավաքված դեպքեր և քարոզներ:

10:15 «Այն, որ Աստված մաքրեց, դու պիղծ մի՛ համարիր» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է ԺԻՏԱԿԱՆ ՀՈԴՈՎ, որը ընդհանրապես ակնարկում է ընթացքի մեջ գտնվող գործողության դադարեցում: Աստված հստակ հրաման է տալիս դադարեցնել կերակուրների հետ կապված Մովսիսական օրենքների գործադրումը (այսինքն՝ Ղևտացիների 11): Դրանք այլևս հարմար չէին նոր ուխտի հավատացյալների համար: Այստեղ դա կիրառվում է այլաբանական տեսքով, ցույց տալու, որ Աստված ընդունում է բոլոր մարդկանց:

10:16 «սա երեք անգամ եղավ» Աստվածաշնչի համար սա նորություն չէր, որ կարևոր աղոթքները, փառաբանությունները կամ այլ գործողություններ կրկնվեին երեք անգամ.

1. Գեթսեմանի Պարտեզում Հիսուսի աղոթքը (տես՝ Մարկ.14:36,39)

2. Պետրոսի հետ հարությունից հետո Հիսուսի խոսակցությունը (տես՝ Հովհ.21:17)
3. Պողոսի «մարմնում եղած խայթոցի» համար աղոթքը (տես՝ 2 Կորնթ.12:8)

Սա շեշտադրելու սեմական կերպ էր (տես՝ Ես.6:3; Երեմ.7:4): Տվյալ դեպքում այն կատարվում է այս երկնային ձայնին Պետրոսի հնազանդվել չկամենալու պատճառով:

Ա. Թ. Ռոբերթսոնը, *Բառասպանկերները Նոր Կտակարանում*, գրքում այս թեմայի շուրջ տալիս է մի արաթափանց խոսք.

«Ահա ապշեցնող համառության օրինակ մի մարդու կողմից, որը ճանաչում է իրեն կանչող Աստծո ձայնը, երբ Տիրոջ հրամանը դիպչում է իր նախընտրություններին և նախապաշարումներին: Մեր օրերում էլ կան այսպիսի բազմաթիվ օրինակներ: Իրականում Պետրոսը Տիրոջ կամքից էլ վեր ընտրել էր բարեպաշտի դիրքը» (էջ՝ 137):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 10:17-23ա

¹⁷Ու մինչ Պետրոսն իր մտքում զարմանում էր, թե ի՞նչ է նշանակում այս տեսիլքը, որն ինքը տեսավ, ահա Կոռնելիոսի ուղարկած մարդիկ հարցրին Սիմոնի տունը ու դռան առջև կանգնեցին: ¹⁸Եվ ձայն տալով՝ հարցնում էին, թե՛ «Սիմոնը, որ Պետրոս է կոչվում, այստե՞ղ է մնում»: ¹⁹Մինչ Պետրոսն այն տեսիլքի մասին էր մտածում, Հոգին նրան ասաց. «Ահա երեք հոգի քեզ են փնտրում: ²⁰Ուստի վեր կաց, իջի՛ր և առանց տատանվելու նրանց հետ գնա՛, քանի որ Ես եմ ուղարկել նրանց»: ²¹Պետրոսն էլ, Կոռնելիոսի կողմից իրեն ուղարկված մարդկանց մոտ իջնելով, ասաց. «Ահա, ես եմ, ում դուք փնտրում եք: Ի՞նչ խնդրով եք եկել»: ²²Նրանք էլ ասացին. «Կոռնելիոս հարյուրապետը՝ արդար և աստվածավախ մի մարդ, որի մասին ամբողջ հրեա ազգն է վկայում, մի սուրբ հրեշտակի միջոցով Աստծուց պատվեր ստացավ, որ քեզ կանչի իր տունը և քո խոսքերը լսի»: ²³Այնժամ ներս կանչեց նրանց և իր մոտ պահեց:

10:17 «Պետրոսը /անգլ.՝ մեծապես/ զարմանում էր» Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որն այստեղ մատնանշում է անցյալ ժամանակում գործողության սկիզբ:

Այս տերմինը Ղուկասի կողմից մի քանի անգամ գործածվում է, ցույց տալու մտավոր շփոթություն (տես՝ Ղուկ.9:7; Գործք 2:12; 5:24; 10:17): Պետրոսը անմիջապես չհասկացավ տեսիլքի նպատակը:

■ **«տեսիլքը»** Այս բառը, որ օգտագործվում է այստեղ նկարագրելու Պետրոսի փորձառությունը, *horama*, նույնն է ինչ կիրառվում է Կոռնելիոսի տեսիլքի համար հ.3-ում (տես՝ հ.19):

10:19 «Հոգին նրան ասաց» «Հոգու» (հ. 19) խոսելու և «հրեշտակի» (հհ. 3,22) խոսելու միջև եղած ճշգրիտ կապը այս ամբողջ համատեքստում անորոշ է (տես՝ հ. 20, «Ես եմ ուղարկել նրանց»): Ըստ երևույթին հրեշտակը խոսեց Սուրբ Հոգու կողմից կամ երկուսն էլ նույնականացվում են ինչպես ՀԿ-յան թեոֆոնիայում (տես՝ Ել.3:2,4; Գործք 8:26,29):

10:20 Այս համարը շատ ընդգծված է՝

1. վեր կաց, ԴԵՐԲԱՅԸ կիրառված որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. իջի՛ր ցած, ԱՌՐԻՍ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. նրանց հետ գնա, ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. առանց տատանվելու, ԴԵՐԲԱՅԸ կիրառված որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
5. Ես եմ ուղարկել նրանց, *ego* ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ հետ

Պետրոսին այլևս ոչինչ չէր մնում, քան գնալ: Սա Աստծուց նշանակված հանդիպում էր: Հոգին էր պատասխանատու Կոռնելիոսի տեսիլքի, Կոռնելիոսի կողմից մարդկանց ուղարկելու, Պետրոսի տեսիլքի և հիմա էլ Պետրոսի նրանց խնդրանքին պատասխանելու համար:

10:22 Նրանք հավատարմորեն փոխանցում են այն, ինչ պատահել էր:

■	
NASB	«արդար»
NKJV	«մի արդար մարդ»
NRSV, NJB	«ուղիղ»
TEV	«մի բարի մարդ»

Այս տերմինը պետք է ՀԿ-ում կիրառվեր «անարատ» իմաստով: Այն չի վերաբերում անմեղությանը (տես՝ Ծննդ.6:1; Հոր 1:1; Ղուկ.1:6; 2:25) կամ Քրիստոսի մեզ վերագրած արդարությանը (տես՝ Հռոմ.4):

Այս մարդը ինչքան որ հասկանում էր Աստծո կամքը, ապրում էր համաձայն այդ կամքի: Տե՛ս Հատուկ Թեմա. Արդարություն 3:14:

■
NASB, NRSV, NJB «աստվածավախ»
NKJV «մեկը, որ վախենում է Աստծուց»
TEV «ով պաշտում է Աստծուն»

Այս արտահայտությունը (կամ սրա պես) հաճախ կիրառվում է Կոռնելիոսին նկարագրելու համար (տես՝ 10:2,22,35): Գործք 13:16,26,43,50-ում այն գործածվում է ռասայապես ոչ հրեաների և ոչ էլ լիարժեք նորադարձների համար, այլ կանոնավոր կերպով ժողովարաններ հաճախող մարդկանց համար: Նրանք կոչվում էին «աստվածավախ» մարդիկ (տես՝ 16:14; 17:4, 17; 18:7):

10:23 «ներս կանչեց նրանց և իր մոտ պահեց» Սա Պետրոսի համար դեռևս իր հրեական օրինապահությունից ազատվելու և ս մեկ օրինակ է: Ակնհայտ է, որ այդ խմբի զինվորը հռոմեացի էր և չնայած դրան Պետրոսը ներս հրավիրեց նրանց ճաշելու և հաղորդակցվելու: Նկատեք, թե ինչպես է հետագայում՝ հ.48-ում Պետրոսը մի քանի օր մնալու մի հռոմեացու տանը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 10:23բ-29
²³Ու հետևյալ օրը Պետրոսը ելավ, նրանց հետ գնաց, և Հոպպեից մի քանի եղբայրներ էլ նրա հետ գնացին: ²⁴Եվ հաջորդ օրը Կեսարիա մտան: Կոռնելիոսն էլ կանչել էր իր ազգականներին և մտերիմ բարեկամներին, նրանց էր սպասում: ²⁵Ու երբ Պետրոսը ներս էր մտնում, Կոռնելիոսը նրան ընդառաջ գնաց և նրա ոտներն ընկնելով՝ երկրպագություն էր անում: ²⁶Պետրոսը կանգնեցրեց նրան ու ասաց. «Ելի՛ր, կանգնի՛ր, ես ինքս էլ մարդ եմ»: ²⁷Եվ նրա հետ խոսակցելով՝ ներս մտավ ու այնտեղ հավաքված շատ մարդիկ գտավ: ²⁸Եվ նրանց ասաց. «Դուք գիտեք, թե հրեայի համար որքան անօրինական է օտարազգիի հետ հաղորդակցվելը կամ նրան մոտենալը, բայց Աստված ինձ ցույց տվեց, որ ոչ մի մարդու պիղծ կամ անմաքուր չհամարեմ: ²⁹Դրա համար էլ ես կանչվելուս պես առանց առարկության եկա, բայց հիմա հարց եմ տալիս՝ ի՞նչ բանի համար ինձ կանչեցիք»:

10:23բ «Հոպպեից մի քանի եղբայրներ էլ նրա հետ գնացին» 11:12 համարում ասվում է, որ նրանք վեց հոգի էին: Պետրոսը գիտեր, որ այս դեպքը կարող էր խնդիրներ առաջացնել Հիսուսի հրեա հետևորդների մեջ: Հետևաբար նա իր հետ վերցրեց մի քանի վկաների (տես՝ 11:12):

■ **«Կեսարիա»** Կեսարիան ծովեզերքին տեղակայված մի գեղեցիկ քաղաք էր: Այն անվանակոչվել էր Հռոմի Կեսարի պատվին: Այս քաղաքը հանդիսանում էր հռոմեական զինուժի պաղեստինյան տեղակայման վայրը: Հռոմեացիները այն դարձրել էին մի փոքրիկ նավահանգիստ:

■ **«կանչել էր իր ազգականներին և մտերիմ բարեկամներին»** Կոռնելիոսը, սպասելով Աստծուց ուղարկված պատգամախոսին, կանչել էր իր բոլոր մտերիմներին, հարազատներին, ընկերներին, ծառաներին և հավանաբար ուրիշ զինվորների էլ: Հնարավոր է նրանք ժամերով սպասել էին: Ինչպիսի՛ սպասումի հոգի էր լցրել այս տունը: Այս բոլոր մարդիկ հավանաբար քննարկում էին, թե ինչ էր այդ տեսիլքը և դրա ուղղերձը:

Ահա թե ինչն էր սաշեցրել եկեղեցում գտնվող հրեա առաջնորդներին, երբ տեսել էին մեծաքանակ հեթանոսներ, որոնցից շատերը աստվածավախ չէին, լցվել էին Մուրբ Հոգով և մկրտվել (տես՝ հ.27):

10:25,27 «Երբ Պետրոսը ներս էր մտնում ...ներս մտավ» Ինչ-որ ակնհայտ հակասություն կա հունարենի այս տեքստում: Սակայն, առաջին «ներս մտնելը», որ նշվում է հ.25-ում հնարավոր է նկատի ունի քաղաքի դարպասներով ներս մտնելիս, իսկ երկրորդ «ներս մտնելը»՝ հ. 27-ում հնարավոր է խոսում է Կոռնելիոսի տան մասին: Որ դեպքն էլ որ լինի, դարձյալ Պետրոսը խախտում է հրեական ավանդույթը մտնելով հեթանոսի տուն:

10:25 «նրա ոտներն ընկնելով երկրպագություն էր անում» Սա երկրպագության համար Մեպտուազինտայում և Ավետարաններում սովորական կերպ էր: Սակայն այս դեպքում «հարգանք ցուցաբերել» իմաստը ավելի հարմար է (տես՝ NJB): Պետրոսի գալուստը ապահովել էր մի հրեշտակ, անշուշտ Կոռնելիոսն էլ պետք է պատվեր և հարգեր այս պատգամաբերին (տես՝ Հայտն.19:10; 22:8-9):

10:28 «Դուք գիտեք, թե հրեայի համար որքան անօրինական է օտարազգիի հետ հաղորդակցվելը» Պետրոսը մեջբերում է իր ռաբբիական ուսմունքից կամ ժողովարանի դպրոցից, սակայն սա գրված չէ ՀԿ-ում, այլ միայն ռաբբիական մեկնաբանությունների մեջ:

■ **«օտարազգի»** Այս տերմինը ևս մի բացառիկ տեքստից է, որ ՆԿ-ում միայն այստեղ է գտնվում: Այս գլխում Ղուկասը կիրառել է մի քանի հազվադեպ կիրառվող բառեր.

1. *eusebēs*, հհ. 2,7, բարեպաշտ (տես՝ 2 Պետ.2:9)
2. *prospeinos*, հ. 10, քաղցած
3. *dienthumeomai*, հ. 19, արտացոլող
4. *sunomileō*, հ. 27, խոսակցել
5. *athemiton*, հ. 28, անօրինական
6. *allopulō*, հ. 28, օտարազգի
7. *anantirrētos*, հ. 29, առանց առարկության (տես՝ Գործք 19:36)
8. *prosōpolēmpēs*, հ. 34, մարդկանց հարգող՝ անաչառ (նմանօրինակ Հռոմ.2:11; Եփես.6:9; Հակ.2:19)
9. *katadunasteuō*, հ. 38, ճնշված (տես՝ Հակ.2:6)
10. *procheirotoneō*, հ. 41, նախապես ընտրված

Հայտնի չէ արդյոք Ղուկասը այս առաջին քարոզներից և դեպքերից մի քանիսը պատճենել՝ վերցրել է այլ աղբյուրներից, թե՞ ներկա գտնվողների հետ անձնապես հարցազրույցների արձանագրություններ են:

■ **«բայց Աստված ինձ ցույց տվեց, որ ոչ մի մարդու պիղծ կամ անմաքուր չհամարեմ»** Պետրոսը հասկացել էր ուղղերձը: Կտավի վրա եղող կենդանիները ներկայացնում էին Աստծո պատկերով ստեղծված ամբողջ մարդկությանը (տես՝ Ծննդ.1:26-27): Աստծո սերը Կոռնելիոսի և նրա ընտանիքի ու ընկերների հանդեպ Պետրոսին ցույց տվեց ավետարանի համաշխարհային մասշտաբը: Սա Ստեփանոսի վկայության և Փիլիպպոսի քարոզի ապացույցն էր:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 10:30-33

³⁰Եվ Կոռնելիոսն ասաց. «Չորս օր առաջ մինչև այս ժամը ծոմ էի պահում ու իններորդ ժամին տանս մեջ աղոթում էի, և ահա, փայլուն հանդերձանքով մի մարդ կանգնեց իմ առաջ ու ասաց. ³¹«Կոռնելիո՛ս, քո աղոթքը լավեց, և քո ողորմություններն Աստծո առաջ հիշվեցին: ³²Ուստի մարդ ուղարկի՛ր Հոպպե ու կանխի՛ր Միմոնին, որ Պետրոս է կոչվում: Նա Միմոն անունով մի կաշեգործի տանն է մնում, ծովի մոտ: Երբ նա գա, քեզ հետ կխոսի: ³³Ուստի անմիջապես մարդ ուղարկեցի քեզ մոտ, դու էլ լավ արեցիր, որ եկար: Եվ հիմա մենք՝ ամենքս, կանգնած ենք Աստծո առաջ՝ լսելու այն ամենը, որ Աստծո կողմից հրամայված է քեզ»:

10:30 «փայլուն հանդերձանքով» Հանախ հրեշտակները այս տեսքով են հայտնվում (տես՝ 1:10; Մատթ.28:3; Մարկ.16:5; Հովհ.20:12; Ղուկ.24:4):

10:31 Սա արդեն երրորդ անգամն է այս գլխում, որ հաստատվում է Կոռնելիոսի բարեպաշտությունը (տես՝ հհ. 4,22): Անակնկալը Կոռնելիոսը չէր, այլ նրա ընկերները, ծառաները և ընտանիքը, որոնք նույնպես վստահում էին Քրիստոսին: Սա գործքում առկա «ընտանեկան փրկության» օրինակներից մեկն է:

Մեզինից այն մարդիկ, ովքեր մեծացել են արևմտյան ավետարանական ձևաչափի ավետարանչություն տեսնելով, որը շեշտադրում է անհատի կամավոր արձագանքը, զարմանում են այսպիսի հավաքական ապաշխարությամբ, սակայն աշխարհի մեծ մասն ունի ցեղային, ընտանեկան խմբային կողմնորոշում: Աստված ի գործու է գործելու բազմաթիվ կերպերով, միայն թե ձեռք մեկնի Իր պատկերով ստեղծված մարդկությանը: Գոյություն չունի եզակի ավետարանչության ձև:

10:33 Այս մարդիկ պատրաստ էին լսելու: Նրանք գիտակցում էին, որ գտնվում էին աստվածային հանդիպման՝ պահի մեջ և Աստծուց ուղարկված մարդու հետ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 10:34-43

³⁴Պետրոսն իր բերանը բացեց և ասաց. «Իսկապես հասկանում եմ, որ Աստծո մոտ աչառություն չկա, ³⁵այլ՝ ամեն ազգի մեջ, ով Նրանից վախենում է ու արդարություն է գործում, ընդունելի է Նրան: ³⁶Խոսքը, որ Աստված Իսրայելի որդիներին ուղարկեց՝ ավետելով բարի լուրը՝ խաղաղություն Հիսուս Քրիստոսի միջոցով (Նա է բոլորի Տերը). ³⁷դուք ինքներդ գիտեք, որ այդ պատգամը հրապարակվեց ամբողջ Հրեաստանում, Գալիլիայից սկսելով, Հովհաննեսի քարոզած մկրտությունից հետո, ³⁸և թե ինչպես Աստված օժեց Հիսուս Նազովրեցուն Սուրբ Հոգով ու գործությամբ, որ շրջեց բարիք անելով ու Սատանայի կողմից բոլոր ճնշվածներին

բժշկելով, քանի որ Աստված Նրա հետ էր: ³⁹Եվ մենք վկա ենք այն ամենի, որ Նա կատարեց և՛ հրեաների երկրում, և՛ Երուսաղեմում, Ում սպանեցին՝ փայտից կախելով: ⁴⁰Նրան Աստված երրորդ օրը հարություն տվեց և բացահայտորեն ցույց տվեց Նրան ⁴¹ոչ թե ամբողջ ժողովրդին, այլ մեզ՝ Աստծո կողմից նախապես վկա լինելու համար ընտրվածներին, որ, Նրա մեռելներից հարություն առնելուց հետո, Իր հետ կերանք ու խմեցինք: ⁴²Եվ Ինքը մեզ հրամայեց, որ ժողովրդին քարոզենք և վկայություն տանք, թե Նա է, որ Աստծո կողմից սահմանվեց կենդանիների ու մեռելների Դատավորը լինելու: ⁴³Ում մասին բոլոր մարգարեները վկայում են, թե ո՛վ Նրան հավատա Նրա անունով մեղքերի թողություն կատանա:

10:34 «Աստծո մոտ աչառություն չկա» Սա Կոռնելիոսի տան մեջ Պետրոսի քարոզի սկիզբն է: Այն լավ օրինակ է հանդիսանում վաղ եկեղեցու համար ոչ հրեաներին քարոզելու հարցում: ՀԿ-ում այս իրավաբանական տերմինը բնութագրում էր Աստծուն (տես՝ 2 Օր.10:17; 2 Մնաց.19:7) և նույնը պահանջվում էր Իր ժողովրդից (տես՝ 2 Օր.1:17; 16:19): Այն նաև Աստծո համար տարածված բնութագրական է ՆԿ-ում (տես՝ Հռոմ.2:11; Գաղ.2:6; Եփես.6:9; Կող.3:14-25; 1 Պետ.1:17): ՀԿ-ում այս արտահայտությունը բառացի նշանակում էր «երեսը բարձրացնել»: Հրեական դատարաններում պաշտպանյալները իրենց գլուխները խոնարհած էին պահում, որպեսզի դատավորը չճանաչեր իրենց և արդյունքում կողմնակալություն չաներ:

Աստված չունի նախընտրելիներ (ազգեր, ռասսաներ կամ անհատներ): Սա ճիշտ լինելու դեպքում ինչպե՞ս կարող է նախասահմանությունը գործել: Կամ ինչպե՞ս կարող է Իսրայելը հատուկ ազգ լինել: Զգույշ եղեք աստվածաբանության ժամանակակից համակարգերից:

10:35 «ամեն ազգի մեջ, ով Նրանից վախենում է ու արդարություն է գործում, ընդունելի է Նրան» Այս նկարագրությունը չի վերաբերում հոգևոր փրկությանը, այլ ըստ երևույթին ողորմություն տալուն, աղոթքին և բարեպաշտությանը: Տես Հատուկ Թեմա 3:2: Այս արտահայտությունը աստվածաբանորեն պետք է բալանսի բերվի ավետարանի ընդունման լիազորությամբ (տես՝ Հովհ.1:12; 3:16; Հռոմ.10:9-13):

Հիմնական ճշմարտությունն այստեղ այն է, որ Աստված հեթանոսներին ընդունում է առանց նրանց Նորադարձ Հրեաներ դառնալու: Սա աստվածաբանական հիմք է դնում Գործք 15-ի համար՝ Երուսաղեմի Խորհրդի:

10:36-39 *Ջերոմի Աստվածաշնչյան Մեկնաբանություն (Jerome Biblical Commentary, vol. II, p. 188)* գիրքը տալիս է մի քանի լավ մեկնաբանություններ այս անունների վերաբերյալ՝

1. դրանք հանդիսանում են Պետրոսի ավետարանի ամփոփումը (այսինքն՝ *Kerygma*):
2. դրանք ունեն թույլ շարահյուսություն, որը ցույց է տալիս, որ Ղուկասը ճշգրտորեն արձանագրում է իր ունեցած աղբյուրները և չի հորինում դրանք կամ խմբագրում:

10:36 «Խոսքը, որ Աստված Իսրայելի որդիներին ուղարկեց» Սա չի վերաբերում ՀԿ-ին, այլ Հիսուսի և Առաքյալների քարոզչությանը:

■ **«ավետելով խաղաղություն Հիսուս Քրիստոսի միջոցով»** Հավանաբար սա մեջբերում է Եսայի 52:7-ից: «Խաղաղություն» տերմինը ՆԿ-ում կիրառվում է երեք կերպ՝

1. Աստծո և մարդկության միջև խաղաղություն (տես՝ Կող.1:20)
2. անհատ հավատացյալի փափագելի խաղաղությունը (տես՝ Հովհ.14:27; 16:33, Փիլիպեցիների 4)
3. Քրիստոսին արձագանքող մարդկանց խմբերի միջև (տես՝ Գաղ.3:28; Կող.3:11):

Մարդկային բոլոր խոչընդոտները Քրիստոսի միջոցով ոչնչացված են (տես՝ Գաղ.3:28; Կող.3:11):

■ **«(Նա է բոլորի Տերը)»** Սա հեղինակային խմբագրված մեկնաբանություն է: Ահա այս պատգամի տիեզերական տարրը և հրավեր Հիսուս Քրիստոսի ավետարանին հավատալու, որը դեռևս այնքան ռադիկալ է հնչում այս ուղղափառ հրեայի բերանից (տես՝ Գործք 2:36; Մատթ.28:18; Հռոմ.10:12; Եփես.1:20-22; Կող.2:10; 1 Պետ.3:22): Նա է Տերը բոլոր ռասսաների և ամեն ինչի (այսինքն՝ տիեզերական Տիրակալությունը):

10:37,39 «դուք ինքներդ գիտեք այն բաները ինչ տեղի ունեցան» Պետրոսը կիրառում է Պենտեկոստեի ժամանակ իր քարոզելու ոճը (տես՝ 2:22,33): Նրանք լսել էին Հիսուսի մասին և թե ինչ էր պատահել Նրան Երուսաղեմում:

Կարելի է զարմանալ, թե ինչպես կարող էին այս մարդիկ ունենալ այդ բոլոր տեղեկությունները: Արդյո՞ք Պետրոսը չափազանցեցնում էր: Արդյո՞ք այս մարդկանցից ոմանք ներկա էին Երուսաղեմի դեպքերին: Արդյո՞ք այս ընտանիքում կային նաև հրեաներ: Տեքստը շատ կարճ է և մենք պարզապես չունենք այս հարցերի պատասխանները:

Ոմանք օգտագործում են այս քարոզը հաստատելու, որ.

1. Ղուկասն է գրել Գործքում գտնվող բոլոր քարոզները (սակայն Ղուկասը լավ էր տիրապետում Հունարեն Կոյնե լեզվին, իսկ հհ.36-38 անընդունելի և վատ հունարեն է):
2. Ղուկասը հավատարիմ էր մնում իր ունեցած աղբյուրներին առանց նույնիսկ խմբագրելու դրանց թույլ քերականությունը
3. Այս արտահայտությունը գրված է հետագայում Գործքը կարդացողների համար հասկանալի լինելու նպատակով (տես՝ *Ջերոմի Մեկնաբանությունը*, հատոր II, էջ՝ 189):

10:37 «Հովհաննեսի քարոզած մկրտությունից հետո» Ինչո՞ւ Հիսուսը մկրտվեց. այս հարցը միշտ էլ անհանգստացրել է հավատացյալներին, քանի որ Հովհաննեսի մկրտությունը սպաշխարության մկրտություն էր : Հիսուսը կարիք չուներ սպաշխարության կամ ներման, քանի որ նա անմեղ էր (տես՝ 2 Կորնթ.5:21; Եբր.4:15; 7:26; 1 Պետ.2:22; 1 Հովհ.3:5): Այսպիսի տեսություններ են եղել.

1. նա օրինակ է տվել հավատացյալներին, որպեսզի հետևեն դրան
2. դա Նրան նույնացնում էր հավատացյալների կարիքի հետ
3. դա Նրա համար ծառայության անցնելու նշանակումն ու սպառազինումն էր
4. դա Նրա կատարած փրկության գործի խորհրդապատկերն էր
5. դա Նրա կողմից Հովհաննես Մկրտչի ծառայության և պատգամի հաստատումն էր՝ հավանությունը
6. դա Նրա մահվան, թաղման և հարության մարգարեական նախանշանն էր (տես Հռոմ.6:4; Կող.2:12):

Հովհաննեսի կողմից մկրտությունը համարվում է Հիսուսի Հոգով լեցուն, հանրային ծառայության սկիզբը: Բոլոր երեք Մինուպտիկ Ավետարանները արձանագրում են այս անդրանիկ դեպքը: Մարկոսը սկսում է իր Ավետարանը (Պետրոսի ականատես պատմությամբ) այս իրադարձությամբ: Սա վաղ եկեղեցու կողմից դիտարկվում է որպես Հոգու նոր դարաշրջանի հատուկ մեկնարկը, քանի որ այն կապված է Հիսուսի հանրային ծառայության հետ:

10:38 «ինչպես Աստված օժեց Հիսուս Նազովրեցուն Սուրբ Հոգով ու զորությամբ» Ուշադրություն դարձրեք, թե Պետրոսը ինչ է ասում Հիսուսի վերաբերյալ:

1. Աստված օժեց Նրան (օժել բառը Եբրայերենի Մեսիա բառի արմատն է)
2. Սուրբ Հոգով (նոր դարաշրջանը Սուրբ Հոգունն է)
3. զորությամբ (ազդեցիկ ծառայություն)
ա. բարիք գործելով
բ. Սատանայի կողմից բոլոր ճնշվածներին բժշկելով (սատանայի և չարի զորությունը)
4. Աստված Նրա հետ էր (Նա խոսում և գործում էր ՅԱՀՎԵի անունից, տես՝ Հովհ.3:2; 9:33; 10:38; 14:10-11):

Ալնհայտ է, որ սա վերաբերում է Հիսուսի մկրտությանը (տես՝ Ֆ. Ֆ. Բրյուսի, *Հարցերի Պատասխանները* գիրքը, էջ՝ 171-172):

Ռոբերթ Բ. Գրոլլսթոնի *Հին Կոսկարանի Հոմանիշներ* (Robert B. Girdlestone, *Synonyms of the Old Testament*) գիրքը մի հետաքրքիր հայտարարություն է անում.

«ՆԿ-ում *χρίειν* բայը կիրառվում է հինգ անգամ: Այս հատվածներից չորսում այն առնչվում է Իր Հոր կողմից Քրիստոսի օծությանը, ավելի կոնկրետ՝ Ղուկաս 4:18-ը, որը մեջբերված է Եսայի 61:1-ից; Եբր.1:9-ը՝ մեջբերված է Սաղմոս 45:7-ից; Գործք 4:27՝ որտեղ այն կիրառված է անմիջապես դրան նախորդող Սաղմոս 2-ից մեջբերվածի հետ հատուկ առնչությամբ, և Գործք 10:38-ը՝ որտեղ մեզ ասվում է, որ Աստված Հոգով օժեց Հիսուսին» (էջ՝ 183):

Տե՛ս Հատուկ Թեմա. *Kerygma*, 2:14:

■ **«Սատանայի կողմից բոլոր ճնշվածներին բժշկելով»** Տե՛ս Հատուկ Թեմաներ 5:3 և 5:16:

10:39 «Ում /նրանք/ սպանեցին՝ փայտից կախելով» «Նրանք» բառը վերաբերում է հրեա առաջնորդներին, ամբոխին և հռոմեական իշխանություններին: Տե՛ս գրառում 2:23: Ծառից՝ փայտից կախելու գաղափարը նշվում է 5:30-ում և 2 Օր.21:23-ի անդրադարձն է (որը բնագրում վերաբերում է մեկին նվաստացնելու համար մահից հետո ցիցը հանելուն, սակայն Հիսուսի օրոք ռաբբիները այն բացատրում են որպես հռոմեական խաչելություն), որի միջոցով Հիսուսը կրեց ՀԿ-ի օրենքի անեծքը (տես՝ Եսայի 53) մեզ համար (տես՝ Գաղ.3:13):

10:40 «Աստված հարություն տվեց Նրան» Աստվածաբանորեն հետաքրքիր է, որ Եսայի 53:4-6,10 համարները պնդում են, որ Հիսուսի չարչարանքներն ու մահը ՅԱՀՎԵի կամքն ու նպատակն էր (տես՝ Ծննդ.3:15): ՅԱՀՎԵն օգտագործեց այս անձանց գործակցությունը՝

1. Սատանայի
2. չար հրեա առաջնորդների
3. հռոմեացի շահարկված իշխանությունների
4. բարկացած հրեա ամբոխի

Չարը Աստծո կամքն է: Նա օգտագործում է չարին, որպեսզի հասնի Իր ամենամեծ նպատակին՝ Իր պատկերով ու նմանությամբ ստեղծված մարդկության համար: Այո՛: Ամենակալ Աստծո ինչպիսի՛ աստվածաբանություն: Նա թույլատրում է մահվանը գործի անցնելու և ապա Հիսուսին և բոլորին նվիրում հարուցյալ կյանքը:

ՆԿ-ը հաստատում է, որ Երրորդության բոլոր երեք անձիք էլ գործում էին Հիսուսի հարության ժամանակ՝

1. Հոգին (Հռոմ.8:11)
2. Հիսուսը (Հովհ.2:19-22; 10:17-18)
3. Հայրը (Գործք 2:24,32; 3:15,25; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 27:31; Հռոմ.6:4,9)

Սա Հիսուսի կյանքի, մահվան և Աստծո մասին Իր ուսմունքների ճշմարտության վավերացում էր: Սա *Kerygma*-ի գլխավոր կետերից է (այսինքն՝ Գործքում զետեղված քարոզները, տես՝ Հատուկ Թեմա 2:14):

■ **«Երրորդ օրը»** 1 Կորնթ.15:4-ի հիման վրա ոմանք այս խոսքը կապում են Սաղմ.16:10 կամ Ովսեա 6:2-ի հետ, սակայն շատ ավելի հավանական է Հովնան 1:17-ը՝ Մատթ.12:40-ի հիման վրա:

10:40-41 «բացահայտորեն ցույց տվեց Նրան, ոչ թե ամբողջ ժողովրդին...» Հիսուսը հայտնվեց մի քանի ընտրյալ խմբերի (տես՝ Հովհ.14:19,24; 15:27; 16:16,22; 1 Կորնթ.15:5-9):

10:41 «Նրա մեռելներից հարություն առնելուց հետո, Իր հետ կերանք ու խմեցինք» Չնայած որ Հիսուսի հարուցյալ մարմինը կարիք չուներ ֆիզիկական սնունդի, Նա կերավ և խմեց ցույց տալու Իր հատուկ ընտրված ակնատեսներին, որ Ինքը իրական է և արտահայտի Նրանց հանդեպ Իր ընկերական վերաբերմունքը (տես՝ Դուկ.24:35, 41-43; Հովհ.21:9-13):

10:42 «Եվ Ինքը մեզ հրամայեց, որ ժողովրդին քարոզենք» ԴԵՐԱՆՈՒՆԸ Հիսուսին է վերաբերում (տես՝ Մատթ.28:18-20; Դուկ.24:47-48; Հովհ.15:27): Այս վկայությունը՝ քարոզչությունը պետք է սկսվեր Երուսաղեմից և հասներ ամբողջ աշխարհին (տես՝ 1:8):

■ **«Կենդանիների ու մեռելների Դատավորը»** Քրիստոսը դատաստանի համար Հոր գործակատարն է (տես՝ Դան.7:13-14; Հովհ.5:22,27; Գործք 17:31; 2 Կորնթ.5:10; 2 Տիմ.4:1; 1 Պետ.4:5) ինչպես որ ստեղծագործության ժամանակ էր (տես՝ Հովհ.1:3; Կող.1:16; Եբր.1:2): Հիսուսը չեկավ դատելու, այլ փրկելու (տես՝ Հովհ.3:17-19):

Այս արտահայտությունը՝ «կենդանիներ և մեռելներ», վերաբերում է էսկատոլոգիական դատաստանին՝ Երկրորդ Գալստյանը: Հավատացյալներից շատերը դեռ կենդանի են լինելու (տես՝ 1 Թեսաղ.4:13-18):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐԸ, ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՍԱՅԻ ՊՐՔՈՒՄ

Սա ՀԿ-ում շատ օգտագործվող մի տերմին է (BDB 1047): NIDOTTE, հատոր 4, էջ՝ 214, բնութագրել է այս տերմինի կիրառությունն ու նշանակությունը:

1. Հնգամատյանում, 13% -մարդկանց դատավորներ
2. Պատմական գրքերում, 34% - մարդկանց առաջնորդներ
3. Իմաստասիրական Գրականության մեջ, 31% - աստվածային գործունեություն
4. Մարգարեների մեջ, 31% - հիմնականում աստվածային գործունեություն

Ուշադրություն դարձրեք հետևյալ սանդղակին՝

ՅԱՀՎԵՆ՝ Դատավոր	Մեսիան՝ Դատավոր	Իսրայելի իդեալական դատավորները	Իսրայելի գործնական դատավորները
2:4	9:7		
3:14	11:3,4	1:17,21,23	3:2
4:4	16:5	26:8	5:7

5:16	32:1	56:1	10:2
28:6,17,26	40:14	58:2,8	59:4,9,11,14,15
30:18	42:1,3,4		
33:5,22	51:4,5		
61:8	53:8		
66:16			

Իսրայելը պետք է ազգերի մեջ ՅԱՀՎԵԻՆ ներկայացնէր: Սակայն ճախողեց, ուստի ՅԱՀՎԵՆ քարձրացրեց մի «իդեալական» Իսրայելացու, որպեսզի իրականացնի աշխարհի համար Իր ունեցած անձնական հայտնությունը (այսինքն՝ Մեսիան, Հիսուս Նագովրեցին, Քրիստոսը. տես՝ Եսայի 52:11-53:12):

10:43 «Ում մասին բոլոր մարգարեները վկայում են» Հիսուսը Էմմաուսի ճանապարհին երկու աշակերտներին ցույց տվեց (արձանագրված միայն Ղուկ.24:13-35), թե որտեղ և ինչպես է ՀԿ-ը առնչվում Իր հետ: Այս աշակերտները վերնատանը պատմեցին մյուս աշակերտներին և այս տեղեկությունը դարձավ հրեաներին վկայելու ստանդարտ մոտեցումը (տես՝ 3:18): Հիսուսը բացեց աշակերտների միտքը (տես՝ Ղուկ.24:45):

■ **«Նրա անունով»** (տես՝ Հովել 2:32 և Ղուկ.24:47):

■ **«ով Նրան հավատա, մեղքերի թողություն կստանա»** Սա ավետարանի պատգամն է.

1. բոլորը /ով որ/
2. Նրա անունով՝ Նրա անվան միջոցով
3. ով հավատա Նրան
4. կստանա մեղքերի թողություն՝ ներում (տես՝ Ղուկ.24:46-47)

Ամբողջ կենտրոնացումը Հիսուսի վրա է և ոչ թե գործերի (այսինքն՝ Երեմ.31:31-34-ի նոր ուխտը. տես՝ Եզեկ.36:22-38): Ամեն ինչ, որ փրկվելու համար պետք է բոլորը՝ յուրաքանչյուրը անեին, արդեն իսկ արված է: Աստված որոշել է աշխատել մեղավոր մարդկության հետ ուխտի միջոցով: Նախաձեռնությունը վերցնելով Նա էլ նշանակում է ազենդան՝ գործընկերներին, սակայն Նա նաև մարդուց պահանջում է, որ ապաշխարությամբ, հավատքով, հնազանդությամբ և հարատևությամբ պատասխանի Իրեն: Մարդիկ պետք է ընդունեն Քրիստոսի մեջ իրենց ունեցած Աստծո պարզևր (տես՝ Հովի.1:12; 3:16; Հռոմ.10:9-13): Դա ինքնաբերաբար չի փոխանցվում:

Ֆրենք Սթեգը, *Նոր Կտակարանի Աստվածաբանություն*, (Frank Stagg, *New Testament Theology*) ունի մի հետաքրքիր մեկնաբանություն ներման և ապաշխարության հետ դրա ենթադրելի կապի վերաբերյալ:

«Ներումը կոչ է մեղքի և դրանից ետ դառնալու մասին նոր գիտակից վիճակի: Երաշխիք է տրված, որ մեղքերի խոստովանությանը հաստատ կհետևի ներումն ու սրբագործումը՝ մաքրումը (1 Հովի.1:9), սակայն ոչ մի խոստում չկա այն բանի, թե որտեղ խոստովանությունը չի ընդունվի: Կոռնելիոսի տանը Պետրոսը կապեց ներումը հավատքի հետ, հռչակելով, որ այս Մեկի մասին (Հիսուսի) բոլոր մարգարեները վկայեցին. «որ Նրա անունով ամեն ով որ հավատա Նրան, կստանա մեղքերի թողություն» (Գործք 10:43): Այս հավատքով՝ ապաշխարության և խոստովանության հետ միասին, մարդը կամ «սեփականացնում կամ էլ հրաժարվում է» իր մեղքից: Սա չի նշանակում, որ ապաշխարությունը *շահում* է ներում. նույնիսկ ապաշխարությունը չի կարող ինչ-որ մեկի ներման արժանացնել: Ինչպես որ մեկն այսպես է շարադրել, մեղավորը պետք է ընդունի իր մերժված և ընդունված լինելը, չնայած որ գիտի որ ինքն անընդունելի է: Այս մեղավոր անձը չի կարող ներվել, մինչև որ չկամենա ընդունել Աստծո *ոչը*, որպեսզի լսի Նրա *այոն*» (Էջ՝ 94):

«Հավատա Նրան» խոսքի համար տե՛ս Հատուկ Թեմա 3:16:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 10:44-48

⁴⁴Մինչ Պետրոսը դեռ խոսում էր այս խոսքերը, Սուրբ Հոգին իջավ բոլորի վրա, ովքեր Խոսքը լսեցին: ⁴⁵Եվ թփառվածներից այն հավատացյալները, որ Պետրոսի հետ էին եկել, զարմացան, որ Սուրբ Հոգու պարզևր նույնպես հեթանոսների վրա էր թափվում: ⁴⁶Քանի որ լսում էին, որ նրանք ուրիշ լեզուներով էին խոսում և Աստծուն էին փառաբանում: ⁴⁷Այն ժամանակ Պետրոսը պատասխանեց. «Ո՞վ կարող է արգելել, որ ջրով մկրտվեն սրանք, որոնք, ինչպես և մենք, Սուրբ Հոգին ընդունեցինք»: ⁴⁸Ու հրամայեց նրանց, որ Տիրոջ անունով մկրտվեն: Այն ժամանակ նրան աղաչեցին, որ մի քանի օր մնա:

10:44 Նկատեք, որ Պետրոսը դեռ չէր ավարտել իր քարոզը, երբ Սուրբ Հոգին իջավ (տես՝ 8:16-17; 10:44; 11:15):

■ **«բոլորի վրա, ովքեր Խոսքը լսեցին»** Իրական աստվածաբանական լարվածությունը Կոռնելիոսը չէր: Նա լիարժեք կերպով ընդունված էր տեղի Ժողովարանի կողմից: Դա նրա բոլոր ընկերներն էին: Նրանք նախկինում ակնհայտ ոչ մի կապ չունեին նույնիսկ հուդայականության հետ, իսկ այժմ Աստված կատարելապես ընդունել էր նրանց: Այս ընդունելությունը արտահայտվեց և հաստատվեց Պենտեկոստեի ժամանակ ի հայտ եկած հոգևոր գործության և ներկայության միևնույն դրսևորմամբ:

Նաև նկատեք, որ դեպքերի հերթականությունն է փոխված: Հոգին գալիս է նախքան ջրի մկրտությունը, ոչ թե դրա հետ կապված (տես՝ 2:38) կամ դրանից հետո (տես՝ 8:17): Դուկասը արձանագրում է այն ինչ տեղի է ունեցել և ոչ թե այն «ինչ պետք է տեղի ունենար»: Զգույշ եղեք Գործքում արձանագրված այս ավետարանի դեպքերը փորձել վերածելու «Ավետարանի» դեպքի:

10:45 Հոգու միևնույն գերբնական դրսևորումը (տես՝ հ. 46), որը տեղի ունեցավ Պենտեկոստեին, դարձյալ տեղի ունեցավ ընդգրկելով նաև հռոմեացիների: Այս հատուկ նշանը միայն Կոռնելիոսի և նրա ընկերների համար չէր, այլ հիմնականում թափառված հավատացյալների համար (տես՝ հ. 47): Դա հզոր և անվիճելի կերպով ցույց տվեց, որ Աստված ընդունել է հեթանոսներին (տես՝ 11:17), նույնիսկ հռոմեացիներին:

Դուկասը գրական հիմք է դնում Գործք 15-ի՝ Երուսաղեմի Խորհրդի համար: Թե՛ Պետրոսը և թե՛ Պողոսը, հելլենական հավատացյալների հետ միասին, համոզված էին, որ Աստված Քրիստոսի միջոցով հեթանոսներին կատարելապես ընդունել էր:

■ **«Սուրբ Հոգու պարզևը»** Սուրբ Հոգու ծառայությունը հստակ կարելի է տեսնել Հովհ.16:8-14-ում: Ինչ-որ առումով մեղքի համոզմունքը Սուրբ Հոգուց պարզև է: Փրկությունն ինքնին Սուրբ Հոգու պարզև է: Նրա մեր մեջ ապրող ներկայությունը Սուրբ Հոգու պարզև է: Սա Հոգու նոր դարաշրջանն է (տես՝ 2:38; 8:20; 11:17): Առանց Հոգու գործության և ներկայության ոչ մի մնայուն կամ ազդեցիկ բան տեղի չի ունենում:

■ **«Թափվում էր»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Թափվելը ՀԿ-յան զոհաբերության համակարգի մի մասն էր կազմում: Հոգու վերաբերյալ դա արդեն կանխավել էր Հովել 2:28-ում և մեջբերում կատարվել Պետրոսի կողմից իր Պենտեկոստեի քարոզի ժամանակ (տես՝ 2:17,33): Աստծո կողմից հավատացյալներին մշտապես և լիարժեք կերպով տրվեց Սուրբ Հոգին:

10:47 Սա մի հռետորաբանական հարց է, որն ակնկալում է «ոչ» պատասխանը: Այս հարցը հրեա հավատացյալների համաձայնությունը ստանալու համար էր, որոնք ընկերակցել էին Պետրոսին Հոգուց: Տես՝ Հատուկ Թեմա. Մկրտություն, 2:38:

10:48 **«հրամայեց նրանց, որ Տիրոջ /Հիսուս Քրիստոսի/ անունով մկրտվեն»** Նկատեք, որ մկրտությունը անմիջապես եղավ: Նաև ուշադրություն դարձրեք, որ այն կատարվեց Հիսուսի անունով, ինչպես 2:38 և 19:5 համարներում: Գործքում մկրտության բանաձևը «Հիսուս Քրիստոսի անունով» էր, մինչ Մատթ.28:19-ում՝ Երրորդության անունով: Բանաձևը չի կարևորը, այլ մկրտվողի սիրտը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ էր Կոռնելիոսի փրկությունը այդքան կարևոր:
2. Ինչո՞վ է Կոռնելիոսի փրկության փորձառությունը նման Պողոսի փորձառությանը:
3. Ի՞նչ աստվածաբանական կարևոր նշանակություն ունի կենդանիներով լի կտավն ու Պետրոսի մեկնաբանությունները կապված Կոռնելիոսի հետ:
4. Ինչո՞ւ էր Կոռնելիոսի ընկերների դարձն այդքան խնդրահարույց:
5. Կոնսպեկտավորեք Պետրոսի քարոզը և համեմատեք այն Գործքում արձանագրված փրկության մյուս դեպքերի հետ: Դրանք բոլորն էլ տարբերվում են, սակայն միևնույն ժամանակ նման են:

ԳՈՐԾՔ 11

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պետրոսի գեկույցը Երուսաղեմի եկեղեցում	Պետրոսը Աստուծո շնորհքի կողմն է	Պետրոսի պաշտպանությունը	Պետրոսի գեկույցը Երուսաղեմի եկեղեցում	Երուսաղեմ. Պետրոսն արդարացնում է իր վարքը
11:1-18	11:1-18	11:1-18	11:1-4 11:5-17 11:18	11:1-10 11:11-14 11:15-17 11:18
Անտիոքի եկեղեցին	Բառնաբասն ու Սողոսը Անտիոքում	Առաքելություն Անտիոքի հույներին	Անտիոքի եկեղեցին	Անտիոքի եկեղեցու հիմքը
11:19-26	11:19-26	11:19-26	11:19-26	11:19-21 11:22-24 11:25-26
	Օգնություն Հրեաստանին	Սովի ժամանակ Երուսաղեմին օգնություն է ուղարկվում		Բառնաբասն ու Սողոսը ուղարկվում են Երուսաղեմ որպես պատվիրակներ
11:27-30	11:27-30	11:27-30	11:27-30	11:27-30

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:1-18

¹Առաքյալները և այն եղբայրները, որ Հրեաստանում էին, լսեցին, որ հեթանոսներն էլ են ընդունել Աստծո Խոսքը: ²Եվ երբ Պետրոսը Երուսաղեմ ելավ, թլփատությունից եղողները վիճում էին նրա հետ՝ ³ասելով. «Դու անթլփատ մարդկանց մոտ մտար և նրանց հետ կերար»: ⁴Պետրոսն սկսեց հերթով պատմել նրանց և ասաց. ⁵«Ես Հոպպե քաղաքում աղոթում էի և մտքի հափշտակության մեջ տեսիլք տեսա, որ մեծ կտավի պես մի անոթ, չորս ծայրից կախված, երկնքից ցած էր իջնում և եկավ մինչև ինձ մոտ: ⁶Երբ աչքս վրան սևեռած նայում էի, տեսա երկրի բոլոր չորքոտանիներին և գազաններին և սողուններին և երկնքի թռչուններին: ⁷Եվ մի ձայն լսեցի, որ ասում էր ինձ. «Վեր կաց, Պետրո՛ս, մորթի՛ր և կե՛ր»: ⁸Եվ ասացի. «Քա՛վ լիցի, Տե՛ր, քանի որ երբեք իմ բերանը պիղծ կամ անմաքուր բան չի մտել»: ⁹Չայնը երկնքից ինձ երկրորդ անգամ պատասխանեց. «Այն, որ Աստված մաքրեց, դու պիղծ մի՛ համարիր»: ¹⁰Եվ սա երեք անգամ եղավ, և ամեն ինչ նորից երկինք վերացավ: ¹¹Եվ ահա, անմիջապես, Կեսարիայից ինձ մոտ ուղարկված երեք մարդ արդեն եկել, կանգնել էին այն տան առաջ, որտեղ ես էի գտնվում: ¹²Եվ Հոգին ինձ ասաց, որ առանց երկմտելու նրանց հետ գնամ: Այս վեց եղբայրներն էլ ինձ հետ եկան, և մտանք այն մարդու տունը: ¹³Եվ նա մեզ պատմեց, թե ինչպես է հրեշտակին տեսել իր տանը, որ կանգնել ու իրեն ասել է. «Հոպպե ուղարկի՛ր և կանչի՛ր Պետրոս կոչվող Սիմոնին: ¹⁴Նա քեզ կասի այն խոսքերը, որոնցով կփրկվեք դու և քո ամբողջ տունը: ¹⁵Եվ երբ սկսեցի խոսել Սուրբ Հոգին իջավ նրանց վրա, ինչպես սկզբում՝ մեզ վրա: ¹⁶Եվ ես հիշեցի Տիրոջ այն խոսքը, որ ասում էր. «Հովհաննեսը ջրով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգով պիտի մկրտվեք»: ¹⁷Ուրեմն, եթե Աստված նրանց նույն պարզևր տվեց, ինչ որ մեզ, որ Տե՛ր Հիսուս Քրիստոսին հավատացինք, ապա ես ո՛վ էի, որ կարողանայի Աստծուն արգելել»: ¹⁸Երբ լսեցին այս բաները, լռեցին և փառավորում էին Աստծուն և ասում. «Ուրեմն հեթանոսներին նույնպես Աստված կյանքի համար ապաշխարություն տվեց»:

11:1 Այս համարն ակնարկում է, որ Երուսաղեմի առաջնորդների առաջնորդության ներքո գտնվող եկեղեցին զարմացել էր դեպքերի այսպիսի շրջադարձով: Նրանք ցնցված էին և այդքան էլ հավանություն չէին տալիս այս դեպքերին: Նրանք չէին հասկացել, որ Մեծ Հանձնարարականը (տես՝ Մատթ.28:18-20; Դուկ.24:47; Գործք 1:8) ընդգրկում էր նաև հեթանոսներին: Այս նույն համարին հանդիպում ենք նաև 8:14-ում, երբ սամարացիներն են ընդունում ավետարանը:

■ **«եղբայրները»** Սա հավատացյալների համար առաջին անուններից է, որը շեշտադրում է մեր հավաքական ընտանեկան ինքնությունը (տես՝ 1:15; 6:3; 9:30; 10:23; 11:1,12, 29; 12:17; 14:2; 15:1,3,22, 23, 32-33, 40; 16:2,40; 17:6,10,14; 18:18,27; 21:7, 17; 22:5; 28:14-15): Քրիստոնյա լինել նշանակում է լինել ընտանիքի մի մաս (տես՝ 1 Կորնթ.12:13; Գաղ.3:28; Կող.3:11):

■ **«Հրեաստանում էին»** Սա ցույց է տալիս մինչ այդ պահը եկեղեցու աշխարհագրական սահմանները: Նույնիսկ շատ տարիներ անց եկեղեցին դուրս չէր եկել իր մշակութային սահմաններից: Նրանք չէին հնազանդվել 1:8-ում տրված Հիսուսի պատվիրանին: Այն գրեթե համազոր է Ծննդոց 10-11:

■ **«հեթանոսներն էլ են ընդունել Աստծո Խոսքը»** Սա ԱՆՈՐՈՇ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այն արտահայտում է ավետարանի պատգամը անձնապես ընդունելու կարևորությունը (տես՝ Հովհ.1:12; 3:16; Հռոմ.10:9-13; Եփես.2:8-9):

«Աստծո Խոսք» արտահայտությունը «ավետարան» բառի հոմանիշն է: ՀԿ-ի տիեզերական խոստումները՝ մարգարեությունները կատարվում են: Տե՛ս Հատուկ Թեմա 1:8:

11:2 «Երբ Պետրոսը Երուսաղեմ ելավ» Ըստ երևույթին հեթանոսների հետ կապված խնդիրը, որը դեռ շարունակվելու էր 15-րդ գլխում, վաղ եկեղեցու Երուսաղեմի առաջնորդական կազմի համար կրկնվող խնդիր էր: Քրիստոնեությանը դարձի եկած նորահավատներից շատերը դեռևս մնացել էին խիստ ազգայնական (տես՝ 15:5; 21:18-26):

- **NASB** «նրանք, որ թլփատված էին»
- NKJV** «թլփատությունից եղողները»
- NRSV, NJB** «թլփատված հավատացյալները»
- TEV** «նրանք, որ հավանություն էին տալիս հեթանոսների թլփատությանը»
- Williams** «թլփատությանը առաջնություն տվողները»

Այս արտահայտությունը կիրառվում է մի քանի տարբեր իմաստով.

1. 10:45-ում նկարագրում է Պետրոսի վեց հրեա ծառայակիցներին
2. այստեղ այն վերաբերում է Երուսաղեմում հավատացյալների մի խմբի (տես՝ 11:18 կամ 15:5):
3. Գաղատացիների մեջ այն վերաբերում է Երուսաղեմի եկեղեցուց հավատացյալներին (տես՝ 2:12) ինչպես նաև հրեա անհավատներին (տես՝ 1:7; 2:4; 5:10,12):

Այս հավատացյալների անկեղծությունը չի հարցադրվում, ոչ էլ նրանց դիրքորոշումը: Սակայն, ավետարանի ռադիկալ բնույթը դուռ էր բացել Մովսիսական օրենքի հետ ընդհանրապես կապ չունեցող մարդկանց համար (այսինքն՝ Հռոմ.3:21-31): Սա է այն պատգամը (շնորհքն է և ոչ թե գործերը, որ փրկություն է բերում), որ պետք է լսեն և հասկանան մեր օրերի հավատացյալներից շատերը:

■	
NASB	«վիճում էին»
NKJV	«դժգոհում էին»
NRSV, TEV	«քննադատում էին»
NJB	«բողոքում էին»

Սա ԱՆԿԱՏԱՐ ՉԵԶՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս քերականական ձևը կարող է արտահայտել անցյալում կրկնվող գործողություն կամ գործողության սկիզբ: Նկատելք, որ այս հավատացյալ ավանդ-ապաշտները վիճում էին Պետրոսի հետ, և ոչ թե ավետարանի: Նրանք չէին տեսնում, որ սա ավետարանի հետ կապված հարց էր:

11:3 «Գու անթլփատ մարդկանց մոտ մտար և նրանց հետ կերար» Իհարկե Պետրոսը խնդիրներից գերծ մարդ չէր: Քերականորեն այս համարը կարող է լինել թե՛ որպես հայտարարություն և թե՛ որպես հարց (NRSV):

Հրեաների համար այս սեղանի շուրջ այլոց հետ հաղորդակցվելու հարցը կարևոր էր: Սա կարող էր լինել Ղևտացիների 11 գլխի լույսի ներքո կերակուրի հետ կապված օրենքների հարցը: Հրեաները չպետք է քանանացիների հետ որևէ սոցիալական իրավիճակներում բաժնեկից լինեին: Հին Մերձավոր Արևելքում ուտելը համարվում էր փոխհարաբերության ուխտի մի տեսակ: Հիսուսը նույնպես նմանատիպ իրավիճակներում գտնվելիս քննադատության արժանացավ Մատթ.9:11; 11:19; Ղուկ.5:30; 15:2-ում:

Պետրոսը իր ծառայության մեջ բախվեց այս խնդրի հետ (տես՝ Գաղ.2:12): Առաջին հավատացյալների համար սա շատ զգայական խնդիր էր: Շատ դժվար է վերանայել ավանդույթները, մշակույթը և անձնական նախընտրությունները, սակայն ավետարանը պահանջում է, որ այդպես անենք (տես՝ 1 Կորնթ.12:13; Գաղ.3:23-29; Կող.3:11): ՀԿ-ի հրեաներն ընդդեմ հեթանոսների մողելը այժմ ընդհանրապես փոխարինվում է հավատացյալներն ընդդեմ անհավատների մողելով:

11:4-18 Պետրոսը պատմում է Սիմոնի և Կոռնելիոսի տանն ունեցած իր վերապրումները՝ փորձառությունները (Գործք 10) Երուսաղեմի հրեա առաջնորդների համար: Այս կրկնությունը (տես՝ Երուսաղեմի Խորհուրդը՝ Ատյանը Գործք 15-ում) Ղուկասի ոճն է, որպեսզի արտահայտի, թե որքան կարևոր էր այդ հարցը (աշխարհին ավետարանելը) վաղ եկեղեցու կյանքի համար: Սա աստվածաբանության մեջ ջրբաժան հանդիսացող պահ էր:

11:4	
NASB	«հերթով»
NKJV	«սկզբից սկսած հերթականությամբ»
NRSV	«քայլ առ քայլ»
TEV	«լիարժեք հաշվետվություն»
NJB	«մանրամասները կետ առ կետ»

ՆԿ-ում *kathexēs* բառը կիրառվում է միայն Ղուկասի կողմից (տես՝ Ղուկ.1:3; 8:1; Գործք 3:24; 11:4; 18:23): Այն ունի ինչ-որ բան տրամաբանության, ժամանակի կամ հաջորդականության հերթականությամբ բացատրելու նշանակությունը: Այն համապատասխանում է Ղուկասի ուսումնասիրությունների մեթոդին (տես՝ Ղուկ.1:1-4), բնավորությանը և մասնագիտական կարողությանը՝ ուսմանը (բժիշկ):

11:6 «աչքս վրան սևեռած» Տե՛ս Գրառում 1:10:

11:12	
NASB	«առանց երկմտելու»

NKJB
NRSV
TEV
NJB

«ոչ մի բան չկասկածելով»
«առանց աչառություն անելու»
«առանց վարանելու»
«կասկած չունենալով»

Այս ԳԵՐԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԻ հետ կապված գոյություն ունեն մի քանի հունարեն ձեռագիր տարբերակներ (ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ 10:20-ի հիման վրա կամ ԱՈՐԻՍՍ ՉԵՉՈՔ MSS P⁷⁴, 8², B-ում): Այն նույնիսկ բացակայում է Հունարեն P⁴⁵, D և որոշ Հին լատիներեն և Սիրիական տարբերակներում: Դպիրները հակված են համանման՝ զուգահեռ հատվածները համաձայնեցնելուն: Ինչպես որ ՆԿ-ի շատ տեքստային տարբերակներ ունեցող հատվածներում, սրանք էլ չեն ազդում արտահայտության իմաստի վրա: UBS⁴ տալիս է ԱՈՐԻՍՍ ՉԵՉՈՔ ԳԵՐԲԱՅԻ այս տեքստի համար, բացասական «C» գնահատմամբ (առկա է որոշման դժվարություն):

11:14 «կփրկվեք» Կոռնելիոսի բարեպաշտությունն ու առատաձեռնությունը իրեն Քրիստոնյա չդարձրեցին: Նա և իր ընտանիքն ու ընկերները փրկվեցին Քրիստոսին հավատալով:

11:15 Այս համարը աստվածաբանության մեջ շատ կարևոր նշանակություն ունի՝ Գործքում Պենտեկոստեի փորձառությունը կրկնվելու նպատակը տեսնելու համար: Աստված օգտագործեց Երուսաղեմում հանդիսավոր բացման փորձառությունը, որպեսզի ցույց տա որ Ինքն ընդունում է մյուս ռասսաներին, աշխարհագրական և մշակութային խմբերին (տես՝ 17): Այս փորձառությունը ոչ միայն Կոռնելիոսի համար էր, այլ նաև՝

1. Պետրոսի
2. նրան ընկերակցող հրեա հավատացյալների
3. Երուսաղեմի եկեղեցու

11:16 «ես հիշեցի Տիրոջ այն խոսքը» Սա ակնարկում է Գործք 1:5-ում արձանագրված Հիսուսի խոսքերը: Սա ցույց է տալիս Առաքյալների սկզբնական մոտեցումները աստվածաբանությանը:

1. Հիսուսին մեջբերելը
2. Հիսուսի օրինակը կիրառելը
3. ՀԿ-ից մեջբերելը (տես՝ Մատթ.3:11; Գործք 1:5)

Պետրոսը հաստատում է, որ Տերն Ինքն էր այս զարգացումները կանխորոշել (այսինքն՝ նշան էր):

11:17 «եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ նախադասության սկիզբ է, որը ենթադրում է հենց հեղինակի տեսակետի կամ նրա գրական նպատակների առումով ճշմարտացիությունը:

■ **«Աստված նրանց նույն պարզևր տվեց»** Սա 15 համարի պես վերաբերում է Պենտեկոստեին (տես՝ 2:1-4; 8:15; 10:46; 15:8): Փրկությունը, Հոգու պես, Աստծո պարզևն է (տես՝ Հռոմ.3:24; 5:15-17; 6:23; Եփես.2:8):

■ **«որ Տեր Հիսուս Քրիստոսին հավատացինք /անգլ.՝ հավատալուց հետո/»** Այն պետք է ընդունվի (տես՝ 1:11; Հովհ.1:12; Եփես.2:8-9): Նկատել է 17 ինչպես է հաստատում թե՛ Աստծո ամենակալությունը և թե՛ մարդու լիազորված պատասխանը: ՆԿ-ում գոյություն ունեն մի քանի ՆԱԽԴԻՐՆԵՐ, որոնք կիրառվում են բնութագրելու Հիսուսի վրա ունեցած հավատքը.

1. *epi* = վրա (այստեղ)
2. *eis* = դեպի ներս
3. *en* = մեջ
4. *hoti* = Հիսուսի մասին հայտարարություն
5. Առանց ՆԱԽԴԻՐՆԵՐ ՏՐԱԿԱՆ ՀՈՒՈՎ

Այս բազմազանությունը կարծես թե ենթադրում է, որ չկա մի այդպիսի հատուկ քերականական ձև «հավատալ» (*pisteuō*) բառի համար: Ընդհանրապես շեշտադրվում է անձնական, կամային հատկանիշը (բացի *hoti* բառից, որն ունի ավետարանի բովանդակության կամ վարդապետությունների նշանակությունը): Հիսուսը անձ է, ում պետք է ընդունել: Տե՛ս Հատուկ Թեմա 2:40 և 3:16:

11:18 «լռեցին և փառավորում էին Աստծուն» Պետրոսի վկայությունը ոչ միայն վանեց բացասական մթնոլորտը, այլ նաև փառաբանության առիթ հանդիսացավ: Այս առաջին հավատացյալներից և առաջնորդներից շատերը ուսանելի և զիջող էին: Նրանք հոժարակամ էին համակերպվելու իրենց աստվածաբանության հետ և հետևելու Աստծո առաջնորդությանը:

■ «**հեթանոսներին նույնպես Աստված կյանքի համար ապաշխարություն տվեց**» ՆԿ-ում կան մի քանի հատվածներ, որոնք հասկացնում են, որ ամենակալ Աստվածն է ապաշխարության, ինչպես նաև շնորհի արքյուրը (տես՝ Գործք 5:31; 8:22; 2 Տիմ.2:25):

Այս արտահայտության հետ կապված աստվածաբանական հարցը կայանում է նրանում, թե «ինչպե՞ս է Աստծո ամենակալությունը կապված փրկության հետ՝ ի հակադրություն մարդուց պահանջվող պատասխանի»: Արդյո՞ք հավատքն ու ապաշխարությունը (տես՝ Մարկ.1:15; Գործք 3:16,19; 20:21) պատասխան են մարդու կողմից, թե Աստծո պարզ են: Կան տեքստեր, որոնք ուղղակիորեն նշում են, որ դրանք Աստծո պարզ են (Տես՝ Գործք 5:31; 11:18; Հռոմ.2:4 և 2 Տիմ.2:25): Եվ քանի որ ես հավատում եմ, որ ամբողջ Գիրքը Աստվածաշունչ է (տես՝ 2 Տիմ.3:16), ապա պետք է համեմատել հարցին վերաբերող բոլոր տեքստերը և չգիջել մի տեքստային ապացույցին կամ հարանվանական մեթոդներին: Հաստատ է, որ միակ ճշմարիտ Աստվածն է ամեն բան վերահսկում: Գործքը այս բանը շեշտադրում է կրկին ու կրկին: Ամեն դեպքում, Նա որոշել է Իր արարչագործության գլուխգործոցի հետ հաղորդակցվել ուխտի միջոցով: Աստված է միշտ նախաձեռնողը և Իր գործիքներն ընտրողը, սակայն մարդը պետք է պատասխանի և շարունակի պատասխանել Նրան: Դա երբեք չի եղել «կամ ... կամ» հարց: Այն միշտ էլ եղել է «թե՛ այս, թե՛ այն» տեսակի փոխհարաբերություն: Տե՛ս Հատուկ Թեմա. Ուխտ, 2:47: «Ապաշխարության» համար տե՛ս Հատուկ Թեմա 2:38:

Մայքլ Մեգիլը, *ՆԿ-յան ՏրանսԼայն* (էջ՝ 435, #24, /Michael Magill, *NT TransLine*/) գրքում ունի մի լավ ամփոփիչ խոսք, թե Երուսաղեմի վաղ եկեղեցու հավատացյալները ինչ էին մտածում, որ պետք է տեղի ունենա.

«Հրեա հավատացյալները գիտեին, որ ավետարանի պատգամը աշխարհի համար էր: Բայց այն, որ փրկությունը պետք է հասներ հեթանոսներին առանց հուդայականության՝ և դրա հետ առանցվող ամեն ինչի, մի նոր գաղափար էր նրանց համար: Նրանք ենթադրում էին, որ փրկությունը աշխարհին քարոզվելու էր որպես ճշմարիտ, հոգևոր հուդայականության մի մաս և դրա միջոցով, որ հուդայականությունն էր տիրելու և բոլոր մարդիկ դառնալու էին հրեաներ, որպես Քրիստոսի մեջ կյանք գտնելու մի մասը, որ հրեական մշակույթը փառավոր կերպով դառնալու էր համաշխարհային մշակույթ»:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 11:19-26

19Եվ Ստեփանոսի պատճառով ծագած հալածանքի հետևանքով ցրվածները մինչև Փյունիկե, Կիպրոս և Անտիոք հասան և բացի հրեաներից, ոչ ոքի չէին քարոզում *Աստծո* **Խոսքը**: **20**Նրանցից ոմանք, որ կիպրացի և կյուրենացի էին, երբ եկան Անտիոք, խոսում էին հույների հետ՝ քարոզելով Տեր Հիսուսին: **21**Եվ Տիրոջ ձեռքը նրանց հետ էր: Եվ բազմաթիվ մարդիկ հավատացին և Տիրոջը դարձան: **22**Սրա լուրը հասավ Երուսաղեմի եկեղեցու ականջին, և Բառնաբասին ուղարկեցին, որ մինչև Անտիոք գնա: **23**Երբ նա եկավ ու տեսավ Աստծո շնորհը, ուրախացավ և բոլորին հորդորում էր, որ սրտի հոժարությամբ շարունակեն Տիրոջը հարել, **24**որովհետև նա բարի մարդ էր, Սուրբ Հոգով և հավատով լեցուն: Եվ Տիրոջը շատ ժողովուրդ հարեց: **25**Եվ Բառնաբասը Տարսոն գնաց՝ Սողոսին փնտրելու: Եվ երբ նրան գտավ, բերեց Անտիոք: **26**Եվ այնպես եղավ, որ նրանք մի ամբողջ տարի հավաքվում էին եկեղեցու հետ և շատ ժողովրդի էին սովորեցնում, և առաջին անգամ Անտիոքում էր, որ աշակերտները քրիստոնյա անվանվեցին:

11:19-30 Այս համարները կարծես պատմական հիշատակում և աստվածաբանական ամփոփում լինեն: Դրանք կապված են 8:4-ի հետ:

11:19 «հալածանքի հետևանքով ցրվածները» Գործքում ունենք այս դեպքին նախորդող մի քանի օրինակներ (տես՝ 5:17; 6:8-15; 8:1-3; 9:1-2): Ավետարանի կարևորագույն հասկանիչների շուրջ Ստեփանոսի հասկացողությունը հարկադրեց Պաղեստինում գտնվող բոլոր հրեա հավատացյալներին վերանայել իրենց հավատքը և ավետարանի նպատակը:

■ **«Անտիոք»** Անտիոքը հռոմեական կայսրության մեջ Հռոմից և Ալեքսանդրիայից հետո երրորդ մեծ քաղաքն էր: Այն Միրիայի մայրաքաղաքն էր և ուներ հրեա մեծաթիվ բնակչություն: Այն հայտնի էր իր համալսարանական կյանքով և սեռական անբարոյությամբ: Ինչպես նաև հայտնի էր աշխարհում իր կառքերի մրցավազքով: Այն դառնալու էր Քրիստոնեության գլխավոր կենտրոնը:

■ **«բացի հրեաներից, ոչ ոքի չէին քարոզում Աստծո Խոսքը»** Սա ցույց է տալիս, որ վաղ եկեղեցին վստահ չէր, որդյո՞ք հեթանոսներին քարոզելը տեղին էր, թե ոչ: Պահպանողական հրեաները մեջբերում էին անում Հիսուսի խոսքերը Մատթ.10:5-ից, մինչև տեսիլք ունեցողները՝ Մատթ.28:18-20 կամ Գործք1:8: Այս աստվածաբանական խնդիրը գլուխ է բարձրացնելու Գործք 15-ում:

11:20 «կիպրացի և կյուրենացի /մարդիկ/» Սրանք նույն հունախոս հրեա հավատացյալներն են, որոնց մասին նշված է Գործք 6-8-ում և որոնք սկսեցին քարոզել Երուսաղեմում Քրիստոնեական Ավետարանի տիեզերական նշանակությունը: Բառնաբասար նույնպես այս աշխարհագրական տեղանքից էր:

■ **«հույների հետ»** Այս բառը (*Hellen*) ընդհանրապես վերաբերում է հեթանոսներին (տես՝ 14:1; 16:1,3; 18:4; 19:10,17; 20:21; 21:28): Բայց 17:4-ում այն վերաբերում է հեթանոսներին, որոնք կապված էին ժողովարանների հետ (աստվածավախները), սակայն անդամներ չէին (այսինքն՝ նորադարձներ): Հարցը սրանում է, թե «Ղուկասը ո՞ւմ նկատի ուներ, ովքեր էին այս մարդիկ, որոնց քարոզվում էր»

- 1. Հունախոս հրեաները, ինչպես 6:1 և 9:29 (*Hellenists*)
- 2. Ժողովարանի հետ կապ ունեցող հեթանոսները (*Hellen*)
- 3. թե՛ լրիվ հեթանոսները (տես՝ TEV, NJB)

Այս բառի հարուցած ամբողջ խառնաշփոթությամբ հանդերձ շատ հավանական է, որ տվյալ տերմինը վերաբերում է նրանց, ովքեր հունարեն էին խոսում՝ ոմանք սփյուռքի հրեաներ և ոմանք էլ լրիվ հեթանոսներ:

■ **«քարոզելով Տեր Հիսուսին»** Սա այն բայի ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ ԴԵՐԲԱՅՆ է, որից ստանում ենք անգլերենի »evangel» և »evangelism» այսինքն՝ ավետարանել և ավետարանչություն տերմինները: Նրանց պատգամը ՀԿ-ի օրենքների և կանոնների մասին չէր, այլ Նազովրեցի Հիսուսի Մեսիայի մասին (տես՝ Հատուկ Թեմա 2:31):

11:21 «Տիրոջ ձեռքը նրանց հետ էր: Եվ բազմաթիվ մարդիկ հավատացին և Տիրոջը դարձան» Սա Աստծո հրաշալի շարժման վերաբերյալ ևս մեկ ամփոփիչ խոսք է ավետարանչական քարոզչության միջոցով: Վերջապես Գործք 1:8-ը իրականացվում էր (տես՝ հ. 24բ):

Սա ՀԿ-յան մի դարձվածք է՝ Իր նպատակի իրականացման համար մարդու գործերի մեջ ՅԱՀՎԵԻ ներկայության և գործության ներգրավվածությամբ (տես՝ 2 Թագ.3:12):

Հետաքրքիր է նշել, որ «Տեր» տերմինը (*Kurios*) այս համարի առաջին մասում կիրառվում է ՅԱՀՎԵ իմաստով (տես՝ LXX Ելից 3:14; 2 Թագ.3:12; Եսայի 59:1; տես Հատուկ Թեմա 1:6): Սակայն համարի երկրորդ մասում այս տերմինի կիրառությունը վերաբերում է Հիսուս Քրիստոսին: Անունների այսպիսի փոխակերպությունը ՆԿ-ի հեղինակների մոտ գրական տեխնիկայի ոճ էր, որով հաստատում էին Հիսուսի աստվածությունը: Ուշադրություն դարձրեք Պողոսի մեջբերած այն ՀԿ-յան տեքստերին, որտեղ նա նկատի ունի ՅԱՀՎԵԻն և կիրառում է դրանք Հիսուսի համար (այսինքն՝ Հռոմ.10:13; 1 Կորնթ.2:16; Փիլիպ.2:10-11):

«Տիրոջ ձեռքը» ՀԿ-յան այլաբանական դարձվածք է (տես Հատուկ Թեմա 2:33): ՅԱՀՎԵՆ հավիտենական Հոգի է՝ ընդմիջտ ներկա ժամանակի և ստեղծագործության մեջ: Նա չունի ֆիզիկական մարմին: Սակայն մարդիկ որևէ անձնական երևույթի մասին խոսելու համար ունեն միայն մարդկային ֆիզիկական տերմինալոգիա՝ բառապաշար: Մենք պետք է հիշենք ընկած, ժամանակավոր, երկրային բաների հետ կապված մարդկային լեզվի սահմանափակումները: Հոգևոր աշխարհի վերաբերյալ այն արտահայտվում է փոխաբերությամբ, այլաբանությամբ և բացասումով ժխտմամբ: Այն արտահայտում է ճշմարտություն, սակայն ոչ սպառիչ: Աստված շատ ավելի մեծ է, քան մենք կարող ենք մեր հնարավորություններով հասկանալ և արտահայտվել: Նա ճշմարտապես հաղորդակցվում է մեր հետ, սակայն դա էլ սպառիչ չէ: Մենք կարող ենք վստահել Աստվածաշնչին որպես Իր մասին Աստծո հայտնությանը, բայց պետք է գիտակցենք, որ այնուամենայնիվ Աստված շատ ավելի մեծ է: Մարդկային լեզուն թե՛ հայտնում և թե՛ սահմանափակում է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՉԵՉՈՔ (ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ ԵՉԵԿԻԵԼԻՑ)

«Չեռք» բառը (BDB 388) ունի մի քանի նշանակություն և կիրառություն.

- 1. տառացի՝ (այսինքն՝ մարդու ձեռք)
 - ա. ունի ամբողջական մարդու խորհուրդը, 3:18; 18:8,17; 33:6,8
 - բ. մարդու թուլության խորհուրդը, 7:17,27; 21:7; 22:14
 - գ. օտարազգի թշնամիների խորհուրդը, 7:21; 11:9; 16:39; 21:31; 23:9,28; 28:10; 30:12; 34:27; 38:12; 39:23
 - դ. տառացիորեն ձեռք, 8:11; 12:7; 16:11; 37:17,19,20
 - ե. կեղծ առաջնորդների իշխանության խորհուրդը, 13:21,22,23; 34:10
 - զ. ժողովրդի խորհուրդը, 23:31,37,42,45; 25:14; 27:15; 28:9; 30:10,22,24,25; 31:11; 39:3

2. Աստվածության մարդեղության՝
 - ա. հայտնությունը ընդունելու, 1:3; 3:14,22; 8:1; 33:22; 37:1; 40:1 (2:9 և ս մեկ այլաբանություն՝ գալարը ձեռքի վրա)
 - բ. ՅԱՀՎԵԻ դատաստանի մեջ ունեցած իշխանությունը, 6:14; 13:9; 14:9,13; 16:27; 20:33; 25:7,13,16; 35:3; 39:21
 - գ. ՅԱՀՎԵԻ Ինքը (Նրա ներկայությունը), 20:22
 - դ. ՅԱՀՎԵԻ փրկելու գորությունը, 20:34 (հավանաբար Ելից գրքից ամենակարևոր կիրառությունը, տես՝ 3:20; 4:17; 6:1; 7:19; 13:3)
3. Մերովբեի մարդեղությունը, 1:8; 8:3; 10:7,8,12,21
4. Կործանիչ հրեշտակների մարդեղությունը, 9:1-2; 21:11
5. Խոստման կամ երդումի խորհուրդը, 17:18; 20:5 (երկու անգամ), 6,15,23,28; 36:7; 44:12; 47:14
6. Ուրախության խորհուրդը, 25:6
7. Հրեշտակի մարդեղության, 40:3,5; 47:3

11:22 «Բառնաբաս» Գործքում Բառնաբասը կարևոր կերպար է (տես՝ 4:36-37; 9:27): Նրա անունը գործածվում է քաջալերողի իմաստով, որը ակնհայտ է հ. 23-ում: Երուսաղեմի եկեղեցին դեռևս չէր համակերպվում հեթանոսների ընդունելության հետ: Տես Հատուկ Թեմա 4:36:

11:23 Հետաքրքիր է նկատել, որ երբ Բառնաբասը տեսնում է Հոգու միջոցով Աստծո շնորհքի ակտիվ ներկայությունը, նա քաջալերում է նրանց բոլորին մնալ հավատքի մեջ (տես՝ 14:22): Սա հստակ ցույց է տալիս, որ Աստծո ժողովուրդը պետք է ջերմեռանդություն ցուցաբերի համբերության՝ հարատևության մեջ (տես՝ Հատուկ Թեմա 14:22): Հրեաները և եկեղեցին շատ մտահոգ էին հեթանոսության անբարո մշակույթի պատճառով: Ավետարանը ոչ միայն փրկության ճիշտ պարզ է, այլ նաև աստվածապաշտության կոչ (տես՝ Մատթ.5:48; Հռոմ.8:28-29; 2 Կորնթ.3:18; Գաղ.4:19; Եփես.4:1; 1 Թեսաղ.3:13; 4:3; 1Պետ.1:15): Աստված ուզում է ունենալ մի այնպիսի ժողովուրդ, որը այս կործանվող աշխարհում կարտացոլի Իր բնավորությունը: Քրիստոնեության նպատակը միայն մեր մահից հետո երկինքը չէ, այլ հիմա Քրիստոսի պես լինելը, որպեսզի ուրիշներն էլ հավատան Քրիստոսին:

11:24 «նա բարի մարդ էր, Սուրբ Հոգով և հավատով լեցուն» Այս նկարագրությունը շատ նման է Գործքի 6:3,5 հունախոս հրեա հավատացյալներին (յոթին): Վաղ եկեղեցին լի էր այսպիսի մարդկանցով: Երանի թե մեր օրերի, մեր մշակույթի ու մեր եկեղեցու համար էլ այդպես ասվեր:

11:25 «Տարսն գնաց՝ Սողոսին փնտրելու» Այս ԲԱՅԸ եգիպտական Կոյնե Պապիրուսի մեջ (ոչ թե LXX) ակնարկում է, որ Սողոսին հեշտ չէր գտնվել: Միայն Ղուկասն է ՆԿ-ում կիրառում այս տերմինը (տես՝ Ղուկ.2:44,45; Գործք 11:25): Այս լռակց տարիները ըստ երևույթին առնչվում են Գաղ.1:21-ի հետ: Ժամանակի կոնկրետ տևողությունը հայտնի չէ, սակայն գրեթե տաս տարի է:

11:26 «եկեղեցի» Տես Հատուկ Թեմա 5:11:

■ **«բերեց նրան Անտիոք... առաջին անգամ Անտիոքում էր, որ աշակերտները Քրիստոնյա անվանվեցին»** Սկզբում «Քրիստոնյա» անունը նսեմացուցիչ դիմելաձև էր, որ հնարել էին հեթանոսները հավատացյալների համար: Չարմանալիորեն, սա շատ հազվադեպ տերմին է ՆԿ-ում: Բառի կազմությունը (*ianos* վերջավորությամբ) ընդօրինակված է այն տերմինի կազմությունից, որը արտահայտում է ինչ-որ մեկին աջակցելու կամ հետևելու իմաստը. օր.՝ «երովդեսի հետևորդները՝ հետևորդները (և նրա ընտանիքի) կոչվում են Հերովդեսականներ («Herodians» տես՝ Մարկ.3:6; 12:13; Մատթ.22:16): Այս հելլենիստական միջավայրում դրա գործածությունը ցույց է տալիս, թե ինչպես է Մեսիայի տիտղոսը (Եբրայերենում), որ հունարենով թարգմանված է Քրիստոս, այժմ դարձել Հիսուսի հետևորդների համար որպես անուն (Քրիստոնյա):

Հելլենիստական այս միջավայրում հնարավոր է, որ այս տերմինը տրվել է կառավարական պաշտոնյաների կողմից, որպեսզի կարողանան տարբերել հրեաներին հավատացյալներից:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 11:27-30

²⁷Եվ այն օրերին Երուսաղեմից մարգարեներ եկան Անտիոք: ²⁸Եվ նրանցից մեկը՝ Ազարոս անունով, վեր կացավ, Հոգով իմաց տվեց, թե ամբողջ աշխարհի վրա մեծ սով է լինելու, որը և եղավ Կողոզիոս կայսեր օրոք: ²⁹Բայց աշակերտները որոշեցին, որ իրենցից յուրաքանչյուրը՝ ըստ իր կարողության, օգնություն ուղարկի Հրեաստանում բնակվող եղբայրներին: ³⁰Որ և կատարեցին և Բառնաբասի ու Սողոսի ձեռքով երեցներին ուղարկեցին:

11:27 «մարգարեներ» ՆԿ-ում մարգարեները նշվում են մի քանի անգամ (տես՝ (տես՝ 13:1; 15:32; 21:10; 1 Կորնթ.12:28; 14:1-5, 29-33; Եփես.2:20; 4:10): Միշտ չէ, որ հայտնի է, թե արդյոք նրանց գործառույթը հիմնականում դեպքերը կանխասելն էր, թե ապագան ասելը, ինչպես 1 Կորնթացիների 14 և Գործք 2:17 (տես՝ 13:6; 15:32; 1 Կորնթ.12:28; 14:1-5, 29-33; Եփես.2:20; 4:10):

ՀԿ-ում մարգարեները դիտարկվում են որպես Աստծո խոսնակները՝ պատգամախոսները, որոնք բացատրում են Նրա հայտնությունները, սակայն ՆԿ-ի մարգարեները Աստծո հայտնության միջնորդները չեն: Սա վերապահված է ՆԿ-ի հեղինակներին, որոնցից շատերը Առաքյալներն էին կամ որևէ Առաքյալի հետ կապ ունեցող մարդիկ (Մարկոսը, Ղուկասը):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ

- I. Այն նույնը չէ, ինչ ՀԿ-ի մարգարեությունը (BDB 611), որն ուներ ՅԱՀՎԵից ներշնչված հայտնությունների ռաբբիական նշանակությունը (տես՝ Գործք 3:18,21; Հռոմ.16:26): Միայն մարգարեները կարող էին գրել Սուրբ Գիրքը:
 - Ա. Մովսեսը մարգարե էր կոչվում (տես՝ 2 Օր.18:15-21)
 - Բ. Պատմական գրքերը (Հեսուից մինչև Թագավորացներ՝ բացի Հռութից) կոչվում են «հին՝ նախկին մարգարեներ» (տես՝ Գործք 3:24):
 - Գ. Մարգարեները գրավեցին Քահանայապետների տեղը, որպես Աստծուց տեղեկության աղբյուր (տես՝ Եսայի - Մաղաքիա):
 - Դ. Եբրայական կանոնի երկրորդ բաժինը «Մարգարեներն» են (տես՝ Մատթ.5:17; 22:40; Ղուկ. 16:16; 24:25,27; Հռոմ.3:21):
- II. ՆԿ-ում այս հասկացությունը կիրառվում է մի քանի տարբեր կերպերով՝
 - Ա. Առնչվում է ՀԿ-ի մարգարեներին և նրանց ներշնչված խոսքին (տես՝ Մատթ.2:23; 5:12; 11:13; 13:14; Հռոմ.1:2):
 - Բ. Առնչվում է որևէ անհատի՝ անձի վերաբերող խոսքի, քան թե հավաքական խմբի (այսինքն՝ ՀԿ մարգարեները խոսում էին հիմնականում Իսրայելին):
 - Գ. Առնչվում է թե՛ Հովհաննես Մկրտչին (տես՝ Մատթ.11:9; 14:5; 21:26; Ղուկ.1:76) և թե՛ Հիսուսին որպես Աստծո Թագավորության քարոզիչների (տես՝ Մատթ.13:57; 21:11,46; Ղուկ.4:24; 7:16; 13:33; 24:19): Հիսուսը նաև հայտարարեց, որ Ինքն ավելի մեծ է քան մարգարեները (տես՝ Մատթ.11:9; 12:41; Ղուկ.7:26):
 - Դ. ՆԿ-ում գտնվող այլ մարգարեներ՝
 - 1. Հիսուսի կյանքի վաղ շրջանը, ինչպես արձանագրված է Ղուկասի Ավետարանում (այսինքն՝ Մարիամի հիշողությունները)
 - ա. Եղիսաբեթը (տես՝ Ղուկ.1:41-42)
 - բ. Չաքարիան (տես՝ Ղուկ.1:67-79)
 - գ. Միմեռնը (տես՝ Ղուկ.2:25-35)
 - դ. Աննան (տես՝ Ղուկ.2:36)
 - 2. Հեզնական կանխատեսումները (տես՝ Կայիափան, Հովհ.11:51)
 - Ե. Վերաբերում է այն մարդուն, որը ավետարանն է քարոզում (քարոզելու պարզևների ցանկը 1 Կորնթ.12:28-29; Եփես.4:11):
 - 2. Վերաբերում է եկեղեցում մշտապես գործող պարզևին (տես՝ Մատթ.23:34; Գործք 13:1; 15:32; Հռոմ.12:6; 1 Կորնթ.12:10,28-29; 13:2; Եփես.4:11): Երբեմն սա կարող է վերաբերել կանանց (տես՝ Ղուկ.2:36; Գործք 2:17; 21:9; 1 Կորնթ.11:4-5):
 - Ե. Վերաբերում է Հայտնության ապոկալիպտիկ գրքին (տես՝ Հայտն.1:3; 22:7,10,18,19)
- III. ՆԿ մարգարեները
 - Ա. ՆԿ-ի մարգարեները չեն մատուցում ներշնչված հայտնությունը այն նույն իմաստով ինչպես ՀԿ-ի մարգարեները (այսինքն՝ Սուրբ Գիրքը): Այս խոսքը հավանական է Գործք 6:7; 13:8; 14:22; Գաղ.1:23; 3:23; 6:10; Փիլ.1:27; Հուդա 3,20 համարներում «հավատքը» (այսինքն՝ լրիվ ավետարանի իմաստով) խոսքի կիրառությամբ:

Այս հասկացությունը պարզ է դառնում Հուդա 3-ում գործածվող հետևյալ ամբողջական արտահայտությունից. «այն հավատի համար, որ մեկընդմիջտ ավանդվեց սրբերին»: «Մեկընդմիջտ» /անգլ.՝ մեկ անգամ բոլորի համար/ հավատը վերաբերում է Քրիստոնեության ճշմարտություններին, վարդապետություններին, գաղափարներին, աշխարհընկալման ուսմունքներին: Աստվածաշնչում այս մեկ անգամ տրված շեշտադրումը այն հիմքն է, որն աստվածաբանորեն ՆԿ-ի գրքերի ներշնչանքը սահմանափակում է և արգելում հետագայում հայտնություն համարվող այլ գրքեր ավելացվեն: Գոյություն ունեն բազմաթիվ երկիմաստ, անորոշ և խրթին տեղեր ՆԿ-ում, սակայն

հավատացյալները հավատքով հաստատում են, որ ամեն ինչ, որ հավատքի և կյանքի համար «անհրաժեշտ» է, ՆԿ-ում բավարար հստակությամբ ներառված է: Այս հասկացությունը պատկերվում է այսպես կոչվող «հայտնության եռանկյունու» մեջ:

1. Աստված հայտնել է Իրեն պատմության ժամանակի մեջ (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ)
2. Նա ընտրել է որոշ մարդկանց՝ գրողների, որպեսզի փաստագրեն և մեկնաբանեն Իր գործերը (ՆԵՐՇՆՉԱՆՔ)
3. Նա մարդկանց տվել է Իր Հոգին, որպեսզի բացի նրանց միտքն ու սիրտը՝ այս գրքերը հասկանալու համար, պարտադիր չէ լիարժեք կերպով, այլ փրկության և Քրիստոնեական կյանք վարելու համար բավարար չափով (ԼՈՒՄԱՎՈՐՈՒՄ): Ուզում եմ ասել, որ ներշնչանքը սահմանափակված է Սուրբ Գրքի հեղինակներով գրողներով: Այլևս չկան հեղինակավոր գրվածքներ, տեսիլքներ կամ հայտնություններ: Կանոնը փակված է: Մենք ունենք այն ամբողջ ճշմարտությունը, որի կարիքն ունեինք Աստծուն պատշաճ կերպով արձագանքելու համար: Այս ճշմարտությունը լավագույնս երևում է աստվածաշնչյան հեղինակների համաձայնության մեջ՝ ի հակադրություն անկեղծ, աստվածավախ հավատացյալների անհամաձայնության: Ոչ մի ժամանակակից գրող կամ պատգամախոս չունի Աստվածաշնչյան հեղինակների գերբնական առաջնորդության մակարդակը:

Բ. ՆԿ-ի մարգարեները ինչ-որ առումով նման են ՀԿ-ի մարգարեներին՝

1. ապագա դեպքերի կանխատեսում (տես՝ Պողոս՝ Գործք 27:22; Ագաբուս՝ Գործք 11:27-28; 21:10-11; այլ անանուն մարգարեներ՝ Գործք 20:23)
2. հռչակում են դատաստան (տես՝ Պողոս՝ Գործք 13:11; 28:25-28)
3. սիմվոլիկ գործեր, որոնք տեսանելի կերպով պատկերում են իրադարձությունը (տես՝ Ագաբուս՝ Գործք 21:11)

Գ. Նրանք հռչակում են ավետարանի ճշմարտությունները երբեմն կանխատեսելի կերպերով (տես՝ Գործք 11:27-28; 20:23; 21:10-11), սակայն սա հիմնական նպատակը չէ: Առաջին Կորնթացիների գրքում մարգարեանալը հիմնականում ավետարանը փոխանցելն է (տես՝ 14:24,39):

Դ. Դրանք Սուրբ Հոգու ժամանակավոր միջոցներն են, որպեսզի հայտնեն Աստծո ճշմարտության ժամանակավոր և գործնական կիրառությունները յուրաքանչյուր նոր իրավիճակի, մշակույթի կամ ժամանակաշրջանի մեջ (տես՝ 1 Կորնթ.14:3):

Ե. Դրանք գործում էին Պողոսի ծառայության վաղ շրջանի եկեղեցիներում (տես՝ 1 Կորնթ.11:4-5; 12:28,29; 13:2,8,9; 14:1,3,4,5,6,22,24,29,31,32,37,39; Եփես.2:20; 3:5; 4:11; 1 Թեսաղ.5:20) և նշվում են *Դիդարքում* (գրված առաջին դարի վերջում կամ երկրորդ դարում. տարեթիվը հայտնի չէ) և հյուսիսային Աֆրիկայում երկրորդ և երրորդ դարերի Մոնտանիզմում:

IV. Արդյո՞ք ՆԿ-ի պարզևները դադարել են

Ա. Այս հարցին դժվար է պատասխանել: Հարցը պարզելու համար մեզ կօգնի պարզևների նպատակի սահմանումը: Արդյո՞ք դրանք ավետարանի քարոզչության սկզբնական շրջանում հաստատության համար էին նախատեսված, թե հանդիսանում են շարունակվող գործիքներ եկեղեցու համար, որպեսզի ծառայեն թե՛ եկեղեցուն, և թե՛ մեղավոր աշխարհին:

Բ. Արդյո՞ք այս հարցին պատասխանելու համար դիմում ենք եկեղեցու պատմությանը, թե հենց ՆԿ-ին: ՆԿ-ում ոչ մի տեղ չի նշվում, որ այս պարզևները ժամանակավոր էին: Այն մարդիկ, որոնք այս հարցին պատասխանելու համար փորձում են օգտագործել 1 Կորնթ. 13:8-13, չարաշահում են հեղինակի կողմից այս հատվածում նկատի ունեցած միտքը, այսինքն այն, որ նա փորձում էր հաստատել, որ ամեն ինչ, բացի սիրուց անցողիկ է:

Գ. Ուզում եմ ասել, քանի որ հեղինակություն հանդիսանում է ոչ թե եկեղեցու պատմությունը, այլ ՆԿ-ը, ապա հավատացյալները պետք է հաստատեն, որ պարզևները շարունակվում են: Սակայն կարծում եմ, որ մշակույթը ազդեցություն է թողնում մեկնաբանության վրա: Որոշ շատ հստակ տեքստեր այլևս կիրառելի չեն (այսինքն՝ սուրբ համբույրը, կանանց գլուխները քողարկելը՝ գլխաշոր կրելը, տնային եկեղեցիները, և այլն): Եթե մշակույթը ազդում է տեքստերի վրա, ապա ինչո՞ւ չի կարող ազդել նաև եկեղեցու պատմության վրա:

Դ. Սա պարզապես մի հարց է, որին հնարավոր չէ սպառնիչ պատասխան տալ: Որոշ հավատացյալներ պաշտպանում են «դադարելը», իսկ ոմանք «չդադարելը»: Այս հարցում, ինչպես և շատ այլ մեկնաբանական խնդիրներում, հավատացյալի սիրտն է կարևորը: ՆԿ-ը երկիմաստ և մշակութային է: Դժվարությունը որոշելն է, թե որ տեքստերն են, որ հակված են մշակույթի, պատմության ազդեցությանը ենթարկվելուն և որոնք՝ բոլոր

ժամանակների և բոլոր մշակույթների համար են (տես՝ Fee and Stuart's *How to Read the Bible for All Its Worth*, էջ՝ 14-19 և 69-77): Ահա թե որտեղ են ազատության և պատասխանատվության շուրջ քննարկումները այսքան կարևոր. դրանք արձանագրված են Հռոմ. 14:1-15:3 և 1 Կորնթ. 8-10: Հարցին պատասխանելու մեր կերպը կարևոր է երկու պատճառով՝

1. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է քայլի իր ունեցած հավատքի լույսի ներքո: Աստված նայում է քո սրտին և շարժառիթներին:
2. Յուրաքանչյուր հավատացյալ պետք է թույլ տա մյուս հավատացյալներին, որ քայլեն հավատքի իրենց հասկացողության մեջ: Պետք է աստվածաշնչյան սահմաններում հանդուրժողականություն ցուցաբերվի: Աստված ուզում է, որ իրար սիրենք այնպես, ինչպես Ինքն է մեզ սիրում:

Ե. Որպես այս հարցի ամփոփում ուզում եմ ասել, որ Քրիստոնեությունը հավատքի և սիրո կյանք է և ոչ թե կատարյալ աստվածաբանություն: Նրա հետ մեր ունեցած փոխհարաբերությունը, որն ազդում է ուրիշների հետ մեր փոխհարաբերության վրա, շատ ավելի կարևոր է, քան ստույգ տեղեկատվությունը կամ դավանության կատարելությունը:

11:28 «ամբողջ աշխարհի վրա մեծ սով...Կողոզիս» Այս աշխարհագրական արտահայտությունը վերաբերում է հռոմեական կայսրությանը (տես՝ 17:6,31; 19:27; 24:5): Կողոզիսը տիրել է մ.թ. 41-54-ին: Նա հաջորդել է Կալիգուլային և նախորդել՝ Ներոնին: Նրա տիրակալության ընթացքում մի քանի մեծ սովեր են գրանցվել (տես՝ Սևթոնիոսի *Կողոզիսի Կյանքը* 18:2 /Suetonius, *Life of Claudius* 18:2/): Համաձայն Չոզեֆուսի *Հնություններ* 20.5.2 գրքի ամենասարսափելի սովը, որ տեղի է ունեցել Պաղեստինում, դա եղել է մ.թ. 44-48 թվականների միջև ընկած ժամանակահատվածում:

11:29 «աշակերտները որոշեցին, որ իրենցից յուրաքանչյուրը՝ ըստ իր կարողության, օգնություն ուղարկի» Սա Հեթանոս եկեղեցիների գլխավոր ռազմավարություններից մեկն էր՝ զարգացնել իրենց փոխհարաբերությունը Երուսաղեմում գտնվող քույր եկեղեցու հետ: Սա հետագայում օրինակ էր ծառայելու Պողոսի եկեղեցիների համար (տես՝ 24:17; Հռոմ.15:2-28; 1 Կորն.16:1-4; 2 Կորնթ.8-9; Գաղ.2:10):

11:30 «երեցներին ուղարկեցին» Այստեղ առաջին անգամ նշվում է եկեղեցու «երեց» բառը (տես՝ 14:23; 15:2,4,6,22,23; 16:4; 20:17; 21:18): «Երեցներ» տերմինը «վերակացուներ», «եպիսկոպոսներ» և «հովիվներ» տերմինների հոմանիշն է (տես՝ Գործք 20:17,28 և Տիտոս 1:5,7): Երեց (*presbuteros*) տերմինը ունի ՀԿ-յան ցեղային ծագում, մինչ վերակացու (*episkopos*) տերմինն ունի հունական քաղաքային նահանգի կառավարման ծագում: Ըստ երևույթին սա վերաբերում է Երուսաղեմի եկեղեցու հատուկ առաջնորդների մի խմբի (տես՝ 15:2,6,22,23): ՆԿ-ի ավելի շատ հրեական գրքերը, ինչպիսիք օրինակ Հակոբոսի և Եբրայեցիներին ուղղված թղթերն են, դեռևս կիրառում էին երեցի, տեղական առաջնորդների հրեական հասկացությունները, բայց ոչ պարտադիր կերպով հովիվ տերմինը:

■ **«Բառնաբասի ու Սողոսի»** Շատ քննարկումներ են եղել այս հարցի շուրջ, թե արդյո՞ք Գաղ.2:2,10-ում նշված այցելությունը Երուսաղեմ վերաբերում է այս այցելությանը, թե Երուսաղեմի Խորհրդին, որը նշվում է Գործք 15-ում: Մենք շատ քիչ բան գիտենք Պողոսի կյանքի և ծառայության առաջին տարիների մասին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ էր հեթանոսների կողմից Քրիստոսին ընդունելը այսպիսի մեծ աստվածաբանական խնդիր:
2. Ապաշխարությունը Աստծո պարզևն է (հ. 18), թե՞ ուխտի պահանջ (Մարկ.1:15; Գործք 3:16,19; 20:21):
3. Ինչո՞ւ Բառնաբասը գնաց Սողոսին (Պողոսին) փնտրելու:

ԳՈՐԾՔ 12

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Հակոբոսը սպանվում է, իսկ Պետրոսը՝ բանտարկվում	Հերովդեսի բռնությունը եկեղեցու հանդեպ	Հերովդես Ագրիպայայի հալածանքը	Ավելի հալածանքներ	Պետրոսի ձերբակալությունը և հրաշքով ազատվելը
12:1-5	12:1-5	12:1-5	12:1-5	12:1-5
Պետրոսի բանտից ազատվելը	Պետրոսը ազատվեց բանտից		Պետրոսը ազատվում է բանտից	
12:6-17	12:6-19	12:6-11	12:6-10	12:6-11
		12:12-17	12:11 12:12-15 12:16-17	12:12-17
12:18-19		12:18-19	12:18-19ա 12:19բ	12:18-19
Հերովդեսի մահը	Հերովդեսի դաժան մահը	Հերովդես Ագրիպայայի մահը	Հերովդեսի մահը	Հալածողի մահը
12:20-23	12:20-24	12:20-23	12:20 12:21-23	12:20-23
	Բառնաբասն ու Սողոսը միասին նշանակված	Բառնաբասն ու Սողոսը Կիպրոսում (12:24-13:12)		Բառնաբասն ու Սողոսը վերադառնում են Անտիոք
12:24-25	12:25-13:3	12:24-25	12:24 12:25	12:24 12:25

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
 ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հերովդես Մեծի տոհմաժառը (ավելի մանրամասն տեղեկության համար նայեք Փլավիոս Ջոզեֆուսի *Հրեաների Հնությունները* գրքի Ինդեքս բաժինը):

- I. Հերովդես Մեծը
 - Ա. Հրեաստանի Թագավոր (Ք. Ա. 37-4)
 - Բ. Մատթ.2:1-19; Ղուկ.1:5
- II. Նրա որդիները
 - Ա. Հերովդես Ֆիլիպ (Մարիաննի Միմոնի որդին)
 - 1. Հերովդիայի ամուսինը
 - 2. Իստուրիայի Երրորդապետը (Ք.Ա.4- մ.թ.34)
 - 3. Մատթ.14:3; Մարկ.6:17
 - Բ. Հերովդես Ֆիլիպ (Կլեոպատրիայի որդին)
 - 1. Գալիլիա Ծովի հյուսիսային և արևմտյան շրջանների Երրորդապետ (Ք.Ա.4- մ.թ.34)
 - 2. Ղուկ.3:1
 - Գ. Հերովդես Անտիպաս
 - 1. Գալիլիայի և Բերյայի Երրորդապետը (Ք.Ա. 4 - մ.թ. 39)
 - 2. Հովհաննես Մկրտչին մահապատժի ենթարկողը
 - 3. Մատթ.14:1-12; Մարկ.6:14-29; Ղուկ.3:19; 9:7-9; 13:31; 23:6-12,15; Գործք 4:27; 13:1
 - Դ. Արքեպայոս՝ Հերովդես Ethnarch
 - 1. Հրեաստանի, Սամարիայի և Իդումիայի կառավարիչ (Ք.Ա.4 –մ.թ. 6)
 - 2. Մատթ.2:22
 - Ե. Արիստորուոս (Մարիաննի որդին)
 - 1. նրա միակ որդին՝ Հերովդես Ագրիպաս I
 - 2. Կառավարում էր ամբողջ Պաղեստինի վրա (մ.թ. 41-44)
 - 3. Սպանեց Հակոբոսին և Պետրոսին բանտարկեց
 - 4. Գործք 12:1-24; 23:35
 - (ա) Նրա որդին Հերովդես Ագրիպաս II-ն էր՝ հյուսիսային տարածքների Երրորդապետը (մ.թ. 50-70)
 - (բ) Նրա դուստրն էր Բերնիկեն
 - (1) իր եղբոր կենակիցը
 - (2) Գործք 25:13-26:32
 - (գ) Նրա դուստրն էր Դրուսիլլան
 - (1) Ֆելիքսի կինը
 - (2) Գործք 24:24

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 12:1-5
¹Այդ ժամանակներում Հերովդես թագավորն իր ձեռքն երկարեց, որ եկեղեցուց մի քանիսին չարչարի: ²Եվ Հակոբոսին՝ Հովհաննեսի եղբորը, սրով սպանեց: ³Եվ տեսնելով, որ դա հրեաներին հաճելի է, նրանից հետո Պետրոսին էլ բռնեց (Բաղարջակերաց օրերն էին): ⁴Երբ նրան բռնեց, բանտ նետեց և հանձնեց չորս զինվորական քառյակի, որ հսկեն նրան, և կամենում էր Չատկից հետո նրան ժողովրդի առաջ բերել: ⁵Պետրոսը բանտում պահված էր, բայց նրա համար եկեղեցում անդադար աղոթք էր արվում առ Աստված:

12:1 «Հերովդես» Սա վերաբերում է Հերովդես Ագրիպաս I-ին: Նա տիրել է Պաղեստինի տարբեր շրջանների վրա մ.թ.37-44: Նա մեծացել է Հռոմում և դարձել Գայիոսի ընկերը, որը հաջորդեց Տիրերիոսին և հետագայում դարձավ Կալիգուլա Կայսրը: Հրեաները պատրաստակամորեն ընդունեցին Հերովդեսին որպես առաջնորդ, քանի որ նրա տատիկը (Մարիամը) Համոնյան՝ Մակաբայեցի (այսինքն՝ հրեա հայրենասեր) թագուհի էր: Նա հուդայականության խիստ հետևորդներից էր (սակայն հավանաբար քաղաքական նկատառումներով): Այս Հերովդեսի վերաբերյալ ավելի մանրամասն քննարկումների համար կարդացեք Չոզեֆուսի *Հնություններ*, 19.7.3; 19.8.2:

■ **«եկեղեցի»** Տե՛ս Հատուկ Թեմա 5:11:

■ **«որ մի քանիսին չարչարի»** Հերովդեսը այսպես էր վարվում, որպեսզի շահեր հրեա առաջնորդների աջակցությունն ու հավանությունը (տես՝ հհ. 3,11): Հռոմեացի առաջնորդները նույն բանը արեցին (տես՝ 24:27; 25:9):

Ղուկասը մի քանի անգամ կիրառում է այս տերմինը (տես՝ 7:6,19; 12:1; 14:2; 18:10): Մեպտուազինտայում սա տարածված տերմին էր վատ վերաբերմունք ցուցաբերելու համար: Ղուկասի բառապաշարը մեծապես ազդեցության էր ենթարկվել Մեպտուազինտայից:

12:2 «Հակոբոսին՝ Հովհաննեսի եղբորը, սրով սպանեց» Սա վերաբերում է Հակոբոս Առաքյալին, որը Հովհաննեսի եղբայրն էր (տես՝ Ղուկ.5:10; 6:14; 8:51; 9:28,54): Նա աշակերտների ներքին օղակի անդամներից մեկն էր (տես՝ Մատթ.17:1; 26:37; Մարկ.5:37; 9:2; 14:33; Ղուկ.9:28): Ինչո՞ւ պետք է Հակոբոսը սպանվեր, իսկ Պետրոսի կյանքը խնայվեր. սա Աստծո առեղծվածներից է: Սրով գլխատելը հռոմեացի քաղաքացիների համար սովորական քրեական մահապատժի մեթոդ էր համարվում, սակայն հրեաների համար դա զարշելի էր:

Հետաքրքիր է, որ արդեն այդ ժամանակ վաղ եկեղեցին անհրաժեշտ չհամարեց Հակոբոսին փոխարինող մեկին նշանակել, ինչպես արվեց Հուդայի դեպքում (տես՝ 1:15-20): Պատճառները հստակ չեն, սակայն հավանական է, որ Հուդային փոխարինող նշանակեցին նրա դավաճանության և ոչ թե մահվան պատճառով (տես՝ 1:15-26):

Ոմանք հնարավոր է պնդեն, որ Պողոսը Հակոբոսին՝ Հիսուսի կիսով չափ եղբորը և Երուսաղեմի եկեղեցու առաջնորդին առաքյալ անվանելով, (տես՝ Գաղ.1:19) դրանով հաստատում է փոխարինումը: Սակայն այս հարցը կապված է ի հակադրություն սկզբնական Տասներկու առաքյալների պաշտոնական դիրքին՝ առաքյալի շարունակելի պարզևի հետ (տես՝ Եփես.4:11):

Կարդալով Ջեյմս Դ. Գ. Դանի, *Նոր Կտակարանում Միաբանությունն ու Բաժանությունը* (James D. G. Dunn, *Unity and Diversity in the New Testament*) գիրքը ինձ ստիպեց մտածել առաջին դարի եկեղեցում իշխանության հնարավոր տարբեր կառուցվածքների շուրջ:

1. Երուսաղեմի Առաքյալները
2. Առաքյալների ներքին օղակը (Պետրոս, Հակոբոս, Հովհաննես)
3. Հակոբոսը՝ Տիրոջ կես-եղբայրը, որն առաջնորդում էր Երուսաղեմի եկեղեցին
4. Յոթը (Գործք 6), որոնք հունախոս հրեաների առաջնորդներն էին
5. Հետագայում Պողոսն ու Բառնաբասը, և նրանց կողմից Սիրիայի Անտիոք ուղարկված մարդիկ:

Սրան կարելի է ավելացնել Քրիստոնեությանը, Հուդայականությանը, Գնոստիկներին, Էբիոնիտներին հարող աղանդները: Սրանցից յուրաքանչյուրը ուներ իր սեփական առաջնորդական կազմը: Միաբանությունը, որի մասին Ղուկասը հաճախ նշում է, դժվար էր պահպանել: Հիսուսի քարոզները և Սուրբ Գրքերը բավականին անորոշ էին բազմաթիվ մեկնություններ թույլ տալու համար: Այս է պատճառը, որ առաջին դարերում կազմակերպվեց «հավատքի հսկողություն»: Անհրաժեշտ էր ունենալ խմբի աստվածաբանությունը գնահատող չափանիշ: ՆԿ-ի Հոգով առաջնորդելի արագ աճող շեշտադրումները փոխարինվեցին արևելյան և արևմտյան եկեղեցական կենտրոնների կազմավորված կառույցներով: Այս սերունդների համար Ուղղափառությունը, որոնք հաջորդում էին Հիմնադիրներին և Ականատեսներին, կարևոր հարց էր:

12:3 «Պետրոսին էլ բռնեց/ձերբակալեց/» Սա Պետրոսի երրորդ ձերբակալությունն էր (տես՝ 4:3; 5:18): Քրիստոնյաներին հալածանքները չէին խնայում:

■ **«Բաղարջակերաց օրերն էին»** Սա վերաբերում է Չատկի Տոնին (տես՝ հ. 4), որը ուղեկցվում է Բաղարջակերաց Տոնով, որն էլ տևում էր ութ օր (տես՝ Ելից 12:18; 23:15; Ղուկ.22:1): Երկուսի ժամանակ էլ տոնվում էր Եգիպտոսի գերությունից Իսրայելի ազատագրումը: Այն տոնում էին Նիսսան 14-21-ին, որը ըստ հրեական լուսնային օրացույցի համընկնում է մեր մարտ կամ ապրիլ ամիսների հետ:

12:4 «չորս զինվորական քառյակի» Սա պետք է որ նշանակի զինվորների քառյակ, որոնց օրական չորս անգամ փոխարինում էին կամ տասնվեց տղամարդ: Այս թվից հայտնի է, որ Հերովդեսը վախենում էր Պետրոսի հավանական փախուստից (տես՝ 5:19):

12:5 «նրա համար եկեղեցում անդադար աղոթք էր արվում առ Աստված» Եկեղեցին աղոթում է (տես՝ հ.12), սակայն անակնկալի է գալու, երբ Աստված պատասխանի: «Անդադար» շատ արտահայտիչ ՄԱԿԲԱՅ է (տես՝ Ղուկ.22:44): ՆԿ-ում այն միայն երեք անգամ է կիրառվում (տես՝ 1 Պետ.1:22):

<p>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԱՂՈՑՔ</p> <p>I. Ներածություն</p> <p>Ա. Աղոթքը կարևոր է համաձայն Հիսուսի թողած օրինակի.</p> <p>1. Անձնական աղոթք - Մարկ.1:35; Ղուկ.3:21; 6:12; 9:29; 22:29-46</p>

2. Տաճարի մաքրում - Մատթ.21:13; Մարկ.11:17; Ղուկ.19:46

3. Աղոթքի նմուշ՝ օրինակ - Մատթ.6:5-13; Ղուկ.11:2-4

Բ. Աղոթքը, հոգատար Աստծո հանդեպ, որը ներկա է, կամենում է և կարող է մեր աղոթքների շնորհիվ մեր և ուրիշների օգտին գործել, մեր հավատքը շոշափելի գործողության մեջ դնելն է:

Գ. Աստված Ինքն Իրեն սահմանափակել է շատ ոլորտներում Իր զավակների աղոթքների հիման վրա գործելիս (տես՝ Հակ.4:2):

Դ. Աղոթքի գլխավոր նպատակը Երրորդության Աստծո հետ մեր փոխհարաբերությունն ու անցկացրած ժամանակն է:

Ե. Աղոթքի շրջանակը կարող է իր մեջ ներգրավվել հավատացյալների հետ առնչվող, անհանգստացնող ամեն ինչ և ամեն ոք: Մենք կարող ենք հավատքով մեկ անգամ աղոթել, կամ նորից ու նորից, եթե այդ միտքը կամ անհանգստությունը վերադառնում է:

Զ. Աղոթքը կարող է բովանդակել մի քանի տարր.

1. Փառաբանություն և երկրպագություն Երրորդության Աստծուն

2. Գոհություն Աստծուն Իր ներկայության, հաղորդակցության և հոգածության համար

3. Մեր մեղքերի խոստովանությունը, թե՛ անցյալի և թե՛ ներկայի

4. Խնդրվածք մեր ունեցած կարիքների կամ փափագների համար

5. Բարեխոսություն, որի ժամանակ Հոր առջև ենք բարձրացնում ուրիշների կարիքները

Է. Բարեխոսական աղոթքը առեղծվածային է: Այն մարդկանց, ում համար մենք աղոթում ենք, Աստված մեզնից ավելի շատ է սիրում, մինչդեռ մեր աղոթքները հաճախ ազդում են ինչ-որ փոփոխության, պատասխանի կամ կարիքի վրա ոչ միայն մեր ներսում, այլ նաև նրանց:

II. Աստվածաշնչյան աղբյուրը

Ա. Հին Կտակարան

1. Բարեխոսական աղոթքի մի քանի օրինակներ՝

ա. Աբրահամը աղերսում է Սողոմի համար. Ծննդ.18:22բ

բ. Մովսեսի աղոթքները Իսրայելի համար.

(1) Ելից 5:22-23

(2) Ելից 32:31բ

(3) 2 Օրինաց 5:5

(4) 2 Օրինաց 9:18,25բ

գ. Սամվելը աղոթում է Իսրայելի համար.

(1) 1 Թագավորաց 7:5-6,8-9

(2) 1 Թագավորաց 12:16-23

(3) 1 Թագավորաց 15:11

դ. Դավիթը աղոթում է իր երեխայի համար, 2 Թագավորաց 12:16-18

2. Աստված փնտրում է բարեխոսների, Եսայի 59:16

3. Գիտակցված, չխոստովանված մեղքը կամ անզոջում վերաբերմունքը ազդում է մեր աղոթքների վրա

ա. Սաղմոսաց 66:18

բ. Առակաց 28:9

գ. Եսայի 59:1-2; 64:7

Բ. Նոր Կտակարան

1. Որդու և Հոգու բարեխոսական ծառայությունը

ա. Հիսուսը

(1) Հռոմեացիս 8:34

(2) Եբրայեցիս 7:25

(3) 1 Հովհաննես 2:1

բ. Սուրբ Հոգին - Հռոմեացիս 8:26-27

2. Պողոսի բարեխոսական ծառայությունը

ա. Աղոթում է հրեաների համար՝

(1) Հռոմեացիս 9:1բ

(2) Հռոմեացիս 10:1

բ. Աղոթում է եկեղեցիների համար՝

(1) Հռոմեացիս 1:9

(2) Եփեսացիս 1:16

(3) Փիլիպեցիս 1:3-4,9

(4) Կողոսացիս 1:3,9

(5) 1 Թեսաղոնիկեցիս 1:2-3

- (6) 2 Թեսաղոնիկեցիս 1:11
- (7) 2 Տիմոթեոս 1:3
- (8) Փիլիմոն հ. 4
- գ. Պողոսը խնդրում է եկեղեցիներին, որ աղոթեն իր համար
 - (1) Հռոմեացիս 15:30
 - (2) 2 Կորնթացիս 1:11
 - (3) Եփեսացիս 6:19
 - (4) Կողոսացիս 4:3
 - (5) 1 Թեսաղոնիկեցիս 5:25
 - (6) 2 Թեսաղոնիկեցիս 3:1
- 3. Եկեղեցու բարեխոսական ծառայությունը
 - ա. Աղոթել միմյանց համար
 - (1) Եփեսացիների 6:18
 - (2) 1 Տիմոթեոս 2:1
 - (3) Հակոբոս 5:16
 - բ. Աղոթք հատուկ խմբերի համար
 - (1) մեր թշնամիների՝ Մատթ.5:44
 - (2) Քրիստոնյա մշակների՝ Եբր.13:18
 - (3) իշխանների՝ 1 Տիմ.2:2
 - (4) հիվանդների՝ Հակ.5:13-16
 - (5) ետ նահանջածների՝ 1 Հովհ.5:16
- III. Պատասխանված աղոթքների համար պայմանները՝
 - Ա. Մեր փոխհարաբերությունը Քրիստոսի և Սուրբ Հոգու հետ՝
 - 1. Նրա մեջ բնակվելը՝ Հովհ.15:7
 - 2. Նրա անունով՝ Հովհ.14:13,14; 15:16; 16:23-24
 - 3. Հոգով՝ Եփես.6:18; Հուդա 20
 - 4. Աստծո կամքի համաձայն՝ Մատթ.6:10; 1 Հովհ. 3:22; 5:14-15
 - Բ. Շարժառիթները
 - 1. Առանց վարանելու՝ Մատթ.21:22; Հակ.1:6-7
 - 2. Խոնարհությամբ և ապաշխարությամբ՝ Ղուկ.18:9-14
 - 3. Վատ նպատակով խնդրանք՝ Հակ.4:3
 - 4. Եսասիրությամբ՝ Հակ.4:2-3
 - Գ. Այլ ենթակետեր.
 - 1. Հարատևություն
 - ա. Ղուկաս 18:1-8
 - բ. Կողոսացիս 4:2
 - 2. Շարունակ խնդրել՝
 - ա. Մատթեոս 7:7-8
 - բ. Ղուկաս 11:5-13
 - գ. Հակոբոս 1:5
 - 3. Տան մեջ անհամաձայնությունը՝ 1 Պետրոս 3:7
 - 4. Գիտակից՝ հայտնի մեղքերից զերծ՝
 - ա. Մաղմոս 66:18
 - բ. Առակաց 28:9
 - գ. Եսայի 59:1-2
 - դ. Եսայի 64:7
- IV. Աստվածաբանական եզրակացություն
 - Ա. Ինչպիսի՞ արտոնություն: Ինչպիսի՞ հնարավորություն: Ինչպիսի՞ պատասխանատվություն և պարտականություն:
 - Բ. Հիտուն է մեր օրինակը. Հոգին մեր առաջնորդն է, իսկ Հայրը՝ անհամբեր սպասում է:
 - Գ. Այն կարող է փոխել ձեզ, ձեր ընտանիքը, ձեր ընկերներին և աշխարհը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 12:6-17

Նավ երբ Հերովդեսը նրան դուրս պիտի բերեր, այդ նույն գիշեր Պետրոսը, երկու շղթայով կապված, քնած էր երկու զինվորների միջև: Եվ պահապանները դռան առաջ բանտն էին հսկում: Նավ ահա Տիրոջ հրեշտակը կանգնեց մոտը, և բանտի մեջ լույս ծագեց. և բոթեց Պետրոսի կողը, նրան արթնացրեց, ասելով. «Իսկույն վեր կաց»: Եվ շղթաներն ընկան նրա

ձեռներից.⁸ և հրեշտակն ասաց նրան. «Գոտիդ կապի՛ր և հողաթափերդ հագի՛ր ոտներիդ»: Եվ նա այդպես արեց: Եվ ասաց նրան. «Հանդերձներդ գցի՛ր վրադ և իմ հետևից ե՛կ»: ⁹Եվ նա դուրս եկավ, գնում էր նրա հետևից ու չգիտեր, թե հրեշտակի արածն իրական է, քանի որ կարծում էր, թե երազ է տեսնում: ¹⁰Եվ երբ նրանք անցան առաջին պահապաններից և երկրորդներից, եկան մինչև երկաթե դուռը, որ դեպի քաղաք էր տանում, որ ինքնիրեն բացվեց նրանց առաջ, և դուրս գալով՝ մի փողոց անցան, և շուտով հրեշտակը նրանից հեռացավ: ¹¹Եվ Պետրոսն ուշքի գալով ասաց. «Հիմա իսկապես իմացա, որ Տերն Իր հրեշտակին ինձ մոտ ուղարկեց և ինձ փրկեց Հերովդեսի ձեռքից և հրեաների բոլոր ակնկալություններից»: ¹²Եվ մտածելով՝ եկավ Մարիամի՝ Մարկոս կոչված Հովհաննեսի մոր տունը, որտեղ շատերը հավաքված աղոթք էին անում: ¹³Եվ փողոցի դուռը թակեց, մի աղախին՝ Հովդե անունով, մոտ եկավ, որ ականջ դնի: ¹⁴Եվ երբ Պետրոսի ձայնը ճանաչեց, ուրախությունից դուռը չբացեց, այլ ներս վազեց և պատմեց, թե Պետրոսը դռանը կանգնած է: ¹⁵Նրանք էլ նրան ասացին. «Գժվել ես»: Իսկ նա պնդում էր, թե այդպես է: Այն ժամանակ նրանք ասացին՝ նրա հրեշտակն է: ¹⁶Բայց Պետրոսը շարունակում էր դուռը թակել: Երբ բացեցին, տեսան նրան և զարմացան: ¹⁷Եվ նա ձեռքով նշան արեց նրանց, որ լուռ մնան ու նրանց պատմեց, թե ինչպես Տերը նրան բանտից հանեց: Ապա ասաց, «Այս բանը պատմեցե՛ք Հակոբոսին և եղբայրներին»: Եվ դուրս եկավ, գնաց ուրիշ տեղ:

12:6 «այդ նույն գիշեր» Ղուկասի գրվածքներին հատուկ են ժամանակացույցերը (տես՝ հհ. 3,4,5,6,7,8, 10,18): Մակայն գգույշ եղեք սա որպես արևմտյան, իրար հաջորդող, ժամանակագրական պատմություն մեկնաբանելուց: Ղուկասը աստվածաբանական, ավետարանչական նպատակ է հետապնդում:

■ **«երկու զինվորների միջև»** Այս համարը մատնանշում է Պետրոսի փախուստի անհնարին լինելը: Կարելի է ասել, որ նրանք սպասում էին, որ շուտով փորձ կլինի նրան ազատ արձակելու (տես՝ 5:19):

12:7 «և ահա Տիրոջ հրեշտակը /հանկարծ/ կանգնեց մոտը» Անսովոր է, որ Տիրոջ հրեշտակի գերբնական միջամտությունը (տես՝ 5:19; 7:30,35,38,53; 8:26; 10:3,7,22) և Սուրբ Հոգին (տես՝ 8:29,30; 10:19) իրար փոխարինում են ամբողջ Գործք Առաքելոցի ընթացքում: Ըստ երևույթին Հոգին խոսում է ինտուիտիվ կերպով, իսկ հրեշտակը՝ արտաքին Ֆիզիկական դրսևորմամբ: Հետաքրքիր է այս համատեքստում տեսնել բնականի և գերբնականի համադրությունը (նման է Ելիցում արձանագրված պատուհասներին):

■ **«Իսկույն վեր կաց»** Սա ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը արտահայտում է հրատապություն: Ինչո՞ւ էր հրեշտակը շտապում: Արդյո՞ք նա չէր վերահսկում իրավիճակը:

12:8 «Գոտիդ կապի՛ր և հողաթափերդ հագի՛ր ոտներիդ» Սրանք երկուսն էլ ԱՈՐԻՍՏ ՉԵՉՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ են:

■ **«Հանդերձներդ գցի՛ր վրադ և իմ հետևից ե՛կ»** Սա ԱՈՐԻՍՏ ՉԵՉՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որին հաջորդում է ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: Հրեշտակը իսկապես շտապում էր կատարել այս գործը: Սա մի անհանգիստ հրեշտակ էր:

12:9 Պետրոսին պարզ չէր, արդյոք սա տեսիլք էր, երազ, թե՞ իրականություն (տես՝ հ.11-12; 10:17,19; 11:5):

12:11 «Եվ Պետրոսն ուշքի գալով» Ղուկասը կիրառում է նմանօրինակ արտահայտություն, երբ նկարագրում է Անառակ Որդուն (տես՝ Ղուկ.15:17): Հանկարծակի իր վերապրումների իրականությունն ու դրանց հետևանքները սթափեցրին նրան (տես՝ հ. 12):

12:12 «Մարիամի տունը» Մարիամը շատ տարածված անուն էր: Ավետարաններում նշված Մարիամ անունով մի քանի կանայք կան՝

1. Հիսուսի մայրը (տես՝ Ղուկ.1:27)
2. Մարիամ Մագդաղենացին՝ Գալիլացի աշակերտ (տես՝ Ղուկ.8:2; 24:10)
3. Հակոբոսի և Հովհաննեսի մայրը (տես՝ Ղուկ.24:10)
4. Մարթայի և Ղազարոսի քույրը (տես՝ Ղուկ.10:39,42)
5. Կղեովպասի կինը (տես՝ Հովհ.19:25)
6. Հովհաննես Մարկոսի մայրը (այստեղ)

■ **«Հովհաննեսի մայրը»** Սա վերաբերում է Հովհաննես Մարկոսի մորը: Վաղ եկեղեցին Երուսաղեմում հավաքվում էր այս ընտանիքի տանը (տես՝ Գործք 12:12): Այս տանն էր նաև, որ Հիսուսը Իր հարությունից հետո երեք անգամ հայտնվեց և Պենտեկոստեի օրը եղավ Սուրբ Հոգու գալուստը:

Հովհաննես Մարկոսը ընկերակցում էր Պողոսին և իր քեռորդի՝ Բառնաբասին (տես՝ Կող.4:10) առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ (տես՝ Գործք 12:25-13:13): Ինչ-որ պատճառով նա թողնում է այս թիմը և վերադառնում հայրենի տուն (տես՝ Գործք 15:38): Բառնաբասը կամենում էր նրան ընդգրկել իրենց երկրորդ միսիոներական ճամփորդության խմբի մեջ, սակայն Պողոսը մերժում է (տես՝ Գործք 15:36-41): Սա պատճառ է հանդիսանում, որ Պողոսն ու Բառնաբասը բաժանվեն իրարից: Բառնաբասը Հովհաննես Մարկոսին տանում է Կիպրոս (տես՝ Գործք 15:39): Հետագայում, մինչ Պողոսը բանտում էր, նշում է Հովհաննես Մարկոսի մասին դրական խոսքերով (տես՝ Կող.4:10) և հետագայում դարձյալ Պողոսի երկրորդ բանտարկության ժամանակ՝ հենց նրա մահից առաջ, նա կրկին նշում է Հովհաննես Մարկոսի մասին (տես՝ 2 Տիմ.4:11):

Ըստ երևույթին Հովհաննես Մարկոսը դարձավ Պետրոսի միսիոներական թիմի անդամ (տես՝ 1 Պետ.5:13): Եվսեբիոսի *Եկեղեցու Պատմությունը* (Eccl. His 3.39.12) ներկայացնում է Հովհաննես Մարկոսի և Պետրոսի կապի մասին մի հետաքրքիր պատմություն.

«Իր գրքում Պապիասը մեզ է ներկայացնում կարծիքներ Տիրոջ խոսքերից, որոնք ընդունվել էին Արիստոնի կողմից կամ անմիջապես սովորել էին Հովհաննես երեցից: Այս բաները գիտնականների ուշադրությանը ներկայացնելով, պետք է, որ հետևեմ այն սահմանումներին, որ նա արդեն իսկ մեջբերել էր Մարկոսի՝ ավետարանի հեղինակի վերաբերյալ որոշակի տեղեկությունների հետ միասին:

Սա նույնպես, ինչպես երեցն էր ասում. «Մարկոսը, որը Պետրոսի թարգմանիչն էր, մանրամասնորեն գրեց, սակայն ո՛չ հերթականությամբ, այն ինչ հիշեց Տիրոջ խոսքերի և գործերի մասին: Քանի որ նա ինքը չէր լսել Տիրոջը կամ եղել Նրա հետևորդներից մեկը, այլ հետագայում, ինչպես որ ասացի, եղել է Պետրոսի հետևորդներից: Սովորաբար Պետրոսը հարմարեցնում էր իր ուսմունքը իրավիճակի հետ, առանց Տիրոջ խոսքերի շուրջ համակարգված փոփոխությունների, այնպես որ Մարկոսը բավականաչափ ազատ էր գրելու հենց այն բաները ինչ հիշում էր: Քանի որ նա միայն մի նպատակ ուներ՝ ոչինչ բաց չթողնել իր լսածներից, և թույլ չտալ որևէ սխալ արտահայտություն դրանց վերաբերյալ» (էջ՝ 152):

Այս մեջբերման մեջ Պապիասը նկատի ունի «Հովհաննես երեցին»: Իրենեոսն ասում է «և այս բաները վկայություն են տրվում Պապիասի կողմից իր գրվածքներում՝ Հովհաննեսի ունկնդրին, և Պոլիկարպի գործընկերոջը»: Սա ակնարկում է, որ Պապիասը դա լսել էր Հովհաննես Առաքյալից:

■ **«Հատերը հավաքված աղոթք էին անում»** Քերականորեն այս բառերը հայտնում են, որ եկեղեցին հավաքվել էր և նպատակով մնացել էր աղոթքի մեջ (ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԻՆ հաջորդում է ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ԴԵՐԲԱՅԸ):

12:13 «փողոցի /դարպասի/ դուռը» Սա մի փոքր դուռ էր փողոցի վրա: Վերևի հարկում կար ավելի մեծ դուռ:

■ **«Հռովղե»** Նրա անունը նշանակում է «վարդ»: Արոյո՞ք այս աղջիկը աշխատում էր տանտիրոջ համար, թե հանդիսանում էր այդ աղոթքի խմբի մի անդամ, հայտնի չէ:

12:15 «Գժվել ես» Եկեղեցին աղոթում էր Աստծուն, որ Նա գործի, սակայն խիստ զարմացավ (տես՝ հ. 16), երբ Նա գործեց:

■ **«նրանք ասացին»** Այս համատեքստում կա երկու ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակի բայ, որոնք ակնարկում են, որ Հռովղեի հայտարարությունը և վերնատանը գտնվող մարդկանց արձագանքը կրկնվում է մի քանի անգամ:

■ **«Նրա հրեշտակն է»** Ղուկասի գրքերում հրեշտակները կարևոր դեր են խաղում: Ըստ երևույթին հրեաները հավատում էին, որ մարդու պահապան հրեշտակը կարող էր տվյալ մարդու ֆիզիկական կերպարանքով ներկայանալ (պահապան հրեշտակների վերաբերյալ հրեական աղբյուրների և հավատամքի շուրջ լավագույն քննարկումների համար նայեք *Հուդայիկա Հանրագիտարանը*, հատոր 2, էջ՝ 963 / *Encyclopaedia Judaica*): Այսպիսի հավատամքի համար սուրբգրային որևէ հիմք չկա: Հրեշտակաբանության այս զարգացումը հավանաբար սկիզբ է առել Չրադաշտության մեջ *fravashi* գաղափարից: Ռաբբիական հրեշտակաբանության մեծ մասը հնարավոր է այս պարսկական ազդեցությանն է ենթարկվել: Գոյություն ունեն մի քանի սուրբգրային վկայություններ նոր հավատացյալների համար պահապան հրեշտակների վերաբերյալ (տես՝ Մատթ.18:10): Հրեշտակները փրկվածների ծառաներն են (տես՝ Եբր.1:14):

12:17 «ձեռքով նշան արեց նրանց, որ լուռ մնան» Սա հաստատ ականատեսի կողմից տրված մանրամասն տեղեկություն է (տես՝ 13:16): Ղուկասը այս ժեստը արձանագրում է իր գրքում մի քանի անգամ (տես՝ 13:16; 19:33; 21:40):

■ **«Այս բանը պատմեցրք Հակոբոսին և եղբայրներին»** Սա ցույց է տալիս, որ Հակոբոսը՝ Հիսուսի կես-եղբայրը, արդեն իսկ Երուսաղեմի եկեղեցու առաջնորդն էր (տես՝ 15:13-21):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱԿՈՐՈՍՐ ՀԻՍՈՒՄԻ ԿԵՍ-ԵՂԲԱՅՐԸ

Ա. Նրան կոչում էին «Հակոբոս Արդար» և հետագայում մականվանվեց «ուղտի ծնկներ», քանի որ մշտապես աղոթում էր իր ծնկների վրա (Հեզեիալուսից՝ Եվսեբիոսի մեջբերմամբ):

Բ. Հակոբոսը նախքան Հիսուսի հարությունը հավատացյալ չէր (տես՝ Մարկ.3:21; Հովհ.7:5): Հարությունից հետո Հիսուսը անձնապես հայտնվում է նրան (տես՝ 1 Կորնթ.15:7):

Գ. Նա աշակերտների հետ վերնատանը ներկա էր (տես՝ Գործք 1:14) և հավանաբար այնտեղ էր նաև այն ժամանակ, երբ Հոգին Պենտեկոստեին իջավ:

Դ. Նա ամուսնացած էր (տես՝ 1 Կորնթ.9:5):

Ե. Պողոսը նրան ներկայացնում է որպես սյուն (հավանաբար, որպես առաքյալ, տես՝ Գաղ.1:19), սակայն նա Տասներկուսի մեջ չէր (տես՝ Գաղ.2:9; Գործք 12:17; 15:13բ):

Չ. Հրեաների Հնությունները 20.9.1. գրքում Ջոզեֆուսն ասում է, որ նա մ.թ. 62-ին Սինեդրոնից Սաղուկեցիների կարգադրությամբ քարկոծվում է, մինչ մեկ այլ ավանդություն (երկրորդ դարի հեղինակների կողմից՝ Ալեքսանդրիացի Կլեմենտի կամ Հեզեիալուսի) ասում է, որ նրան Տաճարի պարսպից ցած են նետում:

Է. Հիսուսի մահից հետո երկար տարիներ՝ սերնդեսերունդ Հիսուսի բարեկամներից որևէ մեկն էր նշանակվում Երուսաղեմի եկեղեցու առաջնորդը:

■ **«գնաց ուրիշ տեղ»** Ոչ ոք չգիտի, թե ուր գնաց Պետրոսը, սակայն ակնհայտ է, որ նա չգնաց Հռոմ, ինչպես ոմանք են ենթադրում, քանի որ նա ներկա էր Երուսաղեմի Խորհրդին, որը արձանագրված է Գործք 15-ում:

Չնայած որ Աստված գերբնական հրաշքով ազատեց Պետրոսին, սա չի նշանակում, որ նա կարող էր անխտհեմ գտնվել կամ ակնկալել ամեն անգամ այսպիսի հրաշքի միջամտության: Հիշեք, որ Հակոբոսը սպանվեց: Պետրոսը նաև ուղերձ է ուղարկում եկեղեցուն, ասելով, որ սպասեն ավելի շատ հալածանքների իր ազատվելու պատճառով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ.12:18-19
¹⁸Եվ երբ առավոտ եղավ, մեծ խռովություն կար այն զինվորների մեջ, թե ի՞նչ եղավ Պետրոսը: ¹⁹Իսկ երբ Հերովդեսը նրան ուզեց և չգտավ, պահապաններին հարցաքննեց և հրամայեց սպանել նրանց: Այա Պետրոսը Հրեաստանից իջավ Կեսարիա և այնտեղ էր մնում:

12:18 «մեծ խռովություն կար /անգլ.՝ ոչ փոքր խռովություն կար/» Հետաքրքիր է, որ Ղուկասը հաճախ ժխտական արտահայտչական ձևով է ներկայացնում երևույթները (տես՝ 12:18; 15:2; 19:11,23,24; 20:12; 26:19,26; 27:30; 28:2, տես՝ Ջ. Բ. Կայրդ, *Աստվածաշնչի Լեզուն և Տեսարանները*, ծանոթագրություն #8, էջ՝ 134, /G. B. Caird, *The Language and Imagery of the Bible*): Այս գրական ձևը անհայտ է երբայական գրականության մեջ, սակայն հաճախ կիրառվում է հունական գրականության մեջ: Ղուկասը բարձրագույն կրթությամբ հույն էր:

12:19 «պահապաններին հարցաքննեց և հրամայեց սպանել նրանց» Սա տեքստի ենթադրությունն է (տես՝ NKJV, NRSV, TEV), սակայն այն բացահայտ չի սահմանվում (տես՝ NJB): Որոշ թարգմանություններ օգտագործում են շեղատառեր, որպեսզի ճանաչեն այն բառերը, որոնք բացակայում են հունարեն տեքստում: Եթե բանտի պահապանը կորցնում էր իր բանտարկյալին, նա պետք է կրեր բանտարկյալի պատիժը (տես՝ 16:27; 27:42; Արդարադատության Օրենսգիրք 9.4.4):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 12:20-23
²⁰Եվ Հերովդեսը շատ բարկացած էր տյուրոսցիների և սիդոնացիների վրա, և նրանք միաբան եկան նրա մոտ և Բաղաստոսին՝ թագավորի սենեկապետին համոզելով խաղաղություն էին խնդրում, որովհետև նրանց երկիրը թագավորի երկրից էր կերակրվում: ²¹Մի որոշված օր Հերովդեսը, թագավորական զգեստ հագած, ատյանում նստած ճառախոսում

Էր: ²²Ամբոխն էլ աղաղակում էր, թե դա Աստծո ձայնն է, և ոչ թե՛ մարդու: ²³Իսկույն Տիրոջ հրեշտակը հարվածեց նրան, որովհետև Աստծուն չտվեց փառքը. և որդերով լցված մեռավ:

12:20 «**չառ բարկացած էր տյուրոսցիների և սիդոնացիների վրա**» Հերովդեսը շատ բարկացած էր և շարունակում էր այդպես մնալ (ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՏԱՐ): Այս մասնավոր դեպքը կամ անձը հայտնի չէ պատմության մեջ, սակայն Տիմոսի և Սիդոնի այս շրջանը կախված էր Գալիլիայի տարածաշրջանի գյուղատնտեսական արտադրությունից (տես՝ 3 Թագ.5:11; Եզրաս 3:7; և հավանական է Եզեկ.27:17):

12:21 «**Մի որոշված օր Հերովդեսը, թագավորական զգեստ հագած**» Սա տեղի է ունեցել մ.թ. 44-ին: Այս դեպքի հետ կապված ավելի ամբողջական արձանագրության համար նայեք Ջոզեֆուսի *Հնություններ* 19.8.2 (թարգմանված է Ուիլյամ Ուիսթոն, Քրեգալի կողմից /William Whiston, Kregal/):

«Այդ տոնակատարությանը իր տերության ամբողջ նահանգից առաջնորդների, ազնվականների մի մեծ ամբոխ էր հավաքված, որի երկրորդ օրը նա հագավ իր զգեստը՝ պատրաստված ամբողջությամբ արծաթից և իր տեսակի մեջ իրոք հրաշալի, և վաղ առավոտյան եկավ թատրոն, որի ժամանակ նրա արծաթե հագուստը արևի թաքման ճառագայթների արտացոլանքի ներքո լուսավորվելով շողում էր զարմանահրաշ կերպով, և այնքան փառահեղ էր տեսարանը, որ նրան ակնապիշ նայողներին սարսափեցնում էր. և այդ պահին նրան շողորոթողները գոչում էին մեկը մի կողմից, մյուսը՝ մի այլ կողմից, (չնայած ոչ նրա օգտին) որ նա աստված է. և նրանք ավելացնում էին, - «Ողորմի՛ր մեզ, քանի որ մինչև հիմա մենք պատվել ենք քեզ միայն որպես մարդու, բայց այսուհետ քեզ կընդունենք որպես մահկանացու բնության տիրակալի»: Այս խոսքերի վրա թագավորը ոչ հանդիմանում է նրանց, ոչ էլ հերքում նրանց ամբարիշտ շողորոթությունը: Այլ, երբ այդ պահին վեր է նայում, տեսնում է իր գլխավերևում ճուրհակի վրա նստած մի բուռ, և անմիջապես հասկանում է, որ այս թռչունը չարագուշակ պատգամաբեր է, ինչպես որ ժամանակին ավետաբեր էր հանդիսանում իր համար, և խորապես տխրում է: Այս աստիկ ցավ է սկսում նրա որովայնում: Ուստի նայում է իր ընկերներին և ասում, - «Ես, որին դուք աստված եք կոչում, հիմա ինձ հրամայված է հեռանալ այս կյանքից, մինչ Նախախնամությունը այս կերպ հանդիմանում է այն սուտ խոսքերը, որ հենց հիմա ինձ ասացիք, և ես, որ ձեր կողմից անմահ կոչվեցի, անմիջապես պետք է շտապեմ հեռանալ մահվան հետ միասին» (էջ՝ 412):

Հերովդեսի տրամադրությունը և ֆիզիկական վիճակը, որի մեջ նա հայտնվել էր, նաև մանրամասն և սարսափազդու կերպով նկարագրվում է Ջոզեֆուսի *Հնություններ* 17:6:5-ում:

Ջերմի Աստվածաշնչյան Մեկնաբանությունը (հատոր 2, էջ՝ 191) մեզ տեղեկացնում է, որ մարդու մահվան մասին այս զարհուրելի մանրամասները հնագույն ժամանակների գրողների ոճն էր ցույց տալու, թե ինչ է կատարվում այն մարդկանց հետ, որոնք վիրավորում են Աստծուն:

1. Անտիոքուս IV Էպիֆանես – 2 Մակ.9:5-18
2. Հերովդես Մեծ – Ջոզեֆուս *Հնություններ* 17.6.5

12:23 «**Տիրոջ հրեշտակը**» Սա վերաբերում է Մահվան Հրեշտակին (տես՝ Ելից 12:23; 2 Թագ.24:16; 4 Թագ.19:35): Մահը Աստծո իշխանության տակ է և ոչ թե Սատանայի: Սա ժամանակավոր դատաստանի օրինակ է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 12:24

²⁴Եվ Աստծո Խոսքն անում էր ու բազմանում:

12:24 Սա Ղուկասին բնորոշ ամփոփիչ արտահայտություն է (տես՝ 6:7; 9:31; 12:24; 16:5; 19:20; 28:3):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 12:25

²⁵Բառնարասը և Սողոսը, երբ իրենց պաշտոնը կատարեցին, Երուսաղեմից ետ դարձան. և իրենց հետ վերցրին Հովհաննեսին, որ Մարկոս էր կոչվում:

12:25 Այս խոսքով սկսվում է Պողոսի միսիոներական ճամփորդությունների պատմությունը: Գոյություն ունի տեքստային տարբերակ, որը մատնանշում է, թե արդյոք նրանք վերադարձան Երուսաղեմ (տես՝ *eis*, MSS x և B), թե վերադարձան Երուսաղեմից (տես՝ *apo*, MS D կամ *ek*, MSS P⁷⁴, A): Գլուխ 13-ը սկսվում է Բառնարասի և Սողոսի պատմությամբ Անտիոքում («Երուսաղեմից Անտիոք» տես՝ MS E և հին լատիներեն ու Կոպտիկ տարբերակները):

■ «Մարկոս» Տե՛ս «Նշված Անձիք» գրառումը, Գործք 16-ի Ներածության մեջ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ըլդըեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Աստված խնայեց Պետրոսին, իսկ Հակոբոսին՝ ոչ:
2. Հավաքված եկեղեցին արդյո՞ք զարմացավ, երբ տեսավ, որ իրենց աղոթքները պատասխանվեցին: Բացատրեք առնչությունը:
3. Հավատացյալները կարիք ունե՞ն հրեշտակների, եթե նրանց մեջ ապրում է Սուրբ Հոգին:

ԳՈՐԾՔ 13

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Բառնարարը և Սողոսը Ուղարկվում են 13:1-3	Բառնարարը և Սողոսը նշանակվում են (12:25-13:3)	Բառնարարը և Սողոսը Կիպրոսում (12:23-13:12) 13:1-3	Բառնարարը և Սողոսը ընտրվում և ուղարկվում են 13:1-2 13:3	Միսիան դուրս է ուղարկվում 13:1- 3
Առաքյալները քարոզում են Կիպրոսում 13:4-12	Քարոզչություն Կիպրոսում 13:4-12	13:4-12	Կիպրոսում 13:4-5 13:6-11ա 13:11բ-12	Կիպրոս. Ելիմաս մոզր 13:4-5 13:6-12
Պողոսն ու Բառնարարը Պիսիդիայի Անտիոքում 13:13-16ա 13:16բ-25	Պիսիդիայի Անտիոքում 13:13-41	Ճամփորդություն Պիսիդիայի Անտիոք և Իկոնիում 13:13-16ա 13:16բ-25 13:26-41	Պիսիդիայի Անտիոքում 13:13-16ա 13:16բ-20ա 13:20բ-25 13:26-41	Ժամանում Պիսիդիայի Անտիոք 13:13-16ա 13:16բ-25 13:26-31 13:32-37 13:38-39 13:40-41
13:42-43	Օրհնություն և Ընդհարում Անտիոքում 13:42-52	13:42-43	13:42-43	13:42-43
13:44-52		13:44-47 13:48-52	13:44-47 13:48 13:49-52	Պողոսն ու Բառնարարը քարոզում են հերթանոսներին 13:44-47 13:48-49 13:50-52

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտորության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզինք յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք պետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱԿՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Սա Պողոսի և Բառնաբասի առաջին միախոնրական ճամփորդության արձանագրությունն է: Գործքի մնացած մասը հատկացված է Պողոսի ծառայությանը:

Բ. Շատ օգտակար կլինի, եթե բացեք ձեր Աստվածաշնչի վերջին էջերում գտնվող քարտեզը կամ ատլասը և հետևեք այն աշխարհագրական տեղանքներին, որոնք տրված են 13 և 14 գլուխներում:

Գ. Գլուխ 13 և 14-ում նկատելի է այն ակնհայտ անցումը, որը տեղի է ունենում Բառնաբասի առաջնորդությունից Պողոսի առաջնորդությանը:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:1-3
¹Անտիոքում գտնվող եկեղեցում կային մի քանի մարգարեներ և ուսուցիչներ, ինչպես Բառնաբասը և Շմավոնը, որ Նիգեթ էր կոչվում, Ղուկիոս Կյուրենացին, Մանայենը, որը Հերովդես չորրորդապետի հետ էր մեծացել, և Սողոսը: ²Երբ սրանք Տիրոջը ծառայություն էին անում և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց. «Ինձ համար առանձնացրե՛ք Բառնաբասին և Սողոսին՝ այն գործի համար, որի համար Ես նրանց կանչել եմ»: ³Այն ժամանակ ծոմ պահեցին և աղոթք արեցին, նրանց վրա ձեռք դրեցին և ուղարկեցին:

13:1 «Անտիոք» Տե՛ս գրառում 11:19:

■ **«եկեղեցի»** Տե՛ս Հատուկ Թեմա 5:11:

■ **«մարգարեներ և ուսուցիչներ»** Սուրբ Հոգու այս երկու պարզևները թվարկված են 1 Կորնթ.12:28 և Եփես.4:11-ում: Քերականական կառուցվածքն այնպիսին է, որ հայտնի չէ արդյոք բոլոր այս հինգ մարդիկ մարգարե և ուսուցիչ էին, թե նրանցից առաջին երեքը մարգարե էին, իսկ վերջին երկուսը՝ ուսուցիչ:

Այս տերմինի հետ կապված խնդիրը նրանում է, թե «Ինչպե՛ս է ՆԿ-ի մարգարեության պարզևը կապված ՀԿ-ի մարգարեների հետ»: ՀԿ-յան մարգարեները Սուրբ Գրքի հեղինակներն են: ՆԿ-ում այս գործը տրվում է առաջին տասներկու Առաքյալներին և նրանց օգնականներին: Ինչպես «առաքյալ» տերմինը պահպանվում է որպես շարունակվող պարզև (տես՝ Եփես.4:11), սակայն Տասներկուսի մահից հետո փոխված գործով, այնպես էլ մարգարեի պաշտոնն է: Ներշնչանքը դադարել է, այսինքն դրանից հետո Աստվածաշունչ՝ Աստծո ներշնչանքով գրված գիրք չի գրվել: Նոր Կտակարանի մարգարեների առաջնային գործն էր ավետարանի քարոզչությունը, սակայն նաև մեկ այլ առաջադրանք կար նրանց առջև դրված. ինչպես հնարավորինս կիրառել ՆԿ-ի ճշմարտությունները ներկայիս իրավիճակների և կարիքների համար: Տե՛ս Հատուկ Թեմա 11:27:

Ուսուցիչ և մարգարեի պարզևները միասին նշվում են Գործք 13:1-ում, սակայն Եփես.4:11-ում այն կապակցվում է հովվի պարզևի հետ: 2 Տիմ.1:11-ում Պողոսն ասում է, որ ինքը քարոզիչ է, առաքյալ և ուսուցիչ: Այստեղ կարծես թե այն անկախ է մյուս պարզևներից, ինչպես Հռոմ.12:7-ում: Հակոբոս 3:1բ-ում նույնպես առանձին է քննարկվում այս տերմինը: Սա ակնարկում է, որ այս առաջնորդական պարզևները կարող են տարբեր կերպերով համադրվել տարբեր հավատացյալների կյանքում, որպեսզի լուծվեն եկեղեցու կարիքները այդ ժամանակի կամ այդ տարածաշրջանի համար: Այս պարզևներն ունեցող առաջնորդներից յուրաքանչյուրը (տես՝ Եփես.4:11) քարոզում էր ավետարանը, սակայն տարբեր կերպերով (պատվիրելով, քարոզելով, խրատելով):

ՀԱՅՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԵՐՇՆՉԱՆՔ

«Մեկընդմիջտ բոլորի համար» հավատքը վերաբերում է Քրիստոնեության ճշմարտություններին, վարդապետություններին, գաղափարներին, աշխարհընկալման ուսմունքներին (տես՝ 2 Պետ.2:21): ՆԿ-յան գրքերի ներշնչանքի աստվածաբանական սահմանափակման համար այս միանգամայն շեշտադրությունը աստվածաշնչյան հիմք է հանդիսանում և թույլ չի տալիս հետագայում այլ գրքերի ճանաչվելու որպես հայտնության գրքեր: ՆԿ-ում կան բազմաթիվ կասկածելի, անհայտ և խրթին հատվածներ, սակայն հավատացյալները հավատքով հաստատում են, որ հավատքի և կյանքի համար «անհրաժեշտ» ամեն բան բավարար հստակությամբ ՆԿ-ը ընդգրկում է իր մեջ:

Այս հասկացությունը սահմանվում է այսպես կոչված «հայտնության եռանկյունու» մեջ՝

1. Աստված հայտնել է Իրեն ժամանակի և տարածության պատմության մեջ (ՀԱՅՏՈՒԿԹՅՈՒՆ)
2. Նա ընտրել է որոշակի մարդկանց որպես հեղինակներ, որպեսզի փաստագրեն և բացատրեն Իր գործերը (ՆԵՐՇՆՉԱՆՔ)
3. Նա տվել է Իր Հոգին, որպեսզի բացի մարդկանց մտքերն ու սրտերը հասկանալու այս գրվածքները, ոչ թե կատարելապես, այլ բավարար չափով, որպեսզի մարդիկ փրկվեն և ապրեն պտղաբեր Քրիստոնեական կյանքով (ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ)

Այս ամեն ինչի նպատակն այն է, որ ներշնչանքը սահմանափակվում է Սուրբ Գրքի հեղինակներով: Այլևս գոյություն չունեն այլ հեղինակավոր գրքեր, տեսիլքներ կամ հայտնություններ: Կանոնը փակված է: Մենք ունենք ամբողջ ճշմարտությունը, որպեսզի պատշաճ և հաճելի կերպով արձագանքենք Աստծուն:

Այս ճշմարտությունը լավագույնս երևում է աստվածաշնչյան հեղինակների համաձայնության մեջ ի հակադրություն անկեղծ, բարեպաշտ հավատացյալների անհամաձայնության: Ոչ մի ժամանակակից գրող կամ հոեհոր չունի այն աստվածային առաջնորդության մակարդակը, որն ունեին Սուրբ Գրքի հեղինակները:

ՀԱՅՏՈՒԿ ԹԵՄԱ. ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ

«Անցյալում Աստված գործել է Իրեն մարդկությանը պարզ կերպով հայտնելու համար: Աստվածաբանության մեջ սա կոչվում է հայտնություն: Նա ընտրել է հատուկ մարդկանց, որոնք արձանագրել և բացատրել են այս ինքնահայտնությունը: Աստվածաբանության մեջ սա կոչվում է ներշնչանք: Նա ուղարկել է Իր Հոգին, որպեսզի օգնի ընթերցողներին հասկանալ Իր Խոսքը: Աստվածաբանության մեջ սա կոչվում է լուսավորում: Այս դեպքում խնդիր է ի հայտ գալիս. եթե մենք պնդում ենք, որ Հոգին է ներգրավված Աստծո Խոսքը մեզ հասկացնելու մեջ, ապա ինչո՞ւ են այսքան շատ Խոսքի մեկնությունները:

Խնդրի մի մասը ընկած է ընթերցողի նախնական հասկացողության կամ նրա փորձառությունների հիմքում: Հաճախ անձնական օրակարգ են կազմում Աստվածաշնչի տեքստային ապացույցների կամ ատոմային եղանակով օգտագործելու մեջ: Հաճախ աստվածաբանական մոտեցում է պարտադրվում Աստվածաշնչի համար՝ թույլ տալու, որ այն խոսի միայն որոշակի բնագավառներում և հատրնտիր եղանակներով: Լուսավորումը հնարավոր չէ պարզապես հավասարեցնել ներշնչանքի հետ, չնայած որ երկուսի դեպքում էլ Սուրբ Հոգին ներգրավված է:

Լավագույն մոտեցումն է փորձել պաշտպանել պարբերության կենտրոնական գաղափարը և ոչ թե մեկնաբանել տեքստում առկա յուրաքանչյուր մանրամասնություն: Հեղինակի կողմից ներկայացված գլխավոր ճշմարտությունը փոխանցում է թեմատիկ գաղափարը՝ միտքը: Գրքի կամ գրական բաժնի համառոտագրումը՝ կոնսպեկտումը օգնում է հետևել ներշնչված հեղինակի բնագրային նպատակին: Ոչ մի մեկնաբան՝ թարգմանիչ ներշնչված չէ: Մենք չենք կարող վերարտադրել աստվածաշնչյան հեղինակի՝ գրողի մեկնաբանության մեթոդը: Մենք կարող ենք և պարտավոր ենք փորձել հասկանալ, թե ինչ էին նրանք ասում իրենց օրերի համար և հաղորդել այդ ճշմարտությունը մեր օրերին: Աստվածաշնչյան որոշ հատվածներ դժվարըմբռնելի են կամ փակված են՝ գաղտնի (մինչև մի ինչ-որ ժամանակ): Միշտ էլ կլինեն տարաձայնություններ որոշ տեքստերի կամ թեմաների շուրջ, սակայն մենք պետք է հստակ սահմանենք գլխավոր ճշմարտությունները և բնագրի հեղինակի մտադրության սահմաններում թույլ տանք անհատական մեկնաբանությունների ազատություն: Մեկնաբանները պետք է քայլեն իրենց ունեցած լույսի ներքո, մշտապես բաց լինելով Աստվածաշնչից և Հոգուց ավելի շատ լույս ստանալու համար: Աստված մեզ դատելու է համաձայն մեր ունեցած հասկացողության և թե ինչպես ենք ապրել մեր այդ հասկացածը:

■ **«Շմավոնը, որ Նիգեր էր կոչվում»** *Niger* տերմինը լատիներեն է և նշանակում է մուգ կամ սև: Որոշ մեկնաբաններ փորձում են այս Շմավոնին (Միմոնին) կապել Մարկ.15:21-ի հետ:

■ **«Ղուկիոս Կյուրենացին»** Հավանաբար այս մարդը հելլենիստ հրեաներից էր, որ քարոզում էր Անտիոքում գտնվող հեթանոսների (տես՝ 11:20): Հավանական է, որ նա Հռոմ.16:21-ում նշված Ղուկիոսը չէ:

■ **«Մանայենը, որ Հերովդես չորրորդապետի հետ էր մեծացել»** *Մանայենը* (Manaen) երբայերենի *Մանահեմ* (Manahem) բառի հունարեն տարբերակն է, որը նշանակում է «մխիթարի»: Այս մարդը կամ հանդիսանում էր Հերովդես Անտիպասի (տես՝ գլուխ 12-ի ներածությունը) ինամակալ եղբայրը (հունարեն գրականություն) կամ էլ մեծացել էր նրա հետ (Կոյնե պապիրուսներ): Ղուկասը հավանաբար Հերովդես Անտիպասի (չորրորդապետը) մասին իր տեղեկությունների մեծ մասը ստացել էր այս մարդու հետ գրուցելիս:

13:2

NASB	«ծառայություն էին անում»
NKJV	«ծառայում էին»
NRSV	«երկրպագելով»
TEV	«ծառայելով»
NJB	«երկրպագություն էին մատուցում»

Սա հունարեն *leitourgia* («հանրային» և «աշխատանք» բառերից կազմված բաղադրյալ բառ) տերմինն է, որից ստանում ենք անգլերենի liturgy (հայ.՝ «պատարագ») բառը: Սկզբնական շրջանում այն վերաբերում էր այն անձանց, որոնք իրենց իսկ ծախսերով հանրային ծառայություն էին կատարում: Այս համատեքստում այն ակնարկում է պաշտամունքի ծառայության ընթացքում Աստծո կամքը փնտրելու ժամանակին: ԲԱՅԸ կարող է վերաբերել ամբողջ եկեղեցուն կամ միայն թվարկված հինգ տղամարդկանց:

■ **«Ծոմ էին պահում»** ՀԿ-ում ծոմապահության համար տարվա մեջ միայն մեկ օր կար՝ Քավոյան օրը, Ղևտացիների 16: Այնուամենայնիվ, առաջին դարի ընթացքում ռաբբիական հուդայականությունը ներմուծել էր շաբաթական երկու անգամյա ծոմապահություն: Չնայած որ ծոմապահություն հավատացյալներից չի պահանջվում, շատ անգամ այն օգտակար է Աստծո կամքը հասկանալու՝ զանազանելու համար (տես՝ 14:23):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԾՈՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ծոմապահությունը չնայած որ ՆԿ-ում երբեք պատվիրված չէ, սակայն երբեմն ճիշտ ժամանակի մեջ այն ակնկալվում էր Հիսուսի աշակերտներից (տես՝ Մատթ.6:16,17; 9:15; Մարկ.2:19; Ղուկ.5:35): Ծճարիտ ծոմապահությունը նկարագրված է Եսայի 58-ում: Հիսուսն Ինքը նախադեպը հանդիսացող օրինակ ծառայեց (տես՝ Մատթ.4:2): Վաղ եկեղեցին ծոմ էր պահում (տես՝ Գործք 13:2-3; 14:23; 2 Կորնթ.6:5; 11:27): Շարժառիթն ու կերպերը որոշված են. ժամանակը, տևողությունը, հաճախականությունը՝ ըստ ընտրության: ՀԿ-յան ծոմապահությունը ՆԿ-ի հավատացյալների համար պարտականությունն է պահանջ չէ (տես՝ Գործք 15:19-29): Ծոմապահությունը մարդու համար իր հոգևորությունը ցույց տալու կերպ չէ, այլ Աստծուն ավելի մոտենալու և Նրա առաջնորդությունը փնտրելու համար է: Այն կարող է հոգևոր առումով օգտակար լինել:

Վաղ եկեղեցու ասկետիզմի՝ խստության, հակումները դպիրների համար պատճառ հանդիսացան, որ մի քանի աստվածաշնչյան հաստատվածներում գետեղեն «ծոմապահության» գաղափարը (այսինքն՝ Մատթ.17:21; Մարկ.9:29; Գործք 10:30; 1 Կորնթ.7:5): Այս վիճահարույց տեքստերի շուրջ ավելի շատ տեղեկությունների համար խորհրդակցեք Բրյուս Մեցգերի *Հունարեն Նոր Կտակարանի Տեքստային Մեկնաբանություն* գրքի հետ, որը հրատարակված է Միացյալ Աստվածաշնչյան Ընկերությունների կողմից (Bruce Metzger *A Textual Commentary on the Greek New Testament*, published by United Bible Societies):

■ **«Սուրբ Հոգին ասաց»** Սա մեկ այլ աստվածաշնչյան ապացույց է Սուրբ Հոգու անձ լինելու վերաբերյալ (տես՝ Հատուկ Թեմա 1:2): Լսելի էր այն, թե զգայական՝ ինտուիտիվ, հայտնի չէ (տես՝ 8:29; 10:19; 11:12; 20:23; 21:11): Ակնհայտ էր, որ սա մի յուրահատուկ պատգամ էր (տես՝ 16:6-7), հավանաբար մարգարեներից մեկի կողմից փոխանցված:

■ **«առանձնացրեք»** Սա ԱՈՐԻՍՏ ԵԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: *Aphorizō* տերմինը ունի միևնույն նշանակությունը ինչպես «սուրբ» տերմինը (*hagiazō*): Այն ակնարկում է հանձնարարված աստվածային առաջադրանքի համար առանձնացումն ու սպառազինումը (տես՝ Հռոմ.1:1; Գաղ.1:15):

■ Հունարեն տեքստում «առանձնացրեք» բառից հետո *dē* ԴԵՐԲԱՅՆ է, որն արտահայտում է խստություն՝ ինտենսիվություն (տես՝ Դուկ.2:15; 1 Կորնթ.6:20): Այն հաղորդում է Հոգու կանչին արձագանքելու ջերմեռանդությունը: 15:36 -ում Պողոսի տված սահմանմանը կա գուրազանք խոսք:

■ **«այն գործի համար, որի համար ես նրանց կանչել եմ»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Սուրբ Հոգին է ծառայության գործի համար կանչողն ու սպառազինողը (տես՝ 1 Կորնթ. 12:7,11):

13:3 Այս համարն ունի երեք ԱՈՐԻՍՏ ԴԵՐԲԱՅ, որոնք նկարագրում են այն հոգևոր պատրաստությունները, որ կատարվում էին Անտիոքի եկեղեցուց առաջին միսիոներներին ուղարկելու համար:

1. ծոնապահություն էին անում
2. աղոթում էին
3. ձեռնադրում էին նրանց

Կարծես թե սրանք լինեին ոչ միայն մարգարեների և ուսուցիչների, այլ ամբողջ համայնքի միասնական գործողությունները: Ամբողջ եկեղեցին պետք է ներգրավված լինի Մեծ Հանձնարարությունը կատարելու միջոցառումների՝ գործողությունների մեջ:

■ **«նրանց վրա ձեռք դրեցին»** Այս հատուկ համարը այն երկիմաստ՝ խրթին տեքստերից մեկն է, որի հիման վրա էլ իրականացվում են մեր ժամանակակից ձեռնադրությունները: Սակայն այն հարմար չէ մեր օրերի հարանվանական արարողությունների ժամանակ աստվածաշնչյան հիմք հանդիսանալու համար: Աստվածաշնչում գոյություն ունեն ֆիզիկական «ձեռնադրության» շատ օրինակներ:

1. ՀԿ-ում հետևյալ նպատակով՝
 - ա. գոհի հետ նույնականացվելու համար (տես՝ Դևտ.1:4; 3:2; 4:4; 16:21)
 - բ. օրհնության համար (տես՝ Ծննդ.48:13բ; Մատթ.19:13,15)
 - գ. իրավահաջորդին լիազորելու համար (տես՝ Թվոց 27:23; 2 Օր.34:9)
2. ՆԿ-ում հիմքը և՛ նույնն է, և՛ տարբերվում է՝
 - ա. բժշկության համար (տես՝ Դուկ.4:40; 13:13; Գործք 9:17; 28:8)
 - բ. որևէ գործի հանձնելու կամ լիազորելու համար (տես՝ Գործք 6:6; 13:3)
 - գ. Սուրբ Հոգին կամ հոգևոր պարզվելու ստանալու հետ կապված (տես՝ Գործք 8:17; 19:6; 1 Տիմ.4:14; 2 Տիմ.1:6)
 - դ. Հուդայականության կամ եկեղեցու հիմնական ուսմունքների մեջ արձանագրված փաստ (տես՝ Եբր.6:2)

Այս ձեռնադրությունները որևէ խրթին կամ կասկածելի գործողություններ չէին: Այս տղամարդիկ արդեն իսկ կանչված, պարզներ ունեցող, գործող առաջնորդներ էին: Սա ինչ-որ մի նոր ծառայություն չէր, որին կանչվել էին, այլ արդեն իսկ նրանց կողմից իրականացվող ծառայությունների ընդլայնում:

Ձեռնադրությունը հակված է քաջալերելու հավատացյալների միջև տարբերությունը: Այն վստահություն է հաղորդում աշխատակազմի երկչոտությանը: Հունարեն *cleros* (վիճակով ժառանգելը) բառը և *laos* («մարդիկ» բառի հունարեն տարբերակը), երբ կիրառվում է ՆԿ-ում, միշտ վերաբերում է հավատացյալների ամբողջ խմբին: Բոլոր հավատացյալներն էլ կանչված են, պարզներով օժտված և ավետարանի լիարժեք ծառայողներ են (տես՝ Եփես.4:11-12): Չկա ոչ մի աստվածաշնչյան սպացույց հավատացյալներին հիերարխիկ խմբերի բաժանելու համար: Բոլոր հավատացյալները պարզներ ունեն Քրիստոսի մարմնի մեջ ծառայելու համար (տես՝ 1 Կորնթ.12:7, 11):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:4-12
⁴Այսպես նրանք, Սուրբ Հոգուց ուղարկված, իջան Մելեկիա և այնտեղից նավարկեցին դեպի Կիպրոս: ⁵Եվ Սալամինա հասնելով՝ հրեաների ժողովարաններում Աստծո Խոսքն էին քարոզում, Հովհաննեսին էլ որպես օգնական ունեին: ⁶Եվ երբ նրանք շրջեցին կղզին մինչև Պափոս, մի մոզ գտան՝ սուտ մարգարե, մի հրեա, որի անունը Բարիեսու էր, ⁷որ փոխհյուպատոս Սերգիոս Պողոսի՝ իմաստուն մի մարդու հետ էր: Սա, Բառնաբասին և Սողոսին իր մոտ կանչելով, ուզում էր Աստծո Խոսքը լսել: ⁸Բայց Ելիմաս մոզը (որովհետև նրա անունը այսպես է թարգմանվում), դիմադրեց նրանց, ցանկանալով փոխհյուպատոսին հավատքից շեղել: ⁹Ապա Սողոսը (որը նույնպես Պողոս է կոչվում), Սուրբ Հոգով լցված, նայեց նրան ¹⁰և ասաց. «Ո՛վ ամեն խաբեբայությամբ և խորամանկությամբ լցված Մատանայի որդի, ամեն

արդարության թշնամի, դու չե՞ս դադարելու Տիրոջ ուղիղ ճանապարհները ծռելուց: ¹¹Եվ հիմա, ահա Տիրոջ ձեռքը քեզ վրա է, և կկուրանաս ու միառժամանակ արևը չես տեսնի»: Եվ իսկույն մութ ու խավար ընկավ նրա վրա, և ման գալով՝ ձեռքը բռնող մարդիկ էր որոնում: ¹²Այն ժամանակ, փոխհյուպատոսը, երբ կատարվածը տեսավ, հավատաց՝ զարմանալով Տիրոջ վարդապետության վրա:

13:4 «Սուրբ Հոգուց ուղարկված» Այս համատեքստը չի պաշտպանում տեղական եկեղեցու իշխանությունը, այլ Հոգու: Նա Երրորդության այն անդամն է (տես՝ Հատուկ Թեմա 2:32), որը շեշտադրված է Գործքում: «Նոր Մեսիական Դարաշրջանը» հայտնի էր որպես «Հոգու Դարաշրջան»: Նա կանչում է, պարզներ է շնորհում, առաջնորդում է, համոզում և զորություն հագցնում՝ լիազորում (տես՝ Հովհ.14:16-17,26; 15:26; 16:7-15): Առանց Նրա ներկայության և օրհնության չի կարող ոչ մի հարատևող կամ արդյունավետ ծառայություն իրականացվել:

■ **«Սելևկիա»** Սիրիայի Անտիոքի նավահանգստային մի քաղաք էր: Այն մոտավորապես տասնհինգ մղոն դեպի հարավ-արևմուտք էր: Այս քաղաքի անունը դեռևս գալիս է Ալեքսանդր Մեծի Սելեուսոս գեներալի անունից, որը տիրեց այս տարածքի վրա Ալեքսանդրի մահից հետո:

■ **«Կիպրոս»** Բառնաբասի հայրենի տունն էր (տես՝ 4:36), որը բնակեցված էր շատ հրեաներով: ՀԿ-ում այն հայտնի էր որպես *Կիսիմ*: Այս կղզու վրա սա առաջին Քրիստոնեական վկայությունը չէր (տես՝ 11:19-20):

13:5 «Սալամինա» Կիպրոս կղզու արևելյան ափին գտնվող նավահանգստային մի քաղաք էր: Այն հանդիսանում էր կղզու առևտրային կենտրոնը:

■ **«հրեաների ժողովարաններում Աստծո Խոսքն էին քարոզում»** Պատճառն ակնհայտ է՝

1. Այս հրեաները արդեն իսկ գիտեին ՀԿ-ը
2. Հրեաները ընտրյալ ազգ էին (տես՝ Ծննդ.12:1-3) և ունեին առաջին հնարավորությունը արձագանքելու (տես՝ 3:26; 13:46; 17:2; 18:4,19; 19:8; Հռոմ.1:16)
3. Ժողովարանի ծառայություններին ներկա էին հեթանոսներ, որոնց [ա] արդեն իսկ գրավել էր Միակ Ճշմարիտ Աստվածը և [բ] որոնք գիտեին ՀԿ-ը:

Այս մեթոդը Պողոսի համար դարձել էր սովորական միսիոներական մեթոդ այն վայրերի համար, որտեղ կար ժողովարան:

■ **«Հովհաննես»** Սա վերաբերում է Հովհաննես Մարկոսին, որի տանը հանդիպում էին աշակերտները (տես՝ Գործք 12:12): Ինչպես նաև հանդիսանում է ավանդական Մարկոս Ավետարանի հեղինակը, որը կարծես թե արձանագրում է ականատես Պետրոս Առաքյալի վկայությունները: Նա նաև հանդիսանում է Պողոս Առաքյալի և Բառնաբասի միջև եղած մեծ վիճաբանության պատճառը, որի հետևանքով միսիոներական թիմը բաժանվեց երկու մասի (տես՝ 15:36-41): Սակայն հետագայում Պողոսը նշում է Հովհաննես Մարկոսին դրական շեշտադրությամբ (տես՝ Կող.4:10; 2 Տիմ.4:11 և Փիլ. հ.24): Տե՛ս լիարժեք գրառումները գլուխ 16-ի ներածության բաժնում:

13:6 «երբ նրանք շրջեցին /ամբողջ/ կղզին» Հավանաբար սա նշանակում է, որ կղզու բոլոր ժողովարաններում կանգ առան և քարոզեցին:

■ **«Պափոս»** Սա վերաբերում է նոր Պափոսին ի հակադրություն յոթ մղոն հեռավորության վրա գտնվող Փյունիկյան ավելի հին քաղաքի: Այս երկու քաղաքներն էլ անվանվել են Փյունիկյան *Պապիան* աստվածուհու պատվին: Սա սիրո աստվածուհին էր, որը հայտնի էր նաև *Աֆրոդիտե*, *Աստարտիլթ*, *Վեներա*, և այլ անուններով: Այս քաղաքը հանդիսանում էր Կիպրոսի պաշտոնական քաղաքական մայրաքաղաքը:

■ **«Բարիեսու»** Այս մարդը հրեա սուտ մարգարե էր: Նրա անունը նշանակում է «Հեսուի որդի»: Համար 8-ից հասկանում ենք, որ նա գործում էր Ելիմաս մոզի հանձնարարությամբ: Այս մոզ տերմինը արտացոլում է արամերեն արմատ ունեցող հունարեն համագոր բառը, որը նշանակում է «կախարդ» (տես՝ հ. 10): Տե՛ս Հատուկ Թեմա 8:9:

13:7 «փոխհյուպատոս Սերգիոս Պողոս» Ճատ քննարկումներ են եղել Ղուկասի արձանագրությունների պատմական իրողության շուրջ: Ահա և Ղուկաս պատմիչի ճշգրտության մի լավ օրինակ: Նա այս մարդուն կոչում է «փոխհյուպատոս», որը նշանակում էր, որ Կիպրոսը հանդիսանում էր

Հռոմեական Մենատին պատկանող նահանգ: Մենք իմանում են, որ սա տեղի է ունեցել մ.թ.22-ին՝ Օգոստինոս կայսրի հրամանով: Մենք նաև իմանում ենք լատիներեն Սոլոյ մակագրությունից, որ Մերգիոս Պողոսը սկսել է իր փոխիդուպատոսությունը մ.թ.53-ին: Որքան շատ տեղեկություններ է հայտնաբերում երկրաբանությունը առաջին դարի Միջերկրական աշխարհից, այնքան ավելի հավաստի է դառնում Ղուկասի արձանագրությունների պատմական ճշգրտությունը:

■ **«իմաստուն մի մարդու հետ»** Այս տերմինը կիրառվում է իմաստային լայն նշանակությամբ: Այս համատեքստում այն ակնարկում է, որ նա կարողանում էր ազդեցիկ կառավարել: Նման կերպ նրան բնութագրելը նաև ցույց է տալիս, որ ավետարանը ազդեցություն էր թողնում ոչ միայն աղքատ և ուսում չունեցող մարդկանց վրա, այլ նաև հարուստների և ուսյալների (տես՝ *Մանայեն* 13:1): Հնարավոր է նաև, որ Ղուկասի Գործք Առաքելոց գիրքը գրելու նպատակն է եղել ցույց տալ, որ ավետարանը չէր սպառնում հռոմեական կայսրությանը:

13:8 «Ելիմաս» Կարծես թե այս հունարեն բառը լինի գրադարձություն՝

1. իմաստուն մարդու համար կիրառվող արաբերեն մի տերմինի (գիտուն, հմայող, որը կարող է կանխասել և վերահսկել ապագան, բանեցնելով անտեսանելի թագավորությունների աներևույթ ուժերը՝ զորությունները, AB, հատոր՝ 2, էջ՝ 487):
2. արամերեն մի բառի, այնպիսի մարդու համար, որը երազներ է մեկնում

■ **«/կախարդը/ մոգը»** Կապ ունի հենց «մոգ» բառի հետ, որը նշանակում էր քաղդեա-մարական իմաստուն մարդ՝ ինչպես օրինակ Դանիելը (տես՝ Դան.2:2; 4:9; Մատթ.2:1): Սակայն, Պողոսի օրերում այն կիրառվում էր հունա-հռոմեական աշխարհում շրջիկ մոգերի/կախարդների և թափառական հեքիմների՝ շառլատանների համար: Տե՛ս Հատուկ Թեմա 8:9:

■ **«հավատ»** Այս տերմինը ՆԿ-ում կիրառվում է երեք հատուկ եղանակով՝

1. Հիսուս Քրիստոսին անձնապես որպես Փրկիչ վստահել
2. հավատարիմ, բարեպաշտ ապրելակերպ
3. ավետարանի աստվածաբանական բովանդակություն (այսինքն՝ վարդապետություն. տես՝ Հուդա 3,20)

Այս նույն անորոշությունը երևում է Գործք 6:7-ում: Այստեղ կարծես թե վերաբերում է #3-ին, համատեքստի և թեմայի հետ կապված: Տե՛ս Հատուկ Թեմա 3:16 և 6:5:

13:9 «Պողոս» Գործքում նրա հռոմեական մականվանման առաջին գործածությունն է: Պողոս անունը ծագել է հունարեն տերմինից, որը նշանակում է «փոքրիկ»: Ոմանք կարծում են, թե այն առնչվում է Պողոսի ֆիզիկապես փոքրամարմին կառուցվածքի հետ, ոմանք էլ հենց իր կողմից իր մասին ունեցած անձնական գնահատականի հետ՝ «առաքյալներից ամենավերջինը», քանի որ հալածել էր եկեղեցուն: Հավանաբար դա եղել է իր ծննդյան ժամանակ ծնողների կողմից իրեն տրված երկրորդ անունը:

■ **«Պողոսը, Սուրբ Հոգով լցված»** Հոգու զորությունը, որն առաջնորդում էր առաջին եկեղեցուն, նկարագրվում է «լեցունություն» տերմինով (տես՝ 2:4; 4:8,31; 6:3; 7:55; 9:17; 13:9,52): Ծարունակական, ամենօրյա Հոգով լեցունությունը բոլոր հավատացյալների համար սովորական՝ նորմալ վիճակ է (տես՝ Եփես.5:18): Գործքում այն ընդհանրապես կապված է ավետարանը քարոզելու համարձակության հետ:

■ **«նայեց»** Տե՛ս լիարժեք գրառումների համար 1:10:

13:10 Պողոսը բնութագրում է այս հրեա սուտ մարգարեին մի քանի տերմիններով.

1. «լցված խաբեությամբ» - որը նշանակում է խայծով թակարդը գցել (սա Ղուկասի գրած գրքերում միակ տեղն է, որ կիրառվում է այս տերմինը)
2. «ամեն խորամանկությամբ լցված»- սա ծագել է հունարեն մի բառից, որը նշանակում է մակերեսորեն կամ աննկատ կերպով ինչ-որ բան անել, որը արդյունքում չարանեղգ նպատակ է հետապնդում (տես՝ 18:14): Այս տերմինը կարելի է գտնել միայն Գործքում (տես՝ 13:10; 18:14):
3. «Սատանայի որդի» - սա սեմական մի դարձվածք է (տես՝ 3:25; 4:36) մեկի համար, որին բնորոշ են չարի՝ Սատանայի գործերը (տես՝ Մատթ.13:38; Հովհ.8:38,41,44, տե՛ս՝ Հատուկ Թեմա 5:3):
4. «ամեն արդարության թշնամի» - Այս տերմինը Ղուկասը կիրառում է իր գրքերում մի քանի անգամ, ներառելով ՀԿ-ի մեջբերումներից (տես՝ Ղուկ.1:71,74; 20:43; Գործք 2:35): Ամեն ինչ, որ Աստուծոց էր, այս մարդը հակառակ էր դրան: Տե՛ս Հատուկ Թեմա. Արդարություն 3:14:
5. Պողոսը երեք անգամ գործածում է «ամեն» ներառելի տերմինը, ցույց տալու այս մարդու հոժարական չարությունը՝ ամբարշտությունը:

■ **«Տիրոջ ուղիղ ճանապարհները ծռելուց»** Այս հարցը ակնկալում է «այո» պատասխանը: «Ուղիղ» կամ «շիտակ» բառը ՆԿ-ում արտացոլում է ՀԿ-ի արդարություն հասկացությունը, որը նշանակում էր ստանդարտ կամ չափաձող՝ չափման եղեգ: ՆԿ-յան «ծուռ» կամ «խտորոյալ» տերմինները արտացոլում են ՀԿ-ի մեղքի համար օգտագործվող տերմինները, որոնք ստանդարտից հեռանալն էր, որը հենց Ինքը Աստված էր: Այս մարդը ամեն ինչ ծռում էր (այսինքն՝ անում էր արդարությանը հակառակ բաներ): Տե՛ս Հատուկ Թեմա 3:14:

13:11 «Տիրոջ ձեռքը» Սա սեմական անտրոպոմորֆիկ արտահայտություն է, որն առնչվում է ՅԱՀՎԵԻ գորության և ներկայության հետ (տես՝ Դուկ.1:66; Գործք 11:21): ՀԿ-ում այն հաճախ վերաբերում է Աստծո դատաստանին (տես՝ Ելից 9:3; 1 Թագ.5:6; Հոր 19:21; 23:2; Սաղմ.32:4; 38:2; 39:10), ինչպես և այստեղ:

■ **«Կկուրանաս»** Չարին և ապստամբությանը հատկանշական այս խիստ տերմինները, որով Պողոսը նկարագրում է այս մարդուն և Աստծո կողմից նրա ժամանակավոր պատժամիջոցը, հնարավոր է արտացոլում էր հենց Պողոսի նախկին կյանքը: Այժմ նա հետ էր նայում և այս հրեա սուտ վարդապետի և նրա խաբեությունների մեջ իրեն էր տեսնում (տես՝ 9:8):

Կուրությունը հաճախ փոխաբերական իմաստով գործածվում է հոգևոր բաների ընկալունակության պակասը նկարագրելու համար (տես՝ Հովի. 9; Գործք 9; նաև ուշադրություն դարձրեք 2 Օր.28:28-29):

13:12 «Երբ կատարվածը տեսավ, հավատաց» Սա միևնույն հունարեն բառն է (*pisteuō*, ԳՈՅԱԿԱՆԸ կարող է թարգմանվել որպես հավատալ, հավատք կամ վստահություն), որը կիրառվում է ամբողջ ՆԿ-ում անկեղծ՝ իրական հավատքի համար: Այս կառավարիչը արձագանքեց ավետարանի ուղերձին: Մի մարդու աչքերը փակվեցին (բառացիորեն), մյուսինը՝ բացվեցին (այլաբանորեն): Սա է հավատքի և անհավատության առեղծվածը (տես՝ Հովհաննես 9): Տե՛ս Հատուկ Թեմաներ. Հավատք (ԳՈՅԱԿԱՆ, ԲԱՅ և ԱԾԱԿԱՆ) 3:16-ում և ՀԿ-յան Հավատք 6:5-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:13-16ա

¹³Եվ Պողոսն ու նրա հետ եղողները Պափոսից դուրս ելան, եկան Պամփիլիայի Պերգեն, բայց Հովհաննեսը, նրանցից բաժանվելով, վերադարձավ Երուսաղեմ: ¹⁴Իսկ նրանք Պերգեից գնացին, եկան Պիսիդիայի Անտիոքը, և շաբաթ օրը ժողովարան մտան ու նստեցին: ¹⁵Եվ Օրենքն ու մարգարեներից կարդալուց հետո՝ ժողովապետները նրանց մոտ մարդ ուղարկեցին, ասելով. «Մարդիկ, եղբայրներ, եթե այս ժողովրդի համար հորդորական խոսքեր ունեք, խոսեցե՛ք»: ¹⁶Պողոսն էլ վեր կացավ, ձեռքը շարժեց և ասաց.

13:13 «Պողոսն ու նրա հետ եղողները /ընկերակցողները/» Ակնհայտ է, որ առաջնորդը փոխվել էր: Այստեղից սկսած այժմ Գործքում Պողոսի անունը ցանկում առաջինն է լինելու:

■ **«Պամփիլիայի Պերգեն»** Պերգեն փոքրիկ հռոմեական ծովափնյա Պամփիլիա նահանգի ամենամեծ քաղաքն էր (հարավային Թուրքիայում): Այն տեղակայված էր մի քանի մղոն ցամաքից դեպի ներս, որպեսզի ետ մղի ծովի կողմից սպառնացող հարձակումները:

Ըստ երևույթին այս անգամ Պողոսը այստեղ չի քարոզում, սակայն քարոզում է հետագայում (տես՝ 14:25): Մի քանի հարյուրամյակ շարունակ այս վայրում Քրիստոնեական որևէ խմբի վերաբերյալ պատմական ոչ մի արձանագրություն չի եղել: Նա պարզապես անցել է այս ծովափնյա տարածքով:

■ **«Հովհաննեսը նրանցից բաժանվելով, վերադարձավ Երուսաղեմ»** Դուկասը այս դեպքն արձանագրում է առանց պատճառներ ներկայացնելու (ոչ էլ ՆԿ-յան որևէ այլ հեղինակ): Տե՛ս Գլուխ 16-ի ներածությունը. նա վերադառնում է Տիրոջ ծառայությանը:

13:14 «Պիսիդիայի Անտիոքը» Բառացիորեն սա նշանակում է «դեպի Պիսիդիա տանող Անտիոքը» քանի որ այն տեղակայված էր հռոմեական Գաղատիա Նահանգի Փռուզիայի էթնիկ շրջանում: Սա առանձին մի էթնիկ խումբ էր՝ հավանաբար Եփրոսայից:

■ **«Շաբաթ օրը»** Ակնարկում է ուրբաթ արևամուտից մինչև շաբաթ արևամուտը: Համաձայն Ծննդոց 1-ի, հրեաները ժամանակը հաշվում են երեկոյից մինչև երեկո:

■ **«Նստեցին»** Հավանական է, որ սա ժողովարանում խոսնակ հանդիսացող մարդկանց վերաբերող դարձվածք է: Ռաբբիները միշտ սովորեցնում էին նստած դիրքով (տես՝ Մատթ.5:1; Դուկ.4:20):

Ժողովարանները ընդհանրապես թույլ էին տալիս շրջիկ այցելուներին խոսել, եթե իհարկե նրանք ցանկանում էին (տես՝ հ.15):

13:15 «Օրենքն ու մարգարեների մասին կարդալուց հետո» Սա Հիսուսի օրոք ժողովարաններում տեղի ունեցող ծառայության կարգ ու կանոնի սովորական մի մասն էր կազմում: Սկզբում միայն Մովսեսի Օրենքն էին կարդում, սակայն Անիոքոս IV Եպիֆանեսը Ք.Ա.163 թվականից արգելեց այն: Ապա հրեաները այս ընթերցանությունը փոխարինեցին Մարգարեների ընթերցանությամբ: Մակարայեցիների ապստամբության ընթացքում հուդայականությունը վերականգնվեց և թե՛ Օրենքը, թե՛ Մարգարեները շարունակվեցին միասին ընթերցվել որպես ժողովարանի ծառայությունների հիմնական մաս (տես՝ հ.27): Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՔՐԱՅԱԿԱՆ ԿԱՆՈՆԸ

Երբայերեն Աստվածաշունչը կազմված է երեք բաժնից (անգլերեն Աստվածաշունչը հետևում է Մեկտուազինտայի հերթականությանը):

1. Թորս (Հնգամատյանը), Ծննդոցից – 2 Օրինաց
2. Մարգարեներ
ա. վաղ մարգարեներ՝ Հեսու – Թագավորացներ (բացի Հռութից)
բ. ուշ մարգարեներ՝ Եսայի – Մադաքիա (բացի Ողբ Երեմիայից և Դանիելից)
3. Սուրբ Գրերը
ա. Իմաստասիրական Գրականություն՝ Հորից – Առակներ
բ. Հետզերության շրջանի Գրականություն՝ Եզրասից – Եսթեր
գ. Մեգիլոթ (հինգ գալարները)
 - (1) Հռութ (ընթերցվող Պենտեկոստեի ժամանակ)
 - (2) Ժողովող (ընթերցվող Տաղավարահարացի ժամանակ)
 - (3) Երգ Երգոց (ընթերցվող Չատկի տոնին)
 - (4) Ողբ Երեմիայի (ընթերցվում է ի հիշատակ Ք.Ա.586-ին Երուսաղեմի կործանման)
 - (5) Եսթեր (ընթերցվող Փուրիմի ժամանակ)
- դ. Դանիել
- ե. 1 և 2 Մնացորդացներ

■ **«Ժողովապետները»** Այս մարդիկ շինության /ժողովարանի/ սպասարկման և պաշտամունքի կարգ ու կանոնի պատասխանատուներն էին (տես՝ Դուկ.8:41,49): Նրանք հաճախ հյուրեր էին հրավիրում, որպեսզի խոսեն:

■ **«Եթե հորդորական խոսքեր ունեք»** Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրում է, որ ճիշտ է հեղինակի տեսանկյունից իր գրական նպատակների համար: Սա ժողովարանում տեղի ունեցող պաշտամունքի սովորական մի մասն էր կազմում: Պողոսը լավ օգտվեց ընձեռված հնարավորությունից:

13:16 «Պողոսն էլ վեր կացավ» Սովորաբար հրեա վարդապետները սովորեցնելիս նստում են, սակայն սովորեցնելիս կանգնելը հունա-հռոմեական սովորույթ էր: Պողոսը փոփոխել էր իր վարվելակերպն ու ներկայացման ձևերը ըստ լսարանի հարմարության:

■ **«ձեռքը շարժեց»** Պողոսը ձեռքի ժեստով լռություն էր խնդրում: Դուկասը հաճախ է ներկայացնում ականատեսի այսպիսի մանրամասներ (տես՝ 12:17; 13:16; 19:33; 21:40):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:16բ-25

¹⁶ «Ո՛վ Իսրայելի մարդիկ, և դո՛ւք, որ Աստուծոց վախենում եք, լսեցե՛ք: ¹⁷Այս Իսրայելի Աստվածը ընտրեց մեր հայրերին և Եգիպտոսի երկրում պանդխտության ժամանակ բարձրացրեց ժողովրդին և հզոր բազուկով նրանց այնտեղից դուրս բերեց: ¹⁸Եվ մոտ քառասուն տարի համբերեց նրանց վարքն անապատում: ¹⁹Եվ երբ Քանանի երկրում յոթ ազգ կործանեց, դրանց երկիրը նրանց տվեց՝ որպես ժառանգություն: ²⁰Եվ դրանից հետո մոտ չորս հարյուր հիսուն տարի նրանց դատավորներ տվեց՝ մինչև Սամուել մարգարեն: ²¹Եվ ապա թագավոր ուզեցին, և Աստված նրանց քառասուն տարով տվեց Կիսի որդի Սավուլին՝ Բենիամինի ցեղից: ²²Եվ երբ նրան հեռացրեց, Դավթին հանեց նրանց համար թագավոր լինելու, ում մասին էլ վկայություն տվեց և ասաց. «Ես Հեսսեի որդի Դավթին գտա՝ Իմ սրտի համեմատ մի մարդ, որ

կկատարի Իմ ամբողջ կամքը»: ²³Աստված, Իր խոստման համաձայն, այս մարդու սերնդից Իսրայելի համար Փրկիչ հանեց՝ Հիսուսին: ²⁴Նախ Հովհաննեսը, Նրա գալուստից առաջ, ապաշխարության մկրտությունը քարոզեց Իսրայելի ամբողջ ժողովրդին: ²⁵Եվ երբ Հովհաննեսն ավարտում էր իր ընթացքը, ասաց. «Ձեր կարծիքով ես ո՞վ եմ: Ես Նա չեմ: Բայց ահա իմ ետևից գալիս է մեկը, Ում ոտների կոշիկներն արձակելու ես արժանի չեմ»:

13:16բ «Ո՞վ Իսրայելի մարդիկ, և դո՞ւք, որ Աստծուց վախենում եք, լսեցե՛ք» Այնտեղ ներկա էին երկու խմբի մարդիկ՝ հրեա և հեթանոս «աստվածավախներ» (տես՝ հ.26; 10:2,22,35): Այս քարոզը շատ նման է Գործք 7-ի Ստեփանոսի քարոզին: Պողոսին շատ առումներով խորապես ազդել էր Ստեփանոսի ՀԿ-ի և Ավետարանի գիտելիքները՝ հասկացողությունը:

13:17 Պողոսը սկսեց ՀԿ-ի պատմության վերանայումը Նահապետների (Ծննդոցից Աբրահամի, Իսահակի և Հակոբի) կանչից և Եգիպտոսում գերության և ազատագրման պատմություններից (Ելից-Երկրորդ Օրինաց):

■ **«հզոր բազուկով նրանց այնտեղից դուրս բերեց»** ՀԿ-ում ՅԱՀՎԵին ֆիզիկական տերմիններով պատկերելու տիպիկ նկարագրություն է (տես՝ LXX Ելից 6:1,6): Սա նման է «Նրա աջ ձեռքը» անտրոպոմորֆիկ արտահայտությանը: Աստվածաշունչը Աստծո մասին խոսում է մարդկային տերմիններով (այսինքն՝ մարդաբանական /անտրոպոմորֆիկ/), չնայած որ Նա հավիտենական, ոչ ֆիզիկական, ամենագո Հոգի է: Աստվածաշնչյան այսպիսի նմանությունները՝ անալոգիաները, շատ անհասկացողությունների և բառացի մեկնաբանությունների տեղիք են տվել: Աստվածաշունչը Աստծո մասին խոսում է նմանօրինակությամբ, այլաբանությամբ և բացասման՝ ժխտման սկզբունքով: Աստված շատ ավելի մեծ է քան ընկած, ժամանակով սահմանափակ, երկրավոր մարդկային էակները կարող են գիտակցել կամ խոսքերով արտահայտել: Տե՛ս Հատուկ Թեմա 2:33:

13:18 «Եվ մոտ քառասուն տարի համբերեց նրանց վարքն անապատում» Սա արտացոլում է 2 Օրինաց 1:31-ը և կարող է թարգմանվել որպես «դայակի պես կերակրեց» (տես՝ MSS A, C): Սա արտացոլում է ՀԿ-ի Ելից և ԹՎոց գրքերը:

«Քառասուն» տերմինը հաճախ ամբողջացված թիվ է: Տառացի Քորեբից մինչև Սասիմ հասնելու ժամանակը տևեց 38 տարի՝ երկու տարի էլ Քորեբի (Սինա) սարի վրա: Տե՛ս Հատուկ Թեմա 1:3:

- 13:19 «յոթ ազգ կործանեց»** Պաղեստինի ազգերին կարելի է բնութագրել մի քանի կերպ.
1. հավաքական տերմինով՝ քանանացիներ (այսինքն՝ հարթավայրի բնակիչներ. տե՛ս՝ Ծննդ.10:18-29; Դատ.1:1) կամ ամորհացիներ (այսինքն՝ լեռնաբնակներ. տե՛ս՝ Ծննդ.15:16)
 2. երկու ազգ (խևացիներ, քանանացիներ. տես՝ Ծննդ.13:7; 34:30; Դատ.1:4-5)
 3. երեք ազգ (խևացիներ, քանանացիներ, քետացիներ. տես՝ Ելից 23:28)
 4. վեց ազգ (քանանացիներ, քետացիներ, ամորհացիներ, փերեզացիներ, խևացիներ, հերուսացիներ. տես՝ Ելից 3:8,17; 33:2; 34:11; 2 Օր.20:17; Հեսու 9:1; 12:8)
 5. յոթ ազգ (քետացիներ, գերզեսացիներ, ամորհացիներ, քանանացիներ, փերեզացիներ, խևացիներ, հերուսացիներ. տես՝ 2 Օր.7:1; Հեսու 3:10; 24:11)
 6. տաս ազգ (կենեցիներ, կենեզացիներ, կեդմոնացիներ, քետացիներ, փերեզացիներ, ռափայիմներ, ամորհացիներ, քանանացիներ, գերզեսացիներ, հերուսացիներ. տես՝ Ծննդ.15:19-21)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՂԵՍՏԻՆԻ ՆԱԽԱԻՍՐԱՅՅԵԼԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Գոյություն ունեն ժողովուրդների մի քանի ցանկ.

1. Ծննդոց 15:19-21 (10)

ա. Կենեցիներ	դ. Քետացիներ	է. Ամորհացիներ	ժ. Հերուսացիներ
բ. Կենեզացիներ	ե. Փերեզացիներ	ը. Քանանացիներ	
գ. Կեդմոնացիներ	զ. Ռափայիմներ	թ. Գերզեսացիներ	
2. Ելից 3:17 (6)

ա. Քանանացիներ	դ. Փերեզացիներ
բ. Քետացիներ	ե. Խևացիներ
գ. Ամորհացիներ	զ. Հերուսացիներ
3. Ելից 23:28 (3)

ա. Խևացիներ	զ. Քետացիներ
բ. Քանանացիներ	

- | | | |
|---------------------|----------------|-----------------|
| 4. 2 Օրինաց 7:1 (7) | | |
| ա. Քետացիներ | դ. Քանանացիներ | է. Հերուսացիներ |
| բ. Գերզեացիներ | ե. Փերեզացիներ | |
| գ. Ամորիացիներ | զ. Խևացիներ | |
| 5. Հեսու 24:11 (7) | | |
| ա. Ամորիացիներ | ե. Քետացիներ | ը. Հերուսացիներ |
| բ. Փերեզացիներ | զ. Գերզեացիներ | |
| գ. Քանանացիներ | է. Խևացիներ | |

Բ. Այս անունների ծագումը պատմական փաստերի սղության պատճառով կասկածելի է: Ծննդոց 10:15-19-ը դրանցից մի քանիսին ներկայացնում է որպես Քամի որդու՝ Քանանի հետ կապ ունեցող ազգերի:

Գ. Ծննդոց 15:19-21-ում գետնեղված ամենաերկար ցուցակից հակիրճ նկարագրություններ.

1. Կենեցիներ - BDB 884
 - ոչ իսրայելացիներ
 - «դարբին» բառի հետ կապված անուններ, որոնք հնարավոր է վերաբերում են մետաղագործների կամ երաժշտագետների (տես՝ Ծննդ.4:19-22)
 - Մինա լեռան՝ Քերթոնի հյուսիսային մասում, շրջանի հետ կապված
 - Հոթորի՝ Մովսեսի աներոջ հետ կապված անուն (տես՝ Դատ.1:16; 4:11)
2. Կենեզացիներ - BDB 889
 - հրեաների բարեկամ
 - Եդովմի մի ցեղ (տես՝ Ծննդ.15:19)
 - ապրում էին Նեգեբում
 - հավանաբար խառնվել էին Հուդայի հետ (տես՝ Թվոց 32:12; Հեսու 14:6,14)
3. Կեդմոնացիներ - BDB 870 II
 - ոչ իսրայելացիներ, հավանաբար Իսմայելի մի սերունդ (տես՝ Ծննդ.25:15)
 - «արևելքի» բառի հետ կապված անուն
 - ապրում էին Նեգեբում
 - հավանաբար կապված է «արևելքի մարդիկ» խոսքի հետ (տես՝ Հոր 1:3)
4. Քետացիներ - BDB 366
 - ոչ իսրայելացի
 - Քետի ժառանգները
 - Անատոլիայի թագավորությունից (Փոքր Ասիա, Թուրքիա)
 - շատ վաղուց ներկա էին Քանանում (տես՝ Ծննդոց 23; Հեսու 11:3)
5. Փերեզացիներ - BDB 827
 - ոչ իսրայելացիներ, հնարավոր է Հուրիտներ
 - ապրում էին Հուդայի անտառուտ շրջաններում (տես՝ Ծննդ.34:30; Դատ.1:4; 16:10)
6. Ռափայիմներ - BDB 952
 - ոչ իսրայելացիներ, հնարավոր է հսկաներ (տես՝ Ծննդ.14:5; Թվոց 33:33; 2Օր. 2:10-11,20)
 - ապրում էին Հորդանանի արևելյան ափին (տես՝ Ծննդ.15:20; Հեսու 12:4; 13:12; 2 Օր.2:8-11,20; 3:13) կամ արևմտյան ափին (տես՝ Հեսու.15:8; 17:15; 2 Թագ.5:18,22; 23:13; 1 Մնաց.20:4)
 - ռազմիկների՝ հերոսների ցեղ էին
7. Ամորիացիներ - BDB 57
 - Քամից դեպի հյուսիս-արևմուտք ապրող մարդկանց խումբ (տես՝ Ծննդ.10:16)
 - դարձան Քանանի հիմնական բնակիչները (տես՝ Ծննդ.15:16; 2 Օր.1:7; Հեսու 10:5; 24:15; 2 Թագ.21:2)
 - անվանումը հնարավոր է նշանակում է «արևմուտք»
 - ISBE, հատոր 1, էջ 119-ում ասվում է, որ այս տերմինը մատնանշում է՝

ա. ընդհանրապես Պաղեստինի բնակիչներին
բ. ծովափնյա հարթավայրի դիմաց գտնվող լեռնաբնակ բնակչությանը
գ. հատուկ ժողովրդի՝ իր սեփական թագավորով

8. Քանանացիներ - BDB 489

- Քամից (տես՝ Ծննդ.10:15)
- Քանանի բոլոր ցեղերի հիմնական բնակատեղին Հորդանանի արևմտյան մասում
- Քանան բառի նշանակությունը հայտնի չէ. հավանաբար նշանակում է «առևտրական» կամ «կարմրամանուշակագույն երանգ»
- որպես մարդկային ցեղ բնակվում էին ափամերձ հարթավայրում (տես՝ Թվոց 13:29)

9. Գերգեսացիներ - BDB 173

- Քամից (տես՝ Ծննդ.10:16) կամ առնվազն «Քանանի որդիներից մեկից [այսինքն՝ Քանանի երկրից]» ISBE, հատոր 2, էջ 1232

10. Հերուսացիներ - BDB 101

- Քամից (տես՝ Ծննդ.10:16)
- Հերուս/Սաղեմ/Երուսաղեմ քաղաքից (տես՝ Հեսու15:63; Դատ.19:10)
- Եզեկ.16:3,45 պնդում է, որ նրանք ամորհացիների և քետացիների խառնուրդ ռասսա էին

11. Խևացիներ - BDB 295

- Քամից (տես՝ Ծննդ.10:17)
- համաձայն LXX-ի թարգմանության նշանակում է քոռեցի (Horite) (տես՝ Ծննդ.34:2; 36:20-30; Հեսու 9:7)
- ըստ երևույթին երբայերեն «քարանձավ» բառից է, հետևաբար քարանձավաբնակներ էին
- նրանք ապրում էին Լիբանանի բարձրավանդակներում (տես՝ Հեսու 11:3; Դատ.3:3): 2 Թագ.24:7-ում նրանք թվարկվում են Տիվրոսի և Սիդոնի հետ միասին

■ **«որպես ժառանգություն»** Այս եռակի բաղադրյալ տերմինը՝ *kata + klēros + nemō* Մեպտուազինտայում շատ է հանդիպում, սակայն ՆԿ-ում գործածված է միայն այստեղ (այլ տեքստերում կիրառված է *kata + klēros + didōmi*): Այն ենթադրում է ցեղերի միջև Խոստացյալ/Ավետյաց Երկրի վիճակ զգելու միջոցով բաժանելը (տես՝ Հեսու 13-19): *Klēros* բառից է ծագել անգլերենի «clergy» (հոգևորականություն) բառը, սակայն ՆԿ-ում այն միանշանակ վերաբերում է հավատացյալների մարմնին և ոչ թե որևէ էլիտ խմբի:

■ **«չորս հարյուր հիսուն տարի»** Այս թիվը կարծես թե սկիզբ է առել՝

1. Եգիպտոսի 400 տարվա գերությունից (տես՝ Ծննդ.15:13)
2. Անապատում 40 տարվա դեգերելու տարիներից (տես՝ Ելից 16:35; Թվոց 14:33-34; 32:13)
3. 7-10 տարի տևողությամբ նվաճման ժամանակից (տես՝ Հեսու 14:7,10)

Textus Receptus (KJV) թարգմանությունը այս խոսքը տեղափոխել է համար 20 /ինչպես և հայերեն թարգմանությունը/ և կարծես թե ներգրավել է Դատավորացը (հետևելով Ջոզեֆուսին, *Հնություններ*, 8.3.1), սակայն այսպիսի հերթականություն չեն տալիս ավելի հին և լավագույն հունարեն ձեռագրերը (տես՝ ա, A, B, C), որը ավելի համապատասխանում է 3 Թագ.6:1-ի ժամանակագրությանը: NASB թարգմանության մեջ կարելի է գտնել այս թվի մեջբերման հատվածի շեշտադրման բացթողում:

13:20 Սա վերաբերում է Դատավորաց գրքից մինչև 1 Թագավորաց 7 ընկած ժամանակահատվածին:

13:21 Սա վերաբերում է 1 Թագավորաց 8-10:

■ **«քառասուն տարով»** Այս ժամանակային արտահայտությունը ՀԿ-ում բացակայում է, եթե ՀԿ-յան ձեռագրային խնդիրը կապված 1 Թագ.13:1-ի հետ չի պարունակում «քառասուն» բառը (NIV): Ջոզեֆուս, *Հնություններ* 6.14.9 նույնպես նշում է, որ Սավուրը թագավորեց «քառասուն» տարի: Մեպտուազինտան պարզապես բաց է թողնում այդ ամբողջ նախադասությունը և սկսում է 1 Թագ.13:2-ից: «Քառասուն» բառը ակնհայտ է, որ ռաբբիական ավանդույթ էր:

13:22 «ԵՍ ՀԵՍՏԻ ՈՐՈՒ ԴՎՎԹԻՆ ԳՏԱ ԻՄ ՍՐՏԻ ՀԱՄԵՄԱՏ ՄԱՐԴ» Սա անմիջական մեջբերում չէ ՀԿ-ից, այլ կարծես թե Սաղմ.89:20-ի և 1 Թագավորաց 13:14-ի համադրությունն է: Պետք է հիշել, որ Պողոսի այս քարոզը հետևում էր Գործք 7-ի Ստեփանոսի պատմական իրադարձությունների հերթականությանը: Այն, որ Դավիթը կարող էր կոչվել Աստծո սրտի համեմատ մարդ, երբ հանդիսանում էր այդպիսի հայտնի մեղսավոր (տես՝ Սաղմ.32,51; 2 Թագ.11), մեծ քաջալերանք է բոլոր հավատացյալների համար:

Մեջբերման այսպիսի համադրությունը ենթադրում է մի քանի բան՝

1. Սա ռաբբիների կողմից կիրառվող չափորոշիչ ձև էր, որը բացատրում է ՆԿ-ում ՀԿ-յան անսովոր մեջբերումների առկայությունը
2. Սա արդեն իսկ հանդիսանում էր Քրիստոնեական վարդապետության մի մասը. Պողոսը հաճախ է մեջբերումներ կատարում վաղ Քրիստոնեական օրհներգներից և հավանաբար այլ գրականությունից:
3. Այս մեջբերումը հատուկ է Պողոսին և դա ցույց է տալիս, որ Ղուկասը Գործքում արձանագրված Պողոսի այս առաջին ամփոփիչ քարոզը վերցրել է հենց Պողոսից:



NASB, NKJV	«ով կկատարի Իմ ամբողջ կամքը»
NRSV	«ով կիրականացնի Իմ բոլոր երազանքները»
TEV	«ով կանի ամեն ինչ որ Ես եմ ցանկանում»
NJB	«ով կիրականացնի Իմ ամբողջ կամքը»

Այս համարը ՀԿ-յան ակնարկի համադրությունն է: Նախադասության այս հատվածը ՀԿ-ում չկա: ՀԿ-ի համատեքստում Սավուղը անհնազանդ և մերժված էր: Սակայն Դավթի կյանքում նույնպես անհնազանդություն կար: Աստված աշխատում է անկատար մարդկանց հետ, որպեսզի իրականացնի փրկության Իր ծրագիրը:

13:23 Սա գուգահեռ է Գործք 7:52-ին: Այն մատնացույց է անում ՀԿ-ի բոլոր նախկին խոստումները՝

1. փրկություն, որ կնոջ սերմի միջոցով է լինելու. Ծննդ.3:15
2. իշխան, որ Հուդայից է լինելու. Ծննդ.49:10
3. գալիք առաջնորդ, որ լինելու է Մովսեսի պես՝ Մարգարե. 2 Օր.18:15,18
4. Դավթի սերնդից է առաջնորդը լինելու. 2 Թագ.7; Սաղմ.132:11; Ես.11:1,10; Մատթ.1:1
5. լինելու է չարչարվող ծառա. Ես.52:13-53:12
6. փրկիչ. Ղուկ.2:11; Մատթ.1:21; Հովհ.1:29; Գործք 5:31

Ղուկասի համար աչքի ընկնող է #4-ը (տես՝ Ղուկ.1:32,69; 2:4; 3:31; Գործք 2:29-31; 13:22-23): Մեսիան լինելու էր Հեստեի արմատից (տես՝ Ես.9:7; 11:1,10; 16:5):

13:24 Հովհաննես Մկրտչի ծառայությունը նկարագրվում է Մատթ.3:1:11; Մարկ.1:1-8; Ղուկ.3:2-17; Հովհ.1:6-8,19-28-ում: Հովհաննեսը կատարեց Մատթեոս 3:1; 4:5-6-ի մարգարեությունները: Ապաշխարության համար իր քարոզչությունը նաև օրինակ հանդիսացավ Հիսուսի առաջին քարոզների համար (տես՝ Մատթ.4:17; Մարկ.1:14-15):

13:25 «Երբ Հովհաննեսը ավարտում էր իր ընթացքը» Աստված հատուկ գործ ուներ Հովհաննեսի համար, որ նա կատարեր: Հովհաննեսի հանրային ծառայությունը տևեց ընդամենը տասնույթ ամիս: Բայց դա ինչպիսի՜ մեկ ու կես տարի էր. լի Հոգու գորությանը և Մեսիայի ճանապարհի պատրաստությամբ:

Պողոսը ՀԿ-ը գիտեր իր երիտասարդությունից ի վեր, ժողովարանի դպրոցից և Երուսաղեմում իրեն հատուկ կրթող ռաբբի Գամաղիելից: Նա լսեց ավետարանը՝

1. Ստեփանոսից
2. իր կողմից հայածվող հավատացյալներից
3. Հիսուսից ունեցած իր հատուկ տեսիլքի միջոցով
4. Դամասկոսից մի բարեպաշտ հրեայի կողմից
5. Արաբիայում Հիսուսի կողմից
6. երբ այցելեց մյուս Առաքյալներին

Երբ հարմար առիթ է լինում, նա փորձում է մեջբերում անել Հիսուսի կյանքից: Ահա այստեղ նա Ավետարանից Նրա Կյանքի վերաբերյալ դեպքեր է մեջբերում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:26-41

²⁶Մարդիկ, եղբայրներ, Աբրահամի ցեղի որդիք, և ովքեր ձեզանից Աստծուց վախենում են, փրկության այս խոսքը ձեզ ուղարկվեց: ²⁷Մակայն Երուսաղեմում բնակվողները և նրանց իշխանավորները, քանի որ ոչ Նրան ճանաչեցին և ոչ էլ մարգարեների ձայները, որ ամեն շաբաթ օր ընթերցվում է, կատարեցին դրանք՝ Նրան դատապարտելով: ²⁸Ու թեև մահվան ոչ մի պատճառ չգտան, Պիղատոսից պահանջեցին, որ Նա սպանվի: ²⁹Եվ երբ կատարեցին այն ամենը, ինչ Նրա մասին գրված էր, փայտից իջեցրին Նրան և գերեզման դրեցին: ³⁰Բայց Աստված Նրան մեռելներից հարություն տվեց, ³¹և Նա շատ օրեր երևաց նրանց, ովքեր Նրա հետ Գալիլիայից եկել էին Երուսաղեմ, որոնք ժողովրդի առաջ Նրա վկաներն են: ³²Եվ մենք ավետում ենք ձեզ բարի լուրը, թե ինչպես այն խոստումը, որ հայրերին էր տրված, ³³Աստված կատարեց մեզ՝ նրանց որդիների համար, Հիսուսին հարուցանելով, ինչպես գրված է երկրորդ սաղմոսում. «ԳՈՒ ԻՄ ՈՐԳԻՆ ԵՍ. ԵՍ ԱՅՍՕՐ ԾՆԵՑԻ ՔԵՉ»: ³⁴Եվ Նրան մեռելներից հարություն տալու վերաբերյալ, որ էլ երբեք ապականության չի դառնալու, Նա այսպես ասաց. «ՔՈ ՍՐԲԻՆ ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԵՍՆԵԼ ՉԵՍ ՏԱ»: ³⁵Նույնպես ուրիշ *սաղմոսում* ասում է. «ՔՈ ՍՐԲԻՆ ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԵՍՆԵԼ ՉԵՍ ՏԱ»: ³⁶Բայց Դավիթն իր սերնդի մեջ ծառայեց Աստծո կամքին և ննջեց և դրվեց իր հայրերի հետ և ապականություն տեսավ: ³⁷Բայց Նա, Ում Աստված հարություն տվեց, ապականություն չտեսավ: ³⁸Արդ ձեզ թող հայտնի լինի, մարդիկ, եղբայրներ, որ այս Մարդու միջոցով մեղքերի թողություն է ավետարանվում ձեզ: ³⁹և Նրանով, ով որ հավատա, կարդարանա այն բոլոր բաներից, որից Մովսեսի օրենքով չկարողացաք արդարանալ: ⁴⁰Արդ զգուշացե՛ք, որ չլինի թե ձեզ վրա գա այն, ինչ Մարգարեներում ասվեց. ⁴¹«ՏԵՍԵՔ, ԱՆԱՐԳՈՂՆԵՐ, ԵՎ ՉԱՐՄԱՑԵՔ ԵՎ ԿՈՐԾԱՆՎԵՔ. ՔԱՆԻ ՈՐ ԵՍ ՁԵՐ ՕՐԵՐՈՒՄ ՄԻ ԳՈՐԾ ԵՄ ԿԱՏԱՐՈՒՄ, ՄԻ ԳՈՐԾ, ՈՐԻ ՄԱՍԻՆ, ԵԹԵ ՄԵԿԸ ՁԵՉ ԱՍԵՐ, ԵՐԲԵՔ ՉՊԻՏԻ ՀԱՎԱՏԱՅԻՔ»:

13:26 «Աբրահամի ցեղի որդիք, և ովքեր ձեզանից Աստծուց վախենում են» Սա վերաբերում է թե՛ հրեա լսարանին (կամ նորադարձներին) և թե՛ հեթանոսներին (աստվածավախներին), որոնք հարում էին հուդայականության միաստվածությանն ու խրատներին:

■ **«այս փրկությունը /փրկության այս խոսքը/»** Սա վերաբերում է Մեսիայի միջոցով մեղավոր մարդկությանը փրկելու Աստծո խոստմանը (տես՝ Ծննդ.3:15): Այն տարածվում է նաև հեթանոսների վրա (տես՝ Ծննդ.12:5; Ելից 19:5-6 և Գործք 28:28 և 13:46):

13:27 Սա շատ ցավալի համար է: Այն հատակ ամփոփում է Երուսաղեմի հրեաների կուրությունը Սուրբ Գրերի հանդեպ, չնայած որ նրանք մշտապես կարդում էին դրանք: Անտեսելով մարգարեական նշանները (տես՝ Սաղմոս 22; Եսայի 53; Չաքարիա, Մաղաքիա) և մարգարեությունները (Եսայի, Հովնան) նրանք դարձան մարգարեական նշան: Նա եկավ իրեններին, սակայն նրանք չընդունեցին Նրան (տես՝ Հովհ.1:11-12):

13:28 Գործքը կրկին ու կրկին արձանագրում է Երուսաղեմում գտնվող հրեաների պատասխանատվությունը (տես՝ 2:23, 36; 3:13-15; 4:10; 5:30; 7:52; 10:39; 13:27-28):

13:29 «նրանք... նրանք» Սրանք պետք է որ վերաբերեն տարբեր խմբերի: Առաջինը նրանք էին, որոնք փնտրում էին Հիսուսի մահը (այսինքն՝ հրեա առաջնորդները, Պիղատոսի առջև կանգնած ամբոխը): Երկրորդ խմբի մեջ այն մարդիկ էին, որոնք ուզում էին պատշաճ թաղում: Այս մարդկանց մեջ հնարավոր է լինեին անկեղծ հրեաներ, որոնք անարդարություն տեսան (ինչպես օրինակ Գործք 8:2, ներառում է Ստեփանոսի թաղումը) կամ Հովսեփ Արիմաթացու և Նիկողեմոսի պես գաղտնի աշակերտներ (տես՝ Հովհ.19:38-42):

■ **«այն ամենը, ինչ Նրա մասին գրված էր»** Հիսուսի կյանքը կատարված մարգարեություններից մեկն էր: Աստվածաշնչի ներշնչված լինելու և Հիսուս Նազովրեցու Մեսիա լինելու ամենահզոր ապացույցներից է կանխավաճ մարգարեությունը (տես՝ Դուկ.22:22; Գործք 2:23; 3:18; 4:28; 10:43; 13:29; 24:14; 26:22):

Իհարկե ճիշտ է, որ Հիսուսի կյանքի հետ կապված շատ մանրամասներ, որոնց մենք այսօր եկեղեցում կոչում ենք մարգարեություն, ինչ-որ առումով տիպաբանություն են: Իսրայելի կյանքում կան տեղի ունեցած շատ իրադարձություններ, որոնք կարծես թե նաև տեղի են ունենում Հիսուսի կյանքում (օրինակներից մեկը՝ Ովսեսա 11:1): Հաճախ երկիմաստ, անուղղակի իմաստով գրված աստվածաշնչյան հատվածները, որոնք ըստ համատեքստի հնարավոր չէ հասկանալ որպես մարգարեական, կարծես թե կյանքի են կոչվում Հիսուսի երկրավոր կյանքի դեպքերի որևէ տեսարանում (օր.՝ Սաղմոս 22; Եսայի 53):

Դրա համար ներշնչանք է պահանջվում և փրկության պատմության ընթացքը տեսնելու հասկացողություն, որպեսզի լիարժեք գնահատենք ՀԿ-ը, թե ինչպես է այն քողարկել Հիսուսին իր էջերում: Ուզում եմ նաև ավելացնել, որ չնայած նրան, որ ՆԿ-ի հեղինակները կիրառում են տիպաբանություն, նույնիսկ այեգորիաներ, մեր օրերի քարոզիչներն ու ուսուցիչները չպետք է կիրառեն մեկնաբանության այս մեթոդը: Տե՛ս Բոբի Աստվածաշնչյան Մեկնաբանության Մեմինարը՝ [online տարբերակով www.freebiblecommentary.org](http://www.freebiblecommentary.org)

■ «**խաչից /հայերենում՝ փայտից/**» Տե՛ս գրառումներ 5:30 և 10:29:

13:30,33,34,37 «Բայց Աստված Նրան մեռելներից հարություն տվեց» ՆԿ-ը փաստում է, որ Երրորդության բոլոր երեք անձերն էլ գործել են Հիսուսի հարության ժամանակ.

1. Հոգին (տես՝ Հռոմ.8:11)
2. Որդին (տես՝ Հովհ.2:19-22; 10:17-18)

Հայրը (տես՝ Գործք 2:24,32; 3:15,26; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31; Հռոմ.6:4,9; 10:9; 1 Կորնթ. 6:14; 2 Կորնթ.4:14; Գաղ.1:1; Եփես.1:20; Կող.2:12; 1 Թեսաղ.1:10)

Սա հաստատություն էր Հոր կողմից, որ Հիսուսի կյանքը և ուսմունքները ճշմարիտ են: Սա *Kerygma*-ի (այսինքն՝ Գործքի քարոզների բովանդակության) հիմնական դրույթներից է: Տե՛ս Հատուկ Թեմա 2:14:

13:31 «շատ օրեր» Գործք 1:3 խոսքն ասում է «քառասուն օր»: Սակայն քառասունը ՀԿ-ում ընդունված ամբողջ թիվ է: Տե՛ս Հատուկ Թեմա 1:3:

■ «**Նա երևաց**» Տե՛ս Հատուկ Թեմա. Հարությունից հետո Հիսուսի հայտնության ղեպերը, 1:3-ում:

13:32 «խոստումը, որ հայրերին էր տրված» Սա վերաբերում է ՅԱՀՎԵԻ առաջին խոստմանը, որ տվել էր Աբրահամին՝ երկրի և սերնդի համար (տես՝ Ծննդ.12:1-3; Հռոմեացիների 8): Այս նույն խոստումը Աստծո ներկայության և օրհնության համար կրկին տրվում է Նախահայրերին և նրանց որդիներին (տես՝ Եսայի 44:3; 54:13; Հովել 2:32): ՀԿ-ը կենտրոնանում է երկրի (հողատարածքի) վրա, մինչդեռ ՆԿ-ը՝ «սերմի» (սերնդի): Պողոսն ակնարկում է հենց Հռոմ.1:2-3-ի խոստումը:

13:33 Սա մեջբերում է Սաղմ.2:7-ից, որը հանդիսանում է մեսիական արքայական սաղմոս Աստծո Խոստացյալ Մեսիայի կոնֆլիկտի և հաղթանակի վերաբերյալ: Հիսուսը սպանվեց չար ուժերի կողմից (մարդկային և դիվական), սակայն Աստված Նրան հաղթական հարություն տվեց (տես՝ Հռոմ.1:4):

Այս համարը և Հռոմ.1:4 գործածվում էին առաջին հերետիկոսների (որդեգրվածների) կողմից այնդեպ, որ Հիսուսը Մեսիա դարձավ հարության ժամանակ: Անշուշտ ՆԿ-ում շեշտադրվում է, որ Հիսուսը հաստատվեց և փառավորվեց Իր հնագանդության համար, սակայն սա պետք չէ առանձնացնել Իր նախկինում ունեցած փառքից և աստվածությունից (տես՝ Հովհ.1:1-5,9-18; Փիլ.2:6-11; Կող.1:13-18; Եբր.1:2-3):

Այս նույն ԲԱՅԸ՝ «հարություն տվեց» (*anistēmi*) կիրառվում է Գործք 3:26-ում Աստծո համար, որ հարություն է տալիս «Իր ծառային» և Գործք 3:22-ում, երբ Աստված հարություն է տալիս Մարգարեին (տես՝ 7:37; 2 Օր.18:19): Սա կարծես թե մեռելներից «հարություն տվեց» խոսքից զատ կիրառություն է (տես՝ հհ.30,34,37): Հիսուսը «հարություն առավ» նախքան մահանալը:

13:34 «երբեք ապականության չի դառնալու» Այս արտահայտությունը վերաբերում է Հիսուսի մահվանն ու հարությանը: Նա ավելի շուտ առաջինն էր հարություն առնողների մեջ (անջեցյալներից անդրանիկը, տես՝ 1 Կորնթ.15:20), քան թե վերակենդանացածների: Աստվածաշնչում շատ մարդիկ էին կրկին ֆիզիկական կյանքի կոչվել, սակայն նրանք բոլորն էլ պետք է կրկին մեռնեին: Ենովքը և Եղիան վերցվել են երկինք առանց մահ տեսնելու, սակայն նրանք հարություն չէին առել:

■ «**ԵՍ ՔԵՉ ՊԻՏԻ ՏԱՄ ԴԱՎԹԻ ԱՆՓՈՓՈՒՄ /անգլ.՝ ՍՈՒԲԲ և ՀԱՍՏԱՏ օրհնությունները/ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ**» Սա մեջբերված է Եսայի 55:3-ից LXX: Մեջբերումը պարունակում է «հաստատ օրհնություններ» հոգնակին, սակայն չի մատնանշում, թե ինչին է վերաբերում: Դա մի բան է, որ Աստծուց փոխանցվել է Դավթին, ապա Հիսուսին և հետո Նրա հետևորդներին (մեջբերման մեջ «Ձեզ» ՀՈԳՆԱԿԻՈՎ): ՀԿ-յան համատեքստը ցույց է տալիս «ձեզ» բառի կարևորությունը (տես՝ Եսայի 55:4-5 LXX, «Ահա նրան ժողովուրդների վկա, ազգերի առաջնորդ և հրամանատար դրի: Ահա չճանաչած ազգիդ պիտի կանչես, ազգեր, որ քեզ չէին ճանաչում, վազելու են քեզ մոտ, քո Տեր Աստծո՝ Իսրայելի Սրբի պատճառով. քանի որ Նա քեզ փառավորեց» Մեպտուազիմտա, Չոնդերվան, 1976, էջ՝ 800):

13:35-37 Այստեղ միևնույն փաստերն են, որոնք ավելի շուտ Պետրոսը կիրառեց Պենտեկոստեի քարոզի ժամանակ (տես՝ 2:24-32), նույնպես վերցված Սաղմոս 16-ից: Գործքում զետեղված այս առաջին քարոզները արտացոլում են վաղ եկեղեցու Քրիստոնեական վարդապետությունը: ՀԿ-յան մի քանի Մեսիական տեքստեր իրար հակասում են: Հետևաբար, հաճախ ԴԵՐԱՆՈՒՆԵՐԸ և մանրամասները թվում են, թե համապատասխանում են ՆԿ-ի հեղինակի հիմնական նպատակին, որն էր հիմնավորել Հիսուսի ֆիզիկական հարությունը և այն, որ Դավիթը ապականություն էր տեսել:

13:38 Պողոսը կիրառում է ՀԿ-ից հավելյալ փաստ, ինչպես անում է Պետրոսը (Գործք 2) և Ստեփանոսը (Գործք 7), որպեսզի խոսքը հասցնի ժողովարանում գտնվող այս յսարանին:

Պողոսը բոլոր նրանց, ովքեր կվստահեն Հիսուսին որպես իրենց Փրկիչը (այսինքն՝ «Այն Մեկը» հ.38,39) խոստանում է լիարժեք ներում բոլոր մեղքերից, որը հուղայականությունը չէր կարող ապահովել (տես՝ հ.39):

13:39 «և Նրանով ով որ...» Նկատեք տիեզերեկան տարրը: Աստված սիրում է բոլոր մարդկանց և բոլոր մարդիկ ունեն հնարավորություն Նրան հավատքով պատասխանելու (տես՝ 10:43; Եսայի 42:1,4,6,10-12; 55; Եզեկ.18:23,32; Հովել 2:28,32; Հովհ.3:16; 4:42; Հռոմ.3:22,29,30; 10:9-13; 1 Տիմ.2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ.3:9; 1 Հովհ.2:1; 4:14):

■ «ով որ հավատա» Տե՛ս Հատուկ Թեմա 3:16 և 6:5:

-
- NASB, NKJV «կազատվի բոլոր այն բաներից» (հ. 39)
- NRSV «կազատվի բոլոր այն մեղքերից» (հ. 39)
- TEV «կազատվի բոլոր մեղքերից» (հ. 39)
- NJB «կարդարացվի բոլոր մեղքերից» (հ. 38)

Սա բառացի նշանակում է «արդարացված» (ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ): Սա մի իրավաբանական տերմին է, որը նկարագրում է Աստծո առջև Հիսուս Քրիստոսի արդարությամբ մեր կանգնելը (տես՝ 2 Կորնթ.5:21): Եբրայերեն բնագրում այն նշանակում է «գետի եղեգ» (տես՝ Հատուկ Թեմա 3:14): Այն արտացոլում է ՀԿ-յան շինարարական մի տերմին, որը փոխաբերաբար կիրառվում էր Աստծո համար, որպես չափանիշ կամ չափորոշիչ, որի միջոցով կատարվում է դատաստանը:

■ «որից Մովսեսի օրենքով չկարողացաք արդարանալ» Սա էր Պողոսի հիմնական աստվածաբանական դրույթը (տես՝ Հռոմ.3:21-30): Մովսիսական օրենքը դաստիարակ էր, որպեսզի մեզ բերի մեր անձնական մեղքի գիտակցությանը և պատճառ հանդիսանա, որ մենք Քրիստոսին ցանկանանք (տես՝ Գաղ.3:23-29): ՀԿ-յան Օրենքը փրկության միջոց չէ, քանի որ բոլորն էլ մեղանշեցին (տես՝ Հռոմ.3:9-18,23; Գաղ.3:22): Այն դարձել էր մահապատիժ, անեծք (տես՝ Գաղ.3:13; Կող.2:14):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՈՂՈՍԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ ՄՈՎՍԻՍԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Այն բարի է և Աստծուց է (տես՝ Հռոմ.7:12,16)

Ա. Այն արդարության հասնելու և Աստծո կողմից ընդունված լինելու կերպ չէ (այն նույնիսկ կարող է անեծք դառնալ, տես՝ Գաղատացիներին 3):

Բ. Այն դեռևս հանդիսանում է Աստծո կամքը բոլոր հավատացյալների համար, քանի որ այն Աստծո հայտնությունն է Իր մասին (հաճախ հավատացյալներին համոզելու կամ քաջալերելու համար Պողոսը ՀԿ-ից մեջբերումներ է կատարում):

Գ. Հավատացյալները տեղեկացվում են ՀԿ-ի միջոցով (տես՝ Հռոմ.4:23-24; 15:4; 1 Կորնթ. 10:6,11), սակայն չեն փրկվում ՀԿ-ով (տես՝ Գործք 15; Հռոմեացիներին 4; Գաղատացիներին 3; Եբրայեցիներին):

Դ. Այն գործում է նոր ուխտի մեջ, որպեսզի.

1. ցույց տա մեղքը (տես՝ Գաղ.3:15-29)
2. փրկված մարդկությանը առաջնորդի հասարակության մեջ
3. տեղեկացնի Քրիստոնյաներին բարոյական որոշումների մասին

Անիծելու և օրհնությունից հեռանալու ու դրա մեջ հարատևելու այս աստվածաբանական առանձնահատկությունն է, որ խնդիր է առաջացնում հասկանալու Մովսիսական Օրենքի շուրջ Պողոսի ունեցած տեսակետը: Ջեյմս Սթյուարթի *Մարդը Քրիստոսի մեջ* (A Man in Christ, James Stewart, էջ՝ 26) գրքում նկարագրվում է Պողոսի պարադոքսալ մտածելակերպը և գրելաոճը.

«Մովորաբար մենք ակնկալում ենք այնպիսի մարդու, որը մտադիր է կառուցել մտածելակերպի և վարդապետության այնպիսի մի համակարգ, որը հնարավորինս խիստ կերպով կսահմանի իր կիրառած տերմինների նշանակությունը: Մենք ակնկալում ենք, որ նա նպատակ կհետապնդի հասնելու ճշգրտության՝ իր կարևորագույն գաղափարների դարձվածաբանության մեջ: Մենք պահանջում ենք, որ տվյալ հեղինակի կողմից ինչ-որ իմաստով մեկ անգամ օգտագործված բառը միևնույն իմաստն արտահայտի գրքի բոլոր էջերում: Սակայն այս բանը փնտրել Պողոսի դեպքում, նշանակում է հիասթափվել: Նրա դարձվածաբանության մեծ մասը հեղինակուկ է և ոչ թե խիստ հաստատուն... «Օրենքը սուրբ է» -գրում է նա, -«որովհետև իմ ներքին մարդով ես հրճվում եմ Աստծո Օրենքով» (տես՝ Հռոմ.7:12,22), սակայն *nomos*-ի մեկ այլ հստակ առանձնահատկություն ստիպում է նրան մեկ ուրիշ տեղ ասելու. «Քրիստոսը մեզ փրկագնեց Օրենքի անեծքից (տես՝ Գաղ.3:13)»:

13:40-41 Պողոսը կոչ է անում իրեն լսողներին (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) հավատքի՝ վստահության պատասխան տալու Հիսուսին, որպես Խոստացյալ Մեսիայի, որը միակ ճանապարհն է մեղքերի ներում ստանալու համար (տես՝ Հովհ.14:6; Գործք 4:12; 1 Տիմ.2:5):

Նա մեջբերում է կատարում Մեպտուազինտայի Ամբ.1:5-ը որպես զգուշացում: Պողոսն իր այլ թղթերում մեջբերում է կատարում Ամբ.2:4-ը որպես հարմար պատասխան (տես՝ Հռոմ.1:17; Գաղ.3:11): Պողոսը քարոզում է որոշման համար: Գաղափարական հավանությունը բավական չէ. պահանջվում է լիարժեք անձնական նվիրում Հիսուսին, որպես միակ հույսի: Այս սկզբնական հավատքը և ապաշխարության արձագանքը պետք է ներդաշնակության մեջ լինի ամենօրյա Քրիստոսակերպ կյանքի հետ:

Համար 41-ը նկարագրում է Քրիստոսով նոր ուխտի մեջ ունեցած փրկության ապշեցնող նոր մեթոդաբանությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 13:42-43

⁴²Եվ երբ հրեաները ժողովարանից դուրս եկան, հեթանոսներն աղաչում էին, որ հաջորդ շաբաթ էլ այդ բաները քարոզեն իրենց: ⁴³Երբ ժողովուրդն արձակվեց, հրեաներից և հրեության դարձած բարեպաշտ մարդկանցից շատերը գնում էին Պողոսի և Բառնաբասի ետևից, որոնք նրանց հետ խոսում էին և համոզում, որ շարունակեն Աստծո շնորհի մեջ մնալ:

13:42 Սա ցույց է տալիս Հոգու գորությունը (1) որն օգտագործում էր Պողոսի քարոզը (2) Աստծո պատկերով ստեղծված մարդկանց սրտերում ներման և Աստծո հետ իրենց փոխհարաբերությունը վերականգնելու փափագը՝ քաղցր:

13:43

NASB	«Աստվածավախ նորահավատներ»
NKJV	«բարեպաշտ նորահավատներ»
NRSV	«հրեության դարձած բարեպաշտ մարդիկ»
TEV	«հրեության դարձած հեթանոսներ»
NJB	«բարեպաշտ նորադարձներ»

Այս արտահայտությունը տառացիորեն նշանակում է «բարեպաշտ /երկրպագու/ նորահավատներ»: Սա հհ. 16,26-ի «Աստվածավախ մարդկանցից» բացի մեկ այլ խումբ է (տես՝ 10:2,22,35):

Համար 43-ը վերաբերում է այն հեթանոսներին, որոնք պաշտոնապես հրեաներ էին դարձել: Դրա համար պահանջվում էր.

1. վկաների ներկայությամբ ինքնամկրտվել
2. տղամարդկանց՝ թփատվել
3. հնարավորության դեպքում Երուսաղեմի Տաճարում զոհ մատուցել

ՆԿ-ում հրեության դարձածների վերաբերյալ մի քանի հաստատվածներ կան (տես՝ Մատթ.23; 15; Գործք 2:11; 6:5; 13:43):

■ **«համոզում, որ շարունակեն Աստծո շնորհի մեջ մնալ»** Համատեքստից դժվար է սահմանել այս արտահայտությունը:

1. հնարավոր է, որ նրան լսողներից ոմանք արդեն իսկ իրենց սրտերում ավետարանին արձագանքել էին
2. նրանց, որոնք ՀԿ-ի Աստծո շնորհի մասին իրենց հասկացած գաղափարներին հավատարիմ էին, հորդորում էր շարունակել փնտրել Աստծուն և կրկին լսել Պողոսին (տես՝ հ.44)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:44-47

44Եվ հեռույալ շաբաթ օրը գրեթե ամբողջ քաղաքը հավաքվեց Աստծո Խոսքը լսելու: **45**Երբ հրեաները այս ամբողջ տեսան, նախանձով լցվեցին և Պողոսի ասած խոսքերի դեմ խոսելով հակաճառում և հայհոյում էին: **46**Պողոսը և Բառնաբասն էլ համարձակորեն ասում էին. «Նախ պետք էր, որ Աստծո Խոսքը ձեզ ասվեր, բայց քանի որ դուք մերժում եք և ձեզ արժանի չեք համարում հավիտենական կյանքին, ահա, մենք դառնում ենք դեպի հեթանոսները: **47**Որովհետև Տերն այսպես պատվիրեց մեզ, *ասելով* «Քեզ հեթանոսների լույս նշանակեցի, որ Դու փրկություն լինես մինչև երկրի ծայրերը»:

13:44 Պողոսի պատգամը ակնհայտ ազդեցություն էր թողել: Սա նաև չափազանցություն է: Քաղաքի մարդկանցից ոչ բոլորն էին եկել այնտեղ:

■
NASB, NRSV, TEV «Տիրոջ Խոսքը»
NKJV, NJB, REB «Աստծո Խոսքը»

Այս հարցի շուրջ գոյություն ունի հունարեն մի ձեռագիր:

1. Տեր բառը MSS P⁷⁴, 8, A, B² ձեռագրերում է
2. Աստված բառը՝ MSS B, C, E

UBS⁴ ձեռագիրը տալիս է այս տեքստում «Տեր» բառը, սակայն գնահատում է »C» (որոշելու դժվարությունը): Չնայած այսքան շատ տարբերակների, այն ընդհանրապես չի փոխում տեքստի իմաստը: Ավետարանը Հիսուսի՝ Մեսիայի, Քրիստոսի մասին աստվածային հայտնությունն է:

13:45 «երբ հրեաները այս ամբողջ տեսան, նախանձով...» Արդյո՞ք այս նախանձի պատճառը մեծ փոփոխությունն էր, թե մեծաքանակ հեթանոսներն էին, հայտնի չէ այս համատեքստում: Նախանձը վերագրված է հրեա առաջնորդներին, թե՛ Երուսաղեմի և թե՛ Սիլյուսքի (տես՝ Մատթ.27:18; Մարկ.15:10; Գործք 17:5):

Հետագայում Պողոսը Հռոմեացիներին ուղղված իր նամակում զարգացնում է հրեաների անհավատության աստվածաբանական խնդիրը (տես՝ Հռոմեացիներին 9-11): Նա փաստում է, որ Աստված ժամանակավորապես կուրացրել է Իսրայելին, որպեսզի հեթանոսները կարողանան փրկվել: Այնուամենայնիվ, Աստված գործածելու է հեթանոսների փրկությունը որպես միջոց (այսինքն՝ նախանձը) ստիպելու Իսրայելին արձագանքել Քրիստոսին, որպեսզի բոլոր հավատացյալները միաբանվեն ավետարանի միջոցով (տես՝ Եփես.2:11-3:13):

Խնդիրը նրանում է, թե երբ է սա տեղի ունենալու: Այս նույն հարցը կարելի է տալ Չաք.12:10-ի համար: Արդյո՞ք այս մարգարեությունը կապ ունի առաջին՝ վաղ եկեղեցու հետ, որը կազմված էր հավատացյալ հրեաներից, թե վերաբերում է սպազա դարաշրջանին: Նախանձը սահմանված է փրկության նպատակով (տես՝ Հռոմ.10:19; 11:11,14), սակայն այս տեքստում այս նախանձը անհավատության պատճառ է հանդիսանում:

■ «**նախանձով լցվեցին**» Տե՛ս 3:10-ի գրառումները:

■ «**հայհոյում էին**» Մինչ այս հրեաները պաշտպանելով իրենց ավանդույթները և հակառակվելով Պողոսի քարոզչությանը, իրենք իսկ հայհոյության մեջ հանցավոր էին: Այստեղ ձեռնպահ վիճակ չի կարող լինել: Կա՛մ հուդայականությունը, կա՛մ էլ Քրիստոնեությունն է Աստծո կամքի ճշմարիտ դրսևորումը: Դրանցից մեկն է բացառիկ:

13:46 «համարձակորեն ասում էին» Սա Գործք Առաքելոցում Հոգով լցված լինելու նշաններից մեկն է:

■ «**Նախ պետք էր, որ Աստծո Խոսքը ձեզ ասվեր**» Սա առաջին միսիոներական քարոզչության ձևաչափն էր: Հրեաներն ունեին առաջնահերթությունը (տես՝ Հռոմեացիներին 9-11), սակայն Աստված ներգրավել էր հեթանոսներին էլ: Ժողովարանում գտնվող մարդիկ ՀԿ-ը գիտեին և կարող էին սուուզել մարգարեությունները: Գործքը այս գաղափարի և ձևաչափի շուրջ ունի մի շարք տեքստեր (տես՝ 3:26; 9:20; 13:5,14; 16:13; 17:2,10,17):

■ «**դուք մերժում եք**» Սա խիստ ԲԱՅ է (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ), որը մի քանի անգամ կիրառվում է Մեսիանիկությանը: Այս բառի հիմնական նշանակությունն է «մի կողմ նետել»: Այն կիրառվում է Ստեփանոսի քարոզի մեջ Իսրայելացիների վերաբերյալ (տես՝ 7:39): Այն նաև կիրառում է Պողոսը Հռոմ.11:1-2-ում, հաստատելու, որ Աստված չի մերժել Իր ժողովրդին, այլ նրանք են մերժել Իր Որդուն, փրկության համար տրված Նրա միակ միջոցը, Նրա կատարյալ հայտնությունը:

■ **«ձեզ արժանի չեք համարում հավիտենական կյանքին»** Դժվար է պաշտպանել նախասահմանության գաղափարը, որն այնքան հաճախ է շեշտադրվում Գործքում, լիազորված անձնական պատասխանի գաղափարի հետ միասին: Ոչ ոք չի կարող հավատքի գալ առանց Սուրբ Հոգու գործի՝ դեպի Իրեն քաշելու (տես՝ Հովհ.6:44,65), սակայն մենք դատվում ենք ըստ մեր տված կամ չտված պատասխանի: Նրանք մերժելով Պողոսի քարոզած ավետարանը, հայտնեցին իրենց իրական էությունը (տես՝ Հովհ.3:17-21): Չարձագանքելու մեղադրանքը հնարավոր չէ գցել Աստծո վրա: Նա պատրաստել է մի ճանապարհ՝ Իր Որդուն, սակայն Նա միակ ճանապարհն է: «Անհավատության» առեղծվածը սա է:

■ **«մենք դառնում ենք դեպի հեթանոսները»** Սա դառնում է ավետարանի քարոզչության սովորական ձևը (տես՝ 18:6; 22:21; 26:20; 28:28; Հռոմ.1:16):

13:47 Սա մեջբերում է Սեպտուագիևտայից՝ Եսայի 49:6-ից (տես՝ 42:6): Միմեռն ծերունին կատարում է այս մեջբերումը, երբ օրհնում է Հիսուսին Դուկաս 2:32-ում, հաստատելու Նրա տիեզերական մասշտաբի փրկագործության Մեսիական առաջադրանքը (տես՝ Հատուկ Թեմա 1:8): Նույնիսկ հնարավոր է, որ համատեքստում գտնվող «լույսը» վերաբերում է Պողոսին և Բառնաբասին, որոնք քարոզում էին ավետարանը այս հեթանոսներին (տես՝ «Հին Կտակարանի կիրառությունը Նոր Կտակարանում» Դերրել Բոչ, էջ՝ 97, *Աստվածաշնչյան Մեկնաբանության Հիմունքները*, Բրոդմեն և Հոլմեն Հրատարակչության, 1994 /»Use of the Old Testament in the New,» by Darrell Boch, p. 97 in *Foundations for Biblical Interpretation*, Broadman & Holman Publishers, 1994/): Այժմ Պողոսը կիրառում է այն ցույց տալու տիեզերական ավետարանի տիեզերական քարոզչությունը:

Եզրափակիչ արտահայտությունը՝ «մինչև երկրի ծայրերը» հնարավոր է 1:8-ի ակնարկն է: Այն ընդգծում է ավետարանի տիեզերական բնույթը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 13:48-52

⁴⁸Հեթանոսներն այս լսելով ուրախանում էին և Տիրոջ Խոսքն էին փառավորում. և բոլոր նրանք, որ հավիտենական կյանքի համար էին սահմանված, հավատացին: ⁴⁹Եվ Տիրոջ Խոսքը տարածվեց ամբողջ գավառում: ⁵⁰Բայց հրեաները զրգռեցին բարեպաշտ և երևելի կանանց և քաղաքի գլխավորներին և հալածանք բարձրացնելով Պողոսի և Բառնաբասի հանդեպ՝ նրանց դուրս արեցին իրենց սահմաններից: ⁵¹Եվ նրանք իրենց ոտների փոշին թափ տվեցին նրանց վրա և եկան Իկոնիոն: ⁵²Եվ աշակերտներն ուրախությամբ և Սուրբ Հոգով էին լցված:

13:48 «Հեթանոսները այս լսելով ուրախանում էին և Տիրոջ Խոսքն էին փառավորում» Այս մարդկանցից շատերը տարիներ շարունակ ժողովարաններում էին և երբեք չէին լսել Աստծո սիրո և Մեսիայի վրա ունեցած հավատքի միջոցով ամբողջ մարդկության ընդունված լինելու վերաբերյալ այս ընդգրկուն և տիեզերական պատգամը: Երբ լսեցին այդ մասին, ուրախությամբ ընդունեցին այն (տես՝ 28:28) և փոխանցեցին ուրիշներին էլ (տես՝ հ. 49):

■ **«բոլոր նրանք, որ հավիտենական կյանքի համար էին սահմանված, հավատացին»** Սա նախասահմանության շատ հստակ սահմանում է (բավականին տարածված ռաբբինների և միջկտակարանյան գրականության մեջ), սակայն միևնույն երկիմաստ փոխկապակցման մեջ է, ինչպես և շատ ՆԿ-յան հատվածներ, որոնք կապ ունեն Աստծո ընտրության և մարդու ազատ կամքի պարադոքսի հետ (տես՝ Փիլ.2:12,13): Այս բառը ծագել է ռազմական (*tassō*) տերմինից, որը նշանակում է «գինվորագրել» կամ «կարգել»:

Չինվորագրելու այս հասկացությունը վերաբերում է երկու փոխաբերական գրքերի, որոնց պահում է Աստված (տես՝ Դան.7:10; Հայտն.20:12): Առաջինը մարդկանց Գործերի Գիրքն է (տես՝ Սաղմ.56:8; 139:16; Եսայի 65:6 և Մադ.3:16), մյուսը՝ Կյանքի Գիրքն է (տես՝ Ելից 32:32; Սաղմ.69:28; Եսայի 4:3; Դան.12:1; Դուկ.10:20; Փիլ.4:3; Եբր.12:23; Հայտն.3:5; 13:8; 17:8; 20:12-15; 21:27): Տես Հատուկ Թեմա՝ Ընտրություն / նախասահմանություն և աստվածաբանական բալանսի կարիքը, 2:47:

13:50 «Բայց հրեաները զրգռեցին բարեպաշտ և երևելի կանանց» Այս տեքստը ներկայացնում է առաջին դարում Փոքր Ասիայի կանանց բարձր կարգավիճակի պատմական և մշակութային պատկերը (տես՝ 16:14; 17:4):

Այս համատեքստում այն վերաբերում է հուդայականությանը դարձած հեթանոսներին, որոնք նաև հասարակական առաջնորդներ էին կամ ամուսնացած էին քաղաքական առաջնորդների հետ: Ա. Թ. Ռոբերթսոնը, *Բառապատկերները Նոր Կտակարանում* (A. T. Robertson, *Word Pictures in the New*

Testament) հատոր 3, էջ՝ 201, հատակեցնում է այս հարցը, գրելով, որ հեթանոս կանանց մեծապես գրավում էր հուդայականությունը (տես՝ *Strabo* 7:2 և *Juvenal* 6:542) իր բարոյականությամբ:

■ **«հալածանք բարձրացնելով Պողոսի հանդեպ»** Պողոսը ակնարկում է այս մասին 2 Տիմ.3:11-ում:

13:51 «նրանք իրենց ոտների փոշին թափ տվեցին» Սա մերժված՝ չընդունված լինելու հրեական նշան է (տես՝ Մատթ.10:14; Մարկ.6:11; Ղուկ.9:5; 10:11): Հայտնի չէ, թե արդյոք սա վերաբերում է (1) իրենց ոտների և կոշիկների վրա քայլելուց նստած փոշուն, թե՞ (2) իրենց աշխատելու ժամանակ հագուստների վրա նստած փոշուն:

■ **«Բկոնիոն»** Լիկոնիայի մեծ քաղաքներից էր, տեղակայված Գաղատիա հռոմեական նահանգում: Այն գտնվում էր Պիսիդիան Անտիոքից ութսուն մղոն դեպի արևելք, հարավ-արևելք և Լյուստրայից ուղիղ դեպի հյուսիս:

13:52 «/շարունակ/ ուրախությամբ էին լցված» Սա ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը կարող է նշանակել անցյալ ժամանակում ինչ-որ գործողության սկիզբ կամ կրկնություն: 1995-ի խմբագրության NASB աստվածաշնչյան թարգմանության տարբերակը ներկայացնում է այն երկրորդ իմաստով: Միայն Սուրբ Հոգին կարող է հալածանքների մեջ մարդուն ուրախություն պարգևել (տես՝ Հռոմ.5:3; Հակ.1:2բ; 1 Պետ.4:12բ):

«Աշակերտները» բառը այստեղ երկիմաստ է: Արդյո՞ք այն վերաբերում է նորահավատներին, թե միսիոներական թիմին, թե երկուսին էլ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ 13:2-3 չեն կարող որևէ հատուկ խմբի կողմից ձեռնադրության համար կիրառվել որպես տեքստային ապացույց խոսք:
2. Ինչո՞ւ էր Պողոսը առաջին հերթին քարոզում ժողովարանում:
3. Ինչո՞ւ Հովհաննես Մարկոսը հեռացավ միսիոներական թիմից (տես՝ հ. 13):
4. Ի՞նչ կապ ունի հ.39-ը Գաղատացիների 3-ի հետ:
5. Բացատրեք հ. 48ը նախասահմանության և մարդու ազատ կամքի առնչությամբ:

ԳՈՐԾՔ 14

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսն ու Բառնաբաար Իկոնիոնում 14:1-7	Իկոնիոնում 14:1-7	Ծառայություն Իկոնիոնի շրջանում և վերադարձ 14:1-7	Իկոնիոնում 14:1-4 14:5-7	Ավետարանչություն Իկոնիոնում 14:1 14:2 14:3 14:4-7
Պողոսն ու Բառնաբաար Լյուստրայում 14:8-18	Կռապաշտությունը Լյուստրայում 14:8-18	14:8-18	Լյուստրայում և Դերբեյում 14:8-13 14:14-18	Կադի բժշկությունը 14:8-10 14:11-18
14:19-20	Քարկոծում, փախուստ Դերբեյ 14:19-20	14:19-20	14:19-20	Առաքելության ավարտը 14:19-20
Վերադարձ Սիրիայի Անտիոք 14:21-28	Նորադարձների քաջակերում 14:21-28	14:21-23 14:24-28	Վերադարձ Սիրիայի Անտիոք 14:21-23 14:24-26 14:27-28	14:21-23 14:24-26 14:27-28

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

Ինչպիսի՞ առնչություն ունի Պողոսի առաքելությունը գաղատացիների հետ

Ա. Այս երկու հիմնավոր նյութերը պետք է դիտարկվեն միասին, քանի որ այս նամակները ստացողների ինքնության շուրջ գոյություն ունեցող երկու իրարամերժ տեսությունները ազդում են նամակի տարեթվի վրա: Երկու տեսություններն էլ ունեն տրամաբանական կշռադատություն և աստվածաշնչյան սահմանափակ ապացույցներ:

Բ. Երկու տեսությունները

1. Ավանդական տեսությունը, որի հետ համաձայն էին մինչև տասնութերորդ դար:

ա. Այն կոչվում է «Հյուսիսային Գաղատիական Տեսություն»:

բ. Այն ենթադրում է, որ «Գաղատիա» ասելով Թուրքիայի հյուսիս-կենտրոնական բարձրավանդակի էթնիկ գաղատացիներին նկատի ունի (տես՝ 1 Պետ.1:1): Այս էթնիկ գաղատացիները Կելտեր էին (հունարեն *Keltoi* կամ լատիներեն՝ *Gall*), որոնք նվաճել էին այս տարածաշրջանը Ք.Ա. երրորդ դարում: Նրանք կոչվում էին «Gallo-Graccians» որպեսզի տարբերակեին իրենց արևմտա-եվրոպացի եղբայրներից: Նրանք հաղթանակեցին Ք.Ա.230-ին Ատտալուս I, Պերգամոնի թագավորի միջոցով: Նրանց աշխարհագրական ազդեցությունը սահմանափակվեց մինչև հյուսիս-կենտրոնական Փոքր Ասիա կամ ժամանակակից Թուրքիա:

գ. Եթե ընդունենք, որ այս էթնիկ խումբն էր, ապա տարեթիվը կհամընկնի Պողոսի երկրորդ կամ երրորդ միսիոներական ճամփորդության հետ՝ 50-ականների կեսերին: Պողոսի հետ ճամփորդող գործընկերները կլինեն Ծիդան և Տիմոթեոսը:

դ. Ոմանք Գաղ.4:13-ում նշվող Պողոսի հիվանդությունը համարում են, որ մալարիան է եղել: Այս մարդիկ պնդում են, որ Պողոսը գնացել էր դեպի հյուսիսային բարձրավանդակները, որպեսզի հեռու մնա ճահճուտ, մալարիայով վարակված, առափնյա ցածրավանդակներից:

2. Երկրորդ տեսությունը պր. Վ. Մ. Ռամսեյի կողմից է, *Սուրբ Պողոսը՝ Ճամփորդ և Հռոմեացի Բաղաքացին*, Նյու-Յորք (Sir Wm. M. Ramsay, *St. Paul the Traveler and Roman Citizen*, New York: G. P. Putnam's Sons, 1896).

ա. Մինչ ավանդական տեսությունը «Գաղատիան» սահմանում է որպես էթնիկ, այս տեսությունը սահմանում է այն որպես վարչական տարածաշրջան: Կարծես թե Պողոսը հաճախ էր կիրառում հռոմեական նահանգների անուններ (տես՝ 1 Կորնթ.16:19; 2 Կորնթ.1:1; 8:1 և այլն): «Գաղատիա» կոչվող հռոմեական նահանգի մեջ մտնում էին ավելի մեծ տարածքներ քան էթնիկ «Գաղատիայի» տարածքում: Այս էթնիկ Կելտերը աջակցում էին Հռոմին շատ վաղուց և դրա համար պարգևատրվել էին ավելի մեծ ինքնավար տարածքով և ընդլայնված տարածքային իշխանությամբ: Եթե այս մեծ տարածքը հայտնի էր որպես «Գաղատիա» ապա հնարավոր է, որ Պողոսի ունեցած առաջին միսիոներական ճամփորդության հյուսիսային քաղաքները՝ Պիսիդիայի Անտիոքը, Լյուստրան, Դերբեն և Իկոնիոնը, որոնք արձանագրված են Գործք 13-14 գլուխներում, գտնվում են այս եկեղեցիների տարածքներում:

բ. Եթե մեկը ընդունում է այս «Հյուսիսային տեսությունը», ապա տարեթիվը շատ ավելի շուտ կլինի, ավելի մոտ, սակայն նախքան Գործք 15-ի «Երուսաղեմի Խորհուրդը», որը բարձրացնում է մինևույն թեմայի շուրջ խնդիրը ինչպես և Գաղատացիների գիրքը: Խորհուրդը տեղի է ունեցել մ.թ.48-49-ին և նամակն էլ հավանաբար գրվել է մինևույն ժամանակահատվածում: Եթե սա հավաստի աղբյուր է, ապա Գաղատացիներին ուղղված նամակը Նոր Կտակարանում հանդիսանում է Պողոսի առաջին նամակը:

գ. Մի քանի ապացույցներ հյուսիսային Գաղատիայի տեսության շուրջ՝

(1) Պողոսի հետ ճամփորդող ոչ մի այլ անձնավորություն անվանապես չի նշվում, սակայն Բառնարասը երեք անգամ նշվում է (տես՝ 2:1,9,13): Սա համընկնում է Պողոսի առաջին միսիոներական ճամփորդության հետ:

(2) Նշվում է, որ Տիտոսը թվիատված չէր (տես՝ 2:1-5): Սա լիովին համապատասխանում է նախքան Գործք 15-ում տեղի ունեցած Երուսաղեմի Խորհուրդը:

(3) Պետրոսին հիշատակելը (տես՝ 2:11-14) և հեթանոսների հետ հաղորդակցվելու խնդիրը առավելագույնս համընկնում են Երուսաղեմի Խորհրդից առաջ տեղի ունեցած դեպքերի հետ:

(4) Երբ հավաքված դրամը ուղարկվեց Երուսաղեմ, տարբեր շրջաններից Պողոսի հետ ընկերակցող մարդկանց անուններ են թվարկվում (տես՝ Գործք 20:4): Սակայն նրանցից ոչ ոք հյուսիսային Գաղատիայի քաղաքներից չէր, չնայած որ գիտենք, որ այս էթնիկ Գաղատացի եկեղեցիները մասնակցություն ունեին այդ դրամահավաքի մեջ (տես՝ 1 Կորնթ.16:1):

Այս տեսությունների շուրջ տարբեր փաստարկների ավելի մանրակրկիտ ներկայացման համար դիմեք տեխնիկական մեկնաբանության որևէ գրքի: Դրանցից յուրաքանչյուրն էլ ունի հիմնավոր տեսակետ: Դեռևս մինչև հիմա համաձայնություն չկա, սակայն «Հյուսիսային տեսությունը» առավելագույնս համապատասխանում է բոլոր փաստերի հետ:

Գ. Գաղատացիների առնչությունը Գործքի հետ

1. Պողոսը հինգ անգամ այցելեց Երուսաղեմ, որն արձանագրված է Գործքում Դուկասի կողմից ա. 9:26-30, իր դարձից հետո
բ. 11:30; 12:25, հեթանոսների եկեղեցիներից սովի ժամանակ օգնություն հասցնելիս
գ. 15:1-30, Երուսաղեմի Խորհուրդը
դ. 18:22, կարճ ժամանակով այցելություն
ե. 21:15բ, հեթանոսների մեջ աշխատանքի ևս մեկ բացատրություն
2. Գաղատացիների գրքում արձանագրվում է միայն երկու այցելություն դեպի Երուսաղեմ
ա. 1:18, երեք տարի անց
բ. 2:1, տասնչորս տարի անց
3. Շատ հավանական է, որ Գործք 9:26-ը կապված է Գաղ.1:18-ի հետ: Գործք 11:30 և 15:1բ մի շարք չարձանագրված հանդիպումներ են, որոնք նշվում են Գաղ.2:1-ում:
4. Գործք 15-ի և Գաղատացիների 2-ի դեպքերի միջև կան որոշակի տարբերություններ, սա հավանաբար արդյունք է.
ա. տարբեր տեսանկյունների
բ. Դուկասի և Պողոսի տարբեր նպատակների
գ. այն փաստի, որ Գաղ.2-ը տեղի է ունեցել Գործք 15-ում նկարագրված ժողովից առաջ, սակայն դրա առնչությամբ:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 14:1-7

¹Եվ այնպես պատահեց, որ Իկոնիոնում նրանք երկուսով միասին մտան հրեաների ժողովարանը և այնպես խոսեցին, որ հրեաներից և հույներից մի մեծ բազմություն հավատաց: ²Բայց չհավատացող հրեաները հեթանոսներին գրգռեցին և նրանց մտքերը չարությամբ լցրին եղբայրների դեմ: ³Եվ նրանք երկար ժամանակ մնացին այնտեղ, համարձակորեն Տիրոջ մասին խոսելով, որը հաստատում էր Իր շնորհի խոսքը և շնորհում, որ հրաշքներ և նշաններ կատարվեն նրանց ձեռքով: ⁴Բայց քաղաքի բազմության մեջ երկպառակություն առաջացավ, ոմանք հրեաների կողմից էին, ոմանք՝ առաքյալների: ⁵Երբ հեթանոսները, ինչպես և հրեաները՝ իրենց իշխանավորների հետ միասին, հարձակում ձեռնարկեցին, որ նրանց անարգեն և քարկոծեն, ⁶նրանք, այդ մասին տեղեկանալով, փախան Լիկոնիայի Լյուստրա և Դերբե քաղաքներն ու նրանց շրջակայքը ⁷և այնտեղ ավետարանն էին քարոզում:

14:1 «Իկոնիոն» Գոյություն ունի երկրորդ դարի անկանոն մի գիրք, որ կոչվում է *Պողոսի և Թեղկայի Գործերը*, որն ըստ արձանագրության եղել է Իկոնիոնում Պողոսի գործունեություններից: Հավանաբար միայն այս գիրքն է մեզ տեղեկացնում Պողոսի ֆիզիկական նկարագրության մասին՝ կարճահասակ, ճաղատ, ծուռոտանի, թավ ունքերով, մեծ աչքերով: Այն իհարկե Աստվածաշունչ չէ, սակայն արտացոլում է այն ազդեցությունը, որը Պողոս Առաքյալը թողել էր Փոքր Ասիայի վրա: Այս տարածաշրջանի մեծ մասը գտնվում էր Գաղատիա հռոմեական նահանգի տարածքում:

■ **«մտան ժողովարան»** Սա Պողոսի և Բառնաբասի կողմից ընդունված կերպ էր: Այս ունկնդիրները՝ թե՛ հրեաները և թե՛ հույները, պետք է որ ծանոթ լինեին ՀԿ-ի մարգարեություններին և խոստումներին:

■ **«հրեաներից և հույներից մի մեծ բազմություն հավատաց»** Այս արտահայտությունը ցույց է տալիս Գործք Առաքելոցի նպատակը: Ավետարանը ակտիվորեն տարածվում է մարդկանց տարբեր խմբերում: Ամբողջ մարդկությանն ուղղված ՀԿ-յան խոստումների գործադրումները (տես՝ Ծանոթ.3:15; 12:3) այժմ մարդիկ սկսել են գիտակցել:

Եկեղեցու արագ աճմանը առնչվող այսպիսի ամփոփիչ սահմանումները բնորոշ են Դուկասի գրություններին:

14:2 «չհավատացող հրեաները» Փրկությունը բնորոշվում է «հավատալ» (տես՝ հ. 1) բառով, հոգևոր կուրությունը և վերահաշվարկը բնորոշվում են «անհնազանդություն» կամ «անհավատություն» բառերով: Ավետարանին արձագանքելու մերժողականությունը անձին մատնում է կուրության և կործանման:

Ղուկասը փաստագրում է հրեաների անհավատության և ակտիվ հավաճանքների վարակիչ թշնամությունը: Նրանց մերժողականության պատճառով է հավատքի դուռ բացվում հեթանոսների համար (տես՝ Հռոմեացիների 9-11):

■ **«գրգռեցին»** Սա Սեպտուագիներտայում տարածված ԲԱՅ է ապստամբության համար (տես՝ 1 Թագ. 3:12; 22:8; 2 Թագ.18:31; 22:49; 1 Մնաց.5:26), սակայն ՆԿ-ում գործածվում է միայն Գործք 13:50-ում և այստեղ:

■ **«մտքերը չարությամբ լցրին»** Սա Սեպտուագիներտայում տարածված ևս մեկ տերմին է, որը նկարագրում է չար, ճնշող մարդկանց, որոնք չարությամբ են վարվում ուրիշների հանդեպ: Ղուկասը հաճախ է գործածում այս տերմինը Գործքում (տես՝ 7:6,19; 12:1; 14:2; 18:10):

14:3 Աստված հրաշքներ էր կատարում, որպեսզի հաստատեր Իր գթառատ բնավորությունը և Հիսուս Քրիստոսի ավետարանի ճշմարտացիությունը այս նոր տարածաշրջանում (տես՝ 4:29-30; Եբր.2:4):

14:4 «Բայց քաղաքի բազմության մեջ երկպառակություն առաջացավ» Ճշմարտության խոսքը մշտապես բաժանում է (տես՝ 17:4-5; 19:9; 28:24; Մատթ.10:34-36): Ժողովարանի հրեաներից ոմանք հավատացին, սակայն մյուսներն էլ դարձան ավետարանի հակառակորդներ:

■ **«առաքյալների կողմից էին»** Սա վերաբերում է Պողոսին և Բառնաբասին: Այս գլխում (այսինքն՝ 14:4 և 14) սա միակ տեղն է, որտեղ Ղուկասն այս տերմինը կիրառում է Տասներկուսից դուրս այլ մարդկանց վերաբերյալ: Բառնաբասը անվանվում է առաքյալ (տես՝ հ. 14): Սա նաև ակնարկվում է 1 Կորնթ.9:5-6-ում: Ակնհայտ է, որ սա «առաքյալ» տերմինի ավելի լայն նշանակության կիրառությունն է, քան Տասներկուսին նկատի ունենալը: Հակոբոս Արդարը (Հիսուսի կես եղբայրը) անվանվում է առաքյալ Գաղ.1:19-ում: Միվղանոսն ու Տիմոթեոսը անվանվում են առաքյալներ 1 Թեսաղ.1:1-ում համադրված 2:6-ի հետ. Անդրոնիկոսն ու Հունիան (KJV – Junia /Հունիա/) անվանվում են առաքյալներ Հռոմ.16:6-7-ում, իսկ Ապոդոսը՝ 1 Կորնթ.4:6-9-ում:

Տասներկու Առաքյալները բացառիկ էին: Երբ նրանք մահացան, նրանց ոչ ոք չփոխարինեց (բացառությամբ Մատթիայի, որը փոխարինեց Հուդային, տես՝ Գործք 1): Այնուամենայնիվ գոյություն ունի առաքյալի շարունակելի պարզև, որը նշվում է 1 Կորնթ.12:28-ում և Եփես.4:11-ում: ՆԿ-ը չի ապահովում բավարար տեղեկություն նկարագրելու այս պարզևն ունեցողների ֆունկցիաները: Տես՝ հետևյալ Հատուկ Թեման. Ուղարկել (Apostellō):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒՂԱՐԿԵԼ (APOSTELLŌ)

Սա հասարակ հունարեն «ուղարկել» բառն է (այսինքն՝ *apostellō*): Այս տեմինն ունի աստվածաբանական մի քանի կիրառություն՝

1. ռաբբիներն այն կիրառում էին այն մարդու համար, որը կանչված և ուղարկված է որպես մեկ ուրիշի պաշտոնական ներկայացուցիչը, մեր «դեսպան» բառի պես (տես՝ 2 Կորնթ.5:20):
2. Ավետարանները հաճախ այս տերմինն օգտագործում են Հիսուսի համար, որպես Հորից ուղարկված: Հովհաննես Ավետարանում այս տերմինը Մեսիական երանգ է ստանում (տես՝ Մատթ.10:40; 15:24; Մարկ.9:37; Ղուկ.9:48 և հատկապես Հովհ.5:36,38; 6:29,57; 7:29; 8:42; 10:36; 11:42; 17:3,8,18,21,23,25; 20:21 [թե՛ «առաքյալ» բառը և թե՛ դրա հոմանիշը՝ *pempō* կիրառվում են հ. 21-ում]): Այն կիրառվում է Հիսուսի կողմից հավատացյալներին ուղարկելու համար (տես՝ Հովհ.17:18; 20:21):
3. ՆԿ-ը կիրառում է այս տերմինը աշակերտների համար՝
 - ա. աշակերտների ներքին օղակի տասներկու սկզբնական առաքյալները (օր.՝ Մարկ.6:30; Ղուկ.6:13; Գործք 1:2,26)
 - բ. Առաքյալներին օգնող մարդկանց հատուկ խումբ կամ ծառայակիցներ՝
 - (1) Բառնաբասը (տես՝ Գործք 14:4,14)
 - (2) Անդրոնիկոսը և Հունիան (տես՝ Հռոմ.16:7)
 - (3) Ապոդոսը (տես՝ 1 Կորնթ.4:6-9)
 - (4) Հակոբոսը՝ Հիսուսի կես եղբայրը (տես՝ Գաղ.1:19)
 - (5) Միվղանոսը և Տիմոթեոսը (տես՝ 1 Թեսաղ.2:6)
 - (6) հավանական է Տիտոսը (տես՝ 2 Կորնթ.8:23)
 - (7) հավանական է Եպափրոդիտոսը (տես՝ Փիլ.2:25)
 - գ. եկեղեցում հարատևող շարունակվող պարզև (տես՝ 1 Կորնթ.12:28-29; Եփես.4:11)

4. Պողոսն այս տերմինը կիրառում է իր համար իր նամակներից շատերում, որպես իրեն Աստուծուց տրված Քրիստոսի ներկայացուցիչը լինելու իշխանության հաստատման կերպ (տես՝ Հռոմ.1:1; 1 Կորնթ.1:1; 2 Կորնթ.1:1; Գաղ.1:1; Եփես.1:1; Կող.1:1; 1 Տիմ.1:1; 2 Տիմ.1:1; Տիտու 1:1):

14:5 «իրենց իշխանավորների հետ» Սա կարող է վերաբերել թե՛ քաղաքի և թե՛ ժողովարանի առաջնորդներին: Վաղ շրջանի որոշ դպիրներ և ժամանակակից մեկնաբաններ հայտարարում են, որ երկու հավածանք է տեղի ունեցել, (1) հ. 2 և (2) հ. 5, սակայն ըստ համատեքստի այն մեկն էր:

■
NASB, NRSV, TEV «անարգել»
NKJV «նախատել»
NJB «հարձակվել»

Հունարեն *hubrizō* տերմինը ավելի խիստ նշանակություն ունի, քան «անարգել» բառը՝ հավանաբար «ասպատամբություն բարձրացնել» կամ «բռնի գործողություններ կատարել»: Այն շատ է գործածվում Սեպտուագիևայում: Ղուկասը այս տերմինը հաճախ կիրառում է երեք իմաստով՝

1. հայիոյություն, Ղուկ.11:45
2. բռնություն, Ղուկ.18:32; Գործք 14:5
3. ֆիզիկական կարողության՝ ունեցվածքի կորուստ, Գործք 27:10,21

■ **«քարկոծել»** Այս երկրորդ բնութագրական տերմինը ցույց է տալիս, թե ինչքան դաժանաբար էր հակառակորդը ծրագրել իր հարձակումը հավատացյալների վրա: Հավանաբար հրեական զանգվածն էր ընտրել այս հատուկ պատժամիջոցը՝ ՀԿ-յան հայիոյության հետ կապված (այսինքն՝ Ղևտ.24:16; Հովհ.8:59; 10:31-33):

14:6 «փախան Լիկոնիայի Լյուստրա և Դերբե քաղաքները» Իկոնիոնը Փոյուգիայում էր: Այն մոտ էր ռասայապես առանձնացված այս խմբի սահմանին: Այս մանրամասն տեղեկությունը ցույց է տալիս Գործք Առաքելոց գրքի պատմական արժեքը:

14:7 ԲԱՅՐ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ է, որը նշանակում է, որ նրանք կրկին ու կրկին քարոզում էին: Սա Պողոսի միսիոներական ճամփորդությունների թեման էր (տես՝ 14:21; 16:10): Մարդիկ, որոնք նրա քարոզչության միջոցով հավատում էին Քրիստոսին, նաև զգում էին ուրիշներին ավետարանը ներկայացնելու հրատապությունն ու լիազորությունը: Սա եղել և մնում է առաջնահերթ (տես՝ Մատթ.28:19-20; Ղուկ.24:47; Գործք 1:8):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 14:8-18

⁸Եվ Լյուստրայում ոտներից թույլ մի մարդ էր նստած, որ իր մոր որովայնից կաղ էր ծնվել և երբեք չէր քայլել: ⁹Սա լսեց Պողոսի խոսքերը: Նա էլ ուշադիր նրան նայեց, և տեսնելով, որ բժշկվելու հավատ ունի, ¹⁰բարձր ձայնով ասաց. «Ոտներիդ վրա ուղիղ կանգնի՞ր»: Եվ նա վեր թռավ և սկսեց քայլել: ¹¹Եվ ժողովուրդը, երբ Պողոսի արածը տեսավ, իր ձայնը բարձրացրեց և Լիկոնիայի լեզվով ասում էր. «Աստվածները մարդկային տեսքով ցած են իջել մեզ մոտ»: ¹²Եվ Բառնաբասին անվանեցին Դիոս, իսկ Պողոսին՝ Հերմես, որովհետև նա էր հիմնական խոսողը: ¹³Այա Դիոսի քույրը, որ քաղաքի առաջ կանգնած էր, ցուլեր և պսակներ բերեց դռների մոտ և բազմության հետ ուզում էր գոհ մատուցել նրանց: ¹⁴Եվ երբ Բառնաբաս և Պողոս առաքյալներն այս լսեցին, իրենց հանդերձները պատռեցին, վազելով մտան բազմության մեջ և բարձրաձայն աղաղակում էին ու ասում. ¹⁵«Մարդի՛կ, ինչո՞ւ եք անում այս բաները, մենք էլ ձեզ նման կրքեր ունեցող մարդիկ ենք, և քարոզում ենք ձեզ ետ կանգնել այդպիսի ունայն բաներից, դառնալ դեպի կենդանի Աստվածը, որ ստեղծեց երկինքն ու երկիրը և ծովը և ամեն ինչ, որ նրանց մեջ է. ¹⁶Նա անցած դարերում թույլ տվեց բոլոր հեթանոսներին գնալ իրենց ճանապարհներով, ¹⁷թեև Ինքն իրեն առանց վկայության չթողեց. բարերարություն անելով՝ երկնքից մեզ անձրևներ տվեց և՛ պտղաբեր ժամանակներ՝ մեր սրտերը լցնելով կերակուրով և ուրախությամբ»: ¹⁸Եվ այս բաներն ասելով՝ հազիվ կարողացան կանգնեցնել ժողովրդին, որ իրենց գոհ չմատուցեն:

14:8 «Լյուստրայում» Այս քաղաքը Տիմոթեոսի հայրենի քաղաքն էր (տես՝ 16:1): Սա հռոմեական մի գաղութ էր՝ հաստատված Օգոստինոս կայսեր կողմից մ.թ. 6-ին: Հավանաբար այստեղ ժողովարան չկար, այդ իսկ պատճառով Պողոսն ու Բառնաբասը փողոցում կազմակերպեցին քարոզչությունը:

Այսպիսով հնարավորություն չկար խաբեության կամ կեղծիքի (տես՝ 3:2): Այս մարդու անփոփոխ վիճակը նկարագրող երեք բնութագրական արտահայտություններ կան՝

1. ոտներից թույլ
2. իր մոր որովայնից կաղ ծնված
3. երբեք չէր քայլել

■ **«ոտներից թույլ»** *Adunatos* տերմինը սովորաբար նշանակում է «անհնարին» կամ տառացի՝ «անկարող» (տես՝ Ղուկ.18:27; Եբր.6:4,18; 10:4; 11:6), սակայն այստեղ Ղուկասն այս տերմինը գրում է բժիշկ գրողների պես, որոնք նշում են մարդու անընդունակ կամ անկարող լինելը (տես՝ Հռոմ.8:3; 15:1):

Հետաքրքիր է, որ Ղուկասը շատ անգամ զուգահեռում է Պետրոսի և Պողոսի ծառայությունները: Պետրոսն ու Հովհաննեսը բժշկեցին կաղին 3:1-10-ում, այժմ նույնն անում են Պողոսն ու Բառնաբասը:

14:9 «նա էլ ուշադիր նրան նայեց» Ղուկասը հաճախ է այս արտահայտությունը օգտագործում (տես՝ 3:4; 10:4): Տես 1:10-ի գրառումը: Պողոսը տեսավ, որ այս մարդը ուշադիր լսում էր: Հետևաբար, նա հրամայեց նրան ոտքի կանգնել և քայլել (տես՝ հ. 10) և նա արեց:

■ **«որ բժշկվելու հավատ ունի»** Սա գործածվում է ՀԿ-յան «փրկված» տերմինի իմաստով, որը նշանակում է ֆիզիկական ազատագրում: Ուշադրություն դարձրեք, որ Պողոսի բժշկվելու հնարավորությունը հիմնված է այս մարդու հավատքի վրա: ՆԿ-ում այսպիսի դեպքերի հաճախ ենք հանդիպում, սակայն ոչ միշտ (տես՝ Ղուկ.5:20; Հովհ.5:5-9): Հրաշքներն ունեն մի քանի ֆունկցիաներ՝

1. ցույց տալու Աստծո սերը
2. ցույց տալու ավետարանի գործությունն ու ճշմարտությունը
3. ներկա գտնվող մյուս հավատացյալներին քաջալերելու և սովորեցնելու

14:11 «Լիկոնիայի լեզվով» Ըստ երևույթին Պողոսն ու Բառնաբասը չէին հասկանում, թե ինչ էր ասում ամբոխը: Սա այդ շրջանում խոսվող մայրենի լեզուն էր:

14:12 «Բառնաբասին անվանեցին Դիոս, իսկ Պողոսին՝ Հերմես, որովհետև նա էր հիմնական խոսողը» Տեղի ավանդույթն ասում է, որ հույն աստվածները հաճախ մարդկանց այցելում էին մարդկային կերպարանքով (տես՝ Օվիդ, *Կերպարանափոխումներ* 8:626ր /Ovid, *Metamorphoses*): Տեղի արձանագրություններից իմանում ենք, որ այդ տարածաշրջանում պաշտում էին Չևսին /Դիոսին/ և Հերմեսին (տես՝ հ. 13):

Նկատեք, որ առաջինը նշվում է Բառնաբասը: Հավանաբար այն պատճառով, որ Պողոսը խոսնակն էր և կարելի է եզրակացնել, որ ըստ այս հեթանոսների կարծիքի նա համահավասար էր Հերմեսին (Մերկուրի), իսկ լռակյաց Բառնաբասը՝ նրանց բարձրյալ աստված Չևսն էր (Յուպիտերը):

14:13 «դուռ /դարպաս/» Հնարավոր է սա վերաբերում է քաղաքի դռանը կամ շատ ավելի հավանական է Յուպիտերի (Չևսի) տաճարի դռանը, որը տեղակայված էր անմիջապես քաղաքի դարպասից դուրս՝ հանդիպակաց դիրքով: Այդ ժամանակ մեծ շփոթություն և անհասկացողություն տեղի ունեցավ:

14:14 «առաքյալներ» Տես 14:4 գրառումը:

■ **«իրենց հանդերձները պատռեցին»** Հրեաների մոտ սա նշան է սուգի և հայիոյության դեմ (տես՝ Մատթ.26:65; Մարկ.14:63): Հաստատ նույնիսկ այս հեթանոսները կարող էին հասկանալ տվյալ գործողությունից, որ ինչ-որ բան այն չէ:

■ **«վազեցին»** Մեպտուազինտայում տարածված տերմին է «ցատկելու» կամ «դուրս վազելու» համար, չնայած որ ՆԿ-ում այն գործածվում է միայն այստեղ: Պողոսն ու Բառնաբասը ցատկեցին և վազեցին դեպի ամբոխը:

14:15-17 Այստեղ տրված է Պողոսի հեթանոսներին ուղղված իր առաջին քարոզի ամփոփումը: Այն շատ նման է Մարս Բրի վրա իր քարոզին (տես՝ 17:22-23):

14:15

NASB, NKJV

NRSV

TEV

NJB

«ձեր պես միևնույն բնության տեր մարդիկ»

«ճիշտ ձեր պես մահկանացուներ»

«մենք ինքներս էլ ձեր պես պարզապես մարդիկ ենք»

«մենք պարզապես մարդիկ ենք՝ ձեր պես մահկանացուներ»

Այստեղ կիրառվում է *homoioopathēs* տերմինը, որը բաղադրյալ բառ է, կազմված «միևնույն» և «կրթեր» բառերից: ՆԿ-ում այս տերմինը միայն այստեղ և Հակոբոս 5:17-ում է կիրառվում: Տեղացիները կարծում էին, որ Պողոսն ու Բառնաբասը աստվածներ էին (*homoioopathēs*, տես՝ հ. 11), որը նշանակում է մարդկանց «պես ստեղծված»: Պողոսն այս նույն արմատը գործածում է մատնանշելու իրենց ընդհանուր մարդկությունը: Ղուկասը ցույց է տալիս Պողոսի և Բառնաբասի խոնարհությունը ի հակադրություն Հերովդես Անտիպասի՝ 12:20-23-ում:

■ **«Էտ կանգնել /փախնել/ այդպիսի ունայն բաներից»** «Ունայն» տերմինը նշանակում է դատարկ, փուչ, գոյություն չունեցող: Պողոսը անմիջապես հակառակվում է նրանց նախապաշարմունքով լի հեթանոսությանը:

■ **«դեպի կենդանի Աստվածը»** Այստեղ ՅԱՀՎԵ տերմինի հետ բառախաղ է, որը ծագում է եբրայերենի «լինել» ԲԱՅից (տես՝ Ելից 3:14): ՅԱՀՎԵն մշտազո, հավիտենական Աստված է: Տես Հատուկ Թեմա. Աստծո Անունները, 1:6:

■ **«որ ստեղծեց»** Սա մեջբերում է Ելից 20:11 կամ Սաղմ.146:6-ից: Եբրայերեն տերմինը՝ *Elohim* /*Elohim*/ (տես՝ Ծննդ.1:1), նկարագրում է Աստծուն որպես արարչի և մատակարարի՝ հոգացողի (տես՝ *Քարոզչի Աստվածաշնչյան Մեկնաբանություն*, /*The Expositor's Bible Commentary*/ հատ.1, էջ՝ 468-469), քանի որ ՅԱՀՎԵն նկարագրում է Իրեն որպես Փրկիչ, Ազատարար (տես՝ *Քարոզչի Աստվածաշնչյան Մեկնաբանություն*, /*The Expositor's Bible Commentary*/ հատ.1, էջ՝ 471-472) և ուխտի Աստված: Տես Հատուկ Թեմա 1:6:

14:16 «Նա անցած դարերում թույլ տվեց բոլոր հեթանոսներին գնալ իրենց ճանապարհներով» Այս արտահայտությունը կարող է լինել 2 Օր.32:7-8 խոսքի ակնարկը, որտեղ Մովսեսը հայտարարում է, որ ՅԱՀՎԵն է հաստատում ազգերի սահմանները: Աստվածաբանորեն սա հիմնավորում է ազգերի (հեթանոսների. տես՝ Գրդյաթոն, *Հին Կտակարանի Հոմանիմներ*, /*Synonyms of the Old Testament*/ էջ՝ 258-259) հանդեպ Աստծո հոգածությունը և ուշադրությունը: Աստված ցանկանում էր, որ նրանք ճանաչեին Իրեն, սակայն մարդկության ընկած՝ մեղավոր վիճակի պատճառով նախապաշարմունք ու կռապաշտություն էր տիրում (տես՝ Հռոմ.1:18-2:29): Միևնույն է Նա շարունակում էր հետամուտ լինել նրանց (տես՝ հ. 17):

Հեթանոսների Աստծո մասին տգիտությունը հակադրվում է հրեաների Աստծո ճանաչողությամբ: Հետաքրքիր է, որ տեսնում ենք հեթանոսների մասսայական դարձը ավետարանին հավատալու միջոցով, մինչև հրեաները զանգվածային կերպով մերժում էին և հալածում ավետարանը (տես՝ Հռոմեացիների 9-11):

14:17 «Ինքն իրեն առանց վկայության չթողեց» Սա բնության հայտնության հասկացությունն է՝ գաղափարը (տես՝ Սաղմ.19:1-6; Հռոմ.1:19-20; 2:14-15): Բոլոր մարդիկ էլ ինչ-որ բան գիտեն Աստծո մասին բնության և իրենց ներքին բարոյական վկայության միջոցով:

■ **«անձրևներ... կերակուր»** Տեղի հեթանոս մշակույթի համաձայն Չևսը տալիս էր անձրև, իսկ Հերմես՝ կերակուր: Պողոսը հետևելով 2 Օրինաց 27-29 գլուխներին հաստատում է, որ Աստված է վերահսկում բնությունը:

Այս հեթանոսները չէին ճանաչում Աստծուն, հետևաբար Երկրորդ Օրինացի ուխտի անեծքները փոխարինվում են Աստծո համբերատարությամբ (տես՝ Գործք 17:30; Հռոմ.3:25; 4:15; 5:13): Պողոսը Աստծո առանձնահատուկ ընտրությունն էր (հեթանոսների առաքյալը) ազգերին ձեռք մեկնելու համար: Պողոսը կիրառում է բնության միջոցով Աստծո ստեղծագործությունը և հոգածությունը (տես՝ Սաղմ.145:15-16; 147:8; Երեմ.5:24 Հովնան 1:9) որպես իր համար կապ ստեղծելու հենակետ:

Հետաքրքիր է, որ այս քարոզի ամփոփման մեջ ավետարանից ոչինչ չկա: Ենթադրում են, որ Պողոսը Գործք 17:16-34-ում շարունակում էր նման կերպ տրամաբանել աթենացիներին ուղղված իր քարոզում: Արդյո՞ք Ղուկասը այս ամփոփիչ խոսքերը վերցրել էր Պողոսից, թե Տիմոթեոսից, հետաքրքիր է իմանալ (քանի որ սա Տիմոթեոսի հայրենիքն էր):

14:18 Սա ակնաատեսի մանրամասն վկայություն է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍՏ. 14:19-23

19Եվ Անտիոքից ու Իկոնիոնից հրեաներ եկան, ժողովրդին համոզեցին և Պողոսին քարկոծելով՝ քաղաքից դուրս քարշ տվին, և կարծում էին, թե մեռած է: **20**Սակայն, երբ աշակերտները նրան շրջապատեցին, վեր կացավ, քաղաք մտավ և հաջորդ օրը Բառնաբասի հետ դուրս եկավ, գնաց Դերբե: **21**Եվ երբ այդ քաղաքում էլ ավետարանեցին և շատերին ուսուցանեցին, վերադարձան Լյուստրա, Իկոնիոն և Անտիոք, **22**աշակերտների սրտերը հաստատելով և հորդորելով, որ հարատևեն հավատի մեջ և ասում էին, որ շատ մեծ նեղություններով պետք է մտնենք Աստծո թագավորությունը: **23**Եվ երբ յուրաքանչյուր եկեղեցում նրանց համար երեցներ ձեռնադրեցին, ծոմապահությամբ աղոթեցին և նրանց Տիրոջը հանձնեցին, որին հավատացել էին:

14:19 Պողոսի քարոզած քաղաքներում հրեաների կողմից հակառակությունը համախմբել էր նրանց, որպեսզի հարձակման ենթարկեն նրան (տես՝ 2 Կորնթ.4:7-15; 6:3-10; 11:23-30): Նկատելի է, որ հարձակման թիրախը Պողոսն էր, ոչ թե Բառնաբասը: Նկատելի նաև հեթանոս ամբոխի փոփոխականությունը: Պողոսին ու Բառնաբասին մի պահ պատվում էին որպես աստվածներ և հաջորդ պահին քարկոծում էին:

■ **«Պողոսին քարկոծեցին»** Սա վերակենդանացման հրաշք չէր, այլ Պողոսի ֆիզիկական կենսունակության և քաջության արձանագրություն (տես՝ հհ. 20-21): 2 Կորնթ.11:25 և Գաղ.6:17 նույնպես առնչվում ենք այս նույն դեպքի հետ: Քարկոծությունը ծրագրվեց հ. 5-ում, իսկ այժմ իրականացվեց:

14:20 «երբ աշակերտները նրան շրջապատեցին» Չնայած որ հատուկ նշված չէ, սակայն ես կարծում եմ, որ նրանք հավաքվել էին աղոթքի համար, որին Աստված հրաշալի կերպով միջամտեց: Նկատելի է, թե ինչպես է հալածանքը շարունակում մնալ որպես ավետարանի տարածման համար մեխանիզմ՝ շարժառիթ (այսինքն՝ մի նոր քաղաք գնալու հնարավորություն):

14:21 «Եվ երբ այդ քաղաքում էլ ավետարանեցին» Սա վերաբերում է Դերբե քաղաքին (տես՝ հ. 20): Այս քաղաքը նաև գտնվում էր հռոմեական Գաղատիա նահանգի Լիկոնիան մասում: Սա Պողոսի և Բառնաբասի այս միսիոներական ճամփորդության ընթացքում դեպի արևելք ամենահեռու կետն էր: Այս քաղաքը հրաշալի կերպով արձագանքեց ավետարանի խոսքին և շատերը փրկվեցին:

■ **«վերադարձան Լյուստրա, Իկոնիոն և Անտիոք»** Ըստ երևույթին նրանք այս անգամ վերադառնալիս հանրային ժողովներ չունեցան, այլ հատուկ կազմակերպչական գործերով զբաղվեցին և քաջակերեցին հավատացյալներին (տես՝ հհ. 22-23):

14:22 Այս համարը Պողոսի աշակերտելու պատգամի ամփոփումն է: Նկատելի (1) հարատևության և (2) նեղությունների շեշտադրությունը: Հավատացյալները հասունանում են փորձությունների միջոցով (տես՝ Հռոմ.5:3-4; 8:17-18; 1 Թեսաղ.3:3; 2 Տիմ.3:12; Հակ.1:2-4; 1 Պետ.4:12-16):

■ **«հաստատելով»** Այս տերմինը մի քանի անգամ օգտագործվում է Սեպտուագինտայում «հանգստացնելու» կամ «հիմնելու՝ հաստատելու» իմաստով: Ղուկասն այս տերմինը կիրառում է նկարագրելու Պողոսի հետևողական աշակերտության ծառայությունը (տես՝ 14:22; 15:32,41; 18:23):

■ **«աշակերտների սրտերը /անզլ՝ շունչը/»** Ծունչ կամ սիրտ տերմինը (*psuchē*) օգտագործվում է անձի կամ նրա մտավոր գործունեության համար: Սա հունարենի այն հասկացությունը չէ, որ բոլոր մարդիկ ունեն անմահ շունչ՝ հոգի, այլ եբրայերենի շունչ (*nephesh*, BDB 659, KB 711-713, տես՝ Ծննդ.2:7) հասկացությունն է, որը վերաբերում է մարդու անձին (տես՝ Գործք 2:41; 3:23; 7:14; 14:2,22; 15:24; 27:37):

■ **«հորդորելով, որ հարատևեն հավատի մեջ»** Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման. Հարատևելու անհրաժեշտությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՐԱՏԵՎԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնեական կյանքի հետ կապված աստվածաշնչյան վարդապետությունները դժվար մեկնաբանելի են, քանի որ դրանք ներկայացվում են արևելյան տիպիկ բարբառային զույգերով:

Դրանք կարծես թե հակասական լինեն, սակայն երկուսն էլ սուրբգրային են: Արևմուտքի Քրիստոնյաները հակված են ընտրելու մի ճշմարտությունը և անտեսելու կամ թերազնահատելու դրան հակասող մյուս ճշմարտությունը: Թույլ տվեք լուսաբանել.

Ա. Փրկությունը Քրիստոսին հավատալու սկզբնական որոշում է, թե՛ մինչև մահ աշակերտ լինելու նվիրում:

Բ. Արդյո՞ք փրկությունը ընտրություն է ամենակալ Աստծո շնորհքի միջոցով, թե մարդու կողմից հավատալու և աստվածային հրավերին ապաշխարությամբ պատասխանելու:

Գ. Արդյո՞ք մարդը մի անգամ ստանում է փրկությունը և այլևս անհնար է, որ կորցնի, թե անհրաժեշտ է հարատևել ջանքի մեջ:

Հարատևության հարցը ամբողջ եկեղեցու պատմության ընթացքում եղել է վիճելի հարց: Խնդիրը ծագում է ՆԿ-ում արձանագրված ակնհայտ հակասական հատվածներից.

Ա. Փրկության վստահության տեքստեր՝

1. Հիսուսի հայտարարությունները (Հովհ.6:37; 10:28-29)
2. Պողոսի հայտարարությունները (Հռոմ.8:35-39; Եփես.1:13; 2:5,8-9; Փիլ.1:6; 2:13; 2 Թեսաղ.3:3; 2 Տիմ.1:12; 4:18)
3. Պետրոսի հայտարարությունները (1 Պետ.1:4-5)

Բ. Հարատևության անհրաժեշտության վերաբերյալ տեքստեր՝

1. Հիսուսի հայտարարությունները (Մատթ.10:22; 13:1-9,24-30; 24:13; Մարկ.13:13; Հովհ.8:31; 15:4-10; Հայտն.2:7,17,20; 3:5,12,21)
2. Պողոսի հայտարարությունները (Հռոմ.11:22; 1 Կորնթ.15:2; 2 Կորնթ.13:5; Գաղ.1:6; 3:4; 5:4; 6:9; Փիլ.2:12; 3:18-20; Կող.1:23)
3. Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակի հայտարարությունները (2:1; 3:6,14; 4:14; 6:11)
4. Հովհաննեսի հայտարարությունները (1 Հովհ.2:6; 2 Հովհ. 9)
5. Հայր Աստծո հայտարարությունները (Հայտն.21:7)

Սուրբգրային փրկությունը բխում է ամենակալ Երրորդության Աստծո սիրուց, ողորմությունից և շնորհքից: Ոչ մի մարդ չի կարող փրկվել առանց Սուրբ Հոգու նախաձեռնության (տես՝ Հովհ.6:44,65): Առաջինը գալիս է Աստված և դնում Իր օրակարգը, սակայն պահանջում, որ մարդիկ արձագանքեն հավատքով և ապաշխարությամբ, թե՛ սկզբում և թե՛ շարունակաբար՝ մշտապես: Աստված մարդու հետ աշխատում է ուխտի փոխհարաբերության ներսում: Գոյություն ունեն առավելություններ և պատասխանատվություններ:

Փրկությունը բոլոր մարդկանց է առաջարկվում: Հիսուսի մահը մեկընդմիջտ լուծեց անկում ապրած՝ մեղավոր արարչագործության մեղքի խնդիրը: Աստված ճանապարհ է պատրաստել և ուզում է, որ բոլոր նրանք, ովքեր ստեղծվել են Իր պատկերով արձագանքեն Հիսուսի միջոցով Նրա սիրույն և փրկությանը:

Եթե կամենում եք այս թեմայի շուրջ համաձայն ոչ-կալվինիստական տեսանկյան ավելին ընթերցել, ապա նայեք՝

1. Դեյլ Մուդի, *Ճշմարտության Խոսքը*, Էրդմանգ 1981 (Dale Moody, *The Word of Truth*, Eerdmans, 1981 (pp. 348-365)
2. Հոուարդ Մարշալ, *Պահված Աստծո Չորությունը*, Բեթանի Ընկերություն, 1969 (Howard Marshall, *Kept by the Power of God*, Bethany Fellowship, 1969)
3. Ռոբերտ Շենկ, *Կյանք Որդու մեջ*, Ուեսքոթ, 1961 (Robert Shank, *Life in the Son*, Westcott, 1961)

Աստվածաշունչը դիտարկում է այս ոլորտում երկու տարբեր խնդիրներ. (1) փրկության վստահությունը անպտուղ, անձնակենտրոն կյանք ապրելու համար չարաշահելը և (2) հորդորելը այն մարդկանց, որոնք ծառայության և անձնական մեղքի հետ կապված խնդիրներ ունեն: Խնդիրը նրանում է, որ սխալ խմբեր վերցնում են «սխալ» հատվածներ և կառուցում աստվածաբանական համակարգեր սուրբգրային մի քանի հատվածների հիման վրա: Որոշ Քրիստոնյաներ խիստ կարիք ունեն փրկության վստահության պատգամի, մինչև ուրիշներ էլ կարիք ունեն խիստ զգուշացման: Դուք ո՞ր խմբին եք պատկանում:

■ «**Աստծո Թագավորությունը**» Սա մեկնաբանելու համար դժվար արտահայտություն է: Հիսուսը հաճախ այն գործածեց Իր իսկ ծառայության ընթացքում: Սակայն Առաքյալները ըստ երևույթին սխալ էին հասկացել դրա կարևորությունը (տես՝ 1:3,6): Գործքում այն գրեթե հոմանիշ է ավետարանին (տես՝ 8:12; 19:8; 20:25; 28:23,31): Սակայն 14:22-ում այն ստանձնում է էսկատոլոգիական կիրառություն: Այստեղ այդ նույն «արդեն» ժամանակն է (տես՝ Մատթ.12:28; Դուկ.16:16) ի հակադրություն «դեռ ոչ հիմա»-ի՝ (տես՝ Մատթ.24:14,30,36-37; 25:30,31; 2 Պետ.1:11) այս դարին բնորոշ լարվածությամբ: Տե՛ս

Հատուկ Թեմա 2:17: Արքայությունը եկել է Հիսուս Քրիստոսով (այսինքն՝ Առաջին Գալուստը), սակայն Իր լրումը ապագայում է (այսինքն՝ Երկրորդ Գալուստը):

14:23 «երեցներ ձեռնադրեցին /անգլ.՝ նշանակեցին/» «Երեցներ» (*presbuteros*) տերմինը Նոր Կտակարանում (տես՝ Գործք 20:17,28 և Տիտ.1:5,7) «եպիսկոպոսներ» (*episkopos*) և «հովիվներ» (*poimenos*) տերմինների հոմանիշն է: «Երեց» տերմինն ունի երբայերեն ծագում (տես՝ Գրիգորյան, *Հին Կտակարանի Հոմանիշներ*, էջ՝ 244-246 և Ֆրենք Սթեյգ, *Նոր Կտակարանի Աստվածաբանություն*, էջ՝ 262-264 / Girdlestone, *Synonyms of the Old Testament*, and Frank Stagg, *New Testament Theology*/), մինչ «եպիսկոպոս» կամ «վերակացու» տերմինն ունի հունական քաղաքային ծագում: ՆԿ-ում գոյություն ունեն եկեղեցական պաշտոնյաների թվարկված միայն երկու անուն՝ հովիվներ և սարկավագներ (տես՝ Փիլ.1:1):

«Նշանակել» տերմինը կարող է ունենալ «ձեռք բարձրացնելով ընտրելու» իմաստը (տես՝ 2 Կորնթ.8:19; Լու և Նիդա, *Հունարեն-Անգլերեն Բառարան*, էջ՝ 363, 484): Այս տերմինը հետագայում վաղ եկեղեցու հայրերի կողմից կիրառվում է «ձեռնադրության» համար: Իրականում հարցը այն է, թե ինչպես է «քվեարկությամբ ընտրելը» համապատասխանում այս համատեքստի հետ: Այս նոր եկեղեցիների կողմից կատարված քվեարկությունը կարծես թե անընդունելի կերպով էր կատարվում (չնայած որ Երուսաղեմի եկեղեցին Գործք 6-ում քվեարկեց Ստեփանոսի համար և Գործք 15-ում եկեղեցին քվեարկելու է հեթանոսների մեջ Պողոսի ծառայությունը հաստատելու համար):

Ֆ.Ֆ. Բրյուսը, *Հարցերի Պատասխաններ*, էջ՝ 79 (F. F. Bruce, *Answers to Questions*) գրքում ասում է, «սկզբնապես ձեռք բարձրացնելու (բառացի՝ մի ձեռքը դեպի վեր պարզելը) միջոցով նշանակելը կամ ընտրությունը ցույց տալը Նոր Կտակարանյան ժամանակներում կորցրել էր իր այս հատուկ ներգործությունը և սկսել էր ձեռք բերել պարզապես «նշանակելու» իմաստը՝ անկախ նրանից, թե ինչպիսի ընթացակարգով այն կկատարվեր»: Ոչ ոք չի կարող պաշտպանել կամ մերժել այս տերմինի էկլեսիաստիկ (եկեղեցական) կառուցվածքը ՆԿ-ում դրա կիրառությամբ:

Նկատել, որ Պողոսը կարգադրում է Տիտոսին նաև «նշանակել» երեցներ Կրետեում, սակայն Տիմոթեոսին Եփեսոսում Պողոսն ասում է, որ թույլ տա եկեղեցին ընտրի հատուկ որակավորմամբ անձանց (տես՝ 1 Տիմոթեոս 3): Նոր տարածքներում նշանակվում էին առաջնորդներ, իսկ հաստատված շրջաններում առաջնորդական հատկանիշները առիթ էին ունենում դրսևորվելու և տեղական եկեղեցու կողմից հաստատվելու:

Նկատել, որ Պողոսի միախոնրական ռազմավարությունն էր հաստատել տեղական եկեղեցիներ, որոնք շարունակելու էին ավետարանչության և աշակերտության գործը իրենց տարածքներում (տես՝ Սաղթ.28:19-20): Սա ամբողջ աշխարհին ավետարանելու Աստծո մեթոդն է (այսինքն՝ տեղական եկեղեցիները):

■ **«եկեղեցի»** Տես Հատուկ Թեմա 5:11:

■ **«ծոմապահությամբ աղոթեցին»** Հնարավոր է, որ այս խոսքը հատուկ գուգահեռվում է 13:2-3-ի հետ: Պողոսը վերապրել էր Սուրբ Հոգու գորությունը և առաջնորդությունը Անտիոքում: Նա շարունակեց այս նույն հոգևոր վարվելակերպով: Նրանք պետք է պատրաստվեին Աստծո՝ Իր կամքը իրենց հայտնելու համար: Տես Հատուկ Թեմա. Ծոմապահություն, 13:2:

■ **«որին հավատացել էին»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ (անցյալ վաղակատար) ՆԵԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակ է, որը ցույց է տալիս անցյալ ժամանակում վճռված՝ կայացված գործողություն: Այս նոր երեցները որոշ ժամանակ արդեն հավատքի մեջ էին և նրանց հավատարմությունը հաստատվել էր իրենց առաջնորդական հատկանիշների դրսևորմամբ: Այս խոսքի քերականական այսպիսի կառուցվածքը, որտեղ *eis* կապված է *pisteuō* (տես՝ Գործք 10:43) բառի հետ, հատկանշական է Հովհաննեսի գրեթե ճիշտ, սակայն այն ամբողջ է նաև Պողոսի (տես՝ Հռոմ.10:14; Գաղ.2:16; Փիլ.1:29) և Պետրոսի (տես՝ 1 Պետ.1:8) գրքերում: Տես կարևոր Հատուկ Թեմաներ 3:16 և 6:5:

■ **«նրանց Տիրոջը հանձնեցին»** Սա չի վերաբերում ինչ-որ տեսակի պաշտոնադրության՝ ձեռնադրության: Մինևույն ԲԱՅԸ կիրառվում է հ. 26-ում Պողոսի և Բառնաբասի վերաբերյալ, մինչ 20:32-ում այն մարդկանց համար, որոնք արդեն երեցներ էին: Ձեռնադրությունը կամ պաշտոնադրությունը լավ է, քանի որ շեշտադրում է այն ճշմարտությունը, որ Աստված մարդկանց կանչում է առաջնորդական պաշտոնների մեջ ծառայելու: Այն դառնում է բացասական և ոչ սուրբգրային, եթե խտրականություն է դնում հավատացյալների միջև: Բոլոր հավատացյալներն էլ կանչված են ծառայության համար և պարզևներով օժտված (տես՝ Եփես.4:11-12): Նոր Կտակարանում գոյություն չունի պաշտոնական անձնակազմի և ծառայողական անձնակազմի միջև խտրականություն:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 14:24-28

24Եվ Պիսիդիայում շրջելով՝ եկան Պամփյուլիա: **25**Եվ երբ Պերգեում Տիրոջ Խոսքը քարոզեցին, իջան Ատալիա, **26**և այնտեղից նավով գնացին Անտիոք, որտեղից նրանք Աստծո շնորհին էին հանձնվել՝ այն գործի համար, որ կատարեցին: **27**Եվ երբ եկան, ժողովեցին եկեղեցին, պատմեցին, ինչ որ Աստված կատարեց իրենց հետ, և թե ինչպես Նա հեթանոսների համար հավատի դուռը բացեց: **28**Եվ երկար ժամանակ աշակերտների հետ այնտեղ մնացին:

14:24 Պիսիդիայի լեռնային նահանգը գտնվում է Պամփյուլիայի ափամերձ նահանգի հյուսիսային մասում: Պերգեն այդ տարածաշրջանի գլխավոր քաղաքն էր: Ըստ երևույթին Պողոսը նախկինում միայն անցել էր այս քաղաքի միջով (տես՝ 13:13), սակայն հիմա վերադարձել էր և քարոզում էր ավետարանը (տես՝ հ. 25):

14:25 «Ատալիա» Սա Պերգեի նավահանգիստն էր:

14:26 «նավով գնացին Անտիոք» Նրանք չվերադարձան Կիպրոս: Բառնաբասը վերադառնալու էր Սարկոսի շուրջ Պողոսի հետ ունեցած իր վիճաբանությունից հետո (տես՝ 15:36-39):

■ **«նրանք Աստծո շնորհին էին հանձնվել»** ԲԱՅԸ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ (անցյալ վաղա-կատար) ԿՐԱՎՈՐԱԿԱՆ Է: Այս առաջին միսիոներական ճամփորդությունը, որը Սուրբ Հոգու նախաձեռնությամբ և աջակցությամբ էր, զարմանահրաշ հաջողությամբ կնքվեց:

14:27 «ժողովեցին եկեղեցին, /անգլ.՝ սկսեցին պատմել/ պատմեցին, ինչ որ Աստված կատարեց» Նկատել, որ նրանք պատասխանատու էին եկեղեցու առջև: «Նույնիսկ Հեթանոսների Առաքյալը» հաշվետվություն էր ներկայացնում տեղական եկեղեցուն (տես՝ Հատուկ Թեմա 5:11): Նաև նրանք գիտակցում էին, թե ով իրականացրեց այդ մեծ գործը՝ ՅԱՀՎԵՆ / Սուրբ Հոգին:

Նրանք հաշվետու չեղան առաջնորդներին (տես՝ 13:1), այլ համայնքին՝ եկեղեցուն և հետագայում իրենց միսիոներական գործունեության վերաբերյալ հաշվետվություն ներկայացրեցին Երուսաղեմում գտնվող եկեղեցուն (տես՝ 15:4), ինչպես նաև ճանապարհին գտնվող բոլոր մյուս համայնքներին (տես՝ 15:3): Կարծում են ամբողջ համայնքը՝ եկեղեցին ձեռնադրեց նրանց և ուղարկեց իրենց ճամփորդությանը:

■ **«և թե ինչպես Նա հեթանոսների համար հավատի դուռը բացեց»** Պողոսը այս «հավատի դուռ» արտահայտությունը հաճախ էր գործածում (տես՝ 1 Կորնթ.16:9; 2 Կորնթ.2:12; Կող.4:3, ինչպես նաև նկատել Հայտն.3:8): Աստված ավետարանի միջոցով ամբողջ մարդկության համար մի դուռ բացեց, որը ոչ ոք չէր կարող փակել: Գործք 1:8-ի Հիսուսի խոսքերի ամբողջ մտադրությունը՝ նպատակը այժմ իրականացվում էր:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Իրանք մտածելու տեղիք տվող հարցեր են, և վերջնական չեն:

1. Ընդգծե՛ք Պողոսի առաջին միսիոներական ճամփորդությունը ըստ աշխարհագրական տեղանքների:
2. Համառոտագրեք Պողոսի թե՛ հրեաներին և թե՛ հեթանոսներին ուղղված քարոզները:
3. Ի՞նչ կապ ունի ծոմապահությունը ժամանակակից Զրիստոնյաների հետ:
4. Ինչո՞ւ Հովհաննես Սարկոսը լքեց միսիոներական թիմը:

ԳՈՐԾՔ 15

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Երուսաղեմի Խորհուրդը	Ընդհարում թլփատության հարցի շուրջ	Հակառակություն հեթանոսների ընդունելության հարցի շուրջ	Երուսաղեմի ժողովը	Հակառակություն Անտիոքում
15:1-5	15:1-5	15:1-5	15:1-2 15:3-5	15:1-2 15:3-4
15:6-11	Երուսաղեմի Խորհուրդը 15:6-21	15:6-21	15:6-11 15:12-18 15:19-21	Հակառակություն Երուսաղեմում 15:5-7ա Պետրոսի քարոզը 15:7բ-11 15:12 Հակոբոսի քարոզը 15:13-18 15:19-21
Խորհրդի պատասխանը	Երուսաղեմի որոշումը		Նամակը հեթանոս հավատացյալներին	Առաքելական նամակը
15:22-29	15:22-29	15:22-29	15:22-29	15:22-29
15:30-35	Սիրիայում ծառայությունը շարունակվում է 15:30-35	15:30-35	15:30-34 15:35	Պատվիրակները Անտիոքում 15:30-35
Պողոսն ու Բառնաբասը բաժանվում են	Բաժանում Հովհաննես Մարկոսի շուրջ	Երկրորդ Միսիոներական Ճամփորդության մեկնումը	Պողոսն ու Բառնաբասը բաժանվում են	Պողոսը բաժանվում է Բառնաբասից և իր հետ վերցնում Շիղային
15:36-41	15:26-41	15:36-41	15:36-41	15:36-38 15:39-40

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտորության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն

կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Այս գլուխը հաճախ անվանվում է «Երուսաղեմի Խորհուրդը»:

Բ. Վաղ Եկեղեցու մեթոդների և նպատակների մեջ սա հանդիսանում է մեծ շրջադարձային պահ՝ աստվածաբանական ջրբաժան գիծ: Ինչ որ առումով սա Քրիստոնեության երկու կենտրոնների՝ Երուսաղեմի և Անտիոքի միաձուլումն է:

Գ. Գործք 8-11-ում ոչ հրեաների դարձը թվում է թե թույլատրելի էր որպես բացառություններ (նրանք լիարժեք, գործնականում հեթանոսներ չէին) և ոչ թե որպես ակտիվորեն հետապնդելի քաղաքականություն (տես՝ 11:19):

Դ. Այս գլխի կապը Գաղատացիների 2-ի հետ վիճելի է: Գործք 15 կամ Գործք 11:27-30 կարող են լինել Գաղատացիների 2-ի հիմքը: Տես՝ գլուխ 14, Գ. Ներածություն:

Ե. Հետաքրքիր է, որ Պենտեկոստի լեզուներով խոսելու կրկնվող նշանը (գլուխ 2, 8 և 10; հավանաբար հ. 8) ընդհանրապես չի նշվում որպես ապացույց հեթանոսների փրկության վստահության համար:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 15:1-5

¹Եվ Հրեաստանից ոմանք Անտիոք իջան և եղբայրներին սովորեցնում էին, որ՝ «Եթե Մովսեսի սովորության համաձայն չթլփատվեք, չեք կարող փրկվել»: ²Եվ Պողոսն ու Բառնաբասը նրանց հետ բավական հակառակվելուց և վիճելուց հետո, վճռեցին, որ Պողոսը և Բառնաբասը և նրանցից մի քանիսը այս խնդրի համար գնան Երուսաղեմ՝ առաքյալների և երեցների մոտ: ³Նրանք էլ եկեղեցու կողմից ճանապարհի դրվեցին և Փյունիկեի ու Սամարիայի միջով անցնելով՝ պատմում էին հեթանոսների դարձի գալը. և մեծ ուրախություն պատճառեցին բոլոր եղբայրներին: ⁴Եվ երբ հասան Երուսաղեմ, եկեղեցու, առաքյալների և երեցների կողմից ընդունվեցին և պատմեցին, ինչ որ Աստված կատարել էր իրենց հետ: ⁵Փարիսեցիների աղանդից մի քանի հավատացյալներ վեր կացան և ասում էին, թե պետք է թլփատել նրանց և պատվիրել, որ պահեն Մովսեսի օրենքը:

15:1 «Հրեաստանից ոմանք Անտիոք իջան» Այս պարբերությունը Անտիոքում կատարված դեպքերի վերաբերյալ է: «Ոմանք» կամ «որոշ մարդիկ» խոսքը վերաբերում է մի խումբ հավատացյալ հրեաների, որոնք նվիրված էին թե՛ հուդայականությանը և թե՛ Հիսուսին: Նրանք Հիսուսին տեսնում էին որպես ՀԿ-ի հավատքի իրականացում՝ լրում (տես՝ Մատթ.5:17-19) և ոչ թե որպես դրան մրցակից կամ փոխանորդ (տես՝ 11:2; 15:5; Գաղ.2:12): Այս մարդկանց աստվածաբանությունը կապված է հրեա սուտ վարդապետների հետ (Հուդաիստների /Judaizers/), որոնց մասին գրված է Գաղատացիների թղթում: Այս մարդիկ ինչ-որ եղանակով կապ ունեին Երուսաղեմի եկեղեցու հետ (տես՝ հ. 24), սակայն պաշտոնապես այդ եկեղեցու ներկայացուցիչները չէին:

Ուշադրություն դարձրեք, որ ասվում է «իջան»: Եթե նայեք քարտեզին, ապա կարծես թե այն «վերևում» է գտնվում, սակայն հրեաների համար բոլոր տեղերն էլ աստվածաբանորեն Երուսաղեմից «ցած» էին գտնվում (տես՝ հ.2):

■ **«/սկսեցին սովորեցնել/ սովորեցնում էին»** Սա ԱՆԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ է, որը կարող է նշանակել՝ (1) սկսեցին սովորեցնել կամ (2) նորից ու նորից սովորեցնում էին:

■ **«Եթե չթվաավեր»** Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոետիկ գործողություն: Թվատությունը Աբրահամի և իր սերունդների համար ուխտի նշան էր (տես՝ Ծննդ.17:10-11): Հուդայականության մեջ սա փոքր հարց չէր, այլ կապ ուներ հենց փրկության հետ: Այս մարդիկ կարծում էին, որ ՅԱՀՎԵԻ մոտ գնալու միակ ճանապարհը հուդայականության միջոցով էր (տես՝ հ. 5): Այսպիսի մարդիկ սկսեցին հայտնի դառնալ որպես Հուդաիստներ (տես՝ Գաղ.1:7; 2:4): Նրանք հավատում էին Քրիստոսին ինչպես նաև համաձայն էին Մովսիսական Ուխտի հետ (տես՝ հ. 5): Արդարությունը հիմնված էր նրանց գործերի վրա, ոչ թե Աստծո ձրի պարզելի: Աստծո հետ մարդու փոխհարաբերությունը հասանելի էր իր գործերի միջոցով (տես՝ Հռոմ.3:21-30; Գաղ.5:2-9): Հարց էր առաջանում, թե ովքե՞ր են «Աստծո ժողովուրդը» և ինչպե՞ս եր բնութագրում նրանց:

15:2 «Պողոսն ու Բառնաբասը նրանց հետ բավական հակառակվելուց /անգլ.՝ մեծ քննարկումից/ և վիճելուց հետո» Ղուկասն օգտագործում է «մեծ քննարկում» արտահայտությունը, ցույց տալով ծայրաստիճան գզայական լարվածությունը (տես՝ Ղուկ.23:19,25; Գործք 15:2; 19:40; 23;7,10; 24:5): Այս բանավեճը վճռորոշ էր: Այն ուղղված էր դեպի ավետարանի պատգամի սիրտը՝

1. Ինչպե՞ս կարող է մարդը Աստծո առջև արդարանալ՝ ճիշտ դիրքի մեջ մտնել:

2. Արդյո՞ք Նոր Ուխտը անքակտելի կերպով կապված է Մովսիսական Ուխտի հետ:

NASB թարգմանության մեջ «մեծ քննարկում և վեճ ունեցան» արտահայտությունը բառացի նշանակում է «անհամաձայնությունն ու հարցադրումները քիչ չէին»: *Յանգի Աստվածաշնչյան Բառացի Թարգմանությունը* (էջ՝ 95) /*Young's Literal Translation of the Bible*/ գրում է «ոչ փոքր հակառակություն և վիճարանություն»: Ինչ-որ բան բացասական ենթասահմանմամբ արտահայտելու այս գրական ոճը՝ տեխնիկական բնորոշ է Ղուկասի գրվածքներին: Տե՛ս ամբողջական գրառումների համար 12:18:

■ **«Եղբայրները վճռեցին, որ»** Սա վերաբերում է «եկեղեցուն» (տես՝ հ. 3): Գործք 15 գլխում գոյություն ունեն մի քանի խմբեր, որոնք կապ ունեն տարբեր առաջնորդական կամ պետական կառուցվածքների հետ:

1. 2, 3, 12 և 22 համարներում նշվում է համայնքային՝ եկեղեցական կառավարումը:

2. 6 և 22 համարներում նշվում է առաքելական կամ եպիսկոպոսական կառավարումը (այսինքն՝ Հակոբոսի), որը Հռոմի Կաթոլիկ կամ Անգլիկան եկեղեցու կառավարման ձևն է:

3. 6 և 22 համարներում նշվում է երեցների կառավարումը: Այն կարծես թե համագոր է Երիցական կառավարմանը:

Նոր Կտակարանը արձանագրում է բոլոր այս կառավարման կառույցները: Այն սկիզբ է առել Առաքյալների կառավարման կատարելագործումից (որոնք ինչ-որ մի օր մեռնելու էին) և հասել մինչև համայնքային կառավարում, որոնց առաջնորդ կատարիզատորները հանդիսանում են հովիվները (տես՝ հ. 19):

Իմ կարծիքով դեկավարման կառուցվածքները այնքան էլ վճռորոշ՝ կենսական չեն որքան առաջնորդների հոգևոր վիճակը: Մեծ Հանձնարարականը և Սուրբ Հոգով լեցուն առաջնորդներն են ավետարանի համար ամենակարևորը: Կառավարման որոշակի ձևերն ու կառուցվածքները գալիս և գնում են ըստ ճաշակի և հիմնականում հիմնված մշակութային քաղաքական օրինակի վրա:

■ **«և նրանցից մի քանիսը»** Ա. Թ. Ռոբերթսոնի, *Բառապատկերների Նոր Կտակարանում*, էջ՝ 224, /A. T. Robertson, *Word Pictures in the New Testament*/ մի հետաքրքիր մեկնաբանություն է կատարում այս համարի շուրջ. «Անշուշտ Տիտոսը (Գաղ.2:1,3) հույն էր և հավանաբար Ղուկասի եղբայրը, ում մասին չի նշվում Գործքում»: Իհարկե սա հավանականություն է, սակայն հիմնված է մի քանի ենթադրությունների վրա: Մենք պետք է զգույշ լինենք դրանից, քանի որ տեքստը (մեր ենթադրություններով) կարող է նշանակել կամ ենթադրել մի բան, որը չի նշանակում այն ինչ մենք ենք ենթադրում: Մենք պետք է բավարարվենք բնագրի հեղինակի գրածով և ոչ թե մեր ընդլայնված ենթադրություններով, չնայած որ դրանք կարող են հիմնավորված լինել:

■ **«առաքյալների մոտ»** Երուսաղեմի եկեղեցու առաջնորդական ստրուկտուրան դեռևս կազմավորված չէր: Մի քանի տեքստերից կարծես թե երևում է, որ Հակոբոսը՝ Հիսուսի կես եղբայրը, եկեղեցու առաջնորդն էր: Այս գլխում նույնպես հաստատվում է դրա ճշմարտացիությունը: Մինչդեռ կային այլ առաջնորդական խմբեր էլ (տես՝ հհ. 4,22):

1. Տասներկուսը

2. տեղի երեցները

3. ողջ համայնքը՝ եկեղեցին

Հայտնի չէ, թե ինչպես էր Հակոբոսը կապված այս խմբերի հետ: Նա կոչվում է առաքյալ Գաղ.1:19-ում: Նաև հավանական է, որ նա էր ճանաչվել երեցների խմբի առաջնորդը (տես՝ Պետրոսը իրեն երեց է անվանում 1 Պետ.5:1-ում. Հովհաննեսը իրեն երեց է անվանում 2 Հովհաննես 1-ում և 3 Հովհաննես 1-ում):

■ **«երեցներ»** Այս համատեքստում «երեցներ» բառը վերաբերում է ավելի հին առաջնորդական խմբին, որոնք ձևավորվել են համաձայն ժողովարանի առաջնորդական օրինակի: Տե՛ս գրառում 11:30 կամ 14:23:

15:3 «եկեղեցի» Տե՛ս Հատուկ Թեմա 5:11:

■ **«Փյունիկեի ու Սամարիայի միջով անցնելով»** Սա ԱՆԿԱՏԱՐ ՉԵՉՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: Փյունիկեում հիմնականում հեթանոսներ էին, մինչ Սամարիան հրեաների և հեթանոսների խառնուրդ բնակչություն ուներ: Նախկինում այս տարածքները ավետարանվել էին (տես՝ 8:5բ; 11:19):

■ **«պատմում էին /անգ.՝ մանրամասնորեն/ հեթանոսների դարձի գալը»** Կարծես Պողոսը և Բառնաբասը հաղորդում էին Աստծո կատարած բոլոր հրաշալի գործերի մասին տարբեր «ազգերի» եկեղեցիներում, որոնց հետ նրանք կապի մեջ էին: Այն մարդկանց համար, որոնք ՀԿ-ի գիտակ էին, «ազգերի» դարձը իրականացված մարգարեություն էր (այսինքն՝ Եսայի 2:2-4; 42:6; 49:6):

Նաև հնարավոր է, որ իրենց միսիոներական ջանքերի հաջողության մասին ավելի շատ վայրերում տեղեկացնելով, Երուսաղեմի եկեղեցին չէր կարող աննկատ և թաքուն կերպով այդ խնդիրը փակել (տես՝ 21:18-20):

■ **«մեծ ուրախություն պատճառեցին բոլոր եղբայրներին»** Սրանք հեթանոս տարածաշրջաններ էին: Պետք է որ եկեղեցիները լինեին խառնուրդ եկեղեցիներ: Նրանց արձագանքը եղավ Երուսաղեմի եկեղեցու համար մարգարեական հիշեցում: Աշխարհասփյուռ առաքելությունը սկսվեց հելլենիստների կողմից և հաստատվեց հելլենիստ եկեղեցիների կողմից:

15:4 «եկեղեցին, առաքյալները և երեցները» Այստեղ նշվում է նրանց բոլոր առաջնորդական խմբերը, ինչպես հ. 22-ում:

■ **«պատմեցին, ինչ որ Աստված կատարել էր իրենց հետ»** Սա դարձել էր գործելակերպ:

15:5 «Փարիսեցիների աղանդից մի քանի հավատացյալներ» Հիսուսի վրա ունեցած հավատքը (ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) որպես խոստացյալ Մեսիա, եկեղեցու հիմքն էր: Սակայն եկեղեցու ներսում առկա էին տարբեր կարծիքներ, թե ինչպես է առնչվում Քրիստոսի մեջ ունեցած իրենց այս հավատքը Իսրայելի ուխտերի և խոստումների հետ: Փրկված Փարիսեցիներից կազմված այս ձայն ունեցող խումբը (հունարենում այս խոսքից առաջ դրված է «կանգնեցին» ցույց տալով դրա շեշտադրումը) կարծում էին, որ ՀԿ-ը ներշնչված է և հավիտենական, հետևաբար պետք է պահպանվեր (տես՝ Մատթ.5:17-19): Մարդը պետք է վստահի Հիսուսին և հնազանդվի Մովսեսին (այսինքն՝ *dei*, անհրաժեշտ է [1] թղթատվել, [2] հարկ տալ, [3] պահել. բոլոր երեքն էլ ՆԵՐԿԱ ԱՆՈՐՈՇ են): Հենց այս հարցն է ձևավորում Հռոմեացիների 1-8 և Գաղատացիներին ուղղված նամակի աստվածաբանական բովանդակությունը: Տե՛ս Հատուկ Թեմա. Փարիսեցիներ, 5:34:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 15:6-11

6Եվ առաքյալներն ու երեցները հավաքվեցին այս հարցը քննելու: **7**Եվ շատ վիճաբանություններից հետո Պետրոսը ոտքի ելավ և նրանց ասաց. «Մարդի՛կ, եղբայրներ, դուք գիտե՞ք, որ առաջին իսկ օրվանից մեր միջից Աստված ինձ ընտրեց, որ հեթանոսներն ավետարանի խոսքն իմ բերանով լսեն ու հավատան: **8**Եվ Աստված, որ սրտերը գիտի, վկայություն տվեց նրանց՝ Սուրբ Հոգին տալով նրանց, ինչպես Նա մեզ տվեց: **9**Եվ ոչ մի խտրություն չդրեց նրանց և մեր միջև՝ հավատով սրբելով նրանց սրտերը: **10**Եվ հիմա ինչո՞ւ եք փորձում Աստծուն, մի լուծ դնելով աշակերտների վզին, որ ո՛չ մեր հայրերը կարողացան տանել, և ո՛չ էլ մենք: **11**Այլ հավատում ենք, որ մենք, ինչպես և նրանք, Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով ենք փրկվում»:

15:6 «առաքյալներն ու երեցները հավաքվեցին» Այստեղ առաջնորդները սկզբում առանձին հավաքվեցին: Սա խոսում է Երիցական ղեկավարման քաղաքականության մասին:

15:7 «շատ վիճաբանություններից հետո» Առաջնորդները համաձայնության մեջ չէին: Ոմանք համաձայն էին հ.5-ի հայտարարության հետ: Սրանք բոլորն էլ անկեղծ հավատացյալներ էին: Սակայն նրանցից ոմանք հակված էին ավետարանի իրենց ծանոթ և ոչ թե արմատական բնույթին: Նույնիսկ

Առաքյալները չէին շտապում տեսնելու այս հարցի լիարժեք ենթադրությունները (տես՝ 8:1): Նկատել կառավարման այս տարրերին՝ (1) առանձին քննարկում, (2) բաց քննարկում, (3) եկեղեցու կողմից քվերակություն:

■ **«Պետրոսը ոտքի ելավ»** Սա պետք է որ լիներ հավաքված խմբի հետ խոսքը սկսելու կերպ (տես՝ հ. 5): Այստեղ՝ Գործքում վերջին անգամ է նշվում Պետրոսի մասին: Նա հիշատակում է Կոռնելիոսի հետ ունեցած իր փորձառությունը (տես՝ 10-11 գլուխները):

■ **«հեթանոսներն ավետարանի խոսքն իմ բերանով լսեն ու հավատան»** Աստված օգտագործեց Պետրոսին, որ վկայի ազգերի հանդեպ Իր ունեցած սիրո և ընդունելության մասին: Աստված թույլ տվեց այս նոր արմատական հասկացողությունը փուլերով զարգանա՝ կատարելագործվի:

1. առաջինը սամարացիները, գլուխ 8
2. Եթովպիացի ներքինին, գլուխ 8
3. Կոռնելիոսը, գլուխ 10-11

Այս մարդիկ լրիվ հեթանոսության ավանդույթները պահող մարդիկ չէին, այլ բոլորն էլ կապված էին հուդայականության հետ: Սակայն, 1 և 3-ը հաստատվեցին Պենտեկոստեի փորձառությամբ, որն ապացույց էր վաղ եկեղեցու համար, որ Աստված ընդունում է մյուս ցեղերին էլ:

15:8 «Աստված, որ սրտերը գիտի» Այս խոսքերով հաստատում էր, որ Աստված քաջատեղյակ է (տես՝ 1 Թագ.1:24; 16:7; Սաղմ.26:2; 139:1; Առակ.21:2; 24:12; Երեմ.11:20; 17:10; Դուկ.16:15; Հռոմ.8:27; Հայտն.2:23) այս դարձի եկած հեթանոսների հավատքի մասին:

■ **«Սուրբ Հոգին տալով նրանց»** Ըստ երևույթին սա վերաբերում է Պենտեկոստեի նմանատիպ հոգևոր փորձառությանը (»ինչպես Նա մեզ տվեց«): Սուրբ Հոգու հենց այս նույն դրսևորումը տեղի ունեցավ Երուսաղեմում, Սամարիայում և Կեսարիայում: Դա նշան եղավ հրեա հավատացյալների համար, որ Աստված ընդունում է մյուս ժողովուրդներին նույնպես (տես՝ հ. 9; 11:17):

15:9 «Եվ /Նա/ ոչ մի խտրություն չդրեց նրանց և մեր միջև» Պետրոսի աստվածաբանական եզրակացությունն էր սա, որին նա հանգեց 10:28,34; 11:12-ում: Աստված չի մեծարում առանձին անձանց (տես՝ Գաղ.3:28; Եփես.3:11-4:13; Կող.3:11): Բոլոր մարդիկ էլ ստեղծված են Աստծո պատկերով (տես՝ Ծննդ.1:26-27): Աստված կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն (տես՝ Ծննդ.12:3; Ելից 19:5-6; 1 Տիմ.2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ.3:9): Աստված սիրում է ամբողջ աշխարհին (տես՝ Հովհ.3:16-17):

■ **«հավատով սրբելով նրանց սրտերը»** Այս տերմինը գործածվում է Մեկտուազինտայում մատնանշելու Ղևտական սրբագործումը: Այն արտահայտում է Աստծուց մեզ բաժանող բոլոր բաներից հեռացնելու իմաստը:

Սա հենց այն նույն ԲԱՅՆ է, որ կիրառվում է Գործք 10:15 և 11:9-ում մաքուր և անմաքուր կենդանիների հետ կապված Պետրոսի փորձառության ժամանակ (որը հետևում է Ծննդ.7:2,8; 8:20-ի LXX-ը):

Ղուկասի Ավետարանում այն կիրառվում է բորոտությունից մաքրվելու համար (տես՝ 4:27; 5:12,13; 7:22; 17:14,17): Հետագայում այն դարձավ հիանալի փոխաբերություն մեղքից մաքրվելու համար (տես՝ Եբր.9:22,23; 1 Հովհ.1:7):

Միտքը մարդու ամբողջ էությունը՝ անձը բնութագրող ՀԿ-յան բառ է: Տե՛ս Հատուկ Թեմա 1:24: Այս հեթանոսները կատարելապես մաքրվել և ընդունվել էին Աստծո կողմից՝ Քրիստոսի միջոցով: Նրանց մաքրման միջոցը ավետարանի խոսքի վրա իրենց ունեցած հավատքն էր: Նրանք հավատացել են, ընդունել և ամբողջովին վստահել Հիսուսի գործին և Նրա անձին (տես՝ Հռոմ.3:21-5:11; Գաղ.2:15-21):

15:10 «ինչո՞ւ եք փորձում Աստծուն» Այս արտահայտության ՀԿ-յան հիմքը Ելից17:2,7 և 2 Օր.6:16 են: Հունարենի այս «փորձել» (*peirazō*) տերմինը ունի «դեպի կործանում տանող տեսակետից փորձելու» իմաստը: Սա մի լուրջ քննարկում է եղել: Տե՛ս Հատուկ Թեմա. «Փորձել» բառի հունարեն տերմինները և դրանց լրացուցիչ իմաստը, 5:9:

■ **«լուծ»** Սա կիրառվում էր ռաբբիների կողմից *Shema* անգիր ասելիս, 2 Օր.6:4-5, հետևաբար այն Օրենքն է ներկայացնում՝ գրավոր և բանավոր կերպով (տես՝ Մատթ.23:4; Դուկ.11:46; Գաղ.5:1): Հիսուսն այն կիրառում է Մատթ.11:29-ում Իր մեջ Նոր Ուխտի պահանջները ներկայացնելիս:

■ **«որ ո՛չ մեր հայրերը կարողացան տանել, և ո՛չ էլ մենք»** Սա արտացոլում է Հիսուսի ուսմունքները (տես՝ Դուկ.11:46): Այս թեմայի մասին Պողոսը խոսում է Գաղատացիների 3-ում: Սակայն այստեղ Պետրոսն է՝ Հակոբոսի պես, զգում հուդայականության ծանրությունը (տես՝ Գաղ.2:11-21):

Այս արտահայտությունն իր մեջ ընդգրկում է աստվածաբանական այն ճշմարտությունը, որ Օրենքը ի գորու չեղավ փրկություն բերելու, քանի որ մեղավոր մարդկությունը չկարողացավ պահել սուրբ օրենքը (տես՝ Հռոմեացիների 7): Փրկությունը չկարողացավ և չի կարող հիմնվել մարդկային գործերի վրա: Սակայն փրկված, պարզևներով օժտված և Սուրբ Հոգին իր մեջ ունեցող հավատացյալը կարիք ունի ապրել աստվածահանո կյանք (տես՝ Մատթ.11:30; Եփես.1:4; 2:10): Բարեպաշտությունը (Քրիստոսակերպ լինելը, այսինքն՝ Հռոմ.8:29; Գաղ.4:19; Եփես.4:13) միշտ էլ եղել է Քրիստոնեության նպատակը՝ ավետարանչության համար հնարավորություններ ստեղծելու նպատակով, և ոչ թե անձնական հպարտությունը կամ դատապարտող օրինապաշտությունը:

15:11 Սա փրկության ամփոփումն է (այսինքն՝ «փրկվում» ԱՌԲԻՍ ԱՆՈՐՈՇ) հավատքի միջոցով շնորհքով (Պետրոսի համար, տես՝ Գործք 2-3; Պողոսի համար, տես՝ 13:38-39; Գաղատացիների 3; Եփեսացիների 1-2): Նկատեք, որ թե՛ հրեաների և թե՛ հեթանոսների համար փրկության կերպը նույնն է (տես՝ Հռոմ.3:21-31; 4; Եփես.2:1-10):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 15:12-21

¹²Եվ ամբողջ բազմությունը լռեց և լսում էին Բառնաբասին և Պողոսին, որ պատմում էին, թե Աստված հեթանոսների մեջ որքան նշաններ և հրաշքներ կատարեց իրենց ձեռքով: ¹³Եվ երբ նրանք լռեցին, Հակոբոսը պատասխանեց և ասաց. «Մարդի՛կ, եղբայրնե՛ր, ի՛նձ լսեք: ¹⁴Միմեռնը պատմեց, թե ինչպես Աստված առաջին անգամ այցելեց հեթանոսներին, որ նրանցից Իր անվան համար ժողովուրդ վերցնի: ¹⁵Եվ սրա հետ համաձայնում են մարգարեների խոսքերը, ինչպես որ գրված է. ¹⁶«Մրանից հետո կդառնամ և Դավթի ընկած տունը կվերականգնեմ և նրա փլվածքները կնորոգեմ և կկանգնեցնեմ այն. ¹⁷որ մյուսմարդիկ Տիրոջը փնտրեն, և բոլոր հեթանոսները, որոնց վրա Իմ անունն է դրված» - ասում է Տերը, որ կատարում է այս բոլոր բաները: ¹⁸Աշխարհի սկզբից Աստծուն հայտնի են Իր բոլոր գործերը: ¹⁹Այս պատճառով էլ ես վճռում եմ նեղություն չտալ նրանց, ովքեր հեթանոսությունից Աստծուն են դառնում, ²⁰այլ մի թուղթ գրել նրանց, որ ետ կանգնեն կուռքերի պղծությունից, պռոնկությունից, խեղդված բաներից և արյունից: ²¹Որովհետև Մովսեսը հինավուրց ժամանակներից մինչև այժմ բոլոր քաղաքներում իր քարոզիչներն ունի, և ժողովարաններում ամեն շաբաթ օր կարդացվում է»:

15:12 «Եվ ամբողջ բազմությունը լռեց և լսում էին» Պետրոսի խոսքերը առաջնորդների խմբին հանդարտեցրել էր: Համատեքստից կարծես թե երևում է, որ այս պահին երկու միսիոներները վերանայում էին իրենց միսիոներական ճամփորդությունները երկրորդ անգամ: Այս անգամ առաջնորդները լսում էին: *Ձեռքով Աստվածաշնչյան Մեկնաբանություն* գիրքը (*Jerome Biblical Commentary*) ընդունում է, որ բացի եկեղեցու աստանից՝ խորհրդից, եղել է ևս մի առանձին ժողով՝ հհ. 6-11: Ես կարծում եմ դա միևնույն ժողովն է:

■ **«Բառնաբասին և Պողոսին»** Նկատեք, որ անուններն այստեղ տեղերով փոխված են, քանի որ սա Բառնաբասի տնային եկեղեցին էր:

■ **«հրաշքներ և նշաններ»** Պենտեկոստեի լեզուների աստվածաբանական նպատակը Գործքում Աստծո ընդունելության նշանն է, հետևաբար հարց է առաջանում, թե արդյո՞ք այս յուրահատուկ նշանը հաճախ կրկնվում էր որպես հաստատման՝ հիմնավորման կերպ:

Նշաններն ինքնին կատարվում էին Հիսուսի կողմից (տես՝ 2:22), Առաքյալների կողմից (տես՝ 2:43; 3:7; 4:16,30; 5:12), Յոթի կողմից (տես՝ 6:8; 8:6,13) և Պողոսի ու Բառնաբասի կողմից (տես՝ 14:3; 15:12): Աստված հաստատում էր Իր ներկայությունը և գորությունը ավետարանի միջոցով՝ այս նշաններով և հրաշքներով: Սրանք ավելի շատ ապացույցներ էին Հուդայական խմբավորման համար, որ Աստված լիովին ընդունել է բոլոր հեթանոսներին միայն շնորհքի հիման վրա՝ հավատքի միջոցով:

15:13 **«Հակոբոս»** Սա Հակոբոս Առաքյալը չէր, քանի որ նա սպանվել էր Գործք 12:1-2-ում: Սա Հիսուսի կիսով չափ եղբայրն էր, որը դարձավ Երուսաղեմի եկեղեցու առաջնորդը և ՆԿ-ի Հակոբոս գրքի հեղինակը: Նա հայտնի էր որպես «Հակոբոս Արդար»: Նա երբեմն անվանվում էր «ուղտի ծնկներ» քանի որ շատ հաճախ էր ծնկելով աղոթում: Երուսաղեմի եկեղեցու երկու հիմնական առաջնորդները կարևոր դեր էին խաղում այս հարցում (Պետրոսն ու Հակոբոսը): Տե՛ս Հատուկ Թեմա 12:17:

15:14 **«Միմեռնը»** Սա արամերենի Միմոն անվանումն է, որ կոչվում է Պետրոս (տես՝ 2 Պետ.1:1):

■ **«նրանցից Իր անվան համար ժողովուրդ վերցնի»** Սա ՀԿ-յան մարգարեների տիեզերական շեշտադրումն է (օր.՝ Ես.2:2-4; 42:6; 45:20-23; 49:6; 52:10): Աստծո ժողովրդի մեջ միշտ էլ եղել են թե՛ հրեաներ և թե՛ հեթանոսներ (տես՝ Ծննդ.3:15; 12:3; Ելից 9:16; Եփես.2:11-3:13):

«Իր անվան համար» արտահայտությունը կարող է լինել Երեմ.13:11 և 32:20-ի կամ Ես.63:12,14-ից մեջբերում:

15:15-18 «գրված է» Սա ազատ մեջբերում է Մեպտուազինտայում Ամովս 9:11-12-ից: Համար 17-ում «մարդիկ» /անգլ.՝ «մարդկությունը»/ տերմինը *Edom* բառն է (ազգը) Մասորետիկ տեքստում, սակայն Մեպտուազինտան ներկայացնում է *anthropos* (մարդկություն) տերմինը: Հակոբոսը մեջբերում է կատարում Մեպտուազինտայից, քանի որ այս դեպքում այն յուրահատուկ կերպով համապատասխանում է փրկության համար Աստծո խոստման տիեզերական հատկությունն արտահայտելու իր նպատակի հետ:

Նկատել, որ խոստացված գործողությունները ՅԱՀՎԵի կողմից են: Սա համընկնում է Եզեկ.36:22-38 հետ: Ուշադրություն դարձրեք, թե քանի անգամ է նշվում «ԵՍ» բառը:

LXX-ից այս մեջբերումը, որը ըստ երևույթին տարբերվում է MT-ից, ցույց է տալիս, որ հավատքի իրական հարցը կատարյալ տեքստը չէ, այլ կատարյալ Աստվածն ու մարդկության համար Նրա ծրագիրը: Մեզնից ոչ ոք չի սիրում ՀԿ-ի կամ ՆԿ-ի տեսքտային տարբերակները, սակայն դրանք չեն ազդում հավատացյալների հավատքի վրա, որ չվստահեն Սուրբ Գրքին: Աստված արդյունավետ կերպով և հավատարմորեն հայտնել է Իրեն մեղավոր մարդկությանը: Ձեռքով արտատպված հնագույն տեքստերը չեն կարող կիրառվել որպես արդարացում մերժելու այս հայտնությունը: Տե՛ս Մենֆրեդ Բրոչ, *Չարաշահելով Սուրբ Գիրքը*, (Manfred Brauch, *Abusing Scripture*) գլուխ 1, «Սուրբ Գրքի Էությունը» էջ՝ 23-32:

15:16 Համատեքստից ակնհայտ է, որ Հակոբոսը այս մեջբերումը ընտրում է և փոփոխում Մեպտուազինտայից, որպեսզի պաշտպանի՝ հաստատի ազգերի ներգրավվածությունը: Արդյո՞ք նա ընտրել է այս տեքստը նաև այն նպատակով, որ հաստատում է ՀԿ-ի Մովսիսական կրոնի վախճանը: Նոր Ուխտը արմատապես տարբեր է:

1. շնորհքի հիման վրա և ոչ թե գործերի (պարզև, ոչ թե արժանիք)
2. Քրիստոսակենտրոն և ոչ թե տաճարի վրա կենտրոնացած (Հիսուսն է նոր Տաճարը)
3. ընդգրկում է ամբողջ աշխարհը և ոչ միայն հրեա ազգը

Այս փոփոխությունները կործանարար էին լինելու «թլփատության կողմնակից» հավատացյալների համար: Այժմ գլխավոր Առաքյալը (Պետրոսը), դարձի եկած ռաբբի Առաքյալը (Պողոսը) և Երուսաղեմի եկեղեցու առաջնորդը (Հակոբոսը) բոլորն էլ համաձայնության են եկել նրանց դեմ, ինչպես որ մայր եկեղեցու և միսիոներության ժամանակ ծնված եկեղեցիների քվե տվողները (քվերակությունը):

15:17 Ի՞նչ հիասքանչ տիեզերական հայտարարություն է: Բայց նաև ուշադրություն դարձրեք «ընտրության» արտահայտության վրա, որ «բոլոր հեթանոսները, որոնց վրա Իմ անունն է դրված» (տես՝ Դան.9:19): Այն ինչ որ առումով երկրպագության փորձառություն է մատնանշում (տես՝ LXX 2 Օր.28:10; նաև Ես.63:19; Երեմ.14:9):

15:18 Հեթանոսների ներգրավվածությունը մշտապես եղել է Աստծո ծրագիրը (տես՝ Գաղ.3:26-29; Եփես.3:3-6; տես՝ Հատուկ Թեմա 1:8): Փրկության ճանապարհը՝ միջոցը գալու է Դավիթ Թագավորի սերնդից (տես՝ հ. 16; 2 Մնաց.6:33):

15:19 Սա Հակոբոսի վճիռը՝ եզրահանգումն էր:

15:20 Այս կարգադրությունները նպատակ ունեն (1) ապահովելու խառը եկեղեցիների հետ մի սեղանի շուրջ հաղորդակցություն, (2) ընդլայնելու տեղի հրեաների մեջ ավետարանչության հնարավորությունը: Այս բաները կապ չունեն հեթանոսների անհատական՝ անձնական փրկության հետ: Այս կարգադրությունները ուղղված էին թե՛ հրեաների զգայականության և թե՛ հեթանոսների պաշտամունքի ավերորոշությունների դեմ (տես՝ հ. 29; 21:25):

Ղևտական օրենքները տրվել էին ընդգծելու հրեաների և հեթանոսների միջև եղած տարբերությունը (սոցիալական և կրոնական): Դրանց ամբողջ նպատակն էր զրկել նրանց իրար հետ փոխհարաբերվելուց, սակայն այժմ նպատակը լրիվ հակառակն է: Այս «հիմնադրությունների» նպատակն է օգնել երկու մշակույթների հավատացյալների միջև փոխհարաբերություն հաստատել:

Գոյություն ունեն բազմաթիվ հունարեն ձեռագրերի տարբերակներ այս Առաքելական Հրամանագրի հետ կապված: Դրանցից մի քանիսն ունեն երկու կետ, մի քանիսը՝ երեք կամ չորս: Այս տարբերակների վերաբերյալ լիարժեք քննարկման համար նայեք Բրյուս Մ. Մեցգերի *Հունարեն Նոր Կտակարանի Տեքստային Մեկնաբանություն* (Bruce M. Metzger, *A Textual Commentary on the Greek New Testament*, pp. 429-434): Անգլերեն թարգմանություններից շատերը ունեն չորս կետանոց ցանկը:

■
NASB, NRSV, REB «պոռնկությունից»

Դժվար է հաստատ իմանալ, թե արդյոք այս արգելքները ուղղված էին՝

1. հեթանոսական անբարո պաշտամունքային արարողությունների դեմ (այսինքն՝ անառակության)
2. արյունապղծության (արյունակցական կապ ունեցողների հանդեպ պղծություն գործելու) հանդեպ հրեական նրբագացության դեմ (տես՝ Ղևտացիների 18; տես՝ Ֆ. Ֆ. Բրյուս, Հարցերի Պատասխաններ, էջ՝ 43; /F. F. Bruce, *Answers to Questions*, p. 43; NJB/)

■ **«խեղդված բաներից և արյունից»** Որոշ մեկնաբաններ այս երկուսն էլ կապում են կերակուրների վերաբերյալ Մովսիսական օրենքներին (տես՝ Ղևտ. 17:8-16): Այնուամենայնիվ հնարավոր է, որ «արյուն» խոսքը վերաբերում է սպանությանը, որը նույնպես կարևոր խնդիր է Մովսեսի գրքերում:

15:21 Այս համարը նշանակում է՝

1. վստահեցնել օրինապահներին, որ Թորան /հնգամատյանը/ հեթանոսներին բոլոր տեղերում սովորեցնում էին կամ
2. քանի որ բոլոր տեղերում էլ կային հրեաներ, ապա նրանց սուր քննադատությունները պետք է հարգվեին, որպեսզի հնարավոր լիներ արդյունավետ կերպով նրանց ավետարանելը (տես՝ 2 Կորնթ. 3:14-15):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 15:22-29

²²Այն ժամանակ առաքյալներին ու երեցներին, ամբողջ եկեղեցու հետ միասին, հաճելի թվաց, որ իրենցից ընտրված մարդիկ ուղարկեն Անտիոք՝ Պողոսի և Բառնաբասի հետ. Հուդային, որ Բարսաբա էր կոչվում, և Ծիդային, որոնք գլխավոր մարդիկ էին եղբայրների մեջ: ²³Եվ իրենց ձեռքով այսպիսի նամակներ գրեցին. «Առաքյալները, երեցները և եղբայրները Անտիոքում, Սիրիայում և Կիլիկիայում հեթանոսներից եղող եղբայրներին, ողջույն: ²⁴Քանի որ լսեցինք, որ մեր միջից դուրս գալով՝ ոմանք ձեզ խռովեցրին խոսքերով, ձեր հոգիներն անհանգստացնելով, ասելով, որ պետք է թվատվեք և Օրենքը պահեք, որոնց մենք այսպիսի պատվեր չսովեցինք: ²⁵Միաբանությամբ հավաքված լինելով՝ մեզ հաճո երևաց, որ ընտրված մարդիկ ուղարկենք ձեզ մոտ՝ մեր սիրելիների՝ Պողոսի և Բառնաբասի հետ, ²⁶մարդիկ, որոնք իրենց անձերը վտանգի են ենթարկել մեր Տեր Հիսուս Քրիստոսի անվան համար: ²⁷Արդ, Հուդային և Ծիդային ուղարկեցինք, որ նրանք էլ խոսքով նույն բաները պատմեն: ²⁸Որովհետև Սուրբ Հոգուն և մեզ հաճելի թվաց ձեզ վրա ավելի մեծ բեռ չդնել՝ բացի այս կարևոր բաներից. ²⁹հեռու մնալ կուռքերին մատուցված զոհից, արյունից, խեղդված բաներից ու պոռնկությունից, եթե այս բաներից ձեր անձերը պահեք, ճիշտ կանեք: Ողջ կացեք»:

15:22 Այս պատվիրակությունը նպատակ ուներ միաբանություն բերելու (տես՝ հ. 23) և ոչ թե փոխզիջում լիազորելու:

■ **«Հուդային, որ Բարսաբա էր կոչվում»** Այս հավատարիմ առաջնորդը, ինչպես և ՆԿ-ի շատ ուրիշ մարդիկ, անհայտ է մեզ: ՆԿ-ում ուրիշ ոչինչ չի ասվում նրա մասին: Սակայն Աստված նրան լավ է ճանաչում:

Պարզապես հնարավոր է, որ այս մարդը Հովսեփ Բարսաբայի եղբայրն էր, որը 1:23-ում Իսկարիոտացի Հուդային փոխարինելու համար թեկնածուներից մեկն էր: Եթե այդպես է, ապա նրանք երկուսն էլ Բարսաբա կոչվող մարդու որդիներն են:

■ **«Ծիդա»** Ծիդան Բառնաբասի պես Երուսաղեմի եկեղեցու առաջնորդներից էր: Պողոսը նրան կոչում էր Միովանոս և փոխարինելու էր Բառնաբասին, որպես Պողոսի երկրորդ միսիոներական ճամփորդության գործընկեր: Հավանաբար Պողոսը նրան էր ընտրել, որպեսզի երբ ինչ-որ մեկը նրան մեղադրեր (1) Տասներկուսի քարոզածից տարբերվող ավետարան քարոզելու մեջ կամ (2) մայր եկեղեցու հետ փոխհարաբերությունից դուրս լինելու մեջ, ապա Ծիդան կարողանար պատասխանել նրանց անհանգստություններին և մեղադրանքներին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇԻՂԱՄ ՍԻՂՎԱՆՈՍ

Շիղան կամ Սիղվանոսը, այն մարդն էր, որին Պողոսը ընտրեց իր հետ գալու երկրորդ միսիոներական ճամփորդությանը, այն բանից հետո, երբ Բառնաբասն ու Հովհաննես Սարկոսը վերադարձան Կիպրոս:

Ա. Առաջին անգամ Աստվածաշնչում նրա մասին նշվում է Գործք 15:22-ում, որտեղ նա կոչվում է Երուսաղեմի Եկեղեցու եղբայրների մեջ որպես գլխավոր անձ:

Բ. Նա նաև մարգարե էր (տես՝ Գործք 15:32):

Գ. Նա էլ Պողոսի պես Հռոմի քաղաքացիություն ուներ (տես՝ Գործք 16:37):

Դ. Նա և Հուդա Բարսաբան Երուսաղեմի Եկեղեցու կողմից ուղարկվեցին Անտիոք ստուգելու այնտեղի իրավիճակը (տես՝ Գործք 15:22,30-35):

Ե. Պողոսը նշում է նրա մասին 2 Կորնթ.1:19-ում որպես ավետարանի իր ծառայակից քարոզչի:

Չ. Հետագայում նա նմանեցվում է Պետրոսի հետ 1 Պետրոսի նամակում (տես՝ 1 Պետ.5:12):

Է. Պողոսն ու Պետրոսը նրան անվանում էին Սիղվանոս, մինչև Ղուկասը Շիղա է կոչում (Սողոսի արամերեն ձևը): Հնարավոր է, որ Շիղան նրա հրեական անունն էր, իսկ Սիղվանոսը՝ լատիներենը (տես՝ Ֆ. Ֆ. Բրյուս, *Պողոս. Ազատագրված Մտնով Առաքյալը* /F. F. Bruce, *Paul: Apostle of the Heart Set Free*, p. 213/):

15:23 Երուսաղեմի Խորհրդից նամակը ուղղված էր միայն որոշ եկեղեցիների, ըստ երևույթին այն եկեղեցիներին, որոնց կազմում կային մեծաքանակ հավատացյալ հրեաներ: Թվարկելով միայն մի քանի հատուկ շրջաններ, Հակոբոսը ցույց է տալիս, որ այս կանոնները բոլոր հեթանոս եկեղեցիների համար չէին նախատեսված: Նամակը միայն փոխհարաբերության և ավետարանչության նպատակներով էր և ոչ թե վարվելակերպի կամ փրկության ուղեցույցի:

Արդյո՞ք դուք որպես ժամանակակից հավատացյալ խուսափում եք չսրբված /non-Kosher/ մսերից: Տե՛ս՝

1. Մենֆրեդ Բրոչ, *Սուրբ Գրքի Չարաշահում*, գլուխ 7, «Համատեքստի չարաշահում. Պատմական Իրավիճակ և Մշակութային Իրականություն» էջ՝ 202-249: /Manfred Brauch, *Abusing Scripture*, chapter 7, «*The Abuse of Context: Historical Situation and Cultural Reality*» /.
2. Գորդոն Ֆի, *Ավետարանը և Հոգին* /Gordon Fee, *Gospel and Spirit*/
3. *Աստվածաշնչի Խրդին Խոսքերը*, «Ինչպե՞ս պետք է Քրիստոնյաները Սուրբ ապրեն» էջ՝ 527-530 և «Ուտե՛լ, թե չուտե՛լ» էջ՝ 576-578 /Hard Sayings of the Bible, «How Kosher Should Christians Live?», pp. 527-530 and »To Eat or Not to Eat,» pp. 576-578/.

Այս հոդվածները բոլորն էլ օգտակար են: Շատ հուսադրող է կարդալ այլ տեղեկացված, անկեղծ և Աստվածաշնչին հավատացող Քրիստոնյաների, որոնք այս հարցի շուրջ պայքարների մեջ են: Նրանց գրածները այլ Քրիստոնյաներին տալիս են մտածելու ազատություն և ապրելու այն լույսի ներքո, որն իրենք ունեն: Միաբանությունն է և ոչ թե միանմանությունը, առողջ, աճող, Մեծ Հանձնարարականով ապրող եկեղեցիների հաջողության գրավակա՛նը:

■ «Կիլիկիա» Սա Պողոսի հայրենի տունն է (տես՝ 22:3):

15:24

NASB

«մեկ մտքի դարձած»

NKJV

«միաբանությամբ հավաքված»

NRSV, NJB

«մենք միաձայն որոշեցինք»

TEV

«միասին հավաքվեցինք և բոլորս էլ համաձայնության եկանք»

Հավատացյալների մեջ այսպիսի միաբանությունը բնորոշ է Սուրբ Հոգու ներկայությանը (տես՝ հ. 28): Նկատել, որ սա չի նշանակում, որ քննարկում կամ սուր մտքերի՝ կարծիքների փոխանակում չի եղել, այլ որ խնդրի շուրջ հնարավորինս արտահայտվելուց հետո հավատացյալները հանգել են միաբան համաձայնության՝ որոշման:

Միաբանության մեջ այս աստվածաբանական համաձայնությունը կարիք ուներ սահմաններից դուրս փոխանցվելու, որպեսզի այդ նույն լարվածությունը և վիճաբանությունը նորից ու նորից տեղի չունենար: Այժմ Երուսաղեմի եկեղեցին պաշտոնական քայլ էր կատարել ավետարանի բովանդակության հիման վրա և հեթանոսների համար կիրառելու վերաբերյալ:

15:26 Պողոսն ու Բառնաբասը ոչ միայն հաղթանակներ էին իրար հետ ունենում, այլ նոր միսիոներական գործի մեջ դժվարություններ: Այս խոցելիությունը ինչ-որ անցողիկ զգացողություն չէր, այլ մշտական նվիրում (ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ):

15:28 «Սուրբ Հոգուն և մեզ» Այս շատ կարևոր ժողովին Աստված ներկա էր: Նա արտահայտեց Իր կամքը քննարկման միջոցով: Սուրբ Հոգին է այն անձը, որ միաբանություն է ստեղծում: Այստեղ ընդգծված են աստվածաշնչյան ուխտի երկու տարրերն էլ՝ Աստծո գործողությունը և մարդու կողմից տրված պատշաճ արձագանքը՝ պատասխանը: Նկատեք, որ այն փոխզիջում էր՝ յուրաքանչյուր կողմն էլ ինչ որ բան ստացավ: Միայն շնորհքով, միայն հավատքով ավետարանը հաստատվեց, սակայն հրեական բժախնդրությունը հարգվեց՝ հաշվի առնվեց: Տե՛ս Հատուկ Թեմա. Սուրբ Հոգու Անձ լինելը, 1:2:

■ **«այս կարևոր բաներից»** Սրանք չեն առնչվում անձնական փրկության հետ, այլ տեղական եկեղեցիներում հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև եղած փոխհարաբերությանը:

15:29 Հեթանոսների համար սա նշանակում էր, որ պետք է լիովին կտրվեին իրենց կռապաշտ անցյալից: Դժվար է հավասարակշռել Քրիստոնեական ազատությունն ու պատասխանատվությունը, սակայն անհրաժեշտ է (տես՝ Հռոմ.14:1-5:13; 1 Կորնթ.8:1-13; 10:23-28): Այս հեթանոսների նախկինում կատարած պաշտամունքը պարունակում էր բոլոր երեք արգելված գործողությունները՝

1. կուռքերին մատուցված զոհերը վերաբերում էր մսին (տես՝ 1 Կորնթ.8:10:23-33)
2. արյունը հնարավոր է վերաբերում էր՝
 - ա. անսուրբ մսին
 - բ. կանխամտածված սպանությանը
3. խեղդված բաները պետք է որ վերաբերեին անսուրբ կերպերով կենդանիներ սպանելուն, ենթադրելով, որ նախորդ երկու կետերը նույնպես կապված են հրեաների կողմից կերակուրի հանդեպ բժախնդրությանը (այսինքն՝ Դևտացիների 11)
4. հնարավոր է պոռնկությունը վերաբերում էր՝
 - ա. հեթանոսական պաշտամունքների ծիսակարգերի մասնակցությանը (ինչպես կերակուրը)
 - բ. արյունապղծության դեմ ՀԿ-յան Դևտական օրենքներին (տես՝ Դևտ.17:10-14; տես՝ Փ. Փ. Բրյուս, *Հարցերի Պատասխաններ* /F. F. Bruce, *Answers to Questions*/, էջ՝ 43)

Բոլոր այս «կարևոր բաները» փրկության հետ կապ չունեն, այլ խառնուրդ եկեղեցիների ներսում փոխհարաբերության և հրեական ավետարանչության ավելի լայն հնարավորության համար են: Տե՛ս Փ. Փ. Բրյուս, *Հարցերի Պատասխաններ* /F. F. Bruce, *Answers to Questions*/, էջ՝ 80-81:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՂԵՄ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

Ա. Այս գլուխը փորձում է բալանսի բերել Քրիստոնեական ազատության և պատասխանատվության պարադոքսը: Գրական այս բաժինը անցնում է Գործք 15:13-ի միջով:

Բ. Այս գլուխը ընդգրկող խնդիրը հավանաբար Հռոմի եկեղեցում հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոսների միջև եղած լարվածությունն էր: Դարձի գալուց առաջ հրեաները հակված էին լինել օրինապահ, իսկ հեթանոսները՝ անբարո: Հիշեք, որ այս գլուխը ուղղված է Հիսուսի անկեղծ հետևորդներին: Այս գլուխը ուղղված չէ մարմնավոր՝ աշխարհիկ հավատացյալներին (տես՝ 1 Կորնթ.3:1): Երկու խմբերին էլ վերագրված է ամենաբարձր շարժառիթը՝ դրդապատճառը: Երկու կողմերում էլ ծայրահեղությունների դեպքում վտանգն առկա է: Այս քննարկումը արտոնություն չէր տալիս պերճախոս օրինապահությանը կամ ցուցամոլ ազատականությանը:

Գ. Հավատացյալները պետք է զգույշ լինեն, որպեսզի իրենց աստվածաբանությունը կամ էթիկան՝ բարոյագիտությունը, չդարձնեն չափանիշ բոլոր մյուս հավատացյալների համար (տես՝ 2 Կորնթ.10:12): Հավատացյալները պետք է քայլեն իրենց ունեցած լույսի ներքո, սակայն հասկանան, որ իրենց աստվածաբանությունը ավտոմատ կերպով չի դառնում Աստծունը: Հավատացյալները դեռևս մեղքի ներգործության տակ են ընկնում: Մենք պետք է իրար քաջալերենք, հորդորենք և Սուրբ Գրքից իրար սովորեցնենք, խորհրդածենք և ապրենք դրանք, սակայն միշտ սիրո մեջ: Որքան շատ ենք իմանում, այնքան հասկանում ենք, որ ոչինչ էլ չգիտենք (տես՝ 1 Կորնթ.13:12):

Դ. Մարդու գործողությունները գնահատելու իրական միջոցները Աստծո առջև նրա վերաբերմունքն ու շարժառիթներն են: Քրիստոնյաները կանգնելու են Քրիստոսի առջև դատվելու, թե ինչպես են միմյանց վերաբերվել (տես՝ հհ. 10, 12 և 2 Կորնթ.5:10):

Ե. Մարթին Լյութերն ասել է՝ «Քրիստոնյան բոլորից ամենաազատ տերն է, որ չի ենթարկվում ոչ ոքի. Քրիստոնյան բոլորից ամենապատասխանատու ծառան է՝ ենթակա բոլորին»: Աստվածաշնչյան ճշմարտությունը հաճախ ներկայացվում է ծայրաստիճան պարադոքսալ վիճակում:

2. Այս դժվար, սակայն շատ կարևոր նյութը արծարծվում է մի ամբողջ Հռոմեացիների 14:1-15:13 գրական բաժնում, ինչպես նաև 1 Կորնթացիների 8-10 և Կողոսացիների 2:8-23-ում:
- Է. Այնուամենայնիվ պետք է ասել, որ անկեղծ նվիրումով հավատացյալների մեջ բազմազանությունը վատ բան չէ: Յուրաքանչյուր հավատացյալ ունի թե՛ առավելություններ և թե՛ թուլություններ: Յուրաքանչյուրս պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո, միշտ բաց լինելով Հոգու և Աստծո Խոսքի ավելի շատ լույսի համար: Կյանքի դժվարին կացությունների ընթացքում էլ (1 Կորնթ.13:8-13) մարդը պետք է քայլի սիրո (հ. 15) և խաղաղության մեջ (հ. 17, 19) փոխադարձ շինության համար:
- Ը. «Ավելի ուժեղ» և «ավելի թույլ» անվանումները, որ Պողոսը տալիս է այս խմբերին, նախապես տրամադրում է նրանց մեք հանդեպ: Անշուշտ սա Պողոսի մտադրությունը չէր: Երկու խմբերն էլ անկեղծ հավատացյալներ էին: Մենք չպետք է փորձենք ուրիշ Քրիստոնյաների ձուլելնք մեր հետ: Մենք Քրիստոսի մեջ՝ Նրանով ենք իրար ընդունում:
- Թ. Ամբողջ վիճաբանությունը կարել է հակիրճ՝ համառոտ ներկայացնել, որպես՝
1. իրար ընդունեք, քանի որ Աստված էլ մեզ է ընդունում Քրիստոսի մեջ (տես՝ 14:1,3; 15:7)
 2. իրար մի՛ դատեք, քանի որ Քրիստոսն է մեր միակ Տերն ու Դատավորը (տես՝ 14:3-12);
 3. սերն ավելի կարևոր է, քան անձնական ազատությունը (տես՝ 14:13-23)
 4. հետևեք Քրիստոսի օրինակին և վայր դրեք ձեր իրավունքները հանուն ուրիշների շինության և բարօրության (տես՝ 15:1-13):

■ **«եթե»** Քերականորեն սա ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ չէ: NJB թարգմանությունը ասում է «խուսափեք այս բաներից և ճիշտ կանեք»:

■ **«Ո՞րչ կացեք»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, որը ընդհանրապես գործածվում էր փակման խոսք՝ առողջության և կարողության մաղթանքով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 15:30-35

³⁰Եվ սրանք, ճանապարհ դրվելով, եկան Անտիոք, և երբ ժողովուրդը հավաքվեց, թուղթը տվին: ³¹Երբ այն կարդացին, ուրախացան տրված մխիթարության համար: ³²Եվ քանի որ Հուդան և Ծիդան նույնպես մարգարեներ էին, շատ խոսքերով քաջալերեցին ու հաստատեցին նրանց: ³³Եվ միառժամանակ մնալուց հետո եղբայրները խաղաղությամբ նրանց ետ՝ առաքյալների մոտ ուղարկեցին: ³⁴Սակայն Ծիդան ճիշտ համարեց դեռ այնտեղ մնալ: ³⁵Իսկ Պողոսը և Բառնաբասը մնում էին Անտիոքում և ուրիշ շատերի հետ Տիրոջ Խոսքն էին քարոզում ու սովորեցնում:

15:30 Սա մեկ ուրիշ համայնքային՝ եկեղեցական ժողով էր: Այն ցույց է տալիս տեղական եկեղեցու հավաքվելու կարևորությունը:

15:31 Այս երկրորդ համայնքը (այսինքն՝ Անտիոքի հեթանոսներից կազմված եկեղեցին) նամակում ներկայացված «կարևոր բաները» չէին համարում որպես բացասական կամ խիստ:

15:32 Այս համարը սահմանում է ՆԿ-ի մարգարեության ուղղվածությունը: Առաջին հերթին դա ավետարանի և դրա գործադրության քարոզչությունն է. հնարավոր է, որ այն եղել է երկար քարոզելու ՆԿ-յան ապացույցը: Տես Հատուկ Թեմա. ՆԿ-յան Մարգարեությունը, 11:27:

15:33 «խաղաղությամբ» Այս NASB թարգմանությունը հարմար չէ: Տե՛ս NKJV և NRSV Աստվածաշնչի տարբերակները այս համարի ավելի հստակ թարգմանության համար: Սա հնարավոր է արտացոլում է Եբրայերենի «ցտեսություն» *Shalom* (այսինքն՝ «խաղաղություն» BDB 1022) բառը: Այն արտահայտում է Երուսաղեմի եկեղեցու և նրա առաջնորդական կազմի կողմից հետագայում ցուցաբերած լիարժեք աջակցությունը:

15:34 Այս համարը ներառված չէ հունարեն P⁷⁴, Ռ, A, B, E ձեռագրերում և ոչ էլ Լատիներեն Վուլգատա թարգմանության մեջ: Այն նաև բաց է թողնված NRSV, TEV, NJB և NIV թարգմանություններում: Այն կարելի է գտնել այլ հունարեն փոփոխված ունցիալ ձեռագրերում (այսինքն՝ C և D): Հավանաբար չի հանդիսանում Գործքի բնագրի մաս: UBS⁴ այս համարի բացառված լինելը գնահատում է որպես «հստակ՝ վստահելի» (A):

15:35 Այս համարը ցույց է տալիս, թե առաջին դարի որքան շատ քարոզիչների և վարդապետների վերաբերյալ մենք՝ ժամանակակիցներս ոչինչ չգիտենք: ՆԿ-ը հատընտիր կերպով է ներկայացնում այլ Առաքյալների, միսիոներների և քարոզիչների կյանքի վկայությունների մասին: Բայց Աստված գիտի նրանց: Գործք Առաքելոցի նպատակը կենսագրականները չեն:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 15:36-41

³⁶Եվ մի քանի օրից հետո Պողոսն ասաց Բառնաբասին. «Ե՛կ նորից գնանք և այցելենք մեր եղբայրներին բոլոր այն քաղաքներում, որոնցում Տիրոջ Խոսքն էինք քարոզել, տեսնենք, թե ինչպես են նրանք»: ³⁷Եվ Բառնաբասը մտադրվել էր Մարկոս կոչվող Հովհաննեսին նույնպես տանել: ³⁸Սակայն Պողոսը ճիշտ չէր համարում նրան իրենց հետ վերցնելը, որը Պամփյուլիայում իրենցից բաժանվեց և իրենց հետ գործելու չգնաց: ³⁹Եվ անհամաձայնությունն այնքան սուր էր, որ բաժանվեցին միմյանցից: Այսպես Բառնաբասը Մարկոսին առավ և գնաց Կիպրոս, ⁴⁰իսկ Պողոսը, Շիղային ընտրելով, ճանապարհ ընկավ՝ եղբայրների կողմից Աստծո շնորհին հանձնվելուց հետո: ⁴¹Եվ շրջում էր Սիրիայում և Կիլիկիայում՝ եկեղեցիները հաստատելով:

15:36 «Ե՛կ նորից գնանք /անգլ.՝ վերադառնանք/» Պողոսի և Բառնաբասի նպատակն էր վերադառնալ և զորացնել այն նոր եկեղեցիները, որոնք սկսվել էին իրենց առաջին ճամփորդության ժամանակ: Նկատել, որ ոչ մի աստվածային դրսևորում չկար այս առաքելության համար, ինչպես որ եղավ առաջին միսիոներական ճամփորդության համար (տես՝ 13:2):

15:38 «Պողոսը ճիշտ չէր համարում /անգլ.՝ շարունակում էր պնդել/» Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՑԱԿԱՆ է: Ըստ երևույթին Պողոսը շարունակում էր արտահայտել իր դժկամությունը:

■ **«որը իրենցից բաժանվեց»** Իրականում, թե ինչու էր Մարկոսը թողել նրանց առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ, անհայտ է (տես՝ 13:13):

15:39 «Եվ անհամաձայնությունն այնքան սուր էր, որ բաժանվեցին միմյանցից» Այս տերմինի արմատի իմաստը «սուր» բառն է, որը նշանակում է «սայրի պես սրել»: Այս բառը դրական իմաստով կիրառվում է Եբր.10:24-ում: ԲԱՅԸ նաև կիրառվում է Գործք 17:6 և 1 Կորնթ.13:5-ում: Նրանք իրոք վիճել էին:

■ **«Բառնաբասը Մարկոսին առավ և նավով գնաց Կիպրոս»** Այժմ երկու միսիոներական թիմ կար:

15:40 «Պողոսը Շիղային ընտրելով» Պողոսն ընտրեց Երուսաղեմի եկեղեցուց մեկ ուրիշ առաջնորդի:

■ **«եղբայրների կողմից Աստծո շնորհին հանձնվելուց հետո»** Գուցե սա իրենից ներկայացրել է մի տեսակ նվիրման աղոթքի ծառայություն (տես՝ 6:6; 13:3; 14:26; 20:32): Սա վերաբերում է ամբողջ եկեղեցուն և ոչ թե միայն ընտրված խմբի:

15:41 «Կիլիկիա» Ինչու և ինչպես էին այս եկեղեցիները սկսել, հայտնի չէ: Հավանաբար Պողոսն ինքն էր սկսել դրանք Տարսուսում անցկացրած իր լուռ տարիների ընթացքում: Կիլիկիան Պողոսի հայրենի տան նահանգն էր:

■ **«եկեղեցիներ»** Տե՛ս Հատուկ Թեմա 5:11:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտոդոլության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է այս գլուխն այդքան կարևոր:
2. Ովքե՞ր են Հուդաիստ-Քրիստոնյաները:
3. Ինչո՞ւ էր Հակոբոսի կարծիքն այդքան կարևորվում:
4. Ովքե՞ր են երեցները:
5. Արդյո՞ք 28-29 համարների արգելքները՝ սահմանափակումները վերաբերում են փրկությանը, թե փոխհարաբերությանը:

ԳՈՐԾՔ 16

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Տիմոթեոսը ընկերակցում է Պողոսին և Շիղային	Տիմոթեոսը միանում է Պողոսին և Շիղային	Տիմոթեոսը միանում է Պողոսին	Տիմոթեոսը գնում է Պողոսի և Շիղայի հետ	Լիկոնիա. Պողոսը իր հետ է վերցնում Տիմոթեոսին 15:41-16:3
16:1-5	16:1-5	16:1-5	16:1-5	16:4 16:5
Մակեդոնացի մարդու Պողոսի տեսիլքը	Մակեդոնական կանչը	Փոքր Ասիայով դեպի Տրոյա	Տրոյայում. Պողոսի տեսիլքը	Անցում Փոքր Ասիայով
16:6-10	16:6-10	16:6-10	16:6-10	16:6-8 16:9-10
Լիդիայի դարձը	Լիդիան մկրտվում է Փիլիպպեոսից	Պողոսն ու Շիղան Փիլիպպեոսից	Փիլիպպեոսից. Լիդիայի դարձը	Ժամանում Փիլիպպե
16:11-15	16:11-15	16:11-15	16:11-15	16:11-15
Բանտարկություն Փիլիպպեոսի	Պողոսն ու Շիղան բանտարկվում են		Փիլիպպեի բանտում	Պողոսի և Շիղայի բանտարկությունը
16:16-24	16:16-24	16:16-18 16:19-24	16:16-22ա 16:22բ-24	16:16-18 16:19-24
16:25-34	16:25-34	16:25-34	16:25-28 16:29-30 16:31-34	16:25-28 16:29-34
16:35-40	16:35-40	16:35-40	16:35 16:36 16:37 16:38-40	16:35-37 16:38-40

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտորոշյալ ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾՔ 15:36-16:40 ՀԱՏՎԱԾՈՒՄ

I. ԵՐԿՐՈՐԴ ՄԻՄԻՈՆԵՐԱԿԱՆ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ (15:36-18:23)

Ա. Այս առաքելությունը ավելի երկար տևեց քան առաջինը. հավանաբար 3-4 տարի:

Բ. Այն հիմնականում կենտրոնացած էր Մակեդոնիայի և Աքայիայի վրա, որը ժամանակակից Հունաստանն է:

Գ. Համառոտ ընդհանուր նկարագիրը.

1. Բառնաբասն ու Պողոսը բաժանվում են, 15:36-40 (կոիվ Հովհաննես Մարկոսի շուրջ)
2. Սիրիա և Կիլիկիա, 15:41 (երբ և ինչպես են այս եկեղեցիները սկսել՝ անհայտ է)
3. Լյուստրա և Դերբե, 16:1-5 (թիմին է միանում Տիմոթեոսը)
4. Տրոյա, 16:6-10 (Պողոսը տեսիլ է ունենում գնալու դեպի արևմուտք)
5. Փիլիպպե, 16:11-40
6. Թեսաղոնիկե, 17:1-9
7. Բերիա, 17:10-14
8. Աթենք, 17:15-34
9. Կորնթոս, 18:1-17
10. Վերադարձ Սիրիայի Անտիոք, 18:18-22

ՊՈՂՈՍԻ ԾԱՌԱՅԱԿԻՑՆԵՐԸ

Ա. Հովհաննես Մարկոսը (Հովհաննեսը հրեական անուն է, Մարկոսը՝ հռոմեական. Գործք 12:25)

1. Նա մեծացել էր Երուսաղեմում: Նրա մայրական տունը նշվում է Գործք 12:12-ում որպես Երուսաղեմում առաջին եկեղեցու համար աղոթքի հավաքատեղի:
2. Ծատերն են պնդել, որ նրա տունը Տերունական Ընթրիքի վայրն էր և որ Մարկ.14:51-52-ում արձանագրված մերկ երիտասարդը հենց Մարկոսն էր: Սրանցից երկուսն էլ հնարավոր են, սակայն դրանք միայն ենթադրություններ են:
3. Նա Բառնաբասի քրոջ որդին էր (տես՝ Կող.4:10):
4. Նա Բառնաբասի և Պողոսի գործընկերն էր (տես՝ Գործք 13:5):
5. Նա լքեց թիմին ավելի շուտ և վերադարձավ Երուսաղեմ (տես՝ Գործք 13:13):
6. Բառնաբասը կամեցավ վերցնել նրան երկրորդ ճամփորդությանը, սակայն Պողոսը մերժեց (տես՝ Գործք 15:36-41):
7. Հետագայում Պողոսն ու Հովհաննես Մարկոսը հայտնի է, որ հաշտվեցին (տես՝ 2 Տիմ.4:11; Փիլիմոն 24):
8. Հայտնի է նաև, որ Պետրոսը ու նա դարձան մտերիմ ընկերներ (տես՝ 1 Պետ.5:13):
9. Ավանդույթն ասում է, որ նա է գրել այն Ավետարանը, որ կրում է իր անունը, արձանագրելով Պետրոսի Հռոմի քարոզները: Մարկոսի Ավետարանը ունի ավելի շատ լատիներեն տերմիններ, քան ՆԿ-յան որևէ այլ գիրք և հավանաբար գրվել է հռոմեացիների համար: Այս աղբյուրը Հիերապոլիսի Պապիրուսներից է, ինչպես որ արձանագրված է Եվսեբիոսի *Եկեղեցու Պատմություն* գրքում (Eusebius *Eccl. His.* 3.39.15):
10. Ավանդույթն ասում է, որ նա կապ ունի Ալեքսանդրիայի Եկեղեցու հաստատման մեջ:

Բ. Ծիղա

1. Գործքում նա կոչվում է Ծիղա, իսկ Թիմոթեոսը՝ Սիղվանոս:
2. Նա, ինչպես Բառնաբասը, Երուսաղեմի Եկեղեցում առաջնորդ էր (տես՝ Գործք 15:22-23):
3. Նա Պողոսի մտերիմներից էր (տես՝ Գործք 15:40; 16:19բ; 17:1-15; 1 Թեսաղ.1:1):
4. Նա, ինչպես Բառնաբասն ու Պողոսը, մարգարե էր (տես՝ Գործք 15:32):
5. Նա առաքյալ էր կոչվում (տես՝ 1 Թեսաղ.2:6):
6. Նա, ինչպես Պողոսը, Հռոմի քաղաքացի էր (տես՝ Գործք 16:37-38):

7. Նա, Հովհաննես Մարկոսի պես, նույնպես Պետրոսի հետ գործակցում էր, անգամ հնարավոր է որպես դպիր (տես՝ 1 Պետ.5:12):

Գ. Տիմոթեոս

1. Նրա անունը նշանակում է «Աստծուն պատվող»
2. Նրա մայրը հրեա էր, իսկ հայրը՝ հույն և ապրում էր Լյուստրայում: Օրիգենի մեկնաբանության (Origen's Commentary) լատիներեն թարգմանությունը Հռոմ.16:21-ի վերաբերյալ ասում է, որ Տիմոթեոսը Դերբեի քաղաքացի էր: Հավանաբար սա վերցված է Գործք 20:4-ից: Նա դաստիարակվել էր հրեական հավատքով, իր մոր և տատիկի կողմից (տես՝ 2 Տիմ.1:5; 3:14-15):
3. Նրան խնդրեցին միանալ Պողոսի և Շիղայի միսիոներական թիմին, երկրորդ ճամփորդության ժամանակ (տես՝ Գործք 16:1-5): Նա համոզվեց մարգարեությամբ (տես՝ 1 Տիմ.1:18; 4:14):
4. Նրան թվատեց Պողոսը, որպեսզի կարողանա աշխատել թե՛ հրեաների և թե՛ հույների հետ:
5. Նա Պողոսի նվիրյալ գործընկերն ու ծառայակիցն էր: Պողոսի օգնականներից ամենաշատը նա է նշվում իր անվամբ (17 անգամ՝ 10 Թիմոթեոս. տես՝ 1 Կորնթ.4:17; 16:10; Փիլ.1:1; 2:19; Կող.1:5; 1 Թեսաղ.1:1; 2:6; 3:2; 1 Տիմ.1:2,18; 4:14; 2 Տիմ.1:2; 3:14-15):
6. Նա կոչվում է «առաքյալ» (տես՝ 1 Թեսաղ.2:6):
7. Հովվական երեք Թիմոթեոսից երկուսը ուղղված են նրան:
8. Վերջին անգամ նրա մասին նշվում է Եբրայեցիների 13:23-ում:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 16:1-5
¹Եվ եկավ հասավ Դերբե և Լյուստրա: Եվ ահա այնտեղ կար մի աշակերտ՝ Տիմոթեոս անունով, որ մի հավատացյալ հրեա կնոջ որդին էր, իսկ հայրը հույն էր, ²որ բարի վկայություն ուներ լյուստրացի և իկոնիացի եղբայրների կողմից: ³Պողոսը կամեցավ, որ նա գնա իր հետ, և թվատեց նրան՝ այն կողմերում գտնվող հրեաների պատճառով, քանի որ բոլորը զիտեին, որ նրա հայրը հույն էր: ⁴Եվ երբ անցնում էին այդ քաղաքներով, նրանց պատվիրում էին պահել այն պատվերները, որ Երուսաղեմում եղող առաքյալների և երեցների կողմից էր սահմանված: ⁵Եվ այսպես եկեղեցիները հաստատվում էին հավատի մեջ և թվով օրեցօր աճում:

16:1 «Դերբե և Լյուստրա» Այս քաղաքները տեղակայված են հռոմեական Գաղատիա նահանգի հարավային մասում (ժամանակակից Թուրքիան): Պողոսն այցելել էր այս տարածքը իր առաջին միսիոներական ճամփորդության ժամանակ (տես՝ հ. 14):

■ **«այնտեղ կար մի աշակերտ»** Գուկասն օգտագործում է *idou* տերմինը, որպեսզի ներկայացնի այս արտահայտությունը: Դա շեշտադրում կատարելու կերպ էր: Տիմոթեոսը դառնալու էր Պողոսի ծառայության կարևոր գործակիցներից մեկը:

■ **«մի հավատացյալ հրեա կնոջ որդին էր, իսկ հայրը հույն էր»** 2 Տիմ.1:5-ից հասկանում ենք, որ նրա տատիկը նույնպես հրեա հավատացյալ էր կամ հավատքով ապրող հրեա: Նրա տատիկի անունը Լավոդիա էր, իսկ մայրիկինը՝ Եվնիկե: Նրա մայրը, հավանաբար նաև տատիկը, հավատացյալ էին դարձել Պողոսի առաջին ճամփորդության ժամանակ:

16:2 «բարի վկայություն ուներ» Սա ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Մարդիկ Տիմոթեոսի մասին բարի վկայություն էին տալիս պարբերաբար՝ նորից ու նորից: Եկեղեցու առաջնորդի հատկանիշներից մեկն էր «քննադատության՝ նախատիմքի տակ չընկնելը» թե՛ հավատացյալ և թե՛ անհավատ համայնքների կողմից (տես՝ 1 Տիմ.3:2, 7, 10):

■ **«Լյուստրա»** Տիմոթեոսի հայրենի տունը Լյուստրան էր: Սակայն Գործք 20:4-ի հունարեն ձեռագրերը (և Օրիգենի գրություններում) ակնարկում են, որ Դերբեն էր նրա հայրենի տունը:

16:3 «Պողոսը կամեցավ, որ նա գնա իր հետ» Նկատեք, որ Պողոսն է կանչում Տիմոթեոսին: Սա միայն Տիմոթեոսի ընտրությունը՝ որոշումը չէր (տես՝ 1 Տիմ.3:1): Ինչ որ իմաստով Տիմոթեոսը դառնում է Պողոսի առաքելական պատվիրակը կամ ներկայացուցիչը:

■ **«թլփատեց նրան»** Պողոսն ուզում էր, որ նա կարողանար աշխատել հրեաների հետ (տես՝ 1 Կորնթ.9:20; Գործք 15:27-29): Սա Հուդաիստների հետ փոխզիջման գնալ չէր նշանակում.

1. Երուսաղեմի Խորհրդի արդյունքների պատճառով (տես՝ հ. 15)
2. քանի որ նա հրաժարվեց թլփատել Տիտոսին (տես՝ Գաղ.2:3)

Այնուամենայնիվ Պողոսի գործողությունները շփոթեցնում էին այս հարցի շուրջ: Պողոսի մեթոդը «ամենքի հետ ամեն ինչ լինելու» որպեսզի նրանցից ոմանց շահի (տես՝ 1 Կորնթ.9:19:23) մարդկանց և նրանց փրկությունը դարձնում է առաջնային՝ նպատակային:

■ **«նրա հայրը հույն էր»** ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ ակնարկում է, որ նա մահացել էր:

16:4 Պողոսն ու Շիդան տեղեկացնում էին (այսինքն՝ ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) Երուսաղեմի Խորհրդի արդյունքների մասին (տես՝ 15:22-29): Հիշե՛ք, որ այս «կարևոր բաները» երկու նպատակ ունեին.

1. եկեղեցիների միջև փոխհարաբերությունը
2. Հրեաների մեջ ավետարանչությունը (ինչպես որ եղավ Տիմոթեոսի թլփատությունը)

16:5 Սա Ղուկասի ևս մեկ ամփոփիչ հայտարարություններից է (տես՝ 6:7; 9:31; 12:24; 16:5; 19:20; 28:31): Պողոսը աշակերտելու սիրտ ուներ (տես՝ 14:22; 15:36; 15:5): Ավետարանչությունը առանց աշակերտության ռոնահարում է Մեծ Հանձնարարականը (տես՝ Մատթ.28:18-20) և արդյունքում տեղի են ունենում հոգևոր վիժումներ:

■ **«եկեղեցիներ»** Տե՛ս Հատուկ Թեմա 5:11:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 16:6-10

⁶Եվ շրջեցին Փռյուգիայում և Գաղատիայի կողմերում. և Սուրբ Հոգու կողմից արգելվելով Աստծո Խոսքն Ասիայում տարածել՝ ⁷եկան Սյուսիայի կողմերը, փորձեցին Բյութանիա գնալ, բայց Հոգին նրանց թույլ չտվեց: ⁸Եվ Սյուսիայով անցնելով՝ իջան Տրովադա: ⁹Եվ գիշերը Պողոսին տեսիլք երևաց. մի մակեդոնացի մարդ կանգնած աղաչում էր նրան և ասում. «Անցի՛ր Մակեդոնիա և օգնի՛ր մեզ»: ¹⁰Եվ երբ նա այդ տեսիլք տեսավ, ցանկացանք իսկույն Մակեդոնիա գնալ, վստահ լինելով, որ Տերը մեզ կանչում է, որ ավետարանը քարոզենք նրանց»:

16:6 «շրջեցին Փռյուգիայում և Գաղատիայի կողմերում» Այս տեքստում Ղուկասը խոսում է ավելի շուտ ռասսայական, լեզվաբանական խմբերի մասին, քան հռոմեական քաղաքական բաժանումների կամ նահանգների: Այս դարձվածքը հնարավոր է վերաբերում էր այս էթնիկ խմբերի ոչ պաշտոնական սահմանին:

■ **«արգելվելով»** Սա ԱՌՐԻՍՏ ԿՐՎՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Սեպտուագինտայում և ՆԿ-ում այն հաճախ կիրառվող տերմին է: Վաղ եկեղեցու գործողությունների և որոշումների մեջ Սուրբ Հոգին սերտորեն ներգրավված էր (տես՝ 2:4; 8:29,39; 10:19; 11:12,28; 15:28; 16:6,7; 21:4; Հռոմ.1:13): Ժամանակակից եկեղեցին կորցրել է առաջին եկեղեցու դինամիզմը:

■ **«Ասիայում»** Սա վերաբերում է Փոքր Ասիա Հռոմեական Նահանգին, որը ժամանակակից Թուրքիայի արևմտյան եզրն էր:

16:6,7 «Սուրբ Հոգին... /անգլ.՝ Հիսուսի/ Հոգին» Սուրբ Հոգու անձ լինելու վերաբերյալ տես Հատուկ Թեմա 1:2: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԻՍՈՒՍԸ ԵՎ ՀՈԳԻՆ

Սուրբ Հոգու և Որդու գործերի մեջ գոյություն ունի ներդաշնակություն: Գ. Քեմփրլ Մորգանը ասում էր, որ Սուրբ Հոգու համար լավագույն անունն է «մյուս Հիսուսը» (սակայն նրանք առանձին, հավիտենական անձնավորություններ են): Այստեղ տրված են Որդու և Հոգու անունների և գործերի ընդհանուր նկարագրող համեմատությունները.

1. Հոգին կոչվում է «Հիսուսի Հոգի» կամ նմանատիպ արտահայտություններ (տես՝ Հռոմ.8:9; 2 Կորնթ.3:17; Գաղ.4:6; 1 Պետ.1:1):
2. Երկուսն էլ անվանվում են միևնույն տերմիններով՝

ա. «ճշմարտություն»

- 1) Հիսուսը (Հովհ.14:6)
- 2) Հոգին (Հովհ.14:17; 16:13)

բ. «բարեխոս»

- 1) Հիսուսը (1 Հովհ.2:1)
- 2) Հոգին (Հովհ.14:16,26; 15:26; 16:7)

գ. «Մուրբ»

- 1) Հիսուսը (Մարկ.1:24; Ղուկ.1:35; 4:34; Գործք 3:14; 4:27,30)
- 2) Հոգին (Ղուկ.1:35)

3. Երկուսն էլ բնակվում են հավատացյալների մեջ

ա. Հիսուսը (Մատթ.28:20; Հովհ.14:20,23; 15:4-5; Հռոմ.8:10; 2 Կորնթ.13:5; Գաղ.2:20; Եփես.3:17; Կող.1:27)

բ. Հոգին (Հովհ.14:16-17; Հռոմ.8:9,11; 1 Կորնթ.3:16; 6:19; 2 Տիմ.1:14)

գ. Հայրը (Հովհ.14:23; 2 Կորնթ.6:16)

16:7 «Մյուսիս» Սա էթնիկ մի շրջան էր Փոքր Ասիա հռոմեական նահանգի հյուսիս-արևմտյան մասում: Այն լեռնային տարածք էր՝ հռոմեական մի քանի կարևոր ճանապարհներով: Այդ շրջանի մեծ քաղաքներն էին Տրոյան, Ասոսը և Պերգամոնը:

■ **«Բյութանիս»** Այս շրջանը նույնպես Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում էր՝ Մյուսիսից դեպի հյուսիս-արևելք: Սա Հռոմեական Նահանգ չէր Ղուկասի օրոք, սակայն միավորված էր Պոնտոսի հետ որպես մեկ քաղաքական միավոր: Հետագայում Պետրոսը ավետարանում է այս շրջանը (տես՝ 1 Պետ.1:1): Ֆիլոն (Philo) հեղինակից տեղեկանում ենք, որ այս շրջանում կային հրեական շատ գաղութներ:

16:8 «Մյուսիսյով անցնելով» Այս համատեքստում պետք է, որ սա նշանակի «Մյուսիսյի միջով անցնելով» կամ «շրջանցելով»: Հիշե՛ք, որ համատեքստն է որոշում նշանակությունը և ոչ թե բառերն ու բառարանները:

16:9 «Պողոսին տեսիլք երևաց» Աստված Պողոսին մի քանի անգամ առաջնորդել է գերբնական միջոցներով.

1. պայծառ լույս և Հիսուսի ձայնը, 9:3-4
2. տեսիլք, 9:10
3. տեսիլք, 16:9,10
4. տեսիլք, 18:9
5. հափշտակություն, 22:17
6. Աստծո մի հրեշտակ, 27:23

■ **«մի մակեդոնացի մարդ»** Թե ինչպես Պողոսը գիտեր, որ այդ մարդը մակեդոնացի էր, հայտնի չէ: Հավանաբար նա իմացել էր նրա արտասանությունից՝ ակցենտից, հագուստից, զարդերից կամ պարզապես տեսիլքի մեջ ասվել էր: Որոշ մեկնաբաններ կարծում են, որ այդ մարդը եղել է Ղուկասը (տես հ. 10):

Աշխարհագրական առումով սա իրենից ներկայացնում էր մեծ որոշում, քանի որ Ավետարանը ուղղություն է վերցնում դեպի Եվրոպա:

■ **«Անցի՛ր Մակեդոնիա և օգնի՛ր մեզ»** Առաջինը ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է, կիրառված որպես ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, իսկ երկրորդը՝ ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ: Տեսիլքը շատ յուրահատուկ էր և համոզիչ:

16:10 «մեզ /անգլ.՝ մենք/» Գործքում սա առաջին «մենք» շարքից է, որ հանդիպում ենք: Սա կապված է Պողոսի թիմին Ղուկասի, Ծիդայի և Տիմոթեոսի միանալու հետ (տես՝ 16:10-17; 20:5-15; 21:1-18; 27:1-28:16): Որոշ մեկնաբաններ կարծում էին, որ հ.9-ում Պողոսի տեսած մարդը Ղուկասն էր՝ հեթանոս մի բժիշկ, Ավետարանի և Գործքի հեղինակը:

■ **«Մակեդոնիա»** Ժամանակակից Հունաստանը բաժանված էր Հռոմեական երկու Նահանգների:

1. Աքայիան հարավում (Աթենք, Կորնթոս, Սպարտա)
2. Մակեդոնիան հյուսիսում (Փիլիպպե, Թեսաղոնիկե, Բերիա)

■ «վատահ լինելով /անգլ.՝ եզրակացնելով/» Սա *sumbibazō* տերմինն է, որը բառացի նշանակում է միացնել կամ միավորել: Այստեղ այն ակնարկում է, որ ամեն ինչ որ կատարվեց եղավ Աստծո առաջնորդությամբ, որպեսզի գնան Մակեդոնիա:

1. Հոգին թույլ չտվեց նրանց, որ քարոզեն Ասիայում, տես հ. 9
2. Հոգին արգելում է Բյութանիա գնալը, տես հ. 7
3. և հ.9-ի տեսիլքը

■ «Տերը մեզ կանչում է /անգլ.՝ Աստված կանչել է/» Ըստ անգլերեն թարգմանության սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Հոգու առաջնորդությունը ապահովության համար չէր, այլ ավետարանչության: Աստծո կամքը միշտ էլ այս է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 16:11-15
¹¹Եվ Տրովադայից դուրս գալով՝ ուղիղ գնացինք Սամոթրակե և հաջորդ օրը՝ Նեապոլիս, ¹²և այնտեղից Փիլիպպե, որը Մակեդոնիայի այդ մասի գլխավոր քաղաքն է՝ գաղութը, և այդ քաղաքում մի քանի օր մնացինք: ¹³Եվ շաբաթ օրը դուրս եկանք քաղաքից՝ դեպի գետափը, որտեղ սովորաբար աղոթք էին անում, և նստած խոսում էինք հավաքված կանանց հետ: ¹⁴Եվ Լիդիա անունով աստվածավախ մի կին, որ Թիատիրա քաղաքից էր, ծիրանի զգեստներ վաճառող, լսում էր մեզ: Տերը բացեց նրա սիրտը, որ անսա Պողոսի ասածներին: ¹⁵Եվ երբ ինքը և իր տունը մկրտվեցին, աղաչեց՝ ասելով. «Եթե ինձ Տիրոջ հավատացյալն եք համարում, մտե՛ք իմ տունը և մնացե՛ք»: Եվ ստիպելով՝ տարավ մեզ:

16:11 «ուղիղ գնացինք» Սա Ղուկասի կողմից բազմիցս կիրառելի ծովային տերմիններից մեկն է (տես՝ գլուխ 27): Նրանք վերցնում են ուղիղ նավային երթուղի (ոչ ցամաքային) և նավարկում: Ղուկասը քաջատեղյակ էր ծովային տերմիններից կամ հարցազրույցներ էր անցկացրել նավաստիների հետ:

■ «Սամոթրակե» Սա մի փոքրիկ քարքարոտ կղզի է, որ դուրս է խոյանում Էգեյան Ծովի միջից մոտ 5,000 ոտնաչափ բարձրությամբ: Այն գտնվում է Տրոյայի և Փիլիպպեի միջև ընկած գրեթե կես ճանապարհին:

■ «Նեապոլիս» Սա բառացի նշանակում է «նոր քաղաք»: Միջերկրական այս տարածաշրջանում այս անունով մի քանի քաղաքներ կային: Տվյալ քաղաքը Փիլիպպեի նավահանգստային քաղաքն էր, որը մոտ 10 մղոն էր հեռու Փիլիպպեից: Այս նավահանգստի Իգնատիան Ուղին՝ հռոմեական գլխավոր ճանապարհը, ձգվում էր արևելքից մինչև արևմուտք ավարտվելով արևելյան երթուղով:

16:12 «Փիլիպպե» Հունարենում այն ՀՈԳՆԱԿԻ է, հավանաբար արտահայտելու համար մի քանի բնակավայրերի միացությունը մի ընդհանուր քաղաքի մեջ: Այն տեղակայված էր հռչակավոր հռոմեական մայրուղու վրա՝ Իգնատիան Ուղու: Այս քաղաքը սկզբնապես կոչվում էր Քրինիդներ /Kreinides/ (ջրհորներ): Փիլիպ II Մակեդոնը գրավում է այս քաղաքը իր ոսկու հանքերի համար և վերանվանում իր անունով:

■	
NASB, NRSV	«Մակեդոնիայի գլխավոր քաղաքն է»
NKJV	«Մակեդոնիայի այդ մասի ամենագլխավոր քաղաքը»
TEV	«Մակեդոնիա առաջին մարզի քաղաքը»
NJB	«այդ մարզի առաջին քաղաքը»

Այս արտահայտությունը շատ անորոշ է: «Մակեդոնիայի գլխավոր քաղաքը» Ամֆիպոլիսն էր: Ինչ նկատի ունենալով Ղուկասն այս ասելով, մեծ բանավեճերի պատճառ է հանդիսացել: Հնարավոր է այն եղել է իր կարևորության համար պատվո տիտղոս՝ անուն:

■ «հռոմեական գաղութ» Բ.Ա. 42 թ-ին Օկտավիան և Մարկոս Անտոնիոն պաշարում են այս քաղաքի մոտ գտնվող Կասիոս և Բրուտոս քաղաքները: Հանուն այս հաղթանակի հիշատակի Օկտավիան Փիլիպպեն դարձնում է հռոմեական գաղութ և իր զորքին այնտեղ է հանգստացնում: ՆԿ-ում նշված հռոմեական մյուս գաղութներն են՝ Պիսիդիան Անտիոքը, Լյուստրան, Տրոյան, Կորնթոսը և Պտողեմայիսը: Նրանք ունեին Իտալիայի քաղաքների բոլոր արտոնությունները.

1. ինքնակառավարում
2. հարկ չէին վճարում
3. օրենքով հասնող հատուկ օգնություններ

Պողոսը հաճախ էր քարոզում և եկեղեցիներ հաստատում հռոմեական այս գաղութներում:

16:13 «Ճաբաթ օրը» Ըստ երևույթին Փիլիպպեոսը ժողովարաններ չկային: Սա լինելով հռոմեական գաղութ, հավանաբար քաղաքում չունեի տասն տղամարդ հրեա, որը համարվում էր պահանջվող նվազագույն թվաքանակը ժողովարան սկսելու համար: Սակայն ակնհայտ է, որ կային մի քանի աստվածավախ մարդիկ կամ նորադարձներ (տես՝ հ. 14; 13:43; 17:4,17; 18:7): Շատ կանանց էր գրավում հուդայականության մեջ առկա բարոյականությունն ու էթիկան:

■ **«դեպի գետափը»** Կարծես թե այս վայրը եղել է կրոնական պաշտամունքի համար ընդունված հավաքատեղի (տես՝ Ջոզեֆուսի, *Հրեաների Հնույթուններ* 14.10.23 /Josephus' *Antiquities of the Jews* 14.10.23/):

■ **«նստած /անգլ.՝ նստեցինք/»** Սա ռաբբիների ուսուցանման հատուկ դիրքն էր, սակայն այս քաղաքը հռոմեական էր և հետևաբար ոչ մի կարևորություն չկար նստած լինելու դիրքի մեջ: Սա պարզապես Ղուկասի կողմից՝ որպես ակննատես, ներկայացված ևս մեկ մանրամասնություն է:

16:14 «Լիդիա անունով մի կին, որ Թիատիրա քաղաքից էր» Սակեդոնիա հռոմեական նահանգը շատ ավելի արտոնություններ ուներ կանանց համար, քան Միջերկրական աշխարհի առաջին դարի որևէ բնակատեղի: Լիդիան Փոքր Ասիայի մի քաղաքից էր (տես՝ Հայտն.2:17բ): Այն հայտնի էր իր մանուշակագույն ներկով՝ պատրաստվող մոյլուսկի խեցուց, որը մեծ համբավ ուներ հռոմեացիների շրջանում: Նրա քաղաքում ժողովարան կար: Իր անունը սերվել էր Լիդիա անվամբ հնագույն մի նահանգից, որտեղ էլ տեղակայված էր քաղաքը: Պողոսի հետագա նամակներում նրա մասին չի հիշատակվում, հետևաբար հնարավոր է, որ մահացել էր:

■ **«աստվածավախ /անգլ.՝ աստվածապաշտ/»** Սա վերաբերում է Աստծուց վախեցողներին, որոնց գրավել էր հուդայականությունը, սակայն դեռ լիարժեք նորադարձ չէին:

■ **«Տերը բացեց նրա սիրտը»** Աստվածաշունչը Աստծո և մարդու միջև փոխհարաբերությունը նկարագրում է որպես ուխտ: Աստված միշտ վերցնում է նախաձեռնությունն Իր վրա փոխհարաբերություն հաստատելու և ուխտի պայմանները թելադրելու հարցում (տես Հատուկ Թեմա 2:47): Փրկությունը ուխտի փոխհարաբերություն է: Ոչ ոք չի կարող փրկվել, մինչև Աստված չնախաձեռնի (տես՝ Հովհ.3:16; 4:42; Տիտոս 2:11; 1 Տիմ.2:4; 4:10; 2 Պետ.3:9; 1 Հովհ.2:1; 4:14), հետևաբար ստացվում է, որ Աստված՝ ինչ-որ չափով (բնության հայտնությամբ, տես՝ Սաղմ.19:1-6 կամ հատուկ հայտնությամբ, տես՝ Սաղմ.19:7-14) հակառակվում է բոլոր մարդկանց՝ իրենց մեղքերով հանդերձ (տես՝ Հռոմեացիների 1-3) և հենց Իր բնավորությամբ:

Առեղծված է մնում այն, թե ինչու ոմանք անսում են՝ արձագանքում, իսկ ոմանք՝ ոչ: Ես ինքս չեմ կարողանում ընդունել, որ պատասխանն այն է, որ Աստված ոմանց ընտրում է, իսկ ոմանց՝ ոչ: Բոլոր մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով (տես՝ Ծննդ.1:26-27) և Աստված խոստանում է Ծննդ.3:15-ում, որ նրանց բոլորին կփրկի:

Հնարավոր է այնքան էլ կարևոր չէ հասկանալ, թե ինչու, այլ հավատարմորեն ներկայացնել ավետարանը բոլորին և թույլ տալ, որ այն իր գործն անի լսողների սրտերում և մտքերում (տես՝ Մատթ.13:1-23): Պողոսը քարոզեց Լիդիային և նա ու իր ընտանիքը անսացին:

16:15 «ինքը և իր տունը մկրտվեցին» Ըստ երևույթին սա վերաբերում է նրա ընտանիքին, ծառաներին և աշխատողներին (տես՝ Կոռնելիոս, Գործք 10:2; 11:14; և Փիլիպպեցի բանտապետը՝ Գործք 16:33): Նաև նկատեք, որ այս կինը, ՆԿ-յան վերը նշված անձանց պես, անմիջապես մկրտվեց: Մկրտությունը այլընտրանք չէ: Տես Հատուկ Թեմա. Մկրտություն, 2:38:

Այս համարի բարձրացրած աստվածաբանական հարցը սրանում է, թե «Արդյո՞ք Գործքում արձանագրված ընտանեկան ապաշխարությունների՝ դարձի, այս օրինակներում երեխաները նույնպես ներգրավված էին»: Եթե այո, ապա մենք ունենք մանկան մկրտության աստվածաշնչյան նախադեպ հանձինս այդպիսի «ընտանեկան փրկության օրինակների»: Նրանք, ովքեր պնդում են, որ սա ապացույց է հանդիսանում, նաև մատնացույց են անում ՀԿ-յան այն արարողությանը, որով երեխաները իրենց մանկահասակ տարիքում ներառվում էին Իսրայել ազգի մեջ (այսինքն՝ ութ օրեկան հասակում երեխայի թվատությանը. տես՝ Ջեյմս Գ. Գ. Դան, էջ՝ 175-176 /James D. G. Dunn/):

Չնայած որ լիովին հնարավոր է, որ Քրիստոսի վրա ունեցած հավատքը անմիջապես ազդի ամբողջ ընտանիքի վրա (տես՝ 2 Օր.5:9 և 7:9) այս հասարակության միջավայրում, հարց է մնում, թե «Արդյո՞ք սա համընդհանուր՝ տիեզերական ճշմարտություն է, որ կարելի է գործադրել բոլոր մշակույթների համար»: Ես ուզում եմ հայտարարել, որ ՆԿ-ը հանդիսանում է անձնական կամավոր ընտրությունների վերաբերյալ հայտնություն՝ կապված մեղքի գզացողության արթնության հետ: Մարդը պետք է գիտակցի

փրկիչ ունենալու իր կարիքը: Սա մեզ տանում է մեկ այլ հարցի. «Արդյո՞ք մարդիկ ծնվում են աղանակյալ մեղքով, թե մեղավոր են դառնում, երբ որոշում են Աստծուն չհնազանդվել: Հուդայականությունը ընդունում է մանկական անմեղության մի շրջան՝ նախքան կիմանա Օրենքը և կայարտավորվի այն պահել. տղաների համար՝ 13 տարեկանը, իսկ աղջիկների համար՝ 12: Ռաբբիները այդքան չեն շեշտադրում Ծննդոց 3-ը, որքան որ եկեղեցին:

ՆԿ-ը մեծերի գիրք է: Այն հաստատում է Աստծո սերը երեխաների հանդեպ, սակայն նրա պատգամը ուղղված է մեծերին: Այնուամենայնիվ մենք ապրում են ժողովրդավարական, անձնակենտրոն հասարակության մեջ, իսկ Մեծավոր Արևելքի հասարակությունը համայնքային, տոհմական, ընտանեկան է:

■ **«Եթե»** Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ բառ է, որն ըստ հեղինակի տեսակետի կամ գրական նպատակների ենթադրում է, որ այս կինը ճշմարիտ հավատացյալ էր:

■ **«ինձ Տիրոջ հավատացյալն /հավատարիմն/ եր համարում»** Առաջին ԲԱՅԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Լիդիան համոզում էր, որ այժմ հավատացյալ է: Նա հրավիրում էր այս միսիոներներին օգտագործելու իր տունը և ունեցվածքը ավետարանի համար: Սա համապատասխանում է յոթանասուն աշակերտներին ուղղված Հիսուսի այն խոսքին, երբ նրանց ուղարկեց առաքելության (տես՝ Ղուկ.10:5-7):

■ **«մտե՛ք իմ տունը և մնացե՛ք»** Լիդիան համոզիչ մարդկանց տեսակից էր՝ գործարար կին: Այս առաջին ԲԱՅԸ ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է՝ կիրառված ՀՐԱՄԱՅՈՒՆԱԿԱՆ ձևով. երկրորդը՝ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՈՒՆԱԿԱՆ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 16:16-18
¹⁶Եվ եղավ այնպես, որ երբ մենք աղոթքի էինք գնում, մեզ հարցուկ հոգիով բռնված մի աղախին հանդիպեց, որ գուշակություն անելով՝ իր տերերին մեծ եկամուտ էր բերում: ¹⁷Սա Պողոսի և մեր ետևից ընկած աղաղակում էր և ասում. «Այս մարդիկ Բարձրյալ Աստծո ծառաներն են, որ մեզ ցույց են տալիս փրկության ճանապարհը»: ¹⁸Եվ շատ օրեր այսպես էր անում: Իսկ Պողոսը վշտացած դարձավ ու այն ոգուն ասաց. «Հիսուս Քրիստոսի անունով հրամայում եմ քեզ, դու՛րս եկ սրա միջից»: Եվ նույն ժամին նա դուրս եկավ:

16:16 «Եվ եղավ» Ըստ երևույթին սա տեղի ունեցավ մեկ ուրիշ օր, հավանաբար հաջորդ Շաբաթ օրը: Սա պատահական դեպք էր, բայց Աստված ամբողջովին ներգրավված էր դրա մեջ Իր նպատակների համար, քանի որ ամեն օր Նա ներկա է բոլոր դեպքերի, անձնական հանդիպումների մեջ:

■ **«հարցուկ հոգի»** Կա երկու տերմին, որ կիրառվում է այս նախադասության մեջ նկարագրելու այս աղախնուն: Առաջինը՝ «հարցուկ հոգի» (ՆԿ-ում նշված է միայն այստեղ) խոսքը ուներ ՀԿ-յան հիմք, սակայն Մեպտուագինտայում կիրառվում է տարբեր հունարեն տերմիններ (տես՝ Ղուկ.19:31; 20:6,27; 2 Օր.18:11; 1 Թագ.28:3,7; 4 Թագ.21:6; 2 Մնաց.10:13): Նա մի դիվահար էր, որը շողորթություններ, հմայության կամ բնական երևույթները մեկնաբանելով (այսինքն՝ թռչունների չուն, ամպերը, սուրճի բաժակը, կենդանու լյարդը, և այլն) կարող էր գուշակել և որոշ առումով ազդել ապագայի վրա:

Հունական այս միջավայրում կիրառվում է *python* տերմինը, որը ծագել է հունական դիցաբանությունից, որտեղ հսկայական վիշապը՝ օձը, սպանվում է Ապոլոյի կողմից: Այս առասպելը դարձել էր գուշակության ծես (այսինքն՝ Դելֆի), որտեղ մարդկային էակները կարող էին խորհրդակցել աստվածների հետ: Այս տեսարանը հայտնի էր իր տաճարի օձերով (այսինքն՝ պիտոններով) որոնք սողում էին մարդկանց վրայով, ովքեր պառկած էին տաճարում և թույլ էին տալիս, որ օձը սողալով անցներ իրենց վրայով, որպեսզի իմանային իրենց ապագան կամ ազդեր իրենց ապագայի վրա:

■ **«գուշակություն անելով»** Այս տերմինը (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, ԻԳԱԿԱՆ ՍԵՌ, ԵՉԱԿԻ) կիրառվում է ՆԿ-ում միայն այստեղ: Արմատ հանդիսացող տերմինը տարածված է Մեպտուագինտայում «հմայող, տեսանող, մարգարե» բառերի համար, սովորաբար բացասական համատեքստում: Դա նշանակում է մեկը, որ զառանցում է, հեևաբար արտահայտում է զգայական հափշտակություն՝ տրանս, որին ուղեկցում են գուշակություններ: Այստեղ այս խոսքը ներկայացնում է մեկին, որը կանխատեսում է ապագան շահույթի համար: Համատեքստից և բառապաշարից հայտնի է, որ այս աղջիկը պիղծ ոգով էր բնակեցված՝ բռնված:

16:17 «Պողոսի ... ետևից ընկած աղաղակում էր» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է և ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ: Նա շարունակում էր հետևել և բղավել (տես՝ հ.18):

■ «Այս մարդիկ Բարձրյալ Աստծո ծառաներն են» Հիսուսը չէր ընդունում դևերի վկայությունը (տես՝ Ղուկ.8:28; Մարկ.1:24; 3:11; Մատթ.8:29) և ո՛չ էլ Պողոսը, քանի որ այն կարող էր դիվական աջակցության հետևանքների հասցնել:

«Բարձրյալ Աստված» տերմինը (տես՝ Մարկ.5:7; Ղուկ.8:28) գործածվում է ՅԱՀՎԵԻ համար (այսինքն՝ *El, Elyon*) Ծննդ. 14:18-19; 2 Թագ.22:14-ում (տես՝ Հատուկ Թեմա, 1:6), սակայն կիրառվում էր նաև Չևսի հետ կապ ունեցող այս մշակույթում: Այս հոգին Աստծուն փառավորելու համար չէր վկայություն տալիս, այլ որ Ավետարանը խառնի դիվականի հետ:

■ «որ մեզ /ձեզ/ ցույց են տալիս փրկության ճանապարհ» «Ճանապարհ» բառի հետ ՀՈՒԴ չկա (տես՝ NRSV): Հավանաբար նա ասում էր, որ դա Բարձրյալ Աստծո մոտ տանող ճանապարհներից մեկն էր: Այս դևը չէր փորձում օգնել Պողոսի ծառայությանը: Այս հայտարարության նպատակն այս էր՝

1. Պողոսին հնայության հետ նույնացնել
2. ներկայացնել մի այլընտրանքային ճանապարհ, և ոչ թե փրկության փրկության ճանապարհը (այսինքն՝ Քրիստոսի վրա ուեցած հավատքը):

NET Աստվածաշունչը (էջ՝ 2022 #16) ունի բավականին լավ քննարկումներ քերականական այն հարցերի շուրջ, որոնք պարունակում են «ճանապարհը» ի հակադրություն «մի ճանապարհ» թարգմանություններում: Այն նախընտրում է «ճանապարհը»:

Էական խնդիրը նրանում էր, թե առաջին դարի Փիլիպպեի լասարանը ինչ կարող էր հասկանալ: Իրենց մշակութային միջավայրում «Բարձրյալ Աստվածը» վերաբերում էր *Չևսին*, ուստի ՈՐՈՇԻՉ ՀՈՒԴի բացակայության առկայությունը «ճանապարհ» բառի հետ էզգեգետիկ խնդիր չէ:

16:18 «Պողոսը /խիստ/ վշտացած» Այս իրադրության մեջ Պողոսը գործեց ոչ թե սիրով, այլ բարկությամբ: Պողոսը նույնպես մարդ էր: Այս նույն խիստ ԲԱՅԸ կարելի է գտնել Սեպտուագինտայում՝ Ժող.10:9-ում, որտեղ քրտնաջան աշխատանքի իմաստն ունի: ՆԿ-ում այն գործածվել է միայն այստեղ և 4:2-ում: Այն նկարագրում է լիովին ուժասպառ եղած մարդու:

■ «**ոգուն**» Նկատեք, որ Պողոսը չի դիմում այդ աղախուն, այլ նրա մեջ բնակվող և նրան վերահսկող դևին: Պողոսի դև քշելու այս գործողությունը ձևակերպված էր ՆԿ-ի մյուս ազատագրումների պես (այսինքն՝ Հիսուսի անունով): Տես Հատուկ Թեմա. Դիվականը, Դևեր քշելը, 5:16:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 16:19-24

¹⁹Եվ երբ տերերը տեսան, որ կտրվեց իրենց շահի հույսը, Պողոսին ու Շիդային բռնեցին և քաշելով տարան հրապարակ՝ իշխանավորների առաջ: ²⁰Եվ նրանց տարան գորագլուխների մոտ և ասացին. «Այս մարդիկ, հրեաներ լինելով, խռովություն են առաջացնում մեր քաղաքում, ²¹և այնպիսի սովորություններ քարոզում, որ մեզ՝ որպես հռոմեացիների, օրինավոր չէ ընդունել, ո՛չ էլ կատարել: ²²Եվ ամբոխը միասնաբար նրանց դեմ ելավ, և գորապետները նրանց զգեստները պատռեցին և հրամայեցին նրանց ձեռնել: ²³Եվ նրանց շատ վերքեր հասցնելուց հետո՝ բանտ նետեցին՝ բանտապետին պատվիրելով, որ նրանց մեծ զգուշությամբ հսկի: ²⁴Նա էլ այդ պատվերն ստանալով, նրանց ներսի բանտը զցեց և նրանց ոտները ամրացրեց կոճղի մեջ:

16:19 «տեսան, որ կտրվեց իրենց շահի հույսը» Այս «տերերի» ընդհանրապես չէր անհանգստացնում, որ այդ մարդը չարի կապանքներից ազատվեց: Նրանց անհանգստացնում էր այն, որ դրամական կորուստ էին ունեցել (տես՝ հ. 16), Ղուկ.8:26-39-ի մարդկանց պես:

■ «**Պողոսին ու Շիդային բռնեցին**» Ինչու Ղուկասին և Տիմոթեոսին էլ չբռնեցին, հայտնի չէ:

16:20 «գորագլուխներ» Սա *praetors* տերմինն է: Նրանց պաշտոնապես կոչում էին *duumvirs*, սակայն Ցիցերիոնից (Մարկոս Տուլիոս Ցիցերոն) իմանում ենք, որ շատերը սիրում էին կոչվել *Praetors* (Պրիտորիաներ): Ղուկասը բավականին ճշգրիտ է հռոմեական այս կառավարիչների տիտղոսների գործածման մեջ: Դրա պատմական լինելու մի քանի ապացույցներից մեկն էլ սա է:

16:20, 21 «հրեաներ լինելով... որպես հռոմեացիներ» Սա ցույց է տալիս նրանց ռասայական հպարտությունը և խտրականությունը: Փիլիպպեում Պողոսի եղած ժամանակը հնարավոր է մոտ էր Կլավդիոսի Հռոմից հրեաներին վտարելու հրամանագիրը արձակելու ժամանակին՝ մ.թ.49-50 (իրականում նա արգելեց հրեական պաշտամունքի բոլոր արարողությունները): Հռոմեական հակասեմիտիզմը կարելի է տեսնել Ցիցերոնի *Pro Fiasco* 28 և *Javenal* 14.96-106 գրքերում:

■ «այնպիսի սովորություններ քարոզում, որ մեզ... օրինավոր չէ ընդունել» Նկատեք, որ այս մեղադրանքը ընդհանրապես ոչ մի առնչություն չունի այդ աղախնու դիվահարությունից ազատագրվելու հետ: Ակնհայտ է, որ այն վերաբերում է նրանց Հիսուս Քրիստոսի Ավետարանը քարոզելուն: Հուդայականությունը Հռոմեական Կայսրության մեջ օրինավոր կրոն էր ընդունված, բայց երբ հայտնի դարձավ, որ Քրիստոնեությանը վիճակված էր դիտարկվելու որպես դրանից անջատ՝ առանձին կրոն, ուստի և համարվեց որպես անօրինական: Հրեաների համար անօրինական էր փորձել հռոմեացիներին իր հավատքին դարձի բերել, և դա վերաբերում էր նաև Պողոսին:

16:22 «նրանց զգեստները պատռեցին և հրամայեցին նրանց ծեծել» Բառացի այս նախադասությունը ակնարկում է, որ երկու գորագույնները՝ *Praetors*, ամբոխի աղաղակին ենթարկվելով, պատռեցին Պողոսի և Ծիղայի հագուստները (ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, ՀՈԳՆԱԿԻ): Սա պետք է որ իսկապես անսովոր լիներ նրանց համար, ինչով իրավական ակտի այդքան ակտիվ մասնակիցներ:

1. նրանք պատռեցին հագուստները (ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ)
2. նրանք հրամայեցին ծեծել (այսինքն՝ ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ, որին հաջորդում է ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԱՆՈՐՈՇ)

■ «հրամայեցին ծեծել /անգլ.՝ ճիպոտով/» Այսպիսի պատիժը (այսինքն՝ *verberatio*, որը գործադրվում էր քաղաքային դատարանի հրամանով) այդքան դաժան՝ ծանր չէր, որքան հռոմեական մտրակումը: Այս հարվածների համար ինչ-որ թիվ՝ հաշիվ գոյություն չունի: Պողոսը երեք անգամ այսպիսի հարվածների էր ենթարկվել (տես՝ 2 Կորնթ. 11:25): Սա միակ արձանագրված դեպքն է (տես՝ 1 Թեսաղ. 2:2):

16:24 «ներսի բանտը» Սա նշանակում է առավելագույն անվտանգություն՝ ապահովություն: Այստեղ առկա էր վախի գործոնը (տես՝ հ. 29): Պողոսի դե քելը գրավել էր նրանց ուշադրությունը:

■ «ոտները կոճղի մեջ» Այդ օրերի շատ բանտեր պատերին ամրացված շղթաներ ունեին, որից շղթայվում էր բանտարկյալը: Հետևաբար դռները միայն փակվում էին և ոչ թե կողպվում: Այս կոճղերը ոտքերը լայն բացված տարածում էին և ստեղծում մեծ անհարմարավետություն, ինչպես նաև ավելացնում և ապահովությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 16:25-34

²⁵Եվ կեսգիշերին, Պողոսն ու Ծիղան աղոթում և փառաբանություն էին երգում Աստծուն, իսկ բանտարկյալները նրանց ականջ էին դնում: ²⁶Եվ հանկարծ այնպիսի մի շարժում եղավ, որ բանտի հիմքերն անգամ ցնցվեցին: Եվ անմիջապես բոլոր դռները բացվեցին, և բոլորի կապանքներն արձակվեցին: ²⁷Երբ բանտապետը զարթնելով տեսավ բանտի դռները բացված, քաշեց սուրը և ուզում էր ինքն իրեն սպանել, կարծելով, թե բանտարկվածները փախել են: ²⁸Բայց Պողոսը բարձր ձայնով գոչեց և ասաց. «Դու քո անձին վնաս մի՛ հասցրու, քանի որ մենք բոլորս այստեղ ենք»: ²⁹Այա ճրագ ուզեց և ներս վազեց. և դողալով՝ Պողոսի ու Ծիղայի առջև ընկավ: ³⁰Եվ նրանց դուրս հանեց ու ասաց. «Տերե՛ր, ի՞նչ պետք է անեմ, որ փրկվեմ»: ³¹Եվ նրանք ասացին. «Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվեք՝ դու և քո տունը»: ³²Եվ Տիրոջ Խոսքը քարոզեցին նրան և բոլոր նրանց, որ նրա տանն էին: ³³Եվ նա գիշերվա նույն ժամին նրանց վերցրեց, վերքերը լվաց. և անմիջապես մկրտվեցին թե՛ ինքը, և թե՛ յուրայինները: ³⁴Եվ երբ նրանց իր տուն բերեց, նրանց առաջ սեղան բացեց և ուրախացավ, որ իր ամբողջ ընտանիքով հավատում է Աստծուն:

16:25 «կեսգիշերին» Հավանաբար նրանք չէին կարողանում քնել մտրակվելու և կոճղերի ցավից:

■ «աղոթում և փառաբանություն էին երգում» Հնարավոր է, որ այս աղոթքների և երգերի հոգևոր՝ աստվածաբանական բովանդակությունը պատճառ հանդիսացավ, որ բանտարկյալները վստահեն Քրիստոսին (այսինքն՝ «բանտարկյալները լսում էին նրանց»), քանի որ նրանցից ոչ ոք չփախավ, երբ երկրաշարժը բացեց բանտի դռները (տես՝ հհ. 26,28, «մենք բոլորս այստեղ ենք»):

■ «բանտարկյալները ականջ էին դնում» Սա ԱՆԿԱՏԱՐ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը ենթադրում է, որ նրանք անընդհատ լսում էին Պողոսին և Ծիղային: ԲԱՅԸ՝ *epakroaomai* հազվադեպ բառ է ՆԿ-ում և Սեպտուագինտայում: Դրա կիրառությունը 1 Թագ. 15:22-ում արտահայտում է ուրախությամբ ուշադիր լսելու իմաստը: Այս հուսահատ վիճակում գտնվող բանտարկյալները մեծ սիրով՝ կարոտով լսեցին և պատասխանեցին Աստծո սիրո, հոգատարության և ընդունելության պատգամին:

16:26 «երկրաշարժ» Սա բնական երևույթ էր, սակայն գերբնական նպատակով, ժամադրությամբ և արդյունքով (տես՝ Մատթ.27:51,54; 28:2): Պետրոսին Աստված բանտից ազատեց հրեշտակի միջոցով (տես՝ 4:31), սակայն այստեղ մի դեպք էր որոշվել, որի միջոցով Պողոսին առիթ ընձեռվեց ավետարանը քարոզելու թե՛ բանտարկյալներին և թե՛ բանտապահներին:

16:27 «սուրբ» Սա փոքր, երկսայրի սուր էր, որը կրում էին գոտու մեջ և ուներ լեզվի տեսք: Սա հիմնական պատժի գործիքն էր հռոմեական քաղաքացիների համար: Եթե բանտապահը կորցնում էր բանտարկյալների, նա էր կրում նրանց պատիժը (տես՝ 12:19):

16:28 Պողոսի և Շիղայի հավատքը և նրանց աղոթքների և երգերի բովանդակությունը հզոր ազդեցություն թողեցին մյուս բանտարկյալների վրա (կարծում եմ նրանք նույնպես փրկվեցին):

16:29 «ճրագ /անգլ.՝ ճրագներ/ ուզեց» Ուշադրություն դարձրեք ՀՈԳՆԱԿԻ թվին: Կային նաև այլ բանտարկյալներ:

16:30 «Տերեր, ի՞նչ պետք է անեն, որ փրկվեն» Սա արտացոլում է մարդկության (1) վախը գերբնականից և (2) Աստծո հետ խաղաղություն փնտրելը: Նա ուզում էր այն խաղաղությունն ու ուրախությունը, որ ցուցաբերել էին Պողոսն ու Շիղան, նույնիսկ այս անարդար և ցավալի իրավիճակներում: Նկատեք, որ այս մարդը շատերի պես գիտեր, որ մարդուց ինչ-որ պատասխան էր սպասվում այս ամենին (տես՝ Ղուկ.3:10,12,14; Գործք 2:37; 22:10):

16:31 «Հավատա՛ Տեր Հիսուս Քրիստոսին» ԲԱՅՐ (ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) *pisteuō* տերմինն է և կարող է թարգմանվել «հավատալ», «հավատք» կամ «վստահություն»: Տես Հատուկ Թեմա 2:40; 3:16 և 6:5: Այն հիմնականում կամավոր վստահության արձագանք է՝ պատասխան (տես՝ 10:43): Նաև ուշադրություն դարձրեք, որ այն վստահություն, հավատք է անձի՝ Հիսուսի հանդեպ և ոչ թե որևէ վարդապետության կամ աստվածաբանական համակարգի: Այս մարդը հրեական ծագում չուներ (ինչպես Հովնանի զրքում Նինվեցիները): Մինչդեռ կատարյալ փրկության համար պահանջները շատ պարզ էին և ճիշտ նույնը: ՆԿ-ում սա ավետարանի ամենակարճ ամփոփումն է (տես՝ 10:43): Նրա սպաշխարությունը (տես՝ Մարկ.1:15; Գործք 3:16,19; 20:21) դրսևորվեց իր գործերով:

■ **«կփրկվեք՝ դու և քո տունը»** Հին աշխարհում տան գլուխը հանդիսացողի կրոնը՝ հավատքը հանդիսանում էր ամբողջ ընտանիքի անդամների կրոնը (տես՝ 10:2; 11:14; 16:15; 18:8): Թե ինչպես էր սա գործում անհատական մակարդակի վրա՝ անձնապես տվյալ մարդու կյանքում, հայտնի չէ, սակայն ակնհայտ է, որ դրա համար պահանջվում էր յուրաքանչյուրի կողմից որոշ չափով անձնական հավատքի դրսևորում: Պողոսը հետագայում քարոզեց ավետարանի ամբողջական պատգամը բանտապետին և նրա ընտանիքին (տես՝ հ. 32):

Այս դեպքում, ոչ միայն նրա տունը, այլ նաև նրա բանտը:

16:32 «Տիրոջ Խոսքը» Մի տարբերակ կա, որ պարունակում է այս արտահայտությունը.

1. «Տիրոջ Խոսքը» MSS P^{45,74}, ճ², A, C, D, E ձեռագրերում է: UBS⁴ գնահատում է այն »B» (գրեթե հաստատ):
2. «Աստծո Խոսքը» MSS ճ*, B ձեռագրերում է:

Համատեքստում խնդիրն այն է, թե ո՞ւմ է վերաբերում «Տեր» խոսքը:

1. Հիսուսին, հ. 1
2. ՅԱՀՎԵԻՆ (տես՝ հհ. 25,34; 13:44,48, սա ՀԿ-յան արտահայտություն է՝ Ծննդ.15:14; 1 Թագ.15:10; Ես.1:10; Հովնան 1:1):

16:33 «և անմիջապես մկրտվեցին թե՛ ինքը, և թե՛ յուրայինները» Սա ցույց է տալիս մկրտության կարևորությունը: Գործքը այդ մասին պարբերաբար նշում է: Տես Հատուկ Թեմա. Մկրտություն, 2:38: Հիսուսն Ինքը մկրտվեց (տես՝ Ղուկ.3:21) և պատվիրեց մկրտվել (տես՝ Մատթ.28:19) և դա շարունակվում է մնալ (տես՝ Գործք 2:38): Այն նաև համահունչ է Գործքում առկա մյուս օրինակների հետ, որտեղ մկրտությունը տեղի էր ունենում անմիջապես հավատքի դավանությունից հետո (տես՝ Գործք 10:47-48): Ինչ որ առումով այն հանդիսանում էր նրանց համար հանրության առջև տեսանելի և բանավոր կերպով Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքի դավանություն (այսինքն՝ Հռոմ.10:9-13):

16:34 «և ուրախացավ, որ իր ամբողջ ընտանիքով հավատում է Աստծուն» Երկու ԲԱՅԵՐՆ էլ ԵԶԱԿԻ դեմքով են, որոնք վերաբերում են բանտապետին: Սակայն, ՄԱԿԲԱՅՈՎ այս արտահայտությունը ակնարկում է այս մարդու մեծ ընտանիքի և ծառաների առկայությունը:

ԲԱՅԸ՝ «հավատում է» ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է, որը արտահայտում է որոշված՝ վճռված իրավիճակ: Ուշադրություն դարձրեք հ. 31-ից ԺԱՄԱՆԱԿԻ փոփոխությանը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 16:35-40
³⁵Եվ երբ լուսացավ, զորապետները պատվիրակներ ուղարկեցին և ասացին. «Արձակի՛ր այդ մարդկանց»: **³⁶Եվ բանտապետը Պողոսին պատմեց այս խոսքերը, թե՛ «Չորապետները լուր ուղարկեցին, որ արձակեմ ձեզ: Ուրեմն հիմա դո՛ւրս եկեք, գնացե՛ք խաղաղությամբ»:** **³⁷Բայց Պողոսը նրանց ասաց. «Մեզ հռոմեացի մարդկանց, առանց դատապարտության հրապարակված ձեռնեցին և բանտ գցեցին և հիմա թաքո՛ւն պիտի արձակեն: Ո՛չ, թող գա՛ն, իրե՛նք մեզ արձակեն»:** **³⁸Եվ պատվիրակներն այս խոսքերը պատմեցին զորապետներին, և նրանք վախեցան, երբ լսեցին, որ հռոմեացի են:** **³⁹Եվ եկան, աղաչեցին նրանց: Եվ երբ արձակեցին, խնդրում էին, որ գնան քաղաքից:** **⁴⁰Եվ նրանք բանտից դուրս եկան, մտան Լիդիայի տունը և եղբայրներին տեսնելով՝ նրանց մխիթարեցին ու գնացին:**

16:35 «պատվիրակներ /անգլ.՝ ոստիկաններ/» Բառացի սա նշանակում է «գավազանակիրներ» (*hrabdouchosta lictor*): Սա վերաբերում է այն մարդկանց, որոնք ներգրավված էին պաշտոնապես կարգ ու կանոնը պահելու մեջ (տես՝ հ. 20): Իտալական «ֆաշիստական» կուսակցությունը իրենց անունը ստացել է այս տերմինից: Այսպիսի գավազանների մի կապը՝ խուրցը (Լատիներենից *fascis*) հանդիսանում էր այս քաղաքական իշխանության սիմվոլը:

16:37 «մեզ՝ հռոմեացի մարդկանց» Փիլիպպեն հռոմեական գաղութ էր շատ օրինական արտոնություններով, որոնք կարող էին վտանգվել Հռոմի կողմից, եթե տեղեկացվեր հռոմեացի այս քաղաքացիների հանդեպ ցուցաբերած անարդար վերաբերմունքի մասին: Հռոմեացի քաղաքացիներին ձեռնելը համարվում էր գաղութային իրենց իրավական կարգավիճակի հանդեպ լուրջ բռնություն՝ խախտում (տես՝ հ. 39; տես՝ Լիվի «*Պատմություն*» 10.9.4 /Livy, “*History*” / կամ Ցիցերոն /Cicero/, “*Pro Rabirio*” 4.12-13):

16:39 Պողոսի բողոքարկման նպատակը հավանաբար Փիլիպպեում նորաստեղծ եկեղեցուն պաշտպանելն էր և նրանց համար որոշակի ընդունված կարգավիճակ ձեռք բերելը: Առաջնորդները՝ իրենց գործողություններով, հասկացնում են, որ ավետարանի քարոզչությունը ապօրինի չէ: Փիլիպպեում հետագա ավետարանչական գործի համար դուռը բացված էր:

16:40 «ու գնացին /մեկնեցին/» Ըստ երևույթին Ղուկասը մնաց այնտեղ: Մենք կրկին նրան հանդիպում ենք 20:5-6-ում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Սուրբ Հոգին կոչվում Հիսուսի Հոգին:
2. Ինչո՞ւ Աստված թույլ տվեց, որ միսիոներները հանդիպեն այդքան հակառակության և փորձությունների:
3. Ինչո՞ւ Պողոսը չընդունեց աղախնու վկայությունը:
4. Թվարկե՛ք Փիլիպպեում փրկված մարդկանց:
5. Ինչո՞ւ միայն Պողոսն ու Ծիդան բանտարկվեցին:
6. Ինչո՞ւ մյուս բանտարկյալները չփախան:
7. Թվարկե՛ք այս գլխում առկա փրկության տարրերը: Արդյո՞ք դրանք տարբերվում են Գործքի մյուս գլուխներում առկա փրկության տարրերից:
8. Այս բանտապետը ուներ հուդայական, թե՞ Քրիստոնեական ծագում:
9. Ի՞նչ է նշանակում «նրա տունը փրկվեց»:

10. Ինչո՞ւ Պողոսը ստիպեց, որ քաղաքի պաշտոնյաները անձամբ ներում հայցեն:

ԳՈՐԾՔ 17

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Աղմուկ Թեսաղոնիկեում	Քրիստոսին քարոզելը Թեսաղոնիկեում	Թեսաղոնիկեից դեպի Աթենք	Թեսաղոնիկեում	Թեսաղոնիկե. Դժվարություններ հրեաների հետ
17:1-9	17:1-4 Հարձակում Յասոնի Տան վրա 17:5-9	17:1-9	17:1-4 17:5-9	17:1-4 17:5-9
Առաքյալները Բերիայում	Ծառայություն Բերիայում		Բերիայում	Նոր դժվարություններ Բերիայում
17:10-15	17:10-15	17:10-15	17:10-15	17:10-12 17:13-15
Պողոսը Աթենքում	Փիլիսոփաները Աթենքում	Պողոսը Աթենքում	Աթենքում	Պողոսը Աթենքում
17:16-21	17:16-21 Պատգամ Արիստագոսում	17:16-21	17:16-21	17:16-18 17:19-21
17:22-28ա	17:22-34	17:22-31	17:22-31	17:22ա Պողոսի խոսքը Արիստագոսի ատյանի առջև 17:22բ-23 17:24-28
17:28բ-31				17:29 17:30-31
17:32-34		17:32-34	17:32-34	17:32-34

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԸ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)

ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱԿՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աթենքի մտավորական հույներին ուղղված Պողոսի պատգամի ուրվագիծը (17:15-34) համընկնում է Գործք 14:15-18-ի հետ:

Ա. Կա մեկ Աստված՝ երկնքի (հոգի) և երկրի (նյութականի) Արարիչը

1. որին նրանք չեն ճանաչում
2. որը չի բնակվում մարդու ձեռքով շինված տաճարներում կամ կուռքերի մեջ
3. որը մարդկանցից ոչ մի բանի կարիք չունի
4. որը իրական կյանքի աղբյուրն է

Բ. Նա վերահսկում է մարդկության ամբողջ պատմությունը

1. ստեղծել է ազգերը մի մարդուց
2. ազգերի սահմաններն է որոշել

Գ. Նա մարդու սրտում դրել է Իրեն ճանաչելու ցանկությունը և Նրան դժվար չէ գտնելը

Դ. Մեղքը մեզ բաժանել է Նրանից

1. Նա անտեսել է մեղքերը տգիտության ժամանակներում
2. մենք պետք է ապաշխարենք

Ե. Նա դատելու է Իր ստեղծագործությանը

1. դատաստանի համար որոշված օր կա
2. դատաստանը լինելու է Մեսիայի կողմից
3. Մեսիան հարություն է առել մեռելներից՝ հաստատելու Իր անձը և գործը

Թեսաղոնիկե քաղաքը

Ա. Թեսաղոնիկե քաղաքի համառոտ պատմությունը՝

1. Թեսաղոնիկեն տեղակայված է Տերմինիկ Ծոցի (Thermaic Gulf) վերին հատվածում: Թեսաղոնիկեն ծովափնյա քաղաք էր Վիա Իգնատիա (ազգերի ճանապարհ) կարևորագույն հռոմեական մայրուղու վրա՝ Հռոմից դեպի արևելք ձգվող: Լինելով նավահանգիստ, այն նաև շատ մոտ էր հարուստ, ջրառատ, առափնյա դաշտավայրերին: Այս երեք առավելությունները դարձրել էին Թեսաղոնիկեն Մակեդոնիայի ամենամեծ, ամենակարևոր առևտրային և քաղաքական կենտրոնը:
2. Թեսաղոնիկեն նախկինում կոչվում էր Թերմա, որը ծագել էր այդ տարածքում գտնվող տաք ջրի աղբյուրներից: Հին պատմաբաններից մեկը՝ Պլինի Երեցը, Թեսաղոնիկեն և Թերման դիտարկում է որպես երկուսն էլ միաժամանակ գոյություն ունեցող քաղաքներ: Եթե դա ճիշտ է, ապա Թեսաղոնիկեն պարզապես շրջապատում էր Թերմային և կցված էր դրան (Լիոն Մորիս, *Թեսաղոնիկեցիներին ուղղված Առաջին և Երկրորդ Թղթերը*, Գրանդ Ռեվիդու. Վ. Բ. Երդմենգ Հրատարակչություն, 1991, էջ՝ 11 / (Leon Morris, *The First and Second Epistles to the Thessalonians*, Grand Rapids: Wm. B. Eerdmans Publishing Company, 1991, p. 11/): Մինչդեռ շատ պատմաբաններ հավատում են, որ Կասանդրը՝ Ալեքսանդր Մեծի գեներալներից մեկը, վերանվանել է Թերման Ք.Ա. 315 թ-ին ի պատիվ Փիլիպ Մակեդոնացու դստեր և Ալեքսանդրի կես քույր և իր կինը հանդիսացող Թեսաղոնիկեի (Strabo VII Fragment 21): Քրիստոնեության տարածման առաջին դարերի ընթացքում Թեսաղոնիկեն այնպես եղավ, որ մականվանվեց «ուղղափառ քաղաք» իր Քրիստոնեական բնութագրի համար (Dean Farrar, *The Life and Work of St. Paul*, New Work: Cassel and Company, Limited, 1904, p. 364): Այսօր Թեսաղոնիկեն հայտնի է Սալոնիկե անվամբ և դեռևս Հունաստանի կարևոր քաղաքներից է:
3. Թեսաղոնիկեն կոսմոպոլիտ մայրաքաղաք էր՝ Կորնթոսի պես, բնակեցված այդ ժամանակի հայտնի աշխարհի բոլոր ժողովուրդներով:
 - ա. Այնտեղ ապրում էին հյուսիսից եկած Բարբարոս Գերմանացի ազգաբնակչություն, որոնք բերել էին իրենց հեթանոսական կրոնն ու մշակույթը:
 - բ. Այնտեղ ապրում էին հույներ՝ եկած Աքայիայի հարավից և Էգեյան Ծովի կղզիներից, իրենց հետ բերելով սրբագործում և փիլիսոփայություն:

- զ. Արևմուտքից նաև հռոմեացիներն էին բնակեցված այնտեղ: Նրանք հիմնականում թոշակի անցած զինվորականներ էին և իրենց հետ բերել էին կամքի ուժ, հարստություն և քաղաքական իշխանություն:
- դ. Ի վերջո արևելքից եկան մեծաքանակ հրեաներ և արդյունքում բնակչության մեկ երրորդ մասը կազմեցին նրանք: Նրանք իրենց հետ բերեցին բարոյական միաստվածության հավատքը և իրենց ազգային նախապաշարմունքները:
- 4. Թեսաղոնիկեն մոտ 200.000 բնակչությամբ իրական կոսմոպոլիտ՝ բազմամշակույթ մայրաքաղաք էր: Այն համարվում էր հանգստյան և առողջարանային կենտրոն, իր տաք աղբյուրների շնորհիվ: Այն առևտրային կենտրոն էր՝ իր նավահանգստի, բերրի դաշտավայրերի և Իգնատիան Ճանապարհի վրա լինելու շնորհիվ:
- 5. Որպես մայրաքաղաք և ամենամեծ քաղաք, Թեսաղոնիկեն նաև Մակեդոնիայի գլխավոր քաղաքական գրասենյակն էր: Լինելով հռոմեական նահանգային մայրաքաղաք և շատ հռոմի քաղաքացիների հայրենի տունը (հիմնականում թոշակառու զինվորականների), այն դարձավ ազատ քաղաք: Թեսաղոնիկեն հարկ չէր վճարում և ղեկավարվում էր Հռոմի օրենքներով, քանի որ թեսաղոնիկեցիների մեծ մասը հռոմեացիներ էին: Այսպիսով թեսաղոնիկեցի կառավարիչները կոչվում էին «քաղաքապետներ» («politarchs»): Այս տիտղոսը գրականության մեջ ոչ մի տեղ արձանագրված չէ, այլ պահպանվել է Թեսաղոնիկեի հաղթանակի կամարի վրա փորագրված, որը հայտնի է որպես Վարդարդի Դարպաս (Farrar, էջ՝ 371):

Բ. Դեպքերը, որոնք պատճառ հանդիսացան Պողոսի համար Թեսաղոնիկե գալու

1. Շատ իրադարձություններ Պողոսին առաջնորդեցին դեպի Թեսաղոնիկե, չնայած բոլոր այդ ֆիզիկական իրավիճակների ետևում կարելի է տեսնել Աստծո ուղղակի և որոշակի կանչը: Պողոսը սկզբնապես չէր ծրագրել մուտք գործել Եվրոպա աշխարհամասը: Նա ցանկանում էր իր այս երկրորդ ճամփորդության ժամանակ կրկին այցելել Փոքր Ասիայում գտնվող բոլոր այն եկեղեցիները, որոնք նա հաստատել էր իր առաջին ճամփորդության ընթացքում և ապա վերադառնալ դեպի արևելք: Մինչդեռ, երբ ճիշտ ժամանակը եկավ, որ պետք է դառնային դեպի հյուսիսարևելք, Աստված սկսեց փակել դռները: Այս ամենի կուլմինացիան եղավ Պողոսի Մակեդոնական կանչի տեսիլքը (տես՝ Գործք 16:6-10): Սրա արդյունքում երկու բան տեղի ունեցավ. առաջինը՝ Եվրոպա աշխարհամասը ավետարանվեց և երկրորդը՝ Մակեդոնիայում հանգամանքներից ելնելով Պողոսը սկսեց գրել իր Թոթերը (Թոմաս Քարթեր, *Պողոսի Կյանքը և Նամակները*, Նեշվիլ, Քոքբերի Հրատարակչություն, 1921, էջ՝ 112 /Thomas Carter, *Life and Letters of Paul*, Nashville: Cokesbury Press, 1921/):
2. Ֆիզիկական հանազամանքները, որոնք Պողոսին տարան Թեսաղոնիկե
 - ա. Պողոսը մեկնեց Փիլիպպե՝ առանց ժողովարանի փոքրիկ մի քաղաք: Նրա գործն այնտեղ խափանվեց մի «մարգարե» դիվահար աղախնու և քաղաքային ատյանի պատճառով: Պողոսին ծեծեցին և ստորացրեցին, սակայն այնտեղ եկեղեցի կազմավորվեց: Հակառակության և ֆիզիկական պատժամիջոցի պատճառով Պողոսը ստիպված եղավ հավանաբար իր ծրագրած ժամանակից շատ ավելի շուտ հեռանալ քաղաքից:
 - բ. Ո՛ր պետք է նա գնար այդտեղից: Նա անցավ Ամփիպոլիսի և Ապոլոնիայի միջով, որոնք նույնպես ժողովարաններ չունեին:
 - գ. Նա եկավ տարածաշրջանում գտնվող ամենամեծ քաղաքը՝ Թեսաղոնիկե, որը ժողովարան ուներ: Պողոսն ըստ իր սովորության առաջին հերթին գնաց հրեաների մոտ: Նա այդպես էր անում, քանի որ՝
 - (1) նրանք գիտեին Հին Կտակարանը
 - (2) ժողովարանը ընձեռում էր սովորեցնելու և քարոզելու հնարավորություն
 - (3) նրանք ընտրյալ ազգ լինելու և Աստծո ուխտի ժողովրդի կարգավիճակն ունեին (տես՝ Մատթ.10:6; 15:24; Հռոմ.1:16-17; 9-11):
 - (4) Հիսուսն առաջինը նրանց համար Իրեն գոհաբերեց, և ապա ամբողջ աշխարհի համար նույնպես. Պողոսը հետևում էր Զրիստոսի օրինակին:

Պողոսին Ընկերակցողները

Ա. Թեսաղոնիկեում Պողոսին ընկերակցում էին Շիդան և Տիմոթեոսը: Դուկասը Պողոսի հետ էր Փիլիպպեում և մնաց այնտեղ: Մենք սա հասկանում ենք «մենք» և «նրանք» հատվածներից, որ գտնվում են Գործք 16 և 17-ում: Դուկասը Փիլիպպեում խոսում է «մենք»-ով, սակայն Թեսաղոնիկեի ճամփորդության մասին խոսում է «նրանք»-ով:

Բ. Ծիղան կամ Սիդվանոսը Պողոսի կողմից ընտրվեց միանալու իրեն երկրորդ միախոնեբական ճամփորդության ժամանակ, այն բանից հետո, երբ Բառնաբասն ու Մարկոսը վերադարձան Կիպրոս:

1. Աստվածաշնչում նրա մասին առաջին անգամ նշվում է Գործք 15:22-ում, որտեղ նա կոչվում է Երուսաղեմի եկեղեցու եղբայրների մեջ որպես գլխավոր մարդ:
2. Նա նաև մարգարե էր (տես՝ Գործք 15:32):
3. Նա էլ Պողոսի պես Հռոմի քաղաքացի էր (տես՝ Գործք 16:37):
4. Նա և Հուդա Բարսաբան Երուսաղեմի եկեղեցու կողմից ուղարկվեցին Անտիոք՝ ստուգելու այնտեղ տիրող իրավիճակը (տես՝ Գործք 15:22,30-35):
5. Պողոսը մեծարում է նրան 2 Կորնթ.1:19-ում և իր մի քանի թղթերում նշում նրա մասին:
6. Հետագայում նա ճանաչվում է որպես Պետրոսի հետ 1 Պետրոսի թուղթը գրող (տես՝ 1 Պետ.5:12):
7. Թե՛ Պողոսը և թե՛ Պետրոսը նրան անվանում էին Սիդվանոս, մինչև Դուկասը՝ Ծիղա:

Գ. Տիմոթեոսը նույնպես Պողոսի ընկերակցողն ու գործակիցն էր

1. Պողոսը հանդիպեց նրան Լյուստրայում, որտեղ նա առաջին միախոնեբական ճամփորդության ժամանակ դարձի եկավ:
2. Տիմոթեոսը կիսով չափ հույն (հայրը) և կիսով չափ հրեա էր (մայրը): Պողոսը կամենում էր, որ նա հեթանոսներին ավետարանելու մեջ օգներ իրեն:
3. Պողոսը նրան թվատեց, որպեսզի կարողանա աշխատել հրեա ժողովրդի հետ:
4. Տիմոթեոսը նշվում է հետևյալ թղթերի ողջույնի խոսքերում՝ 2 Կորնթացիների, Կողոսացիների, 1 և 2 Թեսաղոնիկեցիների և Փիլիմոնի:
5. Պողոսը նրա մասին արտահայտվում է որպես «ծառայության մեջ իմ որդին» (տես՝ 1 Տիմ.1:2; 2 Տիմ.1:2; Տիտոս 1:4):
6. Տիմոթեոսի հետ առնչվող Պողոսի գրվածքները իր բոլոր թղթերում վկայակոչում են, որ նա ավելի երիտասարդ էր և ամաչկոտ: Այնուամենայնիվ Պողոսը մեծապես վատահում էր նրան (տես՝ Գործք 19:27; 1 Կորնթ.4:17; Փիլ.2:19):

Դ. Պողոսին ընկերակցողների այս բաժնում հարմար գտա միայն նշել այն մարդկանց, որոնք եկել էին Թեսաղոնիկե և ընկերակցել նրան իր հետագա առաքելության մեջ: Նրանք են Արիստարքոսը (Գործք 19:29; 20:4; 27:2) և Սեկուդոսը (Գործք 20:4): Նաև հնարավոր է Դեմասն էր Թեսաղոնիկեից (Փիլիմոն 24; 2 Տիմ.4:10):

Պողոսի Ծառայությունը Քաղաքում

Ա. Պողոսի ծառայությունը Թեսաղոնիկեում հետևեց իր սովորական գործելակերպին՝ առաջին հերթին գնալով հրեական ժողովարան և ապա դառնալով դեպի հեթանոսները: Պողոսը երեք Շաբաթ օր քարոզեց ժողովարանում: Նրա պատգամն էր՝ «Հիսուսն է Մեսիան»: Նա կիրառում էր Հին Կտակարանյան Խոսքերը ցույց տալու, որ Մեսիան պետք է լիներ չարչարվող (տես՝ Ծննդ.3:15; Եսայի 53) և ոչ թե քաղաքական ժամանակավոր Մեսիա: Պողոսը նաև շեշտադրում էր հարությունը և բոլորին առաջարկվող փրկությունը: Հիսուսը հստակ ներկայացվում էր որպես անցյալում խոստացված Մեսիան, որը կարող է բոլոր մարդկանց փրկել:

Բ. Այս պատգամի արձագանքն այն եղավ, որ որոշ հրեաներ, բարեպաշտ շատ հեթանոսներ և շատ հարգված կանայք ընդունեցին Հիսուսին որպես Տեր և Փրկիչ: Այս դարձի եկած խմբերի վերլուծությունը շատ կարևոր է, հասկանալու այս եկեղեցուն ուղղված Պողոսի հետագա նամակները:

Գ. Եկեղեցու անդամների մեծ մասը հեթանոսներ էին, ինչպես որ դա երևում է Պողոսի երկու թղթերում էլ ՀԿ-ից ակնարկների բացակայությունից: Հեթանոսները պատրաստակամորեն ընդունում էին Հիսուսին որպես իրենց Փրկիչն ու Տերը մի քանի պատճառով՝

1. Նրանց ավանդական կրոնները անգոր սնոտիապաշտություն էին: Թեսաղոնիկեն գտնվում էր Օլիմպոս լեռան ստորոտին և բոլորն էլ գիտեին, որ դրա բարձունքները դատարկ էին:
2. Ավետարանը ձրի էր բոլորի համար:
3. Քրիստոնեությունը չէր պարունակում բացարձակ հրեական ազգայնականության գաղափարը: Հրեաների կրոնը շատերին գրավել էր իր միաստվածությամբ և իր բարձր բարոյական արժեքներով, բայց այն նաև շատերին վանում էր իր զգվելի սովորությունով (ինչպես օրինակ թվատությունը), և իրեն բնորոշ ռասայական, ազգային խտրականությամբ:

Գ. Շատ «երևելի կանայք» ընդունում էին Քրիստոնեությունը, քանի որ նրանք կարող էին կատարել սեփական կրոնական ընտրություն: Կանայք Մակեդոնիայում և Փոքր Ասիայում ավելի ազատ էին, քան հունա-հռոմեական մնացյալ աշխարհում (Sir Wm. M. Ramsay, *St. Paul the Traveler and Roman Citizen*, New York: G. P. Putnam's Sons, 1896, p. 227): Մինչդեռ կանանց ավելի աղքատ դասակարգը՝ չնայած ազատ էին, բայց տակավին գտնվում էին սնտոխապաշտության և բազմաստվածության ազդեցության ներքո (Ramsay, p. 229):

Ե. Շատերը խնդիր են գտել Թեսաղոնիկեում Պողոսի երկար ժամանակ մնալու մեջ.

1. Գործք 17:2 խոսում է Պողոսի Թեսաղոնիկեում եղած ժամանակաընթացքում ժողովարանում երեք Շաբաթ օր Մուրբ Գրեթից ապացույցներ՝ փաստարկներ բերելու վերաբերյալ:
2. 1 Թեսաղ.2:7-11 ասում է, որ Պողոսը նաև իր առևտրային գործով էր զբաղվում: Դա վրանագործությունն էր կամ ինչպես ոմանք են ենթադրում՝ կաշեգործությունը:
3. Փիլ.4:16 հիմնավորում է նրա այնտեղ ավելի երկար բնակվելու փաստը կախված Փիլիպպեի եկեղեցուց առնվազն երկու անգամ դրամանական օժանդակություն ստանալուց՝ մինչ գտնվում էր Թեսաղոնիկեում: Այս երկու քաղաքների միջև ընկած հեռավորությունը մոտ հարյուր մղոն էր: Ոմանք ենթադրում են, որ Պողոսը մնացել է այնտեղ մոտ երկու կամ երեք ամիս և որ այդ երեք Շաբաթ օրը վերաբերում է միայն հրեաների ծառայությանը (Shepard, p. 165):
4. Գործք 17:4 1 Թեսաղ.1:9 և 2:4-ում նորադարձների փոփոխության արձանագրությունները հիմնավորում են այս տեսակետը, մատնանշելով այս արձանագրություններում կարևոր փոփոխությունը՝ հեթանոսների կուռքերին մերժելը: Գործքում հեթանոսները Հրեա նորադարձներն էին և արդեն կուռքերից դարձել էին: Համատեքստը ակնարկում է, որ բացի հրեա հեթանոսներին ծառայելուց Պողոսը հնարավոր է ունեցել է ավելի ընդարձակ ծառայություն հեթանոսների մեջ:
5. Թե երբ է այս մեծ ծառայությունը սկսվել, հայտնի չէ, քանի որ Պողոսը միշտ առաջին հերթին գնում էր հրեաների մոտ: Այն բանից հետո, երբ նրանք մերժեցին նրա պատգամը, նա դարձավ դեպի հեթանոսները: Երբ մեծաթիվ հեթանոսներ արձագանքեցին Ավետարանին, հրեաները սկսեցին նախանձել և խռովություն բարձրացնել քաղաքի բազմության մեջ:

2. Այս խռովության պատճառով Պողոսը լքեց Յասոնի տունը և Տիմոթեոսի ու Ծիղայի հետ պատուպարվեց: Չորագլուխները (Politarchs) ստիպեցին Յասոնին անվտանգության ուժերով սպառազինել քաղաքը՝ խաղաղությունը պահելու համար: Սա պատճառ հանդիսացավ, որ Պողոսը գիշերով հեռանա քաղաքից և մեկնի Բերիա: Այնուամենայնիվ շատ հակառակությունների դիմակայության ներքո եկեղեցին շարունակում էր վկայել Քրիստոսին:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 17:1-9

¹Արդ, Ամփիպոլսի ու Ապոլոնիայի միջով անցնելով՝ Թեսաղոնիկե եկան, որտեղ գտնվում էր հրեաների ժողովարանը: ²Եվ Պողոսն իր սովորության համաձայն մտավ նրանց մոտ և երեք շաբաթ օր նրանց հետ Գրեթից խոսեց: ³Մեկնաբանելով ապացուցում էր նրանց, թե պետք է Քրիստոսը չարչարվեր և մեռելներից հարություն առներ, և թե՛ «այս Հիսուսը, որին ես քարոզում եմ ձեզ՝ Քրիստոսն է»: ⁴Եվ նրանցից ոմանք հավատացին և Պողոսի ու Ծիղայի հետ միացան, ու նաև՝ աստվածավախ հույների մի բազմություն, ու երևելի կանանցից էլ հավատացողների թիվը քիչ չէր: ⁵Բայց հրեաները, որոնք չհավատացին, նախանձեցին և փողոցից մի քանի դատարկապորտ, անօրեն մարդ հավաքելով, մեծ խառնաշփոթություն բարձրացրին քաղաքում և Յասոնի տան վրա հարձակվելով՝ ուզում էին նրանց հրապարակ տանել: ⁶Եվ երբ նրանց չգտան, Յասոնին և մի քանի եղբայրների քաշելով տարան քաղաքապետների մոտ, աղաղակելով. «Մրանք, որ ամբողջ աշխարհն իրար խառնեցին, այստեղ էլ հասան, ⁷որոնց Յասոնն ընդունել է, և սրանք բոլոր կայսեր հրամաններին հակառակ են գործում՝ ասելով, թե մի ուրիշ թագավոր կա՝ Հիսուսը»: ⁸Եվ տազնապի մատնեցին ժողովրդին և քաղաքապետներին, որ լսում էին այս բաները: ⁹Բայց Յասոնից ու մյուսներից երաշխիք ստանալով՝ արձակեցին նրանց:

17:1 «Ամփիպոլսի ու Ապոլոնիայի միջով» Այս երկու քաղաքները տեղակայված էին Հռոմեական Մայրուղու՝ Իգնատիան Ճանապարհի վրա (այսինքն՝ Ազգերի Ճանապարհը), արևելքից մինչև արևմուտք ձգվող մոտավորապես 500 մղոն երկարությամբ կարևոր մեծ ճանապարհ, որը կապում էր

կայսրության արևելյան և արևմտյան մասերը և որը ձևավորում էր Թեսաղոնիկեի գլխավոր ճանապարհը:

■ «Թեսաղոնիկե» Տե՛ս այս գլխի ներածական մասը:

■ «որտեղ գտնվում էր հրեաների ժողովարանը» Սա Պողոսի սովորությունը և քարոզչակարգն էր (տես՝ հ.2; 3:26; 13:46; Հռոմ.1:16; 1:9,10; Գործք 9:20; 13:5,14; 14:1; 17:2,10,17; 18:4,19; 19:8), քանի որ հավանաբար նա ենթադրում էր, որ ավետարանը առաջին հերթին հրեաների համար էր (տես՝ Հռոմ.1:16) ըստ ՀԿ-ի մարգարեությունների: Նաև, շատ աստվածավախ մարդիկ նույնպես հաճախում էին ժողովարան և հարգանքով էին մոտենում Հին Կտակարանին:

17:2 «երեք շաբաթ օր» Սա նշանակում է, որ այս ժողովարանում նա խոսել է միայն երեք շաբաթ օր: Հավանաբար նա մնացել է քաղաքում ավելի երկար քան երեք շաբաթ (տես՝ Փիլ.4:16), բայց ոչ շատ երկար ժամանակ:

■ «նրանց հետ Գրքերից խոսեց /խորհել, տրամաբանել/» Պողոսը համեմատելով տեսնում էր Մեսիական մարգարեությունների համընկնումը Հիսուսի կյանքի, ուսմունքի, մահվան և հարության հետ: Նա այս օրինակը վերցրել էր Ստեփանոսից (Գործք 7) և իր ռաբբիական դաստիարակությունից:

17:3

NASB

«մեկնաբանելով և ապացուցելով»

NKJV

«մեկնաբանելով և ցույց տալով»

NRSV, NJB

«մեկնաբանելով և հաստատելով»

TEV

«մեկնաբանելով Սուրբ Գրքերը և դրանցով ապացուցելով»

Առաջին բառը *dianoigō* տերմինն է, որը կիրառվում է, երբ Հիսուսը բացում է Սուրբ Գրքերը Էմմաուսի ճանապարհի երկու աշակերտների համար (տես՝ Ղուկ.24:31): Այս նույն բառը կիրառվում է 16:14-ում, երբ Աստված բացում է Լիդիայի սիրտը, որպեսզի ավետարանը հասկանա:

Երկրորդ տերմինը *paratithēmi* հաճախ է կիրառվում Ղուկասի գրքերում՝ ինչ-որ մեկի առջև կերակուր դնելու համար, սակայն այստեղ այն ակնարկում է «ճշմարտությունը ինչ-որ մեկի առջև դնել» կամ «հանձնել» (տես՝ 14:23; 20:32): Ղուկասում երկու անգամ (տես՝ 12:48; 23:46) այս տերմինը կիրառվում է ինչ-որ բան մեկ ուրիշի վստահելու իմաստով: Պողոսը զգուշությամբ և մանրակրկիտ կերպով լսողներին էր հանձնում ավետարանը (այսինքն՝ ավանդում, *parathēkē*, 1 Տիմ.6:20; 2 Տիմ.1:12,14): Ոմանք արձագանքեցին (որոշ հրեաներ, աստվածավախներ և մի քանի երևելի կանայք):

■ «պետք է Քրիստոսը չարչարվեր» «Պետք» (*dei*) տերմինը ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որը անհրաժեշտություն է արտահայտում (տես՝ լիարժեք գրառումները, 1:16): Չարչարվող Մեսիան կանխասվել էր ՀԿ-ում (տես՝ Ծննդ.3:15; Մաղմ.22; Ես.52:13-53:12; Չաք.12:10), սակայն երբեք ռաբբիների կողմից հստակ չի դիտարկվել: Առաքելական քարոզիչների կողմից այն հաստատվում էր բռնի ուժով (տես՝ Ղուկ.24:46; Գործք 3:18; 26:23; 1 Պետ.1:10-12): Այս ճշմարտությունը հրեաների համար ամենամեծ գայթակղության քարն էր (տես՝ 1 Կորնթ.1:22-23): Տե՛ս գրառում 3:18:

■ «և մեռելներից հարություն առնել» Սա Գործքում Պետրոսի, Ստեփանոսի և Պողոսի բոլոր քարոզներում ընդհանուր հիմունք է (*Kerygma*-ի մի մաս, տես՝ Հատուկ Թեմա 2:14): Այն ավետարանի կենտրոնական պոնեն է հանդիսանում (տես՝ 1 Կորնթացիների 15):

■ «այս Հիսուսը, որին ես քարոզում եմ ձեզ՝ Քրիստոսն է» Հունարեն ձեռագրերում գոյություն ունեն շատ տարբերակներ այս նախադասության վերջնահատվածի շուրջ.

1. «Քրիստոսը՝ Հիսուսը» - MS B
2. «Քրիստոսը՝ Հիսուս» - որոշ Վուլգատտա և Կոպտիկ թարգմանություններում
3. «Քրիստոս Հիսուս» - MSS P⁷⁴, A, D
4. «Հիսուս Քրիստոս» - MS Կ
5. «Հիսուս Քրիստոսը» - MS E Bohairic Coptic տարբերակը
6. «Քրիստոսը» - Georcean տարբերակը

Ծատ գիտնականներ նախընտրում են #1 (Vaticanus) բառակապակցությամբ, քանի որ այն շատ անսովոր է (UBS⁴ գնահատում է »C»):

Ժողովարանի այս միջավայրում «Քրիստոսը» կարող էր նշանակել ՀԿ-ի Օծյալը՝ Մեսիան (տես՝ Հատուկ Թեմա 2:31): ՀԿ-ում կային օծության երեք պաշտոններ՝ թագավորներ, մարգարեներ, քահանաներ: Հիսուսը իրականացրեց բոլոր այս երեք ֆունկցիաները (տես՝ Եբր.1:1-3): Այս օծությունը

Աստծո ընտրության և ծառայության գործի համար սպառազինվելու խորհուրդն ուներ: Տե՛ս Հատուկ Թեմա. Օծությունը Աստվածաշնչում, 4:27:

Վաղ եկեղեցին նորից ու նորից համոզվում էր, որ Հիսուս Նազովրեցին խոստացված Մեսիան էր (տես՝ 2:31-32; 3:18; 5:42; 8:5; 9:22; 17:3; 18:5,28), հետևելով հենց Հիսուսի պարզ ու կրկնվող հիմնավորումներին:

17:4 «միացան» Հունարեն այս բաձՅԸ (ԱՈՐԻՍՏ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) ՆԿ-ում կարելի է միայն այստեղ գտնել: Տառացի այն նշանակում է «վիճակ զցելով որոշել»: Այս համատեքստում այն նշանակում է «հետևել» կամ «միանալ»: «Վիճակը» ՀԿ-յան կերպ էր Աստծո կամքն իմանալու համար: Կազմությունն է՝

1. ՆԱԽԳԻՐԸ (*pros*)
2. ԱՐՄԱՏԸ (*klēroō*)
3. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ վերաբերում է աստվածային գործողությանը

Աստված բացեց նրանց սրտերը, ինչպես որ դա արեց Լիդիայի հետ (տես՝ 16:24; նաև նկատեք նմանատիպ միտք 1 Պետ.5:3-ում):

■ **«աստվածավախ հույներ»** Այս մարդիկ հուդայականության հետևողներ էին, որոնք դեռևս չէին դարձել լիարժեք նորադարձներ, որն իրենից ենթադրում էր՝

1. Թվիատություն
2. ինքնամկրտություն
3. Երուսաղեմի Տանարում հնարավորության դեպքում զոհ մատուցել

■ **«թիվը»** Սա ևս մի օրինակ է Ղուկասի *litotes* (մտադրված նվազեցման, տես՝ 12:18; 15:2; 19:11,23,24; 20:12; 26:19,26; 27:20; 28:2) կիրառության՝ սովորաբար բացասման՝ ժխտման տեսքով: Այստեղ արտահայտությունը բառացի նշանակում է «ոչ քիչ», որը դրված է նախադասության վերջում շեշտադրության համար:

■ **«երևելի կանայք»** Մակեդոնիայում կանայք ավելի մեծ ազատություն ունեին (Լիդիան), քան Միջերկրական աշխարհի մյուս մասերում: Պիսիդիան Անտիոքում թողած օրինակը ինքնաբերաբար կրկնվում էր (տես՝ 13:43,45,50): Հունարեն ձեռագրերի արևմտյան ընտանիքը հ. 4-ում ավելացնում է մի արտահայտություն, պնդելով, որ այս կանայք առաջնորդ տղամարդկանց կանայք էին:

17:5 «հրեաները, նախանձեցին» Հրեաների անհավատությունը տխրեցնում է ինձ (տես՝ 14:2), սակայն նախանձը (տես՝ 5:17) ողբերգական է: Այս մարդկանց դրդապատճառը կրոնական նախանձախնդրությունը չէր, ինչպես Սողոսի մետ էր, այլ հենց նախանձը: Նորադարձների թիվն էր անհանգստացրել նրանց (տես՝ 13:45) և ոչ թե քարոզի բովանդակությունը:

Ղուկասը հաճախ «հրեաներ» տերմինը կիրառում է համառության բացասական իմաստով (տես՝ 12:3; 13:45; 14:2; 17:13), ինչպես և Պողոսը (տես՝ 1 Թեսաղ.2:15-16): Այն դառնում է ավետարանին հակառակվելու և դիմադրելու հոմանիշը:

■	
NASB	«շուկայից մի քանի անօրեն մարդկանց»
NKJV	«շուկայից մի քանի չար մարդկանց»
NRSV	«շուկայից մի քանի խուլիզանների»
TEV	«փողոցից մի քանի դատարկապորտ մարդ»
NJB	«շուկայից մի բանդա»

Այս տերմինը նկարագրում է մի մարդու, որը ծուլյ, անպիտան մեկն է և շուկաներում առանց աշխատելու թափառում է:

■ **«խառնաշփոթություն»** Այս բառը ՆԿ-ում միայն այստեղ կարելի է գտնել և շատ հազվադեպ բառ է հունական գրականության մեջ: Այն չկա Մեսպոտամիայում: «Խառնաշփոթություն» բառը համատեքստորեն ենթադրելի նշանակությունն է: Ղուկասը կիրթ մարդ էր, մեծ բառապաշարով (այսինքն՝ բժշկական, ծովագնացության, և այլն):

17:6 «Յասոնին քաշելով տարան» Ոմանք կարծում են, որ Հռոմ.16:21-ում նշված Յասոնը այս նույն մարդն էր, սակայն դա հստակ չէ:

■ **«և մի քանի եղբայրներ»** Այսպիսի կառուցվածքն ակնարկում է, որ Յասոնը դեռևս հավատացյալ չէր: Հաստատ, թե ինչպես էր Յասոնը ընդունել միսիոներական թիմին, հայտնի չէ: Հնարավոր է, որ՝

1. Պողոսն ու Շիդան նրա համար էին աշխատում
2. տեղ էին վարձել նրանից
3. ապրում էին նրա տանը

Հ. 7-ում ընդունել ԲԱՅԸ նշանակում է «ընդունել որպես հյուր» (տես՝ Ղուկ.10:38; 19:6; Հակ.2:25):

■ **«քաղաքապետներ»** Այս «politarch» (քաղաքական գործիչ) տերմինը նշանակում է քաղաքապետ: Սա հանդիսանում էր Մակեդոնիայում տեղական կառավարման առաջնորդների հատուկ անունը: Շատ հազվադեպ բառ է, որը ՆԿ-ում միայն այստեղ և հ.8-ում է գործածվում կամ էլ հունական գրականության մեջ, և դրա կիրառությունը ցույց է տալիս, որ Ղուկասը քաջածանոթ էր այդ տեղանքին, ինչպես նաև նպաստում է Գործքի պատմական լինելու փաստին (NASB Աստվածաշնչյան Սերտողություն, էջ՝ 1607, սակայն այս բառը հայտնաբերվել է Թեսաղոնիկեում Իգնատիան Ճանապարհի մի կամարի վրա փորագրված հունարեն ձեռագրում): Ղուկասը ճշգրիտ պատմաբան էր՝ մի այնպիսի դարաշրջանում, որն այդ ժամանակ հազվագյուտ էր: Նա ունի հավատքի կարգ ու կանոն, որը հավատացյալները ընդունում են որպես ներշնչանք:

■

NASB, NKJV, NRSV **«աշխարհը շուռ տվեցին»**
NJB **«աշխարհը գլխիվայր շրջեցին»**
TEV **«ամենուր անախորժություն ստեղծեցին»**

Սա ակնարկում է խռովություն (տես՝ 21:38; նաև նկատեք 16:20; 24:5): Սա շատ խիստ տերմին է: Ուշադրություն դարձրեք Գաղ.5:12-ում Պողոսի կողմից դրա կիրառությանը: 1 Թեսաղ.2:14-ից գիտենք, որ այս եկեղեցին մեծ հավածանքներ դիմակայեց:

Արդյո՞ք սա չափազանցություն է, թե նրանք տեղյակ էին հուդայականության այս նոր տեսակի տարածման մասին:

17:7 «Կայսեր հրամաններին» Ոմանք կարծում են սա վերաբերում է Կլավդիոսի (մ.թ. 41-54) այն հրամանագրին, որը օրինագրկեց հրեական ծեսերը Հռոմում: Այս հրամանագիրը պատճառ հանդիսացավ, որ Հռոմի հրեա բնակչությունը հեռանա: Սակայն, համատեքստը հստակ ներկայացնում է, որ այն վերաբերում է նրանց ավետարանի քարոզչությանը: Ցանկացած մեկի համար ապօրինի քայլ էր համարվում որևէ հռոմեացու ուրիշ հավատքի դարձի բերելը:

■ **«ասելով, թե մի ուրիշ թագավոր կա՝ Հիսուսը»** Հնարավոր է այս մեղադրանքը արդյունք էր՝
1. Թեսաղոնիկեում իր քարոզչության մեջ էսկատոլոգիայի վրա Պողոսի շատ ուժեղ շեշտադրության
2. այն տերմինների, որոնք Քրիստոնյաները գործածում էին Հիսուսի համար, իսկ հռոմեացիները՝ Կայսեր (թագավոր, տեր և փրկիչ):

17:8

NASB, TEV **«քաղաքապետները»**
NKJV **«քաղաքի ղեկավարները»**
NRSV **«քաղաքի պաշտոնյաները»**
NJB **«քաղաքի խորհրդականները»**

Սա *politarchs* հունարեն տերմինն է, որոնք Մակեդոնիայի քաղաքներում ամենամյա նշանակված մարդիկ էին: Նրանք հռոմեացիներ չէին, այլ տեղական կառավարիչներ (AB, հատոր՝ 5, էջ՝ 384-389):

17:9 «երաշխիք» Հավանաբար սա եղել է մեծ դրամական ապահովագրական պարտատոմս, որը հավաքվել էր նորադարձների միջոցով (տես՝ հհ. 4, 6, 10), համոզվելու, որ այլևս Պողոսը չի շարունակի քարոզել քաղաքում: Ոմանք սա կապում են 1 Թեսաղ.2:18-ի հետ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 17:10-15

¹⁰Իսկ եղբայրները Պողոսին և Շիդային գիշերով շտապ ճանապարհեցին դեպի Բերիա, որոնք այնտեղ հասնելով՝ գնացին հրեաների ժողովարանը: ¹¹Բայց սրանք ավելի ազնիվ էին, քան նրանք, որ Թեսաղոնիկեում էին, քանի որ Աստծո Խոսքն ամենայն հոգարությամբ ընդունեցին: Ամեն օր քննում էին Գրքերը, թե իրո՞ք սա այսպես է: ¹²Ուստի նրանցից շատերը հավատացին. նույնպես՝ թվով ոչ սակավ, պատվավոր հույն կանայք և տղամարդիկ: ¹³Բայց երբ

թեսաղոնիկեցի հրեաներն իմացան, թե Բերիայում էլ է Աստծո Խոսքը քարոզվել Պողոսի կողմից, այնտեղ էլ եկան և ժողովրդին գրգռեցին: ¹⁴Այն ժամանակ եղբայրները Պողոսին շտապ ուղարկեցին մինչև ծովը, իսկ Ճիդան ու Տիմոթեոսն այնտեղ մնացին: ¹⁵Եվ Պողոսին տանողները նրան մինչև Աթենք հասցրին և Ճիդայի և Տիմոթեոսի համար պատվեր ստանալով, որ շուտով իր մոտ գան, գնացին:

17:10 «Բերիա» Սա Պողոսի օրոք մի մեծ քաղաք էր՝ մոտ 60 մղոն դեպի արևմուտք, շատ մոտ Իզնատիան Սայրուդուն: Այն նաև հրեական մի այնպիսի համայնք ուներ, որը բաց էր Պողոսին լսելու հարցում և ՀԿ-ից մեջբերված տեքստերից ստուգում էր նրա աստվածաբանությունը:

■ **«գնացին հրեաների ժողովարանը»** Տեքստն ակնարկում է, որ իրենց ժամանելուց անմիջապես հետո՝ նույնիսկ ամբողջ գիշեր ճամփորդելուց հետո, նրանք անմիջապես գնացին ժողովարան: Հնարավոր է պատահաբար այդ օրը Շաբաթ էր կամ էլ հավանաբար գիտեին, որ իրենց հետևելու էին այն խառնակիչները: Ժամանակը մեծ դեր էր խաղում: Ժամանակակից արևմտյան հավատացյալները կորցրել են ավետարանչության հրատապության և առաջնայնության զգացողությունը:

17:11 «սրանք ավելի ազնիվ էին» Այս տերմինը գործածվում էր հարուստ, կիրթ, բարձր խավի մարդկանց համար (տես՝ LXX Հոբ 1:3; Ղուկ. 19:12): Այս գրական սահմանումը չի համապատասխանում Բերիայի հրեաներին, հետևաբար, այն այլաբանորեն ներկայացնում է մեկին, որն ավելի պատրաստակամ է լսելու նոր գաղափարներ և դրանք գնահատելու: Այս թափանցիկ վերաբերմունքը հնարավոր է բնորոշ էր քաղաքի առաջնորդ քաղաքացիներին, որոնք երկրպագում էին ժողովարանում (տես՝ հ. 12):

■ **«ամեն օր քննում էին Գրքերը, թե իրո՞ք սա այսպես է»** Սա է ճշմարտությունը որոշելու կերպը: Պողոսի քարոզի մեթոդը ՀԿ-ից մեջբերումներ կատարելով էր և հաստատելով, թե ինչպես էին այդ խոսքերը մատնացույց անում Հիսուսին:
«Իրո՞ք սա այսպես է» խոսքը պարունակում է ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ (այսինքն՝ *ei* ԸԳՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ, տես՝ 17:27; 20:16; 24:19; 27:12), որը ցույց է տալիս, թե ինչն է ամենաշատը վերացվել իրականությունից (քիչ հավանական): Նրանցից ոմանք անասցին, իսկ ոմանք՝ ոչ (ավետարանի առեղծվածը):

17:12 «նրանցից շատերը հավատացին» Ակնարկում է, որ ժողովարանի հրեաներից և աստվածավախ մարդկանցից շատերը անասցին: Տե՛ս Հատուկ Թեմա, 3:16 և 2:40:

■ **«պատվավոր»** Բաղադրյալ տերմին է՝ կազմված «բարի» և «տեսք» կամ «երևույթ»-ից: Կիրառվում է հարգված, հեղինակավոր և ազդեցիկ մարդկանց համար (13:50; Հովսեփ Արիմաթացին՝ Մարկ. 15:43):

17:13 Ցույց է տալիս Պողոսի հրեա հակառակորդների ծրագրած հակառակությունը: Նրանցից շատերը անկեղծ հրեաներ էին, որոնք գործում էին իրենց կրոնական շարժառիթներից դրդված (ինչպես Սողոմոն): Սակայն նրանց մեթոդները հայտնում էին իրենց հոգևոր վիճակը:

- 17:14 «մինչև ծովը»** Սա կարող է նշանակել, որ՝
1. Պողոսը ճամփորդում էր ավամերձ նավակով
 2. Պողոսը դեպի Աթենք ճամփորդում էր ավամերձ ճանապարհով

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 17:16-21
¹⁶Եվ մինչև Պողոսն Աթենքում նրանց էր սպասում, իր մեջ նրա հոգին խռովվում էր, քանի որ տեսնում էր քաղաքը կռապաշտության մեջ ընկնում: ¹⁷Հետևաբար ժողովարանում խոսում էր հրեաների ու բարեպաշտ մարդկանց հետ, իսկ շուկայում՝ ամեն օր իրեն հանդիպողների հետ: ¹⁸Էպիկուրյան և ստոյիկյան փիլիսոփաներից ոմանք նրա հետ վիճում էին, և ոմանք էլ ասում էին. «Այս դատարկախոսը ի՞նչ է ուզում ասել»: Իսկ ուրիշները, թե՛ «Երևում է, որ օտար աստվածների քարոզիչ է», որովհետև նրանց Հիսուսի և հարության մասին էր քարոզում: ¹⁹Եվ նրան առան, տարան Արիսպագոս, ասելով. «Կարո՞ղ ենք իմանալ, թե ի՞նչ է քո ասած այդ նոր վարդապետությունը, ²⁰քանի որ օտարոտի բաներ ես բերում մեր ականջին. ուստի կուզենանք իմանալ, թե դրանք ի՞նչ են»: ²¹Քանի որ բոլոր արթնացիները և այնտեղ եղող օտարականները, բացի մի նոր բան ասելուց կամ լսելուց, ուրիշ ոչինչով չէին զբաղվում:

17:16 Այս քաղաքը Հունաստանի անցյալի մշակութային ժառանգության ամենամեծ քաղաքն էր և դեռևս Հռոմեական տիրակալության ինտելեկտուալ կենտրոնը: Այն ներծծված էր ավանդության, սնտիսապաշտության և անբարոյության մեջ:

■ **«նրա հոգին»** ՆԿ-ի հունարեն ունցիալ ձեռագրերը չունեն՝

1. բառերի միջև տարածություն
2. կետադրական նշաններ
3. մեծատառեր (բոլոր տառերը մեծատառով են գրվում)
4. համարների և գլուխների բաժանում

Հետևաբար միայն համատեքստը կարող է որոշել մեծատառերի անհրաժեշտությունը: Ընդհանրապես մեծատառերը գործածվում են՝

1. աստվածության անունների համար
2. տեղանունների համար
3. անձնանունների համար

«Հոգի» տերմինը կարող է վերաբերել՝

1. Սուրբ Հոգուն (տես՝ Մարկ.1:5)
2. մարդու գիտակցական առանձնահատկությանը (տես՝ Մարկ.8:12; 14:38)
3. հոգևոր տերություններից որոշ էակների (այսինքն՝ պիղծ ոգիներին, տես՝ Մարկ.1:23)

Այս համատեքստում այն վերաբերում է Պողոսի անձին:

Պողոսի գրքերում առկա են մի քանի հատվածներ, որտեղ այս քերականական կառուցվածքը կիրառվում է նկարագրելու, թե ինչ պտուղ է տալիս Սուրբ Հոգին անհատ հավատացյալի մեջ՝

1. «ոչ թե ստրկության հոգի» այլ «որդեգրության հոգի» - Հռոմ.8:15
2. «հեզության հոգի» - 1 Կորնթ.4:21
3. «հավատքի՝ հավատարմության հոգի» - 2 Կորնթ.4:13
4. «իմաստության և հայտնության հոգի» - Եփես.1:17

Համատեքստից ակնհայտ է, որ Պողոսը կիրառում է «հոգի» բառը նկատի ունենալով իրեն կամ այլ մարդկանց (1 Կորնթ.2:11; 5:4; 2 Կորնթ.2:13; 7:13; Հռոմ.1:9; 8;16; Փիլ.4:23):

■	
NASB	«իր մեջ նրա հոգին խռովվում էր»
NKJV	«իր ներսում խռովվում էր»
NRSV	«խորապես անհանգիստ էր»
TEV	«մեծ անհանգստության մեջ էր»
NJB	«խռովված էր»

Սա ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակն է *paroxunō* բառի, որը հիմնականում նշանակում է «սրել», սակայն այստեղ կիրառված է փոխաբերական «փոթորկվել՝ խառնվել» իմաստով: Սա այն տերմինն է (ԳՈՅԱԿԱՆի տեսքով), որ գործածվում է նկարագրելու Պողոսի և Բառնաբասի վեճը Հովհաննես Մարկոսի համար 15:39-ում: Եբր.10:24-ում այն կիրառվում է դրական իմաստով:

17:17 Պողոսն անհանգստանում էր և՛ հրեաների (նրանք, ում «խոսում էր ժողովարանում»), և՛ հեթանոսների համար՝ հուդայականությամբ տարված հեթանոսների (աստվածավախներ) և կռապաշտների («նրանք, որ շուկայում էին»): Պողոսն այս խմբերին տարբեր կերպերով էր դիմում՝ հրեաների և աստվածավախների համար կիրառում էր ՀԿ-ը, սակայն կռապաշտ հեթանոսների համար փորձում էր գտնել որոշակի ընդհանուր հարթակ (տես՝ հհ. 22-31):

17:18 «Էպիկուրյան» Այս խմբի մարդիկ հավատում էին, որ հաճույքը կամ երջանկությունը կյանքի ամենամեծ բարիքը և նպատակն է: Նրանք չէին հավատում ֆիզիկական, անհատական հանդերձյալ կյանքին: «Վայելիի կյանքը հիմա» խոսքը նրանց նշանաբանն էր (հիդոնիզմի՝ վայելքների հետամուտ լինելու գաղափարախոսության մի տեսակ): Նրանք ասում էին, որ աստվածները հետաքրքրված չեն մարդկային էակներով: Նրանք իրենց անունը յուրացրել էին Էպիկուր՝ աթենացի փիլիսոփայից, Ք.Ա. 341-270, սակայն չափազանցեցնում էին նրա կարծիքները: Էպիկուրը հաճույքը դիտարկում էր ավելի լայն գաղափարի մեջ, քան անձնական, ֆիզիկական հաճույքն է (այսինքն՝ առողջ մարմին և անխռով միտք): Էպիկուրն ասել է. «Եթե դու երջանկացնում ես մի մարդու, ապա մի ավելացրու նրա հարստության վրա, այլ վերցրու նրա ցանկություններից» (*The New Schaff-Herzog Encyclopedia of Religious Knowledge*, vol. IV, p. 153):

■ **«Ստոիկ»** Այս խմբի մարդիկ հավատում էին, որ աստված էր (1) աշխարհի հոգին կամ (2) մշտապես ներկա ամբողջ արարչագործության մեջ (պանթեիզմ՝ բնապաշտություն): Նրանք պնդում էին, որ

մարդիկ պետք է բնության (այսինքն՝ աստծո) հետ ներդաշնակության մեջ ապրեն: Պատճառը բարձրագույն բարությունն էր: Ցանկացած իրավիճակում նրանց նպատակն էր զսպվածությունը, ինքնավստահությունը և զգացմունքային՝ էմոցիոնալ կայունությունը: Նրանք չէին հավատում հանդերձյալ կյանքին: Նրանց հիմնադիրը Չենոյն էր՝ Կիպրացի փիլիսոփա, որը տեղափոխվել էր Աթենք մոտ Ք.Ա. 300 թ-ին: Նրանք իրենց անունը վերցրել են այն փաստից, որ Չենոյը սովորեցնում էր Աթենքում ներկված *stoa* (այուն՝ այունաշար) այունների միջև կանգնած:

■ **«դատարկախոս»** Այս բառը կիրառվում էր ճնճողիկների համար, որոնք դաշտում սերմեր էին ուտում: Այն սկսեց կիրառվել փոխաբերական իմաստով շրջագայող ուսուցիչների համար, ովքեր այս ու այն կողմից տեղեկության փոքր կտորներ էին հավաքում և փորձում վաճառել դրանք: *R.S.V. Interlinear Alfred Marshall* թարգմանում է այն որպես «անիրազեկ՝ ոգետ գրագող»: *NJB* թարգմանությունը ներկայացնում է որպես «թուխակ»:

■ **«օտար աստվածների քարոզիչ է»** Սա բառացի նշանակում է «օտար *daimōn*» որ գործածվում է հոգևոր գործությունների կամ աստվածների իմաստով (տես՝ 1 Կորնթ.10:20-21): Այս Աթենացի փիլիսոփաները կրոնավոր բազմաստվածության հետևորդներ էին (Օլիմպիական Պանթեոնը):

1. Շատ հնարավոր է, որ հենց այս Աթենացի Հույն փիլիսոփաները ընդունեցին Պողոսի խոսքերը որպես թե նա նկատի ուներ երկու աստծո (*Jerome Biblical Commentary*, vol. 2, p. 199 /*Ջերոմի Աստվածաշնչյան Մեկնաբանություն*):
 - ա. առողջության աստվածուհի
 - բ. հարության աստվածուհի (այսինքն՝ Անաստեզիա)
2. Նույնիսկ հնարավոր է, որ նրանք պատկերացնում էին մեկին որպես՝
 - ա. տղամարդ (Հիսուսը)
 - բ. կին (հարությունը ԻԳԱԿԱՆ ՄԵՌԻ ԳՈՅԱԿԱՆ Է)
3. Երրորդության հետ (մեկ Աստված, բայց երեք անձ, տես՝ Հատուկ Թեմա 2:232) կապված Պողոսի ավետարանի տերմինաբանությունը (տես՝ NET Աստվածաշունչը) ինքնին կարող է լինել շփոթության աղբյուր:
 - ա. Հայր
 - բ. Որդի
 - գ. Հոգի

■ **«որովհետև նրանց Հիսուսի և հարության մասին էր քարոզում»** Հրեաների համար Ավետարանի գործնան՝ գայթակղության քարը «չարչարվող Մեսիան» էր, իսկ հույների համար՝ «հարությունը» (տես՝ 1 Կորնթ.1:18-25): Մարմնապես, անձի հանդերձյալ կյանքը չի համապատասխանում աստվածների կամ մարդկության վերաբերյալ հունական գաղափարախոսության հետ: Նրանք պնդում են, որ յուրաքանչյուր մարդ ունի աստվածային ինչ-որ կայծ իր ներսում՝ ֆիզիկական մարմնի թակարդում կամ բանտարկված: Փրկությունը ֆիզիկականից ազատումն էր և վերամարմնավորումը անդեմ կամ բազմադեմ աստվածության:

17:19 «և նրան առան, տարան Արիսպագոս» Այս տերմինը՝ *areopages* նշանակում է Արիսի բլուր (պատերազմի աստվածը): Հռոմեական պանթեոնում պատերազմի աստվածը կոչվում է Մարս: Աթենքի ոսկե օրերում ժամանակներում, այս վայրը համարվում էր այս հռչակավոր ինտելեկտուալ քաղաքի փիլիսոփայական հավաքատեղին՝ հրապարակը: Սա դատարան չէր, այլ քաղաքի մի բացօթյա հրապարակ՝ քաղաքի առաջնորդների խորհրդի ներկայությամբ:

Այստեղ ներկայացված է Պողոսի հեթանոսներին քարոզելու մի օրինակ, ինչպես 13:16բ-ում՝ աստվածավախ նորադարձներին: Փառք Աստծուն Պողոսի պատգամների այսպիսի համառոտագրությունների համար:

■ **«Կարո՞ղ ենք իմանալ, թե ի՞նչ է բո ասած այդ նոր վարդապետությունը»** Ահա և մտավոր հետաքրքրության (տես՝ հհ. 20-21) և հայտնության միջև եղած տարբերությունը: Աստված մեզ հետաքրքրասեր է ստեղծել (տես՝ Ժող.1:8-9,18; 3:10-11), սակայն մարդու ինտելեկտը չի կարող խաղաղություն և ուրախություն պարզել: Միայն ավետարանը կարող է դա անել: Պողոսը 1 Կորնթացիների 1-4-ում քննարկում է մարդկային իմաստության և Աստծո հայտնության միջև տարբերությունը:

17:19-20 Այս խոսքերը բավականին կիրթ էին հնչում: Միջավայրը ինչ-որ իմաստով համալսարանական էր:

17:21 Այս համարը կարծես թե մեկնաբանությունն լինի հեղինակի կողմից: Այն ցույց է տալիս, որ հ.հ. 19-20-ի քաղաքավարությունը իրական ինտելեկտուալ հարցաքննում չէր, այլ տվյալ ժամանակի մշակութային քմահաճույք: Նրանց պարզապես դուր էր գալիս հարցաքննելն ու բանավիճելը: Նրանք փորձում էին վերականգնել Աթենքի վաղեմի փառքը: Ցավալին այն է, որ նրանք ի վիճակի չէին տարբերել մարդկային իմաստությունը աստվածային հայտնությունից (նույնը և մեր օրերում է, մեր համալսարաններում):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 17:22-31

²²Պողոսն էլ կանգնեց Արիսպագոսի մեջ և ասաց. «Ո՛վ աթենացիք, ես տեսնում եմ, որ դուք շատ կրոնասեր եք /անգլ.՝ բոլոր առումներով/, ²³քանի որ, երբ շրջում էի և նայում ձեր պաշտածներին, տեսա մի խորան, որի վրա գրված էր՝ ԱՆԾԱՆՈՑ ԱՍՏԾՈՒՄ: Նա, ում դուք առանց ճանաչելու պաշտում եք, ես նրան եմ քարոզում ձեզ: ²⁴Աստված, որ ստեղծեց աշխարհը և այն ամենը, ինչ նրա մեջ է, Նա, երկնքի ու երկրի Տերը լինելով, ձեռակերտ տաճարներում չի բնակվում, ²⁵ո՛չ էլ մարդկանց ձեռքով է պաշտվում, կարծես որևէ բանի կարիք ունի, քանի որ Ինքն է բոլորին կյանք ու շունչ և ամեն բան տվողը: ²⁶Եվ նույն արյունից մարդկանց բոլոր ազգերին ստեղծեց, որ ամբողջ երկրի երեսին բնակվեն, և հաստատեց նախակարգյալ ժամանակները և նրանց բնակության սահմանները, ²⁷որ նրանք Աստծուն փնտրեն, որ խարխափելով թերևս գտնեն նրան, թեև Նա մեզանից ոչ մեկից հեռու չէ: ²⁸Որովհետև մենք Նրանով ենք ապրում և շարժվում, և կանք, ինչպես ձեր բանաստեղծներից ոմանք էլ ասացին, թե՛ մենք Նրա զարմն ենք: ²⁹Ու քանի որ Աստծո զարմն ենք, չպետք է համարենք, թե աստվածությունը նման է ոսկու կամ արծաթի կամ քարի, որ քանդակված է մարդկային վարպետությամբ ու խելքով: ³⁰Բայց Աստված տգիտության ժամանակներն անտեսելով, հիմա բոլոր մարդկանց պատվիրում է, որ ամեն մարդ ամեն տեղ ապաշխարի: ³¹Քանի որ Նա մի օր սահմանեց, երբ աշխարհն արդարությամբ պիտի դատի այն Մարդու ձեռքով, Ում Ինքը նշանակեց և ամենքին հավաստիացրեց՝ Նրան մեռելներից հարուցանելով»:

17:22 «դուք շատ կրոնասեր եք» Սա բառացի նշանակում է «վախենալ աստվածներից (*daimōn*)»: Այն կարող է նշանակել (1) բացասական իմաստով «սնոտիապաշտ» ինչպես նշվում է King James Version անգլերեն թարգմանության մեջ, կամ (2) դրական իմաստով «շատ բծախնդիր կրոնական ցանկացած փոքր գործի մեջ» (NKJV, NJB, տես՝ 25:19): Այս մարդիկ ինտելեկտուալ հետաքրքրասիրություն ունենին, սակայն միայն որոշակի պարամետրերի դեպքում (իրենց ավանդույթների հետ կապված):

■ **«բոլոր /ամեն/»** Ուշադրություն դարձրեք, թե քանի անգամ է Պողոսը իր այդ քարոզի ընթացքում օգտագործում «բոլոր կամ ամեն» պարունակող բառը կամ արտահայտությունը, որ դրա հոմանիշն է:

1. «ամեն առումներով» հ.22
2. «այն ամենը» հ.24
3. «բոլորին կյանք և շունչ...» հ.25
4. «ամեն բան» հ.25
5. «բոլոր ազգերին» հ.26
6. «ամբողջ երկրի երեսին» հ.26
7. «մեզանից յուրաքանչյուրը /բոլորը/» հ.27
8. «մենք» (երկու անգամ) հ.28
9. «ամեն մարդ, ամեն տեղ» հ.30
10. «աշխարհը» (բառ.՝ բնակեցված երկրագունդը), հ.31
11. «ամենքին՝ ամեն մարդու» հ.31

Պողոսի բերած բարի լուրն այն էր, որ Աստված սիրում է բոլոր մարդկանց (այսինքն՝ Իր պատկերով ստեղծված, տես՝ Ծննդ.1:26-27) և նրանց համար մի ճանապարհ է պատրաստել, որ կարողանան ճանաչել Իրեն (այսինքն՝ Աստծո ստեղծագործության առաջնային նպատակը եղել է Աստծո հետ փոխհարաբերությունը, տես՝ Ծննդ.3:8) և ներվեն (այսինքն՝ անկման հետևանքներից, տես՝ Ծննդոց 3):

17:23 «գրված էր՝ ԱՆԾԱՆՈՑ ԱՍՏԾՈՒՄ» Հույները վախենում էին, որ հանկարծ իրենց երկրպագությունից դուրս թողած կամ վրիպած չլինեին որևէ աստծո, որը կարող էր դժբախտություններ բերել, եթե անտեսվեր, ուստի պարբերաբար այս տեսակի արձաններ էին շինում (տես՝ Pausanias, *Description of Greece* 1:1:4 and Philostratus, *Life of Apollonius* 6:3:5): Այն ցույց է տալիս հոգևոր իշխանություններից նրանց վախը և բազմաստվածությունը:

■ **«Նա, ում դուք առանց ճանաչելու պաշտում եք»** Այստեղ բառախաղ է «անձանոթ» (*agnōtō*) և «տգիտություն» /առանց ճանաչել/ (*agnōountes*) բառերի մեջ: Անգլերենի «agnostic» բառը ծագել է այս

հունարեն բառից: Պողոսը հարմարեցնում էր ավետարանի մատուցումը այս հեթանոսների հետ, որոնք հավատում էին անդեմ աշխարհի ոգուն:

■ «Նրան /անգլ.՝ այս/ են քարոզում ձեզ» Պողոսը հստակ հայտարարում է, որ ինքը դատարկախոս չէ (հ. 18) և որ ինքը ճանաչում է Բարձրյալ Աստծուն, որի հետ նրանք ծանոթ չէին:

17:24 «Աստված, որ ստեղծեց աշխարհը և այն ամենը, ինչ նրա մեջ է» Պողոսի առաջին աստվածաբանական հիմունքն այն է, որ Աստված արարիչ է (տես՝ Ծննդոց 1-2; 104; 146:6; Եսայի 42:5): Հույները հավատում էին, որ Հոգին (Աստված) և նյութականը՝ մատերիան (ատոմները) երկուսն էլ համահավասար հավիտենական են: Պողոսը հայտարարում է Ծննդոց 1-ի արարչագործության գաղափարը, որտեղ անձ հանդիսացող, նպատակադրված Աստվածն արարում է թե՛ երկինքները և թե՛ երկիրը (այս մոլորակը և տիեզերքը):

■ «ձեռակերտ տաճարներում չի բնակվում» Սա մեջբերում է (1) ՀԿ-ից (տես՝ 3 Թագ.8:27; Ես.66:1-2) կամ (2) մի հույն փիլիսոփա՝ Եվրիպիդեսից, Fragment 968: Այս համատեքստում գոյություն ունեն մի քանի մեջբերումներ հույն գրողներից (տես՝ հհ. 25 և 28): Պողոսը նաև ուներ հունական կրթություն:

17:25 «կարծես որևէ բանի կարիք ունի /Նա/» Այս նույն միտքը կարելի է գտնել (1) Եվրիպիդեսի *Հերակլես* 1345բ; (2) Պլատոնի *Euthipbro* 14գ; (3) Արիստոբոլոսի, Fragment 4, կամ (4) Սաղմ.50:9-12-ում: Հունական տաճարները հաճախ դիտարկվում էին աստվածների համար մի վայր, որտեղ նրանք սնվում էին և հոգ տանում իրենց կարիքները:

■ «բանի որ Ինքն է բոլորին կյանք ու շունչ և ամեն բան տվողը» Սա կարող է լինել մեջբերում՝ ակնարկ Եսայի 42:5-ից: Այսպիսին էր Պողոսի աստվածաբանական կերպը հաստատելու (1) Աստծո սերը մարդկության հանդեպ (ողորմությունն ու շնորհքը) և (2) Աստծո գթառատ հոգատարությունը մարդկանց հանդեպ (մատակարարումը): Նմանատիպ ճշմարտության մասին խոսել էր Չինոյը՝ ստոիկ դպրոցի հիմնադիրը, որի մասին արձանագրված է Ալեքսանդրացի Կլեմենտի *Stromateis* 5:76:1: Ուշադրություն դարձրեք *»autos»* -ին՝ «Ինքը»: Ինչպիսի՞ հրաշալի ճշմարտություն էր հեթանոսների համար, որպեսզի լսեն և ընդունեն:

17:26 «/մեկից/ նույն արյունից ստեղծեց» Հունարեն ձեռագրերի արևմտյան ընտանիքը ավելացնում է «մի արյուն», սակայն հունարենի P⁷⁴, x, A և B ձեռագրերը բաց են թողնում այս տերմինը (UBS⁴ գնահատում է »B» [գրեթե հաստատ]): Եթե ըստ բնագրի նայենք, ապա դա վերաբերում է Ադամին: Եթե ակնարկ է հույն փիլիսոփայությանը, ապա այն արտահայտում է մարդկության միևնույն արմատից սերված լինելը: Այս և հաջորդ արտահայտությունները հստակ արտահայտում են ամբողջ մարդկության միասնությունը (հավանաբար մեջբերված Մաղ.2:10 կամ նույնիսկ 2 Օր.32:8, LXX), և աստվածաբանորեն այն հաստատում է, որ մարդիկ ստեղծված են Աստծո պատկերով (տես՝ Ծննդ.1:26-27):

Այս համարի մյուս մասը նաև կարող է լինել մեջբերում Ծննդոցի դեպքերից: Մարդկությանը պատվիրված էր լինել պտղաբեր և լցնել երկիրը (տես՝ 1:28; 9:1,7): Մարդիկ չէին կամենում առանձնանալ և տարածվել՝ լցնել երկիրը: Բարեղևի Աշտարակը (տես՝ Ծննդ.10-11) ցույց է տալիս այս բանն իրականացնելու համար Աստծո մեխանիզմը:

■ «հաստատեց նախակարգյալ ժամանակները և նրանց բնակության սահմանները» Պողոսը հայտարարում է, որ Աստված ոչ միայն ստեղծել է ամեն ինչ, այլ նաև տնօրինում է ամեն ինչ: Հնարավոր է սա ակնարկ է 2 Օր.32:8 (LXX): Սակայն այս ճշմարտությունը ՀԿ-ում տարբեր տեղերում նույնպես հաստատվում են (տես՝ Հոր 12:23; Սաղմ.47:7-9; 66:7):

17:27 Առաջին արտահայտությունը հնարավոր է հույն բանաստեղծ՝ Արատուսից ևս մեկ մեջբերում է:

■ «եթե /որ/» Սա ՉՈՐԲՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ է, որը արտահայտում է իրականությունից շատ հեռու վիճակ: Մարդիկ պետք է գիտակցեն իրենց կարիքը: Երկու ԲԱՅԵՐՆ էլ ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԸՂՁԱԿԱՆ են:

■
NASB, NKJV, NRSV «խարխափելով /շոշափելով/ գտնեն Նրան»
TEV «երբ կզգան Նրան իրենց շուրջը»
NJB «զգան դեպի Նրան տանող իրենց ճանապարհը»

Այս բառը նշանակում է «շոշափել» կամ «զգալ» (տես՝ Ղուկ.24:39): Այս համատեքստն արտահայտում է խավարի կամ խառնաշփոթի մեջ խարխափելու իմաստը: Նրանք փորձում են գտնել Աստծուն, սակայն դա հեշտ չէ: Հեթանոսությունը կուրացնող գորությունն է, որը հատկանշական է անկմանը, ինչպես և կռապաշտությունը և սնոտիապաշտությունը (տես՝ Հռոմեացիների 1-2), սակայն Աստված ներկա է:

■ «Նա մեզնից ոչ մեկից հեռու չէ» Ինչ սքանչելի ճշմարտություն է: Աստված ստեղծեց մեզ և Նա մեր կողմից է, մեզ հետ է (տես՝ Մաղմոս 139): Պողոսը համոզիչ կերպով հաստատում է Աստծո սերը, հոգատարությունը և ներկայությունը բոլոր մարդկանց համար: Սա Ավետարանի ճշմարտությունն է (տես՝ Եփես.2:11-3:13):

Հնարավոր է Պողոսը վկայակոչում էր 2 Օր.4:7 կամ Երեմ.23:23-24-ից, սակայն վերագրում է այն ամբողջ մարդկությանը: Սա Նոր Ուխտի ծածուկ պահված գաղտնիքն է:

17:28 «ինչպես /անգլ.՝ նույնիսկ/ ձեր բանաստեղծներից ոմանք էլ ասացին» Նախորդ արտահայտությունը՝ «Նրանով ենք ապրում և շարժվում, և կանք» մեջբերված է՝

1. Կլեոնացու *Չլսի Օրհներգը* գրքից (Cleanthes' *Hymn to Zeus*): Նա Ստոյան դպրոցի ղեկավարն էր Ք.Ա. 263-232, կամ
2. Արատուսի (Սոլի՝ Տարսոնից մոտ գտնվող մի քաղաք) *Ֆենոմեն* (Aratus's *Phainomena*), տող 5: Արատուսը Կիլիկիայից էր և ապրել է Ք.Ա. 315-240: Այս մեջբերումը շեշտադրում է կամ՝
ա. Աստծո բնույթը (տես՝ հ. 27) կամ
բ. այն, որ Աստված է ստեղծել ամբողջ մարդկությանը (տես՝ հ. 26):

Պողոսը նաև մեջբերում է կատարում Էպիկուրյանից 1 Կորնթ.15:32-ում, իսկ Մանանդերի *Թայիս* (Menander *Thais*) 1 Կորնթ.15:33-ում: Պողոսը կրթվել էր հունական գրականության և հռետորության ասպարեզում, հավանաբար Տարսոնում, որը համարվում էր համալսարանական գլխավոր քաղաքներից մեկը:

■ «թե՛ մենք Նրա զարմն ենք /զավակներն են/» Սա մեկ այլ մեջբերում է, հավանաբար Էպիմենիդացուց (Epimenides)՝ մեջբերված Դիոգենեսի կողմից *Փիլիսոփաների Կենսագրությունները* 1:112 (Diogenes Laertius *Lives of the Philosophers* 1:112) գրքում:

17:29 Սա Պողոսի ամփոփիչ և կռապաշտությունը հերքող խոսքն է (տես՝ Մաղմ.115:1-18; Ես.40:18-20; 44:9-20; 46:1-7; Երեմ.10:6-11; Ամբ.2:18-19): Մեղավոր մարդկության ողբերգությունն այն է, որ փնտրում է հոգևոր ճշմարտություն և փոխհարաբերություն ձեռակերտ կուռքերից, որոնք չեն կարող լսել, պատասխանել կամ օգնել:

17:30 «ազիտության ժամանակներն անտեսելով» Աստծո ողորմության զարմանահրաշ մի դրույթ է (տես՝ Հռոմ.3:20,25; 4:15; 5:13,20; 7:5,7-8; 1 Կորնթ.15:56): Բայց այժմ նրանք լսել էին ավետարանը և հոգևոր պատասխանատվություն ունեին:

■ «հիմա բոլոր մարդկանց պատվիրում է, որ ամեն մարդ, ամեն տեղ» Այս սահմանումը պնդում է՝

1. որ կա միայն մեկ Աստված
2. Նա ուզում է, որ բոլոր մարդիկ ամենուր ապաշխարեն

Այն ցույց է տալիս, որ Աստծո սերն ու ողորմությունը տիեզերական մասշտաբների է (տես՝ Հովհ.3:16; 4:42; 1 Տիմ.2:4; Տիտ.2:11; 2 Պետ.3:9; 1 Հովհ.2:1; 4:14): Փրկության առումով այն տիեզերական չէ (տես՝ հհ. 32-33), այլ իմաստն այն է, որ Աստված ուզում է բոլոր մարդիկ փրկության համար ապաշխարեն ու վստահեն Հիսուսին: Հիսուսը բոլորի համար մեռավ: Չարի առեղծվածն այն է, որ բոլորը չեն փրկվելու:

■ «ապաշխարել» Եբրայերեն տերմինը նշանակում է «գործողության փոփոխություն» մինչև հունարեն տերմինն արտահայտում է «մտքի փոփոխություն» իմաստը: Երկուսն էլ կարևոր են: Փիլիսոփայության երկու դպրոցն էլ, որ նվաճեց են հ. 18-ում, պետք է որ չընդունեին սա, սակայն տարբեր պատճառներով: Տե՛ս Հատուկ Թեմա. Ապաշխարություն, 2:38:

17:31 «Քանի որ Նա մի օր սահմանեց, երբ աշխարհն արդարությամբ պիտի դատի» Պողոսի պատգամը հստակ և պարբերաբար հայտարարում էր Աստծո ողորմության և հոգատարության մասին: Սակայն դա պատգամի միայն մի մասն էր: Սիրո և գթառատության Աստվածը նաև արդարադատ Աստված է, որն արդարություն է փափագում: Իր պատկերով ստեղծված մարդիկ հաշիվ պետք է տան իրենց կյանքի պարզևի տնտեսվարության համար (այսինքն՝ Մաղմ.96:13; 98:9): ՆԿ-յան այս թեման, որ Աստված դատելու է աշխարհը (գերիշխող հայտնի աշխարհի վրա) պարբերաբար կրկնվում է (օրինակ՝ Մատթ.10:15; 11:22,24; 16:27; 22:36; 25:31-46):

■ **«այն Մարդու ձեռքով, Ում Ինքը նշանակեց»** Դատաստանի օրվա այս հասկացությունը՝ հիմնված հարուցյալ մարդու՝ Հիսուս Նագովրեցու (ՅԱՀՎԵի գործակալը դատաստանի ժամանակ) հետ մեր հավատքի փոխհարաբերության վրա, չլսված և աննկարագրելի էր այս հույն իմաստասերների համար (տես՝ 1 Կորնթ.1:23), բայց համարվում էր ավետարանի վկայության սիրտը (տես՝ 10:42; Մատթ.25:31-33):

■ **«Նրան մեռելներից հարուցանելով»** Գործքում այս թեման կրկնվում է շատ անգամ (տես՝ 2:24,32; 3:15,26; 4:10; 5:30; 10:40; 13:30,33,34,37; 17:31): Այն հանդիսանում է ավետարանի վկայության սիրտը առ այն, որ Հայր Աստվածն ընդունել է Հիսուսի կյանքը, ուսմունքը և փոխանորդական մահը: Այս թեմայի շուրջ ամենալիարժեք տեքստը (1) Հիսուսի հարության և (2) հավատացյալների հարության վերաբերյալ 1 Կորնթացիների 15 գլուխն է:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԶՍՏ. 17:32-34
³²Երբ լսեցին մեռելներից հարություն առնելու մասին, ոմանք ծաղրում էին, բայց ոմանք ասացին. «Դրա մասին մի ուրիշ անգամ կլսենք քեզնից»: **³³Եվ այսպես Պողոսը նրանց մոտից հեռացավ:** **³⁴Բայց մի քանի մարդիկ, նրա կողմն անցնելով, հավատացին, որոնցից մեկը Գիոնեսիոս Արիսպագացին էր, Դամարիս անունով մի կին, և ուրիշներ էլ նրանց հետ:**

17:32 «Երբ լսեցին մեռելներից հարություն առնելու մասին» Հույները, բացի Էպիկուրյաններից, հավատում էին հոգու անմահությանը, բայց ոչ մարմնի: Հարությունը հույների ամենամեծ գայթակղության քարն էր (տես՝ հ. 18; 1 Կորնթ.1:23):

■ **«ծաղրում էին»** Այս տերմինը ՆԿ-ում միայն այստեղ է կիրառված, սակայն դրա ավելի խիստ տարբերակը կիրառված է Գործք 5:30 և 26:21-ում: Արմատը՝ (*chleusma* կամ *chleusmos*) «ծաղրանք» կամ «ծաղր» բառերի համար մի քանի անգամ կիրառվում է Մեպտուլագինտայում (տես՝ Հոբ 12:4; Մադմ.79:4; Երեմ.20:8):

■ **«բայց ոմանք ասացին. «Դրա մասին մի ուրիշ անգամ կլսենք քեզնից»** Բոլոր մարդկանց հանդեպ Աստծո սիրտ և հոգատարության մասին Պողոսի քարոզը արմատապես այնքան նոր էր, որ այս լսողներին գրավել էր, սակայն նրանք դեռ լիովին համոզված չէին:

17:34 «մի քանի մարդիկ, նրա կողմն անցնելով, հավատացին, որոնցից մեկը Գիոնեսիոսն էր» Գոյություն ունի հնարավոր երեք պատասխան ավետարանին՝
1. մերժում, «ոմանք ծաղրում էին» (հ. 32)
2. հետաձգված որոշում, «դրա մասին մի ուրիշ անգամ կլսենք» (հ. 32)
3. հավատք, «մի քանի մարդիկ միանալով Պողոսին, հավատացին» (հ.34; 1 Թեսաղ.1:9-10)
Սա զուգահեռվում է սերմնացանի առակի հետ (տես՝ Մատթեոս 13):

■ **«Գիոնեսիոս Արիսպագացին»** Նա պետք է, որ լիներ Մարս Բլրի վրա այսպիսի փիլիսոփայական քննարկումների կանոնավոր կերպով հաճախող անձ: Ի վերջո մի մտավորական դարձավ հավատացյալ: Եվսերիոսը, *Եկեղեցու Պատմություն* 3:4:6-7 և 4:23:6-ում /Eusebius, *Eccl. His.*/ ասում է, որ նա դարձավ Աթենքի կամ Կորնթոսի առաջին երեցը: Ավետարանը մարդկանց վերափոխելու իր գործի մեջ է:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ Պողոսը շրջանցեց մի քանի մեծ քաղաքներ, ինչպես օրինակ Ամփիպոլիսն ու Ապոլոնիան:
2. Ինչո՞ւ էր Քրիստոսի չարչարանքները այդքան հիասթափեցնող Հրեաների համար:
3. Ինչո՞ւ էր Բերիայի արձագանքը այդքան ուշագրավ և խրախուսիչ:
4. Ինչո՞ւ էր Պողոսը այդքան փոթորկված Աթենքի հոգևոր իրավիճակը տեսնելով:
5. Ինչո՞ւ է Պողոսի քարոզը Մարս Բրի վրա այդքան կարևոր (հհ. 22-24):

ԳՈՐԾՔ 18

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսը Կորնթոսում	Ծառայություն Կորնթոսում	Կորնթոսում եկեղեցու հիմնադրումը	Կորնթոսում	Կորնթոսի եկեղեցու հիմնադրումը
18:1-4 18:5-11	18:1-7	18:1-4 18:5-11	18:1-4 18:5-8 18:9-11	18:1-4 18:5-11
18:12-17		18:12-17	18:12-13 18:14-17	Հրեաները Պողոսին Ասյան են տանում 18:12-17
Պողոսի վերադարձը Անտիոք	Պողոսը վերադառնում է Անտիոք	Երկրորդ Միսիոներական Ճամփորդության ավարտը և Երրորդի մեկնարկը	Վերադարձ Անտիոք	Վերադարձ Անտիոք և Երրորդ Ճամփորդության մեկնում
18:18-23	18:18-23	18:18-21 18:22-23	18:18-21 18:22-23	18:18 18:19-21 18:22-23
Ապողոսը քարոզում է Եփեսոսում	Ապողոսի Ծառայությունը	Ապողոսը Եփեսոսում	Ապողոսը Եփեսոսում և Կորնթոսում	Ապողոս
18:24-28	18:24-28	18:24-28	18:24-28	18:24-26 18:27-28

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզին յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԶՍՏ. 18:1-4

¹Սրանից հետո Պողոսն Աթենքից հեռանալով, եկավ Կորնթոս: ²Եվ մի հրեա գտավ Ակյուղաս անունով, Պոնտոսում ծնված, որն իր կնոջ՝ Պրիսկիլայի հետ վերջերս եկել էր Իտալիայից (քանի որ Կլոդիոսը հրամայել էր, որ բոլոր հրեաները պետք է Հռոմից հեռանան), և նրանց մոտ գնաց: ³Եվ որովհետև նրանց արհեստակիցն էր, մնաց նրանց մոտ և աշխատում էր. նրանք արհեստով վրանագործներ էին: ⁴Եվ ամեն շաբաթ օր ժողովարանում խոսում և հրեաներին ու հույներին համոզում էր:

18:1 «Պողոսն Աթենքից հեռանալով, եկավ Կորնթոս» Կորնթոսը գտնվում էր Աթենքից 50 մղոն դեպի արևմուտք՝ մի նեղ հողակտորի (նեղուցի) վրա: Պողոսը Աթենքում մենակ էր և նույնիսկ ինչ-որ ժամանակ էլ Կորնթոսում (տես՝ հ. 5): Նա ուներ այքերի խնդիր (մարմնի խայթոցը, տես՝ 2 Կորնթ.12): Նրա համար շատ դժվար էր մենակ մնալը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿՈՐՆԹՈՍ ՔԱՂԱՔԸ

- Ա. Հունաստանի ամենահարավային կետի (այսինքն՝ Կաֆե Մալազի /Cape Malea/) շուրջ գտնվող ձմեռային նավարկության նրբանցքները շատ վտանգավոր էին: Հետևաբար շատ կարևոր էր հնարավորինս ընտրել ցամաքային ամենակարճ ճանապարհը: Կորնթոսի աշխարհագրական դիրքը չորս մղոն տարածքով նեղուցի վրա՝ Կորնթոսի Ծովածոցի (այսինքն՝ Ադրիատիկ Ծովը) և Սարոնիկ Ծովածոցի (այսինքն՝ Էգեյան Ծովը) միջև, քաղաքը դարձնում էր մեծ առևտրային (այսինքն՝ ծովային առաքման և առևտրային կենտրոն, մասնագիտացված կավագործության տարբեր ոլորտներում և հատուկ տեսակի պղնձի առևտրի մեջ) և ռազմական կենտրոն: Պողոսի օրերում այս քաղաքը Արևմտյան և Արևելյան մշակույթների հատման խաչմերուկն էր:
- Բ. Կորնթոսը նաև Հունա-հռոմեական աշխարհի մշակույթային մեծ կենտրոն էր, քանի որ հյուր-ընկալում էր երկու տարին մեկ անցկացվող Նեղուցի Իսադերը, որոնք սկիզբ առան Բ.Ա.581 թ-ին (Պոսեդոնի Տաճարում): Միայն Աթենքում չորս տարին մեկ անցկացվող Օլիմպիական Իսադերը իր չափերի և կարևորության առումով մրցակցելի էին (Thucydided, *Hist.* 1.13.5):
- Գ. Բ.Ա. 146-ին Կորնթոսը ներգրավվեց ապստամբության մեջ (Աքայան Լիգա) Հռոմի դեմ և ավերվեց հռոմեացի զենեղալ Լուցիուս Մունիուսի կողմից և բնակիչները ցրվեցին: Իր տնտեսական և ռազմական կարևորության համար, այն վերակառուցվեց Բ.Ա. կամ 46-ին, կամ էլ 48-ին Հուլիոս Կեսարի կողմից: Այն դարձավ հռոմեական գաղութ, որտեղ թռչակի էին անցնում հռոմեացի զինվորները: Այն իր ճարտարապետությամբ և մշակույթով Հռոմի նմանակն էր և Բ.Ա. 27-ին հռոմեական Աքայիա նահանգի վարչական կենտրոնը (այսինքն՝ Մենատի): Այն դարձավ Կայսերական նահանգ մ.թ. 15 թ-ին:
- Դ. Հին Կորնթոսի միջնաբերդը՝ ակրոպոլիսը, որը վեր է խոյանում հարթավայրից ավելի քան 1880 ոտնաչափ բարձրությամբ, Աֆրոդիտեի տաճարի տեղանքն է: Այս տաճարում ծառայում էին 1.000 անբարո կանայք (Strabo, *Geography*, 8.6.20-22 /Ստրաբո, *Աշխարհագրություն*/): Կոչվել «Կորնթացի» (այսինքն՝ *Korinthiazesthai*, կազմված Արիստոֆանեսի կողմից [Բ.Ա. 450-385]) ասել էր թե ապրել թեթևաբարո, ապստամբ կյանքով: Այս տաճարը, ինչպես և քաղաքի մեծ մասը, ավերվեց Պողոսի ժամանակուց 150 տարի առաջ երկրաշարժից, որը կրկնվեց մ.թ. 77 թ-ին: Հայտնի չէ, թե արդյոք պտղաբերության պաշտամունքը Պողոսի օրոք դեռ շարունակվում էր, թե ոչ: Քանի որ հռոմեացիները Բ.Ա.146 թ-ին կործանեցին քաղաքը և սպանեցին կամ գերեվարեցին քաղաքի բոլոր բնակիչներին, քաղաքի հունական համն ու հոտը փոխարինվեց հռոմեական գաղութի կարգավիճակով (Pausanias, II.3.7):

18:2 «Եվ մի հրեա՝ Ակյուղաս անունով...Պրիսկիլա» Նրա կինը՝ Պրիսկիլան, նաև Պրիսկա կոչվող, սովորաբար նշվում է առաջինը (տես՝ 18:18,26; 1 Կորնթ.16:19; 2 Տիմ.4:19), որը իրոք անսովոր էր այսպիսի նահապետական մշակույթի մեջ (տես՝ Հատուկ Թեմա. Կանայք Աստվածաշնչում, 2:17): Նրա անունը համընկնում է մի հարուստ հռոմեական անվան հետ (Պրիսկա տոհմից): Ոչ մի տեղ չի ասվում, որ նա հրեա էր: Ինչպիսի՞ հրաշալի սիրո պատմություն էր դա, եթե նա այդ հռոմեացի հարուստ օրիորդն էր և սիրահարվել էր մի շրջիկ հրեա վրանագործի կամ կաշեգործի: Նրանք ընկերացան և սկսեցին Պողոսի հետ միասին աշխատել այդ գործի մեջ: Նրանք օգնեցին Ապոդոս աշակերտին:

■ «վերջերս» *Գործք Առաքելոցի Թարգմանչի Չեռնարկ* գրքում Նյումեն և Նիդան (*A Translator's Handbook on the Acts of the Apostles*) շատ հետաքրքիր տեսակետ են հայտնում այս ՄԱԿԲԱՅԻ՝

prospatōs վերաբերյալ: Բնագրային տեսքով այն նշանակում է «թարմ սպանված» սակայն ժամանակի ընթացքում այն սկսվում է կիրառվել փոխաբերորեն որպես «վերջերս»: Մա լավ օրինակ է այն բանի, թե ինչպես ստուգաբանությունը միշտ չէ, որ հաղորդում է բառի լավագույն նշանակությունը: Բառերը պետք է հասկանալ իրենց ժամանակակից և համատեքստային միջավայրում: Աստվածաշնչյան սխալ մեկնաբանությունների մեծ մասը տեղի են ունենում այն ժամանակ, երբ մերօրյա մեկնաբանի մոտ չի ստացվում հասկանալ տվյալ բառի հնագույն փոխաբերական կամ դարձվածքային կիրառությունը:

■ **«Եկել էր Իտալիայից, քանի որ Կլոդիոսը հրամայել էր, բոլոր հրեաները պետք է Հռոմից հեռանան»** *Hystoria Contra Paganus* 7.6.15-ում Օրասիոսն ասում է, որ այս հրովարտակի տարերթիվը եղել է մ.թ. 49: *Կլավդիոսի Կյանքը* 25.4 գրքում Սուևտոնիոսն ասում է մեզ, որ դա եղել է Հրեական թաղամասում խռովության պատճառով *Քրեստոսի* (Chrestus) հանդեպ սանդրանքի արդյունքում: Հռոմեացիները շփոթել էին Քրիստոսը Քրեստոսի հետ (տես՝ Տաքիտուս, *Աննալիս* /Tacitus, *Anais* 25:44:3/): Դիո Կասիուսը *Պատմություններ* (Dio Cassius *Histories* 60.6) գրքում ասում է, որ Հրեաները չեն վտարվել, այլ նրանց արգելվել էր գործադրել իրենց նախահայրերի ավանդույթները:

«Եկել էր» ԴԵՐԲԱՅԸ հանդիսանում է ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ (անգլերենում) ԴԵՐԲԱՅ՝ ակնարկող մշտական կամ երկարաժամկետ տեղափոխության մտադրություն: Կլավդիոսի հրամանագիրը (հրամանը) ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՈՐՈՇ է (անգլերենում):

18:3 «որովհետև նրանց արհեստակիցն էր» Ընդհանրապես այստեղից հասկանալի է, որ դա վրանագործությունն է, սակայն բառը կարող է վերաբերել կաշեգործությանը: Պողոսի ռաբբիական ծագումը պահանջում էր, որ նա որևէ աշխարհիկ գործ կամ զբաղմունք ունենար: Ոչ մի ռաբբի վարդապետելով չէր կարող փող վաստակել: Կիլիկիան Պողոսի հայրենի տարածաշրջանը, հայտնի էր իր այծի մագով և կաշվով:

18:4 «և ամեն շաբաթ օր ժողովարանում խոսում էր» Ամեն շաբաթ օր Պողոսը ակտիվ կերպով «խոսում» և «փորձում էր համոզել» ժողովարանի մարդկանց (այս երկուսն էլ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ են): Պողոսը առաջին հերթին գնում էր հրեաների մոտ, քանի որ՝

1. դա Հիսուսի թողած օրինակն էր (տես՝ Մատթ.10:5-6)
2. նրանք գիտեին ՀԿ-ը
3. այնտեղ գտնվող աստվածավախ հույները ընդհանրապես արձագանքում էին նրա պատգամին (տես՝ Հռոմ.1:16)

Ժողովարանը կազմավորվել է բաբելոնյան գերության ժամանակ, որպես երկրպագության, կրթության և աղոթքի վայր: Այն նախատեսված էր հրեական մշակույթին խթանելու և այն պահպանելու համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 18:5-11
⁵Եվ երբ Շիղան և Տիմոթեոսն եկան Մակեդոնիայից, Պողոսը Հոգով մղված վկայում էր հրեաներին, թե Հիսուսն է Քրիստոսը: ⁶Եվ երբ նրանք հակառակվում էին և հայիռում, նա թափ տվեց հագուստները և նրանց ասաց. «Ձեր արյունը ձեր գլուխը, ես անպարտ եմ, այսուհետև հեթանոսներին պիտի գնամ»: ⁷Եվ այնտեղից գնաց, մտավ մեկի տունը, որի անունը Հուստոս էր, մի աստվածապաշտ մարդ, որի տունը ժողովարանին կից էր: ⁸Իսկ Կրիստոսը՝ ժողովարանի գլխավոր ղեկավարը, Տիրոջը հավատաց իր ամբողջ ընտանիքով. և կորնթացիներից շատերն էլ, լսելով հավատացին և մկրտվեցին: ⁹Եվ գիշերը Տերը Պողոսին տեսիլքով ասաց. «Մի՛ վախենա, այլ խոսի՛ր և լուռ մի՛ մնա, ¹⁰որովհետև ես քեզ հետ եմ, և ոչ ոք չի կարողանա քեզ դեմ կանգնել, քեզ վնասել, քանի որ ես այս քաղաքում շատ ժողովուրդ ունեմ»: ¹¹Եվ այնտեղ մնաց մեկ տարի ու վեց ամիս և նրանց սովորեցնում էր Աստծո խոսքը:

18:5 «Շիղան և Տիմոթեոսը եկան Մակեդոնիայից» Ըստ երևույթին նրանք բերեցին Փիլիպպեի եկեղեցու հավատացյալներից սիրո նվիրատվություններ, որոնք օգնեցին Պողոսին լրիվ դրույքով քարոզելու (տես՝ 2 Կորնթ.11:9; Փիլ.4:15): Տիմոթեոսը նաև լուրեր բերեց Թեսաղոնիկեի եկեղեցու մասին, որին ի պատասխան Պողոսը գրեց 1 և 2 Թեսաղոնիկեցիների նամակները (տես՝ 17:14): Թվում է, թե ինչպես որ Դուկասը մնաց Փիլիպպեում, որպեսզի աշակերտի նորահավատներին, այնպես էլ Տիմոթեոսը մնաց Թեսաղոնիկեում, իսկ Շիղան՝ Բերիայում: Պողոսը շատ էր անհանգստանում նոր Քրիստոնյաների խնամակալության հարցում (այսինքն՝ Մեծ Հանձնարարությունը աշակերտներ դարձնելն ու սովորեցնելն է, և ոչ թե միայն ավետարանելը): Նա ուզում էր իր այցելած յուրաքանչյուր քաղաքում թողնել ակտիվ, աճող, վերարտադրող եկեղեցի:



NASB
NKJV
NRSV
TEV
NJB

«Պողոսը սկսեց ամբողջությամբ իրեն նվիրել խոսքին»
«Պողոսը Հոգով մղված»
«Պողոսը գրադված էր խոսքը քարոզելով»
«Պողոսը հանձնեց իր ամբողջ ժամանակը պատգամ/խոսք քարոզելուն»
«Պողոսը իր ամբողջ ժամանակը նվիրեց քարոզելուն»

Այս արտահայտության համար կա հունարեն մի տարբերակ: Ամենահին և լավագույն տեքստերը պարունակում են *Logos* բառի ՏՐԱԿԱՆ ՀՈՒՆՎԸ (տես՝ MSS P⁷⁴, 8, A, B, D, E, ձեռագրերը Վուլգատա, Փեչիտտա և Կոպտիկ թարգմանությունների հետ միասին): UBS⁴ գնահատում է »B» (գրեթե հստակ): Տեքստու Ռիսեպտուսը (Textus Receptus) պարունակում է «Հոգի» (*pneumati*) բառը, որը գտնվել է միայն ավելի ուշ հայտնաբերված Minuscule (ֆրանսերենում՝ փոքրատառ) Greek (հունարեն) ձեռագրերում (երեքից մինչև տասներորդ դարերի ձեռագրերը համարվում են ամենահինը):

■ «վկայում էր հրեաներին, թե Հիսուսն է Քրիստոսը» Համեմատեք 9:22-ը 17:3-ի հետ Պողոսի կիրառած համոզելու մեթոդների վերաբերյալ (*sunechō* տերմինի ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակը, որը նշանակում է զսպել կամ սեղմել), որը շատ նման էր Ստեփանոսի մեթոդին և խանդավառությանը (տես՝ Գործք 7): Տես գրառում 2:40: Հանախակի կրկնվող այս աստվածաբանական սահմանումը (այսինքն՝ Հիսուսը Քրիստոսն է. տես գրառում 17:3) բոլոր մյուս սահմանումների բանալին է:

18:6 «հակառակվում էին և հայհոյում» Երկուսն էլ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, որը շեշտադրում է անձնական ներգրավվածության շարունակական ընթացքը: Ցավոք սա դարձավ սփյուռքում ապրող հրեաների կողմից արձագանքի ընդունված ձև:

■ «նա թափ տվեց հագուստները» Սա մերժված լինելու հրեական նշան է (տես՝ Նենմ.5:13; Գործք 13:51; Դուկ.9:5; 10:11): Տես լրիվ գրառումը 13:51-ում:

■ «Ձեր արյունը ձեր գլուխը» ՀԿ-յան այս դարձվածքը ունի մի քանի նշանակություն՝

1. պահապանի պատասխանատվությունը՝ անհատապես և միասնական, Եզեկ.3:16բ; 33:1-6
2. անձնական պատասխանատվությունը, Հեսու 2:19; 2 Թագ.1:16; Եզեկ.18:13; Գործք 18:6; 20:26
3. նախահայրերի կամ ազգերի միասնական պատասխանատվությունը, 2 Թագ.3:28-29; 4 Թագ.2:33
4. ՆԿ-ի համադրումը #2 և #3-ի հետ, Մատթ.27:25

Կյանքը արյան մեջ էր (տես՝ Դևտ.17:11,14): Արյուն թափելը մարդուն դարձնում էր Աստծո առջև պատասխանատու այդ մահվան համար (տես՝ Ծննդ.4:10; 9:4-6):

■ «ես մաքուր եմ / անպարտ եմ» Սա ՀԿ-յան զոհաբերության անձնական պատասխանատվության այլաբանություն է: Պողոսը այլևս հոգևոր առումով պատասխանատու չէր հրեաների համար (տես՝ Եզեկիել 33) այս քաղաքում ավետարանը հնչեցնելու: Նա քարոզեց պատգամը և նրանք չարձագանքեցին: Մենք մաքուր ենք:

■ «այսուհետև հեթանոսներին պիտի գնամ» Ավետարանելու այսպիսի եղանակը և ապա հայհոյվելը Պողոսի համար դարձել էր նորմատիվ սովորական երևույթ (տես՝ 13:46; 18:6; 26:20; 28:28): Պողոսը պարտավորված էր զգում քարոզել առաջին հերթին Իսրայելի տանը՝ հետևելով Հիսուսի օրինակին (տես՝ Մատթ.10:6; 15:24; Մարկ.7:27): Պողոսն այս թեմայի շուրջ բացատրություն է տալիս աստվածաբանորեն՝ Հռոմ.1:3,5,9-11-ում, իսկ զգացմունքորեն՝ Գործք 9:15; 22:21; 26:17-ում (տես՝ Հռոմ.11:13; 15:16; Գաղ.1:16; 2:7-9; Եփես.3:2,8; 1 Տիմ.2:7; 2 Տիմ.4:17):

18:7 «Տիտոս/ Հուստոս» Կորնթոսում՝ ժողովարանի հարևանությամբ ապրող այս «աստվածապաշտ» մարդու ինքնության վերաբերյալ մի քանի հնարավոր տարբերակներ կան:

1. Նրա ամբողջական անունն էր Գայիոս Տիտոս Հուստոս և Կորնթոսի եկեղեցին հավաքվում էր նրա տանը (տես՝ Հռոմ.16:23):
2. Հնարավոր է նա 1 Կորնթ.1:14-ում նշված Գայիոսն է, որին մկրտեց Պողոսը
3. Հունարեն ձեռագրի մի տարբերակ կա այս անվան հետ կապված.
ա. *Titou Ioustou*, MSS B, D² (UBS⁴ գնահատում է »C«)
բ. *Titou Ioustou*, MSS 8, E, P
գ. *Ioustou*, MSS A, B², D*
դ. *Titou*, Փեչիկթա և Կոպտիկ թարգմանությունները

■ **«աստվածապաշտ /Աստծո երկրպագու/»** Աֆրոդիսիասից մի արձանագրություն (3-րդ դար) կիրառում է այս արտահայտությունը՝ «Աստծո երկրպագու» այն հեթանոսների համար, որոնք հաճախում էին ժողովարան: Այսպիսով «աստվածավախները» (10:1-2,22; 13:16,26) «Աստծո երկրպագու՝ աստվածապաշտ» բառի հոմանիշ է (տես՝ 13:50; 16:14; 18:6-7):

Դժվար է սահմանել այս արտահայտությունը: Մինևոյն խոսքը 16:14-ում կիրառվում է Լիդիայի, և 17:4-ում՝ Թեսաղոնիկեում գտնվող մի քանի հույների, իսկ 17:17-ում՝ Բերիայում գտնվող հույների համար: Կարծես թե այն հույները, որոնք հարում էին հուդայականությանը, հնարավորության դեպքում հաճախում էին ժողովարան, սակայն լիարժեք նորադարձներ՝ հրեության դարձածներ չէին: Սակայն, 13:43-ում «հրեության դարձած բարեպաշտ՝ աստվածավախ մարդիկ» արտահայտությունը կիրառվում է նկարագրելու Պամփյուլիայի Պերգե քաղաքի նորադարձներին:

18:8 «Կրիսպոս» Այս մարդը տեղի ժողովարանի գլխավոր ղեկավարն էր ու ամենաշատ հաճախողը (տես՝ 1 Կորնթ.1:14):

■ **«Տիրոջը հավատաց իր ամբողջ ընտանիքով»** Գործքն արձանագրում է մի քանի դեպքեր, որտեղ ընտանիքի գլուխը դարձի է գալիս և նրա ամբողջ մեծ ընտանիքը մկրտվում է (տես՝ 11:14; 16:15,31-34; 18:8. տես՝ Հատուկ Թեմա. Մկրտություն 2:38): Արևմտյան աշխարհի մարդիկ մոռանում են հին Միջերկրական աշխարհում մեծ ընտանիքի դիրքը՝ դերը: Ընտանիքը առաջնահերթ էր: Անհատականությունը չէր շեշտադրվում: Չնայած որ սա տարբերվում է ավետարանչության վերաբերյալ անհատին՝ անձին շեշտադրող մեր ունեցած պատկերացումից, դրանից այն չի դառնում անպետք կամ քիչ իրական:

Սակայն, պետք նաև նկատել, որ փրկված ընտանիքների ոչ բոլոր անդամներն էին հաճախում եկեղեցի կամ փրկվում: Ոնեսիմոսը ստրուկ էր Փիլիմոնի տանը, որտեղ հավաքվում էր եկեղեցին, սակայն նա չփրկվեց, մինչև որ բանտում հանդիպեց Պողոսին:

«Հավատաց» բառի համար տես Հատուկ Թեմա 2:40 և 3:16:

■ **«Կորնթացիներից շատերն էլ, լսելով հավատացին և մկրտվեցին»** Կորնթոսում շատերը պատրաստակամորեն ընդունեցին Պողոսի պատգամը, սակայն Պողոսը վիստված էր և կարիք ուներ զորանալու հատուկ աստվածային տեսիլքի միջոցով (տես՝ հ. 10բ): Կորնթոսի եկեղեցիները (տնային) Պողոսի ամենադժվար, խնդրահարույց համայնքներն էին: Նա սիրում էր նրանց, սակայն նրանք Պողոսին անձնական մեծ ցավ էին պատճառում (տես՝ 1 և 2 Կորնթացիներին):

Այս համատեքստին համապատասխան 1 Կորնթ.1:14-17-ում զուգահեռ մի խոսք կա: Ես այստեղ ընդգրկել եմ 1 Կորնթացիների մեկնաբանության գրքի իմ գրառումներից:

Տե՛ս առցանց www.freebiblecommentary.org

«1:17 «Քանի որ Քրիստոսն ինձ չուղարկեց մկրտելու, այլ ավետարանը քարոզելու» Այս խոսքերի նպատակը մկրտությունը արհամարհելը չէ, այլ Կորնթոսի եկեղեցում փաստարկի ոգուն հակազդելը, որը որոշ առաջնորդներ էր բարձրացնում: Սակայն այս սահմանումը մատնացույց է անում, որ մկրտությունը չի դիտարկվում որպես շնորհքի «սրբազան» արարողություն՝ ծես: Չարմանալի է, որ ոմանք Պողոսի գրքերը մեկնաբանում են որպես սրբազան արարողությունների նշանակության, երբ նրա բոլոր գրքերում Տիրոջ Ընթրիքի մասին հատուկ նշում է միայն մեկ անգամ՝ 1 Կորնթացիների 11-ում և մկրտության մասին՝ երկու անգամ, Հռոմ.6:1-11 և Կող.2:12-ում: Ամեն դեպքում մկրտությունը Աստծո կամքն է բոլոր հավատացյալների համար.

1. դա Հիսուսի թողած օրինակն է
2. դա Հիսուսի պատվերն է
3. այն ակնկալվող, նորմալ ընթացակարգ է բոլոր հավատացյալների համար

Ես չեմ հավատում, որ դա միջոց է ընդունելու Աստծո շնորքը կամ Հոգուն: Այն համարվում է նոր հավատացյալների համար հնարավորություն հանրության առջև արտահայտելու իրենց հավատքը և ընտրած ուղին: Ոչ մի ՆԿ-յան հավատացյալ չպետք է հարցնի. «Պե՞տք է արդյոք փրկվելու համար մկրտվել»: Հիսուսը մկրտվեց: Հիսուսը պատվիրեց եկեղեցուն մկրտվել: Ուրեմն արե՛ք: Մկրտությունը դեռևս համարվում է մարդու կողմից կարևոր վճռական հանրային հայտարարություն իր անձնական հավատքի վերաբերյալ՝ հատկապես ոչ-Քրիստոնյա մշակույթների մեջ:

18:9 «Մի՛ վախենա /անգլ.՝ այլևս/» Սա ՆԵՐԿԱ ՄԻՋԻՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է ԺԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է ընթացքի մեջ գտնվող գործողությունը դադարեցնել: Հնարավոր է սա մեջբերված է Ծննդ.26:24 կամ 2 Օր.1:29-33; 20:1-ից, որտեղ Իսահակը վախենում էր: Պողոսը վախենում էր և Քրիստոսի քաջալերանքի կարիքն ուներ: Ղուկասը արձանագրում է հատուկ քաջալերանքի այս տեսիլքները 22:17-18; 23:11; 27:23-24-ում: Եթե Պողոսի պես մարդը հոգնում էր բարիք գործելով, ինչո՞ւ ես զարմանում, եթե դու էլ ես հոգնում: Հիսուսը նույնպես մեր հետ է (տես՝ հ. 10; Մատթ.28:20): Մեծ

Հանձնարարականը դեռևս առաջնային նպատակն է՝ կարևորը (տես՝ Մատթ.28:18-20; Ղուկ.24:47; Գործք 1:8):

■ **«այլ խոսի՛ր և լուռ մի՛ մնա»** Սրանք երկուսն էլ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ և ԱՈՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ) են: Վախը չպետք է լռեցնի ավետարանի քարոզչին: Մեր զգացմունքները վարիվերուններ են ունենում, սակայն Գործք 1:8-ը դեռևս առաջնորդող լույսն է (տես՝ 2 Տիմ.4:2-5):

18:10 «Ես քեզ հետ եմ» Սրանից ավելի մեծ խոստում չկա (տես՝ Ծննդ.26:24; Ելից 3:12; 33:4; Սաղմ.23:4; Մատթ.28:20; Եբր.13:5): Նկատեք, որ Նա մեր հետ է ոչ թե մեր անձնական հարմարավետության կամ ապահովության համար, այլ ավետարանչության համար համարձակ լինելու (նույնպես էլ Սուրբ Հոգով լցվելու նպատակը Գործքում): Սուրբ Հոգու ներկայությունը քարոզելու համար է, ոչ թե միայն անձնական խաղաղության:

■ **«քանի որ Ես այս քաղաքում շատ ժողովուրդ ունեմ»** «Ես շատ ժողովուրդ ունեմ» արտահայտությունը ՀԿ-ից ակնարկ է, երբ այն կիրառվում էր Իսրայելի համար (այսինքն՝ Աստծո ժողովուրդը), սակայն այժմ ՆԿ-ում այն վերաբերում է Կորնթոսի մարդկանց (հրեաներ և հեթանոսներ), որոնք արձագանքում էին ավետարանի պատգամին: Այլևս հույն կամ հրեա չկար (տես՝ Հռոմ.3:22; 1 Կորնթ.12:13; Գաղ.3:28; Կող.3:11): Այժմ եկեղեցին անվանվում էր ՀԿ-ի անուններով (տես՝ Գաղ.6:16; 1 Պետ.2:5,9; Հայտն.1:6):

Սա Աստծո նախասահմանության և կանխագիտության շեշտադրում է (տես՝ Հռոմեացիների 9; Եփեսացիների 1): Օ՛, եթե միայն կարողանայինք տեսնել Կյանքի Գիրքը հիմա: Եկեղեցու վկայությունը պտղաբեր է (տես՝ Հայտն.13:8): Անձնական վստահությունը ավետարանչության համարձակության համար է, այլ ոչ թե հավատացյալի համար մեռնելիս երկինք գնալու տոմսի վավերացում:

18:11 Այս համարը օգնում է հիմնավորելու Պողոսի միսիոներական ճամփորդությունների հնարավոր ժամանակագրությունը: Չնայած արտահայտությունը երկիմաստ է, սակայն ակնարկում է Կորնթոսում տասնութ ամիս քարոզելու առաքելությունը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 18:12-17
¹²Եվ երբ Գաղիոնը բղեշխի փոխանորդ էր Աքայիայում, հրեաները միաբանվելով Պողոսի դեմ ելան և նրան ատյան տարան, ¹³ասելով, թե նա համոզում է մարդկանց Օրենքին հակառակ ձևով Աստծուն պաշտել: ¹⁴Եվ երբ Պողոսն իր բերանն ուզում էր բանալ, Գաղիոնը հրեաներին ասաց. «Ո՛վ հրեաներ, եթե մի անիրավություն կամ նենգություն լիներ, արժանի կլիներ, որ ձեզ լսեի, ¹⁵բայց, եթե խնդիրը խոսքի և անունների և ձեր Օրենքի մասին է, դուք ինքներդ տեսեք, որովհետև այդպիսի բաների դատավոր չեմ ուզում լինել»: ¹⁶Եվ ատյանից դուրս հանեց նրանց: ¹⁷Եվ բոլոր հույները Սոսթենես ժողովապետին բռնեցին և ատյանի առաջ ձեռնում էին, իսկ Գաղիոնը նրանց մասին ամենևին չմտառեց:

18:12 «Գաղիոնը» Աստվածաշնչյան և հավելյալ աղբյուրներից իմանում ենք, որ այս մարդը ազնիվ և իրազեկ քաղաքական գործիչ էր: Նրա եղբայրը՝ Սենեկան, նրա մասին ասում է. «Նույնիսկ նրանք, որ սիրում են իմ եղբորը՝ Գաղիոնին, իրենց ամբողջ կարողությամբ, միևնույն է նրան բավարար չեն սիրում» և «ոչ ոք երբևէ այդքան բարեհամբույր չի եղել որևէ մեկի հանդեպ, որքան Գաղիոնը բոլորի հանդեպ»: Այս քաղաքական գործիչը օգնում է մեզ հաշվել Պողոսի ճամփորդությունների տարեթվերը: Նա մ.թ.51-ից սկսած երկու տարի ու կես եղել է նահանգապետ:

■ **«Գաղիոնը բղեշխի փոխանորդ էր Աքայիայում»** Ղուկասը ճշգրիտ պատմաբան է: Հռոմեացի պաշտոնյաների անունները մ.թ. 44 թ-ից ի վեր այս շրջանում փոխվել էին. «բղեշխի փոխանորդ» (տես՝ 13:7; 19:38) բառը (անգլ.՝ »proconsul«) ճիշտ է, քանի որ Կլավդիոս Կայսրը այս նահանգը տվել էր Սենատին:

■ **«հրեաները միաբանվելով»** Ղուկասն այս արտահայտությունը շատ է գործածում՝ արտահայտելու հավատացյալների միաբանությունը (տես՝ 1:14; 2:1,46; 4:24; 5:12; 8:6; 15:25), սակայն այստեղ այն նշում է Կորնթոսի նախանձ ու ավետարանին հակառակվող ապստամբ հրեաների միաբանությունը (տես՝ հ. 6): Այս արտահայտության բացասական իմաստով կիրառության այլ օրինակներ են 7:57; 12:20 և 19:29: «Հրեաներ» տերմինը հաճախ Ղուկասի գրքերում համառության իմաստն է արտահայտում:

■ **«նրան ատյան տարան /անգլ.՝ դատարանի նստավայրը բերեցին/»** Սա *bēma* բառն է (տառացի՝ «աստիճան»): Դա հռոմեական արդարադատության այժոռ կամ բարձրացված բեմահարթակ էր (տես՝ Մատթ.27:19; Հովհ.19:13; Գործք 25:6,10,17; 2 Կորնթ.5:10):

18:13 «Օրենքին հակառակ ձևով Աստծուն պաշտել» Հրեաները հայտարարում էին, թե Քրիստոնեությունը խախտում է իրենց օրենքները, հետևաբար հուդայականության մաս չի կազմում, և համարվում է շատ կարևոր իրավական խնդիր: Եթե Գաղիոնը ղեկավարվեր այս մեղադրանքով, ապա Քրիստոնեությունը կդառնար ապօրինի կրոն: Սակայն, ինչպես որ տեղի ունեցավ, Քրիստոնեությունը քաղաքական պաշտպանության արժանացավ (այն դիտարկվում էր որպես հուդայականության աղանդ, որը օրինական կրոն էր) հռոմեական օրենքների ներքո՝ մինչև որ 10-12 տարի անց սկսվեցին Ներոնի հալածանքները:

Նույնիսկ հնարավոր է, որ Ղուկասի կողմից Գործք Առաքելոցը գրի առնելու նպատակներից մեկը եղել է փաստագրել, որ Քրիստոնեությունը Հռոմեական կառավարության համար սպառնալիք չի հանդիսացել: Այստեղ յուրաքանչյուր հռոմեացի պաշտոնյա արձանագրված է որպես այս փաստն ընդունող անձ:

18:14 «Եթե» Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ Է: Այն հազվադեպ կառուցվածք է, որը սխալ հայտարարություն է անում, որպեսզի համոզվի կամ շարունակի քննարկումը: Հանախ դա կոչվում է «փաստին հակառակ» պայման: Սա պետք է թարգմանվեր «եթե դա լիներ սխալի կամ դաժան հանցագործության դեպք, որն այդպես չէ, ապա խելամիտ կլիներ ձեր հետ գործը շարունակել, որը չեմ անի»:

18:15 «Եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ Է: Իրավական այդ խնդիրը իրականում կրոնական խնդիր էր: Գաղիոնը խելամտորեն հասկացավ հրեաների իրական շարժառիթները: Նա այսպիսի խնդիրների համար չէր կարող և չէր էլ գործի որպես դատավոր:

18:16 «դուրս հանեց նրանց» Սա ՆԿ-ում այս բայի կիրառության միակ դեպքն է, սակայն մի քանի անգամ կիրառվում է Սեպտուագինտայում (տես՝ 1 Թազ.6:8; Եզեկ.34:12): Դա *elaunō* բառի ավելի խստացված ձևն է, որը նշանակում է բռնի ուժով վտարել:

18:17 «նրանք բոլորը բռնեցին Սոսթենեսին» «Նրանք բոլորը» վերաբերում է հ.12-ի հրեաներին կամ հույներին, որը ցույց է տալիս այս հունական քաղաքներում տիրող հակասեմիտիզմը: 1 Կորնթ.1:1-ում նշվում է մի Սոսթենեսի մասին. արդյո՞ք նա նույն մարդն էր, թե ոչ, հայտնի չէ, սակայն այս անունը բավականին հազվադեպ էր: Այս Սոսթենեսը գրավել էր ժողովարանի ղեկավար Կրիսպոսի տեղը: Թե ինչու հրեաները պետք է նրան ծեծեին հայտնի չէ: Հավանաբար նրա համար, որ թույլ էր տվել Պողոսին ժողովարանում խոսել:

■ **«իսկ Գաղիոնը նրանց մասին ամենևին չմտահոգվեց»** Այս հռոմեացի քաղաքական ղեկավարը, ի տարբերություն Պիղատոսի, ամբոխի կողմից ազդեցության չէր ենթարկվում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 18:18-21
¹⁸Պողոսը, դեռ երկար ժամանակ մնալուց հետո, եղբայրներից բաժանվելով, նավով գնաց դեպի Սիրիա, Պրիսկիլոսն և Ակյուղասն էլ՝ նրա հետ: Կենքրայում գլուխը խուզեց, քանի որ այդպիսի ուխտ ուներ: ¹⁹Եվ երբ հասավ Եփեսոս, նրանց այնտեղ թողեց և ինքը ժողովարան մտնելով՝ հրեաների հետ խոսում էր: ²⁰Եվ երբ նրանք աղաչում էին նրան, որ երկար ժամանակ մնա իրենց մոտ, նա հանձնառու չեղավ, ²¹այլ նրանց հրաժեշտ տվեց ու ասաց. «Առաջիկա տոնը ես անպայման Երուսաղեմում պիտի նշեմ: Բայց, եթե Տերը կամենա, նորից կգամ ձեզ մոտ»:

18:18 «Կենքրա» Սա Կորնթոսի երկու նավահանգիստներից մեկն էր: Այն գտնվում էր Էզեյան Ծովի մի բարակ նեղուցից դեպի արևելք, որի վրա տեղակայված էր Կորնթոս քաղաքը: Այն դարձյալ նշվում է որպես եկեղեցու տեղանք Հռոմ.16:1-ում:

■ **«ուխտ ուներ»** Սա վերաբերում է Թվոց 6:1-21-ում նկարագրված (տես՝ Ֆ. Ֆ. Բրյուս *Հարցերի Պատասխաններ*, էջ՝ 52 /F. F. Bruce *Answers to Questions*, p. 52/) Նազովրեցիների սահմանափակ ժամանակով ուխտին: Պողոսն այս բանը դարձյալ անում է Գործք 21:24-ում (տես այդ համարը): Մազերը կտրելը կամ գլուխը սափրելը մատնանշում էր ուխտի ավարտը:

Թե՛ Ա. Տ. Ռորերթսոնը և թե՛ Մ. Ռ. Վինսենթը կարծում են, որ սա Նազովրեցու ուխտը չէր, քանի որ ըստ հրեական սովորության այն կարող էր դադարեցվել միայն Երուսաղեմում: Պողոսը ամեն բան էր դարձել բոլոր մարդկանց համար, որպեսզի նրանցից ոմանց շահեր (տես՝ 1 Կորնթ.9:19-23): Մենք կարող ենք վստահ լինել, որ այս ուխտը ավետարանչության համար էր և ոչ թե օրինապաշտության: Եվ իհարկե, միշտ կա այս հավանականությունը, որ Ակյուղասն էր նրա գլուխը սափրողը:

18:19 «Եփեսոս» Սա առևտրային մի մեծ քաղաք էր արևմտյան Փոքր Ասիայում: Միլետոսի նավահանգիստը Մայանդիր Գետի տիղմի պատճառով ավերվելուց հետո, առևտրային գործը տեղափոխվեց դեպի վեր՝ Եփեսոսի ծովեզրյա տարածքը, որը նույնպես ուներ բնական նավահանգիստ: ՆԿ-յան ժամանակներում արդեն Եփեսոսն իր լավագույն դարն ապրել էր: Այն դեռևս մեծ և ազդեցիկ քաղաք էր, սակայն չուներ իր նախկին փառքը:

1. Փոքր Ասիա Հռոմեական նահանգի ամենամեծ քաղաքն էր: Չնայած որ մայրաքաղաքը չէր, սակայն հռոմեական կառավարիչն այնտեղ էր ապրում: Առևտրային կենտրոն էր իր գերազանց բնական նավահանգստի շնորհիվ:
2. Ազատ քաղաք էր, որը թույլ էր տալիս ունենալ տեղական կառավարում և շատ ազատություն, ինչպես նաև այս ամենը առանց հռոմեական կայազորի զինվորների:
3. Միակ քաղաքն էր, որտեղ թույլատրվում էր անցկացնել երկու տարին մեկ անգամ տեղի ունեցող Ասիական խաղերը:
4. Արտեմիսի (լատիներեն՝ Դիանա) տաճարի տեսավայրն էր, որն այդ օրերի աշխարհի յոթ հրաշալիքներից մեկն էր: Այն 425'x220' չափսի, 127 սյուներով, որոնք 60' բարձրության էին և դրանցից 86-ը ոսկեգոծ էին (տես՝ Pliny's *Hist' Nat.* 36:97ff): Կարծիք կար, որ Արտեմիսի պատկերը օդերևույթ էր՝ մետեոր, որը հիշեցնում էր կանացի բազմակուրծք կազմվածք: Սա նշանակում էր, որ քաղաքում կային շատ կուլտային պոռնիկներ (տես՝ Գործք 19): Քաղաքը շատ անբարո և բազմամշակույթ էր:
5. Պողոսը այս քաղաքում ավելի քան երեք տարի մնաց (տես՝ Գործք 18:18բ; 20:13):
6. Ավանդույթն ասում է, որ Պաղեստինում Մարիամի մահից հետո այն դարձավ Հովհաննեսի տունը:

■ **«և ինքը ժողովարան մտնելով՝ հրեաների հետ խոսում էր»** Պողոսը սիրում էր իր ժողովրդին (տես՝ Հռոմ.9:1-5): Նա առանց նվաղելու փորձում էր ձեռք մեկնել նրանց ավետարանի միջոցով և ավետարանի համար:

18:20 Այս հրեաները նման էին բերիացիներին: Նրանք կամենում էին լսել: Տեքստում չի նշվում, թե ինչու Պողոսը չկամեցավ մնալ այնտեղ, սակայն հ.21-ը ցույց է տալիս, որ հետագայում Աստծո առաջնորդությամբ նա կամենում է վերադառնալ:

18:21 «Եթե Տերը կամենա, նորից կգամ ձեզ մոտ» Պողոսը հավատում էր, որ իր կյանքը Աստծո ձեռքերի մեջ էր և ոչ թե իր (տես՝ Հռոմ.1:10; 15:32; 1 Կորնթ.4:19; 16:7): Սա աստվածաշնչյան աշխարհայացքն է (տես՝ Եբր.6:3; Հակ.4:15; 1 Պետ.3:17): Պողոսը վերադառնալու էր և իր երրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ Եփեսոսը դառնալու էր նրա հիմնական կիզակետը:

NASB (ԹՎՐՄԵՅՎԱԾ) ՏԵԶՍՏ. 18:22-23

²²Եվ Եփեսոսից դուրս գալով՝ իջավ Կեսարիա ու գնաց ողջունեց եկեղեցուն, ապա՝ Անտիոք իջավ: ²³Եվ այնտեղ միառժամանակ մնալուց հետո, դուրս եկավ, հերթով շրջեց Գաղատիայի երկրում և Փոյուզիայում, ամրապնդելով բոլոր աշակերտներին:

18:22 Համար 21-ը ավարտվում է Պողոսի Եփեսոսից նավարկությամբ: Համար 22-ը նրան իջեցնում է Պաղեստինյան ցամաքը (Կեսարիա) և նա այցելում է Երուսաղեմի եկեղեցին (անգլ.՝ «նա վեր բարձրացավ» աստվածաբանորեն ասած) և ապա (իջավ) Սիրիայի Անտիոք: Պետք է հիշել, որ Ղուկասը չի արձանագրում ամենօրյա հոգնացուցիչ ճամփորդական օրակարգ, այլ մի նշանակալի աստվածաբանական իրադարձությունից ցատկում է մյուսին: Գործքը ժամանակակից պատմություն չէ, այլ լավ, ճշգրիտ պատմություն: Համար 22-ը ավարտում է երկրորդ միսիոներական ճամփորդությունը և համար 23-ը սկսում է երրորդը:

■ **«եկեղեցին»** Տե՛ս Հատուկ Թեմա 5:11:

■ **«Գաղատիայի երկրում և Փոյուզիայում»** Այս արտահայտությունը «Գաղատիայի երկրում» դեռևս հակասությունների աղբյուր է գիտնականների շրջանակում, թե արդյո՞ք այն վերաբերում է ռասայական կամ քաղաքական մասնաբաժինների, որոնք գտնվում են ժամանակակից կենտրոնական Թուրքիայում:

Փոյուզիայի շրջանը առաջին անգամ նշվում է 2:10-ում: Պենտեկոստեն վերապրածների մեջ կային մարդիկ այս տարածքից: Պողոսին 16:6-ում արգելվեց այս շրջանում քարոզել ավետարանը:

Հնարավոր է հարց կառաջանա, թե 23-րդ համարի վերջում նշված այս արտահայտությունը՝ «ամրապնդելով բոլոր աշակերտներին» վերաբերում է Փոյուզիայում Պենտեկոստեի ժամանակ դարձի

եկածներին, թե՛ Պողոսի նորադարձներին Դերբեում, Լյուստրայում և Իկոնիոնում, որոնք ապրում էին Գաղատիայի հռոմեական նահանգի հարավային Պիսիդիայում:

Սա Պողոսի երրորդ միսիոներական ճամփորդության սկիզբն է (տես՝ 18:23-21:16):

■ **«ամրապնդելով բոլոր աշակերտներին»** Պողոսը Մատթ.28:19-20-ի Մեծ Հանձնարարությանը լուրջ էր վերաբերվում: Նրա ծառայությունը ընդգրկում էր թե՛ ավետարանչություն (տես՝ Մատթ.28:19) և թե՛ աշակերտություն (տես՝ 15:36; Մատթ.28:20):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍՏ. 18:24-28

24Եվ մի հրեա՝ Ապողոս անունով, Աղեքսանդրիայում ծնված, ճարտարախոս մի մարդ, որ գորավոր էր սուրբ գրքերի մեջ, եկավ, հասավ Եփեսոս: **25**Այս մարդը Տիրոջ ճանապարհների մեջ էր կրթված. և ջերմեռանդ հոգի ունենալով՝ խոսում ու ճշմարտությամբ սովորեցնում էր Տիրոջ մասին, բայց ինքը միայն Հովհաննեսի մկրտությունը գիտեր: **26**Եվ նա սկսեց համարձակորեն խոսել ժողովարանում. երբ Ակյուղասն ու Պրիսկիղան նրան լսեցին, իրենց մոտ տարան և Աստծո ճանապարհն ավելի կատարյալ բացատրեցին նրան: **27**Եվ երբ նա պետք է Աքայա անցներ, եղբայրները գրեցին՝ խրախուսելով աշակերտներին նրան ընդունել: Երբ նա եկավ, շատ օգնեց նրանց, որոնք հավատացել էին շնորհի միջոցով. **28**քանի որ նա մեծ գորությամբ համոզում էր հրեաներին, և հրապարակավ Սուրբ Գրքից ցույց տալիս, որ Հիսուսը Քրիստոսն է:

18:24-28 Կարծես թե այս արձանագրությունը վերաբերում է՝

1. Պրիսկիղային և Ակյուղասին
2. Հովհաննես Մկրտչի հետևորդներին (ժամանակագրական հերթականությունից դուրս է)
3. Պողոսի կողմից Ապողոսին ուղղված հանձնարարական նամակ իր գործողությունների համար

18:24 «մի հրեա՝ Ապողոս անունով» Շատ տարօրինակ է, որ հրեան ունենա հունական աստծո անուն: Նա բարձրագույն կրթությամբ և ճարտարախոս քարոզիչ էր (տես՝ 18:24-19:1): Կորնթոսում նրա ծառայությունը օգտակար էր, սակայն դարձել էր խնդրահարույց, երբ երեք խմբակցություններից մեկը (Պողոսի, Պետրոսի, Ապողոսի աշակիցները. տես՝ 1 Կորնթ.1-4) դարձրեցին նրան որպես իրենց չեմպիոնը: Նա հրաժարվեց վերադառնալ Կորնթոս (տես՝ 1 Կորնթ.16:12):

■ **«Աղեքսանդրիայում ծնված»** Սա հռոմեական կայսրության երկրորդ ամենամեծ քաղաքն էր, որը հայտնի էր իր հսկայական գրադարանով և ակադեմիական համ ու հոտով: Այն ուներ մեծաթիվ հրեա բնակչություն (ինչի համար էլ Եբրայերեն Աստվածաշունչը թարգմանվել է Հունարենի՝ Սեպտուագինտան) և Ֆիլոյի հարազատ տունն էր՝ հայտնի հրեա, նեոպլատոնիստ, այլաբանության գիտնական:

■ **«եկավ Եփեսոս»** Գործքը մանրամասների, ժամանակագրության գիրք չէ: Պողոսը նոր էր հեռացել (տես հ. 23):

■ **«ճարտարախոս մի մարդ»** Այս տերմինը Կոյնե հունարենով է, որը կարող է նշանակել կամ ճարտարախոս, կամ էլ կրթված: Սեպտուագինտայում *logios* տերմինը կիրառվում է Աստծո պատգամախոսների համար: Ապողոսը ըստ երևույթին ավելի շնորհալի էր հանրային խոսքի մեջ (հունարենում՝ հռետորիկա, հռետորություն), քան Պողոսը (համեմատեք՝ 1 Կորնթ.1:17; 2:1; 2 Կորնթ. 10:10 և 11:6): Նա հզոր քարոզիչ էր:

■ **«գորավոր էր Սուրբ Գրքերի մեջ»** «Սուրբ Գրքեր» տերմինը վերաբերում է ՀԿ-ին (տես՝ 1 Թեսաղ. 2:13; 2 Տիմ.3:16; 1 Պետ.1:23-25; 2 Պետ.1:20-21), բացառությամբ 2 Պետ.3:15-16, որտեղ Պողոսի գրքերը (այլաբանորեն) վերագրվում են որպես ներշնչված: Ապողոսը լավ գիտեր իր ՀԿ-ը:

«Չորավոր» բառը *duatos* է, որն օգտագործվում է Ղուկ.24:19-ում Հիսուսի խոսքի և գործի մեջ գործության համար, և Գործք 7:22-ում՝ Մովսեսի համար:

18:25 «Այս մարդը ... կրթված էր» Սա ԱՆՅՅԱԼ ԳԵՐԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ է (անգլերենում. տես՝ Ղուկ.1:4): Նա կրթվել էր Հիսուսի ուսմունքներով, սակայն մինչև ինչ-որ մակարդակ կամ ժամանակահատված: Կրթիս Վոգանը, *Գործք* էջ՝ 118 (Curtis Vaughan, *Acts*, p. 118) ժանդապագրություն #2-ում թվարկում է Ապողոսի իմացած և քարոզած հնարավոր բաները.

1. Հովհաննեսը Մեսիայից առաջ եկածն էր

2. Նա մատնացույց արեց Մեսիային որպես Աստծո Գառը, որը վերցնում է աշխարհի մեղքը
3. Հիսուս Նագովրեցին Մեսիան էր

Նաև կարծում եմ, որ ապաշխարությունը նույնպես շեշտադրվում էր նրա քարոզներում, քանի որ թե՛ Հովհաննեսի և թե՛ Հիսուսի քարոզներում այն առկա էր:

■ **«Տիրոջ ճանապարհների մեջ էր»** «Ճանապարհը» Հիսուսի հետևորդներին բնութագրող առաջին անունն է եղել Գործքում (տես՝ 9:2; 19:9,23; 22:4; 24:14,22; Հովհ.14:6): Այն հաճախ էր գործածվում ՀԿ-ում (տես՝ 2 Օր.5:32-33; 31:29; Սաղմ.27:11; Ես.35:8), որտեղ հաղորդում է ապրելակերպ հանդիսացող հավատքի իմաստը: Հայտնի չէ, թե այն արդյոք նույն իմաստն ուներ այս տեքստում, թե ոչ (տես՝ 18:26):

Ապողոսը նույնպես Հիսուսի վերաբերյալ որոշակի գիտելիքներ ուներ, սակայն ըստ երևույթին դա Հիսուսի երկրավոր կյանքի ծառայության վաղ շրջանից էր և ոչ թե Գողգոթյան դեպքերից, հարությունից հետո ավետարանից:

■ **«Զերմեռանդ հոգի ունենալով»** Տառացի նշանակում է «հոգով վառվել»: Այս արտահայտությամբ Ղուկասն ուզում է նկարագրել Ապողոսի խանդավառությունը Հիսուսի կյանքի և ուսմունքների մասին իր իմացածի ու հասկացածի մեջ:

■ **«միայն Հովհաննեսի մկրտությունը գիտեր»** Ապողոսի մասին այս արտահայտությունը հնարավոր է եղել է Ղուկասի գրական ոճը, որ կիրառում էր ներկայացնելու 19:1-7-ում արձանագրված Հովհաննեսի հետևորդներին: Առաջին դարի Պաղեստինում կային մի քանի հերձվածողություններ, որոնք ձևավորվել էին կապված Հովհաննես Մկրտչի ուսմունքների և քարոզչության հետ:

Հովհաննեսը ՀԿ-ի վերջին մարգարեն էր, որը պատրաստեց Մեսիայի ճանապարհը (տես՝ Ես.40:3; Սատթ.3:3), սակայն նա ավետարանի առաջին քարոզիչը չէր: Եթե Ապողոսի քարոզը չափազանց շատ էր կենտրոնանում Հովհաննեսի վրա, ապա նա բաց էր թողել Հիսուսի լիարժեք կարևորությունը: Հովհաննեսն էլ, Հիսուսն էլ շեշտադրում էին «ապաշխարությունը», «հավատքը» և «աստվածահան ապրելակերպը»: Երկուսն էլ առաջին հերթին հրեաներին կոչ արեցին հավատքի նորովի նվիրման և գործադրման (ուխտի հավատարմություն և ՅԱՀՎԵի հանդեպ անձնական հավատքի դրսևորում): Սակայն, Հիսուսի պատգամը գտավ կենտրոնական տեղում գտնվելու իր համարձակ հաստատությունը (օրինակ՝ Հովհաննես 10 և 14), հավանաբար հենց սա էր բացակայում Ապողոսի մոտ:

18:26 «նա սկսեց համարձակորեն խոսել ժողովարանում» Այս ԲԱՅԸ կիրառվում է Պողոսի դեպքում, երբ նա խոսում է հրեական ժողովարաններում՝ 13:46; 14:3; 19:8 և Փեստոսի առջև՝ 26:26: Ապողոսը գորավոր և ազդեցիկ քարոզիչ էր:

■ **«ժողովարանում»** Ուշադրություն դարձրեք, որ Պրիսկիղան և Ակյուղասը նույնպես այնտեղ էին: Սա նաև Պողոսի մշտական սովորությունն էր:

■ **«Պրիսկիղա և Ակյուղաս»** Մի քանի անգամ Պրիսկիղան է նշվում առաջինը՝ 18:18,26; Հռոմ.16:3; 2 Տիմ.4:19: Սա չափազանց անսովոր է: Հավանաբար նա էր ամենաուժեղ անհատականությունը կամ էլ հռոմեական ազնվական ցեղից էր: Գործք 18:2-ում ասվում է, որ Ակյուղասը հրեա էր, բայց նույնը չի ասվում Պրիսկիղայի համար: Նրանք ստիպված էին հեռանալ Հռոմից մ.թ. 49-ի Կլավդիոս Կայսեր հրովարտակի պատճառով: Նրանք հանդիպեցին Պողոսին և ընկերացան նրա հետ Կորնթոսում, իսկ հետո միացան նրան Եփեսոս գնալիս: Նրանք երեքն էլ վրանագործներ էին:

■ **«իրենց մոտ տարան»** Այս տերմինը կիրառվում է նկարագրելու մեկին, որին որպես ընկեր են ընդունում: Հայտնի չէ, թե ինչպես և որտեղ Ակյուղասն ու Պրիսկիղան դա արեցին Ապողոսի համար: Հնարավոր է նրանք առանձին խոսեցին Ապողոսի հետ կամ էլ իրենց հետ տուն տարան: Ուշադրություն դարձրեք, որ նրանք հանրության առջև չեն վիստեցնում կամ հանդիմանում Ապողոսին:

■ **«Աստծո ճանապարհն ավելի կատարյալ բացատրեցին նրան»** Նա ուսանելի էր, որը հազվադեպ երևույթ է կիրթ և տաղանդավոր մարդկանց համար: Ըստ երևույթին Ապողոսը արձագանքում է Հիսուսի մասին նրանց փոխանցած լիարժեք տեղեկությանը:

18:27 «նա պետք է Աքայա անցներ /անգլ.՝ «նա ուզեց անցնել Աքայա/» Հունարեն ձեռագիր D ավելացնում է «կորնթացի Քրիստոնյաների համոզելով»: Նա նրանց ուզած քարոզիչն էր (հունական հռետորության ոճով):

■ **«եղբայրները գրեցին»** Մի եկեղեցուց մյուսին հանձնարարական նամակների մասին գրված են Հռոմ.16:1; 2 Կորնթ.3:1; 2 Հովհաննես թղթում: Վաղ շրջանի եկեղեցին այս կերպ խուսափում էր սուտ և քայքայիչ ուսմունքներ տարածող շրջիկ քարոզիչներից:

■ **«շատ օգնեց նրանց, որոնք հավատացել էին շնորհի միջոցով»** Այս արտահայտությունը կարելի է երկու կերպ հասկանալ.

1. սա վերաբերում է այն հավատացյալներին, որոնք արդեն շնորհքով փրկված էին (NASB, NKJV, NRSV, TEV)
2. սա խոսում է այն մասին, որ Աստված Ապողոսին Իր շնորհքով էր գորացրել (NJB)

Հիմնական ԲԱՅԸ՝ օգնեց (նպաստեց) ԱՌՐԻՍՏ ՉԵՉՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Ապողոսը օրհնություն էր:

«Հավատացել» ԴԵՐԲԱՅԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ է, որն ակնարկում է, որ նրանք արդեն հավատացյալներ էին: Ապողոսը Կորնթոսում գործում էր որպես աշակերտող և ոչ թե ավետարանիչ:

18:28 Ապողոսը կիրառում էր ՀԿ-ը ճիշտ այնպես, ինչպես Պետրոսը, Ստեփանոսը և Պողոսը: ՀԿ-ից ցույց տալը, որ Հիսուսն է Մեսիան, հանդիսանում է Գործք Առաքելոցում հրեաներին ուղղված քարոզների ընթացիկ բովանդակությունը (տե՛ս գրառում 17:3):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Պրիսկիլիան ՆԿ-ում այդքան հաճախ առաջինը նշվում:
2. Պողոսն ինչպե՞ս ծանոթացավ Պրիսկիլիայի և Ակյուղասի հետ: Ինչո՞ւ:
3. Պրիսկիլիան ու Ակյուղասը երբևէ վերադարձա՞ն Հռոմ: Ինչպե՞ս գիտենք այդ մասին:
4. Համեմատե՛ք Պողոսի և Ապողոսի քարոզելու ոճը:
5. Արդյո՞ք Ապողոսը Քրիստոնյա էր նախքան Ակյուղասին և Պրիսկիլիային այցելելը:

ԳՈՐԾՔ 19

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսը Եփեսոսում	Պողոսը Եփեսոսում	Պողոսի երկար ծառայությունը Եփեսոսում	Պողոսը Եփեսոսում	Հովհաննեսի աշակերտները Եփեսոսում
19:1-7	19:1-10	19:1-7	19:1-2ա 19:2 19:3 19:3 19:4 19:5-7 19:8-10	19:1-7 Եփեսոսում եկեղեցու հիմնադրումը
19:8-10		19:8-10		19:8-10
Սկևայի որդիները	Հրաշքները փառավորում են Քրիստոսին		Սկևայի որդիները	Հրեա դև քշողները
19:11-20	19:11-20	19:11-20	19:11-14 19:15 19:16-20	19:11-12 19:13-17 19:18-19 19:20
Խոռվություն Եփեսոսում	Խոռվություն Եփեսոսում		Խոռվություն Եփեսոսում	Պողոսի ծրագրերը
19:21-27	19:21-41	19:21-22	19:21-22	19:21-22 Եփեսոս. արձաթագործների խոռվությունը
		19:23-27	19:23-27	19:23-31
19:28-41		19:28-41	19:28-34 19:35-41	19:32-41

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտորոշյալ ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:1-7

¹Եվ եղավ, որ մինչ Ապողոսը Կորնթոսում էր, Պողոսը, որ շրջել էր վերին ծովեզրերից անցնելով, եկավ Եփեսոս և որոշ աշակերտներ գտնելով՝ նրանց ասաց.² «Երբ հավատացիք, արդյոք Սուրբ Հոգին էլ ընդունեցի՞ք»: Նրանք պատասխանեցին. «Մենք չենք էլ լսել, թե Սուրբ Հոգի կա»: ³Եվ նրանց ասաց. «Հապա ինչո՞վ եք մկրտվել»: Նրանք էլ ասացին. «Հովհաննեսի մկրտությամբ»: ⁴Եվ Պողոսն ասաց. «Հովհաննեսը ժողովրդին ապաշխարության մկրտությամբ էր մկրտում և ասում, թե՛ Նա, ով իր ետևից է գալու, Նրան հավատան, այսինքն՝ Քրիստոս Հիսուսին»: ⁵Երբ նրանք այս լսեցին, Տեր Հիսուս Քրիստոսի անունով մկրտվեցին: ⁶Եվ երբ Պողոսը ձեռքը դրեց նրանց վրա, Սուրբ Հոգին եկավ նրանց վրա, և նրանք լեզուներով էին խոսում և մարգարեանում: ⁷Եվ նրանք մոտ տասներկու հոգի էին:

19:1 «վերին ծովեզրեր» Սա վերաբերում է այլընտրանքային մի երթուղու՝ բարձրադիր (այսինքն՝ բարձրավանդակով անցնող) երկրի միջով և այն եկեղեցիների, որոնք Պողոսը սկսել էր Հարավային Գաղատիայում իր նախորդ միսիոներական ճամփորդության գործունեության ժամանակ:

■ **«Եփեսոս»** Մայրլ Մեգիլը, *ՆԿ Տրանս Լայն*, էջ՝ 413, #25, տեղեկատվական մի գրառում է ներկայացնում.

«Սա Ասիայի մայրաքաղաքն էր, որտեղ Պողոսին 16:6-ում արգելվեց գնալ: Նա այնտեղ կանգ առավ 18:19-21-ում՝ ծրագրելով վերադառնալ: Հիմա, արդեն 19:10-ում ավելի քան երկուսուկես տարի մնում է այս քաղաքում»:

■ **«աշակերտներ»** Տերմինը հուշում է, որ նրանք Հիսուս Մեսիային հավատացողներ էին (տես՝ հ. 2, «երբ հավատացիք» տես՝ Հատուկ Թեմա 3:16 և 6:5) Հովհաննես Մկրտչի պատգամի կամ հավանաբար Ապողոսի քարոզչության միջոցով:

Սուրբ Հոգին ըստ երևույթին Պողոսին ուղարկեց այս «վերին երթուղով» որպեսզի օգնի այս «աշակերտներին» ճանաչելու և վերապրելու ավետարանի կատարյալ ճշմարտությունը:

19:2 «արդյո՞ք Սուրբ Հոգին էլ ընդունեցիք» Այն փաստը, որ նրանք կոչվում էին «աշակերտներ» (հ. 1) և «երբ հավատացիք» հայտարարությունը ակնարկում են, որ նրանք հավատացյալներ էին: Այս հարցը կապ է հաստատում (1) մարդու հավատքի գալու պահին Սուրբ Հոգուն անձնապես ընդունելու (ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ և ԱՌՐԻՍՏ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ) և (2) Հոգու պատրաստման գործընթացի միջև, առանց որի ոչ ոք չէր կարող նույնիսկ հավատալ (տես՝ Հովհ.6:44,65; Հռոմ.8:9): Գոյություն ունեն Հոգու գործի մակարդակներ և փուլեր (տես՝ Գործք 8:11, 15-17): Գործք Առաքելոց գիրքն ինքնին պետք է զգուշացում հանդիսանա ժամանակակից մեկնաբանների համար չլինել դոգմատիկ փրկության «անհրաժեշտ» տարրերի և հաջորդականության մեջ: Գործքն արձանագրում է այն, ինչ տեղի է ունեցել և ոչ թե այն ինչ պետք է ամեն անգամ տեղի ունենա: Փրկությունը անձնական փոխհարաբերություն է, որի մեջ ներգրավված է մարդու ամբողջ անհատականությունը, բայց հաճախ փոխհարաբերության խորանայուն և ավելի շատ տեղեկացված լինելուն զուգընթաց այն հետզհետե աճող փորձառության է վերաձվում: Տես Հատուկ Թեմա 2:40:

■ **«Մենք չենք էլ լսել, որ Սուրբ Հոգի կա»** Հովհաննեսի քարոզչությունը չէր կարող տալ հոգևոր արդյունք առանց Հոգու (տես՝ Հռոմ.8:6-11; 1 Կորնթ.12:3; 1 Հովհ.4:2): Հովհաննեսը իր քարոզների մեջ նշում էր Սուրբ Հոգուն (տես՝ Մատթ.3:11; Մարկ.1:8; Դուկ.3:16; Հովհ.1:32-33), սակայն պետք է հիշել, որ նրա պատգամը պատրաստության համար էր և ոչ թե իրականացում (տես՝ Ես.40:3; Մատթ.3:3): Հովհաննեսը ՀՎ-ի վերջին մարգարեն էր և անցումային քարոզիչը՝ Մեսիայի գալստյանը ճանապարհ պատրաստողը: Նա մարդկանց մատնացույց էր անում Հիսուսին (տես՝ Հովհ.1:19-42):

19:3 «Հապա ինչո՞վ եք մկրտվել» Նրանք Հովհաննեսի հետևորդներն էին: Ըստ երևույթին նրանք հավատարիմ էին մնացել իրենց ունեցած լույսին, սակայն Ապողոսի պես (տես՝ 18:24-28) կարիք ունեին Հիսուսի կյանքի, մահվան, հարության և համբարձման վերաբերյալ (այսինքն՝ Ավետարանի) ավելի շատ հստակեցումների:

19:3-4 «Հովհաննեսի մկրտությունը» Հովհաննեսի մկրտությունը ընդգրկում էր ապաշխարություն և սպասում (տես՝ Մատթ.3:11; Մարկ.1:15): Սակայն այն պետք է հանգուցալուծվեր Հիսուսին հավատալու միջոցով: Պատմությունից գիտենք, որ գոյություն ունեին մի քանի հերձվածող խմբեր, որոնք ձևավորվել էին առաջին դարում և պնդում էին, որ իրենք Հովհաննես Մկրտչի հետևորդներն են (*Կլեմենտի Հավատամքը*, գլուխ 60 /*Recognitions of Clement*): Այս իրադարձության արձանագրումը հնարավոր է եղել է Ղուկասի այս խմբերի ազդեցությունը արհամարհելու կերպը: Հովհաննեսի ծառայությունը իր անձից այն կողմ՝ Հիսուսին մատնացույց անելն էր (տես՝ Հովհ.1:19-42):

19:4 «Նրան հավատան» Տե՛ս Հատուկ Թեմա. Հավատայ 3:16 և 6:5:

19:5 «նրանք մկրտվեցին» Տե՛ս Հատուկ Թեմա 2:38:

■ **«Տեր Հիսուսի Քրիստոսի անունով»** Ղուկասը նկարագրում է մկրտությունը որպես «Հիսուսի անունով» (տես՝ 2:38; 8:12,16; 10:48): Տես Հատուկ Թեմա. Տիրոջ Անունը 2:21: Մատթեոսը նկարագրում է մկրտությունը որպես «Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով» (տես՝ Մատթ.28:19): Մկրտության բանաձևը փրկության համար կարևոր գործոն չէ, այլ մկրտվող մարդու սիրտը: Բանաձևը դիտարկել որպես կարևոր գործոն, նշանակում է սխալ տեղում շեշտադրում կատարել: Փրկությունը սրբազան ծեսի ճիշտ ու սխալ կատարելը չէ, այլ Հիսուսի հետ հավատքի և ապաշխարության փոխհարաբերության մեջ մտնել: Տե՛ս գրառում 2:38:

Ինչքանով, որ մեզ հայտնի է, Ապոդոսը, որը նույնպես գիտեր միայն Հովհաննեսի մկրտության մասին, նորից չմկրտվեց (չվերամկրտվեց): Հոգին հայտնապես ներկա էր նրա գորավոր քարոզչության և ուսուցանման մեջ:

19:6 «Պողոսը ձեռք դրեց նրանց վրա, Սուրբ Հոգին եկավ նրանց վրա» Ձեռնադրությունը հաճախ նշվում է Սուրբ Հոգու հետ կապված (տես՝ 8:16-17; 9:17), սակայն ոչ միշտ (տես՝ 10:44, տես՝ Հատուկ Թեմա 6:6): Աստվածաշունչը Հոգու առնչությունը հավատացյալի հետ երեք կերպով է ներկայացնում՝

1. հավատալու պահին
2. մկրտության պահին
3. ձեռնադրության պահին

Այս բազմազանությունը պետք է զգուշացում լինի մեր համար, որպեսզի այս հարցում չընկնենք դոգմատիզմի մեջ: Գործքի նպատակը չէ օրինաչափություններ որդեգրել սովորեցնելը, այլ Սուրբ Հոգու դինամիկ շարժումը նկարագրելը:

Ես պետք է ընդունեմ, որ զարմանալի է, որ Հովհաննեսի այս տասներկու աշակերտները լեզուներով էին խոսում: Սովորաբար Գործքում լեզուները վկայություն են հրեա քարոզիչ հավատացյալների համար, որ Աստված՝

1. ընդունել է մի նոր խմբի կամ
2. վերացրել է աշխարհագրական խոչընդոտը՝ սահմանը (տես ամբողջական գրառումը 2:4բ-ում)

Ի՞նչ նոր խումբ էին այս մարդիկ ներկայացնում: Նրանք արդեն իսկ աշակերտներ էին (տես՝ հ.1): Ինչո՞ւ էր Ղուկասը այս դեպքն ընտրել արձանագրելու համար: Նա որոշում է ծանոթացնել այն Ապոդոսի հետ 18-րդ գլխում: Սա իրականում չի համապատասխանում օրինաչափությանը, որը հավանաբար նշանակում է, որ ժամանակակից մեկնաբանները փորձում են հարմարվել ինչ-որ ձևի կամ գրաֆիկի մեջ Ղուկասի գրածների շուրջ, որոնք այդպես էլ չեն համապատասխանում: Հնարավոր է լեզուներով խոսելու այս դեպքը շատ նման է Կորնթոսի դեպքերի հետ:

Հետաքրքիր բազմազանություն կա Սուրբ Հոգու անհատներին մոտենալու ՆԿ-յան նկարագրություններում՝

1. եկավ վրան (*erchomai plus epi*), տես՝ Մատթ.3:16; Ղուկ.19:6 [պարզապես *epi*, 2:25]
2. մկրտվեցին, տես՝ Մատթ.3:11; Մարկ.1:8; Ղուկ.3:16; 11:16; Հովհ.1:33; Գործք 1:5
3. իջավ վրան, տես՝ Մատթ.3:16; Մարկ.1:10; Ղուկ.3:22
4. գալիս էր վրան (*eperchomai* և *epi*), տես՝ Ղուկ.1:35; Գործք 1:8
5. լցվեցին, տես՝ Ղուկ.1:15,41,67; Գործք 2:4; 4:8,31; 9:17; 13:9,52
6. թափվեց (*ekcheō*), տես՝ Գործք 2:17-18,33; 10:45; Տիտ.3:6
7. ընդունեցին, տես՝ Գործք 2:33,38; 8:15,17,19; 10:47; 19:2
8. տրվեց, տես՝ Գործք 5:32; 10:45; 15:8
9. ընկավ վրան (*epiptō*), տես՝ Գործք 8:16; 10:44; 11:15

■ **«և մարգարեանում»** Այս տերմինն ունի ՀԿ-յան էքստագիկ հիացական վարվելակերպի նշանակություն (տես՝ 1 Թագ.10:10-12; 19:23-24): Համատեքստն ինքնին նպաստում է մեկնարանությունը: Սակայն այս տերմինը 1 և 2 Կորնթացիներում (տես՝ 1 Կորնթ.11:4,5,9; 14:1,3,4,5,24,31,39) արտահայտում է ավետարանի համարձակ քարոզչությունը: Դժվար է սահմանել ՆԿ-ի մարգարեությունը: Քանի որ Սուրբ Հոգու լեցունությունը հաճախ կապվում է ավետարանի համարձակ քարոզչության հետ, հնարավոր է այս համատեքստի մտադրությունն էլ լինի հենց սա: Տե՛ս Հատուկ Թեմա. ՆԿ-յան Մարգարեություն 11:27:

19:7 «Եվ նրանք մոտ տասներկու հոգի էին» Տասներկուսը Աստվածաշնչում հաճախակի կիրառվող սիմվոլիկ թվերից մեկն է, սակայն այստեղ կարծես թե այն պատմական ճշգրտությամբ է: Տե՛ս Հատուկ Թեմա. Տասներկու Թիվը 1:21 և Սուրբ Գրքում առկա Սիմվոլիկ Թվերը 1:3-ում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:8-10
⁸Եվ նա ժողովարան մտնելով համարձակորեն խոսում էր նրանց, երեք ամիս շարունակ Աստծո Թագավորության մասին քարոզում ու համոզում նրանց: ⁹Եվ երբ ոմանք սրտները խստացրին ու չէին հավատում՝ բազմության առաջ վատաբանելով այդ ճանապարհը, նա նրանցից բաժանվեց, աշակերտներին անջատեց և ամեն օր խոսում էր Տյուրան անունով մեկի դպրոցում: ¹⁰Եվ սա տևեց մոտ երկու տարի, այնպես որ Ասիայի բոլոր բնակիչները՝ հրեաները և հույները, Տեր Հիսուսի Խոսքը լսեցին:

19:8 «նա ժողովարան մտնելով» Սա նրա օրինաչափությունն էր (տես՝ 9:20; 13:5,14; 14:1; 17:2,10; 18:4,19,26)

■ **«համարձակորեն խոսում էր»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՉԵՉՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այն «Հոգով լցվելու» արդյունքներից մեկն էր (տես՝ 4:13,29,31; 9:28,29; 14:3; 18:26): Պողոսն այս բանի համար աղոթում է Եփես.6:19-ում:

■ **«երեք ամիս»** Ըստ երևույթին Եփեսոսում գտնվող ժողովարանը թույլ տվեց Պողոսին քարոզել, սովորեցնել և քննարկել նրանց հետ Շաբաթներ շարունակ: Սա ինքնին ցույց է տալիս ավետարանի համար նրանց բաց լինելը և Պողոսի աստվածատուր կարողությունների երախտիքի տուրքն էր:

■ **«Աստծո թագավորությունը»** Հիսուսի քարոզչության կենտրոնական թեման է: Այն վերաբերում է Աստծո թագավորությանը մարդկանց կյանքերում հիմա, որը մի օր կտարածվի ամբողջ աշխարհով, այնպես ինչպես երկնքում է (տես՝ Մատթ.6:10): Տե՛ս Հատուկ Թեմա 1:3:

19:9 «ոմանք սրտները խստացրին ու չէին հավատում /անգլ.՝ չէին հնազանդվում/» Բոլոր նրանք, որ լսում են ավետարանը ընտրության առջև են (տես՝ 17:32,34): Այս բանը Սերմնացանի Առակն է արտացոլում (տես՝ Մատթեոս 13; Մարկոս 4): Սա անօրինության առեղծվածն է (տես՝ 2 Կորնթ.4:4):

«խստացրին» տերմինը (*sklērunō*) ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, որն արտահայտում է գործողության սկիզբ կամ անցյալ ժամանակում կատարված գործողության կրկնություն: Սա հենց այն նույն բառն է, որ կիրառվում է Հռոմ.9:18-ում նկարագրելու Աստծո կողմից Իսրայելի սիրտը խստացնելը, ինչպես նաև կրկնվող ԲԱՅՐ Երբայեցիների 3 և 4-ում (տես՝ 3:8,13,15; 4:7), որը առնչվում է Իսրայելի խստասրտությանը՝ Անապատում Դեգերելու ժամանակաշրջանում: Աստված ակտիվորեն զբաղված չէ մարդկանց սրտերը խստացնելու գործով, որոնց Նա սիրում է և ստեղծել է Իր պատկերով, այլ Նա թույլ է տալիս, որ մարդկային ապստամբությունը իրեն դրսևորի (տես՝ Հռոմ.1:24,26,28), իսկ անձնական չարը՝ ազդի Իր արարածների վրա (տես՝ Եփես.2:1-3; 4:14; 6:10-18):

■ **«բազմության առաջ վատաբանելով այդ ճանապարհը»** Ավետարանը արմատապես այնքան շատ է տարբերվում հուդայականության բացառիկության և վարքակենտրոն մտածելակերպից, որ եթե ավետարանի հիմնական առանձնահատկությունները անտեսվեին, ապա ոչ մի հնարավորին ընդհանրություններ չէին լինի:

Ագրեսիվ հրեաների կողմից ավետարանի հանդեպ հակառակությունը Ղուկասի արձանագրած ընթացիկ օրինաչափությամբ շարունակվում էր (տես՝ 13:46-48; 18:5-7; 19:8-10; 28:23-28):

■ **«Ճանապարհը»** Տե՛ս Հատուկ Թեմա 18:25 և 19:23:

■ **«Տյուրան անունով մեկի դպրոցում»** Հինգերորդ դարից Բիզելի Կողեքս D-ում ավելացված է, որ Պողոսը սովորեցնում էր առավոտյան ժամը 11-ից մինչև ժամը 4-ը, երբ քաղաքի մեծ մասը հանգստյան

ժամերի մեջ էր և կառույցը ազատ էր օգտագործման համար: Հնարավոր է սա բանավոր ավանդույթից հասած տեղեկություն է: Պողոսն աշխատում էր իր գործի համար սովորական աշխատանքային ժամերին և ապա օրվա մնացած ժամանակաընթացքում սովորեցնում (տես՝ 20:34):

Մի քանի տեսություններ են եղել Տյուրանի ինքնության շուրջ՝

1. Նա փիլիսոփայության և հռետորության ուսուցիչ էր (sophist), ինչպես նշում է Սուիդասը (Suidas): Սուիդասը գրել է տասներորդ դարում, սակայն գործածել է հեղինակավոր աղբյուրներ դասական ժամանակներից: Նրա գրական աշխատանքը կարծես լինի քաղաքական, գրականական և եկեղեցական անձանց հանրագիտարան:
2. Նա հրեա ռաբբի էր (Meyer), որը ղեկավարում էր Մովսեսի օրենքը սովորեցնող մասնավոր մի դպրոց, սակայն այս պաշտոնը հաստատող գրի առնված ոչ մի ապացույց չկա:
3. Սա մի կառույց էր՝ շենք, որը սկզբում եղել էր զիմնագիտ, սակայն հետագայում դասախոսության դահլիճ, որի սեփականատերն էր Տյուրանը կամ նրա պատվին էր այդպես անվանվել:

Պողոսը պետք է հեռանար ժողովարանից և ըստ երևույթին քանի որ շատ նորադարձներ կային և տանը հավաքվել հնարավոր չէր, ուստի նա վարձակալեց դասախոսության այս դահլիճը: Սա առիթ եղավ նրա համար Եփեսոսի բնակչության հետ որոշակի կապի մեջ մտնելու:

19:10 «երկու տարի» 20:31-ում Պողոսը հայտարարում է նահանգում նրա անցկացրած ամբողջ ժամանակը (երեք տարի):

■ **«Ասիայի բոլոր բնակիչները ... լսեցին»** Սա ակնհայտ չափազանցություն է: Հիսուսը հաճախ էր խոսում չափազանցության խոսքով: Սա պարզապես արևելյան գրականության դարձվածքաբանական խոսքի մի ձև է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեծ Պատկերը՝ աստվածաշնչյան պարադոքսները (ինքնահակասությունները)

1. Այս պատկերացումը եղել է ամենաօգտակարը անձամբ ինձ համար, որպես մեկի, որը սիրում և վստահում է Աստվածաշնչին որպես Աստծո Խոսքը: Աստվածաշունչը լուրջ ընդունելու փորձ կատարելիս հայտնաբերեցի, որ տարբեր տեքստեր ճշմարտությունը հայտնում են հատրնտիք և ոչ թե համակարգված ճանապարհով: Մի ներշնչված տեքստը չի կարող չեղարկել կամ թերագնահատել մեկ այլ ներշնչանքով գրված տեքստ: Ճշմարտությունը բացահայտվում է ամբողջ Սուրբ Գիրքը իմանալու (ամբողջ Գիրքը, ոչ թե պարզապես որոշ մասը, ներշնչված է՝ Աստվածաշունչ է. տես՝ 2 Տիմ.3:16-17), և ոչ թե միայն մի հատված մեջբերելու արդյունքում (տեքստային ապացույց):
2. Աստվածաշնչյան ճշմարտությունների մեծ մասը (արևելյան գրականություն) ներկայացվում են բարբառային կամ պարադոքսալ զույգերով (հիշեք ՆԿ-յան հեղինակները, բացի Ղուկասից, եբրայերենով էին մտածում, սակայն բոլորն էլ գրում էին հունարեն լեզվով: Իմաստասիրական գրականությունը և Պոետիկ Գրականությունը ներկայացնում են ճշմարտությունը զուգահեռ մակարդակների վրա: Հակաթեոսիկ զուգահեռները գործում են պարադոքսի պես: Այս սինթետիկ զուգահեռները գործում են որպես զուգահեռ՝ համագոր տեքստեր): Ինչ-որ առումով երկուսն էլ հավասարապես ճիշտ են: Այս պարադոքսները ցավոտ են մեր փայփայած, պարզամիտ ավանդույթների համար:
 - ա. նախասահմանությունը ի հակադրություն մարդու ազատ կամքի
 - բ. հավատացյալի ապահովությունը ի հակադրություն հարատևության անհրաժեշտության
 - գ. սկզբնական՝ առաջին մեղքը ի հակադրություն հոժարակամ մեղքի
 - դ. Հիսուսը որպես Աստված ի հակադրություն Հիսուսը որպես մարդ
 - ե. Հիսուսը որպես Հորը հավասար ի հակադրություն Հիսուսը որպես Հորը ենթակա անձ
 - զ. Աստվածաշունչը որպես Աստծո Խոսք ի հակադրություն մարդկանց միջոցով գրվելու
 - է. անմեղությունը (կատարելությունը, տես՝ Հռոմ. 6) ի հակադրություն քիչ մեղք գործելուն
 - ը. սկզբնական անմիջական արդարացումը և սրբագործումը ի հակադրություն աստիճանաբար սրբագործման ընթացքի
 - թ. հավատքով արդարացումը (Հռոմեացիների 4) ի հակադրություն գործերով հաստատված արդարացման (տես՝ Հակ.2:14-26)
 - ժ. Քրիստոնեական ազատությունը (տես՝ Հռոմ.14:1-23; 1 Կորնթ.8:1-13; 10:23-33) ի հակադրություն Քրիստոնեական պատասխանատվության (տես՝ Գաղ.5:16-21; Եփես.4:1)
 - ի. Աստծո գերբնական ամենուր լինելու բնությունը ի հակադրություն Նրա մեր մեջ բնակվելու բնության

- լ. Աստված որպես ամենաանճանաչելի ի հակադրություն Աստծո, որին կարող ես ճանաչել Սուրբ Գրքի և Զրիստոսի միջոցով
- իւ. Փրկության համար Պողոսի կիրառած փոխաբերությունները՝
 - (1) որդեգրություն
 - (2) սրբացում
 - (3) արդարացում
 - (4) փրկագործում
 - (5) փառավորում
 - (6) նախասահմանություն
 - (7) հաշտություն
- ծ. Աստծո ներկայիս Արքայությունը ի հակադրություն ապագա վախճանի
- կ. ապաշխարությունը որպես Աստծո պարգև ի հակադրություն ապաշխարության, որը փրկության համար լիազորված պատասխան է (տես՝ Մարկ.1:15; Գործք 20:21)
- հ. ՀԿ-ը մշտական է ի հակադրություն ՀԿ-ը անցավ և այժմ անարժեք է և անիմաստ (տես՝ Մատթ.3:17-19 ընդ. 5:21-48; Հռոմեացիների 7 ընդ. Գաղատացիների 3)
- ձ. հավատացյալները ծառաներ են՝ ստրուկներ, թե՛ որդիներ՝ ժառանգներ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:11-20

¹¹Եվ Աստված նշանավոր հրաշքներ էր կատարում Պողոսի ձեռքով: ¹²Մինչև անգամ նրա մարմնի վրայից թաշկինակներ ու գոգնոցներ էին տանում հիվանդներին, և ցավերը հեռանում էին նրանցից, և չար ոգիները դուրս էին գալիս: ¹³Եվ թափառական հրեաներից ոմանք, որ երդվեցնողներ էին, հանդգնեցին Տեր Հիսուսի անունը կանչել չար ոգիներ ունեցողների վրա և ասել. «Ձեզ երդվեցնում ենք Հիսուսով, որին Պողոսն է քարոզում»: ¹⁴Եվ այս բանն անողները հրեա և գլխավոր քահանա Սկևայի որդիներն էին: ¹⁵Իսկ չար ոգին պատասխանեց և ասաց. «Հիսուսին ճանաչում եմ ու Պողոսին գիտեմ, իսկ դուք ո՞վ եք»: ¹⁶Եվ այն մարդը, ում ներսում էր չար ոգին, նրանց վրա հարձակվելով, բռնեց նրանց, գետին տապալեց, հաղթահարեց, մինչև նրանք մերկ և վիրավոր փախան այդ տնից: ¹⁷Եվ այս բանը հայտնի դարձավ Եփեսոսում ապրող բոլոր հրեաներին ու հույներին: Եվ նրանց բոլորին մի վախ պատեց, և Տեր Հիսուսի անունը մեծարվում էր: ¹⁸Եվ շատերը, որ հավատացին, գալիս, խոստովանում ու պատմում էին իրենց արարքները: ¹⁹Եվ կախարդության հետևողներից շատերը բերում էին իրենց գրքերը և բոլորի ներկայությամբ այրում: Եվ դրանց գինը հաշվելով՝ իմացան, որ հիսուն հազար արծաթ արժեք: ²⁰Եվ այդպես Տիրոջ Խոսքը զորությամբ աճում և ընդունվում էր:

19:11 Սա առաջին անգամը չէր, որ Աստված գործածում էր արտասովոր հրաշքներ՝ հաստատելու Իր ճշմարտությունը և Իր Խոսքը խոսողին (տես՝ 3:1-10; 5:15; 8:6,13; 9:40-42; 13:11-12; 14:8-11): Մնտիապաշտությունն ու օկուլտիզմի ծիսակարգերը լայն տարածում էին գտել և արմատացել Եփեսոսում: Գթառատ Աստված, թույլ տվեց Իր Մեսիայի մեջ բնակվող Իր գերբնական զորությունը և իշխանությունը՝ Իր, դրսևորվի Պողոսի միջոցով այս սատանայի կապանքների մեջ ապրող մարդկանց: Օ, Աստծո ողորմությունը:

19:12 «թաշկինակներ» Սրանք հավանաբար աշխատելիս իրենց գլուխներին կապելու գլխաշորեր էին:

■ **«գոգնոցներ»** Սա վերաբերում է աշխատանքային գոգնոցին, հյուսնի գոգնոցների պես մի բան: Այս բժշկությունները ցույց էին տալիս Աստծո ողորմությունը, զորությունը և հիմնավորում Ավետարանը և Պողոսի ծառայությունը:

■ **«չար ոգիները դուրս էին գալիս»** Այստեղ այս դևերը (տես՝ Ղուկ.10:17) կոչվում են «չար ոգիներ» (տես՝ Մատթ.12:45; Ղուկ.7:21; 8:2; 11:26; Գործք 19:12,13,15,16): Սակայն Ղուկասը նրանց նաև կոչում է «պիղծ ոգիներ» (տես՝ 5:16; 8:7. տես՝ Հատուկ Թեմա 5:3 և 5:16): Գործք 16:16-ում դևը կոչվում է «հարցուկ հոգի» (python): Բոլոր այս արտահայտությունները կարծես թե հոմանիշներ են:

Պողոսը հաճախ էր խոսում դիվական դասակարգումների մասին, ինչպես «ամեն մի իշխանություն ու զորություն, և կարողություն ու տերություն» (Եփես.1:21), «երկնային տեղերում եղող իշխանություններին և զորություններին» (Եփես.3:10) կամ «իշխանությունների դեմ, զորությունների դեմ, այս աշխարհի խավարի իշխանների և բարձր տեղերում եղող հոգևոր չարության դեմ» (Եփես.6:12): Սրանք պետք է, որ վերաբերեն ինչ-որ կարգային աստիճան ունեցող կազմակերպված դիվական ոգիների: Սակայն ինչպես, ինչու, որտեղ և ովքեր հարցերը բոլորն են մտահայեցողական են, քանի որ Աստվածաշունչը չի կամենում հայտնել հոգևոր տերությունների մանրակրկիտ բնութագրությունը: Այն

հստակ հայտնում է Քրիստոսի իշխանությունը (և Իր Առաքյալների) Սատանայի, խավարի թագավորության ու մահվան վրա: Հիսուսի անունը բարձր է բոլոր անուններից: Նրան ճանաչելը բերում է փրկություն, խաղաղություն, լիարժեքություն, վերականգնում և առողջություն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՃՏԱԿՆԵՐԸ ՊՈՂՈՍԻ ԹՂԹԵՐՈՒՄ

Ռաբբիները կարծում էին, որ հրեշտակները նախանձում էին մեղավոր մարդկությանը, իրենց հանդեպ Աստծո սիրո և ուշադրության համար, ուստի թշնամաբար էին վերաբերվում նրանց: Գնոստիկ կեղծ վարդապետները պնդում էին, որ փրկությունը միայն հասանելի էր՝ հնարավոր էր այդ թշնամի հրեշտակների գաղտնի ծածկագրերի միջոցով (տես՝ Կողոսացիների և Եփեսացիների թղթերը), որոնք առաջնորդում էին դեպի բարձրյալ աստծո մոտ:

Ջորջ Էլդոն Լեդը իր *Նոր Կտակարանի Աստվածաբանություն* (George Eldon Ladd *A Theology of the New Testament*) գրքում ներկայացնում է Պողոսի կողմից իր թղթերում հրեշտակների համար կիրառված տերմինների գեղեցիկ ամփոփում՝

«Պողոսը նկատի ունի ոչ միայն բարի և չար հրեշտակներին՝ Սատանային և դևերին. նա կիրառում է բառերի մեկ այլ խումբ, պատկերելու հրեշտակ հանդիսացող հոգիների կարգերը: Տերմինաբանությունը հետևյալն է՝

«իշխանություն» [arche] 1 Կորնթ.15:24; Եփես.1:21; Կող.2:10

«իշխանություններ» [archai; RSV, «տերություններ»] Եփես.3:10; 6:12; Կող.1:16; 2:15; Հռոմ.8:38

«Հեղինակություն» [exousia] 1 Կորնթ.15:24; Եփես.1:21; Կող.2:10

«Հեղինակություններ» [exousiai, RSV, «իշխանություններ» /փոքրատառով/] Եփես.1:21

«Չորություն» [dynamis], 1 Կորնթ.15:24; Եփես.1:21;

«Չորություններ» [dinameis] Հռոմ.8:38

«Գահեր» [thronoi] Կող.1:16

«Տերություն» [kyriotes; RSV «տիրակալություն»] Եփես.1:21

«Տերություններ» [kyriotetes] Կող.1:16

«Այս խավար աշխարհի իշխանները» Եփես.6:12

«Բարձր տեղերում եղող հոգևոր չարություն» Եփես.6:12

«Խավարի իշխանությունը» Կող.1:13

«Ամեն անուն, որ անուն է առել» Եփես.1:21

«Երկնավոր, երկրավոր և ստորգետնյա՝ սանդարամետական էակներ» Փիլ.2:10 (էջ՝ 401)

19:13-16 «Հրեա եղվեցնողներ՝ /անգլ.՝ դև քշողներ/» Հրեա եղվեցնողները մեծ տարածում ունեին (տես՝ Ղուկ.11:19): Այս համատեքստը հստակ ցույց է տալիս, որ դև քշելը ինչ-որ կախարդական բանաձև չէ (անուններ), այլ Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն: Եթե այս պատմությունը այսքան տխուր ավարտ չունենար, այն նույնիսկ ծիծաղելի կլիներ: Ջոզեֆուսը պատմում է դև քշելու մի հրեական ծիսակարգի մասին *Հնություններ* 8.2.5-ում՝ ոմն Եղիազարի կողմից, որը կիրառում էր Սողոմոնի հնայությունները:

19:13 «չար ոգիներ» Սա վերաբերում է դիվականին: ՆԿ-ը հաճախ է խոսում այս հոգևոր իրողության մասին, սակայն չի վերլուծում դրա ծագումը կամ մանրամասները դրա կազմակերպման կամ գործունեության մասին: Հետաքրքրությունը, վախը և գործնական ծառայության կարիքները շատ չարաշահումների պատճառ են հանդիսացել: ՆԿ-ում թվարկված պարզևների մեջ երբեք չեք գտնի դև քշելու պարզև, սակայն անհրաժեշտությունը ակնհայտ է: Ահա այս թեմայի շուրջ մի քանի օգտակար գրքեր՝

1. *Քրիստոնեական Խորհրդատվություն և Օկուլտիզմ*, Քոչ /*Christian Counseling and the Occultism* by Kouch/
2. *Աստվածաշնչյան Դիվաբանություն և դևերն այսօր աշխարհում*, Յունգեր /*Biblical Demonology and Demons in the World Today* by Unger/
3. *Իշխանություններ և Չորություններ*, Սոնթգոմերի /*Principalities and Powers* by Montgomery
4. *Քրիստոսը և Չորությունները*, Հենրիկ Բերխով /*Christ and Powers* by Hendrik Berkhof/
5. *Երեք կարևոր հարց հոգևոր պատերազմի շուրջ*, Բլինթոն Ի. Առնոլդ /*Three Crucial Questions About Warfare* by Clinton E. Arnold/

Տես Հատուկ Թեմա. Դիվականը, 5:16:

19:14 «Հրեա և գլխավոր քահանա Սկևա» Ժամանակակից գիտնականները չեն կարողանում այս անունը մեկ ուրիշ գրության մեջ գտնել: Որևէ հրեայի համար խնդրահարույց էր լինել Եփեսոսում որպես քահանա (*archiereus*): Տեղական ժողովարանը կար, սակայն միակ հրեական տաճարը Երուսաղեմում էր: Ղուկասը այս նույն բառը Ավետարանում և Գործքում մի քանի անգամ կիրառում է Քահանայապետի և Երուսաղեմում գտնվող նրա ընտանիքի համար:

Ոմանք ենթադրում են, որ այս մարդը ինչ-որ կերպ կապված է եղել Քահանայապետի ընտանիքի հետ, կամ հավանաբար Դավթի կողմից նշանակված քահանայական քսանչորս կարգերից մեկի գլխավորը՝ ղեկավարը (տես՝ 1 Մնաց.24:7-19):

Եթե այս մարդն ու իր որդիները քահանաներ էին, զարմանալի է, որ նրանք չկիրառեցին ՅԱՀՎԵի գորավոր անունը վերահսկելու այդ ոգիներին, ինչպես անում են կախարդներն ու օկուլտիզմով զբաղվողները:

19:15 «Հիսուսին ճանաչում են ու Պողոսին գիտեն» Այս առաջին ԲԱՅԸ *ginōskō* է, իսկ երկրորդը՝ *epistamai*: Նրանք ինչ-որ առումով հոմանիշներ են: Երկուսն էլ Գործքում հաճախ են գործածվում, սակայն այս համատեքստում պարզ է, որ տարբերություն կա այս դևի Հիսուսին որպես Քրիստոսը ճանաչելու և Պողոսի՝ Հիսուսի պատգամաբերի, Քրիստոսին ճանաչելու միջև:

19:17 Ղուկասն արձանագրում է այս դեպքը ցույց տալու, թե ինչպես է Հոգին մեծարում (ԱՆԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) Հիսուսին (տես՝ Հովհ.14:25; 16:13-14):

19:18 «և շատերը, որ հավատացին /անգլ.՝ հավատացել էին/» Սա անգլերենում ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Հարցն այն է, թե այս հավատացյալները օկուլտիզմի՞ն հավատացողներն էին, թե այս արտահայտությունը վերաբերում է Ավետարանի հանդեպ ունեցած նրանց նոր հավատքին: Նաև հնարավոր է, որ Ավետարանի այս նոր հավատացյալները սկզբնական շրջանում դեռևս իրենց հին սնտոիապաշտությունների ազդեցության ներքո էին: Տես Հատուկ Թեմա. Փրկության համար հունարեն քայի ժամանակները, 2:40:

Նախկին օկուլտիստները հնարավոր է հհ. 13-16-ում տեղի ունեցած հրեա դև քշողների հետ պատահածի միջոցով համոզվեցին: Այս իրադարձության պատգամը, որը ցույց է տալիս Հիսուսի անձի, անվան գորությունը, արագ տարածվեց (տես՝ հ. 17): Այս մարդիկ պետք է, որ քաջատեղյակ լինեին այդ «անվան» գորության մասին:

■ **«գալիս էին /անգլ.՝ շարունակ գալիս էին/»** Սա ԱՆԿԱՏԱՐ ՉԵՉՈՔ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է:

■ **«խոստովանում և պատմում էին իրենց արարքները»** Հնում Միջերկրական Ծովի շրջակայքի մարդիկ պարզապես ողողված էին օկուլտիզմով: Տարածված հավատամք կար, որ եթե մեկը հայտնում էր իր կախարդության գաղտնիքը՝ բանաձև, ապա այն կորցնում էր իր ազդեցությունը: Այս կերպ նրանք հրաժարվում էին իրենց անցյալի օկուլտիկ գործունեություններից: Հին աշխարհում «Եփեսացիների գիրք» կոչվող կախարդության մի հայտնի գրականություն կար: Այս դեպքը ցույց է տալիս ավետարանի գերակայությունը օկուլտիզմի վրա (տես՝ հ. 20):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Հունարենում խոստովանություն կամ դավանություն տերմինների համար կիրառվող այս նույն արմատից երկու տեսակ գոյություն ունի՝ *homologeō/exomologō*: Բաղադրյալ այս տերմինը կազմված է *homo`* միևնույն, *legō`* խոսել, և *ex`* ինչ-որ բանից դուրս: Հիմնական նշանակությունն է միևնույն բանը ասելը, համաձայնվելը: *Ex*-ը ավելացնում էր հանրորեն հռչակելու՝ հայտարարելու գաղափարը:

Բ. Այս բառախմբի անգլերեն թարգմանություններն են՝

1. փառաբանել
2. համաձայնել
3. հռչակել (տես՝ Մատթ.7:23)
4. դավանել
5. խոստովանել (տես՝ Եբր.4:14; 10:23)

Գ. Այս բառախումբն ունի երկու իրար թվացյալ հակասող կիրառություններ՝

1. փառաբանել (Աստծուն)
2. մեղքն ընդունել

Հնարավոր է սա ձևավորվել է մարդկանց կողմից Աստծո սրբության և իրենց մեղավորության հասկացողությունից: Գիտակցել առաջին ճշմարտությունը, նշանակում է գիտակցել երկուսն էլ:

Դ. Այս բառախմբի կիրառությունը ՆԿ-ում հետևյալն է՝

1. խոստանալ (տես՝ Մատթ.14:7; Գործք 7:17)
2. համաձայնել կամ զիջել ինչ-որ բան (տես՝ Հովհ.1:20; Ղուկ.22:6; Գործք 24:14; Եբր.11:13)
3. փառաբանել (տես՝ Մատթ.11:25; Ղուկ.10:21; Հռոմ.14:11; Եբր.13:15)
4. համաձայնեցնել՝
ա. անձի հետ (տես՝ Մատթ.10:32; Ղուկ.12:8; Հովհ.9:22; 12:42; Հռոմ.10:9; Փիլ.2:11; 1 Հովհ.2:23; Հայտ.3:5)
բ. ճշմարտության հետ (տես՝ Գործք 23:8; 1 Հովհ.4:2)
5. հանրության առջև հայտարարել (իրավական նշանակությունը վերածվել է կրոնական հիմնավորման, տես՝ Գործք 24:14; 1 Տիմ.6:13)
ա. առանց մեղքն ընդունելու (տես՝ 1 Տիմ.6:12; Եբր.10:23)
բ. մեղքն ընդունելով (տես՝ Մատթ.3:6; Գործք 19:18; Եբր.4:14; Հակ.5:16; 1 Հովհ.1:9)

19:19 «կախարհություն» Տես Հատուկ Թեմա 8:9:

«Գրքերը» (*biblos*) կարող է վերաբերել թե՛ մեծ գրքերի և թե՛ փոքր պապիրուսե գալարների, որոնց վրա գրված էին երդումներ կամ անեծքներ: Սրանք մարդիկ կրում էին որպես թալիսմաններ: Հսկայական արժեքը ապացույցն է այն բանի, թե (1) որքան սնտոհապաշտ էին այս մարդիկ և թե (2) ինչպես ավետարանը նրանց ազատագրեց:

■ **«և բոլորի ներկայությամբ այրում»** Սրանք շատ թանկարժեք և դժվար հայթայթվող գրքեր և մագաղաթներ էին: Դրանց այրումը այս նոր հավատացյալների հանրային ապաշխարության հավատքի դավանությունն էր Բրիստոսի հանդեպ և ոչ թե «գորությունների»:

19:20 Ավետարանի պատգամը անձնավորվում է (այսինքն՝ Տիրոջ Խոսքը) և ամփոփվում: Ղուկասի ամփոփումները օգնում են մեզ Գործքը բաժանել վեց բաժինների (տես՝ 6:7; 9:31; 12:24; 16:5; 19:20; 28:31):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:21-22

²¹Երբ այս բաները կատարվեցին, Պողոսը Հոգով մտադրվեց Մակեդոնիայի և Աքայայի միջով անցնելով Երուսաղեմ գնալ: Ու ասում էր. «Այնտեղ գնալուց հետո՝ պետք է որ Հռոմն էլ տեսնեմ»: ²²Եվ իր գործակիցներից երկուսին՝ Տիմոթեոսին և Երաստոսին ուղարկեց Մակեդոնիա, իսկ ինքը միառժամանակ մնաց Ասիայում:

19:21

NASB	«Պողոսը Հոգով մտադրվեց»
NKJV	«Պողոսը Հոգով մտադրվեց»
NRSV	«Պողոսը Հոգով որոշեց»
TEV, NJB	«Պողոսը մտադրվեց»
TEV (ժանդազրություն)	«Պողոսը, Հոգով առաջնորդված որոշեց»

Ահա Աստծո ամենակալության և մարդու ազատ կամքի համադրությունը: Հայտնի չէ, թե այս արտահայտության մեջ կիրառված «հոգի» տերմինը արդյոք վերաբերում է՝

1. Սուրբ Հոգուն, թե
2. մարդկային հոգուն (տես՝ 7:59; 17:16; 18:25; Հռոմ.1:9; 8:16; 1 Կորնթ.2:11; 5:4; 16:18; 2 Կորնթ. 2:11; 7:13; 12:18; Գաղ.6:18; Փիլ.4:23):

Եթե վերաբերում է Սուրբ Հոգուն, ապա սա աստվածային առաջնորդության ևս մի օրինակ է համադրված մարդու կողմից կատարած ճիշտ արձագանքի հետ:

Ղուկասը հաճախ կարճ մեկնաբանությամբ ծանոթացնում է այն դեպքերի հետ, որոնք ավելի ուշ տեղի էին ունենալու իր պատմության մեջ: Իհարկե հնարավոր է, որ Աստծո առաջնորդության արդյունքում էր Ղուկասը թողել Պողոսին, որպեսզի որոշի Երուսաղեմ գնալու համար (այսինքն՝ *die*, հ. 21; տես ամբողջական գրառումը, 1:16), և ոչ թե Դեմետրիոսի ապստամբության և Եփեսոսում արծաթագործների կողմից բարձրացված խռովության պատճառով (տես՝ հհ. 23-41):

■ **«պետք է, որ Հռոմն էլ տեսնեն»** Պողոսին պետք էր (*dei*) այցելել Հռոմի եկեղեցին (տես՝ 9:15; Հռոմ.1:10) Իսպանիայի ճանապարհին (տես՝ Հռոմ.15:24,28): Նա ուզում էր, որ նրանք ճանաչեն իրեն և աջակցեն իր միսիոներական գործին: Նա նաև ուզում էր իր օրհնությամբ՝ պարզևով օգտակար լիներ նրանց իրավիճակներում:

19:22 «Երաստոս» Հռոմ.16:23-ում այսպիսի անվամբ նշված մի մարդ կա: Նա կոչվում է Կորնթոս քաղաքի գանձապետը: Այս անվանը դարձյալ հանդիպում ենք 2 Տիմ.4:20-ում: Հնարավոր է այն վերաբերում է միևնույն մարդուն, սակայն դա հաստատված չէ:

■ **«ինքը միառժամանակ մնաց Ասիայում»** Ավետարանը փառավոր կերպով տարածվում էր նահանգով, իր ազդեցությունը թողնում մարդկանց վրա և դարձի բերում նրանց (տես՝ 1 Կորնթ.16:9):

NASB (Թ-ԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:23-27

²³Նույն ժամանակ ոչ փոքր խռովություն ծագեց այդ ճանապարհի մասին: ²⁴Քանի որ Գեմետրիոս անունով մի արձաթագործ, որ Արտեմիսի համար արձաթե մատուռներ էր շինում, քիչ շահ չէր բերում վարպետներին, ²⁵հավաքեց այդ բոլորին, նաև՝ նման գործ անողներին և ասաց. «Ո՛վ մարդիկ, դուք գիտեք, որ մեր շահը այս գործից է: ²⁶Եվ տեսնում ու լսում եք, որ այս Պողոսը ոչ միայն Եփեսոսում, այլ գրեթե ամբողջ Ասիայում շատերին համոզելով, իր կողմը գրավեց, ասելով, թե՛ ձեռքով շինվածները աստվածներ չեն: ²⁷Եվ այս բանը ոչ միայն մեր արհեստն է վտանգում, այլ նաև մեծ աստվածուհի Արտեմիսի տաճարն էլ պիտի արհամարհվի, և նրա մեծափառությունը պիտի կործանվի, ում ամբողջ Ասիան ու աշխարհն է պաշտում»:

19:23 «Ճանապարհը» Սա Քրիստոնեության համար ամենասկզբնական անվանումն էր: Այն խոսում է ՀԿ-յան (օր.՝ Սաղմ.1:1,6; 5:8; 25:4,8,9,12; 27:11; 37:5,7,23,34; 119:101, 105) հավատքի ապրելակերպի հասկացության մասին (տես՝ Գործք 9:2; 19:9,23; 22:4; 24:14,22; նաև հնարավոր է՝ 18:25-26):

19:24 «արձաթե մատուռներ» Սա վերաբերում է արձաթա փոքր պատկերների (1) Արտեմիսի Տաճարի տեսքով (2) բազմակուրծք կնոջ կերպարանքով մետեորիտի: Հնեաբանները գտել են այս աստվածուհու կերպարանքով բազմաթիվ արձաթա պատկերներ, սակայն մատուռների (հենց տաճարի) պատկերով նույնիսկ ոչ մեկը: Այն աշխարհի յոթ հրաշալիքներից մեկն էր: Տես գրառում 18:19, #4:

■ **«Արտեմիս»** Արտեմիսը, որին երկրպագում էին Եփեսոսում, պետք չէ նմանեցնել՝ նույնացնել Հռոմեական Պանթեոնի Դայանայի հետ: Այս աստվածուհին ավելի մոտ է Կիբելին՝ մայր աստվածուհուն: Այս աստվածուհու կրոնական ծիսակարգը շատ նմանություններ ունի Քանանի պտղաբերության պաշտամունքների հետ (տես՝ Մ. Ռ. Վինսենթ *Բարապիսի Ուսումնասիրություն*, հատ. 1, էջ՝ 271 /M. R. Vincent, *Word Studies*/):

■ **«քիչ շահ չէր բերում»** Այս հավաճանքն ուներ տնտեսական հիմք՝ պատճառ (տես՝ հհ. 25, 27): Տե՛ս ամբողջական գրառումներ՝ Ղուկասի դիտավորյալ նվազեցման վերաբերյալ (այսինքն՝ *litotes*) 12:18:

■ **«վարպետներ»** Այս հունարեն բառից ստանում ենք անգլերենի «տեխնիկ» /technician/ բառը: Հնագույն Միջերկրական աշխարհում վարպետների գիղգերը՝ համքարությունները, մեծ հոշակ ու կարողություն ունեին: Պողոսն էլ հնարավոր է եղել է վրանագործների համքարության անդամ:

19:26-27 Սա մեզ ընդհանուր պատկերացում է տալիս Ասիայում Պողոսի ծառայության հաջողության և ներթափանցման վերաբերյալ:

■ **«ձեռքով շինվածները աստվածներ չեն»** Սա արտացոլում է ՀԿ-յան կռապաշտության ունայնության հասկացությունը (տես՝ 2 Օր.4:28; Սաղմ.115:4-8; 135:15-18; Ես.44:9-17; Երեմ.10:3-11):

19:27 Առաջին դարի հունական գրականության մեջ գոյություն ունեն բազմաթիվ արձանագրություններ, որոնք նշում են եփեսացիների Արտեմիսին: Ըստ երևույթին Միջերկրական աշխարհում կային երեսունինը տարբեր քաղաքներ, որոնք մասնակից էին այս մայր աստվածուհու պտղաբերության պաշտամունքին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 19:28-41

²⁸Եվ նրանք, սա լսելով, բարկությամբ լցված աղաղակում էին ասելով. «Մեծ է եփեսացիների Արտեմիսը»: ²⁹Եվ ամբողջ քաղաքը խռովությամբ լցվեց: Եվ բռնելով Քայոս և Արիստարքոս մակեդոնացիներին՝ Պողոսի ուղեկիցներին, բոլորը միասին մինչև թատրոն վազեցին: ³⁰Իսկ երբ Պողոսն ուզեց ամբոխի մեջ մտնել, աշակերտները թույլ չտվին: ³¹Ասիայի մեծերից ոմանք, որ նրա բարեկամներն էին, լուր ուղարկեցին նրան, աղաչելով, որ չհամարձակվի թատրոն գնալ: ³²Եվ ամեն մեկը տարբեր բան էր աղաղակում, քանի որ ժողովուրդը շփոթված էր, և նրանցից շատերը չգիտեին, թե ինչի համար էին հավաքված: ³³Եվ բազմության միջից առաջ բերեցին Աղեքսանդրոսին, և երբ հրեաները նրան առաջ քաշեցին, Աղեքսանդրոսը ձեռքը շարժելով փորձում էր պատասխան տալ ժողովրդին: ³⁴Իսկ երբ իմացան, որ նա հրեա է, բոլորը միաբերան մոտ երկու ժամ աղաղակում էին, թե՛ մեծ է եփեսացիների Արտեմիսը: ³⁵Մակայն քաղաքի քարտուղարն ամբոխին հանդարտեցնելուց հետո ասաց. «Ո՛վ եփեսացիներ, ո՛վ է այն մարդը, որ չգիտե, թե եփեսացիների քաղաքը մեծն Արտեմիս աստվածուհու և Դիոսից իջած կուռքի երկրպագուն է: ³⁶Ուրեմն տեսնելով, որ այս բաների դեմ չի կարելի վիճել, հարկ է, որ դուք հանգիստ մնաք և անխոհեմ բաներ չանեք: ³⁷Մանավանդ, որ այս մարդիկ, ում բերել էք, ո՛չ մեզից կողոպտողներ են, և ո՛չ էլ ձեր աստվածուհուն հայիոյողներ: ³⁸Ուրեմն եթե Դեմետրիոսը և նրա հետ եղող վարպետները որևէ մեկի դեմ խնդիր ունեն, ատյանը բաց է, ու դատավորներ կան, թող միմյանց դեմ գանգատ անեն: ³⁹Իսկ եթե մի այլ բանի համար է ձեր խնդիրը, թող վճռվի օրինավոր ժողովում: ⁴⁰Որովհետև մենք նույնպես այս օրվա կռվի պատճառով որպես խռովարարներ ամբաստանվելու վտանգի մեջ ենք, քանի որ այս համախմբման համար ոչ մի բացատրություն չունենք»: ⁴¹Եվ այս ասելով ժողովրդին ցրեց:

19:28 Այս համարից կարող ենք տեսնել, թե հին աշխարհին ինչքան սերտորեն էր կապված կրոնի ու տեղական ավանդույթների հետ: Շատ մարդիկ իրենց առօրյա կյանքը ծրագրում էին համաձայն տեղական հեթանոսական տաճարների թելադրած ապրելակերպի:

■ **«մեծ է եփեսացիների Արտեմիսը»** Պողոսբերության այս աստվածուհին հաճախ կոչվում էր «Մեծն»: Հնարավոր է սա եղել է տաճարի պաշտամունքի կարգախոսը՝ լոգունգը:

19:29 «մինչև թատրոն վազեցին» Հռոմեական այս մեծ ամֆիթատրոնի ավերակները դեռ մնում են մեր օրերում էլ: Նրա տարողունակությունը 25 և 56 հազար մարդ էր (գնահատումների մեջ տարբերություններ կան):

■ **«բոլորը միասին»** Գործքը հաճախ է կիրառում «բոլորը միասին» արտահայտությունը, նկարագրելու հավատացյալների միաբանությունն ու ընկերությունը (տես՝ 1:14; 2:1,46; 4:24; 5:12; 8:6; 15:25), բայց նաև թե ինչպես չարը կարող է մարդկանց միաբանել (տես՝ 7:57; 12:20; 18:12): Միաբանությունն ինքնին նպատակ չէ: Միաբանության նպատակն է կարևորագույնը:

■ **«Քայոս»** Նա Դերբեից էր (տես՝ 20:4): Այս անունը շատ տարածված անուն էր, ուստի դժվար է որոշակի ինքնության սահմանումը (տես՝ 1 Կորնթ.1:14; 3 Հովհաննես 3):

■ **«Արիստարքոս»** Նա Թեսաղոնիկեից էր (տես՝ 20:4; 27:2; Կող.4:10-11; Փիլ.2:4):

19:30 «աշակերտները թույլ չտվեցին» Պողոսը ուժեղ կամքի տեր մարդ էր, այնուամենայնիվ նա թույլ տվեց այլ հավատացյալների ազդել իր մի քանի որոշումների վրա (տես՝ հ. 31):

19:31 «Ասիայի մեծերից ոմանք» Այս տերմինը նշանակում է «ընտրված տեղական կառավարման պաշտոնյաներ», սակայն մի քանի նշանակությամբ էր կիրառվում: Սա ևս մի տեխնիկական տերմին է տեղական քաղաքական պաշտոնյաների համար, որը Ղուկասն այդքան ճշգրտությամբ էր գործածում: Ըստ երևույթին նրանք նույնպես հավատացյալներ էին դարձել կամ առնվազն Պողոսի ընկերները: Դարձյալ Ղուկասը ցույց է տալիս, որ Քրիստոնեությունը սպառնալիք չէր տեղական կառավարման իշխանությունների համար: Այսպիսի համարները կասկածի տեղիք են տվել որոշ մեկնաբանների, ենթադրելու, որ Գործքը գրվել է Հռոմում Պողոսի դատի ժամանակ ընթերցվելու համար: Կրկին ու կրկին եկեղեցին ընդհարվում է հրեաների հետ, բայց ոչ իշխանությունների:

19:32 «ժողովուրդը» Սա միևնույն հունարեն բառն է (*ekklesia*), որն օգտագործվում է եկեղեցի բառի համար: Գործք 19:32,39 և 41-ում այն վերաբերում է քաղաքի մարդկանց՝ ժողովրդին:

Վաղ եկեղեցին ընտրեց այս տերմինը, քանի որ այն կիրառվում էր Սեպտուագինտայում «Իսրայելի ժողովրդի» համար: Տե՛ս Հատուկ Թեմա. Եկեղեցի (*ekklesia*) 5:11:

■ **«նրանցից շատերը չգիտեին, թե ինչի համար էին հավաքված»** Սա ամբոխին բնորոշ տեսարան էր:

19:33 «Ալեքսանդր» Տեղի հրեաները կամենում էին, որ մարդիկ հասկանային, թե իրենք տարբերվում են այս Քրիստոնյա շրջիկ միսիոներներից, սակայն դա հետադարձ ազդեցություն թողեց հենց իրենց վրա: Հայտնի չէ, թե արդյոք սա հենց այն նույն մարդն է, որ նշվում է 1 Տիմ.4:14-ում, սակայն 1 Տիմ.1:20-ը կասկածի տեղիք է տալիս:

■ **«ձեռքը շարժելով»** Սա իրենց մշակույթին հատուկ լռություն պահանջելու մի կերպ էր, որպեսզի խոսելու հնարավորություն ունենային (տես՝ 12:17; 13:16; 19:33; 21:40):

■ **«պատասխան տալ /պաշտպանել/»** Այս հունարեն տերմինից ենթ ստանում անգլերենի «apology» /պաշտպանություն, ներողություն/ տերմինը, որը վերաբերում էր իրավաբանական՝ օրինական պաշտպանությանը: Ղուկասն այս ԲԱՅԸ հաճախ էր կիրառում (տես՝ Ղուկ.12:11; 21:14; Գործք 19:32;24:10; 25:8; 26:1,2,24) և որպես ԳՈՅԱԿԱՆ Գործք 22:1 և 25:16-ում:

19:34 Սա ցույց է տալիս կամ (1) հունա-հռոմեական աշխարհի հակասեմիտիզմը կամ էլ (2) Պողոսի ծառայության դեմ այս ամբոխի ունեցած բարկությունը:

19:35 «քաղաքի քարտուղարը» Սա քաղաքացիական պաշտոնյա ղեկավար էր, որը հռոմեական իշխանության հետ կապի միջոց էր հանդիսանում հայտնի տաճարներ ունեցող այսպիսի քաղաքներում: Այս տերմինն է *grammateus*: Գործքում շատ հաճախ կիրառվում է հրեա դպիրների համար (տես՝ 4:5; 6:12; 23:9): Սեպտուագինտայում այն վերաբերում է եզիպտացի առաջնորդներին, որոնք ներկայացնում էին հաշվետվություններ ավելի բարձր իշխանություններին (տես՝ Ելից 5:6) և հրեա պաշտոնյաներին (տես՝ 2 Օր.20:5):

■ **«եփեսացիների քաղաքը մեծն Արտեմիս աստվածուհու /անգլ.՝ տաճարի պահպանն է/ երկրպագուն է»** Պահպան բառը տառացի «տաճարը մաքրողը» խոսքն է (*neōkos*, տաճարի պահակ): Սա դարձավ մի ահավոր տիտղոս, չնայած որ այն սկզբնապես վերաբերում էր տաճարի ամենացածր ծառաներին:

■ **«Գիոսից /անգլ.՝ երկնքից/ իջած կուռքի /անգլ.՝ պատկերի/»** Ըստ երևույթին այն մի մետեոր էր կնոջ կազմվածքով, որն ուներ շատ ստիքներ: Սա կատարյալ կուռք էր պտղաբերության պաշտամունքի համար: «Երկինք» տերմինը տառացի թարգմանությամբ նշանակում է «որը իջավ Չևսից (*dios*):»

19:37 Խռովության պատճառը իրական հիմքեր չուներ և, հետևաբար ենթակա էր հռոմեական դատական պատժամիջոցի (տես՝ հ. 40):

19:38-39 «թող միմյանց դեմ գանգատ անեն» Թող որ նրանք անցնեն բողոքների համար հատուկ նախատեսված դատական ընթացակարգով: Այս երկու համարները նաև ունեն երկու ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ նախադասություններ:

19:38 «դատավորներ» Գոյություն ունեին հռոմեական երկու տեսակի նահանգներ. մի տեսակը կառավարվում էր Կայսրի կողմից և մյուսը՝ Սենատի (*Augustus, Acts of Settlement, Բ. Ա. 27*): Հռոմեական նահանգները կառավարվում էին՝

1. սենատական նահանգները կառավարվում էին դատավորների կամ պրետորականների կողմից
2. կայսերական նահանգները կառավարվում էին լեգատուս՝ օրինական, պրո-պրետորականների՝ կողմից
3. մյուս ավելի փոքր կամ խնդրահարույց նահանգները տեղի առաջնորդների կողմից, սակայն հռոմեական կանոններով
4. պատվիրատու պետությունները՝ ինչպես օրինակ Պաղեստինը, կառավարվում էր տեղի առաջնորդների կողմից, սակայն սահմանափակումներով:

Եփեսոսը գտնվում էր սենատական նահանգների շարքում և այդ իսկ պատճառով ուներ «դատավոր»։ Դատավորները երեք անգամ են նշվում՝

1. Սերգիոս Պողոս, Կիպրոս, Գործք 13:7-8,12
2. Աննատես Գաղիոնը, Աքայիա, Գործք 18:12
3. հատուկ անունը չի նշվում, այլ միայն տիտղոսը, Գործք 19:38

19:39-41 «Ժողով» Սա *ekklesia* տերմինն է, որը կիրառվում էր հունական քաղաքային կառավարման կողմից՝ որպես քաղաքային ժողով: Այն սկսել է կիրառվել հավաքված եկեղեցու համար, քանի որ Սեպտուագինտայում այն թարգմանեց եբրայերենի «Ժողով» (*Qahal*) տերմինը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք հհ. 2-6 պետք է դիտարկվի որպես տեքստային ապացույց հանդիսացող հատված՝ ա. որոշ հավատացյալների համար վերամկրտության բ. ձեռնադրության համար, որպեսզի ստանան լեզուներով խոսելու հաջորդ օրհնությունը:
2. Մահմանեք մարգարեությունը (հ. 6):
3. Ինչո՞ւ է Գործքը արձանագրում Պողոսի և Ապողոսի հետ կապված, և Հովհաննես Մկրտչի տասներկու աշակերտների և Պողոսի հետ կապված պատմությունները:
4. Արդյո՞ք հհ. 11-12 բոլոր դարերի և մշակույթների համար նորմատիվ են հանդիսանում: Ինչո՞ւ և ինչո՞ւ ոչ:
5. Ինչո՞ւ դևեր քշելը ընդգրկված չէ հոգևոր պարզևների ցանկում:
6. Ինչո՞ւ հավատացյալներին այս թեմայի շուրջ ավելի շատ աստվածաշնչյան տեղեկություն չի տրվում:
7. Ո՞րն էր այս հրաշք հանդիսացող դեպքերի նպատակը (տես՝ հ. 17):

ԳՈՐԾՔ 20

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսի նամփոռոթյունը Մակեդոնիա	Ճամփորդություններ Հունաստանում	Վերջին այցը Հունաստան	Դեպի Մակեդոնիա և Աքայիա	Պողոսը հեռանում է Եփեսոսից
20:1-6	20:1-6	20:1-6	20:1-6	20:1-6
Պողոսի հրաժեշտի այցը Տրովադա	Ծառայություն Տրովադայում	Պողոսի վերադարձը Պաղեստին (20:7-21:14)	Պողոսի վերջին այցը Տրովադա	Տրովադա. Պողոսը հարություն է տալիս մի մեռած մարդու
20:7-12	20:7-12	20:7-12	20:7-12	20:7-12
Ճամփորդություն Տրովադայից դեպի Միլետոս	Տրովադայից դեպի Միլետոս		Տրովադայից դեպի Միլետոս	Տրովադայից դեպի Միլետոս
20:13-16	20:13-16	20:13-16	20:13-16	20:13-16
Պողոսը խոսում է Եփեսոսի երեցներին	Հորդոր Եփեսոսի երեցներին		Պողոսի հրաժեշտի խոսքը Եփեսոսի երեցներին	Հրաժեշտ Եփեսոսի երեցներին
20:17-24	20:17-38	20:17-18ա 20:18բ-24	20:17-24	20:17-18ա 20:18բ-21 20:22-24
20:25-35		20:25-35	20:25-31 20:32-35	20:25-27 20:28 20:29-32
20:36-38		20:36-38	20:36-38	20:33-35 20:36-38

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՎՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ա. Սա հանդիսանում է Պողոսի երրորդ միսիոներական ճամփորդության ժամանակ Մակեդոնիայում և Հունաստանում նրա ծառայության շատ համապարփակ ուստի և ինչ-որ տեղ շփոթեցնող ամփոփումը:
- Բ. Այս տարածքում Պողոսի ծառայությունը հասկանալու՝ խմբավորելու համար լավագույն միջոցը կլինի նրա նամակների՝ հատկապես 1 և 2 Կորնթացիների հետ խորհրդակցելը:
- Գ. Ղուկասը փորձում է մանրամասնել Պողոսի տեղափոխությունները՝ ճամփորդությունները, կիրառելով ժամանակացույցեր և տեղանուններ, սակայն դրանց համառոտ լինելը շփոթության պատճառ է հանդիսանում:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 20:1-6

¹Եվ խոռվությունը դադարելուց հետո Պողոսն աշակերտներին կանչեց, հրաժեշտ տվեց և դուրս եկավ, որ գնա Մակեդոնիա: ²Եվ այն կողմերում շրջելով և նրանց բազում խոսքերով հորդորելով՝ եկավ Հունաստան: ³Եվ այնտեղ երեք ամիս մնաց: Եվ երբ հրեաները որոգայթ պատրաստեցին նրա դեմ, երբ մտադիր էր դեպի Սիրիա նավարկել, որոշեց Մակեդոնիայով վերադառնալ: ⁴Եվ մինչ Ասիա նրա հետ էին գնում Սոպատրոս Բերիացին և թեսաղոնիկեցիներից՝ Արիստարքոսն ու Սեկունդոսը, Գայիոս Դերբացին, Տիմոթեոսը և ասիացիներից՝ Տյուքիկոսը և Տրոփիմոսը: ⁵Մրանք, առաջ գնալով, մեզ էին սպասում Տրովադայում: ⁶Եվ Բաղարջակերպ օրերից հետո նավով մեկնեցինք Փիլիպպեից և հինգ օրից եկանք նրանց մոտ՝ Տրովադա, որտեղ յոթ օր մնացինք:

20:1 «խոռվությունը դադարելուց հետո» Այս արտահայտությունը երկիմաստ է: Մրանով նա նկատի չունի, որ Պողոսը Դեմետրիոսի բարձրացրած ամպատամբության պատճառով անմիջապես հեռացավ Եփեսոսից: Պողոսը խոռվության պատճառով չհեռացավ, այլ իր ավետարանչության գործն ավարտելու պատճառով, ինչպես որ այդ մասին հենց Դեմետրիոսի հայտարարությունն է հստակ ձևակերպում (տես՝ 19:26):

■ **«Պողոսն աշակերտներին կանչեց, հրաժեշտ տվեց /անգլ.՝ հորդորեց/»** Պողոսը հոգ էր տանում թե՛ ավետարանչության և թե՛ աշակերտության համար (տես՝ հ. 2; Մատթ.28:18-20): Ավետարանը, թեև անձնապես է ընդունվում, դառնում է մի ընտանիք, որին ծառայել է հարկավոր (տես՝ 1 Կորնթ.12:7): Տեղի՝ նույն տեղանքի հավատացյալների նպատակը եկեղեցին էր:

20:2 «և այն կողմերում շրջելով» Սա հավանաբար վերաբերում է (1) Իլիրիկումին (տես՝ Հռոմ.15:19) կամ (2) Մակեդոնիայի քաղաքներին՝ Փիլիպպե, Թեսաղոնիկե և Բերիա:

■ **«եկավ Հունաստան»** Հունաստան (*Hellas*) նշանակում է Աքայիա հռոմեական նահանգը (տես՝ 19:21): Սա հիմնականում վերաբերում է Կորնթոս քաղաքին: Պողոսը այս շրջանում ուներ տևական ծառայություն: Այս ընթացքում նա գրել է Հռոմեացիներին ուղղված թուղթը՝ նամակը: Նա մտահոգված էր Կորնթոսում գտնվող եկեղեցու համար, ինչպես հստակ ցույց են տալիս 1 Կորնթ.16:5-9 և 2 Կորնթ.2:12-13 խոսքերը:

20:3 Այս համարը առնչվում է Պողոսի ճամփորդական ծրագրերի հետ: Հանգամանքների բերումով նա ստիպված էր լինում հաճախ դրանք փոփոխելու: Այս դեպքում Պողոսը մտածեց, որ անիմաստ էր (այսինքն՝ հրեաների կողմից որոգայթը) նավարկել ուխտագնացների նավով դեպի Երուսաղեմ, ուստի ճամփորդեց ցամաքային ճանապարհով:

■ **«հրեաները որոգայթ պատրաստեցին նրա դեմ, երբ մտադիր էր ... նավարկել»** Հավանաբար նա ծրագրել էր նավարկել Ուխտագնացների նավով, որը կանգ էր առնում ճանապարհին գտնվող բոլոր նավահանգիստներում, որպեսզի վերցնի հրեա ուխտավորներին տանելու Երուսաղեմի տոնակատարություններին:

■ «Սուպատրոս, Արիստարքոս, Սեկունդոս, Գայիոս, Տիմոթեոս, Տյուքիկոս, Տրոփիմոս» Այս մարդիկ հավանաբար տարբեր եկեղեցիներից էին, որոնք ուղարկվել էին Երուսաղեմի եկեղեցու համար Պողոսին դրամական օգնություն հասցնելու (տես՝ 1 Կորնթ.16:1-3; 2 Կորնթ.8-9):

1. Սուպատրոսը հավանաբար Հռոմ.16:21-ում նշված Սուսիպատրոսն է:
2. Արիստարքոսը նշվում է Գործք 19:29; 27:2 և Կող.4:10-ում:
3. Տյուքիկոսը նշվում է Եփես.6:21-22; Կող.4:7-8; 2 Տիմ.4:12 և Տիտ.3:12-ում:
4. Գայիոսը նշվում է Գործք 21:29 և 2 Տիմ.4:20-ում:

Հետևյալ գրառումը վերցված է Առաջին Կորնթացիների նամակի մեկնաբանության իմ աշխատությունից (տես՝ www.freebiblecommentary.org).

«**դրամահավաք**» *Logia* տերմինն է, որը գտնվել է Եգիպտոսում հունարեն պապիրուսների մեջ որպես կրոնական նպատակներով դրամական նվիրատվություն և կապ չունեցող պարբերաբար կատարվող հարկահավաքության հետ (տես՝ Մուլթոն, Միլիգան, *Հունարեն Կոտակարանի Բառարան*, էջ՝ 377 /Moulton, Milligan, *The Vocabulary of the Greek Testament*): Հայտնի չէ, թե արդյոք այս համատեքստում այն վերաբերում է սովորաբար կատարվող նվիրատվությանը, թե՞ հավելյալ նվիրատվություն էր եկեղեցուն: Պողոսը այս հոգաձուլությունը սկսել էր Հրեաստանում՝ Հուդայում, գտնվող աղքատների համար դեռևս Հակոբոսի, Պետրոսի, Հովհաննեսի և Բառնաբասի հետ զրույցից հետո, որն արձանագրված է Գաղ.2:10; 6:10-ում: Այս հատուկ զոհաբերությունը սկսվեց Անտիոքի եկեղեցու կողմից, որտեղ Պողոսն ու Բառնաբասն էին ծառայում, Գործք 11:27-30: Այս զոհաբերության մասին նշվում է ՆԿ-յան մի քանի գրքերում (տես՝ Հռոմ.15:26; 2 Կորնթ.8-9; 1 Կորնթ.16:1): Սա հրեական եկեղեցու և հեթանոսներից կազմված եկեղեցիների միջև կապ հաստատելու մի փորձ էր:

Պողոսը այս միանգամյա աջակցությունը՝ նվիրատվությունը մի քանի անուններով է կոչում՝

1. ողորմություն տալ, Գործք 24:17
2. օգնություն, Հռոմ.15:26,27; 2 Կորնթ.8:4; 9:13
3. պարտականություն, Հռոմ.15:27
4. ծառայություն, Հռոմ.15:27; 2 Կորնթ.9:12:

Երկրորդ Կորնթ.8:6,16-ից թվում է, թե Տիտոսն ինքն էլ եղել է եկեղեցու ներկայացուցիչ: Այնքան տարօրինակ է, որ Ղուկասը երբեք Տիտոսին չի նշում Գործք Առաքելոցում: Մի տեսություն կա, որ Տիտոսը եղել է Ղուկասի եղբայրը և նրա համեստությունն է պատճառ եղել, որ բաց թողնի Տիտոսի անունը: Սա նաև կարող է բացատրություն տալ 2 Կորնթացիների 8:18-ում անանուն եղբոր մասին, որը շատերը կարծում են Ղուկասն էր (Օրիգենը արձանագրել է Եվսեբիոսի *Եկեղեցու Պատմություն* 6.25.6-ում; /Origen, Eusebius' *His. Eccl.* 6.25.6/; Ա. Թ. Ռոբերթսոն, *Բառապատկերները Նոր Կտարակարանում*, /A. T. Robertson, *Word Pictures in the New Testament*, p. 245/):

Ֆ. Ֆ. Բրյուսի *Պողոսը՝ ազատագրված սրտով Առաքյալը* /F. F. Bruce *Paul: Apostle of the Heart Set Free*/, գիրքը մեկնաբանում է Տիտոսի և Ղուկասի մասին որպես եղբայրների.

«Ղուկասի լռության բացատրություններից մեկը մի մարդու մասին, որը հանդիսանում էր Պողոսի վստահելի զինակիցը այն է, որ Տիտոսը Ղուկասի եղբայրն էր. տես՝ Վ. Ս. Ռամսեյ, *Սբ. Պողոսը նանասպարհորդը և հռոմեացի քաղաքացին*, էջ՝ 390 (Լոնդոն, 1895) /W. M. Ramsay, *St. Paul the Traveler and the Roman Citizen*/, *Բժիշկ Ղուկասը և Այլ Ուսումնասիրություններ* (Լոնդոն, 1908), էջ՝ 17 / *Luke the Physician and Other Studies*/, Ա. Սուլթեր, *Բացատրական Տամանակներ*. Ղուկասի և Տիտոսի միջև ենթադրելի կապը /A. Souter, *Expository Times* 18 (1906-7), էջ՝ 285, և «Տիտոսի և Ղուկասի միջև կապը» *ibid.*, էջ՝ 335: Սակայն, եթե ընդունենք այս կապը ճիշտ էր, ապա բացառվում է այն հավանականությունը, որ Ղուկասը 2 Կորնթացիների 8:18-ի «եղբայրն» է. Պողոսի նպատակը այս «եղբորը» Տիտոսի հետ միասին ուղարկելու այն էր, որ նա լինեք երաշխավոր անձ օգնության ֆոնդի կառավարման ազնվության համար, և այս նպատակը կարելի էր համարել ձախողված, եթե քննադատներին առիթ ընձեռվեր նրանց ուշադրությունը գրավելու այս երկուսի միջև եղած արյունակցական կապով: Ոչինչ այդքան ավելի լավ հաշվարկված չէր կարող լինել արդեն իսկ զոյություն ունեցող կասկածները խրախուսելու համար»: (էջ՝ 339, ծանոթագրություն #5)

20:5 «մեզ» Ղուկասը դարձյալ սկսում է իր ականատեսի արձանագրությունը, որն ավարտվել էր Փիլիպպեում (տես՝ Գործք 16): «Մենք» բաժինները հետևյալն են՝ 16:10-17; 20:5-15; 21:1-18; և 27:1-28:1բ:

20:6 «Բաղարջակերաց օրեր» Ապրիլի կեսերին տեղի ունեցող այս յոթ օր տևողությամբ տոնակատարությունը միացված էր մեկ օրյա Չատկի տոնին (տես՝ Ելից 13): Պողոսի հրեական ծագումը ազդեցություն էր թողել օրացույցի հանդեպ իր ունեցած վերաբերմունքին: Մենք ոչինչ չգիտենք

Փիլիպպեոսը գտնվող հրեաների կամ ժողովարանի մասին, հետևաբար Պողոսը այս տոնը չէր պահում՝ նշում վկայության նկատառումներով (տես՝ 1 Կորնթ.9:19-23): Միգուցե այդ մասին պարզապես նշված է, քանի որ նա ծրագրել էր Պենտեկոստի օրերին լինել Երուսաղեմում (տես՝ 20:16):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 20:7-12

7Եվ շաբաթվա առաջին օրը, երբ աշակերտները հավաքվեցին հաց կտրելու, Պողոսը նրանց քարոզեց, քանի որ հաջորդ օրը ճամփա էր ընկնելու և իր խոսքը մինչև կեսգիշեր շարունակեց: **8**Եվ այն վերնատանը, որտեղ հավաքված էինք, շատ լապտերներ կային: **9**Եվ Եվտիքոս անունով մի երիտասարդ, որ նստել էր պատուհանին, խոր քնի մեջ էր ընկել: Երբ Պողոսը շարունակեց քարոզելը, նա, խորունկ քնի մեջ, ցած ընկավ երրորդ հարկից, ու նրան մեռած վերցրին: **10**Եվ Պողոսը, ցած իջնելով, ընկավ նրա վրա և գիրկն առնելով ասաց. «Մի՛ անհանգստացեք, քանի որ սրա հոգին իր մեջ է»: **11**Եվ երբ նա վեր կացավ, հաց կտրեց, կերավ և երկար ժամանակ խոսեց՝ մինչև առավոտ, ապա ելավ գնաց: **12**Իսկ այն պատանուն կենդանի ներս բերեցին ու շատ մխիթարվեցին:

20:7 «Եվ շաբաթվա առաջին օրը, երբ աշակերտները /անգլ.՝ մենք/ հավաքվեցին հաց կտրելու» Սա ցույց է տալիս Կիրակի օրը (շաբաթվա առաջին աշխատանքային օրը) վաղ եկեղեցու հավաքվելու կարգուկանոնը, որպեսզի ունենան հաղորդության սեղանի շփում (հ. 11) և հիշատակի ընթրիք («հաց կտրելը» Տիրոջ Ընթրիքի ՆԿ-յան դարձվածքն է): Հիսուսն Ինքը նախադեպը հանդիսացավ Կիրակնօրյա պաշտամունքի Իր հարությունից հետո երեք անգամ կիրակի օրերին հայտնվելով (տես՝ Հովհ.20:19,26; 21:1; Դուկ.24:36; 1 Կորնթ.16:2):

Միջոցներ Թարգմանչի համար շարքը (Գործք Առաքելոցը ըստ Նյումեն և Նիդայի, էջ՝ 384) /*Helps for Translator; The Acts of the Apostles by Newman and Nida*/ արձանագրում է, որ Դուկասը նկատի ուներ հրեական ժամանակացույցը և որ դա Շաբաթ երեկոն էր (տես՝ TEV), սակայն հիմնական թարգմանությունները ավելի բառացի են, «շաբաթվա առաջին օրը»: Գործքում այս արտահայտության միակ կիրառությունը սա է: Պողոսը «շաբաթվա առաջին օրը» արտահայտությունը կիրառում է միայն 1 Կորնթ.16:2-ում, որտեղ նա ակնարկում է Կիրակին:

■ «**իր խոսքը շարունակեց**» Պողոսը կամենում էր հնարավորինս շատ սովորեցնել և քաջալերել (տես՝ հհ. 2,31):

■ «**մինչև կեսգիշեր**» Հրեաները օրը սկսում էին մայրամուտին կամ երեկոյան, Ծննդոց 1-ի համաձայն, մինչդեռ Հռոմեացիները օրն սկսում էին կեսգիշերին:

20:8 «**շատ լապտերներ կային**» Սա պետք է որ լիներ շոգ, մարդաշատ, նույնիսկ ծխով լի մթնոլորտ: Կարծես թե Դուկասը փորձում է բացատրել, թե ինչու Եվտիքոսը ննջեց:

20:9 «**մի երիտասարդ**» Այս տերմինն այստեղ մատնանշում է իր կյանքի ծաղկունքի մեջ գտնվող մարդու: Հ. 12-ում կիրառվում է մեկ այլ տերմին: Այն մատնանշում է երեխայի. Եվտիքոսը երիտասարդ չափահաս էր:

■ «**Եվտիքոսը ... խորը քնի մեջ էր ընկել: Երբ Պողոսը շարունակեց քարոզելը**» Այս ՆԵՐԿԱ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆՆԵՐ կերկայացնում է թե՛ երկար քարոզների և թե՛ քնկոտ լսարանի համար աստվածաշնչյան մի վկայություն:

■ «**նրան մեռած վերցրին**» Հայտնի էր, որ նա մեռած էր: Տես՝ համար 12:

2:10 «**ընկավ նրա վրա և գիրկն առնելով**» Պողոսը գործեց ՀԿ-ում Եղիայի և Եղիսեի գործելակերպին շատ նման, որոնք նույնպես մեռելին հարություն տվեցին նույն եղանակով (տես՝ 3 Թագ.17:21; 4 Թագ.4:34): Նա իր լսարանին հորդորում է, որ չանհանգստանան, սակայն իրականում վստահ զգում են, որ Պողոսն ինքն այս դեպքից ցնցված էր:

■ «**Մի՛ անհանգստացեք**» Սա ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է ԺԽՏԱԿԱՆ ՀՈՐԴՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել ընթացքի մեջ գտնվող գործողությունը:

20:12
NASB, TEV «և շատ մխիթարվեցին»
NKJV, NRSV «նրանք քիչ չմխիթարվեցին»

NKJV և NRSV թարգմանությունները բառացի են և ցույց են տալիս Ղուկասի նվագումը բացասելու հակվածությունը (տես՝ 12:18; 15:2; 19:11,23,24; 20:12; 26:19,26; 27:20; 28:2):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 20:13-16

13Իսկ մենք մտանք նավը, գնացինք Ասոն, որպեսզի Պողոսին այնտեղից մեզ հետ վերցնենք, որովհետև այդպես էր պատվիրել, քանի որ ինքը ցամաքով էր գնալու: **14**Եվ երբ Ասոնում նա հանդիպեց մեզ, նրան մեզ հետ վերցրինք և եկանք Միտիլինե: **15**Եվ այնտեղից նավով գնացինք: Հաջորդ օրը հասանք Քիոսի դիմաց և մյուս օրը Սամոս հասանք ու գիշերը Տրոգիլիոնում մնալուց հետո՝ մյուս օրը Միլետոս եկանք: **16**Քանի որ Պողոսը որոշել էր նավարկել Եփեսոսով, որպեսզի Ասիայում ժամանակ չկորցնի, քանի որ շտապում էր, որ եթե հնարավոր լինի, Պենտեկոստի օրը Երուսաղեմում լինի:

20:13 «նավը» Պողոսի ճամփորդության ծրագրերը ստիպված պետք է փոխվեին, քանի որ նրա կյանքի հանդեպ որոգայթ էր լարված, որը պետք է իրագործվեր ծովի վրա (տես՝ հ. 3): Միգուցե Պողոսը նախքան նավը բարձրանալը կամենում էր իմանալ, թե ովքեր կային այնտեղ. Պողոսը ցամաքով Տրոյայից մինչև Ասոն էր հասել, որտեղ նրան պետք է վերցնեին Տրոյայից ժամանած նավով: Հ. 4-ում նշված բոլոր մարդիկ արդեն իսկ այդ նավի վրա էին:

20:14 «եկանք Միտիլինե» Սա Լեսբոս կղզու գլխավոր քաղաքն է: Այն Փոքր Ասիայի ափերից դուրս գտնվող ամենամեծ կղզին է (արևմտյան Թուրքիան):

20:15-16 Չարմանալի է, թե ինչքան քաջատեղյակ էր Ղուկասը նավարկությունից: Գործքում զետեղված իր պատմություններում նա շատ է գործածում նավարկության հետ կապված տեխնիկական տերմիններ (»մենք« բաժնում): «Մենք» բաժիններից մի քանիսը պարունակում են ծովային ճամփորդություններ: Այնուհետև է, որ նա եղել է բավականին լավ կրթված անձնավորություն, որը երկար ճանապարհներով է անցել՝ ճամփորդել:

20:15 «Քիոս» Սա Էգեյան ծովում գտնվող մեկ այլ կղզի է: Դա ափին շատ մոտ գտնվող երկար ու նեղ կղզի է:

■ **«Սամոս»** Սա ևս մի կղզի է, որը գտնվում է Փոքր Ասիայի արևմտյան ափամերձ տարածքում՝ Եփեսոսի մոտ:

■ **«Միլետոս»** Ժամանակին սա եղել է մի մեծ ծովափնյա քաղաք՝ Եփեսոսի հարավային եզրում՝ Մայանդեր գետաբերանի մոտ: Պողոսն այստեղ իջնում է և մարդ ուղարկում կանչելու Եփեսոսի եկեղեցու առաջնորդներին: Դա գրեթե երեսուն մղոն հեռավորության ճամփորդություն էր:

20:16 «Պողոսը որոշել էր նավարկել Եփեսոսով» Այս խոսքից կարելի է ենթադրել, որ Պողոսը կամային վերահսկողություն ուներ այդ նավի վրա: Եթե այդպես է, ուրեմն կամ (1) նրանք նավ էին վարձել միայն իրենց համար կամ էլ (2) ընտրել էին մի նավ, որը Եփեսոսում չի կանգնում:

■ **«եթե»** Սա ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ (*ei* ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ հետ) է, որն արտահայտում է ցանկություն:

■ **«Պենտեկոստ»** Սա Չատկի տոնից հիսուն օր հետո նշվող Հրեական տոն էր: Պողոսը բաց էր թողել Չատկի տոնը համաձայն 3-րդ խոսքի:

ԳՈՐԾՔ 20:17-21:16 ՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՏԵՔՍԱՑԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Այս հատվածում առկա է ինքնապաշտպանության տարրը, կարծես թե ոմանք շարունակում էին հարձակվել Պողոսի անձի վրա (տես՝ հ. 33):

Բ. Գործքում սա միակ օրինակն է, որ Պողոսը քարոզում է հավատացյալներին: Գործք 13:16բ-ում նա դիմում է հրեաներին, մինչ 14:15բ-ում և 17:22բ-ում դիմում է հեթանոս հույներին:

Գ. Այս պատգամը շատ զուգահեռներ ունի Պողոսի թղթերի հետ, ինչպես որ ակնկալելի էր: Պողոսի յուրահատուկ բառապաշարը հեշտությամբ արտացոլվել է այս հրաժեշտի հորդորի մեջ: Սա ցույց է տալիս Ղուկասի հավատարմությունը ուրիշների վկայությունները արձանագրելու մեջ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 20:17-18ա

¹⁷Եվ Միլեաոսից մարդ ուղարկեց Եփեսոս ու եկեղեցու երեցներին կանչեց: ¹⁸Եվ երբ նրանք եկան իր մոտ, նրանց ասաց.

20:17 «Միլեաոս» Այս նավահանգիստը մոտ 30 մղոն հեռավորության վրա էր Եփեսոսից:

■ **«Երեցներ»** Այս բառից (*presbuteros*) ստանում են անգլերենի (և ռուսերենի) «Presbyter» կամ «Presbyterian» (երեց կամ երիցական) բառերը: Գործք 20:17,28-ի և Տիտոս 1:5,7-ի շնորհիվ «երեցներ» (*presbuteroi*) և «եպիսկոպոսներ» (*episcopoi*) տերմինները հանդիսանում են հոմանիշ բառեր «հովիվ» տերմինի համար (*poimenos*, տես՝ Եփես.4:11): «Երեց» տերմինն ունի հրեական ծագում (հրեա տոհմական առաջնորդները) և «եպիսկոպոս» կամ «վերակացու» տերմիններն ունեն հունարեն քաղաքական՝ վարչական ծագում:

ՆԿ-ում գոյություն ունեն տեղական եկեղեցու առաջնորդների համար նշվող միայն երկու խումբ՝ հովիվներ և սարկավագներ (տես՝ Փիլ.1:1): Հնարավոր է 1 Տիմոթեոս 3-ում թվարկվում է երեք խումբ, որն ընդգրկում է որբևայրիների դերը կամ սարկավագուհիները (տես՝ Հռոմ.16:1):

Ուշադրություն դարձրեք, որ այս տերմինը ՀՈԳՆԱԿԻ թվով է: Հավանաբար դա վերաբերում է տնային եկեղեցիների առաջնորդներին (տես՝ 11:30; 14:23; 15:2,4,6,22-23; 16:4; 21:18; 1 Տիմ.5:17,19; Տիտ.1:5; Հակ.5:14; 1 Պետ.5:1):

■ **«Եկեղեցին»** Այս հունարեն տերմինը (*ekklesia*) կիրառվում էր քաղաքային ժողովի կամ հավաքույթի համար (տես՝ 19:39): Ամեն դեպքում այն կիրառվում էր թարգմանելու Մեպտուազինտայի համար ՀԿ-յան «Իսրայելի համայնք» (*qahal*) արտահայտությունը: Առաջին եկեղեցին ընտրեց հենց այս տերմինը նկարագրելու հավատացյալների նոր մարմինը, քանի որ այն նմանեցվում էր ՀԿ-ի Աստծո ժողովրդի հետ: ՆԿ-յան եկեղեցին տեսնում էր իրեն որպես ՀԿ-ի խոստման իրականացում, քանի որ Հիսուս Նազովրեցին ճշմարիտ Մեսիան էր: Տես Հատուկ Թեմա 5:11:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 20:18բ-24

¹⁸«Դուք գիտեք, թե իմ Ասիա գալու առաջին իսկ օրվանից ինչպես վարվեցի ձեզ հետ՝ ¹⁹ամենայն խոնարհությամբ Տիրոջը ծառայելով ու շատ արտասուքով և փորձություններով, որ հրեաների նենգությունների պատճառով ինձ պատահեցին: ²⁰Եվ թե ինչպես ոչ մի օգտակար բան ետ չպահեցի՝ և՛ հրապարակավ, և՛ թե տան մեջ ձեզ սովորեցնելով, ²¹հրեաներին, ինչպես և հույներին վկայություն տվեցի՝ Աստծո առաջ ապաշխարել և մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատալ: ²²Եվ հիմա ահա, ես հոգով կապված, Երուսաղեմ եմ գնում, և չգիտեմ, թե այնտեղ ինձ ինչ կպատահի: ²³Միայն թե Սուրբ Հոգին ամեն մի քաղաքում վկայում ու ասում է ինձ, թե ինձ կապանքներ ու նեղություններ են սպասում: ²⁴Բայց այս բաներն ինձ չեն տատանում, ոչ էլ ես իմ անձը թանկագին եմ համարում, միայն թե ուրախությամբ վերջացնեմ իմ ընթացքը և այն գործը, որ ստացա Տեր Հիսուսից՝ վկայել Աստծո շնորհի բարի լուրը:

20:18 «Դուք գիտեք, թե... առաջին իսկ օրվանից /անգլ.՝ ամբողջ ժամանակ/ ինչպես վարվեցի ձեզ հետ» Պողոսի ապրելակերպը և խոսքը հաստատում էր Քրիստոսի հետ նրա ունեցած փոխհարաբերության մասին: Այն փաստը, որ Պողոսը այսպիսի վստահությամբ հայտարարում է տվյալ խոսքերը հի. 18-19-ում, ապացույց է, որ այնտեղ ներկա էին քննադատներ:

20:19 «ամենայն խոնարհությամբ Տիրոջը ծառայելով» Այս տերմինը սկսում է Քրիստոնեական առաքինությունների ցանկը, որը միաբանություն է բերում (տես՝ Եփես.4:2-3): «Խոնարհությունը» յուրահատուկ Քրիստոնեական առաքինություն է, որը հունական բարոյախոսների (Ստոիկների) առաքինությունների ցանկում ներգրավված չէր: Թե՛ Մովսեսը (տես՝ Թվոց 12:3) և թե՛ Հիսուսը (տես՝ Մատթ.11:29) նկարագրվում են այս տերմինով: Պողոսը այն կիրառում է մի քանի անգամ (տես՝ Եփես.4:2; Փիլ.2:3; Կող.2:18,23; 3:12):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԱՌԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԿՈՒՄ

ՆԿ-ում թե՛ անառակությունների և թե՛ առաքինությունների ցանկերը տարածված են: Հաճախ դրանք արտացոլում են ռաբբիական և մշակութային (հելլենական) ցանկերը: Հակադարձ բևեռներով այս ՆԿ-յան հատկանիշները այսպիսի տեսք ունեն՝

	<u>Անառակությունները</u>	<u>Առաքինությունները</u>
1. Պողոս	Հռոմ. 1:28-32 Հռոմ.13:13 1 Կորնթ.5:9-11 1 Կորնթ.6:10 2 Կորնթ.12:20 Գաղ.5:19-21 Եփես.4:25-32 Եփես.5:3-5 – Կող.3:5,8 1 Տիմ.1:9-10 1 Տիմ.6:4-5 2 Տիմ.2:22ա,23 Տիտոս 1:7, 3:3	– Հռոմ.12:9-21 – 1 Կորնթ.6:6-9 2 Կորնթ.6:4-10 Գաղ.5:22-23 – – Փիլ.4:8-9 Կող. 3:12-14 – – 2 Տիմ.2:22բ, 24 Տիտոս 1:8-9; 3:1-2
2. Հակոբոս	Հակ.3:15-16	Հակ.3:17-18
3. Պետրոս	1 Պետ.4:3 2 Պետ.1:9	1 Պետ.4:7-11 2 Պետ.1:5-8
4. Հովհաննես	Հայտն.21:8; 22:15	–

■ **«արտասուքով և փորձություններով»** Պողոսը 2 Կորնթ.4:7-12; 6:3-10; 11:24-28-ում թվարկում է այն ֆիզիկական և էմոցիոնալ փորձությունները, որոնց դիմակայել էր որպես հեթանոսների Առաքյալ: Ծառայության համար արժե՛ գին վճարել:

■ **«հրեաների նենգությունների պատճառով»** Գործք Առաքելոցում այս «նենգությունների» մի քանի օրինակներ կան (տես՝ 9:24; 13:45,50; 14:2,4,5,19; 17:5,13; 18:12; 20:3; 21:27; 23:12,27,30; 24:5-9,18-19):

20:20 «ես չպահեցի» Սա նավարկության հետ կապված տերմին է (տես՝ 20:27; ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ Ժամանակի, ՉԵՉՈՔ սեռի, ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակ) առազաստները ետ քաշելու, երբ նավը մոտենում է կառամատույց:

■ **«ոչ մի օգտակար բան»** Պողոսը նրանց սովորեցրել էր ավետարանի հետ կապված ամեն ինչ. ինչպես ընդունել այն, ապրել այն, պաշտպանել և տարածել այն:

■ **«և՛ հրապարակավ, և՛ թե տան մեջ ձեզ սովորեցնելով»** Հավանաբար սա նշանակում է, որ Պողոսը ոչ միայն համընդհանուր բացօթյա խմբային հավաքություններում էր սովորեցնում (ոչ թե գաղտնի ժողովներում), այլ նաև անհատական տներում (կամ հավանաբար առանձին տնային եկեղեցիներում): Այս ասելով նկատի ունի, որ նրանք բոլորն էլ լավ գիտեին, թե ինչպես էր Պողոսը գործում իրենց մեջ և թե ինչ էր խոսում:

Պողոսը ըստ երևույթին հարձակման էր ենթարկվել տեղի մի քանի խմբերի կողմից: Այսպես էր Պողոսը շեղում քննադատությունը:

20:21 «հրեաներին, ինչպես և հույներին վկայություն տվեցի» Երկու խմբերի համար էլ մի պատգամ կար: Հաճախ ներկայացման կերպը տարբերվում է, սակայն բովանդակությունը նույնն է, ինչպես որ ցույց են տալիս Գործքի քարոզները (*kerygma*, տես Հատուկ Թեմա 2:14): Պողոսը առաջնահերթ էր համարում ավետարանը սկզբում հրեաներին ներկայացնելը (տես՝ Հռոմ.1:16; 1 Կորնթ.1:18,24):

■ **«Աստծո առաջ ապաշխարել և մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատալ»** Ապաշխարությունը մտքի փոփոխություն է (հունարեն բառ), որին հաջորդում է գործերի փոփոխությունը (եբրայերեն բառ): Այն փրկության համար առնվազն երկու պահանջներից մեկն է: Մյուսը՝ մեր Տեր Հիսուսի հանդեպ հավատքն է (տես՝ Մարկ.1:15; Գործք 3:16,19; տես՝ Հատուկ Թեմա 3:16): Մեկը ժխտողական է (չըջվել սեփական եսից և մեղքից), մյուսը՝ դրական (չըջվել դեպի Հիսուսը՝ ընդունելու Նրան և հանուն մեզ Նրա

կատարած քավությունը): Երկուն են պարտադիր են: Ես սկսել եմ հավատալ, որ գոյություն ունեն ՆԿ-յան մի քանի պահանջներ. անշուշտ սկզբնական ապաշխարությունն ու հավատքը, և հարատևող ապաշխարությունն ու հավատքը, ինչպես նաև հնազանդությունն ու համբերատարությունը:

Հնագույն հունարեն տեքստերում առկա են մի քանի տարբերակներ «մեր Տեր Հիսուս Քրիստոս» խոսքի համար: «Քրիստոս» տիտղոսը՝ անվանումը, բացակայում է B (Vaticanus) ձեռագրում, սակայն առկա է P⁷⁴, 8, A և C ձեռագրերում: Ինչպես այս տարբերակների մեծամասնությունը, դրանք չեն փոխում տեքստի նշանակությունը: UBS⁴ հունարեն տեքստը ընդունում է, որ ավելի կարճ ընթերցանությունը «գրեթե հստակ է», քանի որ պատճառ չկա, թե ինչու պետք է որևէ դպիր այն ջնջեր, սակայն ապացույց կա, որ նրանք ընդլայնում էին գուցահեռ արտահայտությունները, դրանք դարձնելով ամբողջական (տես՝ Հավելված Երկու. Տեքստային Քննադատություն):

20:22

NASB	«հոգով կապված»
NKJV	«հոգով կապված»
NRSV	«Հոգուց կապված»
TEV	«Սուրբ Հոգու հնազանդությամբ»
NJB	«Հոգուն գերության մեջ»

Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է: Ցույց է տալիս Պողոսի զգայունությունը աստվածային առաջնորդության հանդեպ (18:21; 19:21; 20:23; 1 Կորնթ.4:19; 7:40; 16:7): Տես Հատուկ Թեմա. Հոգին (pneuma) ՆԿ-ում, 2:2 և ուշադրություն դարձրեք 19:21 խոսքին: Սուրբ Հոգին նշվում է հ. 23-ում:

20:23 «Միայն թե Սուրբ Հոգին ամեն մի քաղաքում վկայում ու ասում է ինձ, թե ինձ կապանքներ ու նեղություններ են սպասում» Հավանաբար սա արվել էր տարբեր մարգարեների միջոցով, որոնք Սուրբ Հոգու կողմից զգուշացրել էին Պողոսին (տես՝ Գործք 9:16; 21:4; 10-12): Հաճախ Աստված ուղարկում և կիրառում է այն, ինչ թվում է բացասական է, սակայն մտադրված և դրական ճանապարհներով (տես՝ Ես.55:8-11): Պողոսին չշեղեցին իր նեղությունները՝ դժվարությունները, քանի որ հավատում էր, որ դրանք ծառայեցին Աստծո նպատակներին:

20:24 «ոչ էլ ես իմ անձը թանկագին եմ համարում» Այսպիսի մտածելակերպը մեղավոր մարդկության եսակենտրոն մտածելակերպի լրիվ հակառակն է: Քրիստոնյաները ունեն ուրիշ աշխարհայացք: Նրանք մահացած են իրենց անձի և մեղքի համար և կենդանի են Աստծո համար (տես՝ Հռոմեացիների 6; 2 Կորնթ.5:14-15; Գաղ.2:20; 1 Հովհ.3:16): Դաժան եսի մահը ազատություն է բերում անձնուրաց ծառայության համար:

■ **«վերջացնեմ իմ ընթացքը»** Սա վազբուղին վազելու հետ կապված սպորտային տերմին է: Պողոսը սիրում է կիրառել մարզական փոխաբերություններ: Հաճախ նա խոսում է իր կյանքի վերաբերյալ որպես մարզական իրադարձության՝ մրցաշարի (տես՝ 1 Կորն.9:24-27; Գաղ.2:2; 5:7; Փիլ.2:16; 3:14; 2 Տիմ.2:5; 4:7): Պողոսը հավատում էր, որ Աստված իր կյանքի համար ուներ հատուկ կամք, ծրագիր և նպատակ:

■ **«այն գործը /ծառայությունը/, որ ստացա Տեր Հիսուսից»** Պողոսը իր կոչումը՝ կանչը, ստացավ Դամասկոսի ճանապարհին (տես՝ Գործք 9): Բոլոր հավատացյալներն էլ կանչված և պարզներով օժտված ծառայողներ են (տես՝ Եփես.4:11-12): Այսպիսի գիտակցումը և այսպիսի աշխարհայացքը կփոխի մեր ապրելակերպը (տես՝ 2 Կորնթ.5:18-20): Մենք առաքելության մարդիկ ենք: Մենք փրկվել են ծառայելու համար: Մենք բոլորս էլ ավետարանի և պարզևի տնտեսներն ենք:

■ **«Աստծո շնորհի բարի լուրը»** Մեղավոր մարդկության միակ հույսը աներկբա, զթառատ Աստծո ողորմությունն է: Երրորդության Աստվածը մեր լիառատ կյանքի համար ամեն ինչ ապահովել է: Մեր հույսը Նրա էության և Նրա կատարած գործի վրա է:

Չարմանալի է, թե որքան հազվադեպ է Ղուկասը կիրառում «ավետարանի բարի լուր» ԳՈՅԱԿԱՆԸ (Ղուկաս ավետարանում ընդհանրապես առկա չէ, իսկ Գործք Առաքելոցում երկու անգամ՝ 15:7; 20:24), սակայն իր երկու գրքերում էլ շատ անգամ օգտագործում է այս բառի ԲԱՅԸ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 20:25-35

²⁵Եվ հիմա, ահա՛, ես գիտեմ, որ դուք բոլորդ, որոնց մեջ ես շրջել եմ Աստծո թագավորությունը քարոզելով, այլևս իմ երեսը չեք տեսնելու: ²⁶Ուստի այսօր ձեր առջև վկայում եմ, որ ես անպարտ եմ բոլորիդ արյունից, ²⁷քանի որ խույս չտվեցի Աստծո ամբողջ

խորհուրդը ձեզ հայտնելուց: ²⁸Արդ, զգո՛ւյշ եղեք ձեր անձերի և ձեր հոտի համար, որի վրա Սուրբ Հոգին խնամողներ կարգեց ձեզ՝ հովվելու համար Աստծո եկեղեցուն, որն Իր արյամբ գնեց: ²⁹Որովհետև ես գիտեմ, որ իմ հեռանալուց հետո հափշտակող գայլեր են մտնելու ձեր մեջ, որ չեն խնայելու հոտը: ³⁰Եվ ձեր միջից էլ դուրս կգան մարդիկ, որ սխալ բաներ կխոսեն՝ աշակերտներին իրենց ետևից տանելու համար: ³¹Ուստի արթուն եղե՛ք և հիշեցե՛ք, որ երեք տարի՝ գիշեր-ցերեկ չդադարեցի ամեն մեկիդ արցունքներով զգուշացնելուց: ³²Եվ հիմա, եղբայրներ, ձեզ հանձնում եմ Աստծուն ու Նրա շնորհի Խոսքին, որը կարող է ձեզ կերտել և ձեզ ժառանգություն տալ բոլոր սրբվածների հետ: ³³Ես ո՛չ մեկի արծաթը կամ ոսկին կամ հագուստը չցանկացա: ³⁴Այո՛, դուք ինքներդ գիտեք, որ այս ձեռքերը հոգացին իմ և ինձ հետ եղողների կարիքները: ³⁵Ամեն բան ցույց տվեցի ձեզ, թե ինչպես պետք է աշխատել ու տկարներին օգնել և հիշել Տեր Հիսուսի խոսքերը, որ Ինքն ասաց. «Ավելի երանելի է տալը, քան ստանալը»:

20:25 «ես գիտեմ, որ դուք բոլորդ... այլևս իմ երեսը չեք տեսնելու» Նա ծրագրում էր գնալ Իսպանիա (տես՝ Հռոմ.15:24,28), սակայն ըստ համատեքստի հավանաբար սա վերաբերում է կանխատեսված նրա գալիք բանտարկությանը և Երուսաղեմում նրա հավանական մահվանը: Եթե Հովվական Թղթերը նկարագրում են Պողոսի չորրորդ միսիոներական ճամփորդությունը, ապա նշանակում է, որ նա կրկին վերադարձել է այս նույն տարածաշրջանը:

1. Եփեսոս, 1 Տիմ.1:3; 3:14; 4:13
2. Միլետոս, 2 Տիմ.4:20
3. Հավանաբար նույնիսկ Տրովադա, 2 Տիմ.4:13

Պողոսը ապրում էր Աստծո առաջնորդության հավատքով: Նա չգիտեր սպասվող ապագան:

■ **«Աստծո Թագավորությունը քարոզելով»** Տե՛ս գրառում 2:34:

20:26 «ես անպարտ եմ բոլորիդ արյունից» Սա հրեական դարձվածք է, ինչպես Գործք 18:6-ը կամ հատկապես Եզեկ.3:16բ և 33:1բ: Պողոսը հավատարմորեն վկայում էր ավետարանը (տես՝ 2 Կորնթ.2:17): Այժմ նրանք, որ ընդունում էին և նրանք, որ մերժում էին ավետարանը, իրենց իսկ սեփական որոշման բեռն էին կրում: Առաջինները ծառայության, իսկ մյուսները՝ կորստյան (տես՝ 2 Կորնթ.2:15-16):

20:27 «խույս չտվեցի» Տե՛ս գրառում 20:20:

■ **«Աստծո ամբողջ խորհուրդը»** Մենք պետք է միշտ հռչակենք Աստծո լիակատար՝ ամբողջ պատգամը, ոչ թե միայն մեր նախընտրելի մասերը: Հնարավոր է սա ակնարկ էր Հուդաիստների համար, որոնք պնդում էին, թե Պողոսը պատգամից ինչ-որ մասեր էր բաց թողնում (այսինքն՝ Մովսիսական Օրենքը՝ հուդայականությունը) կամ էլ 2 Կորնթացիների 12 գլխի խարիզմատներին, որոնք կարծում էին Պողոսը գուրկ էր հոգևոր փորձառություններից: Աստծո նպատակն է, որ մարդիկ վերագտնեն իրենց լիարժեք փոխհարաբերությունը Իր հետ, որը հենց ստեղծագործության ամբողջ նպատակն էր (տես՝ Ծննդ.1:26,27; 3:8; 12:3):

20:28 «զգույշ եղեք ձեր անձերի համար» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Այս հորդորը կարելի է գտնել նաև 1 Կորնթ.16:13; Կող.4:2; 1 Թեսաղ.5:6,10: Քրիստոնեական կյանքը ունի թե՛ աստվածային և թե՛ մարդկային ասպեկտներ: Աստված միշտ նախաձեռնողն է և մեր առօրյան կազմակերպողը, սակայն հավատացյալները պետք է արձագանքեն և հարատևեն դրա մեջ: Ինչ որ առումով մենք պատասխանատու ենք մեր հոգևոր կյանքի համար (տես՝ Փիլ.2:12-13): Այն ինչ վերաբերում է անհատ հավատացյալներին, նույնը նաև վերաբերում է եկեղեցու առաջնորդներին (տես՝ 1 Կորնթացիների 3):

■ **ձեր /ամբողջ/ հոտի համար»** Սա Աստծո ժողովրդի համար կիրառվող փոխաբերություն է (տես՝ Սաղմոս 23; Դուկ.12:32; Հովհ.21:15-17): «Հովիվ» տերմինը ծագել է այս բառից: Տե՛ս գրառում 20:17: Եկեղեցու առաջնորդները պատասխանատու են Աստծո առջև թե՛ իրենց անձերի և թե՛ իրենց եկեղեցիների համար (տես՝ 1 Կորնթացիների 3):

■ **«Սուրբ Հոգին կարգեց ձեզ»** Սա ցույց է տալիս Աստծո վերին կոչումը՝ եկեղեցու առաջնորդների ընտրության մեջ:

■ **«խնամողներ /վերակացուներ/»** Տես գրառում 20:17:

■ **«Աստծո եկեղեցուն»** «Աստված» բառը կարելի է գտնել հնագույն հունարեն P⁷⁴, A, C, D և E ձեռագրերում, մինչ «Տեր» բառը՝ MSS x և B ձեռագրերում: Պողոսը հաճախ է կիրառում «Աստծո եկեղեցի» արտահայտությունը, սակայն երբեք չի գործածում «Տիրոջ եկեղեցի» արտահայտությունը: Համատեքստը ակնարկում է «Տիրոջ եկեղեցուն» հաջորդ «Իր արյամբ» արտահայտության շնորհիվ, որը անշուշտ վերաբերում է Քրիստոսին: Այնուամենայնիվ, սա պարզապես դպիրների կողմից խմբագրական փոփոխություն է, որը կարելի էր սպասել (տես՝ Բրյուս Մ. Մեցգեր *Տեքստային Մեկնաբանություն* /Bruce M. Metzger, *A Textual Commentary*, pp. 480-482): Հետևաբար UBS⁴ հունարեն տեքստը հիշատակում է «Աստված» տերմինը, սակայն գնահատում է «C»: «Տերը» կլիներ ամենաանսովորը և դժվարը կարդալու համար (տես՝ Հավելված Երկու. Տեքստային Քննադատություն):

Այս տեքստը լավ օրինակ է հանդիսանում այն բանի, թե ինչպես էին դպիրները աստվածաբանական նկատառումներով փոխում տեքստերը: Հետաքրքիր քննարկման համար կարդացեք Բարտ Դ. Երմենի *Սուրբ Գրքի Ուղղափառ Աղախությունները*, էջ՝ 87-89 /Bart D. Ehrman's *The Orthodox Corruption of Scripture*: Դպիրները փոփոխում էին տեքստերը՝ դրանք վարդապետորեն ավելի ուժեղացնելով ընդդեմ այդ օրերի հերձվածողության: Գործք 20:28 առաջարկում է փոփոխությունների մի քանի տարբերակներ, հավանաբար կապված ներքին պատմական, աստվածաբանական լարվածությունների հետ:

Նախքան մենք հիասթափված մեր ձեռքերը կթողափենք, պետք է հիշել, որ Նոր Կտակարանը ունի գերազանց տեքստային ավանդույթ, շատ ավելի լավ, քան որևէ այլ հնագույն գրություն: Չնայած որ չենք կարող բացարձակ վստահությամբ ընդունել, որ այն բնագրի հեղինակների բառացի թարգմանությունն է, այնուամենայնիվ մեր ձեռքերում ունենք վստահելի և ճշգրիտ տեքստ: Բնագրի բառերը տրված են տարբերակներով: Այս տարբերակները չեն ազդում որևէ կարևոր վարդապետության վրա: Տես՝ *Նոր Կտակարանի Տեքստային Քննադատության Վերանայում* խմբ. Դեյվիդ Ալեն Բլեքի կողմից /*Rethinking New Testament Textual Criticism* ed. David Alan Black/:

■ **«Իր արյամբ գնեց»** Սա արտացոլում է ՀԿ-ի փոխանորդական գոհաբերության գաղափարը (տես՝ Դևտացիների 1-7; Եսայի 53): Այս շեշտադրումը զարմանալիորեն շատ չի նշվում Գործքի *kerygma*-ում (տես՝ Ջեյմս Դ. Ջ. Դան, *Միասնությունը և Հակասակությունը ՆԿ-ում*, էջ՝ 17-18 /James D. G. Dunn, *Unity and Diversity in the NT*): Նաև հնարավոր է, որ այս խոսքը շեշտադրում է Հիսուսի աստվածությունը (այսինքն՝ «Աստծո եկեղեցին»): Պողոսը հաճախ գործածում է այնպիսի արտահայտություններ, որոնք մատնանշում են այս ճշմարտությունը (տես՝ Հռոմ.9:5; Կոր.2:9; Տիտոս 2:13):

Այս հունարեն արտահայտությունը նաև կարելի է թարգմանել որպես «Իր սեփական արյամբ», որը նշանակում է մոտ բարեկամ (այսինքն՝ Իր Որդի Հիսուսի): Ֆ. Ֆ. Բրյուսի, *Գործք Առաքելոց Գրքի Մեկնաբանություն*, էջ՝ 416 #59, ասում է, որ այս արտահայտությունը կարելի էր թարգմանել «Իր սեփականի՝ հարազատի արյան միջոցով», որը ինչպես նա է պնդում, վավերացված՝ հաստատված է Եգիպտական Կոյնե պապիրուսե գրականության մեջ:

20:29 «հափշտակող գայլեր են մտնելու ձեր մեջ» Սա փոխաբերություն է հիմնված նախորդող «հոս» և «հովիվ» փոխաբերության վրա: Սա շեշտադրում է կեղծ վարդապետների խնդիրը, որը թե դրսից էր (հ. 29) և թե՛ ներսից (հ. 30): Նրանք երկու դեպքում էլ մտնում են ոչխարի մորթով (տես՝ Մատթ.7:15-23; Դուկ.10:3; Հովհ.10:12, ինչպես նաև միջաստվածաշնչյան հայտնության գրականության մեջ՝ 1 Եսովք 89:10-27; 4 Եգրաս 5:18): Հավատացյալները պետք է ստուգեն այն մարդկանց, ովքեր պնդում են, որ խոսում են Աստծո անունից (տես՝ 1 Հովհ.4:1): Ստուգեք նրանց ավետարանի հանդեպ իրենց հավատարմությամբ, թե՛ խոսքով և թե՛ գործով (տես՝ հհ. 18-24; Մատթեոս 7; Հռոմ.16:17-18):

20:30 «սխալ բաներ կխոսեն» «Կխոսեն» /անգլերենում՝ «խոսելով»/ ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է, մինչ «սխալ բաները»՝ ՎԱԳԱԿԱՏԱՐ ԿՐՎԱՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ, որը կիրառվում է որպես ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ (ուղղական ենթակա): Դրա հիմնական նշանակությունն է «շեղել՝ ծուր»: Այն կիրառվում է նկարագրելու մարդկային հասարակությունը (տես՝ Դուկ.9:41; Փիլ.2:15): Այս գործունեությունը պատկերվում է (մեկ այլ տերմինով) 2 Դեո.3:15-16-ում:

■ **«աշակերտներին իրենց ետևից տանելու համար»** Աստվածաբանական հարցն այն է, թե «Այդ մոլորվածները՝ ետևից գնացածները, արդյո՞ք հոգևորապես կորան, թե շփոթվեցին» (Մատթ.24:24): Անհնար է լինել դոգմատիկ, սակայն ճշմարիտ հավատքը հարատևում է (տես՝ 1 Հովհ.2:18):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՒՆՏԱԳՐԺՈՒԹՅՈՒՆ

Հունարեն այս տերմինը *aphistēmi* ունի լայն իմաստաբանական հարթակ: Սակայն անգլերեն տերմինը «apostasy» բխում է հենց այս տերմինից և ժամանակակից ընթերցողներին տրամադրում է իր կիրառությունը: Ինչպես միշտ համատեքստն է կարևոր տեղում և ոչ թե սահմանումը:

Սա բաղադրյալ տերմին է *apo* նախդիրով, որը նշանակում է «-ից» կամ «հեռու-ից» և *histēmi* «նստել» «կանգնել» կամ «ամրապնդել»: Ուշադրություն դարձրեք հետևյալ (ոչ աստվածաբանական) կիրառություններին՝

1. ֆիզիկապես հեռացնել
ա. Տանարից, Ղուկ.2:37
բ. տնից, Մարկ.13:34
գ. մարդուց, Մարկ.12:12; 14:50; Գործք 5:38
դ. ամեն ինչից, Մատթ.19:27,29
2. քաղաքական առումով հեռացնել, Գործք 5:37
3. հարաբերական հեռացնել, Գործք 5:38; 15:38; 19:9; 22:29
4. իրավաբանորեն հեռացնել (ամուսնալուծվել), 2 Օրինաց 24:1,3 (LXX) և ՆԿ՝ Մատթ.5:31; 19:7; Մարկ.10:4; 1 Կորնթ.7:11
5. պարտքը հեռացնել, Մատթ.18:24
6. հեռանալով անհոգություն ցուցաբերել, Մատթ.4:20; 22:27; Հովհ.4:28; 16:32
7. չհեռանալով հոգատարություն ցուցաբերել, Հովհ.8:29; 14:18
8. թույլ տալ կամ թույլատրել, Մատթ.13:30; 19:14; Մարկ.14:6; Ղուկ.13:8

Աստվածաբանական նշանակությամբ ԲԱՅԸ ունի լայն կիրառություն՝

1. չեղարկել, ներել, մեղքի հանցավորությանը թողություն տալ, Ելից 32:32 (LXX); Թվոց 14:19; Հոբ 42:10 և ՆԿ՝ Մատթ.6:12,14-15; Մարկ.11:25-26
2. մեղքից խուսափել, 2 Տիմ.2:19
3. անտեսել՝ հեռու գնալով
ա. Օրենքից, Մատթ.23:23; Գործք 21:21
բ. հավատքից, Եզեկ.20:8 (LXX); Ղուկ.8:13; 2 Թեսաղ.2:3; 1 Տիմ.4:1; Եբր.2:13

Մեր օրերի հավատացյալները հարցնում են շատ աստվածաբանական հարցեր, որոնք ՆԿ-յան հեղինակների մտքով անգամ չէր անցնում: Սրա հետևանքներից մեկն այն է, որ մեր օրերում մարդիկ ավելի հակված են հավատքը բաժանել հավատարմությունից:

Աստվածաշնչում կան մարդիկ, որոնք Աստծո ժողովրդի միջից լինելով, նրանց պատճառով ինչ-որ դեպքեր են պատահել:

I. Հին Կտակարան

- Ա. Նրանք, որոնք լսեցին տասներկու (տաս) լրտեսների բերած լուրին. Թվոց 14 (տես՝ Եբր.3:16-19)
- Բ. Կորիսը, Թվոց 16
- Գ. Հեղիի որդիները, 1 Թագավորաց 2,4
- Դ. Սավուդը, 1 Թագավորաց 11-31
- Ե. Սուտ մարգարեները (օրինակներ)
1. 2 Օր.13:1-5, 18:19-22 (սուտ մարգարեին ճանաչելու կերպերը)
 2. Երեմիա 28
 3. Եզեկիել 13:1-7
- Զ. Սուտ մարգարեուհիները
1. Եզեկիել 13:17
 2. Նեեմիա 6:14
- Է. Իսրայելի չար առաջնորդները (օրինակներ)
1. Երեմիա 5:30-31; 8:1-2; 23:1-4
 2. Եզեկիել 22:23-31
 3. Միքիա 3:5-12

II. Նոր Կտակարան

Ա. Այս հունարեն տերմինը բառացի նշանակում է *apostasize*: Թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանները հաստատում են Երկրորդ Գալուստից առաջ չարի և կեղծ ուսմունքների ուժգնացումը (տես՝ Մատթ.24:24; Մարկ.13:22; Գործք 20:29,30; 2 Թեսաղ.2:9-12; 2 Տիմ.4:4): Այս հունարեն բառը հնարավոր է արտացոլում է Հիսուսի Մերմնացանի Առակի խոսքերը, որ գտնվում է Մատթեոս 13; Մարկոս 4 և Ղուկաս 8-ում: Այս կեղծ վարդապետները ակնհայտ է, որ Քրիստոնյաներ չէին, սակայն նրանք ներսի մարդկանցից էին (տես՝ Գործք 20:29-30; 1 Հովհ.2:19), համենայն դեպս նրանք ի գորու են հրապուրելու՝ գայթակղելու հասունություն չունեցող հավատացյալներին (տես՝ Եբր.3:12):

Աստվածաբանական հարցն այն է, թե արդյո՞ք այս կեղծ վարդապետները երբևէ եղել են հավատացյալներ: Դժվար է պատասխանել այս հարցին, քանի որ տեղական եկեղե-

ցիներում կային կեղծ վարդապետներ (տես՝ 1 Հովհ.2:18-19): Հաճախ մեր աստվածաբանական և հարանվանական սովորույթներն են պատասխանում այս հարցին առանց նույնիսկ դիմելու Աստվածաշնչյան որևէ հստակ տեքստի (բացառությամբ տեքստային ապացույցի՝ համատեքստից դուրս որևէ համարի մեջբերմամբ, որը ենթադրաբար ապացուցում է տվյալ մարդու ներկայացրած հակվածությունը՝ պնդումը):

Բ. Ակնհայտ հավատքի ուխտադրժություն

1. Հուդան, Հովհ.17:12
2. Միմոն Մոզը, Գործք 8
3. Մարդիկ, որոնց մասին խոսվում է Մատթ.7:13-23-ում
4. Մարդիկ, որոնց մասին խոսվում է Մատթեոս 13; Մարկոս 4; Դուկաս 8-ում
5. Հովհաննես 8:31-59-ի հրեաները
6. Աղեքսանդրոսն ու Հիմենոսը, 1 Տիմ.1:19-20
7. 1 Տիմ.6:21-ի մարդիկ
8. Հիմենոսն ու Փիղետոսը, 2 Տիմ.2:16-18
9. Դեմասը, 2 Տիմ.4:10
10. Կեղծ վարդապետները, 2 Պետրոս 2:19-22; Հուդա հհ. 12-19
11. հակաքրիստոսները, 1 Հովհ.2:18-19

Գ. Անպտուղ հավատք՝

1. 1 Կորնթացիների 3:10-15
2. 2 Պետրոս 1:8-11

Մենք հազվադեպ ենք մտածում այս տեքստերի շուրջ, քանի որ մեր սիստեմատիկ աստվածաբանությունը (Կավվինիզմը, Հայկականությունը, և այլն) տալիս է լիազորված պատասխան: Խնդրում եմ կանխավ մի՛ դատեք ինձ այս թեման բարձրացնելու համար: Իմ նպատակն է ճշգրիտ հերմենևտիկ ընթացակարգը: Մենք պետք է թույլ տանք, որ Աստվածաշունչը խոսի մեզ և չփորձենք ձուլել այն մեր օրերի աստվածաբանության հետ: Սա հաճախ ցավոտ և սթափեցնող է, քանի որ մեր աստվածաբանության մեծ մասը առնչվում են հարանվանական, մշակութային փոխհարաբերությունների հետ (ծնող, ընկեր, հովիվ): Ումանք, որ Աստծո Ժողովրդի մեջ էին, պարզվում է, որ նրանք Աստծո Ժողովրդից չէին (օրինակ՝ Հռոմ.9:6):

20:31 «արթուն եղե՛ք» Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է (տես՝ Մարկ.13:35), որը համազոր է հ. 28-ին՝ «զգույշ եղե՛ք ձեր անձերի համար» (ՆԵՐԿԱ ՆՈՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Աստծո առաջնորդները և Աստծո եկեղեցին պետք է մշտապես զգուշանա կեղծ վարդապետներից, ոչ թե նրանցից, ովքեր անտեսում են մեր անձնական նախասիրությունները, այլ նրանցից, ովքեր արհամարհում են ավետարանը և դրա ներկայացրած ապրելակերպը:

■ **«երեք տարի /շարունակ/»** Սա վերաբերում է Եփեսոսում Պողոսի անցկացրած ժամանակին: Ժամանակի այս ցուցանիշը ընգրկում է այս տարածաշրջանում Պողոսի ամբողջ գործունեությունը: Նա այս հավատացյալների հետ ավելի երկար մնաց, քան որևէ այլ քաղաքում, եկեղեցում կամ շրջանում: Նրանք գիտեին Ավետարանը: Այժմ նրանք պետք է այն պաշտպանեն և տարածեն:

20:32 «հանձնում եմ Աստծուն» Սա նշանակում է «վստահում եմ» (տես՝ 14:23): Մենք պատասխանատու ենք Աստծուն այն Ավետարանի համար, որ վստահվել է մեզ (տես՝ 1 Տիմ.1:18): Մենք պատասխանատու ենք փոխանցելու այն ուրիշներին, որոնք էլ իրենց հերթին կփոխանցեն մյուսներին (տես՝ 2 Տիմ.2:2): «Աստված» բառը կարելի է գտնել MSS P⁷⁴, Գ, A, C, D և E ձեռագրերում: «Տեր» տերմինը գտնվում է MS B ձեռագրերում: UBS⁴ գնահատում է *Theos* »B» (գրեթե ճշգրիտ):

■ **«և Նրա շնորհի Խոսքին»** «Ավետարան» բառի հոմանիշ արտահայտություն է: Տե՛ս գրառում հ. 24:

■ **«կարող է ձեզ կերտել»** Ուշադրություն դարձրեք, որ այն անձնավորություն է և Աստծո ճշմարտությունը (ավետարանը), որ առաջնորդում է հասունության (տես՝ 9:31): Պողոսը հաճախ է կիրառում այս փոխաբերությունը: Այս հունարեն բառը կարող է թարգմանվել թե՛ «շինել» և թե՛ «շինություն տալ» (տես՝ 1 Կորնթացիների 14): Սա է ավետարանի նպատակը՝ ոչ միայն անհատ հավատացյալների հասունությունը, այլ նաև ամբողջ եկեղեցու:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ

Այս տերմինը՝ *oikodomeō* և դրա մյուս ձևերը հաճախ են կիրառվում Պողոսի կողմից: Տառացի այն նշանակում է «տուն կառուցել՝ շինել» (տես՝ Մատթ.7:24), սակայն սկսել է փոխաբերորեն կիրառվել.

1. Քրիստոսի մարմնի՝ եկեղեցու համար, 1 Կորնթ.3:9; Եփես.2:21; 4:16
2. քաջալերելու՝ զորացնելու.
 - ա. տկար եղբայրներին, Հռոմ.15:1
 - բ. հարևաններին, Հռոմ.15:2
 - գ. մեկը մյուսին՝ միմյանց, Եփես.4:29; 1 Թեսաղ.5:11
 - դ. սրբերին՝ ծառայության համար, Եփես.4:11
3. մենք քաջալերում կամ շինություն ենք տալիս՝
 - ա. սիրով, 1 Կորնթ.8:1; Եփես.4:16
 - բ. սահմանափակելով մեր անձնական ազատությունը, 1 Կորնթ.10:23-24
 - գ. չարաշահումներից խուսափելով, 1 Տիմ.1:4
 - դ. սահմանափակելով երկրպագության ծառայությունների խոսնակներին (երգիչներ, ուսուցիչներ, մարգարեներ, լեզուներով խոսացողներ և թարգմանիչներ), 1 Կորնթ.14:3-4,12
4. ամեն ինչ պետք է շինություն տա՝
 - ա. Պողոսի հեղինակությունը, 2 Կորնթ.10:8; 12:19; 13:10
 - բ. ամփոփիչ խոսքերը Հռոմ.14:19 և 1 Կորնթ.14:26-ում:

■ **«և ձեզ ժառանգություն տալ»** ՀԿ-ում Աստված Դևտացիների և Քահանաների ժառանգությունն էր: ՆԿ-ում Աստված բոլոր հավատացյալների ժառանգությունն է, քանի որ նրանք Աստծո զավակներն են Քրիստոսի անձի և գործի շնորհիվ (տես՝ Հռոմ.8:15,17; Գաղ.4:1-7; Կող.1:12):

ՆԿ-ի հավատացյալները, ՀԿ-ի խրայելացիների պես, քահանաներ են (տես՝ 1 Պետ.2:5,9; Հայտն.1:6): Մենք ընտրված ենք ծառայելու մեղավոր՝ կորստյան գնացող աշխարհին:

■ **«բոլոր սրբվածների հետ»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ Է: Տե՛ս Հատուկ Թեմա. Սրբացում, 9:32:

20:33 «արձաթը կամ ոսկին կամ հագուստը» Սրանք հարստության առարկաներ էին: Պողոսը պաշտպանում է իր գործողություններն ու շարժառիթները: ՆԿ-ում ազահությունը և սեռական հորդորները հաճախ առանձնահատուկ էին սուտ վարդապետներին (տես՝ 1 Կորնթ.3:10-17):

20:34 «հոգացին իմ սեփական կարիքները» Պողոսը հրաժարվում էր օգնություն ընդունել եկեղեցիներից, որոնց ժամանակին ծառայել էր՝ սուտ վարդապետների կողմից իր շարժառիթների շուրջ մշտապես մեղադրանքների ենթարկվելու պատճառով: Պողոսը ինքն էր իր մասին հոգ տանում (տես՝ 1 Կորնթ.4:12; 9:3-7; 2 Կորնթ.11:7-12; 12:13; 1 Թեսաղ.2:9; 2 Թեսաղ.3:6-13): Նաև Պողոսը լինելով ուսյալ ռաբբի, ուներ սովորեցնելու համար գումար վաստակելու որակավորում: Համենայն դեպս նա պնդում է, որ ավետարանի ծառայողները պետք է վարձատրվեն (տես՝ 1 Կորնթ.9:3-18; 1 Տիմ.5:17-18):

Գոյություն ունի մի հրաշալի կարճ պատմություն առաջին դարի Միջերկրական աշխարհի վերաբերյալ Ջեյմս Ս. Ջեֆֆերզի կողմից գրված *Նոր Կտակարանյան դարաշրջանի Հունա-Հռոմեական աշխարհը* գրքում /James S. Jeffers, *The Greco-Roman World of the New Testament Era*/: Այնտեղ նշվում է, որ Պողոսը իր երեք միսիոներական ճամփորդությունների ընթացքում էլ իր ֆիզիկական կարիքները հոգալու համար աշխատել է սեփական ձեռքերով (տես՝ էջ 28):

1. Առաջին ճամփորդությունը, 1 Կորնթ.4:12; 9:6; 1 Թեսաղ.2:9
2. Երկրորդ ճամփորդությունը, Գործք 18:3
3. Երրորդ ճամփորդությունը, Գործք 19:11-12; 20:34; 2 Կորնթ.12:14

20:35 Ուշադրություն դարձրեք, որ հավատացյալների տքնաջան աշխատանքը անձնական շահի կամ ճոխության համար չէ, այլ Քրիստոսի անվան համար կարիքի մեջ գտնվող մարդկանց (տես՝ 2 Կորնթ.9:8-11): Հիսուսի խոսքերից Պողոսի կողմից կատարած մեջբերումը ոչ մի Ավետարանում չկա: Հետևաբար, այն պետք է որ լինի բանավոր ավանդույթ:

Այս «տկարներ» բառը այստեղ չի կիրառվում չափազանց բծախնդիր Քրիստոնյաների իմաստով (տես՝ Հռոմ. 14:1; 15:1; 1 Կորնթ.8:9-13; 9:22), այլ ֆիզիկական կարիքի մեջ գտնվողների համար: Պողոսը աշխատում էր, որպեսզի հոգա թե՛ իր և թե՛ ուրիշ կարիքավոր հավատացյալների համար:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵԲՍՏ. 20:36-38

³⁶Եվ այս ասելուց հետո բոլորի հետ ծնկի իջավ և աղոթեց: ³⁷Բոլորն էլ շատ լաց եղան ու Պողոսի պարանոցին ընկնելով՝ համբուրում էին նրան: ³⁸Սրտները ցավում էր մանավանդ այն խոսքի համար, որ ասաց, թե այլևս իր երեսը չեն տեսնելու: Եվ նրան ուղեկցեցին մինչև նավը:

20:36 «ծնկի իջավ» Համաձայն Պողոսի հրեական ծագման սա չէր համարվում աղոթքի համար սովորական դիրք: Հավանաբար սա եղել է հատուկ նվիրումի ծես (տես՝ հ. 32; 21:5):

20:37 «Պողոսի պարանոցին ընկնելով /անգլ.՝ գրկելով/» NKJV թարգմանության տարբերակը ավելի տառացի մոտեցում է ցուցաբերում /ինչպես և հայերեն թարգմանությունը/, «ընկնելով Պողոսի պարանոցին»: Փառք Աստծուն եկեղեցու առաջնորդների համար, որոնք օգնության են հասնում:

20:38 «Սրտները ցավում էր մանավանդ այն խոսքի համար, որ ասաց» Սա վերաբերում է հ. 25-ին:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտոդության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ էր Պողոսը ըստ հ. 4-ի տարբեր քաղաքներից այդքան շատ մարդկանց հետ ճամփորդում:
2. Ո՞րն է հհ. 7-10-ի աստվածաբանական նպատակը:
3. Ինչո՞ւ է հ.13-ը շփոթեցնող:
4. Ինչո՞ւ էր Պողոսը իրեն պաշտպանում Եփեսացի երեցներից:
5. Ինչո՞ւ էր Պողոսը գնում Երուսաղեմ, եթե մարգարեները զգուշացնում էին նրան այդ այցի դաժան հետևանքների մասին (հհ. 22-23):
6. Ինչո՞ւ են բոլոր դարերում և վայրերում սուտ մարգարեները տարածված: Արդյո՞ք նրանք փրկված են: Արդյո՞ք մարդիկ, որ հետևում են նրանց, փրկված են: Ի՞նչ է սուտ մարգարեն:
7. Ինչո՞ւ է հհ. 36-38 ստիպում մեզ սիրել և աղոթել մեր տեղական եկեղեցիների առաջնորդների համար:

ԳՈՐԾՔ 21

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսի նամփոռոթյունը Երուսաղեմ	Երուսաղեմ նամփոռոթյան դեմ զգուշացում	Պողոսը վերադառնում է Պաղեստին (20:7-21:14) 21:1-6 21:7-14	Պողոսը գնում է Երուսաղեմ 21:1-6 21:7-11	Ճամփորոթյուն դեպի Երուսաղեմ 21:1-6 21:7-14
21:1-6 21:7-14	21:1-14	21:1-6 21:7-14	21:12-13	Պողոսի ժամանումը Երուսաղեմ
21:15-16	Պողոսը համոզում է խաղաղություն հաստատելու 21:15-25	Պողոսի համաձայնեցումը Հուդայականությանը 21:15-16	21:14 21:15-16	21:15-16
Պողոսը այցելում է Հակոբոսին 21:17-26	Չերբակալություն Տանարում 21:26-36	21:17-26	Պողոսը այցելում է Հակոբոսին 21:17-25 21:26	21:17-25 21:26
Պողոսը ձերբակալվում է Տանարում 21:27-36		Պողոսի ձերբակալությունը և պաշտպանությունը (21:27-22:29) 21:27-36	Պողոսը ձերբակալվում է Տանարում 21:27-29	Պողոսի ձերբակալությունը 21:27-29
Պողոսը պաշտպանում է իրեն 21:37-22:5	Ուղղերձ Երուսաղեմի ամբոխին (21:37-22:21)	21:37-40	Պողոսը պաշտպանում է իրեն (21:37-22:5) 21:37ա 21:37բ-38 21:39 21:40-22:2	21:30-36 21:37-40

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս գլուխը զարմանալի է այն ամենով ինչ չի ասվում: Պողոսի կողմից հեթանոս եկեղեցիներից Երուսաղեմի եկեղեցուն ուղարկված այդքան շեշտադրված օգնության մասին որևէ ակնարկ չկա:

Ձեյմս Դ. Գ. Դանը, *Միասնությունն ու Հակասությունը ՆԿ-ում*, էջ՝ 272-278 /James D.G. Dunn, *Unity and Diversity in the NT*/ մի հետաքրքիր վարկած է առաջ քաշում, թե Հակոբոսի (որը հայտնի էր հուդայականության ավանդույթներին իր նվիրվածությամբ) և Պողոսի միջև լարվածություն կար հրեա հավատացյալի կյանքում Բանավոր Ավանդույթներին տեղ տալու կամ չտալու հարցի շուրջ:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:1-6

¹Եվ երբ դուրս եկանք և նրանցից բաժանվեցինք, ուղիղ նավարկելով եկանք Քուզ, իսկ հաջորդ օրը՝ Հռոդոն և այնտեղից՝ Պատարա: ²Եվ գտանք մի նավ, որ Փյունիկե էր մեկնում, մեջը մտնելով՝ ճամփա ընկանք: ³Եվ երբ երևաց Կիպրոսը, այն մեր ձախ կողմում թողնելով, դեպի Սիրիա նավարկեցինք և Տյուրոս իջանք, քանի որ նավն այնտեղ պետք է բեռնաթափվեր: ⁴Եվ աշակերտներին գտնելով այնտեղ յոթ օր մնացինք: Նրանք Սուրբ Հոգու կողմից Պողոսին ասում էին, որ Երուսաղեմ չգնա: ⁵Այդ օրերն անցկացնելուց հետո բաժանվեցինք ու ճամփա ընկանք: Իսկ նրանք բոլորը՝ կանանց ու երեխաների հետ միասին, մինչև քաղաքից դուրս մեզ ճանապարհի դրեցին, և ծովեզրին ծնկի գալով՝ աղոթեցինք: ⁶Ու երբ միմյանց հրաժեշտ տվեցինք, մենք նավ բարձրացանք, իսկ նրանք վերադարձան իրենց տեղերը:

21:1 «ուղիղ նավարկելով եկանք» Սա ծովագնացության հետ առնչվող տերմին է, որը նշանակում է նավարկել ուղիղ ընթացքով (տես՝ 16:11): Դուկասը քաջատեղյակ էր ծովային տերմիններին (տես՝ հ. 3): Գործքի «մենք» բաժինների մեծ մասը պարունակում են նավարկություն:

■ **«Քուզ»** Այս անունը նշանակում է «գազաթնաժողով»: Այս անվամբ կար թե՛ կղզի և թե՛ այդ կղզու ամենամեծ քաղաքը: Այս կղզին Հիպոկրատի հայրենի տունն էր (Ք.Ա. հինգերորդ դար) և այնտեղ կար բժշկական մի մեծ դպրոց՝ հաստատություն: Այն անկախ նահանգ էր և հռոմեական Ասիա նահանգի մասն էր կազմում: Այն տեղակայված էր Միլետոսից մոտ քառասուն մղոն հեռավորության վրա:

■ **«Հռոդոն»** Սա նույնպես կղզու և իր ամենամեծ քաղաքի անվանում է: Այս առևտրային քաղաքը հայտնի էր իր (1) վարդերով և (2) իր համալսարանով, որը մասնագիտացված էր հռետորության և ճարտարախոսության մեջ: Անցյալում (Ք. Ա. 29) աշխարհով մեկ այն հայտնի էր իր բրոնզով, 104 ոտնաչափ բարձրությամբ վիթխարի տղամարդու արձանով, որ կանգնեցված էր նավահանգստի մոտ: Այս արձանը գործածվում էր որպես փարոս:

■ **«Պատարա»** Հունարեն ձեռագրերի Արևմտյան ընտանիքը (տես՝ P⁴¹, D) և մի քանի լատիներեն տարբերակներ ավելացնում են «և Միրա» (շատ հնարավոր է հավելում է 27:5-ից), որը հանդիսանում էր Սիրիա տանող գլխավոր նավահանգիստը: UBS⁴ տալիս է ավելի կարճ ընթերցանության համար »A» գնահատականը (հստակ):

Պատարան Լիկիայում ծովափնյա քաղաք էր: Այն հայտնի էր իր Ապոլոն հռետորով, որը մի ժամանակ մրցակցում էր նույնիսկ Դելֆիի հետ:

21:2 «Եվ գտանք մի նավ, որ Փյունիկե էր մեկնում» Պետք է, որ սա լինեի ավելի մեծ նավ: Փոքր նավերը շարժվում էին նավահանգստի գրաֆիկով և երթուղով: Այս նավը խնայեց նրանց համար շատ ժամանակ՝ տանելով ճիշտ երթուղով:

■ **«Տիվրոս»** Սա Փյունիկեի ծովափնյա մայրաքաղաքն էր:

21:4 «աշակերտները» Այս քաղաքում եկեղեցի կար, որը հավանաբար սկսվել էր Ստեփանոսի հալածանքից հետո (տես՝ 8:4; 11:19): Այս ժամանակաշրջանում հավատացյալները փնտրում էին ուրիշ հավատացյալների, որպեսզի նրանց հետ մնային (տես՝ հհ. 7,16):

■ **«Սուրբ Հոգու կողմից Պողոսին ասում էին, որ Երուսաղեմ չգնա»** Սա խոսում է այն մասին, որ տեղական եկեղեցում կային մարգարեներ (տես՝ 20:23; 21:10-12): Հալածանքի վերաբերյալ նրանց

պատգամը ճիշտ էր և չնայած դրան ակնհայտ երևում էր, որ Աստծո կամքն էր նրա ճամփորդությունը (տես՝ հ. 14): Հիսուսը Անանիայի միջոցով Պողոսին ասաց իր կյանքի գործի մասին (տես՝ Գործք 9:15-16): Չարչարանքը նրա կյանքի մի մասն էր կազմելու, սակայն նա նաև վկայություն էր տալու թագավորների առջև:

21:5 «ծովեզրին ծնկի գալով աղոթեցինք» Սա Քրիստոնեական սիրո և հոգատարության գեղեցիկ տեսարան է: Հնարավոր է դա եղել է հատուկ ծառայություն, ինչպես 20:32,36:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:7-14
7Եվ երբ Տյուրոսից մեր ընթացքն ավարտեցինք, հասանք Պտողեմայիս, ողջունեցինք եղբայրներին և մեկ օր նրանց հետ մնացինք: ⁸Հաջորդ օրը, մենք՝ Պողոսի ուղեկիցներս, այնտեղից դուրս գալով՝ հասանք Կեսարիա: Եվ մտնելով Փիլիպպոս ավետարանչի տունը, որը յոթից մեկն էր, մնացինք նրա մոտ: ⁹Այս մարդը չորս կույս աղջիկ ուներ, որ մարգարեություն էին անում: ¹⁰Եվ երբ մենք արդեն շատ օրեր այնտեղ էինք, Հրեաստանից Ագաբոս անունով մի մարգարե իջավ: ¹¹Ու երբ նա մեզ մոտ եկավ, Պողոսի գոտին վերցնելով՝ իր ձեռքերն ու ոտները կապկպեց և ասաց. «Այսպես է ասում Սուրբ Հոգին. այն մարդուն, ում պատկանում է այս գոտին, Երուսաղեմում հրեաներն ահա այսպես կապկպելու են և մատնելու են հեթանոսների ձեռքը»: ¹²Ու երբ այս լսեցինք, թե՛ մենք, և թե՛ տեղացիք աղաչեցինք, որ նա Երուսաղեմ չգնա: ¹³Իսկ Պողոսը պատասխանեց. «Ի՞նչ եք անում: Ինչո՞ւ եք լալիս և իմ սիրտը կոտրում: Ես Երուսաղեմում ո՛չ միայն կապվելու, այլև Տեր Հիսուսի անվան համար մեռնելու եմ պատրաստ»: ¹⁴Եվ երբ նա չհամոզվեց, լռեցինք, ասելով. «Տիրոջ կամքը թող լինի»:

21:7 «Պտողեմայիս» Այս քաղաքը կոչվել էր Ալեքսանդր Մեծի գեներալի պատվին, որը կառավարում էր Եգիպտոսում և Պտողմեոս II-ի նախահայրն է եղել, որն էլ կառուցել է այս քաղաքը Ք.Ա. 26 թ-ին: Սա Պաղեստինյան ավի վրա գտնվող միակ բնական նավահանգիստն է: ՀԿ-ում այն կոչվում էր Ակրով (տես՝ Դատ.1:31): Այսօր այն կոչվում է իր Խաչակրի անունով Ակրե:

■ **«եղբայրները»** Գործքում այս բառը հոմանիշ է «աշակերտներին» (տես՝ հհ. 4,16): Այն մատնանշում է Հիսուս Թիստոսին հավատացողներին:

■ **«նրանց հետ մնացինք»** Տե՛ս գրառում հ. 4-ում:

21:8 «մենք դուրս գալով» Արդյոք նրանք ցամաքով, թե՛ ծովով գնացին, հայտնի չէ:

■ **«Կեսարիա»** Սա Պաղեստինի Հռոմեական վարչական գրասենյակն էր: Այն ծովափնյա քաղաք էր մի փոքրիկ արհեստական նավամատույցով: Ավետարանիչ Փիլիպպոսը ապրում էր այնտեղ (տես՝ 8:40):

■ **«որը յոթից մեկն էր»** Սա վերաբերում է Երուսաղեմի եկեղեցում հունախոս որբեկանների կողմից ներկայացված բողոքին՝ սնունդի անարդարությամբ բաշխելու խնդրին: Եկեղեցին ընտրեց յոթ տղամարդկանց, որպեսզի այս հարցին լուծում տան: Նրանք բոլորն էլ ունեին հունարեն անուններ: Այս յոթ մարդիկ հզոր քարոզիչներ էին: Նրանք առաջիններն էին, որ հանձն առան համաշխարհային ավետարանչության տեսիլքը (տես՝ Գործք 6):

21:9 «չորս կույս աղջիկ ուներ... մարգարեություն էին անում /անգլ.՝ մարգարեուհիներ/» Հիշեք, որ Ղուկասը հատուկ մտահոգված էր կանանցով: Մենք կարիք ունենք վերանայել եկեղեցում կանանց առաջնորդական պաշտոնների շուրջ մեր դիրքորոշումը (տես՝ Հովել 2:28-32; Գործք 2:16-21) հիմնված ՆԿ-ի բոլոր վկայությունների վրա: Տե՛ս Հատուկ Թեմա. Կանայք Աստվածաշնչում, 2:17: Այս հարցում ինձ օգնել է Գորդոն Ֆի, *Ավետարան և Հոգի /Gordon Fee, Gospel and Spirit/* գիրքը:
Եկեղեցու ավանդությունն ասում է, որ նրանք տեղափոխվեցին Փոքր Ասիա (Փռյուզիա) և որ նրա աղջիկները երկար ապրեցին և ծառայեցին Աստծուն մինչև խոր ծերություն: Մենք այս ավանդության մասին իմանում ենք Եվսեբիոսի մեջբերումներից թե՛ Պոլիկրատեսից և թե՛ Պապիասից (տես՝ *Եկեղեցու Պատմություն* 3:31:2-5 /*Eccl. Hist.*/):

21:10 «Ագաբոս անունով մի մարգարե» Առնվազն երկու կերպ կարելի է հասկանալ այս տերմինը:
1. Կորնթացիների նամակներում սա վերաբերում է ավետարանը վկայելուն կամ քարոզելուն (տես՝ 1 Կորնթ.14:1):
2. Գործք Առաքելոցը մատնանշում է մարգարեների (տես՝ 11:27-28; 13:1; 15:32; 21:10, նույնիսկ մարգարեուհիների՝ 21:9):

Այս տերմինի հետ կապված խնդիրն այն է, թե ինչպե՞ս է ՆԿ-յան մարգարեության պարզևը կապված ՀԿ-յան մարգարեների հետ: ՀԿ-ում մարգարեները Սուրբ Գրքի հեղինակներն էին: ՆԿ-ում այս գործը տրված էր առաջին տասներկու Առաքյալներին և իրենց օգնականներին: Ինչպես «առաքյալ» տերմինն է պահպանվում որպես շարունակելի պարզև (տես՝ Եփես.4:11), սակայն Տասներկուսի մահից հետո փոփոխված պարտականությամբ, այնպես էլ մարգարեի պաշտոնը: Ներշնչանքը (տես՝ Հատուկ Թեմա 13:1) դադարել է. այլևս չկան ներշնչանքով գրված Սուրբ Գրքեր (տես՝ Հուդա հ. 20): Նոր Կտակարանի մարգարեների առաջնային գործը ավետարանի քարոզչությունն է, սակայն նրանք նաև ցույց են տալիս, թե ինչպես կիրառեն ՆԿ-յան ճշմարտությունները ընթացիկ իրավիճակներում և կարիքների դեպքում: Տես՝ Հատուկ Թեմա. Մարգարեությունը ՆԿ-ում, 11:27:

21:11 Ազարոսը՝ ՀԿ-ի Երեմիա և Եզեկիել մարգարեների պես, իր հայտնությունը բեմադրում էր՝ ներկայացնում:

21:12 «**աղաչեցինք /անգլ.՝ սկսեցինք աղաչել/**» Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այն կարող է նշանակել (1) գործողություն սկսել կամ (2) անցյալ ժամանակում կրկնվող գործողություն:

21:13 Դժվար է հավասարակշռել այս մարգարեական գործողությունը Պողոսի զգացողության հետ, որ Երուսաղեմ գնալը Աստծո կամքն էր (տես՝ հ. 4):

■ «**Տեր Հիսուսի անվան**» Տես՝ Հատուկ Թեմա. Տիրոջ անունը, 2:21:

21:14 «**Տիրոջ կամքը թող լինի**» Սա ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է, կիրառված աղոթքի տեսքով: Աստված Պողոսի կյանքի համար ծրագիր և նպատակ ուներ: Պողոսը զգում էր, որ ինքը գիտեր Աստծո կամքը, նույնիսկ հատուկ և նոր հնչած մարգարեությունն ունենալով այն խնդիրների վերաբերյալ, որ իրեն սպասվում էին: Պողոսը հաստատ հասկացել էր, որ այս մարգարեությունները իր հոգևոր և մտավոր պատրաստության համար էին և ոչ թե արգելքի:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍԾՈՆ ԿԱՄՔԸ (*thelēma*)

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ

- Հիսուսը եկավ կատարելու Հոր կամքը (տես՝ 4:34; 5:30; 6:38)
- վերջին օրը հարություն տալու բոլոր նրանց, ում Հայրը տվեց Որդուն (տես՝ 6:39)
- որ բոլորը հավատան Որդուն (6:29,40)
- Աստծո կամքը կատարելու շուրջ պատասխանված աղոթք (տես՝ 9:31 և 1 Հովհ.5:14)

ՄԻՆՈՊՏԻԿ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԸ

- Աստծո կամքը կատարելը կարևոր է (տես՝ Մատթ.7:21)
- Աստծո կամքը կատարելը այդ անձին դարձնում է Հիսուսի քույրը կամ եղբայրը (տես՝ Մատթ.12:50; Մարկ.3:35)
- Աստծո կամքը չէ, որ որևէ մեկը կորչի (տես՝ Մատթ.18:14; 1 Տիմ.2:4; 2 Պետ.3:9)
- Գողգոթան Հոր կամքն էր Հիսուսի համար (տես՝ Մատթ.26:42; Ղուկ.22:42)

ՊՈՂՈՍԻ ԹՂԹԵՐԸ

- բոլոր հավատացյալների հասունությունը և ծառայությունը (տես՝ Հռոմ.12:1-2)
- հավատացյալները ազատվեն այս չար ժամանակներից (տես՝ Գաղ.1:4)
- Աստծո կամքը Նրա փրկարար ծրագիրն էր (տես՝ Եփես.1:5,9,11)
- հավատացյալներ, որոնք կվերապրեն և կապրեն Հոգով լեցուն կյանք (տես՝ Եփես.5:17-18)
- հավատացյալներ, որոնք լցված կլինեն Աստծո գիտությամբ (տես՝ Կող.1:9)
- հավատացյալներ, որոնք կատարյալ և լիարժեք կլինեն (տես՝ Կող.4:12)
- սրբացված հավատացյալներ (տես՝ 1 Թեսաղ.4:3)
- ցանկացած իրավիճակում գոհունակ սիրտ ունեցող հավատացյալներ (1 Թեսաղ.5:18)

ՊԵՏՐՈՍԻ ԹՂԹԵՐԸ

- հավատացյալներ, որոնք ճիշտ են ապրում (այսինքն՝ ենթարկվում են քաղաքացիական իշխանություններին) և հետևաբար լռեցնում են անմիտներին, հնարավորություն ստեղծելով ավետարանչության համար (տես՝ 1 Պետ.2:15)
- չարչարվող հավատացյալներ (1 3:17; 4:19)
- հավատացյալներ, որոնք անձնակենտրոն կյանք չեն ապրում (տես՝ 1 Պետ.4:2)

ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՂԹԵՐԸ

- հավատացյալներ, որոնք հավիտյան կմնան (տես՝ 1 Հովհ.2:17)
- հավատացյալներ, որոնք կլինեն պատասխանված աղոթքի պատճառ (տես՝ 1 Հովհ.5:14)

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:15-16

¹⁵Եվ այդ օրերից հետո պատրաստվեցինք ու Երուսաղեմ գնացինք: ¹⁶Կեսարացի աշակերտներից ոմանք էլ մեզ հետ եկան և մեզ տարան Մնասոն անունով մի կիպրացու մոտ՝ հին աշակերտներից, ում մոտ մենք պիտի մնայինք:

21:15 «պատրաստվեցինք» Քինգ Չեյմս Տարբերակը (KJV) տալիս է «վերցրեցինք մեր բեռները» (NKJV տալիս է «մեր ապրանքները կապեցինք»): Սա գրաֆիկական տերմին է, որ ՆԿ-ում միայն այստեղ կարելի է գտնել:

■ **«Երուսաղեմ»** Այն մոտ 64 մղոն էր հեռու:

21:16 «Մնասոն» Այս մարդը հրեա Քրիստոնյա էր Կիպրոսից (Բառնաբասի պես): Հնարավոր է նա եղել է Գործք 6-ի Յոթի պես հելլենական հրեաներից մեկը: Ըստ երևույթին նա հենց առաջին իսկ օրերից է եղել հավատացյալ. հավանական է, որ Ղուկասը նրանից է հարցուփորձ արել իր Ավետարանի համար, մինչ մնում էր Պաղեստինում այն ընթացքում, երբ Պողոսը բանտարկված էր Կեսարիայում:

ԳՈՐԾՔ 21:17-23:30 ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԳՈՐԾՔ 21:17-26:32 ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾԸ (Պողոսի բանտարկությունը և պաշտպանությունը Երուսաղեմում և Կեսարիայում)

- | | |
|---------------------------------------|-------------|
| 1. Խոտվություն և ձերբակալում Տանարում | 21:17-40 |
| 2. Պողոսի պաշտպանությունը ամբոխի առջև | 22:1-22 |
| 3. Հռոմեական հարցաքննում | 22:23-30 |
| 4. Սինեդրոնի հարցաքննում | 23:1-10 |
| 5. Պողոսին սպանելու դավադրություն | 23:11-35 |
| 6. Պողոսը Ֆելիքսի առջև | 24:1-23 |
| 7. Պողոսը Ֆելիքսի և Դրուսիայի առջև | 24:24-27 |
| 8. Պողոսը Փեստոսի առջև | 25:1-12 |
| 9. Պողոսը Ագրիպաս II և Բերնիկեի առջև | 25:13-26:32 |

Բ. ՊՈՂՈՍԻ ՕՐԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՊԱԾՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բնորոշ Տարբերը	Պողոսը ամբոխի առջև	Պողոսը Սինեդրոնի առջև	Պողոսը Ֆելիքսի առջև	Պողոսը Փեստոսի և Ագրիպաս II առջև
1. Նրա հրեական ծագումը	22:3		24:14,17-18	26:4
2. Նրա փարիսեցիու կրթությունը և նախանձավորությունը	22:3	23:6-9	24:15,21	26:5-8
3. Նրա հալածելը «Ճանապարհին»	22:4-5			26:9-11 26:12-16
4. Իր դարձի անձնական վկայությունը	22:6-16			26:17-23
5. Իր կոչումը հատուկ ծառայության մեջ Աստծո կողմից	22:17-22			

Գ. ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐԸ ԵՎ ՍԱԳՈՒԿԵՑԻՆԵՐԸ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

	<u>ՍԱԳՈՒԿԵՑԻՆԵՐ</u>	<u>ՓԱՐԻՍԵՑԻՆԵՐ</u>
Ծագումը Անվան իմաստը Սոցիալական դիրքը	Մակարայեցիների Շրջան «Սաղովկեցի» Քահանայական արիստոկրատիա	Մակարայեցիների շրջան «Չատվածներ» Միջին խավի աշխատուժ
Սուրբգրային հարցը	Միայն Գրված Օրենքը (հուկա) Ծննդոցից մինչև Երկրորդ Օրինաց)	Ամբողջ բանավոր և գրավոր Օրենքը, ավելացրած Մարգարե- ները և ՀԿ-ի կանոնի գրի առնված բաժինները
Աստվածաբանությունը	Պահպանողական Ճիշտ փարիսեցիներին հակառակ, որոնց մեղադրում էին, որ ազդվել են Չրադաշտությունից	Չարագոյ - Բավականին զարգացած հրեշտակաբանություն - հանդերձյալ կյանքի և հարության հավատը - ամենօրյա կյանքի համար հստակ կառուցվածքային կանոններ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:17-26

¹⁷Ու երբ Երուսաղեմ մտանք, եղբայրները մեզ ուրախությամբ ընդունեցին: ¹⁸Եվ հաջորդ օրը Պողոսը մեզ հետ Հակոբոսի մոտ գնաց, ու բոլոր երեցները ներկա էին: ¹⁹Եվ ողջուն տալով նրանց՝ մեկառմեկ պատմում էր այն ամենը, ինչ Աստված իր ծառայության միջոցով կատարել էր հեթանոսների մեջ: ²⁰Նրանք էլ լսելով փառք տվեցին Տիրոջը և ասացին նրան. «Դու տեսնում ես, եղբայր, թե քանի հազարավոր հրեաներ կան, որոնք հավատում են, բայց բոլորն էլ նախանձախնդիր են Օրենքին. ²¹և քո մասին լսել են, թե դու հեթանոսների մեջ գտնվող բոլոր հրեաներին սովորեցնում ես Մովսեսի օրենքից հեռանալ, ասելով, թե նրանք չպետք է թլփատեն իրենց որդիներին, ո՛չ էլ օրենքները պահեն: ²²Հիմա ի՞նչ է լինելու: Երբ լսեն, որ եկել ես, անպայման բազմություն կհավաքվի: ²³Ուստի կատարի՛ր, ինչ որ քեզ ասում ենք. մեզ մոտ չորս մարդ կա, որոնք ուխտ են արել իրենց անձերի վրա. ²⁴նրանց քեզ հետ վերցրու և նրանց հետ միասին մաքրվի՛ր, և նրանց ծախսերը դու հոգա, որ իրենց գլուխները ածիլեն: Այսպես բոլորը կիմանան, որ իրենց տեղեկությունները քո մասին ոչինչ են, թե դու էլ կարգ ու կանոնով ես քայլում ու Օրենքը պահում: ²⁵Իսկ ինչ հավատի եկած հեթանոսներին է վերաբերվում, մենք մի թուղթ ենք ուղարկել, ինչպես որ որոշել էինք, որ նրանք այսպիսի բաներ չպահեն, այլ միայն զգուշանան կուռքերին զոհված բաներից, արյունից, խեղդվածից և պոռնկությունից»: ²⁶Այն ժամանակ Պողոսն այդ մարդկանց իր հետ վերցրեց ու հաջորդ օրը, նրանց հետ մաքրված, տաճար մտավ՝ նշելու սրբության օրերի լրանալը, որից հետո նրանցից յուրաքանչյուրի համար զոհ մատուցվեց:

21:17 Ծատ լավ նշան էր այն, որ Երուսաղեմի հավատացյալները Պողոսին և այս հեթանոս նորադարձներին ջերմությամբ ընդունեցին (տես՝ Ղուկ.8:40; 9:11; Գործք 2:41; 18:27; 21:17; 24:3; 28:30), սակայն Երուսաղեմի եկեղեցում նաև խտրականություն կար (տես՝ հհ. 20-21):

21:18-19 «Պողոսը մեզ հետ Հակոբոսի մոտ գնաց» Այստեղ ոչ մի հատուկ հիշատակում չկա հեթանոսների եկեղեցիներից պարզևների՝ նվիրատվության մասին (տես՝ 24:17): Պողոսը նմանատիպ հաշվետվություն է տալիս Հակոբոսին 15:12-ում: Հակոբոսը Հիսուսի կիսով չափ եղբայրն էր և Երուսաղեմի Եկեղեցու պատվելի առաջնորդը (տես՝ Գործք 12:17; 15:13):

21:18 «ու բոլոր երեցները ներկա էին» Նկատեք, որ Առաքյալների մասին չի նշվում: Ըստ երևույթին նրանք երկրից դուրս միսիոներական ճամփորդությունների մեջ էին կամ էլ մահացած էին: «Երեցներ» տերմինն այսպես գործածելն արտացոլում է դրա հրեական կիրառությունը (տես՝ 4:5,8,23; 6:12; 11:30; 15:2,4,6,22,23; 16:4; 23:14; 24:1,25; 25:15; Եբր.11:2; Հակ.5:14), ոչ թե հետագայում եկեղեցու կողմից հովիվների համար կիրառությունը (տես՝ 14:23; 20:17,18,23; 1 Տիմ.5:17,19; Տիտ.1:5; 1 Պետ.5:1; 2 Հովհաննես 1; 3 Հովհաննես 1):

21:19 Որոշ մեկնաբաններ կարծում են, որ Պողոսն արժանացավ սովորական ընդունելության և հեթանոս եկեղեցիներից ուղարկված գումարը չգնահատվեց: Ահա նրանց այս կարծիքին լինելու պատճառները.

1. Պողոսը մնում էր հելլենական ծագման մի հրեայի տանը, ոչ թե Երուսաղեմի եկեղեցու առաջնորդներից մեկի տանը:
2. Ոչ մի երախտագիտության արտահայտություն չկա այս նվիրատվության համար: Նույնիսկ ոչ մի տեղ չի նշվում:
3. Առաջնորդները անմիջապես Պողոսին ասում են, թե նա որքան չսիրված է Երուսաղեմի եկեղեցու հազարավոր մարդկանց կողմից:
4. Երբեք չի ասվում, որ եկեղեցին աջակցեց Պողոսին իր բանտարկության կամ հալածանքների միջոցով անցնելիս:

Պետք է ասել, որ ընդհարում և շփոթություն կար Պողոսի պատգամների և առաքելության հետ կապված: Համենայն դեպս, հ.19 իմ կարծիքով կարծես թե դրական է:

21:20 «քանի հազարավոր հրեաներ կան» Ինչ հրաշալի վկայություն է Երուսաղեմում ապրող հրեաների կյանքում ավետարանի և Աստծո սիրո գորության: Գոյություն ունեն հրեա հավատացյալների մնացորդ: Հնարավոր է Չաբ.12:10 կատարվել էր:

■ **«որոնք հավատում են /անգլ.՝ հավատացել են/»** Անգլերենում սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է (տես՝ Հատուկ Թեմա 3:16 և 6:5): Սա իհարկե ակնարկում է փրկարար հավատքին: Մարդը կարող է փրկվել առանց լիարժեք հասկացողության և նույնիսկ չնայած դրան սխալ հասկանա բոլոր աստվածաբանական թեմաները (տես՝ Գործք 1:6; Դուկ.19:11):

Պողոսն այս մարդկանց բնութագրում էր որպես «տկար» Քրիստոնյաներ (Հռոմ.14:1-15:13; 1 Կորնթ.8; 10:23-33): Նա վերադառնալու էր քաջալերելու այս մարդկանց, քանի դեռ նրանց «տկարությունը» չէր ազդել Ավետարանի վրա (Գաղատիայի Հուդաիստները):

■ **«բոլորն էլ նախանձախնդիր են Օրենքին»** Սա մատնացույց է անում դարձի եկած մեծաքանակ Փարիսեցիներին, նախանձախոյզներին կամ Ասասիներին: Սակայն, դարձը չէր վերացրել նրանց կրոնավոր հակումները: Նրանք նման էին Գաղատիայի Հուդաիստներին: Ուշագրավ է, թե որքան էր Պողոսը սիրում և օգնում «տկար» հավատացյալներին, սակայն չէր հանդուրժում «սուտ վարդապետներին» կամ նրանց, որոնք սխալ էին ներկայացնում ավետարանը:

21:21 «քո մասին լսել են /ասվել է նրանց/, թե դու հեթանոսների մեջ գտնվող բոլոր հրեաներին սովորեցնում ես Մովսեսի օրենքից հեռանալ» «Նրանց ասվել է» արտահայտությունը արտացոլում է Եբրայերենի «կրկին արձագանքել» դարձվածքը, որը ակնարկում է բանավոր ուսմունքը: Այն համադրված է ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՅԻ հետ (սովորեցնում ես) ցույց տալու, որ Երուսաղեմի հրեաներին պարբերաբար տեղեկացվում էր Պողոսի գործունեության մասին: Այս մեղադրանքները շատ ավելի լուրջ էին, քան հեթանոսներին քարոզելը, որն այդքան շատ դժվարությունների առջև էր կանգնեցրել նրան (տես՝ Գործք 15):

«Հեռանալ /թողնել/» տերմինը շատ հնչեղ բառ է, որը անգլերենում ներկայանում է «հերձվածո-դություն՝ հերետիկոսություն» բառով (տես՝ 2 Թեսաղ.2:3): Այն աստվածաբանական հարցը, թե ինչպես պետք է հավատացյալ հրեան վերաբերվի ՀԿ-ին, դեռևս լուծված չէր: Ինչ-որ առումով այն արտացոլում է «Մեսիական ժողովարանների» խնդիրները:

21:23 «մեզ մոտ չորս մարդ կա, որոնք ուխտ են արել» Ըստ երևույթին այս մարդիկ եկեղեցու անդամներ էին: Սա վերաբերում է Նազովրեցու սահմանափակ ուխտին (տես՝ Թվոց 6:1-8): Նախկինում Պողոսը նույնպես այդպիսի ուխտ էր արել (տես՝ 18:18): Մեզ բոլորովին հայտնի չեն այս ուխտի մանրամասները (տես՝ Նազիր 1:3):

21:23-25 Այս հատվածը մեզ ընդհանուր պատկերացում է տալիս Մովսիսական Օրենքի հետ հրեա Քրիստոնյաների ունեցած կապի շուրջ Պողոսի տեսակետի մասին: Հնարավոր է Պողոսը շարունակել է պահել հրեական ավանդույթները (տես՝ 18:18; 20:6), համենայն դեպս այն ժամանակ, երբ փորձում էր հրեաներին ավետարանել (տես՝ 1 Կորնթ.9:19-23): Հավանաբար սա հանդիսանում է մեր օրերի Քրիստոնյա հրեաների ընկերությունների համար հիմնավորում:

21:24 «նրանց ծախսերը դու հոգա» Հնարավոր է Պողոսն ինքն այս դեպքում Նազովրեցու ուխտ չէր արել, սակայն վճարեց ուրիշների փոխարեն պահանջվող գոհի համար: Ռաբբիները կարծում էին, որ մեծ պատիվ էր Նազովրեցու ուխտի համար վճարելը (Նեղ. 10ա):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱԶՈՎՐԵՑՈՒ ԵՐԴՈՒՄ

Ա. Սա Աստծուն ծառայելու նվիրման (այսինքն՝ «Տիրոջ համար սրբված») մի կերպ էր թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց համար (տես՝ Թվոց 6:1), որոնք Ղևիի ցեղից չէին: Նագովրեցի նշանակում է «գատված՝ առանձնացված» (BDB 634), որը եբրայերեն «սուրբ» բառի արմատն է հանդիսանում:

Բ. ՀԿ-ում այն համարվում էր ցմահ ուխտ

1. Սամսոնը (Դատ.13:7)
2. Սամվելը (1 Թագ.1:21)
3. Հովհաննես Մկրտիչը

Գ. Հուդայականությունը ձևավորեց կարճաժամկետ ուխտը (հավանաբար համաձայն Թվոց 6:5-ի): Ամենակարճ տևողությունը երեսուն օր էր: Այս կարճաժամկետ ուխտի գազաթնակետը գլուխը սափրելն ու Տանարում զոհի հետ միասին այդ սափրած մազերն այրելն էր:

Դ. Հատուկ պահանջները (տես՝ Թվոց 6:1-8)

1. Չիմել գինի և թունդ խմիչքներ, չուտել խաղողից ստացված որևէ սնունդ (Թվոց 6:3-4):
2. Մեփական մազերը չկտրել:
3. Չդիպչել մահացած մարդու: Սա արգելում էր մասնակցել որևէ թաղման հրեական ընթացակարգի՝ արարողության:
4. Պատահաբար պղծվելու դեմ ապահովագրումը կարող էր գտնել Թվոց 6:9-ում: Ըստ երևույթին Գործք 21:23-25-ում Պողոսի իրավիճակը ընդգրկում էր այս հարցը նույնպես: Մաքրման ժամանակահատված կար և սահմանված զոհ (տես՝ Թվոց 6:9-12):

■ «գլուխներն ածիլեն» Նագովրեցու ուխտը քննարկվում է Թվոց 6-ում: Նրանք, ովքեր մշտական ուխտ էին կապում, թույլատրված չէր իրենց մազերը կտրել: Սակայն ժամանակավոր ուխտին հատկանշական էր ուխտի ժամանակն ավարտվելուց հետո գլուխ սափրելը: Այս համարը ցույց է տալիս, թե ինչպես էր Պողոսը փորձում հարմարվել այն մշակույթի հետ, որին փորձում էր քարոզել (տես՝ 1 Կորնթ.9:19-23; 10:23-33):

21:25 «ուղարկել ենք /անգլ.՝ գրեցինք/» Սա վերաբերում է Երուսաղեմի Խորհրդի պաշտոնական հայտարարությանը (տես՝ Գործք 15:19-20; 28-29): Այս փաստաթուղթը հիմնականում բացառել էր սփյուռքում գտնվող հավատացյալ հրեաների և հավատացյալ հեթանոս խմբերի միջև խառնուրդ եկեղեցիներում (Պաղեստինից դուրս) ծիսակարգերի և սննդակարգերի հետ կապված խոչընդոտները: Սակայն դա չէր առնչվում Մովսիսական Ուխտի հետ հավատացյալ հրեաների փոխհարաբերությանը:

21:26 «տաճար մտավ» Ահա թե ինչը կարող էր խնդրահարույց դառնալ և ոչ թե խնդիրը լուծել:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:27-36

²⁷Եվ երբ արդեն յոթ օրը լրանում էր, ասիացի հրեաները նրան տեսան տաճարում և ամբոխին գրգռեցին և նրան բռնելով աղաղակում էին: ²⁸Ո՛վ Իսրայելի մարդիկ, օգնեցե՛ք: Սա այն մարդն է, որ ամենուրեք ժողովրդի, Օրենքի ու այս վայրի դեմ բաներ է սովորեցնում, մինչևիսկ հույներին մտցրեց այս տաճարը և այս սուրբ տեղը պղծեց: ²⁹(Քանի որ նախապես քաղաքում տեսել էին եփեսացի Տրոփիմոսին և կարծում էին, թե Պողոսը նրան տաճար է մտցրել): ³⁰Եվ ամբողջ քաղաքը շարժվեց, և ժողովուրդը կուտակվեց, ու Պողոսին բռնելով տաճարից դուրս քարշ տվին, և անմիջապես դռները փակվեցին: ³¹Եվ երբ ուզում էին նրան սպանել, գնդի հազարապետին լուր հասավ, թե ամբողջ Երուսաղեմը խռովության մեջ է: ³²Նա էլ անմիջապես, զինվորներ և հարյուրապետներ առած, նրանց վրա վազեց: Եվ երբ նրանք հազարապետին ու զինվորներին տեսան, դադարեցին Պողոսին ձեռնելուց: ³³Այդ ժամանակ հազարապետը մոտենալով, բռնեց նրան և հրամայեց, որ կրկնակի շղթաներով կապեն. և հարցնում էր, թե ո՞վ է նա և ինչ է արել: ³⁴Եվ ամբոխի միջից ամեն մեկը մի բան էր ասում: Երբ չկարողացավ այդ շփոթության մեջ որևէ ստույգ բան իմանալ, հրամայեց, որ նրան բերդ տանեն: ³⁵Եվ երբ հասավ աստիճաններին, ամբոխի բռնությունների պատճառով այնպես եղավ, որ զինվորները նրան բարձրացնեն ու տանեն, ³⁶քանի որ ժողովրդի բազմությունը գնում էր ետևից ու աղաղակում. «Վերացրո՛ւ դրան»:

21:27 «ասիացի հրեաները» Պողոսի հին թշնամիները նույնպես եկել էին Երուսաղեմ տոնակատարության համար: Հիմա Պողոսը հուդայականության տիղմի՝ ճահճի մեջ էր:

21:28 «սա այն մարդն է...որ սովորեցնում է /անգլ.՝ քարոզում է/» Այս ասիացի հրեաները Պողոսի քարոզները մեկնաբանում էին որպես թե հուդայականությանը դեմ, «Կ-յան խոստումների իրականացման փոխարեն: Այս մեղադրանքները նման են Ստեփանոսի դեմ կատարվածներին (տես՝ 6:13): Հնարավոր է Պողոսն ինքն էլ հայտարարել է այս մասին, որ նա անշուշտ համաձայն էր հրեական աստվածաբանության դիրքի հետ (տես՝ 22:20) նախքան Քրիստոսի հետ Դամասկոսի ճանապարհին հանդիպելը: Քրիստոսի պատգամը քայքայում էր առաջին դարի հուդայականության օրինապաշտությունն ու ավանդապաշտությունը: Սա երևում է ոչ միայն Պողոսի քարոզչության տիեզերականության մեջ, որ փրկությունը հասանելի է «բոլոր մարդկանց», այլ նաև միայն Քրիստոսի վրա և Նրա մեջ ունեցած հավատքի միջոցով փրկության աստվածաբանական բացառիկ հիմնավորման մեջ:

■ **«մինչև իսկ հույներին մտցրեց այս տաճարը»** Այս ենթադրյալ իրադեպը պետք է, որ պատահած լիներ Իսրայելի Սրահում, որտեղ Նագովրեցու՝ Ուխտավորների երդումն էր կատարվում՝ հարավարևելյան անկյունում: Հեթանոսների համար օրինավոր է համարվում մտնել Տաճարի արտաքին սրահը միայն: Սա սուտ մեղադրանք էր (տես՝ հ. 29):

21:29 «եփեսացի Տրոփիմոսին» Ասիայից (Եփեսոսից) այս հրեաները ճանաչում էին թե՛ Պողոսին և թե՛ Տրոփիմոսին և ավելի շուտ էին ծրագրել Պողոսի մահը (տես՝ 20:3): Այժմ նրանք հարմար առիթ գտան խաղալու հրեական ազգային սովորույթների հետ և սպանել Պողոսին (տես՝ հհ. 31,36):

21:30 «դռները փակվեցին» Ըստ երևույթին սա Իսրայելի Սրահի և Կանանց Սրահի միջև գտնվող դարպասն էր: Տաճարն ուներ Ղևտացիներից կազմված իր սեփական ոստիկանական ուժերը, որոնք պահում էին կարգուկանոնը: Այս գործողության նպատակն էր՝

1. պահել Տաճարը պղծվելուց
2. Պողոսին ետ պահել ապահովության համար Տաճար վերադառնալուց

Այս հրեաները գործեցին ճիշտ նույն կերպ, ինչպես Եփեսոսի ամբոխը (տես՝ Գործք 19):

21:31 «գնդի հռոմեացի հազարապետին» Բառացի սա նշանակում է հազար հոգու առաջնորդ: Նա հռոմեական բանակում ամենաբարձր կարգային աստիճանի պաշտոնյան էր (հեծելագորի), որը տեղակայվում էր Երուսաղեմում տոն օրերին, երբ բնակչության թիվը իր սովորականից երեք անգամ ավելի էր լինում: Նրա առաջադրանքն էր պահել կարգուկանոնը:

■ **«գունդ»** Նրանք ապրում էին Անտոնիա Ամրոցում, որը նայում էր դեպի Տաճարի Սրահը: Այն որպես պալատ կառուցել էր Հերովդես Մեծը, սակայն հռոմեացիները այն օգտագործում էին որպես ռազմական վարչական գրասենյակներ (տես՝ Չոզեֆուս, *Պտեղագրություններ* 5.5.8, /Josephus, Wars 5.5.8/):

21:32 «գինվորներ և հարյուրապետներ» Հարյուրապետ բառացի նշանակում է հարյուր հոգու առաջնորդ: Անտոնիա Ամրոցը նայում էր դեպի Տաճարի տարածքը: Այն խիտ կայազորված էր, հատկապես տոնական օրերին:

21:33 «կրկնակի շղթաներով կապեն» Հնարավոր է սա նշանակում է (1) ձեռքերն ու ոտքերը կամ (2) երկու հռոմեացիների միջև: Ըստ երևույթին գինվորները կարծում էին, որ նա հեղափոխական է՝ ապստամբ (տես՝ հ. 38):

21:34-35 Սա ցույց է տալիս ամբոխի դաժանությունն ու մոլեգնությունը (տես՝ հ. 30):

21:35 «աստիճաններ» Այս աստիճանները, որ ձգվում էին Անտոնիա Ամրոցից դեպի Տաճարի տարածքը, ակնարկվում էին հ.32-ում՝ «վազեցին ցած»/անգլերենում/: Այնտեղ կային այս աստիճանների երկու շարք, որոնք տանում էին Տաճարի երկու տարբեր բաժիններ: Հռոմեացիները կամենում էին ճնշել ցանկացած տեսակի ապստամբություն շատ արագ: Տոնական օրերին հաճախ էին լինում ազգայնական անախորժություններ՝ ապստամբություններ:

21:36 «Վերացրո՛ւ դրան» Սրանք հենց այն խոսքերն էին, որ գոռում էին Հիսուսի դեմ (տես՝ 22:22; Դուկ.23:18; Հովհ.19:15): Ծատ զուգահեռներ կան Պողոսի և Հիսուսի հանդեպ հրեաների և հռոմեացիների կողմից վարվեցողության մեջ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 21:37-40
³⁷Բերդ մտնելիս Պողոսը հազարապետին ասաց. «Կարո՞ղ եմ արդյոք քեզ հետ խոսել» իսկ նա ասաց. «Հունարեն գիտե՞ս: ³⁸Մի՞թե դու այն եզիպտացին չես, որ այս օրերից առաջ

ապստամբեց և չորս հազար հոգու, որոնք մարդասպաններ էին, անապատ առաջնորդեց»:³⁹ Եվ Պողոսն ասաց. «Ես հրեա մարդ եմ՝ Կիլիկիայի Տարսուսից, ոչ աննշան մի քաղաքի քաղաքացի: Աղաչում եմ քեզ, թույլ տուր, որ ժողովրդի հետ խոսեմ»:⁴⁰ Եվ երբ նա թույլատրեց, Պողոսն աստիճանների վրա կանգնեց և ձեռքով ժողովրդին հանդարտվելու նշան արեց: Եվ երբ կատարյալ լռություն տիրեց, սկսեց երբայերենով խոսել ու ասաց.

21:37 «Հունարեն գիտե՛ս» Հազարապետը զարմացավ, որ Պողոսը խոսեց Կոյնե Հունարենով, քանի որ նա հաստատ կարծում էր, որ Պողոսը եգիպտացի ապստամբ էր, ինչպես որ լսել էր (տես՝ հ. 38 և Ջոզեֆուսի Հնություններ 2.13.5; 20.8.6): Այս եգիպտական ապստամբությունը տեղի էր ունեցել մ. թ. 52-57 թվականներին:

21:38 «/Ասասիներ/ մարդասպաններ էին» Սա *sicarii* լատիներեն տերմինն է ասասիների կամ դաշույնավորն մարդկանց համար: ՆԿ-ում նրանք հաճախ կոչվում էին «նախանձահույզներ» (տես՝ Ղուկ.6:15; Գործք 1:13): Նրանք մի խումբ հրեաներ էին, որը իրենց անձերը նվիրել էին հռոմեացիներին բռնությամբ վտարելուն:

Ա. Թ. Ռոբերթսոնը *Բառասպանկերները Նոր Կտակարանում*, հատոր 3, էջ՝ 382 /A. T. Robertson, *Word Pictures of the New Testament*/ նշում է, որ հենց այս խոսքը Ջոզեֆուսը կիրառում է նկարագրելու այս եգիպտացի ապստամբի հետևորդներին (Ջոզեֆուս, *Պատերազմներ* 2.13.5; *Հնություններ* 20.8.6,10):

21:39 «ոչ աննշան մի քաղաքի քաղաքացի» Սա դարձվածք է (*litotes*, տես՝ գրառում 12:18), որը Պողոսն օգտագործում էր հաստատելու աշխարհահռչակ համալսարանական քաղաքի իր քաղաքացիությունը: Տեքստը չի նշում, թե արդյոք հռոմեացի սպան զարմացավ, թե ոչ:

21:40 «նա թույլատրեց» Այս հրամանատարը դեռևս կամենում էր իմանալ, թե ինչ էր կատարվում:

■ «ձեռքով ժողովրդին ... նշան արեց» Ըստ երևույթին սա խոսելու համար լռություն պահպանելու բոլորին հայտնի ձեռքի ժեստն է (տես՝ 12:17; 13:16; 19:33; 21:40; 26:1): Հնարավոր է սա հռետորական ժեստ էր, որ Պողոսը սովորել էր Տարսուսում հռետորության դասերին:

■ «սկսեց երբայերենով խոսել» Պողոսը ամբոխին խոսեց արամերենով (հրեաները արամերեն սովորել էին խոսել պարսկական տիրապետության տարիների ընթացքում): Սա որոշ ժամանակով հանդարտեցրեց ամբոխին (տես՝ 22:2):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Եթե բոլոր քաղաքներում մարգարեները Պողոսին զգուշացնում էին, որ չգնա Երուսաղեմ, ինչո՞ւ ասպա նա գնաց:
2. Ի՞նչ առնչություն ունեն հավատացյալ հրեաները Մովսիսական Ուխտի հետ:
3. Արդյո՞ք ասիացի հրեաների մեղադրանքները Պողոսի դեմ, որ նշված են հ. 28ա-ում ճիշտ էին:
4. Արդյո՞ք այս հ.38-ի հրամանատարի մեկնաբանությունը ակնարկում էր, որ քիչ հրեաներ գիտեին հունարեն լեզուն, թե՞ որ նա կարծում էր, որ Պողոսը եգիպտացի էր:

ԳՈՐԾՔ 22

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսի ինքնապաշտպանությունը	Երուսաղեմի ամբոխին դիմելը	Պողոսի ձերբակալումն ու պաշտպանությունը	Պողոսի ինքնապաշտպանությունը	Պողոսը դիմում է Երուսաղեմի հրեաներին
21:37-22:5	21:37-22:21	(21:27-22:29) 21:37-22:1 22:2 22:3-5	(21:37-22:5) 22:3-5	22:1-5
Պողոսը պատմում է իր դարձի գալը			Պողոսը պատմում է իր դարձի գալը	
22:6-11 22:12-16		22:6-11 22:12-16	22:6-11 22:12-16	22:6-11 22:12-16
Պողոսը ուղարկված հեթանոսներին			Հեթանոսներին քարոզելու Պողոսի կոչումը	
22:17-21		22:17-21	22:17-21	22:17-21
Պողոսը և հռոմեացի հազարապետը	Պողոսի հռոմեական քաղաքացիությունը			Պողոսը Հռոմի քաղաքացի
22:22-29	22:22-29	22:22-29	22:22-25 22:26 22:27ա 22:27բ 22:28ա 22:28բ 22:29	22:22-29
Պողոսը ատյանի առջև	Մինեղորոնք բաժանված		Պողոսը ատյանի առջև	Նա կանգնած Մինեղորոնի առջև
(22:30-23:11) 22:30-23:5	22:30-23:10	22:30	(22:30-23:11) 22:30	(22:30-23:11) 22:30

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
 ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:1
¹«Մարդիկ, եղբայրներ և հայրեր, այժմ իմ պաշտպանողական խոսքը լսեցեք»:

- 22:1
- NASB «Եղբայրներ և հայրեր»
 - NKJV «Մարդիկ, եղբայրներ և հայրեր»
 - NRSV «Եղբայրներ և հայրեր»
 - TEV «Իմ հրեա ազգակիցներ»
 - NJB «Իմ եղբայրներ, իմ հայրեր»

Նյումեն և Նիդայի *Գործք Առաքելոցի թարգմանչի ձեռնարկ* /Newman and Nida *A Translator's Handbook on the Acts of Apostles*/ գրքում ասվում է, որ այս խոսքերը վերաբերում են Պողոսի տարիքի և նրանից ավելի տարիքով մեծ տղամարդկանց (տես՝ էջ 419): Սակայն ես կարծում եմ, որ սա դարձվածք է (Ստեփանոսը գործածեց նմանատիպ նախաբան 7:2-ում), քանի որ Պողոսը վաթսույն տարեկանից բարձր էր այս իրադարձության ժամանակ և սա չի համապատասխանում ամբոխի տարիքին:

Պետք է որ այս ամբոխի մեջ նաև հավատացյալներ լինեին: Հավանաբար «եղբայրներ» տերմինը հասկապես նրանց էր վերաբերում: Սակայն, Պողոսը միշտ իրեն իր ցեղի և ազգության մարդ էր ներկայացնում (տես՝ Հռոմ.9:1-5; Փիլ.3:5):

■ «պաշտպանողական /անգլ.՝ պաշտպանության/» Անգլերեն լեզվի «apology» բառը ծագել է հունարեն այս տերմինից՝ *apologia*, որը նշանակում է իրավաբանորեն բառացի պաշտպանություն: Այս տերմինը կիրառվում է Գործք Առաքելոցում մի քանի անգամ՝ կապված Պողոսի դատերի հետ (տես՝ 25:16; 2 Տիմ.4:16):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:2
²Եվ երբ լսեցին, որ իրենց հետ երբայրենով է խոսում, առավել ևս լուռ մնացին:

22:2 «Երբայրենով /անգլ.՝ երբայրեն բարբառով/» Մա վերաբերում է արամերենին: Ավետարաններում ամենուր, որտեղ Հիսուսի ուղղակի խոսքերն են արձանագրված, արամերեն լեզվով է: Մա հնագույն երբայրենին համանման լեզու էր: Այն հանդիսանում էր Պարսկական Կայսրության լեզուն: Հրեաները սովորեցին այս լեզուն, երբ գտնվում էին պարսկական տիրապետության ներքո: Օրինակ, Նեեմիա 8-ում, որտեղ Եզրասը կարդում է Մովսեսի Օրենքը Երբայրենով, Ղևտացիները ժողովրդի համար պետք է թարգմանեին արամերեն լեզվի (տես՝ Նեեմ.8:7):

■ «առավել ևս լուռ մնացին» Պողոսի բարեհամբույր՝ քաղաքավարի նախաբանին միահյուսվելով իր սահուն արամերենը և այն փաստը, որ այդ ամբոխի մեջ շատերը ճանաչում էին նրան կամ գիտեին նրա մասին, պատճառ հանդիսացավ, որ անմիջապես զարմանալի լռություն տիրեց: Նրանք ուզում էին լսել այն, ինչ Պողոսը պետք է ասեր. հրաշալի հնարավորություն էր հուղայականության առաջնորդներին քարոզելու համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:3-5
³Եվ նա ասաց. «Ես հրեա մարդ եմ, Կիլիկիայի Տարսոն քաղաքում եմ ծնվել, բայց մեծացել եմ այս քաղաքում՝ Գամաղիելի ոտքերի մոտ, կրթվել հայրենի Օրենքի կատարյալ ճշմարտությամբ: Ինչպես դուք բոլորդ եք այսօր, ես էլ նախանձախնդիր էի Աստծո նկատմամբ, ⁴մինչև իսկ տղամարդկանց ու կանանց կապելով ու բանտերը նետելով այս ճանապարհը /անգլ.՝ մինչ ի մահ/ հալածեցի: ⁵Ինչպես որ քահանայապետն էլ կվկայի իմ մասին և ամբողջ ձերակույտը, որոնցից թղթեր վերցնելով ես գնում էի Դամասկոս՝ եղբայրների մոտ, որ այնտեղիններին էլ կապված Երուսաղեմ բերեմ, որ պատժվեն:

22:3 «Ես հրեա մարդ եմ, ...Տարսոն քաղաքում եմ ծնվել» Պողոսը փորձում է իրեն նույնացնել՝ հավասարեցնել այս հրեա ամբոխի հետ: Նա փաստում է իր հրեությունը (տես՝ 2 Կորնթ.12:22; Փիլ.3:5-6): Հնարավոր է նրան համարում էին որպես սփյուռքի հունախոս հրեա:

«Բայց մեծացել եմ այս քաղաքում» արտահայտությունը հնարավոր է քերականորեն նկատի ունի կամ (1) Տարսոն քաղաքը, կամ էլ (2) Երուսաղեմը: Ըստ համատեքստի ակնարկվում է Երուսաղեմը: Եթե

այդպես է, ապա հավանական է, որ Պողոսը իր հռոտերական կրթությունը ստացել է բացի Տարսուսից ինչ-որ մեկ այլ տեղ:

■ **«Գամաղիելի ոտքերի մոտ, կրթվել»** Այս մարդը շատ հարգված ռաբբի էր՝ վարդապետ (տես՝ 5:34-40): Նրան մի քանի անգամ մեջբերում է *Միշնան* (Mishnah): Պողոսը լիբերալ ռաբբիական Հիլել դպրոցի ուսանող էր եղել: Այս ամբոխին հաստատ զարմացրեց այդ հայտարարությունը: Տե՛ս Հատուկ Թեմա. Գամաղիել 5:34:

■ **«հայրենի Օրենքի կատարյալ /խիստ/ ճշմարտությամբ»** Սա ակնարկում է, որ նա Փարիսեցի էր (տես՝ 23:6; 26:5) և նախանձախնդիր այդ հարցում (տես՝ հ. 4; Գաղ.1:14; Փիլ.3:6): Փարիսեցիները նվիրվել էին խստագույնս հնազանդվելու Բանավոր Ավանդություններին (այսինքն՝ Թավմուդին), որը մեկնաբանում էր Հին Կտակարանը:

■ **«Ինչպես դուք բոլորդ եք այսօր»** Պողոսը հասկանում էր նրանց ոգևորությունն ու նվիրվածությունը: Նա էլ ժամանակին նրանց պես էր:

22:4 «հալածեցի» Պողոսի ամբողջ ծառայության ընթացքում նա անդրադառնում էր այդ օրերին խորին զղջումով: Նա այս մասին հաճախ էր նշում (տես՝ 9:1,13,21; 22:4,19; 26:10-11; Գաղ.1:13,23; Փիլ.3:6; 1 Տիմ.1:13): Պողոսը հաճախ իրեն ներկայացում էր սուրբերից ամենափոքրը իր անցյալի հենց այս գործերի պատճառով (տես՝ 1 Կորնթ.15:9; 2 Կորնթ.12:11; Եփես.3:8; 1 Տիմ.1:15):

■ **«այս ճանապարհը /անգլ.՝ Ճանապարհը/»** Սա Քրիստոնեական Եկեղեցու ամենաառաջին անվանումն էր (տես՝ 9:2; 19:9,23; 22:4; 28:14,22): Այն վերաբերում է՝

1. Հիսուսին որպես «Ճանապարհը» (տես՝ Հովհ.14:6)
2. աստվածաշնչյան հավատքին՝ որպես ապրելակերպ (2 Օր.5:32-33; 31:29; Սաղմ.27:11; Ես. 35:8):

■ **«մինչ ի մահ»** Պողոսը մի քանի Քրիստոնյաների մահվան պատճառ էր հանդիսացել (տես՝ 8:1,3; 26:10): Իհարկե նա նաև իր բաժինն ուներ Ստեփանոսի մահվան մեջ (տես՝ 7:58; 8:1):

■ **«տղամարդկանց ու կանանց կապելով ու բանտերը նետելով»** Այն փաստը, թե ինչպես է Պողոսը վերաբերվել նույնիսկ կանանց, ցույց է տալիս նրա հալածանքների դաժանությունը:

22:5 Պողոսը պատմում է այն դեպքերը, որոնք առաջնորդեցին իրեն Դամասկոսի ճանապարհին տեղի ունեցած դարձին՝ Հիսուսին հավատալուն (տես՝ Գործք 9):

■ **«ծերակույտը»** Սա բառացի նշանակում է «բոլոր ծերերը»: Դուկասը այս նույն տերմինը կիրառում է Սանեդրինի համար Դուկ.22:66-ում: Երուսաղեմում գտնվող հրեա առաջնորդների պաշտոնական խմբի (Սանեդրինի) համար սովորաբար սա կիրառելի տերմին չէր: Հնարավոր է այն վերաբերում էր վարչական մի փոքր ենթակառուցի:

■ **«որոնցից թղթեր վերցնելով /անգլ.՝ նաև թղթեր էի ստանում/»** Ֆ. Ֆ. Բրյուսի, *Պողոսը՝ ազատագրված սրտով Առաքյալը* (F. F. Bruce, *Paul: Apostle of the Heart Set Free*) գրքում կա հետաքրքիր մի քննարկում և փաստագրություն շրջապատող երկրներից Սանեդրինին հանձնվելու իրավունքների վերաբերյալ (էջ՝ 72): Պատմական ավելի շատ տեղեկությունների համար տես 1 Մակ.15:21 և Ֆլավիոս Չոզեֆոս:

■ **«այնտեղիներին էլ»** Այս արտահայտությունը ակնարկում է, որ այս մարդիկ հավատացյալ հրեաներ էին, որոնք փախել էին Երուսաղեմի հալածանքներից:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:6-11
Վե՛ր այնպես եղավ, որ գնալու ժամանակ, երբ Դամասկոսին էի մոտենում, կեսօրվա մոտ հանկարծ երկնքից մի ուժեղ լույս փայլատակեց իմ շուրջը: ⁷Եվ ընկա գետին ու մի ձայն լսեցի, որ ասում էր. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես ինձ հալածում»: ⁸Ես էլ պատասխանեցի, թե՛ «Դու ո՞վ ես, Տե՛ր»: Նա էլ ինձ ասաց. «Ես Հիսուս Նազովրեցին եմ, Ում դու հալածում ես»: ⁹Իսկ նրանք, որ ինձ հետ էին, տեսան լույսը և վախեցան, բայց ինձ հետ խոսողի ձայնը չլսեցին»: ¹⁰Եվ ես ասացի. «Ի՞նչ անեմ, Տե՛ր»: Եվ Տե՛րն ինձ ասաց. «Վե՛ր կաց, գնա՛ Դամասկոս, և այնտեղ քեզ կապի այն ամենը, ինչ որ սահմանված է, որ դու անես»: ¹¹Եվ քանի որ այդ լույսի փառքից չէի տեսնում, ինձ հետ եղողները ձեռքս բռնելով առաջնորդեցին, և ես մտա Դամասկոս:

22:6 «կեսորվա մոտ» Սա ավելացված մանրամասնություն է, որը չկա 9:3-ում:

22:7 Սա 9:4-ի կրկնությունն է:

22:8

NASB, NJB

«Հիսուս Նագովրեցի»

NKJV, NRSV, TEV

«Հիսուսը Նագարեթից»

Պողոսը տալիս է իր անձնական վկայությունը Գործք Առաքելոցում երեք անգամ՝ Գործք 9:1-31; 26:4-18, սակայն այստեղ և 26:9 միակ տեղերն են, որտեղ նա գործածում է այս անվանումը: Բառացի, իրականում այն «Հիսուս Նագովրեցի» է: Սա 24:5-ում ծաղրանքի տերմին է, սակայն Մատթ.2:23-ում մարգարեական տերմին: Հնարավոր է, որ այն աշխարհագրական տեղանքի անվանումը չէ, այլ Մեսիական «ընձյուղ» տիտղոսից (տես՝ Ես.11:1; 53:2), եբրայերեն *nēser* բառից (տես՝ Երեմ.23:5; 33:15; Չաբ.3:8; 6:12): Տե՛ս Հատուկ Թեմա 2:22:

■ **«Ում դու հալածում ես»** Տե՛ս ամբողջական գրառումը՝ 9:4-ում:

22:9 «խոսողի ձայնը չլսեցին /անգլ.՝ չհասկացան/» Պողոսի դարձի արձանագրությունների միջև՝ 9:7 և 22:9-ում, հակասություններ չկան: Հունարեն քերականությունը ակնարկում է, որ իրեն ընկերակցող մարդիկ լսեցին ձայնը, սակայն բառերը չհասկացան: Տես՝ 9:7, ավելի լիարժեք քննարկման համար:

22:10 «ինչ որ սահմանված է, որ դու անես» Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Այս խոսքերը արտացոլում են 9:15-16-ում Անանիային ուղղված Հիսուսի խոսքերը: Պողոսը պետք է կատարեր մի շատ բացառիկ և դժվարին առաքելություն: Ինչ-որ առումով Պողոսի տեսիլքն ու առաքելությունը հետևում են ՀԿ մարգարեների օրինակներին (տես՝ Եսայի 6; Երեմիա 1; Եզեկ. 2-3):

22:11 Կարծում եմ, որ սա է եղել Պողոսի «մարմնի խայծի» պատճառը: Պողոսի մարմնի մեջ ունեցած խայծի վերաբերյալ մի քանի տեսություններն այսպիսին են՝

1. վաղ Եկեղեցու Հայրերը, Լյութերը և Կավլինը, ասում են, որ դա եղել է իր մեղավոր էության հետ կապված հոգևոր խնդիրներ (այսինքն՝ «մարմնում»)
2. Ոսկերեքանն ասում է, որ դա խնդիր էր մարդկանց հետ կապված (տես՝ Թվոց 33:55; Դատ.2:3)
3. ոմանք ասում են, որ դա էպիլեպսիա էր
4. Սըր Ուիլյամ Ռամսեյն ասում է, որ դա մալարիա էր
5. Ես կարծում եմ, որ դա օֆտալմիա էր՝ աչքերի այրոց, աչքերի տարածված խնդիր (համեմատեք՝ Գաղ.4:13-15 և 6:11), որը հետևանքն էր եղել Դամասկոսի ճանապարհին տեղի ունեցած այս սկզբնական կուրության (տես՝ Գործք 9. հավանաբար ՀԿ-յան մեջբերում Հեսու 23:13-ից):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:12-16
¹²Եվ Անանիա անունով մի մարդ՝ ըստ Օրենքի նվիրված, որ Դամասկոսում բնակվող բոլոր հրեաների մոտ բարի համբավ ուներ, ¹³եկավ կանգնեց կողքիս ու ինձ ասաց. «Մավո՛ւղ եղբայր, տեսողությունդ ստացի՛ր»: Եվ ես նույն պահին վեր՝ նրան նայեցի: ¹⁴Եվ նա ասաց. «Մեր հայրերի Աստվածը քեզ ընտրել է, որպեսզի ճանաչես Նրա կամքը ու տեսնես այն Արդարին ու Նրա բերանից ձայնը լսես: ¹⁵Քանի որ բոլոր մարդկանց առջև Նրա վկան պիտի լինես այն ամենի համար, ինչ որ տեսար ու լսեցիր: ¹⁶Եվ հիմա, ինչո՞ւ ես ուշանում: Վեր կաց, մկրտվի՛ր և լվա՛րք մեղքերը՝ Տիրոջ անունը կանչելով»:

22:12 Այս համարը ավելի լիարժեք է նկարագրում Անանիային, քան 9:10 համարը: Նա եկեղեցու ծառայող էր, և ըստ երևույթին Պողոսի պես Մովսիսական Օրենքի չափանիշներով նվիրյալ էր: Սա կարող է ակնարկել, որ նա նույնպես Փարիսեցի էր.

1. Դուկասը նմանատիպ բնութագրական է տալիս Սիմեոնի համար, որը տեսավ մանուկ Հիսուսին Տանարի մեջ (տես՝ Դուկ.2:25):
2. Դուկասն այսպես է ասում նաև սփյուռքում գտնվող այն հրեաների մասին, որոնք եկել էին Երուսաղեմ Պենտեկոստեի տոնին, երբ Սուրբ Հոգին գործությամբ իջավ (տես՝ Գործք 2:5):
3. Դուկասն այս խոսքը կիրառում է երրորդ անգամ այն մարդկանց համար, որոնք թաղեցին Ստեփանոսին իր քարկոծումից հետո (տես՝ Գործք 8:2):

Հետևաբար այս տերմինը այնքան էլ կապված չէ Քրիստոսին հավատացողի հետ, որքան հուղայականության անկեղծ հետևորդի: Նա կոչվում է «աշակերտ» 9:10-ում, ուստի կարելի է ենթադրել, որ դարձել էր հավատացյալ: Չնայած, եթե անգամ նա Քրիստոսն էր, Դամասկոսի հրեական համայնքի կողմից հարգված մարդ էր:

22:13 Անանիայի Պողոսին ցուցաբերած ծառայությունը մեզ ցույց է տալիս, որ ՆԿ-ում եկեղեցու աշխատակազմի (հատուկ ձեռնադրված անձնակազմ) և ծառայող հավատացյալների միջև հստակ տարբերություն չկար: Հիսուսի խոսքերը իշխանություն էին տալիս նրան՝

1. ձեռնադրելու (տես՝ 9:12,17) Պողոսին և բժշկություն հռչակելու (ԱՆՈՐՈՇ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, հ.13, տես՝ Հատուկ Թեմա 6:6):
2. հայտնել Հիսուսի կամքը Պողոսի ծառայության վերաբերյալ (հ. 15):
3. պատվիրել Պողոսին, որ մկրտվի (հնարավոր է Պողոսն ինքն իրեն է մկրտել, ինչպես որ հրեաները պահանջում են նորադարձներից, ԱՆՈՐՈՇ ՉԵՉՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, հ. 16)
4. գործիք հանդիսանալ Պողոսի Սուրբ Հոգով լցվելու համար (տես՝ 9:17):

Դուք կարող եք տեսնել Անանիայի սիրտը, երբ այս դաժան հալածողին և մարդասպանին (տես՝ 9:13-14) կոչում է «Եղբայր Սավո՛ւղ»:

22:14 «Մեր հայրերի Աստվածը» Այս արտահայտությունը կիրառվում է նկարագրելու հրեաների երկրպագության Աստծուն: Պողոսն ուզում է հստակեցնել, որ Նա հենց ՅԱՀՎԵՆ էր (տես՝ Հատուկ Թեմա 1:68), որ խոսեց իր հետ և դիմեց իրեն Իր Որդու՝ Հիսուսի միջոցով: Պողոսին ոչ մի ուրիշ աստված չէր կանչողը, այլ հենց հրեաների Աստվածը:

■ **«ճանաչես Նրա կամքը»** Մարդկության համար ՅԱՀՎԵԻ ամենակարևոր կամքն այն է, որ ճանաչեն Հիսուսին (տես՝ Հովհ.6:29,40): Աստծո կամքն էր, որ Պողոսն ապագայում լիներ միսիոներ՝ Առաքյալ հեթանոս ազգերի համար (տես՝ 9:15; 22:15; 26:16):

■ **«տեսնես այն Արդարին»** Սա Մեսիայի անուններից է (տես՝ Սաղմ.45; 72; Գործք 3:14; 7:52; 1 Հովհ.2:1): Պողոսի համար հրաշալի հնարավորություն էր ունենալ փառավորված Հիսուսի անձնական հայտնությունը (ինչպես Ստեփանոսը ունեցավ, տես՝ 7:55-56): Տես Հատուկ Թեմա. Արդարություն, 3:14:

■ **«և Նրա բերանից ձայնը լսես»** Կարծես թե սա վերաբերում է հհ. 7-8-ում երկնքից հնչող ձայնին (այսինքն՝ *Bat Kol*, տես՝ 2 Օր.4:12; 3 Թագ.19:12-13; Հոր 4:16; Երեմ.25:30; Եզեկ.1:25,28; Հովել 3:16; Ամովս 1:2; Դուկ.3:22; 9:35; Գործք 10:13,15), սակայն այն կարող է նաև վերաբերել հհ. 17-21: Նաև հնարավոր է, որ դա վերաբերում է Պողոսի ամբողջ ծառայության տարիների ընթացում ունեցած մի քանի հատուկ տեսիլքների: Տես հհ. 17-21 ցանկը:

22:15 «բոլոր մարդկանց առջև ... Նրա վկան» Սա այն սրանչելի ճշմարտությունն է, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը **բոլոր** մարդկանց համար է (տես՝ Հովհ.3:16; 4:42; 1 Տիմ.2:4; 4:10; Տիտոս 2:11; 2 Պետ.3:9; 1 Հովհ.2:1; 4:14): Բոլորը չէ, որ կրնդունեն, բոլորը չէ, որ պարզ կհասկանան, սակայն Աստծո սիրտ մեջ բոլորն են ընդգրկված և Հիսուսի զոհն ու Պողոսի քարոզչությունը բոլորի համար է: Հենց այս ճշմարտությունն էր, որ այս ամբողջ մերժեց (տես՝ հ. 22):

Պողոսը դիտմամբ չի օգտագործում «Հեթանոս» բառը, որ Անանիան էր փոխանցել իրեն Հիսուսից (տես՝ 9:15): Պողոսը գիտեր, թե որքան պայթյունավտանգ էր այս նսեմացուցիչ տերմինը *go'im* (ազգերը կամ հեթանոսները) այս ծայրահեղ պահպանողական հրեաների համար: Նրանց հակումներն ու ռասսայական հպարտությունը նույնիսկ ՀԿ-ի մարգարեներին էին հափշտակել ամբողջ մարդկության համար տրված մարգարեություններին:

■ **«ինչ որ տեսար ու լսեցիր»** Այս առաջին ԲԱՅԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է, երկրորդը՝ ԱՆՈՐՈՇ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ: Թե ինչու են այս երկու ԲԱՅԵՐԸ տարբեր ժամանակներով, հայտնի չէ: Կարծես թե դրանք իրար համագոր լինեն: Պողոսն իր ամբողջ կյանքի ընթացքում փայփայելու էր հարուցյալ Քրիստոսի հետ ունեցած այս անձնական հանդիպման հիշողությունը: Գործքում այդ մասին նա երեք անգամ է նշում: Հավանաբար բոլոր ժողովարաններում նա տալիս էր իր անձնական վկայությունը:

22:16 «մկրտվի՛ր և լվա՛ քո մեղքերը» Այս երկու ԲԱՅԵՐՆ Է՛լ ԱՆՈՐՈՇ ՉԵՉՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ են: Սա ՀԿ-յան ակնարկ է ծիսական լվացումների վերաբերյալ (տես՝ Դևտ.11:25,28,40; 13:6,34,56; 15:5-13,21-22,27; 16:26,28; 17:15-16; Թվոց 8:7,21; 19:19; 2 Օր.23:11): Այստեղ այն կիրառվում է որպես Քրիստոսի մեջ մեր հոգևոր մաքրման խորհուրդ (տես՝ 1 Կորնթ.6:11; Եփես.5:26; Տիմ.3:5; Եբր.10:22):

Մկրտությունը վաղ եկեղեցու հանրային հավատքի դավանության կերպ էր: Աստվածաբանական ավելի ամբողջական քննարկման համար տե՛ս գրառումներ Հատուկ Թեմա 2:38:

Ուշադրություն դարձրեք, որ ՉԵԶՈՔ ՄԵՌ վերաբերում է թե՛ մկրտությանը (ԱՆՈՐՈՇ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) և թե՛ լվացմանը (ԱՆՈՐՈՇ ՉԵԶՈՔ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ): Պողոսը չէր կարող մաքրել իր մեղքերը, սակայն կարող էր իրեն մկրտել (նորահավատների համար հրեական արարողություն): Հաճախ ասվում է, որ ջրի մեջ ընկղմելը միայն ՆԿ-յան օրինակ է (տես՝ Հռոմեացիների 6 և Կողոսացիների 2), սակայն այստեղ մկրտությունը կապված է լվացման փոխաբերության հետ (տես՝ 2:38; 1 Կորնթ.6:11; Եփես.5:26; Տիտոս 3:5; Եբր.10:22): Աստվածաբանորեն 1 Պետ.3:21-ը ցույց է տալիս, որ դա խորհուրդն է և ոչ թե արարողությունը:

Ժամանակակից մեկնաբանները պետք է զգույշ լինեն չափից շատ ՉԵԶՈՔ կամ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՌի վրա հիմնվելուց, քանի որ սրանք միաձուլվեցին Կոյնե հունարենում ԿՐԱՎՈՐԱԿԱՆԻ հետ: Ասվում է, որ Պողոսը մկրտվել է (ԿՐԱՎՈՐԱԿԱՆ) 9:18-ում: Հարցը Պողոսի մկրտության կերպի՝ մեթոդի մեջ չէ, այլ հենց մկրտությունը:

■ **«Տիրոջ անունը կանչելով»** «Անունը» կախարդական բանաձև չէ, այլ հանրության առջև Հիսուսի սեփականությունը լինելու և Նրա հետ անձնական փոխհարաբերության սկիզբ դնելու գիտակցումը (ԱՆՈՐՈՇ ՉԵԶՈՔ ԴԵՐԲԱՅԸ կիրառված որպես հրամայական), որի հետևանքն է Քրիստոսակերպ վերաբերմունքն ու ապրելակերպը: Վաղ եկեղեցու մկրտության բանաձևը՝ խոսքը, թեկնածուի կողմից բանավոր կերպով հռչակվում էր «Հիսուսն է Տերը» (տես՝ Հռոմ.10:9-13; 1 Կորնթ.1:2; 2 Տիմ.2:22): Ծիշտ բառերն ու սահմանումը չէ կարևորը (արարողակարգը), այլ մկրտվողի սիրտը (հավատալը, ընդունելը): Տե՛ս Գրառում 2:38 և Հատուկ Թեմա 2:21:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:17-21

17Եվ երբ ես վերադարձա Երուսաղեմ և տաճարում աղոթք էի անում, մտահափշտակության մեջ ընկա ¹⁸և տեսա Նրան, որ ինձ ասում էր. «Շտապ հեռացի՛ր Երուսաղեմից, քանի որ քո՛ Իմ մասին տված վկայությունը չեմ ընդունելու»: ¹⁹Ես էլ ասացի. «Տե՛ր, իրենք շատ լավ գիտեն, որ ես էի Քեզ հավատացողներին բանտ նետում և ժողովատեղիներում ձեծել տալիս: ²⁰Ու երբ Քո Ստեփանոս վկայի արյունն էր թափվում, ինքս էլ ներկա էի և կողմնակից էի նրան սպանելուն, և նրան սպանողների հագուստներն էի պահում: ²¹Եվ ինձ ասաց. «Գնա՛, քանի որ ես քեզ հեռավոր հեթանոսների մոտ պիտի ուղարկեմ»:

22:17-21 Սա Պողոսի ունեցած հատուկ տեսիլքներից ևս մի օրինակ է (տես՝ 18:9-10; 23:11; 27:23-24): Այս համատեքստում այն համընկնում է հ. 14-ի մարգարեության հետ:

22:17 «երբ ես վերադարձա Երուսաղեմ» Պողոսի վկայության մեջ երկու գլուխներում էլ՝ 9-րդ և այստեղ, կարծես թե ակնարկվում է, որ Երուսաղեմ է վերադարձել հենց իր դարձից հետո, սակայն Գաղ.1:11-24-ը հայտնում է երկար ժամանակահատված (մինչև երեք տարի) նախքան Պողոսը կվերադառնար Երուսաղեմ:

■ **«մտահափշտակության մեջ ընկա»** Տե՛ս գրառում 10:10:

22:18 Հիսուսը Պողոսին երկու ԱՆՈՐՈՇ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆով է խոսում. «շտապի՛ր» /հայերենում՝ *շտապ*/ և «հեռացի՛ր»: Հիսուսի զգուշացումը լուսաբանված է հելլենական հրեաների կողմից Պողոսին սպանելու դավադրության պատմության մեջ, որն արձանագրված է 9:29-ում:

22:19 «Տեր» Քերականորեն այս բառին նախորդող խոսքը կարող էր լինել կա՛մ «մեր հայրերի Աստվածը» (հ. 14), կա՛մ էլ «այն Արդարը» (հ. 14): Հրեա ամբողջը պետք է որ հասկանար, որ խոսքը ՅԱՀՎԵի մասին է, սակայն ցանկացած հավատացյալ, որ ներկա էր այնտեղ, հասկանում էր, որ խոսքը Հիսուսի մասին էր: ՆԿ-ում Հիսուսի վերաբերյալ ՀԿ-յան մեջբերումների թափանցիկությունը սովորական է: Դա «երրորդություն հանդիսացող միաստվածության» անհայտությունն է (տես՝ Հատուկ Թեմա 2:32 և 2:39):

■ **«բանտ նետում և ձեծել տալիս»** Սրանք ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ են, որոնք մատնանշում են անցյալում շարունակվող գործողություն: Տե՛ս ամբողջական գրառում 22:4:

■ **«Քեզ հավատացողներին»** Տե՛ս այս թեմային առնչվող Հատուկ Թեմա 2:40, 3:16 և 6:5:

22:20 Տե՛ն գրառում 7:58-59 և 8:1: Պողոսը նկարագրում է նախկինում իր կատարած ցավալի արարքները կիրառելով այս երեք ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ:

1. Նա կանգնած էր այնտեղ ամբոխի հետ
 2. Նա համաձայն էր քարկոծմանը
 3. Նա պահում էր Ստեփանոսին քարկոծողների հագուստները:
- Ստեփանոսի քարոզն ու մահը խորը ազդեցություն էին թողել Պողոսի վրա:

22:21 «**Ես քեզ հեռավոր հեթանոսների մոտ պիտի ուղարկեմ**» Սա ակնհայտ ակնարկ էր Պողոսի միսիոներական ճամփորդությունների մասին և ի վերջո Պաղեստինում Հռոմեական կառավարության պաշտոնյաների առջև վկայելու, ինչպես նաև Հռոմում Կայսրի առջև վկայություն տալու վերաբերյալ: Նա գիտեր, որ այս հայտարարությունը բորբոքելու էր ամբոխին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:22-29

²²Եվ նրանք, որ մինչև այս խոսքը ունկնդրում էին նրան, բարձրացրին իրենց ձայներն ու ասացին. «Վերացրո՛ւ այդ մարդուն աշխարհի երեսից, քանի որ այդպիսին չպետք է ապրի»:

²³Եվ մինչ աղաղակում էին, հագուստները նետում և օդի մեջ փռոչի էին ցանում,²⁴ հազարապետը հրամայեց, որ նա բերդ տարվի և ձեռով հարցուփորձ արվի, որպեսզի ինքն իմանա, թե ինչ հանցանքի համար են նրա դեմ այդպես աղաղակում:²⁵ Եվ երբ նրան թոկերով պինդ կապեցին, Պողոսն իր մոտ կանգնած հարյուրապետին ասաց. «Օրինավո՞ր է, որ դուք ձեռք մի մարդու, որ հռոմեացի է և չի դատապարտված»:

²⁶ Եվ երբ հարյուրապետն այս լսեց, մոտեցավ հազարապետին և պատմեց ու ասաց. «Չգուշացի՞ր արածիցդ, քանի որ այս մարդը հռոմեացի է»:

²⁷ Ապա հազարապետը եկավ ու ասաց նրան. «Ասա՛ ինձ, դու հռոմեացի՞ ես»:

Եվ նա ասաց՝ այո:²⁸ «Ես մեծ գումարով եմ գնել այդ ազատությունը»:

Եվ Պողոսն ասաց. «Իսկ ես ազատ եմ ծնվել»:

²⁹ Եվ նրանք, ովքեր նրան հարցաքննելու էին, անմիջապես հեռացան նրանից: Եվ հազարապետն էլ վախեցավ, երբ իմացավ, թե հռոմեացի է, որովհետև կապել էր նրան:

22:22 Նրանց հայտարարությունը դարձվածքաբանական է և երկու մասից է կազմված՝

1. «վերացրու (ՆԵՐԿԱ ԱՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) այդ մարդուն աշխարհի երեսից» (տես՝ Ղուկ.23:18; Գործք 21:36)
2. «այդպիսին չպետք է (հարմար չէ, որ) ապրի» (ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) (տես՝ Գործք 25:24)

Ի հայտ եկան նրանց ռասայական և կրոնական հակումները: Բոլոր մարդիկ պատմականորեն և մշակութային պայմանական են:

22:23

NASB	«իրենց հագուստները նետում էին»
NKJV	«պատռում էին իրենց հագուստները»
NRSV	«իրենց վերարկուները նետում էին»
TEV	«թափահարում էին իրենց հագուստները»
NJB	«թափահարում էին իրենց վերարկուները»

Հագուստ պատռելը և օդում թափահարելը կամ օդի մեջ նետելը հայիոյության վրա սգալու ՀԿ-յան նշաններ էին (*Հունարեն-Անգլերեն Բառարան*, Լու և Նիդա, /*Greeko-English Lexicon*, Louw and Nida/ հատոր 1, էջ՝ 213, տես՝ 14:14):

■ «**օդի մեջ փռոչի էին ցանում**» Պողոսի բախտը բերել էր, որ մոտակայքում հասանելի քարեր չեն եղել: Երբ մեկը փռոչի է ցանում իր գլխին, դա նույնպես սգո նշան է (տես՝ Հեսու 7:6; 1 Թագ.4:12; 2 Թագ.1:2; Հոր 2:12), այստեղ սգում էին հայիոյության վրա (տես՝ Եսայի 47; Ողբ Երեմիա 2; Միքիա 1:10):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԳԱԼՈՒ ԾԵՍԵՐԸ

Իսրայելացիները իրենց սիրելիների մահվան և իրենց ապաշխարության ժամանակ, ինչպես նաև հավաքական հանցանքների դեպքում իրենց վիշտն արտահայտում էին մի քանի ձևով՝

1. պատռում էին արտաքին հագուստը, Ծննդ.37:29,34; 44:13; Դատ.11:35; 2 Թագ.1:11; 3:31; 3 Թագ.21:27; Հոր 1:20
2. քուրձ էին հագնում, Ծննդ.37:34; 2 Թագ.3:31; 3 Թագ.21:27; Երեմ.48:37
3. կռչիկները հանում էին, 2 Թագ.15:30; Եսայի 20:3

4. ձեռքերը դնում էին գլխի վրա, 2 Թագ.13:19; Երեմ.2:37
5. մոխիր կամ փոշի էին ցանում իրենց գլխին, Հեսու 7:6; 1 Թագ.4:12; Նեեմ.9:1
6. նստում էին հողի վրա, Ողբ.2:10, Եզեկ.26:16 (պառկում էին, 2 Թագ.12:16), Եսայի 47:1
7. կուրծք էին ծեծում, 1 Թագ.25:1; 2 Թագ.11:26; Նավում 2:7
8. կտրում էին մարմինը, 2 Օր.14:1; Երեմ.16:6; 48:37
9. ծոմ էին պահում, 2 Թագ.12:16,21-23; 3 Թագ.21:27; 1 Մնաց.10:12; Նեեմ.1:4
10. ողբ էին երգում, 2 Թագ.1:17; 3:31; 2 Մնաց.35:25
11. ճաղատություն (մազերը պոկում կամ սափրում էին), Երեմ.48:37
12. մորուքները կարճացնում էին, Երեմ.48:37
13. քողարկում էին գլուխը կամ դեմքը, 2 Թագ.15:30; 19:4

22:24 «հազարապետը» Սա *chiliarch* բառն է (տես՝ հհ. 27-29), որը նշանակում է 1000 հոգու առաջնորդ, ինչպես որ *centurion* (տես՝ հհ. 25,26) բառը նշանակում է 100 հոգու առաջնորդ: Սակայն, այս թվերը հարաբերական են: Նա Երուսաղեմում գտնվող հռոմեական կայսրոսի պատասխանատու սպա էր:

■ **«բերդ»** Սա վերաբերում է Անտոնիոս Ամրոց բերդին, որը նայում էր դեպի Տանարի տարածքը: Այն կառուցվել էր Նեեմիայի օրերում Պարսկական Տիրապետության ժամանակ (տես՝ Նեեմ.2:8; 7:2): Հերովդես Մեծը վերանվանել էր այն Մարկ Անտոնիոսի անունով: Տոնական օրերին Երուսաղեմի բնակչությունը սովորականից երեք անգամ ավելի խտանում էր: Հռոմեացիները անվտանգության նկատառումներով մեծաթիվ զինվորներ էին ուղարկում Կեսարիայից Անտոնիոսի ամրոցը:

■ **«ծեծով հարցուփորձ արվի»** Սա վերաբերում է «տեղեկությունը ծեծով դուրս քաշելուն»: Ծեծը պատժի դաժան միջոցներից էր: Ծատերը դրա ընթացքում մեռնում էին: Այն շատ ավելի ցավոտ էր, քան հրեական մտրակումը կամ հռոմեական մտրակներով ծեծը: Կաշվե մտրակի ծայրին մետաղյա, քարե կամ ոսկրե կտորներ էին հյուսված շարանի տեսքով և կիրառվում էր բանտարկյալներին մտրակելու համար:

22:25 «պինդ կապեցին» Սովորաբար մտրակելու համար բանտարկյալներին ծնկի էին բերում և կապում մի ցածր սյունից կամ հենարանից:

■ **«Օրինավոր է»** Այս զինվորներին գրեթե քիչ էր մնացել խախտելու իրենց սեփական օրենքը մի քանի կետերում.

1. Հռոմի քաղաքացին չէր կարող կապվել (տես՝ 21:33 և 22:29)
2. Հռոմի քաղաքացին չէր կարող մտրակվել (տես՝ Լիվյա, *Պատմություն* 10:9:4 /Livy, *History*/; Ցիցերոն /Cicero/, *Pro Rabirio* 4:12-13)
3. Պողոսի դատը չէր եղել և նրան հանցավոր չէին ճանաչել (տես՝ 16:37):

22:27 «դու հռոմեացի՞ ես» «Դու» դերանունը շեշտադրված է: Այս հռոմեացի սպան չէր հավատում, որ Պողոսը Հռոմի քաղաքացի էր:

22:28 «Ես մեծ գումարով եմ գնել այդ քաղաքացիությունը /հայերենում՝ ազատությունը/» Հռոմի քաղաքացի դառնալու երեք ճանապարհ կար՝

1. ծնունդով
2. պետության համար հատուկ ծառայություն մատուցելով
3. գնելով (Dio Cassius, *Rom. Hist.* 60:17:5-6)

Այս զինվորի անունը ակնարկում է, որ նա գնել էր իր քաղաքացիությունը Կլավդիոսի տիրակալության ժամանակ և որ նա հույն էր (Կլավդիոս Լյուսիաս, տես՝ 23:26): Կլավդիոսի կինը՝ Մեսապիենն, հաճախ վաճառում էր Հռոմի քաղաքացիություն մեծ գումարներով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 22:30

³⁰Եվ հաջորդ օրը, ցանկանալով ճշմարիտն իմանալ, թե հրեաներն ինչո՞վ են մեղադրում նրան, նրա կապերն արձակեց և հրամայեց կանչել գլխավոր քահանաներին և ամբողջ ատյանը և Պողոսին էլ բերելով՝ կանգնեցրեց նրանց առջև:

22:30 «նա.. հրամայեց կանչել... գլխավոր քահանաներին և ամբողջ ատյանը» Սա ցույց է տալիս Հռոմի՝ հռոմեական իշխանությունը: Սանեդրինը ստիպված էր հավաքվելու, շատ հավանական է Անտոնիոսի Ամրոցում: Կարծես թե սա ոչ պաշտոնական ժողով էր:

Պողոսը պետք է լսեր տեղացիների մեղադրանքները, սակայն հռոմեական միջավայրում:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ էր Պողոսը կամենում իրեն պաշտպանել այս ամբոխի առջև:
2. Ինչո՞ւ է Ղուկասը երեք անգամ արձանագրում Դամասկոսի ճանապարհին Պողոսի դարձի գալու վկայությունը:
3. Սուրբ Հոգու կողմից Անանիային օգտագործելը ինչպե՞ս է հերքում Առաքելական հաջորդականությունը՝ ժառանգությունը:
4. Թվարկեք Պողոսի հատուկ տեսիլքները: Պողոսին ինչո՞ւ էր հարկավոր այսքան շատ գերբնական իրադարձություններ:
5. Ինչպե՞ս է այս ամբոխի առջև Պողոսի պաշտպանության արդյունքը համապատասխանում Աստծո ծրագրին:

ԳՈՐԾՔ 23

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսը աստյանի առջև	Սանեդրինը պատակտվում է	Պողոսը Սանեդրինի առջև	Պողոսը աստյանի առջև	Նա կանգնում է Սանեդրինի առջև
22:30-23:5	22:30-23:10	(22:30-23:10) 22:30-23:5	(22:30-23:11) 23:1-3 23:4 23:5	(22:30-23:11) 23:1-5
23:6-10		23:6-10	23:6 23:7-9 23:10	23:6-10
23:11	Դավադրություն Պողոսի դեմ 23:11-22	Պողոսին ուղարկում են Կեսարիա 23:11	23:11	23:11
Դավադրություն Պողոսի կյանքի դեմ			Դավադրություն Պողոսի կյանքի դեմ	Հրեաների Դավադրությունը Պողոսի դեմ
23:12-22		23:12-15 23:16-22	23:12-15 23:16-18 23:19 23:20-21 23:22	23:12-15 23:16-22
Պողոսը ուղարկվում է Ֆելիքս կառավարչի մոտ	Ուղարկված Ֆելիքսի մոտ		Պողոսն ուղարկվում է Ֆելիքս կառավարչի մոտ	Պողոսը տեղափոխվում է Կեսարիա
23:23-30	23:23-35	23:23-25 23:26-30	23:23-25 23:26-30	23:23-25 23:26-30
23:31-35		23:31-35	23:31-35	23:31-35

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
 ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 23:1-5
 1Եվ Պողոսը հայացքն ուղղելով առաջինը՝ ասաց. «Մարդի՛կ եղբայրներ՛ր, ես մինչ այս օրս Աստծո առաջ բարի խղճմտանքով կյանք եմ վարել»: 2Անանիա քահանայապետն իր մոտ կանգնածներին հրամայեց, որ խփեն նրա բերանին: 3Այն ժամանակ Պողոսը նրան ասաց. «Աստված է քեզ խփելու, ծեփա՛ծ պատ, դու նստել ես, որ Օրենքի համաձայն ինձ դատես և Օրենքին հակառակ հրամայում ես, որ ինձ խփե՛ն»: 4Շուրջը հավաքվածներն ասացին. «Աստծո քահանայապետի՛ն ես նախատում»: 5Պողոսն էլ ասաց. «Եղբայրներ՛ր, չգիտեի, որ քահանայապետ է, քանի որ գրված է՝ «Բո ժողովրդի իշխանի դեմ չարախոսես»:

23:1
NASB, NRSV «ակնապիշ նայելով»
NKJV «հայացքն ուղղած»
TEV «ուղիղ նայեց»
NJB «անվրեպ /ուղիղ/ նայեց»

Տե՛ս ամբողջական գրառումներ 1:10-ում: Ղուկասն այս տերմինը հաճախ է կիրառում: Այստեղ այն օգտագործում է Պողոսի համար: Պողոսն այս տերմինը կիրառում է միայն 2 Կորնթ.33:7,13-ում:

■ **«Ատյանը»** Տե՛ս Հատուկ Թեմա. Սանեդրին 4:5:

■ **«Եղբայրներ»** Պողոսը հրեաներին մի քանի անգամ «եղբայրներ» է անվանում (13:26,38; 22:1,5; 23:1,5,6): Հրեաները Պողոսին եղբայր են անվանում 13:5-ում: Անանիան նրան եղբայր է կոչում 9:17-ում, ինչպես և Երուսաղեմի եկեղեցին՝ 21:20-ում:

Հրեա հավատացյալները նույնպես այսպես էին անվանվում (օր.՝ 9:30; 10:23; 11:1,12; 12:17; 15:3,7,13,22): Այս բառը կապված է «աշակերտ» բառի հետ 11:29; 18:27-ում: Այն նաև կիրառվում է հույն հավատացյալների համար 16:2,40-ում: Այսպիսով այս տերմինը երկիմաստ է և պետք է կապված լինի հատուկ տեքստի և խմբի հետ:

■ **«ես Աստծո առաջ... կյանք եմ վարել»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ եղանակն է *politeuō* տերմինի, որից էլ սերվում է անգլերեն *political* կամ *policy* բառերը (քաղաքական, կամ քաղաքականություն): Այս տերմինը կիրառվում է «քաղաքացի» նշանակությամբ (տես՝ Փիլ.1:27): Պողոսը հայտարարում է, որ ինքը հավատարմորեն կատարել է Աստծո առջև հուղայականության անդամ լինելու բոլոր իր պարտականությունները:

■
NASB «կատարելապես բարի խղճմտանքով»
NKJV «բարի խղճմտանքով»
NRSV «մաքուր խղճմտանքով»
TEV «իմ խիղճը կատարելապես մաքուր է»
NJB «կատարելապես մաքուր խղճմտանքով»

Պողոսը «խղճմտանք» տերմինը հաճախ կիրառում է Կորնթացիներին ուղղված նամակներում (տես՝ 1 Կորնթ.4:4; 8:7,10,12; 10:25,27,28,29; 2 Կորնթ.1:12; 4:2; 5:11): Այն վերաբերում է պատշաճի և անպատշաճի ներքին բարոյական զգացողությանը (տես՝ Գործք 23:1): Խղճմտանքը կարող է ազդեցության ենթարկվի մեր անցյալ կյանքի կողմից, մեր սխալ որոշումներից, կամ էլ Աստծո Հոգու կողմից: Այն անթերի՝ սահուն ուղեցույց չէ, սակայն որոշում է անձնական հավատքի սահմանները: Հետևաբար, մեր խղճմտանքը չարաշահելը, եթե անգամ այն հիվանդ կամ տկար վիճակում է, հավատքի մեծ խնդիր է:

Հավատացյալի խղճմտանքը պետք է ավելի ու ավելի Աստծո Խոսքի և Աստծո Հոգու համաձայն ձևավորվի (տես՝ 1 Տիմ.3:9): Աստված հավատացյալներին (այսինքն՝ թույլ թե ուժեղ, տես՝ Հռոմ.14:1-15:13) դատելու է իրենց ունեցած լույսի համաձայն, սակայն մեզանից յուրաքանչյուրը կարիք ունի բաց լինելու Աստվածաշնչի և Հոգու համար, որպեսզի ավելի շատ լույս ընդունի և անի Տեր Հիսուս Քրիստոսի գիտության մեջ:

■ **«մինչև այս օրս Աստծո առաջ»** Այս նույն բանը Պողոսը պնդում է 2 Կորնթ.1:12; 2 Տիմ.1:3-ում: Նա ընդունում է, որ ինքը ցանկացել է (տես՝ Հռոմ.7:23 հասկապես՝ հ. 7): Նրա աստվածաբանական փաստարկը Հռոմեացիների 1-8 գլուխներում հիմնված է ցանկացած մարդու կողմից օրենքի և խղճմանքի չարաշահման վրա (տես՝ 3:9-23; 4:15; 5:20):

23:2 «Անանիա քահանայապետը» Եբրայերենով նրա անունը կհնչեր Հանանիահ: Սա այն նույն Անանիան չէ, որ նշվում է Ղուկ.3:2; Հովհ.18:13 կամ Գործք 4:6-ում, այլ ավելի ուշ (Անանիա, Ներեդագուսի կամ Նեդերագուսի որդին) Հերովդես Չայքիսի կողմից նշանակված, որը տիրեց մ.թ.48-59 (Ջոզեֆուս, *Հնություններ*, 20.9.2 /Josephus, *Antiq.* 20.9.2/):

Ջոզեֆուսի գրությունները շատ բան են պատմում մեզ այս քահանայապետի վերաբերյալ.

1. երբ նա դարձավ քահանայապետ, *Հնություններ*, 20.5.2; *Պատերազմներ* 2.12.6:
2. երբ նա և նրա որդին (Անանիուսը) կապված ուղարկվեցին Հռոմ, *Հնություններ* 20.6.2:
3. երբ նա և իր եղբայրը սպանվեցին ապստամբների ձեռքով, *Պատերազմներ* 2.17.9:

Հաճախ Ջոզեֆուսը հանդիսանում է հրեաների հետ կապված դեպքերի և պաղեստինյան կերպարների միակ հնագույն, բայց և մեր ժամանակներում առկա աղբյուրը:

■ **«խփեն նրա բերանին»** Սա հայիոյության նշան էր (տես՝ Հովհ.18:22):

23:3 «Աստված է քեզ խփելու» Այս մասին մանրակրկիտ կերպով արձանագրված է Ջոզեֆուսի *Պատերազմներ* 2.17.9-ում:

■ **«ծեփա՞ծ պատ»** Հայտնի չէ, թե կոնկրետ ինչ էր ասում Պողոսը՝

1. Հրեաներն այս փոխաբերությունը կիրառում էին կեղծավորության համար (տես՝ Մատթ.23:27)
2. հնարավոր է սա ակնարկ էր Եզեկ.13:10-15-ի:

■ **«Օրենքին հակառակ հրամայում ես /անգլ.՝ Օրենքն ես խախտում/»** Հնարավոր է սա մեջբերում է Ղևտ.19:15: Տե՛ս նաև Հովհ.7:51:

23:5 «Եղբայրներ, չգիտեի, որ քահանայապետ է» Պողոսի այս մասին տեղյակ չլինելու պատճառների տեսություններից են՝

1. թույլ տեսողությունը
2. նրա հետ ծանոթ չլինելը, քանի որ Պողոսը մի քանի տարի էր, որ Երուսաղեմից հեռու էր ապրում
3. չճանաչեց քահանայապետին, քանի որ իր քահանայապետական հանդերձանքով չէր
4. նա չգիտեր, թե ով խոսեց
5. իր գործողությունների անպատշաճությունը (այսինքն՝ հեզնանքը):

■ **«քանի որ գրված է»** Պողոսը ցույց է տալիս, որ գիտի և հարգում է Օրենքը՝ մեջբերելով Ելից 22:28:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 23:6-10

6Երբ Պողոսն իմացավ, որ մի կողմում սաղուկեցիներ են, իսկ մյուս կողմում՝ փարիսեցիներ, առայնում աղաղակեց. «Մարդի՛կ և եղբայրներ, ես փարիսեցի եմ՝ փարիսեցու որդի. մեռելների հարության հույսի պատճառով եմ ես հարցաքննության կանչված»: ⁷Երբ այս ասաց, փարիսեցիների և սաղուկեցիների միջև երկպառակություն առաջացավ, և բազմությունը բաժանվեց, ⁸քանի որ սաղուկեցիներն ասում էին, թե հարություն չկա, և ոչ էլ հրեշտակ կամ հոգի, իսկ փարիսեցիք երկուսն էլ դավանում էին: ⁹Եվ մեծ աղմուկ եղավ, ու փարիսեցիների կողմնակից դպիրները, ոտքի կանգնելով, ընդդիմանում էին և ասում. «Մենք այս մարդու մեջ որևէ չար բան չենք տեսնում: Բայց գուցե մի հոգի կամ հրեշտակ է խոսել նրա հետ, եկե՛ք Աստծո դեմ կռիվ չանենք»: ¹⁰Եվ երբ աղմուկը սաստկացավ, հազարապետը, վախենալով, որ Պողոսին նրանք պատառ-պատառ կանեն, զինվորներին հրամայեց, որ իջնեն, նրանց միջից վերցնեն ու նրան բերեն բերդ:

23:6 «իմացավ /իմանալով/» Հնարավոր է, որ Պողոսը գիտակցել էր, որ այս Սաղուկեցի քահանայապետի կողմից նա չէր կարող արդար դատավարություն ունենար:

■ **«Սաղուկեցիներ»** Տե՛ս Հատուկ Թեմա 4:1:

■ **«Փարիսեցիներ»** Պողոսը փարիսեցի էր եղել՝ (տես՝ 26:5; Փիլ.3:5-6) Փարիսեցու ընտանիքից: Տե՛ս Հատուկ Թեմա 5:34:

■ «մեռելների հարության հույսի պատճառով եմ ես հարցաքննության կանչված» Պողոսը բարձրացնում է մի աստվածաբանական խնդիր, որի շուրջ Սաղուկեցիներն ու Փարիսեցիները համաձայնության չէին գալիս: Սաղուկեցիները չէին ընդունում հանդերձյալ կյանքը, մինչ Փարիսեցիները հաստատում էին այն (տես՝ Հոբ 14:14; 19:23-27; Եսայի 25:8; 26:19; Դան.12:2): Սրանով նա Աստվածի երկու խմբավորումների հանեց իրար դեմ (տես՝ հ. 7-10):

23:7 «բազմությունը բաժանվեց» Այս տերմինի հիմնական նշանակությունը «պատռել» է (տես՝ Դուկ.5:36; 23:45): Այն սկսել էր այլաբանորեն կիրառվել խմբերի միջև բաժանումների համար (տես՝ Գործք 14:4; 23:7): Այս երկու հրեական ուղղությունների միջև բաժանումը միշտ էլ եղել է պայթյունավտանգ: Իսկ Պողոսը կրակի վրա յուղ լցրեց:

23:8 «ոչ էլ հրեշտակ կամ հոգի» Համար 8-ը Դուկասի կողմից մեկնաբանություն է իր կողմից օգտագործված աղբյուրի շուրջ: Արդյո՞ք այս արտահայտությունից կարելի է ենթադրել, որ գոյություն ունեն երկու տեսակի հոգևոր էակներ, թե միայն մեկ: Երկուսի ծագումն էլ ըստ Աստվածաշնչի անորոշ են, սակայն Եբր.1:5,13 և 14 համարները ակնարկում են, որ դրանք նույնն են:

Սաղուկեցիները իրականում մերժում էին բարի և չար հոգևոր էակների դուալիզմը (Չրադաշտական դուալիզմ): Փարիսեցիները ՀԿ-յան գաղափարը մշակել էին վերածելով այն Պարսկական խիստ դուալիզմի և նույնիսկ ձևավորել հրեշտակային և դիվական դասակարգումներ (յուրաքանչյուրն ուներ յոթ առաջնորդ): Լավագույն աղբյուրը, որ ես հայթայթել եմ առաջին դարի հրեական հրեշտակաբանության վերաբերյալ, դա Ալֆրեդ Էդերշեյմի *Հիսուս Մեսիայի կյանքը և ժամանակները* գիրքն է (Alfred Edersheim, *The Life and Times of Jesus the Messiah*), Հավելված XIII:

23:9
NASB
NKJV
NRSV
NJB

«մեծ խռովություն բարձրացավ»
 «մեծ աղմուկ բարձրացավ»
 «ապա մեծ աղմուկ /գոռգոռոց/ բարձրացավ»
 «բղավոցները ավելի սաստկացան»

Այս նույն արտահայտությունը կարելի է գտնել Սեպտուագիանայի Ելից 12:30-ում (նաև ուշադրություն դարձրեք Ելից 3:7; 11:6; Եսթ.4:3; Եսայի 58:4; 65:19): «Գոռալ» բառը (*kraugē*) նաև կարելի է հանդիպել Սատթ. 25:6; Դուկ.1:42; Եփես.4:31; Եբր.5:7; Հայտն.21:4-ում: Միայն համատեքստը կարող է որոշել բարձրաձայն «գոռոցի» /աղմուկի/ տեսակը (այսինքն՝ դրական, թե բացասական):

Մեկ այլ զգացմունքային բառ է «տաքացած վիճել» /հայ.՝ «ընդդիմանալ»/ (*diamachomai*) բառն է, որը նույնպես կիրառվում է LXX-ում՝ Դան.10:20: Պողոսի մեկնաբանությունը պատճառ հանդիսացավ բարձրաձայն, տաքացած ընդդիմության, որն էլ հենց նա ուզում էր:

■ «դպիրները» Այս մարդիկ օրինավոր փորձագետներ էին թե՛ բանավոր (Թավմուդ) և թե՛ գրավոր (ՀԿ) օրենքի: Նրանցից շատերը Փարիսեցիներ էին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳՊԻՐՆԵՐ

Այս անունը ծագել է եբրայերեն ԳՈՅԱԿԱՆԻՑ (BDB 706), որը նշանակում է «բանավոր պատգամ», «գրավոր փաստաթուղթ՝ հրաման»: Հունարեն թարգմանությունը «grammateus» սովորաբար վերաբերում է գրավոր խոսքին: Այն կարող է նշանակել՝

1. ուսուցիչ (Նեեմիա 8)
2. կառավարական պաշտոնյա (4 Թագ.22:3-13)
3. արձանագրող՝ քարտուղար (1 Մնաց.24:6; 2 Մնաց.34:13; Երեմ.36:22)
4. զինվորական սպա (տես՝ Դատ.5:14)
5. կրոնական առաջնորդ (Եզրաս 7:6; Նեեմ.12:12-13)

ՆԿ-ում նրանք հաճախ գուգահեռվում են Փարիսեցիների հետ: Ինչ-որ առումով նրանք ՀԿ-ին և Բանավոր Ավանդություններին (այսինքն՝ Թավմուդին) քաջատեղյակ մարդիկ էին: Նրանք օգնել են թարգմանել և կիրառել հրեական ավանդությունները ամենօրյա կյանքի համար (տես՝ Սիրաք 39:6): Սակայն նրանց արդարությունը (այսինքն՝ հրեական օրինապաշտությունը և ծեսերը) չէին կարող

Աստծո հետ հաշտեցնել՝ խաղաղեցնել (տես՝ Մատթ.5:20; Հռոմ.3:19-20; 9:1-5,30-32; 10:1-6; Կող.2:20-22):

Հաճախ նրանք պատկերվում են Համանման (Մինուպտիկ) Ավետարաններում (Հովհաննեսը երբեք չի նշում նրանց. 8:3-ը բնագրում չկա) որպես Հիսուսին հակառակվող մարդիկ, չնայած որ նրանցից ոմանք Նրան անսացին՝ արձագանքեցին (տես՝ Մատթ.8:19):

1. մեղավորների և հարկահավաքների հետ ուտելու հարցի շուրջ ընդհարում, Մարկ.2:16; Մատթ.9:9-13
2. Հիսուսի դևեր քշելու իշխանության հարցի շուրջ ընդհարումը, Մարկ.3:22
3. Հիսուսի մեղքեր ներելու հարցի շուրջ ընդհարում, Մատթ.9:3; Դուկ.5:21
4. տեսանելի նշան պահանջելը, Մատթ.12:38
5. ձեռքերը լվանալու հարցի շուրջ ընդհարում (այսինքն՝ ծիսական լվացում), Մատթ.15:1-2; Մարկ.7:1-5
6. Երուսաղեմ հաղթական մուտքի ժամանակ ամբոխի հայտարարությունների շուրջ ընդհարում, Մատթ.21:15
7. Հիսուսի մեղադրանքը նրանց շարժառիթների համար, (այսինքն՝ պատիվ և նախապատվություն փնտրելը), Մարկ.12:38-40
8. Հիսուսը մեղադրում է նրանց կեղծավորներ և կույր առաջնորդներ լինելու մեջ, որոնք նստել են Մովսեսի աթոռին, Մատթ.23:1-36

Սուրբ Գրքի իմացության շնորհիվ պետք է, որ նրանք առաջինը հասկանային և ընդունեին Հիսուսին, սակայն նրանց ավանդույթները (տես՝ Եսայի 29:13; 6:9-10) կուրացրել էին իրենց: Երբ յույսը խավար է դառնում, ապա որքան մեծ է խավարը:

■ **«այս մարդը»** Այս ԳՈՅԱԿԱՆ արտահայտության կիրառությունն այս համատեքստում ցույց է տալիս, որ այն բացասական արտահայտություն չէ:

■ **«գուցե /անգլ.՝ պատկերացրեք/»** Սա մասնակի կամ ոչ լիարժեք ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է: Այս դպիրները պնդում էին, որ Պողոսը ինչ-որ բան էր տեսել հոգևոր աշխարհից, սակայն կոնկրետ ինչ, նրանք չգիտեին: Նրանց կողմից Պողոսին անմիջապես և համոզիչ կերպով պաշտպանելը ցույց է տալիս, թե որքան էին նրանք արմատացած իրենց համոզմունքների մեջ: Ակնհայտ էր, որ նրանք ավելի չէին սիրում Սաղուկեցիներին, քան ենթադրյալ ուխտադրույթ այս փարիսեցուն:

Քանի որ սա անկատար քերականական կառուցվածք է, Տեքստուս Ռիսեպտուսը /Textus Receptus/ հետևելով Ունցիալ Հունարեն ձեռագրերին՝ H, L և P, ավելացնում է՝ «Եկե՛ք Աստծո դեմ կռիվ չանենք»:

23:10 «գինվորներին հրամայեց, որ իջնեն, նրանց միջից վերցնեն» Այժմ արդեն երկու անգամ Երուսաղեմում հռոմեական կառավարությունը փրկեց Պողոսի կյանքը: Չարմանալի չէ, որ Պողոսը կառավարությանը դիտարկում է որպես Աստծուն ծառայող գործիք (տես՝ Հռոմեացիների 13): Սա կարող է առնչվում է այն «մեկին, որ ետ է պահում» - 2 Թեսաղ.2:6-7 խոսքի հետ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 23:11
¹¹Եվ հետևյալ գիշերը, Տերը նրա մոտ կանգնեց ու ասաց. «Քա՛ջ եղիր, Պողո՛ս, որովհետև, ինչպես որ Երուսաղեմում Իմ մասին վկայեցիր, այդպես էլ Հռոմում պետք է վկայես»:

23:11 «Տերը նրա մոտ կանգնեց» Ահա ևս մի անձնական տեսիլք Պողոսին քաջալերելու համար (տես՝ 18:9-10; 22:17-19; 27:23-24): Պողոսը նույնպես հուսահատության և կասկածների մեջ էր ընկնում:

■ **«Քա՛ջ եղիր»** Սա ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ է: Դուկասի գրքերում այս տերմինը միայն այստեղ է կիրառվում: Հնարավոր է Պողոսն այս մասին Դուկասի հետ խոսել էր: Հիսուսն այս տերմինը մի քանի անգամ կիրառում է (տես՝ Մատթ.9:2,22; 14:27; Հովհ.16:33):

■ **«Հռոմում պետք է /նույնպես/ վկայես»** Աստծո կամքն էր Պողոսի համար, որ նա բանտարկվեր, որպեսզի հայտնվեր Կայսրի առջև: Ավետարանը քարոզվելու էր Հռոմում (տես՝ 19:21; 22:21):
 «Պետք է» խոսքի համար տե՛ս գրառում 1:16:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 23:12-15
¹²Ու երբ առավոտ եղավ, հրեաներից ոմանք միաբանվեցին ու իրենք իրենց նզովքով կապեցին, ասելով, որ ոչ ուտելու են և ոչ էլ խմելու, մինչև չսպանեն Պողոսին: ¹³Եվ այս

դավադրության մասնակիցները քառասունից ավելի էին: ¹⁴Նրանք եկան գլխավոր քահանաների ու ավագների մոտ և ասացին. «Մեզ նզովեցինք մեծ անեծքով, որ չենք ուտելու և չենք խմելու, մինչև Պողոսին չսպանենք: ¹⁵Ուստի դուք ատյանի հետ միասին հազարապետին իմաց տվեք, որ վաղը նրան իջեցնի ձեզ մոտ, իբրև թե ցանկանում եք ավելի ստույգ բան իմանալ նրա մասին, իսկ մենք նախքան նրա մոտենալը, պատրաստ ենք նրան սպանելու»:

23:12-15 Այս պարբերությունը մեզ տեղեկացնում է մի քանի հրեաների կողմից կնքած սպանության դաշինքի վերաբերյալ: Սա ևս մեկ կանխամտածված սպանություն էր (տես՝ հ. 21), ճիշտ այնպես, ինչպես հրեաները ծրագրել էին Հիսուսի դեպքում:

23:13 «քառասունից ավելի» Քառասունը հրեական դարձվածք է երկար, անորոշ ժամանակահատվածի համար, սակայն այստեղ կիրառվում է մարդկանց համար, ուստի հավանաբար այն բառացի է: Տե՛ս Հատուկ Թեմա. Թվերը Աստվածաշնչում 1:3:

23:14 «գլխավոր քահանաների /քահանայապետերի/ ու ավագների մոտ» Սա ավելի համառոտ կերպ էր Սանեդրինը նկատի ունենալու համար: Տե՛ս Հատուկ Թեմա 4:5:

-
- NASB «մենք մեզ կապել ենք լուրջ երդմամբ»
- NKJV «մենք մեզ կապել ենք մեծ երդմամբ»
- NRSV «մենք մեզ խիստ կերպով կապել ենք երդմամբ»
- TEV «մենք լուրջ ուխտ ենք վերցրել»
- NJB «մենք լուրջ ուխտ ենք կատարել»

Այս անգլերեն թարգմանությունները փորձում են թարգմանել ազգային դարձվածքաբանական արտահայտություն՝ «մեզ նզովեցինք մեծ անեծքով»: Այս երդմնակալները չսպանեցին Պողոսին: Հետաքրքիր է, արդյո՞ք նրանք սովից մահացան: Ըստ երևույթին բանավոր ավանդույթները այսպիսի իրավիճակից էլ ելք է առաջարկել այս արյան երդմնակալներին: Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԵԾՔ (ANATHEMA)

Երբայերենում «անեծք» բառի համար գոյություն ունի մի քանի բառ: *Herem* (BDB 356, KB 353) բառը կիրառվում էր Աստծուն ինչ-որ բան տալու դեպքում (տես՝ LXX թարգմանում է որպես *anathema*, BAGD 54, Ղևտ.27:28): Այն սովորաբար բովանդակում էր առարկաներ ոչնչացնելու իմաստ, որոնք չափազանց սուրբ էին մարդկանց կողմից օգտագործվելու համար (տես՝ 2 Օր.7:26; Հեսու 6:17-18; 17:12): Սա մի տերմին է, որն օգտագործվում է «սուրբ պատերազմ» հասկացության մեջ: Աստված ասաց բնաջնջել քանանացիներին և Երիքովը առաջին հնարավորությունն էր՝ «առաջին պտուղը՝ երեխայրին»:

ՆԿ-ում *anathema* և իր հետ կապված ձևերը կիրառվում են մի քանի տարբեր նշանակությամբ.

1. որպես նվեր կամ զոհ Աստծուն (տես՝ Ղուկ.21:5)
2. որպես մահվան երդում (տես՝ Գործք 23:14)
3. անիծել և հայհոյել (տես՝ Մարկ.14:71)
4. Հիսուսի հետ կապված անեծքի խոսք (տես՝ 1 Կորնթ.12:3)
5. ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան Աստծո դատաստանին կամ պատժին հանձնելը (տես՝ Հռոմ.9:3; 1 Կորնթ.16:22; Գաղ.1:8-9):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 23:16-25

¹⁶Եվ երբ Պողոսի քրոջ որդին այս դավադրության մասին իմացավ, եկավ մտավ բերդը ու Պողոսին պատմեց: ¹⁷Պողոսն էլ հարյուրապետներից մեկին իր մոտ կանչելով՝ ասաց. «Այս պատանուն տա՛ր հազարապետի մոտ, քանի որ մի բան ունի նրան հայտնելու»: ¹⁸Նա էլ վերցրեց նրան, տարավ հազարապետի մոտ և ասաց. «Բանտարկված Պողոսը ինձ կանչեց ու աղաչեց, որ այս պատանուն քեզ մոտ բերեմ, քանի որ նա քեզ բան ունի ասելու»: ¹⁹Հազարապետը բռնեց նրա ձեռքը, տարավ մի կողմ և հարցրեց. «Ի՞նչ ունես ինձ ասելու»: ²⁰Եվ նա ասաց. «Հրեաներն իրենց մեջ համաձայնության եկան, որ քեզ աղաչեն, որ վաղը Պողոսին իջեցնես ատյան, իբրև թե ուզում են ավելի ստույգ քննել նրա գործը: ²¹Բայց դու նրանց մի հավատա, որովհետև քառասունից ավելի մարդիկ դարանակալել են, իրենց անձր նզովել, որ ո՛չ ուտեն և ո՛չ էլ խմեն

մինչև չսպանեն նրան և հիմա պատրաստ՝ քո հրամանին են սպասում»։²²Այնժամ հազարապետը ճանապարհեց պատանուն, պատվիրելով «Ոչ մեկին մի՛ ասա, որ այս բանն ինձ հայտնել ես»։²³Եվ հարյուրապետներից երկուսին կանչեց ու ասաց. «Երկու հարյուր զինվոր պատրաստեցե՛ք ու յոթանասուն ձիավոր և երկու հարյուր գեղարդավոր, որ գիշերվա ժամը երեքին մինչև Կեսարիա գնան,²⁴և գրաստներ էլ պատրաստեցե՛ք, որ Պողոսին նստեցնեն և ապահով հասցնեն Ֆելիքս կուսակալի մոտ»։²⁵Եվ այսպիսի մի նամակ գրեց.

23:16 «Պողոսի քրոջ որդին» Պողոսի ընտանիքի վերաբերյալ մեզ համար շատ փակ հարցեր կան, սակայն դրանք պարուրված են լռության մեջ։ Թե այդ ծրագրի մասին ինչպես նա իմացավ, դա էլ հայտնի չէ։ Հավանաբար նա նույնպես Փարիսեցի էր։

23:21 Այս հարձակման արդյունքում ակնհայտ է, որ հռոմեացի պահապան զինվորները նույնպես կարող էին սպանվել։

23:23 Պողոսին ուղեկցող զորակազմը ըստ երևույթին կամ (1) 200 հետևակ, 70 հեծելազոր և 200 գեղարդակիր կամ (2) 200 նիզակակիր և 70 հեծելազոր։ Հունարենի արևմտյան ընտանիքի ձեռագրերը տալիս են նկարագրության երկար մանրամասներ (տես՝ NKJV)։

■ **«Ժամը երեքին»** Ըստ երևույթին սա հռոմեական ժամանակ էր։ Նրանք սկսում էին հաշվել գիշերը երեկոյան ժամը 6-ից։ Հետևաբար սա պետք է որ լիներ ժամը 9-ը։

■ **«Կեսարիա»** Սա Պաղեստինում հռոմեական կայսրության վարչական տարածքն էր։

■

NASB, NKJV,

NRSV, TEV

NJB

REB

NASB (ծանոթագրություն)

NEB

«նիզակակիրներ»

«լրացուցիչ մարդիկ»

«թեթև-զինված մարդիկ»

«հավելյալ հեծյալներ» կամ «գրաստներ» /բեռնակիր կենդանիներ/

«գեղարդավորներ»

Dexiobolos տերմինի նշանակությունը անհայտ է։ Տառացի այն նշանակում է «մեկը, որ կցված կամ զինված է աջ կողմից» (*dexios*)։ Այն առնչվում է՝

1. թեթև ինչ-որ տեսակ զենքով զինված զինվորի (նիզակ կամ գեղարդ)
2. մեկը, որը բանտարկյալի աջ կողմից կապված է
3. մեկը, որ երկրորդ ձին է պահում
4. մեկը, որ կողպված է բանտարկյալին

Այսքան շատ տարբերակները ցույց են տալիս, որ մեր ժամանակակիցները ճշգրտորեն չգիտեն այս բառի իմաստը։

23:24 «Ֆելիքս» Հռոմեացի պատմաբան Տաբիտուսը (*Պատմություններ*, 5:9; *Տարեգրություններ* 12:54) Անտոնիոս Ֆելիքսին անվանում է դաժան և ցանկասեր։ Նա իր այս դիրքին հասնում է իր եղբոր՝ Պալլասի (երկուսն էլ ազատագրված ստրուկներ էին) միջոցով, որը Կլավդիոս Կայսեր մտերիմ ընկերն էր։ Նա ծառայեց որպես Պաղեստինի տասնմեկերորդ կուսակալ՝ մ.թ.52-59։

23:24 «ձևաչափ /նամակ/» Տե՛ս Հատուկ Թեմա. *Ձևաչափ (tupos)* 7:43։

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 23:26-30

²⁶«Կլոդիոս Լյուսիասից պատվական կուսակալ Ֆելիքսին ողջո՛ւյն։ ²⁷Հրեաներն այս մարդուն բռնել էին և ուզում էին սպանել, իսկ ես զինվորներով եկա, ազատեցի նրան՝ իմանալով, որ հռոմեացի է։ ²⁸Եվ որպեսզի իմանամ նրա հանցանքը, որի համար նրան մեղադրում էին, նրան իրենց ատյանը բերեցի։ ²⁹Տեսա, որ նրան ամբաստանում են իրենց Օրենքին վերաբերող խնդիրների համար, և մեռնելու կամ բանտարկվելու արժանի հանցանք չուներ։ ³⁰Եվ երբ ինձ տեղեկացվեց, որ հրեաների կողմից այս մարդու դեմ դավադրություն է նյութվում, նրան իսկույն քեզ մոտ ուղարկեցի, մեղադրողներին հրամայելով, որ այդ մասին քո առաջ խոսեն։ Ո՛ղջ եղիր»։

23:26-30 Սա Պողոսի դատական հայցի բացատրական նամակն է գրված պատասխանատու հրամանատարի՝ պաշտոնյայի կողմից (տես՝ 25:12բ): Այնտեղ ներկայացված է դեպքերի ընթացքը, սակայն այնպես, որ Լուսիասն այնտեղ ներկայացված է որպես լավ մարդ:

23:26 Սա այն համարն է, որտեղ նշվում է հազարապետի անունը:

23:29 Այս համարը համապատասխանում է Ղուկասի ներկայացման ձևին, որ Քրիստոնեությունը և նրա առաջնորդները, երբ մեղադրվում են կառավարական պաշտոնյաների առջև, միշտ արդարացվում են և անմեղ ճանաչվում: Հռոմը «Ճանապարհից» վախենալու ոչինչ չունեի:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 23:31-35

³¹Եվ զինվորները, ինչպես որ իրենց հրամայված էր, վերցրին Պողոսին և գիշերով տարան Անտիպատրիս: ³²Եվ հաջորդ օրը ձիավորներին թողնելով, որ նրա հետ գնան, իրենք վերադարձան բերդ: ³³Եվ նրանք մտան Կեսարիա և թուղթը տվին կուսակալին և Պողոսին բերեցին նրա առաջ: ³⁴Եվ երբ կարդաց, կուսակալը հարցրեց, թե ո՞ր գավառից է: Եվ երբ իմացավ, որ Կիլիկիայից է, ասաց. ³⁵«Քեզ կլսեմ, երբ քեզ ամբաստանողներն էլ գան»: Եվ հրամայեց, որ նրան պահեն Հերովդեսի դատական սրահում:

23:31 «գիշերով տարան Անտիպատրիս» Այս քաղաքը կառուցվել էր Հերովդես Մեծի կողմից և կոչվել նրա հոր՝ Անտիպատր II-ի պատվին: Այս քաղաք հասնելը շատ երկար ոտքով ճանապարհ էր՝ հավանաբար 30-40 մղոն: Քաղաքի ճշգրիտ տեղակայման վայրը անհայտ է: Այս դեպքում նշված հետևագործի վերադարձի պատճառը (հ. 32) հետևյալն է՝

1. այս տարածքը հիմնականում հեթանոսական էր
2. տեղանքը հարթ էր և բաց, ուստի և անսպասելի հարձակման վտանգը փոքր էր

23:33 «կառավարիչ /հայ.՝ կուսակալ/» Բառացի սա նշանակում է «կուսակալ» կամ «դատախազ»: Ղուկասը շատ ճշգրիտ է տեղական և հռոմեական պաշտոնյաների տիտղոսները՝ անունները ներկայացնելիս:

23:34 «հարցրեց, թե ո՞ր գավառից է» Սա իրավասությունը ճշտելու՝ հաստատելու համար էր: Քանի որ Պողոսը նաև Կայսերական Նահանգից էր, Ֆելիքսը կարող էր դատը վարել: Հռոմեական կայսրության մեջ գոյություն ունեին արդարադատության երեք բաժանմունքներ՝

1. Կայսերական (Կայսրը)
2. Սենատային
3. տեղական (ինչպես Հերովդեսները)

23:35 «երբ քեզ ամբաստանողներն էլ գան» Այս մարդիկ պետք է որ լինեին Ասիայի հրեաները, որոնք մեղադրում էին Պողոսին Տաճարի հրեական արգելված տարածքը հեթանոս մտցնելու հարցում: Նրանց չներկայանալու փաստը կարող էր չեղյալ համարել բոլոր մեղադրանքները: Սակայն ինչպես որ միշտ է տեղի ունենում, տեղական պաշտոնյաները ազդում են արդարադատության վրա:

■ **«պահեն Հերովդեսի դատական սրահում»** Հռոմեացիները բարեհամբույր էին Պողոսի հանդեպ, մինչ նա նրանց հսկողության տակ էր (տես՝ 24:23): Պողոսը մնում էր Հերովդես Մեծի կողմից կառուցված պալատում, որը նախկինում օգտագործվում էր որպես իր անձնական բնակարանը, սակայն այժմ դարձել էր հռոմեական վարչական շենք:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ըլղղեցուլց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Համեմատե՛ք Պողոսի ինքնապաշտպանության դեպքերը և թվարկե՛ք ընդհանուր տարրերը:
2. Արդյո՞ք Պողոսն իրեն համարում էր որպես հավատարիմ Հրեա:
3. Արդյո՞ք Գործք Առաքելոց գրքից տեղեկանում ենք Պողոս առաքյալի ընտանիքի վերաբերյալ:

ԳՈՐԾՔ 24

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Դատավարություն Պողոսի դեմ	Մեղադրանք խոռվության համար	Պողոսը Ֆելիքսի առջև	Դատավարություն Պողոսի դեմ	Դատավարություն Ֆելիքսի առջև
24:1-9	24:1-9	24:1-2ա 24:2բ-8 24:9	24:1-2ա 24:2բ-9	24:1-9
Պողոսը պաշտպանում է իր դատը	Ֆելիքսի առջև պաշտպանություն		Պողոսի պաշտպանությունը Ֆելիքսի առջև	
24:10-21	24:10-21	24:10ա	24:10ա	24:10ա
		24:10բ-21	24:10բ-16 24:17-21	Պողոսի խոսքը հռոմեացի կառավարչի առջև 24:10բ-13 24:14-16 24:17-21
24:22-23	24:22-27	24:22-23	24:22-23	Պողոսի գերությունը Կեսարիայում 24:22-23
Պողոսը պահվում է հսկողության ներքո	Ֆելիքսը հետաձգում է		Պողոսը Ֆելիքսի և Դրուսիլայի առջև	
24:24-26 24:27		24:24-26 24:27	24:24-26 24:27	24:24-26 24:27

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:1-2ա

¹Եվ հինգ օր անց Անանիա քահանայապետը ավագների և Տերտյուլիոս անունով մի հռետորի հետ իջավ, և սրանք կուսակալին Պողոսի դեմ իրենց զեկույցը տվին: ²Ու երբ նրան կանչեցին, Տերտյուլիոսն սկսեց ամբաստանել նրան՝ ասելով:

24:1 «Անանիա քահանայապետը» Տե՛ս ամբողջական գրառումները 23:2: Ա՛յ քեզ հրաշք. Քահանայապետն անձամբ Երուսաղեմից եկել է Կեսարիա: Պողոսը իրոք նրանց կոկորդին մնացած փուշ էր դարձել:

■ **«իջավ»** Հրեաների համար Երուսաղեմը միշտ էլ «բարձր» տեղում է եղել և բոլոր մյուս աշխարհագրական տեղանքները «ցածր» էին:

■ **«ավագներ»** ՀԿ-ում այս տերմինը վերաբերում էր ցեղի ավելի տարիքով մեծ առաջնորդներին: Գերությունից հետո այն սկսեցին կիրառել Երուսաղեմի հարուստ, ազդեցիկ մարդկանց համար: Հաճախ ՆԿ-ում Սանեդրինը նկարագրվում է որպես «Քահանայապետներ, դպիրներ և ավագներ՝ ծերեր»: Այս մարդիկ հավանաբար Սանեդրինի անդամներ էին, որոնք աջակցում էին Սաղուկեցիներին: Տաճարի առաջնորդները պոտենցիալ խնդիր էին տեսնում, երբ ներկա էին լինում Փարիսեցիները (տես՝ 23:6-10):

■ **«Տերտյուլիոս»** Այս մարդը վարձու իրավաբան էր (դատապաշտպան) կամ հռետոր (տես՝ NKJV): Այն հանդիսանում է հունարենի *rēma* կամ «խոսված խոսք» տերմինի ձևերից մեկն է: Ըստ երևույթին նա ներկայացրեց Սանեդրինի դատավարությունը ընդունելի Հռոմեական օրենքի սահմաններում՝ հավանաբար լատիներենով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:2բ-9

^{2բ} «Քանի որ քո կողմից մեծ խաղաղություն ենք վայելում և քո հոգատարությամբ այս ազգի համար շատ արժեքավոր գործեր են կատարվում, ³մենք միշտ գնահատում ենք դա և ամեն ինչի համար շնորհակալ ենք, ո՛վ պատվական Ֆելիքս: ⁴Սակայն, որպեսզի ավելի շատ նեղություն չտամ քեզ, աղաչում եմ, որ քո ներողամտությամբ մեր մի քանի խոսքերը լսես: ⁵Որովհետև մենք գտնում ենք, որ այս մարդն աշխարհի բոլոր հրեաների ապականիչն ու խռովարարն է և նազովրեցիների աղանդի առաջնորդը: ⁶Որ ուզեց տաճարն էլ պղծել, որին բռնեցինք և ցանկացանք ըստ մեր Օրենքի դատել: ⁷Բայց Լյուսիաս հազարապետը եկավ և բռնությամբ մեր ձեռքից վերցրեց, ⁸հրամայելով, որ նրան մեղադրողները քեզ մոտ գան, որպեսզի նրան քննելով դու ինքդ կարողանաս տեղեկանալ այն ամենի մասին, ինչի համար որ մենք մեղադրում ենք նրան»: ⁹Եվ հրեաներն էլ համաձայնեցին, ասելով, որ այդպես է:

24:2բ-4 Այս ներածականը ոչ միայն շողոքորթության փորձ էր (հավանաբար ակնկալելի), այլ իրականում անհիմն էր: Ֆելիքսը դաժան մարդ էր (տես՝ Տակիտուս, *Պատմություններ* 5.9 և *Տարեգրություններ* 12.2): Նա այս պաշտոնում էր հայտնվել միայն իր եղբոր՝ Պալլասի շնորհիվ, որը Ֆելիքսի հետ միասին Անտոնիայի (Մարկ Անտոնիոսի դուստրը), Կողոդիոսի՝ կայսեր մոր, կողմից ազատ էին արձակվել: Հետագայում նա հեռացվեց Ներոնի կողմից՝ մարդկանց խնդրանքով (տես՝ Ջոզեֆուս, *Պատերազմներ* 2.12.8-13.7) և *Հնություններ* 20.7.7-8.9:

24:2բ «մեծ խաղաղություն ենք վայելում» Ոմանք կարծում են, որ սա վերաբերում է նրա փորձերին կանգնեցնելու հրեա ծայրահեղականների գործողությունները, որոնք կոչվում էին *sicarii* (դաշույնավորներ): Տես՝ Ջոզեֆուսի *Պատերազմներ* 2.13.2:

24:5 «մենք գտնում ենք, որ այս մարդն...» Ամբողջ Գործք Առաքելոց գրքում Ղուկասի նպատակն է ցույց տալ հռոմեական աշխարհին, որ Քրիստոնեության դեմ ներկայացվող մեղադրանքները սուտ են՝ կեղծ: Ահա թե ինչու է Ղուկասը արձանագրում այսքան շատ դեպքեր, որտեղ քրիստոնյաները կանգնում են հռոմեական դատարանների և պաշտոնյաների առջև: Պողոսին երեք բանում էին մեղադրում՝

1. խռովարար լինելու մեջ
2. նոր աղանդի առաջնորդ լինելու մեջ
3. տաճարի պղծման մեջ

■	
NASB	«իրական չարիք»
NKJV	«պատուհաս»
NRSV	«վնասակար մարդ»
TEV	«վտանգավոր անհանգստություն»
NJB	«կատարյալ չարիք»

Այս բառը ծագել է «պատուհաս» նշանակող տերմինից (տես՝ Դուկ.21:11): ՀԿ-ում (LXX) այն նույնպես ունի պատուհասի իմաստը, սակայն կարող է գործածվել անձի համար՝ փոխաբերական իմաստով (տես՝ Առակ.19:25):

■ **«աշխարհի բոլոր...»** Սա անշուշտ կանխամտածված հայտարարություն էր և չնայած դրան ինչպիսի՛ հանդյախոսություն սփյուռքում Պողոսի կատարած ծառայության արդյունավետության վերաբերյալ:

■ **«/գլխավոր/ առաջնորդ»** Սա հունարեն բաղադրյալ տերմին է, որը կազմված է «առաջին» և «կանգնել» բառերից: Այն կիրառված է Մեպտուազինտայում՝ Հոր 15:24, «առաջին աստիճանի հրամանատար»: ՆԿ-ում միայն այստեղ կարելի է գտնել, իսկ Կոյնե պապիրուսների վրա, որ գտնվել են Եգիպտոսում, ընդհանրապես առկա չէ:

■ **«աղանդը»** *Hairesis* տերմինը սկզբնապես նշանակում էր «բաժանում» կամ «անջատում» (տառացիորեն՝ «ընտրություն կատարել»): Այն ժամանակի ընթացքում բացասական իմաստ է ձեռք բերել, ինչպես որ տեսնում եք մեր անգլերեն՝ հայերեն տերմինում «հերետիկոսություն», որը ծագել է հենց այս հունարեն տերմինից: Սաղուկեցիներին 5:17-ում դիմեցին այս տերմինով և 15:5-ում՝ Փարիսեցիներին: Գործքի այս համատեքստում Պողոսը Քրիստոնեությունը համարում է պատմական հրեական հավատքի և հույսի ինտեգրված մի մաս (տես՝ հ. 14):

■ **«Նազովրեցիները»** Այս տերմինը վերաբերում է Հիսուս Նազովրեցու հետևորդներին: Ոմանք այնուամենայն էլ են, որ այս տերմինը ծագել է Նազարեթ քաղաքից, սակայն ոմանք էլ, թե կապ ունի *nezer* (BDB 666) կամ «ընձուղ» տերմինի հետ, մի անուն, որը Մեսիայի տիտղոսն է (տես՝ Եսայի 11:1; 53:2): Տե՛ս Հատուկ Թեմա 2:22:

24:6 Ուշադրություն դարձրեք Պողոսի դեմ ներկայացված մեղադրանքին 21:28-ում, որ իբրև նա պղծել է տաճարը, այժմ փոխվել է «նա փորձում էր պղծել տաճարը»: Նրանք իրականում շատ թույլ դատ էին ներկայացրել: Պողոսի արդյունավետ՝ պողաբեր քարոզչությունը նրանց համար իրոք խնդիր էր դարձել:

24:7 NASB թարգմանության մեջ դրված փակագծերը ցույց են տալիս, որ տեքստային ավելացում է գտնվել ունցիալ MS E (8-րդ դար) և մի քանի փոքրատառերով ձեռագրերում՝ սկսած են 9-րդ դարից: Ավելի ծավալուն է ներկայացված NKJV թարգմանության մեջ: Կարծես թե այն մարդը կամ մարդիկ, որ ուզում էին վնասել Պողոսին այժմ ուզում են վնասել Լյուսիասին:

UBS⁴ թարգմանությունը բացառում է այս հավելումը և գնահատում է ավելի կարճ տարբերակը (MSS P⁷⁴, 8, A, D, որոշ Հին Լատիներեն, Վուլգատա, Կոպտիկ, և Վրացական տարբերակները) որպես «B» (գրեթե հաստատ): UBS³ ներառել է ավելի երկար տարբերակը, սակայն գնահատել է «D» (կասկածելի ամենաբարձր աստիճանը):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 24:10-21

¹⁰Ապա Պողոսը, կուսակալի խոսելու նշան տալուց հետո, պատասխանեց. «Գիտենալով, որ դու երկար տարիներ է, ինչ այս ազգի դատավորն ես, ավելի մեծ հոժարությամբ եմ պատասխան տալիս ինձ համար, ¹¹որովհետև դու կարող ես տեղեկանալ, որ դեռ տասներկու օր էլ չկա, ինչ ես եկա Երուսաղեմ՝ երկրպագություն անելու: ¹²Եվ ո՛չ տաճարում եմ ինձ տեսել որևէ մարդու հետ վիճելիս կամ մարդկանց շուրջս հավաքելիս, ո՛չ էլ որևէ ժողովարանում, և ո՛չ էլ քաղաքում, ¹³ո՛չ էլ կարող եմ ապացուցել այն ամենը, ինչի համար հիմա ինձ ամբաստանում են: ¹⁴Բայց խոստովանում եմ քո առաջ, որ ես պաշտում եմ իմ հայրերի Աստծուն՝ այն ճանապարհի համեմատ, որին սրանք հերձված են անվանում, հավատալով այն ամենին, ինչ գրված է Օրենքում և Մարգարեների մեջ. ¹⁵հուսալով Աստծուն, ինչպես իրենք էլ ընդունում են, թե մեռածների հարություն պիտի լինի՝ թե՛ արդարների, և թե՛ մեղավորների համար: ¹⁶Եվ հենց սրա համար եմ ջանում, որ մշտապես խիղճս մաքուր լինի Աստծո և մարդկանց առաջ: ¹⁷Արդ, շատ տարիներ հետո եկա՝ իմ ազգին ողորմություն բերելու և ընծաներ մատուցելու: ¹⁸Այսպես, մի քանի ասիացի հրեաներ ինձ տաճարում մաքրված գտան, ո՛չ բազմության հետ և ո՛չ էլ

խոսվության մեջ: ¹⁹Նրանք իրենք պետք է գային և քեզ գանգատվեին, եթե մի բան ունեին իմ դեմ: ²⁰Կամ թե սրանք թող ասեն. ի՞նչ անիրավություն են գտել ինձ վրա, երբ ատյանի առջև կանգնած էի, ²¹բացի այն միակ խոսքից, որ նրանց մեջ կանգնած աղաղակեցի, թե՛ մեռելների հարության պատճառով եմ այսօր ձեր կողմից հարցաքննվում»:

24:10 Ինչպես Մանեդրինի պատվիրակությունը սկսեց պաշտոնական նախաբանով (հավանաբար այդպես էր ընդունված իրենց մշակույթի մեջ), այդպես էլ Պողոսն արեց:

■ **«պատասխան տալիս ինձ համար /անգլ.՝ պաշտպանում/»** Մենք անգլերենի «apology» կամ «apologetics» /ներողամտություն կամ պաշտպանություն/ տերմինը ստանում ենք այս հունարեն տերմինից: Սկզբում այն նշանակում էր դատարանում օրինական բանավոր պաշտպանություն:

24:11-12 Պողոսը պնդում է, որ իր հանրային գործունեությունը Երուսաղեմում իրենից ոչ մի անբնական և վիճելի բան չի ներկայացրել: Նրան մեղադրում էին տաճարը պղծելու մեջ, սակայն իրականում, նա իրականացնում էր ընդունելի ծիսակարգ:

24:14 «Ճանապարհը» Սա Քրիստոնյաների առաջին անունն էր, որն ընդգծում էր, որ Հիսուսն է Աստծո մոտ տանող ճանապարհը (Հովհ.14:6) և ապրելակերպ հանդիսացող փոխհարաբերություն էր (տես՝ 9:2; 19:9,23; 22:4; 24:22 և հավանաբար 18:25-26):

■ **«ես պաշտում /ծառայում/ եմ իմ հայրերի Աստծուն»** Պողոսն այս համարում հստակ արտահայտում է, որ այն ինչ նա քարոզում է Հիսուսի մասին, ոչ մի կերպ չի խախտում ՀԿ-ը: Հիսուսը Իսրայելի հույսերի և խոստմունքների իրականացումն է: Նա չի դիտարկում Քրիստոնեությունը որպես մի նոր և տարբերվող բան, այլ որպես իրականացում (տես՝ Հիսուսին Մատթեոս 5:17-19-ում):

■ **«Օրենքում և Մարգարեների մեջ»** Սրանք ՀԿ-ի կանոնի երեքպատիկ բաժիններից երկուսն են.

1. Թորան (Օրենքը՝ Հնգամատյանը) – Ծննդոցից - 2 Օրինաց
2. Մարգարեները
 - ա. վաղ մարգարեներ – Հեսու- Թագավորացներ (բացի Հռութի գիրքը)
 - բ. ուշ մարգարեներ – Եսայիա – Մադաքիա (բացի Ողբ Երեմիայի և Դանիելի գրքերը)
3. Գրվածքները
 - ա. մեզիլոթ – Հռութ, Եսթեր, Ժողովող, Երգ Երգոց և Ողբ Երեմիա
 - բ. իմաստասիրական գրքերը – Հոր, Մաղմոսներ, Առակներ
 - գ. հետզերության պատմություն – 1 և 2 Մնացորդացներ, Եզրաս և Նեեմիա

24:15 «հուսալով Աստծուն, ինչպես իրենք էլ ընդունում են» Պողոսը հայտարարում է, որ իր կրոնական ուղղվածությունը նույնն է ինչ այդ մեղադրանք ներկայացնողներինը (տես՝ հ. 16), բացի հարության շուրջ իր ունեցած տեսակետից: Պողոսը փորձում է պաշտպանել իրեն, ցույց տալով, որ այդ կոնֆլիկտը հուդայականության մեջ աստվածաբանական խնդիրների շուրջ է, որի մեջ Հռոմը չէր ցանկանում խառնվել:

«Հույս» թեմայի համար տես՝ Հատուկ Թեմա. Հույս, 2:25:

■ **«մեռածների հարություն պիտի լինի՝ թե՛ արդարների, և թե՛ մեղավորների համար»** Սա վերաբերում է փարիսեցիների աստվածաբանությանը և ոչ թե տաճարի սաղուկեցի առաջնորդներին: Ջոզեֆուսը, *Հնություններ* 18.1.3. գրքում նույնիսկ պնդում է, որ որոշ փարիսեցիներ հերքում էին, որ մեղավորները հարություն են առնելու (ոչնչացման թեմայի շուրջ ժամանակակից տեսակետների համար տես՝ Էդուարդ Ֆյուդջ *Կրակ, որ սպառում է* /Edward Fudge, *The Fire that Consumes*): Աստվածաշունչը լի է ընդհանրապես հարության հասկացությամբ (տես՝ Ես.25:8; Դան.12:2; Մատթ.25:46; Հովհ.5:29; Հռոմ.2:6-11; Հայտն.20:11-15): Պողոսը Քրիստոնեությունը դիտարկում էր որպես ՀԿ-ի բնական իրականացումը (տես՝ Մատթ.5:17-19): Այն ինչ-որ մի նոր բան չէր:

24:16 «ջանում եմ, որ մշտապես խիղճս մաքուր լինի» Այս նույն արտահայտությունն էր, որ այդքան վրդովվեցրեց քահանայապետին 23:1-2-ում: Պողոսն այդ նույնը կրկնում է նրա ներկայությամբ: Դա նման է 1 Կորնթ.9:24-27-ում անձնական ջանքի շուրջ իր քննարկմանը: Ֆելիքսին իր քարոզած ժուժկալությունը (տես՝ հ. 25) այդքան էլ հեշտ չէր ունենալ և պահպանել: Ժուժկալությունը, Գաղ.5:22-ում տրված Սուրբ Հոգու պտուղներից մեկն է և հավանաբար պտուղների ցանկի անկյունաքարը:

24:17 «եկա՛ իմ ազգին ողորմություն բերելու» «Ողորմություն» բառի համար տե՛ս Հատուկ Թեմա 3:2: Սա հավանաբար խոսում է հեթանոս եկեղեցիների կողմից Երուսաղեմի եկեղեցուն ուղարկված նվիրատվության մասին (տես՝ Հռոմ.15:25-27; 1 Կորնթ.16:1-4; 2 Կորնթացիների 8-9): Չարմանալի է, որ այդ մասին չի նշվում 21:15-ում: Հնարավոր է սա ցույց է տալիս, որ Երուսաղեմի ամբողջ եկեղեցու կողմից լավ չէր ընդունվել այդ նվիրատվությունը (տես՝ Ջեյմս Դ. Գ. Դան, *Նոր Կտակարանում Միաբանությունն ու Հակասակությունը*) /James D. G. Dunn, *Unity and Diversity in the New Testament*/: Ստավոր ռասսիզմի հետ գործ ունենալը նույնիսկ հավատացյալների համար է դժվար:

■ **«և ընծաներ մատուցելու»** Սա վերաբերում է՝
1. Պողոսի սահմանափակ ժամանակով Նազորեցու ուխտի՝ երդման փակմանը (տես՝ 21:24)
2. Նազովրեցու սահմանափակ ժամանակով երդում կատարած ուրիշ մարդկանց փոխարեն գոհերի համար իր վճարելուն (տես՝ 21:24)
Քանի որ այս արտահայտությունը քերականորեն կարծես թե կապված է «ողորմություն բերելու» հետ, հնարավոր է, որ այդ երկուսն էլ վերաբերում են հրեական ծեսերին և ոչ թե եկեղեցիների կողմից ուղարկված նվիրատվությանը:

24:18 «ինձ տաճարում գրադված մաքրված գտան» Այս հրեական ծիսակարգը Հակոբոսի և եկեղեցու երեցների դրդմամբ էր (տես՝ 21:17-26): Դա եկեղեցու օրինապաշտ հրեա հավատացյալներին հանգստացնելու նպատակով էր արվում, բայց իրականում այն գրգռեց Ասիայից եկած հունախոս հրեաներին:

24:18-19 «ասիացի հրեաներ իրենք պետք է գային... » Պողոսի ինքնապաշտպանության խոսքում սա շատ կարևոր իրավաբանական կետ էր (հ. 19): Ականատես մեղադրողները ներկա չէին: Այն մարդիկ, որ մեղադրում էին Պողոսին աշխարհը մոլորեցնելու մեջ, չունեին փորձագիտական ապացույց (տես՝ հ. 20): Ասիան մի աշխարհագրական ակնարկ է նկատի ունենալով այն ժամանակ դեռևս Փոքր Ասիա կոչվող հարավային և հյուսիսային Թուրքիայից եկած հրեաներին:

24:19բ «երթե» Սա ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ բառ է, պատահականություն արտահայտելու կերպ, որն ամենաշատն է հեռու հավանական լինելուց: Ա. Տ. Ռոբերթսոնի *Բառապատկերները Նոր Կտակարանում*, /A.T. Robertson *The Word Pictures in the New Testament*/ էջ՝ 420, կոչում է այն ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ եզրահանգման հետ խառնուրդ պայմանական (այսինքն՝ «բայց նրանք ներկա չեն» հ.19): Նրա *Քերականություն* (էջ՝ 1022) գիրքը թվարկում է ուրիշ խառնուրդ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ Դուկասի գրքերում (տես՝ Դուկ.17:6 և Գործք 8:31):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:22-23
22Եվ երբ Ֆելիքսը լսեց այս բաները, ստուգապես իմանալով *այդ* ճանապարհի մասին, հետաձգեց նրանց գործն ու ասաց. «Երբ Լյուսիաս հազարապետը գա, ես ձեր խնդրին վերջնական լուծում կտամ»: **23**Եվ հարյուրապետին հրամայեց, որ Պողոսին պահի, բայց որոշ ազատություն տա և նրա մարդկանցից ոչ մեկին չարգելի ծառայել կամ այցելել նրան:

24:22 Ըստ երևույթին Ֆելիքսը լսել էր Հիսուսի և Քրիստոնեության մասին: Հավանաբար որպես հռոմեացի պաշտոնյա նրան համառոտ պատմել էին այդ տեղանքի իրադրության մասին, որի կառավարիչն էր նա:
Ֆելիքսի կինը հրեա էր (տես՝ հ. 24), որը նշանակում էր, որ նա փորձառաբար ունեցել է հնարավորություն իմանալու հուդայականության ուսմունքների մասին: Ճանապարհը հուդայականության մեջ համարվում էր որպես աղանդ և ուստի «օրինավոր» կրոն Հռոմեական Կայսրության մեջ:

24:23 Սա ցույց է տալիս, որ Ֆելիքսը Պողոսին վտանգավոր չէր համարում և նրան ազատություն էր թույլ տալիս, ինչպես նաև նրան տեսակցելու հնարավորություն: Այստեղ կրկին մենք ունենք մի հռոմեացի պաշտոնյայի, որը Քրիստոնեությանը չի մոտենում որպես քաղաքական խնդրի: Սա անշուշտ եղել է Դուկասի Ավետարանը գրելու նպատակներից մեկը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 24:24-27
24Եվ մի քանի օր անց Ֆելիքսը եկավ իր կնոջ՝ Դրուսիլայի հետ, որ հրեա էր, կանչեց Պողոսին և նրանից լսեց Քրիստոսի հանդեպ *եղած* հավատի մասին: **25**Ու երբ նա արդարության ու ժուժկալության և գալիք դատաստանի մասին էր խոսում, Ֆելիքսը զարհուրելով պատասխանեց. «Դու հիմա գնա՛: Երբ ժամանակ ունենամ, քեզ նորից կկանչեմ»: **26**Նաև հույս ուներ, որ Պողոսը դրամ կտա, որ իրեն արձակի. դրա համար էլ շատ անգամներ նրան կանչել

Էր տալիս և խոսակցում նրա հետ: ²⁷Բայց երկու տարի անց Ֆելիքսին փոխարինեց Պորկիոս Փեստոսը: Իսկ Ֆելիքսը հրեաներին հաճեցնելու համար Պողոսին բանտարկված թողեց:

24:24 «Դրուսիլա» Նա Հերովդես Ագրիպաս I-ի ամենաերիտասարդ և ըստ երևույթին ամենագեղեցիկ դուստրն էր և Բերնիկեի ու Ագրապաս II-ի քույրը: Նա Ֆելիքսի երրորդ կինն էր, որին նա վերցրել էր Ազիզուսից՝ Եմեսիայի թագավորից (տես՝ Ջոզեֆուս, *Հնություններ*, 20.7.2 /Josephus, *Anitq.*):

■
NASB, NRSV,
TEV, NJB
NKJV

«Քրիստոս Հիսուսի»
«Քրիստոսի»

Առաջին տարբերակը գտնվում է MSS P⁷⁴, ա, B, E և Հին Լատիներեն, Վուլգատտա ձեռագրերում: Ամենակարճ տարբերակը տրված է MSS, ա, A, C և Փեչիտտա, Կոպտիկ տարբերակներում: UBS⁴ տարբերակը տալիս է ավելի երկար ընթերցանություն և »B» գնահատական (գրեթե վստահելի):

Ինչ-որ մեկը կարող է հարց տալ, թե արդյո՞ք հնարավոր էր այս համատեքստում Քրիստոսը թարգմանվեր որպես «Մեսիա» (MS 044 տալիս է «Մեսիա»):

■ **«հավատ»** Սա շատ կարևոր աստվածաբանական բառ է: Տե՛ս Հատուկ Թեմա 2:40; 3:16; 6:5: Հիշեք, որ այս աստվածաբանական տերմինները Կոյնե հունարենում հիմնված չեն հունարեն կիրառության վրա, այլ Սեպտուագինտայի: Ղուկասը գիտեր Սեպտուագինտան շատ լավ: Եկեղեցու համար սա ՀԿ էր:

24:24-25 Պողոսը Ֆելիքսին և Դրուսիլային հաճախ էր քարոզում ավետարանը (տես՝ հ. 26բ): Սա հենց այն էր, ինչ Հիսուսն ուզում էր, որ Պողոսն աներ (տես՝ 9:15): Սակայն նա համոզվեց, որ Ֆելիքսն ազահ էր (այսինքն՝ ուզում էր, որ Պողոսը նրան կաշառք տար) և այդ պատճառով էլ անտեսեց իր որոշումը (տես՝ հ. 26):

24:26 Ըստ երևույթին Պողոսը այս բանտարկության ընթացքում որոշակի ֆոնդ ուներ: Հավանաբար (1) իր անձնական ժառանգությունից կամ (2) օգնություն էր եկեղեցիներից (այսինքն՝ Փիլիպպեի կամ Թեսաղոնիկեի): Ֆելիքսը Պողոսին հաճախ էր կանչում լսումների, բայց ոչ թե որ նրա խոսքը լսեր, այլ կաշառք ստանալու հույսերով:

24:27 «երկու տարի անց» Շատերը հավատում են, որ հենց այս ընթացքում էր Ղուկասը Պաղեստինում ականատեսներից վկայություններ տեղեկություններ հավաքում իր Ավետարանի համար (տես՝ Ղուկաս 1:1-4): Պողոսի պես եռանդուն մարդու համար պետք է որ սա հուսահատեցնող ժամանակ լիներ: Սակայն նա կաշառքի միջոցով ազատություն չսկսեց: Նա գիտեր, որ գտնվում էր Աստծո կամքի մեջ:

■ **«Պորկիոս Փեստոսը»** Հռոմեացի պատմաբանների՝ Սկյոնիոսի և Տակիտոսի միջև որոշակի անհամաձայնություն կա նրա պաշտոնավարության սկսելու տարեթվի հետ կապված: Ֆելիքսի դատավարությունը սկսվեց մ. թ. 55 թ-ին, սակայն հայտնի չէ, թե արդյոք նրան համոզեցին և հեռացրեցին հենց այդ ժամանակ, թե մ.թ. 59 թ-ին: Փեստոսը մահացավ մ. թ. 62 թ-ին, երբ դեռ իր պաշտոնին էր (տես՝ Ջոզեֆուս, *Հնություններ* 20.8.9-10; *Պատերազմներ* 2.14.1 /Josephus *Antiq.*; *Wars*):

■ **«Ֆելիքսը Պողոսին բանտարկված թողեց»** Սովորույթ կար, որ եթե վարչական համակարգը փոխվում էր, ապա բոլոր բանտարկյալներին ազատ էին արձակում: Այս համարը ցույց է տալիս Պաղեստինում քաղաքական իրադրությունը և հռոմեացի առաջնորդների թուլությունը, ինչպես նաև Սանդրիինի իշխանությունը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ի՞նչ է նշանակում «Նազովրեցի» տերմինը:
2. Որո՞նք են Գործքում եկեղեցու առաջին անվանման «Ճանապարհի» նշանակությունները:
3. Բացատրեք հ. 15-ի կարևորությունը:

ԳՈՐԾՔ 25

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսը դիմում է Կայսրին	Պողոսը դիմում է Կայսրին	Դիմում Կայսրին	Պողոսը դիմում է Կայսրին	Պողոսը դիմում է Կայսրին
25:1-5 25:6-12	25:1-12	25:1-5 25:6-12	25:1-5 25:6-8 25:9 25:10-11 25:12	25:1-5 25:6-12
Պողոսը բերվում է Ագրիպասի և Բերնիկեի առջև	Պողոսը Ագրիպասի առջև	Պողոսի պաշտպանությունը Ագրիպասի առջև (25:13-26:32)	Պողոսը Ագրիպասի և Բերնիկեի առջև	Պողոսը կանգնում է Ագրիպաս թագավորի առջև
25:13-22 25:23-27	25:13-27	25:13-22 25:23-27	25:13-21 25:22ա 25:22բ 25:23-27	25:13-22 25:23-26:1

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 25:1-5

¹Եվ երբ Փեստոսը իր իշխանության նահանգը հասավ, երեք օր հետո Կեսարիայից Երուսաղեմ բարձրացավ: ²Եվ քահանայապետն ու հրեաների գլխավորները հայտնեցին նրան Պողոսի մասին ³և աղաչում էին, որ իրենց շնորհ անի և նրան Երուսաղեմ կանչի, քանի որ որոշել էին դարանամուտ լինել և ճանապարհին սպանել նրան: ⁴Բայց Փեստոսը պատասխանեց, որ Պողոսը պահվելու է Կեսարիայում, քանի որ ինքը շուտով պիտի այնտեղ վերադառնա: ⁵«Ուրեմն, ձեզանից նրանք, ովքեր կարող են,- ասաց,- թող ինձ հետ իջնեն, և եթե այդ մարդը որևէ հանցանք ունի, թող մեղադրեն նրան»:

25:1 «Փեստոս» Այս մարդը Ֆելիքսին հաջորդողն էր: Նա ավելի ազնիվ անձնավորություն էր, սակայն ակնհայտ էր, որ գտնվում էր միևնույն քաղաքական ճնշումների և մտածելակերպի ազդեցության տակ: Նա այս պաշտոնում մնաց երկու տարի և մահացավ մ. թ. 62-ին, երբ դեռ պաշտոնավարում էր (տես՝ Ջոզեֆուս, *Հնություններ* /Josephus, *Antiq.* 20.8.9/):

■ **«երեք օր հետո»** Սա ցույց է տալիս, թե ինչքան համառ և խռովված էին հրեա առաջնորդները Պողոսի հարցում: Փեստոսը նույնպես կամեցավ լավ տպավորություն թողնել առաջին իսկ ընձեռված առիթով:

25:2 «քահանայապետն ու հրեաների գլխավորները» Հնարավոր է սա վերաբերում է Սանեդրինին, որը բաղկացած էր Երուսաղեմից 70 հրեա առաջնորդներից: Նրանք էին ձևավորում հրեաների բարձրագույն օրենսդրական ատյանը թե՛ քաղաքական և թե՛ կրոնական դաշտում: Տե՛ս Հատուկ Թեմա 4:5: Սակայն, այն կարող էր նաև վերաբերել Երուսաղեմի այլ հարուստ և էլիտար քաղաքացիների, որոնք անհամբերությամբ սպասում էին, թե երբ են հանդիպելու հռոմեացի նոր կուսակալին, որպեսզի սկսեն նրա հետ լավ փոխհարաբերություններ հաստատելը:

Իհարկե հնարավոր է, որ այն վերաբերի նաև երկու խմբերին էլ: Երկու տարի անց նոր քահանայապետ էր նշանակվել՝ Իսմայել բեն Ֆաբիուսը (մ.թ. 56-62): Նա նույնպես կամենում էր ինքնահաստատվել և այդ անելու լավագույն ճանապարհը սպասամբ փարիսեցու՝ Պողոսի վրա հարձակվելն էր:

■ **«հայտնեցին /անգլ.՝ հարցնում էին/ նրան»** Սա ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ է: Նրանք նորից ու նորից հարցնում էին:

25:3 Այս համարը Պողոսի հանդեպ այս հրեա առաջնորդների կողմից թշնամություն՝ չարություն է արտահայտում: Նրանք Պողոսին տեսնում էին որպես ներքին թշնամի:

■ **(քանի որ որոշել էին դարանամուտ լինել և ճանապարհին սպանել նրան)** Հրեա առաջնորդների մարտավարությունը չէր փոխվել (տես՝ 23:12-15):

25:5 «եթե» Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը հեղինակի տեսանկյունից իր նպատակների համար ենթադրվում է ճիշտ (տես՝ Ա. Տ. Ռոբերթսոն, *Բառապատկերները Նոր Կտակարանում*, հատոր՝ 3, էջ՝ 429 /A. T. Robertson, *Word Pictures in the New Testament*): Դուրս է բխում Թեմային՝ Արևելյան Տեխասի Մկրտական Համալսարանի Կոյնե Հունարենի մասնագետը, ասում է, որ հնարավոր է դա ԵՐՐՈՐԳ ԿԱՐԳԻ է, քանի որ նախատեսում էր պայմանական նախադասության պայման պարունակող մասում, ԲԱՅ չկա: Փեստոսը ենթադրում էր, որ Պողոսը հանցավոր է: Ինչո՞ւ Երուսաղեմի առաջնորդները պետք է լինեին այդքան համառ և այդքան դաժան:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 25:6-12
Պե՛վ երբ նրանց հետ մոտ տասը օր մնաց, իջավ Կեսարիա ու հաջորդ օրն ատյան նստելով՝ հրամայեց, որ Պողոսին բերեն: ⁷Ու երբ նա եկավ, Երուսաղեմից իջած հրեաները նրա շուրջը կանգնելով՝ շատ ծանր մեղադրանքներ էին ներկայացնում Պողոսի դեմ, որոնք, սակայն չէին կարողանում ապացուցել: ⁸Որովհետև Պողոսը պատասխանում էր, թե՛ «Ես ոչ մի մեղք չեմ գործել՝ ո՛չ հրեաների Օրենքի, ո՛չ տաճարի և ո՛չ էլ կայսեր դեմ»: ⁹Բայց Փեստոսը, ցանկանալով հրեաներին հաճոյանալ, Պողոսին պատասխանեց՝ ասելով. «Ուզո՞ւմ ես Երուսաղեմ ելնել և այնտեղ այս ամենի համար իմ առջև դատվել»: ¹⁰Պողոսն էլ ասաց. «Ես կայսեր ատյանում եմ կանգնած, որտեղ էլ պետք է ինձ դատեք: Ես հրեաներին ոչ մի վնաս չեմ տվել, ինչպես ինքդ էլ շատ լավ գիտես: ¹¹Բայց եթե անիրավություն և կամ մահապատժի արժանի մի մեղք եմ գործել, ես մեռնելուց չեմ խուսափում: Իսկ եթե այս բաները, որոնցով սրանք ինձ ամբաստանում են, ճիշտ չեն, ոչ մի մարդ չի կարող ինձ դրանց ձեռքը մատնել: Ես կեսարին եմ դիմում»: ¹²Այն ժամանակ Փեստոսը, խորհրդականների հետ խոսելուց հետո, պատասխանեց. «Եթե կեսարին ես բողոքում, կեսարի մոտ էլ կգնաս»:

25:6-9 Այս դեպքերը ցույց են տալիս, որ Պողոսը իրականում հույսեր չէր կապում Փեստոսից արդարադատություն տեսնելու: Նա գիտեր, թե Երուսաղեմում ինչ էր սպասվում իրեն (տես՝ հ. 3): Նա նաև գիտեր, որ Հիսուսը ուզում էր, որ ինքը գնար Հռոմ (տես՝ 9:15):

25:6 «և երբ նրանց հետ մոտ /ուրթ կամ/ տասը օր մնաց» Ես կարող եմ պատկերացնել հրեա առաջնորդներին Փեստոսի հետ ուտել խմելուց: Նրանք շողոքորթում հմտորեն բանեցնում էին բոլոր հռոմեացի պաշտոնյաներին:

25:8 Պողոսը հայտարարում է, որ ինքը անմեղ է ներկայացված մեղադրանքներում ընդդեմ՝
1. Մովսեսի Օրենքի (տես՝ 21:21,28)
2. Տաճարի (տես՝ 21:28; 24:6)

3. Կայսրի (տես՝ 16:21; 17:7)

Տարբերակ 1 և 2-ը ճիշտ նույն մեղադրանքներն են, որ ներկայացվեցին Ստեփանոսի դեմ 6:13-14-ում:

25:10-11 Պողոսը հայտարարում է, որ ինքն արդեն իսկ պատշաճ իշխանության առջև և պատշաճ տեղում է կանգնած: Ղուկասը հ. 11-ում հիշատակում է Պողոսի պաշտոնական դիմումը Կայսրին:

Կեսարին ուղղված դիմումի իրավունքը սկզբնապես սահմանվել է Օկտավիանի կողմից Ք. Ա. 30-ին (տես՝ Դիո Կասիուս, *Պատմություն*, 51.19 /Dio Cassius, *History*, 51.19/): Այս սկզբնական հրամանը ընդլայնվեց արգելելով կայսրին դիմած հռոմի քաղաքացիների հանդեպ կուրացում, մտրակում և կոտակարգում կիրառելը (տես՝ Պոուլոս, *Sententiae* 5.26.1):

Առաջին դարում հռոմեական օրենքի մասին լավ քննարկում է ներկայացված Ա. Ն. Շերվին Ուայթի, *Հռոմեական հասարակությունը և հռոմեական օրենքը Նոր Կտակարանում*, «չորրորդ դասախոսություն. Պողոսը Ֆելիքսի և Փեստոսի առջև» էջ՝ 48-70 /A. N. Sherwin –White’s *Roman Society and Roman Law in the new Testament*/:

25:11 «երթե ... երթե» Սրանք երկու ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ նախադասություններ են, որոնք ենթադրվում է ճիշտ են հեղինակի տեսանկյունից իր նպատակի համար: Այս երկու կիրառությունները համատեքստում ցույց են տալիս, թե ինչպես է այս քերականական կառուցվածքը կիրառվում իմաստ արտահայտելու համար: Առաջինը իրականում կեղծ է (սակայն ճիշտ նույն պայմանն է, որ կիրառեց Ֆելիքսը հ. 5-ում), իսկ երկրորդը՝ ճիշտ:

■ **«Ես մեռնելուց չեմ խուսափում»** Պողոսը ճանաչում էր պետության իշխանությունը (տես՝ Հռոմ.13:4): Քրեական պատժամիջոցի վերաբերյալ ՀԿ մոտեցում կարելի է գտնել Ծննդ.9:6-ում: Հետաքրքիր քննարկում այս թեմայի շուրջ կարող եք կարդալ *Աստվածաշնչի խոթին խոսքերը*, էջ՝ 114-116 /*Hard Sayings of the Bible*/:



**NASB, TEV
NKJV
NRSV
NJB**

**«ոչ ոք չի կարող ինձ նրանց ձեռքը մատնել»
«ոչ ոք չի կարող ինձ նրանց հանձնել»
«ոչ ոք չի կարող ինձ դեպի նրանց դարձնել»
«ոչ ոք իրավունք չունի ինձ նրանց հանձնելու»**

Charizomai տերմինը հիմնականում նշանակում է «գոհացնել» կամ «շնորհել»: Պողոսը հասկանում էր, որ Փեստոսը փորձում էր տպավորություն թողնել հրեա առաջնորդների վրա իրեն նրանց հանձնելով:

Սակայն, հնարավոր է, որ Փեստոսը փորձում էր ենթարկվել Հուլիոս Կեսարի հրամանին (տես՝ Ջոզեֆուս, *Հնություններ* 14.10.2), որը Պաղեստինում գտնվող հռոմեացի պաշտոնյաներին հորդորում էր քահանայապետի ցանկությունները կատարել:

■ **«Ես կեսարին եմ դիմում»** Սա յուրաքանչյուր հռոմեացու օրինավոր իրավունքն էր քրեական պատժամիջոցի դեպքերում (Plini the Younger, *Letters* 10.96): Պատմական այս ժամանակներում տիրում էր Ներոն Կայսրը (մ.թ. 54-68):

25:12 «իր խորհրդականների հետ» Սա վերաբերում է Փեստոսի հռոմեացի օրենսգետներին, և ոչ թե հրեա առաջնորդներին:

ԳՈՐԾՔ 25:13-26:32 ՀԱՄԱՏԵՔՍԱՃՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԵՍԱՐԱՆԸ

Ա. Հերովդես Ագրիպաս II (Մարկոս Հուլիոս Ագրիպաս)

1. Նա Հերովդես Ագրիպաս I-ի որդին էր (տես՝ Գործք 12), որը Հուդայի քաղաքական ղեկավարն էր և ուներ Տաճարի և քահանաների վրա վերահսկողություն (մ.թ. 41-44) և Հերովդես Մեծի թոռն էր:
2. Ուսանել էր Հռոմում և հռոմեացիների կողմնակիցն էր: Նա վերադարձավ Հռոմ մ.թ. 70-ի հրեական պատերազմից հետո և մահացավ հենց այնտեղ՝ մ.թ. 100-ին:
3. Երբ 17 տարեկան էր, նրա հայրը մահացավ, և նա դեռ շատ երիտասարդ էր հոգալու իր թագավորության մասին:
4. Մ. թ. 50-ին Հերովդես Հակիսը (Herod Chalcis)՝ Ագրիպաս II-ի հորեղբայրը՝ Հակիսների Թագավորը (Հյուսիսային Պաղեստինում գտնվող մի փոքրիկ թագավորություն), մահացավ

և Կլավդիոս Կայսեր կողմից Ագրիպպաս II-ին հանձնվեց նրա թագավորությունը: Նաև նրան հանձնվեց Տաճարի և քահանայապետների վերահսկողությունը:

5. Մ. Թ. 53-ին այս փոքրիկ թագավորությունը նա փոխանակեց Հերովդես Ֆիլիպպի (Իստուրեա և Տրաքոնիտ) և Լյուսիանոսի չորրորդապետության հետ:
6. Ավելի ուշ, Ներոն կայսրը ավելացրեց մի քանի քաղաքներ և գյուղեր Գալիլեայի Ծովի շուրջը՝ տրամադրելով նրա վերահսկողությունը: Նրա մայրաքաղաքն էր Փիլիպպեի Կեսարիան, որը նա վերանվանեց կոչելով Ներոնիաս:
7. Պատմական ակնարկների համար տե՛ս՝
ա. Ջոզեֆուսի, *Հրեական Պատերազմները* 2.12.1,7-8; 15.1; 16.4;7.5.1
բ. Ջոզեֆուսի, *Հրեաների հնությունները* 19.9.2; 20.5.2; 6.5; 7.1; 8.4; 9.6:

Բ. Բերնիկե

1. Նա Հերովդես Ագրիպպաս I-ի ավագ դուստրն էր:
2. Նա Ագրիպպաս II-ի քույրն էր և ինչ-որ ժամանակ հնարավոր է եղել է նրա արյունապիղծ սիրեցյալը (սա ոչ մի ապացույց չունի, այլ միայն ասեկոսեններ էին): Հետագայում նա դառնում է Տիտոս Կայսեր տիկինը, երբ նա դեռ գորավար էր: Նա հռոմեական բանակի գորավար էր, որը կործանեց Երուսաղեմը և Տաճարը մ.թ. 70-ին:
3. Նա Դրուսիլայի քույրն էր (տե՛ս՝ 24:24):
4. Ամուսնացած էր Հերովդես Հակիսի հետ (Հերովդես Ագրիպպաս I-ի եղբայրը, Բերնիկեի քեռին), բայց երբ նա մահացավ, Բերնիկեն վերադարձավ իր եղբոր մոտ:
5. Հետագայում նա ամուսնացավ Պոլեմեոնի՝ Կիլիկիայի թագավորի հետ, սակայն թողեց նրան և վերադարձավ կրկին իր եղբոր մոտ, որին արդեն տրվել էր «Թագավորի» տիտղոսը:
6. Նա Վեսպասիան Կայսեր տիկինն էր:
7. Պատմական հիշատակումներ՝
ա. Ջոզեֆուս *Հրեական Պատերազմները* 2.1.6; 15.1; 17.1 /Josephus Jewish Wars/
բ. Ջոզեֆուս *Հրեաների Հնությունները* 19.9.1; 15.1; 20.1.3 /Josephus Antiquities of the Jews/
գ. Տակիտոս *Պատմություն 2.2* /Tacitus History/
դ. Սոթենայոս *Տիտոսի կյանքը 7* /Seutonius Life of Titus/
ե. Դիո Կասիուս *Պատմություններ* 65.15; 66.18 /Dio Cassius Histories/
զ. Յուվենալ *Երգիծական* 61.156-157 /Juvenal Satire/

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 25:13-22

¹³Եվ մի քանի օր հետո Ագրիպպաս թագավորը և Բերնիկեն Կեսարիա եկան՝ Փեստոսին ողջունելու: ¹⁴Եվ շատ օրեր այնտեղ անցկացրին: Փեստոսը Պողոսի մասին հայտնեց թագավորին՝ ասելով. «Այստեղ մի մարդ կա, ում Ֆելիքսը բանտարկված է թողել, ¹⁵ ում մասին, երբ Երուսաղեմ էի գնացել, ավագ քահանաները և հրեա ծերերն ինձ հայտնեցին, որ ցանկանում են նրա դեմ դատապարտության վճիռ կայացվի: ¹⁶ Նրանց պատասխանեցի, թե հռոմեացիները այդպիսի օրենք չունեն, որ մի մարդու մահվան դատապարտեն, մինչև ամբաստանողները չկանգնեն ամբաստանյալի դիմաց, և իր դեմ եղող մեղադրանքներին պատասխան տալու հնարավորություն չտրվի: ¹⁷ Եվ երբ նրանք ինձ հետ այստեղ եկան, առանց ժամանակ կորցնելու, հետևյալ օրն իսկ նստեցի ատյանում և հրամայեցի այդ մարդուն բերել ինձ մոտ: ¹⁸ Եվ երբ ամբաստանողներն առաջ եկան, իմ կասկածաձևերից և ոչ մի հանցանք չէին ներկայացնում, ¹⁹ այլ միայն իրենց Օրենքի վերաբերյալ մի քանի խնդիր ունեին նրա հետ, և ոմն Հիսուսի վերաբերյալ, որը մեռած է, և Ում մասին Պողոսը պնդում է, թե կենդանի է: ²⁰ Եվ քանի որ տարակուսանքի մեջ էի այս կարգի հարցերի վերաբերյալ, հարցրեցի նրան. «Ուզո՞ւմ ես Երուսաղեմ գնալ և այս բաների համար այնտեղ դատվել»: ²¹ Բայց երբ Պողոսը պահանջեց, որ ինքը պահվի վեհափառ կայսեր քննությանը ներկայանալու համար, հրամայեցի, որ նրան պահեն մինչև կայսեր մոտ ուղարկեմ»: ²² Այն ժամանակ Ագրիպպասը Փեստոսին ասաց. «Ես նույնպես կուզենայի այդ մարդուն լսել»: «Վաղը, - ասաց նա, - դու նրան կլսես»:

25:13 «Ագրիպպաս թագավորը» Սա վերաբերում է Ագրիպպաս II-ին: Նա Դրուսիլայի և Բերնիկեի եղբայրն էր: Նա կրթվել էր Հռոմում և շատ հավատարիմ էր Հռոմի քաղաքականությանն ու ծրագրերին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԵՐՆԻԿԵ

1. Նա Հերովդես Ագրիպպաս I-ի ավագ դուստրն էր:

2. Նա Ագրիպպաս II-ի քույրն էր և ինչ-որ ժամանակ հնարավոր է եղել է նրա արյունապիղծ սիրեցյալը (սա ոչ մի ապացույց չկա, այլ միայն ասեկոսեններ են): Հետագայում նա դառնում է Տիտոս Կայսեր տիկինը, երբ նա դեռ գորավար էր:
3. Նա Ֆելիքսի երրորդ կինն էր և Դրուսիլայի քույրը:
4. Ամուսնացած էր Հերովդես Հակիսի հետ (Հերովդես Ագրիպպաս I-ի եղբայրը, Բերնիկեի քեռին), բայց երբ մահացավ, Բերնիկեն վերադարձավ իր եղբոր մոտ:
5. Հետագայում նա ամուսնացավ Պոլեմեոնի՝ Կիլիկիայի թագավորի հետ, սակայն թողեց նրան և վերադարձավ կրկին իր եղբոր մոտ, որին արդեն տրվել էր «Թագավորի» տիտղոսը:
6. Նա թե՛ Վեսպասիանի և թե՛ Տիտոսի կինն է եղել:
7. Պատմական հիշատակումներ՝
 - ա. Չոզեֆոս *Հրեական Պատերազմներ* 2.1.6; 15.1; 17.1 /Josephus *Jewish Wars*/
 - բ. Չոզեֆոս *Հրեաների Հնությունները* 19.9.1; 15:1; 20.1.3 /Josephus *Antiquities of the Jews*/
 - գ. Տակիտոս *Պատմություն* 2.2 /Tacitus *History*/
 - դ. Սոթենայոս *Տիտոսի կյանքը* 7 /Seutonius *Life of Titus*/
 - ե. Դիո Կասիոս *Պատմություններ* 65.15; 66.18 /Dio Cassius *Histories*/
 - զ. Յուվենալ *Երգիծական* 61.156-157 /Juvenal *Satire*/

25:13-19 Սա կրկին ներկայացնում է Ղուկասի գրական և աստվածաբանական նպատակները, որն էր, ցույց տալ, որ Քրիստոնեությունը Հռոմի համար իրենից քաղաքական սպառնալիք չէր ներկայացնում (տես՝ հ. 25): Առաջին դարի առաջին տասնամյակների ընթացքում Քրիստոնեությունը համարվում էր Հուդայականության աղանդներից մեկը, որը ընդունվեց Հռոմի կողմից որպես օրինավոր կրոն: Հռոմը հրեական կրոնական աղանդների վիճաբանությունների մեջ չէր ուզում մաս կազմել:

25:18 «ամբաստանողներն առաջ եկան, իմ կասկածածներից և ոչ մի հանցանք չէին ներկայացնում» Սա արտահայտում է հրեական ընդդիմության ինտենսիվությունն ու բնույթը: Դա քաղաքական չէր, այլ կրոնական:

■	
NASB, NRSV, NJB, NIV	«հանցանքներ»
NKJV	«այսպիսի բաներ»
TEV	«չար հանցանքներ»
REB	«մեղադրանքներ»
NET Bible	«չար գործեր»
ASV	«չար բաներ»

Գոյություն ունեն մի քանի տարբերակներ:

1. *ponērōn* – ՍԵՌԱԿԱՆ հոլով ՀՈԳՆԱԿԻ՝ MSS Խ², B, E, որը նշանակում է «չարի գործեր» (տես՝ 28:21)
2. *ponērau* – ՀԱՅՑԱԿԱՆ ՉԵՉՈՔ ԵՉԱԿԻ՝ MSS P⁷⁴, A, C*
3. *ponēra* – ՀԱՅՑԱԿԱՆ ՉԵՉՈՔ ՀՈԳՆԱԿԻ՝ MSS Խ*, C²
4. *omit* – MSS L, P և մի քանի լեկցիոններ (տես՝ NKJV)

UBS⁴ տարբերակ #1 տեքստում գնահատում է «C» (դժվար է որոշել):

Ֆելիքսը զարմացել էր, որ մեղադրանքները լուրջ չէին և կապված էին հրեական կրոնական հարցերի հետ և ոչ թե իրավական հարցերի:

25:19 «կրոն» Այս տերմինը բաղադրյալ բառ է՝ կազմված «վախ» և «աստվածներ» բառերից: Այս տերմինը կարող է նշանակել «անտիապաշտություն», որ ճիշտ այսպիսի կարծիք ունեին այս հռոմեացի առաջնորդները հրեական կրոնի վերաբերյալ: Սակայն, Փետոսը հաստատ չէր կամենա վիրավորել իր հրեա բարձրաստիճան պաշտոնյաներին, ուստի կիրառեց մի երկիմաստ տերմին (ինչպես և Պողոսը՝ 17:22-ում):

18-19 համարները կրկին ցույց են տալիս, որ հռոմեական արդարադատությունը ոչ մի հանցանք չգտավ Պողոսի կամ Քրիստոնեության հետ կապված:

■ «ոմն Հիսուսի վերաբերյալ, որը մեռած է, և Ում մասին Պողոսը պնդում է, թե կենդանի է» Գործք Առաքելոցում (տես՝ Գործք 26:8) հարությունը քարոզների կենտրոնական պոնտիկից մեկն էր (*kerygma*, տես՝ Հատուկ Թեմա 2:14): Քրիստոնեությունը կանգուն է կամ անկում է ապրում այս աստվածաբանական համոզման վրա (տես՝ 1 Կորնթացիների 15):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 25:23-27

23Եվ հաջորդ օրը, երբ Ագրիպասն ու Բերնիկեն մեծ հանդեսով եկան և հազարապետների, քաղաքի պատվավոր մարդկանց հետ առյանը մտան, Փեստոսի հրամանով Պողոսին բերեցին, **24**և Փեստոսն ասաց. «Ո՛վ Ագրիպաս թագավոր և բոլորդ, որ մեզ հետ եք, տեսնո՞ւմ եք այս մարդուն, ում համար բոլոր հրեաներն ինձ դիմեցին Երուսաղեմում և այստեղ, աղաղակելով, թե նա այլևս չպետք է ապրի: **25**Բայց, երբ ես գտա, որ նա մեռնելու արժանի ոչինչ չի արել, և երբ ինքը վեհափառ կայսերը բողոքեց, որոշեցի ուղարկել նրան: **26**Սրա մասին իմ տիրոջը գրելու որևէ որոշակի բան չունեմ, ուստի բերեցի ձեր առջև և մանավանդ՝ քո առաջ, ո՛վ Ագրիպաս արքա. որպեսզի քննությունից հետո գրելիք ունենամ: **27**Որովհետև ինձ անվայել է թվում, որ մի քանտարկյալ ուղարկեմ և նրա վրա դրված հանցանքների մասին չտեղեկացնեմ»:

25:23 Ինչպիսի՛ հրաշալի հնարավորություն է ավետարանը քարոզելու համար:

■ **«հազարապետները /անգլ.՝ հրամանատարները/»** Սա *chiliarch* տերմինն է, որը նշանակում է հազար հոգու առաջնորդ, ինչպես որ հարյուրապետը՝ հարյուր հոգու առաջնորդն է: Ջոզեֆուսի *Հնություններ* 19.19.2 ասում է, որ այդ ժամանակաշրջանում Կեսարիայում տեղակայված էր հինգ լրացուցիչ կայսերը: Հետևաբար, շատ հավանական է, որ այստեղ խոսվում է ռազմական հինգ բարձրաստիճան հրամանատարների մասին:

■ **«քաղաքի պատվավոր մարդկանց հետ»** Սա վերաբերում է Կեսարիայի քաղաքացիական առաջնորդներին:

Ուշադրություն դարձրեք հավաքվածների մեջ առկա խմբերին՝

1. Հռոմեացի կուսակալը
2. Իդումիայի տարածքային թագավորը
3. Հռոմեացի ռազմական հրամանատարները
4. Կեսարիայի պատվավոր քաղաքացիական առաջնորդները

25:25 «Կայսրը» Այս տերմինը *sebastos* բառն է, որը լատիներենի *augustus* տերմինի հունարեն համագորն էր: Այս բառի հիմնական ստուգաբանությունն է «պատվել, պաշտել, մեծարել կամ երկրպագել»: Այն առաջին անգամ գործածվել է Օտավիանոսի կողմից Ք. Ա. 27-ին Սենատում: Այստեղ այն կիրառվում է Ներոնի համար (մ.թ. 54-68): Կարծես Ներոնն ինքը զարգացրեց Կայսրին երկրպագելու պաշտամունքը:

25:26 «գրելու որևէ որոշակի բան չունեմ» Փեստոսը ուներ միևնույն խնդիրը, ինչ Լյուսիասը՝ Երուսաղեմի հազարապետը: Նա ստիպված էր համաձայն հռոմեական օրենքի Պողոսի դեմ ցանկացած ապացույցների կամ իրավաբանական կարծիքների հետ միասին մեղադրական եզրակացություն գրել: Պողոսը հռոմեացի այս առաջնորդների համար առեղծված էր:

■ **«տեր /տիրոջ/»** Սա հունարեն *kurios* բառն է, որը նշանակում է սեփականատեր, տիրակալ, իշխան: Ներոնի համար որպես առանձին բառ այստեղ այն կիրառվում է առաջին անգամ: Այս տիտղոսը չընդունվեց Օկտավիան Օգոստինոս և Տիբերիոս Կայսրերի կողմից, քանի որ նրանք մտածում էին, որ այս բառը սերտորեն կապված էր լատիներենի *rex* (թագավոր) բառի հետ, որը հռոմեացիների և Սենատի համար անհարմար էր կիրառելը: Սակայն Ներոնի օրոք և նրանից հետո հաճախ կարելի է հանդիպել Վեսպասիանի և Տիտոսի կողմից «փրկիչ» և Դոմիտիանի կողմից «աստված» տերմինները իրենց նկարագրելիս (տես՝ Ջեյմս Ս. Ջեֆերզ, *Հունա-հռոմեական աշխարհը*, էջ՝ 101 /James S. Jeffers, *Greco-Roman World*): *Kurios* տերմինը դարձավ Քրիստոնյաների դեմ հալածանքների թիրախը, ովքեր կարող էին գործածել այն միայն Հիսուս Քրիստոսի համար: Նրանք հրաժարվում էին կիրառել այս տերմինը խնկավառության գոհի ընթացքում և Հռոմին հավատարմության երդման արարողության ժամանակ:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ էին հրեա առաջնորդները վախենում և ատում Պողոսին:
2. Ինչպե՞ս է այս գլուխը արտացոլում Ղուկասի կողմից Գործք Առաքելոցը գրելու նպատակներից մեկը:
3. Ո՞րն էր Ագրիպասի և Բերնիկեի առջև Պողոսի իրեն արդարացնելու՝ պաշտպանելու նպատակը:

ԳՈՐԾՔ 26

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսի ինքնապաշտպանությունը Ագրիպասի առջև 26:1-11	Պողոսի նախկին կյանքը 26:1-11	Պողոսի պաշտպանությունը Ագրիպասի առջև (25:13-26:32) 26:1 26:2-3 26:4-8 26:9-11	Պողոսի ինքնապաշտպանությունը Ագրիպասի առջև 26:1 26:2-3 26:4-8 26:9-11	Պողոսը կանգնում է Ագրիպաս արքայի առջև 25:13-26:1 Պողոսի խոսքը Ագրիպաս թագավորի առջև 26:2-3 26:4-8 26:9-11
Պողոսը պատմում է իր դարձի մասին 26:12-18	Պողոսը պատմում է իր դարձը 26:12-18	26:12-18	Պողոսը պատմում է իր դարձի մասին 26:12-18	26:12-18
Պողոսի վկայությունը հրեաներին և հեթանոսներին 26:19-23	Պողոսի կյանքը դարձից հետո 26:19-23	26:19-23	Պողոսը պատմում է Նրա գործերը 26:19-23	26:19-23
Պողոսը դիմում է Ագրիպասին, որ հավատա 26:24-29 26:30-32	26:24-32	26:24-29 26:30-32	26:24 26:25-27 26:28 26:29 26:30-32	Նրա լսարանի արձագանքը 26:24-29 26:30-32

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
 ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզինց յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:1

¹Եվ Ազրիպայան ասաց Պողոսին. «Քեզ հրամայվում է, որ քո մասին խոսես»: Այնժամ Պողոսը ձեռքը պարզեց և պատասխանեց.

26:1 «ձեռքը պարզեց» Սա ողջունելու և հռետորական նախաբանի ժեստ էր (տես՝ Գործք 12:17; 13:16 և 21:40, որտեղ ձեռքի ժեստերը գործածվում են ուշադրության և լռության հրավիրելու համար):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:2-3

²Այն ամենի համար, որ ինձ հրեաները ամբաստանում են, ո՛վ Ազրիպայա թագավոր, ինձ երանելի եմ համարում, որ այսօր քո առաջ պատասխան եմ տալու: ³Մանավանդ, որ դու տեղյակ ես հրեաների բոլոր սովորություններին և խնդիրներին: Դրա համար էլ աղաչում եմ, որ համբերությամբ լսես ինձ:

26:2-3 Պողոսը ծանոթացնում է իր դատը հուրահատուկ պաշտոնական կերպով և հանդիսատեսությամբ, ինչպես որ արեց Ֆելիքսի առաջ իր դատի ժամանակ (տես՝ 24:10), որը հավանաբար մշակութային ակնկալվող անհրաժեշտություն էր համարվում:

26:2 «այն ամենի համար, որ ինձ հրեաները ամբաստանում են» Ազրիպայա II-ը Հռոմի կողմից նշանակված էր Տանարի և քահանաների վրա պատասխանատու: Չնայած նրան, որ հռոմեացիների կողմնակիցն էր և կրթվել էր Հռոմում, նա հասկանում էր հրեական հավատքի բարդությունները (հ. 3):

■ **«երանելի /բախտավոր/»** Սա այն նույն տերմինն է, որ ներկայացնում է յուրաքանչյուր ԵՐԱՆԵԼԻՆԵՐԸ Մատթ.5:3-12; Դուկ.6:20-22 և Սաղմ.1:1-ում՝ Մեպտուազիստայում:

26:3

NASB, NKJV

«բոլոր սովորությունները և հարցերը»

NRSV

«բոլոր սովորությունները և հակասությունները»

TEV

«բոլոր հրեական սովորությունները և վեճերը»

NJB

«սովորությունները և վեճերը»

Առաջին տերմինը *ethōn* է, որից ստանում ենք անգլերենի «ethnic» (էթնիկ) բառը կամ կոնկրետ մարդկային ցեղի մշակութային ասպեկտը: Երկրորդ տերմինը՝ *dzētēmatōn*, հաճախ է կիրառվում Գործքում, մատնանշելու բանավեճերն ու վիճարանությունները ռաբբիական հուդայականության տարբեր հարցերի շուրջ (տես՝ 15:2; 18:15; 23:19; 26:3): Այս բաները տարածված էին առաջին դարի հուդայականության մեջ առկա մի քանի բաժանումների պատճառով՝ Սադուկեցիների, Փարիսեցիների (նաև Շամմայի և Հիլելի աստվածաբանական բաժանումները) և նախանձահույզների:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:4-8

⁴Արդ, իմ կյանքի մասին, մանկությունից սկսած Երուսաղեմում՝ իմ ազգի մեջ լինելով, բոլոր հրեաները տեղյակ են, ⁵որոնք ինձ սկզբից իմանալով, կարող են վկայել, որ ես որպես փարիսեցի, մեր կրոնի ճշտագույն աղանդի օրենքի համաձայն եմ ապրել: ⁶Եվ հիմա ատյանում կանգնած՝ դատվում եմ այն հույսի համար, որ Աստված մեր հայրերին խոստացել է: ⁷Մեր տասներկու ցեղերը, գիշեր ու ցերեկ անդադար Աստծուն պաշտելով, հուսացել են, որ այդ խոստումն իրականանա: Ես այս հույսի համար եմ մեղադրվում հրեաների կողմից, ո՛վ Ազրիպայա արքա: ⁸Ինչո՞ւ է ձեզ անհավատալի թվում, որ Աստված մեռելներին հարություն կտա:

26:4 «բոլոր հրեաները տեղյակ են իմ կյանքի մասին» Պողոսը այս բանը մի քանի անգամ կրկնում էր (տես՝ Գործք 22:3-5; 23:1; 24:16; 25:8): Պողոսը Երուսաղեմում հրեաների մեջ ապրել էր օրինակելի կյանք (տես՝ հ. 5):

■ **«իմ ազգի մեջ»** Հայտնի չէ, թե որտեղ է մեծացել Պողոսը: Հնարավոր է սա նկատի ունի (1) Կիլիկիայի Տարսուսը կամ (2) Երուսաղեմը:

26:5 «եթե» Սա ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը նշանակում է պոտենցիալ գործողություն: Այս համատեքստում Պողոսը գիտի, որ նրանք կարող են վկայել անցյալում ապրած իր կյանքի մասին, սակայն նրանք դա չէին անի:

■ **«փարիսեցի, մեր կրոնի ճշտագույն /խստագույն/ աղանդի օրենքի համաձայն»** Սա հուդայականության մեջ աստվածաբանական մի աղանդ էր, որը ծնունդ առավ Մակաբայեցիների ժամանակաշրջանում: Այս աղանդը հատուկ նվիրումով էր մոտենում բանավոր և գրավոր ավանդույթներին: Տե՛ս Հատուկ Թեմա 5:34:

26:6 «հույսի համար, որ Աստված մեր հայրերին խոստացել է» Սա վերաբերում է ՀԿ-յան (1) Մեսիայի գալստյանը կամ (2) մեռելների հարությանը վերաբերող մարգարեությանը (տես՝ 23:6; 24:15; Հոր 14:14-15; 19:25-27; Դան.12:2): Պողոսը տեսնում էր «Ճանապարհը» որպես ՀԿ-ի իրականացում (տես՝ Մատթ.5:17-19; Գաղատացիների 3):

«Հույսի» համար տես Հատուկ Թեմա 2:25 և Հատուկ Թեմա. *Kerygma* 2:14:

26:7 «մեր տասներկու ցեղերը» Յեղային տոհմաձառը (Հակոբի որդիները) դեռևս շատ կարևոր էր հրեաների համար: Տաս հյուսիսային ցեղերից շատերը երբեք էլ չվերադարձան ասորական գերությունից (Բ.Ա. 722): ՆԿ-ից այս ցեղերի հետ կապված մի քանի տեղեկություններ ենք իմանում:

1. Մարիամը, Հովսեփը և Հիսուսը Հուդայի ցեղից էին (տես՝ Մատթ.1:2-16; Ղուկ.3:23-33; Հայտն.5:5)
2. Աննան Ասերի ցեղից էր (տես՝ Ղուկ.2:36)
3. Պողոսը Բենիամինի ցեղից էր (տես՝ Հռոմ.11:1; Փիլ.3:5)

Հերովդես Մեծը նախանձեց այս հարցում և Տանարի հիշատակարանները, որտեղ արձանագրված էին սերնդաբանությունները, այրեց:

«Տասներկուսի» համար տես Հատուկ Թեմա 1:22:

■ **«հույս»** Ինչ-որ մեկը կհարցնի, թե ինչ հույսի մասին է խոսում Պողոսը: Ավելի ընդարձակ համատեքստից կարելի է ենթադրել, որ հարության հույսի (տես՝ հ. 8): Տե՛ս Հատուկ Թեմա. Հույս, 2:25:

■ **«գիշեր ու ցերեկ անդադար Աստծուն պաշտելով /ծառայելով/»** Պողոսը սիրում էր իր ցեղը (տես՝ Հռոմ.9:1-3): Նա գիտեր, թե ինչ ջանասիրությամբ էին նրանք փորձում ծառայել ՅԱՀՎԵԻ: Նա նաև գիտեր, թե ինչ վտանգ էին իրենցից ներկայացնում օրինապաշտությունը, դոգմատիզմը և էլիտարությունը:

«Գիշեր ու ցերեկ» արտահայտությունը դարձվածք է, որը նշանակում է կանոնավոր և եռանդուն կերպով (տես՝ 20:31; Ղուկ.2:37):

26:8 «Ինչո՞ւ է ձեզ անհավատալի թվում» Պողոսը խոսում է երկու խմբերի.

1. Ագրիպասին և ներկա գտնվող հրեաներին
2. ներկա հեթանոսներին, ինչպես օրինակ Փեստոսը

■ **«եթե»** Սա ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը ենթադրում է, որ ճշմարիտ է հեղինակի տեսանկյունից՝ իր գրական նպատակների համար:

■ **«Աստված մեռելներին հարություն կտա»** Այս արտահայտությունը ցույց է տալիս հրեաների ունեցած հույսը ընդհանուր հարության համար (տես՝ Հոր 14:14-15; 19:25-27; Եսայի 25:8; 26:19; Դան.12:2-3), սակայն Պողոսը հատուկ նկատի ունի հենց Քրիստոսի հարությունը (տես՝ 1 Կորնթ.15:1-28): Այս Սաղուկեցի ամբաստանողները այս խոսքից շատ բարկացան (տես՝ 23:1-10):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:9-11
⁹Ես ինքս էլ պարտք էի համարում Հիսուս Նազովրեցու անվան դեմ շատ բաներ գործել, ¹⁰որ և կատարեցի Երուսաղեմում և գլխավոր քահանաներից հեղինակություն ստանալով շատ սրբերի բանտարկեցի, և երբ նրանք մահվան էին դատապարտվում, ձայնս նրանց դեմ էի բարձրացնում: ¹¹Եվ բոլոր հավաքատեղիներում շատ անգամներ նրանց պատժելով ստիպում էի, որ անարգեն, և նրանց դեմ սաստիկ կատաղած՝ մինչև օտար քաղաքներ էի հալածում նրանց:

26:9 Պողոսը (*egō*, «ես» և *emautō*, «ինքս») խոստովանում է իր մոլորված կրոնական ոգևորությունը, որ հիմա նա գիտակցում է, որ Աստծո կամքը չէր (տես՝ 1 Տիմ.1:13): Նա կարծում էր, որ Հիսուսի

հետևորդներին հալածելով ծառայում էր և հաճեցնում Աստծուն: Պողոսի աշխարհն ու աշխարհայացքը ամբողջովին փոխվեցին Դամասկոսի ճանապարհին (տես՝ Գործք 9):

■ **«անունը»** Այս սեմական դարձվածքը նշանակում է «անձը» (տես՝ 3:6,16): Սա կախարդական խոսք՝ բանաձև չէ, այլ անձնական փոխհարաբերություն:

■ **«Հիսուս Նազովրեցի»** Տե՛ս հատուկ Թեմա 2:22:

26:10 «սուրբերը» Բառացի սա նշանակում է «սուրբ մարդիկ»: Հիմա Պողոսը գիտեր, թե ում էր հալածել և սպանել: Աստծո ժողովրդին: Ինչպիսի հարված, ցա, և լուսավորում էր բերել Պողոսի Դամասկոսյան տեսիլքը. մտքի և կյանքի մի ամբողջ վերանայում՝ նորոգություն:

«Սուրբեր» բառի համար տե՛ս Հատուկ Թեմա 9:13:

■ **«հեղինակություն /իշխանություն/ ստանալով»** Պողոսը Սանեդրինի համար «պաշտոնապես» ուղարկված հալածիչ էր:

■ **«երբ նրանք մահվան էին դատապարտվում»** Սա ցույց է տալիս հալածանքի ուժգնությունը՝ լրջությունը: «Ճանապարհը» փոքր խնդիր չէր, այլ կենաց մահու հարց էր և դեռևս է:

■ **«ձայնս նրանց դեմ էի բարձրացնում»** Սա լինի Սանեդրինում, թե տեղական ժողովարանում պաշտոնապես քվեարկություն կատարելու համար հունարեն տեխնիկական տերմին է: Բայց քանի որ ոչ մի տեղական ժողովարան չէր կարող մահապատժի համար քվեարկել, այդ պատճառով շատ հավանական է, որ խոսքը վերաբերում է Սանեդրինին: Եթե դա տեղի էր ունեցել Սանեդրինում, ապա դա նշանակում է, որ Պողոսը պետք է որ ամուսնացած լիներ: Սկզբնապես այս տերմինը նշանակում էր «խիճ», որը գործածվում էր քվեարկություն անելու համար՝ կա՛մ սևը, կա՛մ սպիտակը (տես՝ Հայտն.2:17):

26:11 «ստիպում էի» Սա հունարեն մի տերմինի ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՆ է, որը նշանակում է հարկադրել կամ պարտադրել (տես՝ 28:19), սակայն այստեղ կիրառվում է «փորձելու» իմաստով: Այն արտահայտում է անցյալում կրկնվող գործողության իմաստ:

■ **«անարգեն /հայհոյեն/»** Սողոսը փորձում էր նրանց ստիպել, որ հրապարակայնորեն հաստատեին իրենց հավատքը Հիսուսի հանդեպ որպես Մեսիայի և ապա պատժում էր նրանց: Հետագա հալածանքներում, հավատացյալներին պարտադրում էր, որ հրաժարվեն Քրիստոսի հավատքից, սակայն այս համատեքստում տրված է մեկ այլ մշակութային իրավիճակ:

- NASB «կատաղի բարկացած»
- NKJV «սաստիկ բարկացած»
- NRSV «ես այնքան կատաղի բարկացած էի»
- TEV «ես այնքան կատաղած էի»
- NJB «իմ կատաղությունը նրանց հանդեպ ծայրաստիճան մեծ էր»

Սա շատ խիստ ՄԱԿԲԱՅ է («շատ ավելի») և ԴԵՐԲԱՅ (ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ (դեպոնենտ): Փեստոսը կիրառում է այս նույն արմատը Պողոսի համար (այսինքն՝ կատաղել, մոլեգնել, Գործք 26:24-ում):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 26:12-18
¹²Այսպիսով, երբ Դամասկոս էի գնում, գլխավոր քահանաներից իշխանություն ու հրաման ստացած, ¹³կեսօրին, ճանապարհի վրա, ո՛վ արքա, երկնքից մի լույս տեսա՝ արևի լույսից ավելի ուժգին, որ ծագել էր շուրջս, նաև՝ նրանց շուրջը, ովքեր ինձ հետ էին: ¹⁴Ու երբ մենք բոլորս գետին ընկանք, լսեցի մի ձայն, որ երբայերենով ինձ ասում էր. «Մավո՛ւղ, Մավո՛ւղ, ինչո՛ւ ես ինձ հալածում: Քեզ դժվար է լինելու խթանի դեմ արացի տալը»: ¹⁵Եվ ես ասացի. «Դու ո՛վ ես, Տեր»: Եվ Նա ասաց. «Ես Հիսուսն եմ, Ում դու հալածում ես: ¹⁶Բայց վե՛ր կաց և ոտներիդ վրա կանգնի՛ր, որովհետև ես քեզ երևացի, որպեսզի քեզ գործիչ և վկա դարձնեմ թե՛ այն բաներին, որ դու տեսար և թե՛ այն բաներին, որոնցով ես պիտի երևամ քեզ, ¹⁷քեզ ազատելով այս ժողովրդից և հեթանոսներից, որոնց մեջ քեզ հիմա ուղարկում եմ՝ ¹⁸նրանց աչքերը բանալու և նրանց խավարից դեպի լույս և սատանայի իշխանությունից դեպի Աստված դարձնելու, որպեսզի նրանք մեղքերի թողություն ստանան և ժառանգություն՝ նրանց հետ, ովքեր Ինձ վրա ունեցած հավատով մաքրված են»:

26:12 Ղուկասը հիշատակում է Պողոսի անձնական վկայությունը երեք անգամ՝ Գործք 9:1-31; 22:3-21 և այստեղ: Սողոսի հանդեպ Աստծո ցուցաբերած ողորմությունն ու ընտրությունը շատ ակնհայտ է: Եթե Աստված Քրիստոսում կարող է ներել և գործածել այսպիսի մարդու, ուրեմն Նա կարող է ներել և օգտագործել ցանակացած մեկին:

26:13 Տե՛ս ամբողջական գրառումը 9:3-ում:

Այն փաստը, որ մանրամասների մեջ տարբերություններ կան բոլոր այն երեք տեղերում, որտեղ Պողոսը վկայում է իր դարձի գալու մասին, խոսում է Ղուկասի կողմից Գործքում Պողոսի օրինական դատապաշտպանությունների արձանագրության ճշգրտության՝ հավաստիության մասին (և հետևաբար նաև քարոզների):

26:14 Տե՛ս ամբողջական գրառումը 9:4-ում:

Փրենք Սթեգը, *Նոր Կտակարանի Աստվածաբանություն*, /Frank Stagg, *New Testament Theology*/ ունի մի հրաշալի պարբերություն Հիսուսի և Իր եկեղեցու միջև կարևոր կապի վերաբերյալ:

«Դատաստանի վերաբերյալ ամենակարևոր ճշմարտությունն այն է, որ մենք դատվում ենք Քրիստոսի հետ մեր փոխհարաբերության համաձայն: Իր հերթին էլ, սա մի դատաստան է Իր ժողովրդի հետ փոխհարաբերության համաձայն: Նրա հետ մեր ունեցած իրական փոխհարաբերությունը արտացոլվում է Իր ժողովրդի հետ մեր փոխհարաբերության մեջ: Նրանց ծառայելը, նշանակում է Նրան ծառայել, և նրանց անտեսելը նշանակում է Նրան անտեսել (տես՝ Մատթ.25:31-46): Նոր Կտակարանը երբեք ոչ մի մարդու թույլ չի տալիս Քրիստոսի հետ իր փոխհարաբերություններում ամուսնալուծվել, ըստ այդմ և ուրիշ մարդկանցից: Նրանց հալածելը նշանակում է Նրան հալածել (Գործք 9:1-2,4-5; 22:4,7-8; 26:10-11,14-15): Մեղանչել եղբայրների դեմ նշանակում է մեղանչել Քրիստոսի դեմ (1 Կորնթ.8:12): Չնայած մենք փրկված չենք մեր գործերով, սակայն դատվում ենք դրանցով, քանի որ մեր գործերը իրականում արտացոլում են Քրիստոսի և Նրա շնորհիքի հետ մեր ունեցած փոխհարաբերությունը: Դատաստանը ողորմած է նրանց հանդեպ, որոնք ընդունում են դատաստանը, և դատաստանը ողորմած է նրանց հանդեպ, ովքեր ողորմած են (Մատթ.5:7)» (Էջ՝ 333):

■ **«Երբայերենով /անգլ.՝ Երբայերեն բարբառով/»** Գործքում Պողոսի երեք վկայություններից սա միակն է, որտեղ նշվում է Հիսուսի արամերեն խոսելու մանրամասները: Տե՛ս ամբողջական գրառումը 22:2-ում:

■ **«Մավո՛ղ, Մավո՛ղ»** Հ. 14-ի այս վերջին կետը և հ. 15-ի վերջին մասը, ինչպես նաև հհ. 16-18 մեջբերում է Դամասկոսի ճանապարհին Պողոսի և Հիսուսի խոսակցությունից:

■ **«Քեզ դժվար է լինելու խթանի դեմ արացի տալը»** Այս արտահայտությունը յուրահատուկ է տվյալ համատեքստի համար, հավանաբար քանի որ այն հունարեն, լատիներեն առակ է, և ոչ թե հրեական: Պողոսը միշտ գիտեր, թե ինչ լսարանի համար է խոսում և ինչպես հաղորդակցվել նրանց հետ: Սա վերաբերում է՝

1. սրածայր փայտիկի, որն օգտագործվում էր եզներով սայլակը կամ գույթանը քաշող մարդկանց կողմից
2. ելուստների, որոնք դրված էին սայլակի կամ քարշակի առաջամասում, որպեսզի կենդանուն պահեին ետ հարվածից:

Այս առակը կիրառվում էր մատնանշելու մարդու կողմից Աստծո նախաձեռնությանը դիմադրելու ապարդյուն ջանքերը:

26:15 Տե՛ս ամբողջական գրառումը 9:5-ում:

■ **«Հիսուսն եմ, Ում դու հալածում ես»** Սա ցույց է տալիս Հիսուսի և Իր եկեղեցու միջև եղած մտերմիկ կապը (տես՝ Մատթ.10:40; 25:40,45): Եկեղեցու մարդկանց վիրավորելը նշանակում է Հիսուսին վիրավորել:

26:16 **«Բայց վե՛ր կաց և ոտներիդ վրա կանգնի՛ր»** Սրանք երկուսն էլ ԱՆՈՐՈՇ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ են: Սա շատ նման է Երեմիայի մարգարեական կանչին Երեմ.1:7-8 և Եզեկ.2:1,3:

■ **«որովհետև ես քեզ երևացի /այս նպատակով/»** Աստված հատուկ առաջադրանք ուներ Պողոսի համար: Պողոսի դարձի գալը և կանչը սովորական չէր, այլ արտասովոր: Աստծո ողորմությունը գորավոր

կերպով դրսևորվեց, ինչպես նաև Աստծո կողմից Իր Թագավորության ծառայության և դրա անման համար ընտրված լինելը:

■ **«Ես քեզ երևացի... Ես պիտի երևամ քեզ»** Այս երկուսն էլ *horaō* տերմինի խոնարհումներն են: Առաջինը ԱՆՈՐՈՇ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է և երկրորդը՝ ԱՊՈՆՆԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ: Ինչ-որ իմաստով Հիսուսն այստեղ Պողոսին խոստանում է ապագայում նույնպես անձնական հանդիպումներ ունենալու: Պողոսն իր ծառայության ընթացքում ունեցավ Աստծուց տրված մի քանի տեսիլքներ (տես՝ 18:9-10; 22:17-21; 23:11; 27:23-24): Պողոսը նաև նշում է Արարիչայում իր սովորելու շրջանի մասին, երբ նրան սովորեցնում էր հենց Հիսուսը (տես՝ Գաղ.1:12,17,18):

■ **«դարձնեմ»** Սա տառացի նշանակում է «ձեռքից բռնել»: Այս դարձվածքը կիրառվում էր ճակատագրի համար (տես՝ 22:14; 26:16):

■ **«գործիչ /ծառայող/ և վկա»** Առաջին տերմինը վերաբերում էր նավի ներքևի հարկի «թիավարին»: Այն սկսել էին այլաբանորեն կիրառել «ծառայի» համար: Երկրորդ տերմինից՝ *martus*, ստանում ենք անգլերեն «մարտիրոս» (*martyr*) տերմինը: Այն ունի երկու իմաստ.

1. վկա (տես՝ Դուկ.11:48; 24:48; Գործք 1:8,22; 5:32; 10:39,41; 22:15)
2. մարտիրոս (տես՝ Գործք 22:20)

Երկու նշանակություններն էլ հանդիսանում են Առաքյալներից շատերի և դարեր շարունակ բազմաթիվ հավատացյալների անձնական փորձառությունը:

26:17 «քեզ ազատելով» Սա ՆԵՐԿԱ ՉԵՉՈՔ ԴԵՐԲԱՅ Է: ՉԵՉՈՔ ՍԵՌՈՒՄ այս բառը սովորաբար նշանակում է ընտրել: Ընդհանրապես այն թարգմանվում է «փրկել կամ ազատել» (տես՝ 7:10,34; 12:11; 23:27): Աստծո մատակարարող հոգածությունը այստեղ ակնհայտ է: Պողոսը այս տեսիլքներից մի քանիսը իր ծառայության ընթացքում ստացավ, որպեսզի իր համար քաջալերանք լինի: Սա հավանաբար ակնարկում է Սեպտուագիինտայից Եսայի 48:10 կամ Երեմ.1:7-8,19:

■ **«այս ժողովրդից /հրեաներից/ և հեթանոսներից»** Պողոսը հակառակության է ենթարկվելու այս երկու խմբերի կողմից էլ (տես՝ 2 Կորնթ.11:23-27):

■ **«որոնց մեջ /Ես/ քեզ հիմա ուղարկում եմ»** Այստեղ՝ անգլերենում, «Ես» բառը ընդգծված է (*egō*), ինչպես և հ. 15-ում: ԲԱՅԸ՝ *apostellō* (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) է, որից էլ ստանում ենք «Apostle» - Առաքյալ տերմինը: Ինչպես որ Հայրը ուղարկեց Հիսուսին, այնպես էլ Հիսուսն է ուղարկում Իր վկաներին՝ առաքյալներին (տես՝ Հովհ.20:21):

26:18 «բանալու... դարձնելու» Այս երկուսն էլ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅՆԵՐ են: Հնարավոր է սա ակնարկում է Եսայի 42:7-ը: Մեսիան բանալու է կույր աչքերը արտահայտությունը այլաբանորեն նշանակում է, որ նա բանալու է նրանց հոգևոր աչքերը (տես՝ Հովհաննես 9): Ավետարանի գիտությանը և հասկանալուն պետք է նախորդի կամավոր արձագանքի կոչը (ապաշխարության և հավատքի): Սատանան փորձում է փակել մեր մտքերն ու սրտերը (տես՝ 2 Կորնթ.4:4) և Հոգին փորձում է բացել դրանք (տես՝ Հովհ.6:44,65; 16:8-11):

■ **«խավարից... Սատանայի իշխանությունից /տիրակալությունից/»** Նկատել էր զուգահեռ արտահայտությունները: «Տիրակալություն» բառը հունարեն *exousia* տերմինն է, որը սովորաբար թարգմանվում է իշխանություն կամ զորություն (տես՝ NKJV, NRSV, TEV): Աշխարհը չարի ազդեցության ներքո է (տես՝ Եփես.2:2, 4:14; 6:10-18; 2 Կորնթ.4:4; Կող.1:12-13. տես Հատուկ Թեմա 5:3):

ՀԿ-ում, մասնավորապես Եսայի մարգարեի մարգարեություններում, Մեսիան (տես՝ Հատուկ Թեմա 2:31) տեսողություն է տալու կույրերին: Այն թե՛ ֆիզիկական կանխատեսում էր և թե՛ այլաբանություն էր ճշմարտության համար (տես՝ Եսայի 29:18; 32:3; 35:5; 42:7,16):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ (EXOUSIA)

Հետաքրքիր է ուսումնասիրել Դուկասի *exousia* տերմինի (իշխանություն, զորություն կամ օրինական իրավունք) կիրառությունը:

1. 4:6-ում Սատանան հայտարարում է, որ կարող է Հիսուսին իշխանություն տալ:
2. 4:32,36-ում հրեաները զարմացան, թե ինչպես է Հիսուսը սովորեցնում, օգտագործելով Իր անձնական իշխանությունը:
3. 9:1-ում Նա Իր իշխանությունը և զորությունը տալիս է Իր Առաքյալներին:

4. 10:19-ում Նա Իր իշխանությունը տալիս է յոթանասուն միսիոներներին:
5. 20:2,8-ում հարցնում են, թե ինչ իշխանությամբ է Հիսուսը գործում:
6. 22:53-ում չարին իշխանություն է թույլատրվում, որպեսզի դատապարտի և սպանի Հիսուսին: Չնայած որ սա Ղուկասում չէ, Մատթեոսի նախաբանը Մեծ Հանձնարարության մեջ՝ «բոլոր իշխանությունը Ինձ է տրվել երկնքում և երկրի վրա» հրաշալի հայտարարություն է (Մատթ.28:18): Հիսուսի պատասխանը նրանց հարցին արդեն իսկ՝
 1. Աստծո ասած խոսքերն էին՝
 - ա. Նրա մկրտության ժամանակ (Ղուկ.3:21-22)
 - բ. այլակերպության ժամանակ (Ղուկ.9:35)
 2. ՀԿ-յան իրականացված մարգարեությունը՝
 - ա. Հուդայի ցեղից սերված (տես՝ Ծննդ.49:10)
 - բ. Հեսսեյի ընտանիքից (տես՝ 2 Թագավորաց 17)
 - գ. Բեթլեհեմում ծնված (տես՝ Միքիա 5:2)
 - դ. ծնված համաձայն Դանիել 2-ի չորրորդ կայսրության ընթացքում (Հռոմեական)
 - ե. օգնում էր աղքատներին, կույրերին, կարիքավորներին (Եսայի)
 3. Այն, որ Նա քշում էր դևերին, հայտնում է Իր գործությունը և իշխանությունը Սատանայի և նրա թագավորության վրա:
 4. մեռելին վերակենդանացնելը՝ հարություն տալը, ցույց է տալիս Նրա իշխանությունը ֆիզիկական կյանքի և մահվան վրա:
 5. Նրա բոլոր հրաշքները հայտնում են Նրա գործությունն ու իշխանությունը ժամանակավորի, տարածականի և ֆիզիկականի վրա՝
 - ա. բնության
 - բ. մատակարարման
 - գ. բժշկության
 - դ. մտքերը կարդալու
 - ե. ձուկ բռնելու

■ **«դեպի լույս ... դեպի Աստված»** Ուշադրություն դարձրեք զուգահեռներին: Հնում մարդիկ վախենում էին խավարից: Այն դարձել էր փոխաբերություն չարի համար: Լույսը, մյուս կողմից, դարձել էր ճշմարտության, բժշկության և մաքրության փոխաբերությունը: Ավետարանի լույսի վերաբերյալ գեղեցիկ զուգահեռներ է տալիս Հովի.3:17-21:

■ **«որպեսզի նրանք ստանան»** Այս արտահայտության մեջ ԲԱՅԸ մեկ այլ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ է: Հունարեն տեքստում չկա «կարողանան» ստանալ /անգլ.՝ may receive/ (տես՝ TEV, NJB): Այս համատեքստում միակ պայմանը «Ինձ վրա ունեցած հավատով» ենթամասն է, որը հունարեն նախադասության մեջ շեշտադրության համար դրված է վերջին մասում: Աստծո բոլոր օրհնությունները պայման ունեն, որը հավատքի արձագանքն է (այսինքն՝ հավատքով ընդունելը. տես՝ Հովի.1:12) Իր շնորհքի հանդեպ (տես՝ Եփես.2:8-9): Սա ՆԿ-ի հակահարվածն է ՀԿ-ում առկա պայմանական ուխտերին:

■ **«մեղքերի թողություն /ներում/..** Ղուկասը այս տերմինը (*aphesis*) հաճախ է կիրառում:

1. Ղուկաս 4:18-ում այն կիրառվում է ՀԿ-յան մեջբերմամբ՝ Եսայի 61:1-ից, որտեղ այն նշանակում է ազատում, որն էլ արտացոլում է Ելից 18:2 և Ղևտ.16:26-ի LXX կիրառությունը:
2. Ղուկաս 1:77; 3:3; 24:47; Գործք 2:38; 5:31; 10:43; 13:38; 26:18-ում այն նշանակում է «մեղքի հանցանքի հեռացում», որն արտացոլում է 2 Օրինաց 15:3-ի LXX կիրառությունը, որտեղ այն կիրառված է պարտքը չեղյալ համարելու իմաստով:

 Ղուկասի կիրառությունը կարող է արտացոլել Երեմ.31:34-ի Նոր Ուխտի խոստումը:

■ **«և ժառանգություն»** Սա հունարեն *klēros* տերմինն է, որն արտահայտում է վիճակ գցելու միջոցով (տես՝ Ղևտ.16:8; Հովնան 1:7; Գործք 1:26) ժառանգություն որոշելը, ինչպես որ տրված են Ծննդ.48:6; Ելից 6:8 և Հեսու 13:7-8-ում: ՀԿ-ում միայն Ղևտացիները չունենին հողատարածքի ժառանգություն, այլ միայն 48 Ղևտական քաղաքներ (տես՝ 2 Օրին.10:9; 12:12), սակայն Տերն Ինքն էր նրանց ժառանգությունը (տես՝ Թվոց 18:20): Այժմ ՆԿ-ում բոլոր հավատացյալները քահանաներ են (տես՝ 1 Պետ.2:5,9; Հայտն.1:6): Տերը (ՅԱՀՎԵ) մեր ժառանգությունն է. մենք Նրա զավակներն ենք (տես՝ Հռոմ.8:15-17):

■ **«ովքեր... մաքրված են»** Սա ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ է: Հավատացյալները (հավատքի մարդիկ) եղել են և կշարունակեն մաքրվել Քրիստոսի մեջ իրենց ունեցած հավատքի միջոցով

(տես՝ 20:21): Տե՛ս Հատուկ Թեմա 9:32: Ո՛չ Սատանան և ո՛չ էլ դիվական աշխարհը չեն կարող սա մեզնից գողանալ (տես՝ Հռոմ.8:31-39):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. 26:19-23

¹⁹Ուստի, ո՛վ Ագրիպպաս արքա, ես անհնազանդ չգտնվեցի այն երկնային տեսիլքին, ²⁰այլ նախ Դամասկոսում, Երուսաղեմում և Հրեաստանի շրջաններում գտնվողներին և հեթանոսներին կոչ արեցի ապաշխարել և դառնալ դեպի Աստված՝ ապաշխարության արժանի գործեր կատարելով: ²¹Այս պատճառով տաճարում ինձ բռնելով՝ հրեաներն ուղում էին սպանել: ²²Ու քանի որ Աստված ինձ օգնում էր, ես մինչև այսօր շարունակում եմ փոքրին ու մեծին վկայել, ուրիշ ոչինչ չասելով, բացի նրանից, որ մարգարեներն ու Մովսեսն էին ասել գալիք բաների մասին. ²³թե՛ Քրիստոսը պիտի չարչարվի, և Նա, առաջինը մեռելներից հարություն առնելով, յույս պիտի քարոզի ժողովրդին և հեթանոսներին»:

26:19 «Ուստի, ո՛վ Ագրիպպաս արքա» Տե՛ս գրառում 25:13, ներածական: Պողոսը փորձում էր այս մարդուն ավետարանը հասցնել (տես՝ հհ. 26-29):

■ **«Ես անհնազանդ չգտնվեցի»** Հունարենի *peithō* տերմինը ծագել է համոզող աստվածուհու անվանումից: Այս համատեքստում այն ունի ԱԼՖԱ ԲԱՑԱՌՄԱՆ սկզբունք, որը ժխտում է, բացառում և հետևաբար մատնացույց անում «անհնազանդությունը» (տես՝ Ղուկ.1:17; Հռոմ.1:30; 2 Տիմ.3:2; Տիտոս 1:16; 3:3): Ուստի ինչ որ առումով, սա Կոյնն Հունարենում պարտադրված կերպ էր ինչ-որ բան բացառելու՝ ժխտելու, բայց այս համատեքստում, այն Պողոսի հնազանդությունը հաստատելու համար կիրառվող գրական ոճ է:

■ **«Երկնային տեսիլք»** Սա վերաբերում է Պողոսի և Դամասկոսի ճանապարհին հարուցյալ և փառավորված Հիսուսի հանդիպմանը:

26:20 «Դամասկոս... Երուսաղեմ» Տե՛ս Գործք 9:19-25,27 Պողոսի Դամասկոսում կատարած ծառայության համար. 9:26-30՝ Երուսաղեմում կատարած ծառայության համար և հավանաբար 9:31՝ Հրեաստանում նրա կատարած ծառայության համար:

- **«ապաշխարել և դառնալ դեպի Աստված»** Պողոսի պատգամը (տես՝ Գործք 20:21) նույնն էր ինչ՝
1. Հովհաննես Մկրտչինը (տես՝ Մատթ.3:1-12; Մարկ.1:4-8)
 2. Հիսուսի առաջին պատգամը (տես՝ Մարկ.1:15)
 3. Պետրոսի պատգամը (տես՝ Գործք 3:16,19):

Հունարեն ապաշխարել տերմինը նշանակում է մտքի փոփոխություն: Եբրայերեն բառը նշանակում է գործերի՝ գործողության փոփոխություն: Իրական ապաշխարության մեջ երկուսն էլ առկա են: Տե՛ս Հատուկ Թեմա 2:38: Փրկության համար Նոր Ուխտի երկու պահանջներն են (որոնք նաև Հին Ուխտի պահանջներն են) ապաշխարությունը (սեփական եսից ու մեղքից հրաժարվելը) և հավատքը (Քրիստոսի միջոցով դեպի Աստծուն դառնալ):

■ **«ապաշխարության արժանի գործեր կատարելով»** Հավատացյալի ապրելակերպը (ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԳԵՐԲԱՅ) հաստատում է իր սկզբնական հավատքի նվիրումը (տես՝ Մատթ.3:8; Ղուկ.3:8; Եփես.2:8-10; Հակոբոս և 1 Հովհաննես): Աստված ուղում է մի ժողովուրդ, որն արտացոլում է Իր բնավորությունը: Հավատացյալները կանչված են լինելու Քրիստոսի նման (տես՝ Հռոմ.8:28-29; Գաղ.4:19; Եփես.1:4; 2:10): Ավետարանը՝

1. Անձ է, որին պետք է ընդունել
2. այդ Անձի մասին ճշմարտություն է, որին պետք է հավատալ
3. այդ Անձի կյանքի պես կյանք, որը պետք է ապրել

26:21 Այստեղ տրվածը Պողոսի աստվածաբանական համոզմունքները չէին, այլ «Հեթանոսներին» ուղղված իր քարոզչությունը և նրանց ներգրավվածությունը (տես՝ հ. 20), որը Տաճարում խոռվության պատճառ հանդիսացավ:

■ **«ուղում /փորձում/ էին սպանել»** Սա ԱՆԿԱՏԱՐ ՉԵՉՈՔ (դեպոնենտ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ (նորից ու նորից փորձում էին) է, ԱՆՈՐՈՇ ՉԵՉՈՔ (սպանել): Հրեաները (տես՝ Գործք 9:24) Ասիայից (տես՝ 20:3,19; 21:27,30) մի քանի անգամ փորձեցին սպանել Պողոսին:

26:22 «փորրին ու մեծին վկայել» Սա իրենից Մեմական դարձվածք է ներկայացնում: Այն Պողոսի հիմնավորումն է (ինչպես Պետրոսինը, տես՝ 10:38), այն բանի, որ նա Աստծո պես խտրականություն չի դնում մարդկանց միջև (տես՝ 2 Օր.10:17; 2 Մնաց.19:7; տես՝ ամբողջական գրառումը 10:34-ում): Նա քարոզում էր բոլոր մարդկանց:

■ **«ուրիշ ոչինչ չասելով, բացի նրանից, որ մարգարեներն ու Մովսեսն էին ասել»** Պողոսը պնդում է, որ իր պատգամը և յարանը նորություն չեն, այլ ՀԿ-ի մարգարեություն: Նա պարզապես հետևում է ՀԿ-ի ուղեցույցներին (տես՝ Հատուկ Թեմա 1:8), խոստումներին և ճշմարտություններին:

26:23 Նկատել, որ Պողոսի պատգամը երեք մասից էր բաղկացած.

1. Մեկիան չարչարվեց մարդկանց թողություն տալու համար
2. Մեկիայի հարությունը եղավ բոլոր հավատացյալների հարության երեխային՝ առաջին պտուղը:
3. Բարի լուրը հրեաների և հեթանոսների համար է

Այս երեք աստվածաբանական հիմնակետերը պետք է կապակցվեն համար 20-ի հետ, որը ցույց է տալիս, թե ինչպես ենք մենք անձնապես ընդունում Քրիստոսին (ապաշխարությունը՝ մեր եսից ու մեղքից ետ դառնալը. հավատքը՝ Քրիստոսով դեպի Աստծուն դառնալը՝ շրջվելը):

■ **«թե՛ Քրիստոսը պիտի չարչարվի»** Գործքում Առաքելական քարոզների հիմնական աստվածաբանական կետերի համար տե՛ս Հատուկ Թեմա 2:14: Այն գայթակղության քար էր հրեաների համար (տես՝ 1 Կորնթ.1:23), բայց և այնպես ՀԿ-յան մարգարեություն (տես՝ Ծննդ.3:15; Մաղմուս 22; Եսայի 53): Այս նույն ճշմարտությունը կարելի է գտնել Ղուկաս 24:7,26,44-47-ում:

Հունարեն «Քրիստոսը» արտահայտում է եբրայերենի «Մեսիա» տիտղոսը: Պողոսը պնդում է, որ Հիսուսը, որը խաչվեց, իրոք Քրիստոսն էր, Խոստացյալը, Օծյալը (տես՝ 2:36; 3:6,18,20; 4:10,26; 13:33; 17:3; 26:23, տե՛ս Հատուկ Թեմա. Մեսիա 2:31):

■ **«առաջինը մեռելներից հարություն առնելով»** Այս տեքստի և Հռոմ.1:4-ի պատճառով, ձևավորվեց առաջին դարում մի այսպիսի հերետիկոսություն՝ հերձվածողություն, որը կոչվում էր «որդեգրություն» (տես Բացատրական Բառարանում), որը պնդում էր, որ Հիսուս մարդը պարզև-ատրվեց լավ կյանք ապրելու համար, մեռելներից հարություն առնելով: Սակայն, այս շեղված Քրիստոսաբանությունը անտեսում էր Նրա նախագոյության վերաբերյալ բոլոր տեքստերը, ինչպես օրինակ Հովհ.1:1; Փիլ.2:6-11; Կող.1:15-17 և Եբր.1:2-3: Հիսուսը միշտ եղել է, Նա միշտ էլ եղել է որպես Աստված, Նա մարմնավորվել է ժամանակի մեջ:

■ **«լույսը»** Լույսը հանդիսանում է ճշմարտության և մաքրության համար հնագույն մետաֆոր՝ փոխաբերություն (տես՝ հ.18; Եսայի 9:2; 42:6-7):

■ **«ժողովրդին /հրեաներին/ և հեթանոսներին»** Գոյություն ունի միայն մեկ ավետարան այս երկու խմբերի համար էլ (տես՝ Եփես.2:11-3:13): Այն դարեր շարունակ եղել է ծածուկ խորհուրդ՝ առեղծված, որն այժմ կատարելապես հայտնվել էր Քրիստոսի մեջ: Բոլոր մարդիկ ստեղծված են մեկ արարիչ Աստծո պատկերով (տես՝ Ծննդ.1:26-27): Ծննդոց 3:15-ը խոստանում է, որ Աստված կապահովի փրկություն, ընկած՝ մեղավոր մարդկության համար: Եսային հաստատում է Մեսիայի տիեզերական լինելը՝ այսինքն բոլորի համար (օր.՝ Ես.2:2-4; 42:4,6,10-12; 45:20-25; 49:6; 51:4; 52:10; 60:1-3 և Միք.5:4-5):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:24-29

²⁴Եվ երբ նա այս պատասխանն էր տալիս, Փետոսը բարձր ձայնով ասաց. «Դու խելագարվում ես, Պողոս, շատ կարդալը քեզ խենթացրել է»: ²⁵Նա էլ ասաց. «Ես չեմ խելագարվում, ո՛վ ազնիվ Փետոս, այլ ճշմարտության և զգաստության խոսքեր եմ ասում: ²⁶Թագավորը, ում առաջ համարձակ խոսում եմ, այս բաները գիտի, որովհետև համոզված եմ, որ ոչինչ թաքուն չէ նրանից, բանի որ այս բանը մի անկյունում չի կատարվել: ²⁷Մարգարեներին հավատո՞ւմ ես, Ագրիպա՛ս արքա, գիտեմ, որ հավատում ես»: ²⁸Եվ Ագրիպաասը Պողոսին ասաց. «Ինձ նույնպես գրեթե համոզեցիր, որ քրիստոնյա դառնամ»: ²⁹Պողոսն էլ ասաց. «Աստված տա, որ ոչ միայն դու, այլև բոլորը, որ այսօր լսում են ինձ, բոլորովին ինձ նման լինեն, բայց առանց այս կապանքների»:

26:24 «Փետոսը բարձր ձայնով ասաց» Պողոսի պատգամը անհավատալի էր նրա համար: Նրա աշխարհընկալումը և մշակույթը, կրթությունն ու դիրքը շեղում էին հասկանալու իր կարողությանը:

■ «շատ կարդալը քեզ խենթացրել է» Այլ կերպ ասած, սա ցույց է տալիս Պողոսի ինքնապաշտպանության խորությունը, հստակությունը և համոզիչ լինելը:

26:25 «ճշմարտության և զգաստության» Հունարեն տերմինը՝ *sōphrosunē* ծագել է երկու հունարեն բառերից՝ «ողջ» և «միտք»: Դրանք ունեն կյանքին և մտքին հավասարակշիռ մոտեցում ցուցաբերելու իմաստը: Դա «խելակորույս» կամ «խենթ» բառերի հականիշն է (տես՝ հ. 24):

■ «ճշմարտությունը» Տե՛ս հետևյալ Հատուկ Թեման.

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ» ՊՈՂՈՍԻ ԳՐՔԵՐՈՒՄ

Այս տերմինի և դրա տարբեր ձևերի կիրառությունը Պողոսի կողմից գալիս է ՀԿ-ում այս բառի համագործից՝ *emet*, որը նշանակում է վստահելի կամ հավատարիմ (BDB 53): Միջատվածաշնչյան հրեական գրություններում այն կիրառվում էր ի հակադրություն կեղծիքի՝ ճշմարտության համար: Հավանաբար ամենամոտ համագործը կարող է հանդիսանալ Մեռյալ Ծովի Գալարների «Օրհներգները», որտեղ այն կիրառվում է բացահայտված վարդապետությունների համար: Էստենների Համայնքի անդամները դառնում էին «ճշմարտության վկաներ»:

Պողոսն այս տերմինը գործածում է Հիսուս Քրիստոսի Ավետարանի վերաբերյալ.

1. Հռոմեացիներին 1:18,25; 2:8,20; 3:7; 15:8
2. 1 Կորնթացիներին 13:6
3. 2 Կորնթացիներին 4:2; 6:7; 11:10; 13:8
4. Գաղատացիներին 2:5,14; 5:7
5. Եփեսացիներին 1:13; 6:14
6. Կողոսացիներին 1:5,6
7. 2 Թեսաղոնիկեցիներին 2:10,12,13
8. 1 Տիմոթեոս 2:4; 3:15; 4:3; 6:5
9. 2 Տիմոթեոս 2:15,18,25; 3:7,8; 4:4
10. Տիտոս 1:1,14

Պողոսն այս տերմինը նաև կիրառում է որպես իր խոսքը ճշգրիտ արտահայտելու կերպ.

1. Գործք 26:25
2. Հռոմեացիներին 9:1
3. 2 Կորնթացիներին 7:14; 12:6
4. Եփեսացիներին 4:25
5. Փիլիպեցիներին 1:18
6. 1 Տիմոթեոս 2:7

Նա նաև այն կիրառում է, որպեսզի նկարագրի իր շարժառիթները՝ 1 Կորնթ.5:8-ում և այբեղակերպը (նաև բոլոր Քրիստոնյաների համար) Եփես.4:24; 5:9; Փիլ.4:8-ում: Երբեմն նա դա օգտագործում է մարդկանց համար:

1. Աստված, Հռոմ.3:4 (տես՝ Հովհ. 3:33; 17:17)
2. Հիսուս, Եփես.4:21 (նման է Հովհ.14:6)
3. Առաքելական վկաներ, Տիտոս 1:13
4. Պողոս, 2 Կորնթ.6:8

Միայն Պողոսն է կիրառում այն ԲԱՅԻ տեսքով (այսինքն՝ *alētheuō*) Գաղ.4:16 և Եփես.4:15-ում, որտեղ այն վերաբերում է ավետարանին: Հետագա ուսումնասիրությունների համար դիմեք Քոլին Բրաունի (խմբ.) *Նոր Կտակարանի Աստվածաբանության Նոր Միջազգային Բառարան*, հատոր՝ 3, էջ՝ 784-902 /Colin Brown (ed), *The New International Dictionary of New Testament Theology*/:

26:26-28 «Թագավորը ... այս բաները գիտի» Այս համարների շուրջ բազմաթիվ քննարկումներ են եղել: Ըստ երևույթին Պողոսը ցանկանում էր օգտագործել Ագրիպպաս II-ին՝ իր վկայությունը հաստատելու համար և եթե հնարավոր լիներ հասցնել նրան ճշմարտությունն ընդունելուն: Համար 28-ը կարող էր թարգմանվել այսպես. «Մի՞թե ուզում ես, որ ես էլ դառնամ Քրիստոնյա վկա»:

26:26 «ում առաջ համարձակ խոսում եմ» Ղուկասը հանախ է Գործքում այս տերմինը կիրառում և այն միշտ կապված է Պողոսի հետ (տես՝ 9:27,28; 13:46; 14:3; 18:26; 19:8): Սովորաբար այն թարգմանվում է «համարձակությամբ խոսել» (տես՝ 1 Թեսաղ.2:2): Մա Սուրբ Հոգու լեցունության դրսևորումներից մեկն

է: Պողոսը Եփես.6:20-ում աղոթում է այս թեմայով: Համարձակությամբ Ավետարանի տարածումը՝ քարոզչությունը Հոգու նպատակն է յուրաքանչյուր հավատացյալի համար:

■ **«քանի որ այս բանը մի անկյունում չի կատարվել»** Պետրոսը նորից ու նորից այս նույն բանն էր պնդում Երուսաղեմում իր առաջին լսարանին (տես՝ 2:22,33): Ավետարանի փաստերը հավաստի և պատմական էին:

26:27 Պողոսը գիտեր, որ Ագրիպասը տեղյակ էր ՀԿ-ից: Պողոսը հայտարարում էր, որ իր ավետարանի պատգամը հստակ երևում է ՀԿ-ում: Այն ինչ-որ «նոր» կամ «նորամուծություն» հանդիսացող պատգամ չէր, այլ իրականացված մարգարեություններն էին:

26:28	
NASB	«Կարճ ժամանակում դու ինձ կհամոզես, որ Քրիստոնյա դառնամ»
NKJV	«Դու գրեթե համոզում ես ինձ Քրիստոնյա դառնալու»
NRSV	«Այսքան արագ ես ինձ համոզում, որ Քրիստոնյա դառնամ»
TEV	«Այս կարճ ընթացքում կարծում ես կարող ես համոզել ինձ, որ Քրիստոնյա դառնամ»
NJB	«Մի քիչ էլ և քո փաստերը ինձ Քրիստոնյա կդարձնեն»

Գոյություն ունեն բառարանային տարբերակներ, թե ինչպես կարելի է հասկանալ *oligō* տերմինը (փոքր կամ փոքրիկ), «կարճ ժամանակում» (NASB, NRSV, TEV) կամ «մի փոքր ջանքով» (NKJV, NJB): Այս նույն շփոթությունը առկա է նաև հ. 29-ում:

Կա նաև տեքստային տարբերակ այս արտահայտության հետ կապված՝ «անել» կամ «դարձնել» (*poieō*) P⁷⁴, և A ձեռագրերում (UBS⁴ այն գնահատում է «A») կամ «դառնալ» բառը MS E և Վուլգատտա, Փեշիտտա թարգմանություններում:

Ընդարձակ համատեքստում իմաստն ակնհայտ է: Պողոսը կամենում էր այնպես ներկայացնել ավետարանը, որ նրանք, ովքեր գիտեին և հաստատում էին ՀԿ-ը (Ագրիպասը) կգային այն համոզմանը կամ գոնե կհաստատեին, որ սրանք համապատասխանում են ՀԿ-յան մարգարեություններին:

■ **«Քրիստոնյա»** «Ճանապարհի» մարդիկ (Քրիստոսի հետևորդները) առաջին անգամ Քրիստոնյա կոչվեցին Սիրիայի Անտիոքում (տես՝ 11:26): Մյուս միակ տեղում, որ այս անունը Գործքում հայտնվում է, դա հենց այստեղ է՝ Ագրիպասի շուրթերին, որը նշանակում է, որ այդ անունը լայն տարածում էր գտել:

26:29 «Աստված տա» Համար 29-ը մասամբ ՉՈՐԲՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է (*an* ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ), որն արտահայտում է ցանկություն, որ հետագայում այն իրականություն կդառնա: Սովորաբար դա աղոթք կամ երազանք՝ ցանկություն է: Պողոսը ցանկություն ուներ, որ բոլոր իրեն լսողները՝ Հռոմեացիները, Հրեաները իր պես կհավատային Քրիստոսին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 26:30-32
³⁰Եվ երբ նա այս ասաց, թագավորը վեր կացավ, և կուսակալը, և Բերնիկեն, և նրանց հետ նստածները, ³¹և գնալիս իրար հետ խոսում էին և ասում, թե՛ այս մարդը մեռնելու կամ կապանքի արժանի ոչինչ չի արել: ³²Այս Ագրիպասը Փետտոսին ասաց, «Այս մարդուն կարելի էր ազատ արձակել, եթե կայսրին բողոքած չլիներ»:

26:30 Որտեղի՞ց էր Ղուկասին այս տեղեկությունը: Այն շատ անձնական՝ մասնավոր երկխոսություն էր կառավարական առաջնորդների (և իրենց ընտանիքների) միջև:

1. հնարավոր է ինչ-որ ծառա լսել էր այս խոսակցությունը և փոխանցել Ղուկասին:
2. Ղուկասը հաջորդ հայտարարություններից է ենթադրում, թե ինչ են նրանք խոսել
3. Ղուկասն օգտագործում է այս առիթը հաստատելու իր գրական նպատակը, ցույց տալու, որ ո՛չ Պողոսը և ո՛չ էլ Քրիստոնեությունը Հռոմի համար սպառնալիք չէին:

26:31-32 «Այս մարդուն կարելի էր ազատ արձակել, եթե կայսրին բողոքած չլիներ» Սա ցույց է տալիս Գործք Առաքելոց գիրքը գրելու Ղուկասի կարևորագույն նպատակը, որն էր ցույց տալ, որ Քրիստոնեությունը Հռոմի համար վտանգ և սպառնալիք չէր: Սա ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է, որը կեղծ հայտարարությանը ստիպում է շեշտադրել՝ ընդգծել ճշմարտությունը: Այս մարդուն կարելի էր ազատել (որ այդպես չէր՝ նա ազատ չէր), եթե նա կայսրին դիմած չլիներ (իսկ նա դիմել էր):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞վ է այս դատավարությունը տարբերվում Փեստոսի և Ֆելիքսի առջև Պողոսի պաշտպանությունից:
2. Ինչպե՞ս է Պողոսի անձնական վկայությունը համապատասխանում իր ընդհանուր դատավարությանը:
3. Ինչո՞ւ էր չարչարվող Մեսիան այդքան օտար հրեաների համար:
4. Ինչո՞ւ է համար 28-ը այդքան դժվար մեկնաբանելի:
5. Փեստոսի, Ֆելիքսի և Բերնիկեի քննարկումը (հհ. 30-31) ինչպե՞ս է համապատասխանում Ղուկասի Գործքը գրելու գրականական կարևորագույն նպատակին:

ԳՈՐԾՔ 27

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսը նավարկում է Հռոմ	Ճամփորդություն դեպի Հռոմ	Ճամփորդություն դեպի Սալտա	Պողոսը նավարկում է Հռոմ	Դեպի Հռոմ մեկնելը
27:1-8	27:1-8	27:1-8	27:1-6 27:7-8	27:1-3 27:4-6 27:7-8
	Պողոսի զգուշացումն անտեսվում է			
27:9-12	27:9-12	27:9-12	27:9-12	27:9-12
Փոթորիկ ծովի վրա	Փոթորիկի մեջ		Փոթորիկ ծովի վրա	Փոթորիկ և նավաբեկություն
27:13-20 27:21-26 27:27-32 27:33-38	27:13-38	27:13-20 27:21-26 27:27-32 27:33-38	27:13-20 27:21-26 27:27-32 27:33-38	27:13-20 27:21-26 27:27-32 27:33-38
Նավաբեկություն	Նավաբեկություն Մալտայում		Նավաբեկություն	
27:39-44	27:39-44	27:39-44	27:39-41 27:42-44	27:39-41 27:42-44

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Դուկասը չափազանց մեծ գիտելիքների պաշար ուներ նավարկություն լուսաբանելու համար (A. T. Robertson, *Word Pictures in the New Testament*, vol. 3, p. 456, ասում է, որ Դուկասը գործածում էր իննը բաղադրյալ բառ, *pleō*, այսինքն՝ նավարկել բառի հետ), ինչպես նաև գրականության, բժշկության, պատմության և աստվածաբանության ոլորտներում: Ահա տեխնիկական, ծովագնացության հետ կապված տերմինների և արտահայտությունների մի ցանկ՝

1. նավարկել (տես՝ 13:4; 14:26; 20:15; 27:1)
2. ծածկոցի տակ (տես՝ 27:4,7)
3. խարխսի գցել (տես՝ 27:13)

4. *euraquilo* (Եվրագիկլոն, տես՝ 27:14)
5. դիմադրել հողմին (տես՝ 27:15)
6. մակույկը բռնել (տես՝ 27:16)
7. նավը տակից կապել (տես՝ 27:17)
8. հորձանուտ (*skeuos*) (տես՝ 27:17)
9. նավի գործիքներ (*skeuēn*) (տես՝ 27:19)
10. չափումներ (տես՝ 27:28 /երկու անգամ/)
11. խորասլափ (տես՝ 27:28 /երկու անգամ/)
12. հետևի կողմից չորս խարիսխ (տես՝ 27:29,40)
13. դեկերի կապերը (տես՝ 27:40)
14. առագաստը քամու դեմ բանալ (տես՝ 27:40)
15. շրջան կատարել՝ նավի ընթացքը փոխել (MSS P⁷⁴, x, A, տես՝ 28:13)

Բ. Մի ավելի հին գիրք, որ մեծ օգնություն է եղել մեկնաբանների համար, Ջեյմս Սմիթի *Մթ. Պողոսի Ճամփորդությունը և Նավաբեկությունը*, 1848 /James Smith *The Voyage and Shipwreck of St. Paul*:

Գ. Այս ճամփորդությունը դեպի Հռոմ փորձեցին կատարել նավարկության համար տարվա վտանգավոր ժամանակ (տես՝ 27:1,4,7,9,10,14): Սովորաբար Նոյեմբերից մինչև Փետրվար ամիսը ամենավտանգավոր ժամանակներն են ճամփորդելու համար՝ այդ ամիսներից երկու կամ երեք շաբաթ առաջ կամ հետո սահմանաժամկետներով: Սովորական ցորենի ծովային առաքումը դեպի Հռոմ տևում էր տասից մինչև տասնչորս օր, սակայն փոթորկի հակադարձ ուղղության պատճառով այն կարող էր տևել նույնիսկ վաթսույն օր:

- Դ. Գոյություն ունեն երեք տարբեր՝ կամ հավանական է չորս, նավեր, որ նշվում են այս հատվածում:
1. առափնյա նավ, որը կանգ էր առնում յուրաքանչյուր ափին և անցնում էր ափամերձ տարածքով:
 2. եգիպտական երկու նավ, որ ցորեն էին տանում Եգիպտոսից դեպի Իտալիա
 3. հավանաբար զբոսանավ, որը Նեապոլից և 43 մղոն Հռոմից դեպի հարավ նավահանգիստն էր իջնում
- Հետաքրքիր է քարտեզի վրա հետևել Միջերկրականի շուրջ Պողոսի այս ճամփորդությանը:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:1-8

¹Երբ մեզ հրաման տրվեց, որ նավով Իտալիա գնանք, Պողոսին և մի քանի ուրիշ բանտարկյալների հանձնեցին կայսերական գնդից մի հարյուրապետի, որի անունը Հուլիոս էր: ²Եվ մի ադրամինտական նավ մտնելով, որ գնալու էր Ասիայի կողմերը, ճանապարհ ընկանք: Արիստարքոսը՝ Թեսաղոնիկեից մի մակեդոնացի, նույնպես մեզ հետ էր: ³Եվ մյուս օրն իջանք Սիդոն, և Հուլիոսը մարդասիրաբար Պողոսին թույլ տվեց, որ գնա իր բարեկամների մոտ, ապաքինվի: ⁴Եվ այնտեղից նավով Կիպրոսի ցածի կողմով ճանապարհվեցինք, քանի որ քամին հակառակ կողմից էր փչում: ⁵Կիլիկիայի և Պամփյուլիայի ծովի միջով գնալով՝ իջանք լիկիացիների Միռա /Մյուռա/ քաղաքը: ⁶Եվ հարյուրապետը, այնտեղ մի աղքատաբարիակն նավ գտնելով, որ Իտալիա էր գնում, մեզ դրա մեջ տեղավորեց: ⁷Եվ երկար օրեր դժվարությամբ նավարկելով՝ հագիվ հասանք Կնիդոսի /Կնիդիա/ կողմերը, ու քանի որ քամին խանգարում էր, Կրետեի տակով Սաղմոնայի կողքով նավեցինք: ⁸Ու դժվարությամբ այդտեղից անցնելով՝ հասանք մի վայր, որ կոչվում էր Գեղեցիկ նավահանգիստ, որի մոտ գտնվում էր Ղասես քաղաքը:

27:1 «Երբ մեզ հրաման տրվեց /անգլ.՝ երբ որոշվեց/, որ նավով Իտալիա գնանք» Փետտոսը նրանց նավարկության ուղարկեց տարվա վտանգավոր ժամանակին: «Մենք» բառը վերաբերում է Պողոսին և Ղուկասին (հավանաբար ուրիշների էլ): Գործք Առաքելոցի «մենք» բաժինների մեծ մասն ունի նավարկության բաղկացուցիչ (տես՝ 16:10-17; 20:5-15; 21:1-18; 27:1-28:16):

■ «մի քանի ուրիշ բանտարկյալներ» Մենք նրանց մասին ոչինչ չգիտենք, բացի այն, որ նրանք կայսերական բանտարկյալներ էին և գնում էին դեպի Հռոմ:

■ **«հարյուրապետ»** ՆԿ-ում այս մարդիկ (հարյուրապետները) միշտ ներկայացված են որպես դրական կերպարներ (տես՝ Մատթեոս 8; Ղուկաս 7; 23:47; Գործք 10 և Պողոսի դատավարությունները՝ 21-28):

■ **«կայսերական գնդից»** Նրանք ենթադրվում են, որ եղել են պաշտոնական սուրհանդակներ կամ առաքիչներ Հռոմի և նահանգների միջև (տես՝ Վ. Մ. Ռամսեյ, *Սբ. Պողոս Ճամփորդը և Հռոմի Քաղաքացին* /W. M. Ramsay, *St. Paul the Traveler and Roman Citizen*/, էջ՝ 315, 348), սակայն սա միայն ոչ հավաստի՝ չարձանագրված ենթադրություն է Հադրիան Կայսրից առաջ (մ. թ. 117-138):

27:2 «մի աղրամինտական նավ» Սա փոքր առափնյա նավ էր, որը կանգ էր առնում բոլոր նավահանգիստներում: Այս նավի հիմնական նավահանգիստը Փոքր Ասիայում Մյուսիայի նավահանգիստն էր: Սա դեպի Հռոմ տանող երկար ու վտանգավոր ճամփորդության առաջին փուլն էր:

■ **«Արիստարքոս»** Նրա տունը Թեսալոնիկեում էր. հավանաբար նա վերադառնում էր տուն (տես՝ Գործք 19:29; 20:4; Կող.4:10; Փիլիմոն 24): Հնարավոր է նրան ուղեկցում էր նաև Սեկունդոսը (տես՝ 20:4 և այս համարի մի քանի արևմտահունարեն ձեռագրեր):

27:3 «Սիդոն» Սա Փյունիկյան մի քաղաք է, որը տեղակայված է մոտ վաթսույնյոթ մղոն Կեսարիայից դեպի հյուսիս: Այն Փյունիկեի հնագույն մայրաքաղաքն էր, սակայն դա վաղուց էր, քանի դեռ նրան չէր խավարեցել Տիվրոսը:

■	
NASB	«մարդասիրությամբ»
NKJV, NRSV	«բարյացակամորեն»
TEV	«բարյացակամ էր»
NJB	«մարդասեր էր»

Սա բաղադրյալ տերմին է, կազմված «սեր» (*philos*) և «մարդկություն» (*anthrōpos*) բառերից: Այս տերմինը Գործքում երկու անգամ է կիրառվում, ԳՈՅԱԿԱՆԸ՝ 28:2-ում (տես՝ Տիտոս 3:4) և ՄԱԿԲԱՅԸ՝ այստեղ 27:3-ում: Հուլիոսը գլխավորում անձնավորություն էր (ինչ-որ տեղ զարմանալի է հռոմեացի զավթիչ զինվորի համար): Նա հավանաբար լսել էր Պողոսի դատական գործի մասին:

■ **«իր բարեկամների /ընկերների/ մոտ»** Սա հավանաբար վերաբերում է այնտեղ գտնվող Քրիստոնյաներին: Հուլիոսը վստահում էր Պողոսին, սակայն հավանական է, որ նրա հետ մի հռոմեացի պահապան զինվոր էլ գնաց:

■ **«ապաքինվի»** Տեքստը հատուկ չի նշում, թե ինչպիսի ուշադրության կարիք ուներ Պողոսը (զգացմունքային, ֆիզիկական, ֆինանսական):

27:4 «Կիպրոսի ցածի կողմով /անգլ.՝ Կիպրոսի հովանու ներքո/» Սա անգլերենում շփոթեցնող արտահայտություն է, քանի որ անգլերեն ընթերցողին մտածել է տալիս, որ «Կիպրոսի հարավային կողմը» սակայն իրականում այն նշանակում էր հյուսիս: Մյուս նշված տեղանունները ժամանակակից Թուրքիայի հարավային և արևմտյան ափերին են:

27:6 «աղեքսանդրիական նավ ... որ Իտալիա էր գնում» Սա ավելի ընդարձակ, մեծ նավ էր (276 մարդ նավի վրա, ինչպես նաև հսկայական քանակությամբ ցորեն) Եգիպտոսից, որ ճանապարհ էր ընկել դեպի Հռոմ: Ժամանակակիցները տեղյակ են այս մեծ նավերից Պոմպեյի պատերի վրայի նկարներից և Լյուսիասի գրություններից՝ մոտ մ. թ. 150թ: Միջան ցորենի այս մեծ նավերի համար ամենամեծ նավահանգիստն էր:

27:2 «Կնիդոս» Այս քաղաքը ազատ առափնյա քաղաք էր՝ Հռոմեական Ասիա նահանգի հարավ-արևմտյան մասում: Հռոմի հետ կապված նավերի մեծամասնությունը անցնում էր այս նավամատույցը (տես՝ Thucydides, *Hist.* 8.35): Այն ուներ երկու նավահանգիստ, քանի որ գտնվում էր թերակղզու վրա:

■ **«Մադոնա»** Սա Կրետե կղզու արևելյան ծայրում գտնվող մի քաղաք էր: Տարվա այս ժամանակի, եղանակի պատճառով, նրանք փորձում էին նավարկել դեպի արևմուտք՝ կղզուն հարող տարածքով:

27:8 «Գեղեցիկ Նավահանգիստ» Սա մի ծովածոց է՝ Կրետեի վրա գտնվող Լասեյա հարավային քաղաքին մոտ: Այն նավահանգիստ չէր, այլ ծովածոց: Այնտեղ անշուշտ դժվար կլինեք ամբողջ ձմեռն անցկացնելը:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:9-12

⁹Եվ քանի որ շատ ժամանակ էր վատնվել, և նավով գնալն այլևս վտանգավոր էր, ծովի ժամանակն էլ արդեն անցել էր, Պողոսը խորհուրդ էր տալիս նրանց՝ ասելով.¹⁰ «Ո՛վ մարդիկ, տեսնում եմ՝ նավարկությունը խիստ դժվար ու վտանգավոր է լինելու, ոչ միայն բեռների ու նավի, այլ նաև՝ մեր կյանքերի համար»: ¹¹Բայց հարյուրապետը նավապետին և նավի տիրոջն ավելի էր լսում, քան Պողոսի խոսքերին: ¹²Քանի որ այդ նավահանգիստը շատ անհարմար էր թվում ձմեռն անցկացնելու համար, շատերը մտածում էին այդտեղից գնալ, որ գուցե կարողանան հասնել և ձմեռել Փյունիկեում՝ Կրետեի նավահանգստում, որ ընկած էր հարավ-արևմուտքից դեպի հյուսիս՝ արևմուտքի կողմերը:

27:9 Տարվա որոշակի ժամանակներ կային (ձմեռային ամիսներին), երբ պետք էր դիմադրել փոթորկի ուժգին հոսանքը և երբ Միջերկրականում քամու ուղղությունը նավարկությունը դարձնում էր վտանգավոր:

■ **«ծում»** Սա վերաբերում է Քավոլոյան Օրվան (տես՝ Ղևտացիների 16): Այն Մովսեսի գրքերում նշված միակ ծոմապահության օրն է: Մրանից կարելի է եզրակացնել, որ ճամփորդությունը տեղի է ունեցել Մեպտեմբեր և Հոկտեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածում: Հոկտեմբերը նավով ճամփորդելու վերջնաժամկետն է:

■ **«Պողոսը խորհուրդ էր տալիս /սկսեց խորհուրդ տալ/»** «Պողոսը սկսեց» արտահայտությունը ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ Ե, որը կարող է վերաբերել (1) անցյալում շարունակվող գործողության կամ (2) գործողություն սկսելուն: Այս համատեքստում #2 տարբերակը լավագույնն է:

27:10 Պողոսը շատ խիստ և հատուկ կերպով զգուշացնում է: Սակայն, իրականում այն տեղի չի ունենում: Մի՞թե Պողոսը իր սեփական կարծիքն էր հայտնել («տեսնում եմ»), թե Աստված մտափոխվեց և որոշեց խնայել նավի վրա գտնվող մարդկանց կյանքերը (տես՝ հ. 24):

27:11

NASB	«նավապետը և կապիտանը»
NKJV	«ղեկավարը և նավի տերը»
NRSV	«նավապետը և նավի տերը»
TEV, NJB	«կապիտանը և նավի տերը»

Արտահայտությունը մատնանշում է երկու տարբեր մարդկանց՝
1. նավապետը (*kubernētēs*), որը վերաբերում է նավավարին՝ մարդ, որը դեկով վարում է նավը (տես՝ Հայտն.18:17)
2. կապիտանը (*nauklēros*, «նավ» [*naus*] և «ժառանգել» կամ «վիճակ» [*klēros*] բառերից կազմված բաղադրյալ բառ), չնայած որ այս բառը կարող է նշանակել «նավի սեփականատերերը» (տես՝ F. F. Bruce, *The Book of Acts*, p. 507, մեջբերում է կատարում Ramsay, *St. Paul the Traveler*, p. 324, որն էլ մեջբերում է *Inscriptiones Graecae*, 14.918): Դրա կիրառությունը Կոյնե հունարեն պապիրուսների մեջ «կապիտան» է: Այս երկու տերմինների միջև եղած կոնկրետ տարբերությունը հայտնի չէ (տես՝ Louw and Nida, *Greek-English Lexicon*, vol. 1, p. 548 vs. Harold Moulton, *The Analytical Greek Lexicon Revised*, p. 275), սակայն հավանաբար այս չափսի նավի վրա (Ալեքսանդրիական ցորենի նավ) կային մի քանի կարգաստիճանի առաջնորդներ, ինչպես նաև սովորական նավաստիներ:

27:12 «եթե /գուցե/» Սա ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ է: Նրանք, ովքեր որոշում կայացրեցին նավարկելու, գիտեին, որ վտանգավոր է լինելու, սակայն մտածում էին, որ կկարողանան տեղ հասնել:

■ **«Փյունիկե»** Կրետեի հարավային ափին գտնվող նավահանգիստ, «Գեղեցիկ Նավահանգստից» դեպի արևմուտք: Հնագույն աղբյուրներից որոշակի կասկածներ կան այս նավահանգստի ճշգրիտ տեղանքի վերաբերյալ (Ստրաբո, *Աշխարհագրություն* /Strabo, *Geography*, 10.4.3/ ընդդեմ Պտղոմեոսի *Եգիպտական աշխարհագրություն* /Ptolemy, *An Egyptian Geography* 3.17.3/ գրքի): Նրանք դեռևս նավարկում էին ափի մոտով՝ Կրետե կղզու հարավային ափի երկայնքով:

■ «ընկած էր հարավ-արևմուտքից դեպի հյուսիս՝ արևմուտքի կողմերը» Ըստ երևույթին Փյունիկեում կային երկու քաղաքներ, որոնք իրարից բաժանվում էին ծովի մեջ դուրս ցցված մի հողակտորով: Նավահանգիստներից մեկը փոթորիկների դեմ մի ուղղությամբ էր բարենպաստ, իսկ մյուսը՝ բարենպաստ էր քամիների դեմ մեկ այլ ուղղությամբ: Կախված տարվա եղանակից, տարբեր նավահանգիստներ էին համարվում լավագույնը՝ բարենպաստը:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:13-20

¹³Եվ երբ հարավի քամին մեղմորեն փչեց, կարծելով, թե դա նպաստելու է իրենց նպատակի իրականացմանը, ճամփա ընկան ու անցնում էին Կրետեի կողքով: ¹⁴Բայց շատ ժամանակ չէր անցել, երբ մրրկալից հողմ բարձրացավ, որ Եվրացիկուն է կոչվում: ¹⁵Եվ երբ նավը, չկարողանալով դիմադրել հողմին, քշվեց, մենք թողեցինք, որ գնա: ¹⁶Եվ Կողոզ կոչվող կղզու կողքով անցնելիս մեծ դժվարությամբ մակույկը բռնեցինք: ¹⁷որը, երբ վեր բարձրացվեց, նավը տակից կապելու միջոցներ ձեռք առնվեցին, և վախենալով, որ կարող են հորձանուտի մեջ ընկնել, առագաստը իջեցրին, և գնում-գալիս էինք: ¹⁸Եվ երբ սաստիկ ալեկոծության մեջ էինք, հաջորդ օրը բեռները դուրս նետեցին: ¹⁹Ու երրորդ օրը նավի գործիքները մեր ձեռքերով դուրս թափեցինք: ²⁰Ու երբ շատ օրեր ո՛չ արև, ո՛չ էլ աստղեր էին երևում, և փոթորիկն էլ արդեն քիչ չէր մեզ վրա, մենք ազատվելու հույսը բոլորովին կորցրինք:

27:14

NASB, NRSV	«սաստիկ քամի»
NKJV	«փոթորկալից /կատաղի/ քամի»
TEV	«շատ ուժգին քամի»
NJB	«մրրիկ»

Հունարեն բառը *typhōn* (typhoon /մրրիկ/) + *ikos* (like /մման/): Սա հանկարծակի սկսած, սաստիկ քամի էր: Հավանաբար այն ուժգնացել էր Կրետեի վրա՝ 7,000 ոտնաչափ բարձրությամբ սարերի վրա:

■

NASB	«Euraquico»
NKJV	«Եվրացիկուն»
NRSV, TEV	«հյուսիսարևելյան»
NJB	«հյուսիս-արևելյան»

Սա նավաստիների կողմից այս եղանակի ընթացքում այսպիսի փոթորկին տրված հատուկ անունն էր: Այն կազմված է (1) հունարեն տերմինից՝ «արևելյան քամի» (*euros*) և (2) լատիներեն տերմինից՝ «հյուսիսային քամի» (*aquilo*): Այն հանկարծակի բարձրացող հյուսիսարևելյան ուժգին քամի էր:

Քանի որ սա դարձել էր ծովային տեխնիկական տերմին (*eukakulōn*), այն սխալ էր հասկացվում հետագայում դպիրների կողմից, որոնք այն փոխեցին մի քանի ձևերով՝ փորձելով համատեքստը իմաստավոր ներկայացնել:

27:15 «չկարողանալով դիմադրել հողմին» Հնագույն նավերը թիերի յուրաքանչյուր կողմի վրա աչքեր ունեին նկարված: Հետագայում մարդկային կամ կենդանական կերպարներ էին նկարում թիերի վրա (տես՝ 28:11): Նույնիսկ այսօր մենք անձնավորում ենք նավերը որպես կին՝ իգական սեռի ներկայացուցիչ: Այս արտահայտությունը բառացի նշանակում է «դեմ» (*anti*) գումարած «աչք» (*ophthalmos*): Նրանք չէին կարողանում նավը վարել հողմին ընդառաջ:

27:16 «Կողոզ» Այս փոքրիկ կղզին գրեթե հիսուն մղոն է հեռու Կրետեի հարավային ափից: Հիմա նրանք անօգնական վիճակում էին այդ հյուսիսարևելյան սաստիկ փոթորկի դեմ: Նրանք հնարավորությունն օգտագործեցին կարճ ժամանակով քամուց պաշտպանվելով մի թաքստոցում, որի ընթացքում հասցրեցին նավը պատրաստել կատաղի ծովի ալիքներից:

- Գոյություն ունեն այս կղզու համար հունարեն մի քանի ձեռագրերի ներկայացված անվանումներ՝
1. *Kauda*, MSS P⁷⁴, ²Ⲅ, B
 2. *Klauda*, MSS Ⲉ*, A
 3. *Klaudēn*, MSS H, L, P և բազմաթիվ այլ հետագայում գրված փոքրատառերով ձեռագրեր
 4. *Gaudēn*, Ջերոմի կողմից գործածվող Հունարեն տեքստը
 5. *Klaudion*, որոշ փոքրատառերով գրված ձեռագրեր

UBS³ և UBS⁴ գնահատում են #1 տարբերակը «B» (գրեթե հաստատ): Առաջին երկու տարբերակները կարող են լինել այս անվան Հունարեն և Լատիներեն տեքստը:

■ «մեծ դժվարությամբ մակույկը բռնեցինք /անգլ.՝ վերահսկեցինք/» Սա վերաբերում է ավելի փոքր պահեստային նավակին (տես՝ հհ. 30, 32): Ետնամասում տեղադրված այս նավակը ծանրություն՝ արգելք էր հանդիսանում, որը դժվարացնում էր մեծ նավի ղեկավարումը:

27:17 «նավը տակից կապելու միջոցներ ձեռք առնվեցին» Սա վերաբերում է հատուկ պարանների, որով փաթաթելով ամրացրեցին նավի կմախքը, որպեսզի ուժգին քամիների ժամանակ նավը մասերի չբաժանվի (տես՝ Արիստոտել, *Հռետորություն 2.5.18 /Aristotle, Rhetoric/*):

■ «հորձանուտ» Սրանք շարժվող ավազուտներ էին հյուսիսային Աֆրիկայի ափերի մոտ: Դրանք կոչվում էին Սիրտիս Մեծ և Սիրտիս Փոքր (տես՝ Պլինի, *Ազգային Պատմություն, 5.4,27 /Pliny, Nat. Hist./*): Սրանք դարձել էին շատ նավերի համար որպես գերեզմաններ: Որպեսզի խուսափեին Սիրտիս Մեծից, նավաստիները նավին կողային ղեկավարմամբ էին ընթացք տվել, որպեսզի դանդաղ թեքվեին դեպի հարավային կողմը:

■ «առագաստը /անգլ.՝ խարիսխը - sea anchor/» Այս համատեքստը ստույգ մեկնաբանելու բանալի բառը «իջեցնել» տերմինն է: Ի՞նչ նրանք իջեցրին՝ (1) խարիսխ, թե՞ (2) առագաստների մի մասը: Նպատակը նավի ընթացքը դանդաղեցնելն էր, բայց և միաժամանակ վերահսկողության տակ պահելը:

Ծովային խարիսխը մինչև հատակը հասնող խարիսխ չէր, այլ օդապարիկի պես մի գործվածք, որը գործածում էր իր մեջ պարունակվող ջրի կշիռը, որպեսզի դանդաղեցնի նավի ընթացքը դեպի հարավային կողմը թեքվելուց (տես՝ հին լատիներեն տեքստը և NASB, NRSV և NJB):

Գոյություն ունեն մի քանի անգլերեն թարգմանություններ, որոնք սա թարգմանում են որպես «ցածի առագաստ» (տես՝ NKJV, TEV, NJB և Պեշիտտա թարգմանությունը անգլերենով): Հունարեն տերմինը բառացի նշանակում է «բան» (տես՝ Լու և Նիդա *Հունարեն Անգլերեն Բառարան, հատ.՝ 2, էջ՝ 223*) և պետք է թարգմանվի հստակ տրված համատեքստի յուսի ներքո: Գոյություն ունեն մի քանի հատուկ պայարարներ տեքստեր, որոնք տալիս են «առագաստ» բառը (տես՝ Մուլտոն և Միլիգան, *Հունարեն Կտակարանի Բառարան, էջ՝ 577*): Եթե այդպես է, ապա նրանք իջեցրել էին առագաստների մի մասը և ոչ թե բոլորը: Նրանք պետք է որոշակի վերահսկողություն պահպանեին և փորձեին ճամփորդել հնարավորին դանդաղ և կողային ընթացքով:

27:18-19 Սա ցույց է տալիս, թե որքան սաստիկ և վտանգավոր էր թվում այս փոթորիկը նման փորձառու նավաստիներին (տես՝ հ. 20):

27:18 «բեռները դուրս նետեցինք» Սա ցույց է տալիս, որ այս նավաստիները իսկապես վախենում էին իրենց կյանքերի համար:

27:19 «նավի գործիքները» Կոնկրետ, թե ինչին է սա վերաբերում, հայտնի չէ, հավանաբար հիմնական առագաստին և դրա սարքավորումներին: Այս տերմինը երկիմաստ է: Միևնույն տերմինը 17-րդ համարում վերաբերում է խարիսխին կամ առագաստների մի մասին:

27:20 «շատ օրեր ո՛չ արև, ո՛չ էլ աստղեր էին երևում» Այս արտահայտությունը ակներև հայտնում է, որ նրանք նույնիսկ գաղափար չունեին, թե որտեղ էին գտնվում: Նրանք վախենում էին հայտնվել Աֆրիկայի հյուսիսային ափում, սակայն չէին էլ կարող ասել, թե որքան մոտ էին այդ ափին (տես՝ հ. 29): Առանց աստղերի կամ արևի նրանք չէին կարող կողմնորոշվել կամ զանազանել իրենց դիրքը:

■ «մենք ազատվելու հույսը բոլորովին կորցրինք» Սա հարթակ է պատրաստում Պողոսի համար, որպեսզի քաջալերի նրանց, իր ունեցած նախորդ տեսիլքի հիման վրա (տես՝ հհ. 21-26): Նրանց հույսի աղբյուրները վերջացել էին:

NASB (Թ-ԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:21-26

²¹Ու քանի որ երկար օրեր քաղցած էին, Պողոսը նրանց մեջ կանգնեց և ասաց. «Ո՛վ մարդիկ, պետք էր, որ ինձ լսեիք և Կրետեից դուրս չգայիք և այս տառապանքն ու վնասները չկրեիք: ²²Ու հիմա հորդորում եմ ձեզ, որ քաջ լինեք, քանի որ ձեզանից ոչ մեկի անձին ոչ մի վնաս չի լինելու, այլ՝ միայն նավին: ²³Քանի որ այս գիշեր ինձ երևաց Աստծո հրեշտակը, Ում ես պատկանում եմ և պաշտում եմ՝ ասելով. ²⁴»Մի՛ վախենա, Պողո՛ս, դու պետք է կայսեր առջև կանգնես, և ահա Աստված քեզ շնորհեց բոլորին, ովքեր քեզ հետ նավի մեջ են»: ²⁵Ուստի սի՛րտ առեք, մարդի՛կ, քանի որ ես հավատում եմ Աստծուն, որ այսպես է լինելու, ինչպես որ ինձ ասվեց: ²⁶Միայն թե պետք է, որ մենք մի կղզի ընկնենք»:

27:21 «երկար օրեր քաղցած էին» Համար 33-ի հետ կապված առնվազն երեք հնարավոր մեկնաբանություն կա.

1. հնարավոր է նրանք ծովային հիվանդությամբ էին տառապում /ուժեղ սրտխառնոցներ ու գլխապտույտ/ սաստիկ փոթորկի պատճառով
2. կրոնական նկատառումներով (այսինքն՝ հեթանոսական ծիսակարգով) ծոնով աղոթում էին, որպեսզի փրկվեին
3. նրանք այնքան զբաղված էին նավը և իրենց կյանքերը փրկելու գործով, որ ուտելը դարձել էր ամենավերջին հարցը

■ **«պետք էր, որ ինձ լսեիք»** Պողոսը կարծես թե ասում էր. «Ես ձեզ ասում էի չէ՞»: Սա Պողոսի համար առիթ հանդիսացավ, որ գործի որպես Սուրբ Հոգու խոսնակ:

27:22 «այլ միայն նավին» Ուշադրություն դարձրեք *dei* բառի կիրառությունը հ. 26-ում: Տե՛ս ամբողջական գրառումներ *dei* տերմինի շուրջ 1:16-ում: Այս գլխում այն կիրառվում է երեք անգամ (հհ. 21,24,26):

27:23 «Աստծո հրեշտակը» Մի քանի անգամ Հիսուսը կամ մի հրեշտակ հայտնվել են Պողոսին, նրան մխիթարելու համար (տես՝ 18:9-10; 22:17-19; 23:11; 27:23-24): Աստված Պողոսի կյանքի համար ուներ ավետարանական ծրագիր և նպատակ (տես՝ հ. 26; 9:15) և փոթորիկը չէր կանգնեցնելու այդ ծրագիրը:

27:24 «Մի՛ վախենա, Պողո՛ս» Սա ՆԵՐԿԱ ՉԵԶՈՔ (դեպոնենտ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է, ԺԽՏԱԿԱՆ ՄԱՍՆԻԿՈՎ, որը սովորաբար նշանակում է դադարեցնել արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող գործողությունը (տես՝ Գործք 23:11; Առ.3:5-6):

■ **«Աստված քեզ շնորհեց բոլորին, ովքեր քեզ հետ նավի մեջ են»** Այս առաջին ԲԱՅԸ ՎԱՂԱԿԱՏԱՐ ՉԵԶՈՔ (Դեպոնենտ) ՍԱՀՄԱՆԱԿԱՆ Է: Աստված Պողոսի ծառայության համար ծրագիր և նպատակ ուներ (տես՝ 9:15; 19:21; 23:11): Նա պետք է (*dei*) վկայի Հռոմում կառավարական և ռազմական առաջնորդների առջև:

Պողոսի կյանքը և հավատքը ազդեցին իր գործընկերների ճակատագրերի վրա: Ծնորհքի այսպիսի դրսևորում կարելի է տեսնել 2 Օրինաց 5:10; 7:9; 1 Կորնթ.7:14-ում: Սա չի թուլացնում անձնական պատասխանատվությունը, այլ շեշտադրում է հավատացյալ ընտանիքների, ընկերների և գործընկերների պատենցիալ ազդեցությունը:

27:25 Համար 22-ում «քաջ լինելու» Պողոսի հորդորը՝ ՆԵՐԿԱ ԱՆՈՐՈՇ, կրկնվում է «սիրտ առե՛ք» խոսքերով, որը ՆԵՐԿԱ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է:

■ **«քանի որ ես հավատում եմ Աստծուն»** Կենդանի Քրիստոսի հետ Պողոսի հանդիպումը՝ շփումը, կարողություն էր տվել նրան վստահելու Աստծո Խոսքին («այսպես է լինելու, ինչպես որ ինձ ասվեց» ՎԱՂԱԿԱՏԱՐ ԿՐՎՈՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ): Հավատքը ձեռքն է, որով ընդունվում են Աստծո պարգևները՝ ոչ միայն փրկությունը, այլ նաև Նրա հոգածությունը:

Ռոբերթ Գրդլսթոունի *Հին Կտակարանի Հոմանիմներ* /Robert B. Girdlestone *Synonyms of the Old Testament*/ գիրքը տալիս է մի հրաշալի սահմանում և մեջբերում Ռոմեյնի *Հավատքի կյանք* /Romaine *Life of Faith*/ գրքից:

«Մենք հիմա մոտենում ենք ՆԿ-ին հստակ տարբերակմամբ՝ մի կողմից հավատքի և մյուս կողմից՝ վստահության և հույսի: Հավատքի Աստծուն Իր Խոսքի համեմատ ընդունելն է, մինչ վստահությունը, համբերությունը և հույսը հավատքի ճիշտ պտուղներն են, որոնք արտահայտում են հավատացյալի վերապրած վստահությունը իր տարբեր դրսևորումներով: Իմ գոյության Հեղինակից մի պատգամ է ինձ փոխանցվում. այն կարող է լինել սպառնալիք, խոստում կամ հրաման: Եթե ես այն ընդունեմ որպես «այո և ամեն», ապա դա կլինի Հավատք. և գործողությունը, որը արդյունավետ է, դա **amunah** գործն է կամ Աստծո հավատարմությունը: Սուրբ Գրքի համաձայն հավատքը կարծես թե ակնարկում է խոսք, պատգամ կամ հայտնություն: Այսպիսով Ռոմեյնը իր *Հավատքի կյանք* գրքում ասում է. – «Հավատքը կարևորում է Աստծո Խոսքի ճշմարտությանը հավատարմ. այն կապված է Նրա կողմից խոսված որոշակի խոսքի կամ տրված խոստման հետ և արտահայտում է այն հավատքը, որը երբ անձը լսում է այդ խոսքը՝ ընդունում է դրա ճշմարտացիությունը. նա համաձայնվում է դրա հետ, ապավինում դրան, և գործում դրան համապատասխան. սա է հավատքը»: Դրա պտուղը կարող է տարբերվել՝ ըստ ընդունված, լսված պատգամի և համաձայն լսողի իրավիճակների: Այն Նոյին առաջնորդեց տապանը կառուցելու, Աբրահամին՝ իր որդուն զոհ մատուցելու, Մովսեսին՝ հրաժարվելու Փարավոնի աղջկա որդին

կոչվելու, Իսրայելացիներին՝ Երիբովի պարիսպների շուրջը քայլելու: Ես հավատում եմ Աստծուն, որ լինելու է հենց այնպես, ինչպես որ Ինքն է ինձ ասել. սա այն գործընթացի պատկերն է, որ Աստվածաշունչը կոչում է հավատք (Էջ՝ 104-105):
«Հավատալ» թեմայի շուրջ տե՛ս Հատուկ Թեմա 2:40; 3:16 և 6:5:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:27-32

²⁷Բայց երբ Ադրիատիկ ծովում մեր տարուբերվելու տասնչորսերորդ գիշերն էր, կեսգիշերին նավաստիներին թվացել էր, թե մի երկրի ենք մոտեցել: ²⁸Եվ երբ չափեցին, տեսան, որ քսան խորաչափ է, մի քիչ էլ առաջ գնալով՝ էլի չափեցին ու տեսան, որ տասնհինգ խորաչափ է: ²⁹Ու վախենալով, թե խուլթերի մեջ են ընկնելու, հետևի կողմից չորս խարիսխ գցեցին և սպասում էին լուսանալուն: ³⁰Իսկ նավավարները, որ ուզում էին նավից փախչել, մակույկն իջեցրին ծովը, պատճառաբանելով, թե առջևի կողմից էլ պիտի խարիսխներ ձգեն: ³¹Բայց Պողոսը հարյուրապետին և զինվորներին ասաց. «Եթե սրանք նավի մեջ չմնան, դուք չեք կարող փրկվել»: ³²Այդ ժամանակ զինվորները պարանները կտրեցին և թողեցին, որ մակույկը դուրս ընկնի:

27:27 «տասնչորսերորդ գիշերը» Այս ժամանակը ճշգրտորեն համընկնում է իրենց ուղղությունը փոխելու համար անցած հեռավորության հետ (այսինքն՝ ծովախարսխամանը): Նրանք ճամփորդեցին 476 մղոն՝ 36 մղոն յուրաքանչյուր 24 ժամում:

■ **«Ադրիատիկ ծով»** Սա վերաբերում է հարավ կենտրոնական Միջերկրական Ծովին (Ադրիա): Այն չի վերաբերում մերօրյա Ադրիատիկ Ծովին:

■ **«թվացել էր, թե մի երկրի ենք մոտեցել»** Նրանք հավանաբար լսել էին արգելակների ձայն կամ տեսել ինչ-որ թռչունների կամ ձկների:

27:28 «չափեցին» Սա ծագել է մի ԲԱՅԻՑ, որը նշանակում է «ղեկը ստանձնել՝ բռնել», որը վերաբերում է մի ծանր պարանի, որի վրա չափանշումներ են կատարված, որպեսզի ցույց տա ջրի խորությունը:

■ **«խորաչափ»** Սա երկու ձեռքերի բացվածքի հեռավորություն է: Այն արտահայտում էր այն չափման միավորը, որը կիրառում էին նավաստիները ջրի խորությունը չափելիս:

27:29 Դեռևս խավար էր: Նրանք չգիտեին, թե որտեղ էին: Նրանք կամենում էին դանդաղեցնել կամ ընդհանրապես կասեցնել նավի ցամաքին մոտենալը, մինչև որ կտեսնեին, թե ուր է գնում նավը:

27:30 Այս նավաստիները հավատքի մարդիկ չէին: Նրանք ամեն ինչ կանեին, միայն թե փրկեին իրենց կյանքերը:

27:31 Որոշակի պայմաններ կային (ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ) կապված Պողոսի տեսիլքի և Աստծո խոստման հետ:

■ **«փրկվել»** Սա ՀԿ-յան ֆիզիկական ազատության՝ ազատագրման նշանակությունն է արտահայտում (տես՝ Հակ.5:15): Ճանաչելով Պողոսին, այս նավաստիները, զինվորները և մյուս ուղևորները նույնպես լսել էին ավետարանը, որը ներկայացնում է ՆԿ-յան հոգևոր փրկության տերմինի նշանակությունը: Ինչպիսի ողբերգություն է ազատվել ֆիզիկական մահից՝ մահանալով հավիտենական մահվամբ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:33-38

³³Ու երբ արդեն լուսանալու վրա էր, Պողոսը բոլորին խնդրում էր կերակուր ուտել՝ ասելով. «Արդեն տասնչորս օր է, ինչ դուք սպասելով քաղցած եք մնում ու ոչինչ չեք կերել: ³⁴Ուստի խնդրում եմ ձեզ, որ մի բան ուտեք, քանի որ դա էլ ձեր փրկության համար է, և ձեզանից ոչ մեկի գլխից մի մազ անգամ չպիտի պակասի»: ³⁵Եվ այս ասելով՝ հացը վերցրեց և բոլորի առաջ գոհացավ Աստծուց և կտրելով սկսեց ուտել: ³⁶Եվ բոլորը սիրտ առան ու իրենք էլ սկսեցին ուտել: ³⁷Եվ նավում մենք բոլորս երկու հարյուր յոթանասունվեց հոգի էինք: ³⁸Երբ կերակուրով կշտացան, նավը թեթևացրին՝ ցորենը ծովը թափելով:

27:34 «ձեզանից ոչ մեկի գլխից մի մազ անգամ չպիտի պակասի» Պողոսի կիրառած խոսքը նման էր Հիսուսի խոսքերին (տես՝ Ղուկ.12:7; 21:18): Սա երբայերեն պաշտպանված լինելու իմաստով դարձվածք է (տես՝ 1 Թագ.14:45; 2 Թագ.14:11; 3 Թագ.1:52):

27:35 Սա չի վերաբերում Տիրոջ Ընթրիքին, այլ ցույց է տալիս Պողոսի հավատքը, նույնիսկ ճգնաժամային իրավիճակում: Պողոսի հավատքը ազդեց ուրիշների վրա էլ (տես՝ հ. 36):

27:37 «երկու հարյուր յոթանասունվեց» Սրա մեջ ներառված էր նավի անձնակազմը և ուղևորները:

1. Ձեռագիր B (չորրորդ դար) նշում է «76»
2. MSS ռ (չորրորդ դար) և C (հինգերորդ դար) նշում է «276»
3. Ձեռագիր A (հինգերորդ դար) նշում է «275»
4. Ժամանակակից բոլոր անգլերեն թարգմանությունները /ինչպես նաև հայերենը/ նշում է 276

UBS⁴ գնահատում է «B» (զերթե հաստատ):

27:38 Սա Եգիպտոսից ցորեն տեղափոխող մեծ նավ էր: Նրանք արդեն իսկ նավից դուրս էին նետել բոլոր բեռներն ու սարքավորումները (տես՝ հ. 18):

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 27:39-44

³⁹Ու երբ առավոտ եղավ, ցամաքը չէին ճանաչում, բայց երևում էր մի ծոց. մտածում էին, եթե հնարավոր լինի, այդտեղ մտցնել նավը: ⁴⁰Եվ խարհիսիները կտրելով՝ ծովը նետեցին ու ղեկերի կապերը թուլացրին, և առագաստը քամու դեմ բանալով՝ դեպի այն ծովափն էին գնում: ⁴¹Եվ ընկնելով մի այնպիսի տեղ, որ երկու կողմը ծով էր, նավը նստեցրին, և նավի առաջակողմը խրված անշարժ մնաց, իսկ հետևի կողմը ալիքների սաստկությունից քանդվում էր: ⁴²Եվ զինվորները որոշել էին, որ կալանավորներին սպանեն, որ նրանցից մեկնումեկը լողալով չիախչի: ⁴³Բայց հարյուրապետը, ցանկանալով Պողոսին կենդանի պահել, նրանց այդ որոշումից ետ կանգնեցրեց և հրամայեց, որ նախ լողալ իմացողները ջուրը նետվեն և ցամաք դուրս գան, ⁴⁴իսկ մնացյալներն էլ՝ որը տախտակների վրա, որը նավի ուրիշ բեկորների վրա: Այսպես բոլորն էլ ազատվելով ցամաք ելան:

27:39 Նրանք դեռևս կարողանում էին ինչ-որ չափով վերահսկել նավը (տես՝ հ. 40):

Գոյություն ունի հունարեն ձեռագիր մի տարբերակ կապված «այդտեղ մտցնել նավը» խոսքի հետ (տես՝ MSS ռ, A, B²) և «նավը ապահով կանգնեցնել» խոսքի հետ (տես՝ MSS B* և C): Այս երկու խոսքերն էլ իրար նման են հնչում (*exōsai* և *eksōsai*): Հին հունարեն ձեռագրերը հաճախ ընթերցվում էին մեկի կողմից և կրկնօրինակվում՝ շատերի կողմից: Նմանատիպ հնչողություն ունեցող բառերը հաճախ կրկնօրինակողները շփոթում էին գրելիս:

27:40 Ափի երկայնքով տարածվող այս խութերը շատ նավաբեկությունների պատճառ էին հանդիսանում: Այս դեպքում խութ առաջացել էր այն տեղում, որտեղ օվկիանոսի ալիքներն ու ծովափնա ջրերն էին հանդիպում միմյանց:

- **NASB, NKJV, NJV** «ղեկերը»
- NRSV, TEV** «ղեկերի կապերը՝ թիակները»

Սա վերաբերում է կրկնակի ղեկերին, որոնք հատուկ էին մեծ նավերին: Հակոբոս 3:4-ը կիրառում է այս նույն տերմինը «ղեկ» բառի համար:

■ **«առագաստը»** Սա հազվադեպ տերմին է, սակայն պետք է որ այն վերաբերի առաջնամասում գտնվող փոքր առագաստին (տես՝ Juvenal, *Sat.* 12.69):

27:42 «զինվորները որոշել էին, որ կալանավորներին սպանեն» Եթե նրանք փախչեին, ապա զինվորներն իրենք պետք է կրեին պատիժը:

27:43 Պողոսի խոսքերը, հավատքը և գործերը համոզել էին հռոմեական կայսրի հրամանատարին, որ իրեն վստահի և պաշտպանի:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտոդոլոթյան մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ղուկասի կողմից Պողոսի դեպի Հռոմ կատարած նավարկության արձանագրությունը պարունակում է ծովագնացության հետ կապված բազմաթիվ տերմիններ: Ի՞նչ կարելի է սրանից ենթադրել:
2. Ինչո՞ւ է հ. 20-ը աստվածաբանորեն այսքան նշանակալի՝ կարևոր:

ԳՈՐԾՔ 28

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

UBS ⁴	NKJV	NRSV	TEV	NJB
Պողոսը Մելիսե կղզում	Պողոսի ծառայությունը Մելիսեում	Պողոսը Մելիսեում	Մելիսեում	Մելիսեում սպասելիս
28:1-10	28:1-10	28:1-6 28:7-10	28:1-6 28:7-10	28:1-6 28:7-10
Պողոսը ժամանում է Հռոմ	Ժամանում Հռոմ	Ճամփորդություն դեպի Հռոմ	Մելիսեից Հռոմ	Մելիսեից Հռոմ
28:11-15	28:11-16	28:11-15	28:11-15 Հռոմում	28:11-14 28:15-16
28:16 Պողոսը քարոզում է Հռոմում	Պողոսի ծառայությունը Հռոմում	28:16 Պողոսը և Հռոմի հրեաները	28:16	Պողոսը կապ է հաստատում հռոմեացի հրեաների հետ
28:17-22	28:17-31	28:17-22	28:17-20 28:21-22	28:17-20 28:21-22
28:23-29		28:23-29	28:23-27 28:28 Եզրահանգում 28:29	28:23-27 (26-27) 28:28 Վերջաբան
28:30-31		28:30-31	28:30-31	28:30-31

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու Ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզինք յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն
4. Եվ այլն

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:1-6

¹Եվ երբ ազատվեցին, այնժամ իմացան, որ այդ կղզու անունը Մելիտե էր: ²Եվ բարբարոսները քիչ մարդասիրություն չցուցաբերեցին մեր նկատմամբ: Նրանք խարույկ վառեցին և մեզ բոլորիս էլ ընդունեցին՝ տեղացող անձրևի և ցրտի պատճառով: ³Եվ երբ Պողոսը մի կույտ խռիվ էր հավաքել ու դրանք կրակի վրա դրեց, տաքությունից մի իժ դուրս ելավ և նրա ձեռքից կառչեց: ⁴Երբ բարբարոսները տեսան *թունավոր կենդանուն*՝ նրա ձեռքից կախված, միմյանց ասում էին. «Անշուշտ, սա մի մարդասպան է, որ թեև ծովից ազատվեց, բայց արդարությունը թույլ չի տալիս, որ ապրի»: ⁵Իսկ նա կենդանուն թափ տվեց կրակի մեջ, և իրեն ոչ մի վնաս չեղավ: ⁶Իսկ նրանք սպասում էին, թե նա երբ պիտի ուռչի կամ հանկարծակի մեռած ցած ընկնի, բայց երբ բավականաչափ սպասեցին ու տեսան, որ նրան ոչ մի վնաս չեղավ, իրենց կարծիքը փոխելով՝ ասում էին, թե սա մի աստված է:

28:1 «Երբ ազատվեցին» Սա *sōzō* տերմինն է (տես՝ 27:31) *dia* նախածանցով: Այն սովորաբար կիրառվում է ապահովության հասնող մարդու համար (տես՝ 23:24; 27:44; 28:1,4): Ղուկասը այն նույնիսկ գործածում է Ղուկ.7:3-ում ֆիզիկական բժշկության համար:

ԱՆՈՐՈՇ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԸ ցույց է տալիս, որ Ղուկասը վերագրում էր այս ապահովությունը Աստծուն՝ Նրա կողմից տրված (ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՌԸ), Իր խոսքի համաձայն (տես՝ 27:21-26):

■ **«Մելիտե /Մալտա/»** Փյունիկեցի նավաստիները այս կղզին նաև կոչում էին Մելիտե /Մալտա/, որը քանաներեն տերմին է՝ «ապաստարան» նշանակությամբ: Սա սկզբում Փյունիկեան գաղութ էր: Գտնվում է Սիցիլիայի և Հյուսիսային Աֆրիկայի միջև, և միայն տասնութ մղոն երկարությամբ և ութ մղոն լայնությամբ է, սակայն իր գտնվելու դիրքը բերում էր հրաշալի ծովային առևտրի շահույթ: Այն ուներ մի քանի լավ նավահանգիստներ:

28:2 «բարբարոսները/ տեղաբնակները» Սա բառացի կոչվում է «բարբարոսներ»: Սա վիրավորական անվանում չէ, այլ պարզապես վերաբերում է ցանկացած մեկի, որը չէր խոսում հունարեն կամ լատիներեն լեզվով:

-
- NASB «արտասովոր բարություն»
- NKJV, NRSV, NJB «անսովոր բարություն»
- TEV «շատ մարդասեր էին»

Այս շեշտադրված արտահայտությունը կազմված է *philanthrōpos* տերմինից, որը բառացի նշանակում է «մարդկանց սիրող՝ մարդասեր»՝ ինչպես 27:3-ում: Հատուկ հոգատարությունն ու մատակարարումը, որ ցուցաբերում էին այս տեղաբնակները նրանց հանդեպ, Պողոսի շնորհիվ էր, քանի որ նրանք տեսել էին այն հրաշքը, որը տեղի ունեցավ ծովափին իժի հետ կապված: Այս և այլ զարմանահրաշ գործերը (տես՝ հհ.7-10), ավետարանչության համար դուռ էին բացում: Պողոսը միշտ ավետարանի քարոզչության մասին էր մտածում (տես՝ 1 Կորնթ.9:19-23):

28:3 «Պողոսը մի կույտ խռիվ էր հավաքել» Սա իրականում ցույց է տալիս Պողոսի խոնարհությունը: Նա աշխատել էր մյուս բոլորի պես: Դամասկոսի ճանապարհին տեղի ունեցածից ի վեր ոչ մի տեսակ էլիտարություն չկար նրա մեջ:

■ **«մի իժ ... նրա ձեռքից կառչեց»** Այս տերմինի հիմնական նշանակությունն է «կառչել, կանել»: Այն կարող է նշանակել «կծել» կամ «փաթաթվել»:

28:4 «կենդանուն /արարածին/» «Արարած» բառի համար տրված տերմինը դարձավ թունավոր օձերի համար բժշկական տերմին (տես՝ 10:12):

■ **«արդարությունը թույլ չի տալիս, որ ապրի»** «Արդարություն» կամ «ճակատագիր» տերմինները նրանց աստվածներից մեկի անունն էր: Նրանք հեզգանք էին արտահայտում այս իրավիճակի կապակցությամբ, ինչպես որ Ամովս 5:19: Համար 6-ը ցույց է տալիս, որ տեղացի կղզիաբնակները սնոտիապաշտ բազմաստվածության երկրպագուներ էին:

28:6 Այս կղզիաբնակները սեփական փորձ ունեին կղզում գտնվող օձերի հետ կապված: Նրանց վերաբերմունքի ռադիկալ փոփոխությունը նման է Գործք 14:11-13-ում հեթանոսների կողմից հրաշքների հանդեպ ցուցաբերած արձագանքին:

■ **«պիտի ուռչի»** Սա Ղուկասի կողմից գործածված բազմաթիվ բժշկական տերմիններից մեկն է (տես՝ հ. 8): ՆԿ-ում այս բառը միայն այստեղ կարելի է գտնել:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:7-10

7Եվ այնտեղ՝ շուրջքուրը կղզու գլխավորի՝ Պոպիլոսի գյուղերն էին, որ մեզ ընդունեց և երեք օր սիրով հյուրընկալեց: **8**Եվ այնպես եղավ, որ Պոպիլոսի հայրը ջերմով և արյունալուծությամբ հիվանդ պառկած էր: Պողոսը մտավ նրա մոտ, աղոթեց, ձեռքերը դրեց նրա վրա և բժշկեց: **9**Եվ երբ սա եղավ, կղզում եղող ուրիշ հիվանդներ էլ եկան և բժշկվեցին: **10**Նրանք շատ պատիվներով պատվեցին մեզ, և երբ գնում էինք, ինչ որ պետք էր, տվեցին:

28:7 «գլխավորը /առաջնորդը/» Այս բառն ունի կառավարական պաշտոնյայի իմաստ, բառացի՝ «առաջին մարդը /առաջնորդը/» (տես՝ 13:50; Ղուկ.19:47 «ժողովրդի» 16:12, «քաղաքի»): Այս բառը գտել են երկու արձանագրություններում, մեկը հունարեն, իսկ մյուսը՝ լատիներեն: Հռոմը այս կղզուն ինքնավարության իրավունք էր տվել և ժամանակ եղավ, որ բոլորն այնտեղ հռոմեական քաղաքացիություն ունեին:

28:8 «ջերմով և արյունալուծությամբ հիվանդ պառկած էր» Մելիտեն կամ Մալտան հայտնի էր իր տենդով՝ ջերմությամբ, որը գալիս էր նրանց այծերի կաթի մեջ պարունակվող մանրէներից:

■ **«ձեռքերը դրեց նրա վրա և բժշկեց»** Տե՛ս Հատուկ Թեմա. Ձեռնադրություն, 6:6:

28:9 Այս երկու ԲԱՅԵՐՆ էլ ԱՆԿԱՏԱՐ են, որն ակնարկում է անցյալ ժամանակում կրկնվող կամ շարունակվող գործողություն (ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ): Նրանք շարունակում էին գալ: Աստված Պողոսի միջոցով շարունակում էր նրանց բժշկել:

Հունարեն ԲԱՅԸ անգլերեն թարգմանության մեջ, «բժշկություն ստանալ» *therapeuō* տերմինն է, որից էլ ունենք անգլերենի «therapy» բառը (հայ.՝ թերապիա): Այս տերմինը կարող է կիրառվել «ժառայություն» ինչպես նաև «բժշկություն» բառերի համար: Միայն կոնկրետ համատեքստը կարող է որոշել, թե որ բառն է հարմար կիրառել:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:11-15

11Եվ երեք ամսից հետո նստեցինք մի ալեքսանդրյան նավ, որ այս կղզում էր ձմեռել և Գիոսկուրոսի նշանն ուներ: **12**Եվ իջանք Սիրակուսա և երեք օր այնտեղ մնացինք: **13**Այնտեղից էլ, մի շրջան կատարելով, Հռեգիում հասանք: Եվ մեկ օր անց, երբ հարավային քամի փչեց, հաջորդ օրը հասանք Պատիոդոս, **14**որտեղ եղբայրներ էլ գտանք, որ աղաչեցին յոթն օր այնտեղ մնալ. և ապա դեպի Հռոմ գնացինք: **15**Եվ այնտեղից, երբ եղբայրները մեր մասին լսեցին, ընդառաջ եկան՝ մինչև Ապփիոսի շուկան և Երեք իջևանները: Նրանց տեսնելով՝ Պողոսն Աստուծոց գոհացավ և քաջալերվեց:

28:11 «Ալեքսանդրյան նավ» Սա հավանաբար մեկ այլ մեծ նավ էր, որ ցորեն էր տեղափոխում Եգիպտոսից Նեապոլի Ծովափը (տես՝ 27:6,38):

■ **«նավ, որ այս կղզում էր ձմեռել»** Միջերկրական Ծովը չափազանց փոթորկալի էր, որպեսզի ձմեռվա ամիսներին նավարկություն կատարեին: Ծովային առաքումը կրկին բացվում էր Փետրվարի վերջին կամ Մարտ ամսին:

■ **«Գիոսկուրոսի /Չույգ Եղբայրների/ նշանն ուներ»** Սա վերաբերում է Չևսի երկվորյակ որդիներին՝ Կաստորին և Փոլուքսին: Նրանք համարվում էին բոլոր աստվածությունների մեջ՝ Պանթեոնում, նավաստիների հովանավորները՝ պաշտպանները: Պոսելոնը նրանց իշխանություն և վերահսկողություն էր տվել քամու, ալիքների և փոթորիկների վրա: Նրանց հատուկ համաստեղությունը Երկվորյակներն էին: Ըստ երևույթին նրանց քանդակներն էին արված նավի առաջամասում՝ երկու փոքր թզուկների պես տղամարդիկ:

28:12 «Սիրակուսա» Սա Միցիլիայի գլխավոր քաղաքն էր՝ տեղակայված արևելյան ափին: Այս նավահանգիստը ութսուն մղոն հեռավորության վրա էր Մելիտեից:

28:13 «մի շրջան կատարելով» Հնագույն ունցիալ ձեռագրեր Ռ (Սինայտիկուսը) և B (Վատիկանուսը) տալիս են «ծանր խարխիս» տերմինը, որը ծովագնացության հետ կապված տեխնիկական տերմին էր (այնքան բնորոշ Ղուկասին), սակայն այլ հնագույն ձեռագրեր՝ P⁷⁴, Ռ^c և A նշում են «կողքով անցնել» տերմինը, ինչպես 16:8-ում:

■ **«Հռեգիում»** Սա Իտալիայի հարավարևմտյան ծայրամասում գտնվող մի քաղաք էր:

■ **«Պատիողոս»** Սա Հռոմի համար ցորեն ներմուծող կենտրոն էր տեղակայված Նեապոլի ծովափին: Նրանք երկու օրում ճամփորդել էին մոտ 180 մղոն:

28:14 «որտեղ եղբայրներ էլ գտանք» Իտալիայում և Հռոմում կային Քրիստոնեական համայնքներ (տես՝ հ. 15), որոնք դիմավորեցին Պողոսին:

28:15 «Ապիիոսի շուկան» Սա բեռնատար նավերի ճամփորդության վերջնակետն էր հարավից մինչև Իտալիա և Հռոմեական մեծ մայրուղու սկիզբը, որը կոչվում էր Ապիան Ճանապարհ: Այն քառասուներեք մղոն էր մինչև Հռոմ:

■ **«Երեք իջևաններ»** Սա հանգստյան տեղ էր՝ կանգառ, որը Հռոմից գրեթե երեսուներեք մղոն էր հեռու:

■ **«Պողոսը ... քաջալերվեց»** Ըստ երևույթին Պողոսը կրկին հուսալքվել էր: Թվում է, թե նա այդպիսի հակվածություն ուներ: Հիսուսը անձնապես մի քանի անգամ հայտնվել էր նրան քաջալերելու համար:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:16
¹⁶Եվ երբ մտանք Հռոմ, հարյուրապետը կալանավորներին հանձնեց պահակախմբի պետին, բայց Պողոսին թույլ տրվեց առանձին ապրել՝ իր պահապան զինվորի հետ:

28:16 «երբ մտանք Հռոմ» Պողոսը այսպես չէր պատկերացնում իր Հռոմ մտնելը: Սակայն Աստված այսպես էր կազմակերպել Պողոսի համար, որպեսզի խոսեր հռոմեացի կառավարական, ռազմական և կրոնական առաջնորդների հետ:

■ **«Պողոսին թույլ տվեց առանձին ապրել՝ իր պահապան զինվորի հետ»** Պողոսը դրվեց տնային կալանքի տակ: Այս որոշման մեջ նրան բերող պաշտոնյայի վկայությունը որոշիչ եղավ:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:17-22
¹⁷Եվ երեք օր հետո Պողոսը կանչեց հրեաների գլխավորներին, և երբ նրանք եկան, նրանց ասաց. «Մարդիկ, եղբայրներ, թեև ես ժողովրդի կամ հայրենական սովորությունների դեմ ոչինչ չեմ գործել, բայց Երուսաղեմից որպես կալանավոր մատնվել եմ հռոմեացիների ձեռքը, ¹⁸որոնք ինձ քննելուց հետո ցանկանում էին բաց թողնել, որովհետև իմ վրա մահապատժի արժանի ոչ մի հանցանք չգտան: ¹⁹Բայց երբ հրեաները հակառակվեցին, ստիպված եղա կայսրին բողոքել, առանց իմ ազգի դեմ որևէ ամբաստանություն ունենալու: ²⁰Այդ պատճառով էլ աղաչեցի, որ ձեզ տեսնեմ ու ձեզ հետ խոսեմ, որովհետև Իսրայելի հույսի համար է, որ այս շղթաների մեջ եմ գտնվում»: ²¹Նրանք էլ ասացին նրան. «Մենք ոչ Հրեաստանից թուղթ ենք ստացել քո մասին, ոչ էլ եղբայրներից մեկը եկավ և մեզ քո մասին որևէ չար բան պատմեց կամ խոսեց: ²²Բայց կցանկանայինք քեզանից լսել, թե ի՞նչ ես մտածում, քանի որ այդ աղանդի մասին մեզ հայտնի է, որ ամենուրեք դրա դեմ են խոսում»:

28:17 «Պողոսը կանչեց հրեաների գլխավորներին» Սա Պողոսի մոտեցման սովորությունն էր՝ սկզբունքը (տես՝ Հռոմ.1:16; 2:9): Նա բացատրում է իր ներկայի իրավիճակը և ապա դուռ բացում ավետարանը ներկայացնելու համար:

28:18-19 Այստեղ կրկին կարելի է պարզ տեսնել Ղուկասի ապոլոգետիկ՝ պաշտպանողական, նպատակը: Քրիստոնեությունը հռոմեական կառավարության համար սպառնալիք չէր: Ղուկասը կիրառում է *Ioudaios* (Հրեաներ) բառը երկու իմաստով.

1. ազգություն - 2:5,11; 9:22; 10:22,28; 11:19; 13:56; 14:1; 16:1,3,20; 17:1; 17:10,17; 18:2,4,5,19; 19:10,17,34; 20:21; 21:21,39; 22:3,12; 24:5,9; 24:24,27; 25:8,9,24; 20:7; 28:17

2. նկատի ունենալով այն մարդկանց, ովքեր ունեին Հիսուսի կյանքի վերջին շաբաթվա ակնառեսի գիտություն – 2:15; 10:39

Ղուկասն այն կիրառում էր նաև տարբեր գնահատականներով՝

1. բացասական իմաստով - 9:23; 12:3,11; 13:45,50; 14:2,4,5,19; 17:5,13; 18:12,14,28; 19:13,14,33; 20:3,19; 21:11,27; 22:30; 23:12,20,27; 24:19; 25:2,7,10,15; 26:2,21; 28:19
2. դրական իմաստով - 13:43; 14:1; 18:2,24; 21:20

Հավանաբար Գործքում առկա լավագույն տեքստը, որը ներկայացնում է այս տերմինի տարբեր նշանակությունները 14:1-2 է:

28:20 «Իսրայելի հույսի համար» Պողոսը այս հրեա առաջնորդներին այնպես է դիմում, կարծես ուզում է փոխհարաբերություն հաստատել իրեն լողողների հետ: Նա փորձում է այս հրեա առաջնորդների հետ «Իսրայելի հույսի» մեջ ընդհանուր հարթակ գտնել: Պողոսի համար դա Հիսուսն էր. նրանց համար՝ Խոստացյալի՝ Մեսիայի գալուստը, կամ էլ հավանաբար հարությունը:

28:21 Պողոսի երեք միսիոներական ճամփորդությունների և Երուսաղեմում տեղի ունեցած դեպքերի և ասեկոսների լույսի ներքո նրա մասին տեղեկություն չունենալը շատ զարմանալի է:

28:22 Ակնհայտ է, որ Հիսուսի մասին լուրերը արագ տարածվում էին և որ շատերը ավետարանին արձագանքում էին: Հրեական միջավայրում սա բարի լուր չէր համարվում: Սակայն այս հրեա առաջնորդները հոժար էին Պողոսին լսելու. համար նրան խոսելու առիթ ընձեռել:

■ **«այդ աղանդը»** Տե՛ս Հատուկ Թեմա. Հիսուս Նագովրեցի, 2:22:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:23-29

²³Եվ երբ մի օր որոշեցին, շատերը եկան նրա բնակարանը, որոնց նա առավոտից մինչև իրիկուն մեկնաբանեց ու վկայեց Աստծո Թագավորությունը՝ թե՛ Մովսեսի օրենքից և թե՛ մարգարեներից նրանց Հիսուսի մասին համոզելով: ²⁴Եվ ոմանք հավատում էին *նրա* ասածներին, ոմանք չէին հավատում: ²⁵Եվ միմյանց հետ համաձայնության չգալով՝ նրանք գնացին, երբ Պողոսն այս մի խոսքն էլ ասաց. «Մուրբ Հոգին լավ ասաց մեր հայրերին՝ Եսայի մարգարեի միջոցով՝ ²⁶ասելով. «Գնա՛ այս ժողովրդի մոտ ու ասա՛ լսելով պիտի լսեք ու պիտի չհասկանաք և տեսնելով պիտի տեսնեք ու պիտի չընկալեք, ²⁷որովհետև այս ժողովրդի սիրտը կարծրացած է և իրենց ականջներով ծանր են լսում, ու աչքերը փակեցին, որ չլինի թե իրենց աչքերով տեսնեն ու ականջներով լսեն և սրտերով իմանան ու դարձի գան, և Ես նրանց բժշկեմ: ²⁸Ուստի թող հայտնի լինի ձեզ, որ Աստծո փրկությունը հեթանոսներին ուղարկվեց, և նրանք լսելու են այն»: ²⁹Ու երբ այս խոսքերն ասաց, հրեաները, միմյանց հետ բռուն կերպով վիճաբանելով, դուրս եկան:

28:23 «Շատերը եկան... առավոտից մինչև իրիկուն» Պողոսը այս հրեաներին ամբողջ օրն էր բացատրում Քրիստոնեական հավատքի մասին: Ինչ սքանչելի հնարավորություն էր:

■ **«Աստծո Թագավորությունը»** Սա Հիսուսի քարոզչության և ուսմունքի կենտրոնական թեման էր (առակները): Հավատացյալների կյանքում այն հանդիսանում է ներկայի իրականություն և մեղավոր այս երկրի վրա Աստծո տիրակալության ապագա վախճանը (տես՝ Մատթ.6:10): Այս արտահայտությունը ակնհայտ է, որ կապված չէ միայն Իսրայելի հետ, սակայն հանդիսանում էր Իսրայելի հույսի անբաժանելի մի մասը (տես՝ հ. 20): Տես Հատուկ Թեմա 1:3:

■ **«Մովսեսի օրենքից և մարգարեներից»** Սա Եբրայական Կանոնի երեք բաժիններից երկուսն է (տես Հատուկ Թեմա 13:15 և 24:14-ի գրառումները), որոնք ներկայացնում էին ամբողջ ՀԿ-ը (տես՝ Մատթ.5:17; 7:12; 22:40; Ղուկ.16:16; 24:44; Գործք 13:15; 28:23): Պողոսի մեթոդն էր (Քրիստոսաբանական տիպարանություն և կանխատեսված մարգարեություն) ՀԿ-յան տեքստերը համեմատել Հիսուսի կյանքի հետ:

28:24 Սա արտացոլում է ավետարանի խորհուրդը՝ առեղծվածը: Թե ինչու են ոմանք հավատում, իսկ ոմանք՝ ոչ, դա ամենակալ Աստծո խորհուրդն է և մարդու ազատ կամքը:

Ինչ-որ առումով Պողոսի ծառայությունը Հռոմում գտնվող հրեա առաջնորդներին նրա ծառայության մի փոքր մասնիկն էր: Նա առաջինը վկայում էր հրեաներին. Նա վկայում էր ՀԿ-ի գրքերի իրականացումը Հիսուսի կյանքում: Ոմանք հավատում էին, բայց շատերը՝ ոչ: Սա նույնպես կանխասված էր ՀԿ-ում (տես՝ Ես.6:9-10):

28:25-27 «Մուրբ Հոգին լավ ասաց... Եսայի մարգարեի միջոցով» Սա հայտնում է Իսրայելի անհավատության շուրջ առեղծվածի վերաբերյալ Պողոսի տեսակետը: 26-27 համարների մեջբերումը Եսայի 6:9-10 է: Հիսուսն այս խոսքը հաճախ էր գործածում մարդկանց անհավատության մասին խոսելիս (տես՝ Մատթ.13:14-15; Մարկ.4:12; Ղուկ.8:10; Հովհ.12:39-40): Այդ ժամանակներում Պողոսն արդեն իսկ գրել էր Հռոմեացիների 9-11 գլուխները (ինչո՞ւ էր Իսրայելը մերժել Մեսիային): ՀԿ-ի Իսրայելը նույնպես ամբողջովին չէր հավատում և չէր հավատա այս օրերում էլ: Հավատքի մի փոքր մնացորդ կար, սակայն մեծամասնությունը անհավատության մեջ էր:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՆԱՑՈՐԳԸ ԵՐԵՔ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԿ-յան «հավատարիմ մնացորդ» հասկացությունը Մարգարեների ընթացիկ թեման էր (հիմնականում ութերորդ դարի մարգարեները և Երեմիան): Այն կիրառվում էր երեք իմաստով՝

1. նրանց համար, ովքեր փրկվեցին Գերությունից (օր.՝ Ես.10:20-23; 17:4-6; 37:31-32; Երեմ.42:15,19; 44:12,14,28; Ամովս 1:8)
2. նրանց համար, ովքեր հավատարիմ մնացին ՅԱՀՎԵԻՆ (օր.՝ Ես.4:1-5; 11:11,16; 28:5; Հովել 2:32; Ամովս 5:14-15; Միքիա 2:12-13; 4:6-7; 5:79; 7:18-20)
3. նրանց համար, ովքեր էսկատոլոգիական նորոգության և նոր արարչագործության մի մասն են կազմում (օր.՝ Ամովս 9:11-15)

Այս համատեքստում Աստված ընտրում է միայն ոմանց (հավատարիմ նախանձավորությամբ մարդկանց) այդ մնացորդից (Գերությունից փրկվածներից), որպեսզի վերադարձնի Հուդա: Ինչպես որ նախկինում տեսանք այս գլխում, Իսրայելի անցյալից դարձյալ որոշակի դեպքեր են տեղի ունենում (հ. 6): Աստված նվազեցնում է քանակը, որպեսզի ցույց տա Իր գորությունը, մատակարարումը և հոգածությունը (օր.՝ Գեդեոնը, Դատավորաց 6-7):

28:28 «Աստծո փրկությունը հեթանոսներին ուղարկվեց» Սա կարող է լինել Մադոնս 67-ի ակնարկ, հատկապես հ. 2: Քրիստոնեության այս տիեզերական գործոնը Երուսաղեմում խոշորության պատճառ հանդիսացավ և շատ հրեաների մոտ սա մշտական խնդիր էր դարձել, որը տրամաբանական է համաձայն Ծննդ.1:26,27; 3:15; 12:3: Այն մարգարեացվել էր Եսայի, Միքիա և Հովնան մարգարեներում: Եփես.2:11-3:13-ում այն հստակ սահմանվում է Պողոսի կողմից որպես Աստծո հավիտենական ծրագիրը: Տես Հատուկ Թեմա 1:8:

■ **«նրանք լսելու են այն»** Սա Հռոմեացիների 9-11 ճշմարտությունն է: Հրեաները մերժեցին Մեսիային, քանի որ Նա չէր համապատասխանում իրենց սպասումներին և քանի որ ավետարանը բոլոր մարդկանց համար հավատքի դուռ բացեց:

ՆԿ-ի խնդիրը իրականում հրեան ընդդեմ հեթանոսի չէ, այլ հավատացյալը ընդդեմ անհավատի: Հարցն այն չէ, թե ով է քո մայրը, այլ արդյո՞ք քո սիրտը բաց է Աստծո Հոգու և Աստծո Որդու համար:

28:29 Այս համարը բաց է թողնված հնագույն հունարեն՝ P⁷⁴, ա, A, B և E ձեռագրերում: Այն առկա չէ որևէ հունարեն ձեռագրում ոչ մի P ձեռագրից առաջ, որը թվարկվում է մինչև մ. թ. վեցերորդ դարը: UBS⁴ գնահատում է «A» (հստակ որոշված):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. 28:30-31
³⁰Եվ Պողոսն ամբողջ երկու տարի ապրեց իր վարձած տանը և ընդունում էր բոլոր իր մոտ եկողներին, ³¹Աստծո թագավորությունը քարոզելով և Տեր Հիսուս Քրիստոսի մասին սովորեցնելով, ամենայն համարձակությամբ, առանց արգելքի:

28:30 «ամբողջ երկու տարի» Սա հավանաբար՝

1. Կայսրին տեսնելու համար պահանջվող նորմալ ժամանակամիջոց է
2. Փետտոսից փաստաթղթեր ստանալու համար անհրաժեշտ ժամանակը
3. Երուսաղեմից կամ Ասիայից վկաներին իրավաբանորեն սպասելու ժամանակահատվածը
4. մոտ է սահմանափակումների հետ կապված իրավաբանական կանոնին

Այս ժամանակներում էր, որ Պողոսը գրեց իր բանտարկության նամակները (Կողոսացիներին, Եփեսացիներին, Փիլիմոն և Փիլիպպեցիներին):

■ **«իր վարձած տանը»** Պողոսը եկամուտի որոշ աղբյուրներ ուներ՝

1. նա աշխատում էր որպես վրանագործ կամ կաշեգործ
2. նրան օգնում էին եկեղեցիները (Թեսաղոնիկեի և Փիլիպպեի)

3. նա ուներ դրամական որոշակի ժառանգություն

■ **«ընդունում էր»** Ղուկասը հաճախ է օգտագործում այս տերմինը «սրտանց ընդունելու» իմաստով (տես՝ 18:27; 28:30 և *paradechōmai* 15:4 համարում): Այն կիրառվում է Ղուկ.8:40 և 9:11-ի ամբոխի համար, որ ողջունում էր Հիսուսին: Այն նաև կիրառվում է Գործք 2:41-ում, երբ մարդիկ ընդունում էին Պետրոսի քարոզած ավետարանը:

■ **«բոլոր իր մոտ եկողներին»** Իսնդիրն այստեղ էր. Պողոսի ավետարանը տիեզերական բնույթ ուներ: Այդ «բարի լուրը» բոլոր մարդկանց համար էր և ոչ թե միայն հրեաների:

28:31 «քարոզելով... սովորեցնելով» Վաղ շրջանի, հետառաքելական եկեղեցին, տարբերություն էր դրել ճշմարտությունը ներկայացնելու այս երկու կերպերի միջև: Քարոզի օրինակը, որն արձանագրված է Գործքում (Պետրոս, Ստեփանոս, Պողոս) կոչվում է *Kerygma* (հռչակում, տես՝ 20:25; 28:31; Հռոմ.10:8; Գաղ.2:2; 1 Կորնթ.9:27; 2 Տիմ.4:2), մինչ Հիսուսի ուսմունքները, որոնք մեկնաբանվում են Հովվական Թղթերում, կոչվում են Դիդաքը՝ *Didache* (ուսմունք, տես՝ 2:42; 5:28; 13:12; Հռոմ.16:17; 1 Կորնթ.14:20):

■ **«Աստծո թագավորությունը»** Սա Հիսուսի քարոզչության թեման էր: Այն վերաբերում է հիմա մարդկանց սրտերում Աստծո թագավորելուն, որը մի օր կհաստատվի երկրի վրա, ինչպես որ երկնքում է: Այս հաստատվածը նաև ցույց է տալիս, որ այս թեման միայն հրեաներինը չէ: Տե՛ս Հատուկ թեմա 1:3:

■ **«Տեր»** «Տեր» բառը եբրայերենի *adon* տերմինի թարգմանությունն է, որը նշանակում էր «սեփականատեր, ամուսին, վարպետ կամ տիրակալ» (տե՛ս Հատուկ Թեմա. Աստվածության անունները 1:6): Հրեաները սկսեցին վախենալ ՅԱՀՎԵի սուրբ անունն արտասանելուց, որ հանկարծ այն զուր տեղը իրենց բերանը չառնեին և խախտեին Տաս Պատվիրաններից մեկը: Երբ որ կարդում էին Սուրբ Գրքերը, նրանք փոխարինում էին ՅԱՀՎԵ բառը *Adon* բառով: Ահա թե ինչու մեր անգլերեն թարգմանությունները գործածում են մեծատառերով գրված ՏԵՐ բառը ՀԿ-ում հանդիպող բոլոր ՅԱՀՎԵ անվան փոխարեն: Այս անունը վերագրելով (Հունարենում *kurios*) Հիսուսին, ՆԿ-յան հեղինակները հաստատում էին Նրա աստվածությունը և Հոր հետ հավասար լինելը:

■ **«Հիսուս»** «Հիսուսը» այն անունն է, որ սրվեց հրեշտակի կողմից Բեթլեհեմում ծնված մանկանը (տես՝ Մատթ.1:21): Այն կազմված է եբրայերեն երկու գոյականներից՝ «ՅԱՀՎԵ» աստվածության ուխտի անունը և «փրկություն» (այսինքն՝ Ովսես): Այն եբրայերենում միևնույն Հեսու անունն է: Երբ առանձին է կիրառվում Հիսուս անունը, ապա հաճախ մատնանշվում է Հիսուս Նազովրեցի մարդը՝ Մարիամի որդին (օր.՝ Մատթ.1:16,25; 2:1; 3:13,15,16):

■ **«Քրիստոս»** «Քրիստոս» անունը եբրայերենի *Messiah* (Մեսիա. այսինքն՝ Օծյալ, տե՛ս Հատուկ Թեմա 2:31) տերմինի հունարեն թարգմանությունն է: Այն հաստատում է Հիսուսի ՀԿ-յան անունը որպես ՅԱՀՎԵի Խոստացյալը, որն ուղարկվեց արդարության նոր դարաշրջանը սկսելու համար:

-
- NASB **«լիովին բացահայտ կերպով՝ առանց արգելքի»**
- NKJV **«ամենայն համարձակությամբ, ոչ որ չէր արգելում նրան»**
- NRSV **«ամենայն քաջությամբ և առանց արգելքի»**
- TEV **«խոսելով ամենայն համարձակությամբ և ազատությամբ»**
- NJB **«կատարյալ անվախությամբ և առանց որևէ արգելքի որևէ մեկի կողմից»**

Այս համարը ցույց է տալիս, որ հռոմեական իշխանությունները չէին համարում, որ Քրիստոսնությունը քայքայիչ կամ վտանգավոր էր: Հունարեն տեքստը ավարտվում է «անխափան» կամ «անարգել» /առանց արգելքի/ ՄԱԿԲԱՅՈՎ: Կարծես թե սա ընդգծում է քարոզչության գործի շարունակական բնույթը և Սուրբ Հոգու գորությունը:

Շատերը Գործք 1:1-ի «առաջին» բառի կիրառության հիման վրա, որն ակնարկում է, որ կա ավելի քան երկուսը, ենթադրել են, որ Ղուկասը ծրագրել էր գրել երրորդ հատորը: Ոմանք նույնիսկ կարծում են, որ այդ երրորդ հատորը հնարավոր է Հովվական Թղթերն են (1 Տիմոթեոս, 2 Տիմոթեոս և Տիտոս):

Հունարեն *parrhēsia* տերմինի համար, որը թարգմանվում է NASB-ի կողմից «բացահայտ, բացեիբաց», տե՛ս Հատուկ Թեմա 4:29:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ է Գործք Առաքելոց գիրքն ավարտվում դեռևս Պողոսը բանտում: Ինչո՞ւ է այդքան կտրուկ ավարտվում:
2. Ինչո՞ւ է Ղուկասը այդքան ժամանակ տրամադրում նկարագրելու Պողոսի դեպի Հռոմ կատարած ճամփորդությունը և այնտեղ մնալը:
3. Ինչո՞ւ էր Պողոսը միշտ առաջին հերթին փորձում վկայել հրեաներին:
4. Բացատրե՛ք *Kerygma*-յի և *Didache*-ի միջև եղած տարբերությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ ՄԵԿ
ՀՈՒՆԱՐԵՆ ԼԵԶՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՑ
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Կոյնե հունարենը, որը հաճախ կոչվում էր հելլենական հունարեն, Միջերկրական աշխարհում ընդունված բարբառն էր՝ Ալեքսանդր Մակեդոնացու աշավանքներից հետո (Ք. Ա. 336-323) մինչև հաջորդ ութ հարյուր տարիների ընթացքում (Ք. Ա. 300- մ. թ. 500): Այն պարզապես պարզեցված, դասական հունարենը չէր, այլ շատ առումներով հունարենի ավելի մի նոր ձև, որը դարձավ հնագույն Մերձավոր Արևելքի և Միջերկրական աշխարհի երկրորդ լեզուն:

Նոր Կտակարանի հունարենը ինչ որ առումով բացառիկ էր, որովհետև այն գործածողների հիմնական լեզուն՝ բացի Ղուկասի և Եբրայեցիներին ուղղված Թղթի հեղինակի, արամերենն էր: Ահա թե ինչու նրանց գրքերում առկա էին արամերենի բարբառային և կառուցվածքային ձևերը: Բացի այդ նրանք կարողում էին և մեջբերում կատարում Սեպտուագինտայից (ՀԿ-ի հունարեն թարգմանությունը), որը նույնպես գրված էր կոյնե հունարենով: Սակայն Սեպտուագինտան նույնպես գրել են հրեա դպիրները, որոնց մայրենին հունարենը չէր:

Սա մեզ հիշեցնում է, որ մենք չենք կարող դիտարկել ՆԿ-ը խիստ քերականական կառուցվածքի տեսանկյունից: Նրա քերականական կառուցվածքը եզակի է, սակայն այն շատ ընդհանրություններ ունի (1) Սեպտուագինտայի հետ, (2) հրեական ստեղծագործությունների հետ, ինչպես օրինակ՝ Ջոզեֆ Ֆլավիոսի գործերն են, ինչպես նաև (3) Եգիպտոսում գտնված պապիրուսների հետ: Ուրեմն ինչպիսի՞ մոտեցում պետք է ունենանք Նոր Կտակարանի քերականական վերլուծությանը:

Կոյնե հունարենի և ՆԿ-յան կոյնե հունարենի քերականական առանձնահատկություններն անկայուն են: Շատ առումներով այն քերականության պարզեցման ժամանակամիջոցն էր: Նախ և առաջ մենք կառաջնորդվենք համատեքստով: Բառերն իմաստավորվում են միայն համատեքստում, հետևաբար քերականական կառուցվածքը կարելի է միայն հասկանալ (1) ըստ հեղինակի հատուկ ոճի և (2) ըստ հատուկ համատեքստի: Հնարավոր չէ տալ հունարենի ձևերի և կառուցվածքների հստակ և վերջնական սահմանումները:

Կոյնե հունարենը գլխավորապես բայերով հարուստ լեզու է: Հաճախ մեկնության բանալին բայածանցյալների տեսակը և ձևն է: Գլխավոր նախադասությունների մեծամասնությունում բայը դրվում է սկզբում՝ մատնանշելով դրա կարևոր նշանակությունը: Հունարեն բայը վերլուծելիս պետք է նշել երեք կարևոր բան. (1) ժամանակի, սեռի և եղանակի հիմնական շեշտադրությունը (ձևաբանություն), (2) տվյալ բայի հիմնական իմաստը (բառարանագրություն), և (3) համատեքստի էությունն ու զարգացումը (շարահյուսություն):

I. ԺԱՄԱՆԱԿ

Ա. Ժամանակը կամ կերպը ցույց է տալիս բայի հարաբերությունը կատարյալ կամ անկատար գործողությանը: Այն համապատասխանաբար կոչվում է «կատարյալ» և «անկատար» ժամանակ:

1. ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ կենտրոնանում են գործողության կատարման վրա: Ուրիշ որևէ տեղեկություն չի տրվում, այլ միայն այն, որ որևէ բան է տեղի ունեցել: Ոչինչ չի ասվում գործողության սկզբի, դրա ընթացքի կամ զագաթնակետի մասին:
2. ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ կենտրոնանում են գործողության շարունակական ընթացքի վրա: Այն կարող է նկարագրվել իբրև գծային, շարունակական և սաստկացնող:

Բ. Ժամանակները կարող են դասակարգվել համաձայն հեղինակի կողմից գործողության ընթացքի դիտարկման:

1. Այն տեղի ունեցավ = ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ
2. Այն տեղի ունեցավ, իսկ հետևանքները դեռ շոշափելի են = ԿԱՏԱՐՅԱԼ
3. Այն տեղի էր ունեցել անցյալում և հետևանքները շոշափելի են, սակայն ոչ հիմա = ԳԵՐԱԿԱՏԱՐ
4. Այն տեղի է ունենում = ՆԵՐԿԱ
5. Այն տեղի էր ունենում = ԱՆԿԱՏԱՐ
6. Այն տեղի կունենա = ԱՊԱՆՆԻ

Որպես օրինակ, թե ինչպես են այս ժամանակաձևերն օգնում մեկնաբանության մեջ, կվերցնենք «փրկել» տերմինը: Այն կիրառվում էր մի քանի տարբեր ժամանակներով՝ ցույց տալով թե՛ դրա ընթացքը, թե՛ կուլմինացիան:

1. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ - «փրկված» (տես՝ Հռոմ.8:24)
2. ԿԱՏԱՐՅԱԼ - «փրկված են, և հետևանքը շարունակվում է» (տես՝ Եփես.2:5,8)
3. ՆԵՐԿԱՎ - «փրկվում են» (տես՝ 1 Կորնթ.1:18; 15:2)
4. ԱՊՈՒՆԻ - «կփրկվեն» (տես՝ Հռոմ.5:9,10; 10:9)

Գ. Ուշադրություն դարձնելով ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՆ, թար31գմանիչները փնտրում են պատճառը, որով բնագրի հեղինակը նախընտրել էր իր մտքերն արտահայտելու համար օգտագործել տվյալ ժամանակաձևը: Ստանդարտ «առանց ավելորդությունների» ժամանակաձևը՝ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼն էր: Այն սովորական, ոչ կոնկրետ, «աննշան» կամ «ոչնչով չթուլացող» ԲԱՅԻ ձև է: Այն կարող է կիրառվել տարբեր կերպերով՝ կախված համատեքստից: Այն պարզապես հաստատում էր, որ ինչ-որ բան էր տեղի ունեցել: Այնցյալ ժամանակաձևն ընդունում էին միայն ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԲԱՅԵՐԸ: Եթե որևէ այլ ժամանակ էր կիրառվում, հեղինակը շեշտադրում էր ավելի կոնկրետ որևէ բան: Բայց ի՞նչ:

1. ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ. Այն արտահայտում է կատարված գործողություն, որի հետևանքները շոշափելի են: Ինչ-որ առումով դա ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԻ և ՆԵՐԿԱՎ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ գույքորդություն է: Սովորաբար շեշտը դրվում է գործողության շոշափելի հետևանքների կամ ավարտման վրա: Օրինակ՝ Եփես.2:5 և 8 «շնորհքով եք փրկված և շարունակում եք փրկվել»:
2. ԳԵՐԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. այն նման է ԿԱՏԱՐՅԱԼԻՆ, սակայն շոշափելի հետևանքներն արդեն վերջացել են: Օրինակ՝ «Պետրոսն էլ դռան մոտ կանգնած էր» (Հովհ.18:16):
3. ՆԵՐԿԱՎ ԺԱՄԱՆԱԿ. Խոսքը վերաբերում է անավարտ կամ անկատար գործողությանը: Սովորաբար շեշտը դրվում է իրադարձության շարունակության վրա: Օրինակ՝ «Ով մնում է Նրա մեջ, մեղք չի գործում» «Ով որ Աստուծուց է ծնված, մեղք չի գործում» (1 Հովհ.3:6 և 9):
4. ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ. Այս ժամանակաձևի կապը ՆԵՐԿԱՎ ԺԱՄԱՆԱԿԻ հետ ուղիղ համեմատական է ԿԱՏԱՐՅԱԼԻ և ԳԵՐԱԿԱՏԱՐԻ միջև կապին: ԱՆԿԱՏԱՐՆ արտահայտում է անավարտ գործողություն, որը տեղի էր ունեցել, բայց դադարել է ներկա պահին կամ էլ անցյալում գործողության հենց սկզբում: Օրինակ՝ «Այդ ժամանակ նրա մոտ էին գնում Երուսաղեմից» (Մատթ.3:5):
5. ԱՊՈՒՆԻ ԺԱՄԱՆԱԿ. Այն արտահայտում է մի գործողություն, որը տեղի կունենա ասպագայում: Շեշտադրում է առավել պոտենցիալ, քան իրական իրողությունը: Այն հաճախ ցույց է տալիս իրադարձության որոշակիությունը: Օրինակ՝ «Երանի... նրանք...» (Մատթ.5:4-9):

II. ՄԵՌ

Ա. ՄԵՌԸ ցույց է տալիս ԲԱՅԻ գործողության և դրա ԵՆԹԱԿԱՅԻ միջև եղած կապը:

Բ. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՌԸ նորմալ, սպասված և շեշտադրված միջոցն է, որը ցույց է տալիս, որ ենթական կատարում է բայի արտահայտած գործողությունը:

Գ. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՄԵՌԸ նշանակում է, որ ԵՆԹԱԿԱՆ կրում է ԲԱՅԻ արտահայտած գործողությունը, որը կատարվել է արտաքին գործող անձի կողմից: Գործողությունը կատարող արտաքին գործող անձին էին մատնանշում հետևյալ ՆԱԽԳԻՐՆԵՐԸ և ՀՈՒՆՎՆԵՐԸ հունարեն ՆԿ-ում:

1. Անհատական ուղղակի գործող անձ՝ *hupo* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՎ (տես՝ Մատթ.1:22; Գործք 22:30):
2. Անհատական միջնորդ գործող անձ՝ *dia* ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՎ (տես՝ Մատթ.1:22):
3. Անորոշ գործող անձ՝ սովորաբար կիրառվող *en* ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՎ:
4. Երբեմն անհատական կամ անորոշ գործող անձ միայն ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈՒՆՎՈՎ:

Դ. ՉԵՉՈՔ ՄԵՌԸ նշանակում է, որ ԵՆԹԱԿԱՆ կատարում է ԲԱՅԻ արտահայտած գործողությունը, ինչպես նաև ուղղակիորեն ներգրավված է ԲԱՅԻ գործողության մեջ: Այն հաճախ կոչվում է անձնական սուբ հետաքրքրվածության ՄԵՌ: Այս քերականական կառուցվածքը ուժեղացնում է ԵՆԹԱԿԱՅԻ նշանակությունը նախադասության մեջ:

Անգլերենում նման քերականական կառուցվածք գոյություն չունի: Հունարենում այն ունի բազմաթիվ նշանակություններ և թարգմանություններ: Այս ձևի մի քանի օրինակներն են՝

1. ԱՆԴՐԱԴԱՐՁ – ենթակայի ուղղակի գործողությունն ինքն իր վրա: Օրինակ՝ «ինքն իրեն կախեց» (Մատթ.27:5):
2. ԻՆՏԵՆՍԻՎ – ենթական կատարում է գործողությունն ինքն իր համար: Օրինակ՝ «Սատանան ինքն էլ կերպարանափոխվում է լույսի հրեշտակի» (2 Կորնթ.11:14):
3. ՓՈԽԱԴԱՐՁ – երկու ԵՆԹԱԿԱՆՏԵՐԻ փոխազդեցությունը: Օրինակ՝ «Եվ խորհուրդ արին իրար հետ...» (Մատթ.26:4):

III. ԵՂԱՆԱԿ

Ա. Կոյնե հունարենն ունի չորս ԵՂԱՆԱԿ: Դրանք ցույց են տալիս բայի կապը իրականության հետ, սակայն համաձայն հեղինակի սեփական տեսանկյան: Եղանակները բաժանվում են երկու մեծ խմբի՝ իրական գործողություն ցույց տվող (ՍԱՀՄԱՆԱԿԱՆ) և պոտենցիալ գործողություն ցույց տվող (ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և ԸՂՁԱԿԱՆ):

Բ. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ արտահայտում է ստանդարտ եղանակ, որը ցույց է տալիս առնվազն հեղինակի տեսանկյունից տեղի ունեցած գործողություն: Սա միակ հունարեն եղանակն է, որն արտահայտում է որոշակի ժամանակ, եթե անգամ այդ ասպեկտը երկրորդական է:

Գ. ՍՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում է ապագայում հնարավոր գործողություն: Ինչ-որ մի բան դեռ տեղի չի ունեցել, բայց հնարավորությունները մեծ են, որ տեղի կունենա: Այն շատ ընդհանրություններ ունի ԱՊԱՌՆԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆԻ հետ: Տարբերությունն այն է, որ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆՆ արտահայտում է որոշ աստիճանի տարակուսանք: Անգլերենում հաճախ այն արտահայտվում է *could, would, may* կամ *might* տերմիններով (կարող էր, կկարողանար):

Դ. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում է ցանկություն, որը տեսականորեն կարող է ի կատար ածվել: ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆԻ հետ համեմատած այն դիտարկվում է իրական գործողությունից մի քայլ առաջ: ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆ արտահայտում է գործողության հնարավորությունը որոշ հանգամանքների ներքո: ՆԿ-ում ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հազվադեպ է հանդիպում: Այն շատ հաճախ կիրառվում է Պողոսի հայտնի արտահայտության մեջ՝ «քավ լիցի», որը հանդիպում է ավելի քան տասնհինգ անգամ (տես՝ Հռոմ.3:4,6,31; 6:2,15; 7:7,13; 9:14; 11:1,11; 1 Կորնթ.6:15; Գաղ.2:17; 3:21; 6:14): Մյուս օրինակներն են՝ Դուկ.1:38, 20:16; 8:20 և 1 Թեսաղ.3:11:

Ե. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ցույց է տալիս հրաման, որի կատարումը հնարավոր է, սակայն շեշտը դրվում է խոսողի մտադրության վրա: Այն հաստատում է միայն կամային հնարավորությունը և պայմանավորված է մեկ այլ անձի ըտրությամբ: ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ հատկապես օգտագործվում է աղոթքներում և երրորդ անձի խնդրանքներում: ՆԿ-ում այս հրամաններն ունեին միայն ՆԵՐԿԱ և ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼ ժամանակաձևեր:

2. Մի քանի լեզուների քերականության մեջ ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ դասակարգվում են որպես առանձին եղանակ: Դրանք շատ են հունարեն ՆԿ-ում և սովորաբար սահմանվում էին որպես ԲԱՅԱԾԱՆՅՅԱԼՆԵՐ: Դրանք թարգմանվում են գլխավոր առնչվելի ԲԱՅԻ հետ միասին: ԱԾԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՆԵՐԸ թարգմանելիս հնարավոր էին բազմաթիվ տարբերակներ: Դիտարկվել է լավագույն տարբերակը և հաշվի առնվել Աստվածաշնչյան մի քանի թարգմանություններ: Այս հարցում շատ օգտակար կարող է լինել Բեյքերի *Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով* ձեռնարկը (*The Bible in Twenty Six Translations*, Baker):

Է. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼՆ օգտագործվում է որպես գործողության ստանդարտ կամ «աննշան» միջոց իրողությունն արձանագրելու համար: Ցանկացած այլ ժամանակ, սեռ կամ եղանակ մեկնության համար ունեն որոշակի նշանակություն, որը հեղինակն էր ուզում հաղորդել:

IV. Հետևյալ ձեռնարկները կարող են օգտակար լինել նրանց համար, որոնք չեն տիրապետում հունարենին.

Ա. Բարբարա և Տիմոթի Ֆրայբերգ, *Հունարեն Վերլուծական Նոր Կտակարան /Frieberg, Barbara and Timothy, Analytical Greek New Testament*, Grand Rapids: Baker, 1988/:

Բ. Ալֆրեդ Մարշալ, *Նոր Կտակարանի Տողամիջյան Հունարեն-Անգլերեն Թարգմանություն /Marshall, Alfred, Interlinear Gree-English New Testament*, Grand Rapids: Zondervan, 1976/:

Գ. Ուիլյամ Դ. Մաունս, *Հունարեն Նոր Կտակարանի Վերլուծական Բառարան /Mounce, William D. The Analytical Lexicon to the Greek New Testament*, Grand Rapids: Zondervan, 1993/:

Դ. Ռեյ Սամերս, *Նոր Կտակարանի Հունարենի Կարևոր Առանձնահատկությունները /Summers, Ray, Essentials of New Testament Greek*, Nashville: Broadman, 1950/:

Ե. Դուք կարող եք նաև օգտվել կոյնե հունարենի ուսումնասիրության ուսումնական դասընթացներից, որոնք հասանելի են Չիկագոյի Մուդիի Աստվածաշնչյան Ինստիտուտի հետ նամակագրության միջոցով:

V. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ա. Շարադասությամբ գոյականները դասակարգվում են ըստ հոլովների: Հոլովը ԳՈՅԱԿԱՆԻ խոնարհվող ձևն է, որը ցույց է տալիս դրա կապը ԲԱՅԻ և նախադասության մյուս անդամների հետ: Կոյնե հունարենում ՆԱԽԴԻՐՆԵՐԸ ցույց էին տալիս հոլովի շատ ֆունկցիաներ: Քանի որ հոլովի ձևը կարող էր վկայել մի քանի տեսակ կապերի մասին, ՆԱԽԴԻՐՆԵՐԸ օգնում էին ավելի հստակ սահմանափակել այս հնարավոր ֆունկցիաները:

Բ. Հունարենում գոյություն է ունեցել ութ հոլով.

1. ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր առարկաններն անվանելու համար, և այն սովորաբար կատարում էր նախադասության ենթակայի ֆունկցիան: Այս հոլովում կարող էին օգտագործվել նաև բաղադրյալ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ և ԱՇԱԿԱՆՆԵՐԸ «լինել» կամ «դառնալ» օժանդակ ԲԱՅԵՐԻ հետ:
2. ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր նկարագրության համար և սովորաբար մատնանշում էր այն բառի հատկանիշը կամ որակը, որի հետ առնչվում էր: Պատասխանում էր «ի՞նչպիսի» հարցին: Այն հաճախ արտահայտվում էր անգլերենի «of» նախդիրի օգնությամբ:
3. ԲԱՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ նույն խոնարհված ձևը, սակայն օգտագործվում էր անջատում նկարագրելու համար: Ընդհանրապես այն արտահայտում է ժամանակի, տարածության, աղբյուրի, ծագման կամ աստիճանի անջատում: Անգլերենում այն հաճախ կիրառվում է *from* նախդիրի օգնությամբ (հայերենում՝ -ից վերջածանցով):
4. ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր անձնական հետաքրքրությունը նկարագրելու համար: Սա կարող էր մատնանշել դրական կամ բացասական ասպեկտը: Հաճախ այն ԱՆՈՒՂՂԱԿԻ ԼՐԱՑՈՒՄՆ էր: Թարգմանվում է անգլերենի *to* նախդիրի օգնությամբ:
5. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ ուներ ՏՐԱԿԱՆԻ նույն խոնարհված ձևը, սակայն նկարագրում էր դիրք կամ տեղանք տարածության, ժամանակի կամ տրամաբանական սահմանների մեջ: Հաճախ թարգմանվում է անգլերեն *in, on, at, among, during, by, upon* և *beside* նախդիրների օգնությամբ:
6. ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ ուներ ՏՐԱԿԱՆ և ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐԻ նույն խոնարհված ձևը: Այն նշանակում էր միջոց կամ կապ: Հաճախ թարգմանվում էր անգլերեն *by* և *with* նախդիրների օգնությամբ:
7. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր գործողության ավարտը նկարագրելու համար: Այն արտահայտում էր սահմանափակում: ԳՈՅԱԿԱՆՆ Այս ՀՈԼՈՎՈՒՄ հիմնականում օգտագործվում էր որպես ՈՒՂԻՂ ԼՐԱՑՈՒՄ: Այն պատասխանում է «որ-քա՞ն», «ի՞նչ աստիճանի» հարցերին:
8. ԿՈՉԱԿԱՆ ՀՈԼՈՎՆ օգտագործվում էր որևէ մեկին ուղղակի դիմելու համար:

VI. ՇԱՂԿԱՊՆԵՐ ԵՎ ԿԱՊԵՐ

Ա. Հունարենը շատ ճշգրիտ լեզու է, քանի որ ունի շատ ԿԱՊԵՐ: Դրանք կապում են մտքերը (նախադասությունները, արտահայտությունները և պարբերությունները): Դրանք այնքան տարածված են, որ դրանց բացակայությունը հաճախ մեկնաբանության համար շատ նշանակալի է լինում: Փաստացի այս շաղկապները և կապերը մատնանշում են հեղինակի մտքի ուղղությունը: Հաճախ դրանք կարևոր են որոշելու, թե ինչ է փորձում հաղորդել հեղինակը:

Բ. Ստորև ներկայացված է որոշ շաղկապների, կապակցող բոռերի և դրանց իմաստների ցուցակը (այս տեղեկությունը հիմնականում հավաքված է Հ. Ի. Դանայի և Ջուլիուս Բ. Մենթեյի *Հունարեն Նոր Կտակարանի Քերականության Ձեռնարկ* գրքից /H. E. Dana and Julius K. Mantey's *A Manual Grammar of the Greek New Testament*/):

1. ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՊ

ա. *epei, epeid ē, hopote, hōs, hote, hotan* (ստորադասական եղ.) – «երբ»

բ. *heōs* – «մինչդեռ»

գ. *hotan, epan* (ստ. եղ.) – «երբ էլ որ»

դ. *heōs, achri, mechri* (ստ. եղ.) – «մինչև որ»

ե. *priv* (անորոշ) – «նախքան»

զ. *hōs* – «ի վեր», «երբ», «այն ժամանակ, երբ»

2. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՊ

ա. Նպատակ

(1) *hina* (ստ. եղ.), *hopōs* (ստ. եղ.), *hōs* – «որպեսզի», «որ»

(2) *hōste* (ԱՆՈՐՈՇԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈՂՈՎ) – «որ»

(3) *pros* (ԱՆՈՐՈՇԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈՂՈՎ) կամ *eis* (ԱՆՈՐՈՇԸ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈՂՈՎ) – «որ»

բ. Հետևանք (նպատակի և հետևանքիքերականական ձևերիկ միջև սերտ կապ կա)

(1) *hōste* (ԱՆՈՐՈՇ, սա ամենատարածվածն է) – «որպեսզի», «այսպիսով»

(2) *hiva* (ստ. եղ.) – «այնպես որ» «որպեսզի»

(3) *ara* – «այնպես»

գ. Պատճառ

(1) *gar* (պատճառ-հետևանք կամ պատճառ-եզրահանգում) – «քանի որ», «որովհետև»

(2) *dioti, hotiy* – «որովհետև»

(3) *epei, epeidē, hōs* – «քանի որ»

(4) *dia* (ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈՂՈՎՈՎ) և (ԱՆՈՐՈՇ ՀՈՂՈՎ) – «որովհետև»

դ. Եզրակացություն

(1) *ara, poinun, hōste* – «հետևաբար»

(2) *dio* (ամենաուժեղ ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՇԱՂԿԱՊԸ) – «ինչի կապակցությամբ» «ինչի համար», «ուստի»

(3) *oun* – «ուստի», «այսպիսով», «այն ժամանակ», «արդյունքում»

(4) *toinoun* – «համապատասխանաբար»

ե. Ընդդիմական կամ հակադրություն

(1) *alla* (խիստ ընդդիմական) – «բայց», «բացառությամբ»

(2) *de* – «բայց», «սակայն», «բայց և այնպես», «մյուս կողմից»

(3) *kai* – «բայց»

(4) *mentoi, oun* – «սակայն»

(5) *plēn* – «այնուամենայնիվ» (հիմնականում Դուկասում)

(6) *oun* – «սակայն», «համենայն դեպս»

զ. Համեմատություն

(1) *hōs, kathōs* (ներմուծվում է ստորադասական շաղկապներում)

(2) *kata* (բաղադրյալ բառերում՝ *katho, kathoti, kathōsper, kathaper*)

(3) *hosos* (Երբայեցիսում)

(4) *ē* – «քան»

է. Ծարունակական կամ հաջորդական

(1) *de* – «և» «հիմա»

(2) *kai* – «և»

(3) *tei* – «և»

- (4) *hina, oun* – «որ»
- (5) *oun* – «այն ժամանակ» (Հովհաննեսում)
- 3. Էմֆատիկ (շեշտված) կիրառություն
 - a. *alla* – «անշուշտ», «այո», «իրականում»
 - b. *ara* – «իրապես», «անշուշտ», «իսկապես»
 - c. *gar* – «բայց իսկապես», «անշուշտ», «իսկապես»
 - d. *de* – «իսկապես»
 - e. *ean* – «նույնիսկ»
 - f. *kai* – «նույնիսկ», «իսկապես», «իրապես»
 - g. *mentoi* – «իսկապես»
 - h. *oun* – «իրապես», «ամեն դեպքում»

VII. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ պարունակում է մեկից ավելի պայմանական ստորադասական նախադասություններ: Այս քերականական կառուցվածքը օգնում է մեկնաբանությանը, քանի որ տալիս է պայմանները կամ պատճառները, թե ինչու է հիմնական բայով արտահայտված գործողությունը տեղի ունենում կամ տեղի չի ունենում: Գոյություն ունեւր ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ չորս տեսակ: Դրանք կարող էին արտահայտել գործողությունների մի ամբողջ սպեկտր՝ նրանք, որոնք իրական էին հեղինակի կամ նրա մտահղացման տեսանկյունից մինչև ցանկալին:

Բ. ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ արտահայտում էր գործողություն կամ վիճակ, որն իրական էր համարվում հեղինակի կամ նրա մտադրության տեսանկյունից, թեև արտահայտվում էր «եթե» շաղկապով: Որոշ համատեքստերում այդ շաղկապը կարող էր թարգմանվել «քանի որ», «սպա» (տես՝ Մատթ.4:3; Հռոմ.8:31): Սակայն սա չի նշանակում, որ ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ պարտադիր նկարագրում են իրապես տեղի ունեցած դեպքեր: Դրանք հաճախ կիրառվում էին բանավեճի մեջ տեսակետ արտահայտելու կամ մոլորությունը բացահայտելու համար (տես՝ Մատթ.12:27):

Գ. ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ հաճախ կոչվում է «իրականությանը հակասող»: Այն արտահայտում էր մի բան, որը չէր համապատասխանում իրականությանը և չէր կարող ապացուցել արտահայտած տեսակետը կամ ընդունվել որպես փաստ: Օրինակներ.

1. «Այս մարդը, եթե մարգարե լիներ (որ չէր), կիմանար (իսկ նա չգիտեր), թե ով և ինչպիսի կին է սա, որ դիպչում է Իրեն, որովհետև նա մեղավոր մեկն է» (Դուկ.7:39):
2. «Քանի որ, եթե դուք Մովսեսին հավատայիք (իսկ դուք չեք հավատում), Ինձ էլ կհավատայիք (իսկ դուք չեք հավատում)» (Հովհ.5:46):
3. «Եթե մարդկանց հաճեցնեի (իսկ ես դա չեմ անում), սպա Քրիստոսին ծառայելի լինի» (Գաղ.1:10):

Դ. ԵՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ խոսում է ապագայում հնարավոր գործողության մասին: Հաճախ այն ենթադրում է գործողության հավանականությունը, իսկ սովորաբար ակնարկում է դրա պատահականությունը: Հիմնական ԲԱՅՈՎ արտահայտված գործողությունը պայմանավորված է այն բանով, թե արդյոք տեղի կունենա ստորադասականում նկարագրված գործողությունը: Օրինակ՝ 1 Հովհ.1:6-10; 2:4,6,9,15,20, 21,24,29; 3:21; 4:20; 5:14,16:

Ե. ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ամենահեռուն է գործողության կատարման հնարավորությունից: Այն հազվադեպ է հանդիպում ՆԿ-ում: Փաստացի գոյություն չունի լիարժեք ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ, որտեղ գլխավոր և ստորադասական նախադասությունները համապատասխանում են իրենց սահմանմանը: Մասնակի ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ օրինակ է 1 Պետ.3:14-ի բացման խոսքը: Մասնակի ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ մեկ այլ օրինակ է Գործք 8:31-ի եզրափակիչ խոսքը:

VIII. ԱՐԳԵԼՔՆԵՐ

Ա. ՆԵՐԿԱ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ *ME* ՄԱՍՆԻԿԻ հետ հաճախ (բայց ոչ միայն) շեշտադրում է արդեն տեղի ունեցող գործողության դադարը: Որոշ օրինակներ են՝ «ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա...» (Մատթ.6:19), «հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար...» (Մատթ.6:25), «և ձեր անդամները անիրավության գործիք մի՛ ընծայեք մեղքին...» (Հռոմ.6:13), «և մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգին...» (Եփես.4:30), «և մի՛ արբենաք գինով...» (Եփես.5:18):

Բ. ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ *ME* ՄԱՍՆԻԿԻ հետ շեշտադրում է, որ «նույնիսկ մի սկսեք կատարել որոշակի գործողություն»: Մի քանի օրինակներից են՝ «Մի՛ կարծեք ...» (Մատթ.5:17), «հոգս մի՛ արեք ...» (Մատթ.6:31), «ամոթ մի՛ համարիր...» (2 Տիմ.1:8):

Գ. ԿՐԿՆԱԿԻ ԺԽՏՈՒՄԸ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ հետ շատ խիստ ժխտում է՝ «երբեք, ոչ երբեք» կամ «ոչ մի դեպքում»: Մի քանի օրինակներից են՝ «Նա մահ չի տեսնի հավիտյան» (Հովհ.8:51), «ես հավիտյան միս չեմ ուտի» (1 Կորնթ.8:13):

IX. ՀՈԴ

Ա. Կոյնե հունարենում որոշիչ հոդն ունի նույն իմաստը, ինչ անգլերենի որոշիչ հոդը: Դրա հիմնական ֆունկցիան բառի, անվան կամ արտահայտության վրա ուշադրություն հրավիրելու միջոց հանդիսանալն է կամ դրանք «մատնացույց» անելը: Նոր Կտակարանի տարբեր հեղինակներ տարբեր կերպերով են այն կիրառում: Որոշիչ հոդը կարող էր կատարել նաև հետևյալ ֆունկցիան.

1. որպես առանձնացում, ըստ հակասության սկզբունքի, ինչպես որ ցուցական ԴԵՐԱՆՈՒՆԸ
2. որպես նշան, ավելի վաղ հիշատակված ԵՆԹԱԿԱՅԻ կամ անձի
3. որպես միջոց, նախադասության մեջ որոշելու ենթական իր հետ կապված ԲԱՅԻ հետ: Օրինակներ՝ «Աստված Հոգի է» Հովհ.4:24, «Աստված լույս է» 1 Հովհ.1:5, «Աստված սեր է» 4:8,16:

Բ. Կոյնե հունարենը չի ունեցել ԱՆՈՐՈՇ ՀՈԴ, ի տարբերություն անգլերենի: ՈՐՈՇԻՉ ՀՈԴԻ բացակայությունը կարող էր նշանակել.

1. առարկայի առանձնահատկությունների կամ որակի շեշտադրություն
2. առարկայի դասակարգման շեշտադրություն

Գ. Նոր Կտակարանի հեղինակները տարբեր կերպերով էին կիրառում հոդը:

X. ՀՈՒՆԱՐԵՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ԾԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Ա. Շեշտադրման տեխնիկան տարբեր է ՆԿ-ի տարբեր հեղինակների մոտ: Ամենահետևողական և խիստ հեղինակները Դուկասը և Եբրայեցիս թղթի հեղինակներն են:

Բ. Ավելի շուտ նշեցինք, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ ստանդարտ է և չի շեշտադրվում, մինչ ցանկացած այլ ժամանակաձև, սեռ կամ եղանակ մեկնության համար իրենց նշանակությունն ունեն: Իհարկե դա չի նշանակում, որ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՈՐՈՇ ԿԱՏԱՐՅԱԼԸ հաճախ չէր կիրառվում որպես կարևոր քերականական ձև: Օրինակ՝ Հռոմ.6:10 (երկու անգամ):

Գ. Բառային հաջորդականությունը Կոյնե հունարենում

1. Կոյնե հունարենը ճկուն լեզու էր, որ ի տարբերություն անգլերենի կախված չէր բառային հաջորդականությունից: Հետևաբար հեղինակը կարող էր փոխել բառերի ստանդարտ հերթականությունը, որպեսզի արտահայտեր՝
 - ա. ինչ էր ուզում հեղինակը ընդգծել ընթերցողի համար
 - բ. ինչը կարող էր ըստ հեղինակի զարմացնել ընթերցողին
 - գ. հեղինակի համար թանկ և կարևոր բաները

2. Բառային ստանդարտ հաջորդականությունը հունարենում դեռևս անլուծելի խնդիր է: Սակայն, ենթադրվում է, որ բառային ստանդարտ հաջորդականությունը սա է՝
 - ա. Կապող ԲԱՅԵՐԻ համար
 - (1) ԲԱՅ
 - (2) ԵՆԹԱԿԱ
 - (3) ԼՐԱՑՈՒՄ
 - բ. անցողիկ ԲԱՅԵՐԻ համար
 - (1) ԲԱՅ
 - (2) ԵՆԹԱԿԱ
 - (3) ՈՒՂԻՂ ԽՆԴԻՐ
 - (4) ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐ
 - (5) ՆԱԽԴԻՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ
 - գ. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ համար
 - (1) ԳՈՅԱԿԱՆ
 - (2) ՈՐՈՇԻՉ
 - (3) ՆԱԽԴԻՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ
3. Բառային հաջորդականությունը կարող է մեկնաբանության համար խիստ կարևոր լինել: Օրինակներ՝
 - ա. «Աջ ձեռք տվեցին ինձ և Բառնաբասին հաղորդակցության համար» (Գաղ.2:9 /հունարենի հաջորդականությամբ/): «Աջ ձեռք հաղորդակցության համար» արտահայտությունը կիսվել է և դրվել սկզբում և վերջում, ցույց տալու դրա կարևորությունը:
 - բ. «Քրիստոսի հետ» (Գաղ.2:19) դրված էր առջևում /հունարենում՝ «Ես Քրիստոսի հետ խաչված եմ»/: Նրա մահը կենտրոնական իրադարձությունն էր:
 - գ. «Շատ մասերով և շատ կերպերով» (Եբր.1:1) առջևում էր դրված: Շեշտադրվում էր այն, թե ինչպես Աստված հայտնեց Իրեն, ոչ թե հենց հայտնության փաստը:

Գ. Սովորաբար շեշտադրման համար նաև կիրառվում էր՝

1. ԴԵՐԱՆՎԱՆ կրկնությունը, որն արդեն առկա էր ԲԱՅԻ խոնարհված ձևում: Օրինակ՝ «Ես Ինքս ձեզ հետ եմ...» /հայ.՝ «Եվ ահա Ես ձեզ հետ եմ»/ (Մատթ.28:20):
2. Սպասված ՇԱՂԱԿՊԻ կամ մեկ այլ ԿԱՊԵՐԻ, արտահայտությունների կամ նախադասությունների միջև բացակայությունը: Սա կոչվում է անշաղկապություն («չկապված»): Սպասվում էր, որ ՇԱՂԱԿՊԸ պետք է լիներ, հետևաբար դրա բացակայությունը կարող էր ուշադրություն գրավել իր վրա: Օրինակներ՝
 - ա. Երանելիները, Մատթ.5:3 և այլն (շեշտադրվում էր հերթականությունը)
 - բ. Հովհ.14:1 (նոր թեմա)
 - գ. Հռոմ.9:1 (նոր բաժին)
 - դ. 2 Կորնթ.12:20 (շեշտադրվում է հերթականությունը)
3. Տրված համատեքստում առկա բառերի և արտահայտությունների կրկնությունը: Օրինակներ՝ «Իր փառավոր շնորհքի գովասանքի համար» (Եփես.1:6,12 և 14): Այս արտահայտությունն օգտագործվում էր շեշտադրելու Սբ. Երրորդության յուրաքանչյուր անձի գործը:
4. Բարբառային արտահայտությունների կամ բառախաղերի կիրառությունը
 - ա. Մեղմասությունը թաբույի ենթարկված բառերի փոխարինող բառերն են, ինչպիսիք են՝ «ննջել»՝ մահ բառի փոխարեն (Հովհ.11:11-14) կամ «ոտքեր»՝ տղամարդու սեռական օրգանի փոխարեն (Հռոմ.3:7-8; 1 Թագ.24:3):
 - բ. Շրջաբանությունները Աստծո անվանը փոխարինող բառեր են, ինչպես օրինակ՝ «Երկնքի թագավորություն» (Մատթ.3:21) կամ «ձայն Երկնքից» (Մատթ.3:17):
 - գ. Փոխարկություններ
 - (1) անվանական չափազանցություններ (Մատթ.3:9; 5:29-30; 19:24)
 - (2) մեղմ չափազանցություններ (Մատթ.3:5; Գործք 2:36)
 - (3) անձնավորում (1 Կորնթ.15:55)
 - (4) հեզանք (Գաղ.5:12)
 - (5) բանաստեղծական հատվածներ (Փիլ.2:6-11)
 - (6) բառախաղ
 - (ա) «եկեղեցի»
 - (i) «եկեղեցի» (Եփես.3:21)
 - (ii) «կոչում» (Եփես.4:1,4)

(iii) «կանչված» (Եփես.4:1,4)

(բ) «ազատ»

(i) «ազատ կին» (Գաղ.4:31)

(ii) «ազատություն» (Գաղ.5:1)

(iii) «ազատել» (Գաղ.5:1)

դ. Բարբառային լեզու՝ մի լեզու որը բնորոշ է տվյալ մշակույթին կամ լեզվին:

(1) «Կերակուր» բառի փոխաբերական կիրառությունը (Հովհ.4:31-34)

(2) «Տանար» բառի փոխաբերական կիրառությունը (Հովհ.2:19; Մատթ.26:61)

(3) Կարեկցանքի երբայերեն բարբառը «ատել» է (Ծննդ.29:31; 2 Օր.21:15; Ղուկ.14:36; Հովհ.12:25; Հռոմ.9:13):

(4) «Ամենքս» բառն՝ ի համեմատություն «շատերը» բառի: Համեմատություն՝ Եսայի 53:6 («ամենքս»), իսկ 53:11 և 12 («շատերը»): Այս տերմինները հոմանիշներ են, ինչպես ցույց են տալիս Հռոմ.5:18 և 19:

5. Մեկ բառի փոխարեն լիակատար լեզվաբանական արտահայտության կիրառություն: Օրինակ՝ «Տեր Հիսուս Քրիստոս»

6. *autos* բառի կիրառումը՝

ա. հողի հետ (որոշիչ) այն թարգմանվում էր որպես «նույն»

բ. առանց հողի (ստորագյալ) այն թարգմանվում էր որպես ուժգնացող անդրադարձ դերանուն՝ ինքն իրեն:

Ե. Աստվածաշունչ ընթերցողը, որը չգիտի հունարեն լեզուն, կարող է գտնել շեշտադրված տեղերը հետևյալ կերպ.

1. Օգտվելով վերլուծական բառարանից և հունարեն-անգլերեն տեքստի տողամիջյան թարգմանությունից:

2. Համեմատելով անգլերեն թարգմանությունները, հատկապես նրանք, որոնք հիմնված են թարգմանության տարբեր տեսությունների վրա: Օրինակ՝ կարելի է համեմատել «բառացի» թարգմանությունները (KJV, NKJV, ASV, NASB, RSV, NRSV) «համարժեք դիմամիկ» թարգմանությունների հետ (Williams, NIV, NEB, REB, JB, NJB, TEV): Ձեզ նաև մեծապես կօգնի *Աստվածաշունչը Քսանվեց Թարգմանություններով* Բեյքերի հրատարակության գիրքը (*The Bible in Twenty-Six Translations*, Baker):

3. Օգտվելով Ջոզեֆ Բրայանթ Ռոթերհեմի գրքից՝ *Հասուն Ծեշտադրումն Աստվածաշնչում* (*the Emphasized Bible*, Joseph Bryant Rotherham /Kregel/, 1994):

4. Օգտվելով Աստվածաշնչի հետևյալ բառացի թարգմանություններից.

ա. *Ամերիկյան Ստանդարտ Տարբերակ* (*The American Standard Version*, 1901):

բ. *Աստվածաշնչի Բառացի Թարգմանություն Լաուն Յանգի* (*Young's Literal Translation of the Bible* /Gardian Press/, 1976):

Քերականություն ուսումնասիրելը հոգնեցուցիչ է, բայց անհրաժեշտ է ճիշտ մեկնաբանության համար: Այս համառոտ սահմանումները, մեկնաբանությունները և օրինակները նպատակ ունեն քաջալերելու և սպառազինելու հունարեն չիմացող անձանց, որպեսզի օգտվեն այս գրքի քերականական բացատրություններից: Անշուշտ, այս սահմանումները չափազանց պարզեցված են: Դրանք չպետք է կիրառել դոգմատիկ և ոչ ճկուն կերպով, այլ որպես մի քայլ ՆԿ-յան շարահյուսությունն ավելի լավ հասկանալու ուղղությամբ: Հուսով ենք, որ այս սահմանումները կօգնեն նաև ընթերցողներին հասկանալու մյուս ուսումնական ձեռնարկների մեկնաբանությունները, ինչպիսիք են ՆԿ-ի հատուկ սերտողությունները:

Մենք պետք է կարողանանք ստուգել մեր մեկնությունն աստվածաշնչյան տեքստերի տեղեկատվության հիման վրա: Քերականությունը հասկանալ ծայրահեղ կարևոր է, սակայն մեզ նաև օգնում են պատմական և գրական համատեքստերը, ինչպես նաև բառերի ժամանակակից օգտագործման և զուգահեռ տեքստերի կիրառման մասին իրազեկությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՏԵՔՍԱՅԻՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Մենք այս թեման կնայենք այնպես, որ բացատրենք տեքստային ծանուցումները՝ բերված այս մեկնաբանության մեջ: Մենք կհետևենք հետևյալ պլանին՝

- I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները
 - Ա. Հին Կտակարան
 - Բ. Նոր Կտակարան
- II. Խնդիրների և «ցածր քննադատության» կամ այսպես կոչված «տեքստային քննադատության» տեսությունների համառոտ բացատրությունը:
- III. Գրքեր լրացուցիչ ընթերցանության համար:

I. Անգլերեն Աստվածաշնչի տեքստային աղբյուրները

Ա. Հին Կտակարան

1. Մագորեթիկ տեքստ (MT) – Սա հին հրեական կոնսոնանտ (բաղաձայն տառերով գրված) տեքստ էր խմբագրված ռաբբի Աքիբայի կողմից մ. թ. 100-ին: Չայնավոր հնչյունները, շեշտերը, լուսանցքի նշումները, կետադրությունը և ապարատային նշանները սկսեցին ավելացվել 6-րդ դարում և վերջնականապես ձևավորվել 9-րդ դարում: Դա արվեց հայտնի հրեա գիտնականների կողմից, ովքեր մագորեթներ էին: Տեքստը, որը նրանք օգտագործեցին, նույնն էր ինչ որ Միշնան, Թալմուդը, Թարգումները, Փեշիտտան և Վուլգատան:
2. Մեպտուագինտա (LXX) – Ավանդույթն ասում է, որ Մեպտուագինտան կազմվել է 70 հրեա գիտնականների կողմից 70 օրվա ընթացքում, Ալեքսանդրիան գրադարանի համար Պտղոմեոս II թագավորի հովանավորությամբ (Ք. Ա. 285 – 246): Ենթադրվում է, որ թարգմանությունը կատարվել է Ալեքսանդրիայում ապրող մի հրեա առաջնորդի խնդրանքով: Այս ավանդույթը հիմնված է «Արիստեոսի ուղերձի» վրա: LXX հաճախ հիմնվում էր եբրայերեն այլ տեքստային ավանդության վրա, համեմատվելով ռաբբի Աքիբայի (MT) տեքստի հետ:
3. Մեռյալ Ծովի մագաղաթները (DSS) – Մեռյալ Ծովի մագաղաթները գրվել են Հռոմում (Ք. Ա. 200- մ. թ. 70) հրեա անջատողական խմբավորման կողմից, որոնք կոչվում էին «Էսսեներ» (սրանք փարիսեցիների նախահայրերն էին): Մեռյալ Ծովի տարբեր մասերից գտնված եբրայերեն ձեռագրերը պատկանում են եբրայերեն այլ տեքստային ընտանիքի՝ չտարբերվելով MT և LXX:
4. Ահա մի քանի հստակ օրինակներ, թե ինչպես են այս տեքստերի համեմատությունները օգնել մեկնաբանել Հին Կտակարանը հասկանալու համար.
 - ա. LXX օգնել է թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) LXX, Ես.52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՆԲԱ վրա»
 - (2) MT, Ես.52:14, «Ինչպես որ շատերը ապշեցին ՔԵՉ վրա»
 - (3) դատելով Ես.52:15-ից ճիշտ տարբերակը LXX-ն է
 - (ա) LXX, «նույնպես պիտի շատ ազգեր ապշեն Նրանով»
 - (բ) MT, «այնպես շատ ազգերի Նա զարմացնում է»
 - բ. DSS օգնել են թարգմանիչներին և գիտնականներին հասկանալ MT
 - (1) DSS, Ես.21:8, «հետո տեսանողը աղաղակեց, դիտարանի վրա եմ կանգնել Ես...»
 - (2) MT, Ես. 21:8, «Առյուճ, ո՛վ Տերս, ցերեկը շարունակ կանգնում եմ դիտանոցի վրա»
 - գ. LXX և DSS օգնել են հասկանալ Ես.53:11-ը
 - (1) LXX և DSS, «Իր անձի աշխատությունից հետո նա կտեսնի լույսը և կբավարարվի»
 - (2) MT, «Իր անձի աշխատության պտուղը պիտի տեսնի ու պիտի բավարարվի»:

Բ. Նոր Կտակարան

1. Գոյություն ունեն հունարեն ամբողջական Նոր Կտակարանի կամ նրա մասերի ավելի քան 5300 ձեռագրեր: Մոտավորապես 85 գրված են պապիրուսների վրա, իսկ 268 ձեռագրեր գրված են բոլորը մեծատառերով (ունցիալ): Ավելի ուշ, մոտավորապես մ. թ. 9-րդ դարում հայտնվեցին գրչագիր ձեռագրերը (փոքրատառերը միջնադարյան ձեռագրերում): Գոյություն ունեն մոտ 2700 հունարեն ձեռագրեր: Մենք նաև ունենք Սուրբ Գրքի մոտ 2100 օրինակ, որոնք օգտագործվել են պաշտամունքների ժամանակ, որոնք կոչվում են բնագրի տարբերակներ:
2. Մոտ 85 հունարեն ձեռագրեր, պարունակելով ՆԿ-ի առանձին հատվածներ, գրված պապիրուսների վրա, գտնվում են թանգարաններում: Նրանցից մի քանիսը պատկանում են մ. թ. 2-րդ դարին, սակայն մեծամասնությունը մ. թ. 3-րդ և 4-րդ դարերին: Այս ձեռագրերից ոչ մեկը չի պարունակում ՆԿ-ն ամբողջությամբ: Եվ չնայած, որ նրանք հանդիսանում են ՆԿ-ի

ամենահին օրինակները, դա ինքնըստինքյան չի նշանակում, որ նրանցում քիչ տարբերակներ կան: Այդ օրինակներից շատերը արվել են հապճեպ՝ տեղական օգտագործման համար, որոնց վրա այդքան էլ ուշադրություն չեն դարձրել: Այդ իսկ պատճառով նրանց մեջ կան շատ տարբերակներ:

3. Մինայական հին ձեռագրերի ժողովածու (Codex Sinaiticus), որը հայտնի է երբայերեն ռ (*aleph*) տառով կամ (01), գտնվել է Թիսզենդորֆի կողմից Մինա լեռան վրա գտնվող Սուրբ Եկատերինայի վանքից: Այն պատկանում է մ. թ. 4-րդ դարին և պարունակում է LXX թե՛ Հին Կտակարանի և թե՛ հունարեն ՆԿ-ի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
4. Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածուն (Codex Alexandrinus), որը հայտնի է որպես «A» կամ (02), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Եգիպտոսի Ալեքսանդրիայում:
5. Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածուն (Codex Vaticanus), որը հայտնի է որպես «B» կամ (03), գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում և պատկանում է մ. թ. 4-րդ դարի կեսերին: Այն պարունակում է LXX թե՛ Հին Կտակարանի և թե՛ հունարեն Նոր Կտակարանի թարգմանությունը: Այս տեքստը «ալեքսանդրիան տեսակի» է:
6. Եփրեմի հին ձեռագրերի ժողովածուն (Codex Ephraemi), որը հայտնի է որպես «C» կամ (04), 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, որը մասամբ ոչնչացվել է:
7. Բիզայի հին ձեռագրերի ժողովածուն (Codex Bezae), որը հայտնի է որպես «D» կամ (05), 5-րդ կամ 6-րդ դարի հունարեն ձեռագիր է: Սա հանդիսանում է «Արևմտյան Տեքստ» կոչվող ձեռագրի հիմնական տարբերակը: Այն պարունակում է բազմաթիվ հավելումներ և հանդիսացել է հիմնական հունարեն ձեռագիրը անգլերենի KING JAMES թարգմանության ժամանակ:
8. Նոր Կտակարանի ձեռագրերը կարող են բաժանվել երեք, հնարավոր է նաև չորս ընտանիքների, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ.
 - ա. Ալեքսանդրիան տեքստը Եգիպտոսից
 - (1) P⁷⁵, P⁶⁶, (մոտ մ.թ. 200), պարունակում են Ավետարանները
 - (2) P⁴⁶ (մոտ մ.թ. 225), պարունակում է Պողոսի նամակները
 - (3) P⁷² (մոտ մ.թ. 225-250), պարունակում է Պետրոսի և Հուդայի նամակները
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու B, որը կոչվում է Վատիկանյան (մոտ մ.թ. 325), ընդգրկում է ՀԿ և ՆԿ ամբողջությամբ
 - (5) Օրիգենի մեջբերումը այս տեսակի տեքստից
 - (6) ուրիշ MSS ձեռագրեր, որտեղ այս տեսակի տեքստ են ներկայացնում, հետևյալն են՝ Ռ, C, L, W, 33
 - բ. Արևմտյան տեքստ՝ Հյուսիսային Աֆրիկայից
 - (1) հյուսիս-աֆրիկյան եկեղեցու հայրերի՝ Տերտուլիանոսի, Կիպրիանոսի մեջբերումները, և հին լատիներեն թարգմանությունը
 - (2) Իրենեոսի մեջբերումները
 - (3) Տացիանոսի մեջբերումները և հին սիրիական թարգմանությունը
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու «D» Բիզայի՝ այս տեսակի տեքստ
 - գ. Արևելյան բյուզանդական տեքստ Կոնստանդնուպոլսից
 - (1) Այս տեսակի տեքստը ներկայացված է 5300 ձեռագրերից ավելի քան 80%-ի մեջ
 - (2) Միրիայի Անտիոքի եկեղեցու հայրերի մեջբերումները՝ Կապադովկացիներ, Ոսկերեքան և Թերողորեթ
 - (3) Հին ձեռագրերի ժողովածու A (Codex A), միայն Ավետարաններում
 - (4) Հին ձեռագրերի ժողովածու E (Codex E), 8-րդ դար՝ ամբողջ ՆԿ-ը
 - դ. Չորրորդ հնարավոր տեսակը «Կայսերական» է Պաղեստինից
 - (1) հիմնականում հանդիպում է միայն Մարկոս Ավետարանում
 - (2) մասամբ կարելի է գտնել P⁴⁵ և W ձեռագրերում

II. «Ցածր քննադատության» կամ «տեքստային քննադատության» խնդիրներն ու տեսությունները

Ա. Ինչպե՞ս են հայտնվել տարբերակները

1. ոչ դիտավորյալ կամ պատահական (շատ դեպքերում՝ մեծամասամբ)
 - ա. Վրիպակ, երբ երկու միանման բառեր (կամ նույնանման վերջավորություն ունեցող բառեր) իրար կողք կողքի դրված, արտագրողը նայել է երկրորդին և բաց է թողել այդ երկուսի միջև գտնվող ամբողջ տեքստը (հոմեոտելևտոն - homoioteleuton)
 - (1) աչքի վրիպում, երբ բաց է թողնվել նույն տառերով բառի մի մասը կամ ամբողջ արտահայտությունը (հապլոգրաֆիա - haplography)

- (2) հունարեն տեքստի արտահայտության կամ տողի կրկնություն (դիտոգրաֆիա - dittography)
- բ. լսողական վրիպում. տեքստը թելադրության միջոցով արտագրելու ժամանակ, բառերի գրելաձևի վրիպում (իտացիզմ - itacism): Հաճախ գրվել է նույնանման հնչողությամբ հունարեն բառի մեկ այլ տարբերակ:
- գ. Շատ հին հունարեն տեքստերում գլուխների և համարների բաժանումները չկան, գրեթե բացակայում է կետադրությունը և բառերը իրարից առանձնացված չեն: Տեքստը կարելի է բաժանել տարբեր մասերում, որի արդյունքում ստացվում են նոր բառեր:
2. Դիտավորյալ
- ա. Արտագրված տեքստի քերականական բարելավման համար արվել են փոփոխություններ
- բ. Տեքստը աստվածաշնչյան այլ տեքստերի հետ համաձայնեցնելու համար արվել են փոփոխություններ (գուգահեռ տեքստերի համաձայնեցում)
- գ. Ընթերցանության երկու կամ ավելի տարբերակներից մեկ երկար կապակցված տեքստ ստանալու համար կատարվել են փոփոխություններ (միաձուլում)
- դ. Անհասկանալի թվացող տեքստը ուղղելու համար կատարվել են փոփոխություններ (տես՝ 1 Կորնթ.11:27 և 1 Հովհ.5:7-8):
- ե. մի արտագրող լրացուցիչ տեղեկություն է մտցրել պատմական կոնտեքստի կամ տեքստի ճիշտ մեկնաբանության վերաբերյալ լուսանցքներում, իսկ մյուս արտագրողը դա մտցրել է հենց տեքստի մեջ (տես՝ Հովհ.5:4):
- Բ. Տեքստային քննադատության հիմնական սկզբունքները (տրամաբանական միջոցներ՝ տեքստի բնագրի ընթերցանությունը որոշելու համար, երբ կան տարբերակներ)
1. ամենատարօրինակ կամ անսովոր քերականական տեքստը ավելի շուտ բնագիրն է
 2. ամենակարճ տեքստը ավելի շուտ բնագիրն է
 3. ավելի հին տեքստին ավելի շատ արժեք է տրվում՝ նրա պատմականորեն բնագրին մոտ լինելու համար, իսկ մնացած ամեն ինչում հավասար են
 4. ձեռագրեր, որոնք աշխարհագրական առումով բաժանված են, սովորաբար մոտ են բնագրին
 5. վարդապետորեն ավելի թույլ տեքստեր, հատկապես ձեռագրերի փոփոխության ժամանակաշրջանում մեծ աստվածաբանական քննարկումներին վերաբերող, ինչպես օրինակ Երրորդության թեման 1 Հովհ.5:7-8-ում
 6. գերադասելի է այն տեքստը, որն օգնում է բացատրել այլ տարբերակների գոյությունը
 7. երկու մեջբերումներ, որոնք օգնում են ցույց տալու բալանսը այսպիսի խորին տարբերակներում
- ա. Ջ. Հարոլդ Գրինլի *Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածություն* (J. Harold Greenlee's book, *Introduction to New Testament Textual Criticism*) էջ՝ 68. «Ոչ մի Քրիստոնեական վարդապետություն չի հիմնվում վիճելի տեքստի վրա և ՆԿ-ը ուսումնասիրող յուրաքանչյուր անձ պետք է զգուշանա իր տեքստը ավելի ուղղափառ կամ վարդապետական դարձնելուց, քան ներշնչված բնագիրն է»:
- բ. Ու. Է. Կրիստելն ասում էր Գրեգ Գարիսոնին «Բիլլսինգհեմ Նյուզ»-ից, որ նա՝ Կրիստելը, չի հավատում, որ Աստվածաշնչի յուրաքանչյուր բառ ներշնչված է, «համենայն դեպս, ոչ ամեն բառ, որը հասել է ժամանակակից հրատարակման՝ թարգմանիչների բազմադարյա գործունեությունից հետո»: Եվ ավելացրեց, - «Ես հավատում եմ տեքստային քննադատությանը: Եվ որպես այդպիսին, կարծում եմ, որ Մարկոսի Ավետարանի 16-րդ գլխի երկրորդ կեսը հերետիկոսություն է, այն ներշնչված չէ, այլ ակնհայտ հորինվածք է... Եթե համեմատենք հին ձեռագրերը, կտեսնենք, որ Մարկոսի Ավետարանը այդպիսի վերջաբան չունի: Ինչ-որ մեկը այն ավելացրել է...»:
- SBC (Southern Baptist Convention)* անսխալականության հետազոտողներից այս նախահայրը նաև պնդում է, որ «ինտերպոլացիա» նաև ակնհայտ է Հովհաննես 5-ում, Բեթհեզդայի ավազանի մոտ Հիսուսի պատմության մեջ: Խոսելով Հուդայի ինքնասպանության հետ կապված երկու տարբեր պատմությունների մասին (տես՝ Մատթեոս 27 և Գործք 1), Կրիստելն ասում էր, - «Մա պարզապես ինքնասպանությունը դիտարկելու մեկ այլ ձև է: Եթե դա այդպես է Աստվածաշնչում, ապա ունի բացառություն: Իսկ Աստվածաշնչում կա երկու պատմություն Հուդայի ինքնասպանության մասին»: Կրիստելն ավելացրեց, - «Տեքստային քննադատությունը ինքնին հիանալի գիտություն է: Այն անցողիկ և անհեթեթ չէ, այլ դիմամիկ է և շատ կարևոր...»:

III. Ձեռագրերի խնդիրները (տեքստային քննադատություն)

Ա. Հետագա ընթերցանության համար գրքեր.

1. *Biblical Criticism: Historical, Literary and Textual*, by R. H. Harrison (Ռ. Հ. Հարիսոն, Աստվածաշնչյան քննադատություն՝ պատմական, գրական և տեքստային):
2. *The Text of the New Testament: Its Transmission, Corruption and Restoration* by Bruce M. Metzger (Բրյուս Մ. Մեցգեր, Նոր Կտակարանի Տեքստը՝ ձեռագրերի ավանդությունը, խեղաթյուրումը և քննարկի վերականգնումը):
3. *Introduction to New Testament Textual Criticism*, by J. H. Greenlee (Ջ. Հ. Գրինլի, Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածություն):

ՀԱՎԵԼՎԱԾ ԵՐԵՔ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ԲԱՅՄԱՆ ԽՈՍՔ

Ա. ՀԿ-ի և դեպքերի ժամանակագրության այլ կերպերի միջև եղած կապը

1. Մերձավոր Արևելքի այլ հնագույն գրականությունները առասպելական են ա. բազմաստվածության հետ կապված (սովորաբար մարդասեր աստվածները գործադրում են բնության գործողությունները, սակայն գործածելով միջանձնական ընդհարումների գաղափարներ) բ. Հիմնված բնության շրջանառության՝ ցիկլերի վրա (մեռնող և հարություն առնող աստվածներ)
2. Հունա-հռոմեական գրականությունը ավելի շուտ զվարճության և քաջալերանքի համար էր, քան պատմական դեպքերն արձանագրելու (Հոմերոսը հիմնականում ներկայացնում է Միջագետքի գաղափարները)

Բ. Հավանաբար երեք գերմաներեն տերմինների կիրառությունը լուսաբանում է պատմության տեսակների կամ սահմանումների միջև եղած տարբերությունները

1. «Historie» դեպքերի արձանագրությունը (հստակ փաստեր)
2. «Geschichte» դեպքերի մեկնաբանությունը, որով ներկայացնում է մարդկության համար դրանց կարևորությունը
3. «Heilgeschichte» բացառապես վերաբերում է Աստծո փրկագործության ծրագրին և պատմության ընթացքում Նրա գործերին

Գ. ՀԿ-ի և ՆԿ-ի պատմությունները » Geschichte» խմբին են պատկանում, որը տանում է «Heilgeschichte» -ի հասկացողությանը. դրանք հատրնտիք աստվածաբանական նկատառումներով պատմական դեպքեր են

1. միայն հատրնտիք դեպքեր
2. ժամանակագրությունը աստվածաբանությունից կարևոր չէ
3. դեպքերը պատմվում են ճշմարտությունը հայտնելու համար

Դ. ՀԿ-ում պատմությունները ամենատարածված ժանրն են հանդիսանում: Գնահատել են, որ ՀԿ-ի միայն 40%-ը պատմություններ են: Ուստի այս ժանրը անհրաժեշտ եղավ Սուրբ Հոգու համար փոխանցելու Աստծո պատգամը և բնավորությունը մեղավոր մարդկությանը: Սակայն այն տեղի ունեցավ ոչ թե առաջարկի տեսքով (ինչպես օրինակ ՆԿ-ի թղթերը), այլ փորձառության, ամփոփման կամ հատրնտիք մենախոսությունների, երկխոսությունների միջոցով: Կարող եք հարցնել, ուրեմն ինչո՞ւ են դրանք արձանագրվել: Ի՞նչ են դրանք փորձում սովորեցնել: Ո՞րն է դրանց աստվածաբանական նպատակը:

Այս պատմությունների նպատակը երբեք չի եղել պատմությունը թերագնահատելը: Սակայն պատմությունն ինքն է ծառայել կամ միջոց հանդիսացել հայտնության համար:

II. ԱՍՏՎԱԾԱԾՆՉՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Աստված ակտիվ է Իր ստեղծած աշխարհում: Աստվածաշնչի ներշնչված հեղինակները որոշակի դեպքեր են ընտրել Աստծուն հայտնելու համար: ՀԿ-ի կարևորագույն կերպարն Աստված է:

Բ. Յուրաքանչյուր պատմություն մի քանի կերպով է գործում՝

1. ո՞վ է Աստված և ի՞նչ է անում Իր աշխարհում
2. մարդկությունը հայտնված է անհատների և ազգերի հետ Աստծո ունեցած գործելակերպի միջոցով
3. որպես օրինակ հատկապես ուշադրություն դարձրեք Հեսուի ռազմական հաղթանակին, որը կապված է ուխտը պահելու հետ (տես՝ 1:7-8; 8:30-35)

Գ. Հանախ պատմությունները թելով իրար կապված են՝ ձևավորելու ավելի մեծ գրականական բաժին, որը հայտնում է միայն մեկ աստվածաբանական ճշմարտություն:

III. ՀԿ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ ՍԿՉՔՈՒՆՔՆԵՐԸ

Ա. Լավագույն քննարկումը, որ հանդիպել եմ ՀԿ-ի պատմությունների մեկնաբանության շուրջ, դա Դուգլաս Ստյուարթի *Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջական իմաստով*, էջ՝ 83-84 (Douglas Stuart *How to Read the Bible For All Its Worth*):

1. ՀԿ-յան պատմությունը սովորաբար ուղղակիորեն վարդապետություն չի սովորեցնում:
2. ՀԿ-յան պատմությունը սովորաբար լուսաբանում է որևէ վարդապետություն կամ վարդապետություններ, որոնք որպես առաջարկ սովորեցվել էին մեկ այլ տեղ
3. Պատմությունները արձանագրում են տեղի ունեցածը և պարտադիր չէ արձանագրեն, թե ինչ պետք է տեղի ունենար կամ ինչ պետք է ամեն անգամ տեղի ունենա: Հետևաբար, ոչ բոլոր պատմություններն ունեն իրենց բարոյախրատական գաղափարը առանձնակի յուրացնելու նպատակը:
4. Պատմություններում մարդկանց կատարած գործերը պարտադիր չէ, որ լինեն մեզ համար լավ օրինակներ: Հաճախ դրանք հենց հակառակն են:
5. ՀԿ-ի պատմություններում կերպարների մեծ մասը, ինչպես նաև նրանց գործերը, կատարյալ լինելուց շատ հեռու են:
6. Մեզ միշտ չէ, որ պատմության վերջում ասվում է, թե արդյոք այն ինչ տեղի ունեցավ լավ էր, թե վատ: Մեզնից ակնկալվում է, որ ինքներս կարողանանք կշռադատել համաձայն Սուրբ Գրքում մեկ այլ տեղ այդ մասին Աստծո կողմից մեզ ուղղակի և կատեգորիկ կերպով սովորեցրած սկզբունքների:
7. *Բողոք* պատմությունները հատրնտիր են և անկատար: Ոչ միշտ են բոլոր համապատասխան մանրամասները տրվում (տես՝ Հովի.21:25): Այն ինչ պատմությունը մեզ մատուցում է, դա հենց այն ամենն է, ինչ ներշնչված հեղինակը կարևոր է համարել, որ իմանանք:
8. Պատմությունները չեն գրվել, որպեսզի պատասխանեն մեր բոլոր աստվածաբանական հարցերին: Դրանք ունեն մասնավոր, հատուկ, սահմանափակ նկատառումներ և լուծում են որոշակի խնդիրներ՝ թողնելով մյուսները լուծվեն մեկ այլ հատվածում, այլ կերպերով:
9. Պատմությունները կարող են թե՛ բացահայտ (հստակ սահմանելով ինչ-որ բան) և թե՛ ենթադրելի՝ անբացահայտ (հստակ ակնարկելով ինչ-որ բան առանց իրականում այն սահմանելու) սովորեցնել:
10. Եվ վերջնական վերլուծության մեջ ուզում եմ նշել, որ Աստված է բոլոր աստվածաշնչյան պատմությունների գլխավոր հերոսը:

Բ. Պատմությունների մեկնաբանության ևս մեկ լավ քննարկում է Ուլթեր Քայզերի *Դեպի Էզգեզետիկ Աստվածաբանություն* գիրքը (Walter Kaiser *Toward Exegetical Theology*).

«Սուրբ Գրքի պատմության հատվածների բացառիկ առանձնահատկությունն այն է, որ սովորաբար հեղինակը թույլ է տալիս, որ իր պատմության մարդկանց խոսքերն ու գործողությունները հաղորդեն իր պատգամի գլխավոր գաղափարը: Այսպիսով, ուղղակի հայտարարությամբ մեզ դիմելու փոխարեն, ինչպիսիք կարելի է գտնել Սուրբ Գրքի վարդապետական և ուսմունքային հատվածներում, հեղինակը աշխատում է մնալ ինչ-որ տեղ ետին պլանում, քանի դեռ ուղղակի ուսմունքը կամ գնահատվող հայտարարությունները կարևորվում են: Հետևաբար, այն դառնում է հույժ կարևոր ճանաչելու ավելի ընդարձակ համատեքստը, որի մեջ ընդգրկված է պատմությունը և հարցնելու, թե ինչու է հեղինակն օգտագործել դեպքերի այդ հատուկ հատվածները որոշակի հերթականությամբ, որոնց մեջ տեղավորել է դրանք: Պատմության նշանակության զույգ բանալիները այժմ կլինեն էպիզոդների *հարմարեցումը* և առկա խոսակցությունների, անձանց կամ էպիզոդների խառնաշփոթի միջից մանրամասների *ընտրությունը*: Բացի այդ, այս մարդկանց ու պատմություններին վերը նշված գնահատականն ու արձագանքը պետք է հաճախ որոշվեն հեղինակի կողմից թուլատրելի եղանակով՝ որևէ մարդու կամ մարդկանց խմբի պատասխանելու դեպքերի ընտրված հաջորդականության գազաթնակետում, այսինքն, եթե նա չի ընդհատել պատմությունը, որպեսզի տա իր սեփական (այս դեպքում՝ Աստծո) գնահատականը տեղի ունեցածի վերաբերյալ» (էջ՝ 205):

Գ. Պատմություններում ճշմարտությունը գտնվում է ամբողջ գրական բաժնում և ոչ թե մանրամասների մեջ: Չգուշացեք տեքստային ապացույցները կամ ՀԿ-յան պատմությունները ձեր կյանքի համար որպես նախադեպ կիրառելուց:

IV. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

Ա. ՅԱՀՎԵԻ փրկարար, հայտնության գործերը Արրահամի սերմի՝ ժառանգի համար

Բ. ՅԱՀՎԵԻ կամքը յուրաքանչյուր հավատացյալի կյանքի համար (բոլոր տարիքի)

Գ. Առաջինը շեշտը դնում է Աստծուն ճանաչելու (փրկության), և երկրորդը՝ Նրան ծառայելու վրա (Հավատքի Զրիստոնեական կյանքը. տես՝ Հռոմ.15:4; 1 Կորնթ.10:6,11):

ՀԱՎԵԼՎԱԾ ՉՈՐՍ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Ալեքսանդրիան դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Ալեքսանդրիայում, Եգիպտոս, մ. թ. 2-րդ դարում: Այնտեղ օգտագործվում է Ֆիլոյի հիմնական մեկնաբանական սկզբունքները, որը Պլատոնի հետևորդն էր: Հաճախ այն կոչվում է այլաբանական մեթոդ: Մինչև Բարեփոխությունը եկեղեցին ընդունում էր այս մեթոդը: Սրա ամենաուժեղ կողմնակիցները եղել են Օրիգենը և Օգոստինոսը: Տե՛ս Միլվա Մայիսեյի «Արդյոք եկեղեցին ճիշտ չի կարդացել Աստվածաշունչը» գիրքը (Moises Silva, *Has The Church Misread The Bible*) (հրատ. Academic, 1987):

Ալեքսանդրիան հին ձեռագրերի ժողովածու. սա 5-րդ դարի հունարեն ձեռագիր է, գտել են Ալեքսանդրիայում, Եգիպտոս, որը պարունակում է ՀԿ-ը, Անկանոն Գրքերը և ՆԿ-ից շատ գրքեր: Սա հանդիսանում է ամբողջ հունարեն ՆԿ-ի գլխավոր օրինակներից մեկը (բացի Մատթեոսից, Հովհաննես Ավետարանից և 2 Կորնթացիներից որոշ մասերի): Գիտնականներից շատերը շատ դեպքերում համարում են, որ երբ այս ձեռագիրը, որը հայտնի է որպես «A» համընկնում է »B: (Վատիկանյան) ձեռագրի հետ, ուրեմն տեքստը բնագիր է:

Այլաբանություն. սա Աստվածաշնչի մեկնաբանության տեսակ է, որը սկիզբ է առել ալեքսանդրիան հուդայականության մեջ: Այն հանրաճանաչ է դարձել Ֆիլոնում Ալեքսանդրիացու կողմից: Սրա հիմնական յուրահատկությունն է Սուրբ Գիրքը հարմարեցնել որևէ մեկի մշակութային կամ փիլիսոփայական համակարգին, անտեսելով Աստվածաշնչի պատմական և/կամ գրական համատեքստը: Նրա մեջ փնտրում են թաքնված հոգևոր իմաստ յուրաքանչյուր սուրբգրային տեքստի ետևում: Պետք է խոստովանել, որ Հիսուսը, Մատթ.13-ում, և Պողոսը, Գաղ.4-ում, օգտագործել են այլաբանություն՝ ճշմարտությունը փոխանցելու համար: Դա, ինչևէ, սիմվոլիկ լեզու էր, և ոչ թե խիստ այլաբանություն:

Աշխարհի պատկերը և աշխարհայացքը. սրանք համախոհ տերմիններ են: Այս երկու փիլիսոփայական գաղափարները կապված են արարչագործության հետ: «Աշխարհի պատկեր» տերմինը վերաբերում է «ինչպես» է ստեղծվել աշխարհը հարցին, մինչ «աշխարհայացքը» թե «Ով» է ստեղծել այն: Այս տերմինները կարևոր են Ծննդ.1-2 գլուխները մեկնաբանելու համար, որտեղ խոսքը գնում է նախ և առաջ այն մասին, թե Ով է ստեղծել երկիրը, և թե ինչպես է այն ստեղծվել:

Անտիոքյան Դպրոց. Աստվածաշնչյան մեկնաբանության այս մեթոդը զարգացել է Սիրիայի Անտիոքում, մ.թ. 3-րդ դարում որպես պատասխան Եգիպտոսի Ալեքսանդրիայի այլաբանական մեթոդին: Նրա հիմնական գաղափարն էր ուշադրություն դարձնել Աստվածաշնչի պատմական նշանակությանը: Այս դպրոցը թարգմանեց Աստվածաշունչը որպես սովորական, մարդկային գրականություն: Այն ներգրավվեց բանավեճի մեջ, թե արդյոք Քրիստոսն ուներ երկու բնություն (նեստորականություն), թե մեկ (լրիվ Աստված և լրիվ մարդ): Հռոմի կաթոլիկ եկեղեցին հռչակեց դա հերետիկոսություն և նրա ներկայացուցիչները բնակություն հաստատեցին Պարսկաստանում, սակայն քիչ ազդեցություն ունեին: Այս դպրոցի հիմնական հերմենևտիկական սկզբունքները ավելի ուշ սկսեցին օգտագործվել դասական բողոքական Ռեֆորմատորների կողմից (Լյութեր և Կալվին):

Ապոկալիպտիկ գրականություն. առավելապես, գուցե և բացառապես, հրեական ժանր էր: Գրելատնի գաղտնի տեսակ էր, որը հրեաները օգտագործում էին օտար աշխարհակալների կողմից նվաճումների ու զավթումների ժամանակ: Ենթադրվում էր, որ անձ հանդիսացող Փրկիչ Աստվածն ստեղծել և վերահսկում է աշխարհի իրադարձությունները, և որ Աստված հատուկ ուշադրություն և հոգատարություն է ցուցաբերում Իսրայելի հանդեպ: Այս գրականությունը Աստծո ժողովրդին խոստանում է վերջնական հաղթանակ Աստծո հատուկ ջանքերի շնորհիվ:

Սա շատ խորհրդավոր և ֆանտաստիկ ժանր է՝ բազմաթիվ հանելուկային տերմիններով: Այստեղ ճշմարտությունը հաճախ արտահայտվում է գույների, թվերի, տեսիլքների, երազների, հրեշտակների, գաղտնագրերի տեսքով, հաճախ կա նաև սուր դուալիզմ չարի և բարու միջև:

Այս ժանրի միքանի օրինակներ (1) Հին Կտակարանում՝ Եզեկիել (36-48 գլուխները), Դանիել (7-12 գլուխները), Չաբարիա; և (2) Նոր Կտակարանում՝ Մատթեոս 24; Մարկոս 13; 2 Թեսաղոնիկեցիս 2 և Հայտնություն:

Ապոլոգետ (ապոլոգետիկա / հավատքի պաշտպանություն). Տերմինը առաջացել է հունարեն «օրինական պաշտպանություն» բառի արմատից: Աստվածաբանության մեջ սա հատուկ դիսցիպլինա է,

որը ձգտում է ներկայացնել ապացույցներ և ռացիոնալ փաստարկներ քրիստոնեական հավատքի օգտին:

Արիոսականություն. Արիոսը Եգիպտոսի Ալեքսանդրիայի եկեղեցու երեցն էր, 3-րդ և 4-րդ դարի սկզբին: Նա պնդում էր, որ Հիսուսը հավիտենական էր, բայց ոչ Աստված (Հոր նույն էությունը չուներ), հնարավոր է հենվելով Առակաց 8:22-31-ի վրա: Նրան մարտահրավեր է նետում Ալեքսանդրիայի եպիսկոպոսը, և վեճը սկսում է (մ.թ. 318), որն էլ շարունակվում է երկար տարիներ: Արիոսականությունը դարձավ նույնիսկ հավատքի պաշտոնական խորհրդանիշը արևելքի եկեղեցում: Մ.թ. 325-ին Նիկիայի Ժողովը դատապարտեց Արիոսին և հռչակեց Հոր և Որդու աստվածության լիարժեք հավասարությունը:

Արիստոտել. Հին հունական փիլիսոփաներից էր, Պլատոնի աշակերտը և Ալեքսանդր Մակեդոնացու ուսուցիչը: Նրա ներգործությունը մինչև այսօր զգացվում է Ժամանակակից ուսումնասիրություններից շատերի մեջ, քանի որ նա շեշտը դնում էր հետազոտության և դասակարգման միջոցով կատարվող գիտության վրա: Սա գիտական մեթոդների սկզբունքներից մեկն է:

Աստվածաշնչյան հեղինակություն. Այս տերմինը օգտագործվում է շատ մասնագիտացված նշանակությամբ: Այն սահմանվում է որպես մի հասկացողություն, թե իր օրերում բնագրի հեղինակն ինչ է ասել և մեր օրերում այդ նշմարությունը ինչպես կիրառել: Աստվածաշնչյան հեղինակությունը սովորաբար սահմանվում է որպես Աստվածաշունչը դիտարկելու ձև, որպես մեր միակ հեղինակավոր ուղեցույց: Ինչևէ, լայն տարածում գտած, սխալ մեկնաբանությունների յուշի ներքո, ես սահմանափակել եմ Աստվածաշնչի գաղափարը թարգմանված պատմական-քերականական մեթոդով:

Անհատական կարծիքի հաստատում աստվածաշնչյան տեքստի միջոցով. Սուրբ Գրքի մեկնության կիրառություն, երբ մեջբերվում է որևէ համար առանց ուշադրություն դարձնելու անմիջական տեքստին կամ գրական հատվածի ընդհանուր կոնտեքստին: Արդյունքում մոռացվում են բնագրի հեղինակի մտադրությունները և հաճախ փորձ է կատարվում հաստատելու որևէ անձնական կարծիք իր աստվածաշնչյան հեղինակությամբ:

Բնագրի հեղինակը. Սա վերաբերում է Սուրբ Գրքի իրական հեղինակներին՝ գրողներին:

Բնագրեր. Սա Աստվածաշնչի բնօրինակի գրվածքներին տրված անունն է: Այս բնագիր, ձեռագիր մատյանները բոլորն էլ կորել են: Միայն օրինակների օրինակներն են մնացել: Սա երբայերեն և հունարեն ձեռագրերի և հին տարբերակների շատ տեքստային տարբերակների աղբյուրն է:

Բիզայի հին ձեռագրերի ժողովածու. 6-րդ դարի հունարեն և լատիներեն ձեռագիր է, որը հայտնի է որպես «D» : Պարունակում է բոլոր Ավետարանները և Գործք Առաքելոցը, ինչպես նաև մի քանի թղթեր: Այն պարունակում է շատ լրացումներ, որոնք արվել են դպիրների կողմից: Սա հիմք է հանդիսացել «Textus Receptus» հիմնական հունարեն ձեռագրի համար, որն էլ իր հերթին հիմք է հանդիսացել անգլերենի King James Նոր Կտակարանի թարգմանության համար:

Բարձր քննադատություն. Աստվածաշնչյան մեկնության ընթացակարգը, որը կենտրոնանում է աստվածաշնչյան առանձին գրքի պատմական կոնտեքստի և գրական կառուցվածքի վրա:

Բառացի թարգմանություն. Սա սերտողության միջոց է, որը թույլ է տալիս մարդկանց, որոնք չեն տիրապետում աստվածաշնչյան լեզվին, վերլուծել նրա նշանակությունը և կառուցվածքը: Սա բառացի թարգմանություն է, որը գրվում է աստվածաշնչյան լեզվով անմիջապես բնագրի տեքստի տակ: Այս ձևը, ինչպես նաև վերլուծական բառարանը, մեզ տալիս է Աստվածաշնչի հին երբայերեն և հունարեն տեքստի հիմնական նշանակությունները և ձևերը:

Բառացի ընթերցանություն. Եվս մեկ անուն հերմենևտիկական պատմական և կենտրոնացած տեքստի մեթոդի համար, որը զարգացել է Անտիոքում: Սա նշանակում է, որ մեկնաբանությունը ներառում է մարդկային լեզվի սովորական և ակնհայտ իմաստ, չնայած ընդունում է պատկերավոր լեզվի առկայությունը:

Բնական հայտնություն. Մարդու համար Աստծո հայտնության կատեգորիաներից մեկն է: Այն ներառում է բնության երևույթների հաջորդականությունը (Հռոմ.1:19-20) և բարոյական խղճմտանքը (Հռոմ.2:14-15): Այդ մասին խոսվում է Մաղմ.19:1-6 և Հռոմ.1-2: Այն տարբերվում է հատուկ

հայտնությունից, որը Աստծո հատուկ հայտնությունն է Աստվածաշնչում և կարևորագույնը՝ Հիսուս Նազովրեցու մեջ:

Այս աստվածաբանական կատեգորիան կրկին վերընդգծվել է «հին աշխարհ» քրիստոնյա գիտնականների շարժման կողմից (օր.՝ Հյու Ռոսի գրվածքները /Hugh Ross/): Նրանք կիրառում են այս կատեգորիան, որպեսզի հաստատեն, որ ցանկացած ճշմարտություն Աստծուց է բխում: Բնությունը բաց դուռ է Աստծո մասին գիտություն ունենալու համար. այն տարբերվում է հատուկ հայտնությունից (Աստվածաշունչ): Այդպիսով ժամանակակից գիտությունը կարող է հետազոտել բնության երևույթների հաջորդականությունը: Իմ կարծիքով, սա նոր հիանալի հնարավորություն է վկայելու Աստծո մասին ժամանակակից արևմտյան գիտական աշխարհում:

Գնոստիցիզմ. Այս հերետիկոսության՝ աղանդի մասին ունեցած մեր իմացության մեծ մասը գալիս է 2-րդ դարի գնոստիկ գրվածքներից: Սակայն համապատասխան գաղափարներ գոյություն են ունեցել դեռևս առաջին դարում (և դրանից առաջ):

2-րդ դարի գնոստիկներ Վալենտինյանի և Կերնիթիանի որոշ հաստատված հավատամքներ այսպիսիներն են՝ (1) նյութն ու հոգին հավասարապես հավիտենականն են (օնթոլոգիական դյուալիզմ): Նյութը չար է, հոգին՝ բարի: Աստված, որ Հոգի է, չի կարող ուղղակիորեն ներգրավված լինել մեղավոր նյութի ձևավորման գործընթացում; (2) Աստծո և նյութի միջև կան էմանացիաներ (*eons* կամ հրեշտակային մակարդակներ): Դրանցից վերջինը կամ ամենացածրը ՀԿ-ի Եհովան էր, որ ստեղծեց տիեզերքը (*kosmos*): (3) Հիսուսը էմանացիա էր, ինչպես Եհովան, բայց ավելի բարձր մակարդակի վրա, ավելի մոտ ճշմարիտ Աստծուն: Ոմանք Նրան ամենաբարձրն էին համարում, բայց Աստծուց ցածր, և անշուշտ ոչ մարմնացած Աստված (տես՝ Հովհ. 1:14): Քանի որ նյութը չար է, Հիսուսը չէր կարող ունենալ մարդկային մարմին և Աստված լինել: Նա հոգևոր ուրվական էր (տես՝ 1 Հովհ. 1:1-3; 4:1-6); և (4) փրկությունը հասնում է Հիսուս Քրիստոսին հավատալով, գումարած հատուկ գիտություն, որն ունեն միայն հատուկ մարդիկ: Գիտությունը (ծածկագրեր) անհրաժեշտ էր, որպեսզի անցնեիր երկնային ոլորտների միջով: Հրեական օրինապաշտությունը նույնպես անհրաժեշտ էր՝ Աստծուն փնտրելու համար:

Գնոստիկ սուտ վարդապետները երկու հակադիր էթիկական համակարգերի կողմնակիցներ էին. (1) ոմանք կարծում էին, որ մարդու ապրելակերպը ոչ մի բանով կապ չունի փրկության հետ: Նրանց համար փրկությունն ու հոգևորությունը սահմանափակվում էին գաղտնի գիտությամբ (ծածկագրեր), որը կատարվում էր հրեշտակային մարմինների միջոցով (*eons*): կամ (2) ուրիշների համար էլ ապրելակերպը խիստ անհրաժեշտ էր փրկության համար: Նրանք համարում էին, որասկետիկ ապրելակերպը ապացույց էր ճշմարիտ հոգևորության:

Գրական ժանր. Հատուկ ձևեր, որոնք կարող են ինֆորմացիա փոխանցել մարդկային հասարակությանը, ինչպես օրինակ՝ պոեզիան կամ պատմական արձակը: Գրականության յուրաքանչյուր տեսակ մեկնաբանվում է հատուկ հերմենևտիկական սկզբունքների վրա, ընդհանուր սկզբունքների հիման վրա, որոնք վերաբերում են ցանկացած գրավոր գրականությանը:

Գրական բաժին. Սա վերաբերում է աստվածաշնչյան գրքի գլխավոր մտքի բաժանումներին: Այն կարող է կազմված լինել մի քանի համարներից, պարբերություններից կամ գլուխներից: Այն ինքնաբավ տեքստ է կենտրոնական թեմայով:

Դեդուկտիվ. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որը ընդհանուր սկզբունքներից գնում է դեպի առանձին կիրարկումներ: Սա հակառակ է ինդուկտիվ դատողությանը, որն արտահայտում է գիտական մեթոդը, որը առանձին դեպքերի դիտարկումներից անցում է կատարում դեպի ընդհանուր եզրահանգումները (տեսություններ):

Դիալեկտիկական. Տրամաբանելու, դատողականության մեթոդ, որտեղ թվացյալ հակասությունները կամ պարադոքսները գտնվում են լարվածության մեջ՝ փնտրելով համաձայնեցված պատասխան, որն իր մեջ ամփոփում է պարադոքսի երկու կողմերն էլ: Աստվածաշնչյան շատ վարդապետություններ ունեն դիալեկտիկական՝ բարբառային գույգեր. նախասահմանություն – ազատ կամք; ապահովություն – հարատևություն; հավատք – գործեր; Աստծուն ընդունելու որոշում – աշակերտ լինել; Քրիստոնեական ազատություն – Քրիստոնեական պատասխանատվություն:

Դինամիկ համագոր. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսություն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես շարունակություն «բառ-առ-բառ» համապատասխանության, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում» որին տրվում է իմաստ, որոշ չափով ուշադրություն դարձնելով

վերափոխությանը կամ բնագրի բառերին: Այս տեսությունների միջև գոյությունունի» դինամիկ համագործի» տեսությունը, որը լրջորեն է մոտենում բնագրի տեքստին, սակայն թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ձևեր և դարձվածքներ: Տարբեր տեսությունների շուրջ իրոք լավ քննարկում կարելի է գտնել Գորդոն Ֆիլի և Դուգլաս Սոյուլարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջական իմաստով» (*Fee and Stuart's How to Read the Bible For All Its Worth*), էջ՝ 35 և Ռոբերտ Բրատչերի «Ժամանակակից անգլերեն Աստվածաշնչի թարգմանության ներածությունը» գրքում (*Robert Bratcher's Introduction to the TEV*):

ԵՀՌՎԱ. Հին Կտակարանում սա Աստծո Ուխտի անունն է: Սահմանումը գտնվում է Ելից 3:14-ում: Այն երբայերեն «լինել» բայի ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ձևն է: Հրեաները վախենում էին արտասանել այդ անունը, որ գուր տեղը չլիներ, ուստի այն փոխարինեցին երբայերեն *Adonai*, «Տեր» բառով: Ահա, թե ինչպես է թարգմանվում այս ուխտի անունը շատ լեզուներում:

Երկիմաստություն. Տեքստի անհասկանալի մասեր, որտեղ գրավոր փաստաթղթում կամ ընթերցանության երկու կամ ավելի հնարավորություններ, կամ երբ երկու կամ ավելի բաներ են առկա միառժամանակ: Հնարավոր է, որ Հովհաննեսը դիտավորյալ օգտագործել է երկիմաստ արտահայտություններ:

Չուզահեռ հատվածներ. Սրանք մաս ենկազմում այն գաղափարի, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է և, ուստի, ինքն է լավագույնս օգնում մեզ իրեն մեկնաբանելու և բայանսի բերելու պարագրքսալ ճշմարտությունները: Այն նաև օգտակար է, երբ մեկը փորձում է մեկնաբանել անհասկանալի կամ բազմիմաստ հատվածները: Նրանք նաև օգնում են գտնել տվյալ թեմայի շուրջ ամենահստակ հատվածները, ինչպես նաև բոլոր մյուս սուրբգրային հատվածները նույն թեմայի վերաբերյալ:

Էյզեզետիկա. Էյզեզետիկայի հակադարձը: Եթե Էյզեզետիկան հիմնված է հեղինակների միտումների փնտրության վրա, ապա Էյզեզետիկան ենթադրում է տեքստի մեջ այնպիսի մտքի կամ կարծիքի ներմուծում, որը խորթ է հեղինակին:

Էկզեզետիկա. Հատուկ տերմին է, որը նշանակում է որոշակի հատվածի տեքստի մեկնաբանություն, բառացի՝ այդ հատվածի իրական մտքի պեղում. այսինքն հասկանալի հեղինակի մտադրությունները պատմական իրավիճակի, գրական համատեքստի՝ հատվածի, սինտաքսիսի՝ քերականության և բառերի նշանակությունների լույսի ներքո:

Էկլեկտիկա. Այս տերմինի կիրառությունը պայմանավորված է տեքստի քննադատության հետ: Այն ենթադրում է տեքստերի ընթերցանությունից տարբեր ձեռագրերի ավանդույթների հետ կապված տարբերակների դուրսբերում, որպեսզի ի հայտ գա այն տեքստը, որն ավելի մոտ կգտնվի բնագրին: Այս դեպքում հերքվում է այն կարծիքը, որ հունարեն ձեռագրերի ամեն խումբ ունի մի բնօրինակ:

Էթիմոլոգիա. Բառերի ուսումնասիրման ոլորտ, որտեղ ի հայտ է բերվում բառի սկզբնական նշանակությունը: Մեկնաբանության ժամանակ բառերի էթիմոլոգիան ամենակարևորը չէ, ավելի կարևոր է նրանց նշանակությունը և կիրառությունը որոշալի դարաշրջանի համար:

Թալմուդ. Գրքերի ժողովածուի անվանումն է, որտեղ շարադրված է հրեական բանավոր ավանդույթը: Հրեաները հավատում են, որ այն բանավոր կերպով տրվել է Աստծո կողմից Մովսեսին Սինա լեռան վրա: Իրականում սրանք հրեա վարդապետների իմաստուն ասացվածքներն են, որոնք հավաքվել են տարիների ընթացքում: Գոյություն ունենթալմուդի երկու տարբեր գրավոր ավանդույթներ՝ Բաբելոնյանը և ավելի կարճը՝ թերի մնացած Պաղեստինյանը:

Թեմայեցություն/Parochialism. Սա վերաբերում է այն հիմքերին, որոնք միացվում են տեղական աստվածաբանական, մշակութային համատեքստին: Սրանք չեն ընդունում աստվածաշնչյան ճշմարտության կամ նրա կիրառության միջմշակութային բնությունը:

Թորա. Երբայերեն տերմին է, որը նշանակում է «ուսուցում, ուսմունք»: Այսպես պաշտոնական կոչվել են Մովսեսի գրքերը (Շննդոցից մինչև 2 Օրինաց): Հրեաների համար սա երբայական կանոնի ամենահեղինակավոր մասն է հանդիսանում:

Թույլ քննադատություն. Տե՛ս «Տեքստային քննադատություն»:

Ժանր. Փրանսերեն տերմին, որը նշանակում է գրական ատեղծագործության տարբեր տեսակներ: Աստվածաշնչյան գրական ձևերը բաժանվում են մի քանի կատեգորիաների, որոնք ունեն ընդհանուր առանձնահատկություններ՝ պատմական արձակ, պոեզիա, առակներ, ապոկալիպտիկ՝ վախճանաբանական և օրենսդրություն:

Իդիոմա (դարձվածք). Արտահայտություն, որը տվյալ մշակույթին համապատասխան ունի հատուկ նշանակություն, որը կապ չունի առանձին վերցրած բառերի սովորական իմաստի հետ: Ժամանակակից օրինակներ՝ «դա սարսափելի լավն էր» կամ «դու պարզապես սպանում ես ինձ»: Աստվածաշունչը նույնպես պարունակում է այս տեսակի արտահայտություններ:

Իմաստային դաշտ. Սա վերաբերում է իմաստի ամբողջ ոլորտին, կապված կոնկրետ բառի հետ: Հիմնականում սրանք տարբեր համատեքստերի մեջ բառի ունեցած իմաստային երանգներն են:

Իմաստասիրական գրականություն. Գրական ժանր, տարածված հին Մերձավոր Արևելքում (և ժամանակակից աշխարհում): Նպատակն է երիտասարդ սերնդին պոեզիայի, առակի կամ ակնարկի միջոցով սովորեցնել կյանքի իմաստությունը: Այն ավելի ուղղված է առանձին անհատների, քան խմբային համայնքի: Հիմնված չէ պատմական ակնարկների վրա, այլ կյանքի փորձառությունների և դիտարկումների վրա: Աստվածաշնչում Հոբից մինչև Երգ Երգոցը ենթադրվում է ԵՀՈՎԱՅԻ ներկայությունը և Նրան երկրպագությունը, սակայն կրոնական աշխարհայացքը հստակ չի արտահայտվում:

Որպես ժանր, այն արտացոլում է ընդհանուր ճշմարտությունները: Բայց այս ժանրը չի կարող օգտագործվել ցանկացած կոնկրետ իրավիճակում: Դրանք ընդհանուր մտքեր են, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են անհատական իրավիճակներին:

Իմաստունները համարձակվել են բարդ հարցեր տալ կյանքի վերաբերյալ: Հաճախ նրանք մարտահրավեր են նետել ավանդական կրոնական հայացքներին (Հոբ և Ժողովող): Այդպիսով նրանք հավասարակշռություն և լարվածություն են ստեղծում կյանքի ողբերգությունների հետ կապված հեշտ պատասխանների միջև:

Ինդուկտիվ. Տրամաբանական դատողության մեթոդ է, որը մասնավորից տանում է դեպի ընդհանուր: Այն ժամանակակից գիտության էմպիրիկական՝ փորձով հաստատված մեթոդ է: Հիմնականում սա Արիստոտելի մոտեցումն է:

Լուսավորում. Սա այն հասկացության անունն է, որով Աստված խոսում է մարդկանց: Այս հասկացության լիարժեք նշանակությունը արտահայտվում է երեք տերմինների միջոցով՝ 1. հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ; 2. ներշնչանք՝ Նա տվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի արձանագրեն դրանք մարդկության համար; և 3. լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունն Իր մասին:

Կանխակարծիք. Որևէ թեմայի շուրջ նախօրոք ձևավորված պատկերացում: Հաճախ մենք ունենք կարծիքներ կամ դատողություններ ինչ որ հարցերի շուրջ մինչև Սուրբ Գրքին անդրադառնալը: Այս կանխակարծիքը հայտնի է նաև որպես հակվածություն, պնդում, նախօրոք ձևավորված կարծիք:

Կանոն. Տերմինը օգտագործվում է այն գրվածքների համար, որոնք անկասկած համարվում են ներշնչված: Այն թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանի գրքերի համար է:

Հակադիր. Երեք բնութագրական տերմիններից մեկն է, որը ցույց է տալիս երբայերեն պոեզիայի տողերի միջև գոյություն ունեցող կապը: Այն վերաբերում է պոեզիայի տողերին, որոնք իմաստային առումով իրար հակադիր են (տես՝ Առակ.10:1; 15:1):

Համաբարբառ. Աստվածաշունչը ուսումնասիրելու միջոց: Այստեղ իրականում տրված են Հին և Նոր Կտակարաններից յուրաքանչյուր բառ: Սա օգնում է մեզ (1) սահմանել երբայերեն կամ հունարեն բառը, որը ընկած է հատուկ բառի թարգմանության ետևում, (2) համեմատել հատվածները, որտեղ օգտագործվում են նույն երբայերեն կամ հունարեն բառերը, (3) ի հայտ բերել հատվածներ, երբ երկու տարբեր երբայերեն կամ հունարեն տերմիններ թարգմանվում են նույն բառով, (4) տեսնել տարբեր բառերի կիրառությունը տարբեր գրքերում կամ տարբեր հեղինակների մոտ, (5) Աստվածաշնչում գտնել որոշակի անհրաժեշտ հատված (տես՝ Ուոլթեր Բլարքի *Ինչպես օգտագործել հունարեն Նոր Կտակարանի օժանդակ ձեռնարկը* /Walter Clark's *How to Use New Testament Greek Study Aids*/ էջ՝ 54-55):

Հայտնություն. Սա այն հասկացության անունն է, որով Աստված խոսում է մարդկանց: Այս հասկացության լիարժեք նշանակությունը արտահայտվում է երեք տերմինների միջոցով՝ 1. հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ, 2. ներշնչանք՝ Նա տվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի դրանք արձանագրեն մարդկության համար, և 3. լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունն Իր մասին:

Հերմենևտիկա. Սկզբունքներ նշանակող հատուկ տերմին, որն օգտագործում են մեկնաբանության ժամանակ: Սա թե՛ յուրահատուկ ուղեցույցների շարք է և թե՛ արվեստ, պարզև: Աստվածաշնչյան հերմենևտիկան սովորաբար բաժանվում է երկու կատեգորիաների՝ ընդհանուր սկզբունքներ և հատուկ սկզբունքներ: Դրանք կապված են Աստվածաշնչում եղած գրական տարբեր տեսակների հետ: Յուրաքանչյուր տեսակ (ժանր) ունի իր հատուկ սկզբունքը, բայց մեկնաբանության մի քանի ընդհանուր ենթադրությունների և ընթացակարգերի հիման վրա:

Հոմանիշ. Սա վերաբերում է այն բառերին, որոնք իմաստով նույնն են կամ համընկնում են (չնայած իրականում երկու բառերի իմաստաբանական մասը երբեք ամբողջությամբ չեն համընկնում): Նրանք իմաստով այնքան մոտ են իրար, որ կարող են նախադասության մեջ իրար փոխարինել՝ իմաստը չկորցնելով: Այս տերմինը նաև կիրառվում է հին եբրայերեն պոետիկ գուգահեռների երեք տեսակներից մեկի համար: Այս իմաստով, այն նշանակում է երկու պոետիկ տող, որոնք արտահայտում են նույն ճշմարտությունը (տես՝ Սաղմ.103:3):

Ձեռագիր. Այս տերմինը վերաբերում է հունարեն Նոր Կտակարանի տարբեր օրինակներին: Սովորաբար դրանք բաժանվում են տարբեր տեսակների՝ (1) նյութը, ինչի վրա որ գրվել են (պապիրուս, կաշի) կամ (2) գրության ձևը (բոլորը մեծատառերով կամ սահուն ձեռագիր): Հակիճ կոչվում է «MS» (եզակի) կամ «MSS» (հոգնակի):

Մագորեթիկ տեքստ. Հին Կտակարանի եբրայերեն ձեռագիր է (9-րդ դար): Դա արվել է հայտնի հրեա գիտնականների կողմից, որը պարունակում է ձայնավոր հնչյուններ և այլ տեքստային նշումներ: Դրանք հիմք են հանդիսանում Հին Կտակարանի թարգմանության համար: Նրա տեքստը պատմականորեն հաստատված է եղել հին եբրայերեն ձեռագրերով, հատկապես Եսայի մարգարեությունը, հայտնի որպես Մեռյալ Ծովի գլանաձև մագաղաթներ: Հասպավումն է՝ «MT» :

Մարդակերպություն. /*Anthropomorphic*/ «Մարդկային էության հետ առնչվող առանձնահատկություններ ունենալու» նշանակությունն ունի: Այս տերմինը կիրառվում է նկարագրելու Աստծո մասին արտահայտվող մեր կրոնական լեզուն: Տերմինն առաջացել է հունարեն մի բառից, որը նշանակում է մարդկություն: Սա նշանակում է, որ մենք խոսում ենք Աստծո մասին որպես մարդու: Աստված նկարագրվում է որպես ֆիզիկական, սոցիոգիական և հոգեբանական այնպիսի տերմիններով, որոնք առնչվում են մարդկանց հետ և հասկանալի են մարդու համար (տես՝ Ծանոթ.3:8; 3 Թագ.22:19-23): Իհարկե, սա միայն համանմանություն է: Այնուամենայնիվ մարդկային տերմիններից և կատեգորիաներից գատ ուրիշ ոչինչ չէր կարող մեզ համար կիրառելի լինել: Հետևաբար Աստծո մասին ունեցած մեր գիտությունը չնայած ճիշտ է, բայց և սահմանափակ:

Մեկնաբանություն. Աստվածաշունչը ուսումնասիրող հատուկ գիրք: Այն ներկայացնում է աստվածաշնչյան գրքի ընդհանուր համատեքստը: Այս բացատրում է գրքի յուրաքանչյուր բաժնի նշանակությունը: Որոշ մեկնաբանություններ հատուկ ուշադրություն են դարձնում ճշմարտության կիրառությանը, ուրիշներն էլ տեքստը դիտարկում են տարբեր հատուկ հարցերի օգնությամբ: Այս գրքերը օգտակար են, սակայն պետք է կիրառվեն միայն ինքնուրույն ընդհանուր սերտողությունից հետո: Մեկնաբանի մեկնությունները երբեք չպետք է ընդունվեն առանց քննադատության: Սովորաբար օգտակար է համեմատել մի քանի մեկնություններ, որոնց հեղինակները ունեն աստվածաբանական տարբեր տեսանկյուններ:

Մեռյալ Ծովի մագաղաթները. Սա վերաբերում է մի շարք եբրայերեն և արամերեն հին տեքստերի, որոնք գտնվել են Մեռյալ ծովի մոտակայքից 1947թ-ին: Դրանք պատկանում էին առաջին դարի հուդայական ադանդավորների կրոնական գրադարաններին: Հռոմի տիրապետության ճնշումը և 60-ականների կրոնական պատերազմները պատճառ հանդիսացան, որ նրանք մագաղաթները հերմետիկ տեղավորեն գլանաձև կավե ամանների մեջ և թաքցնեն քարանձավներում ու հորերում: Այս մագաղաթները օգնել են մեզ հասկանալու առաջին դարի պատմական իրադրությունը Պաղեստինում

և հաստատել են Մագորեթիկ ձեռագիրը, որպես շատ ստույգ փաստաթուղթ, համենայնդեպս համեմատած մեր դարասկզբի հետ: Հապավումն է՝ «DSS» :

Մուրատորիան հատվածներ. Սա ՆԿ-ի կանոնի գրքերի ցանկն է: Գրվել է Հռոմում մինչև մ.թ. 200թ.: Գարունակում է նույն 27 գրքերը, ինչպես Բաղդադական ՆԿ-ում: Այն պարզ ցույց է տալիս, որ հռոմեական կայսրության տարբեր տեղերում գտնվող տեղական եկեղեցիները «փորձնականում» կանոն են որոշել մինչև 4-րդ դարի գլխավոր եկեղեցական խորհուրդը:

Նախատիպ. Մեկնաբանության յուրահատուկ ձև է: Մովորաբար պարունակում է ՆԿ-յան ճշմարտություն, որը գտնվում է ՀԿ-յան հատվածներում նույնատիպ խորհրդապատկերով: Հերմենևտիկայի այսպիսի տեսակը Ալեքսանդրիան մեթոդի գլխավոր տարրն է եղել: Եվ քանի որ մեկնաբանության այսպիսի մեթոդը հեշտ է աղավաղել, պետք է սահմանափակել դրա կիրառությունը կոնկրետ օրինակներով՝ արձանագրված ՆԿ-ում:

Նեստորականություն. 5-րդ դարում Նեստորը Կոնստանդնուպոլսի նախահայրերից էր: Նա սովորել է Սիրիայի Անտիոքում և պնդել է, որ Հիսուսն ուներ երկու բնություն՝ լիարժեք մարդ և լիարժեք Աստված: Այդ կարծիքը տարբերվում էր Ալեքսանդրիան դպրոցի՝ միայն մեկ բնություն, ուղղափառ կարծիքից: Նեստորի հիմնական մտահոգությունը Մարիամին տրված «Աստվածամայր» տիտղոսն էր: Նեստորի ուսմունքը հակասում էր ալեքսանդրիացի Կիրիլին և ըստ էության, իր իսկ սեփական Անտիոքյան դպրոցի ուսմունքին: Անտիոքը աստվածաշնչյան մեկնաբանության պատմա-քերականական-տեքստային մոտեցման կենտրոնն էր, իսկ Ալեքսանդրիան՝ մեկնաբանության քառապատիկ (+ այլաբանական) դպրոցը: Նեստորը պաշտոնագուրկ է լինում և վտարվում:

Ներշնչանք. Աստված խոսել է մարդու հետ աստվածաշնչյան հեղինակների միջոցով, ովքեր հստակ և ճշգրտորեն արձանագրել են Իր հայտնությունը: Մովորաբար ամբողջ գաղափարը արտահայտվում է երեք տերմինով՝ 1. հայտնություն՝ Աստված գործել է և շարունակում է ակտիվորեն գործել մարդկության պատմության մեջ; 2. ներշնչանք՝ Նա տվել է Իր գործերի և դրանց նշանակության ճշգրիտ մեկնությունը ընտրյալ մարդկանց, որպեսզի արձանագրեն դրանք մարդկության համար; և 3. Լուսավորում՝ Նա ուղարկեց Իր Հոգին, որպեսզի օգնի մարդկությանը հասկանալու Աստծո հայտնությունը Իր մասին:

Նկարագրող/պատկերավոր/լեզու. Կիրառվում է դարձվածքների հետ, որոնց օգնությամբ գրվել է ՀԿ-ը: Այն խոսում է մեր աշխարհի մասին այնպես, ինչպես ընկալվում է մեր հինգ զգայարաններով: Դա գիտական նկարագրություն չէ և չպետք է լինի:

Ճարահյուսություն /Syntax/. Հունարեն տերմին է, որը վերաբերում է նախադասության կառուցվածքին, թե ինչպես են վերջինիս տարբեր մասերը ավարտուն միտք ստանալու համար միացված իրար:

Ճեղություն/հակվածություն. Ուժեղ հակվածություն որոշակի կարծիքի կամ տեսակետի հանդեպ: Մտածելակերպ, որն անհնարին է դարձնում կոնկրետ թեմայի կամ դիրքորոշման խտրականությունը:

Ոգեշնչում. Տեքստին խորհրդանշական իմաստ տալը: Աստվածաշնչի այլաբանական մեկնության հոմանիշն է, քանի որ այստեղ նույնպես անտեսվում է հատվածի պատմական և գրականական համատեքստը, իսկ մեկնաբանությունը հիմնվում է այլ չափանիշների վրա:

Որդեգրություն. Աստծո և Հիսուսի միջև եղած կապի վերաբերյալ վաղ կարծիքներից մեկն էր: Այն պնդում էր, որ Հիսուսը սովորական մարդ էր բոլոր առումներով և հատուկ որդեգրվել էր Աստծո կողմից Իր մկրտության պահին (տես՝ Մատթ.3:17; Մարկ.1:11) կամ հարության ժամանակ (տես՝ Հռոմ.1:4): Հիսուսն այնպիսի օրինակելի կյանքով ապրեց, որ Աստված ինչ-որ պահի (մկրտություն, հարություն) որոշեց որդեգրել Նրան որպես Իր «որդի» (տես՝ Հռոմ.1:4; Փիլ.2:9): Սա վաղ եկեղեցու և 8-րդ դարի մարդկանց փոքրաքանակ զանգվածի տեսակետն էր: Ոչ թե Աստված մարդ դարձավ (մարմնացում) այլ ընդհակառակը՝ մարդը դարձավ Աստված:

Դժվար է ասել, որ Հիսուսը՝ Որդի Աստվածը, Հավիտենական Աստվածը, վարձատրվեց կամ փառավորվեց Իր օրինակելի կյանքի համար: Եթե Նա արդեն Աստված էր, ինչպես կարող էր Նա վարձատրվել: Եթե Նա ուներ հավիտենական աստվածային փառք, ինչպես կարող էր ավելի մեծ պատվի արժանանալ: Չնայած դժվար է մեզ համար սա հասկանալը, Հայրը ինչ-որ կերպով պատվեց Հիսուսին այն ժամանակ, երբ Հիսուսը կատարելապես կատարեց Հոր կամքը:

Պապիրուս. Նյութի մի տեսակ, որի վրա գրում են. կիրառվել է Եգիպտոսում: Այն պատրաստում էին գետի եղեգից: Այդ նյութի վրա գրվել են հունարեն ՆԿ-ի հնագույն օրինակները:

Պարադոքս. Սա վերաբերում է այն ճշմարտություններին, որոնք թվում է, թե իրար հակասող են, սակայն երկուսն էլ ճշմարտություն են, չնայած նրանց միջև կա ներքին լարվածություն: Պարադոքսը փոխանցում է ճշմարտությունը՝ ներկայացնելով դրա երկու կողմերն էլ: Շատ աստվածաշնչյան ճշմարտություններ ներկայացված են պարադոքսալ (կամ բարբառային) զույգերով: Աստվածաշնչյան ճշմարտությունները առանձին աստղեր չեն, այլ համաստեղություններ, որոնք ձևավորել են առանձին պատկեր:

Պարբերություն. Սա արձակի հիմնական մեկնաբանության գրական բաժինն է: Ունի մի կենտրոնական միտք և դրա զարգացումը: Եթե մնանք այդ կենտրոնական մտքին հենված, ապա չենք փոքրացնի, մեծացնի կամ բաց թողնի բնագրի հեղինակի մտադրությունը՝ նպատակը:

Պատոճ. Հին Հունաստանի փիլիսոփաներից մեկն է: Նրա փիլիսոփայությունը մեծ ազդեցություն է թողել վաղ եկեղեցու վրա Ալեքսանդրիայի և Եգիպտոսի գիտնականների միջոցով, իսկ ավելի ուշ Օգոստինոսի միջոցով: Պատոճը պնդում էր, որ երկրի վրա ամեն ինչ երևակայական է և հանդիսանում է հոգևոր աշխարհի բնօրինակը: Աստվածաբանները հետագայում Պատոճի «գաղափարները՝ ոճը» հավասարեցնում էին հոգևոր արքայությանը:

Ռաբբիական Հուդայականություն. Շրջան, որը սկսվել է բաբելոնյան գերության ընթացքում (Ք. Ա. 586-538): Երբ քահանաների և Տանարի ազդեցությունը դադարեց, հրեաների կյանքը սկսեց ձևավորվել տեղական ժողովարանների շուրջ: Հրեական մշակույթի, հաղորդակցության, երկրպագության և աստվածաշնչյան ուսմունքների այս կենտրոնները դարձան ազգային կրոնական կյանքի կիզակետը: Հիսուսի օրոք «դպիրների այս կրոնը» հավասարագոր էր քահանաների կրոնին: Մ. թ. 70-ի Երուսաղեմի անկումից հետո, դպիրների կրոնը, որտեղ գերիշխում էին փարիսեցիները, սկսեց վերահսկել Հրեաների կրոնական կյանքը: Բնորոշվում է Թորայի գործնական, օրինապաշտական մեկնաբանությամբ, ինպես որ բացատրում է բանավոր ավանդույթը (Թավմուդը):()

A priori Սա հիմնականում հոմանիշ է «կանխակարծիք» տերմինին: Այն ենթադրում է նախապես ընդունված սահմանումների, սկզբունքների կամ դիրքերի հիման վրա քննարկում, որոնք ընդունվում են որպես ճշմարտություն: Սա այն է, ինչն ընդունվում է առանց քննելու և վերլուծության:

Սեպտուագինտա. Այսպես է կոչվում եբրայերեն ՀԿ-ի հունարեն թարգմանությունը: Ավանդույթն ասում է, որ այն գրվել է 70 օրում, 70 հրեա գիտնականների կողմից Եգիպտոսի Ալեքսանդրիան գրադարանի համար: Գրվելու ընդունված տարեթիվը Ք. Ա. 250 (իրականում թարգմանության համար, ավելի շուտ, պահանջվել է ավելի քան հարյուր տարի): Այս թարգմանությունը ունի մեծ նշանակություն, քանի որ (1) մեզ է տալիս հին տեքստը, որը կարող ենք համեմատել Մագորեթիկ եբրայերեն տեքստի հետ; (2) մեզ ցույց է տալիս հրեական մեկնաբանության վիճակը Ք. Ա. 3-րդ և 2-րդ դարերում; (3) մեզ է տալիս հրեական մեսիական հասկացողություն՝ նախքան Հիսուսին կմերժելին: Հապավումն է «LXX»:

Սինայական հին ձեռագրերի ժողովածու /Codex Sinaiticus/. Մ.թ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Այն գտնվել է գերմանացի գիտնական Թիստինգորֆի կողմից Ջերեկ Մուսա լեռան վրա գտնվող Մուրբ Եկատերինայի վանքից, որն ըստ ավանդության համընկում է Սինա լեռան հետ: Այս ձեռագիրը հայտնի եբրայերեն այբուբենի առաջին ճ (aleph) տառով: Նրա մեջ ընդգրկված են թե՛ Հին Կտակարանը և թե՛ ամբողջ Նոր Կտակարանը: Այն մեր ունեցած ամենահին ունցիալ (մեծատառերով գրված) ձեռագիրն է:

Սինթետիկ. Եբրայերեն պոեզիայի տեսակներին պատկանող երեք տերմիններից մեկն է: Այս տերմինը վերաբերում է պոեզիայի տողերին, որոնք ընդհանուր առմամբ կառուցվում են մեկը մյուսի վրա. երբեմն այսպիսի պոեզիան անվանում են «կուլմինացիոն» (տես՝ Մադմ.19:7-9):

Սիստեմատիկ աստվածաբանություն. Սա մեկնաբանության մի փուլ է, որը փորձում է աստվածաշնչյան ճշմարտությունները իրար հետ համակցել ավելի միահյուսված և ռացիոնալ կերպով: Ունի ավելի տրամաբանական, քան թե պատմական բնույթ, և ներկայացնում է Զրիստոնեական աստվածաբանությունը ըստ դասակարգման (Աստված, մարդ, մեղք, փրկություն և այլն):

Սուրբ Գրքի համանմանություն. Սա նշանակում է, որ ամբողջ Աստվածաշունչը ներշնչված է, հետևաբար, նրա տարբեր տեքստերը չեն հակասում միմյանց, այլ լրացնում են: Այս նախապայամանը հիմք է աստվածաշնչյան տեքստը մեկնաբանելու համար օգտագործելու գույահեռ հատվածներ:

Սփյուռք. Հատուկ հունարեն տերմին է, որն օգտագործում էին Պաղեստինի հրեաները այն հրեաների համար, ովքեր ապրում էին Խոստացյալ Երկրի աշխարհագրական սահմաններից դուրս:

Վատիկանյան հին ձեռագրերի ժողովածու (Codex Vaticanus). Մ.թ. 4-րդ դարի հունարեն ձեռագիր է: Գտել են Հռոմի Վատիկանի գրադարանում: Սկզբում պարունակել է ամբողջ ՀՎ-ը, անկանոն գրքերը և ՆԿ-ը: Սակայն որոշ մասեր անհետացել են (Ծննդոց, Մաղմոսներ, Եբրայեցիներին ուղղված թուղթը, Հովվական թղթերը, Փիլիմոն և Հայտնություն): Ծատ օգտակար ձեռագիր է հեղինակային բնագրերը ճանաչելու համար: Այն նշվում է «B» :

Վերափոխում. Սա Աստվածաշնչի թարգմանության տեսությունն է: Աստվածաշնչի թարգմանությունը կարող է դիտվել որպես շարունակություն, որտեղ յուրաքանչյուր եբրայերեն կամ հունարեն բառին համապատասխանում է թարգմանված բառը, և որպես «բառափոխում» որին տրվում է իմաստ, քիչ ուշադրություն դարձնելով վերափոխմանը կամ բնօրինակի բառերին: Այս տեսությունների միջև գոյություն ունի «դինամիկ համագործ» տեսությունը, որը լրջորեն է մոտենում բնօրինակի տեքստին, սակայն թարգմանության ժամանակ օգտագործվում է ժամանակակից քերականական ոճեր և դարձվածքներ: Թարգմանության տարբեր տեսությունների վերաբերյալ հետաքրքիր քննարկում կարող եք գտնել Գորդոն Ֆիլի և Դուգլաս Ստյուարտի «Ինչպես կարդալ Աստվածաշունչը իր ամբողջական իմաստով» (Fee and Stuart's *How to Read the Bible For All Its Worth*), էջ՝ 35:

Վերլուծական բառարան. Սա ուսումնասիրություն անելու միջոց է, որը թույլ է տալիս որոշել բոլոր հունարեն ձևերը ՆԿ-ում: Այն հանդիսանում է հիմնական սահմանումների ժողովածու՝ հունարեն այբբենական կարգով: Բառացի թարգմանության հետ միասին օգնում է հունարեն չիմացող հավատացյալին վերլուծելու ՆԿ-ի հունարեն քերականական և շարահյուսական ձևերը:

Վուլգատա. Սա Ջերոմի կողմից թարգմանված Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունն է: Հանդիսանում է Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հիմնական թարգմանությունը: Այն կատարվել է մ.թ. 380-ականներին:

Տեքստային քննադատություն. Աստվածաշնչի ձեռագրերի ուսումնասիրություն: Տեքստային քննադատությունը անհրաժեշտ է, որովհետև բնագրերը մեզ չեն հասել, իսկ արտագրությունները տարբերվում են միմյանցից: Մենք փորձում ենք բացատրել տարբերակներն ու մոտենալ (որքան հնարավոր է) Հին և Նոր Կտակարանների հեղինակների բնագրերին: Այն հաճախ կոչվում է «թույլ քննադատություն»:

Textus Receptus. Անվանումը վերցված է Էլզևիրի հունարեն ՆԿ-ի խմբագրված տարբերակից, մ.թ. 1633: Հիմնականում հունարեն ՆԿ-ի այս տարբերակը հիմնված է հունարենի մի քանի ավելի ուշ ձեռագրերի վրա և Երասմոսի (1510-1535), Ստեփանոսի (1546-1559) և Էլզևիրի (1624-1678) լատիներեն թարգմանությունների վրա: Ա. Թ. Ռոբերթսոնը («Նոր Կտակարանի տեքստային քննադատության ներածությունը» գրքում) ասում է, որ «բյուզանդական տեքստը իրականում Textus Receptus-ն է»: Բյուզանդական տեքստը հնագույն առաջին հունարեն ձեռագրերի երեք ընտանիքների միջից ամենաքիչ արժեքավորն է (արևմտյան, ալեքսանդրիան և բյուզանդական): Այն պարունակում է սխալներ, որոնք հարյուրամյակներ շարունակ արել են արտագրողները: Համենայնդեպս, Ա. Թ. Ռոբերթսոնը նաև ասում է, որ «Textus Receptus տեքստը մեզ է հասել հիմնականում ճշգրիտ տեքստով» (էջ՝ 21): Այս հունարեն ձեռագիր ավանդական տարբերակը (հատկապես Երասմոսի 1522 թ-ի երրորդ խմբագրությունը) հիմք է հանդիսանում King James անգլերեն թարգմանության համար, 1611 թ.:

Փոխանություն (Metonymy). Սա պատկերավոր լեզու է, երբ մի բանի անունը օգտագործվում է մեկ այլ բան ներկայացնելու համար: Օր.՝ «թեյնիկը եռում է» այնինչ թեյնիկի միջի ջուրն է եռում և ոչ թե թեյնիկն ինքը:

Քրիստոսակենտրոն. Այս տերմինը ընդգծում է Քրիստոսի կենտրոնական դերը: Ես այն կիրառում եմ կապված այն գաղափարի հետ, որ Հիսուսը Տերն է ամբողջ Աստվածաշնչի: ՀՎ-ը մատնանշում է Նրան. Նա է կատարողն ու նպատակը ՀՎ-ի (տես՝ Մատթ.5:17-48):

Օրինականություն. Այս մոտեցմանը բնորոշ է կանոններին կամ ծեսերին հետևելու խիստ շեշտադրումը: Այն հակված է ապավինելու մարդու կողմից որոշակի կանոններ և օրենքներ պահելուն, որպես Աստծո կողմից ընդունված լինելու միջոց: Օրինականությունը հակված է թերագնահատելու փոխհարաբերությունները և մեծարելու գործերը, երբ երկուսն էլ իհարկե կարևոր են սուրբ Աստծո և մեղավոր մարդու միջև եղած ուխտի փոխհարաբերության մեջ:

ՀԱՎԵԼՎԱԾ ՀԻՆԳ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐ

Ինձ այնքան էլ չեն մտահոգում հավատքի հանգանակները կամ դավանությունները: Ես նախընտրում եմ հռչակել հենց Աստվածաշունչը: Սակայն գիտակցում եմ, որ հստակ ձևավորված հավատքի դավանությունները այն մարդկանց, ովքեր չեն ճանաչում ինձ, թույլ կտան գնահատելու իմ վարդապետական հայացքները: Մեր օրերում աստվածաբանական այնքան շատ սխալներ ու շփոթություններ կան, որ կարևոր եմ համարում առաջարկել իմ աստվածաբանության հետևյալ համառոտ վերլուծությունը:

1. Աստվածաշունչը՝ թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարանը, ներշնչված, անսխալական, հեղինակային, հավիտենական Աստծո Խոսքն է: Այն Աստծո ինքնահայտնությունն է, արձանագրված մարդկանց կողմից՝ Իր գերբնական առաջնորդությամբ: Այն մեր միակ Աստծո և Նրա նպատակների հստակ ճշմարտության աղբյուրն է: Այն նաև մեր հավատքի միակ աղբյուրն է և Իր եկեղեցու ուղեցույցը:
2. Կա միայն մեկ Հավիտենական Աստված, Արարիչ և Փրկիչ: Նա է Արարիչն ամեն ինչի՝ տեսանելի և անտեսանելի: Նա Իրեն հայտնել է որպես սիրող և գթառատ Աստված, չնայած որ Նա նաև արդար է և սուրբ: Նա Իրեն հայտնել է Երեք տարբեր Անձերով՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին: Նրանք տարբեր անձիք են, սակայն միևնույն էության:
3. Աստված ակտիվորեն վերահսկում է այս աշխարհը: Նա Իր արարչագործության համար հավիտենական ծրագիր ունի, որն անփոփոխ է և այնպես է գործում յուրաքանչյուր անհատի համար, որ թույլ է տալիս մարդուն ունենալու ազատ կամք: Ոչինչ առանց Աստծո գիտության և թույլտվության տեղի չի ունենում, սակայն Նա թույլ է տալիս թե՛ հրեշտակներին և թե՛ մարդկանց կատարել իրենց սեփական ընտրությունը: Հիսուսը Հայր Աստծո Ընտրյալ Մարդն է, և մենք բոլորս էլ պոտենցիալ ընտրյալներ ենք: Դեպքերի վերաբերյալ Աստծո կանխագիտությունը չի նշանակում, որ մարդիկ պետք է ամեն բան անեն այնպես, ինչպես կանխատեսված է եղել: Մենք բոլորս պատասխանատու ենք մեր մտքերի և գործերի համար:
4. Մարդկությունը չնայած ստեղծվեց Աստծո պատկերով և առանց մեղքի, գերադասեց ընքոստանալ Աստծո դեմ: Չնայած Ադամին ու Եվային փորձեց մի գերբնական արարած, միևնույն է նրանք պատասխանատու էին իրենց հոժարական անձնակենտրոն վարքի համար: Նրանց ընքոստությունը ազդեց մարդկության և ամբողջ արարչագործության վրա: Մենք բոլորս Աստծո ողորմության և շնորհքի կարիքն ունենեք, թե՛ Ադամի վիճակի մեջ մեր բաժինն ունենալու և թե՛ հոժարական ընքոստանալու համար:
5. Աստված հոգացել է մեղավոր մարդկության ներման և վերահաստատման միջոցը: Հիսուս Զրիստոսը՝ Աստծո Միածին Որդին, մարդացավ, ապրեց անմեղ կյանքով և Իր փոխանորդական մահով վճարեց բոլոր մարդկանց մեղքերի համար: Նա է Աստծո հետ հաղորդակցության վերականգնման միակ ճանապարհը: Նրա կատարած գործին հավատալուց զատ ուրիշ փրկության միջոց չկա:
6. Մեզնից յուրաքանչյուրն անձամբ պետք է ընդունի Աստծո կողմից առաջարկվող ներումը և Հիսուս Զրիստոսի մեջ ունեցած վերստին ծնունդը: Սա տեղի է ունենում Հիսուսի միջոցով Աստծո խոստումներին հոժարական վստահելու և մեղքից հրաժարվելու միջոցով:
7. Մենք լիարժեք ներում ենք ստանում և վերահաստատվում Զրիստոսի վրա ունեցած մեր վստահության մեջ և մեղքից ապաշխարության մեջ: Սակայն այս նոր փոխհարաբերության կյանքի ապացույցը մեր վերափոխված և վերափոխող կյանքն է: Աստծո համար մարդկության նպատակը միայն երկինք հասնելը չէ, այլ հիմա Զրիստոսի պես լինելը: Նրանք, ովքեր իրոք փրկված են, թեև երբեմն մեղանչեն, կշարունակեն հավատքի և ապաշխարության մեջ ապրել իրենց ամբողջ կյանքի ընթացքում:
8. Սուրբ Հոգին «երկրորդ Հիսուսն» է: Նա ներկա է այս աշխարհում, կորած մարդկանց Զրիստոսին առաջնորդելու և փրկվածների մեջ Զրիստոսի կերպարը ձևավորելու համար: Հոգու պարզևները տրվում են փրկության ժամանակ: Պարզևները Զրիստոսի կյանքի և ծառայության իմաստն են, որոնք բաժանված են Իր ամբողջ մարմնով մեկ՝ եկեղեցում: Պարզևները, որոնք հիմնականում Հիսուսի վարքն ու շարժառիթներն են, պետք է գործադրվեն Սուրբ Հոգու պտուղներով: Հոգին գործում է մեր օրերում ճիշտ այնպես, ինչպես գործում էր աստվածաշնչյան ժամանակներում:
9. Հայրը հարուցյալ Հիսուս Զրիստոսին դրել է ամեն բանի Դատավոր: Նա վերադառնալու է երկիր դատելու ամբողջ մարդկությանը: Հիսուսին հավատացողները, որոնց անունները գրված են Գառան Կյանքի Գրքում, Նրա վերադարձի ժամանակ կստանան իրենց հավիտենական փառավորյալ մարմինները: Նրանք հավիտյան Նրա հետ կլինեն: Սակայն նրանք, որ մերժել են արձագանքել Աստծո ճշմարտությանը, հավիտյան բաժանված կլինեն Երրորդություն Աստծո հետ ջերմ հաղորդակցության բերկրանքից: Նրանք կդատապարտվեն Մատանայի և նրա հրեշտակների հետ միասին:

Անշուշտ սա ամբողջը չէ, սակայն հուսով եմ, որ այն ձեզ կտա իմ սրտի աստվածաբանական համն ու հոտը: Ես սիրում եմ այս արտահայտությունը:

«Կարևոր բաներում միաբանություն, երկրորդականում՝ ազատություն, իսկ ամեն ինչում՝ սեր»: